Հ. Ջ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԳՈՅԱԿԱՆԻ ԹՎԻ ԿԱՐԳԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ — 1972

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

809.198.1

Հ. Զ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԳՈՅԱԿԱՆԻ ԹՎԻ ԿԱՐԳԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ֆ/ՀՏ 1015



ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1972

Աշխատության մեջ հայերենի գոյականի թվակարգը առաջին անգամ ներկայացվում է իր ամբողջական նկարագրությամբ։ Շարադրանքում տրվում է թվակարգի և նրա նախակարգերի բնութագրությունը, պարզաբանվում են թվակազմության, մասնավորապես հոդնակիակազմության հարցերը. վերջին բաժինը նվիրված է հոդնակերտ մասնիկներին։ Ուսումնասիրությունը կատարված է հայերենի գրավոր շրջանի փաստերի դիտարկումներով։ Նյութի քննությունը և դրա հիման վրա արված հետևությունները վերաբերում են տարբեր վիճակների, փուլերի (գրաբար, միջին գրական հայերեն, բարբառներ, նոր գրական հայերեն՝ իր երկու ճյուղերով)։ Հեղինակն աշխատել է համակցել իրար պատմական, տեսական ու կառուցվածքային հայեցակետերը։

Աշխատությունը կարող է օգտակար լինել հայերենագետներին, ուսուցիչներին, ուսանողությանը, ինչպես և հայոց լեզվի հարցերով հետաքրքրվողներին։

Խմբագիր՝ պրոֆ. Էդ. Բ. Աղայան

7—1—3
43—72

ПЕТРОСЯН
ГРАНТ ЗИНАВОРОВИЧ

КАТЕГОРИЯ ЧИСЛА СУЩЕСТВИТЕЛЬНОГО
В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ
(На армянском языке)

Издательство Ереванского университета
Ереван—1972

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Չկա մի լեզու, որը քերականական որևէ միջոց չունենա թվի իմացական կատեգորիան արտահայտելու համար։ Այդ բացատրվում է ամենից առաջ այն հանգամանքով, որ առարկաների քանակային հարաբերության հայեցակետը (ասպեկտը) անհրաժեշտ տարր է իրականության ընկալման և դասողության ձևավորման մեջ։ Հասկացական ամեն մի կարգ քերականական արտահայտության կարիք չունի. այս տեսակետից՝ շնչավորի և անշունչի, դասայնության, որոշյալի և անորոշի, ինչպես և նման շատ իմացական երևույթներ (կարգեր) իրենց քերականական արտահայտությունը կարող են չունենալ լեզվի մեջ։ Սակայն թվի իմացական կարգը քերականական արտահայտություն ունի թեկուզ և օժանդակ բառերի գործածությամբ։ Ահա թե ինչու թվակարգը լեզուներում համեմատաբար մեծ տարածում գտած կարգերից է։

Թվի կարգը կառուցվածքային ուրույն գծերով քերականական արտահայտություն ունի հայերենում, նրա զարգացման բոլոր էտապներում (հին գրական հայերեն, միջին հայերեն, նոր գրական հայերեն, բարբառներ)։ Եվ հայ լեզվաբանական-քերականական միտքը իր կազմավորման շրջանից սկսած ուշադրության տակ է պահել այս կարգը, վեր է հանել նրա կառուցվածքային-ֆունկցիոնալ մի շարք առանձնահատկություններ։

Թվակարգը լայն հասկացություն է. այն իր դրսևորումներով կարող է տեղ գտնել ինչպես գոյականի, այնպես էլ այլ խոսքի մասերի համակարգում։ Ըստ այդմ էլ հայ քերականագիտությունը հենց սկզբից էլ կատարել է այդ կարգի տարբերակված ընկալություն։

Լեզվաբանական մտքի հունատիպ զարգացման շրջանում, երբ մեր քերականները հիմնականում ղեկավարվում էին Թրակացու գրքի մեկնություններով և իրենց վերլուծությունները սահմանափակում էին նրա գաղափարների շրջանակներով, ինչ-որ չափով ուրվագծեցին նաև հին հայերենի (գրաբարի) գոյականի թվի առանձին դեր-

սևորումներ։ Դիտարկելով հին հունարենի վերաբերյալ Թրակացու արած բնութագրությունները՝ նրա հետևողությամբ մեր մենիչքերականները հայերենում ևս տարբերակեցին թվակարգի երեք ենթակարգեր՝ եզակի, երկակի և հոգնակի։ Սակայն մենիչներից մի քանիսը ուշադրություն հրավիրեցին այն փաստի վրա, որ հայերենում թիվը դրսևորվում է երկու ենթակարգով՝ եզակի և հոգնակի։ Հայերենի օրինաչափությունների վերաբերյալ ուշագրավ դիտողությունների հանդիպում ենք Դավիթ քերականի, Անանուն մենիչի, Մովսես Քերդողի, Ստեփանոս Սյունեցու, Գրիգոր Մագիստրոսի, Համամ Արևելցու և այլ քերականների մենութիւններում։

Ուշ միջնադարյան հայ քերականները, լեզվաբանական մարքառաջընթացին զուգահեռ, ավելի մանրամասն խորացան հին գրական հայերենի՝ գրաբարի թվակազմության հարցերում, լուսաբանեցին եզակի և հոգնակի թվային ենթակարգերի ձևա-իմաստային փոխհարաբերության որոշ հարցեր։ Այս ուղղությամբ նկատելի աշխատանք տարան նաև լատինատիպ քերականության մի քանի ականավոր ներկայացուցիչներ՝ Ս. Ջուղայեցին, Բ. Դպիրը, Կ. Գալանոսը և ուրիշներ[1]*։*

XIX դարը էական տեղաշարժեր բերեց նաև լեզվաբանության բնագավառում։ Մշակվեցին ու խորացվեցին ստատիկ նկարագրության սկզբունքները, հիմնադրվեց պատմական քերականությունը, առհասարակ մեծ առաջընթաց ապրեց համեմատական լեզվաբանությունը։ Հայ քերականները (Գ. Ալեմիքյան, Ա. Բագրատունի, Վ. Ջալըխյան և ուրիշ.) նոր հայեցակետով դիտարկեցին գրաբարի կառուցվածքի հատկությունները. մերժեցին օտարաձև, հնարովի կաղապարները. գրաբարը քննվեց ինքնին, իբրև կառուցվածքային ուրույն համակարգ։ Բնականաբար այս վերաբերում է նաև թվի քերականական կարգին։

XIX դ. կեսերին ուսումնասիրության օբյեկտ դարձավ հայերենն իր ամբողջությամբ. հայ և այլազգի գիտնականները ննուե-

---

[1] *Պրոֆ. Գ. Ջահուկյանը նկատում է. «Անվան թվի կազմության հարցում լատինատիպ քերականության դպրոցի ներկայացուցիչները հասնում են բուն գրաբարյան հոգնակիի կազմության ճշգրիտ նկարագրությանը» (ԳՋ, ՀՀՀՍ, 14)։ Բայց, ի՛արկե, նրանք էլ ունեցան շեղումներ. օրինակ, գրաբարյան անեզականներից հոգնակերտ ք-ի հապավումով ստեղծեցին նաև եզակի՝ եզակի—հոգնակի հակադրության նորմային հետևելու միտումով. կեան—կեանք, միտ—միտք, մեղ—մեղք ևն։ Ընդ որում հոգնակի ներգոյականը կազմում էին ը||ե նախամասնիկով (նախդիրով)՝ առանց ի նախդրի գործածության. ըն բանս, նոսկիս (տե՛ս ՀԱ, ՀՀՊ, II, 324)։*

Բյան առարկա դարձրեցին նաև միջին ու նոր հայերենի ու բարբառների իրողությունները։ Համեմատական ու պատմական քերականության սկզբունքները թափանցեցին նաև հայերենագիտության մեջ։ Ինչպես այլ քերականական կարգեր, այնպես էլ թվակարգը քննվեցին համեմատաբար ավելի լայն պլանով։ Զևաբանական այլ երևույթների հետ՝ թվային ենթակարգերը արևմտահայ աշխարհաբարում հանգամանորեն դիտարկվեցին Ա. Այտընյանի, արևելահայ գրական աշխարհաբարում՝ Ստ. Պալասանյանցի կողմից։

Հայերենի հոգնակերտ մասնիկների ծագման և ծագումնաբանական կապերի վերաբերյալ ուշագրավ դիտողություններով հանդես եկան եվրոպացի հայագետներ Հ. Հյուբշմանը, Հ. Պեդերսենը, Յ. Կարստը, Ս. Բուգգեն, Ա. Մեյեն (է՛լ ավելի վաղ՝ Հ. Պետերմանը, Ֆ. Վինդիշմանը) և ուրիշներ։ Այդ դիտողությունները նրանք հիմնականում արեցին հայերենին նվիրած իրենց արժեքավոր ուսումնասիրություններում։ Հայերենի թվակազմության պատմական զարգացման շատ հարցեր հետաքրքրական լուծում ստացան այդ լեզվաբանների մոտ։

Նոր և նորագույն շրջանի հայերենագիտական գրականության մեջ բազմիցս շոշափվում են նաև թվակարգի հարցեր, թեև ոչ մենագրական պլանով։ Գոյականի թվի վերաբերյալ արժեքավոր վերլուծություններ ունի Հ. Աճառյանը։ Այդ վերլուծությունները ուղեկցում են հայոց լեզվի պատմության նրա ամբողջ շարադրանքին։ Արժեքավոր են նաև այն դիտողությունները, որ այս կամ այն առիթով, կամ ակնարկային ձևով, արել են իրենց աշխատություններում՝ Գ. Ղափանցյանը, Մ. Աբեղյանը, Ա. Ղարիբյանը, Գ. Սևակը, Էդ. Աղայանը, Գ. Ջահուկյանը և այլ հայագետներ։

Պրոֆ. Ա. Ղարիբյանը տարիներ առաջ հանդես է եկել մի հոդվածով՝ նվիրված հոգնակերտ մասնիկներին. տե՛ս նրա «Հայերենի հոգնակի նշանակող մասնիկները և նրանց լեզվաբանական արժեքը» («Նյութեր հին Հայաստանի պատմության», 1935)։ Դոց. Ա. Բաբասյանն ունի «Թվի քերականական կատեգորիան հայերենում» ուսումնասիրություն (անտիպ, թեկնած. դիսերտացիա), որի մեջ քննված է նաև գոյականի թվակարգը[2]։

Հայերենն ունի տասնյակ բարբառներ, որոնց զգալի մասը

[2] Այս ուսումնասիրությունը գրված է 1953 թ., ունի քննական ու մեթոդական այլ սկզբունքներ ու հարցադրումներ։ Մեր աշխատանքը նրանից տարբերվում է հարցադրումների բնույթով, փաստական նյութի ընդգրկումներով ու մշակման եղանակներով։

ենթարկվել է մենագրական քննության։ Այդ ուսումնասիրություններում «Հոգնակիի կազմությունը» հարցադրմամբ տրվում է գոյականի թվակազմության օրինաչափությունների նկարագրությունը։ Դժբախտաբար որոշ բարբառներ ու խոսվածքներ դեռևս հանդամանալի քննության չեն ենթարկվել, իսկ եղած մենագրական ուսումնասիրություններում թվակարգի դիտարկումները մեծ մասամբ նեղ պլանով են կատարված։

Գոյականի թվի կարգը այլ լեզուներում շատ բիչ է մենագրական ուսումնասիրությամբ ներկայացվել։ Թվակարգի հարցերը հիմնականում մշակվել են լեզվական այլ երևույթների, հատկապես հոլովակազմության հետ կապված։ Համեմատաբար ավելի շատ դիտարկումներ արված են թվային ենթակարգերի (նպակի—հոգնակի) իմաստային-ֆունկցիոնալ հարաբերակցության վերաբերյալ։

Մեր այս աշխատանքը նվիրել ենք հայերենի գոյականի թվակարգի ձևաբանական հատկությունների բացահայտմանը, ընդ որում շարադրանքը կառուցված է այնպիսի հարցադրումներով, որոնք հնարավորություն են տալիս համեմատաբար ամբողջական, հետևողական ու պարզ նկարագրությամբ վեր հանելու և՛ կառուցվածքային, և՛ իմաստային-ֆունկցիոնալ կողմերը։ Շարադրանքի մեջ կառուցվածքի նկարագրությունը և պատմական մեկնաբանությունները զուգահեռ են տրված։

Քանի որ թվակարգը ինքնին առանձին ենթակարգերի հակադրությամբ է ներկայանում, ապա պետք է հենց սկսենք այդ ենթակարգերի քննությունից։ Բացի այդ՝ կառուցվածքային հատկություններով բնորոշ է հոգնակիակազմությունը (հայերենում), ուստի առաջին պլանի վրա թվակազմության մեջ հաստատվում է հոգնակիի կազմությունը։ Վերջապես՝ հայերենում թվակազմությունը կատարվում է մասնիկավորմամբ. առաջ է գալիս հոգնակերտ մասնիկների բազմակողմանի քննության պահանջ։

Քննության այդ և այլ հայեցակետեր նկատի ունենալով՝ մեր այս ուսումնասիրությունը կառուցել ենք երեք պլանով.

Ա) Թվակարգ և թվային ենթակարգեր.

Բ) Թվակազմություն կամ՝ հոգնակիակազմ հիմքերը և հոգնակերտների հետ նրանց զուգորդման կաղապարները (տիպերը).

Գ) Թվակազմություն կամ՝ հոգնակերտ մասնիկներ։

* * *

Ինչպես յուրաքանչյուր լեզվական-քերականական կատեգորիա, այնպես էլ թվակարգն ունի քննության ընդհանրական և

մասնավոր հայեցակետեր։ Այդ հայեցակետերը արտահայտություն են գտնում այն հարցադրումներում, որոնց համաձայն էլ կառուցվում է շարադրանքը։ «Թվակարգ և թվային ենթակարգեր» բաժնում մեզ պրաղեցրել է այն խնդիրը, թե հայերենի գոյականի թվակարգը ինչպիսի ենթակարգերով է ներկայանում և կառուցվածքային-ֆունկցիոնալ ինչ հարաբերակցություններ կան դրանց միջև։

Բնականաբար նախ պետք է պարզաբանենինք մի հարց, թե թվակարգը ինչ փոխհարաբերության մեջ է բառաձևի լեքսիկական իմաստավորումների հետ։ Ճիշտ է, որ լեքսիկական իմաստավորումը վճռական, թեև ոչ միակ գործոնն է տվյալ բառի քերականական վարքագծի այս կամ այն կերպ դրսևորվելու խնդրում։ Բայց երբեմն բառայինը և քերականականը այնքան սերտ շփումներ են ունենում, որ դժվար է լինում տարբերակիչ գիծ անցկացնել դրանց շփման կետերում։ Բառի իմաստային դաշտը միատարր չէ, այն հարուստ ու բազմազան է։

Բառային իմաստավորումները կարող են կապված լինել, ասենք, այսպիսի ընկալումների հետ՝ բաժանականություն—հավաքականություն, թանձրացականություն—վերացականություն, թվարկվողականություն—նյութայնություն կամ զանգվածայնություն, անհատականություն—ընդհանրականություն կամ տեսակայնություն և այլն։ Բառերը կոնկրետ կիրառություններում (խոսքի մեջ) կարող են հանդես գալ ուղղակի կամ փոխաբերական իմաստավորումներով, իսկ եթե բազմիմաստ են, իրենց որևէ մասնավոր իմաստով։ Այս գործոնները ինչ-որ չափով դեր են խաղում թվի քերականական ասպեկտի այս կամ այլ կերպ դրսևորվելու խնդրում։ Այնուամենայնիվ սրանք իմաստային կարգեր են, և թվակարգը սրանցով չէ, որ բնութագրվում է։ Արդ, թվակարգը քերականական ի՞նչ իմաստներով է բնութագրվում, տրամաբանական-իմացական ի՞նչ ասպեկտ է ներկայացնում այդ կարգը։ Ինչո՞վ է նա քերականական, բառա-քերականական և ոչ բառային կարգ։

Քննաբանական կարգերը հենվում են իրականության ընկալման տրամաբանական-իմացական որևէ ասպեկտի վրա։ Այսպես են կազմավորվել հոլովի, դասի, շնչավորի և անշունչի, սեռի և այլ կատեգորիաներ։ Թվի քերականական կարգի հիմքում ընկած է առարկաների քանակային հարաբերության հատկանիշը, իբրև մեկի և մեկից ավելինի բանակային հարաբերության ասպեկտ (*հայեցակետ*)։

Այս ընդհանրական հայեցակետը, սակայն, լեզուներում ունի իր մասնավոր, կոնկրետ դրսևորումները, իր առանձին օրակները։ Նշված հարաբերակցության առաջին եղրը ներկայանում է իբրև եղակի թիվ (ենթակարգ), իսկ երկրորդ եղրը՝ իբրև հոգնակի թիվ (ենթակարգ)։ Կարող է առաջին եղրում լինել մեկուսացում, առանձնացում նշված հարաբերակցությունից, ընդ որում մեկուսացած միավորը դրանով իսկ թվային ասպեկտի նկատմամբ դառնում է չեզոք (անհոգնականներ). կարող է՝ իր հերթին երկրորդ եղրը մեկուսանալ (հաճախ նաև կառուցվածքայնորեն, արտահայտության պլանում), կազմել բառա-քերականական առանձին եղր՝ բառաիմաստային ուրույն հրանգավորումներով (անեղականներ)։

Մեկից ավելինի եղրը կարող է ընկալվել կապված գոյգայնության գաղափարի հետ, կառուցվածքային կամ արտակառուցվածքային հանգամանքներով պայմանավորված, բնորոշ է հին լեզուներին, լեզվական վիճակներին, և նույն գործոնների շնորհիվ աստիճանաբար (որոշ լեզուներում ավելի վաղ, այլ լեզուներում համեմատաբար ուշ) վերանում է։ Այս ենթակարգը չի պահպանել նաև հայերենը (գրավոր շրջան), սակայն որոշ բարբառներում վերապրուկային ձևով այն հարատևել է մինչև մեր ժամանակները։ Հին գրական հայերենը թվակարգի զարգացման, հատկապես թվակազմության մեջ մեծ առաջընթաց է ապրել։

Նշված վերապրուկների քննությունը նկատելի ջանքեր է պահանջում։ Հաշվի առնելով հայագիտական գրականության մեջ այդ ուղղությամբ արված աշխատանքը, սույն ուսումնասիրության համապատասխան հատվածում երկակիի հնագույն արտահայտությունները դիտարկել ենք՝ ելնելով հետևյալ կանխադրույթներից. ա) ինչո՞վ է որոշվում երկակիատիպ կառուցածևը (կամ նրա հիմքերը) արտահայտության պլանում, բ) տվյալ կառուցածևն ունի՞ գոյգայնության գաղափար, գ) արդյո՞ք ցեղակից հնդեվրոպական լեզուները պահպանել են համապատասխան կառուցածևեր, դ) եռգրաբարյան հայերենում ունե՞նք համապատասխան երկակիատիպ կառուցներ, ե) երկակիատիպ կազմավորումները պատմականորեն կառուցվածքային-ֆունկցիոնալ ի՞նչ տեղաշարժ են կատարել գրաբարում, իբրև եզակի, թե հոգնակի են արեժքավորված, բուն հոգնակի են, թե անեզական։

Վերլուծությունը ավելի դյուրին է դառնում, երբ դիտարկում ենք միջին գրական հայերենի և բարբառների փաստերը։ Այստեղ նշված հարցադրումներին օժանդակում է վի մասնիկի առկայությունը։

Գոյականի թվակարգի քննության մեջ կարևոր տեղ են հատկացնում թվային ենթակարգերի կառուցվածքային-ֆունկցիոնալ հարաբերակցություններին։ Մենք այդ հարաբերակցությունները դիտարկել ենք երեք պլանով. ա) հարաբերակցություններ արտահայտության պլանում, բ) հարաբերակցություններ բովանդակության (իմաստային-ֆունկցիոնալ) պլանում, գ) զուտ-թվակարգային հարաբերակցություններ և բառա-քերականական խմբեր։

Առաջին պլանով կատարված դիտարկումները հնարավորություն են տվել պարզելու, որ արտահայտության պլանում ունենք եզականաձև և հոգնականաձև միավորներ, ամեն մի միավոր հեռանում է ուրույն կաղապարավորման, հակադրությունները ներկայանում են մեկ կամ երկու եղրով (միաեղր, երկեղր հակադրություններ)։

Բովանդակության պլանում եղածի քննությամբ պարզում ենք, թե եզականաձև և հոգնականաձև միավորները ի՞նչ իմաստներ կարող են ունենալ, և դրանք ի՞նչ հարաբերակցությունների մեջ են։ Նկատում ենք, որ եզականաձևը կարող է արտահայտել այնպիսի իմաստ, որը առնվում է մեկի և մեկից ավելինի քանակային հարաբերության քերականական ասպեկտի մեջ, կարող է և այնպիսի բառիմաստ ունենալ, որը բացառում է քերականական այդ հայեցակետը։ Հոգնականաձևը կարող է ունենալ հոգնակի թվային ենթակարգի ֆունկցիա, ստացական և խնդրառական հոգնակիների ֆունկցիա, ինչպես և՝ անեզականությանը հատուկ բառա-քերականական իմաստավորումներ։

Վերջապես երրորդ պլանը մեզ հնարավորություն է տալիս խմբավորելու զուտ թվակարգային հակադրություններ (եզակի—հոգնակի, եզակի—ստացական հոգնակի, եզակի—խնդրառական հոգնակի) ունեցող միավորները առանձին, բառա-քերականները՝ առանձին։

* * *

Թվականությունը բազմակերպ դրսևորումներ ունեցող երևույթ է։ Այդ այդպես է ոչ միայն հայերենում, այլև աշխարհի շատ լեզուներում։ Դժվար է ասել, թե ո՛ր լեզուն է այս բնագավառում լիակատար պարզության հասել. սովորաբար այդ պատիվը տալիս են ամենից առաջ անգլերենին, բայց ուշադիր դիտարկումները այլ հետևության են բերում։ Գրեթե ամեն մի լեզվի մեջ էլ կանոնավորություններին ուղեկցում են անկանոն, անմիօրինակ կառուցաձևեր ևս։ Ավելի հարմար է որոշել, թե օրինաչափական կազմավորումները ընդհանրացման ո՛ր աստիճանում են գտնը-

վում, և բայմաձևությունները, շեղումները ինչ չափով են հաստատված լեզվի մեջ կամ քերականական ինչ արժեք ունեն։

Քանի որ լեզուն զարգացման յուրաքանչյուր էտապում ներկայանում է իբրև որոշակիորեն սիստեմավորված վիճակ, ուստի որևէ կարգ ուսումնասիրելիս ամենից առաջ պետք է նկատի ունենալ այն երևույթները, որոնք պայմանավորված են այդ սիստեմով, բխում են նրանից։ Դրանք համակարգային երևույթներն են։ Սակայն ամեն մի լեզվի մեջ դրանց զուգահեռ գործածական են իրողություններ, որոնք թեև տվյալ սիստեմով չեն պայմանավորված, բայց գործածության ինչ-որ ոլորտ ունեն։ Դրանք ոչ-համակարգային երևույթներն են։

Այս հանգամանքը նկատի ունենալով հայերենի տարբեր վիճակների (գրաբար, միջին գրական հայերեն, բարբառներ, նոր գրական հայերեն) թվակազմությունը քննելիս նախ դիտարկել ենք համակարգային կազմավորումները, ապա՝ ոչ-համակարգային կառուցվածքները։ Վերջին տիպի իրողությունների մեջ առանձնացրել ենք նաև հնատիպ կազմավորումները, քանի որ ոչ-համակարգային ձևերը ոչ այլ ինչ են, եթե ոչ հին լեզվավիճակների մնացորդներ կամ նորակազմություններ։

Շարադրանքի մեջ որոշ տեղ ենք հատկացրել նաև կազմավորման անմիջորինակությունների՝ երկձևությունների (բայմաձևությունների) և շեղումների։

Քանի որ թվակազմությունը ըստ էության հոգնակիակազմություն է, եղակի—հոգնակի հակադրության դրսևորում, ուստի հոգնակիի կառուցվածքների կաղապարավորման հիմունքներին և տիպերին ավելի հանգամանորեն ենք անդրադարձել։ Նախ նկարագրել ենք բուն հոգնակիակազմությունը, ապա ստացական և խնդրառական կառուցվածքները։ Ինչ մնում է դոյականաբար առնված բառերին և փոխառյալներին, ապա սրանց կաղապարավորումը որևէ չափով տարբերիչ գծեր չունի, ուստի ամեն անգամ դրանք չենք քաշել դիտարկումների ոլորտ։ Կաղապարավորման առումով անեղական ձևերը հիմնականում հետևում են համակարգային կառուցվածքներին, բացի հնատիպ կազմավորումներից, ինչպես, օրինակ, գրաբարատիպ (ոչ անպայման գրաբարյան) անեղականները նոր հայերենում, որոնք ներկայանում են հատուկ անեղականակերտ մասնիկներով։

Եթե հոգնակիակազմությունը հայերենում կատարվում է հոգնակիակազմ հիմքերի և հոգնակերտ վերջավորությունների զուգորդումներով, ապա առաջ է գալիս նաև հիմքակազմության նկա-

րագրության հարց։ Այս խնդրին մենք էական տեղ ենք հատկացրել, նկատի ունենալով նախ այն հանգամանքը, որ մասնիկավոր կառուցածևը չի կարող մեկնաբանվել առանց հիմքի արժեքը որոշելու, և որ այդ հարցին հայագիտական (և ոչ միայն հայագիտական) գրականության մեջ անհրաժեշտ չափով ուշադրություն չեն դարձրել։

Այժմ անդրադառնանք մեր այն կանխադրույթներին, որոնցով առաջնորդվել ենք հոդնակիի հիմքակազմությունը քննելիս։

Նախ՝ ի՞նչ է հիմքը։ Հիմքը մասնիկավորում ունեցող լիսունեին հատուկ ձևաբանական երևույթ է։ Այս գաղափարը մշակվել է հունա-լատինական քերականության մեջ և նրա ազդեցության ոլորտում։

Մասնիկավորումը կարող է լինել ածանցական (դերիվացիոն) արժեքով և վերաբերական (ռելացիոն) արժեքով։ Երբեմն մասնիկները լինում են կրկնարժեք՝ ներառնելով այդ երկու ֆունկցիաները։ Ըստ այդմ էլ պետք է առաջին դեպքում խոսել բառակազմական (դերիվացիոն), երկրորդ դեպքում ձևակազմական (ռելացիոն), իսկ երրորդ դեպքում բառակազմական-ձևակազմական դուզորդումների մասին։

Կարող է այն պատրանքն առաջանալ, թե հիմքը միայն վերջամասնիկավորման հետ կապված, միայն նրան առնչվող կատեգորիա է։ Բայց դա այդպես չէ։ Քանի որ մասնիկները կարող են միանալ արմատին կամ հիմքին դերքային պայմանավորվածությամբ, ուստի հիմքակազմությունն էլ պետք է դիտարկել տարբեր պլաններով։ Հայերենում դերիվացիոն կազմավորումները հիմնականում կատարվում են նախամասնիկավորմամբ և վերջնամասնիկավորմամբ, իսկ ռելացիոն կազմավորումները՝ գրեթե միայն վերջնամասնիկավորմամբ[3]։

Բոլոր դեպքերում մեր ելակետն այն է, որ հիմքը մասնիկավորման հետ առնչվող ձևաբանական կատեգորիա է[4]։ Բայց վերջիվերջո ի՞նչ է հիմքը, ինչպե՞ս կարելի է այն սահմանել, բնութագրել։

Գոյություն ունեն հիմքի լայն և նեղ ըմբռնումներ։ Լայն ըմբռնմամբ հիմքի գաղափարը կապվում է և՛ դերիվացիոն, և՛ ռելացիոն կազմավորումների հետ, նեղ ըմբռնմամբ՝ միայն ռե-

---

[3] Թերևս կարելի է նշել որոշ եզակի կազմավորումներ (նախամասնիկավորմամբ). օր. կ եղանակիչը բայական կառուցածևերում՝ գրեմ—կգրեմ։

[4] Եթե կա հիմք, պետք է լինի նաև մասնիկավորում և հակառակը. մասնիկավորումը ենթադրում է հիմքակազմություն նշ։

լացիոն (ձևակազմական) կազմավորումների հետ։ Հիմքի ուշադրավ սահմանման հանդիպում ենք շատ լեզվաբանների մոտ։ Ըստ պրոֆ. Սևակի՝ «թեքված յուրաքանչյուր բառի մեջ կա մի հիմնական մաս, որը հակադրվում է վերջավորությանը, իբրև ինքնուրույն մաս տվյալ բառի։ Թեքված բառի մեջ մինչև վերջավորությունն ընկած մասը կոչվում է հիմք... ամեն անգամ բառից անջատելով վերջավորությունը՝ ստանում ենք բառի հիմքը»[5]։

Մ. Աբեղյանը հիմք հասկացությունը վերցնում է ավելի ընդարձակ առումով։ Անդրադառնալով մասնիկավոր կառույցներին ժամանակակից հայերենում՝ նա հիմքային միավոր կամ իր տերմինով ասած՝ բուն[6] է համարում իրական կամ նյութական նշանակություն ունեցող բառամասը, որի վրա բառակազմական ձևական մասեր ավելացնելով ստանում ենք բառեր կամ նոր բառեր, իսկ բառափոխության ձևական մասեր ավելացնելով ստանում ենք միևնույն բառի տարբեր ձևեր[7]։

Այսպիսով՝ հիմքը մասնիկավոր կազմավորումների համար ելակետ է, և այն կարող է լինել բառակազմական կամ ձևակազմական (բառափոխական). երկու դեպքում էլ արտահայտվում է բառիմաստով ամբողջացած միավորով կամ անկախ գործածություն չունեցող հիմնական ձևույթով և կամ կարող է լինել ձևաբանական հատուկ տարրով դրանց ձևավորումը։ Քարայինն, fառոտ, fառել, fառի կազմավորումների մեջ ելակետը fառ բառ-

---

[5] Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 218։ Ինչպես նկատում ենք, այստեղ հիմքի գաղափարը վերցված է միայն ռևյացիոն կազմավորումների կապակցությամբ։ Կարծում ենք նաև, որ այս սահմանումը ըստ էության ավելի հարմար է տիպիկ թեքական լեզուների հիմքակազմության տեսանկյունից, երբ հիմքը զուգորդվում է մեկ բաղմիմաստ կամ կրկնիմաստ վերջավորության հետ։ Մինչդեռ կցական լեզուներում բառաձևը կարող է ունենալ տարբեր կարգի ինքնուրույն վերջավորություններ։ Երբեմն էլ նույն վերջավորությունը հարացույցի մի այլ ձևում կարող է հիմքի բաղադրիչի դերում հանդես գալ. համմտ. հայերենում՝ կին, կն-ոջ, կնոջ-ից կառուցաձևերը։ Պրոֆ. Գ. Սևակի սահմանման մեջ կան նաև չափազանց ընդհանուր և դժվար մասնավորելի հասկացություններ ևս։ Վերցնենք թեկուզ և այս երկուսը. ի՞նչ բան է այդ «հիմնական մասը» կամ՝ «ինքնուրույն մասը». սահմանման մեջ չպետք է գործածել մեկնաբանման կարիք ունեցող արտահայտություններ։

[6] Բուն (theme, тема) տերմինը հայ լեզվաբանության մեջ գործածված է տարբեր առումներով։ Հ. Աճառյանը այն երբեմն իմաստավորում է իբրև «թեմատիկ ձևույթ», երբեմն էլ՝ իբրև այդպիսի ձևույթով կազմված հիմք։ Մ. Աբեղյանը այդ տերմինով հասկանում է հիմք, այն էլ՝ լայն առումով։ Գ. Սևակը, «բուն» ասելով նկատի ունի հնչյունափոխված արմատը և այլն։

[7] Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 5—8։

*բաղադրիչն է, ինչ կազմավորման մեջ՝ ինչ- հիմնական ձևույթը, իսկ *swopnos-ի համար՝ swopn- արմատի -o- բնակազմիչով ձևավորումը. կնոջից կազմավորման համար՝ կնոջ-, այսինքն՝ կն- արմատի (հիմքի) ոջ տարրով ձևավորումը։*

Հիմքակազմությունն ունի ձևաբանական ասպեկտ. հիմքը ձևաբանական միավոր է։ Սակայն հաճախ հիմքակազմության մեջ վճռական դեր են ստանձնում նաև ինչյունաբանական, նույնիսկ իմաստաբանական (իմացական) հայեցակետերը։ Սրանք ունեն այլևայլ դրսևորումներ ոչ միայն տարբեր լեզուներում, այլև միևնույն լեզվի տարբեր էտապներում, նրա տարբեր վիճակներում։

Նախ՝ ինչպիսի՞ն կարող է լինել հիմքի ձևույթային կազմը։ Բառակազմական հիմքերում այդ արտահայտվում է հետևյալ կերպ։ Ինչպես գիտենք, բառակազմական հիմքով և ածանցմամբ ստացվում են բառեր (կամ նոր բառեր)։ Այդ հիմքը կարող է լինել պարզ կամ բաղադրյալ։ Պարզ հիմքերը ներկայանում են մեկ արմատով (կամ հիմնական ձևույթով). օր. գր-իչ, fwr-ային. այսինքն՝ սրանք միշտ միաձևույթ են։

Բաղադրյալ հիմքերը արտահայտվում են երկու և ավելի ձևույթներով (հիմնական և ածանցական). սրանք երկձևույթ կամ բազմաձևույթ են. օր. ջրմուղային կազմությունը (բառը) ունի ջրմուղ-երկձևույթ հիմքը, մինչդեռ անհեռատեսություն կազմավորման մեջ (ան-հեռատեսություն կամ անհեռատես-ություն) առկա է բազմաձևույթ հիմք։ Բազմաձևույթ բաղադրյալ հիմքերը երբեմն կառուցվածքային աստիճանավորում (հիերարխիա) ունեն. նյարդ- հիմքն ունենք նյարդ-ային կառուցվածքում, նյարդային- հիմքն ունենք նյարդայնություն կառուցվածքում (առաջնային և երկրորդնային հիմքեր)։

Բառակազմական հիմքը, անկախ ձևույթային կազմից, կարող է ինքնուրույն բառային գործածություն ունենալ կամ չունենալ։ Այսպես՝ fwr-ային, fwr-ել, կազմավորումների հիմքը՝ fwr- ունի անկախ բառային գործածություն ևս, իբրև գոյական։ Բայց հիշ-ել բառակազմական (բայակազմական) հիմքը չունի այդպիսի գործածություն (ֆունկցիա)։

Բոլոր դեպքերում, երբ բառակազմական հիմքը (անկախաբար վերցրած) կամ նրանով ամբողջացած միավորն ունի գոյականի արժեք կամ կարող է գոյականաբար գործածվել, նույն ձևույթային կազմով դառնում է հոգնակիակազմ հիմք։ Համմտ. դաշտ-ային դաշտ-եր և դաշտային-ներ։ Եթե այդ այդպես է. ապա հոգնակիակազմ հիմքն էլ իր ձևույթային կազմով կարող է լինել միաձևույթ, երկձևույթ կամ բազմաձևույթ։ Սակայն, եթե

բառակազմական հիմքը վերցվում է ածանցի հակադրությամբ, իր բնույթով դերիվացիոն կազմավորման բաղադրիչ է, հոգնակիակազմ հիմքը (և առհասարակ ձևակազմական) հիմքը վերցվում է հոգնակերտ մասնիկի (վերջավորության) հակադրությամբ, իր բնույթով ռելացիոն կազմավորման բաղադրիչ է։ Ուրեմն, միևնույն բառաձևի մեջ, նայած թե ինչ հայեցակետով ենք դիտարկում (բառակազմական թե ձևակազմական), զանազանում ենք հիմքակազմության երկու պլան։ Յուրաքանչյուր պլանում ունենք կազմության և ֆունկցիոնալ ծանրաբեռնության առանձնահատկություններ։ Թեև, իհարկե, բացառված չեն այդ երկու պլանների համատեղում (բառակազմական-ձևակազմական հիմքեր)։

Բայց անկախ ձևույթային կազմի վիճակից, պարզ և բաղադրյալ հասկացությունները չեն նույնանում բառակազմական և ձևակազմական պլաններում։ Միաձևույթ, երկձևույթ, բազմաձևույթ հիմքերը ձևակազմական պլանում հավասարապես կարող են կոչվել պարզ, եթե այդ ձևույթների մեջ չկա հատուկ, միայն հիմքակազմ նշանակություն (ֆունկցիա) ունեցող տարր։ Սանեցածագործություններ բառաձևում հոգնակիակազմ հիմքը բազմաձևույթ է, բայց պարզ հոգնակիակազմ հիմք է, որովհետև ձևույթներից ոչ մեկը հոգնակիի հիմքի համար չէ, այդպիսի հիմք չի կերտում։ Մինչդեռ ձկն-եր, գետն-ց հիմքերը բաղադրյալ են, առաջինը՝ ն վերականգնվող տարրով, երկրորդը n թեմատիկ տարրով. այսպես և՝ եկ-ա, ներաց-ա հիմքերը, առաջինը բայական պարզ հիմք է, չունի հիմքակազմ հատուկ տարր, իսկ երկրորդը ունի և բաղադրյալ է։

Հայերենում ձևակազմական հիմքերը լինում են՝ հոլովակազմ, հոգնակիակազմ, հոդառական, դերբայակազմ, եղանակաժամանակային, համեմատության աստիճանավորման և այլն։ Սրանք կարող են կառուցվածքայնորեն համատեղել և չհամատեղել։ Այսպես, օրինակ, fարի և fարեր բառաձևերում հոլովահիմքը (fար-ի) և հոգնակիակազմ հիմքը (fար-եր) համատեղում են. հմմտ. նաև՝ fար-ային և fար-ել բառակազմական հիմքերը։

Թեքական լեզուներում հաճախ է պատահում, որ հոգնակիակազմ և հոլովակազմ հիմքերը համընկնում են. օր. գրաբարում՝ գործո-ց։ Հմմտ. ռուս. հոգն. սեռ. дом-ов, город-ов։ Սակայն կցական լեզուների գոյական բառաձևի մեջ հաճախ կարելի է տարբերել նույնիսկ երեք և ավելի հիմքատեսակ, օրինակ, ժամանակակից գրական հայերենի գործերին բառաձևում ունենք հոգնակիակազմ հիմք՝ գործ-եր, հոլովակազմ հիմք՝ գործեր-ի, հոդառական հիմք՝ գործերի-ն։

Ինչպես քիչ վերը տեսանք, հոգնակիակազմ հիմքը կարող է լինել պարզ և բաղադրյալ։ Բաղադրյալ հիմքի ձևույթային կազմի մեջ առկա է հիմքակազմ հատուկ տարր։ Այս առումով շատ հանդիպում է բնական-մասնիկավոր լեզուների և՛ հոգնակիակազմության, և՛ հոլովակազմության մեջ։ Այսպես, օրինակ, գրաբարի գետո-յ, գետո-վ հոլովահիմքը և գետո-ց հոգնակիակազմ (ավելի ճիշտ՝ հոգնակիակազմ-հոլովակազմ) հիմքը ո բնակերտով են, իսկ բառի ուղիղ (բացարձակ) ձևն է գետ. այսպես նաև՝ e/o հնչույթագայվող տարրերը (բնակերտները) հնդեվրոպական հիմքակազմության մեջ։ Ինչպես նշեցինք, զուտ հիմքակազմ նշանակություն ունի նաև նոր հայերենի մի քանի միավանկ բառերի հոգնակի հիմքում հանդես եկող ե տարրը, որը այժմ եզակի ձևերում բացակայում է։

Ահհասարակ եռգրաբարյան հայերենը զարգացրել է կցական կառուցատիպ, հիմնականում վերացրել է բնակերտով (թեմատիկ) հիմքակազմությունը և հոգնակի բառաձևերում բաշխել է հիմքերը։ Նոր հայերենի համակարգային կազմավորումներում հոգնակիակազմ ու հոլովակազմ հիմքերը այլ են. այլ են նաև հոգնակերտ ու հոլովակերտ վերջավորությունները։ Տեղի է ունեցել հիմքերի և հոգնակերտների ընդհանրացում հարացույցի բոլոր ձևերում։ Եզակի ուղղականի ձևը դառնում է հոգնակիի հիմք նաև թեք հոլովաձևերում։ Մինչդեռ հին գրական հայերենում հոգնակիակազմ հիմք կարող էր դառնալ եզակի որևէ հոլովաձև կամ որևէ հոլովահիմք։

Ինչպես հին գրական հայերենում, այնպես էլ եռգրաբարյան հայերենում եզակի ձևը (եզակի ուղղականի ձևը, այլ որևէ հոլովաձև, եզակի հոլովահիմքը) կարող է հոգնակիակազմ հիմք դառնալ նույն տեսքով կամ ենթարկվելով հնչյունաբանական, ձևաբանական (նաև հնչյունաբանական-ձևաբանական) վերակազմավորումների։

Հայերենում առավել շատ են հնչյունաբանական վերակազմավորումները. եզակի ելաձևի ձևաբանական վերափոխություններըր հոգնակիի հիմքում գնալով նվազել են։ Հոգնակիակազմ հիմքերի և հոգնակերտների զուգորդումներում էլ իշխում է հնչյունաբանական ասպեկտը։

Նոր հայերենի համակարգային կազմավորումներում հիմքատեսակների բնույթը որոշվում է վանկաքանակության սկզբունքով։ Ըստ այդմ զանազանվում են՝ միավանկ և մեկից ավելի վանկանի հիմքեր (մեկուկես վանկանի, երկվանկ-բազմավանկ), իսկ ըստ հիմքավերջի հնչյունաբանական բնույթի և նրա ունեցած դերի՝

ձայնավորաիանգ և բաղաձայնաիանգ հիմքատարբերակներ, ապա՝ ըստ եղակի ձևի համեմատությամբ եղած վերակազմավորումների՝ հնչյունաբանորեն վերակազմավորված և չվերակազմավորված հիմքատարբերակներ։

Նախ վանկահանակության սկզբունքի մասին։ Վանկը, ինչպես գիտենք, հնչյունաբանական միավոր է. այն արտասանական բնույթ ունի, իմաստային միավոր չէ։ Կառուցվածքային տեսանկյունից վանկի կազմում տարբերում ենք վանկաբուն և վանկային եզրեր։ Վանկաբունը վանկարարն է կամ դրանով բնութագրվող տարրը. կարող է արտահայտվել պարզ ձայնավոր հնչյունով՝ ս-ա-ր, տ-ու-ն, ս-ե-ր, գ-ի-ր, երկբարբառով՝ յ-ոյ-ս, ս-յու-ն, ի-այ-տ (դրաբարում), կամ երկհնչյունով՝ ե-րեկ (յէ-րեկ), ն-յու-թ, ս-յու-ն, լ-ույ-ս, ն-յա-րդ, հ-ույ-ս։ Վանկաբնի եզրերը կարող են լինել բաց, ոչ-վանկարար, բաղաձայնական տարրերով չփակված կամ երկու եզրում էլ և կամ որևէ մեկ եզրում փակված. ընդ որում այդ բաղաձայնական եզրերը կարող են ներկայանալ մեկական, ինչպես և ավելի (բայց տվյալ լեզվի համար ինչ-որ սահման ունեցող) տարրերով. համմտ. ծ-ա-ռ, մ-ա-րդ։ Ահա թե ինչու տարբերում են բաց և փակ վանկեր, ավելի մանրամասնած՝ երկփակ (կար-կուտ, շար-վածք, տուն, միայտ), երկբաց (ա-րագ, ու-ժեղ), վերջնափակ (իժ, ուշ, աշ-խա-տանք), բաց (լու, ձի, հա-տու, աշ-խա-տանք) վանկեր[8]։

Վանկաբունը կարող է ներկայանալ լիահունչ ձայնավորով և ոչ-լիահունչ ձայնավորումով։ Այս երևույթը դիտարկելով հայերենում՝ տարբերակում են լիահունչ վանկ և գաղտնավանկ հասկացություններ։ Այսինքն՝ լիահունչ վանկը լիահունչ ձայնավորով վանկաբուն ունեցողն է, ինչպես որ, ասենք, ունենք տո-ղա-դարձ, ջուր, տեր, գիր վանկերում։

Ոչ-լիահունչ կամ գաղտնավանկ ասելով հասկանում ենք այնպիսի վանկեր, որոնց վանկաբունը ներկայանում է անշեշտ, թուլլ արտասանություն ունեցող, դրութ յամբ սովորաբար չարտահայտվող (բացի տողադարձի և տաղաչափական խնդիրներով պայմանավորված դիրքերից), սակայն վանկարար արժեք ունեցող (ը) ձայնավորական տարրով[9]։ Այս (ը)-ն կարող է լինել արմատա-

---

8 Պարզ է, որ տարբեր լեզուներում վանկաբնի և նրա բաղաձայնական եզրերի հարաբերակցությունները միատեսակ դրսևորումներ չունեն. մենք խոսում ենք հայերենի մասին։

9 Դիտարկվող (ը) ձայնավորական տարրը հայերենում (ոչ դրաբար) որոշակի դիրքերում վերաարժեքավորվելով՝ դարձել է ձևաբանական ֆունկցիա ունեցող

կան, բաղաձայնական անցումը պայմանավորող հնչյուն (ոչ պատմական-ստուգաբանական տեսանկյունով), կամ որևէ լիահունչ ձայնավորի հնչյունափոխված տարբերակ լինել. համմտ. գ(ը)լուխ, աստ(ր)ղ. բայց՝ գին—գ(ը)ներ, ջուր—ջ(ը)րեր։ Գաղտնավանկ վերջնահանգով բառերը կոչում ենք վերջնագաղտնավանկ բառեր, իսկ գաղտնավանկը առաջին եզրում ունեցողները՝ սկզբնագաղտնավանկ բառեր, համապատասխանաբար վանկերն էլ՝ վերջնագաղտնավանկեր, սկզբնագաղտնավանկեր։

Գաղտնավանկերն էլ կարող են լինել փակ կամ բաց, սակայն վերջնագաղտնավանկը կարող է լինել միայն փակ. օր. աս-տ(ը)ղ, իսկ սկզբնագաղտնավանկերը լինում են փակ կամ բաց. օր. գ(ը)-լուխ, բ(ը)-լուր, ճ(ը)-րագ, խ(ը)ր-ճիթ, թ(ը)ր-թիռ են։ Քանի որ վերջնագաղտնավանկերը միշտ փակ են, նրանցով ավարտվող բառերը սովորաբար բաղաձայնահանգ են, սկզբնագաղտնավանկով բառերի վերջնահանգը այդպիսի սահմանափակում չունի։

Հոդնակիի հիմք կազմող եզակի ձևը կարող է լինել միավանկ (քար-, փայտ-, տուն-, ջուր-), երկվանկ (սեղան-, քաղաք-, տախտակ-, անտառ-), բազմավանկ (ամուսին-, ստեղծագործություն-, արտահայտություն-)։ Եզակի հոդնակիականում ելաձևում միավանկը սովորաբար լիահունչ է. մինչդեռ երկվանկը կամ բազմավանկը կարող են լինել խառը տիպի. բոլոր վանկերն էլ լիահունչ, օր. դանակ, պատառաքաղ, սեղան. երկու տիպից էլ առկա են՝ լիահունչ և ոչ լիահունչ. ճ(ը)-րագ, աս-տ(ը)ղ։ Հոգնակիականում հիմքում սրանք նույն տեսքով պահպանվում են, կամ տարբեր հանգամանքներով պայմանավորված՝ փոխում են իրենց բնույթը։

Հայերենագիտական գրականության մեջ այն երկվանկ բառերը, որոնք ունեն մեկ լիահունչ վանկ և մեկ գաղտնավանկ, պայմանականորեն կոչվել են նաև «մեկ ու կես» վանկանի բառեր։ «Կես» ասվում է հենց գաղտնավանկի համար։ Սակայն, ինչպես տեսանք, (ը) գաղտնավանկայինը, թեև այլ հատկություններով հեռանում է լիահունչ ձայնավորներից, բայց վանկարարության հատկանիշով համարժեք է նրանց։ Այդ նշանակում է, թե այստեղ իսկապես գործ ունենք երկվանկ բառերի հետ։ Այս «մեկ ու կես» վանկանի բառերը ուշադրություն են գրավել եր, ևեր հոգնակերտների հետ զուգորդվելու իրենց ուրույն վարքա-

---

միավոր, իրրև որոշյալ առման ձևույթի ենթաձևույթ, որոշիչ հոդ. սա արդեն դրությամբ արտահայտվում է։ Այլ դեպքերում դրությամբ արտահայտվող ը-ն ոչ միայն վանկակազմ տարր, այլև երբեմն բառի միակ ձայնավորումն է։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

գծավ։ Մեկուկես[10] սկզբնագաղտնավանկինները սովորաբար զուգորդվում են ներ հոգնակերտի հետ։ Իսկ սա էլ պայմանավորված է այն բանով, որ առաջին տիպի վանկակազմ ունեցողները հոգնակիի հիմք դառնալիս պահպանում են իրենց վանկաբանակությունը, երկրորդները չեն պահպանում և վերակազմավորվելով՝ վերածվում են միավանկի. գլուխներ, բայց՝ վագեր։

Ինչպես նկատելի է, գաղտնավանկի հատկանիշով երկվանկ բառերը հոգնակիակազմության մեջ հիմքային տարբերակման են ենթարկվում[11]։ Հիմքատեսակների քննության մեջ այս մոմենտը հաշվի չառնել չենք կարող։

Ընդհանրապես նոր հայերենում ներ, ներ հոգնակերտների հետ հիմքերի զուգորդումները պայմանավորված են հիմքի վանկաքանակությամբ։ Ընդ որում վանկաքանակության սկզբունքը նոր գրական հայերենը հասցրել է իր կատարելության. բոլոր այն բառերը, որոնք հոգնակիակազմ հիմքում միավանկ են, ընդ որում և այն ժամանակ, երբ նրանք բարդության վերջնաբաղադրիչ են, և՛ հնչյունաբանորեն վերակազմավորված, և՛ չվերակազմավորված տեսքով, ընդունում են ներ հոգնակերտ, իսկ այն բառերը, որոնք հոգնակիակազմ հիմքում երկվանկ կամ բազմավանկ են, ընդունում են ներ մասնիկը։

Սա կառուցվածքայնորեն մշակված, միօրինակության հասած, պարզ օրինաչափության տեսք ստացած հոգնակիակազմության տիպոլոգիա է։

Նայած թե լեզուն կառուցվածքային ինչ տիպոլոգիայի է հետևում, ըստ այնմ էլ որոշում են նրա համակարգային ու ոչ-համակարգային կազմավորումների բնույթը։ Նոր գրական հայերենում, օրինակ, համակարգային զուգորդումները կատարվում են սովորաբար ներ և ներ հոգնակերտներով, իսկ հին գրական հայերենում այդպիսի կազմավորումների տարր էր f մասնիկը։ Համակարգային կառուցաձևերը պայմանավորված են տվյալ լեզվավիճակի սիստեմով, բխում են այդ սիստեմից, ընդհանրական ու լայն ընդգրկումներ ունեն։ Հոգնակիակազմության մեջ էլ համակարգային կառուցատիպ իր մեջ է ներառնում հոգնակի կազմող բառերի բացարձակ գերակշռող մասը։

Վանկաքանակությամբ բնութագրվող համակարգային հիմ-

---

10 Տերմինավորված կապակցություններում սովորաբար գործածում ենք՝ մեկուկես (ո՛չ մեկ ու կես)։

11 Մենք «մեկուկես վանկանի» հասկացությանը շարադրանքի մեջ տող ենք հատկացնում միայն այս հանգամանքը նկատի ունենալով։

քառիպների ենթատիպերն են՝ միավանկ հիմքեր և մեկից ավելի վանկանի հիմքեր։ Առաջինները դուգորդվում են եր հոգնակերտի հետ, իսկ երկրորդները (երկվանկ-բազմավանկները)՝ ներ հոգնակերտի հետ։ Սրանց տարբերակները որոշվում են հիմքի հնչյունաբանական կամ ձևաբանական վերակազմավորման բնույթով։ Այսպես՝ սեղան– (եղակին՝ սեղան) համակարգային դուգորդումների երկվանկ հիմք է, ինչյունաբաանորեն և ձևաբաանորեն չվերակազմավորված տարբերակ. մ(ը) կն– (եղակին՝ մուկ) համակարգային կազմավորումների միավանկ հիմք է, բայց ինչյունաբաանորեն ու ձևաբաանորեն վերակազմավորված տարբերակ, իսկ չ(ը)ր– նույն տիպի դուգորդումների միավանկ հիմք է, ինչյունաբաանորեն վերակազմավորված տարբերակ։

Ոչ-համակարգային, հնատիպ կազմավորումներում ևս կարող են լինել համանման տարբերակներ։ Այսպես՝ եզակի կին ձևից ունենք կան–այր հոգնակի՝ կին>կան փոփոխությամբ։

Քանի որ հոգնակիականության քննության մեջ առավել շատ հանդիպում ենք հնչյունաբանական տիպի վերակազմավորումների, ապա անհրաժեշտ ենք գտնում այստեղ որոշ բնութագրություններ անել՝ հետագա մեր վերլուծությունները ավելի ընկալելի դարձնելու միտումով։

Բնականաբար հիմքերի տարբերակումներ անում ենք նկատի ունենալով միայն հոգնակիականությունը, հոգնակիի հիմքերը և ոչ թե առհասարակ հիմքականությունը։ Եվ քանի որ հոգնակիի հիմքը կազմվում է եզակի ձևից կամ եզակիի ձևն է, ապա հոգնակիականությունը պարզաբանելիս մենք ելնում ենք եզակի համապատասխան ձևի բնույթից։

Եզակի ձևը կարող է հոգնակիի հիմք դառնալ առանց հնչյունական-արտասանական փոփոխությունների կամ այդպիսի փոփոխություններով։ Այն կարող է փոփոխությունների ենթարկվել իր հնչյունական կազմի տարբեր կողմերով՝ ձայնավոր և բաղաձայն հնչյուններ, երկբարբառներ ու երկհնչյուններ, վերջնահանգ, վանկակազմ, վանկաքանակություն, շեշտադրություն ևն։ Ըստ այդմ էլ հոգնակիի հիմքը եզակի ձևի (կամ հիմքի) համեմատությամբ հանդես է գալիս նաև հնչյունաբանական տարբերակի տեսքով. դրանով իսկ ունենում ենք՝ չշեշտազրկված կամ շեշտակիր և շեշտազրկված կամ շեշտափոխ հիմքատարբերակներ, վանկայնորեն չվերակազմավորված և վերակազմավորված հիմքատարբերակներ,

չհնչյունափոխված *կամ* անհնչյունափոխ *և* հնչյունափոխված *կամ* հնչյունափոխ *հիմքաոարբերակներ*[12]։

Նշված երևույթները հատուկ են բառային որոշակի խմբավորումներին։ Մենք շարադրանքի ընթացքում, ըստ կրած փոփոխության բնույթի, առանձնացրել ենք այդ խմբերը և նրանց հիմքակազմության տիպերը, այն էլ հնահայալ պատճառաբանությամբ։ Եթե միևնույն հիմքը շեշտափոխված է, ապա այդ չի նշանակում, թե նա պետք է նաև հնչյունափոխված լինի, կամ եթե վանկայնորեն վերակազմավորված է, ուրեմն և պետք է հնչյունափոխված լինի։ Շիշտ է, որ այս երևույթները իրար հետ ունեն որոշակի առնչակցություններ, առանձին դեպքերում պայմանավորելով միմյանց։ Բայց մեծ մասամբ անկախաբար գործող օրինաչափություններ են։ Այսպես՝ արևելահայ գրական լեզվում ծառ—ծառեր հոգնակիակազմության մեջ ծառ- հիմքը անհնչյունափոխ է, բայց վանկայնորեն վերակազմավորված է՝ ծա-ռեր, ու շեշտադրկված՝ ծա՛ռ>ծառ-ե՛ր. իսկ տուն—տներ կազմավորման մեջ հոգնակիի հիմքը և՛ հնչյունափոխված է՝ ու>ը, տուն—տ(ը)ներ, և՛ վանկայնորեն վերակազմավորված՝ տուն>տ(ը)-ներ, և՛ շեշտադրկված՝ տո՛ւն—տնե՛ր։ Բայց, ասենք, ֆաղաքներ հոգնակի կառուցվածքում միայն հիմքի շեշտադրկություն կա (քաղա՛ք>քաղաք-նե՛ր). այստեղ հիմքում հնչյունափոխություն չի կատարված, տեղի չի ունեցել նաև եզակի ձևի վանկային վերակազմավորում։

Եվ ահա այս հատկությունները հաշվի առնելով, հոգնակիակազմությունը քննելիս, նշված հիմքային տարբերակները և նրանց բնութագրություններ ներկայացնում ենք ըստ հնչյունական-արտասանական միավորների դրսևորած վարքագծի։

Շեշտակիր ենք կոչում *հիմքատարբերակն այն դեպքում, երբ* եզակի ձևում եղած շեշտադիրքը նույնությամբ պահպանվում է հոգնակիի հիմքում։ Եթե ավելացող հոգնակերտը բազմավանկան տարր է, բառաձևի վանկաքանակությունը չի փոխում, բնականաբար տեղի չի ունենում նաև շեշտի տեղափոխություն. համմտ. *ծառա՛յ>ծառա՛յ-ք (գրաբարում), սարեցի՛>սարեցի՛-ք (աշխարհաբարում)։*

Շեշտափոխ *կոչում ենք հիմքերը այն դեպքում, երբ* եզակի ձևում եղած շեշտադիրքը նույնությամբ չի պահպանվում հոգնա-

---

12 Թեև շատ դեպքերում գործածում ենք հիմք տերմինը, բայց պետք է նկատի ունենալ, որ հոգնակերտների հիմքային զուգորդումներում վանկաքանակությամբ առանձնանում են հիմքեր, հիմքատեսակներ, իսկ հնչյունաբանական կամ ձևաբանական վերակազմավորումներով՝ հիմքային տարբերակներ։

կիի հիմքում։ Եթե հոգնակերտը ձայնավորում ունի և նրա ավելացումը հիմքին ուղեկցվում է բառաձևի ածումով, ապա խախտվում է վանկաքանակությունը, շեշտը տեղափոխվում է հոգնակերտով ձևավորված վանկը, որի հետևանքով հիմքը շեշտազրկվում է։ Հայերենում ձայնավորում ունեցող հոգնակերտներ շատ կան. դրանք սակավ են գրաբարում։ Եվ այդ է պատճառը, որ գրաբարում հոգնակիակազմ հիմքերը գերազանցապես անհնչյունափոխ են. ք հոգնակերտից առաջ Եթե հիմքային վերակազմավորումը փոխում է հիմքի վանկաքանակությունը, վանկարկնությը, միայն այդ դեպքում առկա է շեշտի տեղաշարժ, այն էլ հիմքային ոլորտում և ոչ Եթե ամբողջ բառաձևի սահմաններում. օր. ձո՛ւկ(ը)ն—ձկո՛ւնք, քա՛ր—քարի՛նք են։ Ժողովրդական հայերենում հանդիպում ենք գերազանցապես շեշտափոխ հիմքերի, որովհետև հոգնակերտները սովորաբար ձայնավորում ունեն (եր, ներ. ների և այլն)։ Ավելին՝ որոշ բարբառներում կան այնպիսի հոգնակերտներ (օղ. Ղրբ. բ-ում են), որոնք անպայման շեշտը իրենց են քաշում. դրանց հետ զուգորդվող հիմքերը միշտ շեշտափոխ-հնչյունափոխ են։

Վանկայնորեն չվերակազմավորված է հիմքն այն դեպքում, երբ եզակի ձևի վանկակազմը, վանկային սիպերը և վանկաքանակությունը նույնությամբ պահպանվում են հոգնակիի հիմքում. ասենք, միավանկը մնում է միավանկ, բազմավանկը՝ բազմավանկ, վանկաբունը իր եղրերով, լիահնչունությամբ կամ գաղտնավանկով մնում է նույնական և այլն. օրինակ՝ արևելահայ գրական լեզվի ճանապարհ—ճանապարհներ հոգնակիակազմության մեջ եզակի ձևը եռավանկ է, լիահունչ վանկերով, հոգնակիի հիմքում ևս նա եռավանկ է՝ լիահունչ վանկերով. վանկային եղրերն էլ նույնությամբ պահպանվում են. ճա–ճա–պարհ–ներ։

Վանկայնորեն վերակազմավորված է հիմքը, Եթե եզակի ձևի համեմատությամբ հոգնակիի հիմքը փոփոխված է վանկաքանակով, վանկաբնի բնույթով, հիմքավերջի վանկի կառուցվածքով և կամ վանկաբնի վերջնաեղրի տեղաշարժով։ Այսպես՝ արևելահայ գրական լեզվում աստղ բառը երկվանկ է, այսպես կոչված մեկուկես վանկանի. հոգնակիի հիմքում խախտվում է նրա վանկաքանակը, վերածվում է միավանկի. դուրս մնացած գաղտնավանկի վերջնաեղրը՝ ղ բաղաձայնական տարրը տեղաշարժ է կատարում դեպի հաջորդ՝ ավելացած հոգնակերտը և նրա հետ մի վանկ է կազմում։ Ուրեմն այստեղ ունենք՝ ա) վանկաքանակության խախտում, բ) գաղտնավանկի բնի վերացում, դ) վանկաբնի վերջնաեղրի տեղաշարժ։ Այսպիսով աստղ—աստղեր հոգնակիակազմության

մեջ հիմքը վանկայնորեն, այն էլ տարբեր ասպեկտներով վերակազմավորված է։

Անհնչյունափոխ է հիմքն այն դեպքում, երբ եղակի ձևը իր ձայնավորական կամ բաղաձայնական կազմով, երկբարբառներով կամ երկհնչյուններով կազմով, նույնությամբ պահպանվում է հոգնակիի հիմքում. այսինքն՝ հոգնակիակազմ հիմքը նույն եղակի ձևն է, առանց որևէ հնչյունափոխության։ Այսպես՝ ժամանակակից արևելահայ գրական լեզվում, ներ հոգնակերտից առաջ, հոգնակիակազմ հիմքերն անհնչյունափոխ են. բաժակ>բաժակ-ներ, գինի>գինի-ներ, առու>առու-ներ, ամուսին>ամուսին-ներ, գարուն>գարուն-ներ։

Հնչյունափոխ են հիմքերն այն դեպքում, երբ հոգնակիի հիմքը եղակի ձևի համեմատությամբ ենթարկված է հնչյունափոխության (ձայնավորների, բաղաձայնների, երկբարբառների կամ երկհնչյունների կազմով). համմտ. ի կամ ու վանկաբաշն ունեցող երկվանկ-միավանկ բառերի մեծ մասի հոգնակիակազմությունը արևելահայ գրականում. բիծ—բծեր, թուղթ—թղթեր, ջուր—ջրեր են։

Այս վերլուծությունները բերում են այն հետևության, որ՝ «եղակի այս կամ այն ձևը հոգնակիակազմ հիմք» է դրույթը բացարձակորեն չպետք է հասկանալ. եղակին կարող է հնչյունաբանական, ձևաբանական, նաև ձևա-հնչույթաբանական վերակազմավորումների ենթարկվել հոգնակիակազմ հիմքում։

Թվակազմությունը քննելիս մենք գործածում ենք առաջին կարգի վերջնաբաղադրիչ և երկրորդ կարգի վերջնաբաղադրիչ տերմիններ (հասկացություններ)։ Մի փոքրիկ պարզաբանում էլ դրանց համար։

Նոր հայերենում հոգնակիակազմ հիմքերը պահպանում են հոգնակերտների հետ զուգորդման իրենց կաղապարները նաև այն դեպքում, երբ նրանք բարդության մեջ վերջին բաղադրիչի դիրքում են։ Եթե այդ այդպես է, ապա միավանկ բառ-արմատ վերջնաբաղադրիչի դեպքում, երկվանկ-բազմավանկ բարդությունները, անկախ վանկաբանակությունից, պետք է զուգորդվեն ներ հոգնակերտի հետ։ Բայց կան նաև այնպիսի բարդություններ, որոնք նույնպես ունեն միավանկ արմատ (կամ արմատ-բառ) վերջնաբաղադրիչ, մինչդեռ զուգորդվում են ներ հոգնակերտի հետ։ Երկրորդ տիպի վերջնաբաղադրիչները հիմնականում բայարմատներ են, կամ այնպիսի բառ-արմատներ, որոնք բարդության մեջ չեն պահպանում առարկայնության գաղափարը և բարդության մյուս

բաղադրիչների հետ միասին մի նոր ընդհանուր իմաստ են արտահայտում։

Շարադրանքի պարզության համար ես-ով զուգորդում ունեցող այդպիսի բարդությունների վերջնաբաղադրիչը կոչում ենք առաջին կարգի վերջնաբաղադրիչ, ես-ով զուգորդում ունեցողներինը՝ երկրորդ կարգի վերջնաբաղադրիչ[13]։

* * *

Թվականության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն հայերենում ևս ունի կառուցվածքային ուրույն դրսևորումներ. ընդ որում թվի քերականական իմաստի արտահայտման միջոցը մասնիկավորումն է։ Սակայն ինչպես այլ լեզուներ, այնպես էլ հայերենը առարկաների քանակային կողմը արտահայտելու համար՝ երբեմն դիմում է բառային (լեքսիկական) միջոցների. այսպես՝ շատ, քիչ, բազում, բոլոր, ամբողջ, բազմիցս, կրկին, կրկնակի և նման շատ բառեր այդպիսի արժեք ունեն, կամ կապված են դրա հետ։ Ավելին, կան բառ-քերականական խմբավորումներ, որոնք հենց միայն թվային (քանակային) հատկանիշ են արտահայտում, ինչպես որ թվականներն են։

Սակայն թվականները, ի տարբերություն թվի քերականական կարգի, նշում են որոշակի սահմանային հասկացություն՝ ըմբռնվող առարկաների շարքում։ Հարյուր թվականը արտահայտում է ստույգ թվային դաղափար, որ կարող է վերցվել գրույի, մեկի և այլ թվերի (ինչպես հարյուրից ավելինի, այնպես էլ հարյուրից պակասի) հարաբերակցությամբ։

Մինչդեռ գոյականի թիվը ունի մեկի և մեկից ավելինի բաճակային հարաբերության ասպեկտ, որ և նրա քերականական իմաստն է։ Մեկից ավելին, որ հոգնակին է, ոչ մի եզր չունի, նա ըստ էության կարող է ձգտել անսահմանության։ Մասնիկ և մասնիկներ հարաբերակցությունը մեկի և մեկից ավելինի քանակային հարաբերություն է. այստեղ արդեն կարևոր չէ, թե այդ մեկից ավելին երկու մասնիկ է, երեքն է, թե՝ հարյուրը։ Թվական անունները վերացարկված ձևով (քանակային հատկանիշ՝ առարկայից կամ առարկաներից անկախ) որոշակի, ստույգ քանակային եզր են նշում։

Այստեղ գործ ունենք առարկաների քանակային կողմի ըն-

---

[13] Քանի որ այս օրինաչափությունը առավել հստակ դրսևորում ունի արևելահայ գրական լեզվում, ուստի դրա բնութագրությունը հանգամանորեն տալիս ենք համապատասխան տեղում՝ թվականության քննության մեջ։

կալման իմացական երկու եղանակի հետ՝ քերականական և բառային: Ընդ որում քերականական ընկալումը չի խանգարում բառայինին: «Հինգ ուսանող եկան», թե «Ուսանողները եկան» խոսքային որոշակի սիտուացիայում իրար փոխարինում են: Բայց վերջավոր, սահմանային քանակության բառային ընկալումը (թվականները) կարծես թե ավելորդ է դարձնում քերականական առպեկտը, ինչպես նկատելի է հատկապես կցական տիպի լեզուներում. թվական լրացում ունեցող գոյականը սովորաբար եզակի թվով է. հինգ մարդ և ոչ հինգ մարդիկ:

Թեքական լեզուներում բառաձևի քերականական ծանրաբեռնությունը «իատացված» է. բառաձևը հաճախ կաշկանդված է նաև համաձայնությամբ. այս և այլ հանգամանքներ նպաստում են քերականական առպեկտի պահպանմանը նաև թվական լրացման դեպքում: Այնուամենայնիվ երբեմն այստեղ էլ է մուտք գործում կցականի կաղապարը. հմմտ. ռուս пять человек *և ո՛չ* пять людей:

Հայերենում էլ կան սաստկություն, բազմակիություն, բազմություն արտահայտող մասնիկավոր ձևեր, բայց ածանցմամբ. օրինակ՝ եղեն, մասամբ և ություն, բարբառներում՝ օտ (օր. տանձօտ, փրոըշնօտ), ինչպես և բազմապատկական ուտ, կուտ, ատ և այլ ածանցներով կազմություններ:

Նման նշանակությունների համար հաճախ գործածվում է կրկնությունը (հմմտ, ՄՄ. ՀԼՏ, 180—181. ԳՍ. ԺՀՂԴ, 160. ԳՋ. ՀՀՀՍ, 138—139. ԱՍ, ԳՋ, 387, 423, 429, 435, 448):

Սակայն հայերենում կրկնությունը հոդնակիության գաղափար չունի[14], քանի որ նույն նշանակությունների համար ունենք ոչ միայն եզակիի, այլև հոդնակիի ձևերի կրկնություն. օր. տեղ տեղ «մի քանի տեղ, առանձին տեղեր, շատ տեղեր», տեսակ տեսակ «շատ տեսակի, բազմատեսակ» (աշխարհաբարում), ամսոյ ամսոյ «ամեն ամիս» (գրաբարում), բայց նաև՝ գաւառաց գաւառաց, ի տեղաց տեղաց, ի տեղիս տեղիս, բարդս բարդս, գունդս գունդս են:

Հայերենում թվի քերականական առպեկտը իրացնող օժանդակ բառեր համարյա չեն գործածվում. հոդնակին միայն մասնիկավորմամբ է: Մի փաստ, երբ հոդնակիի ֆունկցիան օժանդակ բառը վերցնում է իր վրա, նշում է բարբառագետ Ս. Ալավերդյա-

---

[14] *Մինչդեռ ճապոներենում և մի քանի այլ լեզուներում կրկնությամբ հոդնակի կազմելը սովորական է:*

նը Աբդվինի բարբառի իր ուսումնասիրության աոիթով (տե՛ս ՍԱ, ԱԲՋԱ, 230)։

Հայերենը որևէ փաստ չի տալիս նաև ներքին թեքումով հոգնակիի իմաստ դրսևորելու վերաբերյալ, թեև մասնակիորեն, այդ եղանակով առանձին արտահայտությունների հանդիպում ենք որոշ հնդեվրոպական լեզուներում[15]։

Եվ այսպես՝ հայերենում, նրա զարգացման տարբեր էտապներում ու կառուցվածքային տարբեր վիճակներում հոգնակիակազմությունը միայն մասնիկավորմամբ է։

Մեր ուսումնասիրության մեջ անհրաժեշտ գտանք իվակազմության մեջ առանձին բաժնով քննել հոգնակերտ մասնիկները։ Այս առանձնացումը պայմանավորեցինք որոշակի հարցադրումներով։ Մեզ հետաքրքրել են հոգնակերտ մասնիկների ձևաբանական կազմը (պարզ, բաղադրյալ, զույգ), նրանց առաջացման ակունքները, տարածվածությունը հայերենի զարգացման տարբեր էտապներում, տարբեր վիճակներում (այսինքն՝ էվոլյուցիան ամբողջ գրավոր շրջանում), գործածության դիրքերը, համակարգային թե ոչ-համակարգային կազմավորումների տարբեր լինելը և այլն։

---

[5] Այլ լեզուներում, օրինակ, արաբերենում այդ միջոցը լայն կիրառություն ունի։ Տիպիկ անջատական շատ լեզուներում տարածված է օժանդակ բառերի գործածությունը. որոշ լեզուներում (օր. բասկերենում) այդպիսի ֆունկցիա կարող է իր վրա վերցնել շեշտը, այլ լեզուներում ինտոնացիան ևն։

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ

ԹՎԱԿԱՐԳ ԵՎ ԹՎԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՐԳԵՐ

1. Թվակարգը և բառաձևի լեքսիկական իմաստավորումները: 2. Եզակի թիվ: 3. Հոգնակի թիվ: 4. Անհոգնականներ: 5. Անեզականներ: 6. Հավաքականներ: 7. Երկակի թիվ: Հնդեվրոպական երկակիի մնացորդները հայերենում: 8. Թվային ենթակարգերի կառուցվածքային–ֆունկցիոնալ հարաբերակցություններ:

1. ԹՎԱԿԱՐԳԸ ԵՎ ԲԱՌԱՁԵՎԻ ԼԵՔՍԻԿԱԿԱՆ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Ամեն մի բառ իմաստային որոշակի ծանրաբեռնվածություն ունի, եվ իբրև այդպիսին նա ծառայում է մարդու իմացական (հոգե-մտածողական, դատողական) պահանջներին: Բառը իր այդ դերը իրականացնում է իր այն հատկության շնորհիվ, որ նա ամենից առաջ հասկացության անուն է: Սակայն մարդու և իրականության փոխհարաբերության բարդ պրոցեսի հետ կապված շատ դործոններ, հոգեբանական զանազան ընկալումներ ինչ-որ չափով իմաստային այլևայլ երանգներ, նրբերանգներ ևս մտցնում են բառի (բառաձևի) բովանդակության մեջ: Եվ այս կերպ լեքսիկական այդ միավորը որոշ չափով կախման վիճակում է դրվում կոնտեքստային միջավայրից, խոսողական շրջապատից: Այս ամենը բառի իմաստային դաշտը դարձնում են բազմազան:

Բառային իմաստավորումները բնականաբար պայմանավորված են հենց առարկաների իրական դրությամբ, նրանց հատկություններով: Առարկաները իրականության մեջ տարբեր կարգի փոխհարաբերությունների, փոխկապակցությունների մեջ են գտնվում համապատասխան իրենց բնական այդ հատկությունների: Բառերը լեզվի կառուցվածքում քերականական տարբեր ձևավորումներ են ստանում և այլևայլ հարաբերությունների մեջ են

մանում շնորհիվ իրենց իմաստավորումների։ Եվ այսպես՝ գիտակցությունը իր կատեգորիաներով համաչափություն է ստեղծում իրականության հետ, լեզուն իր կարգերով համաչափություն է ստեղծում իմացականության (գիտակցության, մտածողության) հետ։

Բվակարդը կազմավորվել է մեկի և մեկից ավելինի քանակային հարաբերության իմացական հիմքի վրա, սակայն բառի իմաստային դաշտի այլևայլ դործոններով պայմանավորված, այն սովորաբար ներկայանում է նաև բառա-քերականական դանադան դրսևորումներով։ Տարբեր բառեր կամ միևնույն բառի լեքսիկական տարբեր իմաստավորումներ կարող են ունենալ այսպիսի հարաբերակցություններ. Բաժանականություն—հավաքականություն, Թանձրացականություն—վերացականություն, Թվարկվողականություն—նյութայնություն (զանգվածայնություն), անհատականություն—ընդհանրականություն (տեսակայնություն), բառի ուղղակի առարկայական վերաբերություն—բառի փոխաբերական իմաստավորումներ, մենիմաստություն—բազմիմաստություն և այլն։

Բաժանականությունն այն է, երբ բառիմաստի ընդհանրության մեջ տրվածը ներկայանում է իբրև միավորների այնպիսի շարք, որի նկատմամբ կարելի է կիրառել մեկի և մեկից ավելինի քանակային հարաբերության իմացական ասպեկտը (հայեցակետը)։ Թվակարդը հենվում է հենց այսպիսի բաժանականությամբ բնորոշ բառիմաստի վրա։ Գնդակ բառն ունի միատեսակ (միատեսակ) առարկանների ընդհանրություն արտահայտող բառիմաստ։ Այս տեսանկյունից գնդակ—գնդակներ հարաբերությունը, որ ինքնին մեկի և մեկից ավելինի քանակային հարաբերակցություն է, միանգամայն պատճառաբանված է։ Խոսքի մեջ առարկայական վերաբերությամբ երկու ձևերն էլ (և եզակին՝ գնդակ, և հոգնակին՝ գնդակներ) թանձրացական են։ Այս միաժամանակ նշանակում է, որ գնդակ բառը թվարկվող առարկայի անուն է։

Հավաքականությունը նույնպես լեքսիկական իմաստավորում է (բառիմաստային կարգ), սակայն կառուցվածքային որոշակի պայմաններում այն կարող է ձևավորվել իբրև բառա-բերականական կարգ։ Ընդ որում՝ սովորաբար լեքսիկական իմաստավորումը դրսևորվում է եզակիանաձև, իսկ բառա-քերականականը՝ անեզականաձև։

Եզակիանաձև հավաքականները կառուցվածքով կարող են առանձնանալ լեքսիկական այլ իմբավորումներից։ Կան հավաքականներ, որոնք վերացական գոյականներին բնորոշ կառուցաձև ունեն. օրինակ՝ ուսուցչություն, նախագահություն։ Սրանք հիմնա-

կանում ածանցված են գոյականներից՝ վերացականակերտ-հավաքականակերտ ություն մասնիկով (ուսուցիչ—ուսուցչություն, ուսանող—ուսանողություն են)։ Կա մասնիկավորում (ածանցում), որ հավաքականության համար է. Ղարաբաղի բարբառում՝ փեչ «փայտ —փեղեր, բայց՝ փեղվանճ, փըդէղան, որտեղ վանճ-ը հավաքականակերտ հոդնակերտ է, իսկ էղան-ը գրական հայերենի նույն եղեն հավաքականակերտ ածանցն է։ Նույն բարբառում կա նաև հավաքականակերտ օտ (ӧտ) *մասնիկ*[16]։

Գրական հայերենում հատկապես լայն տարածում ունի հավաքականակերտ եղեն ածանցը. ամանեղեն, բանջարեղեն, արծաթեղեն են։ Եղեն հավաքականը սովորաբար դրվում է այն հիմքերի վրա, որոնց իմաստը կարող է դառնալ միավորող, ամբողջացնող հատկանիշ հարակից իրերի, առարկաների համար. արծաթեղեն՝ միայն արծաթի հավաքականություն չէ, այլև այն առարկաների, իրերի, որոնց համար ընդհանուր է արծաթի հատկանիշը, մրգեղեն նշանակում է մրգի տարբեր տեսակների ամբողջություն, որոնց ընդհանուր հատկանիշն այն է, որ բոլորն էլ մրգ են. նույնը և բանջարեղեն, ամանեղեն, կտորեղեն և այլն[17]։

Վերացականություններ ևս ուրույն տեղ ունի բառի լեքսիկական իմաստավորումներում։ Սա կապված է առարկաների հատկությունների, նրանց հետ կապված երևույթների ընկալումների հետ։

Առարկան իրականության մեջ գոյություն ունի որոշակի հատկություններով, հատկանիշներով. այդ հատկանիշները միատարր չեն։ Իրրև մտքի (խոսքի) օբյեկտ առարկան կարելի է ներկայացնել նրա որևէ մեկ կամ մի քանի հատկանիշների (որակային, քանակային, պրոցեսային են) նշումով. օր. մեծ քաղաք, երկրորդ քաղաքը, քաղաքն աճում է. կամ՝ մեծ, նորակառույց այդ երկրորդ քաղաքը։ Գիտակցության մեջ առարկայի հասկացությունը ստեղծվում է մասնավոր հատկանիշներից վերանալու եղանակով, ընդհանրացման միջոցով։ Աշխարհում շատ քաղաքներ կան, և ամեն մեկը մյուսից տարբերվում է այլևայլ մասնակի հատկանիշներով. կան մեծ և փոքր, նորաշեն և հնակառույց քա-

---

16 *Հավաքականների նման՝ վերացականները, նյութայինները ևս կարող են պարզ (արմատական) կամ բարդաբույլ (ածանցավոր) կազմություն ունենալ. այսպես՝ պլյուս, նավթ, ծխոյթ, աղ զանգվածային իմաստ ունեցող արմատական բառեր են, թափոն՝ նույն իմաստով, բայց՝ ածանցավոր. տուտ՝ վերացական արմատական է, իսկ պարզություն, մեծություն, հաղրանակ վերացականները՝ ածանցավոր։*

17 *Հավաքականության մասին մանրամասն տե՛ս առանձին։*

ազգներ և այլն։ Բայց բաղաք հասկացությունը վերացարկված է այդ և այլ բնույթի մասնավոր հատկանիշներից, գծերից և իր մեջ ներառնում է առհասարակ քաղաքին հատուկ առավել ընդհանրական, էական հատկանիշների ամբողջությունը։

Չնայած իր կազմավորման մեջ ընդհանրացված, վերացարկված լինելուն՝ բաղաք հասկացությունը այնուամենայնիվ դիտվում է իբրև կոնկրետ (թանձրացական), որովհետև այնպիսի օբյեկտ է, գոյ, որ ենթակա է զգայական ընկալումների։ Այս տեսանկյունից՝ մեծ, վտոր, կանաչ, կարմիր հատկանիշների անունները (հասկացությունները) ևս կոնկրետ են. նրանք էլ ենթակա են նման ընկալումների։ Բայց սրանք առարկայական նշանակություն կարող են ձեռք բերել փոխաբերական առման դեպքում, փոխանունությամբ, երբ հատկանիշի անունով կոչենք առարկան՝ մեծ—մեծը, կանաչ—կանաչը։ Այսպիսի իմաստավորման դեպքում նրանք ձեռք են բերում առարկայնություն արտահայտող բառերի՝ գոյականների քերականական արժեք, և իրենց այդպիսին՝ կարող են ներքաշվել ձևակի—հոգնակի հարաբերակցության մեջ։ Այլ դեպքերում, եթե հատկանիշի անունը հոգնակերտ մասնիկ ունի, ապա դա լինում է թվային համաձայնության՝ լրացյալ գոյականի թվի պահանջով, որովհետև գոյականն է այդ համաձայնության կենտրոնը, առանցքը։

Այնուհետև. կոնկրետ հատկանիշը սովորաբար հանդես է գալիս որևէ առանձին առարկայի կամ առարկաների խմբի հետ. սա տվյալ հատկանիշի մասնավոր, թանձրացական դրսևորումն է։ Այսպիսի հատկանիշի անունն էլ խոսքի մեջ դրվում է գոյականի հետ։ Սակայն կա հատկանիշի ընկալման իմացական այլ ասպեկտ ևս։ Վերանալով մասնավոր դրսևորումներից՝ կարելի է հատկանիշը վերցնել իբրև այդ մասնավոր արտահայտությունների, առարկայի կամ առարկաների հետ ունեցած մասնավոր առնչակցությունների ընդհանրություն, անկախ այն կրող օբյեկտի (օբյեկտների) հարաբերակցությունից։ Ահա այսպիսի դեպքերում գործ ենք ունենում վերացարկված հատկանիշի անվան հետ, որ և նույնն է՝ վերացական գոյականների հետ[18]*։*

Այս վերացականությունը ինքնին հնարավոր չէ վերցնել մեկի և մեկից ավելինի քանակային հարաբերության ասպեկտով. քանի այդմ էլ բուն վերացական անունների նկատմամբ թվակարգը չի

---

[18] *Բնականաբար վերացական գոյականների շարքը սրանցով չի սահմանափակվում։ Վերացականությունը քանի էության ընդգրկում է այն օբյեկտների անուններըը, որոնք զգայական ընկալման, զննման ենթակա չեն։*

կիրառվում։ Եթե այդ այդպես է, ապա նրանք հոգնակի ձև չեն կարող ունենալ, անհոգնական են։ Եվ այսպես՝ գեղեցիկ հատկանիշը առնչություն ունի շատ առարկաների հետ. «գեղեցիկ քաղաք», «գեղեցիկ տուն», «գեղեցիկ կին» և այլն։ Բայց երբ մասնավոր այդ առնչություններից վերանանք և այդ հատկանիշն ըմբռնենք իր ընդհանրության մեջ (ոչ թե տվյալ քաղաքի կամ տան կամ կնոջ գեղեցիկ հատկությունը, այլ այդ հատկությունն առհասարակ, անկախ նշված և ուրիշ առարկաների առնչություններից), ապա գործ կունենանք գեղեցիկ հատկանիշի վերացարկված հասկացության հետ, իբրև գեղեցկություն։

Այսպիսի բառերը ևս, հատկանիշի հակադարձ ընկալմամբ, երբ հատկանիշի վերացարկված ըմբռնումը առնվում է առանձին առարկաների հարաբերությամբ (վերաբերությամբ), որոշակի օբյեկտների հատկացնելով այդ հատկությունը, կարող են վերցվել թվակարգի քերականական հայեցակետով (մեկի և մեկից ավելինի հարաբերակցությամբ) և կազմել հոգնակի ձևեր. օր. «Մեր սարերում հովեկները շատ գեղեցկություններ տեսան», «Վերացական գոյականները,— գրում է Է. Բ. Աղայանը,— կարող են առնվել մասնավոր դեպքերի ու իրողությունների, երևույթների, մասնավոր դրսևորումների իմաստով և այդ դեպքում նրանք կարող են կազմել հոգնակի ձև» (ԷԱ, ժ22Ե, 249)։ Այս տեսանկյունից դառնություններ կարող է նշանակել «դառնության պահեր», ուրախություններ՝ «ուրախության պահեր»։

Եթե վերացականությունը ինքնին տրված է արմատական բառիմաստում, ապա այդ դեպքում էլ նա արտահայտում է այնպիսի առարկա (հասկացություն), որը զգայական ընկալման ենթակա չէ։ Այստեղ բնականաբար բառածևը հատուկ մասնիկավորման կարիք չունի, իսկ եթե վերացականությունը կապված է հատկանիշի ուրույն ընկալման հետ, ապա նրա կառուցվածքային ակունքները տանում են դեպի տարբեր հիմքերով մասնիկավորումներ։ Եվ քանի որ հատկանիշը կարող է լինել որակական, պրոցեսային ևն, ապա նշված հիմքերն էլ լինում են և՛ անվանական (ածականական), և՛ բայական։ Այսպես՝ ություն ածանցով առողջ-, ազահ-, ամոթխած-, լուռ-, խաղաղ-, հաշտ-, բարոյական-, էժան-, լավ-, փորձառու-, հապճեպ-, ժողովրդական-, ուշադիր-, թանկ-, ածականական հիմքերից ունենք՝ առողջություն, ագահություն, ամոթխածություն, լռություն, խաղաղություն, հաշտություն, բարոյականություն, էժանություն, լավություն, փորձառություն, հապճեպություն, ժողովրդականություն, ուշադրություն, թանկություն վերացական գոյականները, իսկ վեճարկ-, տպագր-, փրկ- բայական

հիմքերից՝ քվեարկություն, տպագրություն, փրկություն վերացական գոյականները։

Վերացական կազմավորումներում ինչքան ուժեղ է ընդհանրացման կողմը, և ինչքան այդ ընդհանրացումը հեռանում է մասնավոր առարկաների հետ ունեցած առնչակցություններից, այնքան անհնարին է դառնում մեկի և մեկից ավելինի քվակարգային ասպեկտի կիրառումը դրանց նկատմամբ, այնքան ռեալ է դառնում դրանց անհոգնականությունը։ Այսպիսիք են, օրինակ, գրաճենյակայնություն, օգտակարություն, օրլոմովականություն վերացականները։ Բուն անհոգնական–վերացականները այս տիպի են։

Այսպիսով, վերացականների դեպքում էլ կառուցվածքային պլանում ունենք երեք դիրք. ա) եզականաձև վերացական, որ կարող է մտնել եզակի—հոգնակի հակադրության ոլորտը (հաղթանակ—հաղթանակներ, վարժություն—վարժություններ են), բ) եզականաձև՝ անհոգնական—վերացական, որ չի մտնում այդ ոլորտը (ուշադրություն, համերաշխություն են), գ) հոգնականաձև՝ անեզական-վերացական, որ եզակի եզր կա՛մ չունի, կա՛մ եթե ունի էլ, համարժեք չէ նրան։ Առաջին խումբը բուն իմաստով վերացական չէ։ Երրորդ խմբում արդեն գործ ունենք բառա-քերականական ենթակարգի հետ։ Այս ենթակարգը հատկապես բնորոշ էր դրաբարին և մեծ մասամբ դրսևորվում էր բայահիմքերի ու ի հոգնակերտի (նաև ի-ով զարգացում ունեցած այլ մասնիկների) զուգորդումներում։

Նյութայնությունը (вещественность) կամ զանգվածայնությունը ուրույն արտահայտություն ունի որոշ բառերի իմաստներում և նկատելիորեն կանխորոշում է այդ բառերի քերականական վարքագիծը։ Այս տիպի լեքսիկական միավորներից են՝ ձյութ, սոսինձ, յուղ, նավթ, թանաք են, որոնք դուրս են գտնվում եզակի—հոգնակի հակադրությունից, սրանց նկատմամբ էլ կիրառելի չէ թվակարգի ասպեկտը։ Սակայն սրանք նույնպես լրացուցիչ իմաստավորմամբ կամ իմաստային անցումով կարող են ներքաշվել մեկի և մեկից ավելինի քանակային հարաբերակցության ոլորտ և այդ դեպքում կունենան հոգնակի ձևեր։ Բնականաբար այստեղ էլ կունենանք եզակի—հոգնակի անհամարժեքություն (ուժեղ շեշտվածությամբ կամ թույլ կերպով արտահայտված)։

Հայերենի կառուցվածքային որոշ հատկություններ հնարավորություն են տալիս, որ նյութայնության արտահայտող եզակի և հոգնակի բառաձևերը իմաստաբանական պլանում ունենան հարաբերակցվող եզրեր, շփման կետեր, ուստի այս կարգի բառերից

գրեթե ազատորեն կազմվում են հոգնակի ձևեր։ Ահա թե ինչու դրանց մեջ հայերենը որոշակիորեն չի առանձնացնում բառա-քերականական կարգ, մինչդեռ ռուսերենում այդ որոշակիությունը խիստ զգացվում է. համմ. чернила, ши ևն։ Այնուամենայնիվ հայերենում ևս լեքսիկական այս իմաստավորումները ինչ-որ ուրույն դրսևորումներ ունեն կապված անհոգնականության և անեզականության հետ։

Անհատականություն արտահայտող բառերը ունեն մեկ առարկան նշելու հատկություն։ Այսպես՝ միակիության գաղափարով առանձնանում են՝ ա) միասեռ, տեսակային հատկանիշով կապված առարկաների շարքից «մեկը», որը դիտվելով իբրև անհատ առարկա՝ բացառում է տեսակը. սրանք լեքսիկական պլանում ներկայանում են որպես հատուկ անուններ (անձնանուններ, տեղանուններ). բ) բնության մեջ «միակի» գոյություն ունեցող, կամ այդպիսին համարվող առարկան. արև, լուսին, հարավ, հյուսիս ևն։ Այս անունները թվակարգի նկատմամբ չեզոք են, որովհետև չեն կարող ներքաշվել մեկի և մեկից ավելինի քանակային հարաբերակցության մեջ։

Սակայն բառի իմաստային դաշտին բնորոշ տեղաշարժերը այստեղ էլ հնարավորության դուռ են բացում թվակարգի ասպեկտի համար։ Փոխաբերական որոշ իմաստավորումների հետ կապված այս անհատական-անհոգնականներից կազմվում են հոգնակի ձևեր, ինչպես օրինակ, Վարդան—Վարդաններ, Ալիմյան—Ալիմյաններ—ալիմյաններ, Ջիմզիմով—Ջիմզիմովներ—զիմզիմովներ, արև—արևներ և այլն։

Բառի լեքսիկական իմաստների վերաբերյալ մեր վերլուծության վերջում անհրաժեշտ ենք գտնում ընդգծել, որ դիտարկվածներով չեն սպառվում այդ կարգի իմաստավորումները, բայց դրանք առավել կարևորներն են եղածների մեջ, հատկապես թվակարգի ասպեկտի հետ ունեցած առնչությունների տեսանկյունից։ Իսկ այդ առնչակցությունները, ինչպես տեսանք, արտահայտվում են նրանում, որ բառիմաստային այդ տիպերը «հանդես են բերում թվի քերականական կարգի դրսևորման առանձնահատկություններ»[19]։

Մինչև հիմա թվակարգային ասպեկտը վերցրինք բառի իմաստային դաշտում, լեքսիկական նշանակություններ հետ ունեցած

---

[19] Գ. Բ. Ջանուկյան, *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը*, Երևան, 1969, էջ 151։

առնչակցություններով, չանդրադարձանք նրա հարաբերակցություններին՝քերականական իմաստների ոլորտում։

Քանի որ բառիմաստն ինքնին չի արտահայտում անհատը (ինդիվիդը), այլ ընդհանուրը (տեսակը), որի մեջ էլ ներկայանում է անհատականը, իսկ թվակարգն ըստ էության մեկի (անհատականի) և մեկից ավելինի (դասի) հարաբերակցություն է արտահայտում, ուստի անվան թիվը ամենից ավելի է ղգայուն բառի իմաստային դաշտի նկատմամբ, ավելի մոտ է կանգնած նրան։ Եվ ընդհանրապես առարկաների իմացական ընկալման մեջ քանակային-թվակարգային ասպեկտը դոմինանտում է տվյալ առարկայի նկատմամբ եղած այլ ասպեկտներին։ Այս տեսանկյունից թվակարգը գոյականի բառաձևում դրսևորվող այլ կարգերի, օրինակ, հոլովի, առումների կամ հոգառության համեմատ առաջին գծի վրա է կանգնած, որը բնորոշ կերպով երևում է նաև արտահայտության պլանում՝ կառուցվածքայնորեն (հատկապես կցական տիպոլոգիա ունեցող լեզուներում)։ Մասնիկավորում ունեցող լեզուներում թվակարգանիշ տարրերը բառաձևի մեջ սովորաբար նախորդում են հոլովանիշ վերջավորություններին ու հոդերին. համմտ. հայ. ծառ-ե-ր-ն (ծառերին)[20]։

Եվ այսպես, ունենք առարկայնություն արտահայտող բառեր՝ գոյականներ, որոնք բազմաթեսակ են, բազմաբնույթ՝ լեքսիկական իմաստների դրսևորումներով, ունենք թվակարգ, որն արտահայտում է մեկի և մեկից ավելինի քանակային հարաբերության իմացական հայեցակետ (քերականական իմաստ)։ Այս հայեցակետը ներկայանում է հիմնականում երկեզր (երկատրոհ) հակադրությամբ՝ եզակի, որ նշված թվակարգային ասպեկտի առաջին եզրն է, և հոգնակի, որ նշված թվային ենթակարգի երկրորդ եզրն է։ Կան լեզուներ, որոնց մեջ հակադրությունը եռանդամանի է (երկակիի առկայության դեպքում), իսկ մի քանի լեզուներում էլ բառերի քերականական առանձին խմբերում կարող է թվակարգը ներկայանալ բազմանդամյա հակադրությամբ։

Հայերենում տիրապետող հակադրությունը երկանդամ է, ուստի մեզ առավել զբաղեցնում են եզակի և հոգնակի ենթակարգերի ձևաբանական հատկությունները։ Սակայն երկեզրի դեպքում էլ թվակարգային ասպեկտը, բառի լեքսիկական կարգերով պայ-

[20] *Բայձևի մեջ թվակարգանիշ վերջավորության առաջնությունը (կցական կառուցվածքում) պարտադիր չէ, որովհետև բայձևի համար կարևորը գործողության հայեցակետերը արտահայտող քերականական իմաստներն են. մինչդեռ թվակարգանիշ մասնիկը ոչ թե գործողության քանակային ասպեկտն է արտահայտում, այլ գործողության ենթակայինը։*

մանավորված, չիման ուժեղ կամ թույլ կետեր է ստեղծում բառային, բառա-քերականական առանձին միավորների հետ։

Թվակարգային այս ասպեկտը պետք է տարբերել առարկաների քանակային կողմը արտահայտող իմացական այլ կարգերից։ Լեզուն դիմում է ոչ միատեսակ միջոցների նշված կարգերը, ինչպես և թվակարգային հայեցակետը արտահայտելու համար։ Այսպես՝ չտարբերակված, չմասնավորված, քանակային ընկալումը կարող է արտահայտվել բառայնորեն, որ երևում է ամբողջը, բոլորը և նման դերանունների առկայությունից, շատ, քիչ ածականներից, իսկ տարբերակված որոշակի քանակային միավորները իրենց բառային դրսևորումը գտնում են թվականներում։ Տարբերակված քանակային ընկալումը սովորաբար ունենում է նաև քերականական հայեցակետ, որը ներկայանում է մեկի և մեկից ավելինի հարաբերակցության տեսքով. սա իր արտահայտությունը գտնում է գոյականների մեջ, համաձայնությամբ՝ ածականների, բայերի մեջ։

Իմացական այս ասպեկտները, իրական, առարկայական աշխարհի քանակային կողմը դրանցով ընկալելու ունակություններ ունեն բոլորը, հատուկ են բոլոր մարդկանց։ Սակայն լեզվական արտահայտության պլանում, ընդ որում և քերականական արտահայտության միջոցների, եղանակների խնդրում լեզուները ներկայացնում են բազմազանություններ. բնականաբար կառուցատիպով մերձավոր լեզուներն ունեն նաև էական ընդհանրություններ։

Մեզ սույալ դեպքում հետաքրքրում է առարկաների քանակային կողմի ընկալման քերականական հայեցակետի բնույթը, որ դրսևորվում է գոյականական համակարգում։ Սակայն լեքսիկական ոչ բոլոր խմբերն են հնարավորություն տալիս գործադրելու թվակարգային այդ ասպեկտը. կան բառեր, որոնք իրենց արտահայտած իմաստով չեզոք են այդ հայեցակետի նկատմամբ, կամ նրանց համար դա անհանդուրժելի է։

Եվ այդ ոչ միայն թվակարգի վերաբերմամբ։ Կան բառեր, որոնք չեզոք են ստացական կամ որոշյալ առման իմաստի նկատմամբ, համապատասխան հոդ չեն ընդունում, կան այնպիսիները, որոնք սեռի կամ հոլովի քերականական հայեցակետի (իմաստի) նկատմամբ են չեզոք։ Այնպես որ՝ պարտադիր չէ, որ քերականական կարգն ընդգրկի բառերի բոլոր այն խմբերը, որոնք առնչված են լեքսիկական առավել ընդհանրական հատկանիշով։ Այս առումով թվակարգի ասպեկտը տարածվում է հիմնականում թվարկվող առարկաների անունների վրա։

Եթե այդ այդպես է, ապա ինչպե՞ս պետք է սահմանել, բնու-

թագրել թվակարգը, որո՞նք են նրա կիրառության սահմանները (գործադրության ոլորտը), ի՞նչ ենթակարգեր ունի նա։

Բոլոր դեպքերում էլ թվակարգը մեկի և մեկից ավելինի քանակային հարաբերության իմացական ասպեկտի քերականական դրսևորումների ամբողջությունն է։ Եվ քանի որ այդ հայեցակետը ամբողջանում է իրրև երկու (կամ երեք) մոմենտներով, ուստի ունենք թվային երկու՝ եզակի և հոգնակի (կամ երեք՝ եզակի—երկակի—հոգնակի) ենթակարգեր։ Սրանք թվակարգի բուն ենթակարգերն են։

Սակայն կան կազմավորումներ, որոնք քանակային ասպեկտը ներկայացնում են անկախ նշված (եզակի—հոգնակի ևն) հարաբերակցությունից, անհոգնական են կամ անեզական։ Օրինակ, կան անհոգնական-հավաքականներ, աննեզական հավաքականներ (վերացականներ, նյութայիններ ևն)։ Բոլոր այն դեպքերում, երբ առարկականի քանակային կողմը ներկայանում է լեքսիկական ոլորտում, չունի քերականական արտահայտություն, թվակարգից դուրս է, այսպես և առհասարակ թվակարգից դուրս են բոլոր անհոգնականները։ Իսկ եթե այդ ասպեկտը ներկայանում է թվակարգանիշ հատուկ մասնիկների գուգորդումներով, բեև չի կազմում եզակի—հոգնակի հակադրություն, աննեզական է, ապա այդպիսի դեպքերում ունենք **բառա–քերականական** *կազմավորումներ կամ այդպիսի ենթակարգեր (օրինակ, անեզական-հավաքականների՝ վերացականների, նյութայինների, անհատայինների ենթակարգերը)։*

Այսպիսով ունենք թվակարգ և թվային ենթակարգեր (եզակի, հոգնակի, երկակի ևն) և դրանց հետ կապված բառա-քերականական խմբավորումներ։ Վերջիններիս են հարում այն հոգնականաձև կազմավորումները, որոնք համարժեք եզակի ձև չունեն, կամ առհասարակ իմաստային տեղաշարժով կազմված են անհոգնականներից։

2. ԵԶԱԿԻ ԹԻՎ

Հաճախ ենք հանդիպում այսպիսի սահմանման. «գոյականի եզակի թիվը ցույց է տալիս մեկ (կամ մեկ հատ) առարկա»։ Այս սահմանումն անկասկած պակասավոր է. սրանով չեն սահմանագծվում եզակի թիվ ունեցող գոյականի լեքսիկական և քերականական արժեքները։ Թվակարգը, ընդ որում և եզակի ենթակարգը քերականական հատկանիշ է, կարգ, և սահմանումը պետք է բա-

ցահայտի նրա հենց այդ ֆեռականական էությունը։ Ավելորդ է խոսել այն մասին, որ եզակին ոչ թե առարկա է ցույց տալիս (բոլոր գոյականներին հատուկ է առարկայնության դաղափարը, իբրև նրանց համար բնորոշ բառիմաստ), այլ խոսքային (դատողական) ոլորտում ներգրավված առարկաների քանակային հարաբերության հատկանիշը, որ է՝ մեկի և մեկից ավելինի թվակարգային հայեցակետի առաջին եզրը։

Ինչպես տեսանք, եզակի թվի իմաստը եզակի բառաձևի մեջ մշտապես տեղակայող կատեգորիա չէ։ Եզակի բառաձևը բազմանշանակ, տարաֆունկցիոնալ է և՛ լեքսիկական իմաստավորումների տեսանկյունից, և՛ քերականական արժեքայնությամբ։ Դեռևս հին քերականներն են նկատել, որ եզակի բառաձևում առկա են քանակային (թվային) իմաստի անհամարժեքություններ, տարբեր ընդգրկումներ։ Բայց սահմանման մեջ այդ մոմենտները մինչև նորագույն ժամանակները հաշվի չէին առնվում։

Թե տում են, թե եզակի թիվը ցույց է տալիս առարկայի եզակիությունը, մեկ հատ լինելը, ապա բնականաբար սա վերաբերում է այնպիսի գոյականներին, որոնք ունեն եզակի—հոգնակի հարաբերակցություն, հակադիր այդպիսի ձևեր, այսինքն՝ այդ գոյականները թվարկվող առարկաների անուններ են։ Ըստ Վ. Վինոդրադովի՝ գոյականի եզակի թվի կարգը միջոց է ծառայում «առարկայի» վերացարկված պատկերացման համար, իբրև կա՛մ սեռի հասկացություն արտահայտող և կա՛մ ամբողջ դասը, տեսակը տեղակայող (փոխարինող ներկայացուցիչ)[21]։ Համանման բնութագրության հանդիպում ենք պրոֆ. Գ. Սևակի մոտ, այն է՝ եզակի թիվը «ցույց է տալիս առարկան իբրև առարկա ընդհանուր կերպով և դրա հետ միասին, իբրև այդ առարկայի ներկայացուցիչ կամ նմուշ մեկ հատ առարկան մասնավոր կերպով»[22], նկատելի է, որ ուշադրություն է հրավիրվում եզակի բառաձևում կատարվող բառիմաստային հնարավոր տեղաշարժերի վրա՝ մասնավորից դեպի ընդհանուրը և հակառակը։

Ուսաց լեզվի դիտական քերականության մեջ շեշտվում են եզակի բառաձևի բառիմաստային այլ առանձնահատկություններ. եզակի ձևերը ցույց են տալիս կա՛մ առարկաների միակիությունը (սեղան, գիրք, գյուղ), կա՛մ նրանց միասնությունը, միահամուռությունը, ամբողջականությունը, անբաժանականությունը (խա-

---

[21] Տե՛ս В. Виноградов, Русский язык, М.—Л., 1947, էջ 158։

[22] Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 276։

զոզ, երջանկություն, ուսանողություն). առաջին դեպքում եզակի ձևերը հակադրվում են հոգնակիի ձևերին (սեղան—սեղաններ), որոնք ցույց են տալիս առարկաների բաժանական, տրոհվող բազմություն. երկրորդ դեպքում, այսինքն՝ նյութային, վերացական, հավաքական գոյականների դեպքում հոգնակիի ձևերը կա՛մ բացակայում են, կա՛մ առկա են միայն ավելի նեղ կիրառությամբ, կա՛մ մասնավոր նշանակությամբ (տե՛ս ԳՐՅ, I, 111)։ Եզակի թվի ձև-իմաստային հատկությունների իր գնահատման մեջ ուրույն երանգներ է մտցնում պրոֆ. Է. Ռ. Աղայանը. «Եզակի թիվը որևէ նյութական ձևույթով չի արտահայտվում, ուստի և գոյականների եզակին թվի տեսակետից ձևաբանորեն աննշույթ է... Եզակիի ձևերը քանակություն ցույց չեն տալիս, եզակին աննշույթ է ոչ միայն ձևական, այլև իմաստի տեսակետից, քանի որում կարող են ցույց տալ և՛ մեկ առարկա, և՛ առարկաների շատություն (եզակին հոգնակիի իմաստով), և՛ առարկաների բազմություն առանց քանակային բնութագրման (հավաքական գոյականներ), և՛ քանակային բնութագրության բացակայություն առհասարակ (վերացական գոյականներ)»[23]։

Եզակի թվի բնութագրությունը, ինչպես տեսնում ենք, գրեթե բոլորի մոտ ելնում է «եզակի ձև» գաղափարից և ոչ թե թվակարգի քերականական հայեցակետից։ Բայց եզակի ձևը կարող է և չեզոք լինել թվակարգային հայեցակետի նկատմամբ, քանի էության չարտահայտել «միակի» լինելը։

Այս խնդիրը պարզաբանելու համար նախ քննենք բառիմաստային այն գրսևորումները, որոնք տեղ են գտնում բառի եզակի ձևում (կամ եզականաձև բառում)։

Եթե ասում ենք, թե եզակին կամ եզակի բառաձևը բազմանշանակ է, ապա այս չի նշանակում, թե եզակի քերականական (թվակարգային) իմաստը ևս բազմանշանակ է, այս անկասկած վերաբերում է բառիմաստային այն երևույթներին, որոնք կապված են բառի եզակի ձևի կամ (եզականաձև բառի) հետ։ Մինչդեռ եզակիի թվակարգային իմաստը մեկն է. այն ներկայանում է իբրև մեկի և մեկից ավելինի քանակային հարաբերակցության հայեցակետի առաջին եղր։

Իսկապես, եզականաձև գոյականը բազմանշանակ է. այն կարող է արտահայտել՝ ա) միասեռ կամ միատեսակ առարկաների

---

[23] Է. Ռ. Աղայան. *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը*, Երևան, 1967, էջ 249։

շարքի մեկ առանձին առարկան՝ կապված թվարկվողականության, բաժանականության հետ. բ) նույն կարգի առարկաների մի խումբ (բայց ոչ ամբողջ շարքը, տեսակը)՝ փոխաբերական-սինեկդոխային անցումով. գ) ընդհանրացված, վերացարկված ձևով՝ տեսակայնություն, ամբողջ տեսակը. այս դեպքում եզակին (առարկայի անունը) իր բովանդակությամբ տեղակայում է ամբողջ տեսակը, իբրև սրա ներկայացուցիչ. դ) միատեսակ առարկաների ամբողջություն, բազմություն, իբրև դրանց հավաքական, անբաժանական, չտրոհված միասնություն. ե) նյութայնություն—զանգվածայնություն. զ) վերացականություն-ընդհանրականություն. է) անհատականություն՝ տեսակայնության բացառումով, երբ միատեսակ առարկաներից մեկը դառնում է անհատական ընկալման օբյեկտ (հատուկ անուններ). ը) անհատականություն՝ բնության մեջ մեկ հատ կամ այդպիսին դիտված առարկան (հասկացությունը). թ) թանձրացականություն (կոնկրետություն). Այս ամենին պետք է ավելացնել այն, որ միևնույն եզակի բառաձևը կարող է բազմիմաստ լինել կամ դործածվել փոխաբերական այլևայլ իմաստավորումներով։

Դժվար չէ մեկնաբանել եզակի թվի քերականական այն հատկանիշը, որով անհատ առարկան առանձնանում է նույն տեսակի այլ առարկաների շարքում՝ մեկի և մեկից ավելինի քանակային հարաբերության հայեցակետով։ Քանի որ նման դեպքերում գործ ունենք առարկաների դասի հետ, ուրեմն դասի մեջ բաժանականորեն առկա են առանձին անհատները, որոնցից յուրաքանչյուրը կարող է համարվել դասի (շարքի), տեսակի ներկայացուցիչ։ Տվյալ դասը, տեսակը կազմող առարկաների տրոհականությունը այնպիսին է, որ հնարավորություն է տալիս թվարկել, հաշվել միավորների քանակը։ Այսպիսի պարագաներում իմացականորեն միանգամայն հնարավոր է գիտակցել դասի և նրա ներկայացուցչի (տեսակի և անհատի, ամբողջի՝ բազմության և նրա մի մասի) որոշակի առնչակցություն, զուգորդականություն, հոգեբանական հարաբերակցություն։

Այս առընթերական ասոցիացիաներով խոսքի մեջ հնարավոր է, որ դասի (բազմության, տեսակի, ամբողջի) անունով ներկայացվի նրա առանձին անհատը, մասը։ Ահա թե ինչու եզականաձև միևնույն անվան մեջ առարկայական կոնկրետ վերաբերությունում, մի դեպքում, ներկայանում է անհատը, մի դեպքում՝ դրանց խումբը, իսկ մի երրորդ դեպքում՝ առարկայական վերաբերությունը տարածվում է ամբողջ տեսակի վրա։ Արդյունքում ստացվում է, որ եզակի միևնույն ձևը ունի ֆունկցիոնալ երեք կիրառություն։ Այս

Մեկնաբանությունը կարելի է ցուցադրել հետևյալ օրինակների վրա։ Ոչխար եզակի ձևը վերցնենք հետևյալ արտահայտության մեջ. «Հասոն ոչխարը տարավ սար»։ Այս արտահայտությունը կարելի է հասկանալ իր ուղղակի նշանակությամբ, այսինքն՝ որ Հասոն մեկ ոչխար է տարել սար։ Փոխաբերական-սինեկդոխային իմաստավորմամբ ոչխարը եզակին կարող է արտահայտել ոչխարի բազմություն, հոտ, որ բազմաթիվ ոչխարներից է բաղկացած (տանիք. Հասոն կոլտնտեսության հոտն է տարել սար)[24]։

Նույն ոչխարը եզակի բառաձևը այլ կոնտեքստում կարող է նշանակել ոչխար առհասարակ. ինչպես՝ «Ոչխարը կաթնասուն կենդանի է». այստեղ կաթնասուն լինելու հատկանիշի վերագրումը, ստորոգումը, իմացականորեն տարածվում է ոչխար տեսակին ընդհանրապես։

Ինչպես տեսնում ենք, եզակի բառաձևի այս երեք գրսևորումներից երկուսը արտահայտում են միատեսակ առարկաների խումբ կամ տեսակային հատկանիշով ընդհանրություն։ Միայն առաջին նշանակությամբ կիրառության դեպքում ոչխար *բառը արտահայտում է մեկի և մեկից ավելինի քանակային հակադրության առաջին եղրը։ Իսկական թվակարգային եզակին սա է։ Մյուս երկու դեպքերում, մեկից ավելինը ցույց տալու պատճառով, այդ բառը միայն ձևականորեն է եզակիի եղրը ներկայացնում. իմաստով նա հոգնակի է*[25]։ Ահա թե ինչու այդ իմաստավորումների համար հոգնակականաձև գործածություն կարող է լինել և կարող է չլինել (համմտ. Հասոն ոչխարները տարավ սար. և՝ Ոչխարները կաթնասուն կենդանիներ են)։ Այստեղ եզականաձև և հոգնականաձև կիրառությունները ֆունկցիոնալ հակադրություն չունեն (հակադրությունների չեզոքացում)։

---

[24] Սա միաժամանակ նշանակում է, թե ոչ միշտ է, որ եզակին բացառում է բազմության գաղափար։ Դեռևս Հ. Պաուլն ընդգծել է, «նույնիսկ թեքական լեզուներում հոգնակի թվի քերականական արտահայտությունը պարտադիր է ոչ բոլոր այն դեպքերում, երբ նշվում է բազմություն։ Ամեն բազմություն խոսքի մեջ կարող է ներկայացվել իբրև ամբողջություն։ Այսպես, կան գոյականներ, որոնք հանդես գալով եզակի ձևով՝ ծառայում են որոշակի քանակ ցույց տալուն... *Իբրև ծագումով եզակի գոյականներից են գալիս* tausend «հազար», hundert «հարյուր» և համանաբար նաև այլ թվականներ։ Եվ ընդհանրապես այսպես կոչված հավաքական գոյականները իրենցից ներկայացնում են բազմության նշանակում (բազմություն են արտահայտում) եզակի ձևով» (ГП, ПИЯ, 321—322)։

[25] Ա. Պոտեբնյան նկատել է, «կոնկրետ գոյականի եզակին հոգնակիի համատարած պատկերն է» (տե՛ս նրա „Из записок по русской грамматике", III, էջ 27)։

Եզակին կարող է փոխաբերական այնպիսի իմաստավորումներ ունենալ, որոնք որոշակիորեն իրենցից կախման մեջ են դնում բառի թվակազմությունը, նրա ֆունկցիոնալ դրսևորումը։ Այսպես, օրինակ, ծաղիկ բառը թվարկվող առարկայի անուն է, իր ուղղակի նշանակությամբ ազատ հետևում է նման կարգի բառերի վարքագծին. ծաղիկ—ծաղիկներ։ Բայց նա գործածվում է նաև իբրև հիվանդության անուն, իսկ հասկացության ծավալային նեղացումով՝ նաև իբրև անձնանուն կամ կենդանու անուն։ Այս դեպքում արդեն եզականաձև բառը թվակարգային իմաստի նկատմամբ դառնում է չեզոք, հոգնակի ձևեր չի կազմում, հարում է անհոգնականներին։

Եզականաձև բառը հաճախ բազմիմաստ է, հոգնակի նոր կարող է ունենալ իր այն իմաստի համար, որը արտահայտում է թվարկվող առարկայի գաղափարն։ Այստեղ դեր չունի այն հանդամանքը, թե իմաստները միևնույն բառաձևում ինչ չափով են հեռացել միմյանցից. համմտ. գլուխ—գլուխներ հակադրությունը և՛ «կենդանու գլուխ» և՛ «գրքի գլուխ» նշանակությունների համար, կամ լեզու—լեզուներ՝ և՛ «մարդկային խոսք», և՛ «կենդանու անատոմիական օրգանը» նշանակությունների համար։

Կան լեքսիկական իմաստի բնույթով պայմանավորված եզականաձև բառերի առանձին խմբավորումներ, որոնք թվակարգային ասպեկտի նկատմամբ չեզոք են, չեն առնվում մեկի և մեկից ավելիների քանակային հարաբերակցության մեջ, հոգնակիի համապատասխան ձևեր չեն կազմում, հետևապես անհոգնական են։ Դրանք սովորաբար չթվարկվող առարկաների անուններ են, հավաքականություն, վերացականություն, նյութայնություն, անհատականություն արտահայտող գոյականներ։ Այս նշանակում է, թե եզականաձև բառերի շարքում կան այնպիսիները, որոնք հոգնակի ձևեր են կազմում՝ ֆունկցիոնալ համարժեքությամբ, և սրանք կարելի է կոչել հոգնական (հոգնակի կազմող) եզակիներ. կան և այնպիսիները, որոնք ֆունկցիոնալ համարժեքությամբ հոգնակի ձևեր չեն կազմում, սրանք էլ կոչվում են անհոգնական եզակիներ։

Սակայն թվակարգային հայեցակետով, ըստ էության, անհոգնական եզակի լինել չի կարող. եզակին հենց նրա համար է եզակի, որ ունի հակադիր հոգնակի եզր, հոգնակիի տեսանկյունից է եզակի։ Բնականաբար թվակազմությունը լավ հասկանալու համար պետք է դիտարկել եզականաձև և՛ այն միավորները, որոնք համապատասխան հոգնակի ունեն, և՛ նրանք, որոնք համապա-

տասխան հոգնակի չունեն, անհոգնական են. ընդ որում անհոգնականության հիմունքների պարզաբանումը ևս գիտականորեն կարևոր ու ահրաժեշտ է։

Արտահայտության պլանում եզակիությունը անվերջավոր է։ Այդ այդպես է աշխարհի շատ լեզուներում։ Ըստ Հ. Ամառյանի՝ դրավիդյան և աֆրիկյան որոշ լեզուներում կան բացառիկ կապմավորումներ, երբ հոգնակին (սովորաբար հավաքական-հոգնակին) նշահիմք է դառնում մասնիկավոր եզակի կազմելու համար (տե՛ս ՀԱ, ԼՔՀԼ, III, 875—876)։ Եզակին թվանիշ մասնիկի կարիք չունի, որովհետև այն «մեկից ավելինի» հասկացությունից դուրս է, իսկ մասնիկավորումը այդ հասկացության համար է։

3. ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎ

Հոգնակի թվի կազմավորումը կապված է իմացական գործողության այն աստիճանի հետ, երբ մարդը կարողացավ թվարկվող առարկաներից մեկը քանակային հարաբերության մեջ հակադրել նույն տեսակի մնացած առարկաներին։ Կառուցվածքային և ֆունկցիոնալ գծերով հոգնակին հակադրվում է եզակիին, իսկ թվային այլ ենթակարգերի, ասենք, երկակիի առկայության դեպքում՝ նաև երկակիին։

Ընդունված է ասել, թե հոգնակին ցույց է տալիս մեկից ավելի առարկաներ։ Այս սահմանումը ճշգրտման կարիր ունի։ Ինչպես նշել ենք եզակիի կապակցությամբ, թվակարգը արտահայտում է ոչ թե առարկա, այլ մեկի և մեկից ավելինի քանակային հարաբերության հատկանիշ։ Թերևս նպատակահարմար է ասել, հոգնակին ցույց է տալիս առարկաների մեկից ավելին լինելը, երկակիի առկայության դեպքում՝ մեկից կամ երկուսից ավելին լինելը։ Իհարկե, ավելի ճիշտ կլիներ, եթե տայինք այսպիսի սահմանում. հոգնակի թիվը մեկի և մեկից ավելինի քանակային հարաբերակցության մեջ ներկայացնում է երկրորդ կարգը, այսինքն՝ ցույց է տալիս, որ խոսքի (մտքի) օբյեկտը քանակային հատկանիշով մեկից ավելին է, կամ երկուսից ավելին է, եթե առկա է նաև երկակիի ենթակարգ։

Այս սահմանումը վերաբերում է գոյականի հոգնակիին։ Բայց հոգնակիի ենթակարգը (ինչպես և առհասարակ թվակարգը) դրսևորվում է նաև այլ որոշ խոսքի մասերի մեջ, հատկապես դերանվանական ու բայական համակարգերում։ Բայական թիվը ցույց է տալիս գործողության կատարողի (ենթակայի) մեկ կամ

մեկից ավելին լինելը. ածականների, թվականների, մասամբ և սրանց ու գոյականներին հարաբերակից շատ դերանունների հոգնակին զուգահեռ է գոյականների հոգնակիին, իսկ, օրինակ, անձնական դերանուններում, բացի կազմավորման յուրահատկություններից, հոգնակին ցույց է տալիս, որ վկայալ դնմքով ներկայացողը մեկից ավելին է, այսինքն՝ մեկից ավելինի քանակային (քերականական) ասպեկտը վերցնում է խոսողի և այն անձանց նկատմամբ, որոնց անունից խոսողը արտահայտվում է, և այսպես՝ մյուս դեմքերի վերաբերյալ։

Հոգնակին հիմնված է թվարկվող առարկաների քանակային հարաբերության ընկալման վրա։ Այդ է պատճառը, որ բոլոր այն գոյականները, որոնք թվական լրացում ընդունում են, կարող են նաև հոգնակի կազմել։ Որոշ, հատկապես թեքական սիստեմ ունեցող լեզուներում հաճախ եզակի բառաձևը ծանրաբեռնված է լինում կառուցվածքային փոխներհյուսված այլևայլ կարգերով, ուստի հոգնակիակազմության համար լրացուցիչ խոչընդոտներ են գոյանում։ Ահա թե ինչու ասոսկ թվարկվող մի շարք առարկաների անուններ անհոգնական են (пальто, кенгуру են)։ Նոր հայերենի բառաձևում եր մասնիկը կառուցվածքայնորեն և ֆունկցիայով ինքնուրույն, «անկախ» է, ուստի, ինչպես Հ. Աճառյանն է ասում, կարելի է ամեն բառից էլ հոգնակի կազմել։ Եվ իսկապես բուն անհոգնականները նոր հայերենում շատ քիչ տոկոս են կազմում։

Հոգնակի ձևերի ֆունկցիոնալ-իմաստային արժեքների դիտարկումները բերում են այն համոզման, որ լինում են եզակի ձևերին հարաբերակից, եզակի ձև ունեցող հոգնակիներ, լինում են նաև այնպիսիները, որոնք թեև ունեն եզակի ձև, բայց բառիմաստով (լեքսիկական նշանակությամբ) հեռացած, մեկուսացած են եզակի—հոգնակի հարաբերակցությունից, վերջապես կան նաև այնպիսիները, որոնք առհասարակ եզակի համապատասխան չունեն, անեզականներ են։

Հոգնակի բառաձևի բառիմաստը՝ առարկայական վերաբերությամբ, բազմիմաստությամբ և փոխաբերական առումներով կարող է տարբեր լինել, ինչպես որ նման տարբերություն նկատեցինք եզակիի կապակցությամբ։ Օրինակ՝ «Ձիերը չորքոտանի կենդանիներ են» արտահայտության ձիերը հոգնակին ընդգրկում է ամբողջ տեսակը, «չորքոտանի կենդանի» հատկանիշը վերագըր-

վում է ամբողջ դասին[26]։ Մինչդեռ «Մեր ձիերը խեղդվեցին գետում» արտահայտության մեջ նույն բառաձևը տեսակային ընդգրկում չունի, թեև մեկից ավելին է ցույց տալիս։ Գլուխներ բառաձևը, ինչպես իր եզակի ձևում, բազմիմաստ է՝ հիմնականում հարաբերակցվելով եզակի իմաստավորումներին, մինչդեռ սպիտակներ, կարմիրներ հոգնակիները իրենց մեկ իմաստով (իբրև փոխանուններ) համարժեք են եզակիներին, մյուս իմաստով (քաղաքական նշանակությամբ) չեն հարաբերակցվում։

Եզակի ձևերի հետ հարաբերակցությունը խախտված է նաև այն դեպքերում, երբ հոգնակին կազմում են անհոգնականներից՝ բառիմաստային տեղաշարժերով։ Այս հատկապես լինում է հավաքական, վերացական, զանգվածային-նյութային, անհատական իմաստավորումների հետ կապված։

Այս բնութագրությունները նկատի ունենալով կարելի է ասել, որ ունենք երկու կարգի հոգնակի՝ բուն կամ սովորական հոգնակի և անեզական հոգնակի։

Քանի որ հոգնակին քանակային հատկանիշով առանձնացնում է մեկից ավելի առարկաներ՝ մեկի հարաբերությամբ, և առարկաների այդ բազմությունը կարող է հատկացվել, պատկանել այլ՝ մեկ կամ մեկից ավելի առարկաների (անձերի), ապա նա իմաստային վերաբերությամբ կարող է բաշխական արժեք ունենալ։ Այսպես՝ «Փողոց դուրս եկածները անձրևից պաշտպանվելու համար գլուխները պահում էին անձրևանոցների տակ». այստեղ գլուխներ բառաձևով հասկացվում է բաշխականություն, բաժանականություն, այսինքն՝ «յուրաքանչյուրն իր գլուխը»։ Նոր հայերենը հատուկ կառուցածներ է զարգացրել հոգնակիի այդ ասպեկտը արտահայտելու համար, որոնք կոչվում են ստացական հոգնակիներ։ Այլ լեզուներում այսպիսի ստացական կառուցածներ քիչ են հանդիպում, բաժանական (դիստրիբուտիվ) հոգնակին կազմում են սովորական հոգնակիակազմության կաղապարով. օր. ռուս. „Доклад был интересный, многие выслушали с открытым и ртами“. այս օրինակում ртами բառաձևը բաշխական հոգնակի է, սովորական կառուցածևով։

Խոսքի մեջ հոգնակին գործածվում է նաև արտահայտչական-ազդուաբանական և այլ նկատառումներով, որ ըստ էության հոգնակի թվի սահմանական կիրառություն է։ Թեև այս կիրառությու-

---

[26] Այս տիպի կիրառությունները առավել բնորոշ են եզակիին, ուստի հոգնակին այսպիսի ֆունկցիայով սակավագեպ գործածություն ունի։

նը հատկապես բնորոշ է դերանուններին, բայց գոյականների մի շարք հոգնակի ձևեր ևս նկատելի արտահայտչականություն ունեն. օր. «նոր ժամանակներ են գալիս», այլ ոճերում, դարձվածքներում՝ «գլուխ գործոց», «ի խորոց սրտի», «հարգանքներիս հավաստիքը» և այլն։

4. ԱՆՀՈԳՆԱԿԱՆՆԵՐ (Singularia tantum)

*Այսպես կոչվում են այն բառերը, որոնք համապատասխան հոգնակի ձևեր չունեն, չեզոք են մեկի և մեկից ավելիի քերականական **առումների** նկատմամբ։ Կան նաև այնպիսի բառեր, որոնք, թեև հոգնակի ձևեր կազմում են, այդ անում են հոգնակի բառաձևի բառիմաստային մեկուսացումով, որով գոյանում է եզակի—հոգնակի հակադրության լեքսիկական անհարաբերակցություն, քան էության սրանք էլ հարում են անհոգնակիներին։ Այս նշանակում է, թե անհոգնականությունը լայն հասկացողություն է, գոյություն ունեն բուն անհոգնականներ, որոնք առհասարակ թվակարգից դուրս են, նրանցից հոգնակի ձևեր կազմել հնարավոր չէ, և կան բառիմաստային ուրույն հատկություններով խմբավորումներ, որոնք հարաբերականորեն անհոգնական են։*

Անհոգնականությունը պայմանավորող գործոնները աշխարհի լեզուներում ունեն իմացական (իմաստային) ընդհանրական հիմունքներ, սակայն կառուցվածքային որոշ գծեր, յուրահատկություններ երբեմն նեղացնում կամ ընդլայնում են նրա դրսևորումների շրջանակները[27]։

Անհոգնակիները հայերենում կառուցվածքային ուրույն գծեր չունեն։ Սրանք բնորոշ են միայն նրանով, որ քանակական թվական-լրացում չեն հանդուրժում, ենթակայի պաշտոն վարելիս սովորաբար ունենում են եզակի ստորոգյալ, սրանց բայը եզակի թվով է։ Կառուցվածքային թույլ գծեր են նկատվում անհոգնականությունը պայմանավորող բառիմաստային խմբավորումներում։

Թեև թվի քերականական կարգը ներկայանում է իբրև եզա-

---

[27] *Ռուսերենում կան թվարկվող առարկայի հասկացություն արտահայտող որոշ բառեր, որոնք հոգնակի ձևեր չեն կազմում (նրանք կարող են անհոդով էլ լինել). օր.* пальто, купе, интервью։ *Սակայն սրանք բուն էության կառուցվածքով են անհոգնական։ Այս գոյականները սովորաբար հոգնականաձև միավորի ֆունկցիա են կատարում հանդես գալով համապատասխան քերականական միջավայրում (համմտ.* СРЯ, М., 66. ГРЯ, I, III)։

կի—հոգնակի հակադրություն, որի հիմքում ընկած է մեկի և մեկից ավելինի իմացական ասպեկտը, ապա բնականաբար անհոգնականները դուրս են մնում թվակարգի ոլորտից։ Սրանք ոչ թե եզակի թիվ են ներկայացնում, այլ եզակիանձև բառեր են ուրույն բառիմաստով. և բառիմաստային հատկություններով պայմանավորված կազմում են առանձին խմբավորումներ։ Այդ իմաստավորումներից են՝ անհոգնական հատուկ անուններ, անհոգնական՝ եզական, միակի (բնության մեջ մեկ հատ առարկայի) անուններ, անհոգնական՝ զանգվածայնության-նյութայնության (կամ վերացական, և կամ հավաքական) անուններ և այլն։

Հատուկ անունները *(անձնանուններ, կենդանիների անուններ, կեղծանուններ, մականուններ, տեղանուններ, առհասարակ աշխարհագրական անուններ) իրենց ուղղակի կիրառության դեպքում սովորաբար բացառում են հոգնակին*[28], այսպես անհոգնական են Վարդան, Ծաղիկ, Արագած, Արաքս, Շիրակ և այլն։ Ինչպես ընդգծում է Հ. Ե. Բարսեղյանը՝ «Հատուկ անվան ընդհանուր հասկացություն կամ տեսակի անուն չլինելու և միշտ առանձին անձ կամ առարկա անվանելու հանգամանքը նրան զրկում է գոյականի հոգնակի թվի քերականական հատկանիշից։ Հոգնակի թիվը հատուկ անվան բնորոշ կարգ չէ»[29]։

Հատուկ անունը վերցվում է հասարակ անվան հակադրության։ ոչինչ չի փոխվում, եթե գործածենք նրան հավասարարժեք հատուկ գոյական տերմիններ։ Հատուկ անունը կամ հատուկ գոյականը բառիմաստի անհատականության դրսևորում է։ Թեև որոշ լեզվաբանների կարծիքով սա հասկացություն չի արտահայտում[30]*, սակայն այդպես չէ։ Հատուկ անունը անհատական հասկացություն է արտահայտում։ Հասարակ գոյականն ըստ էության տեսակային հասկացության անուն է։ Մարքսի այն դրույթը, թե «Որևէ իրի անունը նրա բնության հետ ընդհանուր ոչինչ չունի», հավասարապես վերաբերում է և՛ հասարակ, և՛ հատուկ անուններին, թեև Մարքսը իբրև դրա հաստատում օրինակ է բերում հա-*

---

[28] «Ճշգրիտ իմաստով,—գրում է Օ. Եսպերսենը,—ոչ մի հատուկ անուն չի կարող հոգնակի թվի ձևեր ունենալ» (О. Есперсен, Философия грамматики, М., 1958, стр. 74—75)։

[29] Հ. Ե. Բարսեղյան, *Հատուկ անուն*, Երևան, 1964, էջ 13։

[30] *Л. А. Реформатский*, Введение в языкознание, М., 1967, стр. 60.

տուկ անուններից, «ես բացարձակապես ոչինչ չգիտեմ տվյալ մարդու մասին, եթե միայն գիտեմ, որ նրա անունը Հակոբ է»[31]։

Հասարակ գոյականի եզակի բառաձևի մեջ հասկացության ծավալային ընդգրկումը պայմանավորված է առարկայական տրվյալ վերաբերությամբ։ Ըստ այդմ էլ, ինչպես վերը տեսանք, եզակին նշանակում է տեսակը կամ մի առանձին խումբ այդ տեսակի մեջ, և կամ այդ տեսակի մեկ անհատը (ինդիվիդը)։ Հատուկ անունը տրվում է՝ հասկացության ծավալի մեջ վերջին օղակը (անհատի գաղափարը) առանձնացնելու, մտքի, խոսքի օբյեկտ դարձնելու համար։ Այդ միաժամանակ նշանակում է առաջին երկու կիրառություններ բացառում[32]։

Եվ քանի որ հասարակ անվան վերը նշված առաջին կիրառությունը ծավալով ընդգրկում է ամբողջ տեսակը, ուստի լեզուն քերականական ուրույն միջոցներով անվանը տալիս է հատուկ կառուցաձևեր՝ արտահայտելու համար մեկի և մեկից ավելինի բանակային հարաբերության հասկացական ընդգրկումները։ Իսկ հատուկ անունը նշանակելով միայն անհատը, բացառելով այդ անհատը ներկայացնող տեսակի մնացած անդամները՝ բացառում է նաև կառուցվածքային այն միջոցները, որոնք մեկից ավելինի ընդգրկումների համար են, այսինքն՝ չեզոք (անտարբեր) է դառնում հոգնակիությանզմության նկատմամբ։

Անհոգնական է նաև բնության մեջ մեկ հատ կամ այդպիսին դիտված առարկայի անունը։ Այս կարգի առարկան բառիմաստի մեջ ներկայանում է նույն անհատականության դրսևորմամբ, ինչ որ նկատեցինք հատուկ անունների կապակցությամբ։ Սակայն հատուկ անունը առանձնացնում է միասեռ առարկաներից մեկը՝ բացառելով մյուս անդամները, մինչդեռ այստեղ գործ ունենք այնպիսինի հետ, որը գիտակցության մեջ տրվում է իբրև մեկը, և որը տեսակից չի առանձնացված։ Այսպիսի իմաստավորում ունեն, օրինակ, արև, լուսին, երկինք, երկիր, արևելք, արևմուտք, հյուսիս, հարավ գոյականները։ Սրանց են հարում տարվա ամիսների, շաբաթվա օրերի անունները։

---

[31] Կ. Մարքս, *Կապիտալ*, հ. 1, 1954, էջ 110։

[32] Պատմականորեն ծագելով հասարակ անունից հատուկ գոյականը ստեղծվում է հենց իմաստային այդպիսի տեղաշարժով։ Հենց այն մոմենտից, երբ հասարակ անվան մեջ իմաստային առաջին երկու առումները բացառվում են, քանի որ դադարում է հասարակ լինելուց, վերածվում է հատուկ անվան։ Բայց գոյականի մեջ հասկացության ծավալային տեղաշարժը երբեք էլ չի նշանակում հասկացության կորուստ, ինչպես ոմանք կարծում են։ Հատուկ անունը հասարակ գոյականին բնորոշ բառային վերացարկման մի աստիճան է։

Ծի՛ն կոնկրետ (իրանգրացական) հասկացությունները անհատականացմամբ արտահայտություն են գտնում հատուկ անուննե-րի մեջ, որ սովորաբար կատարվում է փոխաբերական անցումնե-րով, ապա մի շարք ընդհանուր-վերացական հասկացություններ անհատականացված տեսքով են ներկայանում։ Այս վերաբերում է գիտության ճյուղերը արտահայտող հասկացություններին (անուն-ներին)՝ լեզվաբանություն, աշխարհագրություն, ֆիզիկա, մաթե-մատիկա են, հասարակական-քաղաքական, փիլիսոփայական ու-մունքների՝ կոնցեպցիաների, տեսությունների անուններին՝ մե-տաֆիզիկա, ուտոպիզմ, մարքսիզմ, հասարակական ֆորմացիա-ների անուններին՝ սոցիալիզմ, կոմունիզմ։ Սրանք հատուկ անուն-ներ չեն, բայց իրրև հասկացություններ եզրավորված են, քանա-կային որոշման չեն ենթարկվում։ Իմաստային անհատականաց-յումը այնքան ուժեղ է, որ հնարավոր չէ այդ անունից կազմել հոդնակի. սրանք անհոգնական են։

Անհոգնականությունը կապված է նաև այն գոյականների հետ, որոնք շիվարկվող առարկաների անուններ են։ Այս կարգի անունների դիտարկման ելակետը նույնն է։ Մենք այստեղ ևս ընդգծում ենք, որ բառի (անվան) քերականական վարքագիծը կախված է այն հանգամանքից, թե նրա նշանակած առարկան ինչ հատկությամբ է ներկայանում իմացական ընկալման մեջ. առար-կան ունի դիրք, ձև, չափ, ծավալ, կարող է ընկալվել իրրև միա-սեռ առարկաների ամբողջություն, իրրև վերացականություն, զանգվածայնություն են։ Առավել բնորոշ իմաստային կարգերը, ըստ առարկաների դրսևորած այդ հատկությունների, երեքն են՝ զանգվածայնություն-նյութայնություն, հավաքականություն, վե-րացականություն։

Սրանց մենք արդեն ծանոթացել ենք, նշել ենք, որ զանգվա-ծայնությունը (նյութայնությունը) բնորոշ է անբաժանական, չտրոհվող, թվարկման չենթարկվող հատկությամբ. և իրրև այդ-պիսին այն բացառում է թվակարգի իմացական ասպեկտը։ Այդ-պիսի նշանակությամբ բառերը անհոգնական են, ինչպես՝ ցավք, տոսինե, ձյութ, բթվածին, ազոտ, թուխ, շիր, ձավար, բրինձ *են։*

Վերացական գոյականները արտահայտում են միասեռ հատ-կանիշի, հատկության ընդհանրությունը. մեծ—մեծություն, ծա-նր—ծանրություն, քաղցր—քաղցրություն, կարմիր—կարմրու-թյուն։ Այս բառերը ևս իրենց ուղղակի իմաստներով չեզոք են թվակարգային ասպեկտի նկատմամբ, անհոգնական են։

Հավաքական գոյականները (հղականաձև) նշանակում են միասեռ առարկաների այնպիսի ամբողջություն, որի մեջ մտնող

միավորների բաժանական ընկալումը եւին պլան է մղված, դա-մինանատում է ամբողջության, միասնության, միավորվածության գաղափարը։ Այսպես՝ բանակ հավաքականը զինվորականների ամբողջություն է, անտառը՝ ծառերի, ճոպար՝ ոչխարի, նախիրը՝ կովերի և այլն։ Հավաքականը ենթադրում է բազմություն, իսկ բազմության գաղափարը ավելորդ է դարձնում հոգնակին։

Կարելի է ասել, որ առաջին դեպքում ունենք զանգվածայնության (նյութայնության) անհոգնական, երկրորդ դեպքում՝ վերացական անհոգնական, երրորդ դեպքում՝ հավաքական անհոգնական։ Սկզբում մենք ծանոթացանք անհատականության անհոգնականներին (հատուկ անուններ, բնության մեջ մեկ հատ առարկայի անուն)։

Իսկ ե՞րբ է անհոգնականը դառնում հոգնակի։ Առաջին հայացքից այս հարցադրումը կարող է ավելորդ թվալ։ Սակայն իրականում անհոգնականից էլ կազմվում է հոգնակի։ Այդ տեղի է ունենում բառիմաստային տեղաշարժով։ Քննենք որոշ փաստեր։

Տարվա ամիսների անունները հոգնակի չունեն, շաբաթվա օրերի անունները նույնպես։ Նրանք միշտ եզականաձև են գործածվում։ Այս վերաբերում է նաև տարվա եղանակների անուններին՝ գարուն, ամառ, աշուն, ձմեռ, սակայն սրանք անհոգնական են մեկ տարվա շրջանակներում վերցրած, չորս եղանակներից յուրաքանչյուրը այդ ժամանակահատվածում միայն մեկը կարող է լինել. բայց տևական ժամանակի ոլորտում բնականաբար կլինեն մի քանիսը. ուստի հնարավորություն է ստեղծվում տարվա եղանակների անունները ևս ներգրավելու հոգնակիակազմության մեջ, իհարկե, իմաստաբանական նշված տեղաշարժով. օր. «Ամառները գյուղում եմ անցկացնում». «Ամառներ նրանք պարապում են երկրագործությամբ, իսկ ձմեռները օդաններում հնքիաթ են պատմում»։

Մենք նշեցինք, որ անհատ հասկացությունների անունները ևս անհոգնական են, սակայն լրացուցիչ կամ փոխաբերական իմաստավորումներով հոգնակիակազմություն միանգամայն հնարավոր է. Եթե ուզեն՝ արեգակներ կշպրտեն երկինքն ի վեր. Եթե ուզեն՝ վա՛ր կըբերեն երկինքներից արեգակներ... (ԵՉ, Ըե, 255). Եթե կուզեք որ արշալույսներս մերկանան և արեգակներս ծագեն (Ս, Ըե, 29). Ես արեւելքներու և արեւներու իդեապաշտ և ըմբոստ քնարավորս (Ն. ա. 218). ապագաներ (ԴՎ, Բ, 129). Հորիզոններ բանալու (ՎՔ, Ե, 89), Աշխարհներու հեռավոր հոգին իր մեջն ունի (Ն. ա. 117), երկինքներեն հեռավոր (294), կկանչեմ ձեզ այս

գիշեր երկինքներեն ձեր կապույտ (Ն.տ. 38), դժոխքներուն (Ն. տ. 60)[33];

Ինչպես նշել ենք, դանգվածայնությունը (նյութայնությունը) քանակային հարաբերության հատկանիշով անբաժանական է, չվարկվող. եթե մասերի բաժանենք, ապա ստացված մասերը կունենան ամբողջի հատկությունը և կկոչվեն էլի ամբողջի անուններ. Այս բնույթի առարկաները չեն կարող առնվել մեկի և մեկից ավելինի թվային հակադրության մեջ։ Նրանց քանակային կողմը արտահայտվում է այլ կարգերով, քանակային այլ հարաբերակցություններով։ Այդպիսի առարկաների անունները սովորաբար գործածվում են եզակիաձև, բացառում են հոգնակին, անհոգնական են[34]*։ Բայց անվան մեջ բառիմաստային երանգավորումները, լրացուցիչ իմաստավորումները փոխում են անհոգնականի քերականական վարքագիծը. այստեղ էլ անհոգնականը դառնում է հոգնակի։ Այսպես, օրինակ՝ ջուր և ջրեր։ Առաջին դեպքում, անկախ ծավալային ընդգրկումից, գործ ունենք զանգվածայնության-նյութայնության հետ իր ուղղակի նշանակությամբ. երկրորդ դեպքում՝ հոգնակի բառաձևը նշանակում է կա՛մ տեսակավորված ջրային միավորներ (զանգվածները), օր. հանքային ջրեր, կա՛մ ցաք ու ցրիվ թափված այդպիսի միավորներ, և կա՛մ աղբյուրներ, գետեր, առուներ և նման զանգվածային ամբողջություններ, իբրև բազմության առնված միավորներ; այսինքն՝ բազմազանգվածություն։*

Ցորեն *բառը, իբրև նյութայնություն-զանգվածայնություն արտահայտող, անհոգնական է. սակայն ցորեններ հոգնակին «ցորենի արտեր» նշանակությամբ գործածական է (հմմտ. վԲ, ե, 112). այսպես և արյուններ (Ն. տ. 88), երկաթներ (Ն. տ. 372)։ Ճոր բառը իմաստաբանական նման կարգի է պատկանում, բայց նրա տեսակավորումները արտահայտող հոգնակի ճոթեր ձևը ևս գործածվում է. «Դու էլ կերթաս, գուբյանից լավ ճոթեր կգնես բոթնոցի մեջ» (ՀԺՀ, IX, 287, Մանազկերտ)։ Հմմտ նաև ճուտեր (ԵՀ, Ըե, 75), ճարդերու մարագ (Դվ, Բ, 419), մութին սառերն հալեցան*

---

[33] Հատուկ անունների (անձնանուններ, տեղանուններ) հոգնակիակազմության մասին հանդամանորեն կխոսենք անեզականների կապակցությամբ։

[34] Դեռևս Հ. Պատկն ընդգծել է, որ թվի կարգը կիրառելի չէ նաև նյութային անունների նկատմամբ։ Առանձին առարկան, բան նրա, կարող է մեհուսացվել առանձնացվել այն ժամանակ, երբ մեր առաջ եղածը որոշակի ձև ունի։ Միայն այդ դեպքում է առաջանում հակադրության անհատ առարկաների և բազմության միջև։ Այդ պատճառով նյութային անունները զերազանցապես եզակի ձևով են (տե՛ս ԳՊ, ՊՍՑ, 326)։

(ն. տ. 118), ոսկեհատիկ զարիճներու կուլտին վրա (ն. տ. 170), խիճեր (ն. տ. 197), բույսի մեղրեր ծորելան (ն. տ. 234), կը սպառեր հողն ու ավիշները հողին (ն. տ. 238), ուրկե կը ծորին կաթիլներ տեղ արտասուք (ն. տ. 323), (կացինը) կոճղին խրած՝ թող խեժերեն ժանգոտի (ն. տ. 334), հուրհրուն տակ արեգակին (ն. տ. 363)։

Այս կապակցությամբ պրոֆ. է. Բ. Աղայանը գրում է. «Եթե գոյականը ցույց է տալիս այնպիսի նյութեր, որոնց քանակը որոշվում է ծավալով կամ չափով, բայց ոչ համրանքով, ապա հոգնակին վերաբերում է դրանց տարբեր տեսակներին (օր. գինիներ. շաքարներ, ցորեններ)»[35]։

Ձանգվածայնության-նյութայնության հատկանիշով բնութագրվող առարկաները իմացական ընկալումներով, իբրև մաքի (խոսքի) օբյեկտ, ներկայանում են ոչ թե մեկի և մեկից ավելինի քանակային հարաբերությամբ, այլ ծավալային, ծանրության, տարողության կամ պարունակության չափերով. այսպես՝ մեկ արկղ խաղող, մեկ լիտր ջուր, մեկ դույլ ջուր, մեկ տակառ գինի, մեկ շիշ գինի, մեկ ավտոմեքենա ցեմենտ, հինգ կոոր շաքար, մեկ տուփ շաքար, մի գդալ մեղր, մեկ խորանարդ մետր փայտ։ Որոշ առարկաներ ներկայանում են գծային չափերով, օրինակ, կտորեղենը. մեկ մետր չիթ։

Բայց քանի որ ծավալայնությունը, կշիռը (ծանրությունը), տարածականությունը (գծային չափը) տարբեր մեծության միավորներ կարող են լինել, ուստի թվականով նշվում է քանակության եզրը։ Արտահայտության պլանում այս կառուցվածքները ներկայանում են թվական+չափի (կշռի) միավոր+գոյական կապակարով։ Ընդ որում կառուցվածքային այս խորությունը կարելի է փոխարինել այլ խորությամբ, որի մեջ բացակայում է թվական բաղադրիչը։ Այսպիսի դեպքերում ծավալի (չափի) քանակային կողմը (նշրը) մնում է առանց սահմանափակման, անորոշ. օր. հինգ դույլ ջուր և դույլերով ջուր, տասը տակառ գինի և տակառներով գինի։ Այստեղ ծավալի (չափի) միավորի հոգնակին արտահայտչական-ազդեցաբանական երանգ ունի և առանձնապես ընդգծվում է չափվող առարկայի քանակային շատությունը։

Եթե նույնիսկ չափ-կշռային այս բնութագրությունը վերաբերում է թվարկվող առարկային, միևնույն է, այդ առարկայի

---

[35] է. Բ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, էջ 249։ Այս հանգամանքը չի հակասում այն դրույթին, որ նյութային անունները անհոգնական են։

անունը հոգնակի լինել չի կարող. «հազար քառակուսի մետր հողամաս», բայց ո՛չ «հազար քառակուսի մետր հողամասեր». «երեք խորանարդ մետր փայտ», բայց ո՛չ «երեք խորանարդ մետր փայտեր»։

Վերացականություն արտահայտող բառիմաստը ևս զանգվածայնության երանգ կարող է ունենալ, անբաժանական երևույթի դաղափարի արտահոմամբ։ Հոգեկան ու ֆիզիոլոգիական որոշ երևույթներ ընկալվում են իբրև անտրոհելի միասնություն. օր. աեր, կամք, վարք, համակրանք, ձանձրույթ, խանդ, սով, քաղց, գարշանք, գորով, նիրհ, քուն, հոգնություն, տարբություն։ Սրանք անհոգնական են իրենց բուն նշանակությամբ։ Այլ հանգամանքներում հոգնակի են կազմում։ Սեր բառը հոգեկան երևույթի անուն է, իբրև այդպիսին անտրոհելի, անբաժանական միասնություն ունի. անհոգնական է։ Սակայն սերեր հոգնակի ձևը «սիրո զգացմունքի մասնավոր դրսևորումներ, տարբեր արտահայտություններ» նշանակությամբ հնարավոր է. «Մինչ սերեր ծնած և մեռած արդեն» (ՎՓ, ե, 13), նաև մաճեր (Ն. տ. 108) «մահվան դեպքեր». Համմ. Այս մեքժամը դարձավ մեր Ենեռուն վերջին կաթիլը (ԼՇ, Ըե, 95). վրեժներու (ԴՎ, Բ, 60), խինդեր (Ն. տ. 184), սուգերուն մեջ (Ս, Ըե, 50)։

Բնության որոշ երևույթներ նշանակող անուններ, որոնք զանգվածայնության և վերացականության երանգ ունեն, իրենց իմաստային այդ հատկություններով պայմանավորված, անհոգնական են, սակայն երբ նշանակում են տվյալ երևույթի առանձին պահերի շարք, բազմատեսություն, հոգնակի են կազմում։ Օրինակ. շոգ և շոգեր՝ «Ենոգերն անցան». ցուրտ և ցրտեր՝ «Լեռնային շրջաններում երբեմն ուժեղ ցրտեր են լինում». «աճձրեև և աճձրևներ՝ «Այս գարնանը հորդ աճձրևներ եղան». սառնամանիք և սառնամանիքներ՝ «Այս ձմռանը սառնամանիքներ չեղան»։

Վերացականները կառուցվածքային և իմաստային (բառիմաստային) հատկություններով առարկայնություն են արտահայտում։ Այսպես, վազել մասնավոր (կոնկրետ) գործողություն է, պրոցեսային ակտ. վազք՝ այդ կարգի, այսինքն՝ պրոցեսային հատկանիշների ընդհանրություն, որը արդեն ինքնին առարկայնացած հատկանիշի հասկացություն է, այլևս պրոցեսայնություն չի արտահայտում, վերացական գոյական է։ Ինչպես նշել ենք, վերացական գոյականները անհոգնական են, օրինակ, չենք ասի վազքեր։ Սակայն որոշ վերացականներ, իմաստային տեղաշարժով, կարող են ներքաշվել հոգնակիությաղմության մեջ։ Այս միտումը հատկապես նկատելի է ժամանակակից գրական հայերե-

նում, ուր վերացական գոյականների զգալի մասը հոգնակի է կազմում։ Բուն վերացական անհոգնականները նոր հայերենում նկատելիորեն քիչ են[36]։

Կան բառեր, որոնք թանձրացական առումով անհոգնական չեն, բայց փոխաբերական իմաստավորմամբ, երբ ձեռք են բերում հավաքականության գաղափար, գործածվում են հիմնականում եզակիանաձև. «հանուիթը հավ է ստացել»։ Անհոգնական-հավաքականը նույնպես կարող է որոշակի հանգամանքներում հոգնակիա-կազմության միտում հանդես բերել։ «Հավաքական գոյականները, որոնք ցույց են տալիս տվյալ հավաքական ամբողջությունն իբրև միավոր, հոգնակիում արտահայտում են այդ միավորի (կատեգորիայի են) քանակային շատությունն (համմտ. զորք-զորքեր, ժողովուրդ-ժողովուրդներ...)»[37]։

Գոյական (կամ առարկայական իմաստավորում ստացած) հիմքերից և ություն ածանցով կազմված հավաքականները (վերացական հավաքականները) սովորաբար անհոգնական են. գյուղացի—գյուղացիություն, բնակիչ—բնակչություն, աշակերտ—աշակերտություն, ուսանող—ուսանողություն, ուսուցիչ—ուսուցչություն, այսպես և՝ բանվորություն, արհեստավորություն, հոգևորականություն, աշխատավորություն են[38]։ Սրանց են հետևում նաև օտարամուտ, փոխառյալ, իմաստով սրանց համարժեք բառերը. պրոլետարիատ, միլիցիա, ինտելիգենցիա և այլն։ Սրանցից հոգնակի կազմելը գրեթե անհնար է։ Լինում են դեպքեր, երբ եզակի ձևը անհոգնական է, նաև չունի հավաքական իմաստ, սակայն հոգնակին ձեռք է բերում հավաքականության գաղափար։ Այսպես, մոտ անիսկական կապ է, նա բնականաբար անհոգնական է. սրա միայն ստացական առման ձևից կարելի է կազմել հոգնակի. մոտը—մոտներս, որ ստացական հոգնակի է։ Մինչդեռ երբ հավաքականակերտով ունենք՝ մոտերը. օր. «Հնություններ են պահպան-

---

[36] Ըստ ՄՄ, ՇԲ, 93՝ Շատախի բարբառում ութչն ածանցով բառերը հոգնակի չունեն, անհոգնական են։

[37] Է. Ա. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, էջ 249։

[38] Այսպիսի դեպքերում ունենում ենք հավաքականակազմ ածանցող հիմք՝ ուսանող-ություն և հոգնակիակազմ հիմք՝ ուսանող-ներ, որոնք նույնանում են։ Հիմքերի նույնությունը և հավաքականի բազմություն արտահայտելը հնարավորություն են տալիս, որ հավաքականը և հոգնակին սինեկդոխային անցումով միմյանց փոխարինեն. օր. «Ուսանողությունը հուզվեց» և «Ուսանողները հուզվեցին»։ Առաջին դեպքում առկա է հավաքական գոյական, որի բայը եզակի է, երկրորդ դեպքում հոգնակի թիվ, որի բայը հոգնակի է։ Ունեն կառուցվածքային տարբերություններ, բայց հարաբերակցություն ևս (ֆունկցիոնալ)։

վել նաև... քաղաքի մոտերքում գտնվող Թմուկ բերդի լանջերին» («Հայր. ձայն», 1969, № 8)։ Այսպես և՝ աչ, ձախ ի բնե անհոգնական են, բայց քաղաքական իմաստավորմամբ՝ աջեր, ձախեր հոգնակիներ ունեն, որոնք արդեն նշանակում են որոշակի քաղաքական դիրքորոշում ունեցող մարդկանց հավաքական ամբողջություն։

5. ԱՆԵԶԱԿԱՆՆԵՐ (Pluralia tantum)

Անեզական են կոչվում հոգնակի այն բառաձևերը, որոնք համապատասխան եզակի ձև չունեն կամ գրեթե չունեն։ Սրանց շարքն են դասվում նաև այն հոգնակիները, որոնք թեև եզակի ձև ունեն, բայց բառիմաստով նրան համարժեք չեն։ Ինչ-որ չափով այս խմբին են հարում նաև նրանք, որոնք եզակի համապատասխան ձևի համեմատ կիրառական որևէ հատկանիշով (օր. հաճախականությամբ) հետու են կանգնած, եղակի—հոգնակի հակադրության մեջ մեկուսանում, առանձնանում են իրենց այդ հատկությամբ։

Բուն անեզականները նրանք են, որոնք առհասարակ եզակի ձևեր չունեն (օր. նոթեր, գանգուրներ, ֆինանսներ և այլն), մյուսները եզակի—հոգնակի հակադրության անհամարժեքությամբ պայմանավորված անեզականներ են՝ պայման—պայմաններ, հինը—հները, շատը—շատերը (աշխ.), երկին-երկինք, ագոյց—ագոյցք, հաւատ—հաւատք, միտ—միտք, ել—ելք, դէպ—դէպք, կամ—կամք, պէտ—պէտք (գրբ.)։

Անեզականությունը ևս իմաստաբանական պայմանավորվածություն ունի. կապված է առարկայի կամ առարկաների բազմության քանակային հարաբերությամբ յուրովի ընկալման հետ։ Եթե անհոգնականը բառային կարգ է, թվակարգի նկատմամբ լիովին չեզոք բառիմաստով, ապա անեզականը էապես կախված է հոգնակի բառաձևի բերած լրացուցիչ լեքսիկական իմաստավորումից, ուրեմն նա իր հոգնականաձև կառուցվածքով և ֆունկցիայով (իմաստով) հիմնականում բառա-քերականական (ո՛չ միայն քերականական) երևակարգ է։

Անհոգնականի և աննեզականի այս հատկությունները որոշ լեզվաբանների հակամետ են դարձնում կարծելու, թե գոյականի թվի կարգը բառա-քերականական է և ոչ քերականական։ Սակայն թվի կարգը ամենից առաջ մեկի և մեկից ավելինի քանակային հարաբերության հայեցակետի հիմքի վրա քերականորեն ձևավոր-

ված կարդ է և իբրև այդպիսին բնականական է իր էությամբ։ Եզակիի կամ հոգնակիի բառիմաստային (լեքսիկական) և ձևաիմաստային առանձին կողմերը, դրսևորումները չեն կարող որոշիչ, վճռական գործոն լինել տվյալ լեզվի ամբողջ թվակարգի գնահատման մեջ[39]։

Անեզականությունը հատուկ է ոչ միայն գոյականին. այն կարող է արտահայտվել այլ խոսքի մասերում, օրինակ՝ թվականի համակարգում։ Այդպիսին են երկու, երեք, չորք թվականները գրաբարում (հմմտ. եֆիճ||եֆեան կազմավորումները՝ երկոքին, երկոքեան են)։ Անեզականություն կա նաև որոշ դերանվանական ձևերում (մենք, միմյանց, իրար, մեկմեկու են)։

Անեզականության բառա-քերականական (բառա-թվակարգային) կատեգորիան նկատելի զարգացում էր ունեցել հին գրական հայերենում։ Այն հետագայում չի վերացել հայերենից, այլ արտահայտման ձևերը, եղանակներն է փոխել[40]։

Դիտարկումները ցույց են տալիս, որ որոշակի իմաստավորմամբ անեզաբար կարող են գործածվել՝

ա) Մի շարք վերացական, հավաքական, դանգվածայինության, անհատականության անուններ.

բ) Բարդ՝ բազմակազմ (կամ երկկազմ) առարկաների անուններ.

գ) Բազմադեպ երևույթների, բաղմապահ դեպքերի, անցքերի, ժամանակների անուններ, նման պայմանավորվածությամբ՝ կենցաղային, հոգեկան, մտավոր, բարոյական երևույթների անուններ.

---

[39] *Հոգնակի ձևերում, մանավորապես անեզականներում, բացի բառիմաստային տեղաշարժերից կարող են լինել նաև քերականական-իմաստային տեղաշարժեր, ասենք, սևոք, դասի հատկանիշների վերացում և այլն։ «Անեզականների մեջ կենդանի կերպով դրոշմում է հոգնակի ձևերի՝ մեկ քերականական տիպի մեջ ձուլվելու պրոցեսը» (ВВ, РЯ, 162)։*

[40] *Ըստ Գ. Վահանյանի (տերևան, 1969, № 92)՝ «Հայերեն բառարաններում հոգնակի ձևով գլխաբառ չկա։ Հայ բառարանագրության մեջ դա չի ընդունված, որովհետև հայերենում անեզական բառեր չկան։ Նա այս առում է «Քաղաքական համառոտ բառարանի» իր գրախոսականում։ Գրախոսողը ճիշտ է այն բանում, որ օտար լեզվի անեզական բազմաթիվ տերմիններ հայերենում կարելի է եզականաձև գործածել։ Բայց այդ չի նշանակում, թե հայերենում անեզականներ չկան, կամ բառարաններում դրանք չեն ցուցադրված։ Որոշ տերմինների հոգնակի ձևով համախական գործածություններին զուգահեռ կան նաև նկատելի քանակով անեզականներ նաև արդի գրական հայերենում։ Իսկ գրաբարյան անեզականները իհարկե բառարանագրված են։*

դ) Նախկին երկակիի հիմքի վրա վերակազմավորված որոշ հոգնակիներ.

ե) Եզակի—հոգնակի հարաբերակցությունից ֆունկցիայով մեկուսացած հոգնակին.

զ) Եզակի—հոգնակի հարաբերակցությունից կիրառական հաճախությամբ մեկուսացած հոգնակին։

Բառաձևի լեքսիկական իմաստավորումների բնույթյան կապակցությամբ նշեցինք, որ գոյություն ունեն աննշական-վերացական գոյականներ, որոնք եզակի ձեր չունեն, կամ եթե ունեն էլ, համարյա չեն նրան։ Գրաբարում այս երևույթը լայնորեն էր հատկանիշի, հատկապես սրոցեսայնության գաղափար արտահայտող արմատներից (բայահիմքից) վերացական նշանակությամբ բառեր, բառաձևեր կերտելու հետ[41]։ Այսպես բայարմատ + անէ կազմավորով շատ բայանվանական կազմավորումներ արտահայտում են գործողության, դրության, վիճակի վերացարկված գաղափար. սքանչանք, բերկրանք, աշխատանք և այլն։

Բոլոր այն դեպքերում, երբ անհոգնականից կազմվում է հոգնակի ձև, տեղի է ունենում բառիմաստի ուրույն նրանգավորում. հոգնակի ձևում բառիմաստը կորցնում է համարժեքության եզակիի հետ, այսինքն՝ այստեղ արդեն հոգնակի ձևի բառիմաստը հարաբերակից չէ անհոգնականի լեքսիկական նշանակությանը. այն առանձնանում է, մեկուսանում և փաստորեն ձևավորվում իրրև անեզական։ Այս վերաբերում է նաև նյութային-զանգվածային անհոգնականների հոգնակիիակազմությանը։ Ռուսերենում, օրինակ, грязь բառը իր ուղղակի նշանակությամբ անհոգնական է, բայց «բուժման միջոց» իմաստավորման դեպքում այդ բառը գործածվում է միայն անեզաբար՝ грязи։ Կան նյութայնության արտահայտող անուններ, որոնց բնորոշ է միայն անեզաբար գործա-

---

[41] *Ըստ Մ. Աստրյանի՝ «Գործողության անվան մեջ, բայանվան մեջ ինքնին առկա է ունականության, որոշ իմաստով բազմակիության, որովհետև հոգնակիության իմաստը... Ահա բայանունների արտահայտած բառիմաստային այդ առանձնահատկությունն է պատճառը, որ նրանք գրաբարում միտում են դեպի անեզականության կատեգորիան» (ՄԱ, ԱԲ2, 126)։ Սակայն բառիմաստային այդ առանձնահատկությունը կա նաև հոդրարարյան հայերենի բայանունների, այլ լեզուների բայանունների մեջ. ինչու՞ նույն միտումը չի դրսևորում իրենց անեզականությունն այս դեպքում բառա-քերականական ուրույն կարգ է որաբարում, ո՛չ միայն քերականական է նրա արժեքը. Ի՞նչ է նրանով վերակազմավորված անեզականակերտները բառա-քերականական իմաստավորման (ֆունկցիայի) ցուցիչներ էին. բառային իմաստավորումը կապված էր վերացականության-հավաքականության հետ, քերականականը՝ հոգնակիի հետ։*

ուիթյուն. օր. сливки, белила, брызги, духи, щи, чернила *բառերը ռուսերենում։ Այսպես նաև նյութերի մնացուկ, ավելցուկ, թափոն նշանակող բառերը՝* выжимки, очистки, вымолотки (*տե՛ս* ГРЯ, I. 112, 117)[42]։

Անեզականը կարող է հավաքական նշանակություն ունենալ. ժամանակակից հայերենում ամբ, եմբ, ոմբ *հավաքականակերտ մասնիկներով կազմությունները այդպիսին են. արտահայտում են ազգակիցների, կողմնակիցների (յուրայինների) հավաքական ամբողջություն, դրանց խումբը. օր.* պապոմբ, մերոմբ *են։ Համաքական այլ իմաստավորում ունեն՝* ճուշեր, գանգուրներ *անեզականները*[43]։

Բառիմաստի մեջ կատարվող տեղաշարժերով են մեկնաբանվում նաև անհատականության իմաստ ունեցող բառերի անեզաբար գործածությունը։ Սա հիմնականում հավաքական իմաստի հատատումով է կատարվում։ Այսպես՝ եմբ *հավաքականակերտ մասնիկով Գրիգոր հատուկ անունից (անձնանուն) հավաքական իմաստավորմամբ ստեղծվում է անեզական* Գրիգորեմբ *հոգնակին։ Այս անեզականը մեկուսացած է նրակի—հոգնակի հարաբերակցությունից. նա հարաբերակից նրակի չունի, այն չի նշանակում Գրիգորներ. որ հնարավոր էլ չէ, այլ Գրիգորին ազգակից մարդկանց հավաքական խումբ, որի մեջ Գրիգորը կարող է մտնել կամ նույնիսկ չմտնել։*

Գրիգոր *գոյականը ոչ միայն անհոգնական է, այլև որևէ առնչություն չունի հավաքական իմաստի հետ, բայց այդ անհոգնականից հավաքականակերտով «ածանցված» անեզականը ինքնին հավաքական-անեզական է։ Այս հավաքականությունը հենված է ազգակցական-արենակցական հատկանիշով խմբավորվող անձանց զաղափարի վրա։ Անձնանունների հոգնակին կարող է ցույց տալ այլ հատկանիշով խմբավորված հավաքականություն։* Վարդաններ *բառաձևը չի նշանակում բաժանական առարկաների շարք,*

---

[42] *Հին սլավոներենում նյութայնություն արտահայտող, ինչպես և վերացական հասկացությունների որոշ անուններ գործածվում էին անեզաբար (տե՛ս* АГ, СЯ, 117)։

[43] *Գերմաներենում որոշ հավաքական անձնանուններ անեզական են.* die Leute «*մերոնք*», die Eltern «*ծնողներ*», die Zwillinge «*երկվորյակներ*», die Gebrüder «*եղբայրներ*», die Geschwister «*եղբայրներ և քույրեր*», «*քույրեր*» *են (հմմտ. հայ. ծնողներ, երկվորյակներ, ռուս.* родители, близнецы)։ *Հավաքական երանգավորում ունեն ռուսերենի* алименты, деньги, джунгли, мемуары, финансы, *անձնանուններից* дети, люди, девчата *են։*

այլ տվյալ Վարդան անունով անձի որևէ հատկանիշն ունեցողների հավաքական ամբողջություն, որ կարող է լինել՝ ա) Վարդան անունը ունեցողների հավաքականություն, բ) Վարդանի բնավորության, վարքագծի, հակումների (հոգեկան, մտավոր, բարոյական) որևէ հատկանիշն ունեցողների խումբ, այսինքն՝ այստեղ հոգնակին ներկայացնում է Վարդանի որևէ աչքի ընկնող հատկանիշը ունեցող անձանց հավաքական ամբողջություն, այնպիսի անձանց, որոնք նույնիսկ կարող են Վարդան անունը չկրել։

Հատուկ անունների (անձնանունների) փոխաբերական իմաստավորումները (փոխանվանական անցումները) կարող են ելակետ տալ կազմելու հոգնակի ձև. այսպես, այս կերպ հոգնակի գործածություն ունեն դոնկիխոտներ, զիմզիմովներ են։ Այս հոգնակիները ֆունկցիոնալ հարաբերակցություն չունեն Դոն-Կիխոտ, Զիմզիմով ձևերի հետ։ Այսպես նաև ազգանուններից հոգնակի կազմելու դեպքում. Մամիկոնյաններ, Կարապետյաններ են։ Անհարաբերակցությունն այստեղ այն է, որ հոգնակին ձևոք է բերում բազմարժեքություն, ասենք, ա) տվյալ ազգանուն ունեցողների խումբ, բ) տվյալ ամուսնական զույգը, գ) տվյալ տոհմը, գերդաստանը, ընտանիքը, դ) տվյալ ազգանունը կրող անձի որևէ հատկանիշը ունեցողներ (ընդունողներ, հետևորդներ և այլն)։

Իմացաբանական որոշակի մակարդակի դեպքում բարդ՝ երկկազմ կամ բազմակազմ առարկաների անունները ևս կարող են աննշանակ գործածություն ունենալ։ Դեռևս հնդեվրոպականում հոգնակին կարող էր նշանակել ոչ միայն մեկի և մեկից ավելիների քանակային հարաբերության երկրորդ եղրը, այլև մի քանի մասերից կազմված, բազմակազմ առարկա, իբրև շատ մասերի ամբողջություն, գումար[44]։ Սակայն հայերենը, ինչպես նկատել է Ա. Մե-

---

[44] «Անունը,—գրում է Ա. Մեյեն,—հոգնակի թվում (կամ հավաքական չեզոք սեռի ձևում, որ փոխարինում է հոգնակի թվի ուզղական-հայցականին) ցույց է տալիս այն ամենը, ինչ որ կարող է դիտակցվել իբրև բազմություն կազմող. այդ պատճառով հոգնակի թիվը ցույց է տալիս եզակի այնպիսի առարկա, որը բաղկացած է շատ մասերից... Եվ հոգնակիի այդպիսի գործածությունը հանդիպում է նույնիսկ այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է այնպիսի առարկայի, որը բաղկացած է երկու գլխավոր մասերից, ինչպես, օրինակ, «դուռ». վեդ. dūrah... հայ. durkh...» Սա ցույց է տալիս մի քանի բառերի՝ միայն հոգնակի թվով գործածելու հնարավորությունը, ինչպես, օրինակ, քաղաքների անունները, ասենք, հուն. Ἀθῆναι... կամ բարդ առարկաների անունները, ինչպես լատ. antae „пилястры", վեդ. ā́tāḥ «կողափայտեր». համմտ. հայ. (dr-)and «կողափայտեր» (AM, B, 344)։ Ըստ ԱՐ. СЯ, 117՝ բարդ-բազմակազմ առարկաների անունները հին սլավոներենում գործածվում էին անեզաբար։ Հ. Աճառյանը

յեն, ընդարձակել է անեզականութ յան շրջանակները՝ ք-ն գործածելով վերացական անեզականների կազմավորումներում, թեև, իհարկե, դրան զուգահեռ, հնդեվրոպական որոշ անեզականների փոխարեն հայերենը զարգացրել է եզակի ձևեր։

Պետք է նշել, որ առարկայի բազմակազմ լինելը նրան չի դարձնում մեկից ավելին. ռուս. ножницы, штаны մեկական առարկա են նշանակում, բայց երկկազմ են։ Քանակային (թվակարգային) ասպեկտով առաջին պլանի վրա է մղված հենց այդ երկկազմությունը։ Ահա թե ինչու հաճախ ասում են, թե անեզականը իր հոգնակի ձևում դրսևորում է եզակիի իմաստ. «Ուրիշ լեզուներում, օրինակ, ռուսերենում, անեզական բառերը ձևով հոգնակի են, բայց իմաստով եզակի..., ցույց են տալիս մեկ առարկա» (ԷԱ, ԺՀՀԽ, 253)[45]։

Հայերենը և ցեղակից հնդեվրոպական շատ լեզուներ որոշ փաստեր են տալիս անեզականության այս կողմի վերաբերյալ, երբ հոգնակին դուրս է գալիս միասեռ առարկաների բազմությունը առանձնացնելու շրջանակներից, վերաբերում է այնպիսի առարկաների, որոնք մեկից ավելի մասերից են բաղկացած, կամ երկկազմ են. վերջինս մանավանդ երկակիի վերացումից հետո։ Այս նշանակում է, թե հնարավոր են երեք տիպական դրություններ. ա) երբ առարկան բազմակազմ է, բ) երբ այն երկկազմ է, գ) երբ գործ ունենք զույգ առարկաների հետ։ Առաջին երկուսի հիմքում ընկած է բարդ կամ բաղադրյալ լինելու գաղափարը. легкие, брюки, шаровары, часы, качели, клещи, кальсоны, весы, ворота, очки, куранты, кандалы *(ռուսերենում)*, *կառք, դուրք, դէմք, երեսք, երկինք, մահիճք, բաղնիք (գրաբարում)* և խոիկճեր, լեզերէ. *բարբառներում՝ տր՝մտր՝մուկէր (Ղրբ. բ.). ծրէծարէ (Մեղրի)* «ընդեր» նշանակությամբ. *Համմ.* նաև *ժողովրդ.* տեղերը գցել։

ընդգծում է, որ «հոգնակին հատուկ է նաև այնպիսի առարկաների, որոնք թեև թվով մեկ են, բայց կազմված են բազմաթիվ մասերից». նա բնորոշ օրինակներ է բերում ամերիկյան հնդկացիական չինուկ լեզվից. «...ավազ, տուն, մոխիր, աբոտ և այլն ի բնե հոգնակի են, որովհետև շատ մասերից են կազմված» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 242)։

[45] «Մի խումբ բառեր,—գրում է Հ. Աճառյանը,—որոնք իմաստով եզակի են ու ձևով հոգնակի, կոչվում են անեզական։ Այսպիսով անեզական բառերը հակառակ են հավաքական բառերի, որոնք իմաստով հոգնակի են ու ձևով եզակի» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 856)։ Այս իհարկե ճիշտ է, սակայն վերաբերում է անեզականության մեկ դրսևորմանը միայն։ *Համմ.* ժամանակակից հայերենի մեջ տիպի անեզականները, որոնք և՛ իմաստով (ֆունկցիայով) են հոգնակի, և՛ կազմությամբ։

«անկողինը բաց անել» նշանակությամբ. անկողին հասկացողությունը բարդ՝ բազադրյալ ընկալում է ունեցել։ Երես բառը, եզակիանալ գործածություններին զուգահեռ, որոշ բարբառներում, մասամբ և արևմտահայ գրականում պահպանել է նաև անեզականություն՝ նոր կառուցվածում (գրբ. երեսը). այսպես՝ Մշեհի երեսներ կարմրեցան (Ծ, b, 160. Համմ. ն. տ. 81. ՏԿ, ՎԱ, 80. ԳՋ, ԵԺ, I, 14. ԳՍ, ՇՅԱ, 31). Համմտ. նաև՝ լեզեր (ԳՎ, Բ, 72). Իսմայիլ պեյին աչքը հանդիպեցավ աղչկան ելևէջող կուրծքերուն (ԳՍ, ՇՅԱ, 77)։ Երրորդի հիմքում ընկած է զույգայնության գաղափարը. боты, лыжи, кавычки, коньки, погоны (ռուսերենում), աչք, ձեռք, ոտք, ծունկք (գրաբարում)։ Երկկազմության կամ բազմակազմության գաղափարն է ընկած նաև մի քանի հատուկ անունների, հատկապես տեղանունների, անեզականության հիմքում. Աթենք, Մասիս (գրբ.) Ալպեր, Կարպատներ. Համմտ. ռուս. Альпы, Афины, Горьки, Дарданеллы, Карпаты, Сокольники, Сумы, գերմ. die Anden, Apeninen, Ardennen, Karpathen, Kordilleren, Pyrenän, Sudeten և այլն (Համմ. ԵՇ, ԳՆՅ, 26)։ Հավանաբար իմաստաբանական նույնպիսի հիմնավորում ունեն Հայերենի Կարս, Ագուլիս, Նորատուս, Ալլաբերս տեղանունները։

Ինչպես նշեցինք, բազմադեպ երևույթների, բազմապահ դեպքերի, անցքերի, ժամանակների անունները, և այս կերպ դրսևորվող՝ կենցաղային, հոգեկան, մտավոր, բարոյական երևույթների անունները կա՛մ անեզական են, կա՛մ գերազանցապես անեզաբար են գործածվում։ Այսպիսին են дебаты, выборы, переговоры, проводы, происки, каникулы, будни, сутки (ռուսերենում), ասք, հարսանիք, աղաչանք, ելք, ընթացք, բերք, գնացք, դէպք, հայեացք, մուրք, շէնք, առաջք, վազք, վայելք, տեսք. ցոլք (գրաբարում), բանակցություններ, մեքենայություններ, ընտրություններ (քվեարկության իմաստով)՝ աշխարհաբարում։ Ռուսերենում հաճախական գործածություն ունեն կենցաղային երեվույթների, խաղերի, հասարակական-կենցաղային միջոցառումների, տոների, ծիսակատարությունների մի շարք անուններ. именины, жмурки, прятки, похороны և այլն։ Գրաբարում հաճախական գործածություն ունեն հոգեկան, բարոյական բազմադեպ երևույթների, բազմապահ պրոցեսների, ինչպես և հուզաշփացական բարդ ապրումների անունները. աղօթք, անէծք, կիրք,

հմայք, մեղք, նզովք, շնորհք, ցնորք, կամք, խօսք, հաւատք և այլն։

Երկակի թվի վերացումը հաճախ կատարվում է նրա հիմքի վրա հոգնակի ձևերի կազմավորումով. այսինքն՝ երկակի>հոգնակի կատուցվածքային-ֆունկցիոնալ անցումով։ Այս հոգնակին սովորաբար անեզականի հատկություն է ունենում։ Այսպիսի անեզականներ են գրաբարի դուրք (լատ. forēs), երեսք (հուն. πρόσωπα) ձևերը։ Այսպես նաև գրաբարի երկու անեզականը[46]*։*

Անեզականության ակունքները կարող են այլ լինել։ Այսպես՝ եզակի—հոգնակի հակադրության մեջ հոգնակին ենթարկվում է ֆունկցիոնալ «ճեղքման», առաջ բերում մի տեսակ ձևաբանական նույնանունություն, արդյունքում ունենում ենք հոգնակի մի ձև՝ մեկից ավելի բառային նշանակություններով կամ իմաստային երանգներով։ Ընդ որում հոգնակիի իմաստավորումները սովորաբար եզակիի հանդեպ կորցնում են իրենց համարժեքությունը, թեև բացառված չէ, որ դրանցից մեկը եզակիի հետ պահպանի այդ համարժեքությունը։ Հմմտ. ցուրտ—ցրտեր, գեղեցկություն—գեղեցկություններ, շարժում—շարժումներ, պայման—պայմաններ, հինը—հները, տարվան—տարիներին, ջանքով—ջանքերով, տեղում—տեղումներ, շրջան—(զեկավար) շրջաններ, կողմում—կողմերում և այլն։ Հմմտ. նաև դրբ. բարձր—բարձունք (ածականի վերադրի ֆունկցիայով) և բարձունք՝ «բարձր տեղ», լեռների, նրանց գագաթների և նման իմաստավորումներով[47]*։ Հմմտ. նաև՝ մոտերումս (ՄՆ, Ն, 110), նորերումս «վերջերս» (Շ, ԵԺ, X, 170), նորերս (Ն, տ. 348. ՍՋ, ԵԺ, IV, 269), ամառվա վերջերին (ՍՋ. ԵԺ, IV, 196), մոտերս, վերջերս, մոտ ժամանակներս. ամառվա վերջերին, վերջին ժամանակներ. ժամը մեկի մոտերը (ԳՍ, ՇՅԱ, 101)։ Այս կողմերը ի՞նչ գործ ունեք (ՀՊ, ԵԺ, III, 59). Վահկա մոտերն (Ծ, Ե, 77), Բենաիկ կողմեր որսի եկած է եղեր (ՏԿ, ՎԱ, 273)։*

Երբեմն եզակի—հոգնակի հակադրության մեջ հոգնակին «մեկուսանում է» իր հանճախական գործածությամբ։ Ըստ էության այս

---

[46] Գուցե և երեմ, շորմ հնագույն եռակի ու քառակի թվային ենթակարգերի վերապրուկ մնացորդներ են, ժամանակագրորեն որ առկա են եռ, քառ, արմատատարբերակներ։

[47] Մասն բառի հոգնակին գրաբարում լինում է մասումն. վերջինս ունի և «նշխարներ» նշանակությունը։ Այժմ կարմիրներ հոգնակին «կարմիր իրեր» նշանակությանը զուգահեռ ունի նաև քաղաքական իմաստավորում։

անգամ էլ հոգնակին իմաստային (ֆունկցիոնալ) որոշ երանգավորում (ծանրաբեռնություն) է ընդունում։ Այսպիսի անեզականը կարող է տարածականորեն ընդգրկել ընդհանուր լեզուն կամ մնալ առանձին լեզվառներում։ «Բազմաթիվ բառեր կան,— գրում է Հ. Ամատյանը,— որոնք գրաբարում գործածական են թե՛ եզակի, և թե՛ հոգնակի ձևով, բայց հոգնակին ավելի սովորական է։ Այս կարգի բառերը ընդհանրապես աշխարհաբարում անեզական են մնում (այսինքն պահում են ի վերջավորությունը). օրինակ՝ երկին և երկինք, բայց աշխարհաբարում միայն երկինք։ Բայց կան գրաբար այնպիսի բառեր, որոնք թեև գրաբարում երկու ձևն էլ ունեն, սակայն հոգնակին ավելի գործածական է, թեև աշխարհաբարում գոյություն չունեն. օր. ագոյց—ագոյցք» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 871)։

Այժմ ունենք դահուկ—դահուկներ հակադրությունը, բայց երկրորդ եզրը գործածությամբ ավելի հաճախական է (հայտնի պատճառով)։ Գրաբարում մօռուք (մորուս) սովորաբար անեզական գործածությամբ է բնորոշ, սակայն նա հանդիպում է նաև եզակի մօռուս||մորու ձևով։ Գանգուր բառը արևմտահայ գրականում հաճախ է հանդիպում հոգնականաձև՝ գանգուրներ (տե՛ս, օրինակ, ԴՎ, Բ. 21, 57, 194), թեև բացառված չէ նրա եզական գործածությունը (տե՛ս, օրինակ, ԼՇ, Ըն, 123)։ Այսպես և հաճախական է կապեր հոգնակին[48]։ Ռուսերենում ևս շատ գոյականներ, որոնք ունեն և՛ եզակի, և՛ հոգնակի ձևեր, գործածական են հիմնականում հոգնականաձև. օր. вожжи, доспехи, злаки, каракули, лыжи, плутни, проказы, шпоры (*տե՛ս* ГРЯ, I, 112)։

Հոգնականաձև բառը երբեմն ամրանում է առանձին ոճերում, արտահայտություններում (դարձվածքներում), օր. նոթերը կիտել, այծերը եկան, ձևեր է թափում (*համմտ.* էծերը չէկան՝ Ղրբ. բ., նաև՝ տէվէրը կրտըրվէն), *համմտ. գուցե քշես իծաններ (ԼՇ, Ըն, 369),* ուժերու ներած չափով *(ԳՍ, ՄՅԱ, 272),* հասարակաց կարծիք *(ՀՊ, ՆԺ, VI, 16).* հարգանաց հավաստիք *(Ն. տ. 174).* Ներքին գործեր *(պետության, երկրի) և այլն. ռուս. օր.* играть в дураки։

Բառի հոգնականաձև կիրառությունը կարող է պայմանավորված լինել քերականորեն նրա հետ կապված անդամի պահանջով-

[48] *Համախական գործածությամբ է պայմանավորված այն մտածումը, երբ բառարաններում ազգերի, բուսական, կենդանական տեսակավորումների, որոշ հանքատեսակների, քիմիական նյութերի անուններ հոգնակի ձևով են բերվում։ Այդպես հիմնականում վարվել է նաև Ստ. Մալխասյանցը։*

այսպես՝ լավ մարդ և լավ մարդիկ, *բայց միայն՝* հազարավոր մարդիկ. ծանր տարի և ծանր տարիներ, *բայց՝* տասնյակ տարիներ. մեծ խաղաք և մեծ խաղաքներ, *բայց՝* տարբեր խաղաքներ: *Նման դեպքերում, եթե փոխանունությամբ՝ հատկանիշի անունով արտահայտում ենք առարկաները, փոխանունը գործածվում է անեզաբար. այսպես՝ հազարավոր մարդիկ—հազարավորները, տասնյակ մարդիկ—տասնյակները:*

Քանակական թվականների հետ գոյականը սովորաբար դրվում է եզակի. հինսուն տարի: *Սակայն ազդուաբանական նկատառումներով (հուզա-արտահայտչական հանգամանքներով պայմանավորված), խոսքային տեմբրի պահանջով՝ գոյականը հոգնականաձև է գործածվում.* «Հինսուն տարիներ *երկիւղածութեամբ սգացինք մեր սրբազան նահատակներուն յիշատակը» («Աշխարհ», 29/III 69 թ.):*

Լինում են դեպքեր, երբ անեզականը կառուցվածքով է այդպիսին, երբ հոգնակին թվակարգային ֆունկցիայով հարաբերակցում է եզակիին, սակայն կառուցվածքով եզակի ձևը ելահիմք չէ հոգնակիակազմության համար. համմտ. ռուս. гражданин-граждане, горожанин—горожане *են: Հայերենում շատ է տարածված՝ որևէ տեղի պատկանելը, որևէ վայրից լինելը ցույց տվող ածանցումը՝ սովորաբար ացի, եցի, ցի ածանցաստարբերականներով: Գրաբարում ևս այդ ածանցումը առկա էր, բայց եզակի ածանցավոր կազմությանը հոգնակիում համապատասխանում էր անեզական ձև: մոկացի—Մոկք, վրացի—Վիրք: Վրացի նշանակում է վրացական ցեղին, ազգին պատկանող մեկ անձ, իբրև եզակի ձև ցույց է տալիս, որ խոսքի (մտքի) օբյեկտը մեկն է: Վիրք-ը ունի լեքսիկական նույն նշանակությունը, միայն, ի տարբերություն վրացի ձևի, ցույց է տալիս մեկից ավելին: Հակադրությունը միայն թվակարգային է, առկա է եզակի—հոգնակի հարաբերակցություն, բայց կառուցվածքով հոգնակին եզակի ձևից չի սերում. այն անեզական է*[49]:

Քննելով անեզականության երևույթն առհասարակ, դժվար չէ դիտարկել նրա կոնկրետ արտահայտությունները հայերենում, կառուցվածքային դրսևորումները հայերենի զարգացման տարբեր էտապներում:

---

[49] *Հին հայերենում Վիրք ձևը սինեկդոխային անցմամբ կրկնիմաստություն է դրսևորում, մասի (ժողովրդի) անունով սովորաբար կոչում էին ամբողջը (երկիրը). Վիրք = Վրաստան (և վրացիներ):*

Գրաբարում անեզականությունը նույնպես կապված էր առարկայի բազմակազմության (երկկազմության) ընկալման յուրահատկության, ինչպես և վերացականության, նյութայնության, հավաքականության, արտահայտող բառերի մեջ լեքսիկական տնդակարժերի հետ։ Անեզականները կազմավորվում էին հոգնակիակազմության նաև ուրույն կազապարներով։ Արտահայտության պլանում դիտարկվում են, օրինակ, այսպիսի կազապարներ, կառուցաձևեր.

ա) Բայաբուն÷f կազապարով. լինում են պարզ և բաղադրյալ բայաբներից կազմություններ. այսինքն՝ ցուցադրվող կազապարը ներկայանում է իբրև պարզ բայաբուն+f և բազադրյալ բայաբուն+f տարբերակներով. օր. խօս-ք և անարգ-ան-ք։ Կա քիչ տարածված բայաբուն÷ինք կառուցաձև. օր. նախատինք. բայց սա էլ պետք է համարել բաղադրյալ հիմք+f կազմություն՝ նախատ-ին-f, և միայն հետագայում՝ նախատ-ինք։

բ) Բայի անորոշ դերբայից կազմված բայածական+ք. արբեւլի-արբեւլիք, սպառնալի-սպառնալիք։

գ) Մասամբ՝ ածական÷f կազապարը. արգասիք, բարի-ք, ընտանի-ք, գաղտնի-ք, հաւաստի-ք, երախտի-ք, կարծի-ք են։

դ) Սովորական հոգնակիակազմության կազապարով՝ գոյական հոգնակիակազմ հիմք÷f. հաճախ բազմակազմ առարկաների անունների դեպքում, օր. կառ-ք կմախ-ք են։ Սրանց շարքը պետք է դասել բաղաձայն+(ը)ն կամ բաղաձայն+(ը)ր վերջնահանգն ունեցող բառերի հոգնակիակազմ կազապարով կազմավորումները. բարձր—բարձունք, թիկն—թիկունք, քիրտն—քրտունք՝ քրտինք, թեև իհարկե սրանք միայն հարում են իսկական անեզականներին։

ե) Ցեղանունների անեզական ձևերում f-ն դուգորդվում է հարաբերակից ացի (ցի)-ով ածանցականների ածանցող հիմքերի հետ. վր-ացի>վիր-ք, գուզար-ացի>Գուզար-ք, մոկ-ացի>Մոկ-ք են։ Այսպիսի կազմավորումները, այսինքն՝ f-ով այս դուգորդումները դրսևորում են և՛ հոգնակիի իմաստ (որ սովորաբար համարում են f հոգնակերտով հավաքական ամբողջության գաղափար), և՛ սինեկդոխային անցումով, այդ հավաքական բազմությունը ներկայացնող վայրը. Վիրք—վրացիներ և Վրաստան։ Համմ. Ղրբ. բարբառում եր, ել հոգնակերտների նույնանման կիրառությունները. Թանին քՆացալ ա f՛ու ղերը («Հարությունը դնացել է քրդերը», այսինքն՝ քրդերի ապրելիս վայրը). Խօցը տարալ ըն պը՛մբ՛կնէն («Ընտեսաներին տարել են բամբակները», այսինքն՝ բամբակի դաշտերը)։

Գրաբարյան գրաբարում բայահիմքերից վերացական անեզականներ կերտող **անք** *մասնիկի* **ան** *տարրը դեռևս գիտակցվում էր հիմքի կազմում. ոչ թե* **փրկ–անք**, *այլ՝* **փրկ–ան–ք**. *Համմտ.* **սեռ–որ. փրկանա–ց**, *և ոչ թե՝* **փրկ–անաց**: *Սակայն հնագրաբարյան հայերենում այս կառուցածևի էվոլյուցիան հանգեցրեց* **ան + ք > ան–ք > անք** *վերակազմավորմանը։*

Այս **ան**–*ը հիմքակազմության մեջ որոշակի ֆունկցիայով օժտված տարր է. հանդես է գալիս և՛ բայական, և՛ անվանական հիմքերում, նույնիսկ դերանվանական կազմավորումներում*[30]. *Հեռ-ան-ամ, մոռ-ան-ամ և այլն։ Այժմ էլ* **ան**–*ը բայական կազմավորումների կենսունակ բաղադրիչ է. օր.* **հերս-ան-ալ > հերսանալ։ Անք**–*ը հենց այդ բաղադրիչի և* **ք** *հոգնակերտի սերտաճման արդյունք է, որը և գիտակցվելով իբրև անկախ, միաձույլ՝ վերացական անեզականներ կերտող միավոր, դառնում է առհասարակ անեզականակերտ մասնիկ, զուգորդվելով նաև անվանական հիմքերի հետ. օր.* **ամօթ > ամօթանք, ախորժ > ախորժանք** *(նաև՝* **ախորժք***)։*

Վերացական-անեզական կազմող հիմքերում **ան**–*ը վերակազմավորվելով* **ք**–*ի հետ և կազմելով* **անք** *բաղադրությունը, դրանով իսկ պայմանավորում է բայանվանական կազմավորում. այսպես՝* **ապր–ել** *կամ* **ապր–եմ**, *բայց* **ապր–անք**: *Այստեղ* **ան**–*ը դուրս է գալիս բայակազմության ոլորտից, եվ այն դեպքում, երբ տվյալ բայակազմ հիմքը զուգորդվում է* **անք**–*ի հետ, նա զրկվում է հիմքակազմ* **ան**–*ից։ Գրաբարում հազվադեպ են* **սխանչանամ** *(սքանչ-ան-ամ) և սքանչանք (սքանչ-ան-ք‖սքանչ-անք) տիպի զուգահեռ կազմավորումները։*

Վերը ցուցադրված կաղապարներից երևում է, որ հին գրական հայերենում **ք** *մասնիկը անեզականներ կերտելու հատկությամբ, բացի բայահիմքերից, տարածվեց նաև դերբայական որոշ ձևերի, մասնավորապես հնագույն ի վերջավորությամբ դերբայի վրա։ Այս կարգի կառուցածևերում դրսևորվում էր ենթակայական դերբայի իմաստ։ Ոչ մասնիկով կազմված դերբայական կառուցածևի իմաստն ունեին՝ հոտոտելիք, տեսանելիք, շոշափելիք, ամբառնալիք, լուանալիք, լսելիք, խառնելիք, նայելիք և այլն։ Հոտոտելի* **ի** *նշանակում է նրանք, որոնք հոտոտում են, տեսանելի՝ նրանք, որոնք տեսնում են։ Նոր հայերենում սրանք կորցրին դերբայական (բայական) նշանակությունը, և այժմ այդպիսի կապ-*

[30] **Ան** *տարրը կա, օրինակ, երաւ (եր-ան-ք), սրաւ (սր-ան-ք), ինձանից (ինձ-ան-ից) կառուցածևերում, համմտ. Ղրբ. ր. ինձանա (ինձ-ան-ա) «ինձնից»։*

մությունները անվանական արժեք ունեն[51]։ Այժմ ըմպելիք, ծխելիք, խմելիք և նման ձևերը վերացական անուններ են, դուրս են եզակի—հոգնակի հարաբերակցությունից, անհոգնական են։ Նրանց մեջ արդեն մեռած են բայական հատկանիշները. գրելիք ձևը խնդրառություն չունի, կրավորական գրվելիք ձև չի կազմում և եթե կրավորակերպ կառուցածև էլ լինում է, ապա ներգործածև ձևն է անգործածականը[52]։

Նույն կառուցածևն ունեցող աննեզական որոշ բայանուններ ունեին հարակատար (այժմյան) դերբայի իմաստը. սմանչելիք, զարմանալիք, այսինքն՝ նրանք, որոնց վրա պետք է սքանչանալ, զարմանալ (տե՛ս ՀԱ, ԼՔՀԼ, III, 856)։

Տարածված էին նաև ումն հանգով բայանունների և f հոգնակերտի զուգորդմամբ աննեզականներ։ Այսպիսի հոգնակիները վերացական-աննեզականի նշանակությամբ մեկուսացան իրենց եզականներից և, իբրև այդպիսին, հետևեցին մնացած բոլոր աննեզականների էվոլյուցիային։ Նոր հայերենում սրանք (բաժանմունք, զբաղմունք, զգացմունք, ուսմունք, մտածմունք ևն) ձանալվեցին իբրև եզակի ձևեր։ Այժմ սրանց մի մասը ներկայանում է եզակի—հոգնակի հակադրությամբ, ընդ որում եզակի եզրի դերում հանդես է գալիս նախկին աննեզականը. ուսմունք—ուսմունքներ, մտածմունք—մտածմունքներ ևն։ Իսկ սրանց նախկին եզակիները համատարած կորցրին և հանգը և հնչյունափոխված այդ տեսքով գործածվեցին իրենց նախկին ֆունկցիայով, իբրև եզակի. շարժումն>շարժում, ուսումն>ուսում, զգացումն>զգացում։ Ահա թե ինչու այժմ ունենք՝ ուսում>ուսմունք—ուսմունքներ։ Շատերի եզակին պարզապես գործածությունից դուրս եկավ. զբաղումն—զբաղմունք, այժմ միայն՝ զբաղմունք։

Այս տիպի փոփոխությունները չեն սահմանափակվում միայն ումն հանգով բայանուններից կազմվածներն ընդգրկելով, այլ տարածվում են ուրիշ աննեզականների վրա ևս. օր. հին ծախ—ծախք հակադրության երկրորդ եզրը, որ բնորոշ էր իր համախական գործածությամբ, վերաարժեքավորվելով՝ նորից մտնում է եզակի—հոգնակի հակադրության մեջ, դուրս մղելով նախկին եզակին.

---

[51] Նոր գրական հայերենը զարգացրել է ու-ով ապառնի դերբայ՝ գրելու, խոսելու, տեսնելու ևն։

[52] Ըստ ՀԱ, ԼՔՀԼ, III, 862՝ 5-րդ դարից հետո ենթակայական (ներկա) դերբայի իմաստ ունեցող այս աննեզականները գործածությունից աստիճանաբար դուրս եկան. աշխարհաբարում սրանք գարձել են ապառնի դերբայ՝ գոյական կամ ածական կիրառությամբ։

այժմ գործածական են ծախք‖ծախս—ծախքեր‖ծախսեր համարժեքությամբ։

Հին հայերենի անեզական կառուցաձևերը նոգրաբարյան հայերենում, մանավանդ նոր գրական հայերենում աստիճանաբար վերացան կամ վերարժեքավորվեցին։ Դրանք պահպանվեցին միայն ազգակցություն արտահայտող որոշ անձնանունների հոգնակիում։ Մնացածները, ինչպես մասամբ դիտեցինք վերը, է մասնիկի հոգնակերտ նշանակության մթագնմանը, անկմանը, վերացմանը զուգահեռ՝ դիտակցվեցին եզակի, և իբրև այդպիսին՝ մեծ մասամբ եզակի—հոգնակի նոր հարաբերակցության մեջ մտան։ Այսպես, օրինակ, միտ, փառ, հանցանք անեզականները ձևաբանական վերարժեքավորմամբ դարձան եզակի և այժմ ունեն միտք—մտքեր, փառք—փառքեր, հանցանք— հանցանքներ հակադրություններ (Հմմտ. ՄԱ, ՀԼՏ, 195)։ Կան նաև վերարժեքավորված և եզակի դարձած կառույցներ, որոնք այժմ անհոգնական են. օր. վարք, խելք ևն։

Ստացվում է այնպես, որ անեզականների վերացումը զուգակցվել է հոգնակի բառաձևին մի տեսակ բառային անկախություն տալուն, իհարկե կառուցվածքայնորեն մնալով նույն տեսքում հոգնակի ձևը (անեզականը) պահպանվեց՝ նրանում եզակի իմաստի հաստատումով և հոգնակի բառաձևի արժեքազրկումով (ավելի ճիշտ վերարժեքավորումով)։ Այլ կերպ էլ լինել չէր կարող, որովհետև անեզականի կառուցվածքում հոգնակերտները զուգորդված էին հիմնականում այնպիսի հիմքերի հետ, որոնք անկախ բառային գործածություն չէին կարող ունենալ. օր. խոսք՝ անեզականի խոս-հիմքը անկախ գործածություն չէր կարող ունենալ՝ պահպանելով «խոսք» իմաստը։ Մնում էր պահպանել խոսք (>խոսք) ձևը[53]։

Երբեմնի անեզականի ք-ն ձևաբանորեն նոր տեսք ստացած միավորներում երբեմն պարզապես բազադրական արժեք ունի, նաև այն դեպքերում, երբ նա հիմքավերջի որևէ տարրով չի վերակազմավորված։ Այսպես, օրինակ, միտք, ոտք, կամք, խոսք. ձեռք, ճեմք կազմություններում ք-ն արդեն արմատահնչյունի վերածվելու միտում ունի։ Սակայն նա դեռևս դրան չի հասել այն պատճառով, որ միտ-, ոտ-, կամ-, խոս-, ձեռ-, ճեմ- արմատները անկախաբար, առանց ք-ի պահպանվում են շատ բառակազմություններում, դրանց դիտակցումը իբրև անկախ, ինքնուրույն ար-

---

[53] *Այս էվոլյուցիան ուրույն մեկնաբանություն է ստացել Ա. Այտընյանը (տե՛ս ԱՆ, ՔՔ, 82) և Հ. Աճառյանի (ՀԱ, ԼՔՀ, III, 874) մոտ։*

մատներ այժմյան լեզվազգացողությամբ դեռևս մնում է, նկատելի է. օր. մա-ավոր, ան-միտ, կամ-ազուրկ և այլն[54]*։*

Վերակազմավորված և եզակի արժեք ստացած նախկին անեզականը նոր հայերենում այդպես էլ մտնում է բառակազմական կաղապարի մեջ. օրինակ՝ խոսք>խոսք>խոսքային, հանք>հանքային և այլն։ Առավել ևս այդ այդպես է ձևակազմական կառույցներում. օր. խոսք-ի խոսք-ից, հանք-ում և այլն։

Այսպիսով, աննեզականների մեջ տարածված տեղաշարժերը հաացրին բառա-քերականական այդ ենթակարգի քայքայմանը, նրանց հիմնականում դարձնելով եզակի։ Այդպիսի եզակի ձևերը ձևոք բերեցին եզակի դոյականին բնորոշ ձևաբանական հատկությունները (հոլովակազմության, հոգնակիակազմության տիպոլոգիական գծերը)։

Սակայն աննեզականության իմաստաբանական հիմքերը լիովին չեն վերանում լեզվից[55]*. նրանք միտում են արտահայտության նոր միջոցներ գտնել, նոր տիպի կառույցներում հարմար տեղ գտնել։ Ձևաբանական վերակաղմավորումները, այս տեսանկյունից, ուրույն դրսևորումներ ունեցան նոգրաբարյան հայերենում, ընդ որում բարբառներում և նոր գրական հայերենում։ Նվ այս տեղաշարժերը (նաև աննեզականների եզականացումը) սկսվել են հնագույն շրջանից։ Այդ երևում է թեկուզ նրանից, որ դեռևս գրաբարում աննեզականի հետ առանձին դեպքերում բայը դրվում է եզակի, նաև այնտեղ, որտեղ սպասվում էր հոգնակի թվով բայ (հմմտ. ԱՍ,ՔՔ,83, ՀԱ,ԼՔՀԼ,III, 874)։*

Սկսած միջին գրական հայերենից՝ աննեզականությունը, չհաշված մասնավոր երևույթներ, համատարած կորցնում է իր որակային գծերը։ Հ. Աճառյանը հաստատում է, որ «Կիլիկյան շրջանում աննեզականները այլևս ջնջված են և ոչ միայն գրաբարի հին աննեզական ձևերը վերածված են եզակիի, այլև նորանոր բառեր, որոնք գրաբարում եզակի են, վերածվել են աննեզականի, այսինքն՝

---

[54] *Թեև նախկին աննեզականի Ի մասնիկը վերակազմավորված է հիմքի վերջնահանգով (կամ այլ հոգնակերտով), ապա այդպիսի դեպքում էլ նա սոսկ բառակազմական տարր է, միայն թե այս դեպքում՝ բաղադրյալ մասնիկի տարր. օր. հարցմանիՀ, արտքմանիՀ, փոքանիՀ, աշխատանիՀ։*

[55] *Նախկին աննեզականը չնայած իմաստային (ֆունկցիոնալ) վերափոխմանը, երկար ժամանակ, թեկուզ մթագնած կերպով կարող է իրեն զգալ տալ. «դավանան-Ի, խոսխնան-Ի, տանջան-Ի, ծնան-Ի և նման բառերի իմաստների մեջ թույլ կերպով գիտակցվում է իմաստի շատությունն ցույց տալը, բազմապատիկ լինելը, թեև դրանք ըմբռնվում են որպես եզակի թիվ ունեցող բառեր (ԱՂ, ՀԼՊՈՒՆ, 26)։*

ստացել են ի մասնիկը և հետո դարձել եզակի» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 874)։ Նա իրըև երկրորդ կարգի փոփոխությունների ցուցադրում՝ բերում է այսպիսի օրինակներ. աշխարհք, առուգնայք, բերունք, գանգատք, դեհք, զարկք, իրք (իր), խլոցք «բունագրավված առարկաներ», ծեծք, համունք, համարք, հրաւէրք, ջաղացք, չաքք (չափ) և այլն։ Սակայն, եթե կիլիկյանում անեզականները դեռևս «պահպանում են իրենց գրաբար հոլովումը», բարբառներում և նոր գրական հայերենում «հոլովումն էլ է վերացված և անեզական բառերը իրենց ի-ով միասին հաստատվում են իրըև եզակի սովորական բառ» (նույն տեղը, էջ 875)[56]։

Անեզականությունը հայերենում «վերացավ» ոչ իրըև քերականական-իմացական կարգ (իմաստավորում), այլ միայն կառուցվածքով, իրըև ուրույն կառուցածև։ Անեզականների իմացական-տրամաբանական հիմքերը հարատևում են, նրանք քերականական կամ բառային արտահայտության նոր միջոցներ գտան։ Այդ վերափոխությունը կատարված էր առհասարակ կառուցվածքային էական տեղաշարժերի հետ։ Սկսած միջին գրական հայերենից և հատկապես նոր հայերենում զարգացան բազմաթիվ մասնիկավոր կազմություններ, որոնք բառայնորեն արտահայտում են վերացականություն, հավաքականություն։ Եր, ներ հոգնակերտների ընդհանրացումը (և համակարգայնորեն հաստատվելը) ի հոգնակերտին մղեց բառակազմական ոլորտ։ Իսկ այս մասնիկը անհրաժեշտ էր այդ բնագավառում, որովհետև նրանով կազմված բազմաթիվ անեզականներ չունեն անկախ գործածություն ունեցող հիմքեր (արմատներ), սրանց բառային գոյությունը պայմանավորված էր հենց ի մասնիկի առկայությամբ։ Ուստի ի հոգնակերտի լիակատար դուրս մղումը կհանգեցներ համապատասխան բառերի (իմաստների, հասկացությունների) կորստի։ Իսկ լեզուն այդ չէր կարող թույլ տալ։

---

[56] Մ. Ասատրյանը «Անեզական բառերը հայերենում» իր հոդվածում այսպիսի դիտողություն ունի. գրաբարում կային անեզականներ, որոնք հազվադեպ գործածվող եզակի ձևեր ունեին, մի տեսակ «զույգ ձևեր» էին կազմում. արևելահայ գրական լեզվում այդ երկեղբ հարաբերությունը ուրույն ճակատագիր ունեցավ. ա) երկու եզրերը պահպանվեցին իրըև նույնիմաստ բառայնացած տարբեր. հնար—հնարք, բ) պահպանվել է անեզականը եզակի նշանակությամբ՝ ալիք, աղիք, գ) եզականաբար գործածվողն է պահպանվել. գիրկ, երես, ծունգ, ցավ (ցաւ), կրոն (կրօն), դ) երկուսն էլ պահպանվել են իմաստային տարբերակումով՝ դէմ-դէմք։ Կան նաև դեպքեր, երբ բառը գրաբարում միայն ի հոգնակերտով է գործածվում, իսկ այժմ առանց դրան. լանչ, հունձ, նախճիր)։

Հին հայերենում **f** *մասնիկը ներքաշվեց անեզականության կառուցածև, որովհետև անհրաժեշտություն կար հատկապես հատկանիշի գաղափար արտահայտող բազմաթիվ արմատներից (հիմքերից) վերացական, հավաքական բառիմաստային երանգներով նոր հասկացություններ կազմելու։ Քանի որ* **f**-*ն հոգնակերտ էր, ուստի նրա մասնակցությամբ այն հնարավոր էր միայն անեզականության վրայով։ Ուստի* **f**-*ն այդ կազմավորումներում արժեքավորվեց ոչ թե միայն իբրև քերականական, այլև բառա-քերականական ցուցիչ։ Նոգրաբարյան հայերենում քերականական ֆունկցիան անցավ եր, ներ մասնիկներին, մնաց* **f**-*ի բառային (բառակազմական) ֆունկցիան։ Անեզական բառածևը իսկականում բառայնացավ, դարձավ մի այնպիսի միավոր, որ կարող է իր հերթին մտնել եզակի—հոգնակի նոր հակադրության մեջ։ Անեզականությունը մեռավ իր իսկ ձևի մեջ, վերածվեց իր հակադրությանը. նախկին հոգնակին եզականացավ և ըմբռնվեց իբրև եզակի։*

Ժամանակակից գրական հայերենում առկա են հնատիպ անեզականների առանձին արտահայտություններ՝ կապված **եք, անք,** *ունք մասնիկների կիրառությունների հետ։ Սակայն նոր հայերենը զարգացրել է եր, ներ հոգնակերտներով անեզական ձևեր (կամ անեզական կիրառություններ) ևս։ Այս իհարկե չի նշանակում, թե նոր գրական հայերենն ունի անեզականության հատուկ կառուցատիպ։ Ավելի ճիշտ կլինի ասել, որ այժմ անեզականությունը դրսևորվում է հոգնակի ձևի կիրառություններում։ Միևնույն հոգնակի ձևը կարող է գործածվել և՛ բուն հոգնակիի, և՛ անեզական-հոգնակիի նշանակություններով։ Սա, իհարկե, արտահայտության նոր եղանակ չէ, սրան հանդիպում ենք նաև գրաբարում, սակայն հին գրական հայերենը հաճախակի դիմում էր նաև ուրույն կառույցներին։*

Շատ անեզականներ, հատկապես անեզական հատուկ անուններ (տեղանուններ) փոխառությամբ անցնում են լեզվից լեզու, կամ պարզապես կառուցվածքը պատճենվում է, թեև փոխառու լեզվում հաճախ իմաստաբանական ելահիմքը մթագնած է լինում, կամ չի ընկալվում. այսպես՝ Աթենք (գրաբար), Афины *(ռուս.), Ալպեր, Անդեր (ժամ. գրական հայերենում)։ Առանձնապես շատ են այն դեպքերը, երբ մի լեզվում տվյալ առարկայի անունը անեզական է, այլ լեզուներում (կամ լեզվում)՝ եզակի—հոգնակի հարաբերակցությամբ. համմ.* **աքցան, մկրատ***՝ հայերենում եզակի, իսկ գերմաներենում և ռուսերենում՝ անեզական (*die Lange, die Schere, *ռուս.* щипцы, ножницы*)։*

Կատարենք մի փոքրիկ համեմատություն ռուսերենի և հայերենի միջև. Ռուսերենի անեզականներին հայերենում համապատասխանում են՝

ա) միայն անեզական ձևեր. кудры — *գանգուրներ,* финансы — *ֆինանսներ,* ресурсы — *ռեսուրսներ,* заметки — *նոթեր,* близнецы — *երկվորյակներ,* мемуары — *հուշեր.*

բ) եզակի ձևեր. макароны — *մակարոն,* счеты — *համրիչ,* ножницы — *մկրատ,* очки — *ակնոց*[57]*,*

գ) և՛ եզակի, և՛ հոգնակի ձևեր. переговоры — *բանակցություն և բանակցություններ.*

դ) եզակի — հոգնակի հակադրությամբ ձևեր՝ հոգնակիի հաճախական գործածությամբ՝ родители — *ծնողներ, բայց նաև՝ ծնող.* кавычки — *փակագծեր, բայց նաև՝ փակագիծ.* жабры — *խռիկներ, բայց նաև՝ խռիկ.*

ե) միայն անեզական ձևը, երբ փոխառյալ է բառը, սակայն հայերենում նրա անեզականլինելը չի գիտակցվում. Сокольники — *Սոկոլնիկի,* Горки — *Գորկի,* Сумы — *Սումի,* Чебоксари — *Չեբոկսարի,* духи — *դուխի.* щи — *շչի,* шашки — *շաշկի.*

6. ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐ

Իմացական պլանում հավաքականությունը ներկայանում է իբրև միասեռ, որոշակի հատկանիշով միավորվող առարկաների ամբողջություն, բազմություն (հավաքածու). Արտահայտության լեքսիկական պլանում այն լինում է պարզ[58]*, արմատական կամ հատուկ հավաքականակերտ ածանցով ձևավորված, հմմտ. ամբոխ, դունդ. բայց՝ բանջարեղեն, ամանեղեն, քաղցրեղեն, կտորեղեն, ուսանողություն, աշխատավորություն* (եղեն, ություն

---

[57] *Ռուսերենի* очки *անեզականի դիմաց հայերենում սովորաբար դնում են եզակի ձև՝ ակնոց. «Միակ է ուրեմն ասել հյ. ակնոցներ՝ իբրև եզակի, ինչ. ես ակնոցներս աչքիցս հանեցի ևն, այլ միայն ակնոց: Հոգնակին կարող է լինել ակնոցներ. ինչ. Այս խանութում լավ ակնոցներ են ծախում» (ՀԱ, ՀՀՊ, II, 595): Արևմտահայ հեղինակների մոտ ևս տատանումներ ենք նկատում. Ակնոցներու տպակիին եռանն ավելի տխուր ու ավելի միապաղաղ կդառնար (ՀՇ, ՔՆ, 369. տե՛ս նաև՝ ՏԶ, ՆԺ, I, 399), բայց՝ ակնոցին եռանը (ՏԶ, ՆԺ, I, 427), ակնոցն աչքին վրա (ՏԿ, ՎԱ, 277): «Ռուսաբանություն է հոգնակի ձևով ասելը՝ «ակնոցներ», «ակնոցներ դնել» (ՍՄ, ՀՔՔ, I, 31):*

[58] *«Պարզ» ասելով նկատի ունենք հավաքականակերտի բացակայությունը և ո՛չ թե բառի ձևույթային կազմը:*

ածանցներով), բարբառներում՝ օտ ածանցով. տանձօտ «տանձենիներ ունեցող վայր», կ՛ըրդ՛զմանօտ «գերեզմաններ ունեցող վայր» (Ղրբ. բ.)[59]։ Իսկ եթե հավաքականությունը բառա-քերականական կարգ է, ապա նա արտահայտության պլանում ներկայանում է հատուկ հավաքականակերտ-հոգնակերտի (նաև սովորական հոգնակերտի) դուգորդումներով, ինչպես, օրինակ, ունենք արդի գրական հայերենում՝ պապ-ոնք, Հակոբ-ենք (հմմտ. ղեկավար շրջաճներ)։

Հավաքականության իմացական կարգի բառային կամ բառա-քերականական արտահայտությունները կարող են ընդգրկել նաև այլ խոսքի մասերի որոշ կազմավորումներ. հմմտ. հայերենում եթե, յակ, ոնմ հավաքականակերտները թվականական և դերանվանական առանձին ձևերում՝ տասնյակ, ամեներեքին, մերոնք (հմմտ. նաև՝ Ղրբ.-ի բրբ. ըրկուճաը «երկոքին»)։

Պրոֆ. է. Բ. Աղայանը իր «Լեզվաբանության ներածություն» ձեռնարկում տալիս է հավաքական կարգի (հնթակարգի) այսպիսի բնորոշում. «Բացի եզակի ու հոգնակի (երկակի, եռակի և այլն) թվերից, գոյություն ունի նաև թվի մի այլ արտահայտություն՝ այսպես կոչված հավաքական թիվ։ Կան բազմաթիվ բառեր, որոնք արտահայտում են առարկաների քանակը ոչ թե որպես եզակի (մեկ) կամ հոգնակի (մեկից ավելի), այլ որպես մի հավաքական ամբողջություն...։ Հավաքականությունը ևս արտահայտում է հոգնակիություն, քանակի շատություն, բայց որպես մի ամբողջություն» (ԷԱ, ԼՆ, 362)։ Բնորոշումը, անկասկած, ճիշտ է, միայն պետք է ավելացնել, որ այդ «քանակի շատությունը», այսինքն՝ հավաքականությունը կարող է արտահայտվել կա՛մ եզականաձև, կա՛մ հոգնականաձև. առաջին դեպքում ունենք էներգիկական արտահայտություն, երկրորդ դեպքում՝ բառա-քերականական։

Եվ իսկապես՝ հավաքականությունն արտահայտության պլանում, մի դեպքում, հարում է անհոգնականներին, մյուս դեպքում՝ անեզականներին։ Սակայն կառուցվածքային-իմաստային և արտակառուցվածքային զանազան հանգամանքներով պայմանավորված՝ եզականաձև հավաքականների մեջ կարող են լինել տեղաշարժեր անհոգնականությունից դեպի եզակի—հոգնակի հարաբերակցության ոլորտ։ Այս տեսանկյունից բնորոշ օրինակներ է

[59] Ըստ երևույթին հավաքականության այս դրսևորումը նկատի ունի Հ. Աճառյանը, երբ գրում է, թե հավաքական բառերը «իմաստով հոգնակի են ու ձևով եզակի» (ՀԱ, ԼՓՀ, III, 856. հմմտ. ГП, ПИЯ, 321—322)։

տալիս հայերենը. ամբոխ—ամբոխներ, բանջարեղեն—բանջարեղեններ. Համմտ. արևմտահայերենում՝ հերմակեղեններ (ԳՁ, bժ, I, 31), հանդերձեղեններ (ն. տ. 41), բանջարեղեններով (ն. տ. 54). Թավուտքներուն մեջը (ՄՄ, bժ, 106)։ Այգիներուն մրգեղենները կը բուրեն (ԴՎ, Բ, 199)։

Թեև բառաձևի մեջ կարող են լինել հավաքականակերտ ածանցներ (օրինակ՝ եղեն, ություն, oտ և այլն), բայց բառը դիտվում է եզականաձև, և նա իր քերականական վարքագծով հետևվում է սովորական (բաժանական) եզակիներին, ասենք, հոլովվում է նրանց նման. օրինակ, այդպես են հոլովվում արդի գրական հայերենի ամաենեղեն, ուսանողություն և նման բառերը[60]։ Մինչդեռ եթե բառաձևում առկա է հավաքականակերտ հատուկ մասնիկ, որը բառը ներքաշում է բառա-քերականական ոլորտ, ապա դոմինանտում է քերականականը, և հոլովումն էլ հոգնականաձև է. Համմտ. ժամանակակից գրական հայերենում՝ պապոնճ—պապոնց։

Բաշխվելով եզակի և հոգնակի բառաձևերում՝ հավաքականութիւնը ստանում է քերականական անհամարժեքություն. ունենում ենք եզականաձև հավաքական և հոգնականաձև հավաքական. որոնք երկուսն էլ դուրս են եզակի—հոգնակի համարժեքային հակադրության ոլորտից։ Ընդ որում՝ շատ լեզուներում եզականաձևը հիմնականում ներկայանում է իբրև անհոգնական-հավաքական (տե՛ս նաև ВВ, РЯ,157. ՀԱ, ԼՀՀ, III, 239), իսկ հոգնականաձևը՝ իբրև անեզական-հավաքական։ Վերջինս անեզականների իմաստաբանական այլ խմբավորումներին (վերացական-անեզական, նյութայնության՝ զանգվածայնության-անեզական, անհատականության անեզական) զուգահեռ ընթացող երևույթ է։

Լինում են նաև նյութային-հավաքական-անեզականներ ևս, որոնք կապ ունեն զանգվածային միավորների, մասերի միահամուռության, ամբողջության հետ, արտահայտում են բազմազանգվածայնություն՝ անկախ տվյալ նյութայնության իրական չափից, ծավալից. օր. ռուս. белила, чернила, щи և այլն։ Այսպես կարող է ընկալվել նաև որոշակի գործողության, պրոցեսի հետևանքով գոյացած նյութայնություն-զանգվածայնությունը (ասենք, մնացուկը, ավելցուկը, թափուկը)։ Բառա-քերականական այս աս-

---

[60] *Հին սլավոներենում «ցույց տալով իրերի կամ անձերի միահամուռություն (հետևապես՝ բազմություն). հավաքական գոյականներն ըստ էության քերականական ձևով հատկացվում էին եզակի թվին և ունեին եզակի թվի հոլովման ձևեր»* (АГ, СЯ, 117)։

պեկտները բնորոշ արտահայտություններ ունեն հատկապես ռուսերենում։

Ե՛վ բառային ոլորտում, և՛ բառա-քերականական պլանում բացառված չէ նաև **վերացական-հավաքականների** *ֆունկցիավորումը. հմմտ.* ուսուցչություն, բանվորություն *ժամանակակից գրական հայերենում. ապա և՝* անցք *(գրաբարում),* выборы, дебаты, похороны *(ռուսերենում). վերջիններն* **վերացական-հավաքական-անեզականների** *օրինակներ են։*

Հավաքականության հետ առնչություն ունեն նաև բաղադրյալ՝ բազմակազմ կամ երկկազմ առարկաների ընկալումը, նրանց անունների համապատասխան քերականական ձևավորումները, ինչպես և անհատ, բայց բազմամաս, առարկայի անվան (հատուկ անուն, տեղանուն) անեզականությունը։ Հայերենում շատ տարածված է անձանունների, ազգակցական-արենակցական կապ ունեցող անձանց անունների հավաքական իմաստավորումը (ուրույն ձևավորմամբ) անեզականներում, որ տեսնում ենք, օրինակ, նոր հայերենում, գերմաներենում, ռուսերենում և այլ լեզուներում (օր. Գրիգորենք, Афины, Карпаты *են)։*

Հավաքականությունը կարող է կապված լինել բառի փոխաբերական իմաստավորումների հետ։ Այդ կարող ենք դիտել, օրինակ, հետևյալ սինեկդոխային կիրառություններում. «Թշնամի՞ խորամանկ է ու փորձված», «Հայը խաղաղասեր ժողովուրդ է», «Խանութում ձու են վաճառում» (եզակի ձևի մեջ հավաքական բազմության իմաստ). հմմտ. հակառակը՝ ночные небеса, веселые времена *(ռուսերենում)։ Բազմիմաստ բառի հոգնակին կարող է «ճեղքվել» և որևէ լեքսիկական երանգավորումով մեկուսանալ եզակի—հոգնակի հակադրությունից։ Այդ կարող է տեղի ունենալ նաև հավաքական իմաստավորումով։ Այսպես, օրինակ, շրջան բառը եզակիում էլ բազմիմաստ է, սակայն ունի հոգնակի շրջաններ ձևի նաև հավաքական կիրառություն. «Սովետական Միության ղեկավար շրջաններում...»։ Կանաչ հատկանիշի անուն է, փոխաբերական իմաստավորման մեկ գծով նա կարող է հավաքական հոգնակի կազմել։ Մենք նստոտեցինք* **կանաչների** *վրա։ Հմմտ. Բարեկամական խրատներ կուտար ինձի... թուղթերս* **գեոիններ** *ձգելուս համար (ԳՋ, եժ, I, 33)։*

Այսպիսով կառուցվածքային պլանում ունենք հավաքականների երեք դիրք. ա) եզականաձև հավաքական, որ կարող է մրտնել եզակի—հոգնակի հակադրության ոլորտ, բ) եզականաձև՝ անհոգնական-հավաքական, որ չի մտնում այդ ոլորտը, գ) անեզա-

կան-հավաքական, որը նույնպես չի ներքաշվում այդ ոլորտի մեջ, նույնպես միաեզր է։ Առաջին խումբը բուն իմաստով հավաքական չէ։

Հավաքականության բառա-քերականական ենթակարգը տարածում ունի շատ լեզուներում, այն եղել է նաև հնդեվրոպականում (տե՛ս AM, B, 301. ՀԱ, ԼՔՀԼ, III, 528)։ Հին գրական հայերենը անցնելով թվակարգի համակարգային կազմավորումների հաստատմանը, թվի քերականական ասպեկտում (իմաստում) հասնելով ուժեղ ընդհանրացման՝ նկատելիորեն նեղացրել է հավաքականի ոլորտը։ Այս բնագավառում գերիշխում էր հավաքականության առաջին տիպը (ընդհանրապես եղականաձև արտահայտությունը)։ Ուղղակիորեն կամ երկրորդաբար նման ֆունկցիայով գործածվում էին ութիւն, եղէն և այլ ածանցներ։ Այսպես՝ գերութիւն կարող էր նշանակել նաև «գերիներ, գերիների բազմություն». նույնիսկ ական մասնիկով գաղթական, որ կարող էր նշանակել նաև «գաղթականների բազմություն» (հմմտ. ԱՀ, ԳՉ, 206, 308)։

Բառա-քերականական պլանում այն դրսևորվում էր անեզականակերտ մասնիկներով (ընդ որում՝ ՝ f-ով) գուգորդումներում։ Հայագետների մեծ մասը այդպիսի ֆունկցիա է վերագրում հին հայերենի ոչ-համակարգային հոգնակիակազմություններում հանդիպող իկ, եար, ենար և այդ կարգի հոգնակերտներին։ Մինչդեռ սրանց մեծ մասը ուներ սովորական հոգնակերտի հատկանիշներ։ Դրանցով հոգնակի դարձած ձևերը մտնում են եզակի—հոգնակի համարժեքային հարաբերակցության մեջ. այդպիսի հոգնակիների հետ բայը դրվում է հոգնակի թվով (հմմտ. ՀԱ, ԼՔՀԼ, III, 530). հոլովվում էին հոգնականաձև, կցական կառուցատիպով (և ոչ եզականաբար, ինչպես կարծում են շատ հայագետներ)։ Հոգնակիակազմության այդ տիպն էլ հետագայում, եռգրաբարյան հայերենում իր կիրառությամբ համեմատաբար հաճախանում ու տիրապետող է դառնում։

Տարբեր լեզուներում հավաքական ենթակարգը, ընդհանրական հատկություններին զուգահեռ, զարգացման ուրույն միտում է հանդես բերում։ Առհասարակ սրա կազմավորման ակունքների և զարգացման օրինաչափությունների խնդրում լեզուները հետաքրքրական փաստեր են տալիս։

Հնագույն, մասնավորապես ցածր հասարակական կյանքով ապրող ցեղերի լեզուներում հավաքականությունը տիրող, գերիշխող դիրք ունի թվակարգի մեջ (հմմտ. ԷԱ, ԼՆ, 362)։ Սակայն իր բնական էվոլյուցիայի մեջ, բառա-քերականական պլանում, հա-

վաքականությունը աստիճանաբար մղվում է դեպի գործածության նեղ ոլորտ։ Կառուցվածքային էվոլյուցիան կարող է աստիճանաբար հանդեպնել եզականացման կամ ամրացնել առանձին հոգնակի ձևերում։

Ե՞րբ և ի՞նչ հանգամանքներում է նախկին հավաքականը դառնում հոգնակի։ Ամենից առաջ այս երևույթը կապվում է թվակարգի քերականական իմաստների պատմական զարգացման հետ։ Մեկի և մեկից ավելինի քանակային հարաբերության ասպեկտն ունենալ է իր տևական, աստիճանական էվոլյուցիան։ Հնագույն մարդու համար ավելի ընկալելի էր մեկի (կամ մեկի և երկուսի՝ զույգի) ու հավաքական բազմության քանակային հարաբերության ասպեկտը։ Ուստի բաժանական հոգնակիությունը նման պայմաններում առաջին գծի վրա չէր կարող լինել։ Գերիշխում էր եզակի—հոգնակի մի հակադրություն, որի մեջ հոգնակին ներկայանում է իբրև միասեռ առարկաների բազմություն, հավաքական ամբողջություն։ Սակայն մարդու վերացական մտածողության, ընդհանրացած ընկալումների առաջընթացի ներգործությամբ՝ հոգնակիակազմության մեջ սեղաշարժ է կատարվում հավաքականությունից բաժանականության։

Սակայն լեզուն կառուցվածքային պլանում ավելի պահպանողական (կոնսերվատիվ) է, քան բովանդակային կարգերում. մտածողական-գիտակցական կատեգորիաները ավելի արագ են փոփոխվում, քան նրանց համապատասխան կառուցները լեզվի քերականության մեջ։ Ահա թե ինչու հին լեզուներում հավաքականության ենթակարգը դեռևս կենսունակ է։

Բայց, արդյո՞ք, հավաքականի էվոլյուցիան հանգեցնում է միայն հոգնակիին։ Հավաքականը կարող է վերածվել հոգնակիի, եթե՝ ա) նախկինում էլ հոգնականաձև է եղել, իբրև սրա հաստատում սովորաբար բերում են եար, նեար, տի, ան, իկ մասնիկնեբով ձևերի զարգացումները նոգրաբարյան հայերենում. բ) բառային ոլորտում ածանցավոր եզականաձև հավաքականը իր հետագա էվոլյուցիայի ընթացքում վերաարժեքավորվում է իբրև հոգնակի բառաձև՝ ածանցի մեջ բառակազմական ֆունկցիայի վերածումով ձևակազմականի (ածանց>վերջավորություն անցում). ընդ որում սա հազվադեպ կարող է լինել։

Ինչպես նշեցինք, բացառված չէ, որ հոգնականաձև հավաքականի հետագա զարգացումը տանի դեպի եզականացում[61], հոգնակի բանաձևի վերաարժեքավորումով իբրև եզակի, որը իր հետ-

[61] Համմ. ГП, ПИЯ, 323—324։

Թին կարող է մտնել եզակի—հոգնակի հակադրության մեջ կամ մնալ իրրև անհոգնական—եզակի։ Այսպիսի ճակատագիր ունեցան ի, աեՓ և այլ մասնիկներով շատ հավաքականներ. օր. գրբ. կառք>աշխ. կառք—կառքեր, նաև՝ գիրք>գիրք—գրքեր, վանք>վանք—վանքեր։ Այս լինում է սովորաբար այն դեպքերում, երբ հոգնակիական-հավաքականական մասնիկի մեջ մեռնում է հոգնակերտի ֆունկցիան, և պահպանվում է միայն հավաքականությամբ պայմանավորված բառային իմաստավորումը։ Դրանով իսկ բառաձևը բառա—քերականական ոլորտից մղվում է բառային ոլորտ։

7. ԵՐԿԱԿԻ ԹԻՎ. ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԱԿԻՒ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՆԻՄ

Երկակին թվային ենթակարգ է. նրա առկայության դեպքում թվակարգը ներկայանում է եզակի—երկակի—հոգնակի հակադրությամբ։ Քերականական այս հարաբերակցությունը գոյություն ունի որոշ հնդեվրոպական և ոչ հնդեվրոպական (օրինակ, ուգրոֆիննական, հոտենդոտյան, մունդա, մոն-քմեր, ավստրալիական, սեմական) լեզուներում։ Առավել չափով այն նկատելի է լեզուների հնագույն վիճակներում։ Հնդեվրոպական լեզվաշխարհում երկակին արտահայտություն է գտել հատկապես սանսկրիտում, հին հունարենում, հին սլավոներենում, լիտվաներենում, չեխերենում, սլովեներենում։ Մի քանի հին հնդեվրոպական՝ հնագույն գրավոր աղբյուրներով ավանդված լեզուներում (խեթերեն, լատիներեն, դրաբար, սոգդիերեն, պալի, պրակրիտներ են) նրան չեն հանդիպում։

Ինչպես թվակարգն առհասարակ, այնպես էլ նրա ենթակարգերը, ընդ որում և երկակին, իմաստաբանական պլանում ունեն իրենց ելահիմքերը։ Երկակին նույնպես կապված է մարդու հաշվելու կարողության զարգացման հետ։ Հ. Աճառյանը նրա կազմավորումը կապում է այն շրջանի հետ, երբ մարդու գիտակցության մեջ իրրև քանակապես հակադրվող միավորներ առանձնանում էին մեկը և երկուսը, ի հակադրություն երեքի, որը նախամարդու ընկալումներում հավասար էր բազմության։ Որ այդ այդպես է եղել, վկայում են ցածր հասարակական կյանքով ապրող մի շարք ցեղերի լեզուների տվյալները։ Կան լեզուներ, որոնց մեջ «շատություն» կամ «բազմություն» գաղափարը, այսինքն՝ միասեռ առարկաների հավաքական ամբողջությունը առանձնացվում է երեքից

կամ չորսից, նույնիսկ հինգից հետո։ Սակայն դրանք բացառիկ երևույթներ են և հիմնականում հատուկ են դերանվանական որոշ ձևերի։ Բացի այդ՝ այս երևույթները չեն խանգարում երկակիի իմացաբանական հիմքերը ճշտորեն որոշելուն։

Մարդկային իմացության զարգացման նշված էտապում «երկուսի» առանձնացումը կարող էր կատարվել հետևյալ հիմնավորումներով։ Նախ՝ իմաստաբանական պլանում երկու առարկան քանակային հակադրությամբ կարող էր առանձնացվել մնկը (եզակին) և բազմությունը, հավաքական ամբողջությունը նկատի ունենալով։ Սա չի խանգարում, որ իմաստաբանական այդ հիմքի վրա լիզվի կառուցվածքում «երկուսի» քանակային հարաբերությունը քերականական արտահայտություն ստանար։ Բայց «երկուսի» զուգահեռ ունի մի այլ կողմ ևս։ «Երկուսը» հաճախ առընչվում է զույգայնության գաղափարի հետ. զույգայնություն, որ շատ դեպքերում ներկայանում է ֆունկցիոնալ կապերով։ Այս նշանակում է, թե իմաստաբանական պլանում ունենք տարբեր բնույթի ընկալումներ։ Մի դեպքում «երկուսը» ընկալվում է միատեսակ առարկաներից երկուսի առանձնացումով (համմտ. տուն—երկու տուն—տների շարք կամ բազմություն, կամ հավաքական ամբողջություն և կամ պարզապես մեկից ավելի տներ), մյուս դեպքում էլ նույն քանակային հարաբերության մեջ երկուսը առանձնանում է իբրև զույգ՝ ֆունկցիայով հարաբերակցված առարկաներ։ Այս երկրորդ դեպքում բազմության գաղափարն ըստ էության ետին պլանի վրա է մղվում։ Թեև իմաստաբանական պլանում հնարավոր է, ասենք, ծունկ—երկու ծունկ—ծունկերի բազմություն, հավաքական ամբողջություն հակադրությունը, բայց երրորդ եզոր այս հակադրության մեջ թույլ օղակ է. ավելի գործուն է ծունկ—երկու ծունկ հակադրությունը։

Բացառված չէ «երկուսի» իմացաբանական այլ ընկալումներ ևս[62]։ Այսպես, օրինակ, լինում են դեպքեր, երբ գործ ենք ունենում ոչ թե միատեսակ առարկաների հետ, այլ միևնույն առարկայի կառուցվածքային երկու՝ ֆունկցիայով հարաբերակցված կողմերի քանակային հարաբերակցության հետ. ասենք, երկու մասերից բաղկացած դուռ, երկու մասերից բաղկացած երես և այլն։ Այստեղ քանակային կողմի տրամաբանական ընկալման ելակետը առարկայի մեկ հատ լինելը չէ, այլ կառուցվածքայնորեն երկբա

---

[62] *Այս տեսակետից ուշադրավ է արաբերենում նկատվող այն երևույթը, երբ երկակին գործածվում է ոչ թե նույն, այլ նման առարկաների մի զույգ կազմելու համար (տե՛ս ՀԱ, ԼՉԼ, III, 242)։*

ժան լինելը, մի բաժանություն, որի բաղադրիչները երկակի, զույգային հարաբերակցության մեջ են։ Սա էլ իմաստաբանական մի օրակ է մի կողմից՝ մեկի, մյուս կողմից՝ բազմության կամ միասեռ առարկաների հավաքական ամբողջության քանակային հարաբերության միջև[63]։

Եվ այսպես՝ տրամաբանական կարգն առկա է։ Այն լեզվի կառուցվածքում ձևավորվելու պայմաններ դտնելով կարող է քերականական արտահայտություն ունենալ, և լեզուն համապատասխան միջոցներով արտահայտում է նշված իմաստաբանական հակադրության երկրորդ օրակը։ Այսպես կազմավորվում է երկակիի ենթակարգը։

Համեմատական քերականությունը, ըստ ցեղակից լեզուների տվյալների, հնդեվրոպական միասնության շրջանի համար վերականգնել է այս ենթակարգը։ Սակայն արտահայտության պլանում հնդեվրոպական երկակին շատ թույլ դրսևորում ունի, որովհետև արտահայտության ինքնատիպ միջոցներով աղքատ է։

Նախալեզվում երկակին գործածվել է բոլոր այն դեպքերում, երբ խոսք է եղել երկու որոշակի անձերի կամ իրերի վերաբերյալ։ Ընդ որում այդ գործածությունը պայմանավորված է եղել կառուցվածքային ու արտակառուցվածքային ուրույն գործոններով, ասենք, խոսքային միջավայրով, բառակապակցության բնույթով (կախում ուներ թվական լրացումից)։ Ահա թե ինչու ասում են, որ երկակին ինքնին թիվ չի արտահայտել. կառուցվածքայնորեն երկակի ձևին ուղեկցել է երկու թվական լրացումը, առանց այդ ուղեկցության՝ երկակի ձևը գործածելիս խոսողը և խոսակիցը նախապես պետք է գիտենային, որ խոսքը իրենց հայտնի երկու առարկայի մասին է։

Միայն նշված դեպքերում է, որ հնդեվրոպականը գործածում էր երկակին (տե՛ս AM, B, 204)։ Ուրեմն հնդեվրոպական երկակին սահմանափակված չէր սոսկ առարկաների ֆունկցիոնալ զույգայնության գաղափարով։ Բնականաբար ֆունկցիայով կապված զույգ առարկաների անունները ևս պետք է երկակիի ձևն ունենային։ Այսպիսով հնդեվրոպական երկակին դուրս գալով կիրառա-

---

[63] *Որ իմաստաբանական այս ըմբռնումը ևս կարող է երկակիի կազմավորման ելակետ լինել, համաձայնում է ոչ միայն հնդեվրոպական, այլև ուրիշ լեզուների տվյալներով. «...նախնական լեզուներից օրինակ առնելու համար,—գրում է Հ. Աճառյանը,—հիշենք ամերիկյան չինուկ լեզուն, ուր աչք, երես, ամոթ, ինգամ, խոռոչած չամփուռ, երկփող հրացան, երկնյուղ սլաք և այլն ի բնե երկակի են, որովհետև երկու մասերից են կազմված...» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 242)։*

կան բնորոշ ոլորտից՝ ավելի տարրտամ գործածություն էր ստացել, դրանով իսկ հող նախապատրաստելով առհասարակ ենթակարգի վերացման համար։

Ընդհակառակն, կան լեզուներ (ոչ հնդեվրոպական), որոնց մեջ զույգայնության գաղափարը գնալով ավելի է ամրապնդվում՝ իր մեջ ներառնելով առհասարակ «երկուսի» ըմբռնումը[64]։ Այնուամենայնիվ նոր լեզուներում ամեն կարգի կաուզվածքային ու արտակաուզվածքային գործոններ միայն կարող են թուլացնել և ոչ թե ուժեղացնել երկակիի հիմքերը։

Ձեղակից հնդեվրոպական լեզուներից երկակին արտահայտություն է գտել հնդ-իրանական հին լեզուներում, հին հունարենում, քիտվաններենում, հին սլավոներենում, չեխերենում, սորաբերենում, սլովեներենում, մասամբ և կելտականում (օր. հին իռլանդերենում՝ անունների մեջ). գոթերենում պահպանված է միայն անձնական դերանունների մեջ և բայերի առավել հնատիպ ձևերում։ Հնդեվրոպական երկակին վերականգնվել է ցեղակից այդ լեզուների ընձեռած փաստերի հիման վրա։ Սակայն այդ վերականգնումը արտահայտության միջոցների ինքնատիպություն չի տալիս. էլ չենք խոսում այն մասին, որ առանձին ձևերի վերականգնումը անորոշ է։ Երկակի թվի ուղղական, կոչական, հայցական հոլովաձևերում առկա են՝ ա) բաղաձայնահանգերի համար e, o/a հանգն ունեցողները՝ ai, o/o, i, u հանգողներինը՝ դրանց երկարացումով (ō, ī, ū), դ) չեզոք սեռում i, սեռականում և ներգոյականում՝ սանս.-oh, հսլ. u<հնխ.-eus,-ous։ Տրական-բացառական-գործիական հոլովներում՝ սանս. bhyam, գնդ. bya, հպրսկ. biyā, հսլ. ma, լիտ. m։ Վերջինների նախատիպը վերականգնել դժվար է[65]։

Երկակիի վերացման պրոցեսն սկիզբ է առել հնդեվրոպական միասնության քայքայման շրջանից։ Արդեն խեթերենը ներկայանում է առանց այդ ենթակարգի։ «Երկակի թիվը վերացավ դեռևս մինչպատմական շրջանում էոլիական բարբառում, Փոքր Ասիայի յոնիական բարբառում և Կրետեի դորիական բարբառում, իսկ մ. թ. ա. IV դ. աստիկյանում, այսինքն՝ մայրցամաքային Հունաստանի խոսվածքներում» (AM, B, 55)։ Սանսկրիտն ուներ, բայց

---

[64] Ըստ Հ. Աճառյանի՝ սեմական նախալեզվում երկակին «նախապես բնական երկակիների համար էր գործածվում, ինչպես են մարմնի անդամները. բայց ավելի հետո սկսեց գործածվել այն ամեն բանի համար, որ թվով երկու է» (ՀԱ, ԼՔՀ, III, 242)։

[65] Այս մասին տե՛ս AM, B, 306, 326, 331. ՀԱ, ԼՔՀ, III, 341։

պրակրիտներն ու պալին չունեն. առհասարակ հնդ-իրանականում բայերի և անունների մեջ կար, բայց դեռևս մ. թ. ա. վերացավ։ Հին սլավոներենում առկա էր, բայց շատ քիչ նոր սլավոնական լեզուներում է պահպանվել։ Որոշ այլ ցեղակից լեզուներում թվն պահպանված են երկակիի ձևեր, սակայն կազմավորման և կառուցվածքային նեղ ոլորտ ունեն։

Երկակի ունեցող լեզուներում նկատվում է այդ ենթակարգի վերացման, անկման ընդհանուր միտում (տենդենց)։ Այս հանգամանքը բնականաբար լեզվաբանական աշխարհում խորհրդածությունների տեղիք է տվել։ Եվ իսկապես՝ ինչո՞վ է բացատրվում այդ պրոցեսը։ Անտուան Մեյեն և այլ մի քանի լեզվաբաններ դա մեկնաբանում են քաղաքակրթության առաջընթացով։

Ըստ Ա. Մեյեի՝ որոշ լեզվական երևույթներ, ըստ երևույթին, որոշակի հարաբերության մեջ են կուլտուրայի տվյալ մակարդակի հետ։ Այսպես, երկակի թիվը ամուր պահպանվում է ցածր կուլտուրայով ժողովուրդների մոտ և չի դիմանում քաղաքակրթության առաջընթացին։ Հունարենում, օրինակ, Փոքր Ասիայի բարբառներում այն ավելի վաղ է վերացել, քան մայրցամաքային Հունաստանում, և այժմ Եվրոպայում երկակին պահպանվում է միայն Լիտվայի, սլովինների և այլ ազգությունների գյուղական բնակիչների մեջ, որոնց կուլտուրական մակարդակը կարելի է ինչ-որ չափով կոչել հետամնաց. նույնիսկ այդ տեղերում էլ այն արդեն սկսում է գործածությունից դուրս ընկնել։ Երկակին անհետացել է նաև սեմականում և ուգրո-ֆիննականում՝ քաղաքակրթության զարգացմանը համաչափ (տե՛ս AM, B, 422)։

Համանման տեսակետ է պաշտպանում նաև Հ. Աճառյանը[66], Անկասկած, Ա. Մեյեի մեկնաբանությունը ընդհանուր առմամբ ճիշտ է. սակայն այն ինչ-որ չափով նաև միակողմանի է[67]։ Ճիշտ

---

[66] «Երկակին կարևոր մի ձև է վայրենու համար, որովհետև նա դիտե հաշվել միայն 1 և 2. իսկ 3-ից սկսած իրեն համար «շատ» է։ Լեզվի զարգացման ընթացքում, քանի ազգերի կուլտուրական մակարդակը բարձրանում է, երբ թվի գաղափարը արդեն ստանում է իր արդիական ձևակերպությունը, երկակին դառնում է ավելորդ և հետզհետե վերանում է՝ միանալով հոգնակիի հետ։ Այսպես մեզ համար երկակին հոգնակի է։ Քաղաքակրթության հետ ընչզնում է ուրեմն երկակին էլ, օր. հնդեցները, որոնք ձկնորսությամբ պարապող մի փոքրիկ ժողովուրդ են (15,000 հոգի), դեռ իրենց լեզվի մեջ ունեն երկակի թիվը, բայց գույգ կազմող առարկաները (ինչպես՝ ոտք, չմուշկ) հոգնակի են գործածվում և ոչ թե երկակի» (ՀԱ, ԼՔՀ, III, 245)։

[67] Որոշ լեզվաբաններ (Սպիրեն և ուրիշ.) ևս տարակուսանք են հայտնում երկակիի վերացման այն մեկնաբանության առթիվ, որ տեսնում ենք, օրինակ, Ա. Մեյեի մոտ։

է, որ քերականական յուրաքանչյուր կարգ նախ վերանում է իմացաբանորեն, նրա իմաստաբանական հիմքերի թուլացման, մթագնման, վերացման պրոցեսին զուգահեռ։ Մտածողության (գիտակցության) զարգացումը տանում է մասնակի, երկրորդական հատկանիշների «զոհման» ուղիով, այն աստիճանաբար հենվում է ավելի ընդհանրական կատեգորիաների վրա։ Սակայն քերականական կարգը նաև կառուցվածքային ուրույն գծեր ունեցող կատեգորիա է. բովանդակության մեջ եղածը որոշակիորեն սիստեմավորված է արտահայտության պլանում. այն ուրույն տեղ է գրավում բառաձևի մեջ։ Չնայած որ տրամաբանական հիմքը գիտակցության պլանում կարող է թուլանալ, վերանալ կամ արժեքազրկվել, այնուամենայնիվ կառուցվածքում, արտահայտության պլանում եղածը միանգամից կամ հարաբերականորեն կարճ ժամանակամիջոցում չի կարող վերանալ. կառուցաձևը ավելի պահպանողական (կոնսերվատիվ) է, քան նրա իմաստաբանական հարաբերակից ելահիմքը։

Ահա թե ինչու երկակիի անկման երևույթը (վաղ կամ ուշ անհետացումը լեզուներում) պետք է դիտարկել նաև մյուս կողմից, լեզվի կառուցվածքային դրվածքի առաջեկտով։ Այսպես, մեր հին գրական հայերենը թվականության մեջ հասել էր կատարելության. ֆ, ց, ս մասնիկները բաշխված կերպով ընդհանրացել և հաստատվել էին որոշակի հարացուցային ձևերում։ Նրանք մի տեսակ «հարթեցրել» էին բազմահոգնակիության ամեն մի հետք։ Կառուցվածքային այսպիսի պայմաններում և իմաստաբանական ելահիմքի վերացմանը զուգահեռ՝ հազիվ թե երկակին գոյության հենարան ունենար գրաբարում։ Սակայն մեր բարբառներից մի քանիսը դեռևս չէին հասցրել վերջ տալու բազմահոգնակիությանը, դեռ գործածության մեջ էին մի շարք հոգնակերտներ, որոնք գոյատևելու հենարան էին տալիս և այն մասնիկներին, որոնք նախկինում երկակիի ցուցիչ էին։ Այնպես որ յուրաքանչյուր դեպքում երևույթի վերացումը կամ պահպանումը պետք է դիտարկել իր «միջավայրում»։

Իսկ ո՞ւր է տանում երկակիի վերացումը։ Մենք արդեն նշեցինք, որ երկակին կարող է քանակային հարաբերությամբ առանձնացնել միասեռ առարկաներից երկուսը, ֆունկցիայով հարաբերակցվող զույգ առարկաներ, ինչպես և կառուցվածքով երկու կողմեր, մասեր ունեցող այնպիսի առարկա, որի մեջ այդ երկուսը ֆունկցիայով հարաբերակցվում են։ Եթե վերցնենք թվակարգի իմաստային՝ մեկի և մեկից ավելինի քանակային հարաբերության պլանի վրա, ապա առաջին երկուսը հարում են այդ հարաբերու-

թյան երկրորդ եղրին, այն է հոգնակիին։ Ահա թե ինչու լեզուներում երկակին ձուլվում է հոգնակիի հետ։ Հնագույն աշ–արմատով երկակին դրաբարում ձևաբանորեն վերակազմավորվելով հանդել է աչ հոգնակիին (համմ. ականջ–>ականջք), միջին գրական հայերենում և բարբառներում աչվի, ուսմվի երկակի բառաձևերը զարգացան դեպի աչվրներ, ուսմվրներ հոգնակիները[68]։

Ինչ մնում է երրորդ դեպքին, երբ երկակին կապվում է միևնույն առարկայի կառուցվածքային երկու՝ ֆունկցիայով հարաբերակցված կողմերի քանակային կողմի հետ, ապա այստեղ նրա զարդացումը կարող է երկու ելք ունենալ։ Հակում դեպի հոգնակին կամ հակում դեպի եզակին։ Այս երկու միտումների իմաստային նկահիմքը նույնն է, տարբերությունը կառուցվածքային՝ ուրույն զարդացման մեջ է[69]։ Այսպես զրաբարում ունենք դուռն>դուրք՝ դրունք, բայց ցեղակից լեզուներում այս դուռն եզակիին երբեմն համապատասխանում են հոգնակի ձևեր. համմ. լատ. forēs, հբգ. turi, լիտվ. du'rys։ Հայերենում երես բառը գրաբարում անեզական ձևով է ներկայանում՝ երեսք, միջին գրականում և բարբառներում մեկ՝ երես—երեսներ հակադրությամբ, մեկ էլ՝ անեզական երեսներ ձևով. համմ. «Բռնեց Դավթի երեսներ պագեց» (ՍԴ, 181)։

Հայերենը երկակիի ենթակարգն իր բնորոշ դծերով չի պահպանել. այն ներկայանում է վերապրուկային կառուցաձևերով (միջին գրականում և բարբառների մի մասում), իսկ հին գրական հայերենը խիստ ժլատ է այդ կարգի մնացուկների տեսանկյունից։

Միևնույն հայերենում երկակիի վերացումը կապում են տեղա-

---

[68] Վ. Վինոգրադովը (տե՛ս ВВ, РЯ, 160) անդրադառնալով այս հարցին՝ նշում է, թե ժամանակակից ռուսերենի рукава՛ ձևում а վերջավորությունը կարող է եկած լինել երկակի թվից. «Հոգնակիի ժամանակակից մի քանի ձևերում երբեմն զգացվում է դույգայնության նշանակություն իբրև կրած երկակիի հետք (համմ. очи, уши, плечи)»։ Ժամանակակից գրական ռուսերենում դույգայնության կատեգորիան անցյալի վերապրուկ է։ Նա արտահայտիչ չէ։ Զույգ առարկաներ նշանակող բառերը հարում են այն բառերին, որոնք նշանակում են բարդ, բազադրյալ առարկաներ. օր. бакенбарды, близнецы, антиподы և այլն։

[69] Լինում են առարկաներ, գրում է Հ. Պաուլը, որոնք միշտ հանդես են գալիս իբրև զույգ։ Այսպիսի զույգերը հնդեվրոպական լեզուներում նախապես արտահայտվում էին երկակի թվով։ Երկակիի վերացումից հետո նման դեպքերում գործածել են հոգնակի թիվ։ «Սակայն այդպիսի բառերից մի քանիսը, քանի որ սրանց նշանակած զույգերը քմբռնվել են իբրև ամբողջություն, ստացել են եզակիի ձև» (ГП, ПИЯ, 324)։

կան, հայերենին պատմական շրջանում հարևան կամ Հայաստանի նախաքրիստոնեական լեզուների (ուրարտերեն, կովկասյան) ազդեցության հետևանք չէ։ Այս մոտեցումն անընդունելի է։ Ահա թե ինչ է գրում Հ. Աճառյանը այդ կապակցությամբ. «Հայերենին ժամանակակից հնդեվրոպական լեզուներից շատերի մեջ երկակին արդեն ջնջված էր. ուստի և նրա չնչումը նաև հայերենում պետք չէ անպատճառ վերագրել խալդերենի կամ կովկասյան լեզուների ազդեցության, որոնց մեջ երկակի թիվը գոյություն չունի, այլ իրերի բնական ընթացքին, մարդկային մտքի զարգացման աստիճանին» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 441)։

Երկակիի մնացորդները հին գրական հայերենում ուշադրությամբ դիտարկվել են Հյուբշմանի, Մեյեի, Աճառյանի և այլ հայագետների կողմից։ Դիտարկումները ցույց են տալիս, որ վերապրուկային այդ ձևերը ակնհայտորեն հնդեվրոպական առնչակցություններ ունեն։ Բեև այս հարցն ունի նաև մաթ կետեր, բայց լրացուցիչ հետախուզումները ևս մեզ կողմնորոշում են դեպի՝ հայերենի թվային այդ ենթակարգի հնդեվրոպական ակունքները։

Գրաբարում գոյգայնություն արտահայտող մի քանի արմատական գոյականներ ունեն թվակազմության տատանումներ, հոգնակիի տարաձևություններ։ Քանի որ այդ բառերը (արմատները) արտահայտում են մարմնի գույգ անդամներ, ուստի կառուցածևերի հակադրությունը կարող է մեկնաբանվել երբեմնի երկակիի ձևաբանական վերակազմավորման հետ կապված։

Ակն գոյականը արմատական է, ունի «աչք» նշանակությունը, սակայն իմաստային անցումով դեռևս գրաբարում նշանակում էր նաև «աղբյուրի աչք», որ այժմ կոչում ենք «ակունք». ապա և՝ «թանկագին քար, գոհար»։ Քանի որ բարբառներում տարածված է «անիվ» նշանակությամբ ևս, ուստի կարելի է կարծել, որ այս իմաստավորումը նույնպես հնուց է գալիս։ Ակն-ի բոլոր այս իմաստավորումներն ըստ էության նույնանունության աստիճանի հասնող բազմիմաստություն են։ Մենք այստեղ չենք անդրադառնում այս շորսի հետ կապված իմաստային երանգներին։ Մեզ այստեղ հետաքրքրում են ամենից առաջ երկու նշանակություններ՝ «կենդանու աչք» և «անիվ», որ առարկայական վերաբերություններում սովորաբար առնչություն են ունեցել գույգայնության գաղափարի հետ։

Ցեղակից լեզուներում այս արմատի համարժեքները հաճախական գործածություն ունեն ամենից ավելի «կենդանու աչք» նշանակությամբ։ Նույնպես իմաստաբանական հիմք կար այս արմատից երկակիի ձև կազմելու։ Եվ իսկապես կան որոշ կառու-

ցաձևեր, որոնք հիմք են տալիս որոշակի պատկերացում կազմելու երկակիի քերականական արտահայտությունների վերաբերյալ ցեղակից հնդեվրոպական (և այդ ենթակարգը պահպանած, և այն կորցրած) լեզուներում։ Այդպիսի կառուցածև է **ակն** *եզակիի աշխ հոգնակին գրաբարում. սրանք համապատասխանում են հնդեվր. եզակի* ok²i, *երկակի* ok³ī *ձևերին (հնդեվրոպական երկակին սլավոներենում համապատասխանում է* oči, *հունարենում* ὄσσε, *լիտ.* aki *ձևերին)։ Հնդեվրոպականի համեմատությամբ հայերենի եզակին այստեղ ունի և հավելվածը, իսկ հոգնակիում առկա է* k²>չ *կամ* կ>չ *(համմտ. սլավ.* k²>č *կամ* k>č *անցում), թե երբ է տեղի ունեցել հնչյունական անցումը երկակիի գոյության շրջանում, նրա հետ կապված, թե՞ հետագայում՝ հնչյունադիրքով պայմանավորված, դժվար է ասել։*

Մի բան պարզ է, որ **ակն** *(այսինքն՝ և հավելվածի առկայությամբ) ձևից «կենդանու աչք» նշանակության համար հոգնակի կառուցածև չկա հին հայերենում, մանավանդ որ* **աչ-f** *ենթադրվում է իբրև երկակիի կառուցվածքի վերակազմավորում՝ նոր ֆունկցիային հարմարվելու միտումով։ Իսկ ինչպիսին է եղել այս բառի հոգնակին մինչև այդ վերակազմավորումը, և արդյոք եղել է, նույնպես դժվար է ասել։* **Ակունք** *և* **ականք** *հոգնակիները նախ՝ չունեն «կենդանու աչքեր» նշանակությունը, մյուս կողմից էլ՝ հենվում են և հանգով* **ակն** *ձևի վրա։ Սրանք կառուցվածքայնորեն ետնաբար են կազմավորված՝ և հավելվածի հաստատումից հետո. իմաստային կողմով էլ նրանք ածանցված են «աչք» նշանակությունից։*

Այսպիսով ակն—աչք *(եզակի-հոգնակի) հակադրության երկու եզրերն էլ կառուցվածքայնորեն վերափոխված են (հնդեվրոպականի համեմատությամբ). երկրորդ եզրում առկա է նաև ֆունկցիոնալ վերակազմավորում (երկակի>հոգնակի)։*

Այս ամենից հետո կարելի է մի հետևություն անել։ Որ աչ-ը հնագույն երկակիի վերապրուկային ձև է, այդ չի կարելի հաստատել **ակունք** *և* **ականք** *հոգնակի զուգահեռ կազմավորումների առկայությամբ։ Սրանք մինչգրաբարյան հայերենի համար նորակազմություններ են՝ պայմանավորված ոչ այնքան աչ միավորի առկայությամբ, որքան որ եզակիում* **ակ**-*արմատի և-ով վերակազմավորվելու հանգամանքով։ Մենք կարծում ենք, որ լեզվի հնագույն էտապում գույգային առարկաների անուններ կարող*

էին և չունենալ հոգնակի ձևեր[70], հոգնակի ձևերը կարող էին պարտադիր լինել այն երկակիների դեպքում, երբ նրանց արտահայտած առարկայական-քանակային հարաբերության մեջ ուններ թվարկվող միավորներ, և դրանց շարքում ֆունկցիավորում են նաև զույգ առնչությամբ հարաբերակցվողներ, այսպես՝ եզ—եզներ—մի լուծ եզ:

Այնպես որ նախահայերենում կառուցվածքային և իմաստաբանական (ֆունկցիոնալ) հանգամանքներով պայմանավորված «կենդանու աչք» իմաստի համար հնարավոր էր միայն եզակի—երկակի հարաբերակցություն: Հետագայում հոգնակիի զարգացումը կատարվեց վերացող երկակիի կառուցածևի վրա. իսկ եզակին ֆունկցիոնալ և կառուցվածքային վերակազմավորման կարիք չուներ, այն նմանաբանությամբ, ինչպես շատ բառերում, և ձայնորդային տարր ստացավ, որ հնչյունաբանական վերակազմավորում է:

Այսպիսով շատ հնարավոր է, որ աչ հոգնակին կառուցվածքայնորեն և ֆունկցիոնալ կողմերով կազմավորվեց երկակիի հիմքի վրա, որովհետև նրա հարաբերակից եզակին ևս վերակազմավորվել էր: Այստեղ որոշակի բան ասել հնարավոր չէ. բացառված չէ այն, որ *ակ>ակն անցումը հաջորդած լինի *ակ>աչ>աչ հոգնակիակազմությանը: Բայց վերջինս քիչ հավանական է: Թեև իհարկե կան փաստեր, որոնք ինչ-որ չափով դրա օգտին են: Եզակիում կար արդեն ակ>ակն անցում (նախքան երկակի>հոգնակի տեղաշարժը), ապա ինչո՞ւ «կենդանու աչք» նշանակությամբ հոգնակին չկազմվեց հենց այդ ակն եզակիից: Եվ այդ դեպքում կունենայինք ակունք հոգնակին և ոչ թե աչ:

Ն հանգի հավելումը առնչվում է հնդեվրոպական ակ-արմատի հետ, իսկ աչ-արմատը այդպիսի հավելում չունի, անկախ նրանից, թե ինչ հոգնակերտի հետ է դուգորդվում (համմտ. աչ-ք գրաբարում և աչ-վի միջին գրականում և բարբառներում), Որ երկակիականազմությունը կապվել է աչ-հիմքի հետ, երևում է նաև այդ հիմքի հաստատուն դիրքից աչվի, աչվըներ կազմավորումներում, որպիսիք ունենք եռագրաբարյան հայերենում: Բայց երկակին ավելի վաղ կորցրած գրաբարը այդ աչ-ը պահպանել է ոչ միայն իբրև հոգնակիականազմ՝ աչ-ք, աչ-իկ-ունք>աչկունք, այլև արդեն իսկ իբրև բառակազմական հիմք. օր. աչ-ագետ (համմտ. վիպասանականում՝ ևկ հաւանեաց բանից աչագետոյ դստերս Ալանաց): Իհար-

[70] Հ. Աճառյանը նկատում է. «Բոլոր հնագույն լեզուների մեջ մարդկանց զույգ անդամները ստանում էին երկակի և ոչ բնավ հոգնակի» (ՀԱ, ԼՔԼ, III, 442):

կն վերջին (բառակազմական) ֆունկցիայով աչ- հիմքը սովորական չէր գրաբարում, բայց առանձին փաստեր կան, այն հանդիպում է նաև՝ աչալուրջ, աչալրջութիւն, աչառանք, աչառեմ, աչառու, աչառութիւն, աչարձակութիւն, աչացավ, աչեղ կազմավորումներում։

Բառակազմական զարգացումներում ակն-||ական- հիմքատարբերակները ևս մեծ արդյունավետություն ունեն, սակայն իբրև թվակազմության հիմք այն չի ֆունկցիավորում «կենդանու աչքեր» հոգնակիի համար և ոչ էլ զուգորդելի է (հետագա հայերենում) վի- նրկակիրակերտի հետ։

Վերը կատարված դիտարկումները մի անգամ ևս հաստատում են հայագետների այն կարծիքը, որ գրաբարի աչ հոգնակին եր- բեմնի երկակիի ձևաբանորեն (կառուցվածքային և իմաստային) վերակազմավորված կառուցաձև է։

Ունկն գոյականը (ըստ ՀԱ, ԱԲ, V, 655՝ հանդիպում է նաև ունգն գրությամբ) նույնպես արմատական է, ունի և տարբրը, թեև ցեղակից լեզուները այստեղ ևս վկայություն չեն տալիս այդ տարրի մասին. հնդեվրոպական արմատն է aus- || us- կամ ōus- || ōs-. նախնական արմատն է au «լսել» (համմտ. հուն. οὖς, լատ. auris, գոթ. auso)։ Հ. Աճառյանը հայերեն ձևի հիմքում դնում է ōsn, usn-ն (ՀԱ, ՀԼՑ, I, 70), որ ըստ երևույթին նոին կազմություն է[71]։ Այս բառն արտահայտում է մարմնի զույգ անդամի անվան եզակին։ Որոշ ցեղակից լեզուներ ունեն համապատասխան երկակի ձևեր ևս. ավեստ. uši «երկու ականջ», սլավ. uši «երկու ականջ». համմտ. ռուս. ухо-уши, չեխ. ucho—uši։

Կառուցվածքային տեսանկյունից՝ հայերեն ձևը հնդեվրոպականի համեմատությամբ նկատելի փոփոխություններ է ունեցել։ Ինգալինի առնայությունը պետք է մեկնաբանել ընդհանուր օրինաչափությամբ, ինչպես որ ակն և այլ ձևերում. նախորդ ն-ն կարող է լինել նախասության հետևանք։ Իսկ կ-ն ավելի հին է իբրև արմատահնչյուն. նոր գրաբարյան հայերենում և բարբառներում հաճախ է հանդիպում ընգալնացած տեսքով, որ իր հերթին պայմանավորված է ընգալին միջավայրով (տե՛ս օր, օնգնը ղրբ. բրբ.)։ Սովորաբար բարդության և ածանցման մեջ մտնում է ունկն- հիմքով։

---

[71] Հ. Աճառյանը իր «Արմատական բառարանում» պաշտպանում է այն տեսակետը, որ հայերենի նախաձևը պետք է դնել ōsn կամ usn, որից էլ՝ ուճ-, ոա -կն մասնիկով՝ ունկն. համմտ. մուկն, ձուկն, աւմուկն. և կամ ակն-ի նմանությամբ, ինչպես կարծում էր Ա. Մեյեն։

Հին գրական հայերենում եզակի այս ձևը կարող էր արտահայտել ոչ միայն «կենդանու ականջ» նշանակությունը, այլև «ամանի բռնելատեղ, կանթ»[72]*։ Այս իմաստավորումները համապատասխանաբար ունեն հոգնակիի ուրույն կազմավորումներ՝* **ականջք** *«կենդանու ականջներ» և* **ունկունք** *«ամանի կանթեր»։* **Ունկունք** *կազմավորման հիմքում անկասկած ընկած է* **ունկն** *եզակի ձևը (համմտ.* **ակն>ակունք***)։ Սակայն այստեղ կառուցվածքային մեկնաբանությունն ունի մութ կողմեր*[73]*։*

Այստեղ էլ նկատելի է, որ **ունկն** *եզակիից «կենդանու ականջներ» նշանակության համար հին հայերենը հոգնակի ձև չի զարգացրել, այլ երբեմնի երկակիի* **ականջ-** *հիմքից* **ք** *հոգնակերտի զուգակցումով ստեղծվել է նոր կառույց* **երկակի>հոգնակի** *անցումը արտահայտության պլանում դրսևորելու համար։ Սա երբեմնի երկակիի կառուցվածքային-ֆունկցիոնալ վերակազմավորման արտահայտություններից մեկն է։*

Բայց ի՞նչ հիմք է **ականջ-**։ **Ականջք** *և* **աչք** *կազմությունների միջև նմանության եզր է գտնում Հ. Աճառյանը. «Ինչպես* **աչք** *բառի մեջ, նույնպես և այստեղ դտնում ենք չ ձայնը, որ ունդպականի հաջորդելու պատճառով դարձել է ջ» (ՀԱ, ԼՔՀ, III, 442)։* ***Բնականաբար այս դիտողությունը դեռևս լիովին չի պարզաբանում ականջ- հիմքը։***

Նախ պետք է նշել, որ **ունկն** *ձևի բառային գործածությունը նոր հայերենում եռին պլանի վրա է մղված. այն հիմնականում պահպանված է բառակազմություններում, իսկ բարբառներում այն այլ իմաստ ունի։ Այդ է պատճառը, որ «կենդանու ականջ» եզակի նշանակության համար գործածության մեջ մտավ* **ական**ջ *ձևը. որը հին գրական հայերենում հոգնակիակազմ հիմք է (***ականջ-ք***), իսկ էլ ավելի վաղ՝ երկակի կառուցածևի ձևաբանական ասպր (հիմք)։ Երբ* **ակն** *ձևի փոխարեն եզակիի ֆունկցիայով նոր հայերենում գործածվեց հին հայերենի հոգնակին՝* **աչք**, *և հոգնակին էլ կազմվեց սրանից՝* **աչք-եր**, *ապա «կենդանու ականջ» նշանակության համար* **ական**ջ *ձևը վերակազմավորվեց այլ կերպ. մենք չունեցանք* **ականջք>ականջքներ** *հոգնակիակազմություն, այլ՝* **ականջ** *(առանց* **ք** *տարրի եզակի ձև) եզականանիշ ձևից ներ հոգնակերտով՝* **ականջներ**։

---

[72] *Բարբառներում հանդիպող* **ունգն** *(Ջուղայի բ.),* **ուեգ** *(Թբիլիսիի բ.),* **օյնը, օճնը** *(Դրբ. բ.) ձևերը բոլորն էլ նշանակում են «ամանի կանթ». բուն «ականջ» իմաստը կորած է (տե՛ս ՀԱ, ԱՔ, V, 657)։*

[73] *Համմտ. ՀԱ, ԼՔՀ, III, 442։*

կարելի է կարծել, որ ականջ- *ձևը ծագում է նախնական* *ուկ‖ *ակ արմատից։ Թեև հնդեվրոպական ձևը դնում են* aus- ‖ us- *կամ* ōus- ‖ ōs-, ōsn-, usn-, *բայց սլավոնականը և մանավանդ հայկականը դրանցով մեկնաբանելի չէ։ Հայերենում* ունկն *արմատը և բարբառային* օնգնը *ու նման ձևերը վկայում են նախնական* ուկ- *արմատատարբերակի գոյության մասին, իսկ* ականջ- *(<*ակ-անչ<*ակ-աչ*) *հիմքը՝* ակ- *ի մասին։ Սրանց զարգացման ակունքները մշուշված են խորը հնության մեջ։*

Մենք տեսանք, որ աչք *-ը երկակիի ձև չէ. այն երբեմնի երկակիի* աչ- *հիմքի և* f *հոգնակերտի միակցություն է։* Ականջ *նույնպես երկակիի ձև չէ. այն երբեմնի* ականջ- *հիմքի և* f *հոգնակերտի միակցություն է, հոգնակիի ձև է։*

Այսպիսով գրաբարի ականջ *հոգնակին երբեմնի երկակիի ձևաբանորեն վերակազմավորված (և՛ ֆունկցիայով, և՛ կառուցվածքայնորեն) կառույց է*[74]*. սա «հին հայերենի երկակիի թանկագին մի մնացորդ է՝* աչք *(եզ. ակն) բառի հետ» (ՀԱ, ԱԲ, V, 655)։*

Այնուհետև. հնդեվրոպական *g'onu-r (>հայ.* ծունր*) բառի երկակին՝* *g'onwi ‖ g'ōnwi, որուն զարգացումներ է ունեցել հայերենում։ Երկակիի այս ձևերն ընկած են ոչ միայն գրաբարի* ծունգք‖ծունկք *անեզական հոգնակիների, այլև* ծունկն‖ծունգն *եզակի տարբերակների հիմքում*[75]*։* Ծունր *եզակին հին գրական հայերենում արդեն կիրառական նեղ ոլորտով է ներկայանում։* Ծունգ- *հիմքը կառուցվածքով նույնպես հետևել է և հանգով վերակազմավորվողներին՝* *g'onwi > ծունգ-ն > ծունգն։ Ուրեմն՝* ծունգք *(*ծունկք*) հնագույն երկակիի ձևաբանորեն այլ արժեք ստացած կառուցման է, նրա կառուցվածքային-ֆունկցիոնալ զարգացման հետևանք։ Առկա է նաև ծունկ ձևը (ետնաբար զարգացումով), որն այլ իմաստ ունի. «է խազ ինչ երաժշտական երգոց», «շարականի խազ», սրա հոգնակին՝* ծունկք *հոլովակազմության այլ կաղապարի է հետևում. հոլովակազմ հիմքը և՛ եզակիում, և՛ հոգնակիում n բնակերտով է՝ ծունկք—ծնկոց—ծնկովք (համմտ.* ծունկք *«մարմրբնի զույգ անգամ»—*ծնկաց—ծնկաւք *կամ* ծնկամբք*)։ Սա բացատրվում է և հանգի բացակայությամբ։*

---

[74] *Այս կապակցությամբ պրոֆ. Գ. Ջահուկյանը նկատում է. «ունկն բառի* ականջք *ձևը ևս ամենայն հավանականությամբ ներկայացնում է հնդեվրոպական երկակիի մնացորդ. թեև նրա հարաբերությունը հնդեվրոպական երկակիի հետ լիովին պարզ չէ» (ԳՋ, ՀՀՍ, 140)։*

[75] *Ըստ ՀԱ, ԱԲ, III, 823՝* ծունգն‖ծունկն *ձևերը գրաբարում գործածված չեն. իսկ* ծունկ *ձևի կ-ն մեկնաբանում է իբրև՝ ետնաբար* ծունգս>ծունկս *հոգնակիացման մեջ գ>կ անցումով՝ ս խուլից առաջ (նույն տեղը, էջ 824—825)։*

Հնագույն ծունգ- երկակիհակազմ հիմքը պահպանված է միջին դրականում և բարբառներում հանդիպող երկակիատիպ կազմավորումների մեջ՝ նույն կամ հնչյունափոխված տեսքով. ծնգ-ուի‖ ծնգ-վի‖ծդյ-վի են։ Այս հանգամանքը կասկածից դուրս է թողնում հնագույն երկակիի հետ այդ ձևի ունեցած առնչակցությունները։

*Որոշ բան ասում է նաև երկու բառի ձևաբանական բնութագրությունը։ Սովորաբար սրա դեմ դնում են հնդեվր. *dwō‖*dwou, որովհետև ցեղակից լեզուների վկայությունները դրան են հանգեցնում։ Թեև հնդեվրոպականում այդ բառն ուներ երկակիի ձև ևս, և հայերենի երկու ձևն էլ հիմքեր է տալիս սա երբեմնի երկակիի ձևաբանական ուրույն զարգացման արդյունք դիտելու, բայց որոշ հայագետներ իրավացիորեն վիճարկում են րկ—dw հարաբերակցությունը։ Ահա թե ինչու նշանավոր հայագետ Գ. Ղափանցյանը նկատում է, որ այդ «համապատասխանությունը արհեստական է և հակապատմական» (ԳՂ, ՀԼՊ, 325)։*

Ինչպես նշում են, -րկ- արմատական տարրը դրափոխությամբ կր- նախնականից է գալիս։ Բարդության և ածանցման մեջ մտնում է երկո-, երկի-, երկու-, երկ-, երկվ- հիմքատարբերակներով։ Սակայն երկակիության գաղափարը շատ հայագետներ կապում են ու տարրի հետ (երկ-ու). սրա և միջինհայերենյան ու բարբառային վի մասնիկի միջև որոշակի առնչակցություններ են որոնում։

Այս թվականը լինելով աննղական՝ միակն է, որ ուղղականում մասնիկ չի ստացել, և իբրև երկվանկ ձայնավորահանգ բառ, այն մյուս երկվանկ թվականների նման պետք է վերացներ այդ հանգը։ Սակայն ըստ երևույթին այդ ու-ն հենց պահպանվել է իր ֆունկցիոնալ ծանրաբեռնության շնորհիվ։ Այն f չի ստացել, որովհետև երկակիության գաղափարը բառի ուղիղ ձևում համեմատաբար տևական նստվածք է ունեցել։ Ք-ն հաստատուն չէր ամրացել նաև գործիականում. գործիականի ֆունկցիան սովորաբար կատարում էր երկոֆումբք ձևը (փոխ. երկուք)։

Պրոֆ. Գ. Ջահուկյանը անդրադառնալով այս հարցին՝ նկատում է, որ գրաբարի շրջանում թերևս այդ ու տարրը կարող էր բարբառային հիմք ունենալ. «Երկու-ի ու-ի մեջ պետք է տեսնել երկակի թվի մնացորդ... Այս տեսակետից անհնար չէ, որ Թրակացու քերականության թարգմանչի հիշատակած երկակիի ու-ն (համմա. Պետրոս, Պետրու և Պետրոսք) ոչ թե արհեստական հնարանք լինի (կազմված թարգմանչի կողմից երկու բառի անալոգիայով), այլ բարբառային որևէ հիմք ունենա» (ԳՋ, ՀՀՀՍ, 140)։

Վերը մեր դիտարկած ակն, ունկն, ծուր‖ծունգ բառերի հոգ-

նախինները գրաբարում ներկայանում են f-ով և երբեմնի երկակի կառուցածևի վերակազմավորված հիմքով: Երկու բառում մեր ուշադրությունը գրավում է ձևաբանական այլ տարր՝ երբեմնի երկակիակերտ մասնիկը: Մանավանդ որ շոշափելի առնչակցություն է նկատելի սրա ու-ի և վի (ուի) մասնիկի միջև[76], Ուրեմն երկակիակազմության վերապրուկներում հիմքային արտահայտություններից սրանով անցնում ենք մասնիկավոր դրսևորումներին: Մակայն սրանք էլ այնքան երևութական են, որ քննվող հարցի առանձին կողմեր դեռևս մնում են մշուշապատ:

Երկակիակազմության մնացորդների ամբողջական դիտարկումը պահանջում է քննության մեջ ներգրավել հին հայերենի այն բառերը, որոնք մարմնի զույգ անդամներ են նշանակում, կամ առհասարակ իմաստային կողմով առնչություն ունեն զուգայնության գաղափարի հետ: Այս տեսակետից հայագետների ուշադրությունն են գրավել՝ նաև ձեռն—ձեռք, ոտն—ոտք, դունն—դրունք|| դուրք կազմավորումները:

Ձեռն արմատի նախնական ձևն է ձեր-, որ երևում է ձեր-բակալել և նման կազմավորումներից. սակայն բառակազմությունների մեջ այն ներկայանում է այլ տարբերակներով ևս. հմմտ. ձեռ-ագէտ, ձեռ-ագիր, ըն-ձեռ-ել, ձեռն-ասուն, ձեռն-հաս, դատարկա-ձեռն: Այս տարբերակները առկա են նաև հոլովական (ձևակազմական) հարացույցում (գ)ձեռն, ձեռաց, ձեռաւք են, ընդ որում եզակի հարացույցում առկա է ձեռն, հոգնակիում ձեռ- արմատատարբերակը: Կառուցվածքային այս հակադրությունը, և այն հանգամանքը, որ սա արտահայտում է մարմնի զույգ անդամ, ենթադրել են տալիս ձեռ ձևի հնագույն երկակիի վերակազմավորում լինելը:

Ցեղակից լեզուների համապատասխանությունները այս առումով լրացուցիչ պարզաբանում չեն տալիս. հուն. χείρ «ձեռք», լատ. hir «ձեռքի ափ», օսկ. herliad «բռնել», սանսկ. hárati «առնել, բռնել», harana «բռնուկ», թոխ. tsar, քուչ. šar «ձեռք». իրրև հայերենի նախաձև դնում են *g'her-(>ձեր), *g'hers(>ձեռ-).

---

[76] Խոսելով վի մասնիկի մասին՝ պրոֆ. Գ. Ջահուկյանը գրում է. «Ճիշտ է, այս մասնիկի մասին գրաբարում որևէ վկայություն չկա, բայց, մի կողմից՝ մի քիչ հայերենում ու մի շարք բարբառներում նրա տարածված լինելը, մյուս կողմից՝ այս մասնիկի ու-ի համընկնելը երկու թվականի ու-ի հետ՝ հավանական են դարձնում այդ մասնիկի երկակիության արտահայտիչ նախնականությունը. միայն թե պարզ չէ նրա և հնդեվրոպական երկակիի բուն փոխհարաբերությունը» (ԳՋ, 2228, 140):

ձեռ- արմատին և ռնգային հավելումով՝ ձեռն, իսկ ք-ի հավելումով՝ ձեռք(տե՛ս ՀԱ, ԱԲ, IV, 480–481),

Ջեր- և ձեռ- արմատատարբերակները հանդիպում են նաև բարբառներում, օր. ձէր-ք (Ագուլիս), ձէրը (Թբիլիսիի բ.), ծերբ «ձեռք», ծրոճաճռիր «վարպետություն», բայց նաև ծեռուք «ձեռքով», ծեռաց «ձեռաց» (Ղրբ. բ.)[77], ձ'էռ (Երևան) են։ Այնուամենայնիվ որոշ բարբառներում ձեռ- տարբերակի վի-ով կազմավորումները անկասկածելի են դարձնում այս արմատի հետ կապված հնագույն երկակիի կառուցվածքի հետքերը։

Այսպիսով՝ ձեռ գրաբարյան ձևը հնագույն երկակիի հիմքի վրա վերակազմավորված՝ ֆ-ով հոգնակի կառուցվածք է։ Սրա օգտին են խոսում երեք գործոն. ա) իմաստային կողմով ձեռ(ն) արտահայտում է մարմնի զույգ անդամի անվան եզակիի գաղափար, բ) գրաբարի հոլովակազմության մեջ հարացույցի եզակի և հոգնակի շարքերը ունեն կառուցվածքի էական տարբերություններ. եզակին ն հանգն ունի և դրանով պայմանավորված՝ ուրույն կառուցվածք, գ) բարբառային արտահայտություններում առկա են երկակիատիպ կառույցներ վի մասնիկով։

Նոր հայերենի ձեռն- տարբերակը սովորաբար հանդիպում է հնատիպ բառակազմություններում։ Հնագույն երկակիի հիմքի վրա կազմավորված գրաբարյան ձեռ հոգնակին նոր հայերենում ձևաբանորեն կրկին վերակազմավորվելով դարձել է եզակի ձև, որից կազմվում է նոր հոգնակին՝ ձեռ-եր, ինչպես տեսանք ակն—աչք—աչքեր կառույցների կապակցությամբ։

Ոտն արմատը ծագում է հնդեվրոպական *pod- արմատատարբերակից (իսկ *ped- տարբերակից՝ ճիտ, յետ, ետ), ոմանք, օրինակ, Ա. Մեյեն, հայերենի համար դնում են *podm նախաձև։ Ձեղակից լեզուների համապատասխանությունները էական բան չեն տալիս հնագույն երկակիի հետ սրա ունեցած հարաբերակցության վերաբերյալ որևէ հատատուն բան ասելու։ Այդ մասին կարելի է շատ քիչ պարզաբանում տալ հայերեն ձևերի կառուցվածքային-ֆունկցիոնալ ներքին դիտարկումներով, ներքին վերականգնումներով։

Որ իսկապես ոտն եզակիին համապատասխանող ոտք հոգնակին նույնպես հնագույն երկակիի ձևաբանորեն վերակազմավորված ձև է, կարելի է հաստատել հետևյալ հիմնավորումներով.

---

[77] Ինչպես նկատելի է, Ղարաբաղի բարբառում կան երկու տարբերակներն էլ՝ ծեռ- և ծեր-(ծըր-), առաջինը սովորաբար լինում է ձայնավորանախորդ դիրքում։

Ա) Առկա է եզակի—հոգնակի կառուցվածքային անհարաբերակցություն. եզակին և հանգով է և դրանով պայմանավորված՝ ունի համապատասխան հոլովական կառուցատիպ. հոգնակին առանց և հանգի է (ոտ-ք), հոլովվում է քառ բնակերտով հիմքերի օրինաչափության. եզ. ոտն—ոտին, հոգն. ոտք—ոտից են։ Բազադրություններում հանդիպում ենք ոտ-||ոտն-||ոտան- արմատահիմքատարբերակներին։ Բ) Ոտն բառը ՝արտահայտում է մարմնի գույգ անդամների անվան եզակիի գաղափար, ուստի առկա է իմաստաբանական եզահիմք՝ երկակիիակազմության համար։ Գ) Բարբառներում հանդիպում են վօտ (Երևանի բ.), վուտ (Թբիլիսիի բ.), վօտ (Ախալց. խոսվածքում), ուտներ (Ագուլիսի բ.) վրէտ (Մարաղայի, բ.) վեներ (Ղրբ. բ) եզակի ձևեր, բայց կան նաև երկակիատիպ կազմավորումներին բնորոշ վի մասնիկով կառուցներ. օր. օդվի (Պոլիս, Ակն. բրբռ.)։ Դ) Ցեղակից լեզուներում այս արմատով կան հազվագեպ երկակիներ. օր. pāδa «երկու ոտք»՝ Ավեստայի լեզվում (տե՛ս ՀԱ, ԱԲ, IV, 264)։

Դուռն—դռունք||դուրք կազմավորումների դիտարկումները ևս որոշ լրացուցիչ տվյալներ են տալիս հնագույն երկակիի գրաբարյան վերակազմավորումների վերաբերյալ։ Դուռն բառի հնագույն երկակիի համար նույնպես եղել է իմաստաբանական-տրամաբանական եզահիմք. սա ևս կապված է զույգայնության գաղափարի հետ։ Սակայն, ինչպես գիտենք, տրամաբանական կարգը այստեղ ևս ինքնին բավարար հիմք չէ քերականական կարգի գոյացման համար։ Անհրաժեշտ է նաև կառուցվածքային եզահիմք։

Դուռն արմատը ծագում է հնդեվրոպական *dhur արմատատարբերակից. և հանգի առկայությունը հնարավոր է դարձնում r>n անցում, որով և պայմանավորված է դուռ- արմատատարբերակի առկայությունը։ Հայերենը պահպանել է դր- (<դուր-)|| դռն- (<դուռն) տարբերակներ բառակազմական ու ձևակազմական հիմքերում։ Այս տեսակետից դուռն—դռունք կազմավորումները տրամաբանական են երևում։ Բայց գրաբարում եղել է նաև դուրք անեզական ձև՝ իմաստաբանական ուրույն երանգավորումով, որով նա մեկուսացել է եզակի—հոգնակի հարաբերակցությունից։ Այս առումով ուշագրավ է գրավում լատ. forēs հոգնակին, որ նշանակում է «երկփեղկանի դռներ» (համմտ. նաև հբգ. turi, լիտվ. dùrys. տե՛ս A. Meillet, Esquisse..., 66)։ Եվ եթե սրան ավելացնենք այն, որ դուրք ձևը պահպանում է հնագույն դուր- արմատը, առանց և հավելվածի, իսկ հոլովական հարացույցի անդամներն ունեն բնակերտով հիմք (հոլովակազմությամբ այլ շարք են

կազմում, քան **դրունճ** *հոգնակիի ձևերը), ապա նշանակում է, որ կառուցվածքով ևս* **դուրֆ**-*ը հեռանում է* **դուռն**—**դրունճ** *(եզակի—հոգնակի) հարաբերակցությունից։*

Իմաստաբանական-կառուցվածքային այս հատկություններին ավելանում է մի երրորդ մոմենտ ևս։ Որոշ բարբառներում նկատելի է հրբեմնի երկակիի վերապրուկային արտահայտություն։ Համշենի բարբառում **տավի** *(<*դովի*) ասելով հասկացվում են մի դռան երկու փեղկերը, իսկ* **տռներ**՝ *զանազան տների և սենյակների դռներ (ըստ ՀԱ, ԼՔՀԼ, III, 730)։*

Այսպիսով գրաբարյան **դուրֆ** *հոգնակին հրբեմնի երկակիի հիմքի վրա ձևաբանորեն վերակազմավորված հոգնակիի ձև է՝ ֆ հոգնակերտով։*

Երկակիի հիմքի վրա կազմավորված հոգնակիները կարող են իմաստային-ֆունկցիոնալ ու կառուցվածքային տեսանկյունից չհարաբերակցել, կամ մասամբ միայն հարաբերակցել եզակիին։ Այդպիսի հոգնակիները սովորաբար անեզականի տպավորություն են թողնում։ Այս տեսանկյունից ուշադրություն է գրավում **սրուն**‖**սրունկն**‖**սրունկ**‖**սրունգն**‖**սրունգ** *և* **սրունք**‖**սրնկունք**‖**սրօնք**, *սեռ.-տրականում* **սրնի**‖**սրուան** *և* **սրնոց**‖**սրանց**‖**սրուանց**‖**սրնկանց**‖ **սրօնից** *բազմաձևությունը։* **Սրունճ** *ըստ որոշ աղբյուրների անեզական գործածությամբ է բնորոշ (տե՛ս ՀԱ, ԱԲ, VI, 479)։ Նախաձևերն են՝* *k′rūsոl ‖ *k′rūsn *(համմտ. լատ.* crūs<*k′rūs*)։ Առհասարակ ցեղակից լեզուները սրա համար էական պարզաբանում չեն տալիս։*

Կրուկ‖**կրունկ** *«գարշապար, ներբան» բառը, որ հնարավոր է՝* **կուր** *արմատից և ուկ մասնիկով զարգացում ունենա (տե՛ս ՀԱ, ԱԲ, III, 1481—1482), ունի* **կրկունճ** *հոգնակի ձև. թեև առնչվում է գույգայնության գաղափարի հետ, բայց երկակիության քերականական հետք չի թողել գրաբարում. բայց առկա է բարբառային* **գըրբյվի** *(Ակն. բ.) հոգնակի ձև։*

Զույգայնության գաղափարի հետ կապ ունի նաև **կուռն** *բառը։ Գրաբարում սա կառուցվածքայնորեն որևէ բնորոշ գիծ չունի, բայց բարբառներից մեկում կա* **կռներ** *(Ախալց. խոսվ.), որ չունի եզակի, անեզական է (տե՛ս ՀԱ, ԱԲ, III, 1419)։* **Յօճ** *գրաբարում գերազանցապես անեզական է, հետագա հայերենում այն ներկայանում է նաև* **վի** *մասնիկով (միջին գրականում և որոշ բարբառներում)։* **Ամոռնիֆ** *գրաբարում անեզական է, նրա համարժեքները բարբառներում ևս սովորաբար անեզական են։ Սրանց են հարաբերակցվում* **ամոլ**, **ամոլաջիլ** *բառաձևերը գրաբարում («զույգ եզ», «զույգ չիլ»). համմտ.* **զառնամոլ** *«զույգ գառ»։*

Զուգայնության հետ այս կամ այն չափով առնչություն ունեցող արմուկ(ն), ուս, շուրթ, թև, ատին, ծիծ, բազուկ, այտ, եղջիւր, բուշ և նման մի քանի բառերի դիտարկումները էական բան չեն տալիս[78]*։*

Այսպիսով երկակիատիպ կառույցների հետքերը գրաբարում հաստատելու համար ելահիմք են հանդիսանում՝

ա) Բառի իմաստային դաշտում զուգայնության գաղափարի առկայությունը.

բ) Ցեղակից հնդեվրոպական լեզուներում զուգահեռաբար երկակի կազմավորումների առկայությունը.

գ) Հոլովակազմության և թվակազմության մեջ կառուցվածքային ուրույն դրսևորումները, ընդ որում համաչխ անեզական կառուցածևերին հարելը.

դ) Միջին գրական հայերենում և բարբառներում համապատասխան երկակիատիպ (կամ երկակի) կառուցածևերի առկայությունը։

Եվ ահա այսպիսի հարցադրումներով մեր դիտարկումները բերեցին այն համոզման, որ հին գրական հայերենում նկատելի են երկակիատիպ կազմավորման հետքեր, թեև թվային այդ ենթակարգը իր բնորոշ գծերով գրաբարում չի պահպանվել։

Միջին գրական հայերենը երկակիատիպ կազմավորումների խնդրում ուրույն էտապ է նշանավորում՝ նախ նրանով, որ իմաստաբանական ելահիմքով երկակիի նկատմամբ միտում ունեցող բառերն ունեն հատուկ վի մասնիկ. և այս մասնիկը իր ձևաբանական արտահայտություններում այնքան որոշակի է, որ կասկած չի թողնում երբեմնի թվային այդ ենթակարգի գոյության վերաբերյալ։ Այնուհետև՝ գրաբարում վի-ով կազմավորումների բացակայությունը դեռևս չի խոսում այն մասին, որ հին հայերենի բարբառային տարբերակներում վի-ով երկակիատիպ կազմավորումներ չեն եղել. գրաբարը դրանք չի պահպանել, մի կողմից, երկակիի իմացաբանական հիմքերի թուլացման, մյուս կողմից էլ՝ f հոգնակերտի ակնհայտ էքսպանսիայի հետևանքով։

Ակն նշանակում է նաև, որ միջին գրական հայերենում երկակիատիպ կազմավորումները բարբառային հիմք ունեն. գրական լեզվում նրա տարրերի առկայությունը բացատրվում է միմիայն նը-

---

[18] Համմ. բրրո. ծծուի *ծծերս* (ըստ ՍՄ, ՀԲԲ, II, 337), նովի «ոտքեր, աղբրներ»։

բանով, որ հոգնակիակազմություններ այդ շրջանում դեռ չէր հասել անհրաժեշտ ընդհանրացման[79]։

Հենց այն հանգամանքը, որ գույգայնություն արտահայտող բառերի հոգնակին կարող էր կազմվել և՛ հոգնակերտով (-եր), և՛ երբեմնի երկակիի ցուցիչով (-վի), օրինակ, աչեր և աչվի, ապա պարզ է, որ երկակիի քերականական ենթակարգը միջին գրականում արդեն մեռած կատեգորիա էր։

Որ իսկապես միջին գրական հայերենում երկակին այլևս որպես քերականական ենթակարգ չէր թվակարգի համակարգի մեջ, ամենից առաջ երևում է նրա ցուցիչ վի մասնիկի բազմարժեքայնությունից։ Այդ բազմարժեքայնությունը դրսևորվում է հետևյալ կառուցաձևերում։

Ա) Զույգայնության գաղափարի հետ առնչվող և առհասարակ, մարմնի զույգ անդամ նշանակող բառերը թեև առանձին (երբեմն և համախական) գործածություններում ընդունում են վի մասնիկ՝ ձեռվի, ծնկվի, ականջվի, ընքվի, ոտվի, աչվի, երեսվի, դռվի, բայց բացառված չէ սրանց հոգնակիակազմությունը բուն հոգնակերտներով ևս։ Զուգորդումներ կարող են լինել և՛ համակարգային եր, ներ, հոգնակերտներով (համախաբար՝ եր, քան ներ, որովհետև մեծ մասը միավանկ հիմք է)[80]*, և՛ վի-ի ձևաբանական վերակազմավորմամբ ստացված այլ բաղադրյալ մասնիկներով, ինչպես, ներ՝ աչներ, վներ՝ աչվրներ, վրնի՝ ոտվրնի ևն։*

Պետք է նկատի ունենալ նաև, որ վի մասնիկով՝ զույգայնության հետ կապված բառերի հոգնակին համախական է ձեռ(ի), ծունկ, ուռ, ոտ(ի), աչ(ի) բառերի հետ, իսկ դուռ, ականջ, երես բառերի հետ հազվադեպ է լինում. վերջիններիս հոգնակին մեծ մասամբ այլ հոգնակերտով է։

Բ) Երկակիակերտ ֆունկցիայի մթագնման, թուլացման հետ կապված՝ վի մասնիկը վաղ շրջանից սկսած երևում է նաև զույգայ-

---

[79] «Միջին հայերենը,—գրում է Ռ. Բաղրամյանը,—երկակիի հասկացություն չուներ. նա բարբառներից ստացել էր այն ոչ որպես քերականական իմաստ, այլ որպես քերականական ձև» (Ռ. Բաղրամյան, Երկակի թվի մնացորդները հայերենի բարբառներում, «Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 1)։

[80] Որ վի մասնիկը համախաբար հանդես է գալիս միավանկների հետ, այդ մասնիկի ձևաբանական արժեքով չի մեկնաբանվում։ Մարմնի զույգ անդամների անունները, որոնց հետ հանդես է գալիս վի-ն, գերազանցապես միավանկ են. ոտի նա միավանկ հիմք ունի։ Զույգայնություն չարտահայտող միավանկների հետ հանդես գալը նմանաբանական անցմամբ պետք է բացատրել։ Իսկ որ շքեղավոր անունների հետ է հաճախաբար երևում, նույնպես մասնիկի ձևաբանական արժեքով չպետք է մեկնաբանել, այլ միմիայն նրանով, որ զույգայնության գաղափարը ավելի ուժեղ նատվածք ունի մարմնի զույգ անդամների անուններում։

նութ յան հետ կապ չունեցող մի շարք բառերի հետ (համմտ. գրվի, խոսվի, իրվի, ըղնկվի, միջուի, մտվի, անվի, չնվի, բռուսրուի)։

Գ) Կան դեպքեր, երբ վի-ն արդեն հավաքական հոգնակիի ցուցիչ է. օր. ազգի ազգի խոսվի ասէ (ԱԱ, 0Բ, 81. տե՛ս նաև ն. տ. էջ 157), թթվաշ իրվի ուտէ «թթվաշ բաներ» (ն. տ. 215), աղի իրվին զաղիքն տաշէ (ն. տ. 65). համմտ. նաև՝ Դ3, ՀՆՒվ, Բ, 260, XIII դ.։

Դ) Վի մասնիկը շատ դեպքերում վատ հոգնակերտի ֆունկցիա ունի (առանց դուրգայնութ յան որևէ հետքի). շատ դովի ցուցանեմք (ԱԱ, 0Բ, 5), որ ըղնկվին չընկնի (ն. տ. 448. տե՛ս և էջ 506)։ Այստեղ նա երկակիհակազմութ յան ոլորտից անցել է հոգնակիհակազմութ յան ոլորտը։

Ե) Վի-ի ձևաբանական զարգացումը նրան երբեմն հասցրել է ածանցական տարրի. այդպիսի երանգը ակնհայտ է հետևյալ կառուցածևերում. եւ թէ տղան կապուտաչվի լինի (ԱԱ, 0Բ, 67). Այլ ոչ աղօթք մտվին կուգայ (ՄՄ, ԸՆ, 223, XVI դ.)։

Զ) Այլ հոգնակերտների հետ վի-ի ձևաբանական վերաբերակազմավորումները (տեր‖վեր, վիճ, վրներ, վրնի, վտանճ, վտի են) որոշակիորեն վկայում են միջին գրական հայերենում այդ մասնիկի երկակիհակերտ ֆունկցիայի անկման մասին։

Վի մասնիկը ձևաբանական համանման արժեքով գտնում ենք նաև հայերենի մի քանի բարբառներում։ Շատ հայագետներ տարբեր առիթներով անդրադարձել են այս հարցին (տե՛ս, օրինակ, ՀԱ, ԼՔՀԼ, III, 442, 730. ՄԱ, ՀԼՏ, 334. ԳՋ, ՀՀՀՍ, 140)։ Լեզվաբան Ռ. Բաղրամյանն ունի մի ուշագրավ հոդված՝ «Երկակի թվի մնացորդները հայերենի բարբառներում» («Պատմա-բանասիրական հանդես», 1960, № 1)։ Հոդվածագիրը հենվելով Հ. Աճառյանի և իր անձնական դիտարկումների վրա՝ երկակիի հարցում բարբառների երեք խումբ է զանազանում. մի խումբ բարբառներ երկակիի ոչ մի հետք չեն պահպանել. մի խումբն էլ պահպանել է «որոշ քարացած ձևեր». երրորդ խմբի բարբառները «գնո կենդանի կերպով պահպանում են նրա հետքերը» (տե՛ս ն. տ. էջ 194)։

Բնականաբար եթե երկակիի մնացորդները որոնենք աչքի առաջ ունենալով սոսկ վի տարրը, այդ դիտողութ յունն ընդհանուր առմամբ ճիշտ է։ Վի մասնիկը ոչ բոլոր բարբառներն են պահպանել. այն առկա է արևմտահայ որոշ բարբառներում։ Այն ձևաբանական բազմարժեքայնութ յամբ հանդիպում է, օրինակ, Համշենի, Պոլսի, Սվեդիայի, Սասունի, Մշո, Վանի, Կարնո և այլ մի քանի բարբառներում ու խոսվածքներում։ Այդ բազմարժեքայնութ յունը իր

դրսևորումներում գրեթե նույնական է այն ամենին, ինչ ասվեց միջին գրական հայերենի կապակցությամբ։

Նախկին երկակիականը *վի մասնիկը կարելի է գտնել որոշ բազադրյալ հոգնակերտների կազմում. վեր (վանի բ.), վէյր (Արամո), վէրի՛ (Ուրմիայի բ.), վէր. վրդա (Սվեդիա), վրդան (Մուշ), վրդա՛ճ (Մուշ, Սասուն, Դերսիմ), վրդա՛ճ (Սվեդիա, Դերսիմ), վրդա՛մ (Համշեն, Զեյթուն, Հաճըն, Դերսիմ), վրդի (Դերսիմ), վրդիմ (Կարին, Պոլիս, Մուշ, Նոր Նախիջևան), Կեսարիա, Դերսիմ, Սասուն), վր՝նա (Կիլիկիա), վրներ (Վան), վրնէյ (Համշեն), վրնէր (Պոլիս, Դերսիմ, Համշեն, Կարին, Մալաթիա, Նոր Ջուղա), վր՝ներ՝ (Կիլիկյան բ.), վրնի (Համշեն, Հաճըն, Սասուն, Սուչավա, Դերսիմ, Կարին), վրնիր (Սասուն), վրտաճ (Առտիալ, Բաղեշ), վրտիմ (Ն.-Ջուղա), վր՝մ (Զեյթուն)։*

Ըստ վի տարրի գործածության բնորոշ դրսևորումների՝ Համշենի բարբառը համեմատաբար ավելի ակնհայտորեն է ցուցադրում երկակին[81]։ Սակայն այդ բարբառում էլ երկակին մեռնող ենթակարգ է։

Այսպիսով՝ երկակիատիպ կազմավորման առանձին արտահայտությունները հայերենում (գրաբար, միջին հայերեն, բարբառներ) վկայում են թվային այդ ենթակարգի երբեմնի գոյության մասին, ինչպես և հնարավոր են դարձնում նրա ակունքների հուսալի որոնումները հնդեվրոպական նախաշրջանում։ Սակայն հայերենում, դեռևս հին գրականում, այն արդեն մեռած էր. մասամբ ձևաբանական սուղ դրսևորումներով, գրաբարին զուգահեռ, երկակին հարատևել է ընդհուպ մինչև նոր հայերենի բարբառները՝ իբրև վերապրուկային կառուցաձևեր։

ԹՎԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ–ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա) Հարաբերակցություն արտահայտության պլանում: Եզակիանաձև և հոգնակիանաձև միավորներ: *Առհասարակ թվակարգի մեջ եղած բոլոր հակադրություններ. չհաշված եռակի, քառակի և այլ ենթակարգեր, որոնք հազվադեպ են պատահում լեզուներում, կառուցվածքայնորեն ներկայանում են իբրև եզակիանաձև (կա՛մ նաև երկակիանաձև) և հոգնակիանաձև միավորների հարաբերակցություն։*

[81] *Հ. Աճառյանը (տե՛ս ՀԱ, ԼՔՀ, III, 730) Համշենի բարբառում տվիտառներ և եզնի—եզներ կառուցաձևերը մեկնաբանում է իբրև երկակիի և հոգնակիի ֆունկցիոնալ հակադրության արտահայտություններ։*

Յուրաքանչյուր միավոր ունի կազմավորման ինքնատիպություն և ֆունկցիոնալ (իմաստային) արժեքներ։ Դիտարկումները ցույց են տալիս, որ եզակիանաձև և հոգնակիանաձև միավորները դրսևորում են կիրառական (ֆունկցիոնալ) բազմարժեքայնություն։ Երկակիաձև կառույցների (կոնստրուկցիաների) բազմաֆունկցիոնալության մասին (հայերենում) էական բան հնարավոր չէ ասել, քանի որ նրանք հայերենում արդեն հոգնակիի արժեք ձեռք բերած ձևեր են և երկակիի իմաստով հազվադեպ, այն էլ մեծ մասամբ հոգնակիին դուգահեռ, գործածություններ են։

Այս ամենը նկատի ունենալով կարելի է ասել, որ արտահայտության պլանով թվակարգը հին գրական հայերենում ներկայանում է եզակիանաձև և հոգնակիանաձև միավորների հակադրության տեսքով (չնչին բացառություններով, երկակիի վերապրուկային տարրերով պայմանավորված՝ եզակիանաձև—երկնև կամ տարանձև հոգնակիիակազմություն հարաբերակցության համար. օր. ակն—աչք||աչունք), միջին գրական հայերենում՝ եզակիանաձև-հոգնակիանաձև, մասամբ և՝ եզակիանաձև—երկակիանաձև-հոգնակիանաձև միավորների հակադրության համար, այսպես է նաև բարբառներում։ Նոր գրական հայերենում նշված հակադրությունները ամփոփված են հիմնականում եզակիանաձև և հոգնակիանաձև եզրերի միջև, եթե չհաշվենք արևմտահայ գրականում բացառիկ երևույթներ, երբ հոգնակիանաձև եզրում առկա են տարանձև հոգնակիիակազմությունների մասնակի արտահայտություններ՝ միջին հայերենի և որոշ արևմտահայ բարբառների երկակիանաձև կազմավորումների ներթափանցումներով պայմանավորված, համմտ. աչք-աչքեր (աչեր)||աչվիներ (աչվրներ)։

Այսպիսով հայերենում զուտ-թվակարգային (մեկի և մեկից ավելինի քանակային հարաբերակցություն արտահայտող) և բառաքերականական (հավաքականության, վերացականության, նյութայնության-զանգվածայնության, անհատականության իմաստավորումներով պայմանավորված) կառույցները ամփոփվում են հիմնականում երկուսի՝ կա՛մ եզակիանաձև, կա՛մ հոգնակիանաձև կազմավորումների մեջ, ըստ որում այս երկու եզրերը յուրովի բազմարժեքայնություն ունեն։

Կաղապարավորում։ Վերը առանձնացրինք հակադրվող երկու հիմնական կառուցաձևեր։ Հարց է առաջանում, իսկ դրանք ինչպի՞սի կաղապարներով են կազմավորվում։ Հասկանալի է, որ ամեն մի կառույց, ինչպես այլուր, այնպես էլ լեզվի մեջ հետևում է ինչ-որ կաղապարավորման։

Բանը նրանում է, որ, ինչպես աշխարհի շատ լեզուներում, այնպես էլ հայերենում եզակիանաձև եզրը բնութագրվում է հակա-

ռակ եզրում (կամ եզրերում) հանդիպող թվակարգային արտահայտության միջոցի բացակայությամբ, այսինքն զրո վերջավորությամբ[82]։ Այս այսպես է ոչ միայն զուտ-թվակարգային հակադրություններում, այլև այն դեպքերում, երբ հոգնականի եզրը բառա-քերականական միավորի արժեք ունի։ Եթե նույնիսկ եզակին քանակ, շատություն, բազմություն նշող ածանց է ստանում, միևնույն է նա քերականորեն, արտահայտության պլանում մնում է եզականաձև. օրինակ՝ բանջար>բանջարեղեն, ուսուցիչ-ուսուցչություն, բանվոր-բանվորություն և այլն։ Այստեղ նշանակություն չունի նաև այն հանգամանքը, որ, ասենք, ավյալ միավորը անհոգնական է, թե՞ նրանից հոգնակի է կազմվում. միևնույն է, այն գնահատվում է իբրև եզականաձև։

Ուրեմն եզականաձև խմբավորման մեջ մտնում են առհասարակ այն բոլորը, որոնք հոգնակի (կամ երկակի) նշող հատուկ մասնիկներ չունեն, անկախ նրանից՝ դրանք մտնում են եզակի-հոգնակի թվային հարաբերակցության մեջ, թե չեզոք են այդ հակադրության նկատմամբ (ինչպես բուն անհոգնականները)։ Այս միաժամանակ նշանակում է, թե եզականաձև ասելով չպետք է հասկանալ միայն եզակի ենթակարգը, արտահայտության պլանում այն ավելի լայն հասկացողություն է։

Եզակին թվակազմության առումով միշտ անվերջավոր է հայերենում։ Սակայն հոլով և հոլովումներ ունեցող լեզուներում եզակի բառաձևերը ներկայանում են որոշակի հարացույցով, որի անդամների քանակը կախված է հոլովների թվից։ Այս դեպքում եզակի բառաձևը կներկայանա որևէ հոլովաձևի տեսքով։ Ուստի եզականաձև ասելով հասկանում ենք որոշակի կազապարավորում ունեցող հոլովանձև։ Եզակի հոլովական հարացույցի անդամների հիմքը կամ առանձին հոլովաձևը կարող է դառնալ կառուցվածքային, նպատակով հոգնականաձև միավորների կազմավորման համար։

Իսկ եզակի բառաձևը հակադիր՝ հոգնականաձև եզրում ինչ-ո՞ր կազապարներով կառույցների կարող է հակադրվել։ Յուրաքանչյուր լեզու զարգանում, փոփոխվում է և զարգացման ամեն մի աստիճանում նա ներկայանում է իբրև որոշակիորեն սիստեմավորված վիճակ։ Այս վերաբերում է նաև լեզվի կազմի առանձին համակարգերին, ընդ որում և թվակազմությանը։ Եվ իսկապես հոգ-

---

[82] Խոսքը թվանիշ վերջավորության մասին է. եզակի բառաձևը կարող է այլ կարգանիշ վերջավորություն ունենալ. օր. շոր-ի-ս (շորիս) ձևում առկա են հոլովանիշ և սեռացական առման վերջավորություններ։ Այստեղից հետևում է, որ բառացական և խնդրառական հոգնակիների եզակի ձևերը առհասարակ վերջավոր են. հետս (<հետ-)>հետներս, գիրս (<գիրք-)>գիրքներս։

նակիակազմությունն էլ լեզվական ամեն վիճակում (էտապում) յուրովի սիստեմավորված է։ Այսպիսի դեպքում գործ ունենք համակարգային հոգնակիակազմության հետ։ Հոգնակին իր կառուցածքներում հետևում է որևէ ընդհանրացված, տիրապետող կաղապարի։ Այսպիսիք են f-ով զուգորդումները գրաբարում, եր-ով և ներ-ով զուգորդումները նոր գրական հայերենում։

Բայց և այնպես՝ լեզվի տվյալ վիճակին հատուկ են ոչ միայն համակարգային ձևեր, այլև այնպիսի ձևեր, որոնք այդ սիստեմից չեն բխում, նրանով չեն պայմանավորված, բայց կիրառական որոշ ոլորտ ունեն, գործածական են։ Սրանք ոչ-համակարգային կազմավորումներն են, որ հատուկ են նաև թվակազմությանը։ Հոգնակիակազմության մեջ ևս ոչ-համակարգային ձևերը կամ հին վիճակների մնացորդներ են, հնատիպ ձևեր, կամ նորակազմություններ են և կամ տարբեր հանգամանքներով պայմանավորված շեղումներ։

Այստեղից մի հետևություն կարող է լինել. եզակի բառաձևը հոգնականաձև եզրում կարող է ունենալ համակարգային կառուցաձև, կամ՝ ոչ-համակարգային. այսպես՝ ար,՝ փայտ, լույս միավանկ եզակիները հետևում են միավանկ հիմ+եր կաղապարին, ինչպես որ շատ միավանկներ. սա եզակի ձև—համակարգային հոգնակիակազմություն հարաբերակցության դրսևորում է, իսկ մարդ միավանկը հետևում է միավանկ հիմ+իկ կաղապարին, կին միավանկը՝ միավանկ հիմ+այք կաղապարին։ Վերջին դեպքում ունենք մասնակի կիրառության կաղապարներ, և իրրև այդպիսին՝ հնատիպ ու ոչ-համակարգային են։ Այստեղ առկա է եզակի ձև—ոչ-համակարգային հոգնակիակազմություն հարաբերակցություն։

Հոգնականաձև եզրում կաղապարավորումը պայմանավորված է լեզվական սիստեմի հետ կապված հանգամանքներով, ընդ որում և այն բանով, թե տվյալ լեզուն կամ լեզվական տվյալ վիճակը (էտապը) ի՞նչ տիպոլոգիայի է հետևում։ Այսպես մեր հին գրական հայերենը հիմնականում հետևում է թեքական կառուցատիպին, իսկ նոր (ընդհանրապես նորգրաբարյան) հայերենը գերազանցապես կցական է։ Եվ նշված պայմանավորվածությունը այստեղ արտահայտվում է նրանով, որ գրաբարի հոգնակիակազմությունը և հոլովակազմությունը կառուցվածքայնորեն հիմնականում համատեղում են, իսկ նորգրաբարյան հայերենում դրանք սովորաբար բաշխված են. այլ են հոգնակիակազմ և հոլովակազմ հիմքերը, այլ են նաև հոգնակերտ ու հոլովակերտ վերջավորությունները։ Բացի այդ՝ նոր հայերենում հոգնակիակազմ հիմքն ընդհանրացած է բոլոր հոլո-

վանևերում. ընդհանրացած են նաև հոգնակերտ վերջավորությունները (ուղիղ և թեք հոլովաձևերում նույնն են)։

Հոգնակի եզրում կաղապարավորումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, թե ի՞նչ ֆունկցիայի համար է հոգնակիակազմ տվյալ կաղապարը։ Այս տեսանկյունից թվակազմությունը սովորաբար ներկայանում է իբրև մի կաղապար, որ մեկի և մեկից ավելինի քանակային հարաբերակցության առանձնահատկության համար է (բուն հոգնակիակազմություն). օր. **սար–սարեր**: *Սա հայերենում ունի* **հոգնակիակազմ հիմք+հոգնակերտ** *(ուղիղ ձևերում) և* **հոգնակիակազմ հիմք+հոգնակերտ+հոլովակերտ** *(թեք ձևերում) կաղապարները։*

Նույնատիպ կամ հոգնակերտի փոփոխությամբ առեղծված կաղապարները գործածվում են նաև այն դեպքերում, երբ հոգնակին բառա-քերականական ֆունկցիավորում է ստանում, մեկուսանում է եզակի-հոգնակի հարաբերակցությունից։ Այս նկատվում է անեզականության հետ կապված, ինչպես և այն ժամանակ, երբ գոյանում է եզակի-հոգնակի անհամարժեքություն. օրինակ՝ սպանելի-ազանելիք, աթոռ-աթոռք, ախորժ-ախորժք (գրաբարում), պապոնք, Գրիգորենք (նոր հայերենում)։ Հմմտ. նաև նոր գրական հայերենում՝ պայման-պայմաններ, որտեղ նույնպես ունենք եզակիի-հոգնակի անհամարժեք ձևեր։

Սակայն բառա-քերականական ֆունկցիավորումը կարող է ունենալ ինքնուրույն կաղապար ևս, որի մեջ հոգնակիակազմ հիմքը չի նույնանում եզակիին կամ չունի այդպիսինը։ Այս դեպքում սովորաբար հոգնակիակազմ հիմքի դեր են ստանձնում որոշ բառակազմական կամ այլ խոսքի մասերի ձևակազմական հիմքեր։ Այսպիսի նշանակությունների համար գրաբարում աննեզական հոգնակիները հաճախ կաղապարավորվում էին բայակազմ հիմքերից. օր. **աղաչ–անք, պատր–անք** *ևն։ Սա նույնն է թե՝* **բայակազմ հիմք** *(հոգնակիակազմ հիմք)+***հոգնակերտ** *կաղապարը։*

Մենք խոսեցինք բառա-քերականական ֆունկցիավորումների առավել տիպական կաղապարավորման մասին, այնինչ դրանց համար կան նաև մասնավոր կառուցածևեր, որոնց վերաբերյալ մեր ուսումնասիրության մեջ տարբեր առիթներով խոսում ենք։

Ուրույն կերպ են կաղապարավորվում **սահացական հոգնակիները**: *Այսպիսի կազմավորումներ գտրգացրել է նոր հայերենը։ Սակայն սահացական կառուցածևերը միատիպ չեն։ Առավել տարածված է զույգ հոգնակերտով կաղապարավորումը (արևմտահայ գրական լեզվի միավանկների հոգնակիում, շատ բարբառներում)։ Երբեմն միավանկների սահացական հոգնակին զույգ հոգնակերտով է*

կազմվում, բազմավանկներինը՝ ուրույն հոգնակերտով, ինչպես ունենք արևմտահայ գրականում. վիդ-եր-նի-ս, բայց՝ ասած-նի-ս։ Արևելահայ գրական լեզուն ևս գործածում է ստացական ուրույն կառուցածև և այն էլ միայն միավանկների համար։ Իվ քանի որ երկվանկ-բազմավանկ հիմքերը ստացական կազապարավորում չունեն, ուստի այդ հիմքերի հետ զուգորդվող ներ մասնիկը ազատորեն կիրառվում է միավանկ հիմքերից ստացական հոգնակիներ կազմելու համար։

Բնականաբար բոլոր ստացական հոգնակիները կազապարավորվում են ստացական հոգերով։ Առավել ընդհանրական կառուցատիպը սրանց համար ունի այսպիսի տեսք՝ հոգնակիական հիմք + ստացականական հոգնակերտ (ներ) + ստացական հոդ։ Այս ընդհանուր կազապարը հայերենի տարբեր հյուղերում (վիճակներում) ունի մասնավոր դրսևորումներ։ Այսպես՝ հոգնակիականզմ հիմքը արևմտահայ գրականում կարող է լինել միավանկ և բազմավանկ, իսկ արևելահայ գրականում՝ միայն միավանկ (և այն էլ, ի տարբերություն միավանկ-հնչյունափոխ տարբերակի, գրեթե անհնչյունափոխ է)։ Ստացականականզմ հոգնակերտը արևմտահայերենում կարող է զույգ հոգնակերտ լինել (արևմտահայ գրականում, բարբառներում), կամ նաև ուրույն մասնիկ լինել, ինչպես նի-ն, և կամ, ինչպես արևելահայ գրական լեզվում է, այլ հիմքի հետ զուգորդվող մասնիկ լինել, որ է ներ-ը։ Ինչ մնում է ստացական հոդերին, ապա դրանք ս, դ, ն(ը) մասնիկներն են, որոնք ամենուր նույնական են, միայն թե բարբառների մի մասում երբեմն հնչյունափոխված տեսքով են ներկայանում։

Այս նույն (ստացական հոգնակիականզմության) կազապարը կիրառվում է նաև խնդրառական հոգնակիներում, երբ հոգնակիականզմ հիմքը արդեն ոչ թե գոյական է, այլ անխնական կապ։ Քանի որ կազմավորման նույն կազապարն ունեն, ուստի դրանց մանրամասն քննության անհրաժեշտություն չկա այստեղ։

«Միաեզր», երկեզր և «եռեզր» հակադրություններ։ Եզականանձև և հոգնականանձև միավորների վերը դիտարկված կառուցվածքները ունեն ֆունկցիոնալ որոշակի ծանրաբեռնություն և արտահայտության պլանում ներկայանում են կա՛մ միաեզր, կա՛մ երկեզր և կա՛մ եռեզր հակադրություններով։

Միաեզրը իսկականում հակադրություն չի կազմում, կարելի է, սակայն ընդունել, որ նա լինելով կամ եզականանձև, կամ հոգնականանձև, միևս թևում ունի զրո եզր։ Այսպիսին են բուն անեզականները, որոնք համապատասխան եզակի ձև չունեն, դուրս են մնում

եզակի-հոգնակի հարաբերակցությունից, ինչպես և բուն անհոգնականները, որոնք համապատասխան հոգնակի ձև չունեն, նույնպես դուրս են մնում եզակի-հոգնակի հարաբերակցությունից (համմտ. ֆինանսներ, նոթեր, *մի կողմից, և գիրճ, բուճ՝ մյուս կողմից)։*

Երկերիզ *հարաբերակցություն ունեցողները կարելի է երեք խմբի բաժանել։ Դրանք կազմում են այսպիսի հակադրություններ. ա) եզակի-հոգնակի, բ) եզակի-ստացական հոգնակի, գ) եզակի-խնդրառական հոգնակի։ Եզակի և հոգնակի երկերիզ հակադրություն ունեն թվարկվող առարկաների անունները, որոնց նկատմամբ կիրառելի է թվակարգի ասպեկտը.* սեղան–սեղաններ։ *Այսպիսի եզրերով է նաև այն հարաբերակցությունը, որում թեև եզակին կառուցվածքային հակադիր՝ հոգնակի եզր ունի, բայց ֆունկցիայով դրանք (եզակին և հոգնակին) կարող են հարաբերակից չլինել. օրինակ՝ պայման-պայմաններ, շրջան-շրջաններ («զեկավար շրջաններ»)։*

Երկերիզ են նաև ստացական եզակի–ստացական հոգնական *հարաբերակցությունները։ Սա այն դեպքն է, երբ բուն եզակի ձևը անհոգնական է, նրա նկատմամբ չի կարելի կիրառել մեկի և մեկից ավելինի քանակային հարաբերության հայեցակետ, բայց ստացական իմաստավորման դեպքում կազմվում է հոգնակի ձև. օր.* քուն>fուն–fուններս, *խիղճ>*խիղճս–խիղճներս։

Այսպիսի հակադրություն է նաև անհոգնական–խնդրառական հոգնական *հարաբերակցությունը։ Կապերը առարկայնություն չեն արտահայտում, բայց որոշ կապեր կարող են նման նշանակություն ձեռք բերել և այդ դեպքում նրանք կարող են թվակազմության մեջ ներքաշվել։ Սակայն ինչպես ստացական կառուցածներում, այստեղ էլ հոգնակիությունը վերաբերում է ոչ թե հիմքի իմաստին, այլ համապատասխան դերանունով արտահայտված խնդրին (ստացականի դեպքում՝ ստացական դերանվան).* հետներս *(եզակի՝* հետս*)* նշանակում է մեզ հետ, որտեղ մեզ-ը կապի դերանվանական խնդիր է։ Իսկ հետ *կապը ինքնին անհոգնական է։*

Եռերիզ *հարաբերակցությունը դրսևորվում է* եզակի–հոգնական–ստացական հոգնակի *հակադրությամբ, երբ եզակին հակադիր հղում ունի տարակազմ ու տարարնույթ հոգնակիներ։ Սակայն մոտիկից դիտարկելով այս հակադրությունները՝ նկատում ենք, որ այստեղ էլ թվակարգին առհասարակ բնորոշ երկատրոհ (դիխոտոմիկ, բինար) կազմավորումներ ունենք՝* բուն եզակի–բուն հոգնական (ուս–ուսեր) *և ստացական եզակի–ստացական հոգնական (ուսս–ուսներս)։*

Այսպիսով բառային և բառա-քերականական միավորները հա-

նելու դեպքում՝ մենք կունենանք բուն թվակարգը, որն ունի մնկի և մնկից ավելինի քերականական հայեցակետ (իմաստ), և այդ առանձին համապատասխան՝ արտահայտության պլանում առկա է երկանդամ հակադրություն՝ եզակի-հոգնակի։

Բ) Հարաբերակցություն քովականության իմաստային-ֆունկցիոնալ պլանում։ *Մենք տեսանք, որ հայերենին հիմնականում հատուկ է եզականաձև և հոգնականաձև միավորների հարաբերակցություն. տեսանք նաև, թե ինչպես են կազապարավորվում այդ միավորները, և կառուցածևերի հակադրությունները ինչպիսի եզրեր ունեն։ Այժմ հարկավոր է դիտարկել ցուցադրված կառուցների (կաղապարների) ֆունկցիոնալ-իմաստային կողմը, թե եզականաձևը և հոգնականաձևը ի՞նչ իմաստներ կարող են արտահայտել։*

Ինքներն հասկանալի է, որ եզականաձևը ամենից առաջ արտահայտում է եզակի թվային ենթակարգի ֆունկցիա. այդ ֆունկցիայի մասին մենք անհրաժեշտ չափով խոսել ենք, ուստի այստեղ չենք ծանրանում դրա վրա[83]։ Եզականաձևը կարող է ներկայանալ նաև իբրև անհոգնական, իբրև մի միավոր, որը բառիմաստային հատկություններով պայմանավորված՝ դուրս է մնում եզակի-հոգնակի հակադրության ոլորտից, չեզոք է այդ հարաբերակցության նկատմամբ։

Եզականաձև-անհոգնականներք կարող են երկու կարգի դրսևորում ունենալ. ա) անհոգնականություն ուղղակի բառիմաստով պայմանավորված, բ) անհոգնականություն փոխաբերական իմաստավորումներով և գ) անհոգնականություն բազմիմաստության որևէ իմաստով։ Առաջին դեպքում անհոգնականությունը կարող են պայմանավորել այնպիսի բառիմաստներ, որոնք ինքնին չվիարկվող առարկաներ (հասկացություններ) են արտահայտում։ Այդպիսի բառիմաստները չեզոք են մնկի և մնկից ավելինի քանակային հա-

---

[83] *Մենք արդեն ծանոթ ենք այն բոլոր նյահիմքերին, նյագծերին, որոնք առաջ են բերում եզակի—հոգնակի կառուցվածքային հակադրություն։ Քանի որ կառուցվածքային հակադրությունը հենվում է ֆունկցիոնալ (իմաստային) հարաբերակցության վրա, ուստի այն կառուցվածքները, որոնք քովանդակային պլանում չեն հակադրվում, ինքնին գիտակցվում են իբրև ծանրաբեռնություն, և իշխում է որևէ մեկ կառույց։ Այսպես՝ հակադրության չեզոքացում ունենք հետևյալ երկու արտահայտություններում. «Այս խանութում կոնյակ են վաճառում» և «Այս խանութում կնեակներ են վաճառում»։ Եզակին փոխաբերական իմաստավորմամբ կարող է արտահայտել միասեռ առարկաների հավաքական ամբողջություն, ինչպես ունենք ավյալ դեպքում։ Այս հանգամանքը գործածությունից համարյա հանում է երկրորդ՝ հոգնականաձև կիրառությունը։ Այս այսպես է նաև այն դեպքում, երբ եզակին ներկայացնում է ամբողջ տեսակը (սեռը). Հմմտ. «Գիրքը հարգու բարեկամն էս և «Գիրքը մարդկանց բարեկամն ենա։*

բաբերության ասպեկտի նկատմամբ։ Նրանց մի մասը միայն լրացուցիչ լեքսիկական իմաստավորումների դեպքում կարող է հանդուրժել այդ ասպեկտը։ Անհոգնականությունը կապված է վերացականության, հավաքականության, անհատականության, նյութայնության-զանգվածայնության իմաստների հետ։

Վերացականությունը և նյութայնությունը այնպիսի հատկանիշներ են արտահայտում, որոնք թվարկման ենթակա չեն. անհատականությունը բացառում է բազմության գաղափարը. հետևապես և հոգնակին. հավաքականությունը եզակի ձևում արտահայտելով բազմության դաղափար՝ հոգնակի կազմելու կարիք չունի։

Կան բառեր, որոնք իրենց ուղղակի իմաստով հոգնակի կազմել կարող են, բայց փոխաբերական կիրառություններում դա բացառում են։ Բազմիմաստ որոշ բառեր որևէ մեկ իմաստով կարող են անհոգնական լինել։ Այսպես՝ ծաղիկ բառը կարող է նշանակել նաև հիվանդության տեսակ. այս իմաստի դեպքում նա անհոգնական է։

Վերջապես, եզականաձևը ստացական հոդով կազմավորումներ ևս ունի։ Եզակի ստացականը որոշակի ֆունկցիայով օժտված կառուցաձև է, ունի հակադիր եղր հոգնակի թևում։ Բովանդակության պլանում այստեղ ունենք եզակի-հոգնակի համարժեք հակադրություն (թվակարգային ասպեկտի դրսևորում)։

Հոգնականաձևը սովորաբար արտահայտում է՝

ա) Հոգնակի թվային ենթակարգի ֆունկցիա.

բ) Անեզականությանը հատուկ բառա-քերականական իմաստավորումներ.

գ) Ստացական հոգնակիի ֆունկցիա.

դ) Ենդրադական հոգնակիի ֆունկցիա։

Սրանք հոգնականաձև միավորների առավել բնորոշ ֆունկցիա-վորումներն են, թեև իհարկե սրանցով չեն սպառվում հոգնակի բառաձևի իմաստային բոլոր դրսևորումները. մենք դիտարկում ենք հիմնական, տիպական ֆունկցիոնալ արտահայտություններր։

Այստեղ ևս պետք է ընդգծել, որ հոգնականաձևը ամենից առաջ արտահայտում է հոգնակի թվային ենթակարգի ֆունկցիա, որը մեկի և մեկից ավելինի քանակային հարաբերության մեջ հրկրորդ եղրն է կազմում։ Սակայն հոգնակի բառաձևն էլ բազմարժեք է։ Իսկ այս հանգամանքը հաճախ եզակի-հոգնակի հարաբերակցություններ գրկում է համարժեքայնությունից. եզակի-հոգնակի հակադրության մեջ հոգնակին վերաֆունկցիավորվում է, ձեռք է բերում լրացուցիչ լեքսիկական երանգավորում, կամ այլ բառիմաստ է ձեռք բերում՝ հարելով անեզականներին։

Բուն անեզականները բառա-քերականական շերտ են ներկա-

յացնում։ Սրանք չունեն համապատասխան եզակի ձև. դուրս են եզակի-հոգնակի հարաբերակցությունից. բառիմաստը իր բոլոր երանգավորումներով կապվում է հոգնակի բառաձևի հետ։

Լինում են շատ դեպքեր (հատկապես հայերենում), երբ անհոգնական-եզականաձևը, ստանալով լրացուցիչ կամ այլ լեքսիկական իմաստավորում, կազմում է հոգնակի բառաձև՝ եզակի-հոգնակի հարաբերակցության անհամարժեքությամբ։ Նման դեպքերում անհոգնականում եղած վերացականության, հավաքականության, դանգվածայնության, անհատականության երանգները (իմաստները) այլ ասպեկտով են ներկայանում։ Եվ եթե անհոգնականում ունենում ենք անհոգնական-վերացական, անհոգնական-նյութային-ներ, անհոգնական-անհատականներ, անհոգնական-հավաքականներ, ապա դրանցից սերած հոգնակի բառաձևերում կարող ենք ունենալ անեզական-վերացականներ, անեզական-նյութայիններ, անեզական-անհատականներ, անեզական-հավաքականներ։ Ահա թե ինչու նշված լեքսիկական իմաստավորումներին անդրադառնում ենք և՛ անհոգնականների, և՛ անեզականների առթիվ։

Ընդհանրապես փոխաբերական իմաստավորումները թվակազմության կոնկրետ դրսևորումներում բազմազանություն են մըտցընում։ Կան շատ բառեր, որոնք ուղղակի իմաստով անհոգնական են, փոխաբերական նշանակությամբ հոգնակի են կազմում, կամ եթե բազմիմաստ են, հոգնակին կազմում են որևէ մեկ կամ մի քանի իմաստներով։

Հոգնականաձևն արտահայտում է նաև ստացական հոգնակիի ֆունկցիա։ Նախ պետք է նշել, որ առհասարակ ստացական հոգնակիակազմության վերաբերյալ հայ լեզվաբանական-քերականա-պիտական գրականության մեջ շատ քիչ է խոսվել. մինչդեռ նա նոր հայերենի հետաքրքրական կազմավորումներից մեկն է՝ օժտված ուրույն ֆունկցիայով։

Բառի լեքսիկական իմաստավորումները որոշակի դեր ունեն նաև ստացական հոգնակիակազմության մեջ։ Հենց այն հանգամանքը, որ ոչ բոլոր բառերն են ստացական հոգնակի կազմում, պայմանավորված է բառիմաստի բնույթով։

Կան անուններ, բառեր, որոնց նշանակած առարկան հնարավոր է վերցնել երեք դեմքերից որևէ մեկի ցույց տված անձանց նկատմամբ՝ ստացական հարաբերությամբ։ Այսպիսի դեպքերում ստացվում է եզակի (ստացական եզակի)-ստացական հոգնակի հարաբերակցություն։ Կատուցվածքայնորեն սա հնարավոր է նաև այնպիսի իմաստավորումների դեպքում, որոնք բացառում են սովորական հոգնակիակազմությունը, այսինքն՝ որ. անհոգնականների

դեպքում. օր. fուն բառն անհոգնական է, հնարավոր չէ կազմել fուներ հոգնակի ձև, բայց սրա ստացական ձևից հնարավոր է, այն է՝ fունս եզակի ստացականի վրայով. fուններս:

Բոլոր դեպքերում ստացական հոգնակիակազմության համար կարևոր է որևէ դեմքով ներկայացվող անձանց նկատմամբ ստացական հարաբերակցության ասպեկտը. Քանի որ ոչ բոլոր առարկաներն են առնվում այդ ասպեկտի մեջ, ապա ոչ բոլոր դոյականներն են ստացական հոգնակի կազմում:

Այս իմաստով չի նշանակում, թե համաստային այդ հայեցակետի առկայությունը բավական է նման կառուցվածքների ստեղծման համար. երբեմն այս խնդրում վճռական դեր են ունենում քերականության կաղապարավորման հնարավորությունները. Օրինակ, այս հանգամանքով է բացատրվում երկվանկ, բազմավանկներից ստացական հոգնակիակազմության անհնարինությունը արևելահայ գրական լեզվում:

Հայերենում ստացական հոգնակիակազմությունը կատարվում է որոշակի քերականական իմաստ ունեցող հոդերի զուգորդումներով. U, դ, ն ստացական հոդերը, որոնք ցույց են տալիս պատկանելության հարաբերություն, վերաբերության ասպեկտ, հատկացում՝ համապատասխանաբար առաջին, երկրորդ, երրորդ դեմքերի նկատմամբ, կարող են առնվել և՛ եզակի, և՛ հոգնակի բառաձևերի հետ: Եզակիի դեպքում ստացական հոդով բառաձևը արտահայտում է մեկ առարկայի պատկանելությունը, վերաբերելը որևէ անձի (դեմքի), հոգնակիի դեպքում ստացական հոդով բառաձևը ցույց է տալիս մեկից ավելի առարկաների պատկանելը տվյալ անձին (դեմքին). օր. **ձեռս և ձեռներս, գիրս և գրքերս**:

Կան դեպքեր, երբ ստացական հոդը միայն եզակի ձևին կարող է միանալ: Այդ լինում է այն ժամանակ, երբ որևէ անձի (դեմքի) կարող է պատկանել կամ վերաբերել միայն մեկ (ոչ մեկից ավելի) առարկա: Ահա թե ինչու հնարավոր են վիզդ, սիրտդ, կյանքդ, բայց հնարավոր չեն վզերդ, սրտերդ, կյանքերդ ձևերը. հնարավոր է գլուխդ, բայց հնարավոր չէ գլուխներդ «քո գլուխները» նշանակությամբ (վերջինս այլ իմաստավորում ունի). այսպիսի հարաբերակցություն ենք տեսնում նաև երեսդ–երեսներդ կազմավորումներում:

Սահմանափակումներ լինում են նաև այն դեպքում, երբ առարկայի հարաբերությունը երեք դեմքերի նկատմամբ ստացական առումով չի կարող լինել. օր. ծովս կամ ծովերս գրեթե հնարավոր չեն: Այս այսպես է նաև, երբ ստացականությունը արտահայտվում է ոչ թե հոդառությամբ, այլ եզակի ստացական դերանուններով. օր. չենք ասի՝ fո վզերը, fո երեսները, fո ծովերը և այլն:

Դրությունը փոխվում է, երբ ստացականությունը առնվում է ոչ մեկ անձի (դեմքի), այլ տվյալ դեմքի մեջ ընդգրկված անձերի նկատմամբ։ Հոգնակի ստացական դերանունը այս դեպքում դրեթե սահմանափակում չունի. համմ. մեր վիզը (սիրտը, կյանքը, գլուխը, երեսը, ծովը) և մեր վզերը (սրտերը, կյանքերը, գլուխները, երեսները, ծովերը)։

Հոգնակի ստացական դերանվան և եզակի գոյականի կապակցությունը ունի միայն մեկ իմաստավորում՝ «մեր՝ յուրաքանչյուրիս մեկական վիզը (սիրտը, կյանքը, գլուխը, երեսը, մեզ՝ յուրաքանչյուրիս հավասարապես պատկանող, վերաբերող ծովը)»։ Երկրորդ դեպքում, երբ գոյականն էլ հոգնակի է, կարող է երկու կարգի իմաստավորում լինել. ա) երբ հատկացվող առարկան մեկն է, բ) երբ հատկացվում են մեկից ավելի առարկաներ. համմ. մեր սրտերը (մեր՝ յուրաքանչյուրիս սիրտը), մեր ճույսերը (մեր՝ յուրաքանչյուրիս հույսը), բայց մեր շորերը՝ կարող է նշանակել «մեր՝ յուրաքանչյուրիս շորը» կամ «մեր՝ յուրաքանչյուրիս շորերը»։ Երկու դեպքում էլ առարկաների բազմությունը, շարքը բաշխված է տվյալ դեմքը ներկայացնող անձերի վրա։

Այդ այդպես չէ, սակայն մյուս իմաստավորումով, ասենք, երբ ունենք մեր աշակերտները, մեր բազաֆները, մեր ծովերը կառուցաձևերում, որտեղ բաշխվածության գաղափարը եթին պլանում է, կամ բոլորովին չկա. օր. մեր բազաֆները չի նշանակում «մեր՝ յուրաքանչյուրիս քաղաքը». այսպիսի իմաստավորում բացառիկ կոնտեքստում կարող է հանդիպել։

Եթե ստացական դերանուններով կառուցվածքները փոխարինենք համարժեք այլ կառուցաձևերով, որտեղ ստացականության ֆունկցիան արտահայտված լինի հոդերի գուգորդումներով, ապա կունենանք այսպիսի պատկեր. յուրովի արժեքավորված հոգնակերտով արտահայտվում է միատեսակ առարկաների վերագրում, հատկացում տվյալ դեմքով ներկայացված մեկից ավելի անձանց նկատմամբ։ Այստեղից էլ մի հետևություն. այն բառաձևերը (հիմքերը), որոնք հոգնակերտ և ստացական հոդ ընդունելով կարող են արտահայտել «մեր՝ յուրաքանչյուրիս» և այլ դեմքերի հարաբերությամբ նման իմաստ, ստացական հոգնակի են. իսկ նրանք, որոնք գուգորդվելով նույն հոգնակերտի կամ առհասարակ որևէ հոգնակերտի ու հոդի հետ, չունեն այդ իմաստը, թեև հոդնակի են, բայց ստացական հոգնակի չեն, այլ սովորական հոգնակի են՝ ստացական առումով։

Այսպիսով ստացական հոգնակիները արտահայտում են ոչ թե գոյականի՝ մեկի և մեկից ավելիների քանակային հարաբերության

երկրորդ եզրը, այլ որևէ դեմքով ներկայացող այն անձանց մեկից ավելին լինելը, որոնց վերաբերում, հատկացվում են խոսքի՝ գոյականով արտահայտված առարկաները, եվ որովհետև քանակային ասպեկտը առարկային չի վերաբերում, ուստի անհոգնականների հիմքի վրա էլ կարող է ստացական հոգնակի կազմվել։ Այստեղ կարևորն այն է, թե առարկան ինչ չափով է առնչում տվյալ դեմքով ներկայացվող անձանց նկատմամբ ստացական հարաբերությամբ։

Իբրև այս ամենի հաստատում կարելի է բերել թեկուզ, այսպիսի փաստարկում. շուս, շուրես, շուրներս, իմ շուրը, իմ շուրերը, մեր շուրերը, մեր շուրը կառուցածները տարբեր բնույթի ստացական ծանրաբեռնություն ունեն, իրար նկատմամբ էլ տարբեր կարգի հարաբերակցության մեջ են գտնվում։ Միմյանց հավասարարժեք են շուս—իմ շուրը, շուրես—իմ շուրերը, շուրներս—մեր շուրերը, մեր շուրը կառույցները։ Սրանցից ստացական հոգնակու ֆունկցիա ունի շուրներս կառուցվածքը, որովհետև դրանով է արտահայտված այն ասպեկտը, որ առարկաները (շուրերը) պատկանում, վերաբերում են առաջին դեմքով ներկայացված ոչ թե մեկ (իմ), այլ մեկից ավելի անձանց (մեր)։ Արևելահայ գրական լեզվում ձևաբանական այս ասպեկտը, սակայն, տեղ չի գտել սեղանս, սեղաններես (իմ սեղանը, իմ սեղանները), մեր սեղանը, մեր սեղաններ և նման կառուցվածքներում. սրանց մեջ ստացական հոգնակի իբրև ձևաբանական կարգ չկա[84]։

Նոր հայերենի այս տիպի հարաբերակցություններում աչքի են զարնում երեք դրություն, վիճակ. ա) սովորական եզակի-հոգնակի հակադրություն՝ շուր–շուրեր. ստացական առման դեպքում կառուցվածքային տարբերությունը ստացական հոգի առկայությունն է՝ շուս–շուրես. բ) ստացական եզակի-ստացական առումով սովորական հոգնակի-ստացական հոգնակի հակադրություն՝ շուս-շուրներս-շուրներս. անեզականների դեպքում այս հակադրության սովորական հոգնակի, ստացական առումով սովորական հոգնակի օղակները բացակայում են (քունս—քուններս). գ) ստացական հոգնակիի օղակի բացակայություն, որ հատուկ է արևելահայ գրականի մեկից ավելի վանկանի բառերին, և առհասարակ նոր հայերենի այն բա-

---

[84] *Ընդհանրապես մեկից ավելի վանկանի բոլոր հիմքերով հոգնակիակազմությունը արևելահայ գրական լեզվում. կատարվում է ներ մասնիկով և չունի ստացական հոգնակու ֆունկցիա, բացի այն դեպքերից, երբ տվյալ բառի նշանակած առարկան եզակիաբար է հարաբերում յուրաքանչյուր դեմքի նկատմամբ (օր. գլուխ, երես). սրանք էլ ս, պ ստացականների հետ զուգորդվելու դեպքում, ն-ի հետ անորոշ է։*

ներին, որոնց նշանակած առարկան չի կարող ստացական ասպեկտ ունենալ։ Սխեմատիկ տեսքով սա այսպես է.

շոր—շորեր *քուն—գրո*
շորս—շորերս—շորներս *քունս—գրո—քուններս*
սեղան—սեղաններ
սեղանս—սեղաններս

Բացի ստացական հոգնակու ֆունկցիայից հոգնականաձև միավորը կարող է արտահայտել խնդրառական հոգնակիի ֆունկցիա[85]*։ Անիսկական որոշ կապեր ստացական հոգնակու նույն կազապարով մտնում են թվակարգային ոլորտ, արտահայտելով մեկի և մեկից ավելինի քանակային հարաբերության երկրորդ եզրը, բայց արտահայտում են ոչ թե գոյականաբար առնված անիսկական կապի, այլ որևէ դիմքով ներկայացող այն անձանց հոգնակիությունը, որոնք խնդրառական առնչություն ունեն այդ կապի իմաստի հետ։ Այսպես՝ հետ անիսկական կապ է, հետս (և ստացական հոդով) հավասարարժեք է «ինձ հետ» կապակցությանը, որտեղ ինձ խնդիրը արտահայտված է անձնական դերանվան եզակի առաջին դիմքով։ Մեզ հետ կապակցության մեջ մեզ-ը նույնպիսի խնդիր (կապվող բառ) է, բայց՝ թվային հատկանիշով՝ հոգնակի. այս հոգնակիությունը անվանական հոգնակիի ձևով կլինի՝ հետներս։ Ներ հոգնակերպը այստեղ չի արտահայտում կապի հոգնակին, այլ մեզ-ի հոգնակին, խնդրի (կապվող բառի) հոգնակին։ Եվ այս հոգնակին պայմանականորեն կոչել ենք խնդրառական, նկատի ունենալով ամենից առաջ այն հանգամանքը, որ քան էության այստեղ գործ ունենք «կապի խնդրի» հոգնակիության հետ։*

Ուրեմն՝ հետներս նշանակում է «մեզ հետ», վրաներս՝ «մեզ վրա» մեջներս՝ «մեր մեջ» են։ Բոլոր կառուցածևերը մտնում են հետևյալ սխեմայի մեջ.

հետ—գրո (անիսկական կապ՝ անհոգնական, միաեզր)
հետս—հետներս (խնդրառական եզակի—խնդրառ. հոգն.)։

Այս հարաբերակցությունը կայուն է խնդրառական բոլոր հոգնա-

---

[85] *Դերանուններում առկա է հազվադեպ կազմավորում, որ կարելի է կոչել դիմառական հոգնակի, երբ ներ հոգնակերպը ավելանալով իմ- հիմքին՝ իմս, իմդ, իմը ձևերի համար կազմում է իմներս, իմներդ, իմներ հոգնակինները, որտեղ հոգնակիությունը վերաբերում է առաջին, երկրորդ, երրորդ դիմքերով ներկայացող անձանց. այս հոգնակի ձևերը հիմնականում ապոստրոֆական նպատակներով են գործածվում. օր. մենք՝ իմներս։*

հիակազմություններում։ Մինչդեռ ստացական հոգնակիների կազակցությամբ այլ սխեմաների ևս հանդիպեցինք։

Գ) Զուտ-թվակարգային հակադրություններ և բառա-քերականական խմբեր։ *Զուտ-թվակարգային կոչում ենք այն հակադրությունները, որոնք հենվում են մեկի և մեկից ավելինի քանակային հարաբերակցության վրա։ Սրանց մեջ մտնում են եզակի—հոգնակի եզրեր ունեցողներից նրանք, որոնց այդ եզրերը համարժեքություն ունեն. եզակին ցույց է տալիս, որ խոսքի առարկան միատնակ առարկաներից մեկն է, հոգնակին ցույց է տալիս, որ այն մեկից ավելին է. քաղաք—քաղաքներ, փողոց—փողոցներ, ծառ—ծառեր են։ Այս խմբին են հարում նաև եզակի—ստացական հոգնակի և եզակի—խնդրառական հոգնակի հակադրությունները։ Առաջին հակադրության երկու եզրերը (եզակին և հոգնակին) ֆունկցիոնալ այն տարբերությունն ունեն, որ եզակին (օր. ձեռք) արտահայտում է մեկի և մեկից ավելինի քերականական հարաբերակցության առաջին իմաստավորումը, իսկ հոգնակին (օր. ձեռքներս)՝ երկրորդ իմաստավորումը. ձեռք—ձեռքներս։ Սակայն, ինչպես նշել ենք, այստեղ արդեն երկրորդ իմաստավորումը գոյականին չի վերաբերում, այլ որևէ դեմքով ներկայացող այն անձանց, որոնց պատկանում կամ վերաբերում է գոյականով արտահայտված առարկան։*

Համանման քերականական բնութագրություն ունեն եզակի—խնդրառական հոգնակի հակադրությունները, եզակին՝ ինոս, հոգնակին՝ հետներս[86]։ Այստեղ էլ, սակայն, երկրորդ եզրի իմաստավորումը (հոգնակիությունը) վերաբերում է ոչ թե կապին, այլ նրա՝ որևէ դեմքի անձնական դերանվամբ ներկայացող խնդրին (կապվող բառին)։

Ամեն մի լեզվի թվակարգի ձևաբանական դեմքը (ֆիզիոնոմիան) ներկայանում է զուտ-թվակարգային այս կամ համանման տիպի հակադրություններով, սակայն յուրաքանչյուր լեզվի թվակարգի հետ առնչված առկա են նաև բառա-քերականական որոշ

---

[86] *Ստացական և խնդրառական հոգնակիները ունեն և՛ կառուցվածքային, և ֆունկցիոնալ շփման եզրեր. երկուսի դեպքում էլ հոգնակերտն ու հոդը նույնական են, երկուսի մոտ էլ հոգնակին ունի եզակի՝ ստացական առումով հակադիր եզր. միայն այն տարբերությամբ, որ ստացական հոգնակին կարող է հակադիր եզրում ունենալ նաև ստացական առումով սովորական հոգնակի, բայց խնդրառական հոգնակին՝ չի կարող ունենալ այն. համմ. ոտս—ոտներս—ոտներս. բայց՝ հետս—հետներս։ Ուրեմն երկուսի մոտ էլ նախ սովորական եզակի (կամ անեզական) ձևից կազմվում է ստացական ձև կամ ստացական-խնդրառական (ստացական առման դրսևորում), ապա՝ ստացական կամ խնդրառական հոգնակի։*

խմբեր, խմբավորումներ։ Սրանք հիմնականում երեք տիպի են՝ ա) անհոգնականներ, բ) անեզականներ, գ) եզակի-հոգնակի անհամաժեքություն ունեցողների հոգնակի ձևերը, որոնք բաս էության հարում են անեզականներին։

Այս խմբերից անհոգնականները սովորաբար թվակարգային հարաբերակցություններում չեն մտնում, չեզոք են մեկի և մեկից ավելինի ասպեկտի նկատմամբ։ Այնուամենայնիվ սրանցից շատերը կարող են շատության, բազմության գաղափար արտահայտել ինքնին, հատուկ ածանցումով, առանց թվակազմիչ տարրերի (վերջավորությունների)։ Ուրեմն անհոգնականները խիստ պայմանականությամբ կարելի է մացնել բառա-քերականականների շարքը, նրանք էապես բառային (լեքսիկական) շերտի միավորներ են։

Բուն, իսկական իմաստով բառա-քերականական խմբեր են կազմում անեզականները, ինչպես նաև եզակի-հոգնակի անհամաժեքայնություն ունեցողների հոգնակի ձևերը։ Թե առաջիններն ինչպիսի իմաստավորումներ ունեն, անդրադարձել ենք անեզականների քննության կապակցությամբ։ Ինչ մնում է երկրորդ խմբավորմանը, ապա այստեղ ունենք հոգնակի բառաձևի բազմաժեքայնության հետ կապված ուրույն իմաստավորումներ։

Եզակի ձև ունեցող որոշ հոգնակիներ ֆունկցիոնալ հնդքում են ստանում, ձեռք բերելով այնպիսի կիրառություններ, որոնցից շատերը անհամարժեք են եզակիին, մեկուսանում են նրանից, նույնիսկ նույնաձև հոգնակիի մյուս կիրառություններից։ Այս երևույթը կապված է անհոգնականից հոգնակի կազմելու, ինչպես և եզակի հոգնակի հակադրության մեջ հոգնակի ձևի այլևայլ տիպի ֆունկցիավորման հետ։

ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

ԹՎԱԿԱՆԱԳՄՈՒԹՅՈՒՆ. ՀՈԳՆԱԿԻԱԿԱՆԱԳՄ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՀՈԳՆԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԵՏ ՆԻԱՆՑ ՁՈՒԳՈՐԴՄԱՆ ՏԻՊԵՐԸ (ԿԱՊԱՊԱՐՆԵՐԸ)

1. ԹՎԱԿԱՆԱԳՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ (ԴՐԱԲԱՐ)

I. Ընդհանուր հիմունքներ։ Ա) Թվի բերականական կարգը և հոգնակիակազմության կառուցատիպը ճնդեվրոպականում։ Բ) Հոլյականի թվի իմաստները և նրանց արտահայտման միջոցները գրաբարում։ II. Հոգնակիակազմություն. հոգնակիակազմ հիմքեր և նրանց զուգադրումներ հոգնակերտ վերջավորությունների հետ։ Ա) Հիմքակազմություն։ Բ) Հոգնակիակազմություն եզակի հոլովաձևերից։ Գ) Ոչ-համակարգային հոգնակիակազմություններ, տարաբակազմ ձևեր, շեղումներ։ Դ) Անեզականների, հավաքականների կազմությունը. հատուկ անունների հոգնակին։ Ե) Հնչյունաբանական վերակազմավորումներ հոգնակիակազմ հիմքերում։ Զ) Հոլյականաբար գործածված բառերի հոգնակիակազմությունը։ Է) Հոգնակիակազմություն և հոդառություն։ Ը) Բազմաձևություններ։

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Ա) Թվի քերականական կարգը և հոգնակիակազմության կառուցատիպը հնդեվրոպականում։ *Հնդեվրոպական վիճակը՝ նրա միասնության շրջանում բնորոշ էր թեքական կառուցվածքով։ Եթե այդ այդպես է, ապա թվակազմությունը իր հիմնական արտահայտություններով համընկնում է հոլովակազմությանը։ Թվի կարգը գոյականների մեջ ուներ եռակի հակադրություն՝ եզակի—երկակի—հոգնակի։ Եզակիությունը արտահայտվում էր երկակիի ցուցիչ չունեցող և հոգնակերտով չդրսևորված բառաձևով։ Սակայն հոլովաձևերի բոլոր կազմավորումները, այդ եռակի հակադրություններով,*

պարզորոշ չեն վերականգնված։ Այդ պատճառով հնդեվրոպական հոլովակազմության, նաև թվակազմության որոշ հարցեր դեռևս հանգամանորեն չեն մշակված, պարզ չեն։

Հնդեվրոպական հոգնակի հոլովումը նկատելիորեն տարբերվում էր եզակի հոլովումից։ Հոգնակի հոլովաձևերը առանձնանում են հիմնականում հոգնակերտ-հոլովակերտ վերջավորություններով՝ եզակի հոլովական վերջավորությունների համեմատ (հմմտ. AM, B, 309)։ Հոգնակի ութ հոլովների կառուցվածքում որոշակիորեն զանազանվում են հոլովական-թվակազմության հիմքերը և հոլովակերտ-հոգնակերտ վերջավորությունները։ Ներիշխողը բնակերտով (բնավոր) և անբուն (աթեմատիկ) հիմքատիպերն են։

Ուղղականի հոգնակի ձևն ուներ կառուցվածքային հետևյալ բնորոշ գծերը.

*Ա) -*ā (կամ -*ē) հանգով հիմքերը զուգորդվում են ձայնավորակիզը տարր ունեցող *s վերջավորության հետ, ընդ որում տեղի էր ունենում հիմքավերջի ձայնավորի և հոգնակերտի ձայնավորական տարրի հնչյունական վերակազմավորում՝ իբրև -*ās,*ēs (սանս. āḥ, լիտվ. *os, գոթ. ōs)։ Այս հիմքերի դեպքում եզակի ուղղականը ոչ մի վերջավորություն չունի։ Այստեղ առկա է եզակի ուղղ.+հոգնակերտ=հոգնակի ուղղ. կաղապար. *ekʻwā>*ekʻwās։*

*Բ) -*e-(-*e/o-) թեմատիկ հիմքերը զուգորդվում են նույն *ōs(<o-*s)հոգնակերտ-հոլովակերտի հետ՝ հիմքավերջի նման վերակազմավորմամբ. ō բուն +es=ōs.*swopnōs։ Այս ձևն է նաև հոգնակի կոչականում։ Սրանց եզակի ուղղականում՝ o-s, կոչականում՝ e։*

*Գ) Բաղաձայնական և ձայնորդային հիմքերը (արական, իգական) զուգորդվում են -*es հոգնակերտ-հոլովակերտի հետ։ Այսպես է նաև հոգնակի կոչականը։ Սրանց եզակիում s (միավանկներ, բաղաձայնահանգներ, ձայնորդ i, u հանգող հիմքեր), զրո վերջավորություն՝ բազմավանկ n, r հանգող հիմքերում (եզակից լեզուներում այդ n-ն ընկնում է)։ Եզակի կոչականը (արական, իգական)՝ զրո վերջավորությամբ է։ Այստեղ հնարավոր է կառուցվածքային նմանություն եզակի սեռականի հետ, տարբերությունը նրանում է, որ -*es հոգնակերտ-հոլովակերտի e ձայնավորը հերթադայում չունի։*

Դ) Չեզոք սեռի դեպքում առկա է ā հավաքական մասնիկ, որ բնորոշ է նույն կարգի բառերի կոչականի և հայցականի հետ։

Սրանց եզակին՝ զրո վերջավորությամբ է, թեմատիկ հիմքերի եզակի ուղղականում և հայցականում o-n/o-m. եզ. ուղղ.+ ā=հոգնակի ուղղական։

ե) Վերոհիշյալ ձևերին համապատասխան երկակին ունի այսպիսի կազմություն. բաղաձայնական և ձայնորդային հիմքեր (արս., իգ.)+-e- (համմտ. հուն. ε, սանս. -a-/-au)-i և u հիմքերի դեպքում՝ -ī, -ū։ Այս կառուցածևն ընդհանուր է հոգն. կոչականի և հայցականի հետ։ Սրանց բոլորի չեզոք սեռում առկա է հիմք+i կազապարը. -e-(e/o) բնավոր տիպի դեպքում՝ հիմք+ō[1]։

Հայցականի հոգնակի ձևը. Ա) -*ā (կամ -*ē) հանգող հիմք +*ns, n-ի անկումով՝ +*s, այսինքն՝ եզակի հայցական+n (կամ՝ m)+(n)s>հոգն. հայցական. *ek'wāns>*ek'wās. Բ) -*e-(e/o) թեմատիկ հիմք (արս., իգ.) +*ns>հոգն. հայցական. *swopnō-ns։ Գ) Չեզոք սեռի հայցականի մասին տեսանք ուղղականի կապակցությամբ։ Դ) Բաղաձայնական և ձայնորդային հիմքեր (արս., իգ.) +*ns (այս n տարրը i-ից և u-ից հետո երկբարբառի բաղադրիչ է, այլ դեպքերում նա ŋ է)։ Սրա եզ. հայցականը իտալականում և հնդ-իրանականում՝ m, այլ ցեղակից լեզուներում n, որ i, u ձայնորդների հետ երկբարբառի երկրորդ բաղադրիչ է, այլ դեպքերում՝ ձայնավոր։ ե) Երկակիի կազմությունը տե՛ս ուղղականի հետ։

Սեռականի հոգնակի ձևը. Ա) -*ā(կամ -*ē) հանգող հիմք +ōm/ōn, am՝ հիմքավերջի և հոգնակերտի ձանձավորների վերակազմավորմամբ. *ek'wā+ōm/ōn>*ek'wōm/ek'wōn. եզակի սեռականի վերջավորություններր բոլորովին այլ էին։ Բ)-*e-(e/o) թեմատիկ հիմք +ōm/ōn. *swopno(s)+ōm/ōn>*swopnom/swopnon, եզակի սեռականը այստեղ ևս բոլորովին այլ վերջավորություն ուներ։ Գ) Բաղաձայնական և ձայնորդային հիմք +ōm/ōn, Սրա եզակի սեռ.-բաց.-ը՝ հիմք +*es/os/s։ Դ) Սրանց համապատասխան երկակի ձևը ստույգ չի վերականգնվում. սանս.-oḥ, հուլ. ū<հնխ.-eus,-ous. սանս. ներգ. նույնպես -oḥ։

Կոչականի հոգնակի ձևն ընդհանուր է ուղղականի (առանձին դեպքերում նաև հայցականի) հետ. այդ մասին մենք նշում ենք ուղղականի և հայցականի առիթով։

Տրականի հոգնակի ձևը. Ա) Բաղաձայնական և ձայնորդային հիմքեր+*bh կամ *m։ Ըստ ՀԱ, ԼՔՀԼ, III, 344՝ հնդեվրոպականում

---

[1] Ըստ ՀԱ, ԼՔՀԼ, III, 341՝ բաղաձայնահանգները՝ e, a հանգողները՝ ai, o, i, u հանգողները՝ դրանց երկարացումով, չեզոք սեռում՝ հիմք+i։

կար bh *կամ* m *տարրով սկսվող և* s-*ի հանգող մի ձև՝ անորոշ ձայնավորով. եզակին՝* *ei։ Բ) Սրանց համպատ. երկակին ենթադրվում է* bh *կամ* m. *ըստ ՀԱ, ԼՔՀԼ, III, 341՝ տրական-բացառական-գործիականը անորոշ է, սանս.* -bhyam, *վեդ.* bya, *հպրս.* biyā, *հալ.* ma, *լիտվ.* m։

Բացառականի հոգնակի ձևը. **e-(e/o) թեմատիկ հիմքերի և բաղաձայնական և ձայնորդային հիմքերի զուգորդումները նման են հոգնակի տրականին։ Եզակին՝ եզակի սեռականի նման։ Բ) Սրանց համպատ. երկակին ևս տրականի հետ նույնն է։*

Գործիականի հոգնակի ձևը. *Ա) c/o թեմատիկ հիմքեր+*ois. *եզակին (՞)։ Բ) բաղաձայնահանգ և ձայնորդային հիմք+*bhis/mis. եզակին անորոշ է։ Գ) երկակին համպատ. տրականը կամ բացառականն է։*

Ներգոյականի հոգնակին. *Ա)-*e-(e/o) թեմատիկ հիմք +* oi-su, *եզակին՝* ei, oi, *բաղաձայնական և ձայնորդային հիմքերը՝* su, *ā հիմքերը՝* āsu։ *Բ) Ըստ Մեյեի սրանց համպատ. երկակին՝ հիմք +* u. s-*ն չկար (այդպես էր կարծում նաև Բրուգմանը)։*[2]

Ինչպես նկատելի է, հոլովների հոգնակին այնքան էլ հստակ դրսևորումներ չունի, որքան որ հնարավորություն են տալիս դիտարկելու վերականգնված ձևերը։ Հատկապես այս վերաբերում է հոգնակի թեք հոլովաձևերին։ Իզուր չէ, որ Ա. Մեյեն անում է այսպիսի դիտողություն. «Հոգնակի թեք հոլովների հարցը, որ առաջ էլ դժվարություն էր ներկայացնում, սրանից հետո դառնում է ավելի մշուշապատ, քան այն կար մինչև խեթերենի հայտնաբերումը» (AM, B, 309)։

Այնուամենայնիվ հնդեվրոպական ուղղականի և թեք հոլովաձևերի հոգնակիակազմության դիտարկումները բերում են այն համոզման, որ՝

1) հոգնակիակազմությունը դրսևորվում էր մասնիկավորմամբ, հոգնակիակազմ հիմքերի ու հոգնակերտ վերջավորությունների զուգորդումներով.

2) հիմքակազմության մեջ կարևոր դեր ուներ բնակերտը (թեմատիկ և աթեմատիկ (բնակերտով, բնավոր և անբուն) հիմքատիպեր.

3) ընդհանրապես հիմքերի և վերջավորությունների զուգոր-

[2] *Հնդեվրոպական հոգնակիակազմությանը վերաբերող շարադրանքում հանել ենք Ա. Մեյեի „Введение в сравнительное изучение индоевропейских языков" (М.–Л., 1938) և „Esquisse d' une grammaire comparée de l'arménien classique" (Vienne, 1936) աշխատություններին։*

դումներում կարևոր դեր ուներ հիմքավերջի, վերջնահանգի հնչյունաբանական բնույթը (բաղաձայնական, ձայնորդային լինելը, ă-ով հանգելը և այլն)։

Հոգնակիակազմության այս տիպոլոգիան անկասկած պայմանավորված էր հնդեվրոպական բառաձևի կազմով. այդ բառաձևը ըստ էության երեք բաղադրիչ ուներ՝ արմատ, ածանց, վերջավորություն։ Այս երեքն էլ ֆունկցիավորում էին միակցված, միակցությունից դուրս որևէ բաղադրիչ չէր կարող գործել։ Սրա հետ կապված, ձևակազմական տեսանկյունից, բառի ձևաբանական կազմը երկատրոհ, երկբաժան է՝ հիմք և վերջավորություն։

Հիմքը հնդեվրոպականում կարող էր լինել պարզ և բաղադրյալ (անբուն և բնավոր)։ Պարզ հիմքը ներկայացնում էր արմատը, որին վերջավորությունների ավելացմամբ՝ կազմվում էր բառաձև (հոլովաձև, հոգնակիի ձև ևն)։ Բաղադրյալ-թեմատիկ հիմքը ներկայանում էր իբրև արմատի և հատուկ հիմքակազմիչ տարրի միակցություն։ Տիպիկ թեմատիկ կազմավորումներում հիմքակազմիչ տարրը ձևաբանորեն հիմքին է հարում, սակայն կառուցվածքային վերակազմավորմամբ այն հետագայում կարող է հարել, ապա և ձուլվել վերջավորությանը։ Այս պրոցեսը իր որոշակի արտահայտություններն ունի ցեղակից լեզուների պատմական կյանքում։ Եթե նախապես ֆունկցիավորել է հիմք (թեմատիկ կամ աթեմատիկ) +հոգնակերտ-հոլովակերտ կաղապարը, ապա հետագայում պարզապես՝ հիմք+հոգնակերտ-հոլովակերտ կաղապարը. համմտ. եզակի ուղղականում՝ *Swopn-o+s>swopn+o-s>swopn+os, կամ եզակի սեռականում՝ *swopn-o+syo>swopn+o—syo>swopn+osyo՝ հայ. քո/ն-ո+յ>քո/ն+ո-յ>քո/ն-ոյ. հոգն. գործիականում՝ *wed-o+bhis>wed+o-bhis>wed-obhis, հայ. գետ-ո+վ/ք>գետ+ո-վ/ք>գետ—ովք, լատ. ped-i+bus>ped+i-bus>ped-ibus։

Դեռևս հնդեվրոպական շրջանի թեմատիկ կազմավորումներում, ինչպես ընդգծել է Մեյեն (AM, B, 328), միշտ չէ, որ վերջավորությունը հնարավոր է լինում բնակազմիչ ձայնավորից առանձնացնել։ Այս կապակցությամբ մենք հատկապես ուշադրություն հրավիրել ձայնավորահանգ հիմքի և ձայնավորասկիզբ հոգնակերտի շփման վայրում տեղի ունեցող վերակազմավորումների վրա։

Եզակի և հոգնակի հոլովական հարացույցների դիտարկումից դժվար չէ նկատել, որ հոգնակի ձևերի հոլովակերտ-հոգնակերտ վերջավորությունները հիմնականում տարբեր են եզակի հոլովակերտներից. իհարկե եզակի ձևը կարող է միայն հոլովակերտ ու-

*նենալ։ Այստեղ դժվար է ասել, թե եզակի ուղղականի հիմքը ինչ-չափով է ընդհանրացած հարացուցային մնացած ձևերի կազմավորման մեջ։ Թեմատիկ հիմքերն ընդհանուր են. եզակի ուղղականի հիմքը կրկնվում է գրեթե ամբողջ հարացույցում։ Մնացած հիմքերում կարող է կատարվել հիմքի ձայնավորի հերթագայություն (ինչպես՝ եզակի ուղղ. *mātér– զրո, եզ. սեռական՝ matr-es, հոգն. գործ. mātr-bhis)։ Հիմքերի վերջնահանգ ձայնավորը կարող է հնչյունաբանորեն վերակազմավորվել ձայնավորաակիզբ հոգնակերտի ձայնավոր տարրի հետ. համմտ. եզ. ուղղ. *ek'wa+զրո > հոգն. սեռ. ek'w+am։*

Հոլովակազմություն-հոգնակիակազմությունը ուրույն զարգացում ունեցավ հայերենում, վերակազմավորվեցին հիմքատիպերը և նրանց հետ զուգորդվող հոգնակերտ-հոլովակերտները։ Վերջնահանգի հնչյունաբանական հայտնի վերափոխությունները հայերենում մեծ թափ հաղորդեցին այդ վերակազմավորումներին։

Բ) Գոյականի թվի իմաստները և նրանց արտահայտման միջոցները գրաբարում։ *Հնդեվրոպականում գոյականի թվի կարգը, ինչպես նշեցինք, ներկայանում էր եռակի հակադրությամբ՝ եզակի, երկակի, հոգնակի։ Որ երկակիի կառուցածև կար հնդեվրոպական միասնության շրջանում, այդ պատմականորեն հաստատված է։ Նույնիսկ մի շարք ցեղակից հին հնդեվրոպական լեզուներում երկակին սովորական էր։ Սակայն վերականգնված ձևերը իրենց կառուցվածքով և գործածության ոլորտով ունեն շատ մութ կողմեր։*

Հայերենի վաղագույն շրջանում երկակին անհետացավ, այնպես որ հին գրական հայերենը թվի քերականական կարգում ունի երկակի հակադրություն՝ եզակի-հոգնակի։ Եզակին և հոգնակին բազմանշանակ էին գրաբարում։ Այդ բազմանշանակություններ սակայն չուներ կառուցածևի ակնհայտ տարբերություն։ Կառուցածևով զանազանվում էին եզակի անվերջավոր ձևեր և հոգնակի մասնիկավոր ձևեր. հոգնակերտ չունեցող բառաձևը ինքնին եզակիության ցուցիչ էր։ Կային բառեր, որոնք միշտ կամ չնչին բացառություններով հոգնակի ձևերով էին գործածվում՝ անեղականներ, կային այնպիսիները, որոնք միայն եզակի ձևով էին գործածվում՝ անհոգնականներ, կային նաև հավաքական նշանակությամբ հոգնակի կազմավորումներ և այլն։

Ինչպես որ հնդեվրոպականում հոգնակիակազմությունը և հոլովակազմությունը արտահայտության միջոցներով համընկնում էին, իրրև տիպիկ թեքական լեզուներին հատուկ երևույթ, այնպես էլ գրաբարում այդ այդպես է։ Սակայն հնդեվրոպական թվակազմության-հոլովակազմության բազմաթիվ զուգորդումների հանդեպ

պլաքարն ունի այդ կազմավորումների համեմատաբար պարզեցված տիպոլոգիան։ Գրաբարը զարգացրեց թեմատիկ կազմավորումները, ընդհանրացրեց և պարզեցրեց հիմքակազմության, կրճատեց վերջավորությունները։ Իրրև հոգնակերտ-հոլովակերտ մասնիկներ հին գրական հայերենում ֆունկցիավորում էին միայն ք, ս, ց (ոչ-համակարգային կազմավորումներում նաև իկ, այք են)։

Հին գրական հայերենում հոլովակազմությունն ունի նաև եզակի հարացույց։ Հետևապես հոլովակազմությունը, ըստ էության, ավելի լայն հասկացողություն է, քան թվակազմությունը։ Երկու երևույթներն էլ հանգամանորեն քննված են Ա. Մեյեի, Հ. Աճառյանի, Մ. Աբեղյանի, Գ. Ջահուկյանի, Ա. Աբրահամյանի և քաջահմուտ հայ քերականների ու բառարանագիրների կողմից։

Մենք այստեղ բավարարվում ենք թվակազմության տիպոլոգիայի մի քանի հարցերի պարզաբանումով։ Հին հայերենը թեքական լեզու էր. հոլովակազմության մեջ գերիշխում էր մասնիկավորումը, իսկ հոգնակիակազմությունը միայն մասնիկավորմամբ էր։ Եթե այդ այդպես է, ապա մենք գործ ենք ունենալու մի այնպիսի կառուցածևի հետ, ուր հոգնակի ձևը ստեղծվում է հոգնակիակազմ հիմքի և հոգնակերտ վերջավորությունների զուգորդումներով։

Բայց քանի որ հոգնակիակազմությունը և հոլովակազմությունը համատեղում են, ապա նշված միավորները ներկայանում են փաստորեն իրրև հոգնակիակազմ-հոլովակազմ հիմքերի և հոգնակերտ-հոլովակերտ վերջավորությունների զուգորդումներ։

Կառուցվածքային (ոչ անպայման ծագումնաբանական) առումով հոգնակիակազմ հիմքը եզակի հարացույցի որևէ ձև է կամ եզակիի որևէ հիմք։ Մեր խնդիրն է պարզել, թե հոգնակի ձևերը եզակիում ինչ ելահիմք ունեն։ Ա. Մեյեն մի առիթով նշել է, թե հին հայերենը այլ որոշ կարգերի համեմատությամբ՝ հոլովակազմությունը չի հասցրել իր կատարելությանը։ Այս, անկասկած, ի վնաս հայերենի չպետք է հասկանալ։ Մեյեի դիտողությունը որոշ պայմանականություն ունի։ Նախ՝ հին գրական հայերենը, ինչպես նշեցինք, ցեղակից հին լեզուների շարքում առանձնանում է վերջավորությունների նկատելի պարզեցումով. հոգնակիակերտությունը ուղիղ և թեք ձևերում իրականացվում է միայն ք, ց, ս մասնիկներով. նկատելի է հիմքաեռակների միօրինականացման ուժեղ տենդենց։ Բացի այդ՝ մասնիկավոր չորս կառուցածևով և նրանց մասնակի, լրացուցիչ հարադրություններով հին հայերենը արտահայտում էր հնդեվրոպական ութ հոգնակի ձևերի իմաստները, ձևեր, որոնցից յուրաքանչյուրը մեկ վերջավորությամբ պրեթե չէր

գնում. համմտ. գրբ. գայլք-(ղ)գայլս-գայլոց-գայլովք։ Այս ձևերից երրորդի և չ նախդիրի հարաբերությամբ արտահայտվում էր հոգնակի բացառականի իմաստը, երկրորդի և նույն նախդիրի հարաբերությամբ՝ հոգնակի ներգոյականի իմաստը. կոչականի ֆունկցիան վերցրել էր ուղղականը, հոգնակի սեռականը և սրականը ձևաբանորեն համընկել էին։

Այսպիսի կառուցածևը, կառուցվածքային այսպիսի տիպը թեքական-մասնիկավոր տիպոլոգիայի տեսանկյունից կառաբելություն չէ, սակայն ձևաբանական պարզության տեսանկյունից իսկական կառարելություն է։

II. ՀՈԳՆԱԿԻԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ. ՀՈԳՆԱԿԻԱԿԱԶՄ ՀԻՄՔԻՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՋՈՒԳՈՐԴՈՒՄՆԵՐԸ ՀՈԳՆԱԿԻՐ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Ա) Հիմքակազմություն։ Գրաբարում եզակի ձևը (կամ եզակիի հիմքը) ելհիմք է հոգնակիակազմության-հոլովակազմության համար։ Սակայն չկա մի եզակի ձև (կամ եզակիի մի հիմք), որն ընդհանրական հիմքի ֆունկցիա ունենա հոգնակի ամբողջ հարացույցում։ Եթե արդի գրական հայերենում, ասենք, եզակի ուղղականի ‹‹ար›› ձևը (հիմքը) ընդհանրական հիմք է եզակի հոլովման մեջ և հոգնակիակազմության մեջ, ապա այդպիսի երևույթի մասին խոսել գրաբարի վերաբերյալ, նշանակում է որոնել բացառիկ ձևեր։

Հայտնի է, որ հնդեվրոպական հոլովակազմության-հոգնակիակազմության մեջ գերիշխում էին ձեռք բերել բնակերտով (թեմատիկ) և ոչ-բնակերտով (աթեմատիկ), կամ ինչպես նաև ասում են՝ բնավոր ու անբուն հիմքատեսակները։ Կարող է, բնականաբար, հարց առաջանալ, թե ինչ բնորոշ դրսևորումներ ուներ բնակերտը գրաբարի հոլովակազմության և հոգնակիակազմության մեջ։ Այս հարցը ճիշտ մեկնաբանելու համար պետք է ելնել հիմք և վերջավորություն հասկացությունների զիտական բմբռնումից։

Մեզ հետաքրքրող խնդրում հիմքը և վերջավորությունը հոլովակազմության և հոգնակիակազմության մասնիկավոր տիպերին բնորոշ հասկացություններ են։ Եթե կա վերջավորությամբ հոլովածև, կա և հիմք. չկա այդպիսի ձև, չկա և հիմք։ Այսպես՝ բան-ք (բանք) և բանի-ւ բառաձևերը մասնիկավոր են. մինչև տվյալ մասնիկն ընկած մասը հիմքն է։ Ուրեմն բան– և բանի– հիմք են, իսկ ‹‹ի››-ն և ‹‹ւ››-ն՝ վերջավորություններ։

Հիմքը կարող է լինել պարզ (անբուն), առանց բնակերտի և բնա-

վոր. բան-հիմքն առանց բնակերտի է, իսկ բանի-ն՝ բնավոր(թեմատիկ)։ Միևնույն հարացույցի անդամները բոլորն էլ կարող են բնակերտով լինել, ինչպես հնխ. e/o բնավոր հիմքերն են։ Հին հայերինը հիմքերի հնչյունաբանական և ձևաբանական վերակազմավորումների կամ պատմականորեն որոշ ձևերում բնակերտի անկման, ինչպես և այլ պատճառներով՝ հարացույցի մի քանի ձևերում բնակերտ չունի (եզակի ուղղականում և հայցականում, հոգնակի ուղղականի և հայցականի շատ ձևերում), բացառականում՝ համախ շեշտի հետ կապված հնչյունափոխությամբ։ Որոշ կազմավորումներում ի. ու բնակերտները համատեղում էին բնակերտի և հոլովակերտի ֆունկցիաներ. «սեռական-տրականի հիմքակազմ ձայնավորները փաստորեն գիտակցվում էին նաև որպես վերջավորություններ»,—գրում է Գ. Ջահուկյանը (տե՛ս ԳՋ, 2220, 164), բայց «եզակի գործիականում և հոգնակի բոլոր թեք հոլովներում հիմքակազմ ձայնավորը հատակ կերպով առանձնանում է բուն վերջավորությունից» (և. տ., էջ 164—165)։

Բնակերտը հիմքավերջի այն տարրն է, որով հիմքը զուգորդվում է վերջավորության հետ. այդ տարրը հնդեվրոպական միատնության շրջանում ինքնուրույն էր, նրա ձևաբանական արժեքը գիտակցվում էր Հին ցեղակից լեզուներում, մասնավորապես հայերենում նրա անկախ դիրքի գիտակցումը սկսեց աստիճանաբար մթագնել։ Ահա թե ինչու շատ հայագետներ (Ա. Մեյե, Հ. Աճառյան և ուրիշ.) գտնում են, թե բնակերտով հիմքի («բնի») դաղափարը պրաբարում արդեն չնչված էր (Համմ. ՀԱ, ԼՔՀԼ, III, 395)։ ԵՒս կասկածությամբ ուշագրավ է պրոֆ. Գ. Ջահուկյանի հետևյալ դիտողությունը. «Հին Հայերենում, որպես թեքական սիպի լեզվի, արմատը, հիմքակազմ տարրը և վերջավորությունը համախ այնպես էին միաձուլվում, որ հեշտ չէ դրանք իրարից առանձնացնել. սակայն տարահիմք հոլովումների առկայությունը, եզակի ուղղական-հայցականի (երբեմն էլ հոգնակի ուղղական-հայցականի)՝ հիմքակազմ տարրերից զուրկ լինելը և դրանով սեռական-տրականին հակադրվելը, հիմքակազմ տարրերի ձայնավորների հերթագայությունները, հավաքական հոգնակերտ մասնիկներ ունեցող բառերի հոլովման առանձնահատկությունները և այլն,—այս բոլորը հիմք են ստեղծում հիմքակազմ տարրերի և վերջավորությունների միասնական ըմբռնման համար (ԳՋ, 2220, 94)։ Ավելին, նույնիսկ հնդեվրոպականի թեմատիկ կազմություններում միշտ չէ, որ հնարավոր է լինում վերջավորությունը բնակազմիչ ձայնավորից առանձնացնել (Համմ. AM, B, 328)։

Այս բոլորով հանդերձ, պետք է ընդգծել, որ երբեմնի բնակեր-ոջ նույն արժեքով կամ ձևաբանական վերակազմավորումներով նոր արժեք ստացած՝ ֆունկցիավորում էր հին գրական հայերենի հոլովակազմության և հոգնակիակազմության մեջ նշված վերա-կազմավորումները գնահատելու համար պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ հին հայերենի հոլովակազմության մեջ տո-կա էին այլ գործոններ ևս։

Հնդեվրոպական հոլովման համակարգում, ինչպես և հին հայե-րենի հոլովակազմության մեջ գլխավոր դեր ուներ արմատահնչյունի վոփոխությամբ՝ ձայնավորների հերթագայությամբ (ձայնդարձ) հոլովներ տարբերակելը։ Առանձին բառախմբերի հոլովման մեջ հին հայերենը հնդեվրոպական ձայնդարձը նկատելիորեն առաջ է տա-րել։ Սակայն չպետք է անտեսել մի հանգամանք ևս. գրաբարը զուտ ձայնդարձով տարբերակում էր այդ որոշ բառախմբերի միայն սեռական-տրականը։ Հարացույցի այլ ձևերում ձայնդարձի երևույթը միախառնված է մասնիկավորման, նույնիսկ օժանդակ բառերի գոր-ծածության հետ։ Այսպես՝ անձ(ը)ն–անձին հակադրության մեջ հո-լովառարբերիչ ֆունկցիա ունի (ը)>ի հերթագայությունը, բայց անձին–անձանց հակադրության մեջ առկա է և՛ ձայնդարձ (ի-ա), և՛ մասնիկավորում՝ ն-ց. բացառականում՝ յանձանց, նաև նախդի-րի գործածություն։ Այնտեղ, ուր հոլովակազմիչ դերը անցնում է միայն ձայնդարձին, չպետք է խոսել հիմքի և վերջավորության մասին. արմատահնչյունի հերթագայությունը մասնիկավորում չէ։ Բայց եթե այն կապված է մասնիկավորման հետ, առկա է և՛ հիմք, և՛ վերջավորություն։ Այդ նշանակում է, թե անձին ձևում (սեռա-կան-տրականում) հիմքի և վերջավորության հարց դնել հնարավոր չէ, բայց աճին–ճ, աճառ–ց ձևերում առկա է այն։ Այստեղ հիմքը հզակի ուղղականի՝ ձայնդարձով վերակազմավորված տարբերակ է։ Այս նաև նշանակում է, թե հին գրական հայերենի հոլովակազմու-թյունն ունի յուրահատուկ գծեր, որոնք չպետք է անուշադրության մատնել։

Մեր քերականությունը ավանդաբար ելքը գտել է հոլովիչ և հո-լովակերտ գաղափարների տարբերակված ըմբռնումով։ Սակայն եթե գետ-ը, սրտի-ս կազմավորումներում ո և ի իսկապես հոլովիչ-ներ-քնակերտներ են, բայց անձին, ձկան ձևերում ի, ա տարրերը թերևս միայն «հոլովիչներ» են. նրանք այստեղ բնակերտ չեն այն պարզ պատճառով, որ տվյալ կազմավորումներում հիմք, բուն չկա (և ոչ էլ վերջավորություն)։ Գուցե հնարավոր լիներ գործածել իսկապես հոլովիչ տերմինը, որովհետև այն մի տեսակ չեզոք է մասնիկավոր և ոչ մասնիկավոր հոլովական կառուցվածքների նր-

կատմամբ։ Բայց այդ տերմինը հին դրական հայերենի հոլովակազմության (և հոգնակիակազմության) տիպոլոգիայի բացահայտման տեսանկյունից նկատելիորեն աղքատ, պարզունակ միջոց է։

Հոլովակազմությունը և հոգնակիակազմությունը թեև գրաբարում համատեղում են, բայց հոլովակազմությունը ունենալով կառուցվածքային ավելի լայն ընդգրկումներ՝ իր մեջ, մասնիկավորությունից բացի, առնում է ներքին թևքում (ձայնդարձ), ներքին թեքում՝ մասնիկավորմամբ, իսկ վերջինս կարող է ունենալ նաև հավելյալ նախդիր. օր. բանի, հարսին, հարսամբ, ի հարսնէ։

Հոգնակիակազմությունը միայն մասնիկավորմամբ է դրսևորվում։ Քանի որ հոգնակիակազմ հիմքերը եզակի ձևեր են, ապա հոգնակիի հիմքում առկա են հոլովակազմությանը հատուկ որոշ երևույթներ, որոնք եզակի հոլովական հարացույցի կազմավորումներ են, ինչպես, օրինակ, ներքին թեքման՝ ձայնդարձի երևույթն է. հմմտ. հարս(ը)ն, հարսին, հարսուն-ք. անձ(ը)ն, անձ-ին, անձին-ք, անձան-ց։

Որոշ «հոլովիչներ» համատեղում են բնակերտի և հոլովակերտի ֆունկցիաներ. օր. ի, ու արտաքին հոլովիչները եզակի սեռ.-տրականում։ Հոգնակիակազմ հիմքում սրանք նախապես ֆունկցիավորվելով իբրև բնակերտ, հետագայում ձուլվել են ց հոգնակերտ-հոլովակերտի հետ՝ ձևաբանական վերակազմավորումներով. Եզ. սեռ.-տր. սրտի, հոգն. սեռ.-տր. սրտի-ց > սրտ-ի-ց սրտ-ից։ Այս ից-ը արևելահայ որոշ բարբառներում և գրական լեզվում դարձել է բացառականի վերջավորություն։

Բ) Հոգնակիակազմություն եզակի հոլովաձևերից։ *Հնդեվրոպական կոչականը հին հայերենում կառուցածևով համընկել էր ուղղականին. մեկնաբանելով ուղղականի հոգնակիակազմությունը՝ բնականաբար մեկնաբանում ենք նաև կոչականի կառուցածևը։*

Ուղղական հոլովի եզակի և հոգնակի կառուցածևերի փոխհարաբերության հարցում պետք է հաշվի առնենք հետևյալ հանգամանքները։ Հոգնակի ուղղականի հիմքը եզակի ուղղականի ձևն է կամ ձևաբանորեն (առանձին դեպքերում նաև հնչյունաբանորեն) վերակազմավորված նրա տարբերակը։ Եզակի ուղղականը չունի նյութականորեն արտահայտված վերջավորություն. հնդեվրոպական եզակի ուղղականը, որ մի շարք դեպքերում մասնիկավոր բառածև էր, լիովին (հոլովակազմությամբ) մասնիկազերծ էր եղել հայերենում. արմատը բեռնաթափվելով վերջավորություններից՝ դուրս է ցայտել իբրև բառի հիմնական, ելահիմք ձև (շեշտված անվանողական ֆունկցիայով, կոչականի, ենթակայի և այլ քերականական պաշտոններով)։ Սակայն նա ելահիմքի դեր չստանձնեց եզակի ամ-

բողբ հարացույցի հոլովակազմության և հոգնակիակազմության համար ընդհանրապես։ Այդպիսի արժեք ձեռք բերեց աշխարհաբարի եզակի ուղղականի ձևը՝ կցական կառուցատիպի շնորհիվ։

Եզակի ուղղականը չունենալով նյութականորեն արտահայտված վերջավորություն՝ հոլովական իմաստը տարբերակում է հարացույցի մյուս անդամներին հակադրվելով քերականական արտահայտության համապատասխան միջոցների բացակայությամբ, այսպես կոչված զրո կամ բացասական վերջավորությամբ։ Այնուամենայնիվ զրաբարի ուղղականի եզակի ձևի վերջնահանգի բնույթը և հնչյունաբանական ու ձևաբանական այլ որոշ հատկություններ հաճախ կանխորոշում են հարացույցի մնացած ձևերի կառուցվածքային տիպը։ Հաճախ նույնատիպ վերջնահանգ ունեցող բառերը հետևում են ձևաբանական նույն կապմավորումներին (հոլովակազմության, հոգնակիակազմության, ընդհանրապես հիմքակազմության մեջ)։ Սակայն շատ դեպքերում էլ անորոշ է մնում, արդյոք մյուս անդամները մասնիկավորմամբ, ներքին թեքումով, թե խառն տիպոլոգիա պիտի ունենան։

Գրաբարի եզակի ուղղականի ձևը նույնիսկ հոգնակի ուղղական ձևի համար ընդհանրական հիմքի դեր չուներ։ Հոգնակի ուղղականի հիմքը շատ դեպքերում եզակի համապատասխան ձևի որոշակիորեն վերակազմավորված տարբերակն է։ Այնուամենայնիվ, մի քիչ այլ հայեցակետով դիտարկելու դեպքում, կարելի է ասել, թե՝ մասամբ անփոփոխ, հիմնականում արմատահնչյունի փոփոխությամբ (երկվանկ-բազմավանկների դեպքում՝ վերջնահանդի ձայնավորի հերթագայություններով), որոշ կապմավորումներում և բառերի մեծ մասի դեպքում տարբեր մասնիկների հետ զուգորդվելով, եզակի ուղղականի ձևը մասնակցում է հոլովական հարացույցի մնացած անդամների կազմությանը և հոգնակիակազմությանը։ Այս իմաստով կարելի է ասել, թե ուղղականի հոգնակիի հիմքը ներկայանում է իբրև եզակի ուղղականի անփոփոխ ձև (օր. բան—բան-ք), իբրև ձայնդարձով և առհասարակ ներքին թեքումով վերակազմավորված նրա հիմքատարբերակ՝ հաւս(ը)ն—հաւսուն-ք, աստ(ը)ղ—աստեղ-ք, դուստ(ը)-ր—դուստեր-ք և այլն[3]*։*

---

[3] *Պրոֆ. Գ. Ջահուկյանը այս հարցի կապակցությամբ դրում է. «Հիմքափակ տարրերի առկայության առումով հոգնակի ուղղականը ի հայցականը եզակի ուղղականից և հայցականից բավականաչափ տարբերվում են. ձայնավորահիմք հոլովումների դեպքում բնութագրվելով նույնպես զրո հիմքակազմ տարրով՝ ձայնորդահիմք և տարահիմք հոլովումների դեպքում նրանք մեծ մասամբ բնութագրվում են ձայնորդին նախորդող տարրի այլ ձայնավորմամբ, երբեմն էլ ձայնորդի բնույթով» (ԳՋ, 1220, 84)։*

Սրանք մասամբ կարող են ընդհանուր լինել եզակի հոլովական հիմքերի կամ հոլովաձևերի հետ. համմտ. եզ. ուղղ. far, եզ. սեռ-տր. farին, հոգն. ուղղ.-ի հիմք՝ farին-ք, նաև՝ աստղ>աստեղ>աստեղ-ք, բայց միայն մասամբ։

Վերոհիշյալից հետևում է, որ ուղղականի հոգնակիակազմության մեջ գործում են հիմքակազմության երկու կառուցատիպ. ա) հոգնակի ուղղականի հիմքը եզակի ուղղականի անփոփոխ ձևն է, բ) հոգնակի ուղղականի հիմքը եզակի ուղղականի հնչյունաբանորեն-ձևաբանորեն վերակազմավորված տարբերակն է։

Նախ առաջին կաղապարի մասին։ Սա հոգնակի ուղղականի կազմության ամենատարածված կառուցաձևն է։ Ահա թե ինչու Հ. Աճառյանը հաստատում է. «Բոլոր բուների մեջ էլ հոգնակի ուղղականը կազմվում էր եզակիի վրա ավելացնելով f մասնիկը, միայն ն, ղ, և r/ն հոլովումներն էին, որ այդ կանոնից շեղվում էին, (ՀԱ, ԼՔՀ, III, 521. համմտ. նաև՝ ԳՋ, ՀՀՍ, 84—85)։

Առաջին կաղապարին հետևում են այն բոլոր բառերը, որոնք եզակի թիք ձևերում ունեն բնակերտ (կամ բնակերտ-հոլովակերտ)՝ ի (սիրտ—սրտի—սիրտք), ա (տիտան—տիտանայ—տիտանք), ո (դետ—գետոյ—գետք), ու (ծով—ծովու—ծովք), ի—ա (աշակերտ——աշակերտի—աշակերտաւ—աշակերտք), ո—ա (պատանի—պատանուոյ—պատանեաւ—պատանիք)։

Եզակի ձևի համեմատությամբ հոգնակիակազմ հիմքը հնչյունաբանորեն կամ ձևաբանորեն վերակազմավորված է այն բառերի հոգնակիակազմության մեջ, որոնց եզակիի վերջնահանգը սովորաբար ունի այսպիսի տեսք. բաղաձայն+(ը)ն, ում+(ը)ն, մ+(ը)ն, բաղաձայն+(ը)ր։ Բաղաձայն+(ը)ն վերջնահանգը բառերի մի մասի հոգնակի հիմքավերջում վերակազմավորումով փոխարինվում է բաղաձայն+ուն կազապարով՝ վերջնահանգում (ը)—ու հերթագայությամբ. ձուկ(ը)ն>ձկուն-ք, ափ(ը)ն>ափուն-ք. բառերի մի մասում էլ՝ բաղաձայն+ին կաղապարով՝ վերջնահանգում (ը)—ի հերթագայությամբ. բեռ(ը)ն>բեռին-ք[4]։ Այսպես և՝ ում+(ը)ն>մ+ուն. հարցում(ը)ն>հարցմուն-ք. մ+(ը)ն>մ+ուն. ատամ(ը)ն>ատամուն-ք; իսկ բաղաձայն+(ը)ղ, բաղաձայն+(ը)ր վերջնահանգերում (ը)>ե հերթագայությամբ գոյանում են ընդհանրական հիմքեր նաև հարացույցի այլ կազմավորումների համար

---

[4] Իսկ ինչպե՞ս է հասկացվում, թե որ կարգի բառերում է վերակազմավորումը կատարվում ու-ով, որ բառերում ի-ով. այդ հիմնականում որոշվում է խոսողական կենսափորձի ուժով, ինչպես և մեր ձևերի ասոցիացիաների շնորհիվ։

(եզակի սեռ.-տրականում այն հիմք չէ). աստ(ը)ղ>աստեղ-ք, դուստ(ը)ր>դստեր-ք։

Համակարգային բոլոր կազմավորումների հոգնակիակազմ հիմքը ուղղականում զուգորդվում է հոգնակերտ-հոլովակերտի հետ։ Այլ, օրինակ, ոչ-համակարգային կազմավորումներում հաճախ հանդես են գալիս ուրիշ կարգի հոգնակերտներ, որոնց մասին քիչ հետո։

Հոգնակի հայցականի եիմքը հոգնակի ուղղականի հիմքն է. **թեև բառերի մեծ մասի համար** նա նույնն է եզակի հայցականի ձևի[5] հետ, բայց կառուցվածքի նկարագրության տեսանկյունից այն նպատակահարմար է հանել հոգնակի ուղղականի հիմքից, որովհետև, գրեթե առանց բացառության, մանավանդ վերակազմավորումների դեպքում, այստեղ ունենք հոգնակիակազմ հիմքերի նույնացում։ Հայցականի հոգնակիակազմ հիմքը միշտ զուգորդվում է ս հոգնակերտ-հոլովակերտի հետ։ Ստորև բերվող օրինակներից պարզ երևում է եզակի հայցականի ձևի և հոգնակի ուղղականի ու հայցականի հիմքերի հարաբերակցությունը.

եզ. հայց.	հոգն. ուղղ.	հոգն. հայց.
(ղ)սիրտ	*սիրտ-ք*	*(ղ)սիրտ-ս*
(ց)տիտան	*տիտան-ք*	*(ց)տիտան-ս*
(ց)գետ	*գետ-ք*	*(ց)գետ-ս*
(ղ)ծով	*ծով-ք*	*(ց)ծով-ս*
(ց)աշակերտ բայց՝	*աշակերտ-ք*	*(ց)աշակերտ-ս*
(ղ)ձուկն	*ձկուն-ք*	*(ղ)ձկուն-ս*
(ց)աիին	*աիուն-ք*	*(ց)աիուն-ս*
(ց)հարցումն	*հարցումն-ք*	*(ղ)հարցումն-ս*
(ղ)առաձն	*առաձուն-ք*	*(ց)առաձուն-ս*
(ց)աստղ	*աստեղ-ք*	*(ղ)աստեղ-ս*

Ոչ-համակարգային որոշ կազմավորումներում հայցականի հիմքը կարող է զուգորդված լինել այլ հոգնակերտի հետ։

Սեռական-տրական հոլովի[6] *հոգնակիակազմ հիմքը եզակի*

---

[5] *Եզակի հայցականի ձևը կառուցվածքային նույն տեսքն ունի, ինչ եզակի ուղղականը. տարբերությունը իմաստային (ֆունկցիոնալ) է։ Կառուցվածքային լրացուցիչ տարբերիչ հատկանիշն այն է, որ որոշյալ հայցականը սկզբից զուգորդվում է զ նախդիրի հետ՝ առանձին կամ չտանձնալով հոդ, մինչդեռ եզակի որոշյալ ուղղականը զուգորդվում է միայն հոդի հետ։ Հոգնակի հայցականի հիմքին չի նույնանում վերակազմավորումների դեպքում։*

[6] *Թեև սեռական և տրական հոլովները ունեն տարբեր իմաստներ (ֆունկցիա-*

սեռ.-տրականի ձևն է, կամ նրա վերակազմավորված տարբերակը։ Եզակի սեռ.-տրականը հոլովական հարացույցում աչքի է ընկնում կազմավորման բազմազանությամբ, ընդ որում ունի կա՛մ մասնիկավոր, կա՛մ ներքին թեքումով (ձայնդարձով) կառուցատիպեր։ Մասնիկավոր տիպերում ունենք «արմատ»+բնակերտ+հոլովակերտ, այսինքն՝ բնակերտով հիմք+հոլովակերտ կաղապարը. գայլ-ո-յ, տիրան-ա-յ կազմավորումներում գայլ,- տիրան- արմատ են, ո-ն և ա-ն բնակերտներ (հիմքակազմ տարրեր), յ-ն՝ հոլովակերտ, վերջավորություն։ Որոշ ձևերում վերջավորության անկումով՝ բնակերտն իր վրա է վերցնում նաև հոլովակերտի ֆունկցիան. այսպես՝ սրտ-ի, ծով-ու սեռականների ի, ու տարրերը բնակերտ-հոլովակերտ են։ Բնակերտով այս հիմքերը կարող են հոլովակազմ դերով հանդես գալ հարացույցի այլ անդամների կառուցվածքում, նույնիսկ հոգնակի հարացույցում. համմ. գետո-÷վ>գետով (եզակի գործիական), գետո-+ց>գետոց (հոգնակի սեռ.-տրական)։ Մակայն գրեթե ոչ մի բնակերտով հիմք չի ընդգրկում հարացուցային բոլոր կազմավորումները։

Իբրև բնակերտներ հանդես են գալիս ա, ի, ո, ու ձայնավորները։ Թե բառային ինչ խմբեր ո՛ր բնակերտով են կազմավորվում, դժվար է կռահել եզակի ուղղականի ձևից։ Հայագիտներից ոմանք (Ա. Մեյե, Հ. Աճառյան, Գ. Ջահուկյան, Ա. Աբրահամյան և ուրիշ.) հոգնորոշման ձևաբանական կամ հնչյունաբանական մի շարք ազդանշաններ են մատնացույց անում, սակայն դրանց կենսունակությունը մասամբ է համոզիչ հիմնավորում ստացել։

Ներքին թեքումով կառուցաձևերը կա՛մ հնդեվրոպական ձայնդարձով կազմությունների ուրույն զարգացումներն են, կա՛մ էլ դրանց գուգահեռ՝ արմատահնչյունի փոփոխությունների վրա հիմնված և ձևաբանական արժեք ձեռք բերած կազմավորումներ։ Հնդեվրոպական ձայնդարձը հոլովակազմության մեջ շատ լավ պահպանվել է այն բառերում, որոնք եզակի ուղղականում ունեն բաղաձայն+(ը)ն վերջնահանգ։ Այդ վերջնահանգում (ը)>ի(ու, ա) հնքաձագայությամբ ունենք՝ ճառս(ը)ն—ճառսին (ճառսուն, ճառսանց)։ Հարսին մասնիկավոր սեռական չէ, այստեղ կիրառելի չեն հիմք և վերջավորություն հասկացությունները։ Սեռ.-տրական հոլովական իմաստն արտահայտված է արմատահնչյունի փոփոխությամբ՝ ներ-

---

ներ) և եզակիում նաև կառուցածևի որոշ տարրերին գծեր, այնուամենայնիվ մենք քննում ենք իբրև մեկ՝ սեռական-տրական կազմավորում, որովհետև հոգնակիության նկարագրության պարզության տեսանկյունից այս եղանակն ավելի նպատակահարմար է։

քին թեքումով։ Եվ քանի որ այս երևույթը սովորաբար կապված է բառի վերջնահանգի ձայնորդային բնույթի հետ, ապա գրարարի հոլովակազմության քննության մեջ առանձնացնում են ուրույն հիմքատիպ՝ «ձայնորդահանգ հիմքեր»։

Կազմավորման համանման (ներքին թեքումով) տիպոլոգիա ունեն բաղաձայն+(ը)ղ, բաղաձայն+(ը)ր վերջնահանգն ունեցող-ների սեռ.-տրական ձևերը, որոնք թեև հնդեվրոպական ձայնդարձով չեն մեկնաբանվում, բայց զուգահեռ ընթացող երևույթներ են։ Ներքին թեքումով են սեռական-տրական կերտում նաև հայր, մայր, քույր, եղբայր և մի քանի այլ բառեր։

Սեռ.-տրականի հոգնակիակազմությունը հիմնականում դնկավարվում է հետևյալ կաղապարով. եզակի սեռ.-տրականի հիմք կամ ձև+ց հոգնակերտ և եզակի գործիականի հիմք+ց։ Եվ այսպես՝

ա) Հոգնակի սեռ.-տրականի հիմքը եզակի սեռ.-տրականի հիմքն է։ Այս՝ մեծ ընդգրկումներ ունեցող կաղապարն ունեն այն բառերի հոգնակիակազմ հիմքերը, որոնք եզ. սեռ-տրականում ունեն պարզ բնակերտներ՝ ի, ու, ո, ա. սրտի>սրտի-ց, ծովու>ծովու-ց, գետու-յ>գետու-ց, տիտանա-յ>տիտանա-ց։

բ) Հոգնակի սեռ.-տրականի հիմքը եզակի սեռ.-տրականի ձևն է։ Այսպիսի հիմքակազմություն ունեն այն սեռ.-տրականները, որոնք եզակի ուղղականում ունեն՝ բաղաձայն+(ը)ն[7],-ում+(ը)ն,-մ+(ը)ն, բաղաձայն+(ը)ղ, բաղաձայն+(ը)ր վերջնահանգեր. ձուկ>ձկան>ձկան-ց, հարցում>հարցման>հարցման-ց, դուստր>դստեր>դստեր-ց։

գ) Հոգնակի սեռ.-տրականի հիմքը համընկնում է եզակի գործիականի հիմքին[8]։ Այսպիսի հիմքակազմություն ունենք այն դեպքերում, երբ բնակերտով հիմքերը եզակի հարացույցի գործիականում փոխում են ավյալ բնակերտը, այսինքն՝ խառը բնակերտով հոլովակազմություններում. համմտ. ի—ա՝ աշակերտի>աշակերտա-ւ>աշակերտա-ց, ո—ա՝ պատանուց>պատանեա-ւ>պատանեա-ց։ Այս կաղապարին է հետևում եզակի ուղղականում բաղաձայն+(ը)ն վերջնահանգ ունեցողների մի մասը։ Այս

---

[7] *Այսպիսի վերջնահանգ ունեցողների մի մասը հետևում է այլ կաղապարի, որը մեկնաբանվում է հաջորդ կետում։*

[8] *Գործիական հոլովի եզակի և հոգնակի ձևերի կառուցվածքային փոխհարաբերության հարցի կապակցությամբ պրոֆ. Գ. Ջահուկյանը նկատում է. «Գործիականի հիմքը համընկնում է հոգնակի սեռական-տրական-բացառականի հիմքի հետ... այն դեպքերում, երբ եզակի սեռական-տրականի հիմքը տարբեր է հոգնակի սեռական-տրականի հիմքից, եզակի գործիականի հիմքը նույնպես տարբեր է եզակի սեռական-տրականի հիմքից» (ԳՋ, 1977, 90—91)։*

վերջնահանգում կատարվող ձայնդարձով, (ը)—ի հերթագայությամբ կազմվում է եզակի սեռ.-տրականի ձև, ի—ա հերթագայությամբ՝ եզակի գործիականի հիմք, նույն հերթագայությամբ՝ հոգնակի սեռ.-տրականի հիմք, այն տարբերությամբ միայն, որ եզակի գործիականի հիմքավերջում ը հոլովակերտ վերջավորությունից առաջ տեղի է ունենում ն>մ առնմանում. մատան-ը>մատամբ, բայց հոգն. սեռ.-տր. մատան-ց՝ եվ այսպես՝

եզ. ոսկ.	եզ. սեռ.–տր.	եզ. գործ.	հոգն. սեռ.–տր.
ազն	*(ազին)*	*ազամբ*	*ազանց*
առն	*(առին)*	*առամբ*	*առանց*
բեռն	*(բեռին)*	*բեռամբ*	*բեռանց*
գառն	*(գառին)*	*դառամբ*	*գառանց*
դաշն	*(դաշին)*	*դաշամբ*	*դաշանց*
դառն	*(դառին)*	*դառամբ*	*դառանց*
եզն	*(եզին)*	*եզամբ*	*եզանց*
լեառն	*(լերին)*	*լերամբ*	*լերանց*
խաշն	*(խաշին)*	*խաշամբ*	*խաշանց*
նեռն	*(նեռին)*	*նեռամբ*	*նեռանց*
ափն	*(ափին)*	*ափամբ*	*ափանց*
բուռն	*(բուին)*	*բուամբ*	*բուանց*
թռռն	*(թռուին)*	*թռռամբ*	*թռռանց*
կամն	*(կամին)*	*կամամբ*	***կամանց***
կառափն	*(կառափին)*	*կառափամբ*	*կառափանց*
հարսն	*(հարսին)*	*հարսամբ*	*հարսանց*
մասն	*(մասին)*	*մասամբ*	*մասանց*
ողն	*(ողին)*	*ողամբ*	*ողանց*

Դործիական հոլովի հոգնակիակազմությունը ղեկավարվում է ալարզ կաղապարով. եզակի գործիականի ձև+ք: Գործիականի եզակին գրեթե միշտ մասնիկավոր է. ունի հոլովահիմք և հոլովական վերջավորություն: Սեռ.-տրականի բնակերտով հիմքը պահպանվում է գործիականի հիմքում. գետո-յ>գետո-վ, տիտանա-յ, տիտանա-ւ: Պահպանվում է նաև բնակերտ-հոլովակերտով ձևը՝ իբրև գործիականի հիմք, եթե ի բնակերտ-հոլովակերտով է (համմտ. սրտի-ւ), իբրև գործիականի ձև, եթե ու բնակերտ-հոլովակերտով է (համմտ. ծովու-):

Ներքին թեքումով, ձայնդարձով սեռ.-տրականի ձևը ձևաբանո-

բեն վերաարժեքավորվում է իրրև գործիականի հիմք՝ հերթագայող ձայնավորական տարրի ձգումով, պահպանումով, կամ նորի հանդես գալով. դաստր>դաստր-ք, աստեղ>աստեղ-ք, բայց՝ հարսին>>հարսամ-ք։ Վերջին դեպքում հիմքային վերակազմավորումը ուղեկցվում է հնչյունական այլ փոփոխությամբ՝ ն>մ առնմանական անցումով ք վերջավորությունից առաջ. ձկան>՝*ձկան-ք>ձկամբ։*

Ինչպես նկատելի է, ներքին թեքումը (կամ պարզապես ձայնդարձային ձևը) մաքուր տեսքով հոլովառարբերիչ միջոց է միայն եզակի սեռ-տրականում, գործիականի և այլ հոլովների կազմավորումներում նա միայն հիմքակազմության միջոցներից մեկն է, առանձին հոլովածև չի կազմում, սովորաբար զուգակցվում է մասնիկավորմամբ (բացառական և ներգոյական հոլովակազմություններում այս միջոցներին ավելանում է նաև օժանդակ բառի՝ նախդիրի գործածությունը). օր. աղեղն>աղեղան>աղեղամ-ք, ատամն>ատաման>ատամամ-ք, կայսր>կայսեր>կայսեր-ք, մատն>մատիճ>մատամ-ք, հայր>հաւր>հար-ք։

Հոգնակի գործիականը զարգացրել է կցական կառուցածև. ի միայն այստեղ ունենք հոգնակիակազմության և հոլովակազմության բաշխում, հոլովական հիմքն ու հոլովական վերջավորությունը այլ են, հոգնակիակազմ հիմքն ու հոգնակերտ վերջավորությունը՝ այլ։ Սրա (և կառուցվածքային մի քանի այլ երևույթների) առկայությունը ցույց է տալիս, որ կցական տիպոլոգիան ինչ-որ չափով ներխուժել է գրաբարի համակարգը։ Այս միաժամանակ նշանակում է, թե գործիական հոլովը հոգնակիակազմության իր տիպով իխտա տարբերվում է հոգնակի հարացույցի մյուս անդամներից։ Բացի այդ, ինչպես տեսանք, այլ հոլովների հոգնակիակազմության մեջ եզակի համապատասխան ձևը կարող է ենթարկվել հնչյունաբանական, կամ ձևաբանական արժեք ունեցող, վերակազմավորումների, մինչդեռ գործիականի հոգնակիակազմ հիմքը ազատ է այդպիսի վերակազմավորումներից, այն պարզապես եզակի գործիականի ձևն է։

Եվ այսպես առկա է եզակի գործիականի ձև+ի>հոգնակի գործիական կազապարը. տիտանաւ>տիտանաւ-ք, ձկամբ>ձկամբ-ք, հարցմամբ>հարցմամբ-ք, կորեամբ>կորեամբ-ք, դաստերբ>դրստերբ-ք, աստեղբ>աստեղբ-ք, աղերբ>աղերբ-ք (աղերաւ>>աղերաւ-ք), սրտիւ>սրտիւ-ք, գործով>գործով-ք, ծովու>ծովու-ք, բարձամբ>բարձամբ-ք, աւուրբ>աւուրբ-ք, աշակերտաւ>աշակերտաւ-ք, անձամբ>անձամբ-ք, մատամբ>մատամբ-ք, պատանեաւ>պատանեաւ-ք, արամբ>արամբ-ք, տերամբ>տերամբ-ք, հարբ>հարբ-ք, (հարամբ>հարամբ-ք), մարբ>մարբ-ք, եղբարբ>

>եղբարբ-ք, քերբ>քերբ-ք, կանամբ>կանամբ-ք, տիկնամբ>
>տիկնամբ-ք, դիւղիւ>դիւղի-ր։

Բացառական և ներգոյական հոլովները եզակի և հոգնակի ձևերի կազմության յուրահատկություններով առանձնանում են գրաբարի հոլովական հարացույցում։ Եզակի բացառականն առանձին հոլովաձևի (եզակի սեռ.-տրական) կամ անկախաբար չգործածվող մասնիկավոր ձևի և ի նախդիրի (նախահար) զուգորդմամբ վերլուծական ձև է, իբրև այդպիսին հոգնակիակազմության չի մասնակցում, ուստի այն չենք ներգրավում մեր դիտարկումների մեջ։ Պետք է նկատի ունենալ, որ հին հայերենը բացառական հոլովի մասնիկավոր ձև չի զարգացրել նաև հոգնակիում։ Այստեղ ունենք, մի կողմից, ի նախդիրի, մյուս կողմից, հոգնակի սեռ.-տրական հոլովաձևի զուգորդություն, այն էլ բոլոր բառերի հոգնակի բացառականի ձևավորման համար։

Պետք է ուշադրություն դարձնել նաև հետևյալի վրա։ Եթե գետոց ձևի մեջ ց հոգնակերտ-հոլովակերտով արտահայտված է և՛ հոլովի, և՛ հոգնակիի իմաստներ, ապա ի գետոց բացառականի մեջ ց-ի հոլովակերտ իմաստավորումը մթագնած է. բացառականի հոլովական-տարածական իմաստը ձևավորվում է ի նախդիրի և գետոց բառաձևի հարադրությամբ։ Ի նախդիրը որևէ դեր չունի հոգնակիի քերականական իմաստի արտահայտման մեջ. նա ունի սոսկ տարածական հարաբերության իմաստ (հմմտ. նաև՝ ի գետ, ի գետս). հոգնակիի իմաստը տրված է գետոց բառաձևում՝ շնորհիվ ց հոգնակերտի նշված բաղադրության մեջ գետոց բաղադրիչը թեև ձևով համընկնում է հոգնակի սեռ.-տրականի հետ, բայց լիովին չնշոք է վերջինիս իմաստի (ֆունկցիայի) նկատմամբ։ Ց-ն ինքնին ի գետոց բաղադրության մեջ բացառական հոլովի ցուցիչ չէ։ Մենք արդեն ասացինք, թե այստեղ հոլովական իմաստը ինչով է արտահայտված, ևս բոլորից հետևում է, թե ի գետոց ձևում գործ ունենք գետոց հոգն. սեռ.-տրականի ձևաբանական վերաարժեքավորման հետ։

Աշխարհաբարի ոչ-համակարգային կառուցվածքներում ևս ունենք նման վերակազմավորումներ, բայց նաև մասնիկավոր (համադրական) ձևերում. հմմտ. մերոնք>մերոնց, բայց՝ մերոնց-իցս։ Այստեղ մերոնց և մերոնց- ձևով նույնն են, սակայն ֆունկցիայով համարժեք չեն. սեռ.-տրականում -ոնց հոլովակերտ-հոգնակերտ է, բացառականում (մեր–ոնց–իցս) նա արդեն չնշոք է հոլովական իմաստի նկատմամբ, միայն հոգնակերտի ֆունկցիա է վարում, հոլովական իմաստը արտահայտելու դերը ստանձնում է իցս բացառականակերտը։

Այս բոլորից հետո դժվար չէ նկատել, որ այն, ինչ պիտի ասենք բացատրականի հոգնակիությունազմության մասին, արդեն ասվել է հոգնակի սեռ.-տրականի կապակցությամբ։

Եզակի ներգոյականը նույնպես չի մասնակցում հոգնակիացմությանը. նա էլ տիպիկ վերլուծական կազմավորում է՝ եզակի սեռ.-տրականի և ի նախդիրի (նախահար) հարադրություն։ Սրա հոգնակին հարադրություն է նույն նախդիրի և այնպիսի բառաձևի, որը կառուցվածքով (ոչ ծագումնաբանորեն) համընկնում է հոգնակի հայցականի անորոշ ձևին. ի գետս, ի սիրտս, ի գործս և այլն։

Քննելով եզակի հոլովաձևերի հոգնակիացմությունը՝ նկատում ենք հետևյալը։ Հոգնակի հարացույցի յուրաքանչյուր անդամ եզակի հարացույցի համապատասխան անդամին հակադրվում է թվի քերականական իմաստով և որոշակի կազմությամբ, կառուցաձևով, իսկ իր հարացույցի մյուս անդամներին հակադրվում է հոլովական իմաստով և որոշակի կառուցվածքով։ Կառուցվածքային վերջին հակադրությունը կարող է արտահայտվել վերջավորություններով (ուղղական—հայցական), կամ և՛ հիմքով, և՛ վերջավորությամբ (ուղղականն ու հայցականը մի կողմից, սեռ.-տրականը՝ մյուս կողմից, ինչպես և միայն հիմքերով (ուղղական—գործիական)։ Սակայն գործիականի դիրքը հարացույցի մյուս անդամների նկատմամբ բոլորովին այլ է. նա նրանց հակադրվում է ընդհանրապես հոգնակիացմության և հոլովականության բաշխվածությամբ (ունի առանձին հոգնակերտ, առանձին հոլովական վերջավորություն), իսկ հարացույցի մնացած անդամների կառուցվածքում հոգնակիացմությունը և հոլովականությունը համատեղում են (երկուսի համար ունեն միևնույն հիմքը և միևնույն վերջավորությունը)։ Եթե այդ այդպես է, ապա վերը առաջարկած մեր ձևակերպման վրա պետք է ճշգրտում մտցնել. հոգնակի գործիականը հոգնակի ուղղականին հակադրվում է և՛ հիմքով, և՛ հոգնակերտի ֆունկցիայով (ի-ն ուղղականում հոգնակերտ-հոլովակերտ է, գործիականում միայն հոգնակերտ)։

Ինչպես նշեցինք, հնագույն հայերենի շրջանից սկսած բառահիմքը մասնիկազերծ լինելով՝ դուրս էր ցայտում իրեն տվյալ բառի հիմնական ձև, եւ այդ ձևը։ Այս պրոցեսը շարունակվել, բայց դեռևս չէր ավարտվել հին հայերենում։ Բառավերջի որոշակի դիրքում ձայնավորում ունեցող ձայնորդը և բնակերտը ձևաբանական վերակազմավորումների հետևանքով աստիճանաբար դադարում են հիմքավերջի տարր գիտակցվելուց և հարում են ավելացող մասնիկներին (և՛ հոլովական, և՛ հոգնակերտ վերջավորություններին)։ Նշակի գործիականում բնակերտը վերակազմավորվելով հոլովակերտի հետ՝ դա-

դարից հիմքակազմ տարր դիտակցվելուց, հանդեցրնց հոլովական նոր վերջավորության գոյացմանը։ Այսպես և՝ հոգնակի ուղղական և սեռական-տրական հոլովաձևերի վերակազմավորված հիմքավերջը (վերջնահանգը), ինչպես և սեռ.-տրականի բնակերտը նոր վերակազմավորմամբ ձուլվում են ավելացող հոգնակերտին՝ առաջ բերելով նոր հոգնակերտներ։ Այս եղանակով են առաջացել **անք, իմք, ութք, ոնք, անց, ունց, աց, ոց, ից, ուց վերջավորությունները** *հոգրաբարյան հայերենում (ընդ որում և բարբառներում)։ Բայց նման մասնիկները, որոնք նույն ծագումն ունեն և նոր հայերենում բավականաչափ շատ են, ավելի հաճախական դործածություն ունեն իբրև բառակազմական ածանցներ։*

Ընդհանրապես պետք է նկատել, որ ուղղականը և հայցականը վերջնահանգի ձևաբանական վերակազմավորումները գրեթե իրենց ավարտին են հասցրել մինչև V դարը։ Հետագա շրջանում փոփոխությունները ընդգրկել են բաղաձայն+(ը)ն կաղապարն ունեցող վերջնահանգերը, որոնք էական վերակազմավորումներ են ունեցել և նոր հայերենում, մասամբ հիմքակազմության մեջ, մի քանի բառերի հոգնակիակազմ հիմքերում ևս, իրենց զգալ են տալիս։

Գ) Ոչ-համակարգային հոգնակիակազմություններ. տարակազմ ձևեր, շեղումներ։ *Այսպես կոչում ենք կառուցածևերը, երբ տվյալ հոգնակին շեղվում է հոգնակիակազմության նորմայից կա՛մ հիմքակազմությամբ, կա՛մ դրաբարի համար ոչ սովորական հոգնակերտի հետ ունեցած զուգորդումով։ Վերը մենք խոսեցինք այն մասին, թե նոգակի հոլովաձևը ինչ օրինաչափությամբ է դառնում հոգնակիակազմ հիմք։ Ընդ որում ուղղական (և սեռ.-տրական) կառուցածևերի համար նշեցինք հիմքակազմության երկու հիմնական կաղապար՝ ա) հոգնակի ուղղականի հիմքը համապատասխան եզակի ձևն է, բ) հոգնակի ուղղականի հիմքը համապատասխան եզակի ձևի վերակազմավորված տարբերակն է։ Կազմավորման այս երկու տիպերի համար առանձնացրինք բառերի քերականական որոշակի խմբեր, թե որը ո՛ր կաղապարին է հետևում։ Բայց կան բառեր, որոնք հոգնակիակազմության (ընդ որում և հիմքակազմության) որոշակի, օրինաչափ կառուցատիպ չունեն, մեկ հետևում են առաջին կաղապարին, մեկ երկրորդին, լինում են նաև խառը կազմավորումներ։*

Մենք նաև տեսանք, որ բառերի վերջնահանգը մեծ մասամբ ձևաբանական վերակազմավորումների նկատմամբ չեզոք է, չունի համապատասխան կաղապար, սակայն այդպիսի վերջնահանգով մի շարք բառեր ունեն վերակազմավորումներ հոգնակիակազմ հիմքում։ Կան բառեր էլ, որոնք լինելով ձայնորդահանգ՝ պետք է

հետևեին որոշակի վերակազմավորումների, սակայն հարացուցային ձևերում նկատվում են տարակազմություններով, շեղումներով։ Մտորև անդրադառնալով անկանոն ձևերին՝ մենք հիմնականում դիտարկում ենք այն բառերի հոգնակիակազմությունը, որոնք գործածությամբ շատ թե քիչ հաճախական են գրաբարում։ Նախ այն տարակազմություններին մասին, որոնք շեղվում են հիմքակազմությամբ։

1. Եզակի ուղղականում այ-ը վերջնահանգ ունեցող հայր, մայր, եղբայր (ընդ որում և՝ այր) բառերի հոգնակիակազմ հիմքում առկա է այ>ա փոփոխություն. օր. այր>ար-ք, (բայց համմտ. ծայր>ծայր-ք)։ Այր բառի հոգնակի սեռ.-տրականը հնչյունաբանորեն և ձևաբանորեն վերակազմավորված է. առն>արան-ց (ն>ր անցում, ն ձայնորդի ա ձայնավորում առանալը)։ Հայր բառի հոգնակի ուղղականը, հայցականը և սեռ.-տրականը կառուցաձևով հիմքային ընդհանրություն ունեն, իրար հակադրվում են միայն վերջավորությամբ՝ հար-ք, (ղ) հար-ս, հար-ց։ Սեռ.-տրականը և ներբ-ի գործիականը ունեն նաև երկրորդ ձև՝ հարան-ց, հարամբ-ք (ան հիմքակազմ տարրի ներմուծումով, ըստ երևույթին եռնաբար ստեղծված)։ Հոգնակի ուղղականում, հայցականում, սեռ.-տրականում ընդհանրական հիմքեր ունեն նաև մայր, եղբայր բառերը (առանց երկրորդ ձևի սեռական-տրականում)։ Գործիականի հոգնակիակազմ հիմքը բոլորի համար օրինաչափորեն եղակի ձևն է, հայցականինը՝ հոգնակի ուղղականի հիմքը։

2. Քույր բառի հոգնակիակազմ հիմքում ևս ունենք երկբարբառայնության վերացում՝ ույ>ո անցումով. քույր>քոր-ք. սեռ.-տրականի հոգնակիակազմ հիմքը նույնն է եզակի գործիականի հիմքի հետ՝ ſեր-ք>ſեր-ց. հայցականինը օրինաչափորեն հոգնակի ուղղականի հիմքն է, գործիականինը՝ եզակի գործիականի ձևը (քերբ>քերբ-ք)։

3. Տէր (<*տի-այր) գոյականը հոգնակիակազմությամբ և հոլովակազմությամբ հետևում է իր սաուգաբանական վերջնաբաղադրիչին՝ այր-ին. տէր>տեարք (համմտ. այր>արք). հոգնակի սեռ.-տրականում ունի երկրորդ ձև՝ սեարց։

4. Կին բառը շատ հնատիպ հոգնակիակազմություն ունի։ Եզակի ձևը հոգնակիակազմ հիմք դառնալիս՝ ենթարկվում է ուժեղ վերակազմավորումների. ուղղական կին>կան—այ—ſ (կանայք). ընդ որում այ-ը հիմքակազմ տարր էր գիտակցվում գրաբարի շրջանում։ Նոր հայերենում այդ տարրը ձևաբանորեն վերակազմավորվելով անցել է հոգնակերտին. օր. արևելահայ գրականում՝ կան-այ՛ և ոչ կանայ-ſ։ Սեռ.-տրականի հոգնակիակազմ հիմքը կան- ձևույթի և

-ան- (կամ -ա-) ձևաբանական տարրի միակցություն է՝ կան-ան-ց (կան-ա-ց)։ Հայցականի հիմքը նույնն է ուղղականի հիմքի հետ՝ (ղ)կանայ-ս, գործիականինը՝ եզակի ձևի հետ (կանամբ-ք, եզակին ունի երկրորդ ձև)։ Տիկին բառը, մասնակի շեղումներով, հետևում է իր սաուգաբանական վերջնաբաղադրիչի հոգնակիակազմությանը. տիկին (<տի-կին)>տիկնայ-ք (համմտ. կին>կանայ-ք). այստեղ կան- ձևույթի փոխարեն հանդես է գալիս նրա -կն- տարբերակը՝ տի-կն-այ-ք (տիկնայք)։ Տիկնայ- հոգնակիակազմ հիմքը ընդհանուր է ուղղականում, սեռ.-տրականում և հայցականում. տիկնայ-ք, տիկնայ-ց, (ց)տիկնայ-ս։ Համմտ. նաև՝ աղախն-այ-ք։

5. Պիւղ բառի ուղղականի հոգնակիակազմ հիմքը եզակի ուղղականի ձևն է, որ և ընդհանուր է հոգնակի հայցականի կառուցածևվում (գիւղ-ք, գիւղ-ս), հոգնակի սեռ.-տրականում այս հիմքը վերակազմավորվում է ի բնակերտով՝ գիւղի-ց (համմտ. եզ. գործիականի հիմքը), որ չի համընկնում եզ. սեռ.-տրականի հետ։ Գործիականը հոգնակիակազմությամբ կանոնավոր է։

6. Քար բառի եզակի ուղղականի ձևում վերջնահանգը իր բնույթով չեզոք է որևէ վերակազմավորվող կազապարի նկատմամբ, սակայն նա ուղղականի հոգնակիակազմ հիմքում հետևում է իևով վերակազմավորվողներին, այսինքն՝ բաղաձայն+(ր)ն վերջնահանգն ունեցողներին. քար>քարիև-ք, Սեռ.-տրականի հիմքում առկա է իև>ան անցում (ի—ա հերթագայությամբ՝ քարիև-ք քարան-ց)։ Գործիականի հոգնակիակազմ հիմքն ըստ էության նմանաբանական կազմավորում է (քարամբ-ք), քանի որ նրա եզակին ի բնակերտով է (եզ. սեռ.-տրական՝ քարի, գործ. քարի-ս)։

7. Աւր բառի հոգնակիակազմ հիմքը (նաև թևք հոլովումներում) ու-ով ընդհանրական վերակազմավորում ունի. աւուր-ք, աւուր-ց, (ց)աւուր-ս։ Աւր ձևն առկա է միայն եզակի ուղղականում։ Գործիականի հոգնակիակազմությունը կանոնավոր է։

8. Եզակի ուղղական պատեհազմ ձևի վերջնահանգը իր տիպով պետք է որ հիմքային վերակազմավորումների նկատմամբ չեզոք լիներ, բայց այդպես չէ, թևք ձևերում ունի ի—ա բնակերտներով հիմքակազմություն, սակայն հոգնակի ուղղականում (և հայցականում) հիմքը վերակազմավորված է ուն-ով՝ պատեհազմուն-ք. համմտ. եպիսկոպոս>եպիսկոպոսուն-ք, եպիսկոպոսա-ց, (բայց՝ եպիսկոպոսք>եպիսկոպոսից)։ Այս տեսանկյունից ուշագրավ է նաև պառաւ, երէց բառերի հոգնակիակազմությունը ևս. հոգնակի ուղղ. պառաւուն-ք, երիցուն-ք, սեռ.-տրականում ու—ա հերթագայությամբ՝ պառաւան-ց, երիցան-ց (նաև երիցուն-ց)։ Երէց բառի գործիականի հոգնակիակազմ հիմքն ըստ էության նմանաբանա-

կան կազմություն ունի՝ եղ. դործ. երիցու, հոգն. գործ. երիցամբ-ը։ Համմտ. նաև մկան>մկանուն-ք, մկանան-ց։

9. Ձևոն բառի վերջնահանգի բնույթից ելնելով՝ հնարավոր է կարծել, թե այն պետք է հետևեր բաղաձայն+(ը)ն կազապարին ունեցողներին, բայց հոգնակի ուղղականում ն-ք անկառամով ունենք ձեռ- հիմքը (ձեռ-ք)։ Սեռ.-տրականում սպասելի էր վերակազմավորում (ի—ա հերթագայությամբ)՝ ձեռին—ձեռանց (համմտ. նաև եզ. գործիականի հիմքը՝ ձեռամ-ը), սակայն առկա է ա բնակերտ՝ ձեռա-ց։ Համմտ. ոտն>հոգն. ուղղ. ոտ-ք, հյգ. (ը)ոտ-ս, սեռ.-տր. ոտի-ց (եզակին՝ ոտին), դուռն>դուր-ք, դրա-ց (սրա երկրորդ ձևը կանոնավոր է՝ դուռն>դրուն-ք, դրան>դրան-ց)։

10. Եզակի ուղղականում բաղաձայն+(ը)ն վերջնահանգ ունեցող մի քանի բառեր (ասր, անասր, մեղր, ծաղր, թանձր, մանր, ծանր, կարծր, փոքր, քաղցր), որոնք ունեն շեղվող հոլովակազմություն նաև եզակի հարացույցում, հոգնակիակազմության մեջ ևս.ուրույն կառուցվածքներով են հանդես գալիս. առկա է հիմքավերջում (ը)r>ուն անցում՝ փոքր>փոքուն-ք. փոքուն- հիմքը պահպանվում է հայցականում՝ (ւ)փոքուն-ս, սեռ.-տրականում՝ փոքուն-ց. գործիականը շեղվում է հիմքակազմությամբ՝ փոքու>փոքումբ-ը։ Ասր բառը, որի հոգնակին այնքան էլ սովորական չէ, հարում է անհոգնականներին, հոգնակի սեռ.-տրականում կարող է ունենալ՝ ասուց‖ասրոց, հոգն. գործիականում՝ աս-երբք‖ասրովք։ Մեղր, ծաղր բուն էությամբ անհոգնական են. թանձր բառը հոգն. ուղղականում ունի նաև բանձրուճ‖բանձրոյճ տարբերակներ. կարծր բառը՝ նաև պարծնրճ։ Որոշ շեղումներով այս իմբին է հարում բարձր ածականը, որը հոգնակի սեռ.-տրականում վերակազմավորված է ու—ա հերթագայությամբ. բարձուն-ք>բարձան-ց, հոգն. գործ. բարձամբ-ք. ծուծ բառի եզակին, որ ունի նաև ծունկն‖ծունգն տարբերակներ, վերակազմավորվելով իբրև հոգնակիակազմ հիմք, ունի ծուծգ- տեսքը՝ ծուծգք, իսկ առտաւտր>հոգն. ուղղ. արտաւտու-ք, սեռ.-տրական՝ արտաւտուա-ց։

11. Իկ հանգող մի շարք բառերի հոգնակիակազմ հիմքը վերակազմավորված է ուն տարրով՝ աղջիկ>աղջկուն-ք, ծաղիկ>ծաղկուն-ք, խցիկ>խցկուն-ք, մասնիկ>մասնկուն-ք (նաև մասնիկ-ք). Համմտ. մանուկ>մանկուն-ք։ Սեռ.-տրականում ու—ա հերթագայությամբ ստացվում են՝ աղջկան-ց, ծաղկան-ց (նաև ս կամ ա բնակերտներով՝ ծաղկոց, ծաղկաց), խցկան-ց, մանկան-ց, բայց անդրանկան>անդրանկաց։

12. Եզակիում չեզոք վերջնահանգ ունի նաև խուրձ բառը, որը սակայն հետևում է բաղաձայն+(ը)ն վերջնահանգն ունեցողներից

(ը)—ու հերթագայությամբ վերակազմավորվողներին. խուրձ>>խրձուն-ք նմանատիպ է, որ այս բառի եզակի ուղղականի ձևը նախապես եղել է խուրձն, որից (ը)—ա հերթագայությամբ՝ եզ. սեռ.—տրակ. խրձան, հոգն. սեռ.-տրակ. խրձան-ց, ուղղականում ու-ով՝ խրձուն-ք Իսկ նույնպես չնչոք վերջնահանգով պաշտաւն բառը հետևում է -մ+(ը)ն վերջնահանդն ունեցողներին՝ պաշտ(մ)ան (<*պաշտամն)>պաշտամուն-ք

13. Մի քանի բառերի հոգնակիակազմ հիմքում, եզակի սեռ.-տրականի նման, ներմուծվում է ա տարրը. անուն>անուան-ք, ձեղուն>ձեղուան-ք, սեռ.-տրական՝ անուան-ց, ձեղուան-ց: Մասն բառն ունի սովորական մահիմ հոգնակին, բայց նաև՝ մահունք||մահուանք՝ վերջինիս մեջ ա տարրի ներմուծումով: Տուն, շուն բառերի ուղղականի հոգնակին սովորական է՝ տուներ, շուներ. քանի որ սրանց եզակի սեռ.-տրականը ներքին թեքումով կազմություն է (ու—ա հերթագայությամբ), իսկ հոգնակին եզակի սեռ.-տրականից է գոյանում, ապա հոգն. սեռ.-տր. ունենք շան-ց, տան-ց (շանց, տանց): Ստին բառը հոգնակի ուղղականում հետևում է նորմային, եզ. սեռ.-տր.-ում ներմուծվում է ա տարրը՝ ստեան, որից հոգն. սեռ.-տր. ստեանց: Կարծում են, թե շուն, տուն բառերն էլ նախապես սեռ.-տր.-ում ունեցել են շուան, տուան հետագայում ու-ի սղումով՝ շան, տան (շան-ց, տան-ց):

14. Ջor (հոգն. ուղղ. զօրք) բառը եզակի սեռ.-տրականում ունի ու բնակերտ-հոլովակերտ՝ զօրու, հոգն սեռ.-տրականում՝ ս բնակերտ. զօրա-ց. Համմտ. դարբին>դարբինք, բայց դարբնի>դարբնաց:

15. Ուրիշ վերջածանցով բառերը հոգնակի ուղղականի հիմքը կազմում են եզակի ուղղ.-ի ձևից՝ քաջություն>քաջութիւն-ք, վերջնածանցում ի—եա հերթագայությամբ կազմվում է եզ. սեռ.-տրականը՝ քաջութիւն—քաջութեան, որից էլ հոգնակի սեռ.-տրականի հիմքը՝ քաջութեան>քաջութենան-ց: Սրանց են հետևում իւն վերջնահանգով մի քանի բառեր. օր. կորիւն, անկիւն:

16. Ուստ, ուն, ուղ հանգող մի շարք բառեր, որոնց հոգնակի ուղղականի հիմքը եզակի ձևն է՝ ծնունդ>ծնունդ-ք, սնունդ>սնունդ-ք (նաև գալուստ, թաքուստ, կորուստ, փախուստ, ժողովուրդ, խորհուրդ), եզակի սեռ.-տրականում ունեն եան-ով վերակազմավորում՝ ծնունդ>ծննդեան, որից հոգն. սեռ.-տր. ծննդեան-ց: Համմտ. նաև՝ տեսիլ>տեսիլք, տեսլեան>տեսլեանց. այսպես և՝ ամիս բառը: Զևաբանական նույն տարրը կա նաև տիւ (հոգ. ուղղ. տիւք) բառի եզակի սեռ.-տրականի վերակազմավորման մեջ՝ տուընչեան, բայց սա հոգնակի ձև չունի: Ալեւր (ալիւր), աղբեւր (աղ-

բիւր), եղջեւր (եղջիւր), եղտեւր (եղտիւր) բառերի հոգնակիակազմ հիմքում տեղի է ունենում եւ—ե (իւ—ե) շրջում. ալեւր>ալեվր-ք. այս հիմքը տակա է նաև սեռ.-տր.-ում, հայցականում։

17. Կան բառեր, որոնց հոգնակիակազմ հիմքում սպասվելիք ու հերթագայվող տարրի փոխարեն տակա է ա. ակն—ականք «գոհարեղեն», կողմն—կողմանք (կողմունք), ջերմն—ջերմանք, սերմն—սերմանք (սերմունք, սերմանիք)։

18. Որոշ բառեր անկախ գործածութ֊յամբ հիմքային այլ կառուցածև ունեն, բարդութ֊յան վերջնաբաղադրիչ լինելիս՝ այլ, թեև դա պարտադիր չէ. անուն—անունք, բայց՝ քաջանուն—քաջանունք, անձն—անձինք, բայց՝ միանձն—միանձունք, ագն—ագինք, բայց՝ դիւցագն—դիւցազունք, բեռն—բեռինք, բայց՝ մեծաբեռն—մեծաբեռունք։ Համմտ. նաև՝ գրոյ—գրոց, բայց՝ մատենագրի—մատենագրաց, զինու—զինուց, բայց՝ ասպազինի—ասպազինաց. խօսիք, բայց՝ չարախօսաց (համմտ. ԱԱ, ԳՋ, 66)։

19. Եայ վերջնահանգն ունեցող մի շարք բառերի հոգնակիակազմ հիմքերը ընդհանուր են ուղղականում, սեռ.-տրականում և հայցականում. միջերկրեայ-ք, միջերկրեայ-ց, (զ)միջերկրեայ-ս, հայաստանեայ-ք, հայաստանեայ-ց, (զ)հայաստանեայ-ս և այլն։

20. Նկատելի են նաև այլ կարգի շեղումներ, անկանոնութ֊յուններ, անսովոր ձևեր։ Այսպես՝ հոգնակի հայցականի ս հոգնակերտ-հոլովակերտի փոխարեն՝ ի, երբ պետք է այդ ս-ին հաջորդեր մի ս հոդ. օր. զհաւատացեալքս (ըստ ԽԿ, ՀԽԵ, 106), կամ դեռևս վիպասանական պատառիկներից մեկում զմէջ, փոխանակ՝ զմէջս, նույն հոլովում՝ տեղսն, փոխանակ սովորական տեղիսն (ԱԱ, ԳՋ, 296)· և այլն։

21. Ոչ-համակարգային կազմավորումների մեջ ուրույն տեղ ունեն այն հոգնակի ձևերը, որոնք զուգորդվում են գրաբարի համար ոչ լայն բնդգրկումներ ունեցող հոգնակերտների, մասնավորապես հավաքական հոգնակիներ կերտող մասնիկների հետ. իկ, ան, անի, եան, եար||եր, ակած, ենար, որայ||որեայ, տի||ոտի և այլն (համմտ. մարդիկ, ձիան, աղօխանի, գրեան, վանեար, գրաստական, բարձկնեար, արտորայ, փորոտի). ոմանք առանձնացնում են նաև՝ այ||եայ, ամբ, իբ||իբ, ոյբ, ուճ, էբ, օրէբ, օճ «մասնիկներով» զուգորդումներ։

Դ) Անեզականների և հավաքականների կազմությունը. հատուկ անուների հոգնակին: *Այստեղ դիտարկում ենք հիմնականում անեզականները, ընդ որում նաև անեզականներից նրանք, որոնք հավաքական իմաստ ունեն։ Գրաբարում անեզական-հավաքականները, բացի այն հատկանիշից, որ եզակի համապատասխան ձևեր*

չունեն, կառուցվածքային այլ բնորոշ դժով չեն առանձնանում։ Առհասարակ բոլոր անեզականները կազմվում են հիմք + f կազապարով. բայց այդ f-ն որոշակի ֆունկցիոնալ արժեք է ստանում հիմքի վերջնահանգի հետ վերակազմավորվելով։ Արդյունքն այն է լինում, որ գոյանում է նոր մասնիկ։ Ըստ Հ. Աճառյանի՝ բայահիմքով կազմվածների մեջ անճ բաղադրությունից հոգնակիի յուցիչն է f. ան-ը վերջնահանգինն է, որին ձուլվել է անճ բաղադրության մասը. սքանչ-ան-ալ>սքանչանք. գաւանանք, խոստովանանք նոին կազմություններ են (ՀԱ, ԼՔՀԼ, III, 858)։

Որոշ կազմավորումներում f հոգնակերտը հատկանիշի գազափարը վերածում է վերացական հատկացության։ Սովորաբար այդպիսի կառուցածև գոյանում է ածականական հիմք + f կամ դերբայ + f կազապարով, օրինակ, անուռոչ դերբայ + ի + f, մանավանդ ի հիմքավերջ ստեղծվելու դեպքում. սրանց մեջ կան ոչ դերբայական մասնիկի իմաստով հնագույն կազմավորումներ՝ հոտոտելիք, տեսանելիք, շոշափելիք, ինչպես և ած դերբայական մասնիկի իմաստով՝ սքանչելիք, զարմանալիք (այն, որի վրա պետք է սքանչանալ, զարմանալ. տե՛ս ՀԱ, ԼՔՀԼ, III, 856), ապառնի դերբայի իմաստ ունեցողներ՝ ագանելիք, արբելիք, ծխանելիք, կատարելիք (տե՛ս նույնը, էջ 863)։

Հ. Աճառյանը անեզականների առանձին խումբ է համարում գրաբարյան այն ձևերը, որոնք «անկանոն» կազմություն ունեն, ինչպես՝ արմտիք, արտեւանունք, արտօրայք, դեղօրայք, երիկամունք, իշանք, իշեարք, կախարդանք, ձուանք, ոսկերոտիք, սերմանիք, վաներայք||վանօրայք (և. տ. 863—864)։

Որոշ անեզականներ ունեն անճ բաղադրյալ մասնիկով (ան–f) կազմություն. աղաչանք, բաղձանք, զարդարանք, զարմանք, լլկանք, կալանք, հալածանք, հանգամանք, հոսանք, մեծարանք, յանցանք, յարգանք, պատրանք, պարսաւանք, պերճանք։ Սրանց սեռ.-տրականի հիմքը ա բնակերտով է՝ աղաչանա-ց (հմմտ. ԱՒ, ԳՁ, 48—49)։

Մի շարք անեզականներ, բացի ուղղականից և հայցականից, մնացած ձևերում ունեն ա բնակերտով հիմքի և հոգնակերտի զուգորդում. ուղղականում և հայցականում՝ բառահիմք + f, սեռ.-տրականում՝ ա բնակերտով հիմք + ց, գործիականում՝ ա բնակերտով հիմք + հոլովակերտ + f. Մոկք—Մոկաց—(ղ)Մոկս—Մոկաւք. այսպես և՝ Ալանք, Գամիրք, Գուգարք, Ծոփք, Մարք, Միջագետք, Վիրք, Տաշիրք, Քուշանք են. հմմտ. նաև՝ արտասուք, խելք, կամք, կառք, կեանք, միտք, փառք բառերի նման կազմավորումները։ Որոշ վերակազմավորումներով սրանց են հետևում նաև՝ անդրա-

վարտիք, արգասիք, բաղանիք, նրախտիք, ընթրիք, ժանիք, կարիք, կարծիք, կեղծիք, հարսանիք. սեռ.-տրականում՝ արգասեաց, հարսանեաց են։

Մի շարք բառեր (ագոյ՝ անէծք, առանց, ասք, արևելք, արևմուտք, գնացք, խօսք, կուրծք, հաղրք, հմայք, ցնորք, Աղուանք, Կասպք, Պարսք են) ունեն նույն կաղապարը, բայց ի բնակերտով, իսկ դժողք, կոչունք, կուռք, հունձք, պահք, տիք, Հայք, Հոռոմք, Վայք, Տայք բառերը՝ ո բնակերտով, աղունք, բարք, պարտք, վարք բառերը՝ ու բնակերտով։

Հայերենի անեզականների վերաբերյալ մի ուշագրավ հոդված ունի Մ. Աստուրյանը։ Նա այդ հոդվածում գրաբարյան անեզականները դիտում է իբրև ածանցավոր ձևեր, f-ի կամ դրանով բազադրված ածանցավոր ձևեր։ Կառուցվածքային առումով դրանք խմբավորված են այսպես. 1. բայաբուն+անf (անարգանք), 2. բայաբուն+f (կամք, խօսք, հանք), 3. ի հանգող ապառնի դերբայ+f (արբեւիք), 4. ածական+ք (արժանիք, հաճոյք), 5. գոյական, ածական, բայարմատ +իf (կարծիք, նրախտիք, արգասիք). 6. բայաբուն+իճf (նախատինք), 7. ուճf-ով կազմավորումներ (բարձունք, մասունք)։

Բացի f-ով որոշ կազմավորումների հավաքական իմաստավորումներից, գրաբարում կային մասնիկներ, որոնք հավաքական արժեք ունեին, և դրանցով կազմված ձևերը ունեին նաև «եզակի» հոլովման հատկություն. ական (զօրական, գուսանական), իկ (մարդիկ, շանթիկ), եար (որեար, վանեար, քանեար), տի (մանկտի, ծակտի), աճի (աւազանի, ազատանի, գլխանի, երիցանի, նամականի, վնասանի), եան (խոզեան, գրեան, նախաբարեան, ղօրագլխեան, թղթեան, բերդեան, իշեան), ոտայ (վանորայ, արտորայ)։

Սակայն այստեղ անհրաժեշտ ենք գտնում անել մի փոքրիկ դիտողություն։ Ինչպես նշեցինք, այն կարծիքն է տարածված, թե գրաբարի հավաքականները, հիմնականում եզակի ձևով են հոլովվում։ Մինչդեռ այս ըմբռնումն այլ կերպ պետք է ձևակերպել։ Անկասկած այստեղ մի ճշմարտություն կա, որ հավաքական կազմավորումները չեն հետևում գրաբարյան հոգնակիահազմության տիպոլոգիային, բայց նրանք եզականաբար էլ չեն հոլովվում։ Նրանց առանձնահատկությունն այն է, որ հիմնականում հետևում են կցական կառուցաձևի, եիմf+հոգնակերտ+հոլովակերտ կաղապարին՝ թեք հոլովաձևերում. համմտ. մանկտի>մանկ-աւ-ոյ, որ-եան որ-են-ոյ, որ-եար որ-եր-ոյ են։

Հատուկ անուններն ընդհանրապես անհոգնական են։ Սակայն

լինում են հատուկ-անեզականներ ևս, որոնք միայն հոգնակի ձևով են հաստատված. օրինակ, աշխարհագրական մի շարք անուններ: երբեմն հատուկ անունը որոշակի իմաստավորմամբ կազմում է հոգնակի, որպիսին գործածական էր նաև գրաբարում. Ահա թե ինչ է ասում այս մասին Հ. Աճառյանը. «Հատուկ անունների հոգնակին անգործածական է. բայց գրաբարում կան սակավաթիվ օրինակներ, ինչ. Յուդայք Սիմոնից և այլն (Զալէմեան, էջ 25 ծան.), ավելի սովորական է ամբ, եանք վերջավորությամբ. ինչ. Ներսիսեանք, -եանց. Վարդանանք, -նանց, -նամբք և այլն», (ՀԱ, ԼՔՀԼ, III, 425)։

Ե) Հնչյունաբանական վերակազմավորումներ հոգնակիակազմ հիմքում: *Գրաբարում հոգնակիակազմ հիմքը եզակի ձևն է կամ նրա հնչյունաբանորեն-ձևաբանորեն վերակազմավորված տարբերակը: Այսպես՝ եզակի ուղղականում ունենք ծուռ. սրա հոգնակի ուղղականը կազմվում է եզակի ձևի վերակազմավորումով ըստեղծված հիմքի՝ ծուռգ- և f հոգնակերտի զուգորդումով, այն է՝ ծուռգf, ավելի հիշտ՝ ծուռ եզակիի մյուս տարբերակից՝ ծուռգ(ն):*

Հաշվի առնելով զուտ հնչյունաբանական և հնչյունաբանական-ձևաբանական (ձևա-հնչույթաբանական) առանձնահատկությունները հիմքերի զուգորդումների մեջ, կարելի է տարբերել՝ **շեշտակիր և անշեշտ, ճնշյունափոխ և անճնշյունափոխ, ձևա-հնչույթաբանորեն վերակազմավորված և չվերակազմավորված հիմքատարբերակներ:**

Բոլոր այն դեպքերում, երբ հոգնակիի հիմքը եզակի անփոփոխ ձևն է (առանց հնչյունափոխական կամ ձևաբանական վերակազմավորման), հիմքը շեշտակիր է, քանի որ հոգնակի բառաձևի վանկաքանակությունը նույնն է եզակի ձևի համեմատությամբ. իսկ դա պայմանավորված է նրանով, որ գրաբարի հոգնակերտ-հոլովակերտը սովորաբար բաղաձայնական տարր է (f, u, g), *որ չի խախտում բառաձևի վանկաքանակությունը, երբ ավելանում է հոգնակիակազմ հիմքին: Այսպիսի դեպքերում այդ բառաձևի ոլորտում շեշտի տեղափոխություն չի կատարվում, և հիմքը մնում է շեշտված: Այսպես՝ գե՛տ—գե՛տք, (զ)գե՛տս, գետո՛յ—գետո՛ց, գետ՛վ—գետո՛վք, ձկա՛ն—ձկա՛նց, աստե՛ղ—աստե՛ղց, ձկա՛մբ—ձկա՛մբք, աստե՛ղբ—աստե՛ղբք և այլն:*

Բոլոր այն դեպքերում, երբ հոգնակիի հիմքը եզակի ձևի հնչյունափոխությամբ կամ ձևաբանորեն վերակազմավորված այնպիսի տարբերակ է, որտեղ խախտված է վանկաքակություն, կամ հոգնակերտն ունի ձայնավորում, շեշտն անցնում է նոր վանկի կամ հոգնակերտով արտահայտված վանկին: Նման դեպքերում

ունենք շեշտակիր կամ այլ վանկային շեշտավորումով հիմքատարբերակ. իսկ եթե շեշտը հոգնակերտ-հոլովակերտին է անցել, առկա է անշեշտ հիմքատարբերակ. օր. մա՛րդ>մարդ-ի՛կ, մա-նո՛ւկ>մանկ-տի՛, աւա՛զ>աւազ-անի՛. կայսե՛ր>կայսեր-ա՛ց, մատո(ը)ն>մատո՛ւն-ք, ա՛նձ(ր)ն>անձի՛ն-ք, (զ)ա՛նձ(ր)ն>(զ)անձի՛ն-ս, (զ)մա՛տ(ը)ն>(զ)մատո՛ւն-ս:

Դժվար չէ նկատել, որ հին հայերենի հոգնակիակազմ հիմքերը գերազանցապես շեշտված են: Եթե հիմքի վերակազմավորման հետ կապված շեշտի տեղաշարժ էլ է լինում, այնուամենայնիվ նա մնում է հիմքային ոլորտում: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ հոգնակերտն ունի ձայնավորում, նրա ավելացմամբ շեշտը հիմքից անցնում է հոգնակերտին: Իսկ գրաբարում առնվազն այդ լինում է ոչ-համակարգային կազմավորումներում:

Հնչյունափոխ հոգնակիակազմ հիմքեր գրաբարում համեմատաբար քիչ են հանդիպում: Նախ ոչ բոլոր ձայնավորներն են շեշտի հետ կապված հնչյունափոխության ենթարկվում, և, որ ավելի կարևոր է, հիմքերը սովորաբար զուգորդվում են բաղաձայնակազմ հոգնակերտների հետ, վանկաքանակությունը չի խախտվում, շեշտադրկություն էլ տեղի չի ունենում: Բնականաբար հնչյունափոխության համար նպաստավոր պայմաններ են առեղծում հիմքերի ձևաբանական-հնչյունաբանական այն վերակազմավորումները, երբ հիմքի վանկաքանակությունը խախտվում է, շեշտը տեղաշարժ է կատարում հիմքի սահմաններում, շեշտադրուկ տարբրը ենթարկվում է փոփոխության: Այս հանգամանքներում տեղի է ունենում ու>ը, ի>ը, եա>ե և նման հնչյունական անցումներ: Ով այսպես՝

Ու>Ը. ձո՛ւկ(ը)ն>ձ(ր)կո՛ւնք
Ի>Ը. ծի՛ն>ծ(ը)նո՛ւնք
ԵԱ>Ե. լեա՛ռն>լերի՛նք:

Մենք այստեղ կանգ չենք առնի շեշտի հետ կապ չունեցող ձայնավորական այն հերթագայություններին վրա, որոնք ձևաբանական (նաև հիմքակազմ) նշանակություն, արժեք ունեն, և որոնց զանազան աուիթներով անդրադարձել ենք օր. այ>ա (հայր—հարք), է>եա (տէր—տեառ), ոյ>ո (քոյր—քորք), եւ>ե (աւետ—աւերք), (ը)>ի (հարան—հարսին) և այլն:

Այլ հնչյունափոխություններից կարելի է նշել, օրինակ, ո—ր (լեառն>լերինք, ձմեռն>ձմերունք, դուռն>դրունք), բաղաձայնակազմ պայթական հոգնակերտի և բաղաձայնահանգ (սովորաբար պայթական վերջնահնչյունով) հիմքի միջև (ը) անցումային հընչյունի ներմուծում. քաղաք(ը)ք, (զ)գիր(ը)ս:

Զ) Գոյականաբար գործածված բառերի հոգնակիակազմությունը: *Հոգնակիակազմությունը հոլովակազմությանը ուղեկցում է նաև այլ խոսքի մասերում, ընդ որում և ածականներում: Կառուցվածքային տեսակետից այստեղ որևէ նորություն չկա, յուրաքանչյուր ածական հետևում է գոյականի հոգնակիակազմության որևէ կառուցատիպի. ընդ որում և՛ գոյականաբար գործածվելու դեպքում, և՛ իբրև անվան վերադիր (որոշիչ) գործածվելիս. օր. «**նարգեն շատ և անպատուհաս**». «**որ կենդանությունն է ամենայն** շնչատուց» (*Բզնիկ*): Այստեղ շատ հոգնակի ուղղականը կազմված է եզակի ուղղականի ձև+ք կաղապարի հետևողությամբ, իսկ շնչաւորաց հոգն. սեռ.-տրականը կազմված է ձևաբանորեն վերակազմավորված հիմքի (ի—ա բնակերտն ունեցողների) և ց հոգնակերտի զուգորդումների հետևողությամբ. շնչաւոր—շնչաւորի—շնչաւորաց: Համմ. նաև՝ «Ամենայն կառք ի համազգաց երիվարաց լծին». այստեղ համազգի ածականը հետևում է ո—ա բնակերտն ունեցողների ձևաբանորեն վերակազմավորված հիմքերի զուգորդումներին. համազգի—համազգաւոյ—համազգեաց:*

Թվականները ևս չունեն հոգնակիակազմության ուրույն կառուցատիպ. նրանցից յուրաքանչյուրը նույնպես հետևում է գոյականների հոգնակիակազմության որևէ կաղապարի. ընդ որում երեք, չորք, երկու անեզական են. երկու հոգնակի ուղղականը կերպազանցապես հանդիպում է առանց ք հոգնակերտի:

***Ածականների և թվականների հոգնակիակազմ հիմքերը** նույնպես հոգնակի ուղղականում և գործիականում զուգորդվում են ք, սեռ.-տրականում՝ ց, հայցականում՝ ս հոգնակերտների հետ. հինգ-ք, հնգի-ց, (զ)հինգ-ս, հնգիւ-ք. կամ՝ բարի-ք, բարեա-ց, (ղ)բարի-ս, բարեաւ-ք:*

*Դերանունների մեջ ևս հոգնակիակազմությունը համընկնում է հոլովակազմությանը. ընդ որում առկա են բուն դերանվանական կառուցատիպ, գոյականակերպ հոգնակիակազմություն, ինչպես **և խառը տիպի կազմավորումներ: Ածականներին և թվականներին** հարաբերակից դերանունների մի մասը հոգնակիակազմությամբ հետևում է դրանց, այսինքն՝ գոյականյակերպ են հոգնակի կազմում. համմ. որ հարաբերականի, ոմանի հարցականի, այլ անորոշի հոգնակիակազմությունը. հոգն. ուղղ. ստացվում է՝ որ>որք, քանի՞>քանի՞ք, այլ>այլք, հոգն. սեռ.-տր.՝ որոյ>որոց, քանւոյ>>քանեաց, այլոյ\|այլում>այլոց, հոգն. հայց. (զ)որ>(զ)որս, (ղ)քանի>(զ)քանիս, (զ)այլ>(զ)այլս, հոգն. գործ. որով>որովք, քանեաւ>քանեաւք, այլով>այլովք:*

Բայական ձևերից գոյականաբար գործածվում են դերբայնե-րը, որոնք հոգնակիակազմության կառուցատիպով գոյականա-կերպ են։ Այսպես, օրինակ, վաստնեալք, ցրուեալք (Եղիշէ), թա-ղեալք, յարուցեալք (Կորիւն), ասացեալսն (Բիւզանդ). հասելոցն (Կորիւն)։

Է) Հոգնակիակազմություն և հոդառություն: *Կցական կառու-ցատիպ ունեցող լեզուներում, նաև մեր աշխարհաբարում, հոդը կարող է դուրսդրվել հոգնակերտի հետ անմիջաբար, կարող է և միջնորդավորված լինել հոլովակերտով. օր. աշխարհաբարում՝ սե-ղան-ներ-ը, սեղան-ներ-ի-ս։ Գրաբարում գոյականի և՛ ուղիղ, և՛ թեք բառաձևերում հոգնակերտը միշտ վերջնահանդ դիրք ունի (ամ-ք, ամա-ց, ամաւ-ք), այդ պատճառով հոդառությունը, որ հա-տուկ էր բառի բոլոր ձևերին (և՛ ուղիղ, և՛ թեք), ուղեկցում է հոգ-նակիակազմությանը՝ առանց այլ մասնիկներով միջնորդավորվե-լու. գործքն(-ս, -դ), գործոց-ն (-ս, -դ), (ը)գործս-ն (-ս, -դ), գոր-ծովք-ն (-ս, -դ)։*

Գրաբարի հոդերը եռաշարք էին՝ ս, դ, ն (ցուցական, սուացա-կան, դիմորոշ, որոշիչ նշանակություններով). Սակայն սուացա-կան դերանունների առատ գործածությունը գրաբարում կանխում էր հոգնակիի հատուկ սուացական կազմավորումները, և սուացա-կան այդ իմաստավորումը հաճախ արտահայտվում էր կոնտեքս-տային, ընդհանրապես խոսքային միջավայրի ուրույն քննկալումնե-րով. Այսպես՝ «Մկունք, քանզի շատ կրծին ի ծակսն, ոտքն մա-շեցան» արտահայտության մեջ ոտն մաշեցան հատվածի քննկա-լումը աշխարհաբար կասեն «ոտքները մաշվեցին», ուր ոտքերը սուացական հոգնակի է, բայց գրաբարում այդ քննկալումը կոն-տեքստային է։

Ը) Բազմանություններ: *Բազմաձևությունը կամ երկձևու-թյունը կարող՞է պայմանավորված լինել՝ ա) իմաստային (ֆունկ-ցիոնալ) տարբերությունների հետ կապված հանգամանքներով, օրինակ, հոգնակի ձևի բազմիմաստությամբ, բ) տվյալ հիմքի հնչյունաբանական կամ ձևաբանական տարբեր կարգի վերակազ-մավորումներով, այսինքն՝ հիմքային տարբերակների գոյաց-մամբ, գ) տարբեր հոգնակերտների հետ միևնույն հիմքի գուգորդ-վելու հատկություններով։*

Առաջին խմբին կարելի է հատկացնել հետևյալ կազմավո-րումները. ակն *բառը երկձև հոգնակի ունի՝ աչք, որ նշանակում է «կենդանու աչքեր», ականք, որ նշանակում է «ջրի աչքեր». սա մեկնաբանվում է հնագույն թվային ենթակարգի՝ երկակիի իմն-դրով, այսինքն՝ աչք հոգնակին հնդեվրոպական երկակիի վերա-*

կազմավորված, մնացուկային ձև է, մանավանդ որ ցեղակից լեզուներում դրա համապատասխան ձևը սովորաբար երկակի է. հմմտ. նաև ունկն—ականջ *և* ունկունք, դուռն—դուրս *և* դրունք *(տես ՀԱ, ԼՔՀԼ, III, 442). Իմաստային նուրբ երանգավորումներով են աչքմանավորված՝ հագագք‖հագագայք, բաշխք‖բաշխոյք, գահք‖գահինք, գահք‖գահոյք, հասք‖հասոյք և նման կազմավորությունները։*

Հիմքային տարբերակներով երկձև-բազմաձև են, օրինակ, հնտևյալները. կողմն>կողման-ք‖կոզմուն-ք, սերմն>սերման-ք‖սերմուն-ք, ծաղիկ>ծաղկուն-ք‖ծաղիկ-ք, սեռ.-տրակ. ծաղկա-ց‖‖ծաղկան-ց‖ծաղկո-ց, կին բառի գործիականում՝ կնաւ-ք‖կանամբ-ք. հմմտ. նաև՝ ջրոց‖ջուրց, ջահք‖ջահունք, ճիրանք‖ճիրանունք, ճիրանաց‖ճիրանանց, աղախնեայք‖աղախնայք, աղախնեայց‖աղախնանց, նուագք‖նուագունք, միջերկրեայք‖միջերկրայք, միջերկրեայց‖միջերկրայց, այսպես և՝ պարագայ, դուզնաքեայ, արուսաոյ, պողոտայ, ապագայ բառերը։ Բազմաձև կազմավորումների մեջ են ներառնվում նաև այսպիսիները. անկողնոց‖անկողնաց, աստուց‖աստրոց, թանձրունք‖թանձրոյք, կարծուք‖կարծերք, քաղցումբք‖քաղցուր, սարկաւագք‖սարկաւագունք, ճրագք‖ճրագունք, ծինք‖ծնունք, տարերց‖տարերաց‖տարերիս, կողերց‖կողերաց, անգեղաց‖անգեղց, աստեղց‖աստեղաց[9], դաւերց‖դաւերաց, աստեղքք‖աստեղաւք, դաւերքք‖դաւերաւք (որանց վարքագիծն ունեն աղբիւր, եղիւր, աղտիւր բառերը), ջահք‖ջահունք, ոսկերքք‖‖ոսկերաւք, եղերքք‖եղերաւք‖եղերովք, աղանդիք‖աղանդինք, արմատիք‖արմատք‖արմատիք, նուանք‖նուք, երագունք‖երագք, եպիսկոպոսունք‖եպիսկոպոսք, բլուրք‖բլերք, մրջինք‖մրջմունք, մրջինս‖մրջմունս։

Գրաբարում շատ քիչ է պատահում, որ միևնույն հիմքը տարբեր հոգնակերտների հետ զուգորդվի։ Հոգնակիակազմ հիմքերը հատատառուն կերպով զուգորդվում էին f, g, u մասնիկների հետ։ Սակայն հանդիպում են մասնավոր կազմավորումներ, երբ երկձև հոգնակի ունենք, մի դեպքում, բուն հոգնակերտով, մյուս դեպքում, «հնավաքականաց» հոգնակերտով. թեև իմարկե դրանք գործածության հաճախությամբ համարժեք չեն. հմմտ. հայք‖հայեր, մարդք‖մարդիկ, եպիսկոպոսունք‖եպիսկոպոսատան, մանկունք‖մանկտի (դուստ.

[9] *Կայսերաց, ազգերաց, եկերաց, տագերաց, ուստերաց, սիկեղաց, սիգեղաց բնակերտով սեռ.-տրականները հին հայերենում առավել հաճախացել էին գործածությամբ, քան սրանց ոլ-րնակերտով ձևերը։*

մանկտեամբք)։ Հ. Աճառյանն ընդգծում է. «Գրաբարում կրկին հոգնակի կարելի է գտնել այն դեպքերում միայն, երբ մի որևէ հավաքական բառ հոգնակի դառնա»և բերում է հետևյալ օրինակները. մանկտիք (տի-ք), աւագանիք (անի-ք), իշանք(ան-ք), նաև՝ ձիանք, վանորայից, վանորայօք (տե՛ս ՀԱ, ԼՔՀ, III, 828)։ Այստեղից դժվար չէ անուղղակիորեն հետևեցնել, որ գրաբարում պետք է որ նշած լինեին մանկունք‖մանկտի, աւագք‖ աւագանի, ինչպես է այլ նման երկձևություններ։

երկձև-բազմաձև հոգնակիները բացի նրանից, որ գործածության հաճախությամբ համարժեք չեն, ունեն նաև այն բնորոշ գիծը, որ յուրաքանչյուր ձև շատ հաճախ հետևում է որևէ համակարգային կառուցածևի։ Առանձին բառերի մեջ եղած հոգնակիակազմության բազմաձևությունը ենթադրում է անցումային վիճակ, վերջիվերջո պրանք ևս հետևում են որևէ կայունացած, ընդհանրացած կառուցատիպի։

2. ԹՎԱԿԱՋՄՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ԴՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

I. Թվակարգի ընդհանուր բնութագրությունը։ Գոյականի թվի բերականական իմաստները և նրանց արտահայտության միջոցները։ II. Հոգնակիակազմություն. հոգնակիակազմ հիմքերը և նրանց զուգորդումները հոգնակերտ վերջավորությունների հետ։ Ա) Գրաբարատիպ կազմավորումներ և վերակազմավորված ձևեր։ Բ) Թվակազմության նոր տիպոլոգիա։ Գ) Հնչյունաբանական և ձևաբանական վերակազմավորումները հոգնակիակազմ հիմքերում։ Դ) Գոյականաբար գործածվող բառերի հոգնակիակազմությունը։ Ե) Փոխառյալ բառերի հոգնակիակազմությունը։ Զ) Ոչ-համակարգային կազմավորումներ։ Է) Հոգնակիակազմություն և հոդառություն։ Ը) Երկձևություններ-բազմաձևություններ։

I. ԹՎԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գոյականի թվի բերականական իմաստները և նրանց արտահայտության միջոցները։ *Միջին գրական հայերեն ասելով սովորաբար հասկանում են XII—XVI դարերից ավանդված գրավոր աղբյուրների (ոչ գրաբար) լեզուն։ Կասկածից դուրս է, որ խոսակցական միջին հայերենի բնական էվոլյուցիան չի կարելի ներկայացնել սոսկ նշված դարերի շրջանակներում, նրա կազմավորման ակունքների և հետագա զարգացման ընթացքի, միտումների հետ կապված մի շարք հարցեր դեռևս լուսաբանման կարիք*

ունեն։ Սակայն գրավոր տեքստերը, չնայած նրանց բազմերանգությանը, հնարավորություն են տալիս որոշակի պատկերացում կազմելու գրական միջին հայերենի կառուցվածքային բնորոշ հատկություններից, գծերի վերաբերյալ։

Հայտնի է, որ դրաբարը նշված շրջանում ինչ-որ չափով պահպանում էր գրական լեզվի ֆունկցիաները։ Բնականաբար դրաբար տեքստերը մեր դիտարկումներից դուրս են մնում։ Ճիշտ է, կան դրաբար տեքստեր, որոնց մեջ առկա են խոսակցական լեզվից առանձին՝ հնչյունական, բառային, քերականական, ոճական տարբերի ներթափանցումներ (ոամկախառն դրաբար, ինչպես կասեր Ղ. Ցովնանյանը)։ Նման դեպքերում այդպիսի աղբյուրները մեր քննության համար որոշակի հետաքրքրություն են ներկայացնում, ուստի չենք խուսափել աչքի անցկացնելու նաև դրանք։

Ավելի շատ են այն տեքստերը, որոնց լեզուն թեև միջին հայերեն է, բայց գրաբարյան տարրերի, գրաբարաձևով կազմավորումների ճնշումը դրանց մեջ ակնհայտ է։ Երբեմն այդպիսի տեքստերի լեզուն կոչում են գրաբարախառն միջին հայերեն կամ «գրաբարախառն ոամկորեն»։ Հետազոտության համար այսպիսի տեքստերը շատ կարևոր են, չնայած այդ «խառնուրդը» նկատելիորեն խանգարում է միջին գրական հայերենի կառուցվածքային տիպոլոգիան բացահայտելու գործին։

Ավելորդ չէ նշել, որ մեր դիտարկած աղբյուրներում հաճախակի ենք հանդիպում այնպիսի կառուցաձևերի, որոնք այդ շրջանի գրական լեզվի համեմատ համակարգային կազմավորումների ոգուց չեն բխում, զուգահեռաբար գործածվող երևույթներ են և նոր հայերենում առանձնապես բնորոշ են այս կամ այն բարբառին։ Հակված ենք դրանք գնահատելու իբրև բարբառային ներթափանցումներ գրական միջին հայերենի մեջ։

Միջին գրական հայերենը հայոց գրական լեզվի զարգացման որոշակի էտապն է։ Նրանով ավանդված է հարուստ և դեղեցիկ գրականություն։ Այս նշանակում է, թե նա իսկապես ամրապընդված է գրականությամբ։ Իսկ սա մի կարևոր հանգամանք է գրական աստիճանի բարձրացող ամեն մի լեզվի համար՝ մշակելու և զարգացնելու կառուցվածքային ուրույն տիպոլոգիա, զարկ տալու, ընդհանրացնելու և հաստատելու համակարգային կառուցաձևեր։ Այսպիսի հանգամանքներում էլ միջին գրական հայերենը մշակել իր կառուցատիպը, սիստեմավորվեց իր կառուցվածքի մեջ։

Իհարկե, լեզվական սիստեմավորումը պայմանավորված է զարգացման ներքին ու արտաքին (կառուցվածքային և արտակառուցվածքային) շատ հանգամանքներով։ Դրանց մեջ կարևոր են

նաև պատմա-հասարակական որոշ գործոններ, ինչպես, օրինակ, տվյալ լեզվով խոսող ժողովրդի տնտեսական, քաղաքական, մշակութային միասնությունը, համախմբվածությունը, հասարակական միաձույլ զարգացումը։ Ժողովրդի հասարակական առաջընթացի խթանումը, կրանք կարող է լուրջ հետևանքների հասցնել լեզվական առաջընթացի բնագավառում, կանխել կամ կասեցնել այդ առաջընթացը։ Նկատելիորեն այսպիսի գործոններ են դեր խաղացել մեր հին ու միջին գրական լեզուների անկման գործում. նկատի ունենք քաղաքական կյանքի անկումը, տնտեսական, մշակութային կյանքի չլսաումը։

Սակայն բարեբախտաբար միջնադարյան Հայաստանում գրական նոր լեզվի կազմավորման ու զարգացման համար շատ քիչ նպաստավոր պայմաններ էին ստեղծվել Կիլիկյան պետականության շրջանում։ Սակայն կիլիկյան հայ հատվածը պատմահասարակական առումով ըստ էության այնպիսի օջախ չէր, որ կարողանար առանցք գցել նոր կազմավորվող գրական լեզվի համար։ Նա կարող էր միայն որոշ դրական դեր ունենալ, և իսկապես ունեցավ։ Կազմավորվեց կիլիկյան միջին հայերեն, որն ամրացավ գրականությամբ և սկսեց սիստեմավորվել կառուցվածքային հիմնական գծերում։ Այդ լեզուն ուժեղ կնիք դրեց միջնադարյան գրավոր հայերենի վրա, սակայն չվերածվեց ընդհանուր գրական հայերենի։

Ահա այս հայեցակետով էլ մենք քննել ենք XII—XVI դարերի գրավոր տեքստերի լեզուն, ավելի ճիշտ՝ մեզ այդ հետևություններին են հանգեցրել նշված տեքստերի լեզվական փաստերի դիտարկումները։

Ի տարբերություն հին գրական հայերենի՝ գրաբարի, միջին գրական հայերենը զարգացրել է կցական կառուցատիպ, հոգնակիականազմության մեջ հիմքերի և հոգնակերտների նորատիպ զուգորդումներով։ Համակարգային հոգնակիականազմությունները հիմնականում կապվում են եր, ների հոգնակերտների հետ, չնայած ֆ-ի զևուս հաճախական գործածությանը։

Միջին գրական հայերենում սովորական կիրառություն ըստացած հոգնակերտների մի մասը սակավադեպ երևում է հին գրավոր որոշ աղբյուրներում, սկսած V դարից։ Ինչպես հաստատում է Ա. Այտընյանը, VIII—X դարերի գրավոր աղբյուրներում աստիճանաբար հաճախանում են միջին հայերենին բնորոշ կազմավորումները. օր. կղպականի (պարսկերեն բառ, «կրպակներ»), ջաղացանի, ջաղացներն, տեղեր, քառասներոյդ են (տե՛ս Ա.Ա, ՔՔ, 144)։ Սակայն նկատվում են նաև այլ հոգնա-

կերտներ, որոնք նույնպես հին գրական հայերենի համակարգային (և նույնիսկ ոչ-համակարգային) կազմավորումներում չեն հանդիպում (օր. վի, վտի ևն)։

Հիմքահնչական մեջ, նոր հոգնակերտների հետ եղած զուգորդումներում վերացած է բնակերտի դերը։ Հիմքատեսակների և հիմքատարբերակների ֆունկցիավորումը հիմնվում է վանկատնանկության սկզբունքի և հնչյունաբանական այլ գործոնների վրա։

Թեև նկատելի տեղաշարժեր են կատարվում թվային որոշ ենթահամակարգերում, բայց գոյականի թվի կարգը ներկայանում է հիմնականում եզակի—հոգնակի հակադրությամբ, երկակին իր մայրամուտն է ապրում։ Անեզականները սովորաբար մնում են գրաբարատիպ (գրաբարակերպ) կազմավորումների շրջանակներում։ Եր, նի հոգնակերտներով զուգորդումները էքսպանսիվ միտումով՝ հետևողականորեն իշխող դիրք են ձեռք բերում համակարգային կազմավորումներում, հաղթահարելով նաև երկակի և անեզական կարգերը։

Եր, նի (նաև ներ) հոգնակերտների գործածությունը բացառում է հոգնակիակազմության և հոլովակազմության միաձուլությունը։ Միջին հայերենից սկսած որոշակի է դառնում հոգնակիակազմության և հոլովակազմության բաշխումը։ Հոգնակիակազմ հիմքերը նորատիպ կառուցվածքներում այլևս չեն համընկնում հոլովակազմ հիմքերի հետ, իսկ հոգնակերտ վերջավորությունները առհասարակ տարբեր են հոլովակերտ վերջավորություններից[10], բնականաբար այլ է դրությունը գրաբարատիպ կազմավորումներում։

Սակայն թվակազմությունը միջին գրական հայերենում չհասավ իր կատարելության։ Այդ իհարկե չի վերաբերում միայն այս կարգին։ Վերը արդեն ակնարկեցինք այն սոցիալ-պատմական իրադրությունը, որը կանխեց, կաշկանդեց միասնական խիստ սիստեմավորված գրական լեզու ունենալը։ Ինչպես կառուցվածքային այլ ոլորտներում, հոգնակիակազմության մեջ ևս առկա են շատ բազմաձևություններ, անմիօրինակություններ։

---

[10] *Մեծանուն հայագետ Հ. Աճառյանը թվակարգի մեջ գրաբարից միջին հայերեն կատարված օրինական անցում է տեսնում նաև այլ կողմից. «Հոգնակիի հին դրության փոխարեն հիմք է դրված հավաքական դրության, որ գրաբարի մեջ բացառիկ մի երևույթ էր» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 932)։ Այս մասին մենք ևս կխոսենք, երբ քննենք հավաքական ենթակարգը։*

Այնուամենայնիվ ավելորդ չենք համարում նշել, որ թվակազմությունը միջին գրական հայերենում հաստատել էր որոշակի համակարգային դծեր, ուներ կայունացման շեշտված միտում, միօրինականանալու տենդենց, զարգանում էր բնական առաջընթացով։

II. ՀՈԳՆԱԿԻԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ. ՀՈԳՆԱԿԻԱԿԱԶՄ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՁՈՒԿՈՐԴՈՒՄՆԵՐԸ ՀՈԳՆԱԿԵՐՏ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Ա) Գրաբարատիպ կազմավորումներ և վերակազմավորված ձևեր: *Միջին գրական հայերենում, նույնիսկ նրա «դասական» շրջանում, թվակազմությունը նկատելի չափով, ընդ որում և բառերի որոշակի խմբի համար, ուներ գրաբարատիպ կառուցաձև։ Ինչպես նշել ենք, հին գրական հայերենի հոլովակազմության մեջ գերիշխում է մասնիկավորումը, իսկ հոգնակիակազմությունը միայն մասնիկավորմամբ էր։ Եվ իրոք թեքական լեզու, նրա հոգնակիակազմությունը և հոլովակազմությունը հիմնականում համատեղում էին։ Հոգնակի ձևերը կազմվում էին հոգնակիակազմ-հոլովակազմ հիմքերի և հոգնակերտ-հոլովակերտ վերջավորությունների զուգորդումներով։ Կառուցվածքային առումով հոգնակիակազմ հիմքը եզակի հարացույցի որևէ ձևն է, կամ եզակի որևէ ձևի հիմքի բավականին տարածված են բնակերտով հիմքերը։*

Կոշականի հոգնակին կառուցվածքային որևէ տարբերություն չուներ հոգնակի ուղղականի ձևից։ Հոգնակի ուղղականի հիմքը եզակի ուղղականի ձևն է, կամ հնչյունաբանորեն-ձևաբանորեն վերակազմավորված նրա տարբերակը։ Եզակի ուղղականը չունի նյութականորեն արտահայտված վերջավորություն։ Հոգնակի ուղղականի հոգնակերտ-հոլովակերտը ∅-ն է։ Հոգնակի հայցականի հիմքը ձևականորեն նույնական է հոգնակի ուղղականի հիմքի հետ, բայց զուգորդվում է ս հոգնակերտ-հոլովակերտի հետ։ Հոգնակի սեռ.-տրականի հիմքը ա) եզակի սեռ.-տրականի հիմքն է, բ) եզակի սեռ.-տրականի ձևն է, գ) ձևականորեն համընկնում է եզակի գործիականի հիմքին. զուգորդվում է ց հոգնակերտի հետ։ Գործիականի հոգնակիակազմ հիմքը կանոնավորապես եզակի գործիականի ձևն է, որը զուգորդվում է ∅ հոգնակերտի հետ։ Բացառականի ու ներգոյականի հոգնակին վերլուծական կազմություն ունի։ Այս համակարգային կազմավորումներին զուգահեռ մի շարք բառեր ունեն ոչ-համակարգային, տարակազմ կառուցաձևեր։

Խոսելով միջին գրական հայերենում գործող դրաբարակերպ բվակազմության մասին՝ մենք նկատի ունենք այս տիպոլոգիան։

Այն փաստերը, որ մենք դիտարկել ենք միջինհայերենյան տեքստերում, բերում են այսպիսի հետևության։ Միջին գրական հայերենի հոգնակի ուղղականի դրաբարատիպ բվակազմության մեջ գործում էին երեք կարգի կաղապարներ. ա) չեզոք վերջնահանգով հիմք+f, բ) ոչ չեզոք, ընդ որում բաղձայն+(ը)ն վերջնահանգով հիմք+f, գ) այս երկու կաղապարների վերակազմավորումներ և նորակազմ ձևեր։

Այս երեքն էլ ըստ էության դրաբարատիպ են այն հիմնավորումով, որ առաջին երկուսը գործել են դրաբարում, իսկ երրորդը դրաբարատիպ կաղապարների հնչյունաբանորեն-ձևաբանորեն վերակազմավորված և նոր տեսք ստացած տարատեսակն է։

Եվ այսպես՝ չեզոք վերջնահանգով հիմք+ք կաղապարով են կազմավորված. Որպէս չինուածք մարմնոյ այլ և այլ են, նոյնպէս և չերմն այլ և այլ լինի (ՄՀ, ՋՄ, 5), ծերքն բնութեամբն վատուժ են (Գ, ՔՌՄ, 39), Մնդուքն իւրեանց թագաւորն ունին (ՂՅ, ՀնՒվ, Ք, 100, XIII դ.), Զի ի բազում խորտակաց ծնանին ցաւք բազումք (ԱԱ, ՕՔ, 8), հազարք զքեզ գովեն (ՀՔ, Տ, 212), Մահմետականքն ամէնեքեան թողուն զփլաւն (ՄՄ, ԸՆ, 225, XVI դ.). Համմտ. նան՝ որդիք (ՍՍ, Դ, 8. ՀԲ, ՈՒՔ, 144. Ֆ, Բ, 104. ՀՔ, Տ, 212), իշխանք (ՀԲ, ՈՒՔ, 147. ՄՆ, ՈՒՔ, 128. ՆՔ, ՀԿ, 301), ծառայք (ՀԲ, ՈՒՔ, 147), թագաւորք (ն. տ.), տղայք (ն. տ. 185. ՄՆ, ՈՒՔ, 102), գազանք (Ֆ, Բ, 27. ԱԱ, ԱԱ, 259), գործք (Ֆ, Բ, 33), մարգարէք (ն. տ. 55), յիմարք (ն. տ. 86), ուզողք (ն. տ. 87), մարմինք (ՄՀ, ՋՄ, 3), վայրք (ԱԱ, ԱԱ, 5), կղզիք (ն. տ. 394), ոսմիկք (ՄՆ, ՈՒՔ, 128), դաշտք (ՀՔ, Տ, 139)։

Ոչ չեզոք, ընդ որում բաղձայն+(ը)ն վերջնահանգով հիմք+f կաղապարին են հետևում. անձինք (ՀԲ, ՈՒՔ, 189), թոռունք (Ֆ, Բ, 105), եղբնկունքն (Գ, ՔՌՄ, 115), անդամունք (ՄՀ, ՋՄ, 5. ԱԱ, ԱԱ, 518), մատունքն (ՄՀ, ՋՄ, 34. ԱԱ, ՕՔ, 42. ԳԱԻՏ, 69), ատամունք (ն. տ.), ծիծաղունք (ՀՔ, Տ, 212), որդունք (ն. տ. 143), լերինք (ՀՔ, Տ, 182. ՄՄ, ԸՆ, 225), դրունք (Ֆ, Բ, 108), տե՛ս նան՝ ոսկերք (ԿԲ, Տ, 212), եպիսկոպոսունք (ՍՍ, Դ, 37), աղչկունք (Գ. ՔՌՄ, 168. գրբ. աղչկունք), ծաղկունք (ՄՆ, ՈՒՔ, 128), գրաբարյան հնատիպ կամ տարակազմ այլ ձևերից՝ կանայք (ՍՍ, Դ, 67. Ֆ, Բ, 137. ԱԱ, ԱԱ, 29. ՄՆ, ՈՒՔ, 102), աւուրք (ԱԱ, ՕՔ, 45. ԱԱ, ԱԱ, 251. ՄՆ, ՈՒՔ, 112)։

Այժմ դիտարկենք վերակազմավորված մի քանի ձևեր։ Գրաբարում ունենք գիր—գիրք կազմավորում, ոչ-համակարգային ձևե-

րում նաև գրեան(f), մինչդեռ միջին գրական հայերենում գիրՙ ձևը առանձնանում է՝ աստիճանաբար ստանալով եզակի նշանակություն. իբրև հոգնակի հաճախ գործածվում են գրեանք (Համմտ. ԱԱ, ՕՔ, 5, 7, 18. ԱԱ, ԱԱ, 5) կամ համակարգային գրեր ձևերը: Սակայն Հ. Բլկուրանցու մոտ նկատում ենք նոր կազմավորման՝ գրուանք. ուր առկա է ուանք հոգնակերու: Այս հոգնակերտը, որ գրաբարյան բաղաձայն+(ը)ն վերջնահանդի և ՚ հոգնակերտի ձևաբանական վերակազմավորումից է գոյացել (Համմտ. որդն—որդունք), միջինհայերենյան որոշ աղբյուրներում կարծես սովորական է դառնում. օր. գրունք (ՀՔ, S, 142), ագռունք (Ն. տ. 207, գրբ. ագռք), քարունք (Ն. տ. 143, գրբ. քարինք), ոտտունք (Ն. տ. 167, գրբ. ոտք), մրգունք (Ն. տ. 167), բղխերունք (Ն. տ. 126, 142), գոմունք (Գ, ՔԲՄ, 55, 186), նապաստակունք (ՆՄ, ԺԱՎ, 194), գորտունք (Ն. տ.), մեղքունք (ՆՔ, ՀԿ, 67), զոտկունքն (Ն. տ. 82), մեջկունքդ (Ն. տ. 84), իսկ աչկանցն (Ն. տ. 90) ձևը ցույց է տալիս, որ ըմբռնվել, գիտակցվել է նաև աչկունՙ ձև. այսպես և՝ ոստունք (ՄՄ, ՀՆ, 171, XVI—XVII դդ.), որսունք (Ն. տ. 200), աստղունք (ՀՄԺԾ, 124, 390), ի լեռունքդ (Ն. տ. 218), ոտունքս (Ն. տ. 221), ոտկունքս (Ն. տ. 224), լերունք (ԳԱԻՏ, 42): Համմտ. նաև անՙ-ով՝ «Ծնկն թագաւորն ընկլիզաց յայս կոյս ծովուն և չինեցաւ... բերթանքն (ՄԺ, 79, XIII դ., գրբ. բերդք, իսկ ոչ-համակարգային կազմավորումներում նաև՝ բերդեան, բերդորայ, բերդորէք):

Չնայած այս ձևերի որոշ տարածմանը, այնուամենայնիվ դրանց զուգահեռ առավել գործածական էին դուռ գրաբարյան հոգնակիները, նույնիսկ միևնույն հեղինակի մոտ (տե՛ս, օրինակ, լեռունք՝ ԳԱԻՏ, 42, լերինք՝ Ն. տ. 86):

Գրաբարատիպ կազմավորումները և վերակազմավորված ձևերը չեն սահմանափակվում միայն ուղիղ, ուղղական հոլովի կիրառություններով. նման երևույթները բնորոշ են նաև թեք հոլովաձևերին: Որ իսկապես գրաբարատիպ հայցականը ազատ գործածություն ունի միջինհայերենյան գրավոր աղբյուրներում, երևում է թեկուզ հետևյալ կիրառությունից. գդտեռսն (ՍՍ, Գ, 8), գվերս (ՀԲ, ՈՒՔ, 179), ըզշունս (ԿԲ, S, 213), կածակունս (ԳԱԻՏ, 90):

Միջին գրական հայերենում առաջանում է հոգնակի ուղղական և հայցական հոլովների մասնակի նույնացման միտում: Այս պրոցեսն առնչվում է գրաբարատիպ հայցականի վերակազմավորված ձևերի հետ: Ք հոգնակերտը մի շարք դեպքերում հաստատվում է նաև հոգնակի հայցականում, այնտեղից դուրս մղելով և մասնիկի կիրառությունը: Թե՛, ասենք, կերակուր եզակի ուղղական ձևից

ունենք Ե-ի գուգորդումով՝ կերակուրՀ հոգնակի ուղղական, ապա այս ձևն ստանում է հոգնակի հայցականի ֆունկցիա (գ)կերակուրս նախկին (գրաբարատիպ) ձևի փոխարեն՝ գ նախդրի առկայությամբ կամ առանց նրա՝ կերակուրՀն կամ գկերակուրՀն։

Կարծում ենք, որ սա հետևանք է միջին գրական հայերենի հոգնակիակազմության նոր կառուցատիպի աղդեցության, երբ, օրինակ, եր(ներ), ների և այլ մասնիկներով հոգնակիների հայցականը ուղղականից տարբերվում է միայն գ նախդիրի առկայությամբ. ձագեր—(գ)ձագեր, բանջրեի—(գ)բանջրեի և այլն։ Միաժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ հայցականի այդ նորակազմությունը կառուցվածքային որոշակի տեղաշարժ էր գրաբարի համեմատությամբ (թեև դրա սաղմերը նկատվում են V—VIII դարերի գրավոր աղբյուրներում, նույնիսկ վիպասանական շրջանից մնացած պատառիկներում)։

Բերենք հայցականի հոգնակիի այդ վերակազմավորումը ցուցադրող մի քանի փաստեր. Այնպես մեղանՀ արար նա շատ (ՆԵ, ՀՋ, 561), գեղբարՀն (ՍՍ, Դ, 7), որ ի յայս տեղիս էր եկել (Հե. ՈւԲ, 146), զգայարանՀն իւր պահէ (Ն. տ. 185), զկանայՀն (Ֆ, Բ, 138), զնշանՀն (ՄՀ, ՋՄ, 15), և կերակուրՀ հով և չորայինն ուտէ (Ն. տ. 31), զառաքումՀն (ՆՄ, ԺԱՎ, 57), դաշինՀ դրին ընդ միմեանս (Ն. տ. 148), զամէնն մեզումՀն (ՂՅ, ՀնՈՎ, Ք, 100, XIII դ.), զորմումՀն «որմերը» (Ն. տ. 102), զականջՀն (Ն. տ.), զմահաճայս (ԽԿ, ՈւԲ, 131), զորդիՀ (Ն. տ. 132), Յաչիցն արեան արցունմ քամէ (ԿՆ, Տ, 132), զմարմինՀն (Ն. տ. 201), ըզմարգարէՀն (Ն. տ. 202), զանդամՀն (ԱԱ, ՕԲ, 23), զոսկերՀն (Ն. տ.), զառաքումՀն (Ն. տ. 96), զզաւդաածՀն (ԱԱ, ԱԱ, 16), (գ)շարժմունՀն (Ն. տ. 18), գլեռունՀն (ՀՔ, Տ, 126, 142), զզազանՀն (ՆՔ, ՀԿ, 269)։

Գրաբարատիպ կազմավորումներում ներգրավվում են նաև սեռ. տրականի՝ ց մասնիկով ձևերը, որոնց հոգնակիակազմ հիմքը եզակի համապատասխան ձևն է կամ նրա հնչյունաբանորեն-ձևաբանորեն վերակազմավորված տարբերակը։ Մտորև բերում ենք համապատասխան փաստեր. գազանաց (Հե, ՈւԲ, 143), անասնոց (Ն. տ.), հրեշտակաց (Ն. տ. 153), արանց (Ն. տ. 156), չարեաց (Ն. տ. 173)։ Այսպիսի «կանոնավոր» սեռ.-տրականի ձևերը շատ հաճախական են XII—XIII դարերի, նույնիսկ XV—XVI դարերի հեղինակների մոտ. ընկերացն (Ֆ, Բ, 36), ծընողացն (Ն. տ. 45) տէրանց (Ն. տ. 55), չերմանց (Գ, ՔՔՄ, 10. ուղղ. չերմունք՝ Ն. տ.), անդամոց (Ն. տ. 6), երակաց (Ն. տ. 9), բժշկաց (ՄՀ, ՋՄ, 2), վարդապետաց (ԽԿ, ՈւԲ, 130), գստերաց (Ն. տ. 165), անգիտաց

(կե, S, 205), գանձուց (Ն. տ. 207), բժշկապետաց (ԱԱ, 0Բ, 6), կրոցս (Ն. տ. 5), ազգաց (Ն. տ. 8), մարդոց (ԱԱ, ԱԱ, 192), տանց (ՄՆ, ՈւԲ, 162), գժոխոց (ՀՔ, S, 124), հազարաց (Ն. տ. 198):

Հ. Աճառյանը անդրադառնալով գրաբարատիպ հոլովակազմությանը կիլիկյան հայերենում՝ նշում է, թե f, իf հոգնակերտներով բառերը պահեցին հին հայերենի հոլովումը առանձին փոփոխություններով. ասենք՝ f — աց՝ ծնօղք—ծնօղաց, f—ուց՝ պարտք—պարտուց, f-ից՝ վկայք—վկայից, f-ոց (գիրք)—գրոց, իf—եց, of՝ ուղղ. հայրենիք, սեռ.-տր. հայրենեց, գործ. հայրենօք. նաև՝ կաննիք կաննեց. այսպես և՝ հարսնիք, բադնիք, աղիք, խմելիք, շլինք բառերը (ՀԱ, ԼՔՀԼ, III, 822—823. տե՛ս նաև՝ ՀԱ, ՀԼՊ, II, 245). Համմտ. նաև՝ ունիf—նաց՝ իրաւունք—իրաւնաց, անիf—նաց՝ գանգատանք—գանգատնաց:

Նկատելիորեն հաճախական գործածություն ունեն նաև գրաբարատիպ գործիականը, բացառականը և ներգոյականը. Անկասկած այս կառուցածևերում ևս որոշ տեղաշարժեր են կատարվել՝ տարբեր հանգամանքներով պայմանավորված, սակայն կառուցատիպն իր հիմնական գծերով առկա է. գաւառաւքն (ՍՍ, Դ, 7), գործովք (խկ, ՈւԲ, 129), նշանօք (ԱԱ, 0Բ, 178), ի չիլսն (Գ, ՔԲՄ, 72), և այլն:

Գրաբարատիպ հոգնակիակազմությունների շարքը պետք է դասվեն այն կառուցածևերը ևս, որոնք ըստ էության գրաբարյան տիպոլոգիա ունեն, բայց ինչ-որ չափով հիմքային վերափոխության ենթարկված: Այսպես, օրինակ, եղբայր բառի հոգնակի ուղղականը գրաբարում կազմվում է եզակի գործիականի հիմք+f կաղապարով. եղբայր>եղբար-բ>եղբար-ք: Միջինհայերենյան տեքստերում հանդիպում ենք և՛ եղբարf, և՛ եղբայրf. վերջինս արդեն ունի եզակի ուղղականի ձև+f կաղապարը: Կցական տիպոլոգիայի ազդեցություն է այս:

Թե ավյալ բառը միջին հայերենում գրաբարի համեմատությամբ ներկայանում է հնչյունական փոփոխությամբ, կարող է հոգնակին կազմել գրաբարատիպ. այսպես՝ դաբարյան գայլ, այծ և մի շարք այլ բառերի եզակի ուղղականը միջինհայերենյան որոշ աղբյուրներում ունի այ>ա անցում. գալ, ած, որից էլ՝ գալք (ՆՄ, ժԱԿ, 41), ածք (Ն. տ.), գածս (Ն. տ.) ևն: Գրաբարում այ>ա անցում առկա էր որոշ բառերի ուղղականի հոգնակիակազմ հիմքում, օր. հայր—հարք, մայր—մարք, եղբայր—եղբարք, այր—արք: Այս կառուցածևերի հոգնակիակազմ հիմքը եզակի ուղղականի հնչյունաբանորեն-ձևաբանորեն վերակազմավորված տարբերակն է. ընդ

որում հայր, մայր, եղբայր բառերինը ձևականորեն համընկնում է եզակի գործիականի հիմքին։

Միջինհայերենյան աղբյուրներում՝ եզակի ուղղականում կարող են լինել հայր‖հար, մայր‖մար, եղբայր‖եղբար, այր‖ար(իկ)։ գրաբարատիպ հոգնակիակազմությամբ հոգնակի ուղղականում պետք է ունենանք՝ հարք, մարք, եղբարք, արք, և իսկապես առկա են այդպիսի փաստեր։ Սակայն մասամբ առկա են և այդ բառերի հոգնակի կազմավորումներ, որոնցում ուղղականի հոգնակիակազմ հիմքը պարզապես եզակի ուղղականի անհնչյունափոխ, անփոփոխ ձևն է. եղբայրք (ՆՄ, ԺԱՎ, 44. ՀԵ, ՈՒՔ, 145. ԱԱ, ՕՔ. 8. ՀՔ, S, 123), մայրք (ՆՄ, ԺԱՎ, 45), հայրք (Ն. ՄՏ. 273. ԱԱ, ՕՔ, 8. ՄՆ, ՈՒՔ, 155). Համմտ. նախահայրքն (Ֆ, Բ, 52), այրք (ԷՀՄԳԱ, 41)։ Երբեմն միևնույն հեղինակի մոտ հանդիպում ենք այս երկու կառուցածևին էլ. օր. եղբարք (ՄՆ, ՈՒՔ, 103. ՀԵ, ՈՒՔ, 184. Ֆ, Բ, 42 54), և եղբայրք (ՄՆ, ՈՒՔ, 123. ՀԵ, ՈՒՔ, 145. Ֆ, Բ, 42, 54)։

Գրաբարում սովորական էին մկանք‖մկանունք, դուրք‖դրունք հոգնակի ուղղական կազմավորումները, որոնք հանդիպում են նաև միջին գրական հայերենում, բայց դրանց կողքին առկա են նաև՝ մկունք (ԱԱ, ՕՔ, 43, 185), դռունքըն (ՀՄԺԾ, 257), համմտ. նաև՝ մսանք (ԱԱ, ՕՔ, 501)։

Ստորև բերում ենք համեմատական ցանկ գրաբարատիպ կազմավորումների թեք հոլովաձևերում եղած հիմքատարբերությունները ցուցադրելու համար.

գրաբարում	միջին հայերենում
առամանց	*առամաց (Գ, ՔՐՄ, 55, 186)*
քղանցից	*քղանցաց (Ֆ, Բ, 76)*
քրտանց	*քրտնաց (ԱԱ, ՕՔ, 79)*
մրգաց	*մրգանց (Ն. ՄՏ. 119)*
խօսից	*խօսացն (Ն. ՄՏ. 6)*
երիկամաց	*երիկամացն (Ն. ՄՏ. 35)*
մկանց‖մկանաց	*մկունացն (Ն. ՄՏ. 42)*
տղայոց	*տղոց (ԱԱ, ԱԱ, 332)*
մարդկան‖մարդոց	*մարդկաց (Ն. ՄՏ. 124) և մարդկանց*
հելլենացւոց	*հելլինացոց (Ն. ՄՏ. 126)*
մրգօք	*մրգանօք (ԱԱ, ՕՔ, 119)*
քրտամբք	*քրտնօք (Ն. ՄՏ. 79)։*

Իհարկե, սրանք թեև գրաբարատիպ կառուցածևերի համեմատությամբ նորածևություններ են, բայց նոր տիպոլոգիա չստեղծեցին, ուստի կարելի է գնահատել իբրև մասնավոր ու անհատական կազմավորումներ։ Եվ իսկապես միջինհայերենյան գրավոր աղբյուրներում այսպիսիները սակավադեպ են, այդ բառերը մեծ մասամբ գործածվում են զուտ գրաբարատիպ կառուցածևերով։

Գրաբարատիպ կազմավորումների մասին պետք է ասել նաև հետևյալը։ Սրանցում հոգնակիակազմ հիմքերը զուգորդվում են **f**, **g**, **u** *հոգնակերտ մասնիկների, ինչպես և դրանցով ու երբեմնի վերջնահանգով վերակազմավորված տարրերի հետ։ Սակայն* **f**, **g**, **u** *հոգնակերտների ձևաբանական արժեքները միջին հայերենում և գրաբարում նկատելի չափով չեն համապատասխանում։ Ք-ն կարող է հանդես գալ ոչ միայն ուղղականում ու գործիականում, ինչպես գրաբարում էր, այլև հայցականում։ Բացի այդ, f-ն մի շարք բառային կազմավորումներում արդեն իր ածանցական նշանակությունը հաստատել էր։*

Միջինհայերենյան տեքստերի դիտարկումները ակնհայտորեն հաստատում են նախկին հոգնակերտների այդ ֆունկցիոնալ ընդլայնումը։ Եվ իսկապես, f մասնիկի ձևաբանական էվոլյուցիան մի շարք կազմավորումներում հասցրեց այն բանին, որ նա սկսեց աստիճանաբար վերածվել ածանցական տարրի՝ զրկվելով իր նախկին իմաստային-ֆունկցիոնալ արժեքից։ Այս երևույթն ակնհայտորեն երևում է այն կառուցածևերում, որոնք իբրև հոգնակերտ ունեն **եր(ներ)**։ *Նի Սրանց հետ զուգորդվող հոգնակիակազմ հիմքում f-ն արդեն ոչ հոգնակերտ է, ոչ էլ հիմքակազմ հատուկ տարր, այլ պարզապես հիմքի ձևաբանական (բառակազմական) բաղադրիչ։ Իսկ այս պրոցեսը հաճախանում է վաղ աշխարհաբարում և հատկապես նոր գրական հայերենում։*

Թեև **եր**, *նի հոգնակերտների հետ զուգորդվող որոշ հիմքերի վերջնահանգում ամրանում է* **f** *տարրը, ապա այդ ազդանշան է այն բանի, որ նշված հիմքերի, իբրև եզակի բառաձևերի, ինքնուրույն, անկախ գործածության մեջ ևս f-ն ածանց էր։ Ասենք, եթե դեռևս Հովհաննես Սրգնկացին (XIII դ.) ասում է. «Այդտեղ շէնիլ ամուր չի լինի» (ՀՆ, ՈւՔ, 148) և հանդիպում ենք շէնիեր հոգնակի ձևի (համմտ. շենքերոյս՝ ԳԱ, ՈւՏ, 256), ուրեմն սա մեր ասածի հաստատումն է։ Սակայն f-ի հոգնակերտ—ածանց անցումը կատարվել է շատ դանդաղ, և հաճախ դժվար է որոշել, տվյալ կոնտեքստում այն հոգնակերտի թե ածանցական տարրի նշանակություն, ֆունկցիա ունի։ Համեմատ դեպս ասորև բերվող օրինակ-*

ներում f-ն արդեն ածանցական տարր է, կամ ունի այդպիսին դառնալու ակնհայտ միտում։

Եվ այսպես f-ն ակնհայտ ածանցական տարր է հետևյալ կազմավորումներում. վանքերուն (Ֆ, Բ, 40), աչքեր (Ն. տ. 53, ՀՄԺԾ, 182. ՆՔ, ՀԿ, 73), պարտքեր (Ֆ, Բ, 229), ունքեր (ՄՄ, ՀՆ, 172. ՆՔ, ՀԿ, 76), ունքերովն (ՆՔ, ՀԿ, 244), ճեղքերն (ՀՄԺԾ, 298), շենքերոյս (Ն. տ. 422), թևքերուն (Ն. տ. 446), օնքվի (ՀՄԺԾ, 114), մեղքունք (ՆՔ, ՀԿ, 67), նաև f>կ անցումով՝ զուռկունքն (Ն. տ. 82)։ Իսկ ստորև բերվողներում f-ի ածանցական տարր դառնալու միտումը նկատելի է։ Այդպիսի դեպքեր են. գուռզանքն (ՍՍ, Գ, 18), զիւր խաւսքն (Ն. տ. 23. Համմտ. ՀԵ, ՈւՔ, 187. ԱԱ, ՕՔ, 6. ԱԱ, ԱԱ, 205), շինեցի զվանքս (ԴՀՎ, I, 63, XIII դ. Համմտ. ՍՍ, Գ, 50. ՄԺ, 20. վանք մի՝ ՆՄ, ԺԱՎ, 164), զալքըդ (ՀԵ, ՈւՔ, 144. Համմտ. Ֆ, Բ, 26. Ղ3, ՀՆՈՎ, Ք, 102, XIII դ., ԱԱ, ՕՔ, 27, 37. ԱԱ, ԱԱ, 247), և մէկ աչքն քան զմէկն փոքրանայ (Գ, ՔՔՄ, 203), թէ այս ցաւ ի մէկ աչքն լինի (ԱԱ, ՕՔ, 220), զկեանզդ (ՀԵ, ՈւՔ, 145, Համմտ. ԱԱ, ՕՔ, 9), զալլոց մեղք դու մի քններ (ՀԵ, ՈւՔ, 145), զնորա անէծքն (Ն. տ. 150), զմիտզդ (Ն. տ., Համմտ. ԱԱ, ՕՔ, 24, 48, 266), չաւտամ թէ նա խելք ունի (ՀԵ, ՈւՔ, 151. Համմտ. Ֆ, Բ, 27. ՄՀ, ՋՄ, 138. ԱԱ, ԱԱ, 266. ԳԱ, ՈւՏ, 237), զմէչզդ (Ֆ, Բ, 59, Համմտ. ՀԵ, ՈւՔ, 163), զկաշառքն (Ն. տ. 129), զքո զամենայն չանք (ՄՀ, ՋՄ, 16), որ աւելի չանք չի դիրի (Ֆ, Բ, 25), ի կուժքն (Գ, ՔՔՄ, 48. ԱԱ, ԱԱ, 19), զկուրծքն (ԱԱ, ՕՔ, 59), ի գիրքս գրեալ եմ (ՄՀ, ՋՄ, 31), զրքիս շինողն (ԱԱ, ՕՔ, 29), գիրք մն (Ն. տ.), զայս գիրքս (ԱԱ, ԱԱ, 124), զերկինքն (ԱԱ, ՕՔ, 29), զունքըն (Ն. տ. 37), զշէնքն (Ն. տ. 47), արտասուքն ի արտմութենէ լինի (Ն. տ. 48), Համմտ. զարցունքն (Ն. տ. 97), զաղիքն (Ն. տ. 65), զմօրուքն (Ն. տ. 112), իրք մն (Ն. տ. 137. Համմտ. ԱԱ, ԱԱ, 8), առանց քթին երեսն շնորհք չունի (ԱԱ, ՕՔ, 40), քրտինք բերող (ԱԱ, ԱԱ, 19), Համմտ. զքրտունքն (ՄՄ, ՀՆ, 171, XVI—XVII դդ.), զձևոքըդ (ԱԱ, ԱԱ, 256), զվանքն (ՄՆ, ՈւՔ, 118), զքելքդ (Ն. տ. 134). զկամքն (ՀՔ, Տ, 162), զոտքդ (Ն. տ. 149), միմեանց սիրով զոմր աւէին (ՄՄ, ՀՆ, 157, XVI դ.), շրթունքդ շող է լուսեղէն (ՀՔ, Տ, 161. Համմտ. ԳԱԻՏ, 68), ունքովդ (ՆՔ, ՀԿ, 104), խելօքէն (ԱԱ, ՕՔ, 91)։

Որ իսկապես այս կարգի կազմավորումներում f-ն դեռևս վերջնականորեն չի հաստատվել իբրև ածանցական արժեք ունեցող տարր, երևում է նաև նրանից, որ այս կիրառություններին զուգահեռ՝ հարացուցային այլ ձևերում հաճախ հանդիպում ենք գրաբարաբառիկ կառուցվածքների. իրաց (ՀԵ, ՈւՔ, 143. Համմտ. Գ, ՔՔՄ, 69

ԱԱ, ՕՔ, 253. ԱԱ, ԱԱ, 8), մտաց Հե, ՈւՔ, 150), մտոքդ (ՆՔ, ՀԿ, 302), երկնից (Հե, ՈւՔ, 153). խելաց (Ն. տ. 154), աչից (Գ. ՔՐՄ 87), աչիցն (ԱԱ, ԱԱ, 164), վանացն (ՆՄ, ԺԱՎ, II, 164), ձեռօք (ՆԿ, ՈւՔ, 160), մեղօք (Ն. տ. 161), մեղաց (ՆՔ, ՀԿ, 303), կամօքն (Ն. տ.), շրթանց (ԳԱԻՏ, 80), քրտնօք (ԱԱ, ՕՔ, 79, գրբ. քըրտամբք), աշխատանօք (Ն. տ. 7). Համմտ. նաև՝ ի կնանս (Հե, ՈւՔ, 153)։

Ք-ն ածանցական տարր է դառնում նաև ձևաբանորեն վերակազմավորվելով երբեմնի հիմքային վերջնահանգի հետ։ Ծմն Կ. Երզնկացին (XIII—XIV դդ.) ասում է. «զինչ որ շրթունքըս բարբառի» (տե՛ս Կե, S. 207), ապա այստեղ շրթունք ձևը հնարավոր է, որ դործածված լինի եզակի-հավաքական նշանակությամբ։ Մենք նկատի չունենք այն, որ այստեղ ստորոգյալը եզակի է. համաձայնությունը միջին հայերենում այդ հարցի լուծման համար վճռական գործոն չէ։ Այստեղ պարզապես հնարավոր է -ունք> ունք անցում, թեև, իհարկե, նույնիսկ նոր գրական հայերենում (հատկապես արևմտահայերենում նաև այժմ) կարելի է հանդիպել հոգնակի արժեքով դրա գործածության։ Համմտ. զբանադրանքն (ԱԱ, ՕՔ, 5)։

Ք-ի ձևաբանական-ֆունկցիոնալ այս տեղաշարժի հետ կապված, ինչպես և կառուցվածքային ու արտակառուցվածքային այլ հանգամանքներով պայմանավորված՝ որոշ բառերում հանդիպում ենք այդ նույն տարրին, թեև իբրև բառակազմական բազադրիչ նա այդտեղ սպասելի չէ. Ու ցնծացաւ աշխարքս ամէն (Կե, S, 128), բայց՝ զաշխարհս (Ն. տ. 214), բղուղքն քիչ մն պինտ է (ԱԱ, ՕՔ, 29), զառաջքն (Ն. տ. 19), վվերջքն (Ն. տ.), բոլորք «շուրջ» (ԱԱ, ԱԱ, 281. Համմտ. բոլոր «շուրջ» Ն. տ. 283), պատկերք մի (ՀՔ, S, 122), եզակի նշանակությամբ՝ ի ջաղացքն (ԱԱ, ԱԱ, 267)։ Այսպիսի կազմավորումների սաղմեր նկատելի են դեռևս գրաբարի շրջանից, սակայն գրաբարում ք-ի այդպիսի հաստատումը սովորաբար կապված էր՝ եզակի ձևի համեմատությամբ հոգնակիի լրացուցիչ լեքսիկական նշանակություն ստանալու հատկության հետ։

Ուշադրություն է գրավում մի այլ երևույթ ևս։ Հոգնակիակազմ որոշ հիմքերում պետք է որ լիներ ք ածանցական տարր. բայց այդ սպասվող տարրը չկա երբեմն։ Արդեն վաղ միջին հայերենից սկսած և ուշ գրաբարյան տեքստերում հանդիպում ենք ք ածանցականացող տարրի՝ մի շարք, հատկապես նախկին անեզական բառերում, ինչպես՝ վանք, մուտք, աչք, հետք, խոսք, տեսք, ցանք, ունք, ոտք, միտք, ուշք, ձեռք, խաղք, եզերք և այլն։

Այս կարգի բառերի սկզվող եզականաբար գործածությունները քիչ վերը ծանոթացանք։ Եվ եթե ասենք՝ աչ ձևը արդեն կարող էր գործածվել իբրև եզակի, իսկ եզակի ձևն էլ հոգնակիակազմ հիմք է, ապա հոգնակիում պետք է ունենայինք աչ+եր>աչեր։ Միջինհայերենյան աղբյուրների դիտարկումները ցույց են տալիս, որ երբեմն, առանձին հեղինակների մոտ՝ այդպես չէ։ Հոգնակիակազմ հիմքում ե-ն կարող է վերանալ, հանգես չգալ. այսպես՝ աչեր (ՆՇ, ԲՋ, 561. Հն, ՈւԲ, 164. ԽԿ, ՈւԲ, 135. ԿԵ, Տ, 161. ՄՆ, ՈւԲ, 107. ՀՔ, Տ, 120. ԳԱԻՏ, 58. ՆՔ, ՀԿ, 46. ՄՄ, ԸՆ, 159, XVI դ.), դաչերն (ՆՇ, ԲՋ, 561, Համմտ. ՆՄ, ԺԱՎ, III, 180. ԽԿ, ՈւԲ, 131. ՄՆ, ՈւԲ, 130), աչերոյն (Գ, ՔԲՄ, 115), աչերուն (ՀՄԺՆ, 149), ի յաչերն (Գ, ՔԲՄ, 174), մտերոյն «մուտքերին» (ՍՍ, Գ, 37), վաներ «վանքեր» (Ն. տ. 43. Համմտ. ՂՅ, ՀՆՈՎ, Ք, 251. ՀՔ, Տ, 227), ղվաներոյ «վանքերի մասին» (ՍՍ, Գ, 39), վաներացն (Հն, ՈւԲ, 165), հետեր (Գ, ՔԲՄ, 43. Համմտ. Ղրբ. բրբ. Հէտէր «հետքեր»), խօսերոյն (ԽԿ, ՈւԲ, 184), խօսերով (ԿԵ, Տ, 217), տեսուդ «տեսքիդ» (ԽԿ, ՈւԲ, 136. ՄՄ, ԸՆ, 173, XVI—XVII դդ), տեսովըդ (ԿԵ, Տ, 166), տեսըդ (ՀՔ, Տ, 120), տեսոյն (ԳԱԻՏ, 50), ուներ «ունքերդ» (ԿԵ, Տ, 156. ՀՔ, Տ, 226, 152, 142. ԳԱԻՏ, 57, 67. ՆՔ, ՀԿ, 71. ՄՄ, ԸՆ, 163), ցաներ «ցանքս» (ԱԱ, ԱԱ, 55), զՍև ծովուն հզերն աւիրեցին (ԱԱ, ՕՔ, 8), Համմտ. չրեզերք (ԱԱ, ԱԱ, 41), իսկ Սմբատ Սպարապետի մոտ հանդիպում ենք նաև իրաւեներն «իրավունքներ» ձևին (տե՛ս ՍՍ, Գ, 45, 125), ուր հիմքավերջում սպասելի էր ունի ձևաբանական տարրը, Համմտ. «Կու հրամայէ աւրէնքս եւ առաքելական իրաւունմս» (Ն. տ. 20)։

Այս երևույթի վերաբերյալ Հ. Աճառյանը մի առիթով անում է հետևյալ դիտողությունը. «Մի խումբ անեզական բառեր, որոնք գրաբարում հանդում են հոգնակերտ ի մասնիկով, կիլիկյան հայերենում եզակիում պահում են ի ձայնը, իսկ հոգնակիում չնչում են (ՀԱ, ԼՔՀ, III, 708)։ Անկասկած, նախ դժվար է բոլոր իրողությունները, որ դիտարկում ենք մենք, հանգեցնել գրաբարյան անեզականներին, մյուս կողմից էլ բերված փաստերը դուրս են գալիս «կիլիկյան հայերենի» շրջանակներից։ Դրանք հատուկ են XII—XVI դարերի գրավոր աղբյուրներին առհասարակ, հանդիպում են աշխարհաբարի կազմավորման շրջանի գործերում, սակավադեպ՝ նույնիսկ արևմտահայ առանձին հեղինակների մոտ։

Նկատված իմաստային-ֆունկցիոնալ տեղաշարժերը ինչ-որ չափով կապվում են նաև ց, ս հոգնակերտ տարրերի հետ, սակայն սրանք մահանալով իբրև հոգնակերտ-հոլովակերտ՝ հալվադեպ զարգացրին բառակազմական ֆունկցիա։ Ուստի նպատակահար-

մար ենք գտնում դրանք բնութագրել հոգնակերտ մասնիկների քննության կապակցությամբ։

Բ) Թվակազմության նոր տիպոլոգիա։ *Չնայած գրաբարատիպ հոգնակիակազմության տակավին միչին գրական հայերենը դարգացրեց թվակազմության նոր կառուցատիպ, կցական տիպոլոգիա։ Այս ամենից առաջ նշանակում էր, մի կողմից, հոգնակիակազմ հիմքի և հոլովակազմ հիմքի բաշխում, մյուս կողմից, հոգնակերտ մասնիկների ու հոլովակերտ վերջավորությունների բաշխում, որ նույնն է՝ հոգնակիակազմության ու հոլովակազմության անջատում։ Դրան զուգահեռ համակարգային հոգնակիակազմությունների համար հաստատվեց նոր հոգնակերտների դործածություն, միավանկների համար ներ, երկվանկների համար ներ, բազմավանկների համար ներ կամ ներ։ Աստիճանաբար եզակի ուղղականի ձևը դառնում է հոգնակիակազմ հիմք և՛ ուղիղ, և՛ թեք հոլովաձևերում։ Կառուցվածքային այս տիպը թեև միչին գրական հայերենում չհասավ իր վերջնական ավարտին, բայց նա այդպիսի հետևանքի հասավ նոր հայերենում ընդհանրապես։*

Առայժմ դժվար է ասել, թե վանկաքանակությունը կառուցվածքային ինչ պահանջներով դարձավ հոգնակիակազմ հիմքերի դուգորդումների ելակետ։ Դրա պատճառները թաղված են միչին հայերենի կազմավորման ակունքների հետևյան մեջ։ Հոգնակիակազմության այս նոր տիպոլոգիայի համաձայն՝ վանկաքանակությունից է կախված, թե հիմքը ինչպիսի հոգնակերտի հետ պետք է զուգորդվի. ըստ այդմ առանձնանում են միավանկ, երկվանկ, բազմավանկ հիմքատեսակներ։ Սակայն միավանկների ու բազմավանկների հակադրությունը, մի կողմից, և երկվանկների ու բազմավանկների հակադրությունը, մյուս կողմից, խիստ ընդգծված չէր. միավանկ հիմքերը համակարգայնորեն զուգորդվում են ներ, երկվանկները՝ ների հոգնակերտի հետ, իսկ բազմավանկ հիմքերը՝ ներ, ների, ներ։

Միչին գրական հայերենի զարգացրած այս նոր տիպոլոգիայով միավանկների հոգնակի ուղղականում և առհասարակ ուղիղ բառաձևերում (այսինքն այն բոլոր դեպքերում, երբ հոգնակի հայցականն էլ կառուցվածքով հետևում է հոգնակի ուղղականին) ունենք եզակի ուղղականի ձև + ներ կաղապարը։ Հոգնակիակազմության այս կաղապարը, թեև հազվադեպ արտահայտություններ ուներ V—VIII դարերի և ավելի ուշ շրջանի գրավոր աղբյուրներում, ընդհանրական կիրառություն ձեռք բերեց XII—XVI դարերի ընթացքում. և այսպես՝ կոթեր (ՆԵ, ԲՉ, 562), հաւեր (ն. տ. 566. կե, Տ, 118), բակեր (ԴՀՎ, II, 33, XIII դ.), տաւներ (ՍՍ, Դ, 43), սալեր (ն. տ. 44), մորթեր (ն. տ. 45), որձեր (ն. տ. 69), օրեր (ՀԵ, ՈւԲ, 148. ՄՀ, ՋՄ,

41. ՄՆ, ՈւՔ, 128, ՄԺ, 171, XVI դ.), մարգեր (ՀՆ, ՈւՔ, 158. ՆՄ, ԺԱՎ, 45), քաներ (Ֆ, Բ, 44. ԿՆ, Տ, 165. ԱԱ, ՕՔ, 157. ՄՆ, ՈւՔ, 123. ԳԱ, ՈւՏ, 160), մաղձեր (Գ, ՔՐՄ, 16), գործեր (ՄՀ, ՋՄ, 3. ԱԱ, ՕՔ, 157), դեղեր (ՄՀ, ՋՄ, 20. ԱԱ, ՕՔ, 46), ճանկեր (ՄՀ, ՋՄ, 43), հապեր (Ն. տ. 51. ԱԱ, ՕՔ, 457), խոզեր (ՆՄ, ԺԱՎ, 22), տաշտեր (ՂՅ, ՀՆՒՎ, Ք, 99), ծամեր (ԽԿ, ՈւՔ, 188), մազեր (ԿՆ, Տ, 163. ԱԱ, ՕՔ, 188. ՆՔ, ՀԿ, 79), ուժեր (ԱԱ, ԱԱ, 8. ԱԱ, ՕՔ, 36), տեզեր (ԱԱ, ԱԱ, 102. կանաչ տեղեր նիստ՝ ԱԱ, ՕՔ, 471), միլեր (ԱԱ, ԱԱ, 123), փարչեր (Ն. տ. 127), քովեր «մոտեր» (Ն. տ. 194), եղեր (Ն. տ. 367), ափեր (ԱԱ, ՕՔ, 6), կողեր (Ն. տ. 29. ՆՔ, ՀԿ, 41), ծակեր (Ն. տ. 30, 43), գաներ (Ն. տ. 76), օդեր (Ն. տ. 82. ԱԱ, ԱԱ, 368), շափեր (ԱԱ, ՕՔ, 186), տակեր (մագին տակերն՝ Ն. տ. 458), վարսեր (ՀՔ, Տ, 123), հիւրեր (Ն. տ. 210), ժոմեր (ՆՔ, ՀԿ, 52). ծովեր (Ն. տ. 78), ամպեր (ՄՄ, ԸՆ, 165, XVI—XVII դդ), ներկեր (Ն. տ. 196), հողմեր (ՀՄԺԾ, 219), սուրբեր (Ն. տ. 390), հողեր (ԴՀՄ, I, 63, XIII դ.)։

Կառուցվածքային այս կաղապարը, որ գործում է ուղղականում և հայցականում, առհասարակ պահպանվում է թեք հոլովաձևերում։ Այստեղ իհարկե պետք է հաշվի առնել այն հանգամանքը ևս, որ եր, ևի հոգնակերտների երևան գալը և հոգնակիությանազմության նոր տիպոլոգիայի հաստատումը ուղակցվել են կառուցվածքային այլ փոփոխություններով, ընդ որում և զ նախդիրի աստիճանական անկումով հոգնակի հայցականում։ Դրա հետ կապված՝ հայցականի հոգնակին կազմության նպանակով նույնանում է ուղղականի հոգնակիի հետ։ Իսկ եթե զ նախդիրը պահպանված է հոգնակի հայցականում, ապա ուղղական և հայցական բառաձևերի տարբերությունը միայն զ-ի առկայությունն է հայցականում։ Եվ քանի որ զ-ի առկայությունը կամ բացակայությունը որևէ չափով չի ազդում հոգնակիի կառուցվածքի վրա, ապա զ-ով հայցականն էլ նույն հոգնակիությունն ունի, ինչ որ ուղղականը։

Որ իսկապես այդ այդպես է, երևում է թեկուզ հետևյալ փաստերից. Ճրղեր—զճրղեր «ծառեր» (ՆԾ, ԲՋ, 563), ծիեր (ՍՍ, Դ, 52)——զծիեր (Ն. տ.), քներն (ՄՀ, ՋՄ, 47)—զքներն (Ն. տ. 30), պընչեր—զպնչեր (Ն. տ. 77), աչեր (ԿՆ, Տ, 161)—զաչեր (Ն. տ. 124), այսպես և՝ զհամերն (ԱԱ, ԱԱ, 6), զդեղերն (ԱԱ, ՕՔ, 5), զօդեր (Ն. տ.) և այլն։

Այստեղ ավելորդ ենք համարում բերել առանց զ նախդիրի ուղղականաձև հայցականի օրինակներ, նախ նրա կառուցաձևն ինքնին հասկանալի է դառնում, բացի այդ՝ վերը, ուղղականի, «ուղիղ» բառաձևերի կառուցվածքի ցուցադրման առիթով ներքրավ-

ված են նաև առանց գ նախդրի հայցական հոգնակիներ ևս։

Ուրեմն հայցականը թեև հոգնակիակազմությամբ բացարձակորեն նույնն է ուղղականի հետ, բայց նրանում առկա են կառուցվածքային երկու (ճիշտ է, խիստ մերձավոր) կազապար. մեկը՝ եզակի հայցականի ձև+եր. (ղ)դեղ+եր>(ղ)դեղեր, մյուսը՝ ուղղականի հոգնակի կառուցաձևը. հոգն. ուղղ. դեղեր, հոգն. հայց. նույնպես դեղեր։ Առաջին տարբերակը, գ-ի անկմանը զուգահեռ, հետագայում աստիճանաբար նվազում և գործածությունից դուրս է ընկնում, իսկ երկրորդը հաստատուն զարգացում է ապահովում նոր գրական հայերենում, գրական աշխարհաբարում։

Ուղղականի հոգնակիակազմության կազապարը ներխուժում է նաև սեռ.—տրականի ու այլ թեք հոլովների կառուցվածքը։ Այս նշանակում է, թե հոգնակի ուղղականի ձևը դառնում է ընդհանրական հոլովահիմք թեք ձևերում։ Այստեղ արդեն առկա են և՛ հոլովակազմություն, և՛ թվակազմություն, բայց կառուցվածքային բաշխումով։ Անկախ են իրարից հոլովակազմ և հոգնակիակազմ հիմքերը, տարբեր են նաև հոլովակերտ և հոգնակերտ վերջավորությունները։ Ըստ էության կառուցվածքային այս բաշխումը կա նաև հոգնակի ուղղականում և հայցականում, թեև դրանց մեջ հոգնակերտն առկա է, բայց հոլովակերտը նյութական արտահայտություն չունի։ Բայց այսպիսի կազապարավորում հնարավոր է, եթե եւ-ենթ-ը այսպես կոչված զրո վերջավորության գաղափարից, որպիսի ըմբռնումն էլ համոզիչ հիմնավորում չունի։

Հոգնակիակազմությունը սեռ.-տրական բառաձևում ունի հետևյալ պատկերը. հոգնակիակազմ հիմք+հոգնակերտ+հոլովակերտ։ Եվ քանի որ այս կազապարում հոգնակիակազմ հիմք+հոգնակերտ հավասար է ուղղականի հոգնակի ձևին, ապա կարող ենք ասել՝ հոգնակի ուղղականի ձև+հոլովակերտ։ Միջին գրական հայերենում հոգնակի սեռ.-տրականի հոլովական վերջավորությունը սովորաբար ոյ||ու է. ուրեմն կունենանք դեղ-եր-ոյ||դեղ-եր-ու։ Այսպես՝ ապգերոյս (ՍՍ, Գ, 42), գեղերոյ (Ն. ս.), բերդերոյ (Ն. ս. 170), խոցերոյս (Ֆ, Բ, 65), բաներոյս (Ն. ս. 93), աչերոյն (Գ. ՔՒՄ, 115), ջերմերոյն (ՄՀ, ՋՄ, 2), կողերուն (Ն. ս. 4), ձիթերոյն (Ն. ս. 13), խոզերուն (ՆՄ, ԺԱՎ, 22), ծառերոյն (Ն. ս. որմ. VI. 172), կովերոյն (ԴՀՎ, I, 27, XIV դ.), դեղերուն (ԱԱ, ՕՔ, 9), տներուն (Ն. ս. 7), աչերուս (ՄՆ, ՈւՔ, 160), գետերուն (ՀԹ, Տ, 222. տե՛ս և՝ ԳԱԻՏ, 92), սարերոյս (ԳԱ, ՈւՏ, 254), ծծերուն (ՆՔ, ՀՎ, 70), գուներուն (ՄՄ, ԸՆ, 196, XVI—XVII դդ.), տներոյդ (ԴՀՎ, I, 43)։

Հազվագեպ արտահայտություն է դառել հոգնակի ուղղականի ձև+ացq կաղապարը. օր.՝ բերքերացq (Մժ, 82, XIII դ.), որ ենթադրում է ուղղականում բերքերէ ձև, խաչերացq (Ն. տ. 136, XVI դ.), որ իր հերթին ենթադրում է խաչերէ ձև։

Բացառականի հոգնակին ունի կառուցվածքային այսպիսի զբաղեցրածներ. հիմնականում վերլուծական կազմություն ունի՝ ի նախդրի և հոգնակի սեռ.-տրականի հարադրությամբ. օր.՝ ի դեղերոյ։ Միջին գրական հայերենը միավանկների բացառականի համար մասնիկավոր ձև ըստ երևույթին չի զարգացրել։ Նույնը պետք է ասել դրանց հոգնակի ներգոյականի վերաբերյալ. օր.՝ ի յաչերն (Ծ, ՔՄԲ, 174), ի մեջ թիւերին (ԳՁ, ՈՏ, 237)։

Գործիականի հոգնակին որոշակի մասնիկավոր կազմություն ունի՝ հոգնակիակազմ հիմք+հոգնակերտ+հոլովակերտ կաղապարով, որ նույնն է՝ հոգնակի ուղղականի ձև+գործիականի հոլովակերտ. դեղեր—դեղերովն (ՍՍ, Դ, 89. Հե, ՈՒ, 187), ծխեր—ծխերով (ՍՍ, Դ, 52), ձիթեր—ձիթերովն (ՄՀ, ՁՄ, 10), աչեր—աչերով (ԿՆ, Տ, 130), սարեր—սարերովն (Ն. տ. 153), հոտեր—հոտերով (ԱԱ, ՕԲ, 129)։

Ամփոփելով միավանկների հոգնակիակազմությունը ուղիղ և թեք ձևերում, կարելի է այն ներկայացնել հարացուցային ցուցադրումով.

հոգն. ուղղ.	*դեղեր (եզ. ուղղ. գնդ)*
սեռ.-տր.	*դեղերոյ/դեղերու*
հայց.	*(զ)դեղեր*
բաց.	*ի դեղերոյ/ի դեղերու*
գործ.	*դեղերով*
ներգ.	*ի մեջ դեղերոյ, ի մեջ ի դեղերոյ, ի մեջ դեղերու*

Երկվանկ հիմքերն առանձնանում են նրանով, որ գերազանցապես զուգորդվում են նի հոգնակերտի հետ՝ ի տարբերություն միավանկների, որոնք սովորաբար ունեն ե՛ր հոգնակերտ, երկվանկ հիմքերը, բացի նի մասնիկից, կարող են ընդունել նաև ե՛ր, ե՛ր, թեև իհարկե հոգնակիակազմության տիպոլոգիան որոշում են նիով զուգորդումները։ Սակայն կառուցատիպի տեսանկյունից դիտելով նկատում ենք, որ, օրինակ, ուղղականում և հայցականում ինչպես միավանկները, այնպես էլ երկվանկները կանգնում են մեկ գծի վրա. ունեն եզակի ձև+հոգնակերտ կաղապարը, այն է՝ եզակի ուղղականի ձև+նի, եզակի հայցականի ձև+նի. *այսպես՝*

եզակի ուղղ.-ի ձև	հոգն. ուղղ.-ի ձև
սար	սար-եր
քար	քար-եր
բանճար	բանճար-նի
քաղաք	քաղաք-նի
եզակի հայց.-ի ձև	**հոգն. հայց.-ի ձև**
(զ)սար	(զ)սար-եր
(զ)քար	(զ)քար-եր
(զ)բանճար	(զ)բանճար-նի
(զ)քաղաք	(զ)քաղաք-նի

Ինչպես նկատելի է, ուղղական և հայցական բառերի կառուցվածքային հակադրությունն այստեղ հասցված է մինիմումի, նվազագույնի. եզակիում այդ տեղի էր ունեցել շատ վաղուց։ Միակ տարբերիչ նշանը զ նախդիրն է, այն էլ որոշյալ բառաձևերում։ Ուրեմն անորոշ բառաձևերում կառուցվածքային ոչ մի տարբերություն չունենք։ Իսկ սա էլ նշանակում է, թե հայցականն էլ ուղիղ բառաձևի վերածվելու ակնհայտ միտում ունի։ Թեկուզ և հոգնակիակազմության առումով, մանավանդ առանց զ-ի հայցականը կարելի է ուղիղ բառաձևի տակ վերցնել, ինչպես որ մեսամբ մենք էլ վարվել ենք։

Թթե նկատի ունենանք նաև այն, որ ուղղականում և հայցականում հնարավոր են հոգնակի բառաձևի զուգորդումներ հոդի հետ, ապա վերը ցուցադրված կաղապարները կներկայանան այսպիսի տեսքով՝ եզակի ձև (ուղղական, հայցական)+հոգնակերտ(+հոդ). օր. բանճար-նի(-ն) կամ (զ)բանճար-նի(-ն)[11]*։*

Եվ այսպես՝ «ուղիղ» բառաձևերում (ուղղական, առանց զ-ի հայցական) հոգնակիակազմ հիմքը եզակի ուղղականի ձևն է. զօդուած>զօդուած-նի (Գ, ՔՒՄ, 162. ԱԱ, ՕՔ, 440), մարագ>մարագ-նի (ԴՀՎ, I, 63, XIII դ.), հմմտ. շարապնի (ՄՀ, ՋՄ, 99. ԱԱ, ՕՔ, 494), ծաղկոցնի (Կե, S, 137), փորոքնի (ԱԱ, ՕՔ, 31), երաշնի (Ն. տ. 156. ԱԱ, ԱԱ, 91), ծարուրնի (ԱԱ, ՕՔ, 203), ճուարիշնի (Ն. տ. 256), բանճարնի (Ն. տ. 407. ԱԱ, ԱԱ, 82), պահմաննի (ԱԱ, ԱԱ, 21), ճոհարնի (Ն. տ. 37), կալուածնի «փակվածներ» (Ն. տ. 55), խանտակնի (Ն. տ. 132), կեղևնի (Ն. տ. 503)[12]*։*

---

[11] *Ըստ ՀԱ, ԼՔՀԼ, III, 708՝ ուղղականի հոգնակիակազմ հիմքը առանձին դեպքերում հնարավոր է և եզակի սեռականից, օր. անուն—անվներ. բացառիկ ձև է։*

[12] *Թթե երբեմնի բազմազանկ բառը վանկային համատառությամբ (ձայնավորի*

Երկվանկների «տուդիդ» (ուղղական, աննախդիր հայցական) ձևի հոգնակիակազմությունը նույն կաղապարն ունի նաև այն դեպքերում, երբ հոգնակիակազմ հիմքը զուգորդվում է ոչ թե նի. այլ ներ. կամ ներ հոգնակերտի հետ այսպես՝ պահնորդ—պահնորդներ (ՍՍ, Դ, 69), իրաւներ «իրավունքներ» (ն. տ. 45. Ղ3, ՀՆԻՎ, Ք, 259), խայալներ (ԱԱ, ՕԲ, 82), երակներ (ԱԱ, ԱԱ, 32), շինականներ (ն. տ. 47), թանաֆներ (ՆՔ, ՀԿ, 118), զավաթներդ (ն. տ. 236), ղազախներն (Մժ, 161, XVI դ.)։

Սակայն այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում անել հետևյալ դիտողությունը։ Երկվանկ հիմք+եր (կամ՝+ներ) կաղապարով հոգնակիակազմության շատ քիչ դեպքեր ենք նկատել։ XII—XIV դարերի սկզբնաղբյուրներում դրանք առանձին բացառություններ են, իսկ նոածներն էլ ունեն նաև կանոնավոր, նի հոգնակերտով կազմություններ, ինչպես այդ ակնառու երևում է բազմաձևությունների դիտարկումներում։ Իսկ առհասարակ ներ-ով զուգորդումները մեծ մասամբ ավելի ուշ շրջանին են վերաբերում, երբ վաղ աշխարհաբարը արդեն իրեն զգալ է տալիս նման տիպի կառուցածներով։

Ամիրտովլաթ Ամասիացու մոտ (XV դ.) «Անդիտաց անպէտ»-ում նկատել ենք մի ուրույն կառուցածև. որոշ միավանկ բառեր, ստանալով կ(ը) ածանցական տարրը, որն քան երևույթին ակնհայտորեն նվազափաղաքշական մի տարբերակ է, հոգնակիակազմ հիմքում վերածվում են երկվանկի և զուգորդվում ներ հոգնակերտի հետ։ Այդ այդպես է նաև նույն ածանցումով երկվանկ դարձած հիմքերի դեպքում առհասարակ. օր. հատիկ—հատիկներ (ԱԱ, ԱԱ, 55, 97)։

Կարելի է կարծել, թե հոգնակիակազմ հիմքում ոչ թե կ(ը) տարբերակն ունենք, այլ (ը)կ. այսինքն՝ քար(ը)կներ թե քարկ(ը)ներ։ Բայց հետագա հայերենում (և նույնիսկ միջին գրական հայերենում), բարբառներում ներ-ից առաջ, բաղաձայնական այլ կարգի կուտակումների դեպքում, ը տարրը գերազանցապես հանդես է գալիս անմիջականորեն բաղաձայնահանգ հիմքավերջի և ներ-ի միջև։ Ուստի այստեղ էլ կարելի է վստահորեն ասել, որ՝ խարկներ և ոչ խարըկներ։

Եվ այսպես՝ նվազափաղաքշական այս տարրով հոգնակիակազմ հիմքերի զուգորդումներ են. շոկներ (ԱԱ, ԱԱ, 46, 183, 407), քարկներ (ն. տ. 86), հունդկներ (86, 311), փուշկներ (86, 158),

---

հնչյունափոխությամբ) վերածվել է երկվանկի, ապա դրա համար գործում է երկվանկներին բնորոշ կաղապարը՝ տե՛ս նաև՝ ՀԱ, ԼՔՀԼ, III, 708, 709)։

փշկներ (246, 417), տակկներ «արմատիկներ» (521), մրգկներ (506), մազկներ (501, 577), վարդկներ (417), գունտկներ «գնդիկներ» (570), որդկներ «որդեր» (147, 572), կետկներ (263), թևկըներ (479), հղկներ (546, 33), հապկներ (619)։

Թեև սակավ, բայց առկա են երկվանկով ու կ(ը) տարրով հոգնակիակազմ հիմքեր ևս. կոծիծ—կոծիծկներ (ԱԱ, ԱԱ, 525), որդըն—որդնկներ (617, 301. հմմտ. վերը՝ որդկներ), այսպես և՝ շամամկներ (555), շաղգամկներ (90)։

Թեև միջին գրականում ևս գործածական էր այսպես կոչված որոշյալ հայցական ձև, բայց զ նախդիրի առկայությունը ոչնչով չի ազդում հոգնակիակազմության տիպոլոգիայի վրա. հոլովակազմության մեջ էլ նա լրացուցիչ քերականական հատկանիշ է։ Բացի այդ միջին գրական հայերենում հայցական բառաձևը կարող է առանց զ նախդիրի ևս որոշյալ լինել՝ ունենալով որոշյալի ցուցիչ և հոդը։ Այս դեպքում արդեն կառուցվածքային որևէ տարբերություն չկա ուղղականի և հայցականի հոգնակիների միջև։ Ուրեմն աննախդիր հայցական+ների կաղապարը նույնն է, ինչ որ եզակի ուղղական+ների կաղապարը։ Նախդրավոր, մասնավորապես զ նախդրով հայցականի հոգնակիակազմությունը հետևում է եզակի հայցական+ների կաղապարին։ Հետագա հայերենում զ-ի անկումով այդ մասնակի տարբերությունը ևս վերացավ. գործածության մեջ մնաց մեկ ընդհանուր կաղապար և՛ ուղղականի, և՛ հայցականի հոգնակիակազմության համար։ Եզակի հայցականի ձև+ների կաղապարին հետևող օրինակներից են. ըզորսորդնին (ՆՇ, ՔՉ, 569), զպաղչանին (կն, S, 137), զպուխարնի (ԱԱ, ՕՔ, 146), (զ)ոսկորնին (ն. տ. 29), զկարճնի (ԱԱ, ԱԱ, 81), զծաղկնի (ն. տ. 543), (զ)ծառանին (ՄՄ, ԸՆ, 157, XVI դ.), զճանպնին (ՄԺ, 170, XVI դ.), զկարսրնին «փարաններ» (ն. տ. 301)։

Սա հայցականի հոգնակիակազմության հիմնական կառուցատիպն է, թեև, ինչպես երկվանկների ուղղականում, այստեղ էլ մասնակիորեն առկա են նաև եր-ով, ներ-ով գուգորդումներ. զբժշկերն (ՍՍ, Դ, 14), զաղչկներոյն (ն. տ. 112. փոխառուն հայցական է)։

Բուն թեք հոլովաձևերից համակարգային հոգնակիակազմության նոր տիպոլոգիան որոշակիորեն արտահայտվում է սեռ.-տրականում։ Այստեղ գործում է հոգնակի ուղղականի հիմք+հոլովակերտ (+հոդ) կաղապարը. ընդ որում հիմքավերջում տեղի է ունենում ի>ե-ու կամ ի>ե-ոյ փոփոխություն, այսինքն ուղղ. հոլովակերտից առաջ՝ ի—ե շրջում։ Ուրեմն սեռ.-տրականում կունեինանք՝ բաղաքեոյն, որտեղ բաղաք եզակի ուղղականի ձևն է,

որից՝ ֆաղաֆնի հոգնակի ուղղականը, իսկ սրանից հոգնակերտի նի—ն շրջումով ստանում ենք հոգնակի սեռ.-տրականի հոլովահիմք, այս հիմքին էլ ոլոյ հոլովակերտի հավելումով՝ հոգնակի սեռ.-տրականի բառաձև. որոշյալ լինելու դեպքում բառաձևը վերջից ունի և հոդը։

Բերենք սեռ.-տրականի հոգնակիակազմության այս կառուցաձևը ցուցադրող մի քանի օրինակներ. պագրնոյն (ՍՍ, Դ, 126), քաղաքնոյն (Ն. տ. 29), գոմշընոյ (Ն. տ. 170), չախչնոյ (Ն. տ. 125), քուռկնոյն (ՆՄ, ԺԱՎ, 23), ծաղկընուն (կե. Տ, 141), չարտրխնոյս (ՀՄԺե, 421), երկնուս (ԱԱ, 0Ք, 35. Հմմտ. ԱԱ, ԱԱ, 17, 81), աղբերնուն (ԱԱ, ԱԱ, 38), պարտիզնուն (Ն. տ. 223), չարտրխնուս (ԳԱ, ՈւՏ, 256)։

Ինչպես հոգնակի ուղղականում և հայցականում, այստեղ ևս նույն կաղապարն է գործում, երբ հոգնակիակազմ հիմքը զուգորդվում է այլ հոգնակերտի հետ, այսինքն՝ առկա է նույն հոգնակի ուղղականի ձև+հոլովակերտ (+հոդ) կաղապարը. օր. nrunrդեrուս ձևում. nrunrդ եզակի ուղղականի ձևն է, որից եr հոգնակերտով ստանում ենք համապատասխան հոգնակին (հոգնակի ուղղական), իսկ սա էլ հանդես է գալիս իբրև թեք հոլովաձևերի, ընդ որում և սեռ.-տրականի, ընդհանրական հիմք. nրսnրդեr-հոլովահիմքին ավելանալով ու հոլովակերտը (և u հոդը) կունենանք ամբողջական nrunrդեrուս սեռ.-տրական բառաձև, որ հանդիպում ենք, օրինակ, Ֆրիկի մոտ։ Այստեղ էլ հոլովակերտը ոլոյ է։

Ահա և մի քանի փաստեր նախ եr-ով, ապա ներ-ով զուգորդումներից. հաւկթերոյ (ՍՍ, Դ, 164), երմկերոյ (Ն. տ. 170), արտպներոյ (Ն. տ. 173), ակընջներուդ (Ծ, Ք, 106), զաւդաւածներուն (ԱԱ, ԱԱ, 546), ըղընկներուն (Ն. տ. 86), սուսաններուն (Ն. տ. 104), քսանիներուն (Ն. տ. 272), եթողներուն (եէթողներուն, Ն. տ. 400, 432), ֆազլաններուն (Ն. տ. 408), վարամներուն (Ն. տ. 493), կարասներոյս (ԳԱ, ՈւՏ, 274), ծաղկներուն (ՀՄԺե, 447) ապուրներուն (ՄՄ, ԸՆ, 222, XVI դ.)։ Սակայն այս կաղապարը, համեմատած ենի-ով համակարգային զուգորդումների հետ, սահմանափակ կիրառություն ունի։

Ուղիղ բառաձևերի հոգնակիակազմության կառուցատիպը թափանցել է նաև գործիական, բացառական, ներգոյական հոլովների հոգնակիակազմության մեջ։ Համակարգային ենի հոգնակերտով զուգորդումներում գործիականի հոգնակիակազմությունը թեք ձևերում ընդհանրացած ենի—ն փոփոխությամբ էւ եթե ուղղականում ունենք ֆաղաֆնի, հայցականում՝ (գ)ֆաղաֆնի, իսկ սեռ.-տրակա-

նում են—ն փոփոխությամբ բաղաքն-ոյ||ու(+հոդ), ապա այս հիմքն էլ մնում է մասնիկավոր կազմություն ունեցող գործիականում՝ զուգորդված նոր (գործիականի) հոլովակերտով. բաղաքն-ով. այսպես և՝ մատղնով (ՍՍ, Դ, 43), բանջրնով (ՄՀ, ՋՄ, 41), շարապնով (ԱՒ, ՕԲ, 329). հմմտ. շարպաթերովն (ԱՒ, ԱՒ, 583)։

Միջին գրական հայերենը բացառականի և ներգոյականի զուտ մասնիկավոր ձև չի զարգացրել, առկա է վերլուծական կառուցաձև, երբեմն գրաբարատիպ կազմավորումների հետևողությամբ հոգնակի ներգոյականը կազմվում է ի նախդիրով և հոգնակի հայցականով. օր. ի յակռայնին «ատամների մեջ» (Գ, ՔՔՄ, 100), կամ ներգոյականի ֆունկցիան արտահայտվում է հարադրությամբ՝ ապուրներուն մէջ (ՄՄ, ՀՆ, 222, XVI դ.), հմմտ. նաև՝ ի բժշկերուն մէջն (ԱՒ, ՕԲ, 508)։

Բացառականի հոգնակին սովորաբար կազմված է ի(յ) նախդիրի և հոգնակի սեռ.-տրականի հարադրությամբ. իսկ եթե այդ այդպես է, և հոգնակի սեռ.-տրականն էլ ունի, ասենք, բաղաքնու(ն) ձև, ապա հոգնակի բացառականում կունենանք ի բաղաքնու(ն) բառաձև. հմմտ. ի յերակնոյն «երակներից» (Գ, ՔՔՄ, 111), յիմ ծառանուն (ԷՀՄԳԱ, 78), առին զՏփխիան ի տաճկնուն (ՄԺ, 169, XVI դ.)։ Կառուցատիպը չի փոխվում, եթե նի-ի փոխարեն եր կամ ներ է. օր. ի պատուական դեղերուն է՝ (ԱՒ, ԱՒ, 53)։ Հազ. վադեպ (Ամիրտովլաթի մոտ) նկատելի են նաև առանց նախդիրի դործածություններ. և թէ կանանչ ուտէ բանճրնուն (ԱՒ, ՕԲ, 72). հմմտ. նաև՝ խաստաթնուն մէկն (ԱՒ, ԱՒ, 70). նույնպես հազվադեպ նաև է բացառականակերտով՝ ի սերեւնէն ի մէջն (Ն. տ. 130), յերեսնէն (Ն. տ. 619)։

Հոգնակիակազմության նոր տիպոլոգիայով կազմավորումները դիտարկելուց կարելի է գալ այսպիսի հետևության։ Յուցադրված կառուցաձևերը ամենից առաջ կցական տիպոլոգիայի հատատումն են նշանակում։ Այստեղ հոգնակիակազմությունը որոշակիորեն զատվել է հոլովակազմությունից. հոգնակիակազմ և հոլովակազմ հիմքերը չեն համատեղում, տարբեր են նաև հոգնակերտ ու հոլովակերտ վերջավորությունները։ Երկվանկների համակարգային կազմավորումներում հիմնական հոգնակերտը ի՛ մասնիկն է, թեև հոլովաձևերում նրա դիրքային և տարբերակը. եր և ներ հոգնակերտները դեռևս ոչ հաճախական գործածություն ունեն, նեղ ոլորտի տարրեր են։

Այսպես կոչված մնկուկես վանկանի հիմքեր, որոնց վերաբերյալ շատ են ակնարկում հատկապես բարբառագիտական ուսումնասիրություններում, միջին գրական հայերենը չի զարգացրել։

Սկզբնագաղտնավանկ երկվանկները հետևում են առհասարակ երկվանկների հոգնակիակազմության կաղապարներին. այսպես՝ գլուխ—գլխի (ՍՍ, Դ, 69. Մժ, 167, XVI դ., ՆՄ, ԺԱվ, 246), մզկիթ—մզկիթնի (Ֆ, Բ, 233), նշան—նշանի (ՄՀ, ՋՄ, 14, 37. ԱԱ, ՕՔ, 80), բլուր—բլրնի (ՆՄ, ԺԱվ, 193). նաև կոուկնի «կոունկներ» (Ն. տ.), խրատնի (ԱԱ, ՕՔ, 68), բժշկնի (Ն. տ. 90. Գ, ՔՔՄ, 5. ԱԱ, ԱԱ, 127, 326), լպուպնի (ԱԱ, ԱԱ, 46), խնձորնի (ՀՔ, Տ, 167)։

Բուն թևք հոլովաձևերում ունենք ևի—ե փոփոխություն. գրաատնոյ (ՍՍ, Դ, 121), նշաննոյս (ՄՀ, ՋՄ, 81), պնակնուն (ԱԱ, ԱԱ, 175), վկայնով (ՍՍ, Դ, 118)։

Բացի այս՝ հոգնակիակազմ հիմք+ևի կաղապարից, երկվանկ սկզբնագաղտնավանկները բուն երկվանկների նման կարող են գործածվել նաև եր կամ ներ հոգնակերտի հետ, թեև սրանք խիստ սակավադեպ են. կտրճեր (ՍՍ, Դ, 7), բժշկներ (Գ, ՔՔՄ, 21), պռունկներդ (ՆՔ, ՀԿ, 78), պռկներն (ԱԱ, ՕՔ, 87, 243. ԱԱ, ԱԱ, 126, 150), ի պռկներն (Գ, ՔՔՄ, 99). Համմտ. ախո-տրականում՝ կտրճերուն (ԱԱ, ՕՔ, 69. ԱԱ, ԱԱ, 316), թթվներ (ԱԱ, ՕՔ, 257)։ Համեմատաբար ուշ միջին գրական հայերենի աղբյուրներում նրկատում ենք, որ երկվանկ վերջնագաղտնավանկները գործածվում են եր հոգնակերտի հետ. փոքրեր (ՄՆ, ՈւՔ, 177), աստղեր (ՆՔ, ՀԿ, 71, 99, 281. ՀՄժն, 129, 388), աստղերուն (ՄՄ, ԸՆ, 198, XVI—XVII դդ.)։

Բազմավանկ *հիմքերն առանձնանում են նրանով, որ չունեն որոշակիորեն կանոնավորված գործածություններ հոգնակերտի հետ։ Սրանք միավանկ հիմքերին (նրանք գործածվում են միայն եր հոգնակերտի հետ) հակադրվում են երբեմն եր, երբեմն ներ, նույնիսկ՝ ևի մասնիկ ընդունելով։ Իսկ երկվանկ հիմքերին հակադրվում են ոչ թե որոշակի հոգնակերտի հետ ունեցած համակարգային գործածությամբ, այլ, ընդհակառակն, հենց այդպիսի կաղապարի բացակայությամբ։ Ըստ էության բազմավանկները հիմքային հակադրությամբ միավանկների և երկվանկների նկատմամբ միջին դիրք են գրավում՝ ավելի հարելով երկվանկներին, քանի որ կարող են գործածվել եր, ներ, ևի հոգնակերտների հետ։*

Այսպիսով միջին գրական հայերենը չկարողացավ հասնել միավանկ և մեկից ավելի վանկերի հիմքերի երկանդամ, երկատոհ հակադրության այն սիստեմին, որին հետագայում հասավ գրական աշխարհաբարը իր երկու ճյուղերում։ Միջին գրական հայերենում փաստորեն կային միավանկ հիմքեր, որոնք միայն եր հոգնակերտի հետ էին գործածվում, երկվանկ հիմքեր, որոնք ունեին համակարգային գործածություններ ևի մասնիկի հետ, եր-ի և ներ-ի հետ

մասնակի զուգորդումներով հանդերձ, բազմավանկ հիմքեր, որոնք որոշ տատանումներով զուգորդելի են և՛ եր, և՛ ներ, և՛ մասամբ նաև ճի հոգնակերտների հետ։

Բազմավանկ հոգնակիակազմ հիմք+եր կաղապարը ցուցադրող շատ քիչ փաստեր ունենք. կերակրեր (Գ, ՔԲՄ, 63. ԱԱ, ՕԲ, 68), սեննեկալեր (ՍՍ, Դ, 70), վարդապետեր (ն. տ. 156), հոգեբարձեր (ն. տ. 130), ոսկերչեր (ԱԱ, ԱԱ, 167)։ Եվ գրեթե սրանք են ներկայացնում այդ կաղապարը. համմտ նաև՝ փիրիսկոպոսերն (ՍՍ, Դ, 37), բայց և՝ փիրիսկոպոսներն (ն. տ.)։

Սակայն մի շարք բառեր, որոնց վերջնահանգը ն է, ընդ որում և ութիւն հանգողները, նույնպես ունեն եր, ինչպես՝ գիջութիւն—գիջութիւններ (Գ. ՔԲՄ, 17), գիճութիւններն (ՄՀ, ՋՄ, 3, 5, 144), գիճութիւններուն (ԱԱ, ՕԲ, 39). տաքութիւն—տաքութիւններ (Գ, ՔԲՄ, 106), զօրութիւն—զօրութիւններ (ն. տ. 93), հիւանդութիւն—հիւանդութիւններ (ն. տ. 35. ՄՀ, ՋՄ, 35. ԱԱ, ՕԲ, 72, 55), համմտ. նաև՝ զիմասնայախրութիւններ (ՆՄ, ԺԱՎ, прил, VI, 180), իմաստութիւններ (ն. տ.), գաւազաններով (ՍՍ, Դ, 37), այսպես նաև՝ դատաստաններոյն (ն. տ. 24), եկեղեցպաններոյ (ն. տ. 35), չաղցպաններոյ (ն. տ. 171), չրաղցպաններ (ն. տ.), ի մարդսպաններոյ (ն. տ. 155), ի վաճռկներոյն (ն. տ. 127), այգեպրներն (ՄՄ, ԸՆ, 191, XVI—XVII դդ.), բազրկներ (ՆՄ, ԺԱՎ, 18), պազրրկներ (ԷՀՄԳԱ, 77)։

Հայերենի որոշ բարբառներում վերջնահանգ ն-ն ձուլվում է ներ հոգնակերտի ն-ի հետ՝ մերժելով կրկնակ նն կապակցությունը։ Կարծում ենք, թե միջին գրական հայերենում նման երևույթ պետք է որ եղած լինի։ Վերը բերված փաստերն բան էությանն դրա հաստատումն են։ Թե այդ այդպես է, ապա այս երևույթի կառուցվածքային կաղապարի գնահատումը տարբեր կարող է լինել. նախ իբրև հոգնակիակազմ հիմք+եր, ուր եր-ը ծագումնաբանորեն ներ մասնիկն է, կամ՝ այստեղ ունենք ներ-ի եր դիրքային տարբերակը։

Մեր այս մեկնաբանությունն ավելի հավանական է թվում, եթե ուշադրություն դարձնենք հետևյալ երկձևություններին վրա. բոահաններոյն (ԱԱ, ՕԲ, 378) և բոահաններուն (ԱԱ, ԱԱ, 350), վաճրկներոյն (ՂՅ, ՀՆՒՎ, Ք, 259, XIII դ.) և ի վաճառականներուն (ԱԱ, ԱԱ, 617), զաշտիճաններս (ԴՀՎ, I, 34, XIII դ.) և աստիճաններ ԱԱ, ԱԱ, 10)։ Սա թեև կարող է գնահատվել իբրև եր—ներ փոխարինում, բայց բացառված չէ այն հնարավորությունը, որ այստեղ ունենք կրկնակ ն-երի պահպանում կամ ձուլում։

Հոգնակիակազմ բազմավանկ հիմք+եր կաղապարն առկա է նաև այն դեպքում, երբ միավանկ, անկախ գործածություն ունեցող բառը դառնում է բարդության վերջնաբաղադրիչ և եր-ի հետ զու-

գործման իր միտումը պահպանում է[13]. այսպես՝ գրագրերն (ՍՍ, Դ, 14), բանհոգեր «եկեղեցու սպասարկման իրեր» (Ն. տ. 60), ակռայմիջերն (Գ, ՔՒՄ, 101. Հմմտ. միջեր՝ Ն. տ. 118), կողմիջերն (Ն. տ. 118), յիրիցակալերն (ԴՀվ, III, 51, XIII դ.), զանուշահոտներն (ՄՀ, ՋՄ, 48. Հմմտ. անուշահոտեր՝ ԱԱ, ՕՔ, 63, 506), ձղակմիջեր (ՆՄ, ԺԱվ, 23), ծովալերդ (Ն. տ. 137), մանրաձագերն (Ն. տ. 198), յերկանվզերուն (Ն. տ. 319), իրիկամացաւերուն (ԱԱ, ԱԱ, 54), ջղացաւերուն (Ն. տ. 270), ստամոքսցաւերուն (Ն. տ. 115), մատնմջերն (Ն. տ. 449), ակռատկերն (Ն. տ. 570), ակռատրկերուն (ԱԱ, ՕՔ, 64), բժշկապետեր (ՂՅ, ՀՆԻվ, Ք, 423, XV դ.), բարձրախաչեր (ՀՄԺԾ, 299), ծառշքերուն (ՆՔ, ՀԿ, 220)։

Կան դեպքեր, երբ սպասելի էր ենթ հոգնակերտ, բայց առկա է եր, մանավանդ երկրորդ կարգի վերջնաբաղադրիչների առկայությամբ պայմանավորված. օր. կարգակցերոյն (ՍՍ, Դ, 58), սինաւկցերոյ (Ն. տ. 149), մուճկրերն «մուճակ կարողներ» (ԱԱ, ԱԱ, 226), գտակկրերն (Ն. տ.). Հմմտ. պապուճկրներուն (Ն. տ. 265), ողաշարներ (ԱԱ, ՕՔ, 29)։ Այնուամենայնիվ միջին գրական հայերենի մեր դիտարկած տեքստերում երկրորդ կարգի վերջնաբաղադրիչներով բարդությունները հիմնականում գրաբարակերպ հոգնակիհակազմություն ունեն. օր. բաջախօսքն (Ֆ. Ք, 53), աստուածաբերք (Ն. տ. 64), արծաթասէրք (Ն. տ. 188), իմաստասէրք (ՄՀ, ՋՄ, 143. ԱԱ, ՕՔ, 17), սեռ.-տրականում՝ իմաստասիրացն (ԱԱ, ՕՔ, 7), փողայհարքն (ՆՄ, ԺԱվ, 19), փայտայհարքն (Ն. տ. 123), աղբակերք (Ն. տ. 230), մսակերք (ԱԱ, ԱԱ, 193), տղաբերք (Ն. տ. 263)։

Առաջին կարգի վերջնաբաղադրիչներով բազմավանկների հետ եր-ի գործածությունը կապված է կառուցվածքային և արտակառուցվածքային մի շարք հանգամանքների հետ, այնպես որ աշխարհաբարում անգամ տատանումներն անխուսափելի են։ Այդ կարգի տատանումներից են՝ հայրապետեր և հայրապետներ (ՍՍ, Դ, 77), վարդապետեր և վարդապետներ (Ն. տ.)։

Թեև ոչ համախական կիրառությամբ, բայց առկա է հոգնակիհակազմ բազմավանկ հիմք+ներ կաղապար։ Դժվար է առանձնացնել այն բառերի խումբը, որոնք հետևում են այս կաղապարին։

---

[13] Բնականաբար գրաբարատիպ հոգնակիհակազմություններում պահպանվում են այդպիսի հիմքերի նախկին դուրդրումները Ր(ց, ս) հոգնակերտի հետ. օր. հրեշտակապետքն (Ֆ, Ք, 54), բժշկապետքն (ԱԱ, ՕՔ, 69), մրգաչուրք (Ն. տ. 376) և այլն։

Բնթենք մեր դիտարկած տեքստերում եզածները. դրացներ (Ե. ՔՔՄ, 53. ՆՄ, ԺԱՎ, 181), ի դրացներոյն (ՍՍ, Դ, 136), սարկաւագներ (ՀՆ, ՈւՔ, 158), շաղգամկներ (ԱԱ, ԱԱ, 90), հալիլաներուն (Ն. տ. 49. ԱԱ, ՕՔ, 453), հալիլաներ (ԱԱ, ՕՔ, 62), մուֆաէհներ (Ն. տ. 161), մարդարիտաներ (ՆՔ, ՀԿ, 79), օրինակներ (ՀՔ, Տ, 135),

Ուշ միջինհայերենյան շրջանում (XVI—XVII դարեր), ինչպես նկատեցինք երկվանկների առիթով, հաճախանում են բազմավանկների ներ-ով զուգորդումները, սակայն դրանք ավելի շատ վաղ աշխարհաբարի դրսևորումներ են։

Միջին գրական հայերենում էական զարգացում չի ունեցել նաև հոգնակիակազմ բազմավանկ հիմք+ների կաղապարը։ Այս կաղապարով հոգնակիակազմություններն առանձին բացառություններ են։ Բերենք մեր կողմից նկատվածները. սիրելնուն «սիրելիներին» (ԽԿ, ՈւՔ, 146), հրեշտակնի (ՀՆ, ՈւՔ, 158), ածիլողնի (ԱԱ, ԱԱ, 81), գիտնականնի (Ն. տ. 258), մուարիշնի (Ն. տ. 567), կարդացողնին (ԱԱ, ՕՔ, 30), հրեշտակնոյդ (ՄՆ, ՈւՔ, 147), հաբեղանի (ՀՔ, Տ, 135), սարկաւագնի (ՀՄԺԲ, 185)։ Հաճախ այս կարգի հիմքերի ներ-ով զուգորդումները պայմանավորված են բարդության երկվանկ վերջնաբազադրիչի հոգնակիակազմության կառուցածևի պահպանման միտումով. այսպես՝ երակ—երակնի, շնչերակ—շնչերակնի (Գ, ՔՔՄ, 175), շնչերակնոյն (Ն. տ. 107), նաև՝ մոգլինի (ԱԱ, ՕՔ, 43), ջրեզերնի (ԱԱ, ԱԱ, 71, 202), ներկարարնի (Ն. տ. 72), գետեզերնի (Ն. տ. 432), բժշկարաննի (Ն. տ. 11), անօրէննի (ՀՔ, Տ, 203), գետբերննի (ՀԱ, ԼՔՀ, III, 708)։

Բուն թենք հոլովաձևերում հոգնակիակազմ բազմավանկ հիմքերով և ներ հոգնակերտով զուգորդումները հետևում են միավանկների ու երկվանկների ներ-ով զուգորդումների կառուցատիպին, հոգնակիակազմ բազմավանկ հիմքերով և ներ-ով զուգորդումները հետևում են երկվանկների ներ-ով կազմավորումներին, իսկ բազմավանկ հիմքերի ու ևի հոգնակերտի զուգորդումները՝ երկվանկների համապատասխան կառուցատիպին։ Այնպես որ բազմավանկ հիմքերը ուղիղ և թենք ձևերում որևէ յուրատիպ կառուցածև չեն մշակել։ Թվ քանի որ կառուցատիպով նրանք ավելի հարում են երկվանկներին, ապա հետագա հայերենում, ընդ որում և գրական աշխարհաբարի երկու ճյուղերում էլ նրանք լիովին հետևեցին երկվանկ հիմքերի զուգորդումների տիպոլոգիային։ Տարբերությունն այն է միայն, որ նոր հայերենում տեղի ունեցավ ներ տարրի ծավալում, ընդհանրացում և հաստատում, ուստի և՛ երկվանկները,

և՛ բազմավանկները համակարգայնորեն զուգորդվեցին ներ հոգնակերտի հետ։

Ավարտելով միավանկ, երկվանկ և բազմավանկ հիմքատեսակների բնութագրությունը, անհրաժեշտ ենք գտնում նկատել նաև հետևյալը։ Միջին գրական հայերենը հոգնակիակազմության մեջ շեշտել է վանկաքանակության սկզբունքը, եզակի ձևի վերջնահանգն ըստ էության կարևոր դեր չի ունեցել հիմքային տարբերակների գոյացման խնդրում։ Կարծում ենք, որ հիմքերի (կամ եզակի բառաձևերի) իմաստաբանական բնույթը ևս վճռական գործոն չի եղել։

Ըստ Հ. Աճառյանի՝ ութիւն հանգող բառերը հոգնակին կազմում են սեռականի ձևից և բերում է հետևյալ օրինակները. ալցաւութիւններ, զօրութիւններ, իշխանութիւններ, խնամութիւններ, հիվանդութիւններ, սպանութիւններ և այլն (ՀԱ, ԼՔՀ, III, 708)։ Այսպիսի ձևեր անկասկած նկատվում են գրավոր աղբյուրներում, սակայն հան նաև ուղղականի ձևից կազմվածներ։ Այնպես որ այդ դիտողությունը որոշ վերապահությամբ կարելի է ընդունել։

Անուհետև, ըստ Հ. Աճառյանի (տե՛ս նաև ՀԱ, ՀԼՊ, II, 244, 245), ի հանգոց շնչավոր անունների հոգնակին կազմվում է *մանիկով*, իսկ անշունչ առարկաներինը՝ ստան *մանիկով*. որդի՛, բայց՝ *մայրեստան «անտառներ»*։ Սակայն այդ տարբերակումը շատ թույլ է արտահայտված (գուցե հնագույն տարբերակման վերապրուկ է)։

Իրականում և՛ միավանկ, և՛ մեկից ավելի վանկանի հիմքերը, և՛ ձայնավորահանգ, և՛ բաղաձայնահանգ հիմքերը հավասարապես զուգորդվում են միայն վանկաքանակության թելադրանքով, ընդ որում գրաբարատիպ կազմավորումներում ունենք է հոգնակերտ, նոր կառուցատիպերում՝ եր (ներ), ներ։

Որ իսկապես միավանկ բաղաձայնահանգ հիմքերը համակարգայնորեն զուգորդվում են եր հոգնակերտի հետ, երևում է ֆեկուլ հետևյալ փաստերից. ջահ—ջահեր (ՆԵ, ԲՁ, 570), խոտ—խոտեր (ն. տ. 579. ԱԱ, ՕՔ, 46), որբ—որբեր (ՍՍ, Դ, 77), արտ—արտեր (ն. տ. 170), ազգ—ազգեր (Ֆ, Բ, 232), ցեղ—ցեղեր (ՄՀ, ՋՄ, 40), դաշտ—դաշտեր (Կե, Տ, 134), ոստ—ոստեր (ԱԱ, ԱԱ 104), ցաւ—ցաւեր (ԱԱ, ՕՔ, 24), խոց—խոցեր (ն. տ. 24), բերդ—բերդեր (ՀՔ, Տ, 126, 143), սապ—սապեր (ԷՀՄԳԱ, 8) և այլն։

Միավանկ ձայնավորահանգներից ձի բառը հանդիպում է ան մասնիկով. ձիան (ՆԵ, ԲՁ, 566. ՍՍ, Դ, 170). նաև եր-ով՝ ձիերոյ (ՉՅ, ՀՆՒՎ, Ք, 107), ձու բառը հանդիպում է զրաբարատիպ հոգնակիով՝ ձուք (ԱԱ, ԱԱ, 26. ԱԱ, ՕՔ, 239), նոր կառուցաձևերում՝

եր-ով, ինչպես բոլոր միավանկները. ձուեր (ՍՄ, Դ, 164. ԱԱ, ԱԱ, 355), ձվեր (ՆՄ, ԺԱՎ, 161. ԱԱ, ՕՔ, 41), հմմտ. նաև՝ գլուերն ԱԱ, ԱԱ, 573)։

Այստեղից ակնհայտորեն երևում է, որ ինչպես միավանկ բաղաձայնահանգները, այնպես էլ միավանկ ձայնավորահանգները ունեն հոգնակիակազմության նույն կաղապարը՝ հոգնակիակազմ հիմք + եր։

Երկվանկ հիմքերը (ըստ էության նաև բազմավանկները), բաղաձայնահանգ թե ձայնավորահանգ, գրաբարատիպ կազմավորումներում զուգորդվում են f(ց, ս), իսկ բուն կազմավորումներում՝ են, մասամբ և ներ, եր հոդնակերտների հետ։ Բերենք բաղաձայնահանգ հիմքերի զուգորդումները ցուցադրող մի երկու օրինակ. տերև—տերևնի (ԿՆ, Տ, 121, 141. ԱԱ, ՕՔ, 18. ԱԱ, ԱԱ, 20), ոսկոր—ոսկորնի (ԱԱ, ՕՔ, 29), հեքիաթ—հեքիաթնի (Ն. տ. 486), գագաթ—գագաթնի (ԱԱ, ԱԱ, 71), աման—ամաննի (Ն. տ. 132), փողոց—փողոցներն (ՄՆ, ՈւՔ, 171), կորիճ—կորիճեր (ՍՄ, Դ, 7)։ Այս նույն կաղապարն է իշխում երկվանկ-ձայնավորահանգ հիմքերի զուգորդումներում. ծառա-նի (Ֆ, Բ, 128. ԱԱ, ԱԱ, 11. ՄՄ, ՀՆ, 157, XVI դ.), կատու-նի (ՆՄ, ԺԱՎ, 311), շուկա-նի (ԿՆ, Տ, 144), շուրվա-նի (ԱԱ, ԱԱ, 67), ակռա-նի (Ն. տ. 29), ճանփա-նի (Ն. տ. 8), փեսա-նի (ՀՔ, Տ, 182). Հաբեղա-ներ (ՀՆ, ՈւՔ, 165), Հալիլա-ներ (ԱԱ, ՕՔ, 62). գրաբարատիպ կազմավորումներում՝ քաղաքացի-ք (ՆՄ, ԺԱՎ, 256), քամի-ք (ՂՅ, ՀՆՈՎ, Ք, 103, XIII դ.), կղզի-ք (ԱԱ, ԱԱ, 394), սատանայ-ք (Ն. տ. 507), թշնամի-ք (ՀՆ, ՈւՔ, 151), սիրելի-ք «սիրելիներ» (Ն. տ. 198)։

Քննելով գրաբարատիպ հոգնակիակազմությունը և նոր տիպոլոգիայով կազմավորումները, մեզ բնականաբար հետաքրքրում են այն փոխանցումները, որ առկա են այդ երկու կառուցատիպերի միջև։ Եվ իսկապես՝ բազմաթիվ բառեր կան, որոնք ներկայանում են երկձև կազմավորումով. տերեւք (ՂՅ, ՀՆՈՎ, Ք, 105. ԿՆ, Տ, 134) և տերևնի (ԿՆ, Տ, 121. ԱԱ, ԱԱ, 20), տերեւներս (ԿՆ, Տ, 147), տերեւներուն (ԱԱ, ԱԱ, 41), գլուխք (ՄՀ, ՔՄ, 14) և գլխընի (ՍՄ, Դ, 69), պատճառք (Դ, ՔՔՄ, 161. ՄՀ, ՔՄ, 38) և պատճառնի (Դ, ՔՔՄ, 22. ՄՀ, ՔՄ, 35), չիլք (Դ, ՔՔՄ, 166. ԱԱ, ՕՔ, 46), չլաց (ԱԱ, ՕՔ, 53) և չլեր (Դ, ՔՔՄ, 97), նշանք (Դ, ՔՔՄ, 6. ՄՀ, ՔՄ, 15. ԱԱ, ՕՔ, 151) և նշաննի (Դ, ՔՔՄ, 14. ՄՀ, ՔՄ, 115. ԱԱ, ՕՔ, 80), կարդացողքն (ԱԱ, ԱԱ, 37) և կարդացողնին (Ն. տ. 30), բժշկապետքն (ԱԱ, ՕՔ, 69. ԱԱ, ԱԱ, 456) և բժշկապետեր (ԱԱ, ՕՔ, 151), բժշկապետնի (ԱԱ, ԱԱ, 478)[14]։

[14] Ջնայած որ գրաբարատիպ հոգնակիակազմություններ դրավոր տեքստե-

գ) Հնչյունաբանական և ձևաբանական վերակազմավորումները հոգնակիակազմ հիմքերում: *Հոգնակիակազմ հիմքը եզակի համապատասխան ձևի համեմատությամբ կարող է հնչյունական փոփոխությունների ենթարկվել և հանդես գալ իբրև այդ ձևի հնչյունաբանական տարբերակ: Այդ փոփոխությունները կարող են ներկայանալ շեշտի տեղաշարժով, հաճախ նաև այդ տեղաշարժի հետ կապված՝ հնչյունական հերթագայություններով, ինչպես և այլ կարգի երևույթներով:*

Միջինհայերենյան գրավոր աղբյուրների դիտարկումներից ելնելով դժվար է շեշտադիրքի ընդհանրական կանոններ սահմանել, թեև նկատելի է, որ երկվանկ և բազմավանկ բառաձևերում շեշտը վերջնադիր բնույթ ունի: Եթե ունենք ջուր—ջրեր, բազրկան—բազրկներ կամ բազրկնի ձևեր, ապա ու>(ը), ա>(ը) հերթագայությունները ակնհայտորեն այդ են հաստատում: Բազմավանկներում նկատելի է նաև երկրորդական շեշտի առկայություն սկզբնավանկում. տե՛ս, օրինակ, վաճըրկան—վաճըրկներ [վա՝ճըրկա՛ն—վա՝ճըրկընե՛ր]:

Այս նշանակում է, թե հոգնակիակազմ այն հիմքերը, որոնք զուգորդվում են եր, ներ, նի հոգնակերտների հետ, մեծ մասամբ անշեշտ են, քանի որ շեշտը հոգնակերտին է անցնում: Գրաբարատիպ՝ բաղաձայնական f հոգնակերտով զուգորդումներում բնականաբար շեշտադրությունը հնատիպ է:

Նախ միավանկների հնչյունափոխ հիմքերի մասին: Միավանկների հոգնակիակազմության մեջ, երբ շեշտն անցնում է ձայնավորում ունեցող եր հոգնակերտին, շեշտազրկված հիմքային

րում պահպանելի տոկոս են կազմում, բայց ուշ հեղինակների մոտ դրանք համեմատաբար նվազում են, քանի դնում ենք դեպի հինը, միջին գրական հայերենը հոգնակիակազմությամբ հարում է գրաբարին, քանի դիտարկում ենք ուշ շրջանի տեքստեր, այնքան հոգնակիակազմությունը հարում է նոր հայերենին, հատկապես բարբառներին: Միջին հայերենյան համակարգի տեղաշարժերը բնութագրելու առիթով Հ. Աճառյանը գրում է. «Ավելի քիչ են այն դեպքերը, ուր նա (միջին հայերենը—Հ. Գ.), իբրև անցման շրջան, ներկայացնում է թե՛ գրաբարը և թե՛ աշխարհաբարը, ինչպես հոգնակիի կազմության մեջ... Աշխարհաբարի հետ համաձայնության դեպքերը ավելի կշռաւոր են, եթե փոխանակ առնելու գրաբարյան աշխարհաբարը, համեմատության առնենք արդի գանագան բարբառները. այսպես այն զանազանությունը, որ գտնում ենք միջին հայերենում հոգնակիի կազմության մեջ (ձայնավորով հանդող բառերի համար f, բաղաձայնով հանդող բառերի համար եր) մինչև այժմ էլ կա նոր Ջուղայի հայոց բարբառում» (Հ. Հ(Գ, II, 252):

ա, ո, ե ձայնավորները սովրաբար չեն հնչյունափոխվում. այսպես՝ քար—քարեր (ՆՇ, ՌՉ, 562), թամբ—թամբեր (ՍՍ, Դ, 69), ձագ—ձագեր (Գ, ՔՌՄ, 32. Հե, ՈւՌ, 158. ՀՔ, Տ, 140), կալ—կալեռվն (ԴՀՎ, I, 29, XIV դ.), հաց—հացեր (ԱԱ, ԱԱ, 414), պատ—պատեր (ԱԱ, ՕՌ, 503), նաև՝ բակեր (ԴՀՎ, II, 33, XIII դ.), ճորտեր (ՍՍ, Դ, 11. ՆՄ, ԺԱՎ, 211), գողեր (Ֆ, Ռ, 218), գոմեր (ԴՀՎ, II, 101, XIV դ.), հոտեր (ՄՀ, ՋՄ, 29. ԱԱ, ՕՌ, 44), կոպեր (ԱԱ, ԱԱ, 257. ԱԱ, ՕՌ, 188), կոճեր (ՀՔ, Տ, 123), գեղեր (ՍՍ, Դ, 170), ջերմեր (Գ, ՔՌՄ, 21. ՄՀ, ՋՄ, 4. ԱԱ, ՕՌ, 55), գետեր (Կե, Տ, 118. ԱԱ, ՕՌ, 225), կետեր (ԱԱ, ՕՌ, 41, 199), նետեր (ՆՔ, ՀԿ, 79); ելտեր (ՄՀ, ՋՄ, 42. ԱԱ, ԱԱ, 16. ԱԱ, ՕՌ, 91) հոգնակիի եզակին հանդիպում է խլտ(ն) ձևով (ԱԱ, ԱԱ, 240. ԱԱ, ՕՌ, 91). հուսեր (ԱԱ, ԱԱ, 123, 362), որի եզակին հանդիպում է նաև հուս(ն), հիւսն բառի հոգնակին է (գրբ. հիւսն—հիւսունք);

Միջին գրական հայերենում հաճախ ենք հանդիպում պարզ ձայնավորի կամ երկնհչյունի վերածված գրաբարյան երկբարբառների. այսպես՝ խոյլ>խոյլեր (ԳԱ, ՈւՏ, 105), բայց և՝ խոյլ>>խուլ—խուլեր (ն. տ. 185. հմմտ. Ղրբ. խուլ—խուլէր), գոյն>>գոյներ (ԳԱ, ՈւՏ, 106), բայց՝ գուներ (Գ, ՔՌՄ, 35, 126. ԱԱ, ԱԱ, 67, 258, 359. ԱԱ, ՕՌ, 22. եզ. գուն՝ ԱԱ, ԱԱ, 260, 327. ԱԱ, ՕՌ, 22), գուներուն (ՄՄ, ՀՆ, 225). հմմտ. ֆուրեր (ՄՄ, ՀՆ, 225, XVI դ.); Գրաբարյան այ երկբարբառն ունեցել է այ>ա անցում, բայց հաճախ հանդիպում ենք այ-ի պահպանմանը. ծայր>ծար—ծարեր (ԱԱ, ՕՌ, 22, 351. ԱԱ, ԱԱ, 119, 232), ձայն>ձան—ձաներ (ՆՄ, ԺԱՎ, 131). հմմտ. ձայներ (ԳԱ, ՈւՏ, 269. ԱԱ, ՕՌ, 157, 486), մայրեր (ՆՄ, ԺԱՎ, 23), գայլեր (Ֆ, Ռ, 76), այծեր (ՆՄ, ԺԱՎ, 42), գայծերն (ն. տ. 238), փայտեր (ՀՔ, Տ, 181. ԱԱ, ԱԱ, 241), այտեր (Ֆ, Ռ, 53. ՄՀ, ՋՄ, 66), հայրեր (ՂՅ, ՀՆՈՎ, Ք, 251, XIII դ.). նաև՝ նիւթերն (ԱԱ, ՕՌ, 90. ՄՀ, ՋՄ, 42, 93);

Այժմ միավանկների հոգնակիակազմ հնչյունափոխ հիմքերի մասին։ Սրանք հնչյունափոխ են կոչվում ոչ թե գրաբարի համեմատությամբ, այլ տվյալ կազմավորման եզակի ձևը նկատի ունենալով։ Հոգնակիակազմ այս հիմքերում ունենք ձայնավորների հետևյալ փոփոխությունները։

Ընդհանուր առմամբ շեշտակորույս ա, ու, ի ձայնավորները վերածվում են (ը)-ի. առկա են նաև է>ի, ու>վ անցումներ։

Ա>(Ը).—այս փոփոխությունը հազվադեպ երևույթ է, դիտարկված տեքստերում հանդիպել ենք միայն հետևյալներին. ժամ—ժմեր (Գ, ՔՌՄ, 20, 186, 192), լաթ—լթեր (ԱԱ, ԱԱ, 235), տակ—տկերուն (ակռային տկերուն. ԱԱ, ԱԱ, 134)։ Այս սակա-

վագեպութիյունը բացատրվում է նրանով, որ գրական հայերենում, նրա զարգացման տարբեր էտապներում, ա-ն անհնչյունափոխ մնալու միտում ունի։

ու>(Ը).—այս փոփոխութիյունը գրական հայերենում առհասարակ, միջին հայերենում մասնավորապես, չեշտադուրկ դիրքում առկա էր միջին գրական հայերենը սրան հարուստ վկայութիյուններ է տալիս. քուրձ—frձեr (ՆՇ, ԲՁ, 562), ծուխ—ձխեr (ՍՍ, Դ, 52), ջուր—ջրեr (Գ, ՔԲՄ, 11. ՄՀ, ՋՄ, 44. ՆՄ, ԺԱՎ, 43. ԱԱ, ՕՔ, 75, 225. ԱԱ, ԱԱ, 193, 221, 309. ՀՔ, Տ, 160. ՆՔ, ՀԿ, 228. ՀՄԺԾ, 145), կուրտ—կրտեr (ՍՍ, Դ, 69), թուր—թրեr (Ն. տ.), մուրճ—մրճեr (ՀԾ, ՈւԲ, 151. ՆՔ, ՀԿ, 253), տուն—տներ (ԿՂ, ՀԱ, 86, XIII դ., ՄԺ, 128, XVI դ.), շուն—շներ (Ֆ, Բ, 129. ՆՄ, ԺԱՎ, 44, 86), թուշ—թշեr (Գ, ՔԲՄ, 97), քուն(ք)—քնեrն (ՄՀ, ՋՄ, 47), քներն (Ն. տ. 39. ԱԱ, ՕՔ, 136. ՆՔ, ՀԿ, 79), կուշտ-կրտեr (ՄՀ, ՋՄ, 80), թուղթ—թղթեr (ՆՔ, ՀԿ, 240), մուկ—մկեr (ՆՄ, ԺԱՎ, 191. ՀՄԺԾ, 254), թուփ—թփեr (ՄՄ, ՀՆ, 197, XVI—XVII դդ.), հունդ—հնդեr (ԱԱ, ԱԱ, 22), տուփ—տփեr (ԱԱ, ՕՔ, 6), բուշտ—բշտեr (ԱԱ, ՕՔ, 24, 468), փուշ—փշեr (ԱԱ, ԱԱ, 43, 313), ծուպ—ծրպեrդ (ՀՔ, Տ, 159), սուն‖սիւն—սներ (ՆՔ, ՀԿ, 131), տունկ—տնկեrս (ՀՄԺԾ, 390), ձուն‖ձիւն—ձրնեrդ (Ն. տ. 391), քուրդ—frդեrն (ՄԺ, 127. XVI դ.), բուրջ—բրջներս (ԴՀՎ, I, 7. Համմտ. բուրջներս՝ Ն. տ.)։

Այս փոփոխութիյունը ցուցադրված է ուղիղ բառաձևերում. բնականաբար ու>ը անցումը պահպանվում է նաև թեք բառաձևերում, քանի որ կառուցատիպը ուղիղ և թեք ձևերում նույնն է. օր. ծխերոյն (ՍՍ, Դ, 49), ծխերով (Ն. տ. 52), ջրերով (Ն. տ. 68), ջրերոյտ (ՄՀ, ՋՄ, 101), մտերոյն (ՍՍ, Դ, 37), տներոյտ (ԳԱիՏ 92. ՀՄԺԾ, 411), տներուդ (ԴՀՎ, I, 43, XI դ.), շներուն (ԱԱ, ԱԱ, 113. ՆՔ, ՀԿ, 157), գքներն (ՄՀ, ՋՄ, 30), քներուն (ԱԱ, ԱԱ, 366), գկշտերն (ՄՀ, ՋՄ, 99), գթխտերն (ՆՄ, ԺԱՎ, 181), թրփերուն (ԼԿ, ՈւԲ, 138. ԳԱիՏ, 43), հնդերուն (ԱԱ, ՕՔ, 436), բշտերուն (ԱԱ, ԱԱ, 301), գխցերս (ԿՂ, ՀԱ, 115, XIV դ.), խնկերուն (ՄՄ, ՀՆ, 197)։

Ի>Ը.—տարածված, գործուն լինելու հատկութիյամբ հետևում է ու>ը անցմանը։ Դիտարկված տեքստերում հանդիպում են. տիկ—տկեr (ՆՇ, ԲՁ, 562), խիճ—խճեr (Ն. տ. 585. Գ, ՔԲՄ, 177), միրգ—մրգեr (ԱԱ, ՕՔ, 64, 90, 109. ԱԱ, ԱԱ, 23, 140), խիշտ—խշտեr (ՍՍ, Դ, 68), գիր—գրեrս (Ֆ, Բ, 180). բիճ—բճեr (ՍՍ, Դ 103), վիզ—վզեr (Գ, ՔԲՄ, 32), ջիղ—ջղեr (Գ, ՔԲՄ, 61. ԱԱ, ՕՔ, 26, 27, 95. ԱԱ, ԱԱ, 42, 314), ջղերս (ՆՄ, ԺԱՎ, 77), ջիլ—ջլեr (Գ, ՔԲՄ, 97), լինդ—լնդեr (Ն. տ.), լնտեr (ԱԱ, ՕՔ, 249), միս—

մսեր (Գ. ՔՒՄ, 109. ԱԱ, ՕՔ, 67, 204. ԱԱ, ԱԱ, 46, 338), ծիծ—ծծեր (ՀՔ, Տ, 155. ՆՔ, ՀԿ, 64, 68), պինչ—պնչեր (ՄՀ, ՋՄ, 77), սիրտ—սրտեր (ՀՔ, Տ, 198. ԳԱԻՏ, 63), չիտ («չրի չիտ»)—չտեր (ԱԱ, ՕՔ, 24. ԱԱ, ԱԱ, 34), ծիլ—ծլեր (ԱԱ, ՕՔ, 127, 262), ծիրտ—ծրտեր (ԱԱ, ԱԱ, 208), ցից—ցցեր (ՆՔ, ՀԿ, 118)։

Հնչյունափոխ այս հիմքատարբերակը պահպանվում է նաև թեք բառաձևերում. մրգերոյն (ՍՍ, Դ, 45. Գ, ՔՒՄ, 59. ՆՄ, ԺԱՎ, Прил. VI, 181), ղվդերն (ՍՍ, Դ, 68), չղերոյ (Գ, ՔՒՄ, 4), ջլերոյն (ն. տ. 57), ջլերուն (ԱԱ, ԱԱ, 474), զծծերն (ԱԱ, ՕՔ, 410), ծծերուն (ն. տ. 41. ԱԱ, ԱԱ, 88. ՆՔ, ՀԿ, 70), պնչեր (ՄՀ, ՋՄ, 77), սրտերովն (կե, Տ, 210). Համմտ. նաև՝ ճժերուն (ՀՄԺե, 448), զբթերն (ՂՅ, ՀնՈՎ, Ք, 99), խաճերոյ (ն. տ. 100)։

է>Ի.—քիչ գործուն հնչյունափոխություն է. սովորաբար առկա է այն միավանկ հիմքերում, որոնց ձայնավորը համապատասխանում է հինհայերենյան է-ին. մէջ—միջեր (Գ, ՔՒՄ, 118), ձէթ—ձիթեր (ԱԱ, ՕՔ, 145, 173, 423. ԱԱ, ԱԱ, 29). թեք ձևերում՝ ձիթերոյն (ՄՀ, ՋՄ, 10), ձիթերովն (ն. տ. 11), բայց նաև՝ ձէթեր (ԱԱ, ՕՔ, 407). Համմտ. և՝ ճղթերուն (ԱԱ, ԱԱ, 353), ըղվիմերն (ՀՔ, Տ, 126)։

Ու>Վ փոփոխություն նկատել ենք միայն ձու բառի հոգնակիի հիմքում. ձվերս (ՆՄ, ԺԱՎ, 161), զձվերն (ԱԱ, ՕՔ, 403, 407)։

Այն բառերը, որոնք գրաբարում ունեցել են (ը)ն հանգը և որա շնորհիվ «ամեկուկես» (երկվանկ) վերջնագաղտնավանկ խմբին են պատկանել, միջին գրական հայերենի եզակիում երբեմն պահպանել, Խրբեմն էլ վերացրել են այդ հանգը. առաջին դեպքում նրանք հանդես են գալիս իբրև միավանկ, երկրորդ դեպքում՝ երկվանկ։ Սրանք հոգնակիակազմ հիմքում հետևում են հնչյունափոխական նույն միտումին, ինչ տեսանք միավանկների կապակցությամբ. այսպես՝ ու>ր. շուրթ‖շուրթն—շրթներ (ՆՇ, ԲՉ, 561. կե, Տ, 200), շրթներոյն (Գ, ՔՒՄ, 99). գուռ‖գուռն—դրռներն (Հե, ՈւՔ, 143), (զ)դռներ (ՆՄ, ԺԱՎ, 181. ՂՅ, ՀնՈՎ, Ք, 100, XIII դ.), ձուկ‖ձուկն—ձկներ (Հե, ՈւՔ, 155. ԱԱ, ԱԱ, 347, 49. ՄՄ, ԸՆ, 219, XV—XVI դ.), ծունգ‖ծունգն—ծրնգներ (Ֆ, Բ, 99), ծունկ‖ծունկն—ծնկներ (Գ, ՔՒՄ, 174. ԱԱ, ԱԱ, 226, 355), ծնկերոյն (Գ, ՔՒՄ, 174), գուղձ‖գուղձն (գրբ.)—գղձներ (Գ. ՔՒՄ, 97), եզ. գուղձ (ն. տ.), մուկ‖մուկն—մկներ (ՆՄ, ԺԱՎ, 65, 233), զմկներն (ԱԱ, ԱԱ, 202), նուռ‖նուռն—նռներ (ՆՄ, ԺԱՎ, 272), ճուղ‖ճիւղ‖ճյուղն—զեղներն (ՆՇ, ԲՉ, 562), եղերուն (ԱԱ ՕՔ, 351), ճղեր (ԱԱ, ԱԱ, 34, 43. ՄՄ, ԸՆ, 219, XVI դ.), եղներով (ՆՔ, ՀԿ, 132), երդներուն (ՀՄԺե, 451)։ Բոլոր օրինակներում, ինչպես տեսնում ենք,

առկա է ու>ը ելնցում։ Մեր դիտարկած տեքստերում նույն կարգի՝ բայց այլ ձայնավորումով հոգնակիակազմ հիմքերի չենք հանդիպել։

Այժմ երկվանկ անհնչյունափոխ և հնչյունափոխ հիմքատարբերակների մասին։ Անհնչյունափոխները նկատելիորեն գերակշռում են, ավելի ընդհանրանալու միտում ունեն։ Երբ ձայնավորում ունեցող ևի հոգնակերտը ավելանում է հոգնակիակազմ հիմքին, շեշտը հիմքավերջից տեղափոխվում է ևի հոգնակերտին, շեշտազրկված ա, օ, է(ե), և նույնիսկ ի, ու ձայնավորները կարող են անհնչյունափոխ մնալ. օրթախ—օրթախնեի (Ֆ, Բ, 211), բերան—բերաննեի (Գ, ՔՔՄ, 111), ախոռ—ախոռնեի (ԴՀվ, I, 63, XIII դ.), որսորդ—որսորդնեի (ԱԱ, ԱԱ, 97), լիսեռ(ն)—լիսեռնեի (ԱԱ, ՕԲ, 43), ապուր—ապուրնեի (ԱԱ, ԱԱ, 506), այսպես և՝ քամուքանեի (Ն. տ. 21), մաճունեի (ԱԱ, ՕԲ, 396), թփտիրնեի (Ն. տ. 65. Թրպտիրնեի՝ ԱԱ, ԱԱ, 4), նարկիզնեի (ԿԵ, Տ, 139). Քեք բառաձևերում ևս՝ քաղաքնոյն, քամուքնոյն (ԱԱ, ԱԱ, 21), պնակնոյն (Ն. տ. 175), ղբաղչանին (ԿԵ, Տ, 140), խելօքնոյն (ԳԱԻՏ, 121), արևնուդ (ՆՔ, ՀԿ, 45), զերեանին (ԱԱ, ՕԲ, 202)։

Հնչյունափոխ հիմքատարբերակներում նկատվում են ձայնավորական հետևյալ փոփոխությունները։

Ա>(ը).—չնայած երկվանկների հոգնակիակազմ հիմքում ա շեշտազուրկ ձայնավորի կայունացման միտումին, առկա է նաև այս անցումը. կապան—կապընեի (ՍՍ, Դ, 9), աման—ամբընեի (Ն. տ. 159), ասպար—ասպրեի (Ն. տ. 68). այսպես և՝ պոմբընեի (Ն. տ. 132), գանգրընի (ԿԵ, Տ, 144, 148. ՆՔ, ՀԿ, 163), կանչնի (ԱԱ, ՕԲ, 157), երկթընի (ԱԱ, ԱԱ, 207), չարկմնուն (ՆՔ, ՀԿ, 184), մատղնով (ՍՍ, Դ, 43). ա-ն կարող է լրիվ դուրս ընկնել՝ ա>զրո. քուռակ—ֆուռկնի (ՆՄ, ԺԱՎ, 22), (գ)կարաս—(գ)կարսնին (ՄԺ, 301, XVI դ.)։ Վերջին օրինակներում կատարված փոփոխությունը կարելի է մեկնաբանել վանկատման ուրույն կաղապարի պահանջով, երբ, ասենք, ֆու-ռրկ-նի վանկատման փոխարեն ունենում ենք՝ ֆուռ-կը-նի. նույն կերպ՝ ոչ թե կա-ռրս-նի, այլ կառ-սը-նի։

Ի>(Ը).—այս փոփոխությունը միջին գրական հայերենում դեռևս գործուն էր, չնայած ի-ի անհնչյունափոխ դառնալու միտումին. բժիշկ—բժշկնի (ԱԱ, ՕԲ, 90). կարող է և լրիվ դուրս ընկնել. հաշիվ—հաշվնի (ՍՍ, Դ, 84), ծաղիկ—ծաղկնի (ԿԵ, Տ, 119), ծաղկընուն (Ն. տ. 141), տաճիկ—տաճկնի (ԱԱ, ԱԱ, 53. ՄԺ, 172, XVI դ.), ի տաճկնուն (ՄԺ, 169, XVI դ.). զկարճնի (ԱԱ, ԱԱ, 81) կատուցաձևում մի քիչ դժվար է արտասանությունը կռահել՝

[ըզկարըճնի՛] թե՞ [ըզկարճընի՛]։ Այստեղ էլ ըստ երևույթին առկա է վանկային վերակազմավորման երևույթ, որի մասին հենց նոր նշեցինք։

Ու>(Ը).—առանձնապես շատ չենք հանդիպել այս փոփոխությունը ցուցադրող օրինակների, հիմնականում գաղտնավանկով դեպքեր են. բլուր—բլրնի (ՆՄ, ԺԱՎ, 316), ըղունկ(ն)—ըղընկնի (ԱԱ, ԱԱ, 34). Համմտ. ղնկներն (Գ, ՔՒՄ, 202), այսպես և՝ գլուխ—գլխնի (ՍՍ, Դ, 69), գլխընի (ՆՄ, ԺԱՎ, 319)։

Հնարավոր է է>(ը). գոմէշ—գոմշընոյ (ՍՍ, Դ, 170)։ Վերջնահանգում կարող է լինել ա>զրո (անկում), ինչպես՝ հաբեղնին (ՆՔ, ՀԿ, 69), ա>(ը)՝ ճամփնի (ՍՍ, Դ, 9), բայց սովորական չէ. համմտ. ծառնի (Ֆ, Բ, 128)։ Վերջնահանգում բազածայնական Ի հոգնակերտից առաջ նկատվում են ա>է անցման դեպքեր. ղալէք (ՄԺ, 83, XIII դ.), պախրէք (նմ. տ. 173, XVI դ.), ճամփնկդ (ՆՔ. ՀԿ, 236), համմտ. նաև քրիստոնէք (ՄԺ, 167, XVI դ.)։ Այս նույն դիրքում հնարավոր է ու>վ. թթվնի (ԱԱ, ՕԲ, 245), ի>զրո (անկում)՝ սիրելի—սիրելնուն (հկ, ՈւԲ, 246), որի եզակի ձևը բազմավանկ է։

Հոգնակիակազմ երկվանկ հիմքերում առկա են նաև հնչյունափոխական միտումի կանխման դեպքեր, նման դեպքերում ունենում ենք միևնույն հիմքային կառուցածևի հնչյունափոխ և անհնչյունափոխ տարբերակներ. այսպես, օրինակ, էրէցնի (ՍՍ, Դ, 36)—էրիցնի (նմ. տ. 46), իրիցնի (նմ. տ. 49), ըռուպնի (ՄՀ, ՋՄ, 32. ԱԱ, ՕԲ, 322)—ըռապնի (ԱԱ, ԱԱ, 157), հատիկներ (ԱԱ, ԱԱ, 600)—հատկներ (նմ. տ. 55, 97), քաղաքնի (ԱԱ, ԱԱ, 3, 123. ԱԱ, ՕԲ, 84)—քաղքնի (ԱԱ, ԱԱ, 370. ԱԱ, ՕԲ, 81), շուրվանի (ԱԱ, ՕԲ. 306)—շուրվնի (նմ. տ.)[15]։

Իսկ այն երկվանկ հիմքերը, որոնք ղուգորդվում են ոչ թե նի, այլ եր կամ ներ հոգնակերտների հետ, ունեն հավասարապես և՛ հնչյունափոխ, և՛ անհնչյունափոխ հիմքատարբերակներ. այսպես՝ դեռին—դեռներ (ՍՍ, Դ, 16), ծաղիկ—ծաղկներ (ՄՀ, ՋՄ, 32), բայց՝ երկիրներ (ԱԱ, ՕԲ, 82), կոծիծներ (ԱԱ, ԱԱ, 177). ու>վ վերջնահանգում՝ թթվներ (ԱԱ, ՕԲ, 257) և այլն։ Թեև սրանց սահավադեպ լինելու պատճառով դժվար է ինչ-որ օրինաչափություն հաստատել, կանոն սահմանել, բայց ակնհայտորեն նկատվում է (ինչպես նի-ով ղուգորդումներում) անհնչյունափոխ տարբերակի

---

[15] Այս մասին հանգամանորեն կխոսենք բազմանիշությունների կապակցությամբ։

ընդհանրանալու միտումը։ Այս տարբերակը նոր գրական հայերենի երկու ճյուղերում էլ կայունացավ և դարձավ տիրապետող։

Բազմավանկ հոդնակիականացմ հիմքերի դիտարկումները որևէ նորություն չբերեցին երկվանկների համեմատությամբ. այստեղ էլ նկատելի են (հոդնակերտից առաջ) և՛ հնչյունափոխ, և՛ անհնչյունափոխ տարբերակներ. վերջնաձայնավորի անկում՝ դրացի—դրացներ (Գ, ՔՒՄ, 116), սիրելի—սիրելնուն (ԽԿ, ՈւՔ, 146), ա>ը՝ այգեպան—այգեպըներն (ՄՄ, ԸՆ, 191, XVI—XVII դդ), ու>ը՝ կերակուր—կերակրեր (Գ, ՔՒՄ, 53), ի>ը՝ ոսկերիչ—ոսկերչեր (ԱԱ, ԱԱ, 167)։ Անհնչյունափոխներից՝ հոգևբարձեր, (ՍՍ, Գ, 130), գիտնականնի (ԱԱ, ԱԱ, 258), ճուարիշնի (Ն. տ. 567), անօրէննի (ՀՔ, Տ, 203)։

Այս փաստերը քննելիս, ինչպես վերը ակնարկեցինք, ուշադրություն է գրավում հիմքային հնչյունափոխության մի երևույթ, որը շատ բարբառներում նույնպես նկատելի է. դա հոգնակիականացմ հիմքի վանկայնորեն վերականգնավորվելու ուրույն վարքագիծն է, երբ հնչյունափոխությամբ ձայնավորական տարրի անկումը (բաղաձայնահանգ հիմքավերջում) զուգակցվում է ը ձայնավորական տարրի ներմուծումով՝ բաղաձայնասկիզբ հոդնակերտից առաջ. ծաղիկ—ծաղկընի (կե, Տ, 119), գոմէշ—գոմշընոյ (ՍՍ, Գ, 170), գլուխ—գլխընի (ՆՄ, ԺԱՎ, 319) և այլն։

Այժմ անդրադառնանք և վերջնահանգն ունեցած բառերի հոդնակիականացմությանը։ Ինչպես արդեն նշել ենք, հիմքը ձևաբանական կատեգորիա է. մասնիկավոր կազմավորումներում այն հակադրվում է վերջավորությանը։ Հիմքի կազմում եղած հնչյունաբանական կամ ձևաբանական փոփոխություններով կարող են առաջանալ հիմքատարբերականներ։ Սրանք առկա են միևնույն բառի հարացուցային ձևերում, ընդ որում բացառված չէ նույն հարացույցի տարբեր անդամների կառուցածևերում ինչպես տարբեր հիմքերի, այնպես էլ հիմքատարբերակների դոյությունը։ Այստեղ նկատի ունենք նաև սուպլետիվ կառուցվածքները, թեև դրանք հայերենի գոյականի հոգնակիականացմության մեջ որևէ արտահայտություն չունեն։

Հիմքի հնչյունաբանական տարբերակները պայմանավորված են հիմքային որևէ հնչյունի փոփոխությամբ։ Ձևաբանական հիմքատարբերակը գոյանում է այն դեպքում, երբ հարացույցի այս կամ այն անդամի հիմքը վերականգնավորվում է ինչ-որ ձևաբանական տարրով, օրինակ, ասենք, հիմքակազմիչ ձևույթով՝ բնակերտով։ Այսպիսի հիմքատարբերակներ առկա են գրաբարում. գետ—, սիրտ— (գետ-ք, սիրտ-ք) հիմքերն ունեն նաև բնակերտով տար-

բերականներ՝ գետո-, սրտի-(գետո-ց, սրտի-ց)։ Ուրեմն գետ բառի հոգնակի հարացույցում ֆունկցիավորում են միևնույն հոգնակիակազմ հիմքի երկու տարբերակներ՝ գետ- և գետո-. երկրորդը առաջինի ձևաբանորեն (-ո- ձևաբանական տարրով) վերակազմավորված տարբերակն է. իսկ սիրտ բառի հոգնակի հարացույցում ֆունկցիավորող սիրտ- և սրտի- տարբերակներից երկրորդը առաջինի և՛ ձևաբանորեն, և՛ հնչյունաբանորեն վերակազմավորված տարբերակն է։

Այլ է վիճակը, երբ մի բառի հարացույցում ունենք բնակերտով հիմք, իսկ մի այլ բառի հարացույցում՝ առանց բնակերտի հիմք. սրանք արդեն տարբեր հիմքաուեսակներ են և ոչ թե միևնույն հիմքի տարբերակներ (համմ. հնդեվրոպական թեմատիկ՝ բնավոր և աթեմատիկ՝ անբուն հիմքաուեսակները)։ Գրաբարում չունենք այնպիսի դեպք, երբ բնակերտով հիմքն ընդգրկի հարացույցի բոլոր անդամները. այդ վերաբերում է նաև առանց բնակերտի հիմքաուեսակին։ Այս իմաստով գրաբարի հոլովակազմությունը իր կատարելությանը չէր հասել։

Միջին գրական հայերենի գրաբարատիպ հոգնակիակազմություններում հիմնականում պահպանված են հնչյունաբանական ու ձևաբանական վերակազմավորումները։ Սակայն հոգնակիի կազմության մեջ եղան և տեղաշարժեր, որոնք նույնպես մեկնաբանության կարիք ունեն. դրանցից մեկը կապված է ն վերջնահանգն ունեցած բառերի հոգնակիակազմության հետ։

Գրաբարում ունենք ձուկն>ձկուն-ք, մատն>մատուն-ք և նման կառուցաձևեր։ Ձկուն- հիմքում առկա է հնչյունական երկակի փոփոխություն՝ ու>ը (շեշտազրկությամբ պայմանավորված) և (ը)>ու հերթագայություն, որ շեշտադրությամբ չի պայմանավորված։ Այստեղ հիմքի հնչյունաբանորեն վերակազմավորված լինելը ակնհայտ է։ Բայց արդյո՞ք այդ փոփոխությունը ձևաբանական արժեք ունի։ Ձուկն ձևի մեջ եղած հերթագայությունը հոլովակազմության առումով ունի ձևաբանական նշանակություն՝ ձուկն—ձկան. այս երկու ձևերը երկու տարբեր հոլովական ֆունկցիաներ են արտահայտում։ Բայց սա եզակի սեռ.-տրականում. հոգնակիակազմության մեջ վերը նշած երկակի փոփոխություններով գոյանում են ձկուն-, ձկան- հիմքեր՝ ձկունք, ձկանց ձևերի համար։ Ուրեմն ձկան- հոգնակիակազմ հիմքը ոչ միայն եզակի ձևին է համապատասխանում, այլև հարացույցի այլ անդամի հոգնակիակազմ հիմ-

քին։ Այս իմաստով կարծես թե առկա է հնչյունաբանական-ձևաբանական վերակազմավորում։ Բայց դա գրաբարում։

Միջին գրական հայերենում նման հիմքերն ու հիմքատարբերակները պահպանվել են միայն գրաբարատիպ կառուցաձևերում։ Նոր տիպի կազմավորումներում առկա է ձկն-[ձըկն-] հոգնակիական հիմք։ Իսկ ինչպիսի՞ն է սրա եզակի ձևը։ Եզակին հանդիպում է ձուկն||ձուկ տարբերակներով. մի դեպքում պահպանված է և վերջնահանդը, մյուս դեպքում այն ջնջված է, վերացած։

Եթե այդ այդպես է, ապա ինչպես պետք է դնահատել ձկներ հոգնակի ձևը։ Նախ ինչպե՞ս ենք որոշում, այս հոգնակին եզակի ձուկն թե ձուկ տարբերակից է։ Միջինհայերենյան գրավոր աղբյուրներում հանդիպում ենք ոչ միայն և հանգով (եզակիում), այլև առանց և հանդի ձևերի։ Եվ քանի որ և հանգի անկման դեպքում էլ և հոդով առանում ենք ձուկն ձևը, ապա հաճախ դժվար է լինում որոշել՝ ն-ն վերջնահանգինն է, թե հոդ է։ Եթե Հովհաննես Երզնկացին (XIII դ.) ասում է՝

Ով ուզէ որ յերկրէնս յերկինք ելանի,

Թող բեռն թեթևցընէ և թեթև քրոյի (Հե, ՈւԲ, 196), ապա այստեղ բեռն ձևում բուն էությանն ն-ն հոդ է, որովհետև բառը որոշյալ առումով է՝ «իր բեռը»։ Ն հանգի պահպանման դեպքում բառաձևը կունենար բեռնն տեսքը։ Բայց բացառված չէ այլ մեկնաբանություն ևս։

Եթե առակագիրն ասում է. «Եւ ահա տասն այր և կին ունէին զհաց և զկաթն և զգինի» (ՆՄ, ԺԱՎ, 222), ապա նկատում ենք, որ համազոր լրացումներից երկուսը՝ առաջինը և վերջինը առանց ն հոդի են, իսկ զկաթն ունի ն տարբրը. պետք է կարծել, որ այստեղ ն-ն վերջնահանգինն է. համմտ. «որք զկաթն և զգինին և զհացն» (ն. տ. 222), կամ՝ «Ոչխարն՝ եփ գառն կամ ոչ բերէ» (ՍՍ, Դ, 13)։

Սովորաբար քանակական թվական լրացման հետ գոյականն առանց ն հոդի է։ Եվ եթե այս տեսանկյունից դիտարկենք՝ հազար գառըն (ՆՇ, ԲՉ, 566) արտահայտության մեջ գառն ձևը, վեց եզն (ն. տ. 573) արտահայտության մեջ եզն ձևը, ապա նույնպես կարելի է կարծել, որ այստեղ ն-ն վերջնահանգինն է։ Սակայն լիովին բացառված չէ այդ նույն դիրքում ն հոդի գործածությունը։

Չնայած այս դիտարկումներին, ն հանգի վերակազմավորված լինելու հարցը պարզորոշ չէ[16], Բայց մի բան պարզ է. XII—XVI դդ.

---

[16] Հ. Աճառյանը վերականդնվող ն հանգի հարցը կիլիկյան հայերենում կարծես լուծված է համարում. «Գրաբարում ն հանգն ունեցող բառերը, որոնք կիլիկյան հայերենում գրկված են այդ ն հանգից, հոգնակիում վերստանում էին

գրավոր աղբյուրներում արդեն նկատելի է այդ հանգի անկումը եզակի ձևերում. լեռ (ՆՇ, ԲՋ, 579. ՆՄ, ԺԱՎ, 169), լեառ մի (ԱԱ, ԱԱ, 320), դուռ (Հե, ՈւՔ, 171. ՆՔ, ՀԿ, 88), գկաթդ (ՀՔ, Տ, 228), կաթ (ԱԱ, ԱԱ, 188), ձեռա (Գ, ՔՔՄ, 162), գձեռա (Ն. տ. 84. Համառ. ՄՀ, ՋՄ, 12), գուղձ (Գ, ՔՔՄ, 97), զմատ (արկ զմատ ի յտրովայնն. Ն. տ. 162), մատօք (ԱԱ, ՕՔ, 36), մուկ (ՆՄ, ԺԱՎ, 26), գառ մի (Ն. տ. 323), գառ մը (ՀՄԺԾ, 367. Համառ. Ն. տ. 54, 191. ՆՔ, ՀԿ, 195), Հարս (ՆՄ, ԺԱՎ, 67), թոռ (Ն. տ. 97), ձուկ (Ն. տ. 175, 181, 295, ԱԱ, ԱԱ, 133, 387), թուզ (ՆՄ, ԺԱՎ, 189), նուռ (Ն. տ. 207. ԱԱ, ԱԱ, 323. ՆՔ, ՀԿ, 86), որդ (ԱԱ, ԱԱ, 407), Հիւս «Հյուսոն» (ՆՄ, ԺԱՎ, 239). Սակայն՝ գառն մի (ՆՄ, ԺԱՎ, 259), ակն մի (Ն. տ. 304), ակնս (Ն. տ. 330), դուռնս (Ն. տ. 240), զդուռնս (ԴՀՎ, II. 24, XIII դ.), որդն մի (ԱԱ, ԱԱ, 579), լեռնէդ (ՄՄ, ԸՆ, 194) ձևերում ակնհայտորեն ն-ն վերջնահանգինն է։

Ն հանգն ունեցած մի շարք բառեր, որոնք եզակիում թոպատ կամ առանձին դեպքերում կորցրել են այն, հոգնակիակազմ հիմքում ևս իսպառ կամ առանձին դեպքերում չեն վերականգնում այն. այսպես՝ հոդմերովն (Ֆ, Բ, 141), որմերն (Ն. տ. 199), մատերուն (ԱԱ, ԱԱ, 14), ծնկերոյն (Գ, ՔՔՄ, 174), ջերմեր (Ն. տ. 21. ՄՀ, ՋՄ, 4. ԱԱ, ԱԱ, 48. ԱԱ, ՕՔ, 55), ջերմերոյն (ՄՀ, ՋՄ, 2), որդեր (ՆՔ, ՀԿ, 139), գառեր (ԱԱ, ԱԱ, 548), Հուսեր (ԱԱ, ԱԱ, 365)։

Իսկ այդ հանգն ունեցած բառերի բացարձակ դերակշռող մասը, նույնիսկ վերը նշածներից մի քանիսը, հոգնակիակազմ հիմքում ունի այդ հանգը։ Մեր դիտարկած տեքստերից քաղել ենք այսպիսի կազմություններ. շրթներ (ՆՇ, ԲՋ, 561. կե, Տ, 200), ձևներ (ՂՅ, ՀՆՈՎ, Ք, 100, XIII դ., կե, Տ, 177. Գ, ՔՔՄ, 203. ՄՄ, ԸՆ, 195, XVI—XVII դդ.), դռներ (ՂՅ, ՀՆՈՎ, Ք, 100, XIII դ. կե, Տ, 177. Հե, ՈւՔ, 143. ՆՄ, ԺԱՎ, 181), զդռներ (ՆՄ, ԺԱՎ, 181), ձկներ (Հե, ՈւՔ, 155. ԱԱ, ԱԱ, 49, 347), լեռներ (Հե, ՈւՔ, 169. Ֆ, Բ, 211. ՀՔ, Տ, 229. ՆՄ, ԺԱՎ, 45. ԱԱ, ԱԱ, 563. ՄՄ, ԸՆ, 173, XVI—XVII դդ. ՆՔ, ՀԿ, 181. ՀՄԺԾ, 144), ի լեռներուն (ՀՔ, Տ, 160), լեռներուն (ԱԱ, ԱԱ, 38, 249. ՄՄ, ԸՆ, 165, XVI—XVII դդ.), լեռներոյս (ԳԱ, ՈւՏ, 255), գառներ (ՆՄ, ԺԱՎ, 44), գառներուն (կե, Տ, 200), ծրնդներդ (Ֆ, Բ, 99), ծնկներ (Գ, ՔՔՄ, 174. ԱԱ,

---

նույն հանգը, օր. ակ—ակներ, թոռ—թոռներ, լեռ—լեռներ. խուրգ—խուրգներ. կաթ—կաթներ, ձուկ—ձկներ, մատ—մատներ, մատ—մատներ, ատ—ատներ. եղնգ—եղջյուներ» (ՀԱ, ԼՔՀ. III, 708)։ Կարծում ենք, կխիստիայում այս երևույթը օրինաչափական տեսք դեռևս չէր ստացել։

ԱԱ, 226, 355. ՄՄ, ԸՆ, 219, XVI—XVII դդ.), եղներու (վայրի եղներու նման. ՀՔ. S, 219), ոտներ (Գ, ՔԲՄ, 41. ՄՀ, ՋՄ, 18, 148. ՄՄ, ԸՆ, 195, XVI—XVII դդ.), ոտներոյն (Գ, ՔԲՄ, 115), զոտներ (ՆՄ, ԺԱՎ, 237), ոտներուն (զոտներուն ներքևն. ԱԱ, ՕՔ, 428), մատներ (Գ, ՔԲՄ, 71. ԱԱ, ՕՔ, 43. ԱԱ, ԱԱ, 73, 285. ՆՔ, ՀԿ, 86. ՀՄԺԾ, 182), մատներուն (ԱԱ, ՕՔ, 80), չևրմներ (Գ, ՔԲՄ, 180), ղնկներ (ն. տ. 202, հմմտ. եղակին՝ ըղունկն. ԱԱ, ՕՔ, 80), դղձներ (Գ, ՔԲՄ, 97), կաթներ (ՄՀ, ՋՄ, 42, 65. ԱԱ, ԱԱ, 187), կաթնեղրոյն (ՄՀ, ՋՄ, 43), կաթներուն (ԱԱ, ԱԱ, 188), բեռներ (ՆՄ, ԺԱՎ, 181. ՆՔ, ՀԿ, 260), մկներ (ՆՄ, ԺԱՎ, 65, 233), զմկներն (ԱԱ, ԱԱ, 202), հարսներ (ՆՄ, ԺԱՎ, 191), թոռներ (ն. տ. 166), ի թոռներուն (ԴՀՎ, I, 36, XIII դ.), նռներ (ՆՄ, ԺԱՎ, 272), ակներ «թանկ. քարեր» (ն. տ. 220), որդներ (ԱԱ, ԱԱ, 579, 615), եղներուն (ՄՄ, ԸՆ, 197, XVI—XVII դդ), հրդներուն (ՀՄԺԾ, 451), հղներով (ՆՔ, ՀԿ, 132)։

Կան բացառիկ ձևեր ևս, երբ միավանկ՝ և հանգը նախկինում չունեցած բառերը հոգնակիակազմ հիմքում և հավելում են ստանում. ծառ—ծառներ (ՄՄ, ԸՆ, 196, XVI—XVII դդ.), ի կողներոյն (Գ, ՔԲՄ, 116), մաղձներն (Գ, ՔԲՄ, 137)։ Անկասկած սովորական են ծառեր, կողեր, մաղձեր կառուցածները։ Հ. Աճառյանը անդրադառնալով այս հարցին (տե՛ս ՀԱ, ԼՔՀԼ, III 708), նշում է նաև գոբտներ, ծաղկըներ ձևերը. սակայն երկրորդի մեջ և տարբ չկա, այլ սա պարզապես երկվանկների հոգնակիակազմության այն դեպքերից է, երբ հոգնակիակազմ հիմքը զուգորդվում է ներ հոգնակերտի հետ։

Դ) Գոյականաբար գործածված բառերի հոգնակիակազմությունը: *Գոյականաբար գործածվածները (ածական, թվական, դերբայ են) հետևում են գոյականների թվակազմության վանկաբանակուբյամբ պայմանավորված կառուցատիպին, միավանկները՝ միավանկ գոյականների կաղապարին, երկվանկները՝ երկվանկ գոյականների կաղապարին և այլն։* Ցած *միավանկ ածական է. սրա հոգնակին պետք է լինի եր-ով, և իսկապես՝ ցածերն «ստորադրյալները» (ՍՍ, Դ, 65)։ Քանի որ գոյականների երկվանկ հիմքերը սովորաբար զուգորդվում են նի հոգնակերտի հետ, ապա և՝ խելօքնին (ՆՄ, ԺԱՎ, прил. VI, 182), կեցողնին (ԱԱ, ԱԱ, 125), բանողնին (ն. տ. 230), շինողնին (ն. տ. 355), ընկածնուն (բարձր տեղից ընկածնուն. ն. տ. 373), մեռելնին (ն. տ. 435), փորձողնին (ՀՅ, Հնթվ, Ք, 387, XV դ.), նաև ներ-ով՝ մեռածներ (ԱԱ, ԱԱ, 435), ուժովներէն (ԷՀՄԳԱ, 159)։

Բազմավանկներն ինքնուրույն, ինքնատիպ կառուցաձև չունեն, և ինչպես գոյականները, կարող են զուգորդվել եր, նի, ներ հոդնախերտների հետ. օր. կարդացողնին (ՆՄ, ԺԱՎ, 166), ածիլողնին (ԱԱ, ԱԱ, 81) և այլն։

Դիտարկված տեքստերում փոխանուն սեռական (ստացական սեռական) ձևերի քիչ ենք հանդիպել, սակայն դրանք անկասկած բնորոշ են եղել միջին գրական հայերենին. այդ երևում է ՔեկուլՀետևյալ օրինակներից. Եւ մարդկանց երակն վատուժ է, քան ղկարճերուն (ԱԱ, ՕՔ, 69), գաղջկներոյն (ՍՍ, Դ, 112)։

Գոյականաբար գործածված բառերը հաճախ ունեն գրաբարատիպ կառուցաձև. ծերքն (Գ, ՔՔՄ, 39), նորքն «նորները» (ԽԿ, ՈւԲ, 132), մեղաւորք (ՆՄ, ԺԱՎ, 23), տկարք (Ն. տ. 28), ձարտարք (Ն. տ. 520), եփողք (ԱԱ, ՕՔ, 96), գործողքն (գործողքն չարեաց. ՄՆ, ՈՒՔ, 141), սիրելիք (Ն. տ. 160), տեսողքն (ՄԺ, 172, XVI դ.)։

Ե) Փոխառյալ բառերի հոգնակիակազմությունը: *Սրանք հետևում են բուն հայերեն բառերի հոգնակիակազմության կաղապարներին, ղեկավարվում են վանկաքանակության օրենքով։ Այսպես, օրինակ, ֆառաշ, նաւտաւր, սինաւտ, պաղչա, էպապ, տաքար (թաթար) փոխառյալ են ու երկվանկ. սրանց համար պետք է սովորական լինեն նի-ով զուգորդումները. և իսկապես՝ ֆառաշնի (ՍՍ, Դ, 70), նաւտաւրնի (Ն. տ.), սինաւտնի (Ն. տ. 170), պաղչանի (ՀՔ, Տ, 135, 139. ԳԱ, ՈՒՏ, 242), տաթարնի (ՂՅ, ՀՆՒՎ, Ք, 245, XIII դ.), քէպապնի (ԱԱ, ՕՔ, 306)։ Համմտ. նաև՝ ի մճլիսնին (ԿՆ, Տ, 143), հաքըմնին (Ն. տ. 144).*

Զ) Ոչ-համակարգային հոգնակիակազմություններ: *Այսպիսի կազմավորումները սովորաբար կապ ունեն հիմքային տարբերակների, անսովոր հոգնակերտների գործածության հետ, կարող են առնչվել հնաոճիպ կառուցաձևերի, բարբառային ներթափանցումների և առհասարակ տարբեր հանգամանքներով պայմանավորված շեղումների հետ։*

Հնաոճիպ հոգնակիակազմությունները միջին գրականի համար կարող են լինել երկու կարգի՝ գրաբարակերպ հոգնակիներ, որոնց մասին բավականին խոսել ենք և գրաբարին զուգահեռ դրսևորված հնագույն երևույթներ, որոնք գրաբարյան տեքստերում մանակի արտահայտություն ունեցել են կամ բոլորովին չեն ունեցել։

Այսպիսի կազմավորումներ են իկ, իկք, իք, այք, աի(ք), աների մասնիկներով հոգնակիները։ Մարդ *բառը գրաբարում ուներ մարդիկ և մարդք ձևեր. մարդիկ ձևը միջին հայերենում ունի հաճախական գործածություն՝ մարդիկք և մարդիք ձևերին զուգահեռ. օր.*

մարդիկ (Ֆ, Բ, 189. ՆՔ, ՀԿ, 119), մարդիկք (Ֆ, Բ, 31. ՆՄ, ԺԱՎ, 23), մարդիք (ԳԱ, ՈՒԲ, 260). Համմտ. կանայք (ԱԱ, ՕԲ, 85), իշխանայք (ՂՅ,ՀՆՈՎ, Ք, 260, XIII դ.), պարոնայք (ԳԱԻՏ, 118, ՆՄ, ԺԱՎ, 151). մանկտիք (ԱԱ, ՕԲ, 52. ՄՆ, ՈւԲ, 125), ծակտիք (ԱԱ, ԱԱ, 16), կնկտիք (Ն. տ. 29). քաղաքանի (ԱԱ, ԱԱ, 3)։

Այս կարգի կազմավորումների շարքում ուրույն տեղ ունեն ոսկ||վի, վնի, վեր||տեր, վաճճ||ուանճ, վտանճ մանսիկներով կառուցածները։ Ինչպես բազմիցս նկատվել է, վի-ն երբեմնի երկակիի մնացորդ է, որևէ արտահայտություն չի ունեցել հին գրական հայերենում, և սրա ամենավաղ կիրառությունները գտնում ենք միայն միջինհայերենյան գրավոր աղբյուրներում։ Բայց վի-ն հանդես է գալիս և՛ պարզ տեսքով, և՛ բաղադրյալ մասնիկների կազմում. օր. ձեռվին (ԱԱ, ՕԲ, 43), զձեռվին (ՍՍ, Դ, 74), ոտվի (Ֆ, Բ, 200), աչվի (ԱԱ, ՕԲ, 81), զականջվիդ (Ն. տ. 65), խոսվի (Ն. տ. 157), երեսվի (ՀՔ, Տ, 135). Նաև՝ դռվնի (Ֆ, Բ, 128), աչեր (Ն. տ. 44), յաչերուս (ՀՔ, Տ, 151), իշուանք (ՆՄ, ԺԱՎ, 22), իրվտանք (ԱԱ, ՕԲ, 65) իրուբտանք (ԱԱ, ԱԱ, 5)։

Միջին գրական հայերենում սկսում են որոշակի գործածություն ստանալ ստած մասնիկով հոգնակիները, որոնք մուտք են գործել նաև մի քանի բարբառներ. ի տեղեստանն (ՄՀ, ՋՄ, 36), քամեստան (ԱԱ, ՕԲ, 325) ևն։

Դժվար է որոշել բարբառային ներթափանցումների չափը միջին գրականում։ Կարծում ենք, հավաքականակերտ մասնիկների մի զգալի մասը բարբառային ներթափանցումների արգասիք է կամ թերևս բարբառային իրողությունների պահպանման հետևանք։ Վերջին երևույթը պատահում է այն ժամանակ, երբ խոսակցական լեզուն աստիճանաբար բարձրանում է գրական աստիճանի և հաստատուն դիրք ու կայունացում ձեռք բերող համակարգային կառուցատիպը միանգամից չի կարողանում դուրս մղել որոշ կիրառություններ։

Ինչ մնում է շեղումներին, ապա պետք է ասել, որ միջին գրական հայերենում ևս նկատելի են այդպիսիները, թեև դրանք անկասկած էական կշիռ չունեն, բացառություններ են։ Այսպես՝ բուն վանկաքանակության սկզբունքի միավանկները համակարգայնորեն զուգորդվում են եր հոգնակերտի, երկվանկները ներ հոգնակերտի հետ. բայց Ամիրտովլաթի մոտ մի տեղ հանդիպում ենք մրգերնի (ԱԱ, ԱԱ, 196) ձևի ևս. ձի—ձիան, ձիեր, բայց՝ ի ձիաննուն (ԱԱ, ԱԱ, 392). գետ—գետեր, բայց՝ գետերք (ՀՔ, Տ, 165). փաշա—փաշանի, բայց՝ փաշունեք (ՄԺ, 196, XVII դ.), գեղեր——գեղերով, բայց՝ գեղօրէիւքն (ՄԺ, 160, XVI դ.)։ Ծատ բառի հոգ-

նակին համաստարած՝ ծառեր, բայց՝ ծառներ (ՄՄ, ԸՆ, 196, XVI—XVII դդ.). նաև՝ **մեծուճաց** *(ԱԱ, ՕՔ, 17, 18), փոխ.* **մեծերոյն** *կամ* **մեծերուն**, **վարպետաք** *(ն. տ. 20), փոխ.* **վարպետ** *կամ* **վարպետնի**, **կնկնաց** *(ն. տ. 69), փոխ.* **կանանց(ն)** *կամ* **կնկնոյ‖կնկնու**, **ծաղկուեաք** *(ն. տ. 157, 503), փոխ.* **ծաղկուեք‖ծաղկնի‖ծաղկներ**. **պարսիկն** *(ն. տ. 165), փոխ.* **պարսիկք**ն. **մօրերուն** *(ՆՄ, ԺԱՎ, 22). փոխ.* **մայրերուն**. **աստեղնոյն** *(ԿՆ, Տ, 125), փոխ.* **աստղնոյն‖աստղնուն** *և այլն։*

Է) Հոգնակիականացմություն և հոդառություն: *Հայերենի զարգացման նոր էտապում երբեմն որոշ հոգնակերաններ բացառում են որոշիչ հոդի առկայությունն, սակայն գրաբարում և միջին հայերենում համարյա չունենք այդպիսի հոգնակերաւ Այդ այդպես է միջին գրականի հնատիպ ու նորատիպ կառուցածևներում, համակարգային ու ոչ-համակարգային կազմավորումներում։ Այսպես՝* f+*հոդ. որդիքն (ՍՍ, Դ, 8), գաւառաւքն (ն. տ. 7), զնշանքն (ՄՀ, ՀՄ, 15), քրիստոնէքն (ՄԺ, 167, XVI դ.).* u+*հոդ՝ ըղշունսըն (ԿՆ, Տ, 213), զծակսն (ԱԱ, ՕՔ, 19).* g+*հոդ՝ ընկերացն (Ֆ, Բ, 36), շրթանցն (Կ, ՔՔՄ, 69), բժշկացն (ԱԱ, ՕՔ, 7).* այf+*հոդ՝ կկանայքն (Ֆ, Բ, 138), կանայքն (ԱԱ, ԱԱ, 113), պարոնայքն (ն. տ.).* իf‖իկ+*հոդ մարդիքն (ԱԱ, ԱԱ, 242).* եr+*հոդ՝ գտակկրերն (ն. տ. 226), դեղերն (ն. տ. 115).* ներ+*հոդ՝ կոծիծներն (ն. տ. 177).* նի+*հոդ՝ ըզորսորդնին (ՆՇ, ՔՉ, 569), բժշկնին (ԱԱ, ԱԱ, 127) և այլն։*

Եթե գրաբարում հոգնակերտ+հոդ հնարավոր էր հարացույցի բոլոր բառաձևերում (օր. հարք-ն, հարանց-ն, զհարս-ն, հարամբք-ն), ապա միջին գրականում այդպես կարող է լինել միայն գրաբարատիպ կառուցածևներում. միջինհայերենյան նոր (կցական) տիպոլոգիային համապատասխան՝ հարացույցի թեք բառաձևերում հոգնակերտն ու հոլովակերտը բաշխված են, հոգնակերտը նախորդում է հոլովակերտին (հետևապես բառաձևն ստանալով հոդ՝ բացառում է հոգնակերտ+հոդ զուգորդումը)։ Միջին գրական հայերենում սա առկա է միայն ուղղականում և հայցականում։ Ցուցադրենք այս հարացույցի մեջ.

Ուղղ. գետ-եր-ն	*ջաղաց-նի-ն*
Հայց. (զ)գետ-եր-ն	*(զ)ջաղաց-նի-ն*
Սեռ.-տր. գետ-եր-ոյ-ն	*ջաղաց-ն-ոյ-ն (նաև՝ գետերուն, ջաղացնուն)*
Բաց. ի գետ-եր-ոյ-ն	*ի ջաղաց-ն-ոյ-ն*
Գործ. գետ-եր-ով-ն	*ջաղաց-ն-ով-ն։*

Չնայած որ հոգնակի բառաձևը կարող է զուգորդվել ստացական հոդի հետ, այնուամենայնիվ միջին գրական հայերենն ըստ էության ստացական հոգնակիներ չի զարգացրել։ Հազարավոր էջերի մեր դիտարկումներում նկատել ենք բացառիկ արտահայտություններ, որոնք հիմք չեն տալիս հաստատելու, թե միջին գրականում առկա էր այդ օրինաչափությունը։

Եթե Կոստանդին Երզնկացին ասում է. «իրենց բևռն թեթև» (ԿԵ, Տ, 201), ապա բնականաբար այստեղ ստացական հոգնակիի կարիք չկա. այդ իմաստը արտահայտված է իրենց ստացականով։ Այդ պահանջը չկա նաև այն դեպքում, երբ ասվում է «իրենց հաշվովն» (ՍՍ, Դ, 42)՝ նույն պատճառաբանությամբ։ Բայց երբ ասվում է «ձառչևիդ փորք դուք հոր» (Ֆ, Բ, 112), այստեղ արդեն չկա հոգնակի ստացական դերանուն. այդ իմաստավորումը կապվում է յառչևիդ բառաձևի հետ. համմտ. եւ կանայքն վերցնեն յաղթեւնուն (ԱԱ, ԱԱ, 55), այսինքն «իրենց առաջը»։

Արևմտահայ աշխարհաբարում այսպիսի ձևերը ստացական հոգնակիներ են, երկվանկների հոգնակին այնտեղ ներ հոգնակերտով է։ Միջին գրական հայերենի համար այդ բանը դժվար է ասել, որովհետև երկվանկները զուգորդվում են հենց այդ նի հոգնակերտի հետ։ Միայն մի բնորոշ ձև ենք նկատել, բայց դժբախտաբար նրա գործածության ժամանակը մեզ հայտնի չէ. Զագերս բուներնէն տարած (ՀՄԺԲ, 215), ուր բուներնէն ակնհայտորեն ստացական հոգնակի է՝ եր–նի զույգ հոգնակերտով), որ և արևմտահայ գրականի ստացական հոգնակիհակազմության կաղապարն է)[17]։

Ը) Երկձևություններ, բազմաձևություններ։ *Ինչպես նշել ենք, հոգնակիհակազմության իր նոր տիպոլոգիան միջին գրական հայերենը չհասցրեց կատարելության, առկա են այլևայլ բնույթի բազմաձևություններ։ Սրանք պայմանավորված են կառուցվածքային մի շարք գործոններով, ասենք, միևնույն հոգնակի բառաձևի հիմքային տարբերակների առկայությամբ, միևնույն հիմքի՝ տարբեր հոգնակերտների հետ ունեցած զուգորդումներով, համակարգային զուգորդումների հետ ոչ-համակարգային կառուցվածքների գործածությամբ և այլն։ Ըստ այդմ էլ երբեմն ունենում ենք ոչ միայն սովորական երկձևություն, այլ իսկական բազմաձևություն. օր. աչ(Ք) եզակի ձևին կարող է համապատասխանել՝ աչքեր, աչվի, աչվեր, աչվներ, աչք (վերջինս գրաբարատիպ կազմավորումնե-*

---

[17] *Կասկածելի է թվում՝ «Կամիմ զալ ձմեռել առ ձեզ, զի որս բազում լինի ի Մարանդա յերինքա և ի Մահղազանի դաշտներս (ՊՇՒ, 69, X դ.)։*

րում). պռունկ եզակիին՝ պռունկներ (ՆՔ, ՀԿ, 78), պռկներ (Ն. տ. 105, ԱԱ, ԱԱ, 150), պռկընիդ (ՆՔ, ՀԿ, 86), պռկունքդ (Ն. տ. 77, ԱԱ, ԱԱ, 206. ԱԱ, ՕՔ, 243), ոտ(ն) եզակիին՝ ոտք, ոտներ, ոտվի, ատվնի, ոտվներ ևն, այսպես և՝ իրք, իրվի, իրվիք, իրվտանք ևն։

Մտորև կբնութագրենք բազմաձևությունը պայմանավորող մի քանի գործոններ։ Բոլոր դեպքերում նկատի ունենք միևնույն բառի կամ եզակի միևնույն ձևի հոգնակիակազմությունը։

Նախ այն բազմաձևություններին մասին, որոնք պայմանավորված են հիմքային տարբերակների առկայությամբ, ընդ որում հոգնակերտը կարող է նույնը լինել, կարող է և տարբեր լինել։ Այսպես՝ կան դեպքեր, երբ հիմքավերջում ն հանգը պահպանվում է, և կան դեպքեր էլ, երբ այն չի պահպանվում, որի հետևանքով միևնույն բառի հոգնակին դառնում է տարաձև. ծնկներ (տե՛ս սույն աշխատ., էջ 184)[18]—ծնկերոյն (Ն. տ.), ջերմներ (էջ 185)—ջերմեր, ջերմերոյն (էջ 184), որդներ (էջ 185)—որդեր (էջ 184), գառներ, գառներուն (էջ 184)—գառեր (Ն. տ.). Համմտ. նաև՝ որդկներ (ԱԱ ԱԱ, 301, 617)—որդկներ (Ն. տ. 147, 572), ճղներով (ՆՔ, ՀԿ, 132)—ճղեր (Ն. տ. 73), մկատամներ (ԱԱ, ՕՔ, 63)—մկնատմերուն (ԱԱ, ԱԱ, 473)—մկնատմներ (Ն. տ. 492. ԱԱ, ՕՔ, 82, 86)։

Ավելի հաճախ հանդիպում են այնպիսի բազմաձևություններ (երկձևություններ), որոնք պայմանավորված են հնչյունափոխ և անհնչյունափոխ հիմքատարբերակների գոյացումով։ Այս սովորաբար վերաբերում է երկվանկ ու բազմավանկ հիմքերին, որովհետև միավանկները լինում են կա՛մ հնչյունափոխ, կա՛մ անհնչյունափոխ։ Այսպես՝ պատճառնի (ՍՍ, Դ, 153)—պատճռնի (Ն. տ. 100, 122), եւունդնի (Գ, ՔՔՄ, 189)—հլընդնի (ՄՀ, ՋՄ, 35), երակնի (ԱԱ, ՕՔ, 31)—երկնի (Ն. տ. 44), ուռեցնի (Ն. տ. 86) կամ ուռէցնի (ԱԱ, ԱԱ, 29)—ուռիցնի (Գ, ՔՔՄ, 153), ճամփանի (ԱԱ, ԱԱ, 8)—ճանփնի (Ն. տ. 17, 280, ԱԱ, ՕՔ, 341)—ճամփնի (ՍՍ, Դ, 9), դարպասնի (ՄՆ, ՈւՔ, 123. ՀՔ, S, 203)—դարպսնի (ՀՔ, S, 173), պարտէզնի (ԱԱ, ԱԱ, 446, 136)—պարտիզնի (Ն. տ. 432), աղչիկներ (ՀՄԺԵ, 145) կամ աղջիկներ (ԱԱ, ՕՔ, 409), աղչկներ (ՍՍ. Դ, 7), փուշկներ (ԱԱ, ԱԱ, 86)—փշկներ (Ն. տ. 246, 417), ջաղացնի (ՆՄ, ԺԱՎ, 191)—ջաղցնոյ (ՍՍ, Դ, 125), եղբաբք (ՄՆ, ՈւՔ, 103)—եղբայրք (Ն. տ. 123), բուրջներս (ԴՀՎ, I, 4)—բրջներս (Ն. տ. 7), բանճարնի (ԱԱ, ՕՔ, 407)—բանճրնի (Ն. տ.

---

[18] *Մեր աշխատության նշված էջերում տրված են այդ ձևերի գրավոր աղբյուրներում գործածված լինելու վկայությունները։*

505), շիտկներ (ԱՄ, ԱՄ, 237)—շտկներ (ն. տ. 46), շտկըներ (ն. տ. 146). Համմտ. նաև՝ ականջացն (ԱՄ, ՕՔ, 39)—ակնջացն (ն. տ)։

Երբեմն այս կարգի հիմքատարբերակները զուգորդվում են տարբեր հոգնակերտների հետ. ստացվում է այնպես, որ բազմաձևության մեջ և՛ հիմքատարբերակներ կան, և՛ հոգնակերտներն են տարբեր. օր. ոտվի (Գ, ՔՖՄ, 203) և ոտներ (ն. տ.), աղբերնուն (ԱՄ, ԱՄ, 38)—աղբրներուն (ն. տ. 255)։

Բազմաձևությունները կարող են առնչություն ունենալ այն երևույթի հետ, երբ միևնույն հիմքը մի դեպքում զուգորդվում է մեկ, մյուս դեպքում՝ մի այլ հոգնակերտի հետ. տերևնի (կե, Տ, 121, 144)—տերեւներս (ն. տ. 147), ուռեցնի (ԱՄ, ՕՔ, 86)—ուռեցներ (ն. տ. 93)—ուռէցներուն (ԱՄ, ԱՄ, 52), բժշկնի (Գ, ՔՄՔ, 5. ԱՄ, ՕՔ, 90)—բժշկներն (Գ, ՔՖՄ, 21, 140), թթվնի (ԱՄ, ՕՔ, 245)—թթվներն (ն. տ. 257), ոսկրնի (ԱՄ, ԱՄ, 287)—ոսկրներ (ն. տ. 78), կոծիծնի (ԱՄ, ԱՄ, 294)—կոծիծներն (ն. տ. 177), մարդիկք (Ֆ, Ք, 31. ԱՄ, ԱՄ, 76)—մարդիք, (Ֆ, Ք, 174. ԱՄ, ԱՄ, 76), ջերմունք (Գ, ՔՖՄ, 10)—ջերմեր (ն. տ. 158), նշաննի (ՄՀ, ՋՄ, 14)—նշաններ (ն. տ. 40), Համմտ. նաև՝ զպաւուհանօն (ՂՅ, ՀՆՒՀ. Ք, 102, XIII դ.)—զպաւուհանքն (ն. տ.)։

Լինում են բազմաձևություններ, որոնք պայմանավորված են համակարգային և ոչ-համակարգային (նաև բարբառային) հոգնակիակազմություններով. օր. դեղեր (ՄՀ, ՋՄ, 125)—դեղրանք (ն. տ. 128)—դեղերայքն (ն. տ. 131), տեղեր (ԱՄ, ԱՄ, 372)—տեղրանք (ն. տ. 257), նեղեր (Գ, ՔՖՄ, 9)—նեղերք (ն. տ. 6), ջղեր (ԱՄ, ՕՔ, 43)—ջղերք (ն. տ.), աչեր (ՆՔ, ՀԿ, 76)—աչվեր (ն. տ. 78) և այլն։

Բազմաձևությունը կարող է կապված լինել հնատիպ կառուցածևի պահպանման հետ՝ նոր տիպոլոգիային հետևող կազմավորմանը զուգահեռ. այսպես, օրինակ, եռակի (Գ, ՔՖՄ, 6) գրաբարակերպ կազմավորում է, իսկ եռակնի (ԱՄ, ՕՔ, 31) նոր կառուցատիպին հետևող ձև է, երկուսի զուգահեռ գործածությունը ինքնին երկձևություն է։ Այսպես և՝ թեք հոլովաձևերում. երակաց (Գ, ՔՖՄ, 9) և երակնոյն (ն. տ. 61)։ Համմտ. նաև՝ ծաղկունք (կե, Տ, 118)—ծաղիկք (ն. տ. 137)—ծաղկընի (կե, Տ, 119)—ծաղկներ (ՄՀ, ՋՄ, 32. ԱՄ, ՕՔ, 157), բժիշկք (ՍՍ, Գ, 14. Գ, ՔՖՄ, 158)—զբժշկներն (ՍՍ, Գ, 14)—բժշկնի (Գ, ՔՖՄ, 5)—բժշկներն (ն. տ. 140), լերինք (ՀՔ, Տ, 182. ԳԱԻՏ, 86. ԱՄ, ԱՄ, 179)—լերունք (ՀՔ, Տ, 126. ԱՄ, ԱՄ, 183. ԳԱԻՏ, 42)—լեռներ (ՀՔ, Տ, 160), լեռնէրէն (ՄՄ, ԸՆ, 208). օրինակացդ (ՀՔ, Տ, 182)—օրինակներ (ն. տ.), նեղոս (Գ, ՔՖՄ, 36)—նեղերն (ն. տ. 9)—նեղերք (ն. տ. 6), ջղացն (ն

տ. 70)—ջղերոյ (ն. տ. 4), շրթանց (ն. տ. 69)—շրթներոյն (ն. տ. 99) լինդք (ն. տ. 100)—լնդեր (ն. տ. 97), զօդուածք (ԱԱ, ՕՔ. 440)—զօդուածնի (ն. տ.)—զօդուածներուդն (Գ, ՔՒՄ, 175), գիճուքիւնքն (ՄՀ, ՋՄ, 5)—գիճուքիւններն (ն. տ.), իրք (ն. տ. 39)—իրվր (ն. տ. 14), այծք (ՆՄ, ԺԱՎ, 41)—այծեր (ն. տ. 42), գայլք (ՆՄ, ԺԱՎ, 43)—գալք (ն. տ. 41)—գալեր (ն. տ. 44, եզ. գալ՝ էջ 54), գառինք (ն. տ. 45)—գառներ (ն. տ.), մկունք (ն. տ. 233)—մկներ (ն. տ.), ձկունք (ն. տ. 269)—ձկներ (ն. տ.), դեղոցն (ԱԱ, ՕՔ, 17. ԱԱ, ԱԱ, 32)—դեղերուն (ԱԱ, ՕՔ, 9. ԱԱ, ԱԱ, 38), ողաշարք (ԱԱ, ՕՔ, 29)—ողաշարներ (ն. տ.), կերակուրք (ԱԱ, ՕՔ, 69)—կերակրեր (ն. տ. 68), հիւանդութիւնք (ն. տ. 78)—հիւանդութիւններ (ն. տ. 72), ձուք (ԱԱ, ԱԱ, 42)—ձուներ (ն. տ.), բանողքն (ն. տ. 230)—բանողնին (ն. տ.), աւուրք (ն. տ. 251)—աւրեր (ն. տ. 380)։

Հոգնակերտի կամ հիմքային վերակազմավորումները ևս բազմաձևութիւնների պատճառ կարող են լինել։ Հնչյունաբանական վերակազմավորումներով դոյացած հիմքատարբերակներին ու նրանցով պայմանավորված բազմաձևութիւններին արդեն ծանոթացել ենք. այժմ լրացուցիչ կարգով դիտարկենք հետևյալ փաստերը. երիկամք (ԱԱ, ՕՔ, 52)—երիկամունք (ն. տ.), մարդոց (ԱԱ, ՕՔ, 367)—մարդկանց (ն. տ. 82, 473. Գ, ՔՒՄ, 36)—մարդկանց (ԱԱ, ՕՔ, 69, 407. Գ, ՔՒՄ, 70), բաղաքանի (ԱԱ, ԱԱ, 3)—քաղաքնի (ն. տ. 123), մրգանք (Գ, ՔՒՄ, 182)—մրգունք (ն. տ. 176)։

Վերջապես, բազմաձևութիւնը կարող է պայմանավորված լինել անհատական կամ այլ կարգի շեղումներով, որոնք նկատելի են սովորական կազմավորումներին զուգահեռ. **ականջվի** *(Գ, ՔՒՄ, 201),* **տակներ** *(ԱԱ, ԱԱ, 618), սովորական է՝* **տակեր**. **նապաստակ** *(ՆՄ, ԺԱՎ, 195) և* **նապաստակունք** *(ն. տ. 194),* **ծառներ** *(ՄՄ, ՀՆ, 196). սովորական է՝* **ծառեր** *(Համմտ. ՆՄ, ԺԱՎ, 169. կե, Տ, 128. ԳԱԻՏ, 38).* **մօրեռուն** *(ՆՄ, ԺԱՎ, 22), փոխ.* **մաւրեռուն** *կամ* **մայրեռուն**:

Անկասկած ցուցադրվածներով չեն սպառվում բազմաձևութիւնները. դրանք երբեմն պայմանավորված են լինում մի որևէ մասնավոր երևույթի հետ և քիչ են ուշադրութիւն գրավում։ Այսպես, օրինակ, մենք խոսեցինք հնչյունափոխութիւնով առաջացած հիմքատարբերակների մասին, բայց հիմքատարբերակներ կարող են գոյանալ նաև ֆ ածանցական տարրի պահպանումով և դրա անկումով (կամ դրա բացակայութիւնով). **աչեր** *(Ֆ, Բ, 58)—***աչքեր** *(ն. տ. 53),* **ունքեր** *(ՆՔ, 24, 76, 77)—***ուներ** *(ն. տ. 75)։ Բացի այդ՝ կարող է պայմանավորված լինել երկվանկ հիմքերում վերջնա-*

գաղտնավանկի անկման կամ պահպանման հետ. աստղեր (ՆՔ, ՀԿ, 99)—աստղներուն (Ն. տ. 124)։ Առաջինի հոգնակիակազմ հիմքում վերջնագաղտնավանկը (եզակի համապատասխան ձևի համեմատությամբ) չի պահպանված, իսկ երկրորդի հիմքավերջում այն առկա է։

3. ԹՎԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ
(Համառոտ ակնարկ)

1. Ընդհանուր հիմունքներ: Տառադարձություն: Թվի էներականական իմաստները և նրանց արտահայտման միջոցները: **II. Հոգնակիակազմություն:** Հոգնակիակազմ հիմքերը և նրանց գուգադրումները հոգնակերտ վերջավորությունների հետ: Ա) Հիմքակազմություն. հոգնակիի հիմքի ձևաբանական կազմը: Հոգնակիակազմություն և հոլովակազմություն. եզակի ուղղականի ձևը հոգնակիի հիմք: Բ) Հիմքատեսակներ. ենթատիպեր. տարբերակներ: Հնչյունաբանական հիմքատեսակներ: Միավանկ հիմքեր. միավանկ բաղաձայնահանգ ն., միավանկ ձայնավորահանգ ն.: Մեկից ավելի վանկանի հիմքեր. «մեկուկես» վանկանի հիմքեր. «մեկուկես» սկզբնագաղտնավանկ հիմքեր., «մեկուկես» վերջնագաղտնավանկ հիմքեր: Երկվանկ-բազմավանկ բաղաձայնահանգ ն., երկվանկ-բազմավանկ ձայնավորահանգ ն., երկվանկ-բազմավանկ բաղադրյալ՝ միավանկ վերջնաբաղադրիչով ն.: Ձևույթային-իմաստաբանական հիմքեր: Հոգնակիակազմ հիմքերը և նրանց գուգադրումները թեմ հոլովաձևերում: Հնչյունաբանորեն վերակազմավորված և չվերակազմավորված հիմքեր. շեշտափոխ և շեշտակիր ն., վանկայնորեն վերակազմավորված և չվերակազմավորված ն., հնչյունափոխ ն. (ձայնավորի հետքագայությունն. վերջնահանգի բացվանկային ձայնավորի փոփոխություն. հրբեմնի արմատական ձայնավորի վերականգնում. բաղաձայնի կամ բաղաձայնական կապակցության փոփոխություն: Բաղաձայնական վերջնահանգի ահնում. հիմքավերջում հիմքի և ավելացող հոգնակերտի միջև անցումային հնչյունի ներմուծում). անհնչյունափոխ ն.: Ձևաբանորեն վերակազմավորված և չվերակազմավորված հիմքեր: Գ) Գոյականաբար գործածված բառերի հոգնակիակազմություն: Դ) Փոխառյալ բառերի հոգնակիակազմություն: Ե) Հոգնակիակազմություն և հոդառություն. սուացական հոգնակիներ: Զ) Ոչ-համակարգային և հնատիպ հոգնակիակազմություններ. նորակազմ ձևեր: Է) Բազմաձևություններ և չեղումներ:

Ինչպես թվի քերականական կարգը, այնպես էլ այլ կարգեր, հայ բարբառագիտության մեջ ներկայացված են հիմնականում ստատիկ-նկարագրական քննությամբ։ Ե՛վ պատմական, և՛ համեմատական բարբառագիտությունը մեզ մոտ թույլ է զարգանում, մինչդեռ դրա անհրաժեշտությունը մեծ է։ Գոյականի թվի կարգը մենք դիտարկում ենք հիմնականում համեմատական-զուգադրական պլանով՝ պատմական մասնակի մեկնաբանություններով։ Այս ինչ-որ չափով կարող է օգնել նաև հայերենի համեմատական բարբառագիտության խնդիրներին։ Միաժամանակ չենք կարող չնշել, որ բարբառագիտական ուսումնասիրություններում գոյականի թվի կարգը ներկայացված է «Հոգնակիի կազմություն» ոչ հարուստ սխեմայով և ոչ «Թվակազմություն» կամ «Գոյականի թվի կարգը» ընդարձակ հարցադրումով։

Անհրաժեշտ ենք գտնում նշել, որ այս բաժնի քննության համար նյութեր ենք քաղել գրականության ցանկում նշված բարբառագիտական մենագրություններից, նրանց մեջ եղած նմուշներից, հայերենագիտական ուսումնասիրություններից, ինչպես և հենվել ենք բարբառային փաստերի (մանավանդ Ղարաբաղի բարբառի, որ իմ մայրենի բարբառն է) մեր անհատական դիտարկումների վրա։ Թբիլիսիի բարբառի համար օգտագործել ենք Սունդուկյանի, Սայաթ-Նովայի գործերը, Արարատյանի համար՝ Պռոշյանի, Աբովյանի որոշ ստեղծագործություններ. նյութեր ենք քաղել «Հայ ժողովրդական հեքիաթներ»-ի տարբեր հատորների տեքստերից և այլն։

Տառադարձություն։ *Սկզբնաղբյուրներից և ընդհանրապես լեզվաբանական գրականությունից քաղված բարբառային փաստերը բերում ենք իրենց գրությամբ, բացի առանձին դեպքերից։ Մեծ մասամբ տարբերություններ կլինեն հնչույթատարբերիչ նշանների գործածության մեջ, իսկ Ղարաբաղի բարբառի (հատկապես նրա Ջրաբերդի խոսվածքի) փաստերը տալիս ենք տառադարձության որոշ փոփոխություններով, եվ այսպես՝*

ա) Քմայնությունը արտահայտված է [՛] հնչյունատարբերիչ նշանով՝ տառի վերի աջ անկյունում. օր՝ կ՛, գ՛ (որ նշանակում են կʲ, գʲ)։

բ) Շնչեղությունը արտահայտված է [՝] նշանով՝ նույն տեղում. օր.՝ բ՝ դ՝։

գ) [··] նշանով առանձնացված են առաջնային շարքի վերին բարձրացման ու՝, միջին բարձրացման ո՝ և ստորին բարձրացման

ա ձայնավորները՝ ու, օ, ա-ից գրությամբ զանազանելու նպատակով։

Դ) Վարաբաղի բարբառի Ջրաբերդի խոսվածքում ձայնավոր հնչույթները գրությամբ արտահայտված են հետևյալ կերպ։ Տարբերակված են տասնմեկ ձայնավոր հնչույթներ. ու ի, է, օ, ա (առաջնային շարք), ը՝, ե, ը (միջին շարք), ու, օ, ա (ետին շարք)։ Գրական լեզվի ձայնավոր հնչույթների հետ հարաբերակցվում են (ոչ ֆունկցիոնալ) ի, է, ը, ու, օ, ա ձայնավորները. ու, օ, ա ձայնավորները առաջնային շարքի ու, օ, ա հնչումներն են՝ ֆունկցիոնալ տարբերակվածությամբ. ե-ն միջին շարքի (միջին բարձրացման) ետահայաց (отодвинутый назад) է-ն է, որ հնչում է իբրև ը՝. ը՝-ն միջին շարքի միջին բարձրացման առաջահայաց (продвинутый вперед) ը ձայնավորն է, որ հնչում է իբրև ը՝։

Եթե սխեմայով արտահայտելու լինենք նշված ձայնավորների արտաբերման յուրահատկությունները, ապա կունենանք այսպիսի պատկեր.

է և ե հնչույթային տարբերություն ունի. օրինակ, հետևյալ հակադրությունից. տէղ (<դեղ) և տեղ (<տեղ). ը և ը՝-ի համար հմմտ. բըղէրէն «այգիներին» (եզ. բաղ «այգի») և բը՝ղէրէն «բեխերին» (նգ. բէղ «բեխ»)։

ե) Ժողովրդական հեքիաթներից, Աբովյանի, Պռոշյանի, Սուն-

դուկյանի, Սայաթ-Նովայի ստեղծագործություններից և ընդհանրապես որևէ տեքստից բերված օրինակները բարբառային տառադարձության չենք ենթարկել։

Թվի fեռականական իմաստները և նրանց արտահայտման միջոցները։ Բարբառներում գոյականի թվի կարգը ներկայանում է հիմնականում երկակի հակադրությամբ՝ եզակի թիվ և հոգնակի թիվ։ Երկակին գրեթե իրեն զգալ չի տալիս, բացի որոշ վերապրուկային ձևերից, որոնք նկատելի են արևմտահայ մի քանի բարբառներում։ Շատ բարբառներում, նույնիսկ բառածանցումներում հին երկակի վի (<ուի) մասնիկը որևէ արտահայտություն չունի։ Այս վերաբերում է նաև հին գրական հայերենում նկատված մասնակի իրողություններին՝ ակն>աչf||ակունք, ունկն>ականջf||ունկունք և այլն. համմտ. աշկ (<աչք>աշկևր, անջուկ>ընջուկնէ (Ղրբ.)։

Եզակի իմաստը ձևաբանորեն նյութական արտահայտություն չունի, այն անվերջավոր է, կամ, ինչպես ասում են, ունի զրո վերջավորություն։ Իմաստով եզակին նույնական է ընդհանուր հայերենում, կարող է արտահայտել մեկ առարկա, կամ առարկայի ընդհանուր տեսակ, առարկաների հավաքական խումբ, վերացականություն, նյութայնություն և այլն։ Հիմնական իմաստը եզակիության գաղափարն է, մնացածները հանդես են գալիս իբրև բառիմաստի երանգավորումներ։ Այս իմաստները տրված են եզակի բառաձևի հիմքում, հոգնակի իմաստավորումներին հակադրվում են համապատասխան մասնիկավորման բացակայությամբ։ Այս իմաստով եզակին բացասական ձև է հոգնակիի համեմատությամբ։

Հոգնակին եզակիին հակադրվում է նյութական միջոցներով՝ մասնիկավորմամբ. այդ մասնիկները կա՛մ միայն հոգնակերտ են, կամ էլ հոգնակերտ-հոլովակերտ։ Բոլոր դեպքերում էլ հոգնակիի իմաստ ունեցող մասնիկի հավելումը եզակի ուղղականի (կամ եզակի) ձևին ստեղծում է նոր քերականական ձև՝ հոգնակի ձև։ Հոգնակիականությունը միայն մասնիկավորմամբ է դրսևորվում։

Հոգնակերտ մասնիկները՝ դրաբարում, միջին հայերենում հանդիպող մասնիկներն են կամ նրանց՝ հնչյունաբանական, ձևաբանական վերակազմավորումներով զարգացումները։ Քանի որ թվակազմությունը մասնիկավորմամբ է արտահայտվում, թվի կարգի կառուցաձևը ներկայանում է իբրև հոգնակիականի հիմքի և հոգնակերտ վերջավորությունների զուգորդում։

Տարբեր մասնիկների՝ հոգնակերտների գործածությունը պայմանավորված է այլևայլ հանգամանքներով։ Այստեղ կարող են դեր ունենալ հնչյունաբանական, ձևաբանական, իմաստաբանա-

կան գործոններ։ Ըստ այդմ էլ զանազանում ենք հնչյունաբանական, ձևաբանական-իմաստաբանական հիմքատեսակներ։ Հնչյունաբանական հիմքատեսակները առանձնանում են վանկաբանական-ությամբ, հիմքավերջի հնչյունական բնույթով և որոշակի հոգնակերտների հետ ունեցած զուգորդություններով։ Ձևաբանական-իմաստաբանական հիմքերը գործում են առանձին ձևույթների հետ կապված կամ իմաստային որոշակի խմբավորումների շրջանակներում։

Յուրաքանչյուր բարբառում հիմքակազմությունը դրսևորվում է ինչպես համակարգային կազմավորումներով, այնպես էլ ոչ-համակարգային կազմավորումներով. առկա են հնատիպ կազմավորումներ, նորակազմություններ, բազմաձևություններ և շեղումներ։ Անկասկած, ամենից առաջ, մեզ հետաքրքրում են համակարգային կազմավորումները, թեև պակաս կարևոր չեն հնատիպ ու այլ ձևերի դիտարկումները։ Բարբառներում համակարգային զուգորդումները կապված են հիմնականում էր, ենք, եի և մի քանի այլ հոգնակերտների գործածության հետ։

Իմաստային տեսակետից հոգնակին արտահայտում է առարկայի մեկից ավելին լինելը, բայց կարող է արտահայտել հավաքականություն, վերացականություն, տեսակայնություն ևն, ունի իմաստային այլևայլ երանգավորումներ բառի փոխաբերական առումների հետ կապված։

II. ՀՈԳՆԱԿԻԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ. ՀՈԳՆԱԿԻԱԿԱԶՄ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՋՈՒԽԳՈՐԾՈՒՄՆԵՐԸ ՀՈԳՆԱԿՍՐՏ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Ա) Հիմքակազմություն։ Հոգնակիի հիմքի ձևաբանական կազմը։ Հիմքը կարող է լինել արմատական կամ բաղադրյալ, այսինքն՝ միաձևույթ կամ երկձևույթ-բազմաձևույթ։ Չկա հատուկ հիմքակազմիչ տարր, որով եզակիի ձևից կազմվեր հոգնակիի հիմք։ Հին հայերենի f հոգնակերտը և նրանով ձևաբանորեն վերակազմավորված որոշ զարգացումներ մի շարք դրյականների մեջ հանդես են գալիս իբրև ածանցական տարր՝ կորցնելով հոգնակիի գաղափարը. նրանք ավելացող հոգնակերտից առաջ պարզապես հիմքի ձևույթային տարր են, այլևս հոգնակերտ չեն դիտակցվում։ Ստ. Մալխասյանցը f հոգնակերտի մասին գրում է. «Նոր լեզվում շատ տեղ պահպանվել է քարացած ձևով, իբրև բառի արմատական մաս» (ՍՄ, ՀԲԲ, 4, 533)։ Նշված f տարրը հոգնակիակազմ հիմքում երբեմն հանդես է գալիս f>կ փոփոխությամբ՝ ապաշնչեղացումով։

Բերենք մի քանի օրինակներ վերը արված բնութագրումների համար. **աչք>աչկ-էր** *(Ղրբ., Պոլիս, Համմտ. ԱՊ, ՀԲ, Ն, 341, ԹԴ, ՄԲ, Ն, 249),* **աչկ-էր** *(ՄՄ, ՇԲ, Ն, 172, ՀԺՀ, 9, 229-Մանազկերտ),* **աչք-էր** *(Արարատյան, Համմտ. նաև ՀԺՀ, 9, 111-Ալաշկերտ),* **ականջ-իր** *(Թբիլիսիի բրբ. Համմտ. ԳՍ, Պ, 40).* **ոտք>վոտք-եր** *(Վան),* **վոդք-էր** *(Կարին),* **օտկ-էր** *(Մալաթիա),* **օտք-եր** *(ՀԺՀ, 9, 418-Ալաշկերտ).* **ձեռք>ծեռք-էր** *(Ղրբ.),* **ծեռք-եր** *(Վան),* **ցառք-էր** *(Մալաթիա),* **ձեռք-եր** *(Մուշ),* **խոսք>խոսկ-էր(ք)** *՝ Ղրբ.,* **խոսք-իր** *(Սասուն),* **խոսք—եր** *(ՀԺՀ, 9, 111-Ալաշկերտ),* **խոսք-էրք** *(Արարատյան),* **խոսկ-իր** *(Թբիլ. բրբ. Համմտ. ՄՆ, ԽԺ, 24. ԳՍ, Պ, 40),* **խոսք-եր** *(ՀԱ, ԱոՔ, Ն, 205).* ***այսպես նաև՝ առաջկ (<առաջք)>ըրջկ-նէ, կօխկ (<կողք)>կօխկ-էրք, միշկ(<մէջք)>միշկ-էր, պարտկ (<պարտք)>պարտկ-էր, խելք>խըլք-ըրնէտ «խելքներդ», վանք>>վանք-էր. փոխկ (<փողք)>փոխկ-էր(ք), քրշնրք (<կշեռք)>>քրշըրք-նէ (Ղրբ.), վանք-էր (Պոլիս), ճըղացք-նի (Համշեն), մտք-իր (Սասուն), պարտք-էր (Կարին), պարտք-եր (Մուշ), վանք-էր (Կեսարիա), խելք-եր (ՀԺՀ, 9, 17-Ալաշկերտ), մտք-էր, ունք-էր, կողք-էր (Արարատյան)։***

Ինչպես նշեցինք, նույն հակաստագիրն ունեն Ր-ով վերակազմավորված շատ մասնիկ-ածանցներ. **անք՝** *փամփասանք-նէր (Պոլիս), պատվիրանք-ներ (ՀԱ, ԱոՔ, Ն, 228), պրմբասանք>պրմբրնընք-նէ (Ղրբ.),* **ունք՝** *մասունք-նէր (Պոլիս), ակունք-ներ (ՀԺՀ, 9, 92-Ալաշկերտ), արցունք-նէր (Մալաթիա)։ Ընդհանրապես հին հայերենի ղգալի թվով աննկականներ, որ ունեին ան-ք, ին-ք, ուն-ք և կազմավորման համանման կաղապար, հիմքակազմ տարրի հետ ք-ի վերակազմավորումով դարձել են պարզապես ածանցական ձևեր։*

Ըստ Աճառյանի վկայության պոլսահայ բարբառն ունի իվի բառաձև (եզ. ուղղ.-հայց.-ում). այս նշանակում է, թե վի-ն քան էության իվի-նկր հոգնակի ձևում արդեն հիմքի ածանց է։

Հոգնակիակազմություն և հոլովակազմություն. եզակի ուղղականի ձևը հոգնակիի հիմքն է: *Բարբառները հիմնականում զարգացրել են կցական կառուցածև։ Այսպիսի կառուցվածք ունեցող լեզուներում սովորական երևույթ է, երբ ուղղականի ձևը միաժամ է դառնալու եզակի հոլովական հարացույցի և հոգնակիակազմության ընդհանրական հիմքը։ Այս այսպես է, բնականաբար համակարգային կազմավորումներում։ Հնատիպ կազմավորումները բարբառներում ունեն թեքական կամ խառը տիպոլոգիա։ Եզակի ձևերում թվակազմությունը չեզոք է հոլովակազմության նկատմամբ.*

եզակիի գաղափարը չունի մասնիկավորված արտահայտություն, մինչդեռ հոլովակազմությունը գերազանցապես մասնիկավոր է բարբառներում։ Եվ ընդհանրապես եզակիի գաղափարը, ինչպես նշել ենք, քերականական արտահայտության նյութական միջոց չունի. այն դրսևորվում է հոգնակերտի բացակայության դիտակցումով, բացասական՝ զրո վերջավորությամբ։ Հոգնակիակազմությունը համակարգային կազմավորումներում սովորաբար չի համընկնում հոլովակազմությանը, այլ «ուղեկցում» է նրան ուրույն արտահայտության միջոցներով, ինչպես բնորոշ է առհասարակ կցական կառուցածևի լեզուներին։

Եվ այսպես՝ եզ. ուղղ. ունենք հիմք+զրո կաղապարը, օր. քար+զրո։ Հոգնակիակազմության մեջ իբրև հիմք հանդես է գալիս եզակի ուղղականի հիմքը՝ քար-, ինչպես՝ քար-եր։ Բայց քանի որ եզակի ուղղականը փաստորեն նյութական վերջավորություն չունի, ուստի խոսափում ենք «եզ. ուղղ.-ի հիմք», արտահայտությունից և դործածում ենք «եզակի ուղղականի ձև» անվանումը, որը ավելի նպատակահարմար է վերլուծության, նկարագրության պարզության տեսանկյունից։

Հիմքակազմության այս կցական տիպոլոգիան իր բնորոշ արտահայտությունն է դտել գրեթե բոլոր բարբառներում։ Սա կարելի է ցուցադրել Թեկուզ Պոլսի բարբառից բերած օրինակներով.

Եզ. ուղղ.-հյց. նզ. սեռ.-տր. հոգն. ուղղ.-հյց. սեռ-տր.

հաց	հաց-ի	հաց-էր	հաց-էր-ու
օր	օր-վան	օր-էր	օր-էր-ու
գէշութիւն	գէշութեան	գէշութիւն-նէր	գէշութիւն-նէր-ու,
էրիգ	էրգ-ան	էրիգ-նէր	էրիգ-նէր-ու
ախպար	ախպօր	ախպար-նէր	ախպար-նէր-ու
քուր	քրօջ	քուր-էր	քուր-էր-ու

Այս ձևերի դուրդրումը պարզորոշ կերպով հաստատում է կցական տիպոլոգիայի առկայությունը Պոլսի բարբառում. «Ուղղականի ձևը իր կերպարանքը ամբողջությամբ պահում է հոլովման բովանդակ ընթացքում» (ՀԱ, ՔՈՒ, 101)։ Եթե, օրինակ, ախպար եզակի ուղղականի ձևն է, ախպօր՝ դրա սեռականը, իսկ հոգնակի ուղղականում ախպար-ներ, և թևք հոլովաձևերում՝ ախպար-նէր+ճոլովակերտ, ապա հասկանալի է, որ եզակի ուղղականի ձևն (=հիմքը) է հոգնակիի հիմքը։ Անկասկած, եզակի ուղղականի ձևը կարող է հանդես գալ իբրև հոգնակիի հիմք իր հնչյունափոխված տարբերակով. անգաճ>անգրճ-նէր, հայվան>հայվրն-նէր,

չափաք>չափոր-եէր, բայց դա ձևաբանական կառուցածևի էությունը չի փոխում (Համմ. ՀԱ, ԼՔՀԼ, III, 884)։

Բ. Հիմնաեսակներ. ենթատիպեր. տարբերակներ: *Ըստ հոգնակիակազմ հիմքերի և հոգնակերտ վերջավորությունների գուգորդումները պայմանավորող գործոնների զանազանվում են հնչյունաբանական հիմքեր, եթե այդ գուգորդումները կախված են հնչյունական գործոններից (վանկաբանակություն, վերջնահանգի հնչյունական կազմը), ձևույթաբանական հիմքեր, եթե դրանք կախված են ձևույթի (բառի) բնույթից, իմաստաբանական հիմքեր, եթե դեր են խաղում հիմքի (բառի, ձևույթի) իմաստային հատկություններ*[19]*։ Հաճախ այս գործոնները զուգակցվում են, այնպես որ ունենում ենք նաև խառը հիմքեր, ասենք՝* հնչույթաբանական-ձևույթաբանական, ձևույթաբանական (ձևաբանական)-իմաստաբանական, հնչյունաբանական-իմաստաբանական:

Իհարկե, ոչ բոլոր բարբառներում են հստակորեն տարբերակված այս հիմքերը, բայց գերակշռող մասում սրանց դրսևորումները որոշակի են։

Հնչյունաբանական հիմքերը ունեն իրենց ենթատիպերը. ըստ վանկաբանակության՝ միավանկ, մեկից ավելի վանկանի՝ *«մեկուկես» վանկանի, երկվանկ և բազմավանկ*[20]*, ըստ վերջնահանգի հնչյունական կազմի՝* ձայնավորահանգ, բաղաձայնահանգ:

Հիմքերը նզակի ձևի համեմատությամբ, հնչյունաբանական կամ ձևաբանական վերակազմավորումներով կարող են ներկայանալ առանձին տարբերակներով՝ հնչյունաբանական վերակազմավորված *կամ* չվերակազմավորված, ձևաբանորեն վերակազմավորված *կամ* չվերակազմավորված *տարբերակներ։*

[19] *Հիմքը* ձևաբանական միավոր է, սակայն հոգնակիակազմության մեջ հիմք+հոգնակերտ կազմատարը ունի այլևայլ կոնկրետ դրսևորումներ. հնչյունաբանական, ձևույթաբանական, իմաստաբանական հատկանիշներով պայմանավորված՝ տարբեր հիմքերի և տարբեր հոգնակերտների գուգորդումներ ունենք։ Ահա թե ինչու, մանավանդ նկարագրության պարզության համար, պայմանականորեն գործածում ենք հնչյունաբանական, ձևույթաբանական, իմաստաբանական հիմնաեսակներ անվանումները։

[20] *Որոշ բարբառներում հնչյունաբանական հիմքատեսակում բազաձայնահանգները գրեթե ենթատիպերի չեն բաժանվում, միավանկ թե բազմավանկ հավասարապես նույն հոգնակերտի հետ են գուգորդվում։ Այդպիսի բնութագրական հիմքի հաստատման տենդենցները որոշակի արտահայտություն են գտել Համարիքի խոսվածքում. ըստ ԿԴ, ԼՂԲՔ, Ն՝ գնացողէրին, սալդաթէր, հինզէրէր, տարիէր (Ն. տ. էջ՝ 294, 295)։ Ահա թե ինչ է ասում Արեշ-Համարիքի բարբառի մասին պրոֆ. Ա. Ղարիբյանը. «Արեշի բարբառի հոգնակին է «էր», իսկ ձայնավորով վերջացող բառերի համար՝ «էք»։ Բարբառում չկան հոգնակի «ներ» վերջավորություն ունեցող բառեր։ Բազմավանկ բառերն էլ ստանում են «էր» հոգնակի. օրինակ՝ քաղաք-քաղաքէր, հայաթ-հայաթէր» (ԱՂ, ՀԲ, 373)։*

Միավանկ հիմքեր: *Բարբառներում համակարգային հոգնակիական ազմության շատ տարածված հիմքատեսակ է. եզակի միավանկ ուղիղ (սովորաբար եզակի ուղղականի) ձևերը դառնալով հոգնակիի հիմք, գուգորդվում են էր հոգնակերտի կամ առանձին բարբառներում նրա հնչյունական տարբեր զարգացումները ներկայացնող տարբերակների հետ: Ընդ որում շատ տարածված էր տարբերակի հետ գուգորդվողները հանդիպում են Արարատյան, Ղարաբաղի, Պոլսի, Ն. Ջուղայի, Կեսարիայի, Ուրմիայի, Շամախու, Սյունյաց, Հադրութի, Կարնո, Դերսիմի, Մալաթիայի, Արդվինի, Կողբնի բարբառներում. օր.՝ խօղ>խօղ-էր «հողեր», գօվ>գօվ-էր «կովեր», աշկ>աշկ-էր «աչքեր» (Պոլիս). արտ>արտ-էր. պ ա ն (<բան)>պ ա ն-էր, արչ (<արջ>արչ-էր, հօղ (<հող)>հօղ-էր, կօվ (<կով)>կօվ-էր, ձ̈օր (<ձոր)>ձ̈օր-էր, ծետ (<ծիտ) ծըտ-էր (Ղրբ.). ըստ ԽԱ, ԵԺ, III՝ քար-եր, ուս-եր, ցավ-եր, փոս-եր, տըն-եր, ըստ ՊՊ, ԵԺ, 1՝ պապ-եր, շոր-եր, ֆշ-եր, շիվ-եր, սրտ-եր (Արարատյան բ.). էր‖եր՝ Մշո, Վանի, Շատախի, Առտիալի բարբառներում. օր. խաղ>խաղ-եր, խոզ>խոզ-եր(Վան), պարտք-եր (մուշ). իր՝ Սվեդիայի, Մարաղայի, Թբիլիսիի, Սասունի բարբառներում. օր. Թրիլ. ըրբ.՝ մազ>մազ-իր (ՄՆ, ԽԺ, 7), դռստ>դռստ-իր (21), խոսկ>խոսկ-իր (24), սար>սար-իր (49), նաև՝ խոսկիր (ԳՍ, Պ, 40), շուրիր (Ն. տ. 64), մազիր (81), փուղիր (81, 103), շաւիր (84), պատիր (103), բանիր (118), տեղիր (ԳՍ, ՀԸ, 50). Համմտ. էձ>էձ-իր (Մարաղա). աւ‖աւր՝ Մեղրու, Ագուլիսի, Կարճևանի, Կաքավաբերդի բարբառներում. օր. արտ>արտ-աւր, ֆիլ>ֆիլ-աւր (Մեղրի). ըր՝ Ղարադաղի բարբառում. օր. հաց>հաց-ըր, առչ>առչ-ըր. իյ‖իկ,յ՝ Կիլիկիայի (գէօվ «կով»>>գուվ-իյ), Հաճընի (հօվ «հավ»>հավ-իկ,յ) բարբառներում. ի՝ աձ-ի «այծներ», լվ-ի «լվներ», չ՛րին «չրերն», ծովին «ծովերին» (Խտորչուր, տե՛ս ՀԱ, ՀԼՊ, II, 338):*

Բարբառներում հանդիպում են որոշ միավանկ հիմքեր գուգորդված այլ հոգնակերտների հետ, թեև սահմանափակ քանակով բառեր են ընդգրկում և լայն տարածում չունեն. այսպես՝ վաւ‖վա, էօնի հոգնակերտների հետ գուգորդվող հիմքեր կան Սվեդիայի բարբառում (տե՛ս ՀԱ, ԼՔՀԼ, III, 761), նաև՝ վի (Համշեն և այլք), աճ (Լոռի, տե՛ս ՄԱ, Լա, 91):

Որոշ բարբառներում միավանկ հիմքի մեջ առանձնանում է մի ենթատիպ՝ միավանկ ձայնավորահեղ, մեծ մասամբ ի հանգող ենթատիպ: Այսպիսի հիմքերը բնորոշ են նրանով, որ գուգորդվում են ոչ թե էր-ի (կամ նրա հնչյունական տարբեր զարգացում-

ները հանդիսացող տարբերակների) հետ, այլ ան(ի) հոգնակերտի հետ։ Այս իմաստով միավանկ հիմքերը կունենան երկու ենթատիպ՝ **միավանկ բաղաձայնահանգ և միավանկ ձայնավորահանգ ենթատիպեր։**

Միավանկ ձայնավորահանգ հիմքեր են զանազանվում, օրինակ, Ղարաբաղի, Ագուլիսի, Մեղրու, Հադրութի, Սյունիքի, Կոզնեի բարբառներում, հատկապես՝ ձի, քի, լու, ձու բառերի հոգնակիացման մեջ. քէ (<քի)>քը՛յան, ձի (<ձի)>ձը՛յան, ձու (<ձու)>ձուվան‖ձուվան, լու (<լու)>լուվան‖լուվան (Ղրբ.)։ *ձիյան (ԱՊ, ՀՔ, 341), ձի>ձիյանք, լու>լուվանք (Սյունիք)։ Կան բարբառներ, որոնց մեջ այս կարգի բառերի մի մասը (հատկապես ու հանգողները) հետևում է միավանկ բաղաձայնահանգ հիմքերին և նրանց հոգնակիակազմ հիմքերը զուգորդվում են էր հոգնակերտի հետ, իսկ ի հանգող ձի բառը՝ ան(ի)-ի հետ. ձ՛ի>ձ՛իանք, լու>>լվէր, ձ՛ու>ձ՛վեր (Ն. Ջուղա), ձի>ձիան(ք), լու>լվիր (Մասուն). Համմտ. նաև՝ ձիյանք՛, իշանք (ՀԱ, ՎԲ, Ն, 217, 229), ցիյանք (ԲԴ, ՄԲ, Ն, 248), ձիանք (ՀԺՀ, 9, 254, բայց և՝ ձիանքներ, ձիաներ, Մանագկերտ), ձիանք (Ն. տ. 18, Ալաշկերտ)։*

Միավանկ ձայնավորահանգները Մարաղայի բարբառում զբաղանցապես հետևում են միավանկ բաղաձայնահանգ հիմքերին, զուգորդվում են իր (<էր)-ի հետ. լու>լուիր «լվեր», ձու>ձուիր «ձվեր», ձի>ձիյիր «ձիեր» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 750)։ *Համմտ. նաև Աբաթյան բրբ. ձի>ձիաններ (ԽԱ, ՆԼԺ, III, 40), ձվեր (ՊՊ, ԵԺ, I, 61)։*

Մեկից ավելի վանկանի հիմքատիպեր։ *Սրանք միավանկներից տարբերվում են, ամենից առաջ, վանկաքանակության սկզբունքով, բայց միաժամանակ այլ հնչյունաբանական, ձևաբանական, իմաստաբանական հատկություններով ևս. զուգորդվում են ուրույն հոգնակերտների հետ, ունեն համակարգային և ոչ-համակարգային կազմավորումների առանձնահատկություններ, հնչյունաբանական, ձևաբանական նաև յուրահատուկ վերակազմավորումներով տարբերակներ և այլն։ Բարբառագիտական գրականության մեջ զանազանվում են սրանց մեկուկես վանկանի, երկվանկ.* ***բազմավանկ հիմքատիպեր։ Ընդ որում վերջնահանգի հնչյունական կազմով լինում են՝ երկվանկ-բազմավանկ ձայնավորահանգ և երկվանկ-բազմավանկ բաղաձայնահանգ հիմքատիպեր. իսկ եթե նզակի ձևը բազադրյալ՝ բարդ է և ունի միավանկ վերջնաբաղադրիչ արմատ*** *(բառ), ապա ըստ այդ վերջնաբաղադրիչի բնույթի զանազանում ենք առաջին կարգի վերջնաբաղադրիչով հիմքատիպեր և երկրորդ կարգի վերջնաբաղադրիչով հիմքատիպեր։*

Պետք է, սակայն, նկատել, որ բարբառներում ևս «մեկուկես» վանկանի հիմք գաղափարը հեղհեղուկ է, փաստորեն շփոթության տեղիք է տալիս։ Բարբառներում ևս հիմնականում գործում է միավանկ և մեկից ավելի վանկանի հիմքերի սկզբունքը։ Այսպես կոչված մեկուկես վանկանի հիմքերը, ինչպես կտեսնենք, փաստորեն կամ սովորական երկվանկ են, կամ էլ, նզակի ձևի համեմատությամբ, հնչյունաբանորեն վրակազմավորված ու միավանկի վերածված հիմքեր են։

«Մեկուկես» վանկանի հիմքեր։ *Սրանք, ինչպես նշել ենք, երկվանկ հիմքերի մեջ առանձնանում են հոգնակիակազմության կառուցաձևում սկզբնագաղտնավանկի և վերջնագաղտնավանկի ունեցած տարբեր դիրքերով, արժեքներով։ Այդ արտահայտվում է նրանով, որ մեկուկես-սկզբնագաղտնավանկ հիմքերը հետևում են առհասարակ երկվանկ-բազմավանկ հիմքերի ձևաբանական վարքագծին, նույնատիպ զուգորդումներ ունեն հոգնակերտի հետ։ Իսկ մեկուկես-վերջնագաղտնավանկով հիմքերը ձևաբանական այլ հատկություններ են դրսևորում։*

«Մեկուկես» վանկանի հիմքերի կարգը բստ էության պայմանական է, եզակիում դրանք փաստորեն երկվանկ ձևեր են, բայց *վերջնագաղտնավանկ ունեցողները նոր հայերենում և բարբառների մեծ մասում հոգնակիակազմության ժամանակ վերածվելով միավանկի՝ հետևում են միավանկների սկզբունքին։* Այս նշանակում է, թե իբրև հոգնակիակազմ հիմք բոլոր դեպքերում առկա է կա՛մ երկվանկ-բազմավանկը, կա՛մ միավանկը. միջին կարգ չկա։ Նվ ահա վերջնագաղտնավանկ-երկվանկների վանկայնորեն այդ վերակազմավորումը (միավանկի վերածվելը) նկատի ունենալով թերևս *Բուլ հիմքեր կան «մեկուկես» անվանման համար։*

Բարբառների մի մասում մեկուկես–**սկզբնագաղտնավանկ** հիմքերը *զուգորդվում են ներ հոգնակերտի հետ, թեև տվյալ բարբառում ընդհանրապես երկվանկ-բազմավանկները ընդունում են այդ հոգնակերտը. օր. Արարատյան բրբ. ծլանկներ (խև, ենժ, III, 19), կտորներ (ն. ա. 20), գդակներ (20), պռոշներ (պպ, եժ, I, 23), խրատներ (ն. ա. 28), նշաններ (60), հրագներ (64), տրեխներ (68), քթալներ (85), քթոցներ (171), բլբուլները (132), գոյականաբար գործածվողները ևս՝ լսածները (157), քցողները (94). Համմա. նաև՝ պռուշներ (ՀԱ, վբ, Ն, 211), դդալներ (ՀԺՀ, IX, 490-Բաղեշ), մշակ>մշակներ (ն. Ջուղա), դդայ>դդաներ (Առտիալ), գլուխ>գլուխներ (ՍՍ, ԱԲ, 77-Ագուլիս), ք(ը)լօխ>ք(ը)լօխներ, գ(ը)րագ>գ(ը)րագներ, ջ(ը)րաք>ջ(ը)րաքներ (Մալաթիա)։ Այլ*

հոգնակերտներից՝ են. կլօխ>կլէխնի (Համշեն), իր՝ խծիպ (<խծապ)>խծափքիր (Մարաղա), նա. գ'լօխ (<դուխ)>գ'ըլխրնա (Սվեդիա, տե՛ս ՀԱ, ԼՔՀԼ, III, 774), նէ՝ ճը'րաք' (<ճրադ)>ճը'րը'ք'նէ, կըծնգ (<կծիկ)>կըղկընէ, կրրակ (<կրակ)>կրրկնէ, պը'լիթ (<բլիթ)>պը'լը'թնէ, պըղօճ (մի տնսակ միջատ)>պըղուճնէ, քը'թօլ (<գդալ)>քը'թալնէ, կ'ը'լօխ (<գլուխ)>կըլխընէ, տը'մակ (>դմակ)>տը'մը'կնէ (Ղրբ. բրբ.)։

Մեկուկես–վերջնագաղտնավանկով հիմերի հանդիպում ենք մի շարք բարբառներում, պետք է, սակայն, նկատել հետևյալ հանգամանքը։ Եթե եզակի մեկուկեսվանկանի ձևը հոգնակիի հիմք դառնալիս ենթարկվում է հնչյունաբանական վերակազմավորման և կորցնելով գաղտնավանկը՝ վերածվում է միավանկ հիմքի, ապա չուգորդումը կատարվում է նր հոգնակերտի կամ նրան հարաբերակից ձևի հետ. օր. աստ(ը)ղ>աստղ-էր, սանդ(ը)ր>սանդր-էր, ծանդ(ը)ր>ծանդր-էր, բայց նաև՝ ծրնդրր-նէ (Ղրբ.), Արարատյան բրբ. աստղեր (ՊՊ, եժ, I, 78. Խև, եվժ, III, 12), սանդրեր (Խև, եվժ, III, 169), Թբիլ. բրբ. աստղերու (Մն, Ախժ, 53), աստղիրը (ԳՍ, Պ, 39), աստ(ը)խ>աստխ-էր, մանդ(ը)ր>մանդր-էր, ծանդ(ը)ր>ծանդր-էր, սանդ(ը)ր>սանդր-էր (Ն. Ջուղա), դաք(ը)ր>դաբր-էր (Պոլիս), աստղերուն (ՎՊ, ՍԲ, 78), ասդ'(ը)ղ>ասդ'ղ-ներ (Ատրիալ), աստղեր (ՀԱ, ՎԲ, Ն, 235, 237), նաև՝ ասխ-էր, դաքր-էր, սանր-էր (Կեսարիա), իր՝ ասդ(ը)ղ>ասդղ-իր (Սվեդիա. ըստ Հ. Աճառյանի վկայության նաև Լօռի՝ բ'ուն ձ'րէօնք, տե՛ս նրա Լիակ. բեր. III, 761). իյ՝ օս(ը)ղ (<աստղ)>ասդ-իյ (Կիլիկիա)։

Իսկ եթե հնչյունական վերակազմավորում տեղի չի ունենում, վանկաքանակությունը պահպանվում է, ապա «մեկուկես» վանկանի (երկվանկ) հիմքը չուգորդվում է որոշ բարբառներում ևէր, այլ բարբառներում նէ կամ իր և այլ հոգնակերտի հետ։ Այսպես՝ աստըղներ (Շատախ), տէքըրնէր (Արդվին), սանդըրնէր (Մալաթիա), իր՝ ծանդրր-քիր, սանդրո-քիր (Մարաղա), նէ՝ մանդրր-նէ, սանդրր-նէ (Մեղրի)։ Կան բարբառներ, որոնց մեջ էր (իր, ար՝ ար) և ևէր հոգնակերտների չուգորդումների տատանումներ ենք նկատում. այսպես՝ ասխէր, բայց՝ սանդրո-նէր, մանդրո-նէր (Կարնո բրբ.). Համմ. նաև՝ մանրներ (Արարատյան բրբ. ըստ ՊՊ, եժ, I, 69)։ Նոր նախիջևանի բարբառում նման հիմքերին ընդունում են սովորաբար ևէր. սանդրոնէր, բայց դրանց կողքին՝ ասպխէր։ Համանման երևույթ նկատում են Ագուլիսի բարբառում, ուր սովորական է էր-ի գործածությունը, բայց բացառված չէ նաև ևէր-ի առկայությունը այդ կարգի հիմքերի հետ։

Երկվանկ-բազմավանկ բաղաձայնահանգ հիմքեր: *Բարբառներում այս հիմքերը ամենից առաջ բնորոշ են ուրույն հոգնակերտների հետ իրենց զուգորդումներով։ Մեծ մասի մեջ հոգնակիակազմ հիմքերը զուգորդվում են նէր հոգնակերտի (կամ նրա հնչյունական տարբեր զարգացումներով ստացված տարբերակների) հետ։ Նէր հոգնակերտի հետ զուգորդվող հիմքեր կան Պոլսի, Արարատյան, Ն. Ջուղայի, Ղարաբաղի (թևք հոլովներում), Շամախու, Կեսարիայի, Ուրմիայի, Դերսիմի, Մալաթիայի, Ագուլիսի, Արդվինի, Կարնո բարբառներում. բ՛էրաննէր (Ն. Ջուղա), տախտաղնէր (Շամախի), պառավներ (Արարատյան, ըստ ԽԱ, ԵԼԺ, III, 3), էրթիկնէր (Ն. տ. 7), ոսկոռներ (43), ընկերներ (111), ըստ ՊՊ, ԵԺ, I՝ հալիվորներ (21), թաքավորներ (52), ամաններ (53), ձակատներ (55), հարուստներ (71), շամփուրներ (80), կեսուրներ (81), մուշիկներ (110). մարաք՛ (<մարագ)>հոգն. սեռ-տր. մըրըք՛-նէր-էն, բաց. մըրըք՛նէր-ան, գործ. մըրըք՛-նէր-ավը, ներգ. մըրըք՛նէր-ըմը (Ղրբ.). ևեր՝ վանի, Մշո, Առտիալի բարբառներում. օր. ամիս>ամսըներ (Մուշ), աղվէսներ (Առտիալ), կարիճներ (Վան), ևիր՝ Թբիլիսիի բրբ. իմաստուններ (ՍՆ, ԽԺ, 61), սաղափներ (Ն. տ. 56), տախտակներ (Ն. տ. 50), մեչլիսներ (18), շամամներ (13), ծաղիկներ (71), արտասուքներ (ԳՍ, Պ, 69), ևիյ՝ իլիսներ «երեսներ» (Կիլիկիա)։*

Որոշ բարբառներում այս հիմքերը զուգորդվում են նի հոգնակերտի (կամ նրա այլ զարգացումների հետ. ընդ որում նի տարբերակը հանդիպում է Սյունիքի, Հաճընի, Դերսիմի, Խոտորջրի, Լոռու, Կիլիկիայի բարբառներում. ակռէվ «ագռավ»>ըկռըվ-նի (Սյունիք), մայօկ «մարագ»>մայօկ-նի (Հաճըն), հօտաղ>հօտաղ-նի (Լոռի)[21]. նէ՝ Ղարաբաղի, Հադրութի, Մեղրու, Կաքավաբերդի բարբառներում. ճաղաց>ճըղըց-նէ (Ղրբ. ուղղ. հոլ.), աման-նէ (Մեղրի)։

Որոշ բարբառներում երկվանկ-բազմավանկ հիմքերի հետ նէր կամ նէ հոգնակերտներին զուգահեռ (կամ առանձին հիմքերին ամրացած ձևով) գործածվում է էր. օր. ղարավաշ-էր, ճանապար-էր (հազվադեպ երևույթներից Ն. Ջուղայի բարբառում), կըրկատան>կըրկըտան-էր (Հադրութ)։ Ջրաբերդի խոսվածքում (կարելի է ասել ընդհանրապես Ղարաբաղի բարբառում) երկվանկ և բազմավանկ հիմքերը որոշ զանազանություն ունեն իրենց զուգորդում-

---

[21] Ըստ ՎՊ, ՍԲ, 32՝ Սասունի բարբառում կա նաև տարբերակ. օր. փէթակ>>փէթականին, որ մեզ թվում է հոդով բաղադրություն։

ներում։ Երկվանկ բաղաձայնահանգ հիմքերը երբեք չեն զուգորդվում էր հոգնակերտի հետ, այլ միայն ես-ի հետ (թեք հոլովների հոգնակիակազմության մեջ ես էր հոգնակերտի հետ, իսկ բազմավանկ բաղաձայնահանգների մեծ մասը կարող է զուգորդվել ինչպես էր, այնպես էլ ես հոգնակերտի հետ (թեք հոլովների հոգնակիակազմության մեջ՝ ես-ի հետ)։ Նախ բերենք օրինակներ երկվանկ բաղաձայնահանգներից. վեսկեռ (<ոսկոր)>վըսկըռ-նէ, կարկաժ «դդում»>կըրկըժ-նէ, սանդուղ «սանդուկ»>սընդուղ-նէ, ակռավ (<ագռավ)>ըկռըվ-նէ, անջուկ (<ականջ)>ընջուկ-նէ, պէմբ ա՛կ (<բամբակ)>պը՛մբը՛կ-նէ, կ՛ումաշ (<գոմեշ)>կ՛ումըշնէ, լակուտ (<լեզուտ)>լըկուտ-նէ, ճաղաց (<ջրաղաց)>ճըղըց-նէ, տիրէվ (<տերև)>տը՛րը՛վ-նէ. բազմավանկ բաղաձայնահանգներ՝ հըլէ՛վուր (<ալևոր)>հըլը՛վուր-նէ՛||հըլը՛վո՛ւր-էր, պարիկա՛մ (<բարեկամ)>պըրը՛կըմ-նէ||պարիկա՛մ-էր, քըլէ՛ղակ (<կաչաղակ)>քըլը՛ղըկ-նէ՛||քըլը՛ղա՛կ-էր, կըրկա՛տան (<կարկատան)>կըրկըտըն-նէ՛||կըրկըտա՛ն-էր, կըճէ՛ղակ (<կճղակ)>կըճը՛ղըկ-նէ՛||կըճըղա՛կ-էր, ծը՛յա՛վուր <(ձիավոր)>ծը՛յըվուր-նէ՛||ծը՛յըվո՛ւր-էր, չըխա՛րակ (<ճախարակ)>չըխըրըկ-նէ՛||չըխըրա՛կ-էր, ըլբա՛ստրակ (<նապաստակ)>ըլբըստրըկ-նէ՛||ըլբըստրա՛կ-էր, ըրտա՛սունք>ըրտըսունք-նէ՛||ըրտըսո՛ւնք-էր, պը՛նա՛կալ>պը՛նըկըլ-նէ՛||պը՛նըկա՛լ-էր, Հրե՛վան>Հրըրվըն-նէ||Հըրըվա՛ն-էր, Հրի՛շտակ>Հրը՛շտըկ-նէ՛||Հրը՛շտա՛կ-էր, սըմբե՛տան>սըմբըտըն-նէ՛||սըմբըտա՛ն-էր, ճըղմա՛ղնք>ճըղմըղը՛նք՛--նէ՛||ճըղմըղէ՛նք՛-էր, ուրո՛ւրուց (<օրորոց)>ուրուրուց-նէ՛||ուրուրո՛ւց-էր։

Կարճանի բարբառում նշված հիմքերը զուգորդվելու ուժեղ միտում են հանդես բերում ևս հոգնակերտի հետ. խաղու (խաղող)>խաղուֆնա, կարպատ-նա (ՀԴՄ, ԿԲ, 82). հանդիպում է նաև Սվնգիայի բարբառում. գ՛իշիր>գ՛իշիռ-նա (ՀԱ, ԼՔՀԼ, III, 772—774). Կոզենի բրբ.՝ աճի. ասէղ-անի, ըրէս-անի, ըռխանի, գ՛ըլէխ-անի (ՌԲ, ԿԲ, 86). ֆ՛էր-ի հետ զուգորդվողներ՝ կարաս-ք՛էր, պէրան-ք՛էր (Ուրմիա). հանդիպում է նաև Շատախի բարբառում, կ, ֆ՛, գ՛, և չհանգող հիմքերի հետ (ՄՄ, ՇԲ, 86). նաև ֆ՛իր՝ էրազ-ք՛իր, գ՛ամէշ-ք՛իր (Մարաղա)։ Երկվանկ-բազմավանկ և հանգող հիմքերը վանի բարբառում զուգորդվում են ճյուեր. Շատախի բրբ.՝ ֆ՛ուեր հոգնակերտների հետ. վերջինիս մեջ կ, ֆ՛, գ՛ վերջնահանգն ունեցողները զուգորդվում են ուեր-ի հետ (ՄՄ, ՇԲ, 86)։

Բարբառային որոշ, խիստ սակավ կազմավորումներում նշված հիմքերի հետ հանդիպում է նաև ֆ հոգնակերտի գործածություն.

օր. ախպէրք (Կաքավաբերդի, Ղարաբաղի և այլ բարբառներում)։

Երկվանկ–բազմավանկ ձայնավորահանգ հիմքեր։ *Բարբառներում այս հիմքերը բնորոշ են նրանով, որ գերազանցապես, մանավանդ ի, ցի հանգողները, զուգորդվում են Ø հոդնակերտի հետ, որոշ բարբառներում նաև ատաև, հյուեր և այլ մասնիկների հետ։*

Ø հոդնակերտի հետ զուգորդվող ձայնավորահանգ հիմքեր կան գրեթե բոլոր բարբառներում (Արարատյան, Պոլսի, Ղարաբաղի, Հադրութի, Թբիլիսիի, Մալաթիայի, Լոռու, Մեղրու, Սասունի, Հաճընի, Կարճևանի, Սյունյաց, Մշո, Նոր Ջուղայի, Կեսարիայի, Կոզհնի, Կարնո, Դերսիմի, Սվեդիայի, Կիլիկիայի, Ագուլիսի, Համշենի, Շամախու, Արեշ-Հավարիքի, Շաուախի). այսպես՝ Արարատյան բրբ. էրեխեք (ԽԱ, ԵԼԺ, III, 2), լեզուք (Ն. տ.), տանըցիք (Ն. տ. 6), ծառեք (Ն. տ.), որդիք (Ն. տ.), քանաքեռցիք (7), տիրացուք (8), հոգիք (11), բուլեք (14), գեղըցիք (15), թշնամիք (18, 47), քեզխուդեք (18), ոսկիք (21), ոզորմելիքը (123), սարըցիք (152), փեսեք (157), սատանեք (ՊՊ, ԵԺ, 1, 31), ծուդեք (28), էրեխեք (Ն. տ.), բողչեք (30), գեղացիք (60), չուխեք (69), սուփրեք (80), խնամիք (88), ճամփեք (91), խնձորենիք (Ն. տ.), քեթխուդեք (93), ֆարաջեք (110), գեղըցիք (144), աշտարակցիք (197), գյուլբեք (198), արաբեք (Ն. տ.), որդիք (209), Թբիլիսիի բրբ., թշնամիք (Ն. տ. 22), վուրթիք (ԳՍ, Պ, 30, 80), լոթիք (Ն. տ. 39), ակռեք (ԳՍ, Ըե, 56. Սն, ԽԺ, 7)։

Որոշ բարբառներում (Ղարաբաղի, Կարճևանի, Մեղրու, Հադրութի, Շաուախի և այլն) f-ն հանդես է գալիս իր քմայնացած զարգացումով, իբրև f՛. օր. խօխա «երեխա»>խօխէք՛, տրղա (<տղայ)>տրղէք՛, փեսա>փըսէք՛, վերթի (<որդի)>վերթիք՛, վրկա>վրկէք՛, ծիլի>ծիլիք՛, կ՛օտի (<գ՛օտի)>կ՛օտիք՛, ըրախա (<երախայ)>ըրխէք՛, կաշի>կաշիք՛, մուտանա (<մատանի)>>մուտընէք՛, սադանա>սադանէք՛, բօշա>բուշէք՛ (Ղրբ. Ջրաբերդի խոսվածք). հիկ՛իք՛ (Շաուախ) «այգիներ»։

Սակայն պետք է նկատել, որ ձայնավորահանգ հիմքերը կարող են բաշխվել ըստ հոգնակերտների, երբեմն էլ f-ին զուգահեռ այլ հոգնակերտներ ևս գործածելով. համմտ. Ղրբ. վէդրա>վը՛դրէնի, հ՛ա վգ՛ ա>հը՛վգ՛-էնի, կաուս>կըռվ-էնի, գ՛ուլբա>գ՛ուլը-էնի՝ գ՛ուլբէք. Ագուլիսի բրբ. լուգա>լուգը և լուգու-նէր. համմտ. նաև Արարատյան բրբ. հոգիներ‖հոգիք, կաշիներ‖կաշիք, տիրացուներ‖տիրացուք, լեզուք‖լեզվներ (օրինակները բերված են Աբովյանից և Պողոսյանից). Շաուախի բարբառում ի, ա հանգող հիմքերը հանդիպում են նաև ատար մասնիկի հետ զուգորդված հա՛կ՛ի>հա՛կ՛ըստար (ՄՄ, ՇԲ, 87). Լոռվա՛ խոսվածքում ի

հանգող հիմքերը կարող են ընդունել նաև ի՛էր, ևի, էվ. օր. ք՛էնիք ք՛էնէնի (ՄԱ, լա, 92). Համշենի բրբ. ագռնի‖ագռաք «ակռաներ», փէսընի‖փէսաք, սագօնընի‖սագօնաք (ՀԱ, ԼՔՀլ, III, 728)։ Սվդիայի բարբառում նշված հիմքերի հետ ի֊ին զուգահեռ հանդիպում են նաև էօնի, նա, նաի, նիր մասնիկներ (տե՛ս ՀԱ, ԼՔՀլ, III, 768)։

Սակայն գրեթե բոլոր բարբառներում ցի վերջնահանգն ունեցող հիմքերը զուգորդվում են ի֊ի (կամ ի՛֊ի) հետ. շրնաձցիք՛ հրթըրքէցիք՛ (Ղրբ֊), քաղրըցիք (Կեսարիա), գէղրցիք (Աբարատյան), տրնէցիք (Այունիք), գէղաձցիք (Սասուն), քախկըցիք (Լոռի, Մալաթիա), շամախէցիք (Շամախի), դրնէցիք (Դերսիմ), ջաղրցիք (Կարին), շաուրխցիք՛ (Շատախ), կրոզէնցիք (Կոդեն)։ Ըստ Հ. Աճառյանի՝ ի֊ի հետ հիմքային զուգորդումները հատկապես արմատացած են Ղարաբազի, Ագուլիսի, Նոր Ջուղայի բարբառներում, նաև Ղզլարում, Լոռիում (ՀԱ, ԼՔՀլ, III, 535)։

Կան բարբառներ, որոնց մեջ նկատելի է նէր‖նիր հոգնակերտի էքսպանսիան նշված հիմքերում. այսպես՝ առունէր, կառունէր, կինինէր (Ուրմիա), գինինէր (Աբարատյան), լէզվըներ, առվրներ, կատվրներ (Շատախ), կատունիր, ակռանիր (Մարաղա). իսկ Կոդենի բարբառում ի հանգող հիմքերը գերազանցապես զուգորդվում են ան֊ի հոգնակերտի հետ. հա՛գ֊ի «ագի»>՛անկ֊իյանի, սամ֊ի>սամիյանի, գ՛ինի>գ՛ինիյանի (ՌԲ, ԿՔ, 87)։

Ձայնավորահանգ հիմքերը (մանավանդ ի հանգողները) բարբառների մի մասում սովորաբար զուգորդվում են ստան հոգնակերտի հետ։ Այսպիսի զուգորդումների հանդիպում ենք Կարնո, Առտիալի, նաև՝ Արդվինի, Դերսիմի ու այլ բարբառներում. խնամ֊ի>խնամէստան (Արդվին), օսգի>օսգիստան. «Ջաջիմին մէմր օսգիստանը գաբէց» (Դերսիմ, հմմտ. ՌԲ, ԴԲՔ, ն, 47). հայլի>հայլըստ՛ան, ագի՛>ագստ՛ան (Առտիալ). նույնիսկ այնպիսի բառեր, որ «նախապես վերջավորվել են ի, իսկ այժմ բարբառում տարբեր վերջավորություն են ստացել, գործյալ ստանում են –ստան մասնիկը» (ՀԱ, ՔՀռՔ, 134). թ՛ալինք (<թանալի)>թ՛ալըստ՛ան, հարսնիք>հարսնըստ՛ան։ Հմմտ. Կարնո բարբառում՝ հոգի>հոգեստան, փէսա>փէսէստան։

Վանի բարբառում ձայնավորահանգ հիմքերը ընդունում են հյոռեր մասնիկը. կ՛ինհյոռեր «գինիներ», խոկիհյոռեր «հոգիներ»։

Երկվանկ–բազմավանկ **բաղադրյալ՝** միավանկ վերջնաբաղադրիչով հիմքեր։ *Մենք արդեն նշել ենք, թե ինչ իմաստով ենք գործածում «միավանկ վերջնաբաղադրիչ» արտահայտությունը։ Ընդ որում զանազանում ենք առաջին կարգի միավանկ վերջնաբաղա֊*

դրիչ, երբ այն պահպանում է գոյականի լեքսիկական նշանակությունը և այդ իմաստով ելահիմք է ամբողջ բաղադրության իմաստի համար, երկրորդ կարգի վերջնաբաղադրիչ, որը կա՛մ անկախ բառային արժեքով գործածություն չունի, կա՛մ էլ բարդության այլ տարրերի հետ միասին մի նոր ընդհանուր իմաստ է տալիս ամբողջ բաղադրություններ։ Այս հատկանիշով բարբառներում ունենք երկվանկ-բազմավանկ հիմքերի երկու ենթատիպ. առաջին կարգի միավանկ վերջնաբաղադրիչով հիմքեր, որոնք դերազանցապես դուգորդվում են էր հոգնակերտի հետ (միավանկների սկզբունք) և երկրորդ կարգի միավանկ վերջնաբաղադրիչով հիմքեր, որոնք հեռանում են ընդհանրապես երկվանկ-բազմավանկների հոգնակիակազմության կաղապարին։

Քննելով այս երևույթը Մեղրու բարբառում՝ պրոֆ. է. Բ. Աղայանը գրում է. «Եթե բարդության առաջին եզրը երկրորդի նկատմամբ կատարում է հատկացուցչի կամ որոշչի դեր (հետևաբար՝ երկրորդ եզրն էլ հանդես է գալիս իբրև գոյական՝ հատկացյալի կամ որոշյալի դերում), ապա՝ ամբողջ բարդություններ հոգնակիի համար ստանում է -ար՝-եր մասնիկը (քան ձայնավորների նեղդաշնակության). ինչպես՝ սևահող>սըվահուղ (սև հող), հդն. սըվհուղար..., սամափայտ>սըմնափէտ (=սամիի փայտ), հդն. սըմնրփէտար, ճրագալոյց>ճըրըկալոյս (=ճրագի լույս), հդն. ճրըրկըլոյսեր...։ Իսկ երբ բարդության առաջին եզրը երկրորդի նկատմամբ կատարում է խնդրի դեր (հետևաբար՝ երկրորդ եզրն էլ, արտահայտված բայարմատով, կատարում է որևէ դերբայի դեր[1], ապա՝ բարդ բառն ստանում է -նէ մասնիկը, ինչպես՝ ...հացակեր>հըցակէր (=հաց ուտող), հդն. հըցակէրնէ» (էԱ, ՄԲ, 117—119)։ Սակայն ոչ բոլոր բարբառներն են պարզության հասցրել հիմքային այս ենթատիպերը. տատանվող կազմավորումների համար ենք հանդիպում (համմտ. ՍԲԹ, ՄԲ, 75—9. ՍԱ, ԿԲ, 65. ԱՊ, ՀՐ, 86. ՀԱ, ԼՔՀ, III, 727)։ Համմտ. նաև՝ հարանշօրիր (ՎՊ, ՍԲ, 86), ջոջքարիր (ն. տ. 88), օսկեշորեր (ՀԺՀ, IX, 69—Ալաշկերտ), գիւհավքեր (ն. տ. 197), բայց և՝ պարտքընտերեր (ն. տ. 162) ու պարտքընտերներ (ն. տ.), մարդակերեր (ն. տ. 334—Մանազկերտ), փոխ. մարդակերներ։

Նոր Նախիջևանի, Պոլսի, Մալաթիայի, Կարնո և այլ որոշ բարբառներում այս տարբերակումը շատ թույլ է արտահայտված. առաջին կարգի միավանկ վերջնաբաղադրիչով հիմքերը սովորաբար զուգորդվում են նէր հոգնակերտի հետ (տե՛ս ՀԱ, ԼՔՀ, III 721. ՀՄ, ԿԲ, 44—46. ԹԴ, ՄԲ, 73—74). Վանի բարբառում՝ հյուսեր. օր. ժամտընհյուսեր։

Հիմքային այս ենթատիպերի համեմատաբար կանոնավոր զուգորդումների հանդիպում ենք Արարատյան, Ղարաբաղի, Մեղրու, Նոր Ջուղայի և այլ մի քանի բարբառներում (թեև սրանց մեջ էլ եկատելի են մասնակի տատանումներ). օր. Արարատյանում՝ վերնատներում (հմմ, ԵԼԺ, III, 38), հարսնատերեր (ՊՊ, ԵԺ, I, 39, 73), էրեխատերեր (Ն. տ. 60), կոնատակեր (Ն. տ. 42), մեռելատերեր (Ն. տ. 64), էրեխամերեր (Ն. տ. 118), կարճակոզեր (Ն. տ. 144), ննջեցեալտերեր (183), ոտնատոզեր (274), թայ ու թուշեր (118), փողատերեր (Ն. տ. 272), բայց և՝ կոնատակներին (հմմ, ԵԼԺ, III, 79), փողատերներիցը (ՊՊ, ԵԺ, I, 42). Ղարաբաղի բարբառում՝ րխպը՝ըռճաիր «աղբյուրի ջուր»>րխպը՝րը՝ձը՝րէր (հմմտ. հաիր>ձը՝րէր), տրնատար «տան տեր»>տրնըտարէր (հմմտ. տար>տարէր), պըտածակ>պըտըծակէր (հմմտ. ծակ>ծակէր), կ՛բատաքար>կ՛բատըքարէր (հմմտ. քար>քարէր), քուլատակ>քուլըտակէր, ծրոատակ>ծրոըտակէր (հմմտ. տակ>տակէր), կուխկաճաղ>կուխկրճաղէր (հմմտ. ճաղ>ճաղէր), վրննատեղ>վրննըտեղէր (հմմտ. տեղ>տեղէր), ձր՝բավեր>ճը՝ըզվնգէր (հմմտ. վեր>վերէր), այսպես և՝ կըլխըտակէր, կուռնըտակէր, կուրկրտեղէր, մրդրըճաճ նչէր, կըլխըցավէր, մուշրհավէր, բայց և՝ վ՚ործը՝բէգէր‖վը՝ործը՝բը՝դնէ, կրոբնիլէր‖կրոբնը՝լնէ։

Եթե առաջին կարգի վերջնաբաղադրիչով բաղադրություններըոչ թե բարդություն են, այլ նախածանցավոր ձևեր, ապա նման պարագաներում հիմքային զուգորդումները հետևում են նույն կաղապարին, որին հետևում են երկրորդ կարգի վերջնաբաղադրիչ ունեցողները (բազմավանկայնության սկզբունք). այսպես, օրինակ, անդար (<անտեր)>ընդրնէ (Ղրբ.), անսիրդնէր, չոէնդէր (Կարնո, տե՛ս ՀՄ, ԿԲ, 44—46)։

Երկվանկ-բազմավանկ՝ երկրորդ կարգի միավանկ վերջնաբաղադրիչով հիմքերը հետևում են մեկից ավելի վանկանի հիմքերի զուգորդման կաղապարին. այսինքն, եթե տվյալ բարբառում մեկից ավելի վանկանի հիմքերը ընդունում են ԷԸ, ԵՔ կամ ԵՒ են, ապա երկրորդ կարգի վերջնաբաղադրիչ ունեցողներն էլ ընդունում են նույն վերջավորությունները. այսպես՝ տրնաշէն>տրնըշինի (Սյունիք), տրնըշը՝նէ‖տրնըշինէր (Ղարաբաղ), քնիկալներ (Արարատյան, ըստ ՊՊ, ԵԺ, I, 68), տնաշեններ (Ն. տ. 72), շուրջտոնէր (93), կարմրախեռներ (80), քեզպեսներ (197), զդակածալներ (198), փողապաշտոներ (276), ոտնամուտներզ (277), նրա պեսներզ (280), տնաքանդներ (հմմ, ԵԼԺ, III, 42), անդամալույծներ (184), մեծամեծներ (178)։ Ըստ Սունդուկյանի գործերի Թբիլիսիի բարբառում ևս պէս բազբ բարդության կամ հարադրության վերջնա-

բաղադրիչ լինելիս նույնպես հետևում է երկրորդ կարգի վերջնաբաղադրիչ ունեցողների օրինքին. օր. «Աբրի ու սրապետներուն վարչկ ապա» (ԳՍ, Պ, 101), «Հազար ինձ պետերուն թալնիլ իս (Ն. տ. 103), «Քանի մեզպետները կան» (111), «քի պետերն են էրվում» (149), «Սրա պետերն են լաց լում» (149)։ Համմտ. նաև՝ (գ)անպէտները (ըստ ՀԱ, ԱռՔ, Ն, 211)։

Ձևույթային (ձևաբանական)–իմաստաբանական հիմքեր։ *Կան բառեր, որոնք խմբավորվում են որոշակի իմաստային հատկանիշով և հոգնակիակազմության մեջ իրրև հիմքեր ուրույն գուգորդումներ են ունենում հոգնակերտների հետ։ Այս տեսակետից բարբառներում ամենից առաջ խմբավորվում են մարմնի զույգ անդամներ նշանակող բառերը (աչք, ոտք, ծունգ, ձեռք, ճանկ, թուշ, ունք և այլն). սրանց հոգնակին մեծ մասամբ կազմվում է ուիՆվի մասնիկով կամ նրա ձևա-հնչյունական տարբեր զարգացումներով՝* **վի(f), վընէր, վրնի և այլն։** *Այսպիսի կազմավորումների հանդիպում ենք Պոլսի (աչվընէր, ձառվընէր, մատվընէր, ձընգվընէր, օթվընէր «ոտքեր»), Կարնո բարբառի որոշ խոսվածքներում (ձօդվի, ձ'էռվի, ունքվի, ծունդվի, մադվի), Դերսիմի խոսվածքներում (ընքվի, ձընգվընի, աչվի), Սասունի (ընքվընի, աչվընի, օդվընի «ոտքեր»), Մալաթիայի (աչվընէր, ունքվընէր, օդվընէր), ԵՒոտիայի (օդվըներ, աչվրներ, աչվի), Համշենի (աչվիք, ձեռվիք, թշվի, աքվի «ոտքեր») բարբառներում*[22]։

Փաստերի ուշադիր դիտարկումները բերում են այն համոզման, որ բարբառներում այս հիմքատիպը մեռնող կատեգորիա է, երբևէնի թվակարգի (նրկակիի) վերակազմավորված տեսակ։ Այդ է պատճառը, որ կազմավորման նշված եղանակը երբեմն նրկատում ենք այնպիսի բառաձևերում, որոնք իմաստաբանական ընդհանրություններ չունեն դիտավածների հետ. Համմտ. գազվընի, պիյվընի, քէթվընի (ՀԳ, ՀՔ, 69), դունվընէր, շունվընէր (ԹԴ, ՄՐ, 75), իշվընի (ՈՒ, ԴՔՔ, 18). բացի այդ՝ նույն հիմքերը կարող են գուգորդվել նաև այլ հոդնակերտների հետ, որոնք երկակիի հետ որևէ կապ չեն ունեցել. այդպիսի գուգահեռ կազմավորումներ նրկատելի են, օրինակ, Համշենի բարբառում. աչքէր, թշէր, ձնգէր, ձեռքէր, ջօնգէր «ճանկեր» (ՀԱ, ԼՔՀ, III, 728)։

Ձևաբանական-իմաստաբանական յուրահատկություններ ունեն նաև այն հոգնակիակազմություններ, որոնք վերաբերում են **ընտանիք, տոհմ, գերդաստան, ազգակցությամբ, արեհակցական**

---

[22] *Այս մասին տե՛ս ՀԱ, ԼՔՀ, 442, 728. ՀՄ, ԿՔ, 44—46. ՈՒ, ԴՔՔ, 18, 36. ՎՊ, ՍՔ, 32. ՀԱ, ՔԱռՔ, 132։*

հատկանիշով կապված և կամ գաղափարակից անձանց անուններին (հատուկ, հասարակ). ինչպես՝ վէնտունք, վէրդունք, պապունք, մերունք (Դրբ.), Շնդուր, Հումուր (Հադրութ), կարաբախցունք (Արդվին)։ Նման կազմավորումներում սովորաբար գործածական են աճ(ած), ունճ(ուճ), ոնճ և այլ մի քանի մասնիկներ, որոնք նշված խմբավորման մեջ մտնող բառերի համար գրեթե ընդհանուր են հայերենում։ Դիտարկվող իմաստային խմբավորման կամ պարզապես անձ ցույց տվող բառերում հանդիպում ենք նաև դիւ, դայ մասնիկներով սակավաթիվ կազմավորումների. ախպըրդիւ, տէրըրդիւ (ՍԲԹ, ՄԲ, 75—79), գնգդիւ, բաբդիւ «պապեր», հողպըրդիւ «հորեղբայրներ», հորքրդիւ, աղպըրդիւ (ՎՊ, ՍԲ, 32), հալվայդէք «ալևորներ» (Կիլիկիա)։

Որոշ բարբառներում աճչունչ առարկա նշանակող այն բառերը, որոնք ունեն «ի» վերջնահանգ, գուգորդվում են սուտ հոգնակերտի հետ։ Առանձին բացառություններով հանդերձ հոգնակիա-կազմության այս (հնչյունաբանական-իմաստաբանական) երևութը դիտվում է, օրինակ, Կարնո, Առտիալի և այլ որոշ բարբառներում (հմմտ. ՀԱ, ԼՔՀԼ, III, 715)։

Իմաստաբանական այն հատկանիշը, որ ընկած է նման կազմավորումների հիմքում, կարելի է որակել իբրև դասային իմաստավորում։ Այդպիսի իմաստավորումն է դեր խաղում նաև այն դեպքերում, երբ, ասենք, հոգնակիակազմության կառուցածում իրենց ձևաբանական յուրահատկություններով առանձնանում են ծառանուն նշանակող բառերը (հմմտ. ԱՊ, ՀԲ, 85), գույներ նշանակող որոշ բառեր (հմմտ. ՀԱ, ԼՔՀԼ, III, 731)։

Մաքուր ձևույթային հիմքեր քիչ են հանդիպում բարբառներում։ Հիմքի և հոգնակերտի ուրույն գուգորդումներ նկատելի են կին, մարդ և այլ մի քանի բառերի հոգնակիակազմություններում, ինչպես, օրինակ, մարթ>մարթիք՛, սեռ.-տր. մարթուց (Դրբ.)։

Հոգնակիակազմ հիմքերը և նրանց գուգորդումները թեք հոլովաձևերում։ Այս խնդիրը պարզաբանելու համար նախ պետք է ունենալ նպատակահարմար հարցադրում. ի՞նչ կարգի հոլովակազմություն ենք դիտարկում՝ համակարգային, թե ոչ-համակարգային. հիմքը ինչպիսի հոգնակերտի հետ է գուգորդվում՝ մենիմաստ (միայն հոգնակիի նշանակություն ունեցող), թե կրկնիմաստ (նաև հոլովական նշանակություն ունեցող), այսինքն՝ թեք ձևերում հոլովակազմությունը և հոգնակիակազմությունը մեկ բառաձևում համընկնում են, թե բաշխված են։ Բարբառները ձգտում են կամ հասել են հոգնակիակազմ հիմքերի ընդհանրության՝ թեք հոլովաձևերում. սակայն այդ երևում է դերազանցապես այն հիմքերում,

որոնք գուգորդվում են էր, ներ կամ տվյալ բարբառում գործածությամբ գերիշխող հոգնակերտի հետ։ Իսկ գերիշխող հոգնակերտները, չնչին բացառություններով, էր. ներ մասնիկներն են կամ տարբեր բարբառներում նրանց հնչյունական տարատիպերը (իր, նիր, ար‖ար, իյ են)։ *Այս նշանակում է, թե ուղիղ (ուղղական) ձեվում* նիմք+էր, նիմք+ներ *կազապարների դիմաց թևք հոլովաձեվերում ունենք* նիմք+էր (+*հոլովակերտ*), նիմք+ներ (+*հոլովակերտ*) *կաղապարները՝ հոգնակիակազմության և հոլովակազմության հիմքերի ու վերջավորությունների կառուցվածքային տրոհումով, բաշխումով։ Այսպիսի կառուցաձև առկա է՝ Արարատյան, Պոլսի, Թբիլիսիի, Կարնո, Ղարադաղի, Կարճևանի, Արգվինի, Ալաշկերտի, Ն. Ջուղայի, Ագուլիսի, Վանի, Մշո, Շատախի, Շամախու, Սվեդիայի, Բևլանի, Կոզլենի, Կեսարիայի, Մարաղայի, Արեշ-Հավարիքի, Համշենի, Սյունյաց, Սասունի, Ն. Նախիջևանի, Առտիալի, Հաճընի, Դերսիմի, Լոռու, Մալաթիայի բարբառներում, անհշան բացառություններով նաև Ղարաբաղի և այլ բարբառներում։*

Նշված երևույթը դիտարկենք պոլսահայ, Արարատյան, Ղարաբաղի բարբառներից բերված օրինակներով.

Պոլսի բրբ.

Ուղղ.-հյց.	fար-էր(+զրո)	աճապան-ներ(+զրո)
Սեռ.-տր.	fար-էր(+ի)	աճապան-նէր(+ու)
Բաց.	fար-էր(+է)	աճապան-նէր(+է)
Գործ.	fար-էր(+օվ)	աճապան-նէր(+օվ)

Արարատյան բրբ.

Ուղղ.-հյց.	fար-էր(+զրո)	աճապան-ներ(+զրո)
Սեռ.-տր.	fար-էր(+ի)	աճապան-նէր(+ի)
Բաց.	fար-էր(+ից)	աճապան-նէր(+ից)
Գործ.	fար-էր(+օվ)	աճապան-նէր(+օվ)
Ներգ.	fար-էր(+ում)	աճապան-նէր(+ում)

Ղարաբաղի բրբ.

Ուղղ.-հյց.	fար-էր(+զրո)	ծրմրկ-նէ(+զրո) «անապաններ»
Սեռ.-տր.	fր-էր(+էն‖ու)	ծրմրկ-նէր(+էն‖ու)
Բաց.	fր-էր(+ա-ն)	ծրմրկ-նէր(+ա-ն)
Գործ.	fր-էր(+ավ-ր)	ծրմրկ-նէր(+ավ-ր)
Ներգ.	fր-էր(+ըմ-ր)	ծրմրկ-նէր(+ըմ-ր)

Ինչպես տեսնում ենք, միայն Ղարաբաղի բարբառում ունենք միավանկների ուղղականի և թեք ձևերի կաղապարների որոշ տարբերություն։ Դա բացատրվում է թեք ձևերի հիմքի շեշտազրկությամբ, ավելի ճշգրիտ՝ թեք ձևերի հոգնակիակազմ հիմքը ուղիղ ձևի հոգնակիակազմ հիմքի հնչյունափոխ տարբերակն է։ Իսկ բազմավանկների հոգնակի հարացույցում ուղիղ և թեք ձևերի տարբերությունը արտահայտվում է առաջինում ձէ, երկրորդում ձէր մասնիկների գործածությամբ։ Այստեղ արդեն հոգնակիակազմ հիմքը բացարձակապես ընդհանուր է ուղիղ և թեք ձևերում։ Միաժամանակ պետք է նկատել, որ ուղիղ ձևերի ձէ-ն և թեք ձևերի ձէր-ը միևնույն հոգնակերտ ձևույթի դիրքային տարբերակներն են (անկատած կառուցվածքային տեսանկյունից, բայց ոչ ծագումնաբանորեն)։ Համանման երևույթ նկատում ենք, օրինակ, Մեղրու և Կարճևանի բարբառներում (տե՛ս ԷԱ, ՄՔ, 166—167, ՀԴՄ, ԿՔ, 80, 81)։ Թբիլիսիի բարբառում ուղիղ ձևերի հոգնակիակազմ հիմքը զուգորդվում է իր (միավանկները) և ներ (բազմավանկները) հոգնակերտների հետ, թեք ձևերինը՝ դրանց դիրքային տարբերակներ էր-ի, ձէր-ի հետ. այսպես, միավանկներից՝ վուտներա (ԳՍ, Պ, 39), մինձիրն (Ն. տ. 53), տներ (Ն. տ. 69), պատիր (103), սարիր (ՍՆ, ԽԺ, 49), սեռ.-տր. օրերու (Ն. տ. 5), սարերուն (10), վուտներուն (ԳՍ, Պ, 66), գործ. վուտներով (ԳՍ, Ըե, 56), ներգ. բաղերումը (Ն. տ. 73). բազմավանկներից՝ ներգ. դավթըրներումս (ԳՍ, Պ, 59). սրա ուղղականում՝ դավթըրներդ (ԳՍ, Ըե, 172). այսպես և՝ մէկէլներն և մէկէլներուն, ծախօղներըը և ծախօղներուն են։

Բարբառների մեծ մասում հիմքերը և հոգնակերտները ուղիղ և թեք ձևերում ընդհանուր են. համմտ. օր. հիմք + ք՛տեր կաղապարը վանի բարբառում։ Ըստ. Ա. Ջաուխյանի՝ ուղղականի կաղապարը թեք ձևերում պահպանվում է նաև հիմք + ք զուգորդման դեպքում՝ պարսկահայոց և Աստրախանի բարբառում.

Ուղղ.-հյց.	կինի-ք(+ըրո)	կատու-ք(+ըրո)
Սեռ.-տր.	կինի-ք(+ի-ն)	կատու-ք(+ի-ն)
Բաց.	կինի-ք(+ից)	կատու-ք(+ից)
Գործ.	կինի-ք(+օվ)	կատու-ք(+օվ)[23]

Համարյա նույն կառուցատիպն ունի հիմք + ստան զուգորդումը, միայն թե թեք ձևերում կարող է տեղի ունենալ ստան>ստե՛, կամ նույնիսկ սե՛ հնչյունական անցում. ասենք՝ ուղղ. հիմք + ստան, սեռ.-տր. հիմք + ստե՛ ‖ հիմք + սե՛ (համմտ. ՍԱ, ԱԲՋԱ, 231). Սակ-

[23] Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մ. 2, էջ 333։

դիալի բարբառում հիմմ+ըպուն կաղապարը ընդհանրական է ուղիղ և թեք ձևերում։

Ընդհանրապես նկատելի է, որ բարբառների համակարգային հոգնակիակազմություններում գերիշխում է հիմմ+հոգնակերտ++զրո կաղապարը ուղիղ, ուղղական հոլովում, հիմմ+հոգնակերտ+հոլովակերտ կաղապարը՝ թեք հոլովաձևերում։ Հոգառության առկայության դեպքում կունենանք։

ուղղ.՝ հիմք+հոգնակերտ (+զրո+հոդ)՝ fար+էր(+ը).

թեք հոլ.՝ հիմք+հոգնակերտ (+հոլովակերտ+հոդ)՝ fար+էր (+ի+ն) են։

Հնչյունաբանորեն վերակազմավորվող և չվերակազմավորվող հիմմեր։ *Նախ շեշտափոխ և շեշտակիր հիմքերի մասին։ Բարբառներում շեշտադրությունը համադրության չէ. կան բարբառներ, որոնք ունեն վերջընթեր շեշտ, կան այնպիսիները, որոնց վերջնավանկն է շեշտվում և այլն։ Այն բարբառները, որոնք վերջնավանկային շեշտ ունեն, կարող են շեշտել հոգնակիակազմ հիմքը, եթե ավելացող հոգնակերտը բաղաձայնական տարր է, կարող են չշեշտել, եթե ավելացող հոգնակերտը ունի ձայնավորում*[24]։

Վերջընթեր շեշտադրություն ունեցող բարբառները տարբեր հատկություններ են դրսևորում։ Քանի որ Ղարաբաղի, Հադրութի, Սյունյաց բարբառներում շեշտը վերջընթեր վանկում է, ապա միավանկ հիմքերը (էլ-ի հետ զուգորդվող) ուղղական հոլովաձևում շեշտված են. պա՛լ-էր (նվ. պա՛լ «խմորագունդ, որից մեկ հաց է ստացվում»), ծո՛րէր (եղ. ծո՛ր<ձոր). նաև թո՛շէր, ձի՛տէր, պա՛կէր, քա՛րէր, սա՛րէր (Ղրբ., Համմտ. Կաքավաբերդի բրբ. ծա՛ո>ծա՛ռ-ար)։ Սակայն թեք հոլովաձևերում վերջավորությունների ավելացումը փոխում է վանկաքանակությունը. հոգնակերտի ձայնավորը արտասանական տեսանկյունով դառնում է վերջընթեր վանկի տարր, իր վրա է վերցնում շեշտը։ Հետևանքը այն է լինում, որ հոգնակիկազմ հիմքը շեշտազրկվում է, և բոլոր թեք հոլովաձևերում ունենում ենք անշեշտ, շեշտազրկված հիմք. ինչպես՝ ուղղ. պա՛լէր, սեռ.-տր. պալէ՛րէն, բաց. ա՛լէ՛րան. նաև՝ ուղղ. քա՛րէր,

---

[24] «Հոգնակի թվում,—գրում է Մ. Աբեղյանը,—երբ որ ավելանում է ներ, ներ (նէ) և նի, նայելով բարբառներին, շեշտը միշտ վերջին վանկի վրա է լինում. թագավոր-թագավորնե՛ր (թգվորնէ՛), թագավորնի՛. միայն ներ մասնիկն ստացած ժամանակ երբեմն կանոնավոր կերպով վերջընթեր վանկի վրա է դրվում շեշտը..., որ, սակայն, շատ գործածական չէ և խորթ ու անսովոր շեշտադրություն է։ Սույն ձևով շեշտվում են և ընե՛ս, ընե՛ղ, ընե՛ր գերանվանական վերլավորություններըմ՝ ա՛չքերս—իմ աչքերը, իսկ աչքերնե՛րս—մեր աչքերը, ո՛տներս և ոտրնե՛րս (մեր ոտքերը), գլխներս։ Տե՛ս Մ. Աբեղյան, Ժողովրդական լեզվի շեշտադրությունը (ՀՆոր Դար», 1890, № 144)։

սեռ.-տր. քըրէ՛րէն(ըր- հիմքը մնում է նույնը հոգնակի մյուս հոլովաձևերում), սըրէ՛րէն (ղրբ. քրբ. Ջրաբերդի խոսվածք)։ Այդ է պատճառը, որ միավանկների հոգն. ուղղ. ձևի հիմքը անհնչյունափոխ է, թեք ձևերինը՝ հնչյունափոխ (բացի ընդհանրապես անհնչյունափոխ հիմքերից)։ Շեշտի վերջընթեր դիրքով է պայմանավորված երկվանկ հոգնակերտից առաջ ընկած հիմքերի անշեշտությունը. համմա, մա՛րթ>մարթի՛, բայց՝ կա՛տու>կըտվէ՛նի։

Հոգնակի ուղղականում (փաստերն ըստ նույն խոսվածքի) հիմքը շեշտակիր է նաև այն դեպքերում, երբ երկվանկ հիմքը վանկայնորեն վերակազմավորվում և վերածվում է միավանկի. օր. մօ՛կնը (<մուկն)>մօ՛կն-էր, ծու՛կնը (<ձուկն)> ծու՛կն-էր։ Այն բազմավանկ հիմքերը, որոնք կարող են ընդունել նաև էր հոգնակերտ, նման դեպքերում ուղղականում շեշտակիր են. կըրկա՛տան (<կարկատան)>կըրկըտա՛նէր, քըչէ՛ղակ (<կաշաղակ)>քըչըղա՛կէր։ Այս դեպքում, եզակիի համեմատությամբ, հոգնակիակազմ հիմքում տեղի է ունենում միայն շեշտի տեղափոխություն (դեպի հոգնակերտը) մեկ վանկի սահմաններում։

Հոգնակի ուղղականում մի քանի միավանկ բառերի հոգնակիակազմ հիմքերը անշեշտ են. շեշտվում է էր հոգնակերտը. ծեն (<ծիծ)>ծըծէ՛ր, ծետ (<ծիտ)>ծըտէ՛ր, կ՛իրք(<գիրք)>կ՛ը՛րքէ՛ր, սերտ (<սիրտ)>սըրտէ՛ր, տեզ (<տիզ)>տըզէ՛ր, քեթ (<քիթ)>քըթէ՛ր, ճոր (<ջուր)>ճը՛րէ՛ր, պոռբ (<բուրդ)>պը՛րթէ՛ր, շօն(<շուն)>շընէ՛ր, տօն (<տուն)>տընէ՛ր։ Այս հիմքերը թեք ձևերում ևս շեշտազուրկ, հնչյունափոխ են։

Երկվանկ-բազմավանկ հիմքերը, որոնք ուղղականում զուգորդվում են նէ մասնիկի հետ, իսկ թեք կապմավորումներում նէր-ի հետ, միշտ անշեշտ, շեշտազրկված են, որովհետև և՛ նէ-ն, և՛ նէր-ը միշտ իրենք են շեշտված[25]։ Եթե այդ այդպես է, ապա բնականաբար նէ հոգնակերտից առաջ, հոգնակիակազմ հիմքում կարող են լինել միայն ու, ո, ը, ը՝ ձայնավորներ։ Բացի այդ՝ նէ հոգնակերտի դեպքում հիմքն ընդհանուր է ուղիղ և թեք հոլովաձևերում։ Տարբերությունը, ինչպես արդեն նշել ենք, միայն նրանում է, որ թեք հոլովաձևերում հիմքը զուգորդվում է նէր-ի հետ։ Մինչդեռ էր հոգնակերտից առաջ ուղիղ և թեք ձևերի հոգնակիակազմ հիմքը հանդես է գալիս իր հնչյունական տարբերակներով՝ ուղիղ ձևերում անհնչյունափոխ, թեք ձևերում հնչյունափոխ

[25] *Ըստ ԿԴ, ԼՂԲՔ, 84՝ նէ հոգնակերտով բառերը «սովորաբար շեշտը կրում են վերջին վանկի վրա, որովհետև նախաշեշտ վանկերի ձայնավորները սղվում են»։ Ուշագրավում է, որ սղումն է պայմանավորում շեշտադիրքը։ Մենք հակառակն ենք կարծում։*

(եթե, իհարկե, հիմքի ձայնավորը ու, ու̈, ը, ը՝ չէ), վերոհիշյալ բնութագրությունները կարելի է ցուցադրել Ջրաբերդի խոսվածքից բերված օրինակներով.

Ուղղ.-հյց.	*սա՛ր-էր(ը)*	*հըղըց-նէ՛(ն)*
Սեռ.-տր.	*սըր-է՛ր-է(ն)*	*ճըղըց-նէ՛ր-է(ն)*
Բաց.	*սըր-է՛ր-ա(ն)*	*ճըղըց-նէ՛ր-ա(ն)*
Գործ.	*սըր-է՛ր-ավ(ը)*	*ճըղըց-նէ՛ր-ավ(ը)*
Ներգ.	*սըր-է՛ր-ըմ(ը)*	*ճըղըց-նէ՛ր-ըմ(ը)*

Ուղղ.-հյց.	*կըճըղա՛կ-էր(ը)*	«մարմնի մաս»
Սեռ.-տր.	*կրճըղըկ-է՛ր-է(ն)*	
Բաց.	*կրճըղըկ-է՛ր-ա(ն)*	
Գործ.	*կրճըղըկ-է՛ր-ավ(ը)*	
Ներգ.	*կրճըղըկ-է՛ր-ըմ(ը)*	

Կարճանի բարբառում նա հոգնակերտից առաջ հիմքը անշեշտ է, այդպես են և Ագուլիսի բարբառում ա՛տիֆ՛‖ա՛տիֆ՛, նա՛տիֆ՛‖նա՛տիֆ՛, անիֆ՛‖անիֆ՛. Եվ՛ր հոգնակերտների հիմքերը, քանի որ դրանք, ինչպես Ղարաբաղի բաղբառի նի-ն, միշտ շեշտակիր են։

Վանկայնորեն վերակազմավորված և չվերակազմավորված հիմքեր: *Համշենի բարբառում «մեկուկես-վերջնագաղտնավանկ» (երկվանկ-վերջնագաղտնավանկ) բառերը, «որոնք բազաձայնների խճողման պատճառով ստացել են վերջաձայն ը և վերածվել են երկվանկի, հոգնակիում դրկվում են այս հավելվածական ը-ից և նորից միավանկի վերածվելով՝ ստանում են -էր (և ոչ՝ -նի) մասնիկը» (ՀԱ, ԼՔՀԼ, 725). սօնդը (<սանտր)>սօնդռ-էր, մէղրը (<մեղրը)>մէղր-էր, ձօնդրը (<ծանր)>ձօնդր-էր, նօսրը (<նօսր)>նօսր-էր։*

Այս կարգի բառերը Ագուլիսի բարբառում երբ պահպանում են վանկաբռնակությունը, կարող են հոգնակիակազմության ժամանակ զուգորդվել ներ-ի հետ։ Իսկ երբ երկվանկից անցում է կատարվում միավանկին, զուգորդվում են ար‖ար տարբերակների հետ, որ և բնորոշ է միավանկ հիմքերին առհասարակ. Համմ. աստղ>աստղներ, բայց՝ աստղար։ Նույն բարբառում ը̈ր հանգրն ունեցող երկվանկ բառերը հոգնակիի հիմքում կորցնում են այդ հանգի ը տարրը և վերածվում են միավանկի ու զուգորդվում ար հոգնակերտի հետ. հօկնը (<հակ)>հակն-ար։ Համմ. Վրբ. մօկնր (<մուկն)>մօկն-էր, ծո̈կնը (<ձուկն)>ծո̈կն-էր։

Ուշադրության արժանի է նաև հետևյալը. Ագուլիսի բարբառում երկբաղաձայն վերջնահանգ ունեցող եզակի միավանկ բառը

բաղաձայնակիզը հոգնակերտից առաջ ներմուծում է ը ձայնավորական տարրը (արտասանության բաղաձայնական անցման պահանջներով), որի հետևանքով միավանկ եզակին հոգնակիա-կազմ հիմքում դառնում է երկվանկ. վ՛օրս (<վարս)>վըրսը-նո-տիք՛ (ըստ Հ. Աճառյանի)։

Սովորաբար ո-ով սկսվող միավանկ բառերը նախաձայն ը-ի կամ այլ ձայնավորական տարրի հավելումով վերածվում են երկ-վանկի (երկվանկ հիմքի) և կուպորդվում են ըստ մեկից ավելի վանկանի հիմքերի հոգնակիակազմության սկզբունքի. հմմտ. ըռես-ներ (ՀԺՀ, IX, 183-Ալաշկերտ), ըռուսնէ (Ղրբ.), ըռըսնէր\|ըռուս-նէր (Արարատյան)։

Հնչյունափոխ հիմքեր։ *Հնչյունափոխ հիմքատարբերակները չափազանց տարածված են բարբառներում. եզակի ձևի համեմատ հոգնակիի հիմքը ներկայանում է տարբեր կարգի հնչյունափո-խություններով։ Բարբառներին հատկապես բնորոշ են հետևյալ-ները.*

1) Ձայնավորների հերթագայություն.

2) Վերջնահանգի բացվանկային ձայնավորի փոփոխություն.

3) Երբեմնի արմատական ձայնավորի վերականգնում.

4) Բաղաձայնի կամ բաղաձայնական կապակցության փո-փոխություն.

5) Բաղաձայնական վերջնահանգի անկում։

6) Հիմքավերջում՝ հիմքի և ավելացող հոգնակերտի միջև անցումային հնչյունի ներմուծում։

Այժմ համառոտակի ծանոթանանք այս երևույթներին։

Ձայնավորների հերթագայություն։ *Այս երևույթը հոգնակիա-կազմ հիմքերում սովորաբար պայմանավորված է շեշտադիրքի փոփոխությամբ։ Արարատյան բարբառում շեշտը սովորաբար վերջընթեր վանկում է։ Բայց հիմքի վերջընթեր վանկի ու և ի ձայնավորները հոգնակի կազմելիս հնչյունափոխության են են-թարկվում, քանի որ շեշտվում է նէր հոգնակերտը. երկիր—եր-կըրնէր, շամփուր—շամփըրնէր։ Ղարաբաղի բարբառում (Ջրա-բերդի խոսվածք) առաջնային շարքի (հատկապես ա, է, ի) ձայ-նավորները անշեշտ (բայց ո՞չ շեշտահաջորդ) կամ շեշտազրկված դիրքում վերածվում են ը՝-ի, որը իր բնույթով միջին շարքի ի-ահայաց ձայնավոր հնչույթ է, իսկ միջին և ետին շարքի ե, ա ձայնավորները նույն դիրքում վերածվում են ը-ի[26]. օ>ը և օ՞>ը փոփոխությունները խիստ հազվադեպ են. սովորական են օ>ու,*

[26] *ա-ն կարող է ներդաշնակությամբ վերածվել ա-ի ու-յահաջորդ դիրքում. կուտա՛նա>կուտունէ՛ք՛, մուտա՛նա>մուտունէ՛ք՛, օ՛շափ>ուշափնէ՛։*

ս>ու անցումները։ Գծապատկերով այս փոփոխությունները կներկայանան այսպիսի տեսքով.

Գծապատկերից երևում է, որ հերթագայությունները ներդաշնակ հարաբերակցություն ունեն, մի կողմից, ը՝-ի (և առաջնային շարքի), մյուս կողմից, ը-ի (և ընդհանրապես ետին-միջին շարքի շուրջը)։ Սյաքները ցույց են տալիս հոգնակիակապ հիմքերում տեղի ունեցող հերթագայությունների ուղղությունը։

Նշակի ձևի համեմատությամբ հոգնակիակապ հիմքում և հոգնակիի ուղիղ ձևի համեմատությամբ թեք հոլովաձևերում առկա են այսպիսի հերթագայություններ.

Ö>ու. հոգն. ուղղ. պօղկէր (եզ. պօղկ<բողկ)>հոգն. սեռ.-տր. պուղկէ՛րէն (որոշյալ). նաև՝ պօշէր (եզ. տօշ «լանջ»)>տուշէ՛րէն. ծօրէր (եզ. ծ օր<ձոր)>ծուրէ՛րէն. շօրէր (եզ. շօր<շոր)>շուրէ՛րէն. եզ. ուղղ. քրթօլ (<զդալ)>հոգն. ուղղ. քրթուլնէ՛, սեռ.-տր. քրթուլնէ՛րէն, նաև՝ խընձօր>խընձուրնէ՛, խընձուրնէ՛րէն։

Օ>ու. հոգն. ուղղ. թո՛շէր (եզ. թօշ<թուշ)>հոգն. սեռ.-տր. թուշէ՛րէն (որոշյալ). նաև՝ պո՛կէր (եզ. պօկ<բուկ)>պուկէ՛րէն). կո՛րծէր (եզ. կօ՛րծ<գործ)>կուրծէ՛րէն. թո՛ռնէր (եզ. թօռն<թոռն)>թուռնէ՛րէն. խո՛րթնէր (եզ. խօրթնը<խուրձն)>խուրթնէ՛րէն. եզ. ուղղ. կըրտո՛ց (<կտուց)>կըրտուցնէ՛. նաև՝ ըշկո՛լ (փոխ. ռուս. школа)>ըշկուլնէ՛։

Ի>Ը՝. Հոգն. ուղղ. բի՛զէր (եզ. բիզ)>հոգն. սեռ.-տր. բը՛զէ՛րէն (որոշյալ). նաև՝ կ՛ի՛ժէր (եզ. կ՛իժ<դիժ)>կ՛ը՛ժէ՛րէն, ա՛ի՛զէր (եզ. աիզ<դէզ)>ա՛ը՛զէ՛րէն. ձի՛լէր (եզ. հիլ «խոտի տնաակ», նաև՝ «պինդ, չկոտրվող»)>ձը՛լէ՛րէն, ձի՛ակէր (եզ. ձիակ)>ձը՛ակէ՛րէն. քի՛լէր (եզ. քիլ<քիլ)>քը՛լէ՛րէն. եզ. ուղղ. պը՛լի՛ք (<բլիք)>հոգն. ուղղ. պը՛լը՛քնէ՛, սեռ.-տր. պը՛լը՛ի՛նէ՛րէն։

Է>Ը՝. Հոգն. ուղղ. բէ՛զէր (եզ. բէզ «բախ»)>հոգն. սեռ.-տր. բը՛զէ՛րէն. նաև՝ մէ՛խէր (եզ. մէխ<փոխ. պարսկերենից «գամ»)>մը՛խէ՛րէն. տէ՛զէր (եզ. տէզ<դեզ)>տը՛զէ՛րէն. լէ՛րփէր (եզ. լէրփ>լիրբ)>լը՛րփէ՛րէն. է՛շէր (եզ. էշ)>ը՛շըրնէ՛ն (ստացական հոգն.), ը՛շէ՛րէն. է՛ծէր (եզ. էծ<այծ)>ը՛ծէ՛րէն. եզ. ուղղ. պէ՛մբակ (<բամբակ)>հոգն. ուղղ. պը՛մբը՛կնէ՛, բաց. պո՛մբը՛կնէ՛րան, վէրչ (<վերջ)> ստացական հոգն. վը՛րչը՛նէս։ Այս փոփոխությունը կատարվում է նաև այն դեպքերում, երբ շեշտի տեղափոխության հետևանքով այդ Լ-ն շեշտահաջորդ վիճակից անցնում է շեշտանախորդ դիրքի. համմտ. ա՛ի՛րէվ (<տերև)>հոգն. ուղղ. տը՛րը՛վնէ՛, սեռ.-տր. տո՛րը՛վնէ՛րէն. նաև՝ իրէս (<երես)>ը՛րը՛սնէ՛, ը՛րը՛սնէ՛րէն, ը՛րը՛սնէս (ստացական նշանակությամբ)։

Ա>Ը՝. հոգն. ուղղ. պա՛կէր (եզ. պակ «փոս»)>սեռ. տր. պը՛կէ՛րէն. նաև՝ պա՛՛հէր (եզ. պա՛՛հ<բահ)>պը՛հէ՛րէն, բա՛՛գ՛էր (եզ. բա՛՛գ «բեկ»)>բը՛գ՛է՛րէն, ճա՛՛նջէր (եզ. ճա՛՛նջ<հանճ)>ճը՛նջէ՛րէն, եզ. ուղղ. պա՛՛րակ (<բարակ)>պը՛րը՛կնէ՛ն, նաև՝ տը՛մակ (<դըմակ)>տը՛մը՛կնէ՛, սեռ.-տր. տը՛մը՛կնէ՛րէն, ճը՛րա՛՛ք (<ճրագ)>ճը՛րը՛ք՛նէ։ Այսպես և՝ երբ շեշտահաջորդ դիրքից ստանում է շեշտանախորդ դիրք. պա՛՛րակ>պը՛րը՛կնէ՛ն,պէ՛մբակ> պը՛մբը՛կնէ՛։

Ö>Ը. երբ այդ ö-ն համապատասխանում է հին հայերենի ու-ն. կը՛լÖխ (<գլուխ)>կրլխընէ՛ (խ—ը դրափոխությամբ), տÖնը (<դուռն)>տրռնէ՛րէն). գրեթե միայն նշված բառերում։

Ե>Ը՝. հոգն. ուղղ. թե՛վքէր (եզ. թեվք)>թըվքէ՛րէն. նաև՝ վե՛ննէր (եզ. վե՛ննը<ոտն)>վընննէ՛րէն. պե՛լէր (եզ. պել «խեներ»)>պըլէ՛րէն. ցե՛խէր (հպ. ցեխ)>ցրխէ՛րէն. եզ. ուղղ. վեզ (վիզ)>վըզըրնէ՛ս «վիզներս». ծեռ (<ծիռ)>ծրուէ՛ր, ծրուէ՛րէն. ծեծ (<ծիծ)>ծրծէ՛ր, ծրծէ՛րէն. տրրեխ>տրրխընէ՛ (խ—ը դրափոխությամբ)։ Այսպես և՝ երբ շեշտահաջորդ դիրքից ստանում է շեշտանախորդ դիրք. կրծեզ՛ (<կծիկ)>կրզկընէ՛. վե՛սկեռ(<ոսկոր)>վրսկրռնէ՛։

Ու>Ը՝. միայն՝ ճուր (<ջուր)>ճը՛րէ՛ր, ճը՛րէ՛րէն. պուրթ (<բուրդ)>պը՛րթէ՛ր, բայց նաև պուրթէր. սակայն պուրք բառը

ըստ էության անհոգնական է՝ իր ուղղակի նշանակությամբ. անկասկած ինչ-որ չափով այդպիսին է նաև ճուր բառը՝ իրրև նյութայնություն արտահայտող բառ։

Ա>Ը. հոգն. ուղղ. ա՛շկէր (եզ. աշկ<աչք)>հոգն. սեռ. տր. բշկէ՛րէն (որոշյալ). նաև՝ ա՛խտէր (եզ. ախտ<ակտ)>բիտէ՛րէն, ա՛րէր (եզ. արէ<արջ)>բրէ՛րէն. ա՛րտէր (եզ. արտ)>բրտէ՛րէն. մա՛ննէր (եզ. մա՛ննը<մատն)>մբննէ՛րէն. եզ. ուղղ. ծըմա՛կ («անտառ»)>հոգն. ուղղ. ծըմբկնէ՛. նաև՝ կըրա՛կ (<կրակ)>կրբկնէ՛. սեռ.-տր. ծըմբկնէ՛րէն, կըրբկնէ՛րէն։ Այսպես և՝ երբ շեշտահաջորդ դիրքից անցնում է շեշտանախորդ դիրքի. ա՛կռավ (<ագռավ)>բկռվնէ՛, բկռվնէ՛րէն, կ՛ո՛ւմայ (<գոմեշ)<կ՛ումբշնէ՛, կո՛ւմբշնէրէն, ձա՛ղաց (<ջրաղաց)>հրղբցնէ՛, ձըղբցնէ՛րէն։

Նույն դիրքերում ու և ու ձայնավորները հիմնականում անհնչյունափոխ են, նույնությամբ պահպանվում են հոգնակիի հիմքերում (եզակի ձևում եղածը պահպանվում է հոգնակի ուղղականի հիմքում, ապա և՝ թեք հոլովաձևերի հոգնակիակազմ հիմքում). այսինքն՝ ու>ու, ու>ու. օր. պուն (<բուն)>պունէր, պունէ՛րէն. գ՛ուրգ՛ (<գիրկ)>գ՛ուրգ՛էր, գ՛ուրգ՛էրան (բաց. հոլ.). լուծ (<լուծ)>լուծէր, լուծէ՛րէն, ծուն (<ձյուն)>ծունէր, ծունէ՛րէն, ծունկնր (<ձունկն)>ծունկնէր. ծունկնէ՛րէն, ք՛ուրդ (<քուրդ) ք՛ուրդէր, ք՛ուրդէ՛րէն. թումբ>թո՛ւմբէր, թումբէ՛րէն, ծուպ (<ծոպ)>ծո՛ւպէր, ծուպէ՛րէն, լա՛կուտ (<լակոտ)>լրկուտնէ՛, լրկուտնէ՛րէն, անջուկ (<ականջ)>ընջուկնէ՛, ընջուկնէ՛րէն, դո՛խտուր (<փոխ. ռուս. доктор)>դուխտուրնէ՛։ Այսպես նաև՝ ը՝>ը՝, ը>ը. սրանք սովորաբար անշեշտ են, միավանկ բառերում չեն հանդիպում (բայց՝ ղրո>ղրուէր). ծըմա՛կ>ծըմբկնէ՛, կըրա՛կ>կրբկնէ՛, տը՛մ ա կ>տը՛մբ՛կնէ՛ ևն։

Բարբառների մեծ մասում շեշտի տեղափոխությամբ՝ նախաշեշտ (ընդ որում և շեշտազրկված) ձայնավորները գերազանցապես վերածվում են ը-ի՝ ու>ը, ա>ը, օ>ը, է>ը ևն)։

Ա>Ը. այս փոփոխությունը կարող է տեղի ունենալ դեպի բառավերջ շարժված, տեղափոխված շեշտին նախորդող (բայց ո՛չ միայն շեշտազրկված) վանկերում. անգամ (<ականջ)>անգրջնէր, աման>ամբննէր, հայվան>հայվբննէր (Պոլիս), պառավ>պրուվա՛նիք՛ (Ագուլիս), մշակ>մշկներ (ՀԺՀ, IX, 119—Ալաշկերտ), հալըվներ (Ն. տ. 168), օղար>օղրներ (Առտիալ), համմտ. բևնը-

ներումն (ԽԱ, ԲԼԺ, III, 87—Արարատ.), կոճկնիրը (ԳՍ, Ըն, 174—Թբիլ.), շափթներով (Ն. տ. 217), խալըվներ (Վան, ըստ ՀԱ, ՎՔ, Ն., 211)։

Ու>Ը. (նույն դիրքերում). տուն>տ(ը)ներ (Վան), Թ(ը)ռչուն>Թըռչ'ըններ (Աստիալ), բուռթ>բըռթէր (Լոռի), Թումբ>Թըմբէր (Ուրմիա), կիրակուր>կիրակըրներ (Ն.-Ջուղա), շուն>շ(ը)նէր (Համշեն). Արարատյան բրբ. ըստ ԽԱ, ԲԼԺ, III՝ տներիւ, կտրներիւ (8), կերակրներիւ (25), արխալղներ (19), կճճներով (20), ջրեր (33), Թշեր (40), շներիցը (42), շամփրներ (46), բրչեր (53), սրբբեր (81), կրնգներիւ (86), քրդերիւ (96), ղշեր (104), Թփերիւ (191), բներիցը (Ն. տ.), աղլխներն (184), բդերն (139). ըստ ՊՊ, ԲԺ, I՝ տներ (26), աղբրներ (136), խցեր (140), բքեր (42), սրբերիւ (Ն. տ.), բներ (96), փնչեր (106), ղշեր (120), Թբիլիսիի բրբ. Թըխտիր (ՄՆ, ԽԺ, 55), շըներու (76), կրունիր (22), սրփիր (ԳՍ, Պ, 118), Թխտիր (Ն. տ. 140), դռնիր (ԳՍ, Ըն, 114)։

Ի>Ը. գօշիգ'>գօշըգներ, դաջիգ>դաջըգներ (Աստիալ), գին>գըներ (Լոռի), լիռփ>լըռփէր (Ուրմիա), շապիք>շապըկներ (Ն. Ջուղա), համմտ. նաև՝ Արարատյան բրբ. գրքերում (ԽԱ, ԲԼԺ, III, 2), մաքերով (Ն. տ. 3), պղնձները (9), աղջըկներ, (157), ծաղկըներ (41), շլըքներով (87), ճսրներիւ (90), բաղնըսներումը (123), ձներ (ՊՊ, ԲԺ, I, 217), ճՓներով (Ն. տ.), չՓեր (218), երկրներում (20), դարբներ (64), գրքեր (66), մաշկներ («մաշիկներ», 68), Թոնդրըներիցը (99), ծաղկներ (Ն. տ.), խուրջներ (202), Թբիլիսիի բրբ. բալնքներիր (ԳՍ, Պ, 114), ամսներով (ԳՍ, Ըն, 173), մարքըրտներու (Ն. տ. 13). համմտ. նաև՝ Հոդուածներ (ՀԺՀ, IX, 481—Բաղեշ)։

Է>Ը. դաշէխ>դաշըխներ (Աստիալ), տըրէխ>տըրխըներ (համմտ. ԽԱ, ԲԼԺ, III, 22—Ուրար.), նաև՝ վառկըներ (ը-ով դրափոխութ'յամբ, Ն. տ. 69), համմտ. ծրէծ>ծրծէր (Մեղրի)։

Օ>Ը. շօն>շըներիք (Ագուլիս)։ Հանդիպում են նաև ա>ը, ու>ը, է>ի, ա>է հնչյունափոխութ'յուններ (վերջին փոփոխութ'յան վերաբերյալ տե՛ս, օրինակ, ՀԱ, ԼՔՀԼ, III, 782)[27]։

Ձայնավորի այս սղումներով ստացված ը-ն հոդնակիի հիմքում կարող է մնալ նույն դիրքում, բայց երբեմն դրափոխութ'յուն է կատարում հաջորդ բաղաձայնի հետ։ Մեծ մասամբ այս կարող է

---

[27] «Մինչդեռ արեւելյան բարբառների մեջ, որովհետև բառերը հարաշեղտ են՝ սղվում են վերջյուններ վանկից առաջ եղած վանկերը, իսկ վերջյուններ վանկը սղվում է միայն այն ժամանակ, երբ շեշտը վերջին վանկի վրա է լինում,— արեւմտյան բարբառների մեջ՝ որովհետև շեշտը միշտ վերջին վանկի վրա է՝ սղվում է սովորաբար վերջյուններ վանկի ձայնավորը» (Մ. Աբեղյան, Ժողովրդական լեզվի շեշտադրութ'յունը, «Նոր Դար», 1890, № 144)։

տեղի ունենալ վերջնահանգ փակ վանկի ձայնավորի հետ՝ հիմքին զուգորդվող բաղաձայնական հոգնակերտից առաջ։ Նման երևույթների մասամբ ականատես ենք եղել. համմտ. նաև՝ ծաղիք>ծախկընէր (Ն. Ջուղա), գլուխ>գլխընի (Լոռի), ծաղկըներ (Արարատյան, ըստ ԽԱ, ԵԼԺ, III, 41), ամսընների (Ն. տ. 15, 129), շապկընների (19), տրխրնեըր (22), վառկըներ (69), կովընեըումն (168), պտղըներ (197). տե՛ս նաև՝ ծաղկըներ (ՀԺՀ, IX, 14—Ալաշկերտ)։

Հոգնակիակազմության ժամանակ տեղի ունեցող սղման երևույթները առավել հստակ կերպով արտահայտվում են հոլովակազմության մեջ։ Հ. Աճառյանը նկատում է. «Միջին հայերենում սղման և ամփոփման օրենքը ոչ միայն պահվեց ընդհանրապես, այլև ավելացավ նաև ա ձայնավորի սղման օրենքը... Բարբառներն ընդհանրապես պահում են միջին հայերենի սղման օրենքը... Ա ձայնավորի սղման համար բարբառները բաժանվում են երկուսի. Կովկասյան բարբառները ընդհանրապես չեն ճանաչում ա-ի սղում, իսկ մյուսները ունեն... Բարբառները ունեն դարձյալ այնպիսի ձայնավորների կամ երկբարբառների սղում, որ չգիտեն գրաբարը և միջին հայերենը» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 883)։

Վերջնահանգի բացվանկային ձայնավորի փոփոխություն։ Հիմքային տարբերակներ են առաջանում նաև վերջնահանգի բացվանկային ձայնավորի փոփոխությամբ, որ կարող և առնչություն չունենալ շեշտի տեղաշարժի հետ։ Հոգնակի ձևում այդ ձայնավորը սովորաբար դրսևորում է բաղաձայնական հոգնակերտով կամ հոգնակերտի սկզբնատարրով վերակազմավորված փակ վանկում։ Հոգնակիի հիմքավերջում լինում են այսպիսի հերթագայություններ.

Ա>է. լինում է սովորաբար *Ի* հոգնակերտից առաջ. *յարախա>յարախէք, գ՛ուլբա>գ՛ուլբէք, ծառա>ծառէք* (Ն. Ջուղա). Արարատյան բրբ. ըստ ԽԱ, ԵԼԺ, III՝ *էրեխեք* (2), *ծառէք* (6), *քուչեք* (14), *քեղխուդեք* (18), *փեսեք* (157), ըստ ՊՊ ԵԺ I՝ *սատանեք* (31), *լուխեք* (69), *սուփրեք* (80), *ձամփեք* (91), *յարեք* (105), *ֆարաջեք* (110), *գյուլբեք* (198), *արաբեք* (Ն. տ.). Նաև՝ *սատանա>սատանէք՛, փէսա>փէսէք՛* (Վան), *տըղա>տըղէր՛, փեսա>փըսէք՛, կօլա>կուվէք՛* (Դրբ., Հադրութ), *ձամփա>ձամփէք* (Լոռի). Համանման դրսևորումներ կան Մեղրու, Սասունի, Կարինանի, Շատախ, Մալաթիայի, Կոդեսի և այլ բարբառներում, բացի Ագուլիսի բարբառից։

Նույն դիրքում կարող է տեղի ունենալ *ը>ա* հերթագայություն, որ նկատում է Հ. Աճառյանը Ագուլիսի բարբառում. *ո՛ւտեր*

(<ոտն)>ուտնաք, ծէ՛յնը (<ծունկ, ծունգն)>ծէ՛յնաք, ճէ՛ղներ (<ճիւղ)>ճէ՛ղնաք, նո՛ռնը (<նուռն)>նո՛ռնաք, ի՛ղնը (<եզն) ի՛ղնաք։

Ի>է. սովորաբար ստան հոգնակերտից առաջ. տարի>տարէստան (Կարնո), փոշի>փոշէստան (լհհայ բրբ.)։ Ընդ որում հիմնականում այս հերթագայութեանն է հետևում նաև ստան-ի հետ զուգորդվող հիմքերի այն ի վերջնահանգը, որը բարբառում ածանց դարձած հին հոգնակերտ Ք-ից առաջ է. բա՛զնիր>բա՛զնէստան (Կարնո)։

Ի>Ը. նույն դիրքում՝ ագի>ագըստան, տարի>տարըստան, էգի>էգըստան, գինի>գինըստան, ոսկի>ոսկըստան. համմտ. նաև՝ հարսնիք>հարսնըստան (լհհայ բրբ. ըստ Հ. Աճառյանի)։

Ու>Վ. ձայնավորասկիզբ հոգնակերտից առաջ կամ ներմուծված ր անցումային հնչյունից առաջ ընկած դիրքում. առու>առվընէր, կառու>կառվընէր, լիզու>լիզվընէր (Ն. Ջուղա), ածու>ածվըներ (Վան), կառու>կառվընի (Լոռի), կառու>կրտվէնի (Ղրբ.), Ջրաբաւյան բրբ. ըստ ԱԺ, ՏՀԺ, ՈՐ՝ լեզվըներ (5), կառվըներ (35), առվըներ (7), ըստ ՊՊ, ԵԺ, Ի՝ լեզվըներ (279), առվրներ (Շատախ, ըստ ՄՄ, ՇՔ, Ն, 173), կառվրներ (ՀԺՀ, IX, 269—Մանազկերտ), առու>առվընէր (Ուրմիա). միավանկների մեջ՝ լու>լվէր, ձ՛ու>ձ՛վէր (Ն. Ջուղա, ըստ ՀԱ, ԼՔՀ, III, 734)։

Օ(<ա)>է. ևի (f) հոգնակերտից առաջ. ակօ (<ակոա)>ակոէնիք, ջառօ (<ծառայ)> ջէռէնի (Կիլիկիա, ըստ ՀԱ, ԼՔՀ, III, 783)։

Ը>ղրո (անկում). եր<(ը)ն հանգի դեպքում բազաձայնասկիզբ հոգնակերտից առաջ. կամնը (<կամն)>կամնար, հարսնը (<հարսն)>հարսնար (Մեղրի), մօկնը (<մուկն)>մօկնէր, ծա՛նը (<ձուկն)>ծա՛կնէր (Ղրբ.), թօռնը (<թոռն)>թօռնար (Կարնո)։ Շատ քիչ դեպքերում հանդիպում է անհնչյունափոխ տեսքով. ճէղնը>ճէղնար, ճէղնար, բայց և՝ ճէղներնէր (Ագուլիս)։

Երեմնի արմատական ձայնավորի վերականգնում՝ ներքագայությամբ։ *Սա վերաբերում է այն դեպքերին, «երբ բառի ձայնավորը բարբառում փոփոխված և նոր ձև է ստացած, հոգնակի կազմելու ժամանակ վերստանում է նախկին ձևը» (ՀԱ, ԼՔՀ, III, 765)։ Այդպիսի դեպքերից են.*

Օ (<Ա)>Ա. նկատվում է Ագուլիսի բարբառում. եթե եզակին միավանկ է՝ օ ձայնավորով, որ համապատասխանում է ընդհանուր հայերեն ա-ին, հոգնակիի հիմքում վերականգնվում է այդ ա-ն. ծօկ (<ծակ)>ծա՛կար, ծօռ (<ծառ)>ծա՛ռար. նաև՝ օ

(<ա)>ա̈. վա̈ր (<վար)>վարար, նաև՝ ու (<ա)>ա. տունձ (<տանձ)>տա՛նձար, նաև՝ օյ (<ա, այ)>ա̈. կօյլ (<կալ)>կայ-լա̈ր, սօյլ (<սայլ)>սայլա̈ր։

Ու (<Ա)>Ա վերականգնում կա, օրինակ, Սվեգիայի բարբառում. ումբ (<ամպ)> ա̈մբիր, ձուռ (<ծառ)>ձառիր (ՀԱ, ԼՔՀԼ, III, 765), Ի(<ե)>է՝ Սասունի բարբառում. տիղ (<դեղ)> տէղիր, ցիխ (<ցեխ)>ցէխիր (ըստ ՎՊ, ՍԲ, 31), օ (<ա)>ա կիլիկիայի բարբառում. հօց (<հաց)>հացիյ, քօր (<քար)>քայիյ (ըստ ՀԱ. ԼՔՀԼ, III, 781)։ Ղարաբաղի բարբառում (Ջրաբերդի խոսվածք) մի շարք հոգնակիակազմ հիմքերում վերականգնվում է երբեմնի ու ձայնավորը. ընդ որում տեղի է ունենում օ (<ու)>ու փոփո-խություն. թօթնը (<թութ)>թութնէ՛ր, ճօղնը (<ճուղ, ճիւղ)> ճուղնէ՛ր, կօռնը (<կուռն)>կուռնէ՛ր։ Բայց ընդհանրապես շեշ-տազուրկ դիրքում ունենք օ>ու անցում։ Տարբերնական այն է, որ այլ բառերում նույն դիրքում օ-ն կարող է չշեշտազրկվել և անփո-փոխ մնալ. համմտ. մօկնը (<մուկն)>մօ՛կնէր։

Բաղաձայնի կամ բաղաձայնական կապակցության փոփոխու-թյուն։ 1) Պայթականի, պայթաշփականի վերածում շփականի. ձ. Ա՛ճառյանի վկայությամբ՝ Վանի բարբառում ներ հոգնակերտից ա-ռաջ, հիմքավերջում կ>յ. իրիկ(<այր)>իրիյներ. գ՛>յ (նույն դիրքում). արմունգ՛ (<արմունկն)> արմըյներ. համմտ. նաև՝ ք>յ՝ տղէյներաց (ՀԱ, ՎԲ, Ն, 212)։ Բառամիջում բաղաձայնի մոտ կ՛, ճգ՛>յ, ճյ. կ՛անգ՛ա՛տ (<գանգատ)>կ՛ա՛տըներ, կ՛ա՛կ՛ա՛թ (<գա-գաթն)>կ՛ա՛հյըներ. նաև՝ ֆ՛(ֆ)>ճյ (նույն դիրքում). ա՛ռիք՛ (առիք)>առիհյներ։ Համշենի բրբ. ջ>ժ, ձ>զ. օնգօջ>օն-գօժնի, բղինձ>բղինզնի։ Ղարաբաղի բրբ. ծ>զ, ց>ս (մի-այն առանձին բառերում). կըծնգ՛>կըզկընէ, հրդե‖*հրդեց-> >հրդըսկնէ, ճաղաց>ճրդըսնէ‖ճրդըցնէ։ Ուրմիայի բրբ. ֆ‖ֆ՛ նֆ‖նֆ՛ վերջնահանգերը ֆ՛էր, նէր բաղաձայնասկիզբ հոգնակերտ-ներից առաջ վերածվում են հյ-ի, իսկ կ‖կ՛, գ‖գ՛, նգ‖նգ՛>յ-ի (տե՛ս ՄԱ, ՈւԽԲ, 69)։ Համմտ. նաև ֆ>յ՝ տղէյներ (ՀԺՀ, IX, 403-Բաղեշ)։ 2) Խլացում և շնչեղ խլացում. պ, բ>փ՝ ուրուր (ռուպ)>ուրուփ՛իր, խծապ (<խծիպ)>խծափ՛իր, զ>ս՝ էրազ>էրասք՛իր, ղ>խ՝ տաշշէղ>տաշշէխք՛իր (ըստ ՀԱ, ԼՔՀԼ, III, 751—752). գ՛>կ՝ ախճիգ՛>ըխճըկէք՛‖ըխճըկէրք, կըծնգ՛>կըզկը-նէ, կ>ֆ՝ կօշտ>քըշտըրնէս «մոտներս» (Ղրբ.)։ 3) Քմայնացում. Լոռու խոսվածքում (ըստ ՄԱ, Լե, 93) եզակի ձևի վերջնահանգ գ, կ, ֆ բաղաձայնները հոգնակիի հիմքում վերածվում են քմային-ների էր հոգնակերտից առաջ. զօրք>զօրք՛էր, շէգ>շէգ՛էր, կարուկ

է լինել և քմայնության կորուստ (ապաքմայնացում). Կ՛ըլսի «գլուխ»>կըլխընէ (Ղրբ.)։

Հանդիպում են նաև այլ կարգի մասնավոր հնչյունափոխություններ, ինչպես ը>ո անցումը ն-ից առաջ Սվեդիայի բարբառում, ը>յ անցումը (Համշեն) և այլն։

Բաղաձայնական վերջնահանգի անկում։ Այսպիսի երևույթներ նկատվում են Վանի, Առտիալի, Կիլիկիայի, Ագուլիսի և այլ բարբառներում։ Ըստ Հ. Աճառյանի՝ Վանի բարբառում և վերջնահանգը հյուեր հոգնակերտից առաջ (հաճախ ձայնավորով հանդերձ) ընկնում է. կարկըտան>կարկըտիհյուեր, անուն>անուհյուեր. Ագուլիսի բարբառում ատիֆ՛||ատիֆ՛ հոգնակերտներից առաջ f, աճf, ակ, ուկ հանգերը ընկնում են. մնէշակ (<մանիշակ)>մնըշ՛ատիք՛, ծմբաթրուկ (<ձմերուկ)>ծըմբըրշ՛ատիք՛. Համմ. Պոլսի բարբառում՝ աշկ>աշ-վընէր, ձաոք>ձաո-վընէր։

Երբեմն և վերջնահանգի անկում է տեղի ունենում նէր հոգնակերտից առաջ՝ կրկնակ նն-ից խուսափելու համար, որ նկատվում է Առտիալի, Կիլիկիայի, Կաքավաբերդի և այլ մի քանի բարբառներում, առհասարակ և ներ(<րն) վերջնահանգի առկայության դեպքերում. Համմ. ձմէռնը (<ձմեռն)>ձմէռնա՛ (Կարնեվան), լիսէռնը>լիսըռնի (Սյունիք), թէթախնը>թէթախնէ (Մեղրի). Թբիլիսիի բրբ. ստաքնիր (<ստաքան<стакан, ԳՍ, Պ, 60), թումնիր (<թուման, ԳՍ, Ըե, 101), մագազիներումն (<մագազին<магазин, ն. տ. 18). նաև՝ իրնգուն (ՎՊ, ՍԲ, 95)>իրնգունիրու (ն. տ. 85), իշխան>իշխաններ (ՀԺՀ, IX, 183—Ալաշկերտ), տեղութիններ (ն. տ. 321- Մանազկերտ), ըստաքներ (ն. տ. 313), ամրներ (ն. տ. 239), խանութպաններ (ն. տ. 384-Բաղեշ), պերըններ (ն. տ. 476), դյուքըններ (486), գերեզմներու (573)։

Հիմնավերջում՝ հիմքի և ավելացող հոգնակերտի միջև անցումային հնչյունի ներմուծում։ Բարբառների մեծ մասում եթե եզակի ձևը միավանկ ձայնավորահանգ է՝ ի, ու հանգող, հոգնակի կազմելիս հիմքավերջի և ձայնավորաակիզը հոգնակերտի միչև սովորաբար ներմուծվում է մի անցումային հնչյուն՝ յ (հիմնականում ի, է հանգողների համար) կամ վ (ու հանգողների համար)։ Այսպես՝ ծի>ծը՝-յ-ան, թէ>թը՝-յ-ան, ծու>ծու-վ-ան, լու>լու-վ-ան (Ղրբ.), ծի (<ձի)>ծի-յ-իր, ծու (<ձու)>ծու-յ-իր, լու>լու-յ-իր (Մարաղա), նաև՝ Սյունյաց, Հադրութի, Կոգենի, Ագուլիսի, Շամախու, Մեղրու, Համշենի և այլ բարբառներում։

Եթե եզակի ձևի վերջնահանգ ու-ն հոգնակիի հիմքում ձայնա-

վոբաակիզը հոգնակերտից առաջ վերածվում է վ-ի, ապա դրա հետևանքով ստացված բաղաձայն+վ բաղաձայնական կապակցության միջև ներմուծվում է (ը) կամ ու: Դրա պատճառով է, որ այդ կարգի բառերը հոգնակի ձևում ունեն լուվաճ կամ լ(ը)վաճ տեսքը՝ Ն. Ջուղայի բարբառում տարածված են՝ լ(ը)վէր, ձ'(ը)վէր, Սասունի բարբառում լ(ը)վիր, վանի բրբ. լ(ը)վեր ձևերը: Վերը արդեն ցուցադրեցինք լուվաճ տիպի կազմություններ:

Անցումային ը-ն կարող է երևալ նաև մեկից ավելի վանկանի հիմքերի վերջում, ըստ երևույթին ու>վ փոփոխությամբ բաղաձայնահանգ դարձած հիմքավերջերի վարքագծի համաբանությամբ. հմմտ. Արարատյան բրբ. հիճվըներ (ՊՊ, ԵԺ, I, 109), կաովըներ (ԽԼ, ԵԼԺ, III, 35), բայց և՝ թասըներ (Ն. տ.), վախտըներ (Ն. տ. 31), թրըներ (Ն. տ. 98): Սակայն սրանք բացառիկ կազմավորումներ են: Հմմտ. նաև՝ քաղքըներ (ՀԱ, ԱոՒ, Ն, 239), պաովըներ (ՄՄ, ՇՒ, 173), արաբ>արբըներ (ՀԺՀ, IX, 94—Ալաշկերտ): Մեծ մասամբ այս երևույթը սղման հետևանք ը-ի դրափոխության է և ոչ ներմուծում, կամ դրափոխվածի համաբանությամբ կազմավորում է:

Պատահում է, որ անցումային ու, (ը) տարրերի փոխարեն ներմուծվում է և ձայնորդը: Այսպես՝ Մարաղայի բարբառում հանդիպում է նաև ծի (<ձի)>ծի-ն-իր ձև (հմմտ. նաև ՀԱ, ԼՔՀԼ, III, 722): Ըստ երևույթին Պոլսի բարբառում եզակի ձիճ ձևը ձիճիս հոգնակի ձևի հիմքից է սերում: Այս ն-ն երբեմն երևում է նաև երկվանկ հիմքավերջում. տարի>տարի-ն-անի(ը), քամի>քամի-ն-անի (Ն. Ջուղա):

Որոշ բարբառներում անցումային ը հնչյուն է ավելանում հիմքավերջում, երբ այն բաղաձայնահանգ է և ընդունում է բաղաձայնասկիզբ հոգնակերտ, օր. տղրուկ>տղրկըներ, անէծք>անէծկըներ, ծմրուկ>ծմրկըներ (Վան), կաոիք՛ (<կեոիք)>կըոքընատիք՛ (Ագուլիս), կեոեք՛>կըոքընէ‖կըոքընէ (Ղրբ.): Այս ը-ն կարող է լինել սղման արդյունք և դրափոխությամբ այդպիսի դիրք ընդունած, բայց խոսքր միայն դրա մասին չէ:

Ձմեկնաբանվող ն տարր է ավելանում (առանձին բարբառներում) ծառ-հիմքին՝ ծառ-ն-էր, օրինակ, Ն. Ջուղայի, Դերսիմի, Մալաթիայի, Շատախ, Լոռու, Կարնո բարբառներում:

Անճնշյունափոխ հիմքեր: Մեր բարբառները մեծ մասամբ զարգացրել են կցական կառուցատիպ. այդ նշանակում է, թե միտում կա դեպի անհնչյունափոխ հիմքակազմություն: Այդպիսի դեպքերում եզակի ձևը, առանց բաղաձայնական կամ ձայնավո-

րական փոփոխությունների, դառնում է հոգնակիի հիմք։ Համաձայն հնչյունափոխ տարբերակների հանդիպում ենք առանձին հիմքերում միայն։ Այսպես, օրինակ, Ղարաբաղի բարբառում միավանկ բառերի հոգնակի ուղղականի հոգնակիակազմ հիմքերը գերազանցապես անհնչյունափոխ են. ծառ>ծառէր, քար>քարէր, ճամ(<ճուռ)>ճամէր, կ՛ետ(<գետ)>կ՛էտէր, կ՛ուլ(<գայլ)>կ՛ուլէր. համմմ. գ՛ուլ(<գայլ)>գ՛ուլար, գ՛օզ(<գազ)>գ՛օզար (Ագուլիս)։ Այդպիսին են Համշենի բարբառում նաև հոգնակերտի երկվանկ հիմքերը. արուն>արուննի, օմօն(<աման)>օմօննի։ Աճառյանը վկայում է, որ Ագուլիսի բարբառում նէր-ի հիմքում ազում չի կատարվում։ Համմմ. նաև՝ քարիր (ՀԺՀ, IX, 247-Մանազկերտ), շունէր (ՈՒ, ՇՒ, Ն, 275), միսէր (Ն. տ. 277), ճուտէր (278)։ Արարատյան բարբառում, չնայած ու, ի (մասամբ և ա, է) ձայնավորների հնչյունափոխական ակնհայտ միտումին, ինչպես այդ տեսանք վերը, այնուամենայնիվ հակում է նկատվում դեպի անհնչյունափոխ հիմքերը. այդ նկատելի է ոչ միայն երկվանկ-բազմավանկ, այլև մի[ա]վանկ հիմքերում։ Ձյագձա՝ ուրիշներ (ՔՊ, ԲԺ, I, 41), ումուտներ (Ն. տ. 66), թոնդիրներ (69), կիրակուրներ (69, 105), աղյիկներ (70), հարուստներ (71), պղինձներ (72), բարիքներ (78), շամփուրներ (80), կեսուրներ (81), խնդիրքներ (88), կոշիկներ (93), մասունքներ (93), մաշիկներ (110), մատանիքներ (165), միավանկներից՝ շիվեր (80), թուրքեր (171), քուրեր (201), նաև՝ էրթիկներ (ՀԱՒ, ԲԼԺ, III, 7), քրտինքներ (Ն. տ. 83), մեխքներ (124), խուրջիններ (162, միավանկներից՝ թուրքեր (Ն. տ. 16) են։ Համմմ. Թբիլիսիի բրբ. մեչլիսներ (Մն, ԽԺ, 20), հեքիմներ (Ն. տ. 56), իմաստուններ (61), ծաղիկներ (71), ուրիշներ (50), առուտներ (ՂՍՍ, Պ, 24)։

Ձևաբանորեն վերակազմավորված և չվերակազմավորված հիմքեր։ *Բարբառներում եզակի ձևը հոգնակիի հիմք դառնալիս սովորաբար ձևաբանորեն չի վերակազմավորվում, հիմքի ձևույթային կազմը մնում է նույնը, բնավոր հիմքերը տեղ չունեն հոգնակիակազմության մեջ։ Սակայն կան մասնավոր վերակազմավորումներ, որոնք ձևաբանական բնույթ ունեն, իսկ հնատիպ հիմքակազմություններում նկատվում են բնավոր կառուցածների մնացորդներ։*

Ընդհանրապես այս տիպի վերակազմավորումները մեծ մասամբ կապվում են երբեմնի (ը)ն հանգի վերականգնման հետ։ Զգալի թվով բառեր, ընդ որում և շատ միավանկ բառեր հին հայերենում ունեցել են բաղաձայն+(ը)ն վերջնահանգ։ Այս կաղա-

պարը հետագա հայերենում, ինչպես և բարբառներում, քիչ է պահպանվել։ Որոշ բարբառներում (օր. Ղարաբաղի, Ագուլիսի ևն) այն մնացել է բաղաձայն+ներ տեսքով՝ (ը)ն>ներ շրջմամբ։ Շատ բարբառներում (Աբարատյան, Ասլանբեկի, Ն. Ջուղայի, Շատախի, Հաճընի, Թբիլիսիի, Մշո, Սասունի, Ուրմիայի, Դերսիմի, Կարնո, Կլիկիայի, Մյունյաց, Լոռու, Վանի, Կոզեռնի, Արդվինի), ինչպես և նոր գրական հայերենում, երբեմնի (ը)ն հանգն ունեցած (բայց եզակի ձևերում կորցրած) միավանկ բառերի մեծ մասի հոգնակիակազմ հիմքում այդ հանգը վերականգնվում է (հոգնակիակազմության երբեմնի ունգային հիմքատարբերակ). օր. ձ'ուգ (<ձուկը)>ձ'ըգն-եր, հարս(<հարսն)>հարսն-եր, դ'ուռ (<դուռն)>դ'ռն-եր, մուկ (<մուկն)>մըկն-եր, յէզ. (<յէն)>յէզն-եր (տե՛ս ՀԱ, ՔԱռ. Բ, 131), թոռ (<թոռն)>թոռն-էր (ՄԱ, ՈւԽՐ, 63). Համմտ. նաև՝ ձեռնէր (ՄԱ, ԼԽ, Ն, 161), մատներօվդ (ՀԱ, ՎՐ, Ն, 233), գռներ (ՀԺՀ, IX, 261, Մոնազկերտ), յեգներ (ՄՄ, ՇՐ, Ն, 189), գառներ (ՀԺՀ, IX, 61, Ալաշկերտ), մադնիր (ՎԳ, ՍԻ, 67). Արստարատյան բարբառում, ըստ ԽՎ, ԾՀԺ, ՀՀ՝ ձեռներ (էջ 1), դռներ (3, 83), ոտներ (9), հարսներ (21), մատներ (25), ծնկներին (38), ափները (190, նաև՝ ափնիքը՝ 41), կռներդ (50), գառներ (80), թոռներ (91), ըստ ՊԳ, ԾԺ, Ի՝ ոտներ (19), ձեռներ (ն. տ.), հարսներ (20), կռներ (23), մատներ (23), ծնկներին (47), ձեռներիցս (49), դռներ (72), ափներումբ (77, 78), ձկներ (80), եղներ (109), գառներ (110), Թբիլիսիի բարբառում՝ վոտներիր (ԳՍ, Պ, 39), ձեռներիր (ն. տ. 59), ծնգներումս (73), դռներիր (ԳՍ, ԸՆ, 114), կռներիր (177), մատներիր (193), կրոներիր (ՄՆ, ԽԺ, 22), մատներիր (ն. տ. 72), բերներիր (27), հակներիր (ն. տ.), ակներիր («գոհար» 27), ձեռներիր (55)։

Կան բարբառներ (Մարաղայի, Համշենի, Սվեդիայի են), որոնք այդ կորուսյալ Ն-ն չեն վերականգնում։ Ըստ Հ. Աճառյանի վկայությյան այդպիսիներից են պոլսահայ և նոր նախիջևանի բարբառները (օր. նուռ>նուռէր, ձուգ>ձուգէր են)։ Որոշ բարբառներ (նաև Մարաղա, Սվեդիա) տատանումներ են տալիս. համմտ. մատ (<մատն)>մատ-իր և մատն-իր (Մարաղա), բ'իռ (<բեռն)բ'իռ-իր և բ'իռն-իր (Սվեդիա)։ Եվ վերջապես կան նաև այնպիսի բարբառներ, որոնք ունեն որոշ սահմանափակումներ վերջնահանդի բնույթով պայմանավորված (Կեսարիա, Մալաթիա)։

Այս տիպի վերակազմավորվող հիմքերին են հետևում նաև մի քանի միավանկներ, որոնք հին գրական հայերենում վկայված են առանց (ը)ն հանգի. ճղներով (ՀԺՀ, IX. 479, Բաղեշ), «Մեզի համր

օչխար մի բերևս օր պնչեերուց մեղր գաս (ն. տ. 577). այս մասին տե՛ս նաև ՈՒ. ԿԲ, 84։

Այն բարբառները (Ղարաբաղ, Ղարադաղ, Ագուլիս, Մեղրի, Կարնեցի են), որոնք հին հայերենի (ը)ն հանգը նգակի ձևում պահպանել են, նաև (ը)ն>նը շրջմամբ, հոգնակիի հիմքում ևս պահպանում են այն. ընդ որում տեղի է ունենում նը>ն հնչյունափոխություն (ը-ի անկում) հոգնակերտից առաջ։ Ստորև տալիս ենք նման հոգնակիակազմության օրինակները Ղարաբաղի բարբառի Ջրարերդի խոսվածքով։

ակնը (<ակն)>ակներ
թոզնը (<թուզ)>թուզներ||թո՛զներ
թոթնը (<թութ)>թութներ||թո՛թներ
թոռնը (<թոռն)>թոռներ
խէժնը (<խեժ)>խէժներ
խորթնը «խուրձ»>խուրթներ||խո՛րթներ
ծօնգնը (<ծունգն)>ծունգներ
ծօռնը (<ծոռ)>ծո՛ռներ
ծո՛ւկնը (<ծուկն)>ծո՛ւկներ
կաթնը (<կաթն)>կաթներ
կամնը (<կամն)>կամներ
կ՛առնը (<գառն)>կ՛առներ
կէմնը (<կեմ)>կէմներ
կօռնը (<կուռն)>կուռներ
հարթնը «հարսն»>հարթներ
ղէյնը (<եղունգն)>ղէյներ
ճօղնը(<ճուղ, ճիւղ)>ճուղներ
ճ՛ունգնը(<՛ճունգն)>ճունգներ
մաննը (<մատն)>մաններ
մօկնը (<մուկն)>մօկներ
յեզնը (<եզն)>յեզներ
նօռնը (<նուռն)>նուռներ
պէռնը (<բեռն)>պէռներ
սեգնը>սեգներ
սօնգնը (<սունկն)>սունգներ||սո՛ներ
վեննը (<ոտն)>վեններ
վերթնը (<որդն)>վերթներ
տօռնը (դուռն)>տր՝ռներ||տրռներ
օնգնը (<ունկն)>օնգներ։

Սանոր.—*Այս ցանկում ընդգրկվածներից մի քանիսը (թօգնը, թօթնը, խէմնը, ծօռնը, կէմնը, նօգնը) հին գրական հայերենում և հանգով չեն վկայված հմմմտ. թուզ, թուք, խեժ, ծոռ, կեմ, հուզ||հիւզ), խօրթնը. ճարթնը բառերը ընդհանուր հայերենում սովորաբար ունեն խուռն, հարսն ձևերը, ղէյնը՝ գրաբարյան եռավանկն է բարբառում վերածված երկվանկի, հոգնակիի հիմքում՝ միավանկի։ Ընդհանրապես ցանկում ընդգրկված բոլոր եզակի ձևերը երկվանկ են, որոնք հոգնակիի հիմքում հնչյունափոխությամբ՝ վանկայնորեն վերակազմավորվելով դառնում են միավանկ։*

Բարբառներում հիմքի ձևաբանական վերակազմավորման մյուս դեպքերը մեծ մասամբ կապված են հիմքը հոգնակերտով վերակազմավորվելու երևույթի հետ։ Այսպես՝ ձայնավորահանգ հիմքերը հիմնականում զուգորդվում են f, ստաճ, ան հոգնակերտների հետ. սրանց հոգնակիանիշ արժեքի թուլացման, մթագնման պայմաններում հիմք+f (+ստաճ, +ան) կաղապարը փոխարինվում է հիմք/f, հիմք/ստաճ, հիմք/ան+նոր հոգնակերտ (սովորաբար ավյալ բարբառում առավել տարածված հոգնակերտը) կաղապարով։ Ն. Ջուղայի բարբառում ա, է, ի հանգող երկվանկ-բազմավանկ հիմքերը հաճախ զուգորդվում են f հոգնակերտի հետ՝ կազմելով հոգնակի ձև. մարգարէ>մարգարէք, բայց դրան զուգահեռ կա նաև մարգարէքնէր ձևը (հմմտ. ճամիա>ճամփէք||ճամբէքնէր, գուլբա>գուլբէք||գուլբէքնէր)։

Նույն կերպ պետք է գնահատել նաև հետևյալ կազմավորումները. գ՛էրանգվէք||գ՛էրանդվըք՛էր, տիրացվէք||տիրացվըք՛էր (ՄՄ, Լա, 91), էրեխեք (խԱ, եԼԺ, III, 2)||էրեխեքներ (ն. տ. 14), ակռեք (ԱՆ, խԺ, 7)||ակըռքնիր (ն. տ. 34, 35). հմմտ. նաև՝ տղեքներ (ՀԺՀ, 9, 282—Մանազկերտ), քոսեքներ (ն. տ. 178—Ալաշկերտ), քիսեքներու (ն. տ. 169), օսկիքներու (ն. տ. 573—Բաղեշ), մեշնեներով (ն. տ. 324—Մանազկերտ), օդեքներ (ն. տ. 318). տե՛ս նաև հիմք/իf+ներ կաղապարով՝ մարթիքներ (ՀԺՀ, 9, 378—Բաղեշ)։ Մի շարք կազմավորումների թեք ձևերում առկա է հիմք/f+անց կաղապարը. էրեխեքանց (խԱ, եԼԺ, III, 2—Աբրահամյան)., քեզխուդեքանցը (ն. տ. 8), սատանեքանց (15, 105), եկեղեցքանց (61, 86), գուլբեքանց (68), փանջարեքանց (ՊՊ, եԺ, 1, 38), տոհեքանց (ն. տ. 49) Պշնամիքանց (74), փեսեքանց (79), ուռիքանց (80), չուխեքանց (110), քորփեքանց (118), խալիչեքանցովը (217). ուստեքանցից (228), աղչիկ>աղչըկէք>աղչկեքանց (123), նուռնիսկ հիմք/f-էր+անց կաղապարով՝ վուրթի>վուրթիք (ԳՍ, 30, 80) և վուրթկերանց (ն. տ. 64)՝ f>կ ապաշնչեղացումով։ Հմմտ. տղամարդքերանց (խԱ, եԼԺ, III, 38), ուր ունենք հիմք/իf+եր+անց. տղերքանց (ն. տ. 9, 19), այստեղ էլ հիմք/երf+անց։

Զևաբանական այս վերակազմավորումներն ընդգրկում են, ինչպես նշեցինք, նաև ձայնավորահանգ հիմմ+ան կամ՝+ստան կառուցածները. այսպես՝ ձի>ձիան‖ձիաննէր, էշ>իշվան‖իշվաննէր, թի>թիան‖թիաննէր, ձու>ձվան‖ձիաննէր (տե՛ս ՀԱ, ԼՔՀ, III, 717). Հմմտ. նաև՝ ձիանիր (ԳՍ, Պ, 69—Քրիլ. բրբ.), ձիաններուն (ՀԺՀ, IX, 18—Ալաշկերտ), ծիանքներ (ն. տ. 254—Մանազկերտ). վերջին օրինակում ունենք պատմականորեն հայտորոշած կրկնակի վերակազմավորում՝ ձի>ձիան>ձիանք>ձիանքներ. հիմմ/ստան+ներ վերակառուցումով՝ բ՛ալեէստաններ, բ՛աղեէստաններ (Կարնո)։

Ղարաբաղի բարբառում նկատելի են վերակազմավորման մասնակի երևույթներ. հղդ (<ուղի) բառի հոգնակին կազմվում է եզակի այդ ձևի տարբերակից՝ *հղղցկ-, որ անկախ գործածություն չունի, այլ է՝ հղղըսկրնկ. հմմտ. չեն եզակիից չը՛նը՛թկրնկ, ուր թ-ն ց-ի պարզեցումից ստացված մյուս տարրն է, Ակատեղ ունենք ցկ (>սկ‖թկ) անորոշ ձևաբանական տարր. եզ. ուղղ. հղդ, նզ. սեռ.-տր. հղղըցէն, անորոշ՝ հղղըցու, հոգն. ուղղ. հղղըսկրնկ, սեռ.-տր. հղղըսկրնէրէն։ Եթե ընդունենք հղղցէ ձևը, ապա կարող է լինել՝ հղղըսկրնկ. բայց հարցը դրանով չի վճռվում։

Ք-ի դիրքում ց հանդիպում է այլ բարբառներում. օր. դևեցներ (ՀԺՀ, IX, 466—Բաղեշ). սրանից էլ՝ դևեսներ (ն. տ. 164—Ալաշկերտ) ձևը։ Հմմտ. ձիաններու վրեն (ն. տ. 480—Բաղեշ), Հ՛օդա>Հ՛օդեսներ մեջ (ն. տ. 416). «էն տեղ պատավն չուր մըկա հըլա դաս կուտա սատաեսներու ձրգերուն» (ն. տ. 446—Բաղեշ). Նաև՝ դղեսուց (ՎՊ, ՍԲ, 87), էրախէսներ (ն. տ. 83)[28]։

Վերոհիշյալներից կարելի է անել այսպիսի հետևություն.

ա) Բարբառներում տիրապետող հիմքատիպը ձևաբանորեն չվերակազմավորված տիպն է։

բ) Մասնակի վերակազմավորում ունենք և հանգով, այն էլ ոչ բոլոր բարբառներում, և այդ հանգը կորցրած ոչ բոլոր հիմքերում։

գ) Հիմմ/ի+ներ կաղապարի զարգացումը ցույց է տալիս, որ ձայնավորահանգ հիմքատեսակը անհետացման ճանապարհին է։ Այդ է վկայում նաև հիմմ/ստան+ներ կաղապարի հաստատումը։

դ) Հիմմ/ան+ներ, հիմմ/էր+ներ, հիմմ/իր+ներ նաև՝ հիմմ/վը+ներ ևն զարգացումները վկայում են ան, վը, էր, իր հոդ-

---

[28] Բացառված չէ ի>ս հնչյունական անցում ընդհանրապես. այս տեսակետից հատկապես ուշագրավ է, օրինակ, էրիքներ‖էրիքսներ տարբերակների գոյացումը նման անցումով։ Սա, իհարկե, հնչյունաբանական երևույթ է։

նակերտների գործածության է՛լ ավելի նեղացման, դրանց իմաստի մթագնման, մի խոսքով մահացման պրոցեսի մասին։

Գ) Գոյականաբար գործածվող բառերի հոգնակիակազմությունը. փոխանունների հոգնակին: *Այլ խոսքի մասերը գոյականաբար գործածվելիս կարող են կազմել հոգնակի ձևեր։ Սովորաբար դրանք հետևում են համապատասխան հոգնակիակազմության-ներին. միավանկ հիմքերը զուգորդվում են էր, բազմավանկներ՝ ներ, ներ, ներ հոգնակերտների հետ, նայած տվյալ բարբառի համապատասխան զուգորդումների տիպոլոգիային։ Ըստ այդմ Ղարաբաղի բարբառում միավանկները պետք է ստանան էր, որ և այդպես է՝ մեծը>հոգն. ուղղ. մեծերը (սեռ.-տր. մըծէրէն), լավ>լավէրը, լը՝վէրէն, սեվը (<սևը)>սեվէրը, սըվէրէն, իսկ բազմավանկների հոգնակի ուղղականում՝ ներ, սեռ.-տրականում՝ ներ. այն է՝ օրիշը (<ուրիշը)>ուրիշներ (սեռ.-տր. ուրիշներէն), մրնացածը>մրնըցծներ, սեռ.-տր. մրնըցծներէն, աստծը>ըսծներ, սեռ.-տր. ըսծներէն։ Այսպես և՝ Արարատյան բարբառում համապատասխանաբար պետք է լինեն էր, ներ. մեծերի (ԽՎ, ԵԼԺ, III, 137), աբածներբ, աստծները (ն. տ. 2), էկողներին (8), գնացողները (9), ուրիշներն (11), մեկելներն (32), հազարները (124), լսածները (ՊՊ, ԵԺ, 1, 157), բեզարածների (31), խոսածներս (37), ուրիշներ (41), մնացողները (69), վատերը (98), Թբլիսիի բրբ.՝ իր (ներ) և ներ (ներ) մեկելներն (ԳՍ, Պ, 26), մնացածներբ (ն. տ. 111), թխողներուն (ԳՍ, ԸԵ, 26), ծախողներբ (ն. տ.), պատկներուտ (38), հարուրներբ (50), ուրիշներբ (ն. տ.)։*

Գործածական են նաև փոխանունության հոգնակի ձևեր, մանավանդ դերանունների փոխանուն սեռականների հոգնակիներ։ Վերջիններբ Ղարաբաղի բարբառում հավաքական կազմություն ունեն ումբ-ով՝ մերումբ, ձերումբ, ուրացը (մերբ. ձերբ ձևերի հոգնակին)։

Դ) Փոխառյալ բառերի հոգնակիակազմությունը: *Փոխառյալ բառերբ բարբառներում հետևում են թվակազմության նույն կանոններին, որոնք բնորոշ են տվյալ բարբառին։ Միավանկ բազաձայնահանգների զուգորդվում են էր հոգնակերտի կամ նրա տարբեր զարգացումների (իր, ար, յ ան) հետ. սոյ «ազգական»>սոյեր (Ասուրիալ), յաղ (<թրք. yaz)>յաղեր (Պոլիս), ֆին (<fes)>ֆէսեր, ղոզ (<թրք. qaz.>ղազեր (Կիլիկիա), ծէլ (փոխառ. վրացերենից)>ծէլեր (Արգվին), նաև՝ դօստիր (Թբիլ.), դիզեր, թօզեր (Ղրբ.), գօլեր (Կեսարիա) և այլն։ Բազմավանկ-բազաձայնահանգներբ զուգորդվում են տվյալ բարբառում առավել գործածական*

հոգնակերտների հետ. այսպես՝ Թբիլիսիի բրբ. նիւ՝ զօղալնիր, զօնաղնիր, Արարատյանում նէր՝ բօղազնէր, օղլուշաղնէր, Ղրբ. նէ՝ բստրքընէ (<ռուս. стакан>բստաքան), համմտ. Հադրութի բրբ. շամադաննէ (ԱՊ, ՀԲ, Ն, 333), զըլլըզնէ (ն. տ. 348), մէնշէվիկնէ‖մէնշէվիկէր (ն. տ. 334—335)։

Պատահում են կազմավորումներ, որոնք հետևում են հնատիպ, ոչ-համակարգային կառուցածների և կամ երկրորդական ձևերի. այսպես՝ Աստխալի բարբառում շօգոտօլներ «տոնավաճառներ», գիգիձարներ «մանրավաճառներ» (փոխառ. հունգարներենից), բայց դրանց կողքին՝ յէմիշ (թրք. yemiş)>յէմիշ-էսգան (օրի. նակները Հ. Աճառյանի «Աստխալի բարբառը» գրքից)։

Փոխառյալ բառերը ևս հաճախ հետևում են հիմքային վերակազմավորումների նույն օրինաչափություններին, ինչ որ նկատում ենք ոչխալ բարբառում։ Հայտնի է, որ երկվանկ և բազմավանկ ձայնավորահանգ հիմքերը մեծ մասամբ և շատ բարբառներում, ղուգորդվում են ը հոգնակերտի հետ, հայտնի է նաև, որ այդ հոդնակերտից առաջ ունենք ձայնավոր վերջնահնչյունի փոփոխություն, ասենք, ա>է։ Այսպիսի փոփոխության հետևում են նաև փոխառյալները. գ՛ըաբա>գ՛ըբէգ՛, պօժկա>պուժկէգ՛, բանկա>բընկէգ՛, ակուշկա>ակուշկէգ՛, վէդրա>վը՛դրէգ՛, ըրբա>ըրբէգ՛, շուշա>շուշէրգ՛, ուստա>ուստէգ՛, թուլա>թուլէգ՛ (Ղրբ.), յարա>յարէգ՛ (ըստ ՀԱ, ՎԲ, Ն, 211) և այլն։

Եթե փոխառյալ միավանկ բառի սկզբում կա ս+բաղաձայն կամ շ+բաղաձայն հնչյունակապակցություն, ապա դրանք հայերի հնչարտաբերական միտումին համապատասխան մեծ մասամբ վերածվում են ձայնավոր (ի, ու, ը)+ս+բաղաձայն կազապարի, և բառն ընկալվում է իբրև երկվանկ. հետևապես հոգնակիակազմության մեջ գուգորդվում են երկվանկների պես. օր. стол>բստօլ (Ղրբ.)>բստուլնէ և ո՛չ ստօլէր)։ Բայց, օրինակ, Ն. Նախիջևանի և Աստխալի հայերը, միջավայրի ազդեցությամբ պայմանավորված, նման բառերը իբրև միավանկ էլ ընկալում ու արտասանում են. ահա թե ինչու՝ ստ՛օլ>ստ՛օլեր (Աստխալ)։ Ռուս բառը հնչում է բռուս‖ուռուս, որի պատճառով՝ ռուներ (խև, եկժ, III, 84), բռուսնէ‖ուռուսնի, (Ղրբ.)։

Ե) Հոգնակիակազմություն և հոդառություն: *Ստացական հոգնակիներ։ Բառի եզակի և հոգնակի ձևերը կարող են զուգորդվել հոդերի հետ՝ արտահայտելու համար տարբեր առումներ (որոշյալ, ստացական, ցուցական, դիմորոշ)։ Բարբառներում հոգնակերտների հետ որոշիչ հոդերի զուգորդելիությունը գրեթե սահմանափակված չէ, մանավանդ էր-ի և նէր-ի հետ։ Այլ հոգնակերտների հետ նկա-*

տելի են շատ չնչին սահմանափակումներ. համմտ. կընանէք՛ը, դընօտէնք՛ը, մարթուցը, կընանուցը, խօխէք՛ը «երեխաները», մարթիք՛ը (Ղրբ.), տղեքը (ՊՊ, Եժ, I, 27, Աբրահամյան), մարդիքն (39), աղչկերանցը (34), մարդիքը (ԽԱ, Սկժ, III, 8, Աբրահամ.), կնանիքը (Ն. ա.) քեդխուդեքանցը (8), ձիանը (Ն. ա.)։ Ղարաբաղի բարբառի Ջրաբերդի խոսվածքում աձի, ուժ||ուժ հոգնակերտների դեպքում բառերը որոշիչ հոդեր չեն առանում (Սրհականք, Վռոմձնք, պապունք). փոխանուն սեռական ձևերը թ||ն հոդով են՝ Սհականցը, պապունցը։

Հոգնակերտ+հոդ կաղապարը առկա է հիմնականում ուղղականի (ուղիղ) ձևերում. սեռական-տրականում այդ հնարավոր չէ էր, նէր հոգնակերտների դեպքում։ Ընդհանրապես թնք հոլովաձևերում հոգնակերտը և հոդը միջնորդվում են հոլովական վերջավորություններով։ Սովորաբար այդ այդպես է նոր հայերենում առհասարակ։ Յուցադրենք այս Ջրաբերդի խոսվածքից բերված օրինակներով.

ուղղ.-հայց.	սար-էր-ը	մըղըկ-նէ-ն «բակերը»
սեռ.-տր.	սըր-էր-է-ն	մըղըկ-նէր-է-ն,
բաց.	սըր-էր-ա-ն	մըղըկ-նէր-ըմ-ը
գործ.	սըր-էր-ավ-ը	մըղըկ-նէր-ավ-ը
ներգ.	սըր-էր-ըմ-ը	մըղըկ-նէր-ըմ-ը

Թնք ձևերում, ինչպես նկատելի է, գործում է հիմք+հոգնակերտ+հոլովակերտ+հոդ կաղապարը։

Կառուցվածքային այսպիսի տիպոլոգիա ունեն նաև հոգնակերտների և առացական հոդերի զուգորդումները. ընդ որում հիմք+էր||նէր+ս կաղապարը գործածվում է նշակի առաջին դեմքի հարաբերությամբ առացականություն արտահայտելու համար. օր. ձերֆ-էր-ս (Ղրբ.) «իմ ձեռքները», հիմք+էր||նէր+ը կաղապարը՝ երկրորդ դեմքի հարաբերությամբ՝ ձերֆ-եր-տ «քո ձեռքերը», հիմք+էր||նէր+ը՝ երրորդ դեմքի հարաբերությամբ՝ ձերֆ-էր-ը «նրա ձեռքերը»։

Սակայն հոգնակի երնք դեմքերի հարաբերությամբ առացականություն արտահայտելու համար այս կաղապարները պնաքական չեն, նվ քանի որ ս. ը. ն հոդերը ի վիճակի չեն իրենց վրա վերցնելու այդ ֆունկցիան, ապա առնղծվում է բառաձևի նոր կաղապար՝ հիմք+զույգ հոգնակերտ+առացական հոդ։

Արաբաոյան բարբառում առացական հոգնակիականություններ ուղղական-հայցական (ուղիղ) հոլովում ունի հիմք+նէր+առացական հոդ կաղապարը, թնք հոլովներում՝ հիմք+նէր+հոլովա-

կերտ+ատացական հող կաղապարը. այսպես՝ «սերի կրակը բերել են գոռով ծոցները լցրել» (ՊՊ, ԵԺ, I, 55), «աչքները մինը մի պարկ դառավ լալուցը» (Ն. ու. 64), այսպես և՝ մեղքները (Ն. ու. 68). քնքները (69), բաններս (86), ձեռները (116), ուխտները (123), քեֆներդ, հալներդ (136), հացները (144), «կամ աղներդ կըլի պակաս, կամ մաղներդ» (179), բահները (209), փորներս (210), գործներդ (219), բոները (245), թեք հոլովաձևերում՝ «մուխը պչշներիցը էլ դուրս գա» (Ն. ու. 37), «ամենն իրանց ազիզ մեռելների անունը տալիս ու դոշներին բոնցքում էին (64)», իրանց էրեխեքանց ուսներիցը (65), նաև՝ խոսքներիցը (41), աչքներիցը (64). տեղներիցը (71), ծոցներումս (116), կողքներին (123)։ Միասում է նկատվում, թեև թույլ չափով, դեպի անհնչյունափոխ հիմքերի գործածություն. օր. պինչները (ՊՊ, ԵԺ, I, 241), կումները (57), չիբներումը (70), սիրտները (ԽԱ, ԵԼԺ, III, 17), բայց՝ պըչներիցը (ՊՊ, ԵԺ, I, 37), սրտներն (ԽԱ, ԵԼԺ, III, 28)։

Քանի որ միավանկների սովորական հոգնակին էր-ով է, ապա հիմ+ներ+ատ. հող կաղապարը միանգամայն հարմար է բուսացական հոգնակիի գաղափար արտահայտելու համար։ Բայց մեկից ավելի վանկանիները սովորական կամ բուն հոգնակին կազմում են ներ-ով։ Այս դեպքում արդեն բուն հոգնակի և ստացական հոգնակի հակադրությունը չեզոքանում է[29], այսպես՝ ականջներդ կարող է նշանակել և՛ «քո ականջները», և՛ «ձեր ականջները»։ Նման դեպքերում տարբերակման լրացուցիչ, երկրորդական միջոցները (ասենք, խոսքային միջավայրը, կոնտեքստը) առաջին պլանի վրա են մղվում։ Այսպես՝ ստացական հոգնակիի նշանակությամբ են գործածված՝ «Համա զո՛ւր եք հոգիներիդ մեղք անում» (ՊՊ, ԵԺ, I, 38), «Հա քնչաք գլխներիցդ դուս ովեք, հոգիներդ դուս գա» (44), «աղեքը երեսները փախցնում էին» (66), «Հավատներս չլիս պակսել ա» (91), «ուժուտներս կտրենք (92), «կնբած խմածներդ» (109), «գալուստներդ բարի» (138), «բերաններ բաց մնաց» (136), նաև՝ առաջները (168), լիվրներս (172), շալակներին (185), ականջներին (210), շապկները (268), «եղևներիցս մարդ են քցել (ԽԱ, ԵԼԺ, III, 133), «արիճներս էլ եռ ա գալիս» (81), «չալակները ովին, տարան» (Ն. ու.), «խաթրներիցը

---

[29] *Այսպիսի չեզոքացում բացառված չէ նաև միավանկների համապատասխան կազմավորումներում. համմ. «ցանցառ մարդ բլա ում գիմաց բզբրտուդ բանաք» (ՀԱ, ՔԱոՐ, Ն, 217)։*

անց չենք կենում» (24), «*ճամածներր բուրդ ա ու շալ» (25),* «*երեսներր լվացին» (7),* «*մազրներր հուսած, համակներին քցած» (8). Համմ. Թբիլիսիի ըրբ.* «*բողազներուս դուրս է կտրվում (ԳՍ. պ, 53)*», *ճամուսներուս կտրվեցավ (Ն. տ. 121),* «*վուր աճումներուն չկուտրվի» (141), երեսներուս (50).*

Սակայն ըստ ՀԱ, ԵԼԺ, III-ի տվյալների Արարատյան բարբառի համար վերր ցուցադրված կաղապարը պետք է ներկայացնել այսպիսի տեսքով՝ հիմք+ը+ներ+ստացական հոդ.: Այսինքն՝ հիմքի և հոգնակերտի միջև ներմուծվում է ը ձայնավորական տարր. այն է՝ սովորական հոգնակիի հիմք+ը=ստացական հոգնակիի հիմք, որին ավելանում է ներ հոգնակերտ.

սովոր. հոգն.	*ստաց. հոգն.*	*սով. հոգն.*	*ստաց. հոգն.*
ձեռն-էր-ո	***ձէռը-նէր-ո***	***աչք-էր-ո***	***աչքը-նէր-ո***
մրտք-էր-ո	***մրտքը-նէր-ո***	***ոտն-էր-ո***	***ոտը-նէր-ո***
թև-էր-ո	***թևր-նէր-ո***	***մատն-էր-ո***	***մատը-նէր-ո***
կըռն-էր-ո	*կըռը-նէր-ո*	*խօսք-էր-ո*	*խօսքը-նէր-ո*
ուս-էր-ո	*ուսը-նէր-ո*	*քրթ-էր*	*քրթը-նէր-ո*
ոշ-էր-ո	*ոշը-նէր-ո*		
ձէն-էր-ո	*ձէնը-նէր-ո*		

Այս կաղապարը, ինչպես նկատեի է, հնարավորություն է տալիս նաև երբեմնի ն հանգը վերականգնող հիմքերից ևս ստացական կազմավորումներ ունենալ, որ գրական լեզվում գրեթե հնարավոր չէ. այսպես՝ գրական հայերենում մատներդ կարող է նշանակել «քո մատները» և «ձեր մատները», մինչդեռ Աբովյանի մոտ դրանք հստակ տարբերակված են՝ մատներ և մատրներ: Այս տարբերակումը իր ընդհանուր գծերով ունի այսպիսի տեսք. միավանկ հիմքը ը տարրի ներմուծումով վերածվում է երկվանկի, ապա և զուգորդվում է ոչ թե էր, այլ ներ հոգնակերտ միավորի հետ. «*կրակ ա դուս գալիս լեռղներից*» *(ՀԱ, ԵԼԺ, III, 115),* «*գոգրներրդ առնելով*» *(Ն. տ.).* «*Քաջ եպիսկոպոսը իր ընտիր հայերով նրբանց քամակը կտրեց, զորքրներր կոտորեց» (122),* «*ջանքներուսմն էլ սաղ տեղ չկար» (127),* «*արյան ծովն էկել, չորս կոզմրներս բռնել ա» (132),* «*ուշրներն էկան» (144),* «*կրակ չի՛ վառվել հո ոտրներիս տակին» (70),* «*տոնրներր շնորհավորեն» (78),* «*հացրներս էլ ա հարամ ըլում, ժամրներս էլ» (83),* «*թե վերջրներր ինչ կըլի» (84),* «*ձեներ փորրներումը մնաց» (85),* «*ճարրներր կտրվում էր» (87),* «*էրրրների տակին (8),* «*ոտներր քարին, գետին էին ծեծում, մորրներր խփում» (9),* «*ձեորրներր դոշրներին դրած» (22).*

«Ուզեցավ՝ որ ներս մտնի, ու դռնաղներին բար լիս ասի ու գալը-ները չնորհավորի» (28), «Ֆոքթներն են կապրները կտրել» (29), «վերջըներս բարի անես» (33), «Բեֆրները չաղացավ» (35), «ձեորներր ծոցրներումը դրել ու պատի ծերիցը մոխկ էին տալիս» (38).

Որոշ երկվանկներ, որոնք նշում են տվյալ անձին պատկանող եզական օրգան (գլուխ, միրուք, բերան ևն), հոգնակի ձևում մեծ մասամբ ստացական իմաստ ունեն, հետևում են միավանկների ցուցադրված կաղապարին. «միրքըները սանդրեցին» (ն. տ. 109), «բերըների չուրը գետում էր» (4), «տան չահել աղկերքն էլ՝ գլխըները սանդրեցին» (8), նույնիսկ միավանկ վերջնաբաղադրիչով բառերից՝ «ձեռնըմերներս տարար, մեզ էլ տաներր» (116). Համմտ. նաև՝ «փիլոնները կռնատակներին գրից էին անում» (79).

Ըստ ԳՍ, Պ, և ԳՍ, Ըե-ի տվյալների Թբիլիսիի բարբառում ստացական հոգնակիների հիմքի և նիր (նէր) հոգնակերտի միջև ներմուծվում է է ձայնավորական (հիմքակազմ) տարրը։ Այս դեպքում գործ կունենանք հիմք/է+նիր (նէր)+ստաց. հոդ. կաղապարի հետ. հոքենըրուս (ԳՍ, Պ, 33), աչքենըրուս (ն. տ. 37), փուղենըրուս (142), վիրչնըրուս (ԳՍ, Ըե, 41), քափենըրուս (42), ածկենըրուս (82), ձեռնենըրիմես (163, 221), բայց և՝ սրտնըրուն (ն. տ. 83).

Ըստ ԿԴ, ԼՂԲՔ, 95—96՝ Ղարաբաղի բարբառում ստացական կազմավորումների միավանկ հիմքերը զուգորդված են ըրնէ||ըրնի էրնի զույգ հոգնակերտների, բազմավանկները՝ ներնէ||ներնի||նէրնի զույգերի հետ։ Ջրաբերդի խոսվածքի մեր անձնական դիտարկումները բերեցին այն համոզման, որ երկվանկ-բազմավանկ հիմքերով ստացական հոգնակիականությունները խիստ բացառիկ օրինակներ են. ընդ որում այդ խոսվածքում միավանկ հիմքերը զուգորդված են –ըրնէ–(<–էրնէ) զույգ հոգնակերտների հետ՝ ուղղական-հայցականում, –ըրնէր կրկնակի հետ՝ թեք հոլովաձևերում։ Այսինքն՝ հոգն. ուղղ.-հայցականում ունենք հիմք+զույգ հոգնակերտ+ստաց. հոդ կաղապարը, թեք. հոլովաձևերում՝ հիմք+զույգ հոգնակերտ+հոլովակերտ+ստացական հոդ կաղապարը։ Ստորև ցուցադրում ենք այս կաղապարների կանկրետ գրսևորումները Ղարաբաղի բարբառի Ջրաբերդի խոսվածքից բերված փաստերով։

եզ. ուղղ.	ստաց. հոգն. ուղղ.
աշկ (<աչք)	*ըշկ-ըրնէ-տ*
գ՛ուրգ՛ (<գիրկ)	*գ՛ուրգ՛ըրնէտ*
գինք՛ «մարմին, իրան»	*գը՛նք՛ըրնէտ*

լաց (<լաց)	լը՝ցըրնէտ
լէշ «մարմին»	լը՝շըրնէտ
խելք	խըլքըրնէտ
խեղճ (<խիղճ)	խըղճըրնէտ
խօսկ (<խօսք)	խուսկըրնէտ‖խուսկուրնէտ
ծեծ (<ծիծ)	ծըծըրնէտ
ծերք (<ձեռն)	ծըրքըրնէտ
ծուց (<ծոց)	ծուցըրնէտ‖ծուցուրնէտ
ճեռ (<ձիռ)	ճըտըրնէտ
մաղ	մըզըրնէտ
մէխկ (<մեղք)	մը՝խկըրնէտ
մես (<միս)	մըսըրնէտ
մեռկ (<միտք)	մըտկըրնէտ
միշկ (<մէջք)	մը՝շկըրնէտ
շօր (<շոր)	շո՞ւրըրնէտ‖շուրուրնէտ
պան (<բան)	պը՝նըրնէտ
պօրտ (<պորտ)	պուրտըրնէտ‖պուրտուրնէտ
սերտ (<սիրտ)	սըրտըրնէտ
վնզ (<վիզ)	վըզըրնէտ
վէրչ (<վերջ)	վը՝րչըրնէտ
տօն (<տուն)	տընըրնէտ
տո՞շ (<դոշ «լանջ»)	տու՞շըրնէտ‖տուշուրնէտ
փէշկ (<փեշ)	փը՝շկըրնէտ‖փը՝շկըրնէտ
ք՛էփ (<քեփ)	ք՛ը՝փըրնէտ
օժ (<ուժ)	ուժըրնէտ‖ուժուրնէտ
օշ (<ուշ‖ուշք	ուշըրնէտ‖ուշուրնէտ
օս (<ուս)	ուսըրնէտ‖ուսուրնէտ

առաց. սեռ.–տր.

ըշկ-ըրնէր-է-տ

գ՛ուրգ՛ըրնէրէտ

գը՝նք՛ըրնէրէտ

լը՛ցըրնէրէտ

լը՝շըրնէրէտ

խըլքըրնէրէտ

խըղճըրնէրէտ

խուսկըրնէրէտ‖խուսկուրնէրէտ

ծըծըրնէրէտ

ծըրքըրնէրէտ

ծուցըրնէրէտ‖ծուցուրնէրէտ
ճրատըրնէրէտ
մրզըրնէրէտ
մը՝խկըրնէրէտ
մրսըրնէրէտ
մրտակըրնէրէտ
մը՝շկըրնէրէտ
շաւըրնէրէտ‖շաւրաւրնէրէտ
պը՝նըրնէրէտ
պուտըրնէրէտ‖պուտուրնէրէտ
սըրտըրնէրէտ
վրզըրնէրէտ
վը՝ղըրնէրէտ
տրնըրնէրէտ
տուշըրնէրէտ‖տուշուրնէրէտ
փը՝շկըրնէրէտ
(փը՝շկըրքնէրէտ)
ք՛ը՝փըրնէրէտ
ուժըրնէրէտ‖ուժուրնէրէտ
ուշըրնէրէտ‖ուշուրնէրէտ
ուսըրնէրէտ‖ուսուրնէրէտ

Գրական լեզվի միտքերս ձևին այստեղ համապատասխանում է՝ մրտկըրնէս, իսկ մրտրրնէս նշանակում է «մեր հիշելը», մրտրրնէտ «ձեր հիշելը». հագիդ կառուցածևի դիմաց առկա է՝ կ՛էցրտ, հագներդ>կ՛ը՝ցրրնէտ: *Ինչպես* նկատելի է գրական հագներս (հագներդ, հագներր) ձևերում եզակի համապատասխան հիմքերի վերջնահանգ ի-ն (հագի-ս) ընկնում է։

Երկվանկաբազմավանկների ստացական հոգնակերտություն, ինչպես ասացինք, խիստ սահմանափակ դրսևորում ունի. ընդ որում պետք է նկատել, որ ներ հանգն ունեցող երկվանկները (օր. *կօռնը, ծօնգնը, մաննը*, նաև եռավանկ՝ *կըրօնգնը*) հոդնակիանալու հիմքում կորցնում են ը ձայնավորական տարրը և հետևում են վերը ցուցադրված կազապարին. *մաննը>մրնն-ըրնէ-տ, վեննը>վրնն-ըրնէ-տ, ծօնգնը>ծունգն-ըրնէ-տ (ծունգն-ուրնէ-տ), կօռնը>կուռն-ըրնէ-տ (կուռն-ուրնէ-տ). սրանց հետևողությամբ* նաև՝ *կըրօնգնը>կըրունգն-ըրնէ-տ (կըրունգն-ուրնէ-տ)։ Մյուս կարգի երկվանկները, որոնց սովորական հոգնակին նէ հոգնակերտով է, բնականաբար չեն կարող երկրորդաբար* նէ տարր օգտագործել, *ուստի կա՛մ հետևում են միավանկներին* հատուկ կազապարին՝

հիմք+ըրնէ+ստաց. հոդ, կա՛մ ստացական հոգնակիությունը իմաստով է ընկալվում.

այսպես՝ կ՛ըլօխ բառը, որ ունի կըլխընէ սովորական հոգնակին, կազմում է կըլխընէտ կամ կըլխըրնէտ «ձեր գլուխը» ստացականը. նաև՝ անջուկ>ընջուկնէ>ընջուկըրնէտ «ձեր ականջը», լուզի>լուզվիք>լուզվըրնէտ «ձեր լեզուն». Բայց ստացական իմաստ կարող են ունենալ սովորական են մասնիկով մի քանի հոգնակի կազմավորումներ. օր. բոբխնէտ «ձեր բերանը», ը՛ր՛նէտ «ձեր երեսը»։

Նոր Ջուղայի բարբառում կա հիմ+էր-ան+ստաց. հոդ կազապարը. խաց-էրանի-ս, խաց-էրանի-դ, խաց-էրանի-ն, նաև՝ մատնէրանիս, բերաննէրանիս, նույնիսկ՝ մատանըքնէրանիս (ըստ Հ. Աճառյանի)։ Դերսիմի խոսվածքներում, Պոլսի, Հաճընի, Մալաթիայի բարբառներում սովորական է հիմ+էր-ի+ստաց. հոդ կազապարը. օր. ձէռքէրնին (ՈՒՔ, ԴՒՔ, Ն, 48). Համմտ. նաև ցարքէրնին, ձունգիրնուն, խէյրէրնուդ, շարէրնուդ (Ն. տ. 245)։ Ուրմիայի բարբառում ստացական իմաստավորումը կապվում է Ի՛Նչ հոգնակերտի հետ. տընըք՛էրս (ՄԱ, ՈւԽՒ, 92). առկա է անցումային հնչյուն հիմքի և հոգնակերտի միջև. համմտ. նաև՝ Թուք՛ըք՛էրը «Թուքները» (Ն. տ. Նմուշ., 174), սրատրք՛էրը «սիրտները» (Ն. տ. 177), փորրք՛էրը «փորները» (Ն. տ.)։ Վոռու խոսվածքում ստացական հոգնակին գրեթե նույնական է Ուրարտյանի և գրական լեզվի կազմավորումներին։ Տարբերությունն այն է, որ խոսվածքում ստացական հոդից առաջ հաճախ (ը)>ու ձայնավորում է լինում խելՒնէրուն գնում ա (ՄԱ, Լխ, Ն, 163), ծոՒնէրուտ ըրէվում ա (Ն. տ. 168), սասնէրուն կըտրէն (Ն. տ. 167), բայց նաև՝ ճարնէրս (Ն. տ. 170)։

Ամասիայի խոսվածքում կարող է գործածվել նվէր (<վրնէր) մասնիկը՝ նույն ստացական երանգներով[30]. համմտ. նաև՝ եռվներեն (ՀԺՀ, IX, 543-Ախալքալաք). բացառիկ ձև է (է)ստրնի մասնիկով (<ստան-նի) կառուցածը. «Ախր՛ք... հոֆեստրնուդ մեռնիմ» (Ն. տ. 526) «ձեր հոգուն» նշանակությամբ։

Բարբառներում ևս, ինչպես նոր հայերենում առհասարակ

---

[30] Այդ մասնիկի մասին Հ. Աճառյանը գրում է. «Քերականության մեջ չշտապավ է հոգնակի նվեր մասնիկը, որ ուրիշ բարբառների մեջ երկակիի վրներ մասնիկին է (ոտվրներ, ձեռվքներ են), բայց այստեղ շրջվել է և դարձել հոգնակիի համար բնդհանուր մասնիկ. ինչ. ապրիկնըվեր, երեսնըվեր են։ Միևնույնը գործածվում է նաև ստացականի համար. ինչ. ձեռնըվիս, տունըվիդ (այն է՝ ձեռվրնիս, տունվրնիդ) են» (ՀԱ, ՀՀՊ, II, 351)։

որոշ անխզական կապեր դուգորդվելով ստացական հոդի հետ՝ ձեռք են բերում մակբայական-պարագայական կիրառություններ։ Նման դեպքերում ստացական հոդը փոխարինում է կապակցության անձնական դերանվամբ արտահայտված բաղադրիչներին. հետ—ս, հետ-դ, հետ-ը (կամ հետ-ն). մոտ-ս, մոտ-դ, մոտ-ը (կամ մոտ-ն)։ Սրանց համարժեք են՝ ինձ հետ, ձեզ հետ, նրա հետ, ապա և՝ ինձ մոտ, ձեզ մոտ, նրա մոտ կապակցությունները (վերլուծական ձևվերը). այստեղ դերանունները տրական հոլովի կառուցաձևում են[31], նույն կարգի՝ բայց հոգնակի դերանուններով կապակցություններին համարժեք՝ ստացական հոդով կազմավորումներ հնարավոր չեն, այսինքն՝ կապ+ստաց. հող կաղապարը գործածական չէ, և հնարավոր էլ չէ։ Ահա թե ինչու մեզ հետ, ձեզ հետ, նրանց հետ կապակցությունների դերանվանական բաղադրիչների գաղափարը արտահայտվում է զույգ հոգնակերտի և ստացական հոդի զուգորդմամբ, այսինքն՝ կապ+զույգ հոգնակերտ+ստացական հող կաղապարով։ Արևմտահայ գրական լեզվում այդ հոգնակերտն է եր-ենի, որ գործածական է առհասարակ ստացական հոգնակիակազմություններում. հետերնիս (հետ-երնի-ս) «մեզ հետ». արևվելահայ գրականում՝ կապ+ներ+ստացական հող. օր. հետներս (հետ-ներ-ս)։

Բարբառներում ևս նման դեպքերում գործում է ստացական հոգնակիակազմություններին հատուկ զույգ հոգնակերտը։ Այսպես՝ Ղարաբաղի բարբառում այդպիսի զույգ հոգնակերտ է ըր-ներ. սերտ (<սիրտ)>սըրտըրներս (սրտ-ըրներ-ս) «սիրտներս». կապերի հետ՝ միչ (<մէջ)>մըչըրներս «մեջներս». այսպես և՝ տրկըրներս «տակներս», տըղըրներս «տեղներս», հըտըրներս «հետքներս, մեր տանատեղերը, մեր հետքերը»[32], հըտըրներըս «ետևներիցս, մեր ետևից». իսկ գրական լեզվի հետևյալ ձևին այս բարբառում սովորաբար համապատասխանում է այլ կազմություն՝ մըզներս (մեզ հետ), ծըզներհետ (=ձեզ հետ). համմտ. կօշտս «մոտս» և քըշտըրներս մոտներս. առէս (=ձեռքիս) ձևին համապատասխան հոգնակիում ունենք ըրներէս||ըրներէս «ձևռքներիս»։ Ընդհանրապես թեք հոլովաձևերում գործում է ըր-ներ զույգ հոգնակերտը. ճըշտըրներս «մոտներս», ճըշտըրներըս «մոտներիցս»։

---

[31] Թե դերանունը ո՛ր հոլովով պետք է վերցնել, այդ կախված է ուժյալ կապի իմաստական հատկություններից. համմտ. մեր մեջ, բայց՝ մեզ հետ։ Արևմտահայերենում երկու դեպքում էլ կարելի է գործածել մեր։

[32] Սա ստացական հոգնակի է։

Այս երևույթը ուրույն կազմավորումներով տարածում է գտել գրեթե բոլոր բարբառներում։ Արարատյանում առկա է կապ-ներ+ստացական հոդ կաղապարը. օր. ժամ գալիս ճետները բերում էին քցում տակները (ՊՊ, ԵԺ, I, 39), քիչ էին թաքուն խոսում վրները (ն. տ. 75), միջներդ (ն. տ. 137), վրներիցը (ն. տ. 125). տերտերն էլ մեջրները քցած (ԽԱ, ՆԼԺ, III, 19), ձագը տակներին (ն. տ. 20)։

Ինչպես տեսանք ստացական հոգնակիակազմության կապակցությամբ, որոշ բարբառներում հոգնակերտից կամ նույնիսկ հոդից առաջ հնարավոր է ձայնավորում։ Արարատյան բարբառում հաճախ հանդիպում ենք ը ձայնավորման (հոգնակերտից պնդմիջապես առաջ), որ և մասամբ երևում է հենց նոր բերած օրինակներից. օր. մէջ-ը-նէր-ը։

Ղարաբաղի և Արարատյան բարբառներում դիտարկված կապակարները չնչին տարբերություններով նկատում ենք այլ բարբառներում ևս. հմմտ. էտնք ճետները պաշար կառնեն (ՀԺՀ, IX, 516-Ախալքալաք), ճէղէրնին (ՈՒ, ԴՒՔ, Ն, 54), վրաներ (ՀԱ, ՔԱռՒ, Ն, 217)։

Որոշ բարբառներում համակարգայնորեն կամ զուգահեռաբար ֆունկցիավորում են նաև այլ բնույթի զույգ հոգնակերտներ. վը-ներ, վը-նի. Ուրմիայի բարբառում նաև՝ (ը)ք'եր. մէջվրնէր «մեջները» (ՀԱ, ՔԱռՒ, Ն, 217), հէդվընիս «ճետներս» (ՀԱ, ՀՒ, Ն, 195), հետվնին (ՀԺՀ, IX, 543-Ախալքալաք). տեղք'երը «տեղները» (ՄԱ, ՈՒՒ, Ն, 174)։

Զ) Ոչ-համակարգային և հնատիպ հոգնակիակազմություններ. Նորակազմ ձևեր: Ոչ-համակարգային հոգնակիակազմություններ, ինչպես ընդգծել ենք, այն կառուցաձևն է, որն ըստ էության տրվյալ լեզվավիճակի սիստեմային օրինաչափություններով, նորմաներով չի պայմանավորված, հնատիպ է, անցումային շրջան է ապրում և կամ նորակազմ ձև է։ Բարբառներում այդպիսի կազմավորումները հիմնականում կապված են f և ց հոգնակերտներով վերակազմավորված մասնիկների (անճ, էնճ, ուճ, անց, էնց, ունց են) զուգորդումների հետ։ Ինչ մնում է f պարզ հոգնակերտին, ապա սա դեռևս օրինաչափական է ձայնավորահանգ հիմքերի շրջանակներում՝ ի տարբերություն արևելահայ գրական լեզվի, ուր f-ով ձևերը արդեն հնաբանություն են, որովհետև ձայնավորահանգ հիմքերում ոչ թե f-ն է իշխում, այլ ներ մասնիկը, բարբառներում այդ անցումը չի ավարտված։

Բնական է, որ բարբառների ներքին զարգացումը տրդա-տր-

դամ–տրղամեել–տրղանել հակադրությունից վերջինը կատևի դեպի տրղա–տրղանել հակադրության հաստատումը, ինչպես այդ նկատվեց գրական աշխարհաբարի զարգացման մեջ։ Թեև բարբառները չունեն հարատևելու ճակատագիր, բայց տեղեկացը, միտումն այդ է։ Սակայն չպետք է և անտեսել այն հանգամանքը, որ լեզվի մեջ որոշ ոչ-համակարգային կազմավորումներ հարատևելու մեծ կենսունակություն են ցուցաբերում։ Այժմյան հայր–հոր, մայր–մոր ոչ-համակարգային ձևավորումները նախահայերենի շրջանից ցայսօր հնչում են հայի (և՛ գրական լեզվով խոսողի, և՛ բարբառախոսի) բերանում՝ համակարգային հոլովակազմություններին զուգահեռ։

Ոչ-համակարգային, կամ դեպի այդ անցում կատարող, կազմավորումները բարբառներում ևս այն առանձնահատկությունն ունեն, որ դրսևորվում են մասամբ կցական, մասամբ էլ թևքական տիպոլոգիայով։ Ընդ որում հոգնակիակազմությունը և հոլովակազմությունը հարացուցային առանձին ձևերում համատեղում են, իսկ այլ ձևերում՝ բաշխված են։ Սովորաբար ուղղական-հայցական և սեռ.-տրական հոլովաձևերում ունենք հիմք+հոգնակերտ-հոլովակերտ կաղապարը իսկ բացառական, գործիական, ներգոյական հոլովներում հիմք+հոգնակերտ+հոլովակերտ կաղապարը։ Այս կաղապարները ցուցադրենք Պոլսի բարբառից և Ջրաբերդի խոսվածքից բերված օրինակներով։

Պոլսի բրբ.		Ջրաբերդի խոսվածք (Ղրբ. բրբ.)
Ուղղ.-հյց.	դրղա-ք	տրղէ-ք՛
Սեռ.-տր.	դրղ-օց	տրղ-օց
Բաց.	դրղօց-մէ	տրղօց-ան (որոշյալ)
Գործ.	դրղօց-մօվ	տրղօց-ավը (որոշյալ)

Սեռ.-Տրականի օց հոգնակերտ-հոլովակերտը հաջորդ հոլովներում ձևաբանական վերակազմավորմամբ արժեքավորվում է սոսկ իբրև հոգնակերտ։

Բուն ոչ-համակարգայիններր բաղաձայնահանգ հիմքերի և Ո (թևք հոլովաձևերում համապատասխանաբար ց) հոգնակերտի, նաև դրանով վերակազմավորված մասնիկների, զուգորդումներն են, որոնք գերազանցապես երբեմնի հավաքականների մնացորդներ են, վերապրուկներ։ Այսպես, օրինակ, Ղրբ. բարբառում ունենք՝ ախպեր-ք, քրվէր-ք, բր՝րչէմն-էք՛, ըստեղ-էք՛, փէշկ-էրք, կ՛ումըշօտէնք՛ «գոմեշներ», հր՝րը՝նջ-օտէնք՛ «երինջներ», հր՝լը՝վուր-

օտէնք՛, գ՛ըղկ-օտենք՛, բլլըր-օտենք՛, խընըմ-օտենք՛, վրսկրս-օտենք՛, (սրանց հետևողությամբ նաև մի քանի ձայնավորահանգ-ներ՝ փրս-օտէնք՛ դրն-օտէնք՛. ապա և՝ սըրմ-արանք, հր՛նգ՛է-ունք. պապ-ունք, հրնէր-անք, Սրհակ-անք, Վռտ-ունք։ Մի քա-նի ձայնավորահանգներ առավել գործածական են էնի հոգնակեր-տով. գ՛ուլբա«գուլպա»>գ՛ուլբէնի, վէդրա (<ведро)>վը՛դրէնի, հա վգ՛ա «փոքրիկ խուրջին»>հր՛վգ՛էնի, կըտվէնի և այլն։ Համա-նման կազմավորումներ շատ կան բարբառներում։ Բերենք մի քա-նի օրինակներ. Արարատյան բարբառում ըստ ԽԱ, ԵԼԺ, III՝ տե-ղարենք, (61, 104), գեղարենք (91), ընկերտիք (106), տղերք (8), աղչկերք (17), ծնողք (116), ձիանք (83), քվերտանց (67), ընկեր-տանց (108), ընտեղրանք (ՊՊ, ԵԺ I, 37), տեքերտանց (8), փե-շիրք (124), խնամոնց (27, 37), ախպերտինք (90), տեքրտինք (90, 31), վարդիթերինք (17), համմտ. աղբրանք (ՀԺՀ, IX, 14-Ալաշկերտ), ձիավորտանք (Ն. տ. 188), օչխըրտեք (Ն. տ. 204), քուրվրտոց (115), տեղրանք (174), գումըշտանք (Ն. տ. 212-Մա-նազկերտ), աներտիք (Ն. տ. 211), փոդվանք (ԱՊ, ՀԲ, Ն, 347), վախտէրք՛ը (Ն. տ. 345), շինըթկընէ (356), ախպէրտինք (ՄԱ, ԼԽ, Ն, 171), աղպրդիք (ՎՊ, ՍԲ, 86), կեղծկանք՛ (ՄՄ, ՇԲ, Ն, 185)։

Ոչ-համակարգային կազմավորումների շարքը պետք է դասել մարդ և կին բառերի հոգնակիակազմություննները, որոնք առհասա-րակ հնաոճիպ են հայերենում։ Այս կարգի հոգնակի ձևերի կազա-պարները ուղիղ և թեք հոլովաձևերում վերը նշվածի (տե՛ս դրզա. տրդա բառերի օրինակը) ձևով է։ Բավարարվենք միայն մարթի՛ «մարդիկ» և կրնանէ՛ «կանայք» բառերի կազապարների ցուցա-դրումով (օրինակները Ղրբ.-ի բարբառով).

Ուղղ.-Հյց.	*մա՛րթ-իբ՛*	*կընա՛ն-էք՛ (հզ. կընէգ՛)*
Սեռ.-տր.	*մա՛րթ-ուց*	*կընա՛ն-ուց*
Բաց.	*մա՛րթուց-անա*	*կընա՛նուց-անա*
	մըրթո՛ւց-ան	*կընընո՛ւց-ան*
Գործ.	*մա՛րթուց-անավ*	*կընա՛նուց-անավ*
	մըրթո՛ւց-ավը	*կընընո՛ւց-ավը*

Հարացույցում բացառականի և գործիականի համադրական ձևերը, որոնք ներկայացված են որոշյալ առումով, սակավ գործա-ծական են. այնուամենայնիվ, այդ հոլովների երկու ձևերում էլ վե-րակազմավորումն ակնհայտ է։ Մյուս կողմից, թեև ուղիղ ձևերում ունենք f (կամ f-ի խումբ), իսկ թեք ձևերում ց (կամ ց-ի խումբ) և հոգնակերտի այս փոխարինումը (f>ց) սովորական էր հին հա-

յերենում, տարածված է բարբառներում, բայցևայնպես այստեղ ևս զգացվում է նոր կառուցածևի ներթափանցումը՝ էր-ի, ձէր-ի տիպոլոգիան. համմ. ուղղ.-հյց. կօխկէրքը, սեռ.-տր. կուխկէրք-էն, բաց. կուխկէրք-ան, գործ. կուխկէրք-ավը, ներգ. կուխկէրք-ըմը:

Բարբառներում նկատելի են հոգնակիակազմության նաև այնպիսի երևույթներ, որոնք չի կարելի դասել համակարգային կազմավորումների շարքը, բայց հնատիպ, հնաբանություն էլ չեն: Դրանք ավյալ բարբառի զարգացման ուրույն գործոններով պայմանավորված կազմություններ են, մեծ մասամբ գրական լեզվի կամ այլ որևէ բարբառի ազդեցության արդյունք: Հ. Աճառյանը վկայում է, որ Ագուլիսի բարբառում հանդիպում են էր հոգնակերատով զուգորդումներ՝ թխտէր, մտքէր, մկնէր, որոնք չեն հետևում այդ բարբառի հոգնակիակազմության տիպոլոգիային. նրանում **սովորական են աւ||ար հոգնակերատներով զուգորդումները (տե՛ս** ՀԱ, ՔԱՔ, 193), նշանակում է, թե բերված հոգնակի ձևերը գրական լեզվի կամ հարևան որևէ բարբառի ազդեցությամբ մեկնաբանվող նորագոյացումներ են:

Բարբառներում մարդ բառն ունի հնատիպ հոգնակիակազմություն՝ **իկ||իք հոգնակերտով. այդ այդպես է հայերենում առհասարակ, նույնիսկ արդի գրական հայերենում: Այս տեսակետից մարդեր ձևը, որ հատուկենտ հանդիպում է բարբառներում, արևմտահայ առանձին հեղինակների մոտ, մասամբ և արևելահայ որոշ գրողների մոտ, բուն էության նորակազմություն է՝ միավանկ հիմքերի համակարգային զուգորդումների հետևությամբ. համմ. մարդեր (ՀԺՀ, IX, 196-Այշակերտ, 282-Մանազկերտ), մարթեր (ն. տ. 480-Բաղեշ), մարտեր (ՄՄ, ՇՔ, Ն, 187) և այլն:**

Է) Բազմաձևություններ և շեղումներ: Կարող են լինել **միաձև, երկձև և բազմաձև հոգնակիակազմություններ: Միաձևն այն է,** երբ եզակի միևնույն ձևին համապատասխանում է հոգնակի մեկ կազմավորում. օր. քար—քարեր: **Երկձև-բազմաձևն այն է,** երբ եզակիին համապատասխան երկու և ավելի հոգնակի ձևեր են **գործում: Վերջինս լինում է այն դեպքում,** երբ միևնույն եզակի **ձևից հոգնակերտի փոխարինումով կամ հիմքի հնչյունափոխման,** ձևաբանական տարբեր վերակազմավորումներով գոյանում են տարբեր հոգնակիներ: Ուրեմն սրանք միմյանցից կարող են զանազանվել հիմքային տարբերակների առկայությամբ, կամ էլ **տարբեր հոգնակերտների հետ միևնույն հիմքի զուգորդումներով:** Դիտարկենք մի քանի օրինակներ. գ՛ուս «թաս»>գ՛ուս-իր||գ՛ոս-իր (Սվեդիա), ալ՛ա բ>ա՛լբրնէր||ալ՛ա բ-նէր, աման>ամրն-նէր||աման-

նէր (Ուրմիա), կէօյդ (<գորտ)>կէօյդ-էր‖կէյդ-էր‖կօյդ-էր, խէօղ (<հող)>խէօղ-էր‖խէղ-էր‖խօղ-էր (Համշեն, ըստ ՀԱ, ԼՔՀԼ, III, 724), թօթնը (<թութ)>թօ՛թն-էր‖թութն-է՛ր (Ղրբ)։ Հոգնակիական այս բազմաձևությունը հետևանք է հիմքատարբերակների գոյացման։

Բազմաձևությունը կարող է արդյունք լինել նաև այլ վերակազմավորումների։ Հիմքերի ձևաբանական վերակազմավորումների առիթով մենք ակնարկել ենք այդպիսի փաստերի. համմտ. նաև Տ՛ընկեր-տանք (ՀԺՀ, XI, 71) և հընկեր-տանուն (Ն. տ. 124), ձիան և ձիան-էր (Ն. տ. 518), ինչպես և՝ վօդվի‖վօդվընէր, ձ՛եռվի‖ձ՛էռվընէր, ունքվի‖ունքվընէր, ծունդվի‖ծունդվընէր (ՀՄ, կի 44—46, Ախալքալաք), տիրվըդանք‖տիրվըդանքէր, ձ՛իան‖ձ՛իանքներ (ՍԲԹ, ՄԲ, 79)։

Այժմ դիտարկենք այնպիսի բազմաձևություններ, որոնք զուգաղանվում են հոգնակերտներով. նկար-նի‖նկար-ներ (ՀԺՀ, IX, 521-Ախալքալաք), բուրսիք‖քուրսեք‖բուրսեստան (Ն. տ. 305-Մանազկերտ), ախճկտիք‖ախճկներ (Ն. տ. 94, Ալաշկերտ), դարիբ-նէրու սրդին (ՎՊ, ՄԲ 71), մուշթիրընիրու հիդ (Ն. տ.), քուրվըդիք‖քուրվըդանք, աղպըրդիք‖աղպըրդանք (Ն. տ. 32), քէռանէ‖քէռէք, իգ՛իք՛‖իգ՛ինէ (ԷԱ, ՄԲ, 111, 115), իրդ՛աթէօնք‖իրդ՛աթթք‖իրդ՛աթնա‖իրդ՛աթնաք‖իրդ՛աթներ (ՀԱ, ԼՔՀԼ, III, 780-Սվեդիա)։ Այստեղ հիմքը նույնն է, հոգնակերտներն են տարբեր։ Բայց տարբեր հոգնակերտների զուգորդումները կարող են զուգակցվել հիմքային տարբերակների գոյացման հետ. համմտ. աշկ>աշկ-էր‖աշ-վընէր (Պոլիս), ճէղնը>ճէղնու-ք‖ճեղն-ար‖ճէղնը-նէր (Ագուլիս). համմտ. նաև՝ ծունգէր‖ծընգէր‖ծընգնի‖ծընգանի (ՌԲ, կԲ, 85), ղըղանէր‖տըղէր, փէսանէր‖փէսէր, թուլանէր‖թուլէր, ջամփանէր‖ջամփէր (ԹԴ, ՄԲ, 81), մաղիր‖մաղներ‖մաղէօնք‖մաղվա, թուղիր‖թաղէօնք (ՀԱ, ԼՔՀԼ, III, 767-Սվեդիա), իշվան‖իշվի‖իշվընի‖իշվըդի‖իշվըդանք (ՌԲ, ԴԲՔ, 18), սըրմըրանք‖սըրմարէնք (ԱՊ, ՀԲ, 87)։ Այստեղ բազմաձևությունը վերաբերում է և՛ հիմքերին, և՛ հոգնակերտներին։

Երկձև-բազմաձև հոգնակու մեկնաբանությունը կարելի էր սրանով ավարտված համարել, սակայն բերենք մի քանի օրինակներ ևս. էրեխեք—էրեխանց (ՊՊ, ԵԺ, 1, 28, 58)‖էրեխեքանց (Ն. տ. 59), լեղու‖լեզվըներ (ԽԿ, ԵԼԺ, 3, 2), էրեխեք‖էրեխեքներ (Ն. տ. էջ 2, 14), սիրտրնները‖սրտրներն (Ն. տ. 83, 11). համմտ. Ղրբ. խոսկէր‖խոսկէրք, ծը՛նգլէր‖ծընգըլնէ՛, պարիկա՛մէր‖պարիկըմնէ՛ (պըրր՛կըմնէ՛), խոխէը՛‖խոխէրը, տըղէը՛‖տըղէրը, ըխճըկէը՛‖ըխճըկէրը (տե՛ս նաև ԱՊ, ՀԲ, 86—87)։

Բարբառային հոգնակիակազմության մեջ երբեմն հանդիպում ենք նաև հիմնական օրինաչափություններից շեղվող, հազվադեպ, անկանոն ձևերի։ Այսպես, օրինակ, միավանկ բաղաձայնահանդ հիմքերը սովորաբար զուգորդվում են էր հոգնակերտի հետ, (և)էր տեսքով ունենք միայն երբեմնի և հիմքավերջի վերականգնման դեպքում. բայց ծառ բառը մի քանի բարբառներում կազմում է ծառներ ձևով հոգնակի (Կարնո, Նոր Ջուղայի՝ ըստ ՀԱ ԼՔՀԼ, III, 734, նաև՝ ՀԺՀ, IX, 219-Մանազկերտ, 385-Բաղեշ, 547-Ախալքալաք), ձառներ (ՌՔ, ԴՔՔ, 48), այսպես և՝ մարդներ (ՌՔ, ԿՔ, Ն, 247), կշտերին (փոխ. կշտաներին, ՀԺՀ, 9, 378-Բաղեշ), քովերս (փոխ. քովներս, Ն. տ. 509—Ախալքալաք), կընքերս (փոխ. կընքներս, Ն. տ. 529), ապա և՝ փըսէներ՛ (եզ. փըէսի<փեսայ, ըստ ՀԴՄ, ԿՔ, 82), կընթըներ «կնիկներ» (Մարաղա). Համմտ. հղըսկընէ (եզ. հղէ), շը՝նը՝թկընէ (եզ. շէն) ձևերը Դրբ.-ի բարբառում։

4. ԹՎԱԿԱՋՄՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԴՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Դեռևս միջին գրական հայերենի շրջանից պահպանվել են գրավոր աղբյուրներ, որոնց լեզուն կիլիկյան հայերենից նկատելիորեն հեռու է և վկայում է նոր հայերենի կազմավորման խոր ակունքների մասին։ Միաժամանակ պետք է նկատել, որ միջին գրական հայերենը անկում ունեցավ դեռևս իր կատարելության չհասած. ընդհանրացման ու միօրինականացման պրոցեսն ինչ-որ չափով անկատար մնաց, իսկ ինքնուրույնության ու անկախ զարգացման ձգտող բարբառները տարբեր ճակատագիր ունեցան։ Այս կամ այն բարբառի (կամ էլ առանձին բարբառների) գրականացումը, գերիշխող դիրք ձեռք բերելը պատմական տարբեր գործոններ հետ էր կապված։ Եվ չնայած որ հայ ժողովուրդը ապրում էր ծանր հասարակական կյանքով, այնուամենայնիվ ընդհանուր գրական նոր հայերենի կազմավորման միտումները գնալով ուժեղանում էին (թեև այս անգամ արդեն այլ հիմքի վրա)։

Տնտեսական ու աշխարհագրական, քաղաքական ու մշակութային գործոններով պայմանավորված՝ այդ միտումները (տենդենցները) դրսևորվեցին որոշակի ուղղություններով։ Ընդհանրացող բարբառների գրականացումը, սկսած XVI—XVII դարերից, հիմնականում երկու հատվածներում ընթացք ստացավ. ըստ այդմ էլ գրավոր աշխարհաբարը երկու ճյուղ ունեցավ։ Այս պրոցեսն իր բնորոշ տեսքն ստացել էր արդեն XVII դարում, թեև իհարկե

փոխներթափանցումները այդ ճյուղերի միջև երկար ժամանակ իրենց գոյալ էին տալիս։

Ինչպես արևմտահայ գրական աշխարհաբարի, այնպես էլ արևելյանի համակարգայնացումը աստիճանաբար ուրվագծվել էր XVII—XVIII դարերում և XIX դարի առաջին կեսին։ Սա վերաբերում է նաև թվակազմությանը, առհասարակ թվակարգին։ Այս շրջանի վերաբերյալ կարող ենք անել հետևյալ ընդհանուր դիտողությունները։

Երկու ճյուղերում էլ հաստատվում է եռագրաբարյան հայերենին բնորոշ կցական կառուցատիպը։ Հիմքակազմության մեջ դոմինանտում է վանկաքանակության սկզբունքը։ Ընդ որում միավանկները զուգորդվում են եր, երկվանկ-բազմավանկները՝ ներ հոգնակերտների հետ. օր. ծովեր (ՊԴ, ՏՍԿ, 65), ծամերդ (ՆՀ, Բ, 6), թասեր (ՀԿ, Տ, 67), ճոթեր (ԵԿԴ, 14), ապառաժներ (ՊԴ, ՏՍԿ, 91), հոլովներ (ն. տ. 233), արմաղաններն (ՆՀ, Բ, 11), գերեզմաններն (ԵԿԴ, 37), վաճառականներիցն (ն. տ. 101), հրօվարտակներ (ն. տ. 87), ախպիրներ (ՀԱՕ, 62), քաղաքներումս (ն. տ. 76)։ Ներ-ը օրինաչափորեն հանդես է գալիս ություն հանգող բազմավանկների հետ (թեև բացառված չէ այդ կարգի բառերի հնատիպ հոգնակերտությունը). օր. օրագրութիւններ («Բազմ.», 1843, Առաջաբան), տեղեկութիւններ (ն. տ.), անհամաձայնութիւններն («Կովկաս», 1847, № 30, № 119), կառավարութիւններն (ն. տ.)։

Թեև չհաշվենք հնատիպ հոգնակիակազմությունները, ապա նկատելի է, որ գրաբարյան հոգնակերտը և կամ սրանով բաղադրված շատ տարրեր ձեռք են բերել ածանցական նշանակություններ[1]։ Դա երևում է թեկուզ հետևյալ օրինակներից. աղօթ-

---

1) Նախկին՝ կառուցվածքով անեզական ձևերը հետագա շրջանում երբեմն գործածվում են իբրև անեզական, երբեմն իբրև եզակի, երբեմն էլ իբրև եզական՝ հավաքական։ Կոնտեքստից անկախ այս բազմարժեքայնությունը նշված շրջանում դժվար է կոահել։ Այսպիսի դեպքեր եղել են միչին գրական հայերենում (մասամբ և եռդասական գրաբարում) և վաղ աշխարհաբարում։ «Էս ապրանքն շուտ կու ծախեմ» (ԵԿԴ, 65, XVIII դ.) կարող է հասկացվել «այս ապրանքները» (իբրև հոգնակի), «ապրանքների տվյալ ամրողջությունը» (եզականաձև-հավաքական), կամ էլ մեկ հատ առարկա՝ ապրանք։ Մեր կարծիքով՝ XVII—XVIII դարերում ավելի հաճախական էր եզականաձև-հավաքականի նշանակությունը։

Բերենք մի այլ օրինակ։ Նաղաշ Հովնաթանն ասում է. «Շրթունքդ բարակ է» (ՆՀ, 42, XVIII դ.)։ Այս ձևը կարող է հնատիպ հոգնակի լինել. կա գրաբարում և միչին գրական հայերենում. անհամաձայնությունը սովորական է. Նաղաշի և ժամանակի այլ հեղինակների մոտ հաճախ ենք տեսնում, որ հոգնակի ենթակայի հետ դրված է եզակի ստորոգյալ։ կարող է հասկացվել նաև իբրև եզակի ձև (հե-

քովդ (ՊԴ, ՏՄԿ, 221), ունքերդ (ՆՀ, Բ, 5), աչքերդ (Ն. տ.), խոսքերդ (Ն. տ. 53), ապրանքներն (ԵԿԴ, 70, 96), Յոլմ քո տալ յոյս իմըս ականց (ՀԿ, Տ, 93)։

եր-ով և **ներ**-ով համակարգային զուգորդումների կառուցվածքները թափանցում են նաև թեք հոլովներու. Այսպես՝ աչքերովդ (ՆՀ, Բ, 19), շուրերով (ըստ ՄՄ, ԸՆ, 317), սարերէն (ՀԿ, Տ, 67), համատանցիներուն (ԵԿԴ, 109), հայերուն (Ն. տ. 14), խապարներօվս (Ն. տ. 149)։ Սակայն այստեղ հստակ համապատասխանություն չկա. կարող է, ասենք, ուղղականում լինել վարսեր բայց սեռ.-տրականում՝ վարսից, կամ՝ մկներ և մկանց: Այս, իհարկե, ամենից առաջ այն պատճառով, որ ուղղականում վարսք, մկունք ձևերի գործածությունը տվյալ ժամանակաշրջանի համար բացառված չէր։

Ոչ-համակարգային, հնատիպ (նաև բարբառային) հոգնակերտության մեջ ուղղականի f-ին (կամ նրանով բաղադրված այլ հոգնակերտների) սեռ.-տրականում սովորաբար համապատասխանում է g-ն կամ սրանով վերակազմավորված այլ տարբերակ. օր. ջուղայեցոց (ԵԿԴ, 151), սա ուղղականում ունի ջուղայեցիք ձևը։

Առենք-ով զուգորդումները հիմնականում պահպանվում են թեք հոլովաձևերում. գեղարենք (ԵԿԴ, 38)—գեղարենքիցը (Ն. տ.), գեղարենքէն (Ն. տ. 37), գեղարենքում (Ն. տ. 162)։

Գործիականում երբեմնի հոգնակերտը երբեմնի բնակերտով ու հոլովակերտով վերակազմավորվելով՝ կարող է դառնալ եզակի գործիականի ցուցիչ. բերան-ա-ւ-ք>բերանօք (=բերան-օք). «Որպէս պատմէ քեզ **բերանօք** պարոն Ղազարն» (ԵԿԴ, 114). Թեև կա նաև **բերանով** ձևը՝ բերանօվ (Ն. տ. 107)։

*Սեռ.-տրականի **ոց**-ով ձևը բացառականում և գործիականում վերակազմավորվում է իբրև հոլովահիմք. վրացոց—վրացոցմէնէ (ԵԿԴ, 133), «Զեռացէն մին գիր առի» (Ն. տ. 194)։ Նման երևույթներ նկատելի են ուշ գրական աշխարհաբարում ևս։*

*Բառավերջի (եզակի ուղղականի ձևի) հնչյունաբանական տեսքը շատ թույլ դեր է խաղում հոգնակերտի հետ ունեցած զուգորդումներում. և՛ ձայնավորահանգները, և՛ բաղաձայնահանգները կարող են զուգորդվել **եր**, **ներ** հոգնակերտների հետ. լօթիներն*

տագա գրական աշխարհաբարում հենց այդ արժեքով է նա հաճախանում), մանավանդ որ համաձայնությունը կարծես դրա հաստատումն էլ բացառված չէ նաև եզականաձև-հավաքականի իմաստով. խոսքը սիրուհու երկու շրթունքի մասին է։

(ԵԿԴ, 52), հաճիներին (Ն. տ. 67), փաշաներուն (Ն. տ. 211), աղաներիցը (Ն. տ. 266), տիրացուներ (ՊԴ, ՏՍԿ, 233), հենովացիներէն («Բազմ.», 1843, էջ 32), կոպիաներ («Կովկաս», 1847, № 6, էջ 21), հոգիներ (ԱՄ, Բ, 8), ծառաներ (Ն. տ. 24)։ Սակայն ի(ցի)-ա հանգող բառերը նշված շրջանում մեծ մասամբ միտում են ։ հոգնակերտ ընդունելու. գոլբէք «գուլպաներ» (ՆՀ, Բ, 113), շուշէքն (Ն. տ. 160), պախրէք (ԵԿԴ, 273), թշնամիքն (Ն. տ. 74)։ Գրական աշխարհաբարի զարգացման հետագա շրջանում այս կառուցաձևերը կիրառական արժեքից աստիճանաբար զրկվում են։ Արդի գրական հայերենում նույնիսկ ի(ցի) հանգողների ։-ով զուգորդումները դիտվում են իբրև հնաբանություն։

Գրական աշխարհաբարի կազմավորման շրջանում ուրույն տեսքով է ներկայանում հնչյունափոխ և անհնչյունափոխ հիմքատարբերակների հարաբերակցությունը։ Միավանկ բառերի շեշտազերկված ի, ու ձայնավորները միտում են հնչյունափոխության. բարբառային ներթափանցումներում կարող են հնչյունափոխված լինել այլ ձայնավորներ ևս։ Սակայն այսպիսի հնչյունների դեպքում կարող են լինել նաև անհնչյունափոխ հիմքատարբերակներ, մանավանդ գրականացող արևմտահայ աշխարհաբարում։ Այսպես՝ կժեր (ՆՀ, Բ, 106), տներ (Ն. տ. 123. ՋԱՕ, 71), շներ (ՆՀ, Բ, 123), գներ (ԵԿԴ, 36), գրեր (Ն. տ. 14. ՋԱՕ, 77), թղթերն (ԵԿԴ, 181), բայց՝ թուղթերն (Ն. տ. 252), շուրերով (ՄՄ, ԸՆ, 307), թուրքերուն (ԵԿԴ, 6, 135), ղուլեր (Ն. տ. 30)։ Առկա էր ա>է (է) փոփոխություն ։ հոգնակերտից առաջ. օր. շուշա>շուշէք (ՆՀ, Բ, 160), ճանփա>ճանփէքն (ԵԿԴ, 164)։

Անհնչյունափոխ հիմքատարբերակը համեմատաբար հաստատուն դիրք է ձեռք բերում նեբ մասնիկից առաջ. ինկլիաների (ԵԿԴ, 151), չաքուչներն (Ն. տ. 166), սնտուկներն (Ն. տ. 190), բլբուլներն (ՆՀ, Բ, 75), իրիցներն (Ն. տ. 122),մելիքներս (Э, СПВ, 162) մանձիներս (ՋԱՕ, 6)։ Երկիր բառը գերազանցապես անհնչյունափոխ հոգնակիակազմ հիմք ունի (համմտ. «Կովկաս», 1847, № 5, էջ 18. ՂԻ, Դ, VI, 59, 1826 թ.), իսկ հնչյունափոխ դեպքերը պետք է բացատրել բարբառային ներթափանցումներով, օր. յերկրներուն (Э, СПВ, 155, XVIII դ. կես., համմտ. Ն. տ. էջք 258, 421)։

Մեկուկես վանկանի՝ վերջնագաղտնավանկով հիմքերը որոշակի հոգնակերտի հետ դեռևս կանոնավոր զուգորդումներ չունեն։ Սա վերաբերում է և՛ արևմտահայերենին, և՛ արևելահայերենին. աստղերըն (ՀԿ, Տ, 69). աստղերներ (ՄԱ, Բ, 93), շաքրներ (ԵԿԴ, 34. 209), դասատուներ («Բազմ.», 1843, էջ 189)։

Կարելի է ասել, որ դեռևս որոշակիորեն չէր կանոնավորված նաև առաջին կարգի վերջնաթազադրիչով բարդությունների (բարդ բառերի) հոգնակերտությունը։ Եր մասնիկի դիրքում համախ հանդիպում ենք և ներ մասնիկին. այսպես՝ պարտկանտերիրը (ՄՄ, ԸՆ, 320), բարօվագրերն (ՆԿԴ, 55, 290), պարտատերերիցն (Ն. տ. 192), նաև՝ պարտատէրներուն (Ն. տ. 98), վաքելագրերով (Ն. տ. 323), ջրհորներն (Մժ, 211, XVII դ.)։ Համմտ. նաև XIX դարի առաջին կեսի արևմտահայ գրավոր աղբյուրներից բերված հետևյալ օրինակները. դրքատուններ («Բազմ.», 1843, Առաջաբան), դրպրատուններ (Ն. տ.), գեռնաշարժներ (Ն. տ. 8), չրանցքներ (Ն. տ. 75), բառգիրքներ (Ն. տ. 78), պաշտօնատէրներ (Ն. տ. 122), հրեշտակապետներ (ՄՄ, Բ, 120), հաշուէգիրներ «մատյաններ» (ՂԻ, Դ, VI, 30), ձեռագործներ «ձեռագործ իրեր» (Ն. տ. 62), հրամանագիրներ «հրամանագրեր» (Ն. տ. 68)։

Նշված շրջանում և հանգի վերականգնման հարցն ունի որոշ պայմանականություն, որովհետև եզակի ձևերում նրա անկումը դեռևս իր ավարտին չէր հասել։ Ուշադրություն դարձնենք հետևյալ օրինակների վրա. «Թագայ գառն, համեղ ձուկն, հաւ և կաթաւ խորոված» (ՆՀ, Բ, 181), «Թող ծոցումդ ձեռնոս խազայ» (Նաղաշ Հակոբ, տե՛ս ՆՀ, Բ, 220)։ Ակնհայտորեն երևում է, որ այստեղ ն-ն վերջնահանգինն է։ Բնականաբար հոգնակիակազմ հիմքում այդ ն-ն մնում է. կաթներ (ՊԴ, ՏՄԿ, 91), հարսներն (Ն. տ. 225). մատներ (ՆՀ, Բ, 27), նոներըդ (Ն. տ. 34), մկներ (Ն. տ. 97), ծնկներ (Ն. տ. 106), բեռներ (Ն. տ. 121), դռներ (Ն. տ. 176), ձեռներիցն (ՆԿԴ, 207)։

Ինչպես արևմտահայ գրական աշխարհաբարում, այնպես էլ արևելահայերենում ուրույն կաղապարներ են հաստատվում առոգական հոգնակերտության համար, առաջինում եր–ներ–ս կամ ներ–ս, երկրորդում՝ ներ կամ (ը)ներ մասնիկավորումով. «Ձեռներիս չի պարապիր» (ՊԴ, ՏՄԿ, 221), «Անուններն է սարիաւագ, մէջքներըն՝ էշի գաւակ» (ՆՀ, Բ, 119), «Այ մեր սհապներ, ջանրներս շատ աչխմիս իլած...» (ՆԿԴ, 301)։ Ստացական հոգնակերտության այս կառուցների անհնդունափոխ հիմքերը հաստատվում են սկսած հենց նույն շրջանից։ Այսպես՝ սիրտներուս (Э, СПВ, 417), միտքներն (Ն. տ. 420)։

Փոխառյալ բառերը հիմնականում հետևում են հոգնակերտության համակարգային կաղապարներին, միավանկները եր-ով, երկվանկ-բազմավանկները՝ ներ-ով. դարդերս (ՆՀ, Բ, 15), ատա-

տերուն (ՆԿԴ, 25), դուլեր (Ն. տ. 30), գօզալներն (ՆՀ, Բ, 11), եմիշներն (Ն. տ. 23), դուշմաններն (ՆԿԴ, 27)։

Կարծում ենք, կարիք չկա փաստերով հաստատելու, որ XVII—XVIII դարերի գրավոր աղբյուրներում համեմատաբար ծավալուն է հնատիպ (մասնավորապես գրաբարատիպ ու բուն գրաբարյան) հոգնակիների գործածությունը. շատ են նաև երկձևությունները (բազմաձևությունները), շեղումները։ Սակայն XIX դարի առաջին տասնամյակներից, մանավանդ դարի կեսերից աստիճանաբար նվազում են ոչ-համակարգային կազմություններ, թեև դրանք իսպառ չեն վերանում դասական աշխարհաբարում, նույնիսկ արդի գրական հայերենում։

Վերը մենք դիտարկեցինք թվակազմության այնպիսի երևույթներ, որոնք վերաբերում են նոր գրական հայերենի կազմավորման շրջանին (XVII—XVIII դարեր և XIX դարի առաջին կես), և ըստ էության ընդհանուր են գրական աշխարհաբարի երկու վիճակներում (ճյուղերում)։ Սակայն արևմտահայ և արևելահայ գրական լեզուները, չնայած որ զարգացրել են թվակազմության ընդհանրական կառուցատիպ, ունեն նաև հոգնակերտության առանձնահատկություններ, որոնց առանձին-առանձին կծանոթանանք ստորև։

ԹՎԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԻՄ

I. Ընդհանուր հիմունքներ: Թվի բերականական իմաստներ և նրանց արտահայտման միջոցներ: II. Հոգնակիակազմություն. հոգնակիակազմ հիմքերը և նրանց զուգորդումները հոգնակերտ վերջավորությունների հետ: Ա) Հիմքակազմություն. Բ) Հիմքատեսակներ. միավանկ հիմքեր. մեկուկես վանկանի հիմքեր. երկվանկ-բազմավանկ հիմքեր: Հոգնակիակազմ հիմքերը և նրանց զուգորդումները թեք հոլովաձևերում: Հնչյունաբանորեն վերակազմավորված և չվերակազմավորված հիմքեր: Ձևաբանորեն վերակազմավորված և չվերակազմավորված հիմքեր: Գ) Գոյականաբար գործածված բառերի հոգնակիակազմությունը: Դ) Փոխառյալ բառերի հոգնակիակազմությունը: Ե) Հոգնակիակազմություն և ճոդառություն. ստացական հոգնակիներ: Զ) Ոչ-համակարգային և ճնշատիպ հոգնակիակազմություններ. նորակազմ ձևեր: Է) Բազմաձևություններ:

Թվի քերականական իմաստները և նրանց արտահայտման միջոցները: *Արևմտահայ գրական լեզուն գոյականի թվի կատեգորիան հետևում է աշխարհաբարին, ընդհանրապես նոր հայերենի նորմաներին։ Արևելահայ գրական լեզվից տարբերվում է կատեգորիային առանձին գծերով. տիպոլոգիան նույնն է։ Այստեղ էլ գոյականի թվի կարգը ներկայանում է երկակի հակադրությամբ՝ եզակի-հոգնակի։ Եզակին կատեգորիայով հոգնակիին հակադրվում է թվային վերջավորությունների բացակայությամբ, ինչպես ընդհանուր հայերենում է, հոգնակին ունի հատուկ վերջավորություններ։ Հոգնակիիակազմությունը միայն մասնիկավորմամբ է դրսևորվում։ Կատեգորիային հակադրությանը դուրս հանած ունենք իմաստային հակադրություններ. թեև եզակին ցույց է տալիս, որ խոսքի առարկան մեկն է, իսկ հոգնակին՝ մեկից ավելին, սակայն բառիմաստի հատկություններով պայմանավորված նրանք հաճախ ձեռք են բերում թվային իմաստի նուրբ երանգավորումներ՝ առնչված նյութայնության, վերացականության, հավաքականության, ընդհանրության ու մասնավորման և բառիմաստային այլևայլ կարգերի հետ կապված։*

Թվակազմությունը արևմտահայերենում դրսևոր հասել է իր կատարելության. հոգնակերտ վերջավորություններից հիմնականում եր, ներ մասնիկներն են. հոլովակազմությունը և թվակազմությունը բաշխված են բառաձևի մեջ, ինչպես առհասարակ կցական կառուցատիպի լեզուներում է։ Անկասկած կան նաև շեղումներ ընդհանուր կառուցատիպից, նկատելի են նաև բազմաձևություններ։

II. ՀՈԳՆԱԿԻԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ. ՀՈԳՆԱԿԻԱԿԱԶՄ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՋՈՒՏՈՐԴՈՒԹՅՈՒՆԸՐ ՀՈԳՆԱԿԵՐՏ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Ա) Հիմքակազմություն: *Մենք արդեն նշել ենք, որ հոգնակիակազմությունը նրև մասնիկավորմամբ է արտահայտվում, գործ ենք ունենում հիմք և վերջավորություն հասկացությունների հետ։ Հոգնակիակազմ հիմքը եզակի որևէ ձև է կամ նրա վերակազմավորված տարբերակը։ Զարգացնելով կցական կառուցաձև՝ արևմտահայ գրական լեզուն եզակի ուղղականի ձևը միտում է դարձնելու եզակի հոլովման և հոգնակիակազմության ընդհանրական*

հիմք։ Համակարգային կազմավորումներում հոլովակազմություն և հոգնակիակազմությունը բաշխված են, հոգնակի հարացույցում հոգնակիակազմ և հոլովակազմ հիմքերն ու վերջավորությունները չեն համընկնում։ Եզակի ուղղականի ծայրիկ ձևը դառնում է նույն հոլովի հոգնակիակազմ հիմք՝ ծայրիկ-ներ, իսկ այս ծայրիկ-հիմքն էլ ընդհանուր է հոգնակի ամբողջ հարացույցում։ Բայց որովհետև բոլոր հոլովաձևերում նույն հոգնակերտն է, ընդհանրական հիմք է առաջանում նաև հոլովակազմության համար։

Ինչպես հայերենում առհասարակ, այստեղ էլ հոգնակիակազմ հիմքը կարող է լինել միաձևույթ, երկձևույթ և բազմաձևույթ, չկա հիմքակազմ հատուկ տարր. ութեմն չկան և բնակերտով (թեմատիկ) և անբուն (աթեմատիկ) հիմքեր։ Երբեմնի հոգնակերտը կամ վերջնահանգով նրա զանազան զարգացումները հոգնակիի հիմքավերջում հաճախ են հանդես գալիս ածանցական (դերիվացիոն) ֆունկցիայով։ Ստորև բերվող օրինակներում f-ն այդպիսի ձևույթ է. վերքեր (ՄՊ, S, 50), զորքեր (ՊԴ, b, 175), աչքեր (Ծ, b, 36. ՏԿ, ՎԱ, 177), հետքեր (ՏԿ, ՎԱ, 40), ջանքեր (ԳՋ, եժ, 1, 151), ծախքերուն (ն. տ. 34), ծալքեր (ԴՎ, Բ, 56), հանքեր (ն. տ. 39), խոսքեր (Ս, ԸԲ, 5), նայվածքներ (ն. տ. 3), շարքեր (39), ցոլքեր (ՎՔ, b, 50), ղէնքեր («Ազ.» 29/IV 69), պահանջքներ (ն. տ. 2)։ Այսպիսի կազմավորումներում հոգնակիակազմ հիմքը կարող է լինել միայն երկձևույթ կամ բազմաձևույթ՝ f վերջնաձևույթով (վերջնահպով). այսինքն՝ վեր-ք-եր, զոր-ք-եր։

*Զևաբանական նույնպիսի արժեքով են f-ի՝ երբեմնի վերջնահանգով վերակազմավորված զարգացումները (-անք, -ունք են). հեծկլտանքներ (ՏԿ, ՎԱ, 145), գգվանքներ (ն. տ. 147), պլրտանքներ (ԳՋ, եժ, 1, 151), տարփանքներ (ԴՎ, Բ, 350), ծիծանքներ (ն. տ. 292), խոյանքներ (Ս, ԸԲ, 7), պաղատանքներ (ն. տ. 15). **կերպարանքներ (88), աղերսանքներ (142), արշավանքներ (ՎՔ, b, 146), փականքներ (ն. տ. 166), փշրանքներ (216).** նաև՝ շրթունքներով (ՄՊ, S, 65), շարժմունքներին (Ծ, b, 61), սկզբունքներ (ն. տ. 71), հիմունքներ (ԴՎ, Բ, 331), ունդունքներ (Ս, ԸԲ, 16), արտահանունքներ (ն. տ. 96), բարձունքներ (194)։ Համմտ. նաև՝ քրտինքներ (ՄՊ, S, 28), պիտույքներ (ՏԿ, ՎԱ, 174) և այլն։ Այսպիսի կազմավորումներում ևս հիմքը կարող է լինել միայն երկձևույթ կամ բազմաձևույթ՝ անք, ունք և նման որևէ վերջնածևույթով (վերջնահպով), այսինքն՝ պաղատ-անք-ներ, սկզբ-ունք-ներ։*

Երբեմնի է հոգնակերտի փոխարեն կարող է լինել նաև երբեմնի ս հոգնակերտը. ասենք, ծախմ և ծախս, համմտ. ծախսեր (ԳՍ, ԾՅԱ, 72), արևելահայերենում առկա է նաև դրանց երկուսի համառեղում մի բառաձևում՝ ցանկս (ցանքսեր)։ Սակայն արևմտահայ հեղինակների մոտ հանդիպում են ձևեր, որոնց մեջ է-ն չունի նման զարգացում, այն բացակայում է և՛ եզակի ձևում, և՛ հոգնակիակազմ հիմքում. այսպես՝ ալի (ՊԴ, ե, 30), ալիներ (ն. տ. 27). արևմտահայերենում սովորական է՝ ալիք—ալիքներ. հազվադեպ հանդիպում է կուրծեր (ն. տ. 172) ձևը. մինչդեռ շատ սովորական է հոգ (համմտ. ԳՍ, ԾՅԱ, 18)—հոգեր (համմտ. «Սիւն» 9/IV 69). նաև՝ խոր(ք)—խորեր (ՊԴ, ե, 70. Մ, ե, 6. ՄՄ, եԺ, 37. ԳՍ, ԾՅԱ, 32. «Աշխ.» 12/II 69), ցան (=ցանք)—ցաներ (ՄՄ, եԺ, 61)։ Արևելահայերենում հոգնակիակազմ այս հիմքերը է-ով կամ ս-ով են՝ ալիք-ներ, խորք-եր- ցանք-եր, հոգս-եր[33]. և՛ արևմտահայերենում, և՛ արևելահայերենում սովորական է՝ կուրծքեր, լինում է և հակառակը. համմտ. արևելահայ գրականում՝ դասընթացներ, արևմտահայերենում թուլատրվում է նաև՝ դասընթացքներ (տե՛ս օր. «Աշխ» 12/II 69)։ Հանդիպում են աչեր և աչիեր զույգ ձևեր։ Արևելահայ գրական լեզուն դրանցից յուրաքանչյուրը հատկացրել է գործածության որոշակի ոլորտ. աչեր ձևը բնորոշ է խոսակցական, հուզա-արտահայտչական, բանաստեղծական ոճերին։ Արևմտահայ գրականում այդ տարբերակումը ակնառու չէ. (համմտ. աչեր ձևը ըստ՝ ՄՊ, Տ, 41. ՊԴ, ե, 7. ՀՊ, եԺ, III, 7)։

Բ. Հիմքատեսակներ։ Արևմտահայ գրական լեզվի համակարգային հոգնակիակազմութիւններում իշխում է հնչյունաբանական հիմքատեսակը, այն էլ վանկաքանակութեան սկզբունքով։ Ընդորում ձայնավորահանգ և բաղաձայնահանգ հիմքատարբերակները, որոնք հիմքավորչի հնչյունական բնութիւնով են պայմանավորված, գրեթե վերացած են։ Ինչ մնում է ձևութիւային և իմաստաբանական հիմքատեսակներին, ապա սրանք էական դեր չունեն հոգնակիակազմութեան մեջ։ Եվ այսպես՝ տարբերակված են միավանկ հիմքեր և մեկից ավելի վանկանի («մեկուկես» վանկանի, երկվանկ-բազմավանկ) հիմքեր։

Միավանկ հիմքեր։ *Արևմտահայ գրական լեզվում այս հիմքատարմութեան մեջ առանձնանում է նրանով, որ զուգորդվում է ներ հոգնակերտի հետ. դաշտ—դաշտեր (ՄՊ, Տ, 28), մազ—մազեր*

---

[33] *Անցյալում տարաձևութիւններ ևս կային. ցնորներ (ՍՀ, ե, 105, 155), փոխ. ցնորքներ, մի քանիքին (ՍՆ, Ն, 183), փոխ. մի քանիսին. ապարաններ (ն. տ.) փոխ. ապարանքներ, գործքեր («Մեղու Հայ.», 1858, № 2), փոխ. գործեր։*

(Ն. տ. 29), թև—թևեր (34), հող—հողեր (ՊԴ, ե, 7), ձոր—ձորեր (Ն. տ. 8), սար—սարեր (Ն. տ.), այսպես և՝ գյուղեր (Ս, ՀԵ, 4), հույսեր (ԴՎ, Բ, 27), դասեր (ՏԿ, ՎԱ, 29), ձայներ (ՎՔ, ե, 167), նաև՝ ձիեր (ՏԿ, ՎԱ, 89. Ծ, ե, 108. ՀՊ, եժ, VI, 39. ԳՋ, եժ, I, 54. Ս, ՀԵ, 15. ԴՎ, Բ, 198. ՎՔ, ե, 249. ՀԶ, ՀԵ, 69. ԳՍ, ՄՅԱ, 101), բուեր (Ծ, ե, 339. ԳՋ, եժ, I, 407. Ս, ՀԵ, 15. ԴՎ, Բ, 106, 123, 183), դիեր (ԴՎ, Բ, 83), ձվեր (ԴՎ, Բ, 244), թիեր (ԳՋ, եժ, I, 16. ԳՍ, ՄՅԱ, 20)։

Դժվար չէ նկատել, որ միավանկ բաղաձայնահանգ և միավանկ ձայնավորահանգ հիմքատիպեր (կամ ենթատիպեր) ըստ էության չեն զանազանվում, որովհետև ձայնավորահանգները ուրույն զուգորդումներ չունեն, հետևում են միավանկ բաղաձայնահանգներին և ընդունում են եր հոգնակերտը։

Թերևս ավելորդ չէ նշել, որ արևմտահայ գրական լեզվում ևս միավանկ բառերը (հիմքերը) բարդության վերջնաբազադրիչի դիրքում սովորաբար պահպանում են հոգնակիակազմության իրենց կառուցատիպը։ Այս հարցին հանգամանորեն կանդրադառնանք շարադրանքի առաջիկա հատվածներից մեկում։

Մեկուկես վանկանի հիմքեր։ Ինչպես արևելահայ գրական լեզվում, արևմտահայերենում ևս «մեկուկես» վանկանի հիմքատեսակ փաստորեն գոյություն չունի։ «Մեկուկես» սկզբնագաղտնավանկները իրրև երկվանկներ հետևում են երկվանկ-բազմավանկ հիմքերի զուգորդումներին, ընդունում են ներ հոգնակերտ վերջավորության. փրփուրներ (ՄՊՏ, 36), կտորներ (ՏԿ, ՎԱ, 31), կրակներ (Ն. տ. 80. ՊԴ, ե, 18), պնակներ (ՏԿ, ՎԱ, 93), սրունքներ (Ն. տ. 99), դրպաններ (147), ծրարներ (245), սոխրներ (ԴՎ, Բ, 4), վրաններ (Ն. տ. 5), բլուրներ (9), գլուխներ (11), պատուհներ (69), վէրհներ (133), ժպիտներ (ՎՔ, ե, 21. ՄՄ, եժ, 170), շշուկներ (ՎՔ, ե, 102), մրրիկներ (Ն. տ. 108), գգեստներ (129), բլուրներ (135) բջիջներ (338), սովերներ (225), սրահներ («Աշխ.» 29/III, 69), նշաններ (ԳՋ, ե, I, 13)։

Մեկուկես վերջնագաղտնավանկները եպակի ուղղականում երկվանկ են, սակայն իրրև հոգնակիակազմ հիմք հնչյունական վերակազմավորման են ենթարկվում, կորցնում են գաղտնավանկի (բ) ձայնավորական տարրը, ընկալվում են իրրև միավանկ հիմք, և, որպես այդպիսին, հետևում են միավանկների զուգորդումներին, ընդունում են ոչ թե ներ, այլ՝ եր հոգնակերտ. աստղեր (ՊԴ, ե, 17. ՏԿ, ՎԱ, 133. ԴՎ, Բ, 23), անգղեր (Ս, ՀԵ, 18. ՎՔ, ե, 108, 120), տարրեր (Ն. տ. 40, ՎՔ, ե, 180), սանտրեր (ԴՎ, Բ,

230), ազդրեր (Ն. տ. 58. ԳՋ, ԵԺ, I, 55. ՎՔ, Ե, 59, 125), վագրեր (ԴՎ, Բ, 70, 196. ՎՔ, Ե, 284), մեղրեր (ԴՎ, Բ, 398), կուպրեր (Ն. տ. 407), քաղցրեր ՎՔ, Ե, 277), փոքրեր (Ն. տ. 310), բարձրեր (ՊԴ, Ե, 17, Ը, Ե, 85)։

Բնականաբար մեկուկես վանկանի բառերը բարդության մեջ վերջնաբաղադրիչ լինելիս պահպանում են հոգնակիակազմության իրենց կառուցատիպը. օր. տեսր—տեսրեր, ձայնատեսր—ձայնատեսրեր (Համմտ. ԼՇ, ԸԵ, 62)։

Տարբեր պատճառներով, նաև որոշ կարգի բաղաձայնների արտասանական մերձակցության պահանջով գաղտնավանկը կարող է պահպանվել. այդ հատկապես լինում է գդ, կդ, փտ բաղաձայնական կապակցությունների դեպքում և այլ որոշ դեպքերում։ Թեև օրինաչափական են, ասենք, արկղեր, աճգղեր, գամփռեր կազմավորումները, բայց հանդիպում են՝ կայսրներ (ԴՎ, Բ, 65), անգղներ (Ն. տ. 127. ԼՇ, ԸԵ, 306), գամփռներ (ԴՎ, Բ, 169. ԼՇ, ԸԵ, 20, 29. ՎՔ, Ե, 66), ազդրներ (ԼՇ, ԸԵ, 129. ՎՔ, Ե, 66)։

Վարուժանի մոտ հանդիպում են ոսկրեր, *որը հավանաբար* ոսկր *եզակի ձևից է, և* ոսկորներ, *որ եզակի* ոսկոր *տարբերակից է (առաջինը տե՛ս ԴՎ, Բ, 49, 130, երկրորդը՝ Ն. տ. 72)։ Այստեղ էլ, ինչպես արևելահայերենում, մյուս բառը արտասանվում է իբրև մեկուկես-երկվանկ և զուգորդվում է ներ հոգնակերտի հետ. մյուսներ (տե՛ս ԳՋ, ԵԺ, I, 125).* ոուս *բառը կարող է արտասանվել իբրև միավանկ, այդ դեպքում նրա հոգնակին կունենա* ոուսեր *(«Աշխ.» 12/II 69), իսկ սովորականն է նախաձայն ը-ով արտասանությունը, որպիսի դեպքերում հոգնակին կունենա* ոուսներ *ձևը։*

Երկվանկ-բազմավանկ հիմքեր: *Հիմքատեսակներում սրանք առանձնանում են ներ հոգնակերտի հետ ունեցած զուգորդումներով։ Այս կառուցաձևն ունեն և՛ ձայնավորահանգները, և՛ բաղաձայնահանգները. այսպես՝ ձայնավորահանգների օրինակներ. շըջթա-ներ (ՎՔ, Ե, 88), կղգի-ներ (Ն. տ. 135), ակռա-ներ (17), Համփա-ներ (32), հոգի-ներ (Ն. տ.), բոպե-ներ (39), սատանաներ (68), ոգի-ներ (109), ուռենի-ներ (111), հայելի-ներ (457), այցելու-ներ (193), արքա-ներ (249), շոգի-ներ (ՏԿ, ՎԱ, 28), պատվելի-ներ (Ն. տ. 29), դասատու-ներ (33), աղա-ներ (35), պարագա-ներ (80), մահկանացու-ներ (91), վկա-ներ (117), էֆենտի-ներ (210), բանալի-ներ (283), աղավնի-ներ (ԴՎ, Բ, 66), որդի-ներ (Ն. տ. 69, 100), նախնի-ներ (79), գյուղացի-ներ (87),*

չորի-ներ (137), տղա-ներ (313), դինի-ներ (352), քրմուհի-ներ (Ս, Ըն, 19), տնեցի-ներ (200), այգի-ներ (270)։

Սակայն բացառված չեն ձայնավորահանգների զուգորդումները ի հոգնակերտի հետ. այս վերաբերում է նաև ցի հանգող հիմքերին. որդի-ք (ՏԿ, ՎԱ, 65), սպասուհի-ք (Ն. տ. 96), գեղջկուհի-ք (Ն. տ.), թաղեցի-ք (35, 124), տնեցի-ք (319). տղա-ք (ՎՔ, ե, 73), պատանի-ք (Ն. տ. 259), նախնի-ք (259, 313)։

Բազաձայնահանգների զուգորդումներում բացարձակորեն իշխում է ներ մասնիկի գործածությունը. գավաթ-ներ (ՏԿ, ՎԱ, 28), օրինակ-ներ (Ն. տ. 29), աղբյուր-ներ (35), բարիք-ներ (37), հրատարակիչ-ներ (60), եղբայր-ներ (Ն. տ.) ծաղիկ-ներ (130), շամփուրներ-ներ (300), երդում-ներ (Ս, Ըն, 5), խարույկ-ներ (Ն. տ. 8), զավակ-ներ (11), փոթորիկ-ներ (ԴՎ, Բ, 32), մանուկ-ներ (Ն. տ. 40), շիրիմ-ներ (43), մարտիկ-ներ (54), կաթիլ-ներ (65), անիվ-ներ (ՎՔ. ե, 249), հաճույք-ներ (Ն. տ. 208), արգելք-ներ (236)։ Հանդիպում են նաև ի-ով և այլ հոգնակերտներով զուգորդումներ, որոնց մասին կխոսենք հնատիպ հոգնակիակազմությունների քննության առիթով։

Ինչպես երևում է վերը կատարված բնութագրումներից, վերջնահանգի հնչյունական բնույթը, ձայնավորահանգ կամ բազաձայնահանգ լինելը էապես կորցրել է հիմքատարբերիչ նշանակություն։ Այդ այդպես է նաև արևելահայ դրական լեզվում։

Այժմ միավանկ վերջնաբազադրիչով ձևերի մասին։ Միավանկ՝ անկախ գործածություն ունեցող բառը եթե բարդության մեջ հանդես է գալիս իբրև վերջնաբազադրիչ, պահպանում է հոգնակիակազմության իր կառուցատիպը, ավելի ճիշտ՝ ամբողջ բարդությունն է ներքաշում իր կառուցվածքային կաղապարի մեջ։ Եվ քանի որ այսպիսի բազադրությունները սովորաբար երկվանկ-բազմավանկ են լինում, ուստի այդ հոգնակիակազմությունը որակում ենք որպես երկվանկ-բազմավանկների կազմավորում. այսպես՝ գիծ—դիմագծերուն (ԴՍ, ՇՅԱ, 134), դիմագծերով (ԼՇ, Ըն, 181), գիր—դեղագիրներ (ՏԿ, ՎԱ, 266), փորագրեր (ԴՎ, Բ, 57), գիրք—դասագիրքեր (ԴՍ, ՇՅԱ, 233), դունդ—ռազմադունդեր (Ս, Ըն, 93), դաշտ—ծաղկադաշտեր (Ն. տ. 31), դեպ(ք) —միջադեպեր («Աշխ.» 12/II 69), դև—մարդադևեր (ՎՔ, ե, 281), զանգ—մահապանգեր (Ս, Ըն, 95), զարդ—արդուզարդերու (ԴՋ, եԺ, I, 404), թերթ—շաբաթաթերթեր (ԴՍ, ՇՅԱ, 240), թուղթ—արժնթղթեր (ՏԿ, ՎԱ, 280), թումբ—հողաթումբեր (Ս, Ըն, 60), լույս—ձեռնալույսեր (ԴՎ, Բ, 223), խաղ—թատերախաղեր (ՊԴ, ե, 431), մկունդխաղեր (ԴՎ, Բ, 280), խորշ—ծովախորշեր (Ն. տ. 139. «Աշխ.» 12/II 69),

խումբ—երգչախումբեր (ՎՔ, ե, 444), թատերախումբեր (ԳՄ, ՄՅԱ, 110), կապ—ծնրակապեր (ԳՋ, եժ, I, 57), կառք—հանրակառքերու (ԳՍ, ՄՅԱ, 131), կարգ—վարչակարգեր («Լրաբ.» 8/IV 69), կետ—հայեցակէտեր («Սեւ.» 9/IV 69), կույտ—ավազակույտեր (Ս, Ըե, 117), հոդակույտեր (ՊԴ, ե, 422. ՀՊ, եժ, VI, 57), մոխրակույտեր (Ս, Ըե, 9), ոսկրակույտեր (Ն. տ. 16), հայ—եթովպահայեր («Սեւ.» 9/IV 69), հանք—ածխահանքեր (Ս, Ըե, 90), հարկ—գետնահարկեր (ԴՎ, Բ, 332), ձայն—աղեւտաձայներ (Ս, Ըե, 34), ոտնաձայներ (ԳՋ, եժ, I, 98), ձև—շարժուձևեր (Ն. տ. 145. ՄՄ, եժ, 24. ԳՍ, ՄՅԱ, 308), մաս—հոդամասեր («ԱՇխ.» 12/II 69), մարտ—ձիամարտեր (ԴՎ, Բ, 280), մոմ—մեղրամոմեր (Ս, ե, 244), նավ—առագաստանավեր (ԳՍ, ՄՅԱ, 13), շոգենավերու (Ն. տ. 149), ոտդմանավեր (Ս, Ըե, 184), նիշ—ախտանիշեր (ՏԿ, ՎԱ, 253), խորհրդանիշեր (Ս, Ըե, 37), նյութ—հրանյութեր (ՏԿ, ՎԱ, 292), պարարտանյութեր («Լրաբ.» 8/IV 69), ռազմանյութեր («Աշխ.» 12/II 69), սայլ—հրասայլերու («Աշխ.» 12/II 69), վայր—արոտավայրեր (Ս, Ըե, 48), զբոսավայրեր (ԳՋ, եժ, I, 53), հավաքավայրեր (ԳՍ, ՄՅԱ, 144), վանկ—միավանկերով (Ս, ե, 5), վեպ—մանրավեպեր (ԳՋ, եժ, I, 116), տառ—գլխատառեր (ՏԿ, ՎԱ, 247), տեր—բաժնետերերուն (ԳՄ, ՄՅԱ, 245), դրամատերեր (ԳՋ, եժ, I, 275), տոմս—այցետոմսեր (ՏԿ, ՎԱ, 126), հրավիրատոմսեր (ԳՍ, ՄՅԱ, 246), տուն—գործատուներ (ՄՄ, եժ, 240), դրամատուներ (ՏԿ, ՎԱ, 71), խաղատուներ (Ն. տ. 120), վաճառատուներ (Ն. տ. 88. «Աշխ.» 12/II 69), կառափնատներ (Ս, Ըե, 33), տունկ—որթատունկեր (Ն. տ. 214), տուփ—դեղատփեր (ՏԿ, ՎԱ, 300), փայտ—խաղափայտեր (Ս, Ըե, 49), փեղկ—ապակեփեղկերուն (ԳՍ, ՄՅԱ, 132), ցուցափեղկեր (Ն. տ. 135), փոս—գերեզմանափոսերուն (Ս, Ըե, 62), փունջ—ծաղկափունջեր (ԳՋ, եժ, I, 285), քար—գերեզմանաքարեր (Ս, Ըե, 20), խաչքարեր (Ս, Ըե, 7), խճաքարեր (ԳՍ, ՄՅԱ, 11), կայծքարերով (ԴՎ, Բ, 75), շիրմաքարեր (Ն. տ. 187), սալաքարեր (ԳՋ, եժ, I, 54), սալաքարերով (ԴՎ, Բ, 64)։

Իսկ այն բառերը, որոնց վերջնաբաղադրիչը բարդությունից դուրս անկախ բառային գործածություն չունի, կամ եթե ունի էլ, բարդության մեջ չի պահպանում հիմնական բառիմաստը, հետևում են երկվանկ-բազմավանկների կառուցատիպին, զուգորդվում են ևե հոգնակերտի հետ։ Մենք արդեն նշել ենք, որ նման բնույթի վերջնաբաղադրիչները կոչում ենք երկրորդ կարգի, ի տարբերություն այն վերջնաբաղադրիչների, որոնցով բարդությունները զուգորդվում են ևե հոգնակերտի հետ։ Արևմտահայ գրական լեզվում

երկրորդ կարգի վերջնաբաղադրիչները կարելի է երեք խմբի բաժանել.

Ա) վերջնաբաղադրիչներ, որոնք սովորաբար հնչյունափոխ կամ անհնչյունափոխ բայարմատներ են, բարդության մեջ իմաստով հյուսվում, ձուլվում են մյուս բաղադրիչ(ներ)ին, դրանց հետ միասին ամբողջ բարդության մեջ հատուցանելով նոր բառիմաստ. այսպես, օրինակ՝ արվեստագետներուն (ԳՋ, եժ, I, 219), մատնագետներ («Աշխ.» 12/II 69), եղբայրասպաններուն (Ս, Ըե, 44), ժամադիրներ (ԳՋ, եժ, I, 27), նորեկներու (ն. տ. 400), եւևչներ (Ս, ե, 82. ԳՋ, եժ, I, 208. ԴՎ, Բ, 12), հողաքափներ («Աշխ.» 12/II 69), բանթողներուն (ն. տ.), անդամալույծներ (Ս, Ըե, 84), դասախոսներ (ՏԿ, ՎԱ, 29), ընդդիմախոսներ (ԳՋ, եժ, I, 452), հնախույզներ (ՀՊ, եժ, III, 30), նորածիններ (Ս, Ըե, 12), աշխարհակալներ (Ս, ե, 69), խնամակալներ (ՀՊ, եժ, VI, 243), ժողկակալներ (ԴՎ, Բ, 271), ջահակալներ (ԼՇ, Ըե, 407), վարսակալներ (Ս, Ըե, 158), մարդակերներ (ն. տ. 89), բնռնակիրներ (ՏԿ, ՎԱ, 111. ՀՊ, եժ, III, 8. ԳՋ, եժ, I, 60), դրոշակակիրներ (ՊԴ, ե, 130), զինակիրներ (ԼՇ, Ըե, 258), թագակիրներ (Ս, Ըե, 45), ջահակիրներ (ն. տ. 37), անչափահասներ (ՀՊ, եժ, VI, 243), ձկնորսներու (ՄՄ, եժ, 110) բերդապահներ (Ս, ե, 163), թիապարտներ (ԴՎ, Բ, 95), գրասերներ («Աշխ.», 12/II 69), իմաստասերներ (ՏԿ, ՎԱ, 140), կատակասերներ (ԳՋ, եժ, I, 125), պճնասերներ (ՀՊ, եժ, VI, 265), ձեռնասուններ (ՏԿ,, ՎԱ, 121), նավակավարներ (Ս, ե, 327), գահավեժներու (ն. տ. 67), ջրվեժներ (ԴՎ, Բ, 265. ՎՔ, ե, 380), հոռետեսներ (ԳՋ, եժ, I, 254, դասատուներ (ն. տ. 279. ՏԿ, ՎԱ, 33), պատասխանատուներ («Աշխ.» 12/II 69), սերմնացաններ (ԳՍ, ՇՅԱ, 147), հավատափոխներ (ՀՔ, ԳԿ, 54):

Բ) վերջնաբաղադրիչներ, որոնք ունեն նաև անկախ գործածություն, բայց բարդության մեջ նույնությամբ չեն պահպանել իրենց բառիմաստը, ենթարկվել են այս կամ այն չափի իմաստափոխության. դիմինանտում է ոչ թե միավանկ վերջնաբաղադրիչի, այլ ամբողջ բարդության իմաստը: Նման դեպքերում կարող է դեր ունենալ նաև բարդության մեջ վերջնաբաղադրիչի ունեցած ձևաբանական արժեքի ուրույն ընկալումը: Բերենք մի քանի օրինակներ. ագռ (անկախ գործածության մեջ կարող է ունենալ ագռնի հոգնակի ձև՝ եր հոգնակերտով) և մահագռներ (ԳՋ, եժ, I, 119), անցք (>անցքեր) և տոդանցքներ (ԳՍ, ՇՅԱ, 231), քղանցքներ (ԴՎ, Բ, 45. ՎՔ, ե, 301), բան (>բաներ) և հայկաբաններ (ՏԿ, ՎԱ, 29), լույս (>լույսեր) և վերջալույսներ (ՎՔ, ե, 46), կապ (>կապեր) և փողկապներ (ԳՋ, եժ, I, 273), կեա (>կեաներ) և սեսա-

կետներ («Աշխ.» 29/II 69), մեծ (>մեծներ) և մեծամեծներ (ԴՎ, Բ, 271), մերձ և մոհամմերծներ (Ս, Ըն, 88) պես և ինձիպետներուն (ԳՍ, ՄՅԱ, 156), իրենպետներուն (ԳՋ, նժ, I, 48), ձևպետներուն (ՀՊ, նժ, VI, 173), մեպետներուն (ԳՍ, ՄՅԱ, 59), սոցպետներուն (ԳՋ, նժ, I, 236), պետ (>պետեր) և գանձապետներու (Ս, ն, 6), գյուղապետներ (Ն. ա. 101), դահճապետներ (ԴՎ, Բ, 137), դրաշպետներ (ԳՋ, նժ, I, 284), լրագրապետներ (ՀՊ, նժ, VI, 46), ներքինապետներու (Ս, ն, 6), վարժապետներ (ՀՊ, նժ, III, 78), վարչապետներ («Աշխ.» 2/II 69), տպարանապետներ (ՀՊ, նժ, III, 8), քրմապետներ (ԴՎ, Բ, 355), տակ (>տակեր) և փլատակներ (ԴՎ, Բ, 34), տուն (>տուներ), և մեծատուններ (ԳՋ, նժ, I, 149), ուր և այլուրեքուն (ՎՔ, ն, 104)։

Գ) Վերջնաբաղադրիչներ, որոնց ձևաբանական արժեքը բարդության մեջ գնահատվում է ոչ նրանց անկախաբար գործածության համարժեքությամբ։ Մինչդեռ արևելահայ գրական լեզուն նման դեպքերում վերջնաբաղադրիչը պահպանում է հոգնակիության հետ ղեպորդվելու նույն վարքագիծը, ինչ որ անկախ գործածության ժամանակ (համմտ. գիր—գրեր, լրագիր—լրագրեր)։ Ըերենք արևմտահայ գրական լեզվում այս երևույթը արձանագրող փաստեր. այր—այրեր, բայց՝ քարայրներ (ԴՎ, Բ, 412, 155. Ս, Ըն, 60. Ս, ն, 261), գիր—գիրեր||գրեր, ամսագիրներ (ԳՍ, ՄՅԱ, 135), լրագիրներ (ՊԴ, ն, 77. ՀՊ, նժ, VI, 21. Ն. ա. III, 8), ծրագիրներ (ԼՇ. Ըն, 41. ԳՍ, ՄՅԱ, 64. «Աշխ.» 12/II 69. «Լրաբ.» 8/IV 69), հուշագիրներուն («Աշխ.» 29/III 69), ձեռագիրներ (ԳՋ, նժ, I, 412. ԼՇ. Ըն, 164), պայմանագիրներ (ԳՋ, նժ, I, 183), պաշտոնագիրներ (Ն. ա. 21), գործ—գործեր, ձեռագործներ (ԳՋ, նժ, I, 249. «Աշխ.» 29/III 69), գունգ—գունդեր, լուսագունդներս (ՊԴ, ն, 53), դարձ և տարեդարձներ (ԳՍ, ՄՅԱ, 231), երգ—երգեր, ձոներգներ («Աշխ. 29/III 69), յուշերգներ (Ն. ա.), սիրերգներ (ՄՄ, նժ, 68), քայլերգներ («Աշխ.» 29/III 69), հոր—հորեր, ջրհորներ (ԴՎ, Բ, 94), մարտ—մարտեր, հակառամարտներ («Աշխ.» 29/III 69), տուն—տուներ||տներ, դինետուններ (ԳՋ, նժ, I, 263. ԳՍ, ՄՅԱ, 100), վաճառատուններուն (ԳՋ, Ն. ա. 54)։

Սրանց մեծ մասը արևելահայ գրական լեզվում այժմ ղեպորդվում է եր հոգնակերտի հետ՝ քարայրեր, ամսագրեր, լրագրեր, ծրագրեր, հուշագրեր, ձեռագրեր, պայմանագրեր, պաշտոնագրեր, լուսագնդեր, ձոներգեր, հուշագրեր, սիրերգեր, քայլերգեր, ճակատամարտեր, դինետներ, վաճառատներ (տե՛ս նաև վերը—գիր, գունդ, կապ, տուն վերջնաբաղադրիչով բարդությունների հոգնակիականգմությունը արևմտահայերենում)։

Մի շարք միավանկ բառեր, որոնք անկախաբար դործածվելիս զուգորդվում են եր հոգնակերտի հետ, դառնալով ածանցական բազադրությունների վերջնանգր, հետևում են երկրորդ կարգի վերջնաբաղադրիչներով բարդությունների հոգնակիակազմության կառուցատիպին, ընդունում են ներ հոգնակերտ։ Այդ բացատրվում է նրանով, որ ածանցված բաղադրության մեջ նրանք մթագնում են իրենց բառիմաստը, բաղադրության նշանակությունն է գերիշխում. այսպես՝ սիրտ—սիրտեր, անսիրտներ (ՊԴ, ե, 106), բախտ—բախտեր, դժբախտներ (ԳՋ, եժ, 1, 58), գիր—գիրեր, տարագիրներ (ՄՄ, եժ, 250), խիղճ—խիղճեր, անխիղճներ (ՊԴ, ե, 106)։

Կան նաև տատանումներ. օր. այցագիններ, «բժշկի այցելության վճար» (ՏԿ, ՎԱ, 266), բայց և՝ այցագիներ (նե տ. 269), ինքնաշարժեր (ԳՍ, ՈՅԱ, 131. «Լրաբ.» 8/IV 69) և ինքնաշարժներ («Աշխ.» 29/III 69)։ Հանդիպում է նաև հավելժահարներ (Հմմտ. ՊԴ, ե, 53), որ ենթադրում է եզակիում նույնպես հատ (փոխ. հատն) ձևը։

Հոգնակիակազմ հիմքերը և նրանց զուգորդումները թեմ նուրվածներում։ *Ինչպես նշեցինք, եզակի ուղղականի ձևը դառնում է հոգնակիակազմ հիմք, որն ընդհանուր է հոգնակի հարացույցի բոլոր կազմավորումներում. ուղիղ և թեք հոլովաձևերում և՛ հիմքերն են ընդհանուր, և՛ հոգնակերտ վերջավորությունները. այսպես՝*

Ուղղ.-հյց.	*հող-եր*	*բլուր-ներ*	*քաղաք-ներ*
Սեռ.-տր.	*հող-եր-ու*	*բլուր-ներ-ու*	*քաղաք-ներ-ու*
Բաց.	*հող-եր-է*	*բլուր-ներ-է*	*քաղաք-ներ-է*
Գործ.	*հող-եր-ով*	*բլուր-ներ-ով*	*քաղաք-ներ-ով*

Այստեղ դժվար չէ նկատել, որ ուղղ.-հայցական հոլովում հոգնակիակազմությունն ունի եզ. ուղղ-ի ձև+եր (+ներ) կազապարը, թեք հոլովաձևերում՝ եզ. ուղղ.-ի ձև+եր (+հոլովակերտ). եզ. ուղղ.-ի ձև+ներ (+հոլովակերտ) կազապարը։ Գրաբական կառուցատիպը հաստատվել է ուղիղ և թեք բոլոր կազմավորումներում։ Հ. Աճառյանն ընդգծում է. «Աշխարհաբարի մեջ թե՛ արևմտյան, և թե՛ մանավանդ արևելյան գրականում հոգնակիի հոլովման խնդիրը բոլորովին լուծված և հաստած է իր վերջնական վախճանին» (ՀԱ, ԼՔՀ, III, 826)։

Նշված կազապարները բնականաբար բնորոշ են համակարգային հոգնակիակազմությանը։ Ոչ-համակարգային և առհատա-

յակ հնատիպ կազմավորումներում հիմքերի և հոգնակերտների դուզորդումները նկատելիորեն այլ են[1]։

Հնչյունաբանորեն վերակազմավորված և չվերակազմավորված հիմքեր։ Արևմտահայ գրական լեզուն հոգնակիական հիմքերի հնչյունաբանական վերակազմավորումները ըստ էության հասցրել է նվազագույնի, բազաձայնական հոգնակերտի դեպքում պահպանվում է հիմքի շեշտադրությունը. բայց քանի որ հիմնական հոգնակերտները՝ եր և ներ մասնիկները ձայնավորում ունեն, այդ պատճառով դրանց հետ զուգորդվող հիմքերը սովորաբար շեշտադուրկ են. հմմտ. օ՛ր>օր-ե՛ր, խաղամ>խաղամ-նե՛ր։ Այսպես է նաև արևելահայ գրականում։ Երկու գրական լեզուների մեջ էական տարբերություններ չկան նաև հիմքերի վանկային վերակազմավորումներում։ Ինչպես նշել ենք,«մենկուկնա» վերջնագաղտնավանկների հոգնակիական հիմքում սովորաբար տեղի է ունենում գաղտնավանկի համատեղում (ամփոփում), որի հետևանքով վանկաբանակությունը խախտվում է, և երկվանկը վերածվում է միավանկի. ա՛ստ(ը)ղ>աստղ-ե՛ր [աստ-ղե՛ր]։

Արևմտահայ գրական լեզվում նկատվում է անհնչյունափոխ հիմքերի հաստատման ուժեղ միտում (հմմտ. ՀԱ, ԼՔՀ, III, 929. ԱՎՔ, ՀԼԴ, 57)։ Այսպես՝ ա. է(ե), օ(ո) շեշտակիր ձայնավորներով միավանկ և բազմավանկ հիմքերում շեշտադրվելով ընդհանրապես անհնչյունափոխ են. ծա՛ո>ծառ-ե՛ր (ՏԿ, ՎԱ, 131), ճա՛ո>ճառ-ե՛ր (ն. տ. 32), դա՛ս>դաս-ե՛ր (29), շա՛տ>շատ-ե՛ր (ՎՔ, Ե, 28), մա՛զ>մազ-ե՛ր (ն. տ. 17), պա՛տ>պատ-ե՛ր (16), թև՛թ>թևթ-ե՛ր (ՏԿ, ՎԱ, 30), վե՛պ>վեպ-ե՛ր (ն. տ. 60), դե՛ղ>դեղ-եր (ԴՎ, Բ, 169), վե՛րք>վերք-ե՛ր (ՎՔ, Ե, 20), ջո՛ջ>ջոջ-ե՛ր (ՏԿ, ՎԱ, 29), ցո՛ւր>ցուր-ե՛ր (ՎՔ, Ե, 50), գավա՛թ>գավաթ-նե՛ր (ՏԿ, ՎԱ, 28), օրինա՛կ>օրինակ-նե՛ր (ն. տ. 29), դպրո՛ց>դպրոց-նե՛ր (ն. տ.), պարո՛ն>պարոն-նե՛ր (ն. տ. 160), տնօրե՛ն>տնօրեն-նե՛ր (ն. տ. 35), պարտեզ>պարտեզ-նե՛ր (ՎՔ, Ե, 70), հանգե՛ս>հանգիս-նե՛ր (ԴՎ, Բ, 327)։

Հնչյունափոխության նկատմամբ զգայուն է, ի. ու ձայնավորները չեն հնչյունափոխվում այն հիմքերում, որոնց համապատասխան նպակի ձևը վերջնափակ-միավանկ է. էջ—էջեր (ՏԿ, ՎԱ, 161), էշ—էշեր (ԴՎ, Բ, 286), իղձ—իղձեր (ն. տ. 111), իր—իրեր (ՎՔ, Ե, 154), ուս—ուսեր (ՏԿ, ՎԱ, 229), ումպ—ումպեր (ն. տ. 262), ուխտ—ուխտեր (ԴՎ, Բ2, 40), ուղտ—ուղտեր (ն. տ. 275), նաև՝

---

[1] Այդ մասին կխոսենք քիչ հետո (տե՛ս «Ոչ-համակարգային և հնատիպ հոգնակիական ձևույթներ» հատվածը)։

ուսեր (Ս, Ըն, 17), ուղխեր (ՎՔ, ե, 142), ուլեր (ն. տ. 85), ուժեր (240). այլ ձայնավորները նույն դեպքում ընդհանրապես անհնչյունափոխ են. համմտ. օր>օր-եր (ՏԿ, ՎԱ, 40), օձ>օձ-եր (ԴՎ, Բ, 57)։ Հոգնակիակազմ հիմքերում անհնչյունափոխ են նաև յա, այ. ույ, յու, յն երկհնչյունները. նյարդ>նյարդ-եր (ԴՎ, Բ, 96), ձայն>ձայն-եր (ՏԿ ՎԱ, 31), այտ>այտ-եր (ն. տ. 53). նաև՝ քայլ-եր (ԴՎ, Բ, 88), այրեր (ն. տ. 70), այգեր (ՎՔ, ե, 149), հույս—հույսեր (ՏԿ, ՎԱ, 41), դույն—դույներ (ն. տ. 88), բույն—բույներ (ԴՎ, Բ, 218), լույս—լույսեր (Ս, Ըն, 11), քույր—քույրեր (ՎՔ, ե, 42), հյուր—հյուրեր (ՏԿ, ՎԱ, 74), այուն—այուներ (ԴՎ, Բ 76), ձյուղ—ձյուղեր (ՎՔ ե, 51), երգ—երգեր (ՏԿ, ՎԱ, 30), աղբյուր—աղբյուրներ (ն. տ. 35) Ա, Ըն, 4. ՎՔ, ե, 15), արյուն—արյուններ (ԴՎ, Բ, 63), անկյուն—անկյուններ (ՎՔ, ե, 151), վայրկյան—վայրկյաններ (ՏԿ, ՎԱ, 46. ՎՔ, ե, 47), անցյալ—անցյալներ (ՏԿ, ՎԱ, 49), եղբայր—եղբայրներ (ն. տ. 60. Ս, Ըն, 5. ՎՔ, ե, 282), հանգույց—հանգույցներ (ՏԿ, ՎԱ, 83), համբույր—համբույրներ (ԴՎ, Բ, 38), համույք—համույքներ (ն. տ. 63), խարույկ—խարույկներ (Ս, Ըն 8)։

Արևմտահայ գրական լեզուն ի, ու ձայնավորներ ունեցող փակ-միավանկ բառերի հոգնակիակազմության անհնչյունափոխ հիմքերի խնդրում նկատելիորեն առաջ է անցել արևելահայ գրական լեզվից։ Արևմտահայ գրականությունից մեր դիտարկած տեքստերում ավելի շատ հանդիպել ենք ու-ով և ի-ով անհնչյունափոխ հիմքերի քան հնչյունափոխ, ըստ որում հնչյունափոխ հիմքեր գրեթե չեն հադիպում՝ առանց զուգահեռաբար գործածվող նրանց անհնչյունափոխ տարբերակների։

Բերենք ու-ով անհնչյունափոխ հիմքերի մի քանի օրինակ համապատասխան վկայություններով. բուն-, բուռ-, բուրդ-, բուրդ-, գուղձ-, գուռ-, դունչ-, դուրս-, թուզ-, թումբ-, թուր-, թուրբ-, թուփ-, լուր-, խութ-, խուղ-, խումբ-, խունկ-, խուրձ-, ծուխ-, կուռք-, կուրծք-, հուն-, հունդ-, հուշ-, հուր-, ձուկ-, մուխ-, մուկ-, մուշկ-, մուրճ-, շուն-, շունչ-, ռումբ-, ռունգ-, սուգ-, սունկ-, սուր-, սուրբ-, սուրճ-, տունկ-, տուրբ-, տուփ-, ցուլ-, փունջ-, փուշ-, փուռ-, քունք-, քուրդ-, քուրձ-, քուրմ-։ Սրանց զուգադրումներից են՝ բուներ (ԴՎ, Բ, 218. ՄՄ, Ե֊, 26. ԼՇ, Ըն, 71), բուռեր (ԴՎ, Բ, 374), բուրգեր (ԴՎ, Բ, 396, 226. ԼՇ, Ըն, 357. ՎՔ. ե, 199), բուրդեր (ԴՎ, Բ, 325), գուղձեր (ն. տ. 110), գուռեր (ն. տ. 230, 234), դունչեր (ն. տ. 234), դուրսեր (ԳՋ, Ե֊, I, 76), թուզեր (ՄՄ, Ե֊, 211), թումբեր (ՎՔ, ե, 322, 152), թուրեր (ՊԴ, ե, 38, 198. ԴՎ, Բ, 65), թուրքեր (ՄՊ, Տ, 51. ՎՔ, ե, 287. ԳՍ, ՍՅԱ,

37), թուփեր (Ծ, ե, 49, 90. Դվ, Բ, 170, 199, 398. ՄՄ, եժ, 115. Ս, Ըե, 106. ԼՇ, Ըե, 437. ՎՔ, ե, 379), լուրեր (ՏԿ, ՎԱ, 107. ՀՊ, եժ, VI, 171. Դվ, Բ, 110), խուրեր (Դվ, Բ, 206. ՄՄ, եժ, 89. Ս, Ըե, 225. ԼՇ, Ըե, 469), խուղեր (Դվ, Բ, 136), խումբեր (Ծ, ե, 21, 104. ՏԿ, ՎԱ, 72. Ս, Ըե, 38. ԳՍ, ԾՅԱ, 11), խունկեր (Դվ, Բ, 223. Ս, Ըե, 164), խուրձեր (Դվ, Բ, 394. «Լրաբ.» 8/IV 69), ծուխեր (Դվ, Բ, 136), կուռեր (ԳՋ, եժ, I, 128. Դվ, Բ, 140, 330. ՄՄ, եժ, 249. Ս, Ըե, 8), կուրծքեր (Դվ, Բ, 392, 125. Ս, Ըե, 216. ՎՔ, ե, 118. ԳՍ, ԾՅԱ, 70), հուներ (ՎՔ, ե, 251), հունդեր (Դվ, Բ, 100, 381), հուշեր (Դվ, Բ, 138. ՎՔ, ե, 342, 164. «Ազխ.» 29/III 69), հուրեր (Ս, Ըե, 17. ՎՔ, ե, 326), ձուկեր (Դվ, Բ, 42. ԳՍ, ԾՅԱ, 12. «Լրաբեր» 8/IV 69), մուրեր (Ս, Ըե, 179), մուկեր (ՀՊ, եժ, III, 228. Դվ, Բ, 309. ԳՍ, ԾՅԱ, 153), մուշկեր (Դվ, Բ, 231), մուրհեր (Դվ, Բ, 123, 292. Ս, Ըե, 66), շուներ (Ծ, ե, 264. Դվ, Բ, 129. ՄՄ, եժ, 249. Ս, Ըե, 80. ԼՇ, Ըե, 73. ՎՔ, ե, 254), շունչեր (Ծ, ե, 186. Ս, Ըե, 26), ռումբեր (Դվ, Բ, 142. Ս, Ըե, 46), ռունգեր (Դվ, Բ, 86. ԳՍ, ԾՅԱ, 32, 97, 200), սուգեր (ԳՋ, եժ, I, 120. Ս, Ըե, 50), սունկեր (Դվ, Բ, 339), սուրեր (ՊԴ, ե, 142. Ծ, ե, 80. Դվ, Բ, 125. Ս, Ըե, 6. ԼՇ, Ըե, 515. ՎՔ, ե, 295. ԳՍ, ԾՅԱ, 23), սուրգեր (ԳՋ, եժ, I, 66. Դվ, Բ, 107. ՄՄ, եժ, 169. ՎՔ, ե, 295. ԳՍ, ԾՅԱ, 16), սուրհեր (ԳՍ, ԾՅԱ, 162), տունկեր (ՄՊ, Տ, 78. ՏԿ, ՎԱ, 268. ՄՄ, եժ 75. ԳՍ, ԾՅԱ, 407), տուրքեր (Ծ, ե. 257. ՎՔ, ե, 318. «Լրաբ.» 8/IV 69), տուփեր (ԳՋ, եժ, I, 54. ՎՔ, ե, 13. ԳՍ, ԾՅԱ, 34), յուլեր (Ս, Ըե, 20), փունջեր (ՄՊ, Տ, 40. ՏԿ, ՎԱ, 93. Ս, Ըե, 52. ԼՇ, Ըե, 261), փուշեր (ՄՊ, Տ, 78. ԳՋ, եժ, I, 414. Դվ, Բ, 170. ՄՄ, եժ, 38. ՎՔ, ե, 426), փուռեր (ԳՍ, ԾՅԱ, 241), քունքեր (Դվ. Բ, 239. ՄՄ, եժ, 88), քուրդեր (Ծ, ե, 283), քուրձեր (Դվ, Բ, 156), քումեր (ԴՋ, Բ, 53, 356. Ս. Ըե, 110. ԼՇ, Ըե, 258. ՎՔ, ե, 200). «Ազխ.» 12/II 69)։

Մի շարք հիմքեր հանդիպում են զուգահեռ գործածվող տարբերակներով՝ հնչյունափոխ, անհնչյունափոխ, բայց առանձնապես անհնչյունափոխ տարբերակով, որը և միտում ունի կայունանալու. դունդ-||գնդ-, դուռն-||դրն-, թուղթ-||թղթ-, թուշ-||թշ-, ծունկ-||ծնկ-, շուրթ-||շրթն-, ջուր-||ջր-, տուն-||տն-[34]։ Այսպես՝ գունդ-||գնդ-> գունդեր (Դվ, Բ, 278. Ս, Ըե, 15) և գնդեր (Ծ, ե, 164).

---

[34] Ցատա բառի հոգնակին դիտարկված տեքստերում հանդիպել ենք մեկ անգամ, այն էլ ցռտեր (ցռտ-եր) հնչյունափոխված հիմքով. տե՛ս ՏԿ, ՎԱ, 298։ Սա թեև անհոգնական է քսա էությամբ, բայց կարող է որոշակի բառային իմաստավորման դեպքում կազմել հոգնակի ձև։

դուռն-||դռն->դուռներ (ՏԿ, ՎԱ, 54. ԳՋ, եժ, I, 3. ԴՎ, Բ, 258. Ս, ՀԸ, 37. ՎՔ, Ե, 30, 88, 106, 283. ԼՇ, ՐԵ, 309. ԳՍ, ՄՅԱ, 175) և դռներ (ՊԴ, Ե, 212, 173. Ծ, Ե, 10, 48, 128. ԳՋ, եժ, I, 4. ԴՎ, Բ, 55, 293. Ս, ՀԸ, 38). թուղթ-||թղթ>թուղթներ (ՊԴ, Ե, 421. Ծ, Ե, 166. ԳՋ, եժ, I, 33. ԴՎ, Բ, 357. ՎՔ, Ե, 349. ԳՍ, ՄՅԱ, 116) և թղթեր (Ծ, Ե, 107. ՏԿ, ՎԱ, 65, 105). թուշ-||թշ->թուշներ (ԴՎ, Բ, 201. ԳՍ, ՄՅԱ, 134) և թշեր (ԴՎ, Բ, 168). ծունկ-||ծնկ->ծունկներ (ՊԴ, Ե, 137. ՏԿ, ՎԱ, 252. ԳՋ, եժ, I, 147. ԴՎ, Բ, 86, 94. Ս, ՀԸ, 136. ԼՇ, ՐԵ, 270. ԳՍ, ՄՅԱ, 20) և ծնկներ (ՏԿ, ՎԱ, 220, 280). շուրթ-||շրթն->շուրթներ (ՊԴ, Ե, 8. ԳՋ, եժ, I, 15. ՎՔ, Ե, 292) և շրթներ (ՊԴ, Ե, 89. ՏԿ, ՎԱ, 42, 98. ԴՎ, Բ, 20, 39, 105. ՎՔ, Ե, 18, 87, 122, 126, 283). ջուր-||ջր->ջուրեր (Ծ, Ե, 163. ՏԿ, ՎԱ, 230. ԳՋ, եժ, I, 25. ՄՄ, եժ, 226. ԴՎ, Բ, 43, 139. Ս, ՀԸ, 53. ՀՊ, եժ, VI, 40. ՎՔ, Ե, 469. ԳՍ, ՄՅԱ, 21. «Աշխ.» 12/II 69) և ջրեր (ԴՎ, Բ, 64. Ս, ՀԸ, 141). տուն-||տն->տուներ (Ծ, Ե, 10, 110, 128. ՏԿ, ՎԱ, 280. ՀՊ, եժ, III, 23, եժ—VI, 46. ՄՄ, եժ, 225. ԴՎ, Բ, 178. ԳՋ, եժ, I, 4. Ս, ՀԸ, 24. ՎՔ, Ե, 242. ԼՇ, ՐԵ, 288. ԳՍ, ՄՅԱ, 74. «Աշխ.» 12/II 69) և տներ (Ծ, Ե, 91).

Ի-ով (եզակի ձևում փակ-միավանկ) հիմքերը ևս գերազանցապես անհնչյունափոխ են: Մենք դիտարկած տեքստերում հանդիպել ենք հետևյալներին. բիբ-, բիծ-, գինդ-, դիրք-, զիստ-, թիվ-, լիճ-, խիճ-, խինդ-, ծիլ-, ծիծ-, ծիտ-, կին-, կինճ-, կիրճ-, հիմ-, հին-, ճիգ-, ճիվ-, ձիրք-, միս-, միրգ-, նիգ-, շիշ-, շիթ-, պինդ-, վիզ-, վիհ-, տիկ-, ցին-, փիղ-, քիթ-, քիլ-, քիստ-, քիվ-.

Այժմ բերենք այս անհնչյունափոխ հիմքերի զուգորդումները համապատասխան վկայություններով. բիբեր (ՊԴ, Ե, 145. ԴՎ, Բ, 25, 88, 93, 137. Ս, ՀԸ, 3. ՎՔ, Ե, 466), բիծեր (ԳՋ, եժ, I, 154. ԴՎ, Բ, 180. ՄՄ, եժ, 25. ՎՔ, Ե, 449), գինդեր (ԴՎ, Բ, 202), դիրքեր (Ծ, Ե, 65. ՏԿ, ՎԱ, 100. ՄՄ, եժ, 217), զիստեր (ԴՎ, Բ, 230, 276. ԳՍ, ՄՅԱ, 36), թիվեր (Ս, ՀԸ, 127. ԼՇ, ՐԵ, 436. «Լրաբ.» 8/IV 69), լիճեր (ԴՎ, Բ, 155. ՄՄ, եժ, 74. Ս, ՀԸ, 11. ՎՔ, Ե, 228), խիճեր (ԴՎ, Բ, 111, 127. ՄՄ, եժ, 90. ԼՇ, ՐԵ, 98), խինդեր (ԴՎ, Բ, 184), ծիլեր (ԴՎ, Բ, 96. ՎՔ, Ե, 196), ծիծեր (ԴՎ, Բ, 60, 65, 315. ՄՄ, եժ, 135. ՎՔ, Ե, 85, 260), ծիտեր (ԴՎ, Բ 380), կիներ (ՊԴ, Ե, 213. ՏԿ, ՎԱ, 71, 103. ՀՊ, եժ, VI, 57. ԳՋ, եժ, I, 55. ԴՎ, Բ, 124, 133. Ս, ՀԸ, 88. ԼՇ, ՐԵ, 144. ՎՔ, Ե, 19, 310), կինճեր (ԴՎ, Բ, 206), կիրճեր (Ծ, Ե, 175, 313. ԴՎ, Բ, 190), հիմեր (ԳՋ, եժ, I, 40. ԴՎ, Բ, 321. ՎՔ, Ե, 270), հիներ (Ծ, Ե, 80. ՀՊ, եժ, III, 10), ճիգեր (ՏԿ, ՎԱ, 173, 253. ԳՋ, եժ, I, 147. ԳՍ, ՄՅԱ, 233), ճիվեր (ԳՍ, ՄՅԱ, 18), ձիրքեր (Ծ, Ե,

70), մխեր (ՀՊ, եժ, III, 64, Ս, Ըն, 65. ՎՔ, ե, 171, 246. ԴՍ, ՄՅԱ, 82), միրգեր (ՎՔ, ե, 468), նիգեր (ԴՎ, Բ, 60), շիշեր (ՏԿ, ՎԱ, 93. ԳՋ, եժ, I, 57. ԴՍ, ՄՅԱ, 78), շիթեր (ՊԴ, ե, 17. ԴՎ, Բ, 403. ՄՄ, եժ, 231), պինչեր (ԴՎ, Բ, 128), վիգեր (ԴՎ, Բ, 182, 410. Ս, Ըն, 5), վիհեր (ԴՎ, Բ, 155), տիկեր (Ո, ե, 79), ցիներ (ԴՎ, Բ, 129), փիղեր (ՊԴ, ե, 173), քիթեր (ՀՊ, եժ, III, 7), քիչեր (ԴՍ, ՄՅԱ, 51), քիսաեր (ԴՎ, Բ, 386), քիվեր (ԴՎ, Բ, 62. ՎՔ, ե, 66)։

Կան նաև ի-ով հիմքեր, որոնք գործածվում են և՛ անհնչյունափոխ, և՛ հնչյունափոխ տարբերակներով, բնն ընդհանուր միտումը տանում է դեպի անհնչյունափոխ տարբերակի հաստատումն ու կայունացումը։ Մեր դիտարկած տեքստերում նկատել ենք հետևյալները. գիծ–‖գծ–, գիրք‖գրք–, գին‖գն–, գիր–‖գր–, լինդ–‖լնդ–, կիրճ–‖կրճ–, ճիչ–‖ճչ–, միտք–‖մտք–, չիղ–‖չղ–, սիրտ–‖սրտ–, վիշտ– վշտ–։ Այսպես՝ գիծեր (ՄՄ, եժ, 210, ԳՋ, եժ, I, 7. ԴՎ, Բ, 215. ՎՔ, ե, 312. ԴՍ, ՄՅԱ, 106. «Աշխ.» 12/II 69. «Լրաբ.» 8/IV 69) և գծեր (ՏԿ, ՎԱ, 59. ՀՊ, եժ, III,16). գիրք (ՀՊ, եժ, III, 12. ԴՍ, ՄՅԱ, 134. «Աշխ.» 12/II 69) և գրեր (ՏԿ, ՎԱ, 265. ՀՊ, եժ, III, 11). գիրքեր (ԴՎ, Բ, 327. ԳՋ, եժ, I, 31. ՎՔ, ե, 137, 193. ԴՍ, ՄՅԱ, 36) և գրքեր (Ո, ե, 18. ԳՋ, եժ, I, 129. ԴՍ, ՄՅԱ, 40). գիներ (Ո, ե, 168. ԳՋ, եժ, I, 117. ՀՊ, եժ, VI, 15. ԴՍ, ՄՅԱ, 246) և գներ (ՏԿ, ՎԱ, 280). լինդեր (ԴՎ, Բ, 325) և լնդեր (Ն. ա. 72). կիրճեր (Ո, ե, 121. ԴՎ, Բ, 223. ԳՋ, եժ, I, 27. ՎՔ, ե, 233. ԴՍ, ՄՅԱ, 100) և կրճեր (Ա, Ըն, 245). ճիչեր (ԴՎ, Բ, 88. Ս, Ըն, 52. ՎՔ, ե, 96. ՀՇ, Ըն. 445, ԴՍ, ՄՅԱ, 333), և ճչեր (Ո, ե, 33. ՏԿ, ՎԱ, 145, 291). միտքեր (ՄՄ, եժ, 203. ՎՔ, ե, 458. ԴՍ, ՄՅԱ, 102) և մտքեր (ՏԿ, ՎԱ, 30, 31. ԴՎ, Բ, 295. Ս, Ըն, 171). չիղեր (Ո, ե, 67, 245. ՄՄ, եժ, 241. ԴՎ, Բ, 325, 274. ԳՋ, եժ, I, 26, ՀՊ, եժ, VI, 151. ԴՍ, ՄՅԱ, 43) և չղեր (ԴՎ, Բ, 26, 103), սիրտեր (ՄՄ, եժ, 177, 186. ԴՎ, Բ, 230, 319, ՎՔ. ե, 4, 117, 229. ԴՍ, ՄՅԱ, 225) և սրտեր (ՊԴ, ե, 77. Ս ե, 292. ՏԿ, ՎԱ, 31, 43, 51. ԳՋ, եժ, I, 107. ԴՎ, Բ, 28, 69, 121, 235, 295. Ս, Ըն, 14, 46). վիշտեր (ՏԿ, ՎԱ, 252, 266. ՀՊ, եժ, VI, 214. ՎՔ, ե, 42, 195) և վշտեր (ՏԿ, ՎԱ, 119. Ս, Ըն, 25)[35]։

Անկասկած արևմտահայ գրականության այլ տեքստերում և խոսակցականում հնարավոր են փոխանցումներ հնչյունափոխ հիմքերից անհնչյունափոխներին և հակառակը, սակայն մեր բեր-

---

[35] Ցիլ բառի հոդակապին նշված տեքստերում հանդիպել ենք մեկ անգամ, այն էլ չ-ով հնչյունափոխ հիմքով. տե՛ս ԴՎ, Բ, 25։

փաստերը ընդգծում են զարգացման ընդհանուր միտումը (տենդենցը)։

Նույն ու, ի, ձայնավորները երկվանկ-բազմավանկ հիմքերում շեշտազրկվելով սովորաբար չեն հնչյունափոխվում (եթե հաշվի չառնենք այն բացառիկ հիմքակազմություններըը, որոնք հետևում են բարբառային որևէ կազապարի). ուսում—ուսումներ (ՏԿ, ՎԱ, 29), խորհուրդ—խորհուրդներ (Ն. տ. 39. ՎՔ, ե, 45), անասուն—անասուններ (ՏԿ, ՎԱ, 66), զարուն—զարուններ (Ն. տ. 75), փետուր—փետուրներ (94), այսպես և՝ բազուկներ (Ն. տ. 98. Ս, ՀԸ, 3), շրթունքներ (ՏԿ, ՎԱ, 212. ՎՔ, ե, 87), շամփուրներ (ՏԿ, ՎԱ, 300), մանուկներ (ԴՎ, Բ, 40), խոստումներ (Ն. տ.), փրփուրներ (45), ժողովուրդներ (77), սերունդներ (75. Ս, ՀԸ, 25), երդումներ (Ս, ՀԸ, 5), շարժումներ (5), դյուցազուններ (6), ափունքներ (ՎՔ, ե, 45), մրմունջներ (77)։ Այժմ մի քանի օրինակներ ի ունեցող անհնչյունափոխ հիմքերից. ամպիկ>ամպիկ-ներ (ՏԿ, ՎԱ, 28), շապիկ>շապիկ-ներ (Ն. տ. 49), զահիճ>զահիճներ (60), կոշիկ>կոշիկ-ներ (65), աղչիկ>աղչիկ-ներ (68), այսպես և՝ ծաղիկներ (ԴՎ, Բ, 21), մոխիրներ (Ն. տ. 27), շիրիմներ (43), կամիջներ (65), արծիվներ (Ս, ՀԸ, 5), հովիվներ (136), քրտինքներ (ՎՔ, ե, 196), անիվներ (249)։

Երկիր բառի հոգնակիակազմ հիմքում ի ձայնավորը թեև շեշտազրկվում է, բայց մնում է անհնչյունափոխ՝ երկիր-ներ («Աշխ.» 12/II 69. «Լրաբ.» 8/IV 69). մինչդեռ արևելահայերենում այն հնչյունափոխվում է (երկիր>երկր-ներ)՝ իբրև բացառություն։

Զևարաձևորեն վերակազմավորված և չվերակազմավորված հիմքեր։ *Արևմտահայ գրական լեզուն չի զարգացրել ձևույթային կամ իմաստաբանական հատկանիշով առանձնացող հիմքատարբերակներ։ Թեև ըստ Այտընյանի քերականության (ԱԱ, ՔՔ, 14) և հետագայում առանձին հեղինակների մոտ առկա են՝ ձեռվըներ, ոտվըներ, մատվըներ, աչվըներ, ճոճմվըներ||ըճմվիներ, ծնկվըներ ձևեր, որոնք հիմնականում մարմնի զույգ անդամներ ցույց տվող միավանկ բառերի բառիմաստով են պայմանավորված, բայց դրանք երբեմնի թվային ենթակարգի վերապրուկներ են, ժողովրդական լեզվի ազդեցությամբ՝ լայն տարածում չգտած կազմավորումներ։ Ինչ մնում է հիմքերի ձևաբանական այլ առանձնահատկություններին, ապա ամենից առաջ առանձնանում են միավանկ այն հիմքերը, որոնք վերակազմավորված են երբեմնի ն հանգովգառ—գառներ (ԴՎ, Բ, 180. ՎՔ, ե, 112). դուռ—դուռներ (ՏԿ, ՎԱ, 54. ԴՎ, Բ, 416. ՎՔ, ե, 30, 88, 106, 283. Ս, ՀԸ, 37) և դռներ (Ս, ՀԸ, 82). նռ—նռներ (ԴՎ, Բ, 88, 236. Ս, ՀԸ, 12). բոռ—բոռներ*

(ԴՎ, Բ, 63. Ս, ՔԸ, 162). լեռ—լեռներ (ԴՎ, Բ, 45, 96. Ս, ՔԸ, 40, 143. ՎՔ, Ե, 45, 136). հարս—հարսներ (Ս, ՔԸ, 153, 200). ձեռ—ձեռներ (ՏԿ, ՎԱ, 98). մատ—մատներ (ԴՎ, Բ, 139, 322. ՏԿ, ՎԱ, 39. Ս, ՔԸ, 179. ՎՔ, Ե, 31, 202, 212). շուրթ—շրթներ (ՏԿ, ՎԱ, 41, 53, 98. ԴՎ, Բ, 20. ՎՔ, Ե, 18, 87). ոտ—ոտներ (ՏԿ, ՎԱ, 42, 89).

Սակայն հոգնակիակազմ հիմքերում և հանգի վերականգնումն ուղեկցվում է տատանումներով, երբեմն՝ չվերականգնումով. այսպես՝ մատեր (ԴՎ, Բ, 24, 48), ձուկերուն (Ն. տ. 42), հարսեր (53, 86, 111), հմմտ. նաև՝ հավերժահարսեր (136), ծունկեր (86, 94, 340, 129), ոտնգեր (86, 161), եզեր (396), սազմեր (63), սերմեր (138), կամեր (170), որմեր (244), ունկեր (275), մուկերուն (309), շրթերեն (ՏԿ, ՎԱ, 45), որդեր (ՎՔ, Ե, 44), հարսերու պես (Ն. տ. 46), որմերուն (69, 312), մասեր (110), Ամազոնի ափերուն (382). հիմերն (270), ակեր «անվի» (323).

2. Ականջները ևս հատատում է, որ արևմտահայ գրական լեզուն և հանգի վերականգնման մեջ հետևողական չէ. գործում են նաև առանց ն-ի ձևեր. Այդ երևույթը նա մեկնաբանում է Պոլսի ժողովրդական լեզվի ազդեցությամբ.

Ձևաբանական այլ վերակազմավորումներ գրեթե չկան, եթե նկատի չունենանք պատմականորեն կատարված տեղաշարժերը: Այսպես երբեմն շատ անեղականներ իմաստով գիտակցվում են եղակի, և նախկին հոգնակի ձևը ծառայում է իբրև հոգնակիի հիմք. սկզբունքներ (ՏԿ, ՎԱ, 137), գովանքներ (Ն. տ. 147), ըմպելիքներ (178), պատրանքներ (168), հիմունքներ (ԴՔ, Բ, 83), տարփանքներուս (350), հոսանքներ (Ս, ՔԸ, 220), հորձանքներ (245). գգայարանքներ (ՎՔ, Ե, 167), այսինքն՝ սկզբունք-ներ, գգվանք-ներ, ըմպելիք-ներ ևն.

Գ) Գոյականաբար գործածված բառերի հոգնակիակազմությունը: *Ածականները, թվականները և դրանց հարաբերակից դերանուններն ու դերբայները գոյականաբար գործածվելիս և ընդհանրապես փոխանունները հետևում են գոյականների հոգնակիակազմությանը ըստ վանկաքանակության նորմայի. ուրիշներ (ՏԿ, ՎԱ, 31), բսածներդ (Ն. տ. 104), գաթնողներ (159), ձախողվածները (174), փութացողները (287), չարերը (138), նևրկա եղողները (159), բարիներուն հետ (208), հազարներ (308), ուրիշներ (ԴՎԲ, 26), քշվածները (28), մտերիմներ (39), անկեղծներուն (356), ապրողներուն (69), անգութներուն (Ս, ՔՆ, 200), տեսածնե-*

րեն (205) տկարներուն (ՎՔ, b, 193), քիչերուն (178), կովողներուն (197), աղվորներ (61)։

Ինչպես նկատելի է, օրինաչափորեն միավանկները զուգորդված են եր, երկվանկ-բազմավանկները՝ ներ հոգնակերտների հետ։

Արևմտահայ գրական լեզվում սեռականից կազմվող սոսացական արժեքով փոխանուններք ունեն հոգնակիակազմության յուրահատկություններ։ Անդրադառնանք այդպիսի մի քանի կազմավորումների։

Հայտնի է, որ նախադասության կամ բառակապակցության գծային շարքը ունի որոշակի խորություն՝ կապված նախադասության անդամների և նախադասության անդամ կազմող բաղադրիչների քանակի հետ։ Մեզ տվյալ դեպքում հետաքրքրում են այն խորություննները, որոնք սոսացական աստիճանականություն ունեն. հմմտ. իմ գիրքը և իմ գրքի թերթերը, ուր առաջինում երկաստիճան, իսկ երկրորդում եռաստիճան խորություն ունենք։ Նոր հայերենը հոգներին ուրույն ֆունկցիաներ տալով հնարավորություն է ձեռք բերել համառոտելու կառուցվածքային այդ միավորները։ Իմ գիրքը խորության փոխարեն, նույն միտքը պահպանելով, կարելի է ասել իմը (մասամբ և՝ իմս)՝ գիրքը բաղադրիչի կրճատումով (որ և անցում է շարահյուսականից ձևաբանականին), կամ գիրս՝ իմ բաղադրիչի կրճատումով (սա էլ շարահյուսական կազմավորումը ձևաբանականով փոխարկվելու մի երևույթ է)։

Եթե այդ այդպես է, ապա արտահայտության պլանում կունենանք (վերցված նաև այլ դեպքերի հարաբերությամբ).

իմ գիրքը (իմս)	իմը	գիրքս
քո գիրքը (քոնդ)	քոնը	գիրքդ
նրա գիրքը —	նրանը	
իր գիրքը —	իրենը	գիրքը

Արևելյան գրական հայերենում իմը, ինը, նրանը, իրենը բոսացական փոխանուններք, առանց հոգնակի ձևեր կազմելու, համառոտում են առաջին շարքի միավորները (իմ գիրքը, քո գիրքը, նրա իր գիրքը), փոխարինում են վերջին շարքի միավորներին (գիրքս, գիրքդ, գիրքը), ինչպես և նրանց հոգնակիներին՝ իմ գրքերը են, գրքերս են։ Մինչդեռ արևմտահայերենում փոխանվանական նման կազմավորումները ունեն համապատասխանաբար եղակի և հոգնակի ձևեր. իրենը և իրենները։ Այս վերաբերում է ոչ միայն դերանունների սեռականներից, այլև ընդհանրապես սեռականներից կազմված սոսացական փոխանուններ հոգնակիներին։ Հմմտ. ձերիններդը (Տկ, ՎԱ, 87. Դվ, Բ, 21), մերիններդը (Տկ, ՎԱ,

198. Ս, ՀԸ, 58), իրեններուն (ՏԿ, ՎԱ, 288. ԴՎ, Բ, 89), իմիններու (ԴՎ, Բ, 37. ՎՔ, Ե, 427), «Դուն ֆուկինեներուդ սիրտ տալու տեչ ինքդ կուլաս» (ՏԿ, ՎԱ, 299). նաև՝ «իրենց տունիններեր ինչ կարծիք ունին այս ամուսնության վրա» (Ն. տ. 113)։

Արևմտահայ դրական լեզվում ևս որոշ անիսկական կապէք (հետ, վրա, մեջ, քով, շուրջ, տակ ևն) կարող են –եր–նի+ստաց. հոդ կազապարով հոգնակիակազմ զուգորդումներ ունենալ և ձևավ բերել մակբայական-պարագայական կերառություններ։ Նման կազմավորումներում կազապարը հնարավորություն է տալիս համառոտելու մեզ հետ, ձեզ հետ, նրանց հետ կառուցվածքները համմտ. եզ. ձևերում՝ ինձ հետ>հետս, քեզ հետ>հետդ, նրա հետ>հետը. այստեղ առկա են ս—ինձ, դ—քեզ, ն—նրա փոխարկումներ, որ հոգնակիում հնարավոր չէ։

եր–նի+ստաց. հոդ կազապարը սովորաբար փոխարինում է դերանվան սեռականի ձևին. համմտ. մեջերնիս (ՏԿ, ՎԱ, 163)=մեր մեջ. հետերնիդ (Ն. տ. 211)=ձեր հետ. քովերնին (ԴՎ, Բ, 241. ՎՔ. Ե, 462)=նրանց||իրենց քով։

Ինչպես տեսնում ենք, նշված կապերի հետ ստացական հոդերի գործածությունը եզակի կազմավորումներում փոխարինում է կապի եզակի դերանուն-խնդրին, իսկ դրանց համապատասխան հոգնակի կազմավորումներում կապի հոգնակի դերանուն-խնդրին փոխարինում է –եր–նի+ստաց. հոդ կազապարը։

Դ) Փոխառյալ բառերի հոգնակիակազմությունը։ Փոխառյալ բառերը, ընդ որում նորագույն փոխառությունները հետևում են մայրենի լեզվի օրինաչափություններին. հոգնակիակազմության մեջ էլ այդ այդպես է, ինչպես տեսանք այլ առիթներով. համմտ. նաև՝ ստեպներ (ՎՔ, Ե, 428), սերիմոնիներու պետք չկա (ՏԿ, ՎԱ, 187), կարտաններուն (190)։ Ուստի այստեղ չենք ծանրանում այդ հարցի վրա։

Ե) Հոգնակիակազմություն և հոդառություն. ստացական հոգնակիներ։ Արևմտահայ դրական լեզուն ստացական հոգնակիակազմության մեջ ուրույն զարգացում է ունեցել. միավանկների ուղիղ ձևերում զարգացրել է եր–նի+ս կազապարը (այս մասին համմտ. ԱՍ, ՔՔ, 48—49). օր. օրերնիդ, ուր օր-հիմքն է, եր–նի՝ զույգ հոգնակին, իսկ դ-ն ստացական հոդն է։ Բերենք այս կազապարով կազմավորումներ. «Քայց ու՞ր է խելքերնիդ» (ՏԿ, ՎԱ, 106), «Տուներնին դժոխք պիտի դառնա» (Ն. տ. 155), «Եթե սրաերնին քար ալ ըլլա պիտի հանձնին» (303), նաև՝ խերերնին (56), վարձքերնիդ (206), խոսքերնին (56), պոչերնին (94), հարսերնին (163),

արտերնին (167), հացերնիս (231), գուլներնիդ (314), ծունկերնին (Դվ, Բ, 95), կուրծքերնին (76), միսերնիդ (323), մազերնիս (96), շունչերնին (ն. տ.), ոտնգերնին (ն. տ.), քայլերնին (122), թևերնին (154), գոգերնին (219), վիզերնին (234), բիբերնին (330), մորթերնին (231), հոնքերնիդ (ն. տ.), մատերնիդ (231), թուշերնիդ (ն. տ.), այտերնիդ (ն. տ.), աչքերնիս (Ս, ՀԸ, 8), կամքերնիս (55), ոտքերնին (89), կողմերնիդ (177), սուրերնին (153), չորսերնիդ (190), չորսերնիս՝ (197), հագերնին (107), աչքերնին (ՎՔ, ե, 377)։

Բոլոր օրինակներում ունենք երեք սահցական հոգերի և եր–նի զույգ հոգնակերտի բաշխված զուգորդումներ՝ եր–նի–ս, եր–նի–դ, եր–նի–ն։ Թեք հոլովաձևերում նի տարրի և հոլովական վերջավորության ձայնավոր տարրի վերափոխում է տեղի ունենում նե–ն ներկայանում է իր ե տարրերակով. բան այդմ էլ հնարավոր են եր–նու–ս, եր–նե–ս և նման բազադրություններ, ուր ու, է հոլովակերտներ են։ Այսպես՝ բացառական հոլովում, կունենանք եր–նե–ս (–դ, –ն)՝ ուսերնեն (Դվ, Բ, 95, 96), սեռ-տրական հոլովում՝ եր–նու–ս (–դ, –ն)՝ հոնքերնուն (Դվ, Բ, 97), սրտերնուն (ն. տ. 98), ձեռքերնուն (125), գիսակերնուն (229), կոզերնուն (241), աչքերնուդ (21), հետքերնուդ (232), ոտքերնուն (231), դեմքերնուն (61), ուսերնուն (69), մեջքերնուն (95), մարքերնուս (Ս, ՀԸ, 9), ձեռքերնուն (11), բառերնուն (69), կյանքերնուս (129), ափերնուս (183), քիմքերնուս (184)։

Նրկվանկ-բազմավանկ բառերի սահցական կազմավորումների համար արևմտահայ գրական լեզուն զարգացրել է ուրույն կաղապար՝ հոգնակիակազմ հիմ+նի+սահցական հոդ (Համմ. ԱՍ, ՔՔ, 49), հազվադեպ՝ ներ–նի զույգ հոգնակերտով։ Այսպես՝ ակնարկնիդ զձեզ կը մատներ (ՏԿ, ՎԱ, 116), աղջիկնին չպիտի՛ տան (ն. տ. 119), Աստվածաշունչնիդ (67), անտարբերություննին (163), ծոծրակնին (Դվ, Բ, 95), գլուխնին (312), (կը խըմէ) բըրտինքի չիթ մը մարգրիտ ողնաշարանեն (թիապարտների) վար սահող (95), կը շառաչեն կրունակնուն (ն. տ.), մարմինդիդ (322), բոլորդիդ (327), մկանուցքնուն (97), արյունդին (ն. տ.), ըստինքնիդ (130), նակատնին (154), սրունքնին (230), ոտովյանդին (ն. տ.), թարթիչնիդ (231), կան որ մտերիմ լռությանը պատանքներուն տակ ինքզինքնին արդեն մեռյալ կը հուսան (Ս, ՀԸ, 62), արյունդիդ (64), վրեժնին (140), նակատագիրնիդ (151), գլուխնին (ՎՔ, ե, 247)։

Ներ–նի+սահց. հոդ քիչ տարածված կաղապարով՝ ականջ-

ներնին (ԴՎ, Բ, 69) ներքաններնուն (քեզ հոլովածն՝ ներ-ն-ու-ն կաղապարով, էջ 96), բաժակներնին (124), գլուխներնիդ (Մ, Ըն. 30), երկաթներնիդ (32), բերաններնիդ (64), ակռաներնին (169).

Պատահում է, որ ստացականությունը միայն կոնտեքստային ընկալումով է պայմանավորված. Հազվադեպ են այն կառուցումները, երբ եր-ի փոխարեն հանդես է գալիս վի մասնիկը. «ուրիշներ, բարօրության արծաթյա քնարը ձեռվրնին» (Ս, Ըն, 95), նույնիսկ՝ վը-ներ-նի-ս «Հոգեվարքին մնջեն անցանք աչվրներնիս անարցունք» (ն. տ. 142), համմտ. նաև՝ (հարսները) «կուժը ձեռվրնին, աղբյուրներու ագամանդին կ'երթան» (ն. տ. 58)։

2) Ոչ-համակարգային և հնատիպ հոգնակիակազմություններ. Ներակազմ ձևեր: Այստեղ խմբավորում ենք այն կազմավորումները, որոնք շեղվում են դիտարկված նորմաններից. սրանց մեջ մտնում են, օրինակ, ֆ հոգնակերտով զուգորդումները, որ կարող են ներկայանալ իբրև բաղաձայնահանգ, նաև ձայնավորահանգ հիմքերի զուգորդումներ. որդիք (ՏԿ, ՎԱ, 65), սպասուհիք (96), դրությունք (29), նկարագրությունք (ն. տ.), եղբարք (57), ապա և՝ «Թոչնիկք ոչ ևս կը ճովղեն ծառերու մերկ ոստերուն վրա» (ն. տ. 283), «ծնողք շատ աղքատ էին» (58), «կերևին ճերմակ դպակին նգերքը» (65), «զոր խոսեցեալք կը տածեն միմյանց նկատմամբ» (115),

Գիծերդ անեկծ բլլան, բլլան քու սահեմ
Դաշնակություն մ'ուր կենսահյութը հոսի
(ԴՎ, Բ, 215)

Ըստ ԱՎՔ, ՀՂԴ, 70—71՝ «Որոշ բառերու յոգնակի թիւը կրնա կազմուիլ գրաբարյան ֆ մասնիկով. ինչպէս՝ 1) ցի վերջածանցն ունեցող բառերը՝ երեւանցի—երեւանցիք, վանեցի—վանեցիք, մշեցի—մշեցիք, տնղացի—տնղացիք, լոնցի—լոնցիք. 2) ուի վերջածանցն ունեցող բառերը. Իշտուն—Իշտունիք, Բագրատուն—Բագրատունիք, Արշակուն—Արշակունիք. 3) Որդի, տղայ բառերուն յոգնակին կ'ըլլա նաեւ՝ աղիք. տղաք...» Մեր դիտարկումներում, որ արել ենք հիմքակազմության կապակցությամբ, այդ նույնպես նկատվում է։

Գրաբարատիպ են նաև՝ ումֆ-ով զուգորդումները. «կաճին... ծաղկումֆ» (ՎՔ, b, 209), «իր ափուճին վրա խուժող... ծովուն պես» (ն. տ. 53). համմտ. ընգունք (170), մանկունք (259), իմֆ-ով՝ անձինք (ՏԿ, ՎԱ, 84), նաև՝ այլ. կանայք (ՎՔ, b, 199), իկ՝ մարդիկ (ն. տ. 197. ՏԿ, ՎԱ, 68. ԴՎ, Բ, 251 համմտ. ԱԱ, ՔՔ, 11, 13).

Նկատելի են մասնակի բարբառային-խոսակցական տարբերի

ներքափանցումներ։ Այս կարող է դրսևորվել հիմքակազմության մեջ, որ սակավ է հանդիպում (օր. զավկրնեորդ, բստ ՎՔ, ե, 292), կամ հոգնակերտների գործածությամբ. օր. մատվրներ (ԴՎ, Բ, 230, 275 Ս, Ըե, 3), աչվրնեորն մեջ (ԴՎ, Բ, 241, 275), աչվրներ (ՏԿ, ՎԱ, 228. Ս, Ըե, 3. ՎՔ, ե, 16, 30), ձեռվրներ (Ս, Ըե, 215), ոտվրներուն տակ (19), ծնկվրներ (192), ծակտիքներ (180), ծակտիներ (ԴՎ, Բ, 31), տեղվանքներ (ն. տ. 33)։

Արևմտահայ գրականում մարդ, կին, տիկին, պարոն բառերը հնատիպ հոգնակիակազմություն ունեն, սակայն նոր շրջանում աստիճանաբար հաղթահարվում են դրանք։ Այս տեսակետից արևմտահայերենը զարգացնում է նորակազմ մարդեր ձևը, որ մասնակի դրսևորումներով երևում է նոր հայերենի այլ հատվածներում ևս. (Համմտ. ԴՎ, Բ, 291. Ս, Ըե, 19. ՎՔ, ե, 150, 181), իսկ Միամանթոյի մոտ հանդիպում ենք նաև՝ գերմարդերուն ձև (Ս, Ըե, 226), ուր մարդ-ը բարդության վերջնաբաղադրիչ է և պահում է նույն հոգնակիակազմությունը։

Դեռևս Ա. Այտընյանը հատուկ անունների համակարգային, սովորական հոգնակիակազմություններին զուգահեռ գործածելի էր համարում հնատիպ ձևեր ևս. հայեր, հույներ, պարսիկներ, Հովսեփներ, բայց և (սակավ հանդիպող)՝ հայք, հույնք. Ներսիսյանի՝ են (ԱԱ, ՔՔ, 29). Համմտ. նաև ոսկրներ, ձիեր, կառրներ, տեղեր սովորական ձևերին զուգահեռ ոչ-համակարգային **ոսկրտանի, ձիանի**, կառվանի, տեղվանի *են (ն. տ. 13)։ Սակավ գործածական կազմավորումների շարքում նա բերում է այսպիսի ձևեր ևս. օժտնի, ֆռանկնի, պատճառնի, մրգանք, սոլտնայք, պարոնայք, ձադունք, թշնամիք, եղբըրտիք, քրվրտիք, կնկտիք, շնվրտիք, ոսկրրտանք, քրվրտաք, ձիանք, ալաց, երական, ծախս, պահս, դեղրանք, դեղերք, Հիսերք «վզեր», դեղերայք, գեղօրէք են (ԱԱ, ՔՔ, 14, 16)։ Բացառիկ կազմավորումների մեջ կարելի է նշել բոլորտիք, որ միայն այդ ձևով է հանդես գալիս։*

Սեռական-տրական հոլովաձևերում ևս նկատելի են հնատիպ կազմավորումներ. ընդ որում եթե այդ հոլովում գործածված է հնատիպ կառուցաձև, ապա համապատասխան ուղականն էլ կարող է հնատիպ լինել, բայց դա պարտադիր չէ։

Այստեղ գործում է ց հոգնակերտը կամ նրա ձևաբանորեն վերակազմավորված զարգացումները (աց, ոց, ից, ուց, անց, ենց և այլն). օր. քերց (ՏԿ, ՎԱ, 84), եղբարց (ն. տ. 49), ամուրց (287), տանց (39), թշվառությանց (ՎՔ, ե, 180), շինությանց (321), հարց (147), աց՝ ձեռաց մեջ (ՏԿ, ՎԱ, 147), ծնողաց (39

դաղափարաց (ՎԲ, ե, 203), աղբատաց (ԴՎ, Բ, 33), ոց՝ *ոյդվոց (ՏԿ, ՎԱ, 39), ծառոց (141),* ուց՝ *զարդուց (ն. տ. 88),* ից՝ *երկնից (ՎԲ, ե, 33),* անց՝ *ափանց (ՏԿ, ՎԱ, 99), մատանց (321), ծաղկանց (ՎԲ, ե, 16), թիթռանց (47), դյուցազանց (73), պաշտամանց (199),* ենց՝ *վարժապետենց (ՏԿ, ՎԱ, 50),* այց՝ *տիկնայց (ն. տ. 157)։*

է) Բազմաձևություններ։ *Երկձև-բազմաձև կազմավորումները սովորաբար կապված են զուգահեռ ընթացող երևույթների հետ, ինչպես, օրինակ, ոչ-համակարգային կազմույթյունների, հնաոճ երևույթների, բարբառային-խոսակցական ձևերի ներթափանցումների, նորակազմույթյունների և այլ գործոնների հետ։ Այսպես՝ սովորական է կիներ հոգնակին, բայց դրան զուգահեռ, հանդիպում ենք նաև՝ կանայք հնաոճ ձևը. սովորական է* աչեր, *բայց բարբառային-խոսակցական կառուցածևի ներթափանցումով նաև՝* աչվրներ, *համմտ. նաև՝* պառոններ *և* պառոնայք, տիկիններ *և* տիկնայք։ Մարդ *բառի հոգնակին երեք ձևով է հանդիպում՝* մարդիկ—մարդեր—մարդիկներ, *թեև, իհարկե, սրանք գործածության նույն հաճախությունը չունեն։*

Անկանոնությունները և շեղումները կարող են դրսևորվել հիմքակազմույթյամբ ևս, ասենք, սրտեռու *և* սիրտեռու, *այսինքն՝ հնչյունափոխ և անհնչյունափոխ հիմքերի գործածությամբ. այս կարող է վերաբերել նաև հիմքային այլ վերակազմավորումների. օրինակ՝* ն *հանգի վերականգնումով.* հարսներ *և չվերականգնումով՝* հարսեր։

Բազմաձևությունը մասամբ կարող է լինել իմաստային տարբերակների արտահայտություն։ Ա. Այտընյանը մի առիթով բերում է այս մոմենտը ցուցադրող օրինակներ. աչվրներ *«աչքեր», իսկ* աչեր՝ *«ջրի աչքեր».* ոտվրներ *«ոտքեր», իսկ* ոտեր՝ *«ոտանավորի ոտքեր».* մատվրներ՝ *«մատներ», իսկ* մատեր՝ *«ճագի մատներ» (ԱԱ, ՔՔ, 14)։ Սակայն ըստ էության այս տարբերակումը չափազանց թույլ է արտահայտված։*

Արևմտահայ դրական լեզվի մեր դիտարկած տեքստերի փաստերը բերում են այն համոզման, որ բազմաձևությունները, մանավանդ անկանոնությունները և շեղումները, իրենց խիստ զրկալ չեն տալիս։ Քվակազմույթյունը այստեղ ներկայանում է իրրև որոշակիորեն սիստեմավորված կառուցածև։

ԹՎԱԿԱՁՄՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ (ԱՐԵՎԵԼԱՀԱՅ) ԴՐԱԿԱՆ ԼԵԶՎՈՒՄ

I. Ընդհանուր հիմունքներ. թվակարգի ընդհանուր բնութագրությունը. թվի բերականական իմաստները և նրանց արտահայտման միջոցները: **II. Հոգնակիականացմություն.** հոգնակիական հիմքերը և հոգնակերտների հետ նրանց զուգորդման տիպերը (կազապարները). **Ա)** Հիմքականացություն. եզակի ուղղականի ձևը հոգնակիականացման հիմք. հիմքականացության ձևաբանական, հնչյունաբանական և իմաստաբանական ասպեկտները. **Բ)** Հիմքատեսակներ. միավանկ հիմքեր. մեկից ավելի վանկանի հիմքեր («մեկուկես» վանկանի հ., երկվանկ–բազմավանկ հ.). հնչյունաբանորեն վերականգնված և չվերականգնված հիմքատարբերակներ. ձևաբանորեն վերականգնված և չվերականգնված հիմքատարբերակներ. **Գ)** Հոգնակիականացություն և հոգաորություն. ստացական հոգնակիներ. **Դ)** Ոչ–համակարգային և հնացած հոգնակիականացություններ. **Ե)** Բազմաձևություններ և շեղումներ:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

Թվակարգի ընդհանուր բնութագրությունը. թվի բերականական իմաստները և նրանց արտահայտության միջոցները: *Նոր Հայերենը զարգացրել է այնպիսի թվակարգ, որը ակունքներ ունի դեռևս միջին Հայերենում: Արևելյան գրական լեզուն ևս զարգացրել է կցական հոգնակիականացություն, և այդ կառուցատիպը հասցված է իր կատարելությանը: Թվակարգը ներկայանում է եզակի-հոգնակի հակադրությամբ. չկա երկակիի ենթակարգ, չկան նաև նրա վերապրուկային ձևերը, որոնց հանդիպեցինք Հայերենի նախորդ վիճակներում: Եզակին անվերջավոր է. հոգնակին եզակիին հակադրվում է համապատասխան հոգնակերտներով: Նկատելիորեն սակավ են ոչ-համակարգային, հնատիպ կազմավորումները: Համակարգային հոգնակիականացություններում բացարձակ կերպով հաստատված են եր և ներ հոգնակերտները: Հիմքականացությունը դնդպատնցապես հետևում է վանկաքանակության սկզբունքին: Թվականացության կազապարներում հոգնակիականացությունը և հոլովականացությունը կառուցվածքայնորեն բաշխված են, այլ են հոգնակիականացման հիմքերն ու հոգնակերտ վերջավորությունները, այլ են հոլովականացման հիմքերն ու հոլովակերտ վերջավորությունները: Համեմատաբար քիչ են բազմաձևությունները ու շեղումները:*

Հոգնակիակազմ հիմքերը և հոգնակերտների հետ նրանց զուգորդման տիպերը (կաղապարները):

Ա) Հիմքակազմություն. Եզակի ուղղականի ձևը հոգնակիակազմ հիմք: *Որևէ երևույթը գնահատելու համար ամենից առաջ պետք է նրա կառուցվածքը դիտարկել տարբեր կողմերից: Այս վերաբերում է նաև լեզվական երևույթներին, ընդ որում և թվակազմությանը: Վերջինիս նկատմամբ քննության այդ հայեցակետը կիրառելու համար մեր դիտարկումներում կարող ենք ներառնել որոշ բառաձևեր, ասենք, ապդ—ապգեր, լեռ—լեռներ, խանդ, բուհ—բուհեր, ձեռք—ձեռքեր, նոթեր, մարդ—մարդիկ, կին—կանայք, վերդունք, ուսուցչություն, ձյութ, գլուխ—գլուխներ,, աստղ—աստղեր, քաղաք—քաղաքներ, լեռնցի—լեռնցիք‖լեռնցիներ, պատմագիր—պատմագիրներ, լրագիր—լրագրեր, այտպիսի—այտպիսիք‖այտպիսիներ, հեռացված—հեռացվածներ, խոսող—խոսողներ, հինգ—հինգեր, ուժեղ—ուժեղներ:*

Ուշադրությամբ զննելով այս միավորները, նկատում ենք, որ եզակի բոլոր ձևերը ներկայանում են առանց թվային իմաստ ունեցող հատուկ մասնիկների, մինչդեռ հակադիր ձևերում այդ կարգի մասնիկներ առկա են: Ուրեմն այստեղ ևս, ինչպես տեսանք հայերենի գործածման այլ էտապներում, հոգնակիակազմությունը մասնիկավոր է: Վերը բերած օրինակներում այդպիսի մասնիկներ են եր, ներ, իկ, այք, ք, ուճք: *Բերված ձևերի գերակշիռ մասն ունի եզակի-հոգնակի հակադրություն: Բայց կան նաև ձևեր, որոնք այդպիսի հակադիր եղերով չեն դրսևորվում· կամ միայն եզակի ձևով են՝ խանդ, ուսուցչություն, ձյութ, կամ միայն հոգնակի՝ նոթեր, վերդունք: Միայն եզակի ձևով ներկայացողները ունեն հավաքական, նյութային կամ վերացական բառիմաստ: Բացի այդ հոգնակերտները բաշխված են գործածության դիրքերով. եր-ը հիմնականում հանդես է գալիս միավանկների, ներ-ը երկվանկների կամ բազմավանկների, ք-ն երկվանկ-բազմավանկ՝ ի հանդող ձևի հետ, ուճք-ը դերդաստանի, ազգակցական կապ արտահայտող բառի կազմում, իկ-ը մարդ բառի, այք-ը կին բառի հետ: Կան նաև ձևեր, որոնք ոչ թե գոյականի, այլ գոյականաբար առնված բառերի հոգնակիներ են:*

Այս ամենից հետևում է, որ արդի գրական հայերենի թվակազմությունը քննելիս գործ ենք ունենալու մի շարք հարցերի հետ: Դրանք հիմնականում հետևյալներն են. թվակազմությունն ունի հա-

կազմության հիմնականում երկու եղր՝ եղակի և հոգնակի. եղակին անվերջավոր է, հոգնակին՝ մասնիկավոր. կան անհոգնական և անանեզական ձևեր՝ բառիմաստային որոշակի առանձնահատկություններով պայմանավորված. հոգնակերտները գործածության յուրահատուկ դիրքեր ունեն, հանդես են գալիս միայն որոշակի հիմքերի հետ. առկա են հնչյունաբանական, ձևաբանական (ձևույթաբանական) և իմաստաբանական պայմանավորվածություն ունեցող զուգորդումներ. գոյականների հոգնակիությունը կազմող մասերն ունեն գոյականաբար գործածված բառերը[36]:

Ժամանակակից լեզվաբանության ուշադրավ գաղափարներից է նաև այն, որ կառուցվածքային նկարագրությունը պետք է լինի ամբողջական, հետևողական, պարզ. իսկ այդ պահանջները կարող են իրականանալ միայն սիստեմային վերլուծության առկայության դեպքում: Թվականության հարցերի քննությունը ևս չի կարող չզուգավարվել այդ ասպեկտով. թվի կարգն էլ պետք է բնութագրել այն կապերով ու հարաբերություններով, որ նա ունի գոյականի այլ կարգերի հետ:

Գոյական բառաձևը կարող է կառուցվածքայնորեն արտահայտել այդ խոսքի մասին բնորոշ քերականական իմաստները (սեռ, թիվ, հոլով, առումնակը): Հայերենի գոյական բառաձևը քերականական այդ կարգերից արտահայտում է հոլովի, թվի, առման (հոդա-

---

[36] *Հետագայում մեր վերլուծությունների մեջ գոյականաբար գործածված բառերի հոգնակիականության առանձին քննության չենք ենթարկի, որովհետև այս կարգի բառերի հոգնակին կառուցվածքային ինքնուրույն գծեր չունի. հատկատար և ենթակայական դերբայների, ածականների, թվականների գոյականաբար կիրառությունները և բուն գոյականները միավանկ լինելու դեպքում ստանում են եր, երկվանկ-բազմավանկ լինելու դեպքում՝ ներ: Սա նույն վանկաքանակության սկզբունքի պահպանումն է. օր. լավերը, լորսերը, խելոքները, երկրորդները, մոտացվածները, խոտողները, այսպիսիները են: Սակայն դերանունների զգալի մասը պահպանում է հնաոճիպ կամ զուտ դերանվանական կազմություն: Մենք հոգնակի ձևը եղակիից տարբերվում է և՛ կազմավորմամբ, և՛ բառիմաստով (լեքսիկական նշանակությամբ). այսպես նաև՝ իմ—մեր, ինձ—մեզ, ես—ուղիղ (ուղղական) ձևում տարբերությունը նաև է վերջավորությամբ էր, ատա այս երկրորդ հակադրությունները հիմքային-արմատային են: Այս իմաստով ուշադրություն կարող են գրավել այլ հակադրություններ ևս՝ դու—դուք, քո—ձեր, նա—նրանք, սա—սրանք են: Անկասկած է հոգնակերտը ավելի լավ պահպանվել է դերանվանական ձևերում: Մյուս կողմից էլ ամենաբնորոշն այն է, որ դերանունները քանակային հարաբերություն կարող են արտահայտել բառիմաստային շրջանակներում. համմա. նաև՝ ոզչ(ը), բոլոր(ը), ամեն(ը), յուրաքանչյուր(ը), ամեն ոք և նման ձևերի իմաստավորումները: Դերանվանական կազմավորումների յուրահատկությունների մասին տե՛ս նաև Ս. Ղազարյան, Հայոց գրական լեզվի պատմություն, հ. Ա, Երևան, 1961, էջ 261:*

ութ յան) իմաստներ։ Դրանց արտահայտումը իրականացվում է մասնիկավորմամբ. այսպես՝ օգնականներից մեկ բառանձնում ինքնուրույն մասնիկավորմամբ ունենք հոգնակիի վերջավորություն՝ ներ, հոլովական վերջավորություն՝ ից, սահացական առման վերջավորություն (հոդառություն)՝ ն։

Թեև հոլովակազմությունը և հոգնակիակազմությունը մեկ բառանձնում դրսևորվող կազմավորումներ են, բայց անկախ, ինքնուրույն մասնիկավորում ունեն։ Այդ մասնիկավորումը ներկայանում է կայուն կցական տիպաբանությամբ՝ հոգնակերտ+հոլովակերտ+հոդ կազապարով[37]։ Դժվար չէ նկատել, որ այստեղ հոլովական վերջավորությունը զուգորդվում է հիմքի հետ հոգնակերտ վերջավորության միջնորդությամբ. այսինքն՝ հոգնակերտը դառնում է հոլովահիմքի տարր, բաղադրիչ։ Եվ իսկապես արևելահայ գրական լեզվի համակարգային հոլովակազմություններում առկա է եր, ներ հոգնակերտներով ընդհանրական հոլովահիմք՝ բոլոր թեք ձևերի համար։ Այդ ընդհանրական հիմքը հոգնակի ուղղականի ձևն է։ Այսպես՝

Հոգն. ուղղ.-հայց.	*սարեր-ը*	*բաժակներ-ը*
Սեռ.-տր.	*սարեր-ի*	*բաժակներ-ի*
Բաց.	*սարեր-ից*	*բաժակներ-ից*
Գործ.	*սարեր-ով*	*բաժակներ-ով*
Ներգ.	*սարեր-ում*	*բաժակներ-ում*

Այս միաժամանակ նշանակում է, թե եր, ներ մասնիկներով հոգնակի ունեցող բառերի եզակի և հոգնակի հոլովահիմքերը չեն համընկնում։ Եզակի ձևում ունենք՝ սար-ի. ի հոլովական վերջավորությունն ավելանում է սար-հիմքին, իսկ հոգնակի սարեր-ի ձևում այդ վերջավորությունն ավելանում է սարեր-հիմքին։ Ավելին՝ եզակի ձևում կարող ենք ունենալ ներքին հոլովում, առանց վերջավորության հավելման, իսկ հոգնակիում՝ արտաքին հոլովում, իբրև վերջավորության և հիմքով բաղադրված կազմավորում. համմ. **գառն—գարեան. բայց՝ գառուններ, գառուններ-ի։**

---

[37] *Ասպետով նոր հայերենի հոգնակիակազմության կառուցվածքային տիպաբանության մասին՝ Հ. Աճառյանը գրում է. «...Հոգնակիի կազմությունը հայերենի մեջ՝ բաժանվելով հնդեվրոպական լեզուների ոգուց, ընդունել է մի այնպիսի ոգի, որ ընդհանուր է Կովկասյան, Ալթայական և այլ ոչ-հնդեվրոպական լեզուներու։ ...Բայց այս նմանությունը կարելի չէ վերագրել ոչ որևէ հին ցեղակցության և ոչ էլ հնահին ազգնցության, այլ պարզ զուգադիպության և մարդկային մտածողության նույնության... Նա արդյունք է հայերենի ինքնագույն և բնական զարգացման՝ զարերի երկարատև ընթացքում» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 828)։*

Ինչպես նշել ենք, եզակի ձևում թվակազմությունը չունի քերականական արտահայտություն. եզակիության գաղափարն արտահայտվում է եզակի հոլովահիմքով (կամ հոլովաձևով)։ Այսպես՝ սեղանի բառաձևում ի–ն միայն հոլովակերտ է, սեռ.–տրականի հոլովական իմաստ ունի. հոլովահիմքն է սեղան–, որի հետ էլ կապվում է եզակիության գաղափարը։ Բայց քանի որ այդ հիմքն էլ համընկնում է եզակի ուղղականի ձևին (կամ նրա հնչյունաբանորեն, ձևաբանորեն վերակազմավորված տարբերակն է), ապա կարելի է ասել, որ նոր հայերենում եզակիության գաղափարը կապվում է եզակի ուղղականի ձևի հետ։ Այնուամենայնիվ եզակի հարացույցի յուրաքանչյուր անդամ հոդնակի հարացույցի յուրաքանչյուր անդամին հակադրվում է իբրև բառաձև, իսկ բառաձևերի հակադրությունը կարող է ներկայանալ նաև իբրև մասնիկավոր և անմասնիկ բառաձևերի հակադրություն։ Այսպիսին է, օրինակ, եզակի ուղղականի հակադրությունը հարացույցային մնացած բոլոր անդամներին։ Ըստ էության այսպիսին է նաև եզակի բառաձևի և հոդնակի համապատասխան բառաձևի հակադրությունը։ Մեր այս դիտողությունը վերաբերում է կցական տիպոլոգիա ունեցող լեզուներին, ընդ որում և գրական աշխարհաբարին։

Այսպիսով արդի գրական հայերենում եզակի և հոգնակի հոլովահիմքերը չեն համընկնում. չեն համընկնում նաև հոգնակիի հիմքն ու հոգնակի հոլովահիմքը։ Եզակի ուղղականի ձևը դառնում է հոգնակիթվակազմության հիմք, իսկ հոդնակի ուղղականի ձևը՝ հոլովակազմության հիմք։

Տիպիկ կցական լեզուներում հակում կա եզակի ուղղական ձևը դարձնել եզակի թեք հոլովաձևերի հիմք առհասարակ, նման դեպքերում եզակի հարացույցի անդամները միմյանցից զանազանվում են հոլովական վերջավորություններով։ Ուրեմն մեր աշխարհաբարն էլ ըստբզացնում է այսպիսի կառուցատիպ. իբրև դրա վկայություն կարելի է ցուցադրել, թեկուզ, fար բառի եզակի հարացույցը. քար–, քար–ի, քար–ից, քար–ով, քար–ում. ուղղականի ձևն ընդհանրացել է բոլոր թեք ձևերի հիմքում, այսինքն՝ ուղղականի ձևը եզակի հոլովահիմք է դարձել։ Այս նաև նշանակում է, որ առկա է ընդհանրական եզակիի հիմք, որ և եզակի ուղղականի ձևն է։

Եզակի հարացույցում գործող այս ընդհանրական հոլովահիմքն էլ նույն տեսքով ֆունկցիոնալորում է որպես հոդնակիթվակազմության ընդհանրական հիմք։ Նշված հիմքի և եր կամ ներ հոգնակերտի զուգորդումով գոյանում է հոգնակի ուղղական. քար–եր>քարեր։ Հոդնակի ուղղականի այս ձևն էլ իր հերթին հատուկ է իբրև

ընդհանրական հոլովահիմք բոլոր թեք հոլովաձևերի համար. քարեր-ի (-ից, -ով, -ում)։ Դժվար չէ նկատել, որ այս կառուցվածքներում հոլովահիմքը և հոգնակիակազմ հիմքը (հոլովակազմությունը և հոգնակիակազմությունը) բաշխվում են[38]։ Ինչպես որ այլ են հոլովական վերջավորություններն ու հոգնակիականը մասնիկները, տարբեր են և՝ հոլովահիմքն ու հոգնակիակազմ հիմքը (Քարեր և Քարեր-ի. առաջինը հոգնակիակազմ հիմք է, երկրորդը՝ հոլովահիմք)։ Սակայն ժամանակակից գրական հայերենը դիտարկված կառուցատիպը իր կիրառական ավարտին չի հասցրել բոլոր բառաձևերում։

Ուղղական հոլովի ձևաբանական այս արժեքավորումը, ինչպես ակնարկեցինք նաև վերը, միայն եռգրաբարյան հայերենի հատկությունը չէ։ Այդ հոլովը, մասնավորապես եզակի ուղղականի ձևը, հնդեվրոպական և այլ մի շարք (հատկապես կցական տիպոլոգիա ունեցող) լեզուների հոլովական հարացույցում առանձնանալու միտում է դրսևորում։ Այդ հնարավոր է դառնում մասնավորապես հնչյունական, բառա-իմաստաբանական ու քերականական որոշակի գործոնների առկայության պայմաններում։ Այդպիսի պայմանների մեջ կարելի է նշել, օրինակ, վերջավորությունների անկման երևույթը, որը հնարավորություն է տալիս ուղղականին «մերկանալու» և բառապատկերի ուղիղ տեսք ստանալու։ Պետք է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ ուղղականը ֆունկցիոնալ մեծ ծանրաբեռնություն ունեցող ձև է։ Նա ունի անվանական շեշտված ֆունկցիա. հաճախ է իր վրա առնում կոչականի պաշտոնը. հաճախ նաև ընդլայնում է ներգործողի իր ֆունկցիան և դառնում է ընդհանրապես գործողի, ավելին՝ գործողության մեջ ներգրավվող առարկայի արտահայտողը, դառնալով նաև կրավորական կառուցվածքի ենթակա։

Նշված և այլ հատկությունների շնորհիվ ուղղականը իր «ուղիղ» ձևով հակադրվում է գործողության հետ ուրիշ ասպեկտներով կապված առարկաների անվան ձևերին, սակայն մերձենում է նրանց այն հատկությամբ, որ դառնում է կազմության ելհիմք։ Բացի կառուցվածքային նախադրյալներից, եզակի ուղղականի ձևի քերականական վերաարժեքավորման համար կան նաև ֆունկցիոնալ կա-

---

[38] Աշխարհաբարը բաշխելով հոլովակազմությունը և հոգնակիակազմությունը՝ դրանով իսկ հնարավոր է դառնում կառուցատիպի ուղղությամբ։ Ահա թե ինչու Ա. Այտընյանը աշխարհաբարի հոլովման էական տարբերությունը գրաբարի հանդեպ հոգնակի հոլովման մեջ է տեսնում (ԱԱ, ԲԲ, 78—79)։

նալներ։ եզակի ուղղականը եզակի թիք հոլովներին հակադրվում է հոլովական իմաստով, բայց նրանց հետ ընդհանուր է թվի իմաստով. հոգնակի ուղղականի հետ նա ընդհանուր է հոլովական իմաստով (ֆունկցիայով), հակադրվում է թվի քերականական իմաստով։ Իր հերթին հոգնակի ուղղականը հոգնակի թիք հոլովաձևերին հակադրվում է հոլովական իմաստով, ընդհանուր է թվի քերականական իմաստով։ Ընդհանրական իմաստները (ֆունկցիաները) ձգտում են արտահայտության պլանում ընդհանրական միջոցների։

Եզակի հարացույցում ընդհանուրը թվի քերականական իմաստն է, բոլոր հիմքերն էլ հավասարապես թվային վերջավորություններից զերծ են. հակադրությունը դրսևորվում է հոլովական իմաստներով. դրանք էլ ունեն արտահայտության իրենց ուրույն, ինքնատիպ միջոցները։ Հոգնակի հարացույցի անդամների մեջ ընդհանուրը առնչվում է թվի քերականական իմաստի հետ, և ահա բոլոր հոլովաձևերում տիրապետող են դառնում եր (կամ ներ) հոգնակերտները։ Այստեղ հակադրությունը հոլովական է, սրանց հոլովակերտներն էլ տարբեր են։ Ասածից հետևում է, որ առհասարակ եզակի և հոգնակի ձևերի զուգադրության մեջ ընդհանուրը հոլովական իմաստն է, և որովհետև յուրաքանչյուր հոլովական իմաստ ձգտում է միաձև արտահայտության, ապա յուրաքանչյուր հոլով ձգտում է հոգնակի հարացույցում ևս պահպանել իր արտահայտության միջոցը։ Ահա թե ինչու եզակի և հոգնակի ուղղականում ունենք միևնույն զրո վերջավորությունը, եզակի և հոգնակի սեռ.-տրականում՝ միևնույն ի-ն, ապա և՝ բացառականում՝ ից, գործիականում՝ ով, ներգոյականում՝ ում։ Բնականաբար այս այսպես է համակարգային կազմավորումներում։

Եվ որ ասում ենք, թե ժամանակակից գրական հայերենում հոգնակիի հիմքը եզակի ուղղականի կամ նրա վերակազմավորված ձևն է, ապա նկատի ունենք համակարգային կազմավորումները։ Առհասարակ հոգնակիակազմությունը քննելիս չի կարելի խոսել եզակի ձև—հոգնակիի հիմք համատարած հավասարարժեքության մասին, քանի որ եզակին նախ ունի ուղիղ և ուրույն թեքումով ձևեր, մյուս կողմից էլ եզակիի հիմքը միշտ չէ, որ համարժեք է հոգնակիի հիմքին, ավելին՝ եզակին իր հարացույցում ունի նաև ներքին հոլովման կառուցատիպ ունեցող միավորներ, մինչդեռ այդպիսիները բացառվում են հոգնակի հարացույցում։ Այդ բանում համոզվելու համար ցուցադրենք մի քանի կազմավորումներ.

եզ. ուղիղ (ուղղ.-ի) ձև	*թեք ձևերը կամ նրանց հիմքը*
մատ	մատ-ի (ից, -ով)
դուռ	դռն-, դռան
օր	օր-, օրվան-
ծառա	ծառա(յ)-
քույր	քր-, քրոջ-
րոպե	րոպե(յ)-
այգի	այգ-
գարուն	գարնան, գարնան-
քար	քար-
ամուսին	ամուսն-
հայր	հր

հոգն. հիմքը	*հոգն. հոլովահիմքը*
մատն-եր	*մատներ-*
դռն-եր	*դռներ-*
օր-եր	*օրեր-*
ծառա-ներ	*ծառաներ-*
քույր-եր	*քույրեր-*
րոպե-ներ	*րոպեներ-*
այգի-ներ	*այգիներ-*
գարուն-ներ	*գարուններ-*
հար-եր	*քարեր-*
ամուսին-ներ	*ամուսիններ-*
հայր-եր	*հայրեր-*

Դիտարկվող բոլոր կառուցվածքներում հոգնակիակազմ հիմքը եզակի ուղղականի ձևն է, իսկ հոլովահիմքը՝ հոգնակի ուղղականի ձևը։ Բացի այդ՝ դիտարկված փաստերից և այլ դեպքերից հեշտությամբ կարելի է հետևեցնել, որ եզակի հոլովակազմությունը նկատելի չափով անմիօրինակ է։ Այնուամենայնիվ եզակի ուղղականի ձևը արդի գրական հայերենում ունի նաև եզակիի ընդհանրական հիմք դառնալու միտում։ Ուսելով ուղղականի մասին Մ. Աբեղյանը ընդգծում է, ուղղականը կորցնելով իր վերջավորությունը՝ դարձել է անվան, այսպես ասած, բացասական ձև, մեր արդի լեզվազգացումով (ոչ պատմական) նա մի բուն է, որի վրա ավելանում են մյուս հոլովների վերջավորություններ (ՄԱ, 215, 341)։

Եզակի ուղղականի ձևը մեր լեզվի արդի վիճակում արդեն քերականական հիմք է եր, ներ մասնիկներով գրեթե բոլոր հոգնակիական ձևերի համար։ Եվ իրոք հոգնակիականի հիմք նա պահպանում է իր վանկաքանակությունը, թեև միշտ չի պահպանում վանկակազմի (վանկաքանակի իր եզրերով) բնույթը, փոփոխություն է մտցնում նրա մեջ։ Այդ փոփոխությունը հիմնականում տեղի ունի կապված եր հոգնակերտի ձայնավորասկիզբ լինելու հետ։ Միավանկ եզակի ձևը միանալով եր հոգնակերտի հետ՝ դառնում է երկվանկ, իսկ երկվանկ բառերի վանկատումը կատարվում է ուրույն կանոններով։ Տեղի է ունենում միավանկ եզակի ձևի վերակազմավորում վանկայնորեն. ստացվում է այնպես, որ միավանկ ուղղականի ձևը և հոգնակիի հիմքում նրա արտահայտությունը վանկայնորեն նույն տեսքը չունեն. սար և սարեր։ Ակնհայտորեն պարզ է, որ այստեղ հնչյունաբանական ու ձևաբանական ասպեկտները մի դծի վրա չեն։

Այս բոլոր դիտարկումները և դիտողությունները[39] արվեցին

---

[39] Ընդհանրապես եզակի ձևի և հոգնակիի հիմքի հարաբերակցության մեջ պետք է նկատի ունենալ հետևյալը։ Եզակի ձև արտահայտությունը որոշ չափով պայմանական է. եզակին կարող է ուղիղ և թեք ձևեր ունենալ, ինչպես շատ իզուններում և արդի հայերենում։ Ուստի հոգնակիի հիմքը հարաբերակցվում է ոչ թե առհասարակ եզակի ձևին, այլ եզակի հոլովահիմքին։ Սակայն այս չի նշանակում, թե հոգնակիի հիմքը նույնանում է եզակի հոլովահիմքին։ Հոգնակիի հիմքը նեղանում և սահմանափակվում է ուղղականի հիմքով կամ ուղղականի ձևով. չնչին բացառություններով սա այսպես է։ Եզակի ուղղականի ձևը կամ եզակի ուղղականի հիմքը և հոգնակիի հիմքը նույնն են կամ մեկնույն ելածնի երկու տարբերակներն են հնչյունաբանական (մասամբ և ձևաբանական) վերակազմավորումներով։ Հիմքային տարբերակներ կան ոչ միայն եզակի—հոգնակի հակադրության մեջ, այլև հոլովական հակադրություններում։ Եվ իսկապես, թե՞ միայն վերլուծությունների, աննկատած վերլուծություններով։ Այստեղ չունենք հիմքերի հակադրություն Ու—(ը) հնչյունափոխությունը ձևաբանական հակադրության ոչ մի ֆունկցիա չի վերցնում իր վրա։ Ջուր և ջրի ձևերը բառիմաստով նույնն են. երկուսն էլ եզակիի քերականական իմաստ ունեն։ Հակադրվում են միայն հոլովական իմաստով, որ արտահայտվում է մի դեպքում ի հոլովական վերլուծության առկայությամբ, մյուս դեպքում՝ նրա բացակայությամբ։ Փաստ է, որ հիմքերը ֆունկցիոնալ հակադրություն չունեն։ Ու—(ը) փոփոխությունը զուտ արտասանական-հնչյունաբանական երևույթ է՝ կապված ու-ի շեշտազրկության հետ։ Ուրեմն ուղղականի ձևը (կամ ուղղականի հիմքը) և սեռականի հիմքը միևնույն հիմքածևի հնչյունաբանական տարբերակներն են։ Այս նույն հարաբերակցությունը տեսնում ենք նաև եզակի ուղղականի ձևի (կամ հիմքի) և հոգնակիի հիմքի միջև։ Ջուր և ջրեր բառիմաստով նույնն են, ունեն նույն հոլովական իմաստը, հակադրվում են միայն քիչ (եզակի—հոգնակի) զուգադարով, որ արտահայտվում է մի դեպքում Ը-ի ասկայությամբ, մյուս դեպ-

հաստատելու համար այն միտքը, որ եզակի ուղղականի ձևը հոգնակիի հիմքն է։ Այս տիպոլոգիայի կայունացումով արևելյան գրական հայերենի հիմքակազմության մեջ՝ ընդհանրական հիմքերի հաստատման խնդրում հոգնակիակազմությունը նկատելիորեն ավելի առաջ է անցել հոլովակազմությունից։

Հիմքակազմության ձևաբանական, հնչյունաբանական և իմաստաբանական ասպեկտները։ *Մենք նշեցինք, որ հոգնակիակազմության հիմնական տիպով (համակարգային կաղմավորումներ) գրական աշխարհաբարը կցական տիպոլոգիա ունի. ընդ որում եզակի ուղիղ (ուղղականի) ձևը հոգնակիակազմության ելահիմք է։ Բայց եզակի ուղղականն ինքնին ձևաբանական ու հնչյունաբանական որոշակի կազմ ունի և բառիմաստով ամբողջացած միավոր է։ Կարող է հարց առաջանալ, եզակի ուղղական ձևի այս երեք կողմերը որևէ դեր ունե՞ն հոգնակիակազմության մեջ, թե ոչ։*

Եզակին իր ձևաբանական կազմով կարող է լինել արմատական և բաղադրյալ (ածանցավոր, բարդ, բարդածանցավոր), ինչպես՝ սար, կառք, դարբնոց, թարայր, ստեղծագործություն, պատմագիր են։ Բնականաբար բաղադրյալները կարող են լինել երկձևույթ, բազմաձևույթ. օր. կառ-ք, բար-այր, ստեղծ-ա-գործ-ություն։ Ձևաբանական կազմով նման տիպերը որևէ տարբերակում չեն մտցնում հոգնակիակազմության մեջ։ Սրանք հավասարապես կարող են ստանալ եր կամ ներ. այսպես՝ սար-եր- կառք-եր, քարայր-եր, քաղաք-ներ (միաձևույթ, երկձևույթ հիմքեր), հեռագրա-ս-յուն-եր, ստեղծագործություն-ներ (բազմաձևույթ հիմքեր) և այլն։ Միակ դեպքը, երբ հիմքի կազմի մեջ եղած ձևույթը հիմքատարբերակ է առանձնացնում, երկվանկ-բազմավանկ՝ առաջին կարգի վերջնաբաղադրիչով կազմավորումն է։ Հազվադեպ է լինում, երբ որոշակի ձևույթ որևէ մեկ հոգնակերտի հիմք է, գուգորդվում է միայն նրա հետ։ Դրանք ձևույթային հիմքեր են։

Հոգնակիի հիմք դարձող եզակին կարող է նաև բնութագրվել հնչյունաբանական հատկանիշներով։ Այսպես՝ ծառ-եր, քար-եր, պատ-եր, հայր-եր, սեղան-ներ, քաղաք-ներ- ընկեր-ներ, ուրախություն-ներ ձևերը դիտարկելուց նկատում ենք, որ միավանկները ստանում են եր, իսկ բազմավանկները՝ ներ հոգնակերտ։ Կան բառեր, որոնք «մեկուկես» վանկանի են. դրանցից սկզբնագաղտնա-

---

քում նրա բացակայությամբ։ Նշանակում է, թե ջուր- և ջ(ը)ր- տարբերությունը ոչ մի ձևաբանական ֆունկցիա չունի։ Սրանք էլ մեկ հիմքաձևի հնչյունաբանական տարբերակներ են։

վանկ ունեցողները ստանում են ներ (կրակ-ներ, գլուխ-ներ), վերջ-նագաղտնավանկ ունեցողները՝ եր (աստղ-եր, վագր-եր)։

Նախնական այս դիտարկումների հիման վրա կարող ենք առանձնացնել՝ միավանկ, մեկից ավելի վանկանի (մեկուկես վան-կանի, երկվանկ-բազմավանկ) հիմքատեսակներ։

Սակայն միշտ չէ, որ եղակի ձևը բացարձակորեն համընկնում է հոգնակիի հիմքին. կան դեպքեր, երբ եզակի ուղղականի ձևը հնչյունաբանական կամ ձևաբանական վերակազմավորման է են-թարկվում։ Այսպես, օրինակ, եզ. ուղղ. մուկ, սիրտ, կին, մարդ, իսկ հոգն. հիմքում՝ մ(ը)կն-եր, ս(ր)տ-եր, կան-այք, մարդկ-անց (հոգն. սեռ.-տրական)։ Ահա այդ նկատի ունենալով՝ տարբե-րում ենք ինչյունաբանորեն վերակազմավորված հիմքատարբերակ, ձևաբանորեն վերակազմավորված հիմքատարբերակ, ի տարբերու-թյուն այն հիմքատարբերակների, որոնք հնչյունաբանորեն կամ ձևաբանորեն չեն վերակազմավորված (այսինքն՝ ինչյունաբանորեն չվերակազմավորված հիմքատարբերակ և ձևաբանորեն չվերակազ-մավորված հիմքատարբերակ)։

Կան հիմքեր, որոնց ձևաբանական բաղադրիչների (ձևույթա-յին կազմի) մեջ հանդիպում են հին f, u քարացած հոգնակերտ-ներ։ Այսպիսի հիմքերը պետք է տարբերել այդ մասնիկներով հնատիպ հոգնակիակազմություններից։ Դրանք կատեգվածքային տեսակետից դժվար չէ տարբերել։ Նախ f հոգնակերտը ունի դիր-քային խիստ սահմանափակված գործածություն։ Այն հանդիպում է ի հանգող երկվանկ-բազմավանկ կազմություններում՝ լեռնցիք, այսպիսիք, անդիացիք և ամ, ոմ, ումք, իմք մասնիկներով ան-եզական ու հնատիպ կազմություններում (հմմտ. մերոնք, վեղունք, անձինք են)։ Սրանց վրա եր կամ ներ հոգնակերտ չի կարող ավե-լանալ։ Իսկ այն բոլոր դեպքերում, երբ f-ն հիմքի ձևաբանական բաղադրիչ է, հիմքային ձևույթ է, նրան կարող է ավելանալ եր կամ ներ (ձեռք-եր, ոտք-եր, մտք-եր, ասք-եր, նաև u-ով՝ չափս-եր, հոգս-եր են)։ Ք-ն հիմքի ձևույթային (ձևաբանական) կազմի մեջ կարող է մտնել նաև իբրև բաղադրյալ մասնիկի (ածանցի) տարր. աշխատանք, մտածմունք, ասմունք, ուսմունք. հմմտ. աշխատանք-ներ, մտածմունք-ներ, ասմունք-ներ, ուսմունք-ներ։

Ժամանակակից գրական հայերենում խստատ վերացած է բնա-վոր հիմքակազմությունը։ Եղակի ուղղականի ձևում բացակայող և հոգնակիի հիմքում հանդես եկող միայն մեկ տարր կա՝ դա ն հանգն է, որը միայն ու միայն հիմքակազմիչ դեր ունի։ Կան նաև հոգնակիակազմ հիմքերի և հոգնակերտ մասնիկների այնպիսի դու-գորդումներ, որոնց մեջ վանկաբանակությունը որևէ դեր չունի։

Դրանք ոչ-համակարգային, հնատիպ զուգորդումներ են, որոնց մի մասն իմաստաբանական պայմանավորվածություն ունի (օր. անդ-լիացիք, անձինք, մերոնք, վարդանանք, Գրիգորենք են)։

Եզակի՝ հոգնակիակազմ հատկություն ունեցող ձևերի բնութագրության մեջ կա նաև այսպիսի մոմենտ։ Գերակշռող մասը հոգնակիում պահում է իր բառիմաստը նույնությամբ. օր. սար—սարեր։ Այս երկու ձևերը իրար հակադրվում են միայն հոգնակիի քերականական իմաստով, որ արտահայտված է նր հոգնակերտի միջոցով. եզակի ձևը և հոգնակիի հիմքը՝ սար||սար-իրար բառիմաստով չեն հակադրվում. բառիմաստը (լեքսիկական նշանակությունը) նույնն է։ Կան սակայն դեպքեր, երբ եզակի ձևը բազմիմաստ է։ Նման դեպքերում հոգնակին կարող է պահպանել եզակիի մեկ նշանակությունը, այսինքն՝ հարաբերակից լինել եզակիի միայն մեկ իմաստին, բայց կարող է համատեղել բոլոր նշանակություններն էլ։ Լինում են նաև դեպքեր, երբ հոգնակին է բազմանշանակ, իր այս կամ այն իմաստով առանձնանալով եզակիից։ Ե՛վ եզակիի, և՛ հոգնակիի բազմանշանակությունը կառուցվածքային ուրույն արտահայտություններով չի բնութագրվում։ Հնարավոր է, ասենք, որ եզակին տվյալ իմաստավորման համար չունենա հոգնակի համապատասխան ձև(եզր), իսկ հոգնակին էլ նույնպես իմաստային մեկուսացումով չունենա համապատասխան եզակի ձև։ Առաջիններդ հարում են անհոգնականների խմբին, իսկ երկրորդները անեզականների խմբին։

Ուշադրություն են գրավում այն դեպքերը, երբ հիմքերը ներկայանում են ձևույթային բարդ կազմով՝ միավանկ-արմատ կամ միավանկ-բառ վերջնաբաղադրիչով։ Հոգնակերտների հետ սրանց զուգորդելիությունը պայմանավորում են հնչյունաբանական, ձևաբանական, իմաստաբանական գործոններ (վանկաքանակություն, բառավերջի դիրքը՝ վերջնաբաղադրիչ լինելը, բաղադրությունից դուրս անկախաբար՝ բառային արժեքով գործածելիությունը, բառիմաստը հիմնականում պահպանելը)։ Այս գործոնների ուրույն համակցումը կարող է հիմքատարբերակների գոյացման նախիմք հանդիսանալ. օր. պատմագիր-ներ, բայց՝ լրագրեր։ Եթե հիմքատարբերակների գոյացման խնդրում գործում են մեկից ավելի հայեցակետեր (կամ գործոններ), բնականաբար առկա են խառը տիպի հիմքեր։

Այսպիսով ժամանակակից գրական հայերենում կարելի է տարբերել հնչյունաբանական հիմքեր՝ միավանկ, մեկից ավելի վանկանի («մեկուկես» վանկանի, երկվանկ-բազմավանկ), ձևույթային հիմքեր, խառը հիմքեր, ինչպես և սրանց հնչյունաբանորեն

կամ ձևաբանորեն վերակազմավորված կամ չվերակազմավորված հիմքատարբերակներ։

Բ) *Հիմքատեսակներ։ Ամեն մի հոգնակիակազմ հիմք վերցվում է վերջավորության հարաբերությամբ, ժամանակակից հայերենում առավել գերիշխող են այն հիմքատեսակները, որոնք գուգորդվում են եր կամ ներ հոգնակերտների հետ, այսինքն՝ համակարգային զուգորդումները կատարվում են հիմք+եր կամ հիմք+ներ կաղապարով (մոդելով)։ Սակավ են այն հիմքերը, որոնք ստանում են իկ, այք, ք, աներ, եներ, ուներ, ոներ, անց, ենց, ոնց, ունց, ց, նաև՝ իներ մասնիկներ։ Այս կարգի զուգորդումները ոչ-համակարգային, հնատիպ են, չեն բխում արդի գրական հայերենի սիստեմից, չեն պայմանավորված նրանով։ Այդ պատճառով նման հոգնակիակազմությունները քննում ենք առանձին։*

Հիմքերը, հիմքատարբերակները, ենթատարբերակները որոշ աստիճանականություն ունեն. նախ առանձնանում են հնչյունաբանական, ձևաբանական և խառը տիպի հիմքատեսակներ. հընչյունաբանականը կարող է, ասենք, վանկաքանակությամբ ներկայանալ իբրև միավանկ, մեկից ավելի վանկանի (ամենուկենաս՝ վանկանի, երկվանկ-բազմավանկ), բոլոր հիմքատեսակներն էլ եզակի համապատասխան ձևի համեմատությամբ կարող են ներկայանալ հնչյունաբանական կամ ձևաբանական բնույթի վերակազմավորումներով՝ իբրև վերակազմավորված, կամ չվերակազմավորվելու դեպքում չվերակազմավորված հիմքատարբերակներ։

Միավանկ հիմքեր։ *Այսպես կոչում ենք հոգնակիակազմ հիմքը այն դեպքում, երբ նա եզակի ուղղականի միավանկ ձևն է, կամ նրա վերակազմավորված տարբերակը, և որը գուգորդվում է եր հոգնակերտի հետ։ Եզակի ուղղականը նույնպես ձևաբանական միավոր է՝ նյութական հիմքով և, այսպես կոչված, զրո վերջավորությամբ։ Եվ որովհետև ժամանակակից գրական հայերենում եզակի ուղղականի վերջավորությունը զրո է, նյութական արտահայտություն չունի, այդ պատճառով գործածում ենք նաև եզակի ուղղականի ձև արտահայտություններ։*

Ինչո՞վ են միավանկ հիմքերը առանձնանում այլ հիմքատեսակներից։ Ամենից առաջ նրանով, որ եզակի ուղղականի միավանկ ձևը գուգորդվում է եր հոգնակերտի հետ, բացի մի քանի բառերից (մարդ, կին ևն)։ Սա միավանկների համակարգային հոգնակիակազմության ընդհանրական կաղապարն է։ Իսկ մարդ, կին, ան ձ բառերն ունեն ոչ-համակարգային կամ հնատիպ կազմավորում։ Սրանցից ան ձ միավանկը կարող է հոգնակի կազմել նաև համակարգային կաղապարին հետևելով. այս դեպքում նա զու-

գործում է եր հոգնակերտի հետ. հմմտ. մարդիկ (մարդեր արևելահայ գրականի համար շեղում է)[40], կանայք (կիներ շեղում է), բայց աճնիկ և աճներ: Իսկ ղիք հոգնակին «աստվածներ» նշանակությամբ հնաբանություն է, արդեն գրեթե անգործածական:

Միավանկ՝ եզակի ուղղականի ձևը զուգորդվելով եր հոգնակերտի հետ՝ կազմում է հոգնակի ուղղականի ձև. գույն-եր> գույներ, սար-եր>սարեր. հոգնակի ուղղականի կառուցածևը պահպանվում է թեք հոլովաձևերում. գույներ-ի, սարեր-ի, գույներ-ից, սարեր-ից են: Այս նշանակում է, թե միավանկների հոգնակիակազմությունը ուղիղ և թեք բառաձևերում հետևում է եզակի ուղղականի ձև+եր կաղապարին: Սա խիստ ընդհանրացած ու կենսունակ կաղապար է:

Միավանկ հիմքերի ձևաբանական կազմը ըստ էության էական դեր չունի դրանց զուգորդելիության բաշխման մեջ: Ինչպես նկատեցինք, ունենք միայն ձևույթային պայմանավորվածություն մարդ, կին, աձն արմատական բառերի հոգնակիակազմության մեջ: Մնացած բոլոր միավանկ բառերը (հիմքերը), որոնք գերազանցապես արմատական են, ձևաբանական կազմով չեզոք են: Այսպես՝ ջուր-, ծառ- հիմքերը արմատական են, ձեռ-, միտ- ածանցավոր, բոլորն էլ հավասարապես զուգորդվում են եր հոգնակերտի հետ:

Եթե միավանկ հիմքերը (բառերը) հանդես են գալիս իբրև բարդության վերջնաբաղադրիչ, ապա պահում են հոգնակիակազմության իրենց կառուցատիպը. հմմտ. վայր>վայրեր, արոտավայր>արոտավայրեր: Իսկ եթե նրանք մտնում են նախածանցավոր բազադրությունների մեջ, իբրև բաղադրության վերջնաբաղադրիչ, և իրենց գոյականային-չեքսիկական արժեքը մթագնում, երկրորդական պլանի վրա է մղվում, ապա չեն պահպանում հոգնակիակազմության իրենց կաղապարը, զուգորդվում են ներ հոգնակերտի հետ. տուն>տներ, անտուն>անտուններ:

Միավանկների հոգնակիակազմությունն ունի մի այլ յուրահատկություն ևս: Քանի որ սրանք զուգորդվում են եր-ի հետ, էկվանկ բազմավանկները՝ ներ-ի հետ, և այլ համակարգային հոգնակերտ չկա, ուստի արևելահայ գրական լեզվում ստացական հոգնակիակազմությունը երկվանկ-բազմավանկների հետ կապված՝ բացառվում է. առկա է միավանկ հիմք+ներ կաղապար: Սա հա-

---

[40] Անցյալում որոշ հեղինակներ մարդիկ ձևին զուգահեռ գործածել են նաև մարդեր հոգնակին, որ տարածում չի գտել (հմմտ. ՍՀ, ե, 43. Մն, ն, 163. Մն, եժ, II, 67. , եժ, I, 59. նաև՝ տղամարդեր՝ Մն, ն, 467. Ր, եժ, I, 402):

կազմվում է միավանկների սովորական հոգնակիակազմության՝ միավանկ հիմք+եր կաղապարին, մի կողմից, երկվանկ-բազմավանկների սովորական հոգնակիակազմության երկվանկ-բազմավանկ հիմք+ներ կաղապարին, մյուս կողմից։ Մի կաղապարին հակադրվում է հիմքային տարբերությամբ, մյուսին հակադրվում է հոգնակերտով։ Բայց այս մասին հանգամանորեն կխոսենք քիչ հետո։

«Մեկուկես» վանկանի հիմքեր։ *Այսպես կոչում են հոգնակիակազմ հիմքն այն դեպքում, երբ նա եզակի ուղղականում ունի երկվանկ կառուցվածք, բայց վանկերից մեկը ոչ լիահունչ /ր/ ձայնավորական տարրով է։ Ըստ դաշտնավանկի դիրքի տարբերում ենք «մեկուկես» սկզբնագաղտնավանկ հիմքատարրերակ և «մեկուկես» վերջնագաղտնավանկ հիմքատարրերակ։ Սրանցից ձևաբանական յուրահատկություն են դրսևորում մեկուկես վերջնագաղտնավանկները, որովհետև վերջիններս կորցնելով գաղտնավանկ (ր)-ն, հոգնակիի հիմքում վերածվում են միավանկի և ուզորդվում են եր հոգնակերտի հետ, աստ(ր)ղ>աստղեր (աստ-ղեր)։ Մինչդեռ սկզբնագաղտնավանկները հոգնակիի հիմքում պահպանում են իրենց գաղտնավանկը, այսինքն վանկայնորեն չեն վերակաղմավորվում, և իբրև երկվանկ ուզորդվում են ներ հոգնակերտի հետ. կ(ր)րակ>կ(ր)րակներ (կր-րակ-ներ)։*

Ահա միայն այս տարբերությունը նկատի ունենալով՝ պայմանականորեն առանձնացնում ենք «մեկուկես» վանկանի հիմքատարրերակ։ Արդի գրական հայերենի համեմատաբար վաղ շրջանում այս օրինաչափությունը դեռևս հստակ ձևավորում չուներ. ահա այդ վիճակը նկատի ունենալով է, որ Հ. Աճառյանն արել է այսպիսի դիտողություն. «Այն բառերը, որոնք իրենց վերջին վանկում ունեն ր ձայնավորը, տատանվում են երկուսի միջև. արևելյան գրականում համարվելով բազմավանկ՝ ստանում են –ներ մասնիկը, իսկ արևմտյան գրականում՝ համարվում են միավանկ և ստանում են –եր մասնիկը. ինչ. աստղ—աստղներ, աստղեր, կայսր—կայսրներ, կայսրեր, արկղ—արկղներ, արկղեր, տարր—տարրներ, տարրեր, սանր—սաներ, սանրեր» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 818. տե՛ս նաև՝ ՀԱ, ՀԼՊ, II, 556)[41],

---

[41] *XIX դարի 70-ական թվականներին, ըստ Ստ. Պալասանյանի, ներ մասնիկ ստանում էին հատ առյն միավանկ բառերը, որոնց արտաբերության մեջ, բարձրաձայնների խտությունը մեզմացնելու համար, ր ձայնավորը մահում ու մեկ վանկից իբրև երկու վանկ է կազմում..., կայսր—կայսր-ներ, անգղ—անգղ-ներ (խոսում են աստղ-եր)». սանր-եր)». տե՛ս նրա «Ընդհ. տեսություն...», էջ 24։*

«Մեկուկես» վանկանի հիմքերը և՛ սկզբնագաղտնավանկները, և՛ վերջնագաղտնավանկները, հոգնակի ուղղականում ունեն առաջիններ՝ եզակի ուղղականի ձև+ներ, երկրորդները՝ եզակի ուղղականի վանկայնորեն վերակազմավորված ձև+եր կաղապարներ։ ***Քեք հոլովաձևերում սրանք պահպանում են իրենց այդ կաղապարները՝ հոգնակիականազմ հիմ+ներ (+հոլովակերտ) և հոգնակիականազմ հիմ+եր (+հոլովակերտ).***

Հոգն. ուղղ.-հայց.	*կ(ը)ռակ-ներ*	*աստղ-եր*
Սեռ.-տր.	*կ(ը)ռակ-ների(-ի)*	*աստղ-երի(-ի)*
Բաց.	*կ(ը)ռակ-ներից(-ից)*	*աստղ-երից(-ից)*
Գործ.	*կ(ը)ռակ-ներով(-ով)*	*աստղ-երով(-ով)*
Ներգ.	*կ(ը)ռակ-ներում(-ում)*	*աստղ-երում(-ում)։*

*Ժամանակակից գրական հայերենում «մեկուկես» սկզբնագաղտնավանկ բառերը վերջնագաղտնավանկների համեմատությամբ մեծ թիվ են կազմում։ Համեմատաբար հաճախական գործածություն ունեցող վերջնագաղտնավանկներից են՝ ազդր, անգղ, աստղ, արկղ, գամփռ, դուստր, եզր, ժանր, կադր, կայսր, լիտր, լոդր, մետր, նեգր, շիֆր, ոսկր, սակր, սանր, վագր, տարր, տեսր. **տեզր, տեմբր, ֆիլտր։ Սրանց մեջ մտնում են, ինչպես նկատելի է, նաև նորագույն փոխառություններ այլ լեզուներից, որոնք հայերենում վանկայնորեն վերակազմավորվել են բուն մեր լեզվի վանկարտաբաբերության նորմաների (օր. նեգր, կադր, ժանր)։ Վերջնագաղտնավանկով ձևերի մեջ թերևս կարելի է մտցնել -մ(ը)ն հանգն ունեցողները՝ դաշն, հիմն և այլն։*

Վերջնագաղտնավանկների հոգնակիակազմության կաղապարն ունեն նաև գոյականաբար գործածվող նմանավանկ բառերը, օրինակ, ածականները՝ բարձր, թանձր, ծանր, կարծր, մանր, ցածր, փոքր, փուխր, քաղցր, նաև՝ դառն. այսպես, օրինակ, փոք(ր)ր—փոքր-եր, ման(ր)ր—մանր-եր և այլն։

Ըստ ԱՆ, ՔՔ, Յ՝ արևմտահայերենում, գրեթե նույն ժամանակաշրջանում, մեկուկես վանկանիները ստանում էին եր, ընդ որում և վերջնագաղտնավանկները՝ ոսկրեր, աստղեր։ Բնականաբար վանկաբանակազմությունը պահպանելու դեպքում մեկուկես վերջնագաղտնավանկով բառերն ունեն նաև եր-ով հոգնակիները, մանավանդ անցյալի հեղինակների մոտ. ոսկրներ (ՍՇ, ն, 76), արկղներ (Մն, ն, 185), աստղներ (Մն, նէժ, II, 160), գամփռներ (Ր, նժ, I, 444), արկղեր (Ր, նժ, II, 374. ՀՏ, X, 49, 255. ՈՁ, նժ, IV, 435. ՍՄ, ՀՔՔ, I, 271), նաև՝ դրամարկղներ (ՍՄ, ՀՔՔ, I, 544), անգղներ (Ն. տ. I, 101. ՆՁ, ՀՆ, 283), կայսրներ (Ր, նժ, X, 192), վագրներ (Ն. տ. 167), դուստրներ (ՍՄ, ՀՔՔ, I, 538), կայսրեր||կայսրներ (Ն. տ. II, 379), ժանրեր||ժանրներ (Ն. տ. 327)։

Վերջնագաղտնավանկով «մեկուկես» վանկանի հիմքերը եղակի ուղղականում ունեն բաղաձայն+(ը)r, մասամբ նաև բաղաձայն+(ը)ն հանգը, որը իրրև հիմքավերջ ևր հոգնակերաից առաջ վերակազմավորվելով՝ առանում է բաղաձայն+r կամ բաղաձայն+ն տեսքը։ Ուրեմն լիաձայն վանկը պահպանվում է, իսկ գաղտնավանկը վերանում է, կորչնում իր վանկաբունը։

Նոակի ձևում սկզբնագաղտնավանկ ունեցողները բավականաչափ շատ են. նրանք հոգնակիակազմ հիմքում պահպանում են գաղտնավանկը, այսինքն մնում են երկվանկ և ըստգործվում են ևեր հոգնակերաի հետ։ Հիմքի հնչյունաբանական վերակազմավորում այստեղ առկա չէ։ Հոգնակիակազմ հիմքում նման վարքագիծ ունեն, օրինակ, բլիակ, բլիթ, բլուզ, բլուր, բնազդ, բշտիկ, դպիր, դլուխ, դրիչ, դպրոց ղրահ, ղգեստ, թթու, կրակ, սրահ և նման շատ բառեր։ Այս շարքի մեջ է մտնում նաև մյուս բառը, որն արտասանվում է իրրև մեկուկես վանկ կամ, որ նույնն է, երկվանկ (տե՛ս նաև ՄԱ, ՀԼՏ, 323. մյուսեր ձևը անցյալում էլ հազվադեպ է գործածվել. հմմտ. «Մեղու Հայ.», 1858, № 7. ՄՆ, ԵԼԺ, II, 179)։

«Մեկուկես» վանկանի հիմքերից վերջնագաղտնավանկները միշտ բաղաձայնահանգ են. սկզբնագաղտնավանկները կարող են և՛ բաղաձայնահանգ, և՛ ձայնավորահանգ լինել։ Բայց այդ հանգամանքը հոգնակիակազմության մեջ արժեք չունի. հմմտ. հրթիռներ, բնիկներ, հսկաներ, վկաներ, տնկիներ, գնչուներ ևն։

Սկզբնագաղտնավանկներն ունեն հնչյունաբանական այսպիսի կազապար. կան երկփակ սկզբնագաղտնավանկեր՝ մ(ը)կ-բատ, տ(ը)վ-յալ, վերջնափակ սկզբնագաղտնավանկեր՝ (ը)ս-կիզր, (ը)ս-պա, (ը)ս-ալի, (ը)զ-գեստ, բաց սկզբնագաղտնավանկեր՝ գ(ը)-րիչ, ց(ը)-րիչ։ Այն փոխառյալ բառերը, որոնք երկրագաձայն սկիզբ ունեն, սովորաբար վանկայնորեն վերակազմավորվում են բառ սկզբնագաղտնավանկի այն կազապարի, որը մենք ցուցադրեցինք։ Այսպիսով՝ փոխառյալ միավանկ բառը հայերենում վերածվում է երկվանկի (մեկ ու կես վանկանի ձևի), և իրրև այդպիսին՝ զուգորդվում է ևեր հոգնակերաի հետ. օր. ստեպ=(ը)ստեպ>ստեպներ, ֆրանկ=ֆ(ը)րանկ>ֆրանկներ են։ Ընդհանրապես ս+պայթական սկիզբն ունեցողները վերակազմավորվելով ստանում են (ը)ս գաղտնավանկ+պայթական տեսքը։ «ԵՒրևելյան գրականում,— գրում է Հ. Աճառյանը,—ո-ով հանգող միավանկ բառերն էլ խոսակցության մեջ հոգնակիում պահում են ևեր մասնիկը. ինչ-ոևլաններ, ում-գներ, ոտաններ, ականներ, ոսկնեներ և այլն. սրա պատճառն այն է, որ ժողովրդական լեզվի մեջ ո նախաձայնը հենարան

է սառնում միշտ ր կամ ու ձայնը, հնչվում է բռանգ, բռնե, ուռուս, որով և բառը դառնում է երկվանկ և բնականաբար սառնում է «ներ մասնիկը» (ՀԱ, ԼՔՀ, III, 817)։ Ահաոյանի այս դիտողությունից ևս պարզ երևում է, թե ինչպես փոխառյալները վանկայնորին վերակազմավորվելով՝ փոխում են հոգնակիակազմ հիմքի վանկաքանակությունը, հետևապես և հոգնակիրտի հետ զուգորդման տիպը։ Սակայն անվանի հայագետի այն դիտողությունը, թե դրական լեզվում էլ, առանց ո-ի ձայնավորում սառնալու, երբեմն գործածում են՝ ռելսներ, վերաբերում է արդի գրական հայերենի համեմատաբար վաղ շրջանին. այժմ՝ ռելսեր, ռումբեր, բայց՝ ռուսներ. ռեսներ արդեն հնաբանություն է, ռանգներ հանդիպում է միայն որոշ բարբառներում։

Կան փոխառյալ բառեր, որոնք փոխառու լեզվում երկվանկ ձայնավորահանգ են, հայերենում անձայնավոր հանգերի տիպոլոգիայով կորցրել են վերջնահանգ ձայնավորը, բայց գաղտնավանկի գոյացումով պահպանում են վանկաքանակությունը· օր. գ(ր)րամ—գրամներ։

Մեկուկես վանկանի հիմքերի ձևույթային (ձևաբանական) կազմը չի կարող պայմանավորել դրանց զուգորդելիությունը այս կամ այն հոգնակերտի հետ։ Սկզբնագաղտնավանկները կարող են լինել արմատական կամ բաղադրյալ. վերջնագաղտնավանկները սովորաբար արմատական են, եվ քանի որ առաջինները փաստորեն երկվանկներ են, առաջին կարգի վերջնաբաղադրիչ ունենալու դեպքում զուգորդվում են եր հոգնակերտի, երկրորդ կարգի վերջնաբաղադրիչ ունենալու դեպքում՝ ներ հոգնակերտի հետ. չրշուն—չրշներ, չրկիր—չրկիրներ։ Նախածանցավորում ունեցողները սովորաբար երկրորդ կարգի վերջնաբաղադրիչով են և զուգորդվում են ներ-ի հետ. չտես—չտեսներ, չկամ—չկամներ ևն։

Բայց կարող է պատահել, որ հենց գաղտնավանկով այս երկվանկները հանդես գան իրրև բարդության (բաղադրության) վերջնաբաղադրիչ։ Նման դեպքերում այդպիսի վերջնաբաղադրիչները պահում են հոգնակերտի հետ զուգորդման իրենց հաղագրը։ Բերենք օրինակներ, երբ վերջնագաղտնավանկներն են բաղադրության վերջնաբաղադրիչ. ոսկր>ոսկրեր—ազդրոսկրեր, այտոսկրեր, կրծոսկրեր, փղոսկրեր, արկղ>արկղեր—աղբարկղեր, տոմսարկղեր, դրամարկղեր, դեղարկղեր, վաճառարկղեր, գանձարկղեր, փոստարկղեր[42], դուստր>դուստրեր—աթքայադուստրեր, իշխանա-

[42] Իսկ նշե գաղտնավանկը պահպանվում է, կունենանք կրկնակ ձևեր՝ ներ-ով՝ արկղներ—աղբարկղներ, դրամարկղներ ևն։

դուստրեր, եղր>եզրեր—գետեզրեր, ծովեզրեր, համր>համրեր—խուլուհամրեր, մետր>մետրեր—միլիմետրեր, կիլոմետրեր, սանտիմետրեր, տեսր>տեսրեր—օրատեսրեր, ցուցատետրեր, մանր>մանրեր (մանրներ), ամենամանրեր (ամենամանրներ)։ Այժմ բերենք օրինակներ, երբ նույն դիրքում սկզբնագաղտնավանկ վերջնաբաղադրիչներ են։ նշան>նշաններ—ազգանշան—ազդանշաններ, վճիռ>վճիռներ—դատավճիռներ, նկար>նկարներ—դիմանկարներ, կղզի>կղզիներ—թերակղզիներ, գրոհ>գրոհներ—հակագրոհներ, գլուխ>գլուխներ—պարագլուխներ, զգեստ>զգեստներ—շրջազգեստներ, սրահ>սրահներ—ընթերցասրահներ։

Երկվանկ-բազմավանկ հիմքեր։ *Հոգնակիակազմ հիմքատիպերի շարքում սրանք առանձնանում են ամենից առաջ նրանով, որ ունեն հոգնակերտների հետ զուգորդվելու յուրահատկություններ։ Եվ այդ յուրահատկություններն էլ պայմանավորված են հոգնակիակազմ հիմքի երկվանկ կամ բազմավանկ լինելու հանգամանքով։ Ի տարբերություն միավանկ հիմքերի, որոնք զուգորդվում են եր հոգնակերտի հետ, և ի տարբերություն «մեկուկես» վանկանի հիմքերի, որոնք զաղտնավանկով պայմանավորված՝ կարող են մեկ եր, մեկ ներ հոգնակերտ առանալ, երկվանկ-բազմավանկները սովորաբար զուգորդվում են ներ հոգնակերտի հետ։*

Հայագիտական գրականության մեջ սովորաբար խոսվում է «բազմավանկ բառերի» հոգնակիակազմության մասին, «երկվանկ» անվանումը գրեթե դուրս է թողնվում։ Անվանումը, իհարկե, ոչինչ չի փոխում, եթե բոլոր դեպքերում էլ նկատի ենք առնում, որ հիմքերի զուգորդումները հոգնակերտների հետ կատարվում է վանկաքանակության սկզբունքով, միավանկները՝ եր-ի հետ, մեկից ավելի վանկանի հիմքերը՝ ներ-ի հետ։ Սա վերաբերում է համակարգային զուգորդումներին։ Կան երկվանկ-բազմավանկ բառեր, որոնք ունեն ոչ-համակարգային կամ հնատիպ հոգնակիակազմություններ՝ ֆ, կամ ամբ, ոմբ, ումբ մասնիկներով։ Այս զուգորդումները կարող են հնչյունաբանական կամ ձևաբանական-իմաստաբանական պայմանավորվածություն ունենալ, ասենք, հիմքերի վերջնահանգի բնույթով կամ ձևաբանական-իմաստաբանական ու այլ գործոններով պայմանավորված։

Սակայն արևելահայ գրական լեզվում հիմքի վերջնահանգի (կամ եզակի ձևի վերջնահանգի) հնչյունաբանական բնույթն ըստ էության վճռական գործոն չէ հոգնակիակազմության մեջ. և՛ ձայնավորահանգ, և՛ բաղաձայնահանգ հիմքերը հավասարապես զուգորդելի են ներ հոգնակերտի հետ. այսպես՝ թեմա-ներ, թշնամի-

ներ, դեպո-ներ, առու-ներ, մանրէ-ներ, ջոկատ-ներ, քաղաք-ներ են։

Երկվանկ-բազմավանկ հիմքերի ենթատիպերի մեջ առավել հատկանշական են այն բաղադրյալ տեսակները, որոնք միավանկ արմատ (կամ բառ) վերջնաբազադրիչով պայմանավորված կարող են մեկ ևր, մեկ ներ հոգնակերտ ընդունել։ Երկվանկ-բազմավանկ արմատական և ածանցավոր, ինչպես և բարդ-վերջածանցավոր բոլոր հիմքերը այսպիսի տարատիպ զուգորդումներ չունեն, նրանք համատարած դրեթե առանց բացառության, ընդունում են ներ հոգնակերտ. սեղան-ներ, երիտասարդ-ներ, ստեղծագործություն-ներ են։

Առաջին և երկրորդ կարգի վերջնաբազադրիչներ: *Մենք նշեցինք, որ հիմքային տիպերը որոշում ենք տարբեր հոգնակերտների հետ հիմքերի զուգորդելիության հատկանիշով։ Ըստ այդմ հիմնական հիմքատեսակների տարբերակեցինք հնչյունաբանական գործոններով՝ հիմքի վանկաքանակության հատկանիշով։ Սակայն հիմքի զուգորդելիությունը կարող է պայմանավորված լինել ոչ միայն հնչյունաբանական հատկանիշով. կարող են դեր ունենալ ձևաբանական և իմաստաբանական գործոններ ևս։*

Եվ այսպես՝ եթե հոգնակերտի հետ հիմքի զուգորդումը պայմանավորված է հիմքի հնչյունաբանական գործոններով (վերջնահանգի բնույթը, վանկաքանակությունը ևն), ապա ունենք հնչյունաբանական հատկանիշով բնութագրվող հիմքատիպ, իսկ եթե դեր է խաղում նաև հիմքի ձևաբանական կազմը, հիմքի ձևույթային կազմի որևէ բաղադրիչ, ապա ունենք հնչյունաբանական-ձևաբանական գործոններով բնութագրվող հիմքատիպ. իսկ եթե հիմքի ձևաբանական կազմի դրվածքը առաջ է բերում բաղադրության բառային իմաստավորման յուրահատկություններ, որ ինչ-որ չափով ներգործում է նշված զուգորդումների վրա, ապա ունենք արդեն եռակի հատկանիշով բնութագրվող հիմքատիպ՝ հնչյունաբանական-ձևաբանական-իմաստաբանական։ Նման պայմանավորվածություն առկա է հենց երկվանկ-բազմավանկ՝ միավանկ վերջնաբազադրիչով բարդ բառերի հոգնակիակազմության մեջ։

Վայր *բառն ստանում է ևր հոգնակերտ՝ վայրեր, նախ այն պատճառով, որ նա արտահայտում է առարկայնություն, բառերի բնութականական խմբավորման մեջ մտնում է գոյականների շարքը. երկրորդ՝ այն պատճառով, որ նա միավանկ բառ է։ Ուրեմն վայրեր հոգնակիակազմությունը պայմանավորված է բառա-քերականական ու հնչյունաբանական (վանկաքանակություն) գործոններով։*

Բայց **առոտավայր** *բառն էլ ստանում է եր հոգնակերտ, մինչդեռ գոյական լինելով հանդերձ՝ նա վանկաքանակութ֊յամբ բազմավանկ է։ Այստեղ արդեն վճռական դեր ունի բազմավանկի ձևույթային կազմը.* **առոտավայր** *բաղադրյալ, բարդ բառ է, այսպես կոչված, իսկական բարդութ֊յուն, որը վերջում ունի* **վայր**՝ *բաղադրիչը։ Առանձին վերցրած՝ բարդութ֊յունից դուրս այս վերջնաբաղադրիչը անկախաբար գործածվող միավոր է՝ իր բնորոշ հոգնակիակազմութ֊յամբ (զուգորդվում է եր-ի հետ)։* **Առոտավայր** *բառը իբրև երկվանկ-բազմավանկ պետք է ստանար ներ հոգնակերտ. սակայն* **-վայր** *բաղադրիչը, գտնվելով հիմքավերջում և հիմնականում պահպանելով իր բառա-քերականական արժեքը, լեքսիկական նշանակութ֊յունը, ամբողջ բարդութ֊յան վրին է փաթաթում հոգնակիացման իր կաղապարը։ Այստեղից էլ՝* **առոտավայրեր** *հոգնակի ձևը։*

Այստեղ բնականաբար մտածել է տալիս **վայր** *և* **առոտավայր** *բառերի բառիմաստային փոխհարաբերութ֊յան հարցը։ Կասկածանք չկա, որ սրանք տարբեր բառեր են և տարբեր բառիմաստներ։ Բայց քերականական որոշակի հարաբերութ֊յուններում սրանց որևէ հատկանիշով ընդհանրութ֊յուններ կարող է գերիշխել։ Այս առումով* **առոտավայր** *բարդութ֊յան մեջ իշխում է* **-վայր** *բաղադրիչի իմաստը.* **առոտ-** *բաղադրիչը միայն նեղացնում է* **վայր-***ի իմաստը (թեև հատկանիշներով, բովանդակութ֊յամբ հարստացնում է այն)։ Այսինքն՝ բաղադրութ֊յան մեջ բառիմաստի ելակիմքը* **-վայր** *բաղադրիչն է. հոգնակիի քերականական իմաստն արտահայտում է նրա նշանակած առարկայի մեկից ավելին լինելու քանակային հարաբերութ֊յունը։ Այս էլ նշանակում է, թե վերջնաբաղադրիչը մտնում է բարդութ֊յան մեջ իր լեքսիկական նշանակութ֊յան գրեթե պահպանումով, այսինքն՝ իբրև բառ է մտնում բաղադրութ֊յան մեջ։ Այս տեսակետից կարող ենք ասել.* **առոտավայր** *նշանակում է վայր, որ արոտի համար է կամ հարմար է հոտն արածացնելու համար. այսպես և՝* **ածխահանք(եր)***—հանք, որ ածուխի է, ածխի հանք է,* **ամպակույտ(եր)***—կույտ, որ ամպի է, ամպի կույտ է (վերջիվերջո* **կույտ** *է)։*

Մենք այս՝ միավանկ, բառիմաստային արժեքը հիմնականում պահպանող վերջնաբաղադրիչները, որոնցով կազմված երկվանկ-բազմավանկ հիմքերը զուգորդվում են եր հոգնակերտի հետ, կոչել ենք առաջին կարգի վերջնաբաղադրիչներ՝ զուտ շարադրանքի պարզութ֊յան միտումով։ Արևելահայ գրական լեզվում առավել գործածական այսպիսի վերջնաբաղադրիչներից են հետևյալները.

-այծ, -այր, -անցք, -բերդ, -բն (<բուն), -բույս, -գայլ, -գեղձ, -գծ (<գիծ), -գնդ (<գունդ), -գր (<գիր), -գրք (<գիրք), -դաշտ, -դարձ, -դող, -երգ, -զարդ, -թերթ, -թղթ (<թուղթ), -թմբ (<թումբ), -թվ (<թիվ), -փփ (<թուփ), -ժայռ, -լամպ, -լույս, -խաղ, -խավ, -խմբ (<խումբ), -խոտ, -խորշ, -ծայր, -կապ, -կառք, -կարգ, -կետ, -կույտ, -հայ, -հայր, -հանք, -հավ, -հարթ, -հարկ, -հերկ, -հող, -հոր, -ձագ, -ձայն, -ձև, -ձի, -ձող, -ճանճ, -մայր, -մարգ, -մարտ, -մորճ, -նավ, -նիշ, -նիստ, -նյութ, -շար, -շարժ, -շարք, -շերտ, -շիթ, -շն (<շուն), -չափ, -պատ, -ջր (<ջուր), -սարք, -սյուն, -վայր, -վարձ, -վեճ, -վեպ, -տառ, -տեղ, -տեր, -տն (<տուն), -տոմս, -տուփ, -ուժ, -ցանկ, -ցավ, -ցուլ, -ցուպ, -փայտ, -փեղկ, -փնջ (<փունջ), -փող, -փոս, -քարտ, -բույր, -օղ, -օր:

Ինչպես տեսնում ենք, այս կարգի բոլոր վերջնաբաղադրիչները միավանկ տարրեր են: Սրանց մեծ մասը արմատական է. բաղադրյալ են՝ -անցք, -գրք, -կառք, -հանք, -շարք, -սարք: Վերջիններիս իրենց վերջնաբաղադրիչներ մեկ միավորի դերում են հանդես գալիս, թեև կազմված են անց-, գր-, ծախ-, կառ-, հան-, շար-, սար-, արմատների և ե ածանցի միակցությունից:

Այս վերջնաբաղադրիչները բարդությունից դուրս ունեն անկախ գործածություն, իբրև գոյական. գոյական են նաև նրանցով բաղադրված բարդությունները: Այսպես՝ քարայծ, դիտանցք, միջնաբերդ, հավաբուն, ծովագայլ, կաթնագեղձ, բնագիծ, զորագունդ, էլեկտրալամպ, երկաթահանք են. սրանց վերջնաբաղադրիչներն անկախ գործածություն ևս ունեն՝ այծ, անցք, բերդ, բուն, գայլ, գեղձ, գիծ, գունդ, լամպ:

Նշված միավանկ բաղադրիչները եթե անկախ գործածության մեջ իրրև հղձնակիսկազմ հիմք հնչյունափոխ են, այդպիսի վերակազմավորում ունենում են նաև վերջնաբաղադրիչի պաշտոնում. գունդ—գնդեր, զորագունդ—զորագնդեր: Հնչյունափոխ են հետևյալ վերջնաբաղադրիչները. -բուն (>-բն), -գիծ (>-գծ), -գունդ (>-գնդ), -գիր (>-գր), -գիրք (>-գրք), -թուղթ (>-թղթ), -թումբ (>-թմբ), -թիվ (>-թվ), -թուփ (>-թփ), -խումբ (>-խմբ), -շուն (>շն), -ջուր (>-ջր), -տուն (->-տն), -փունջ (>-փնջ). Մնացածներն անհնչյունափոխ են:

Կազմավորման արդյունավետության տեսակետից կան առավել կենսունակ վերջնաբաղադրիչներ, օրինակ, -գիր, -գիծ, -թուղթ, -կետ, -խումբ, -տուն, -մարտ են: Կան այնպիսիներն էլ որոնցով միայն մեկ-երկու կամ մի քանի բարդություններ են կազմվում:

Ընդհանուր առմամբ արդի գրական հայերենում առաջին կարգի վերջնաբաղադրիչներով կազմավորումները պրոդուկտիվ են։

Վերը մենք նշեցինք, որ դիտարկված վերջնաբաղադրիչները գերազանցապես արմատական են, բայց կան նաև մի քանի բաղադրյալ ձևեր (միակցված ի, ս ածանցական տարրերի հետ)։ Արդ, եթե այդ այդպես է, ապա կարո՞ղ ենք այդպիսի վերջնաբաղադրիչներով հիմքերի հոգնակիակազմությունները բնութագրելիս գործածել «արմատական» (կամ արմատ) անվանումը. ասենք, այսպես՝ այն բարդությունները, որոնք ունեն միավանկ-արմատ վերջնաբաղադրիչներ, այդ վերջնաբաղադրիչները բառիմաստի պահպանումով՝ զուգորդվում են եր հոգնակերտի հետ։ Անկասկած «արմատ» անվանումը այստեղ հարմար չէ, թեև ի–ով, ս–ով վերոհիշյալ բաղադրությունները իրենց բառիմաստով արմատին համարժեք են. ընդհանրապես այս մասնիկները միանալով արմատին կամ բառին՝ չեն փոխում նրանց իմաստը, նվ քանի որ առաջին տիպի վերջնաբաղադրիչները հիմնականում պահպանում են իրենց բառիմաստները և ամբողջ բարդության համար ձևա-իմաստային նշահիմք են հանդիսանում, այդ պատճառով, կարծում ենք, կարելի է գործածել բառ-բաղադրիչներ։ Այս դեպքում սահմանումը կստանա հետևյալ տեսքը. **Երկվանկ–բազմավանկ այն բարդ հիմքերը, որոնք ունեն միավանկ բառ–վերջնաբաղադրիչ՝ վերջինիս բառիմաստային արժեքի պահպանումով, առանում են «եր» հոգնակերտ։**

Այս սահմանման մեջ արտահայտություն են գտել նշված խմբի բառերի հոգնակիակազմության և՛ հնչյունաբանական, և՛ ձևաբանական, և՛ իմաստաբանական ասպեկտները։ Բայց կարող է հարց առաջանալ, ի՞նչ է նշանակում՝ «պահպանում է իր բառիմաստային արժեքը» կամ «պահպանում է իր հիմնական լեքսիկական նշանակությունը», ինչպես արդեն նշել ենք, այս ամենից առաջ, նշանակում է, թե վերջնաբաղադրիչը հիմնականում պահպանում է իր անկախ գործածության առարկայնության (գոյականի) գաղափարը։ Բացի այդ եզակի բառաձևը կարող է լինել մեներիմաստ, կրկնիմաստ, բազմիմաստ։ Կրկնիմաստ և բազմիմաստ բառերը կարող են վերջնաբաղադրիչ լինելու դեպքում հանդես գալ իրենց տարբեր իմաստավորումներով կամ իրենց որևէ մեկ իմաստով։ Իմաստաբանական ուշադիր վերլուծությունը միայն կարող է հասկանալի դարձնել այն «հիմնական նշանակությունը», որի մասին խոսեցինք։ Այսպես՝ գիր միավանկ բազմիմաստ բառ է, կարող է նշանակել՝ բառի, վանկի, հնչյունի գրային արտահայ-

ություն, տառ. այբուբեն. որևէ տեսակի փաստաթուղթ, գրված որևէ բան։ Առաջին իմաստով ունենք գաղափարագրեր, բոլորագրեր, երկրորդ իմաստով՝ համաձայնագրեր, երրորդ իմաստով՝ լրագրեր։ Այստեղ -գիր վերջնաբաղադրիչը իր հիմնական իմաստավորումները պահպանել է վերջնաբաղադրիչի դիրքում։

Ընդհակացությունը միակն է. վերջնաբաղադրիչով հիմքը կարող է զուգորդվել եր հոգնակերտի հետ բոլոր այն դեպքերում, եթե այդ վերջնաբաղադրիչը ավյալ բարդությունից դուրս ունի անկախ բառային գործածություն՝ միավանկներին բնորոշ հոգնակիակազմությամբ, և բարդության մեջ դոմինանտում է իր իսկ իմաստով։

Ստորև այբբենական կարգով ցուցադրում ենք առաջին կարգի վերջնաբազադրիչներով հոգնակիակազմություններ.
-այծ(քարայծեր), -այր(քարայրեր), -անցք(դիտանցքեր, քրքանցքեր), -բերդ(միջնաբերդեր), -բուն>-բն(արծվաբներ, մոջնաբներ, հավաբներ, շնաբներ), -բույս(հացաբույսեր, եղևնաբույսեր), -գայլ(մարդագայլեր, շնագայլեր, ծովագայլեր), -գեղձ(նշագեղձեր, կաթնագեղձեր, թքագեղձեր), -գիծ>-գծ(արգելագծեր, բնագծեր, դիմագծեր, նախագծեր, ուրվագծեր, փակագծեր), -գունդ>-գնդ(զորագնդեր, կխսագնդեր, մոտորագնդեր), -գիր>-գր(անձնագրեր, գծագրեր, երաշխավորագրեր, ծածկագրեր, սևագրեր, հավատարմագրեր), -գիրք>-գրք(բառագրքեր, դասագրքեր), -դաշտ(խաղադաշտեր, մարտադաշտեր, սառցադաշտեր), -դարձ(շրջադարձեր, տողադարձեր), -դող(անվադողեր), -երգ(խմբերգեր, մեներգեր, քայլերգեր), -զարդ(արդուզարդեր), պխաղարդեր. քանդակազարդեր), -թերթ(անվանաթերթեր, ծաղկաթերթեր, հարցաթերթեր), -թուղթ>-թղթ(խաղաթղթեր, վավերաթղթեր, փաստաթղթեր), -թումբ>-թմբ(ավազաթմբեր, միջաթմբեր), -թիվ>-թիվ(ամսաթվեր, տարեթվեր), -թուփ>-թփ(խաղողաթփեր, հաղարճաթփեր), -ժայռ(քարաժայռեր), -լամպ(էլեկտրալամպեր), -լույս(վերջալույսեր), -խաղ(բառախաղեր, հյուրախաղեր, թղթախաղեր), -խումբ>-խմբ(լեզվախմբեր, հրոսակախմբեր, նվագախմբեր), -խոտ(եղեգնախոտեր, ծովախոտեր, մոլախոտեր), -խորշ(գետնախորշեր, թունելախորշեր, սրտախորշեր), -ծայր(գրչածայրեր, թոկածայրերը), -կապ(ռադիոկապեր), -կառք(դիակառքեր, շոգեկառքեր), -կարգ(դասակարգեր, իրավակարգեր, վարչակարգեր), -կետ(ռադիոկետեր, դիտակետեր, էլակետեր, պահակակետեր, նշանակետեր, վերջակետեր, հայեցակետեր), -կույտ(ազբակույտեր, հողակույտեր, շեղջակույտեր), -հայ(արևելահայեր, արևմտահայեր,

հնդկահայեր), –հայր (*նախահայրեր, վանահայրեր*), –հանգ (*ածխահանգեր, աղահանգեր, նավթահանգեր*), –հավ (*եղեգնահավեր, հնդկահավեր, մայրահավեր*), –հարթ (*սարահարթեր*), –հարկ[1] (*ձեղնահարկեր, ներքնահարկեր, վերնահարկեր*), –հարկ[2] (*գլխահարկեր*), –հող(*վարելահողեր*), –ձագ(*աներձագեր, Սա. Մալխասյանցի բառարանում՝ աներձագներ*), –ձայն (*ոռնաձայներ*), –ձև (*բանաձևեր, խաղաձևեր, շարժուձևեր*), –ձի (*գետաձիեր*), –ձող (*եղեգնաձողեր*), –ճանճ(*մեղրաճանճեր*), –ճար(*բաժակաճառեր*), –մայր (*տառամայրեր*), –մաս (*արտադրամասեր, զորամասեր, ծայրամասեր*), –մարգ (*ծաղկամարգեր*), –մարտ (*բռնցքամարտեր, գոտեմարտեր, հերոսամարտեր, ճակատամարտեր*), –մորճ (*ծխամորճեր*), –նավ (*առագաստանավեր, գծանավեր, ռազմանավեր*), –նիշ (*դրոշմանիշեր, նամականիշեր*), –նիստ (*զուգահեռանիստեր*), –նյութ (*ռազմանյութեր, վառելանյութեր*) ,–շար (*ողնաշարեր*), –շարժ (*երկրաշարժեր, տեղաշարժեր*), –շարք (*մարտաշարքեր*), –շերտ (*ածխաշերտեր, բառաշերտեր, հանքաշերտեր*), –շիթ (*անձրևաշիթեր*), –շուն >–շն (*ջրշներ, ջրաշներ*), –շափ (*արագաչափեր, բարձրաչափեր, ալկալիաչափեր*), –պատ (*միջնապատեր, ցանկապատեր*), –պար (*շուրջպարեր*), –ջուր>–ջր (*աղբյուրաջրեր, անձրևաջրեր, մրգաջրեր*), –սարք (*թոկասարքեր, լծասարքեր, կաշեսարքեր, ձիասարքեր*), –սյուն (*ավտոշարասյուներ, արգելասյուներ, զորասյուներ, էլեկտրասյուներ, հեռագրասյուներ*), –վայր (*արոտավայրեր, աքսորավայրեր, քնակավայրեր*), –վարձ (*աշխատավարձեր, օրավարձեր*), –վեճ (*բանավեճեր*), –վեպ (*զրուցավեպեր, պատմավեպեր, սիրավեպեր*), –տուն (*գլխատուներ, մեծատուներ, փոքրատուներ*), –տեղ (*ոռնատեղեր*), –տեր (*դրամատերեր, պարտատերեր, սեփականատերեր*), –տուն>–տն (*առանձնատներ, գինետներ, դեղատներ, ներկատներ*), –տոմս (*այցետոմսեր, դեղատոմսեր, հրավիրատոմսեր*), –տուփ (*դեղատուփեր, քվեատուփեր*), –ուժ (*աշխատուժեր*), –ցանկ (*երգացանկեր, խաղացանկեր*), –ցավ (*հոդացավեր*), –ցուլ (*ծովացուլեր*), –ցուպ (*անթացուպեր, Սա. Մալխասյանցի բառարանում՝ անթացպեր*), –փայտ(*զուգափայտեր, ձողափայտեր, ցուցափայտեր*), –փեղկ (*ցուցափեղկեր*), –փունջ>–փնջ (*ծաղկեփնջեր*), –փող (*եղեգնափողեր, լսափողեր*), –փոս (*աղբափոսեր*), –ք‌ար (*անկյունաքարեր, թերթաքարեր, խաչքարեր*), –ք‌արտ (*հաշվեքարտեր*), –ֆույր (*հորաքույրեր, մորաքույրեր*), –օղ (*ականջօղեր*), –օր (*աշխօրեր*)[43],

[43] *Այստեղ ցուցադրված են այն կազմությունները, որոնք հետևում են արդի գրական հայերենում հաստատված նորմային. այն է՝ բոլոր հոգնակիներում ունենք բարդ (ձևույթային կաղմով) միավանկ բառ-արմատ վերջնաբաղադրիչով հիմքեր.*

Վերը կատարված շարադրանքում մենք նշեցինք, որ առաջին կարգի վերջնաբաղադրիչով հիմքերը միավանկ են, ունեն բաղադրություններից դուրս անկախ գործածություն, ընդ որում այդ անկախ գործածության մեջ ևս նրանք միավանկ են։ Բայց կան նաև վերջնաբաղադրիչներ, որոնք նույնպես միավանկ ու արմատական են, նրանցով կազմված հիմքերը ևս զուգորդվում են եր հոգնակերտի հետ, սակայն այդ միավանկ-արմատական վերջնաբաղադրիչները իրենց անկախ գործածության մեջ «մեկուկես» վանկանի են՝ վերջնագաղտնավանկով։ Այս կարգի բառերը (եզակի ձևերը) հոգնակիակազմ հիմքում կորցնում են գաղտնավանկի (ը)-ն, դառ-

---

բոլորի վերջնաբաղադրիչն էլ կարող է անկախ գործածություն ունենալ և եր-ով հոգնակի կազմել. իրրև վերջնաբաղադրիչ դրանք պահպանում են գոյականական իմաստը, իսկ բարդության մեջ գերիշխում են իրենց հենց այդ իմաստով։ Սակայն տարբեր հանգամանքներով պայմանավորված, ժամավանդ անցյալում, ժամանակիորեն խախտված ենք տեսնում այս կանոնավորության։ Նվ սա լինում է այլևայլ պատճառներով, ընդ որում՝ մասամբ սովորության ուժով, տվյալ կառուցածևը ավանդաբար գործածելով, մասամբ արևմտահայերենի ազդեցությամբ, և կամ պարզապես գրական լեզվի նորմայի ոչ հատակ գիտակցումով։ Այսպես, ունենք՝ պետ—պետեր բայց գորապետներ, վարչապետներ են, հոր—հորեր, բայց՝ ջրհորներ, անցք—անցքեր, բայց՝ ջրանցքներ, սդանցքներ (ՍՄ, ՀՒՒ, IV, 602), կապ—կապեր, բայց՝ փողկապներ, ելք—ելքեր, բայց՝ վերելքներ (ՍՄ, ՀՒՒ, IV, 328)։ Ճարճ ձևով չունենք քայարմատ, ածական կամ գոյական, բայց նա վերջնաբաղադրիչ է խոտհարք բաղադրության մեջ, հոգնակին էլ ներ-ով՝ խոտհարքներ (Հմմտ. վայրէջքներ)։ տարածված է դասակարգեր, բայց Ստ. Մալխասյանցը գործածել է նաև դասակարգներ (ՍՄ, ՀՒՒ, I, 491)։ ստորակետ նախածանցավոր բառ է, հոգնակին բնականաբար պիտի լինի ներ-ով՝ ստորակետներ, բայց վերբակետեր, միջակետեր, բազմակետեր հոգնակիների նմանակությամբ երբեմն նաև՝ ստորակետեր, կամ հակառակը՝ միջանետներ (ՍՄ, ՀՒՒ, III, 489)։ մենք լուսնենք զար անկախ բառ «զորք» նշանակությամբ, բայց իրրև վերջնաբաղադրիչ՝ հնձելազորներ բառում նա այդ նշանակությունն ունի, իսկ հոգնակին ներ-ով՝ հնձելազորներ (Ր, նժ, X, 303), հմմտ. հրազեններով (ՍՄ, ՀՒՒ, I, 508)։ երդ վերջնաբաղադրիչով բարդություններդ սովորաբար ստանում են եր հոգնակիտ, բայց ոմանք դրանք կազմում են ներ-ով. նգերերգներ (ՍՄ, ՀՒՒ, I, 558), պարերգներ (Ն. տ. IV, 81), խմբերգներ (Ն. տ. II, 269)։ այսպես և՝ ծխամորճեր և ծխամորճներ («Գիտ. և տեխն.», 1970, № 7, էջ 52), այցեստմսեր և այցեստմսներ (ՍՄ, ՀՒՒ, I, 84), զուգահեռագծեր և զուգահեռագիծներ (Ն. տ., II, 34), զառիվայրեր և զառիվայրներից (Ր, նժ, II, 113), երկրաշարժեր և երկրաշարժներ, քարայրեր և քարայրներ (ՆՋ, Ընդ, 479. ՍՄ, ՀՒՒ, IV, 343), ասղոցանիշեր և ասղոցանիշներ (ՄՆ, նԼժ, II, առաջաբանի հեղինակներ. տես նաև՝ Ր, նժ, X, 24. ՍՄ, ՀՒՒ, II, 2), ուղենիշեր և ուղենիշներ (ՍՋ, նժ, IV, 395), խաչանիշեր և խաչանիշներ «խաչի նշաններ» (ՍՄ, ՀՒՒ, II, 242), ոտնուտերներ (Ն. տ. IV. 371) և ոտնուտերեր (Ն. տ. 372), տեղաշարժեր և տեղաշարժներ (Հմմտ. երկրաշարժներ)։ Ստ. Պալասանյանը նշում է տերտեր բառի ներ-ով հոգնակին («Ընդհ. տեսութիւն...», էջ 24)։

նում են միավանկ, ուստի զուգորդվում են եր հոգնակերտի հետ։ Երբ «ամեկուկես» վերջնագաղտնավանկով բառերը հանդես են գալիս իբրև բարդության վերջնաբաղադրիչ, հոգնակիակազմության մեջ պահպանում են հիմքային վերակազմավորման տիպը և զուգորդվում են նույնպես եր-ի հետ։ Ճիշտ է, գաղտնավանկի վերջնաձայնը վանկաբաժանմամբ անցնում է հոգնակերտին և նրա հետ է վանկ կազմում, բայց դա չի ազդում հիմքի միավանկային ընկալման վրա։

Եվ այսպես՝ բարդության մեջ՝ գիսաստ(ը)ղ—աստղեր, կաղ(ը)ր—կաղրեր. բաղադրության մեջ՝ գիսաստ(ը)ղ—գիսաստ-ղեր, կինոկաղ(ը)ր—կինոկաղր-եր։ Այս ամենից հետևում է, որ «ամեկուկես» վանկանի բառերը բարդության վերջնաբաղադրիչ լինելու դեպքում ձեռք են բերում առաջին կարգի վերջնաբաղադրիչների վարքագիծ։

Առաջին կարգի վերջնաբաղադրիչով հիմքերը, ինչպես եր մասնիկի հետ զուգորդվող բոլոր հիմքերը, թեք հոլովաձևերում պահպանում են ուղղականի հոգնակիակազմության կաղապարը (եզակի ուղղականի ձև+եր)։

Հոգն. ուղղ.-հայց.	լրագր-եր	կինոկաղր-եր
Սեռ.-տր.	լրագր-եր(+ի)	կինոկաղր-եր(+ի)
Բաց.	լրագր-եր(+ից)	կինոկաղր-եր(+ից)
Գործ.	լրագր-եր(+ով)	կինոկաղր-եր(+ով)
Ներգ.	լրագր-եր(+ում)	կինոկաղր-եր(+ում)։

Փոխառյալ բարդության վերջնաբաղադրիչը եթե հայերենում անկախաբար չի գործածվում, որպես այդպիսին չի էլ գիտակցվում, հետևապես բարդությունը զուգորդվում է հոգնակերտի հետ՝ երկվանկ-բազմավանկների կաղապարով։

Այժմ անցնենք երկրորդ կարգի վերջնաբաղադրիչների բնութագրությանը։ Բաղադրյալ (բարդ)՝ երկվանկ-բազմավանկ հիմքերի դիտարկումները ցույց են տալիս, որ կան այլ վարքագիծ ունեցող վերջնաբաղադրիչներ, որոնցով բաղադրված հիմքերն էլ զուգորդվում են եեր հոգնակերտի հետ։ Այս նշանակում է, թե այդ հիմքերի զուգորդումները ղեկավարվում են ամբողջ բարդության վանկաքանակության օրենքով և ոչ թե հիմքի միավանկ վերջնաբաղադրիչի ձևաբանական-իմաստաբանական պայմանավորվածությամբ։ Բաղադրության ձևաբանական կառուցածքը նման է առաջին, մեր կողմից արդեն դիտարկված, բաղադրություններին, հիմքավերջում առկա է միավանկ արմատ-բաղադրիչ։ Ալքի զարնող

տարբերություններ թերևս հնչյունաբանական ու իմաստաբանական են. հնչյունաբանական՝ այն իմաստով, որ վերջնաբաղադրիչը նախկին տիպում կարող էր հնչյունափոխության ենթարկվել, իսկ այս կարգի դուգորդումներում հիմքերն անհնչյունափոխ են. համմ. լրագիր—լրագրներ, բայց՝ պատմագիր—պատմագիրներ: Իմաստաբանական առանձնահատկությունն այն է, որ երկրորդ կարգի միավանկ վերջնաբաղադրիչը իր իմաստը ձուլում է բաղադրության իմաստի մեջ, նա ամբողջ բաղադրության իմաստի ևլահիմք չէ. հիմք կազմող ձևույթների իմաստաբանական միահյուսումը բաղադրության բերում է նոր իմաստ, որը և գերիշխում, դոմինանտում է առանձին-առանձին վերցրած յուրաքանչյուր բաղադրիչ ձևույթի իմաստին: Եվ որ ամենակարևորն է, վերջնաբաղադրիչը սովորաբար արտահայտում է ոչ թե առարկայնություն, այլ հատկանիշ կամ ունի այդ առումը: Այսպես՝ այգեգործ բաղադրության մեջ չի գերիշխում գործ առարկայի գաղափարը, այն չի նշանակում գործ, որ այգու համար է, այլ՝ այգու մշակությամբ զբաղվող (անձ, որևէ մեկը), նույն կերպ էլ՝ արձակագիր չի նշանակում գիր (տառ, այբուբեն, գրված որևէ բան, փաստաթուղթ), որ արձակի է, արձակի համար է, այլ՝ ստեղծագործող, գրող, արձակի բնագավառի ստեղծագործող: Բառա-քերականական արժեքով այսպիսի վերջնաբաղադրիչ ունեցող բառերը ածականատիպ են, հեշտությամբ գործածվում են գոյականաբար կամ գոյականանում են:

Թե դոմինանտող լեքսիկական նշանակությունը ոչ թե վերջնաբաղադրիչինն է, այլ ամբողջ բաղադրությանը, ուրեմն այստեղ հիմքի ձևաբանական կազմի գործոնները երկրորդական պլանի վրա են մղվում, վճռական նշանակություն է ստանում պարզ՝ երկվանկ-բազմավանկ բառերի (հիմքերի) հոգնակիակազմության կաղապարը՝ հիմք+եր զուգորդումը. արձակագիր—արձակագիրներ:

Այս միաժամանակ նշանակում է, թե առհասարակ վերջնաբաղադրիչով հիմքերի իմաստաբանական ընկալումը կարող է կատարվել երկու հայեցակետով. ա) վերջնաբաղադրիչով, բ) ամբողջ բաղադրությամբ: Առաջին դեպքում ունենում ենք հոգնակիակազմ հիմք+եր կաղապարը, երկրորդ դեպքում՝ հոգնակիակազմ հիմք+ներ կաղապարը: Սակայն տարբեր պատճառներով, երբեմն էլ ոչ հստակ ընկալումներով՝ գրականության մեջ, ինչպես և բանավոր խոսքում գործածում են նաև անկանոն կազմություններ, այսինքն՝ միշտ չեն որոշում լեքսիկական նշանակության ոլորտը, ամբողջ բաղադրության թե՞ վերջնաբաղադրիչի իմաստն է դոմինանտում:

Այժմ ցուցադրենք գործածության շատ թե քիչ հաճախություն

ունեցող մի շարք երկրորդ կարգի վերջնաբաղադրիչներ. -անցք, -առ, -արկ, -բան, -բարձ, -բաց, -բուխ, -բույժ, -գար, -գետ, -գիր, -դող, -գործ, -դիր, -ետ, -էջ, -էջք, -զուրկ, -թաւիլ, -թիռ, -քուխ, -լից, -լույծ, -խոս, -խույղ, -կալ, -կամ, -կետ, -կեր, -կերտ, -կիր, -կից, -կուլ, -հան, -հաս, -հատ, -հար, -հեն, -հետ, -հոր, -ձիգ, -միտ, -մոլ, -մորթ, -մուղ, -մուտ, -նենգ, -նետ, -նիշ, -շարժ, -շեջ, -շարթ, -որս, -չափ, -պահ, -պաշտ, -պատ, -պարտ, -պետ, -սեր, -սույզ, -վար, -վարք, -տաշ, -տար, -տես, -տու, -ցան, -ցիր, -ցույց, -փոր, -քաղ, -քարշ։

Այս ցանկից երևում է, որ երկրորդ կարգի վերջնաբաղադրիչների գերակշռող մասը ևս արմատական է. ածանցավոր են՝ -անցք. -առ, -էջ։ Վերջիններս բաղադրված են անց-, առ-, էջ- արմատներից և ք ածանցական տարրից։ Անկախաբար, բաղադրությունից դուրս, կարող են գործածվել, ընդ որում անցք՝ ավելի հաճախական, իսկ առ, էջ՝ համեմատաբար սակավ։ Սակայն այսպիսի դեպքերում անկախաբար գործածվողը և վերջնաբաղադրիչը լեքսիկական նշանակությամբ համարժեքներ չեն. վերջնաբաղադրիչը բաղադրության կազմում իմաստով չի դոմինանտում։

Երկրորդ կարգի վերջնաբաղադրիչների մեջ առաձնապես աչքի են ընկնում բայարմատ-բաղադրիչները, և սրանք մեծ թիվ են կազմում (-առ, -արկ, -բարձ, -քուխ, -ետ, -թիռ, -գետ, -կուլ, -կամ են)։ Դրանց մի մասը արդի բայարևներում հնչյունափոխ տեսքով է հանդես գալիս. օր. -գետ||գիտ-, -թիռ||տր-, -կուլ||կլ-, -բույծ||բուծ-, -բույժ||-բուժ- են, բայարմատներ չեն՝ -բան, -գար, -կետ, -հեն, -մորթ, -պետ, -հոր։ Սակայն սրանցից ոչ մեկի իմաստը չի տիրապետում բաղադրության ընդհանուր իմաստին, մի մասը լեքսիկական նշանակության պահպանումով գրեթե անկախաբար չի գործածվում և հոգնակիակազմություն չունի։

Մենք այստեղ դիտարկում ենք այնպիսի վերջնաբաղադրիչներ, որոնք հիմնականում միավանկ արմատներ են, ունեն ընդհանուր, չմասնավորված բառիմաստ, բայց վերոհիշյալ ցանկում կան նաև այնպիսի վերջնաբաղադրիչներ, որոնք անկախ գործածություն չունեն, կամ էլ լեքսիկական նշանակության էվոլյուցիայով դրեթե վերածվել են մասնիկ ածանցի, ինչպես, օրինակ, -գար, -հար, -գործ են։ Սակայն այս անցումը լեզվի մեջ միաթռիչք չի կատարվում, այլ աստիճանաբար։ Բոլոր դեպքերում էլ այդ անցումը ավելի է ամրապնդում ներ հոդնակերտի հետ հիմքի դուրսդրսելիությունը։

Նշված ցանկում նկատելի են նաև այնպիսի բաղադրիչներ,

որոնք հնչյունական տեսքով նման են անկախաբար գործածվող միավանկ գոյականների, սակայն դա ձևական համընկնում է, իրականում դրանք բայարմատներ են (երբեմն վերականգնված արմատահնչյունով)[44]. *օր.՝* –բաց, –գետ, –գիր, –ձիգ, –ճենգ, –նիշ, –չափ, –պահ, –սեր, –վար, –վարժ:

Պետք է նկատի ունենալ նաև այն, որ երկրորդ կարգի վերջնաբաղադրիչներով բարդությունների իրենց խոսքի մասային արժեքով կարող են լինել գոյականներ, ածականներ և հավասարապես գոյականական-ածականական կիրառություն ունեցողներ. Բուն գոյական կազմություններից են՝ միջանցք-ներ, կանգառ-ներ, պահանջարկ-ներ, լեզվաբան-ներ, մանկաբարձ-ներ, գրքաց-ներ, հրաբուխ-ներ, մանկաբույժ-ներ, անասնաբույժ-ներ, ասպղագետ-ներ, ուսադիր-ներ, ելևէջ-ներ, հրթիռ-ներ, տարելից-ներ և այլն։

Սրանք էապես գոյականներ են, թեև կարող են ածականական կիրառություն ունենալ. օրինակ, գոյական որոշիչի ֆունկցիայով հանդես գալ։ Բուն ածական կազմություններից են՝ ազատամիտ-ներ, ազնվախոհ-ներ, աչքաբաց-ներ, բարեսիրտ-ներ, դրամապաշտ-ներ, երաժշտասեր-ներ, ընչազուրկ-ներ, թեթևամիտ-ներ, լավատես-ներ։ Անկասկած սրանք հոգնակի ձևում արդեն գոյականաբար են գործածված։

Կան այնպիսիները, որոնք հավասարապես և՛ գոյական, և՛ ածական կարող են լինել (կոնտեքստով պայմանավորված). ապխարհակալ-ներ, բարեկամ-ներ, բռնակալ-ներ, գործազուրկ-ներ, գրչակից-ներ, զինակիր-ներ, վերադիր-ներ, չափահաս-ներ, փայտահատ-ներ, դարպասապահ-ներ, տեղեկատու-ներ և այլն։

Միավանկ վերջնաբաղադրիչով մի շարք ածականական բարդություններ հոգնակիակազմություն չունեն. նրանք հանդես են գալիս փոխանվանական իսկական ձևերով։ Այդ բացատրվում է նման ածականների բառիմաստով. նրանք չեն նշում այնպիսի հատկանիշ, որով բնութագրվող առարկաները կարիք ունենային իրրև բազմություն ներկայանալ այդ հատկանիշով։ Այսպես, օրինակ, դիտարկենք մեղմաշունչ և մրգաշատ կազմություններըւ Ունենք «մեղմաշունչ հովեր» կամ «մեղմաշունչ քամիներ», բայց կիրառական արժեք չունի մեղմաշունչներ հոգնակին. ունենք «մրգաշատ այգիներ», բայց կիրառական արժեք չունի մրգաշատներ հոգնակին։ Իհարկե, կառուցվածքային տեսանկյունից հայերենը այդպիսի կազմավորումներ չի բացառում։ Այստեղ խոսքը սիո-

[44] *Դրանց մի մասն էլ, կարծես, այդպիսի արժեք ստացած անվանական ածրրեր են։*

տեմատորված կիրառություններ մասին է և ոչ թե լեզվի կառուցվածքային հնարավորությունների մասին։

Երկրորդ կարգի վերջնաբաղադրիչներից համեմատաբար պրոդուկտիվ են՝ -բույժ, -բույծ, -գետ, -գիր, -գործ, -խոս, -խոսյգ, -կալ, -կիր, -կից, -մորթ, -պահ, -պետ և մի քանի ուրիշները։ Ստորև այբբենական ցանկով կցուցադրենք երկրորդ կարգի վերջնաբաղադրիչով հոգնակիակազմություններ՝ անցք՝ լեռնանցքներ, միջանցքներ, նրբանցքներ, ջրանցքներ, քղանցքներ, օդանցքներ, սողանցքներ, -ատ՝ խելատներ, կանգատներ, -ատ՝ հաշվառքներ, -արկ՝ ակնարկներ, առաջարկներ, հաշվարկներ, պահանջարկներ, -բան՝ լեզվաբաններ, երգիծաբաններ, -բաց՝ գրքացներ, -բուխ՝ հրաբուխներ, -բույժ՝ ակնաբույժներ, վիրաբույժներ, -բույծ՝ թրջնաբույծներ, խաղողաբույծներ, մեղվաբույծներ, պորտաբույծներ, պտղաբույծներ, -գար՝ խելագարներ, -գետ՝ աղբյուրագետներ, արևելագետներ, հայագետներ, մասնագետներ, -գիր՝ ազգագիրներ, մատենագիրներ, տարեգիրներ, -գող՝ խաշագողներ, -գործ՝ այգեգործներ, սեագործներ, տնայնագործներ, -դիր՝ թագադիրներ, որմնադիրներ, ունկնդիրներ, ուսադիրներ, -եռ՝ ինքնաեռներ, հեշտաեռներ, -զուրկ՝ գործազուրկներ, -էջ՝ ելևէջներ, -էջ՝ վայրէջքներ, -թափ՝ ինքնաթափներ, -թիռ՝ ինքնաթիռներ, ուղղաթիռներ, -թուխ՝ հացթուխներ, -լից՝ տարելիցներ, -լույծ՝ անգամալույծներ, -խոս՝ բարբառախոսներ, գաղափոսներ, ընդդիմախոսներ, հեռախոսներ, -խոսյգ՝ բևեռախոսյգներ, բնախոսյգներ, հետախոսյգներ, -կալ՝ աշխարհակալներ, առանցքակալներ, ծաղկակալներ, վարձակալներ, տեղակալներ, -կամ՝ բարեկամներ, -կետ՝ ժամկետներ, տեսակետներ, -կեր՝ հումակերներ, ձրիակերներ, -կերտ՝ պաստակերտներ, -կիր՝ բեռնակիրներ, ավիակիրներ, դրոշակակիրներ, -կից՝ ազգակիցներ, աշխատակիցներ, գրչակիցներ, սեղանակիցներ, -կուլ՝ ձկնկուլներ, -հան՝ երգահաններ, խցահաններ, -հաս՝ դհոլահասներ, չափահասներ, -հատ՝ ածխահատներ, քարհատներ, -հար՝ խոտհարներ, գրահահարներ, -հեն՝ ծովահեններ, -հեռ՝ գուգահեռներ, -հոր՝ ջրհորներ, -ձիգ՝ ականաձիգներ, նետաձիգներ, նռնականաձիգներ, -միա՝ խելամիտներ, -մոլ՝ եսամոլներ, խաղամոլներ, ցուցամոլներ, -մորթ՝ գեղնամորթներ, թխամորթներ, սևամորթներ, -մուղ՝ գազամուղներ, աղբամուղներ, -մուտ՝ եկամուտներ, -նենգ՝ դրամանենգներ, մաքսանենգներ, -նետ՝ ականանետներ, -նիշ՝ ախտանիշներ, հատկանիշներ, չափանիշներ, ցուցանիշներ, -չարժ՝ ինքնաշարժներ, շոգեշարժներ, -շեջ՝ հրդեհաշեջներ, -շորթ՝ դրամաշորթներ, -ուս՝ ականուսներ, ձկնուսներ, ձայնուսներ, -չափ՝ երկրաչափներ, կաթնաչափներ, կալորիաչափներ, ջերմաչափներ, ջրա-

չափներ, –պան՝ անասնապահներ, հերթապահներ, –պաշտ՝ բնապաշտներ, անոտիապաշտներ, –պան՝ զրահապատներ, –պարտ՝ հանգապարտներ, –պետ՝ բանտապետներ, բռնապետներ, դահճապետներ, դորապետներ, հալարապետներ, ճարտարապետներ, մարդպետներ, միապետներ, մոգպետներ, նահանգապետներ, ներքինապետներ, պահակապետներ, վաշտապետներ, վարժապետներ, վարչապետներ, սեղանապետներ, սենեկապետներ, ցեղապետներ, –սեր՝ բանասերներ, մարզասերներ, շախմատասերներ, –սույց՝ ջրասույցներ, –վար՝ զորավարներ, մեքենավարներ, –վարժ՝ մանկավարժներ, –տաչ՝ քարտաշներ, –տար՝ բեռնատարներ, հաշվետարներ, –տես՝ ականատեսներ, –տու՝ ավանդատուներ, դասատուներ, տեղեկատուներ, –ցան՝ սերմնացաններ, –ցիր՝ գնդացիրներ, –ցույց՝ ժամացույցներ, հեռուստացույցներ, հողմացույցներ, նշանացույցներ, վայրկենացույցներ, ուղեցույցներ, օրացույցներ, –փոր՝ հանքափորներ, –փող՝ պատռտաքաղներ, –փարշ՝ էլեկտրաքարշներ, ջերմաքարշներ, ձիաքարշներ, շոգեքարշներ։

Առաջին և երկրորդ կարգի վերջնաբաղադրիչներից մի քանիսը դուզադիպում են. դրանք են՝ –անցք, –կետ, –շարժ, այսպես՝ –անցք՝ դիտանցքեր, քթանցքեր, բայց՝ լեռնանցքներ, միջանցքներ են. –կետ՝ ագիտակետեր, դիտակետեր, միջակետեր, բայց՝ ժամկետներ, տեսակետներ. –շարժ՝ երկրաշարժեր, տեղաշարժեր, բայց՝ շոգեշարժներ, ինքնաշարժներ։ Ունենք նաև –գր||–գիր բաղադրիչների դուգադիպում (համմտ. ծանուցագրեր և մատենագիրներ), սակայն առաջինը անվանական բուն է բաղադրությունից դուրս, իսկ երկրորդը՝ բայական (վերջինս արմատահնչյունի վերականգնումով)։

–Անցք վերջնաբաղադրիչի մասին պետք է ասել հետևյալը։ Սա առանձին վերցրած արմատական բառ չէ, կազմված է անց– արմատից և –ք ածանցից, այսինքն բաղադրյալ-ածանցավոր է։ Իբրև անկախ միավանկ բառ անցք-ը գործածվում է այսպիսի նշանակություններով. «1. Տեղ, որտեղով կարելի է անցնել, ճանապարհ, դուռ, ծակ ևն... 2. Անցնելը, անցնելու հնարավորությունը. 3. Ինչ որ անց է կացել, դեպք(եր), պատահար(ներ)»[45]։ Այս նշանակություններից վերջնաբաղադրիչում համախ հանդիպում ենք «ծակ» (դիտանցքեր, քթանցքեր) և «անցնելու տեղ, ճանապարհ» (միջանցքներ, լեռնանցքներ են) իմաստներին։ Եվ ինչպես նկատելի է, վերջնաբաղադրիչի առաջին իմաստավորմամբ հիմքը դուգորդվում է ներ, երկրորդ իմաստավորմամբ ևնր հոդնակերտի հետ։ Երկրորդ

[45] Տե՛ս Սու. Մալխասյանց, Հայերենի բացատրական բառարան, հ. I, էջ 186։

դեպքում հոգնակիականազմ հիմքը (եղակի համապատասխան ձևը) փոխաբերական իմաստավորում է ստանում, վերջնաբաղադրիչը բաղադրության իմաստին չի դոմինանտում, չի գերիշխում։

–Կնա վերջնաբաղադրիչը, անկախ գործածության դեպքում, արմատական բառ է. հոգնակին կազմում է եր մասնիկով, ունի «որևէ սրածայր մարմնի թոզած փոքրիկ հետք», «կենտադրական նշանին», «որոշակի սահմանագիծ, աստիճան՝ տարածական առումով», «որևէ վայր, որտեղ այս կամ այն դեպքն է տեղի ունենում» և այլ նշանակություններ[16]։ Այս նշանակություններով նա կարող է բաղադրության մեջ մտնել, իբրև բարդության վերջնաբաղադրիչ։ Նման դեպքերում հիմքը զուգորդվում է եր հոգնակերտի հետ։ Իսկ եթե այդ վերջնաբաղադրիչը մտնելով բարդության մեջ՝ հեռանում է իր հիմնական իմաստից, գերիշխում է բաղադրության բուն իմաստը, ապա հիմքը զուգորդվում է ներ հոգնակերտի հետ։ Այսպես՝ տեսակետ, ժամկետ բառերում «կետ» իմաստավորումը մթագնած է։ Այդպես չէ սակայն հայեցակետ բառում, ուր այն լիովին չի մթագնած։ Ուստի ավելի հաճախ հանդիպում ենք հայեցակետեր ձևին, թեև բացառված չէ, որ գործածվի հայեցակետներ կազմություն՝ իմաստային անցման պայմաններում։ Այս նշանակում է նաև այն, որ որոշ հիմքերի հետ հնարավոր են տարաձև զուգորդումներ, անցում եր-ից ներ-ին և հակառակը։

Իմաստաբանական նույնպիսի պայմանավորվածություն ունեն եր, ներ հոգնակերտների զուգորդումները –շարժ վերջնաբաղադրիչով հիմքի հետ։

Այս զուգադիպություններին ավելացնենք նաև այն, որ բոլոր դեպքերում, երբ միևնույն վերջնաբաղադրիչը կարող է պահպանել կամ չպահպանել իր հիմնական բառիմաստը, ապա առաջին դեպքում հոգնակիականազմությունը կլինի միավանկների կաղապարով, երկրորդ դեպքում՝ երկվանկ-բազմավանկներին հատուկ կաղապարով։ Ճակատագարդ բառը կարող է գործածվել իբրև գոյական, հիմնականում պահելով վերջնաբաղադրիչի բառիմաստը. այս դեպքում այն իբրև հիմք կզուգորդվի եր-ի հետ՝ ճակատագարդեր. իսկ եթե այն իբրև ածական է իմաստավորվում, իբրև «նմակատը զարդարված», օրինակ, ճակատագարդ տուն, ապա գոյականաբար գործածվելիս և հոգնակի կազմելիս դոմինանտում է բաղադրության ընդհանրական իմաստը և այն որպես հոգնակիականազմ հիմք զուգորդվում է ներ-ի հետ՝ ճակատագարդներ։ Ահա թե

---

16. Հմմտ. Սա. Մալխասյանց, Հայերենի բացատրական բառարան, հ. II, էջ 432։

ինչու՝ բաղածայնահանգեր նշանակում է «բաղաձայնով արտահայտված հանգեր», իսկ բաղածայնահանգներ՝ «բաղաձայնահանգ ունեցողներ», գաղանավանկեր՝ «գրությամբ չարտահայտվող (ը) ունեցող վանկեր», իսկ գաղտնավանկներ՝ «գաղտնավանկ ունեցողներ», օրավարձեր՝ «օրվա վարձեր», իսկ օրավարձներ՝ «օրավարձով աշխատողներ» և այլն:

Ինչպես նշել ենք, կարևոր է նաև վերջնաբաղադրիչի բառիմաստի մթագնման հանգամանքը. այսպես՝ մաներ բառում է արմատահնչյունը այժմյան լեզվաբմբռնումով արդեն մթագնած տարր է, չունի անկախ գործածություն, այլապես պետք է ունենայինք **մաներեր և ոչ թե մաներներ:**

Այստեղ պետք է ուշադրություն դարձնել մի հրեությի վրա եւս: *Ինչպես դիտենք, եթե երկվանկ կամ բազմավանկ բառը բաղադրյալ է, ապա այն կարող է ներկայանալ իբրև նախածանցավոր, երկձևույթ կազմավորում, որի վերջնաբաղադրիչը միավանկ բառ-արմատ է: Այսպիսի դեպքում վերջնաբաղադրիչի իմաստը սովորաբար չի դոմինանտում, և եթե անկախ գործածությամբ այն նույնիսկ զուգորդվում է եր հոգնակերտի հետ, միևնույն է, իբրև բաղադրության վերջնաբաղադրիչ չի պահպանում հոգնակերտի հետ իր զուգորդման կազապարը. այսպես՝ տուն—տներ, բայց՝ անտուն—անտուններ. համմա. ձայն—ձայներ, բաղածայն—բաղաձայններ, կամ՝ բայեր, բայց՝ մակբայներ, դերբայներ: Դժվար չէ նկատել, որ այստեղ հիմքերի զուգորդումները ևեր հոգնակերտի հետ պայմանավորված են իմաստաբանական գործոններով: Այսպես՝ անտուններ կազմավորման մեջ տուն բառիմաստը չի գերիշխում: Սա նշանակում է «տուն չունեցողներ (անձինք)». նաև՝ բաղաձայններ չի նշանակում «ձայն/եր», այլ՝ ձայնավորով արտաբերվողներ:*

Մենք դիտարկեցինք ուղիղ, ուղղական-հայցական կազմավորումները. թեք հոլովաձևերում պահպանվում է զուգորդման նույն կազապարը.

Հոգն. ուղ.-հայց.	մատենագիր-ներ(+ը)	դերբայ-ներ(+ը)
Սեռ.-տր.	մատենագիր-ներ(+ի)	դերբայ-ներ(+ի)
Բաց.	մատենագիր-ներ(+ից)	դերբայ-ներ(+ից)
Գործ.	մատենագիր-ներ(+ով)	դերբայ-ներ(+ով)
Ներգ.		դերբայ-ներ(+ում):

Այսպիսով վերը կատարած վերլուծություններից կարող ենք անել մի հետևություն. բոլոր երկվանկ-բազմավանկ բաղադրյալ

բառերը հոգնակիակազմության մեջ հետևում են ընդհանրապես այլ երկվանկ-բազմավանկ բառերի զուգորդումներին (ըստ վանկաքանակության օրենքի), բացի այն բաղադրյալ-բարդ բառերից, որոնք թեև երկվանկ-բազմավանկ են, բայց դրանց միավանկ արմատ-բառ վերջնաբաղադրիչը հիմնականում պահում է իր բառիմաստը և անկախ գործածության մեջ ունեցած հոգնակիակազմության կաղապարը (միավանկներին բնորոշ օրենքով)։

Այս օրինաչափությունը, որ ձևաբանորեն կազմավորվել և հստակ տեսք է ստացել արդի գրական հայերենում, ավելի վաղ շրջանում դեռևս այդպիսի պարզ դրսևորում չուներ։ Ահա թե ինչու Հ. Աճառյանն ասում է. «Իսկ երբ բարդ բառի վերջին եզրը միավանկ է, սկսում են տատանումներ. թե՛ արևելյան և թե՛ արևմտյան գրականի մեջ սրանց հոգնակին զանազան ձևով է լինում. օր. լրագիր, լրագրեր, լրագիրեր, լրագիրներ, լրագրներ։ Դրվում է –եր մասնիկը՝ նկատի ունենալով, որ վերջին եզրը միավանկ է, այսինքն՝ առնելով բառը առանձին (դիր, դրեր) և մտածելով, որ չի կարելի ասել գրներ, գիրներ։ Դրվում է –ներ մասնիկը՝ առնելով բառը իբր մի ամբողջություն և մտածելով, որ բազմավանկը ըստ օրինի պիտի ստանա –ներ մասնիկը։ Իսկ սղյալ և ոչ-սղյալ ձևերը առաջանում են սղման ընդհանուր սկզբունքների համաձայն։ Զանազան քննիչներ տվել են սրանց մասին զանազան կանոններ, բայց ինձ թվում է, թե հարցը երկդիմի և հետևաբար անլուծելի է։ Ըստ իս, տրամաբանությունը պիտի պահանջեր համարել բազմավանկ և դնել –ներ. բայց կան բառեր, որոնց եր-ով հոգնակին այնպես սովորական է դարձել, որ անկարելի է անտես անել և դնել –ներ. այսպես՝ տաճկահայեր, բայց ոչ թնավ՝ տաճկահայներ։ Նույնիսկ միևնույն բառը այս ինչ բարդի մեջ –եր և այն ինչ բարդի մեջ –ներ կարող է ստանալ. օր. պահակակետեր, բայց՝ ստորակետներ»[47]։

Մ. Աբեղյանը առանց վերապահումների է խոսում այս օրինաչափության մասին. «Բարդ բազմավանկ բառերը, երբ երկրորդ բաղադրիչ մասը միավանկ է և պահում է իր նշանակությունը, ընդունում են եր... Բայց երբ երկրորդ մասը բայարմատ է, կամ նոր նշանակությամբ մի բառ է կազմվում, այս դեպքում ավելանում է ներ...»[48]։ *Այս օրինաչափությանը պրոֆ. Գ. Սևակը հետևյալ բնութագրությունն է տալիս. «Բազմավանկ բաղադրված բա-*

---

[47] Հ. Աճառյան, *Լիակ. քեր. հայոց լեզվի*, հ. III, էջ 818—819։

[48] Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, էջ 337։

ուրից նրանք, որոնց վերջին բաղադրիչ արմատը միավանկ է, կարող են ստանալ թե՛ -եր, թե՛ -ներ։

Երբ վերջին (միավանկ) բաղադրիչը իր հիմնական իմաստը պահպանում է նաև բաղադրության մեջ, այս դեպքում ամբողջ բաղադրյալն ստանում է իր վերջին բաղադրիչի հոգնակիի վերջավորությունը, այսինքն՝ -եր... Իսկ երբ վերջին միավանկ բաղադրիչն իր հիմնական իմաստը չի պահպանում, այլ միայն իր նյութական իմաստն է ավելացնում ամբողջ բաղադրյալին, որը կարող է ունենալ նաև այլ հիմնական իմաստ, այսպիսի դեպքում բաղադրյալ բառը դիտվում է բազմավանկ ինքնուրույն բառ և ստանում է բազմավանկ բառերի -ներ վերջավորությունը»[49]։

Պրոֆ է. Ռ. Աղայանը ընդգծում է առաջին դեպքում վերջնաբաղադրիչի գոյականական իմաստ ունենալը, երկրորդ դեպքում՝ նրա բայարմատ կամ բայիմաստ ստացած գոյական լինելը[50]։ Համանման բնութագրություն գտնում ենք նաև պրոֆ. Գ. Ջահուկյանի մոտ[51]։

Հնչյունաբանորեն չվերակազմավորված և վերակազմավորված հիմքատարբերակներ։ Ժամանակակից հայերենում նզակի բառաձևը հոգնակիի հիմքի վերածվելիս կարող է հնչյունաբանական առումով մնալ անփոփոխ և կամ ենթարկվել վերակազմավորման հնչյունական կազմի տարբեր կողմերով (ձայնավոր հնչյուններ, վանկակազմությամբ, շեշտադրությամբ)։ Ըստ այդմ էլ ունենք հիմքի հնչյունաբանական տարատեսակումներ. չշեշտազրկված կամ շեշտակիր և շեշտազրկված կամ շեշտափոխ հիմքեր, վանկայնորեն չվերակազմավորված և վերակազմավորված հիմքատարբերակներ, անհնչյունափոխ և հնչյունափոխ հիմքատարբերակներ։

Շեշտակիր հոգնակիակազմ հիմքատարբերակներ շատ քիչ են հանդիպում, չքանի որ բաղաձայնական բնույթ ունեցող հոգնակերտները հապավոգեպ են. ունենք որոշ հնատիպ հոգնակիակազմություններ՝ մասնիկով, ինչպես՝ լեռնցի՛>լեռնցի՛-ք, գյուղացի՛>գյուղացի՛-ք, որոնց հիմքերում շեշտը պահպանվում է։ Բայց սա էլ վերաբերում է ուղիղ ձևերին. սեռ.-տրականում հիմքն անշեշտ է՝ գյուղացո-ո՛ց։

Շեշտափոխ հոգնակիակազմ հիմքատարբերակները բացառաձակորեն գերակշռում են արդի գրական հայերենում, քանի որ դրեթե բոլոր հոգնակերտները ձայնավորում ունեցող մասնիկներ

---

[49] Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 277։

[50] Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, էջ 250։

[51] Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, էջ 46։

են (եր, ներ, այք, աւք, եմք, ոմք, ումք, անց, ոց, ունց, ոնց). Հոգնակիակազմ հիմքի և հոգնակերտ վերջավորության զուգորդումը առաջ է բերում բառաձևի վերակազմավորում վանկաքանակությամբ, շեշտն օրինաչափորեն տեղաշարժ է կատարում դեպի նոր վերջնավանկը, հիմքը շեշտազրկվում է։ Այսպես են և՛ միավանկ, և՛ մեկից ավելի վանկանի հիմքերի դեպքում. ա՛րտ>արտ-ե՛ր (ար-տե՛ր), բի՛ծ>բ(ը)ծ-ե՛ր, գ(ը)նդա՛կ>դ(ը)նդակ-նե՛ր, արոտավա՛յր>արոտավայր-ե՛ր (արոտավայ-րե՛ր), մա՛րդ>մարդ-ի՛կ (մար-դի՛կ), կի՛ն>կան-ա՛յք (կա-նա՛յք), կան-ա՛նց (կա-նա՛նց), Գրիգոր-ե՛նք, Գրիգոր-ե՛նց (Գրիգո-րե՛նք, Գրիգո-րե՛նց), պապ-ո՛նք, պապ-ո՛նց (պա-պո՛նք, պա-պո՛նց)։

Թեք հոլովաձևերում հիմքի շեշտադիրքը կարող է տարբեր դրսևորումներ ունենալ՝ կապված հոլովակազմության առանձնահատկությունների, հիմքերի այլ կարգի վերակազմավորումների հետ։ Այսպես՝ սարեցիի հոգնակի ուղղական ձևում հիմքն ունի սարեցի- տեսքը, իսկ սեռ.-տրականում սարեց- վերակազմավորված տեսքը. ընդ որում սարեցի- հիմքը զուգորդվելով բաղաձայնական հոգնակերտ ի-ի հետ՝ մնում է շեշտված, իսկ սարեց- տարբերակը զուգորդվում է ձայնավորում ունեցող ոց հոգնակերտ-հոլովակերտի հետ և շեշտազուրկ է դառնում՝ սարեց-ո՛ց։

Եզակի թեք հոլովներում շեշտը տեղափոխվում է և անցնում ավելացող հոլովական վերջավորությանը, եթե այն ձայնավորական կամ ձայնավորում ունեցող տարր է. սա՛ր>սար-ի՛, սար-ո՛վ։ Իսկ եթե հոլովական վերջավորությունը բաղաձայնական տարր է, շեշտը մնում է հիմքում. արյո՛ւն (>արյա՛ն)>արյա՛մ-բ։ Ընդհանրապես շեշտադրությունը մնում է անփոփոխ, եթե եզակի հոլովաձևը ներքին հոլովման ձև է. հա՛յր—հո՛ր, մա՛յր—մո՛ր։ Հոգնակի թեք հոլովաձևերում հոգնակիակազմության և հոլովակազմության հիմքերը շատ հաճախ տարբեր են. հոլովական վերջավորությունները բառահիմքին կամ արմատին միանում են հոգնակերտների միջնորդությամբ. քաղաք-ներ-ի՛, քաղաք-ներ-ի՛ց, քաղաք-ներ-ո՛վ, քաղաք-ներ-ո՛ւմ. այս դեպքում և՛ հոգնակիակազմ հիմքն է անշեշտ (քաղաք-) և՛ հոլովակազմ հիմքը (քաղաքներ-)։

Հոգնակի ուղղականում այք, ումք, եմք, ոմք հոգնակերտներով կազմավորումների թեք հոլովաձևերի սեռ.-տրականում հոլովահիմքը և հոգնակիակազմ հիմքը համընկնում են, ընդ որում անշեշտ են, շեշտն անցնում է հոլովակերտ-հոգնակերտ անց, ոնց, ունց մասնիկներին։ Մարդիկ, կանայք հոգնակիների բացառական,

գործիական հոլովներում շեշտն անցնում է ավելացած հոլովակերտ վերջավորություններին, ընդ որում շեշտակիր սեռ.-տրական հոլովաձևը վերաարժեքավորվելով դառնում է բացառականի, գործիականի շեշտապուրկ հոլովահիմք. հմմտ.

Հոդն. ուղղ.-հայց.	*կան-ա՛յք*	*Վեդ-ո՛ւնք*	*մարդ-ի՛կ*
Սեռ.-տր.	*կան-ա՛նց*	*Վեդ-ո՛ւնց*	*մարդկ-ա՛նց*
Բաց.	*կանանց-ի՛ց*		*մարդկանց-ի՛ց*
Գործ.	*կանանց-ո՛վ*		*մարդկանց-ո՛վ։*

Վանկայնորեն չվերակազմավորվող հիմքերը *բավականաչափ շատ են արդի գրական հայերենում. ընդհանրապես այն հիմքերը, որոնք զուգորդվում են ներ հոգնակերտի հետ, վանկայնորեն չեն վերակազմավորվում. կ(ը)-րակ>կ(ը)-րակ-ներ, սահ-ման>սահ-ման-ներ, մա-տե-նա-գիր>մա-տե-նա-գիր-ներ։* Վանկաքանակությունը հոգնակիակազմ հիմքում պահպանում է նաև **երկիր** *բառը. թեև հոգնակիի հիմքավերջի վանկում տեղի է ունենում ի>(ը) փոփոխություն, լիահունչ վանկը վերածվում է գաղտնավանկի. երկիր(>եր-կիր)>եր-կ(ը)ր-ներ։* Ըստ էության վանկայնորեն չեն վերակազմավորվում նաև *բաց-միավանկ՝ ի հանգող եզակի ձևերը. ձի>ձի-(յ)եր, թի>թի-(յ)եր։*

Վանկայնորեն վերակազմավորվող հիմքատարբերակները բնորոշ են վանկաքանի փոփոխությամբ, վանկաքանի վերջնաեզրի կատարած տեղաշարժով, վանկաքանակության խախտումով։ Այսպես՝ ու *հանգող բաց-միավանկային եզակի ձևերը նկատելիորեն վերակառուցվում են. լու>լվեր, այսինքն՝ լ(ը)-վեր։* Այստեղ ու *վանկաքունը հաջորդ ավելացող ձայնավորից առաջ, ինչպես այլ նման դեպքերում, վերածվել է վ-ի։ Առեղծված բաղաձայնական անցումը կանոնավորելու համար, լ-ի և վ-ի միջև ներմուծվում է* (ը) *ձայնավորական տարրը, որով գոյանում է լ(ը)- բաց գաղտնավանկ. իսկ ու-ի փոփոխությամբ գոյացած վ-ն տեղաշարժ է կատարում դեպի հաջորդ վանկը՝ վանկատման նորմայի պահանջով. հմմտ. նաև՝ ձու>ձ(ը)-վեր (ձվեր)։*

Փակ միավանկները եթե վանկաքնի վերջնաեզրում ունեն մեկ բաղաձայնական տարր, հոգնակիի հիմքում վերածվում են բաց վանկերի՝ վերջնաեզրի բաղաձայնական տարրը թողնելով հաջորդ եր հոգնակերտով կազմավորվող վանկին։ Այս *վերաբերում է և՛ երկփակ, և՛ վերջնափակ վանկերին. չափ>չա-փեր, շիթ>շի-թեր, հաց>հա-ցեր, պատ>պա-տեր. նաև՝ ուժ>ու-ժեր, իժ>ի-*

ժեր, ուլ>ու-լեր։ Իսկ եթե այս կարգի վանկավորները վանկաբնի երկրորդ եզրում ունեն երկու բաղաձայն հնչյուն, հոգնակիի հիմքում պահպանում են փակ վանկեր, բայց վերջնահզրի երկու բաղաձայններից երկրորդը տեղաշարժ է կատարում դեպի հաջորդ՝ եր հոգնակերտով կազմավորվող վանկը. լամպ>լամ-պեր, վարդ>վար-դեր, բանտ>բան-տեր, ուղտ>ուղ-տեր, ունկ>ուն-կեր։ Սրանց վերակազմավորմանն են հետևում որոշ փակ-միավանկներ, որոնք հոգնակիի հիմքում ձևաբանական-հնչյունաբանական վերակազմավորմամբ վերականգնում են երբեմնի և հանգր. օր. մատ (հոգն. հիմքը՝ մատն-)>մատ-ներ, լեռ (հոգն. հիմքը՝ լեռն-)>լեռ-ներ։

Իսկ եթե այս կարգի փակ-միավանկները եզակի ձևում ունեն ի. ու հնչյունափոխվող բներ, ապա տեղի է ունենում նաև վանկաբնի բնույթի փոփոխություն՝ լիահունչը վերածվում է ոչ լիահունչ (ը)-ի, գոյանում է գաղտնավանկ. գին>գ(ը)-ներ, թուր>թ(ը)-րեր, գունդ>գ(ը)ն-դեր. նաև՝ մուկ, հոգն. հիմքը՝ մ(ը)կն->մ(ը)կ-ներ, ձուկ, հոգն. հիմքը՝ ձ(ը)կն->ձ(ը)կ-ներ։ Բոլոր դեպքերում էլ ավելացող եր հոգնակերտը հիմքից մեկ բաղաձայնական տարր է կորզում և վերածվում է երկփակ վանկի։

Միավանկ բառերը եթե հանդես են գալիս իբրև բարդության վերջնաբաղադրիչ, հոգնակիակազմության ժամանակ, եր հոգնակերտից առաջ, պահպանում են վանկայնորեն վերակազմավորվելու նույն վարքագիծը, ինչ որ անկախ գործածության դեպքում. ձի>ձի-(յ)եր և գետաձի>գե-տաձի-(յ)եր, ջուր>ջ(ը)-րեր և անձրևաջուր>անձրևաջ(ը)-րեր, ձուկ>ձ(ը)կ-ներ և դայլաձուկ>դայլաձ(ը)կ-ներ։

Այսպիսով միավանկ եզակի բառերը հոգնակիակազմ հիմքում պահպանում են իրենց վանկաբանակությունը, սակայն որոշակի օրինաչափությամբ կարող են փոփոխվել վանկաբնի կամ վանկային եզրերի բնույթով։ Այս միաժամանակ նշանակում է, թե վանկային վերակազմավորումը կարող է տեղի ունենալ եր հոգնակերտի հետ զուգորդվող հիմքերում։

Այսպես կոչված մեկուկես վանկանի բառերը երկու տիպի են՝ վերջնաբաղաձանավանկով և սկզբնաբաղաձանավանկով։ Ժամանակակից գրական հայերենում սրանցից երկրորդները իբրև հոգնակիակազմ հիմք զուգորդվում են ներ հոգնակերտի հետ և վանկայնորեն չվերակազմավորված են, ինչպես առհասարակ ներ հոգնակերտի հետ զուգորդվող հիմքերը, իսկ առաջիններն հոգնակիի հիմքում վերակազմավորվում են վանկաբանակությամբ, կորցնում են

գաղտնավանկը և հանդես են գալիս միավանկ տեսքով. ինչպես մի առիթով էլ նշել ենք, այդ է պատճառը, որ նրանք գուգորդվում են եր հոգնակերտի հետ, քեև եզակի ձևում նրանք երկվանկ են, բ(ը)-լուր>բ(ը)-լուր-ներ, կ(ը)-րակ>կ(ը)-րակ-ներ, բայց՝ աստ(ը)ղ>աստ-ղեր, վագ(ը)ր>վագ-րեր, նեգ(ը)ր>նեգ-րեր։

Անհնչյունափոխ են՝

1. Այն հիմքերը, որոնք եզակի ձևում երկփակ-միավանկ են և իբրև վանկաբաժան ունեն ա, ե(է), ո(օ) ձայնավորներ, այ, ույ, յու, յա երկհնչյուններ (և ընդհանրապես երկհնչյուններ), որոշ դեպքերում (մի խումբ բառերի համար) նաև ի, ու ձայնավորներ։ Մեր գրական լեզուն միտում ունի ընդհանրապես միավանկ հիմքերը անհնչյունափոխ դարձնելու։ Այդ նախ երևում է նրանից, որ այս կարգի հիմքերը բացարձակ գերակշռող են, և նույնիսկ փակ վանկում հնչյունափոխվող ի, ու ձայնավորներով շատ հիմքեր աստիճանաբար դարձել կամ դառնում են անհնչյունափոխ։ Մյուս կողմից՝ նման դեպքերում փոխառյալ բառերը գրեթե միշտ անհնչյունափոխ են։ Բերենք համապատասխան հնչյունական միավորներով անհնչյունափոխ հիմքերի օրինակներ. այ՝ հայր>հայր-եր, մայր>մայր-եր, ծայր>ծայր-եր. ույ՝ հույս>հույս-եր, լույս>լույս-եր, բույս>բույս-եր, յու՝ նյութ>նյութ-եր, հյուր>հյուր-եր, այուն>այուն-եր. յա՝ կյանք>կյանք-եր, նյարդ>նյարդ-եր, լյարդ>լյարդ-եր. ա՝ պատ>պատ-եր, դար>դար-եր, քար>քար-եր. ե(է)՝ գետ>գետ-եր, տեր>տեր-եր, դեր>դեր-եր. ո(օ)՝ ձոր>ձոր-եր, շոր>շոր-եր, հոր>հոր-եր. ի՝ բինտ-, գինդ-, դինձ-, դիրք-, թիմ-, ինձ- (կենդանի), լիցք-, լիֆտ-, խինդ-, ծիլ-, կիրճ-, հիմք-, ձիրք-, ճիգ-, ճիլ-, ճիմ-, ճիչ-, ճիտք-, միֆ-, նիստ-, նիշ-, շիթ-, շիվ-, վիթ-, վիհ-, տիպ-, ցին-, քիմք- քիստ-, քիվ-,. ու՝ բութ-, բուհ-, բուսեռ-, բուրգ-, գուղձ-, գուրգ-, դուր-, դուքս-, դուռս-, լուր-, խութ-, խուլ-, խուղ-, կուղբ-, կուրս-, հուն-, հունտ-, հուշ-, մուտք-, մուրճ-, յուղ-, ռումբ-, ռունգ-, ռուս-, սուրճ-, տունկ-, տուրք-, տուփ-, ցուպ-, փուլ-, փուքս-, քունք-, քուրք-։

2. Բոլոր այն հիմքերը, որոնց եզակի ձևը վերջնափակ-միավանկ բառ է. ազգ>ազգ-եր, այծ>այծ-եր, օր>օր-եր, ուժ>ուժ-եր, իժ>իժ-եր, էջ>էջ-եր, իր>իր-եր, իքս>իքս-եր, ուլ>ուլ-եր, ուղտ>ուղտ-եր, ունկ>ունկ-եր, ուս>ուս-եր։

3. Երկվանկ-բազմավանկ հիմքերը՝ ներ հոգնակերտից առաջ[52].

---

[52] Բացառությամբ երկիր բառի, որը հոգնակիի հիմքում հնչյունափոխ է։ Անցյալ դարի որոշ հեղինակների գործերում հանդիպում ենք ավելի հաճախ հիմքերում վերջնահանգի երկհնչյունի փոփոխություն, մի երևույթ, որ նույն շրջ-

ամուսին>ամուսին-ներ, պատմագիր>պատմագիր-ներ, անաս-նաբույժ>անասնաբույժ-ներ, վայրկյան>վայրկյան-ներ, հաղթու-թյուն>հաղթություն-ներ, մարմին>մարմին-ներ, գարուն>գա-րուն-ներ, անուն>անուն-ներ, անկողին>անկողին-ներ, կացին>կացին-ներ։ Այստեղ բնականաբար մտնում են նաև ներ հոգնա-կերտ ստացող այն երկվանկ բառերը, որոնք բաղադրյալ-ածանց-ավոր են, կազմված երկվանկ-միավանկ բառ-բաղադրիչից՝ նախ-ածանցումով, ընդ որում այս բառ-բաղադրիչները անկախ գոր-ծածությամբ հոգնակի կազմելիս կարող են հոգնակիի հիմքում հնչյունափոխ լինել և զուգորդվել եր-ի հետ։ Այսպես՝ *անսիրտ>անսիրտ-ներ* (համմտ. *սիրտ>սրտ-եր*), *անտուն>անտուն-ներ* (համմտ. *տուն>տներ*), *անջուր>անջուր-ներ* (համմտ. *ջուր>ջր-եր*)։ Սրանք սովորաբար գոյականաբար գործածվող ձևեր են։

4. Եր հոգնակերտի հետ զուգորդվող այն երկվանկ-բազմա-վանկ բաղադրյալ (բարդ) հիմքերը, որոնց վերջնաբաղադրիչը իր անկախ գործածության մեջ էլ հոգնակիի հիմքում անհնչյունափոխ է. օր.՝ *քարայծ>քարայծ-եր* (համմտ. *այծ>այծ-եր*), *հացաբույս>հացաբույս-եր* (համմտ. *բույս>բույս-եր*), *ծովագայլ>ծովագայլ-եր* (համմտ. *գայլ>գայլ-եր*), *միջակետ>միջակետ-եր* (համմտ. *կետ>կետ-եր*), *հողակույտ>հողակույտ-եր* (համմտ. *կույտ>կույտ-եր*), *դրոշմանիշ>դրոշմանիշ-եր* (համմտ. *նիշ>նիշ-եր*), *դեղատոմս>դեղատոմս-եր* (համմտ. *տոմս>տոմս-եր*), *զորամաս>զորամաս-եր* (համմտ. *մաս>մաս-եր*)։

5. Բոլոր «մեկուկես» (երկվանկ) սկզբնագաղտնավանկ հիմ-քերը. *բ(ը)լուր>բ(ը)լուր-ներ, բ(ը)նիկ>բ(ը)նիկ-ներ, գ(ը)լուխ>գ(ը)լուխ-ներ*։

6. Բոլոր հիմքերը ստացական կառույցների ներ հոգնակեր-տից առաջ՝ ոչ *ում*, ոչ *ից*, սիրանեռ։

Դժվար չէ նկատել, որ արդի հայերենի հոգնակիակազմության մեջ անհնչյունափոխ հիմքերը գերակշռում են. սրանք ներկայաց-նում են հիմքակազմության հիմնական տիպը։ Արդի հայերենի հիմքակազմության ընդհանուր տենդենցները ստանում են դեպի կցականություն, սղման ու ամփոփման երևույթների խիստ սահ-մանափակում կամ վերացում։ Հ. Աճառյանը մի առիթով ընդգծում

չանի համար էլ առանձնապես քնարոչ չէր. գիտութենների (ՄՆ, ՆԼԺ, II, 65), աշխատութեններով (նույն տեղում, 66), համմտ. իշխանութիւններէն («Արարատ», 1850, № 3), պրութիւններից («Մեղու Հայ.», 1858, № 2), նեղութիւններին (նույն տեղում, № 3), քնկերութիւններ («Մշակ», 1872, № 2)։

է, թե «սղման օրենքը արևելյան հայերենում էլ չնչման ճանապարհ է բռնել»[53]։

Հնչյունափոխ հիմքերը ժամանակակից գրական հայերենում բնութագրվում են ի, ու ձայնավորների վարքագծով։ Սակայն չպետք է մոռանալ, որ ընդհանրապես հիմքակազմության մեջ հնչյունափոխության նկատմամբ զգայուն են դառնում այլ հնչյունական տարրեր ևս (հոլովակազմության, բայակազմության, ածանցման և այլ դեպքերում), ինչպես, օրինակ, յա, ույ, յու երկհնչյունները, որոշ հիմքում նաև ե(է) ձայնավորը։ Ընդ որում դրանք հնչյունափոխության հակում ունեն շեշտազրկված դիրքերում։ Բառի աճման դեպքում շեշտի տեղափոխություն է կատարվում դեպի նոր վերջնավանկ և այդ հնչյունական միավորները շեշտազրկվելով՝ փոփոխության են ենթարկվում։ Այս, սակայն, ընդհանրապես հիմքակազմության դեպքում։ Հոգնակիակազմության մեջ նշված միավորներից հնչյունափոխության նկատմամբ զգայուն են շեշտակիր ի՛ (փակ վանկում) և ո՛ւ ձայնավորները (սովորաբար միավանկ բառերի շրջանակներում), նաև՝ երկվանկների վերջնագաղտնավանկ (ը)-ն։ Եվ այսպես հոգնակիակազմության մեջ հնչյունափոխ հիմքեր են՝

1. Բաց-միավանկ հիմքերը. սրանք մացնում ենք հնչյունափոխների շարքը հետևյալ նկատառումներով։ Նախ սրանցից ու հանդողները (ձու, լու, մասամբ և բու) հոգնակիակազմության մեջ ունեն ու>վ փոփոխություն եր հոգնակերտից առաջ եղած դիրքում։ Այս հոգնակերտը ձայնավորասկիզբ է, ավելանալով ու հանգող հիմքերին՝ ստեղծում է ու+ձայնավոր դիրք, որպիսի դեպքերում էլ տեղի է ունենում ու>վ. ձու>ձվեր, լու>լվեր, որ են՝ ձ(ը)վեր, լ(ը)վեր։ Այս փոփոխությունը հոգնակիի հիմքում սահմանափակված է նշված բառերի շրջանակով։

Ինչ վերաբերում է մնացած վերջնահանգ ձայնավորներին (ա, ո, ե, ի), ապա սրանցով ներկայացող բաց-միավանկ հիմքավերջում, հաջորդ ձայնավորասկիզբ հոգնակերտից առաջ, ավելանում է յ անցումային հնչյուն, որ թեև գրությամբ չի արտահայտվում, բայց արտասանվում է։ Թեև այս հանգամանքից վերանանք, նշված հիմքերը պետք է դասենք անհնչյունափոխների շարքը։ Սակայն, քանի որ մենք հիմքատարբերակները դիտարկում ենք հնչյունական-արտասանական կողմից, ուստի այդ մոմենտը անտեսել չենք կարող։ Ուշադրության արժանի է նաև այն հանգա-

[53] Հ. Աճառյան, Հայոց լեզվի, հ. III, էջ 931։

մանքը, որ բաց-միավանկ բառեր գրական հայերենում քիչ կան, քիչ են ի. ու հանգողները, ավելի քիչ են ա, ե, ո հանգողները (ը-ով միայն ձայնարկություններ ու բնաձայնական տարրեր կարող են լինել). Այսպես՝ ձի>ձի-(յ)-եր, գրությամբ՝ (ձիեր), թի>թի-(յ)-եր (թիեր), դի>դի-(յ)-եր (դիեր), թե>թե-(յ)-եր (թեեր). Թե շաղկապն է, ասենք, հետևյալ արտահայտության մեջ. «Թեները պետք է ընդգծված լինեն», այսինքն՝ թե շաղկապի արտահայտությունները տվյալ տեքստում. ին (տառանուն)>հո-(յ)-եր, նու (տառանուն)>նու-(յ)-եր, ասենք, այսպիսի արտահայտության մեջ. «Տառերը տպագրված տեքստում ազոտ են երևում. հոյերը շփոթվում են նու(յ)երի հետ»։

Բաց-միավանկ բառերը երբ հանդես են գալիս իբրև բարդության վերջին եզր, հոգնակիակազմության ժամանակ պահպանում են իրենց հնչյունաարտասանական հատկությունը. ձի>ձի-(յ)-եր, գետաձի>գետաձի-(յ)-եր։

2. Երկփակ-միավանկ այն հիմքերը, որոնք եզակիում իբրև վանկաբաց ունեն ի կամ ու շեշտակիր ձայնավոր[54], Այս հնչյունափոխ հիմքերում տեղի է ունենում ի>(ը), ու>(ը) փոփոխություն։ Ստորև տալիս ենք այդպիսի փոփոխություններով հիմքեր.

ի>(ը)

բիծ>բ(ը)ծ-եր	*ծիտ>ծ(ը)տ-*	*սիրտ>ս(ը)րտ-*
գիժ>գ(ը)ժ-	*ծիրտ>ծ(ը)րտ-*	*վիզ>վ(ը)զ-*
գիծ>գ(ը)ծ-	*կիրք>կ(ը)րք-*	*վիշտ>վ(ը)շտ-*
գին>գ(ը)ն-	*հին>հ(ը)ն-*	*տիզ>տ(ը)զ-*
գիր>գ(ը)ր-	*ճիտ>ճ(ը)տ-*	*ցից>ց(ը)ց-*
գիրք>գ(ը)րք-	*միս>մ(ը)ս-*	*փիղ>փ(ը)ղ-*
թիվ>թ(ը)վ-	*միտք>մ(ը)տք-*	*քիթ>ք(ը)թ-*
լիճ>լ(ը)ճ-	*միրգ>մ(ը)րգ-*	
լիրբ>լ(ը)րբ-	*շիշ>շ(ը)շ-*	
ծիծ>ծ(ը)ծ-	*ջիղ>ջ(ը)ղ-*	

ու>ը

բուն>բ(ը)ն-	*ծուխ>ծ(ը)խ-*	*տուն>տ(ը)ն-*
բուշտ>բ(ը)շտ-	*ծուռ>ծ(ը)ռ-*	*ցուրտ>ց(ը)րտ-*

[54] *Այստեղ բացառում ենք երկփակ-միավանկ այն հիմքերը, որոնք թեև եզակիում ի. ու վանկաբներով են, բայց անհնչյունափոխ են. դրանց ցանկը քիչ առաջ բերվեց առանձին։*

բուրդ > բ(ը)րդ-
դուռ > դ(ը)ռն-
գունդ > գ(ը)նդ-
դունչ > դ(ը)նչ-
թուղ > թ(ը)ղ-
թուփ > թ(ը)փ-
թուղթ > թ(ը)ղթ-
թումբ > թ(ը)մբ-
թուշ > թ(ը)շ-
թուր > թ(ը)ր-
թուփ > թ(ը)փ-
խումբ > խ(ը)մբ-

կուժ > կ(ը)ժ-
կուռ > կ(ը)ռն-
ձուկ > ձ(ը)կն-
ճուռ > ճ(ը)ռ-
մուկ > մ(ը)կն-
նուշ > ն(ը)շ-
նուռ > ն(ը)ռն-
շունչ > շ(ը)նչ-
ջուր > ջ(ը)ր-
սուտ > ս(ը)տ-
սուր > ս(ը)ր-
սուրբ > ս(ը)րբ-

փութ > փ(ը)թ-
փունջ > փ(ը)նջ-
փուշ > փ(ը)շ-
փուռ > փ(ը)ռ-
քուրդ > ք(ը)րդ-

Կան երկփակ-միավանկ հիմքեր, որոնք տատանումներ են տալիս հնչյունափոխ և անհնչյունափոխ տեսակների միջև, հանդիպում են և՛ այս, և՛ այն ձևով[55]*:*

Տարբեր բերում ենք տատանվող հիմքերի ցանկ.

բիբ- ‖ բ(ը)բ-
բիզ- ‖ բ(ը)զ-
բիր- ‖ բ(ը)ր-
դինգ- ‖ դ(ը)նգ-
զիստ- ‖ զ(ը)ստ-
թիզ- ‖ թ(ը)զ-
լինգ- ‖ լ(ը)նգ-
լինդ- ‖ լ(ը)նդ-
խիճ- ‖ խ(ը)ճ-
լիթ- ‖ լ(ը)թ-
ջիլ- ‖ ջ(ը)լ-
տիկ- ‖ տ(ը)կ-

բուլ- ‖ բ(ը)լ-
բուկ- ‖ բ(ը)կ-
բուռ- ‖ բ(ը)ռն-
գուբ- ‖ գ(ը)բ-
գուռ- ‖ գ(ը)ռ-
լուծ- ‖ լ(ը)ծ-
խունկ- ‖ խ(ը)նկ-
խուրձ- ‖ խ(ը)րձ-
խուց- ‖ խ(ը)ց-
խուփ- ‖ խ(ը)փ-
ծունկ- ‖ ծ(ը)նկն-
շուրթ- ‖ շ(ը)րթ- ‖ շ(ը)րթն-
ռունգ- ‖ ռունգն- ‖ ռ(ը)նգն-
սունկ- ‖ ս(ը)նկ-
քուրմ- ‖ ք(ը)րմ-

[55] *Սակայն հնչյունափոխների ցանկում էլ կան բառեր, որոնք հոգնակիի հիմք դառնալիս կարող են անհնչյունափոխ հիմքի տեսքով հանդես գալ. օր.՝ փուռ > փուռեր և փուռներ. Ընդհանրապես պետք է նկատի ունենալ, որ այսպիսի տատանումներում կարող են դեր ունենալ տարբեր կարգի գործոններ, ոչ միայն կառուցվածքային, այլև արտալեզվական բնույթի։*

Ծանոթ. 1.—Գրական լեզվում ունենք բույն *և* բուն *տարբերակները. հոգնակին կազմվում է երկրորդից՝* բուն-(բուներ) *և* բ(ը)ն-(բներ). *գործածական է վերջինս. Հ. Աճառյանը* բուն «հիմք» *կամ «թեմա» բառի հոգնակին գործածում է* բուներ *կազմավորմամբ։*

Ծանոթ. 2.—Երկփակ-միավանկ հիմքերի անհնչյունափոխ լինելը կարող է պայմանավորված լինել՝ ա) ձևաբանական համանունությունից խուսափելու միտումով. հմմտ. գինդ>գինդեր. և գունդ>գնդեր. բ) ձևույթի ձևա-արտահայտչական պատկերի պահպանման գործոնով. օր.՝ ճիգ>ճիգեր (ո՛չ ճգեր), վիհ>վիհեր (ո՛չ վհեր), տիկ>տիկեր (ո՛չ տկեր), նաև՝ տիղմեր, քիվեր, քիստեր։ կարող է այստեղ անկասկած, դեր ունենալ նաև հիմքի ավանդաբար անհնչյունափոխ լինելը[56]։

*3. Ը*ր հոգնակերտի հետ զուգորդվող այն երկվանկ-բազմավանկ բաղադրյալ (բարդ) հիմքերը, որոնց վերջնաբաղադրիչը իր անկախ գործածության մեջ էլ հոգնակիի հիմքում հնչյունափոխ է. *փակագիծ>փակագծ-եր (հմմտ. գիծ>գծ-եր), զորագունդ>զորագնդ-եր (հմմտ. գունդ>գնդ-եր), հեռագիր>հեռագր-եր (հմմտ. գիր>գր-եր), դասագիրք>դասագրք-եր (հմմտ. գիրք>գրք-եր), փաստաթուղթ>փաստաթղթ-եր (հմմտ. թուղթ>թղթ-եր), լեզվախումբ>լեզվախմբ-եր (հմմտ. խումբ>խմբ-եր)։*

4. Իբրև բացառություն երկիր երկվանկ բառը հոգնակիի հիմքում ևր-ից առաջ հնչյունափոխվում է՝ ի>(ը) փոփոխությամբ. երկիր>երկ(ը)ր-ներ (երկրներ)[57]։

Հ. Աճառյանը խոսելով այն մասին, որ արևելահայ գրական լեզվում ամփոփումը չնչված է, բայց սղումը շարունակվում է, և որ ի, ու ձայնավորների սղումը պահպանվում է «մինչև անգամ հոգնակիի մեջ», այնուամենայնիվ ընդգծում է. «Ընդհանրապես հոգնակին ազատ է սղումից. ինչ. ծաղիկ—ծաղկի, ծաղիկներ, երկիր—երկրի, երկիրներ և այլն. արդեն շատ անշնորհք է համարվում ասել փափկևեր, ծածկևեր, փխ. փափուկներ, ծածուկներ. բացառություն են կազմում միավանկ բառերը, ինչ. թղթեր, ջրեր, դրքեր, քրդեր և այլն»[58]*, Մանուկ Աբեղյանը մի առիթով նշում է. որ մեր «նոր լեզվի մեջ դեռ կենդանի է փակ վանկերի ի, ու ձայ-*

---

[56] *Այս մասին տե՛ս նաև՝ Ա. Ղարիբյան, Գ. Պարիս, Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետադրության ուղեցույց, Երևան, 1957, էջ 46։*

[57] *Նախապես արևելահայ գրական լեզվի գրավոր աղբյուրներում հանդիպում ենք այս բառի ավելի անհնչյունափոխ հոգնակիին, իբրև* երկիրեր *(հմմտ. ՍՇ, Ե, 28. «Մեղու Հայ.», 1858, №№ 1, 14. «Մշակ», 1872, № 1. Մն, Ե՝ժ, II, 72). Հետագայում խոսակցական լեզվի ազդեցությամբ համախացել ու հաստատվել է հնչյունափոխ տարբերակը, իբրև* երկրներ։ *Մ. Մալխասյանցը իր բառարանում երկու ձևն էլ դրել է՝ երկիրներ‖երկրներ (ՍՄ, ՀՐՔ, I, 593)։*

[58] *Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, էջ 931։*

նավորների փոփոխությունը, այն է՝ սրանք կամ դուրս են ընկնում, կամ դառնում են ը: ...Հոգնակիում, սակայն, միավանկ բառերի մեջ է միայն լինում այս փոփոխությունը՝ շրեր, թղթեր, գրքեր, թվեր, իսկ բազմավանկների մեջ ու, ի մնում են անփոփոխ՝ հաշիվներ, գլուխներ, պանդուխտներ, մարմիններ, պատուհներ. «ր» բաղաձայնից առաջ միայն դեռ պատահում են սղած ձևեր՝ երկրներ, կերակրներ, փոխանակ սովորական «երկիրներ», «կերակուրներ» ձևերի»[59]:

5. Մեկուկես-վերջնագաղտնավանկով հիմքերը. այս կարգի վերջնագաղտնավանկը, որը անշեշտ է, եզակիում դրավում է շեշտահնչյուն դիրք. ա՛ստ(ը)ղ, ա՛րկ(ը)ղ, վա՛գ(ը)ր. հոգնակիաձևության մեջ այն ընկնում է լիահունչ վանկաբնի և ավելացած հոգնակերտի միջև, շեշտը օրինաչափորեն տեղափոխվում է նոր կազմավորված լիահունչ վերջնավանկը՝ անցնելով հոգնակերտի ձայնավորին: Այդ բոլորի հետևանքով գաղտնավանկն ստանում է անմիջականորեն շեշտանախորդ դիրք: Եվ ահա հենց այդ դիրքում էլ (ը) ձայնավորական տարրը լիովին դուրս է ընկնում, ստացվում է (ը)>զրո փոփոխություն. երկվանկ (մեկ ու կես) եզակի ձևը հոգնակիաձևի հիմքում վերածվում է մեկ վանկի. հիմքի զուգորդումը եր-ի հետ դառնում է օրինաչափություն. (աստը)ղ>աստղ-եր (աստ-ղեր), վագ(ը)ր>վագր-եր (վագ-րեր), մեռ(ը)ր>մեռր-եր (մեռ-րեր)[60]:

Այս բոլորից հետո մեզ մնում է պարզել ևս մի հարց, ինչո՞ւ եր հոգնակերտի հետ զուգորդվող հիմքերում առկա է հնչյունափոխություն, իսկ ներ-ից առաջ՝ չկա: Չէ՞ որ երկու հիմքերի եզակի ձևերում էլ հանդիպում են ի, ու շեշտակիր ձայնավորներ: Ըստ շեշտի հետ կապված հնչյունափոխության միտումի՝ այդ հնչյունները պետք է հավասարապես նույն վարքագիծը դրսևորեին շեշտազրկվելուց հետո:

Ժամանակակից գրական հայերենում մեկից ավելի վանկ ունեցող արմատական բառերում վերջնահանգ ի, ու (շեշտակիր)

---

[59] Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 348:

[60] Ըստ երևույթին ժամանակակից գրական հայերենում կդ, գդ, փտ հնչյունակապակցությունները առանց անցումային (ը) ձայնավորական տարրի չեն կարող հստակ դրսևորվել, ուստի սրանց հոգնակիակազմ հիմքերը պատարերվում են նաև գաղտնավանկի պահպանումով՝ արկ(ը)ղ-, անգ(ը)ղ-, գամփ(ը)ռ-: Եզակի ձևի վանկաբանակը նման դեպքերում պահպանվում է, ուստի իրեն երկվանկ (մեկուկես վանկանի) սրանք արդեն զուգորդվում են ներ-ի հետ, ահա թե ինչու գրականության մեջ և բանավոր խոսքում հանդիպում ենք նաև արկղներ, անգղներ, գամփռներ հոգնակի ձևերին:

հազվադեպ է հանդիպում, մինչդեռ միավանկների հիմքում այդպիսի ձայնավորներ (շեշտված ու, ի) համեմատաբար շատ կան։ Հնչյունափոխության նկատմամբ միտում ունեցող ձայնավորներ առանձնապես քիչ են հանդիպում երկվանկ-բազմավանկ արմատական բառերի վերջնահանգում։ Խոսողի լեզվարմբռնողության մեջ միտում է առաջանում ներ-ից առաջ անհնչյունափոխ հիմքի գաղափարը։ Եվ ահա նման կազմավորումների, այսինքն՝ անհնչյունափոխ հիմք+ներ կաղապարի (մոդելի) անալոգիայով՝ բոլոր այն հիմքերը, որոնք ընկնում են ներ հոգնակերտից առաջ, միտում են անհնչյունափոխ դառնալու. եթե ունենք քաղաք-ներ, երիտասարդ-ներ, սեղան-ներ, բաժակ-ներ և այլն, ապա համաբանությամբ սրանց են հետևում տեսիլ-ներ, մտածմունք-ներ (ածանցավոր հիմքերը), ապա և ջրմուղ-ներ, պատմագիր-ներ (բարդ՝ վերջնաբաղադրիչով հիմքերը)։ Հետևանքն այն է լինում, որ կայունանում, ընդհանրական է դառնում ներ-ից առաջ անհնչյունափոխ հիմքի կաղապարը։ Եվ քանի որ այդ այդպես է, ապա այս սկզբունքը պետք է որ տարածվեր բոլոր մեկից ավելի վանկ ունեցող այն բարդ հիմքերի վրա, որոնք ներ հոգնակերտ են ստանում, այսինքն՝ նաև միավանկ, հնչյունափոխ ձայնավոր ունեցող, բառերը՝ նախածանցումներով. Համմ. տուն>տներ. բայց անտուն>անտուն-ներ։

Եվ ահա ժամանակակից գրական հայերենում գործում են անհնչյունափոխ հիմք+ներ, անհնչյունափոխ հիմք+եր կաղապարները, առանձին բառերի համար՝ հնչյունափոխ հիմք+եր կաղապարը։

Հնչյունական վերակազմավորումները մասնավորապես դրսևորում են նաև հնատիպ հիմքերում, որոնց մասին տարբեր առիթներով խոսել ենք, ուստի այստեղ դրանց վրա կանգ չենք առնում. (Ցուցադրման համար բերենք օրինակներ. կին>կան-այք, Մարո>Մարո(յ)-ենք)։

Ձևաբանորեն վերակազմավորված և չվերակազմավորված հիմքատարբերակներ: *Ժամանակակից գրական հայերենում ձևաբանորեն վերակազմավորված հիմքերի քիչ ենք հանդիպում։ Հնատիպ հիմքերում այսպիսի երևույթի հանդիպում ենք մարդ բառի հոգնակիակազմության թեք ձևերում։ Ուղղ.-հայց. մարդիկ ձևին թեք հոլովներում համապատասխանում է մարդկանց կազմավորումը. այստեղ մարդ- հիմքը ուղղականի մարդ հիմքի (կամ ձևի) իկ մասնիկով վերակազմավորված տարբերակն է։*

Համակարգային հիմքերի ձևաբանական վերակազմավորման

հանդիպում ենք միավանկ այն ձևերի հոգնակիակազմության մեջ, որոնք հոգնակիակազմ հիմքում վերականգնում են հնում ունեցած և հետագայում կորցրած ն հանգը։

Հին հայերենի բաղաձայն+(ր)ն վերջնահանգն ունեցող բառերը հետագա հայերենում հազվադեպ են պահել այդ կաղապարը։ Բառի նգակի ուղիղ (կամ ուղղական), բացարձակ ձևերում վերջնահանգ ն-ն համատարած ընկել է, կամ փոխարինվել է ր-ով. այն առանձին դեպքերում է միայն պահպանվել։ Այս բնականաբար վերաբերում է նաև ումն վերջնահանգին, որ է նույնպես բաղաձայն+(ր)ն կաղապարը։ Եվ այսպես՝ արեգակն>արեգակ, կայծակն>կայծակ, փայլակն>փայլակ, հիմն>հիմ(ք), շուրթն>շուրթ, դիակն>դիակ, սկիզբն>սկիզբ, այծեամն>այծյամ, եղեամն>եղյամ, եղնգն>եղեգ, ասեղն>ասեղ, ուսումն>ուսում, սառն>սառը, ընդհակառակն>ընդհակառակը (և ընդհակառակն), ակն>ակ, որդն>որդ, նաև՝ եաւթն>յոթ, տասն>տասը, տաս, ինն>ինը և այլն։ «Հին լեզվի մեջ,— գրում է Աբեղյանը,— «ըն» վերջացած բառերի վերջի «ըն» մասը նոր լեզվի մեջ դուրս է ընկել, օրինակ՝ ուսումն—ուսում, մատն—մատ, ձեռն—ձեռ, մասն—մաս։ Բառակազմության (բարդության և ածանցման) ժամանակ, ինչպես և հոգնակի թվի մեջ, սակավ բացառությամբ, այսպիսի բառերի վերջի «ն» տառը վերականգնվում է, ինչպես՝ ուսումնասեր, մատնացույց, ձեռնասուն, մասնակից. այսպես և ածանցման ժամանակ՝ մատն-ոց, ձեռն-ոց, ակն-ոց, մասն-ավոր։ Այդ բառերի մի մասի եզ. սեռականը գրաբարում, մի քանի բառերինը նաև աշխարհաբարում, լինում է «ան» ձևով...»[61]։

Աբեղյանը այս կարգի գոյականների ձևաբանական հարակցվող հատկություններից մեջ նշում է նաև այն, որ դրանցից մի քանիսը անցել են ի հոլովման (ոտ, մատ, սերմ, մաս), մի մասը, ինչպես նշվեց վերը, սեռականում ունի ան (մուկ—մկան), մի մասն էլ եզակի որոշ հոլովներում պահում են ն-ն (նռնով, բռնով, դռնով, դռնից)[62]։ *Հր. Աճառյանը անդրադառնալով այս հարցին նույնպես հաստատում է, որ արդի գրական լեզուն ջնջել է այս ն հավելվածը, թեև ածանցման մեջ պահում է, ինչպես ձուկն—ձուկ, ձկնեղեն, դուռն—դուռ, դռնապան են։ Բարբառներն էլ մեծագույն մասամբ զուրկ են այդ ն-ից*[63]։

---

[61] Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 197, հմմտ. նաև էջ 110 և 337։

[62] Տե՛ս Աբեղյան. նույն տեղը, էջ 345։

[63] Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս II, էջ 415։

Ինչպես նկատեցինք, ն հանգը կարող է վերականգնվել և՛ միավանկ, և՛ մեկից ավելի վանկ ունեցող հիմքակազմություններում։ Հոգնակիակազմության մեջ ն-ի վերականգնումը միավանկ որոշ հիմքերում և զուգորդումը եր-ի հետ՝ առաջ է բերում ներ (ներ) հոգնակերտի տպավորություն։ «Հոգնակիի ժամանակ,— գրում է Հ. Աճառյանը,—ն վերականգնվում է և այնպիսի տպավորություն է ստացվում, որ իբր թե միավանկ բառը իր հոգնակին կազմում է ներ մասնիկով. օր. թոռ—թոռներ...»[64]։

Գ. Սևակը ևս նկատել է, որ ան հոլովման ենթադրվող բոլոր միավանկ բառերի հոգնակին անպայման լինում է ներ, որի ն-ն «վերականգնվող գրաբարյան հիմքինն» է, օր. գառ-ն-եր[65]։ *Անկասկած, կան նաև այնպիսիները, որոնք այդ հոլովման չեն ենթարկվում (մատ, ոտ, կուռ, ձեռ, հարս են)։*

***Այս կապակցությամբ էդ. Աղայանը նշում է, որ «կան բառեր և՛ ան, և՛ ի հոլովումներով. դրանք առաջին դեպքում ստանում են (ն)եր, երկրորդ դեպքում՝ եր. այսպես՝ ծունկ-ծնկան-ծնկներ և ծնկի կամ ծունկի-ծունկեր. շուրթ-շրթան (հնացած և ժողովրդական)-շրթեր և շուրթի-շուրթեր. ոտնգ-ոտգան (հնացած)-ոտգներ կամ ոտնգներ և ոտնգի-ոտնգեր են։ Ոտ և ձեռ բառերի՝ արդի գրական լեզվի ավելի հարազատ ձևերն են ոտք, ձեռք, սրանց հոգնակին է ոտքեր, ձեռքեր: Մատ, ոտ՝ խոսակց. ժող. մատեր, ոտեր ձևերը»*[66]։

Այս դիտողություններից նկատելի է, որ հիմքակազմության մեջ ն-ն ձևաբանական տարր է։ Հնում այս տարրն ունեցած (եզակի ձևերում) և հետագայում կորցրած բառերից են՝ ակ, անձ, ափ, բեռ, բուռ, գառ, դուռ, եզ, թոռ, լեռ, ծոռ, ծունկ, կաթ, կողմ, կուռ, հարս, հիմ, ձեռ(ք), ձուկ, մաս, մատ, մուկ, նուռ, շուրթ, ոզ, ոտ, որդ, ոտնգ, սերմ, վազ, փուռ։ Սրանցից հոգնակիի հիմքում՝ ն հանգը վերականգնում են՝ բեռ, բուռ, գառ, դուռ, եզ, թոռ, լեռ, ծոռ, ծունկ, կուռ, հարս, ձուկ, ձեռ, մատ, մուկ, նուռ, ոտ, ոտնգ, չեն վերականգնում՝ ակ, հիմ, շուրթ, ոզ, փուռ, կաթ, անձ, մաս, սերմ, կողմ, որդ, ափ, վազ։

Ն հանգը վերականգնողները հոգնակիի հիմքում ունեն այսպիսի տեսք.

---

[64] Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. III, էջ 31։

[65] *Տե՛ս* Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի գաղթներ*, էջ 268։

[66] է. Բ. Ազայան, *Ժամանակակից հայ. հոլ. և խոն.*, Երևան, 1967, էջ 259։

բեռ>բեռն-	*լեռ>լեռն-*	*ձեռ>ձեռն-*
բուռ>բուռն-‖բ(ը)ռն-	*ծոռ>ծոռն-*	*մատ>մատն-*
գառ>գառն-	*ծունկ>ծ(ը)նկն-*	*մուկ>մ(ը)կն-*
դուռ>դուռն-	*կուռ>կ(ը)ռն-*	*նուռ>ն(ը)ռն-*
եզ>եգն-	*հարս>հարսն-*	*ոտ>ոտն-*
թոռ>թոռն-	*ձուկ>ձ(ը)կն-*	*ոռնգ>ոռնգն-‖ո(ը)նգն*[67]։

Ն հանգը չվերականգնողները նույնությամբ ծառայում են իբրև հոգնակիակազմ հիմք՝ ակ-, հիմ-, շուրթ- և այլն։

Արդ լեզվաբանական ի՞նչ գնահատում պետք է տալ այս վերականգնվող ն հանգին։ Ճի՞շտ ենք վարվում, երբ դա համարում ենք հիմքակազմ ձևաբանական տարր, թե նա հոգնակերտի հետ վերակազմավորված կամ նման վարքագիծ դրսևորող հնչյունաբանական տարր է[68]*։ Պրոֆ. Գ. Սևակը այն հատկացնում է «վերականգնվող գրաբարյան հիմքին», ինչպես վերը տեսանք։ Պրոֆ. է. Բ. Աղայանը գտնում է, որ «հոգնակիում երևան եկող ն հնչույթը պետք է դիտել իբրև ներույթ, որով (ն)եր հոգնակերտը դառնում է եր-ի ներույթավոր տարբերակը... բայց քանի որ դա նույնանում է /ներ/ հոգնակերտի հետ, ապա ավելի նպատակահարմար է գործնականորեն (ոչ տեսականորեն) համարել նույն հոգնակերտը»*[69]*։*

Նկատելի է, որ բոլորն էլ, ինչպես քիչ առաջ տեսանք, նաև Հ. Ամառյանը (ն+եր/ներ) միակցությունը վերապահությամբ են ընդունում, այսինքն՝ ն-ն ըստ էության հիմքի բաղադրիչ են համարում։ Սա իսկապես ուշադրության արժանի հարց է. ն-ն ձևաբանական ո՞ր բաղադրիչի, միավորի հետ է առնչվում, հիմքի թե՞

---

[67] *Այս ցանկում ընդգրկված են նաև տատանվող ձևեր՝ ն հանգի վերականգնման խնդրում. ոռնգ—ոռնգեր‖ոռնգներ, ծունկ—ծունկեր‖ծնկներ, նույնիսկ՝ ծունկներ. Ոռներդ մինչև ծունկներդ բորիկ (ԵՉ, Ընտ. 427)։ Առհասարակ տարաձևություններն ավելի բնորոշ են անցյալ շրջանին. այսպես, օրինակ. ակներ «թանկագին քարեր» (ՍՀ, ե, 101. Ր, եժ, II, 398), ակներ «ականվեներ» («Մեղու Հայ.», 1858, № 8), որդեր‖որգներ (ՍՄ, ՀՒՒ, III, 581. Համմ. Սե, ն, 244), մատներ (Ր, եժ, I, 537, Հ. X, 45), ափներդումբ («Մեղու Հայ.», 1858, №№ 1, 4), ափներ (ն. տ. № 7), անձներիս (ն. տ. 1859, № 19. Համմ. «Մշակ», 1872, № 8), ոդներ (ՍՄ, ՀՒՒ, III, 556), հիմներ (ԵՉ, Ընտ, 10), վազներ (ՍՄ, ՀՒՒ, IV, 286)։*

[68] *Երրմանի հիմքային վերջնաբաղադրիչը կամ վերջնահանգը կարող է ձևաբանական էվոլյուցիայով վերակազմավորվել հոգնակերտի հետ. Համմ. նախկին անձինք անձից՝ անձին-ք>անձ-ին-ք>անձ-ինք այժմյան ձևը։*

[69] *է. Բ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, էջ 251։*

վերջավորության, մատն-եր թե մատ-ներ, երբ եզակին մատ է։

Քանի որ հիմքակազմության այլ ձևերում վերականգնվող ն-ն պատկանում է հիմքին, ուրեմն հոգնակիակազմության մեջ ևս նա պատկանում է հիմքին. համմտ. դռն-ից, դռն-ապան, և ո՛չ դռ-նից, դռ-նապան. ուրեմն և ո՛չ դռ-ներ. եզն-արած և ո՛չ եզ-նարած, ուրեմն և՝ եզն-եր և ո՛չ եզ-ներ։ Թեպետ վանկատմամբ ն-ն անցնում է եր-ին (օր. եզ-ներ), բայց սա հնչյունաբանական-արտասանական երևույթ է և ոչ թե ձևաբանական։

Իսկական իմաստով բաղադրյալ հիմքը հենց ձևաբանորեն վերակազմավորված հիմքն է. ինչպես իկ տարրը մարդ բառի թեք հոլովաձևերում, այնպես էլ ն հանգը նշված միավորների հոգնակիակազմ հիմքում միայն հիմքակազմիչ դեր ունի (թեև, իհարկե, ն-ն այնպիսի մասնիկ չէ, ինչպիսին է իկ-ը)։ Ն-ն այնպիսի հիմքակազմ տարր չէ, ինչպիսին բնակազմիչ՝ թեմատիկ ձայնավորն է հնդեվրոպականում կամ գրաբարի հիմքակազմություններում, բայց սա հին հայերենի ձայնորդահիմք կազմավորումների վերապրուկ է արդի հայերենում։

Վերջում ավելացնենք նաև այն, որ միավանկների հոգնակիակազմ հիմքում ն հանգի վերականգնումը պահպանվում է նաև այն ժամանակ, երբ միավանկը հոգնակի է կազմում իրրև բարդության վերջնաբաղադրիչ. ձուկ>ձկն-եր, գայլաձուկ>գայլաձկն-եր, նավաբեռ>նավաբեռն-եր, ջրամուկ>ջրամկն-եր, քաղաքացուռ>քաղաքացռն-եր (համմտ. որդ>որդ-եր, անձրևաորդ>անձրևաորդեր, գետափ-եր||գետափ(ն)եր, ցուցամատ(ն)եր են)[70]։

գ) Հոգնակիակազմություն և հոդառություն. սուացական հոգնանիշներ։ Հայերենում հոգնակիակազմությունը և հոդառությունը երբեմն ձևաբանական-իմաստաբանական շփումներ են ունենում։ Արևելյան գրականում ևս հոլովակազմությունը, հոգնակիակազմությունը և հոդառությունը կառուցվածքայնորեն դուգակցվում են մեկ բառաձևում։ Այստեղ հնարավոր են հոգնակերտի, հոլովակերտի և հոդի հետևյալ դուգորդումները. ուղիղ ձևերում՝ հոգնակերտ + հոդ. թեք ձևերում՝ հոգնակերտ + հոլովակերտ + հոդ։

Արդի գրականում հայերենում այս երկու կաղապարները հնարավոր չեն բոլոր հոդերի հետ։ Երկրորդ կաղապարը, բացի սեռ.-տրականից, այլ թեք հոլովների դեպքում հնարավոր է միայն ս, դ հոդերի հետ (ն հոդի հետ զուգորդումներ գրեթե չկան)։

---

[70] Ձևաբանական վերակազմավորումների վերաբերյալ տե՛ս նաև «Հայ-համակարգային և հնաոիպ հոգնակիակազմություններ»-ի կապակցությամբ։

Հոգն. ուղղ.-հյց.	*տակառ-ներ-ը (-ս, -դ, ն)*	*գրք-եր-ը (-ս, -դ, -ն)*
Սեռ.-տր.	*տակառ-ներ-ի-ն (-ս, -դ)*	*գրք-եր-ի-ն (-ս, -դ)*
Բաց.	*տակառ-ներ-ից-ս (-դ)*	*գրք-եր-ից-ս (-դ)*
Գործ.	*տակառ-ներ-ով-ս (-դ)*	*գրք-եր-ով-ս (-դ)*
Ներդ.	*տակառ-ներ-ում-ս (-դ)*	*գրք-եր-ում-ս (-դ)*,

Պետք է նկատի ունենալ նաև այն, որ ժամանակակից արևելահայ գրական լեզվում իկ, այր, անք, եմք, ոնք, ունք, անց, ոնց, ունց, ենց հոգնակերտները չեն զուգորդվում հոգերի հետ. մարդիկ—մարդկանց, կանայք—կանանց, վարդանանք—վարդանանց, պապոնք—պապոնց ձևերը և նմանները առանց հոգի են։ Այստեղ նկատի չունենք փոխանուն սեռականի և առհասարակ փոխանունության հետ կապված հոգաոությունը, ինչպես, օրինակ՝ «վարդանանքը հատուկ անուն էր» կամ՝ «մեր այգին չրեցինք, վեդունցը մնաց»։

Որոշ բառերի (սովորաբար միավանկ) հոգնակիակազմության մեջ նկատելի է մի յուրահատուկ երևույթ ևս. դա ստացական հոգնակիակազմությունն է, որ նոր հայերենի զարգացման օրինաչափություններից է (գրաբարում և միջին հայերենում նկատված չէ)։ Այդպիսի կազմավորումների մեջ մտնում են հատկապես այն բառերը, որոնք արտահայտում են մարմնի մաս, օրգան կամ հոգեզգացական և առհասարակ առաջին, երկրորդ, երրորդ դեմքերին անմիջականորեն առնչվող այլ որևէ առարկա, երևույթ. օր. աչք, ունք, ձեռք, ոտք, ծունկ, վիզ, ուս, կողք, կուրծք, կոնք, մեջք, միտք, հույս, խոսք, շոր և այլն։ Ինչպես նկատում ենք, այս երեվույթները, առարկաները կարող են ստացական առումով ըմբռնվել առաջին, երկրորդ և կամ երրորդ դեմքի հարաբերությամբ։ Նրանց անունները նռանալով ստացական հոդ՝ ս, դ, ն կամ ր, հանդես են գալիս համապատասխան իմաստավորումներով։ Եզակի բառաձևերում այս հոդերը արտահայտում են իմ, քո, նրա դերանունների ստացական իմաստները. աչքս=իմ աչքը, աչքդ=քո աչքը, աչքր՝ կոնտեքստով պայմանավորված կարող է նշանակել «նրա աչքը»։ Այստեղ ունենք հիմք (եզակի ուղղ.-ի ձև)+ստացական հոդ՝ ուղիղ հոլովաձևում, հիմք+հոլովակերտ+ստացական հոդ՝ թեք հոլովաձևերում կաղապարները։

Եզակի այս ստացական ձևերի համապատասխան հոգնակիները կազմելիս տեղի է ունենում հիմքի անհրաժեշտ զուգորդում հոգնակերտի հետ. աչքեր-ս, աչքեր-դ, աչքեր-ը արդեն նշանակում են՝ իմ աչքերը, քո աչքերը, նրա աչքերը։ Այստեղ ունենք

հոգնակիականազմ հիմք *(եզակի ուղղ.-ի ձև)*+հոգնակերտ+սահցական հոդ *կաղապարը։ Թեք հոլովաձևերում առկա է* հոգնակիականազմ հիմք+հոգնակերտ+հոլովակերտ+սահցական հոդ *կաղապարը. օր. այք-եր-ից-ս։*

Այսպիսով ունեցանք աչ**ս** *և* աչ**եր**ս *ձևեր, որոնք արտահայտում են սահցականություն եզակի անձի, դեմքի հարաբերությամբ։ Սակայն կա հոգնակերտի և սահցական հոդի այլ բնույթի զուգորդում, որով արտահայտվում է սահցականություն հոգնակի անձի կամ դեմքի նկատմամբ, որը մենք կոչել ենք* սահցական հոգնակի։

***Սահցական հոգնակիները բարբառային-խոսակցական առկայություններ ունեն, սակայն աստիճանաբար նրանք արմատավորվել են գրական լեզվում (ինչպես արևմտահայերենում, այնպես էլ արևելահայերենում)։ Ձևաբանական կազմով այն ունի հոգնակիականազմ հիմք** *(եզակի ուղղ.-ի ձև)*+**հոգնակերտ+սահցական հոդ** *կաղապարը։ Սակայն այստեղ* **հիմք և հոգնակերտ** *հասկացությունները ունեն ուրույն գծեր. արևելահայ գրական լեզվում այս կարգի հիմքերը միավանկ ու անհնչյունափոխ են, իսկ հոգնակերտը՝* **եր**։ *Ուրեմն միավանկ անհնչյունափոխ* **հոգնակիականազմ հիմք+եր+սահցական հոդ** *կաղապարը սահցական հոգնակիականազմության համար է։ Այս կաղապարը հակադրվում է միավանկների սահցական հոդով սովորական հոգնակիականազմությանը նրանով, որ հոգնակերտը* **եր**-*ի փոխարեն* **ներ** *է, իսկ սահցական հոդով և* **ներ** *հոգնակերտով այլ կազմավորումներին հակադրվում է նրանով, որ սահցական հոգնակիններում հիմքը միավանկ է, սրանց մոտ՝ բազմավանկ*[71]*։ Վերը տեսանք, որ նման դեպքերում արևմտահայ գրական լեզուն զարգացրել է այլ կաղապարներ. միավանկների սահցական հոգնակիների համար ունի* **հոգնակիականազմ հիմք+եր-ների+սահցական հոդ** *կաղապարը, իսկ բազմավանկների համար՝* **հոգնակիականազմ հիմք+ներ+սահցական հոդ** *կաղապարը. ձեռքերնիս, բայց՝ գլուխներս։*

Եվ քանի որ **եր**-*ը դառնում է միավանկների սահցական հոգնակիականազմության տարր, ապա բնականաբար նա չի կարող նույն ֆունկցիայով հանդես գալ երկվանկ-բազմավանկների կազմավորումներում.* **եր**-*ը սովորական հոգնակիականազմության համակարգային կազմավորման մասնիկ է։ Այս և այլ պատճառներով արևե-*

---

[71] *Այս միավանկ հիմքը այլ միավանկ հիմքերից ևս տարբերվում է իր անհնչյունափոխ բնույթով. համմ. սիրտ>սրտ-եր, բայց՝ պիտո-ներս։*

լահայ գրականը երկվանկ-բազմավանկների ստացական հոգնակիականացման կաղապար չի զարգացրել։

Անդրադառնանք մեր մտքին. և այսպես՝ աչքներս արդեն նշանակում է «մեր աչքերը», աչքներդ՝ «ձեր աչք(եր)ը», աչքներ՝ «նրանց աչք(եր)ը»։ Թեք հոլովաձևերում առկա է հոգնակիականացման հիմք + հոգնակերտ + հոլովակերտ + ստացական հոդ կաղապարը՝ հիմք և հոգնակերտ հասկացություններին նույն մեկնաբանումներով, ինչ որ հենց նոր արեցինք։

Այժմ ուղիղ և թեք հոլովաձևերի ստացական հոգնակիականացման կաղապարները ցուցադրենք ամբողջ հարացույցում.

Հոգն. ուղղ.-հայց.	*աչք-ներ-ս (-դ, -ը)*
Սեռ.-տր.	*աչք-ներ-ի-ս (-դ, -ի)*
Բաց.	*աչք-ներ-ից-ս (-դ)*
Գործ.	*աչք-ներ-ով-ս (-դ)*
Ներգ.	*աչք-ներ-ում-ս (-դ)։*

Ստացական հոգնակիականացման դիտարկված կաղապարները այլ մեկնաբանություն ևս ունեն։ Աստեղ կարող են ասել, թե ներ-ը ծագումով կամ արդի ըմբռնմամբ էլ ն-եր է դիտարկվող կաղապարում[72]։ Ստուգաբանորեն այդ ճիշտ է, բայց կառուցվածքային ընկալումով սա ներ հոգնակերտի կիրառական մի տարբերակն է՝ իմաստաբանական պայմանավորվածությամբ։ Բոլոր մեկուկես ու երկվանկ-բազմավանկ բառերը և միավանկներից նրանք, որոնք վերակազմավորվող ն հանգն ունեն, ստացական հոգնակիականացում չունեն։ Եվ քանի որ ստացական հոգնա-

---

[72] *«Ստացական հոդը,— գրում է պրոֆ. Գ. Սևակը,— սովորաբար եզակի իմաստ ունի և փոխարինում է ...իմ, ըո և նրա դերանուններին։ Ուրեմն, սակայն, հարկավոր է լինում ստացական հոդը գործածել հոգնակի իմաստով, ըստ որում, այդպիսի դեպքերում ստացման ևս պիտի հոգնակի լինի, բառն ստանում է հոգնակիության երկու վերլուծություն, մեկը առարկայի հոգնակիության համար, մյուսը՝ ստացականի, օրինակ՝ սրտ-ն-եր-ս, սրտ-ն-եր-դ, սրտ-ն-եր-ը։ Այս օրինակների մեջ բառի հիմքն... է սրտ (հոգնակի՝ սրտ-եր), եր վերլուծությունը սրտ-ի հոգնակիության նշանն է, ս-ն, դ-ն, և ը-ն ստացական հոդն են, իսկ հիմքի և հոգնակիի վերլուծության միջև ընկնող ն-ն ստացականի հոգնակիության նշանն է։ Սրտներս, սրտներդ, սրտները բառերի մեջ կա հոգնակիության երկու նշան և երկու իմաստ. մեկը՝ ս-ի, դ-ի, ը-ի հոգնակիության նշանը (-ն-), որը տալիս է իմ, ըո, նրա իմաստի հոգնակիությունը, այսինքն՝ մեր, ձեր, նրանց՝ մյուս՝ սրտ-ի հոգնակիության նշանը (-եր), որը տալիս է սիրտ իմաստի հոգնակիությունը, այսինքն՝ սրտեր։ Հետևանքն այն է լինում, որ այս բառերը նշանակում են ո՛չ միայն իմ սրտերը, ըո սրտերը, նրա սրտերը, այլև՝ մեր սրտերը, ձեր սրտերը, նրանց սրտերը» (ԳՍ, ժՀՂՊ, 278—279)։*

կիսակազմությունը ներ–ով է, ապա բոլոր ստացական հոգնակիների հիմքերը անհնչյունափոխ են՝ շուրթ–ներս, միտք–ներս, վիզ–ներս և այլն։ Այսպիսով՝ միավանկ հիմք+ներ+ս (ղ, ճ) կաղապարը ստացական հոգնակիակազմության համար է, մեկից ավելի վանկանի հիմք+ներ+ս (ղ, ճ) կազապարը՝ բուն, սովորական հոգնակիի համար է։

Այս դիտարկումները բերում են այն համոզման, որ ժամանակակից գրական հայերենում թվակազմությունը ներկայանում է միահեր և երկեր հակադրություններով։ Միաղեր են թվի քերականական այն արտահայտությունները, երբ եզակին չունի համապատասխան հոգնակի կամ ստացական կազմավորումներ. օր. անհոգնականները. միաղեր են և այն դեպքերը, երբ հոգնակին չունի եզակի համապատասխանություններ կամ ստացական հոգնակիի ձևեր չի կազմում. օր. անեզականները։ Երկեղը կազմողները նրանք են, որոնք ներկայանում են եզակի—հոգնակի կամ եզակի—ստացական հոգնակի հակադրություններով. օր. հայր—հայրեր, որդի—որդիներ, կամ՝ բախտ—բախտներդ, կուրծք—կուրծքներդ, ուշք—ուշքներդ, քունդ—քուններդ։

Միահեր և երկեր կազմավորումները իմաստաբանական պայմանավորվածություն ունեն, վճռական դեր ունեն բառի լեքսիկական իմաստավորումներում։ Միահեր բուն անհոգնականները արտահայտում են հավաքական, վերացական, դանդվածայնության, անհատականության այնպիսի հասկացություններ, որոնք չեն կարող ստացական հարաբերությամբ վերցվել (բացի նրանից, որ հոգնակի էլ չունեն). երկեղը հակադրություն կազմողները սովորաբար թվարկվող առարկաների հասկացություն են արտահայտում և հակադրությունը եզակի ու հոգնակի եղերի միջև է. այն դեպքերում, երբ ստացական հոգնակին կազմվում է անհոգնականից, բացառվում է բուն հոգնակին, նույնպես ունենք երկեղը հակադրություն՝ եզակի—ստացական հոգնակի։

Մեր այս բոլոր դիտարկումները կատարեցինք գոյականների վրա և տեսանք, որ ստացական հոգնակիի ձևեր ունեն որոշակի բառիմաստով միավանկները։ Երկվանկ-բազմավանկներն ընդհանրապես ստացական հոգնակիի ձևեր չեն կազմում. սեղաններս կազմավորումը «իմ սեղանները» իմաստավորման համար է, միևնույն ներ–ս կազապարով հնարավոր չէ արտահայտել նաև «մեր սեղանները» իմաստավորումը։ Այստեղ բացառություն կարող են կազմել ստացական իմաստով այն կազմավորումները, որոնք սերում են երկվանկ կամ բազմավանկ հիմքից, և որոնց ցույց տված

առարկայի անունը թեև հոգնակի է դրված, բայց որևէ անձի հարաբերությամբ միայն մեկ (եզական) կարող է լինել։ Ահա թե ինչու գլուխներս, երեսներս ձևերը և՛ բուն հոգնակիության, և՛ ստացական հոգնակու իմաստ կարող են ունենալ, ավելին՝ այսպիսի դեպքերում կիրառական արժեք ունի հենց ստացական հոգնակի իմաստավորումը. այսինքն՝ «մեր գլուխը կամ մեր յուրաքանչյուրիս գլուխը, մեր երեսը կամ մեր յուրաքանչյուրիս երեսը». այս ձևերին խորթ են «իմ երեսները» կամ «իմ գլուխները» նշանակությունները։ Մինչդեռ այլ բառիմաստ ունեցող երկվանկ-բազմավանկների ստացական հոդով կաուցաձևերին հենց բնորոշ են վերջին տիպի իմաստավորումները. օր. մատիտներս «իմ մատիտները» են։

Իսկ եթե երկվանկ-բազմավանկ բառը բաղադրյալ է և ունի միավանկ վերջնաբաղադրիչ, որը բարդությունից դուրս անկախ գործածությամբ կարող է ստացական ձև կազմել, ապա բաղադրության մեջ էլ նա պահպանում է կազմավորման իր վարքագիծը. հաց—հացներս, նաև՝ աղուհաց—աղուհացներս, հմմտ. ախուվախներս, անցուդարձներս, ուշքումիտքներս, ելումուտներս, գնալգալներս։

Բայերից անորոշ դերբայը միայն ունի ստացական հոգնակիականազմություն՝ անկախ վանկաքանակությունից. խոսելներս, գրելներս, գնալներս, գալներս, և այլն։

Դ) Ոչ-ճամակարգային և հնատիպ հոգնակիականազմություններ։ Ինչպես նշել ենք, հնատիպ են այն զուգորդումները, որոնց մեջ չի գործում վանկաքանակության միտումը, սկզբունքը, և որոնք զուգորդվում են հայերենի զարգացման նախորդ էտապներին ու հին հայերենին բնորոշ հոգնակերտների կամ նրանց ձևաբանորեն վերականգնվածների հետ. օր. մարդ-իկ, կան-այք, Գրիգոր-ենք, Վարդան-անք, Վեդ-ունք, պապ-ոնք և այլն։ Այս հնատիպ զուգորդումների մեջ կարելի է առանձնացնել ենթատիպեր.

Ա) Զուգորդումներ, որոնք պայմանավորված են ձևույթային հիմքերի առկայությամբ. այսպես՝ իկ հոգնակերտը զուգորդվում է միայն մարդ բառի (ձևույթի) հետ, իսկ այք հոգնակերտը՝ միայն կին բառի (ձևույթի) հետ, իճ ունենք միայն աճն եզակիի հետ. պարոնայք և տիկնայք արդեն հնաբանություն են։

Բ) Զուգորդումներ, որոնք բառա-քերականական ուրույն հատկություններով են մեկնաբանվում։ Սրանք մեծ մասամբ եզակի հարաբերակից եզրեր չունեցող աննեզականներ են՝ անձնանուններից կազմված հավաքականներ։ Արտահայտում են գերդաստանի,

արենակցական-աղգակցական հատկանիշով կապված անձանց հավաքական խմբավորում. կազմվում են **եք, աք, ուք, ոք** *մասնիկներով։*

Գ) Զուգորդումներ, որոնք պայմանավորված են վերջնահանգի (հիմքավերջի) հնչյունաբանական բնույթով։ Այսպես ի հանգող որոշ բառեր (հիմքեր) զուգորդվում են նաև f հոգնակերտի հետ. **անգլիացիf, գյուղացիf** *և այլն։ Այս զուգորդումները հատկապես բնորոշ են այն հիմքերի հետ, որոնք ցի վերջնահանգն ունեն. օր. լեռ—լեռնցի>լեռնցի-ք, սար—սարեցի>սարեցի-ք, տուն—տնեցի>տնեցի-ք։*

Ժամանակակից գրական հայերենում ոչ-համակարգային և հնատիպ որոշ կազմավորումների մեջ նկատելի է համակարգային տիպոլոգիայի ներթափանցում։ Այսպես, օրինակ, վերջնահանգով բնութագրվող հնատիպ զուգորդումները այժմ գերազանցապես հետևում են **հիմf+ներ** *կաղապարին.* **լեռնցիներ, գյուղացիներ, անգլիացիներ, ուղիներ** *ավելի սովորական են, քան* **լեռնցիf, գյուղացիf, անգլիացիf, ուղիf** *ձևերը։ Վերջիններս կարելի է արդեն լիովին հնաբանություն համարել, թեև խոսակցական լեզվաոարբերակում և առանձին ոճերում դեռևս հանդիպում ենք այդպիսի հոգնակիների։ Թերևս մի բնորոշ օրինակով կարելի է այդ ավելի լավ ցուցադրել։ Գրական լեզվում միտում է նկատվում առավել նախընտրելի ձև համարելու* **լեռնցի** *ձևը, քան՝* **սարեցի**։ *Մինչդեռ վերջինս ավելի նախընտրելի է խոսակցական տարբերակում, նվ ահա մենք հաճախ լսում ենք* **լեռնցիներ** *ձևը, բայց՝* **սարեցիf**։

Վերը կատարված դիտարկումները միաժամանակ ցույց են տալիս, որ վերջնահանգով բնութագրվող հիմքատարբերակը մեռնող կատեգորիա է. **հիմf+f** *կաղապարը արդի գրական հայերենում այլևս կենսունակություն չունի։ Սա ձայնավորահանգ հիմքատարբերակի համատարած վերացման վերջին արտահայտությունն է արևելահայ գրական լեզվում*[73]։

---

[73] *Արևելահայ գրական լեզվի անցած էտապի համար այսպիսի պնդումը այնքան էլ հարմար չի լինի։ Նշված շրջանում առկա են դեպքեր, երբ բազաձայնահանգ բառերն էլ ունեն f-ով հոգնակի։ Այս հատկապես վերաբերում է ուրչյուն հանգող ածանցականներին։ Ահա թե մի առիթով ինչ է գրել Ստ. Նազարյանը այդ կարգի բառերի հոգնակիակազմության մասին. «Դուք հարցանում եք, թե ինչպես պիտո էր մեզ վարվիլ բյուն վերջավորությամբ գոյականների կիրառության մեջ։ Ես գրեցա հոգնակի ուղղականքը գործ եմ դնում և բյուիմ և բյուններ ըստ տեղվույն. թեպետ բյուններ բուն ժողովրդական է, բայց և բյուիմ ոչ թե միայն բարևհնչուն, այլ շատ տեղ հարկավոր, որովհետև բյունները շատ*

Այսպես պետք է գնահատել նաև ձևույթային անձ- հիմքով ևղած զուգորդումը։ Այս հիմքն այժմ ավելի շատ գործածվում է **եր** *հոգնակերտի հետ (անձ-եր), քան ինֆ-ի հետ. անձինք հոգնակին իսկատիպ, գրքային ու պաշտոնական է։*

Ինչպես նկատելի է, ձևույթային յուրաքանչյուր հիմք զուգորդվում է առանձին հոգնակերտի հետ. իկ՝ մարդիկ, այծ՝ կանայք, ինֆ՝ անձինք։ Եզակի ձևի համեմատությամբ սրանցից կինհիմքը հոգնակիակազմության մեջ ձևա-հնչույթաբանական վերակազմավորմամբ ստանում է **կան-** *տեսքը, որը և պահպանվում է թեք հոլովաձևերում. անձ- հոգնակիակազմ հիմքն ընդհանուր է և՛ ուղիղ (անձ-ինք), և՛ թեք հոլովաձևերում (անձ-անց)։ Այդպես չէ սակայն մարդ- հիմքը։ Թեք հոլովաձևերում այն վերակազմավորվում է հենց իկ հոգնակերտով, իբրև մարդկ-, որին ավելանում է անց վերջավորությունը (մարդ-կան>մարդ-կան-ց>մարդկ-անց* ***էվոլյուցիայով)։ Ստորև ցուցադրում ենք հնատիպ հոգնակիակազմությունները՝ յուրաքանչյուրը հարացույցի մեջ (հոգնակի ուղիղ և թեք հոլովաձևերում).***

Ուղղ.-հայց.	*կան-այք*	*մարդ-իկ*	*անձ-ինք*	*(մեր-ոնք)*
Սեռ.-տր.	*կան-անց*	*մարդկ-անց*	*անձ-անց*	*(մեր-ոնց)*
Բաց.	*կանանց-ից*	*մարդկանց-ից*	*(անձանց-ից)*	*(մերոնց-ից)*
Գործ.	*կանանց-ով*	*մարդկանց-ով*	*(անձանց-ով)*	*(մերոնց-ով)*

Ուղղ.-հայց.	*սարեցի-ք*	*Հակոբ-ենք*	*պապ-ոնք*
Սեռ.-տր.	*սարեց-ոց*	*Հակոբ-ենց*	*պապ-ոնց*
Բաց.	—	*(Հակոբենց-ից)*	*(պապոնց-ից)*
Գործ.	—	*(Հակոբենց-ով)*	*(պապոնց-ով)*

Այս հարացուցային շարքերից երևում է, որ թեք հոլովաձևերում հոգնակի կազմավորումներն այս կամ այն չափով սահմա-

---

տոհղ են։ Բյուննեի բոլոր արժանավորությունը իմ աչքում այն է, որ չեն կ·րծրացած կրիտաու, այլ կարելի է զգոսա թեքել, այսինքն հոլովել, թեպետ և ա դպիսի դիպվածներում ավելի լավ էր, եզակի սեռականին միտ դնելով, ասել **բյուննեի** *(՞—Հ. Պ.) փոխանակ* **բյուններ**, *որ շատ սիրում են հաշտարխանցիք, սեռական հոգն. յանց դժվար է թույլ տալ... մեր բացառականները—քանի որ աշխարհաբարում չհնվում են առանց ի կամ յ հոխորդի, լոկ ից կամ ուց վերջավորությամբ, հարմարվում են միշտ սեռականին, արի դու* **բյանց** *տես. հոգնականից չինիր մի բացառական* **բյանցից**, *որ ամենևին անառանելի է։ Բայց եթե* **բյանց** *վերջավորությունը գործ ածվի իբրև մի առանձին ձև առանց հարակցության բացառականի հետ, այնուհետև դա դուրս է գալիս սիստեմայի միջից». (ՄՆ, ն. 450)։*

նափակված են. բոլորն էլ ունեն սեռ.-տրական ձևեր, որովհետև անձ նշանակող գոյականներ են, դուրկ են ներգոյական հոլովից. մնացած թևք ձևերն ունեն միայն կին և մարդ բառերը և մերոնք տիպի դերանվանական գոյականները. Թևք ձևերում առկա են նաև ձևաբանական ուրույն վերակազմավորումներ. Սեռ.-տրականում վերջնահանգ ի ունեցողները կորցնում են այդ հանգը՝ սաթեցի-ք, սարեց-ոց. մարդ- հիմքը ներկայանում է վերակազմավորված մարդկ- տարբերակով (գրաբարում եղել է մարդկան. միջին գրականից սկսած դարգանում է մարդկանց ձևը). Բոլոր թևք հոլովաձևերում ունենք հոգնակի ուղղականից տարբեր հոլնակերտ, ավելի հիշատ հոգնակերտ-հոլովակերտ՝ ի վերջնահանգն ունեցողների բացառական ու գործիական ֆունկցիաները իրենց վրա են վերցնում համակարգային համարժեք ձևերը՝ սաթեցիներից. սարեցիներով: Մնացած դեպքերում նույն ֆունկցիաները արտահայտում են սեռ.-տրական ձևի և օժանդակ բառի միջոցով. Նշված բոլոր կազմավորումներում առկա են հին հոգնակերտներ. այդ թվում ք և ֆ-ով ու երբեմնի վերջնահանգով վերակազմավորված ու նոր մասնիկի վերածված բաղադրություններ. Թևք ձևերում իրև նման վերակազմավորումների տարր հանդես է գալիս հին հայերենի ց հոգնակերտը.

Այն բոլոր դեպքերում, երբ գործիականն ու բացառականն ունեն համադրական ձևեր, սեռական-տրականի անց վերջավորությունը (հոլովակերտ-հոգնակերտ) զրկվում է իր հոլովակերտ ֆունկցիայից և միայն հոգնակերտի արժեքով դառնում է հոլովակազմ հիմքի բաղադրիչ (կան-անց>կանանց-ից, կանանց-ով). Այսինքն՝ հոգնակի սեռ.-տրական հոլովաձևը բացառական և գործիական կազմավորումներում դառնում է հոլովահիմք, որը և զուգորդվում է համակարգային բացառականակերտ և գործիականակերտ վերջավորությունների հետ. Այս միաժամանակ նշանակում է, թե ուղղականում և սեռ.-տրականում դրանց հոգնակիակազմությունը և հոլովակազմությունը համընկնում են, իսկ բացառականում և գործիականում չեն համընկնում, խառը տիպոլոգիա ունեն.

Դժվար չէ նկատել, որ հնատիպ ու առհասարակ ոչ-համակարգային հոգնակիակազմությունը որոշիչ գործոն չէ ժամանակակից գրական հայերենի թվակազմության մեջ. մեր գրական լեզուն հասել է միատիպ կաղապարների հաստատման և ներկայանում է կառուցվածքային «բարձր» մակարդակով.

b) Բազմաձևություններ և շեղումներ: *Այս խնդրի կապակցությամբ անհրաժեշտ ենք գտնում մի փոքրիկ պարզաբանում տալ: Առհասարակ բազմաձևությունները (երկձևությունները) քննելիս պետք է ելնել լեզվական տվյալ վիճակի ընձեռնած փաստերից: Թեպետ ամբողջ հայերենի հարաբերությամբ ժամանակակից գրական հայերենը մի առանձին էտապ (վիճակ) է, բայց վերջինս իր հերթին ներկայանում է զարգացման ուրույն էտապներով: Այս տեսանկյունից եղիա Կարնեցու կամ Զաքարիա Ագուլեցու աշխարհաբարը նույնը չէ, ինչ Աբովյանի կամ Նալբանդյանի աշխարհաբարը, իսկ Րաֆֆու լեզուն նկատելիորեն անցյալ է արդի լեզվավիճակի համեմատությամբ:*

Բնական է, որ այս տարբերությունները չեն ենթադրում սիստեմային անցումներ, այլ միայն ու միայն միևնույն սիստեմի ներքին կատարելագործում: Այնուամենայնիվ Նալբանդյանի կամ Րաֆֆու մասնակիորեն գործածած մարդեր հոգնակին չենք կարող վերցնել այժմյան մարդիկ հաստատուն ու միակ հոգնակերտության հետ և ասել, թե այստեղ առկա է երկձևություն: XIX դարի երկրորդ կեսին գրականության մեջ գործածական էին մարդիկ, մարդեր, մարդիկներ. սա արդեն տվյալ շրջանի համար բազմաձևություն է: Մենք այժմ անձ բառի հոգնակին ունենք երկու ձևով՝ **անձեր** *և* **անձինք**, *որ նույնպես երկձևություն է. երկուսն էլ կիրառական են արդի լեզվավիճակում, թեև տարբեր լեզվառճերում:*

Դժվար է պատկերացնել մի լեզվավիճակ, որը երկձևություն-բազմաձևություն չունենա. այդպիսի կատարելության դեռ ոչ մի լեզու չի հասել: Մեր արդի գրական հայերենն էլ, չնայած միօրինականացման ուժեղ միտումին, թվակազմության մեջ ևս ունի տարաձևություններ: Այդ արտահայտվում է, օրինակ, համակարգային կաղապարի ներթափանցումով ոչ-համակարգային կառույցները, սովորական ձևերին զուգահեռ հնաբանությունների գործածությամբ, հնչյունափոխ և անհնչյունափոխ հիմքակազմության փոխանցումներով, բարդության ուրույն իմաստավորման հետ կապված՝ եր կամ ներ մասնիկների փոխարինումով և այլն: Շարադրանքի տարբեր հատվածներում, առանձին առիթներով մենք ցուցադրել ենք համապատասխան օրինակներ, ուստի այստեղ բավարարվում ենք միայն վերոհիշյալ պարզաբանումով:

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

ՀՈԳՆԱԿԵՐՏ ՄԱՍՆԻԿՆԵՐ

Ընդհանուր նիմումներ։ Հոգնակերտ մասնիկների բնութագրությունը. ա) ծագումը և տարածվածությունը հայերենի տարբեր վիճակներում. բ) համակարգային թե՞ ոչ-համակարգային հոգնակիակազմության տարր է. գ) ձևաբանական կազմով պարզ է, թե՞ բաղադրյալ. եթե բաղադրյալ է, ապա զուգորդման (սերտաճման) ինչ հաջորդականություն է առկա. դ) հոգնակերտը ի՞նչ տարբերակներով է դրսևորվում ոսպիղ և թեք հոլովաձևերում. ե) մենիմաստ է, թե՞ կրկնիմաստ կամ բազմիմաստ. զ) ի՞նչ կարգի հիմքերի հետ է զուգորդվում. գործածության դիրքերը. է) տվյալ լեզվավիճակում կամ հետագայում բառակազմական՝ ածանցական նշանակությամբ հանդես է գալիս, թե՝ ոչ. բ) հետագայում ունեցած ձևաբանական սերտաճումները և հնչյունական տարաճումները. թ) տարբերակների հնչյունական ու ձևաբանական պայմանավորվածությունը. ժ) թվային ո՛ր ենթակարգի ցուցիչ է (հոգնակերտ, հավաքականակերտ, երկակիակերտ են)։

Հոգնակերտներ կամ հոգնակերտ մասնիկներ կոչվում են այն երկրորդական ձևույթները, որոնք զուգորդվելով հոգնակիակազմ հիմքի հետ՝ արտահայտում են մեկի և մեկից ավելինի քանակային (թվակարգային) ասպեկտի երկրորդ եզրը։ Սակայն, իհարկե, բազմության (մեկից ավելինի) գաղափարի հետ կապված ամեն մասնիկավորում հոգնակիակազմություն չէ։ Այստեղ վճռական նշանակություն ունի բառույթի լեքսիկական և քերականական իմաստավորումների ամբողջ կոմպլեքսը (բառի քերականական վարքագիծն առհասարակ)։

Այսպես, կան հավաքականակերտ մասնիկներ, որոնք թեև արտահայտում են բազմության գաղափար, բայց եզակի բառածևի տարր են, եզականաձև բառ են կերտում. օր. բանջար-եղեն, ուսա-

հաստատելու համար այն միտքը, որ եզակի ուղղականի ձևը հոգնակիի հիմքն է։ Այս տիպոլոգիայի կայունացումով արևելյան գրական հայերենի հիմքակազմության մեջ՝ ընդհանրական հիմքերի հաստատման խնդրում հոգնակիակազմությունը նկատելիորեն ավելի առաջ է անցել հոլովակազմությունից։

Հիմքակազմության ձևաբանական, հնչյունաբանական և իմաստաբանական ասպեկտները։ *Մենք նշեցինք, որ հոգնակիակազմության հիմնական տիպով (համակարգային կաղմավորումներ) գրական աշխարհաբարը կցական տիպոլոգիա ունի. ընդ որում եզակի ուղիղ (ուղղականի) ձևը հոգնակիակազմության ելահիմք է։ Բայց եզակի ուղղականն ինքնին ձևաբանական ու հնչյունաբանական որոշակի կազմ ունի և բառիմաստով ամբողջացած միավոր է։ Կարող է հարց առաջանալ, եզակի ուղղական ձևի այս երեք կողմերը որևէ դեր ունե՞ն հոգնակիակազմության մեջ, թե ոչ։*

Եզակին իր ձևաբանական կազմով կարող է լինել արմատական և բաղադրյալ (ածանցավոր, բարդ, բարդածանցավոր), ինչպես՝ սար, կառք, դարբնոց, թարայր, ստեղծագործություն, պատմագիր են։ Բնականաբար բաղադրյալները կարող են լինել երկձևույթ, բազմաձևույթ. օր. կառ-ք, բար-այր, ստեղծ-ա-գործ-ություն։ Ձևաբանական կազմով նման տիպերը որևէ տարբերակում չեն մտցնում հոգնակիակազմության մեջ։ Սրանք հավասարապես կարող են ստանալ եր կամ ներ. այսպես՝ սար-եր- կառք-եր, քարայր-եր, քաղաք-ներ (միաձևույթ, երկձևույթ հիմքեր), հեռագրա-ս-յուն-եր, ստեղծագործություն-ներ (բազմաձևույթ հիմքեր) և այլն։ Միակ դեպքը, երբ հիմքի կազմի մեջ եղած ձևույթը հիմքատարբերակ է առանձնացնում, երկվանկ-բազմավանկ՝ առաջին կարգի վերջնաբաղադրիչով կազմավորումն է։ Հազվադեպ է լինում, երբ որոշակի ձևույթ որևէ մեկ հոգնակերտի հիմք է, գուգորդվում է միայն նրա հետ։ Դրանք ձևույթային հիմքեր են։

Հոգնակիի հիմք դարձող եզակին կարող է նաև բնութագրվել հնչյունաբանական հատկանիշներով։ Այսպես՝ ծառ-եր, քար-եր, պատ-եր, հայր-եր, սեղան-ներ, քաղաք-ներ- ընկեր-ներ, ուրախություն-ներ ձևերը դիտարկելուց նկատում ենք, որ միավանկները ստանում են եր, իսկ բազմավանկները՝ ներ հոգնակերտ։ Կան բառեր, որոնք «մեկուկես» վանկանի են. դրանցից սկզբնագաղտնա-

---

քում նրա բացակայությամբ։ Նշանակում է, թե ջուր- և ջ(ը)ր- տարբերությունը ոչ մի ձևաբանական ֆունկցիա չունի։ Սրանք էլ մեկ հիմքաձևի հնչյունաբանական տարբերակներ են։

վանկ ունեցողները ստանում են ներ (կրակ-ներ, գլուխ-ներ), վերջ-նագաղտնավանկ ունեցողները՝ եր (աստղ-եր, վագր-եր)։

Նախնական այս դիտարկումների հիման վրա կարող ենք առանձնացնել՝ միավանկ, մեկից ավելի վանկանի (մեկուկես վան-կանի, երկվանկ-բազմավանկ) հիմքատեսակներ։

Սակայն միշտ չէ, որ եղակի ձևը բացարձակորեն համընկնում է հոգնակիի հիմքին. կան դեպքեր, երբ եզակի ուղղականի ձևը հնչյունաբանական կամ ձևաբանական վերակազմավորման է են-թարկվում։ Այսպես, օրինակ, եզ. ուղղ. մուկ, սիրտ, կին, մարդ, իսկ հոգն. հիմքում՝ մ(ը)կն-եր, ս(ր)տ-եր, կան-այք, մարդկ-անց (հոգն. սեռ.-տրական)։ Ահա այդ նկատի ունենալով՝ տարբե-րում ենք ինչյունաբանորեն վերակազմավորված հիմքատարբերակ, ձևաբանորեն վերակազմավորված հիմքատարբերակ, ի տարբերու-թյուն այն հիմքատարբերակների, որոնք հնչյունաբանորեն կամ ձևաբանորեն չեն վերակազմավորված (այսինքն՝ ինչյունաբանորեն չվերակազմավորված հիմքատարբերակ և ձևաբանորեն չվերակազ-մավորված հիմքատարբերակ)։

Կան հիմքեր, որոնց ձևաբանական բաղադրիչների (ձևույթա-յին կազմի) մեջ հանդիպում են հին f, u քարացած հոգնակերտ-ներ։ Այսպիսի հիմքերը պետք է տարբերել այդ մասնիկներով հնատիպ հոգնակիակազմություններից։ Դրանք կատեգվածքային տեսակետից դժվար չէ տարբերել։ Նախ f հոգնակերտը ունի դիր-քային խիստ սահմանափակված գործածություն։ Այն հանդիպում է ի հանգող երկվանկ-բազմավանկ կազմություններում՝ լեռնցիք, այսպիսիք, անդիացիք և ամ, ոմ, ումք, իմք մասնիկներով ան-եզական ու հնատիպ կազմություններում (հմմտ. մերոնք, վեղունք, անձինք են)։ Սրանց վրա եր կամ ներ հոգնակերտ չի կարող ավե-լանալ։ Իսկ այն բոլոր դեպքերում, երբ f-ն հիմքի ձևաբանական բաղադրիչ է, հիմքային ձևույթ է, նրան կարող է ավելանալ եր կամ ներ (ձեռք-եր, ոտք-եր, մտք-եր, ասք-եր, նաև u-ով՝ չափս-եր, հոգս-եր են)։ Ք-ն հիմքի ձևույթային (ձևաբանական) կազմի մեջ կարող է մտնել նաև իբրև բաղադրյալ մասնիկի (ածանցի) տարր. աշխատանք, մտածմունք, ասմունք, ուսմունք. հմմտ. աշխատանք-ներ, մտածմունք-ներ, ասմունք-ներ, ուսմունք-ներ։

Ժամանակակից գրական հայերենում խստատ վերացած է բնա-վոր հիմքակազմությունը։ Եղակի ուղղականի ձևում բացակայող և հոգնակիի հիմքում հանդես եկող միայն մեկ տարր կա՝ դա ն հանգն է, որը միայն ու միայն հիմքակազմիչ դեր ունի։ Կան նաև հոգնակիակազմ հիմքերի և հոգնակերտ մասնիկների այնպիսի դու-գորդումներ, որոնց մեջ վանկաբանակությունը որևէ դեր չունի։

Դրանք ոչ-համակարգային, հնատիպ զուգորդումներ են, որոնց մի մասն իմաստաբանական պայմանավորվածություն ունի (օր. անդ-լիացիք, անձինք, մերոնք, վարդանանք, Գրիգորենք են)։

Եզակի՝ հոգնակիակազմ հատկություն ունեցող ձևերի բնութագրության մեջ կա նաև այսպիսի մոմենտ։ Գերակշռող մասը հոգնակիում պահում է իր բառիմաստը նույնությամբ. օր. սար—սարեր։ Այս երկու ձևերը իրար հակադրվում են միայն հոգնակիի քերականական իմաստով, որ արտահայտված է նր հոգնակերտի միջոցով. եզակի ձևը և հոգնակիի հիմքը՝ սար||սար-իրար բառիմաստով չեն հակադրվում. բառիմաստը (լեքսիկական նշանակությունը) նույնն է։ Կան սակայն դեպքեր, երբ եզակի ձևը բազմիմաստ է։ Նման դեպքերում հոգնակին կարող է պահպանել եզակիի մեկ նշանակությունը, այսինքն՝ հարաբերակից լինել եզակիի միայն մեկ իմաստին, բայց կարող է համատեղել բոլոր նշանակություններն էլ։ Լինում են նաև դեպքեր, երբ հոգնակին է բազմանշանակ, իր այս կամ այն իմաստով առանձնանալով եզակիից։ Ե՛վ եզակիի, և՛ հոգնակիի բազմանշանակությունը կառուցվածքային ուրույն արտահայտություններով չի բնութագրվում։ Հնարավոր է, ասենք, որ եզակին տվյալ իմաստավորման համար չունենա հոգնակի համապատասխան ձև(եզր), իսկ հոգնակին էլ նույնպես իմաստային մեկուսացումով չունենա համապատասխան եզակի ձև։ Առաջիններդ հարում են անհոգնականների խմբին, իսկ երկրորդները անեզականների խմբին։

Ուշադրություն են գրավում այն դեպքերը, երբ հիմքերը ներկայանում են ձևույթային բարդ կազմով՝ միավանկ-արմատ կամ միավանկ-բառ վերջնաբաղադրիչով։ Հոգնակերտների հետ սրանց զուգորդելիությունը պայմանավորում են հնչյունաբանական, ձևաբանական, իմաստաբանական գործոններ (վանկաքանակություն, բառավերջի դիրքը՝ վերջնաբաղադրիչ լինելը, բաղադրությունից դուրս անկախաբար՝ բառային արժեքով գործածելիությունը, բառիմաստը հիմնականում պահպանելը)։ Այս գործոնների ուրույն համակցումը կարող է հիմքատարբերակների գոյացման նախիմք հանդիսանալ. օր. պատմագիր-ներ, բայց՝ լրագրեր։ Եթե հիմքատարբերակների գոյացման խնդրում գործում են մեկից ավելի հայեցակետեր (կամ գործոններ), բնականաբար առկա են խառը տիպի հիմքեր։

Այսպիսով ժամանակակից գրական հայերենում կարելի է տարբերել հնչյունաբանական հիմքեր՝ միավանկ, մեկից ավելի վանկանի («մեկուկես» վանկանի, երկվանկ-բազմավանկ), ձևույթային հիմքեր, խառը հիմքեր, ինչպես և սրանց հնչյունաբանորեն

կամ ձևաբանորեն վերակազմավորված կամ չվերակազմավորված հիմքատարբերակներ։

Բ) *Հիմքատեսակներ։ Ամեն մի հոգնակիակազմ հիմք վերցվում է վերջավորության հարաբերությամբ, ժամանակակից հայերենում առավել գերիշխող են այն հիմքատեսակները, որոնք գուգորդվում են եր կամ ներ հոգնակերտների հետ, այսինքն՝ համակարգային զուգորդումները կատարվում են հիմք+եր կամ հիմք+ներ կաղապարով (մոդելով)։ Սակավ են այն հիմքերը, որոնք ստանում են իկ, այք, ք, աներ, եներ, ուներ, ոներ, անց, ենց, ոնց, ունց, ց, նաև՝ իներ մասնիկներ։ Այս կարգի զուգորդումները ոչ-համակարգային, հնատիպ են, չեն բխում արդի գրական հայերենի սիստեմից, չեն պայմանավորված նրանով։ Այդ պատճառով նման հոգնակիակազմությունները քննում ենք առանձին։*

Հիմքերը, հիմքատարբերակները, ենթատարբերակները որոշ աստիճանականություն ունեն. նախ առանձնանում են հնչյունաբանական, ձևաբանական և խառը տիպի հիմքատեսակներ. հընչյունաբանականը կարող է, ասենք, վանկաքանակությամբ ներկայանալ իբրև միավանկ, մեկից ավելի վանկանի (ամենուկենաս՝ վանկանի, երկվանկ-բազմավանկ), բոլոր հիմքատեսակներն էլ եզակի համապատասխան ձևի համեմատությամբ կարող են ներկայանալ հնչյունաբանական կամ ձևաբանական բնույթի վերակազմավորումներով՝ իբրև վերակազմավորված, կամ չվերակազմավորվելու դեպքում չվերակազմավորված հիմքատարբերակներ։

Միավանկ հիմքեր։ *Այսպես կոչում ենք հոգնակիակազմ հիմքը այն դեպքում, երբ նա եզակի ուղղականի միավանկ ձևն է, կամ նրա վերակազմավորված տարբերակը, և որը գուգորդվում է եր հոգնակերտի հետ։ Եզակի ուղղականը նույնպես ձևաբանական միավոր է՝ նյութական հիմքով և, այսպես կոչված, զրո վերջավորությամբ։ Եվ որովհետև ժամանակակից գրական հայերենում եզակի ուղղականի վերջավորությունը զրո է, նյութական արտահայտություն չունի, այդ պատճառով գործածում ենք նաև եզակի ուղղականի ձև արտահայտություններ։*

Ինչո՞վ են միավանկ հիմքերը առանձնանում այլ հիմքատեսակներից։ Ամենից առաջ նրանով, որ եզակի ուղղականի միավանկ ձևը գուգորդվում է եր հոգնակերտի հետ, բացի մի քանի բառերից (մարդ, կին ևն)։ Սա միավանկների համակարգային հոգնակիակազմության ընդհանրական կաղապարն է։ Իսկ մարդ, կին, ան ձ բառերն ունեն ոչ-համակարգային կամ հնատիպ կազմավորում։ Սրանցից ան ձ միավանկը կարող է հոգնակի կազմել նաև համակարգային կաղապարին հետևելով. այս դեպքում նա զու-

գործում է եր հոգնակերտի հետ. հմմտ. մարդիկ (մարդեր արևելահայ գրականի համար շեղում է)[40], կանայք (կիներ շեղում է), բայց աճնիկ և աճներ: Իսկ ղիք հոգնակին «աստվածներ» նշանակությամբ հնաբանություն է, արդեն գրեթե անգործածական:

Միավանկ՝ եզակի ուղղականի ձևը զուգորդվելով եր հոգնակերտի հետ՝ կազմում է հոգնակի ուղղականի ձև. գույն-եր> գույներ, սար-եր>սարեր. հոգնակի ուղղականի կառուցածևը պահպանվում է թեք հոլովաձևերում. գույներ-ի, սարեր-ի, գույներ-ից, սարեր-ից են: Այս նշանակում է, թե միավանկների հոգնակիակազմությունը ուղիղ և թեք բառաձևերում հետևում է եզակի ուղղականի ձև+եր կաղապարին: Սա խիստ ընդհանրացած ու կենսունակ կաղապար է:

Միավանկ հիմքերի ձևաբանական կազմը ըստ էության էական դեր չունի դրանց զուգորդելիության բաշխման մեջ: Ինչպես նկատեցինք, ունենք միայն ձևույթային պայմանավորվածություն մարդ, կին, աձն արմատական բառերի հոգնակիակազմության մեջ: Մնացած բոլոր միավանկ բառերը (հիմքերը), որոնք գերազանցապես արմատական են, ձևաբանական կազմով չեզոք են: Այսպես՝ ջուր-, ծառ- հիմքերը արմատական են, ձեռ-, միտ- ածանցավոր, բոլորն էլ հավասարապես զուգորդվում են եր հոգնակերտի հետ:

Եթե միավանկ հիմքերը (բառերը) հանդես են գալիս իբրև բարդության վերջնաբաղադրիչ, ապա պահում են հոգնակիակազմության իրենց կառուցատիպը. հմմտ. վայր>վայրեր, արոտավայր>արոտավայրեր: Իսկ եթե նրանք մտնում են նախածանցավոր բազադրությունների մեջ, իբրև բաղադրության վերջնաբաղադրիչ, և իրենց գոյականային-չեքսիկական արժեքը մթագնում, երկրորդական պլանի վրա է մղվում, ապա չեն պահպանում հոգնակիակազմության իրենց կաղապարը, զուգորդվում են ներ հոգնակերտի հետ. տուն>տներ, անտուն>անտուններ:

Միավանկների հոգնակիակազմությունն ունի մի այլ յուրահատկություն ևս: Քանի որ սրանք զուգորդվում են եր-ի հետ, էկվանկ բազմավանկները՝ ներ-ի հետ, և այլ համակարգային հոգնակերտ չկա, ուստի արևելահայ գրական լեզվում ստացական հոգնակիակազմությունը երկվանկ-բազմավանկների հետ կապված՝ բացառվում է. առկա է միավանկ հիմք+ներ կաղապար: Սա հա-

---

[40] Անցյալում որոշ հեղինակներ մարդիկ ձևին զուգահեռ գործածել են նաև մարդեր հոգնակին, որ տարածում չի գտել (հմմտ. ՍՀ, ե, 43. Մն, ն, 163. Մն, եժ, II, 67. , եժ, I, 59. նաև՝ տղամարդեր՝ Մն, ն, 467. Ր, եժ, I, 402):

կազմվում է միավանկների սովորական հոգնակիակազմության՝ միավանկ հիմք+եր կաղապարին, մի կողմից, երկվանկ-բազմավանկների սովորական հոգնակիակազմության երկվանկ-բազմավանկ հիմք+ներ կաղապարին, մյուս կողմից։ Մի կաղապարին հակադրվում է հիմքային տարբերությամբ, մյուսին հակադրվում է հոգնակերտով։ Բայց այս մասին հանգամանորեն կխոսենք քիչ հետո։

«Մեկուկես» վանկանի հիմքեր։ *Այսպես կոչում են հոգնակիակազմ հիմքն այն դեպքում, երբ նա եզակի ուղղականում ունի երկվանկ կառուցվածք, բայց վանկերից մեկը ոչ լիահունչ /ր/ ձայնավորական տարրով է։ Ըստ դաշտնավանկի դիրքի տարբերում ենք «մեկուկես» սկզբնագաղտնավանկ հիմքատարրերակ և «մեկուկես» վերջնագաղտնավանկ հիմքատարրերակ։ Սրանցից ձևաբանական յուրահատկություն են դրսևորում մեկուկես վերջնագաղտնավանկները, որովհետև վերջիններս կորցնելով գաղտնավանկ (ր)-ն, հոգնակիի հիմքում վերածվում են միավանկի և ուզորդվում են եր հոգնակերտի հետ, աստ(ր)ղ>աստղեր (աստ-ղեր)։ Մինչդեռ սկզբնագաղտնավանկները հոգնակիի հիմքում պահպանում են իրենց գաղտնավանկը, այսինքն վանկայնորեն չեն վերակաղմավորվում, և իբրև երկվանկ ուզորդվում են ներ հոգնակերտի հետ. կ(ր)րակ>կ(ր)րակներ (կր-րակ-ներ)։*

Ահա միայն այս տարբերությունը նկատի ունենալով՝ պայմանականորեն առանձնացնում ենք «մեկուկես» վանկանի հիմքատարրերակ։ Արդի գրական հայերենի համեմատաբար վաղ շրջանում այս օրինաչափությունը դեռևս հստակ ձևավորում չուներ. ահա այդ վիճակը նկատի ունենալով է, որ Հ. Աճառյանն արել է այսպիսի դիտողություն. «Այն բառերը, որոնք իրենց վերջին վանկում ունեն ր ձայնավորը, տատանվում են երկուսի միջև. արևելյան գրականում համարվելով բազմավանկ՝ ստանում են –ներ մասնիկը, իսկ արևմտյան գրականում՝ համարվում են միավանկ և ստանում են –եր մասնիկը. ինչ. աստղ—աստղներ, աստղեր, կայսր—կայսրներ, կայսրեր, արկղ—արկղներ, արկղեր, տարր—տարրներ, տարրեր, սանր—սաներ, սանրեր» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 818. տե՛ս նաև՝ ՀԱ, ՀԼՊ, II, 556)[41],

---

[41] *XIX դարի 70-ական թվականներին, ըստ Ստ. Պալասանյանի, ներ մասնիկ ստանում էին հատ առյն միավանկ բառերը, որոնց արտաբերության մեջ, բարձրաձայնների խտությունը մեզմացնելու համար, ր ձայնավորը մահում ու մեկ վանկից իբրև երկու վանկ է կազմում..., կայսր—կայսր-ներ, անգղ—անգղ-ներ (խոսում են աստղ-եր)». սանր-եր)». տե՛ս նրա «Ընդհ. տեսություն...», էջ 24։*

«Մեկուկես» վանկանի հիմքերը և՛ սկզբնագաղտնավանկները, և՛ վերջնագաղտնավանկները, հոգնակի ուղղականում ունեն առաջիններ՝ եզակի ուղղականի ձև+ներ, երկրորդները՝ եզակի ուղղականի վանկայնորեն վերակազմավորված ձև+եր կաղապարներ։ ***Քեք հոլովաձևերում սրանք պահպանում են իրենց այդ կաղապարները՝ հոգնակիականազմ հիմ+ներ (+հոլովակերտ) և հոգնակիականազմ հիմ+եր (+հոլովակերտ).***

Հոգն. ուղղ.-հայց.	*կ(ը)ռակ-ներ*	*աստղ-եր*
Սեռ.-տր.	*կ(ը)ռակ-ների(-ի)*	*աստղ-երի(-ի)*
Բաց.	*կ(ը)ռակ-ներից(-ից)*	*աստղ-երից(-ից)*
Գործ.	*կ(ը)ռակ-ներով(-ով)*	*աստղ-երով(-ով)*
Ներգ.	*կ(ը)ռակ-ներում(-ում)*	*աստղ-երում(-ում)։*

*Ժամանակակից գրական հայերենում «մեկուկես» սկզբնագաղտնավանկ բառերը վերջնագաղտնավանկների համեմատությամբ մեծ թիվ են կազմում։ Համեմատաբար հաճախական գործածություն ունեցող վերջնագաղտնավանկներից են՝ ազդր, անգղ, աստղ, արկղ, գամփռ, դուստր, եզր, ժանր, կադր, կայսր, լիտր, լոդր, մետր, նեգր, շիֆր, ոսկր, սակր, սանր, վագր, տարր, տեսր. **տեզր, տեմբր, ֆիլտր։ Սրանց մեջ մտնում են, ինչպես նկատելի է, նաև նորագույն փոխառություններ այլ լեզուներից, որոնք հայերենում վանկայնորեն վերակազմավորվել են բուն մեր լեզվի վանկարտաբաբերության նորմաների (օր. նեգր, կադր, ժանր)։ Վերջնագաղտնավանկով ձևերի մեջ թերևս կարելի է մտցնել -մ(ը)ն հանգն ունեցողները՝ դաշն, հիմն և այլն։*

Վերջնագաղտնավանկների հոգնակիակազմության կաղապարն ունեն նաև գոյականաբար գործածվող նմանավանկ բառերը, օրինակ, ածականները՝ բարձր, թանձր, ծանր, կարծր, մանր, ցածր, փոքր, փուխր, քաղցր, նաև՝ դառն. այսպես, օրինակ, փոք(ր)ր—փոքր-եր, ման(ր)ր—մանր-եր և այլն։

Ըստ ԱՆ, ՔՔ, Յ՝ արևմտահայերենում, գրեթե նույն ժամանակաշրջանում, մեկուկես վանկանիները ստանում էին եր, ընդ որում և վերջնագաղտնավանկները՝ ոսկրեր, աստղեր։ Բնականաբար վանկաբանակազմությունը պահպանելու դեպքում մեկուկես վերջնագաղտնավանկով բառերն ունեն նաև եր-ով հոգնակիները, մանավանդ անցյալի հեղինակների մոտ. ոսկրներ (ՍՇ, ն, 76), արկղներ (Մն, ն, 185), աստղներ (Մն, նէժ, II, 160), գամփռներ (Ր, նժ, I, 444), արկղեր (Ր, նժ, II, 374. ՀՏ, X, 49, 255. ՈՁ, նժ, IV, 435. ՍՄ, ՀՔՔ, I, 271), նաև՝ դրամարկղներ (ՍՄ, ՀՔՔ, I, 544), անգղներ (Ն. տ. I, 101. ՆՁ, ՀՆ, 283), կայսրներ (Ր, նժ, X, 192), վագրներ (Ն. տ. 167), դուստրներ (ՍՄ, ՀՔՔ, I, 538), կայսրեր||կայսրներ (Ն. տ. II, 379), ժանրեր||ժանրներ (Ն. տ. 327)։

Վերջնագաղտնավանկով «մեկուկես» վանկանի հիմքերը եղակի ուղղականում ունեն բաղաձայն+(ը)r, մասամբ նաև բաղաձայն+(ը)ն հանգը, որը իրրև հիմքավերջ ևր հոգնակերաից առաջ վերակազմավորվելով՝ առանում է բաղաձայն+r կամ բաղաձայն+ն տեսքը։ Ուրեմն լիաձայն վանկը պահպանվում է, իսկ գաղտնավանկը վերանում է, կորչնում իր վանկաբունը։

Նոակի ձևում սկզբնագաղտնավանկ ունեցողները բավականաչափ շատ են. նրանք հոգնակիակազմ հիմքում պահպանում են գաղտնավանկը, այսինքն մնում են երկվանկ և ըստգործվում են ևեր հոգնակերաի հետ։ Հիմքի հնչյունաբանական վերակազմավորում այստեղ առկա չէ։ Հոգնակիակազմ հիմքում նման վարքագիծ ունեն, օրինակ, բլիակ, բլիթ, բլուզ, բլուր, բնազդ, բշտիկ, դպիր, դլուխ, դրիչ, դպրոց ղրահ, ղգեստ, թթու, կրակ, սրահ և նման շատ բառեր։ Այս շարքի մեջ է մտնում նաև մյուս բառը, որն արտասանվում է իրրև մեկուկես վանկ կամ, որ նույնն է, երկվանկ (տե՛ս նաև ՄԱ, ՀԼՏ, 323. մյուսեր ձևը անցյալում էլ հազվադեպ է գործածվել. հմմտ. «Մեղու Հայ.», 1858, № 7. ՄՆ, ԵԼԺ, II, 179)։

«Մեկուկես» վանկանի հիմքերից վերջնագաղտնավանկները միշտ բաղաձայնահանգ են. սկզբնագաղտնավանկները կարող են և՛ բաղաձայնահանգ, և՛ ձայնավորահանգ լինել։ Բայց այդ հանգամանքը հոգնակիակազմության մեջ արժեք չունի. հմմտ. հրթիռներ, բնիկներ, հսկաներ, վկաներ, տնկիներ, գնչուներ ևն։

Սկզբնագաղտնավանկներն ունեն հնչյունաբանական այսպիսի կազապար. կան երկփակ սկզբնագաղտնավանկեր՝ մ(ը)կ-բատ, տ(ը)վ-յալ, վերջնափակ սկզբնագաղտնավանկեր՝ (ը)ս-կիզր, (ը)ս-պա, (ը)ս-ալի, (ը)զ-գեստ, բաց սկզբնագաղտնավանկեր՝ գ(ը)-րիչ, ց(ը)-րիչ։ Այն փոխառյալ բառերը, որոնք երկրագաձայն սկիզբ ունեն, սովորաբար վանկայնորեն վերակազմավորվում են բառ սկզբնագաղտնավանկի այն կազապարի, որը մենք ցուցադրեցինք։ Այսպիսով՝ փոխառյալ միավանկ բառը հայերենում վերածվում է երկվանկի (մեկ ու կես վանկանի ձևի), և իրրև այդպիսին՝ զուգորդվում է ևեր հոգնակերաի հետ. օր. ստեպ=(ը)ստեպ>ստեպներ, ֆրանկ=ֆ(ը)րանկ>ֆրանկներ են։ Ընդհանրապես ս+պայթական սկիզբն ունեցողները վերակազմավորվելով ստանում են (ը)ս գաղտնավանկ+պայթական տեսքը։ «ԵՒրևելյան գրականում,— գրում է Հ. Աճառյանը,—ո-ով հանգող միավանկ բառերն էլ խոսակցության մեջ հոգնակիում պահում են ևեր մասնիկը. ինչ-ոևլաններ, ում-գներ, ոտաններ, ականներ, ոսկնեներ և այլն. սրա պատճառն այն է, որ ժողովրդական լեզվի մեջ ո նախաձայնը հենարան

է սառնում միշտ ր կամ ու ձայնը, հնչվում է բռանգ, բռնե, ուռուս, որով և բառը դառնում է երկվանկ և բնականաբար սառնում է «ներ մասնիկը» (ՀԱ, ԼՔՀ, III, 817)։ Ահաոյանի այս դիտողությունից ևս պարզ երևում է, թե ինչպես փոխառյալները վանկայնորին վերակազմավորվելով՝ փոխում են հոգնակիակազմ հիմքի վանկաքանակությունը, հետևապես և հոգնակիրտի հետ զուգորդման տիպը։ Սակայն անվանի հայագետի այն դիտողությունը, թե դրական լեզվում էլ, առանց ո-ի ձայնավորում սառնալու, երբեմն գործածում են՝ ռելսներ, վերաբերում է արդի գրական հայերենի համեմատաբար վաղ շրջանին. այժմ՝ ռելսեր, ռումբեր, բայց՝ ռուսներ. ռեսներ արդեն հնաբանություն է, ռանգներ հանդիպում է միայն որոշ բարբառներում։

Կան փոխառյալ բառեր, որոնք փոխառու լեզվում երկվանկ ձայնավորահանգ են, հայերենում անձայնավոր հանգերի տիպոլոգիայով կորցրել են վերջնահանգ ձայնավորը, բայց գաղտնավանկի գոյացումով պահպանում են վանկաքանակությունը· օր. գ(ր)րամ—գրամներ։

Մեկուկես վանկանի հիմքերի ձևույթային (ձևաբանական) կազմը չի կարող պայմանավորել դրանց զուգորդելիությունը այս կամ այն հոգնակերտի հետ։ Սկզբնագաղտնավանկները կարող են լինել արմատական կամ բաղադրյալ. վերջնագաղտնավանկները սովորաբար արմատական են, եվ քանի որ առաջինները փաստորեն երկվանկներ են, առաջին կարգի վերջնաբաղադրիչ ունենալու դեպքում զուգորդվում են եր հոգնակերտի, երկրորդ կարգի վերջնաբաղադրիչ ունենալու դեպքում՝ ներ հոգնակերտի հետ. չրշուն—չրշներ, չրկիր—չրկիրներ։ Նախածանցավորում ունեցողները սովորաբար երկրորդ կարգի վերջնաբաղադրիչով են և զուգորդվում են ներ-ի հետ. չտես—չտեսներ, չկամ—չկամներ ևն։

Բայց կարող է պատահել, որ հենց գաղտնավանկով այս երկվանկները հանդես գան իրրև բարդության (բաղադրության) վերջնաբաղադրիչ։ Նման դեպքերում այդպիսի վերջնաբաղադրիչները պահում են հոգնակերտի հետ զուգորդման իրենց հաղագրը։ Բերենք օրինակներ, երբ վերջնագաղտնավանկներն են բաղադրության վերջնաբաղադրիչ. ոսկր>ոսկրեր—ազդրոսկրեր, այտոսկրեր, կրծոսկրեր, փղոսկրեր, արկղ>արկղեր—աղբարկղեր, տոմսարկղեր, դրամարկղեր, դեղարկղեր, վաճառարկղեր, գանձարկղեր, փոստարկղեր[42], դուստր>դուստրեր—աթքայադուստրեր, իշխանա-

[42] Իսկ նշե գաղտնավանկը պահպանվում է, կունենանք կրկնակ ձևեր՝ ներ-ով՝ արկղներ—աղբարկղներ, դրամարկղներ ևն։

դուստրեր, եղր>եզրեր—գետեզրեր, ծովեզրեր, համր>համրեր—խուլուհամրեր, մետր>մետրեր—միլիմետրեր, կիլոմետրեր, սանտիմետրեր, տեսր>տեսրեր—օրատեսրեր, ցուցատետրեր, մանր>մանրեր (մանրներ), ամենամանրեր (ամենամանրներ)։ Այժմ բերենք օրինակներ, երբ նույն դիրքում սկզբնագաղտնավանկ վերջնաբաղադրիչներ են։ նշան>նշաններ—ազգանշան—ազդանշաններ, վճիռ>վճիռներ—դատավճիռներ, նկար>նկարներ—դիմանկարներ, կղզի>կղզիներ—թերակղզիներ, գրոհ>գրոհներ—հակագրոհներ, գլուխ>գլուխներ—պարագլուխներ, զգեստ>զգեստներ—շրջազգեստներ, սրահ>սրահներ—ընթերցասրահներ։

Երկվանկ-բազմավանկ հիմքեր։ *Հոգնակիակազմ հիմքատիպերի շարքում սրանք առանձնանում են ամենից առաջ նրանով, որ ունեն հոգնակերտների հետ զուգորդվելու յուրահատկություններ։ Եվ այդ յուրահատկություններն էլ պայմանավորված են հոգնակիակազմ հիմքի երկվանկ կամ բազմավանկ լինելու հանգամանքով։ Ի տարբերություն միավանկ հիմքերի, որոնք զուգորդվում են եր հոգնակերտի հետ, և ի տարբերություն «մեկուկես» վանկանի հիմքերի, որոնք զաղտնավանկով պայմանավորված՝ կարող են մեկ եր, մեկ ներ հոգնակերտ առանալ, երկվանկ-բազմավանկները սովորաբար զուգորդվում են ներ հոգնակերտի հետ։*

Հայագիտական գրականության մեջ սովորաբար խոսվում է «բազմավանկ բառերի» հոգնակիակազմության մասին, «երկվանկ» անվանումը գրեթե դուրս է թողնվում։ Անվանումը, իհարկե, ոչինչ չի փոխում, եթե բոլոր դեպքերում էլ նկատի ենք առնում, որ հիմքերի զուգորդումները հոգնակերտների հետ կատարվում է վանկաքանակության սկզբունքով, միավանկները՝ եր-ի հետ, մեկից ավելի վանկանի հիմքերը՝ ներ-ի հետ։ Սա վերաբերում է համակարգային զուգորդումներին։ Կան երկվանկ-բազմավանկ բառեր, որոնք ունեն ոչ-համակարգային կամ հնատիպ հոգնակիակազմություններ՝ ֆ, կամ ամբ, ոմբ, ումբ մասնիկներով։ Այս զուգորդումները կարող են հնչյունաբանական կամ ձևաբանական-իմաստաբանական պայմանավորվածություն ունենալ, ասենք, հիմքերի վերջնահանգի բնույթով կամ ձևաբանական-իմաստաբանական ու այլ գործոններով պայմանավորված։

Սակայն արևելահայ գրական լեզվում հիմքի վերջնահանգի (կամ եզակի ձևի վերջնահանգի) հնչյունաբանական բնույթն ըստ էության վճռական գործոն չէ հոգնակիակազմության մեջ. և՛ ձայնավորահանգ, և՛ բաղաձայնահանգ հիմքերը հավասարապես զուգորդելի են ներ հոգնակերտի հետ. այսպես՝ թեմա-ներ, թշնամի-

ներ, դեպո-ներ, առու-ներ, մանրէ-ներ, ջոկատ-ներ, քաղաք-ներ են։

Երկվանկ-բազմավանկ հիմքերի ենթատիպերի մեջ առավել հատկանշական են այն բաղադրյալ տեսակները, որոնք միավանկ արմատ (կամ բառ) վերջնաբազադրիչով պայմանավորված կարող են մեկ ևր, մեկ ներ հոգնակերտ ընդունել։ Երկվանկ-բազմավանկ արմատական և ածանցավոր, ինչպես և բարդ-վերջածանցավոր բոլոր հիմքերը այսպիսի տարատիպ զուգորդումներ չունեն, նրանք համատարած դրեթե առանց բացառության, ընդունում են ներ հոգնակերտ. սեղան-ներ, երիտասարդ-ներ, ստեղծագործություն-ներ են։

Առաջին և երկրորդ կարգի վերջնաբազադրիչներ: *Մենք նշեցինք, որ հիմքային տիպերը որոշում ենք տարբեր հոգնակերտների հետ հիմքերի զուգորդելիության հատկանիշով։ Ըստ այդմ հիմնական հիմքատեսակների տարբերակեցինք հնչյունաբանական գործոններով՝ հիմքի վանկաքանակության հատկանիշով։ Սակայն հիմքի զուգորդելիությունը կարող է պայմանավորված լինել ոչ միայն հնչյունաբանական հատկանիշով. կարող են դեր ունենալ ձևաբանական և իմաստաբանական գործոններ ևս։*

Եվ այսպես՝ եթե հոգնակերտի հետ հիմքի զուգորդումը պայմանավորված է հիմքի հնչյունաբանական գործոններով (վերջնահանգի բնույթը, վանկաքանակությունը ևն), ապա ունենք հնչյունաբանական հատկանիշով բնութագրվող հիմքատիպ, իսկ եթե դեր է խաղում նաև հիմքի ձևաբանական կազմը, հիմքի ձևույթային կազմի որևէ բաղադրիչ, ապա ունենք հնչյունաբանական-ձևաբանական գործոններով բնութագրվող հիմքատիպ. իսկ եթե հիմքի ձևաբանական կազմի դրվածքը առաջ է բերում բաղադրության բառային իմաստավորման յուրահատկություններ, որ ինչ-որ չափով ներգործում է նշված զուգորդումների վրա, ապա ունենք արդեն եռակի հատկանիշով բնութագրվող հիմքատիպ՝ հնչյունաբանական-ձևաբանական-իմաստաբանական։ Նման պայմանավորվածություն առկա է հենց երկվանկ-բազմավանկ՝ միավանկ վերջնաբազադրիչով բարդ բառերի հոգնակիակազմության մեջ։

Վայր *բառն ստանում է ևր հոգնակերտ՝ վայրեր, նախ այն պատճառով, որ նա արտահայտում է առարկայնություն, բառերի բնութականական խմբավորման մեջ մտնում է գոյականների շարքը. երկրորդ՝ այն պատճառով, որ նա միավանկ բառ է։ Ուրեմն վայրեր հոգնակիակազմությունը պայմանավորված է բառա-քերականական ու հնչյունաբանական (վանկաքանակություն) գործոններով։*

Բայց **առոտավայր** *բառն էլ ստանում է եր հոգնակերտ, մինչդեռ գոյական լինելով հանդերձ՝ նա վանկաքանակութ֊յամբ բազմավանկ է։ Այստեղ արդեն վճռական դեր ունի բազմավանկի ձևույթային կազմը.* **առոտավայր** *բաղադրյալ, բարդ բառ է, այսպես կոչված, իսկական բարդութ֊յուն, որը վերջում ունի* **վայր**՝ *բաղադրիչը։ Առանձին վերցրած՝ բարդութ֊յունից դուրս այս վերջնաբաղադրիչը անկախաբար գործածվող միավոր է՝ իր բնորոշ հոգնակիակազմութ֊յամբ (զուգորդվում է եր-ի հետ)։* **Առոտավայր** *բառը իբրև երկվանկ-բազմավանկ պետք է ստանար ներ հոգնակերտ. սակայն* **-վայր** *բաղադրիչը, գտնվելով հիմքավերջում և հիմնականում պահպանելով իր բառա-քերականական արժեքը, լեքսիկական նշանակութ֊յունը, ամբողջ բարդութ֊յան վրին է փաթաթում հոգնակիացման իր կաղապարը։ Այստեղից էլ՝* **առոտավայրեր** *հոգնակի ձևը։*

Այստեղ բնականաբար մտածել է տալիս **վայր** *և* **առոտավայր** *բառերի բառիմաստային փոխհարաբերութ֊յան հարցը։ Կասկածանք չկա, որ սրանք տարբեր բառեր են և տարբեր բառիմաստներ։ Բայց քերականական որոշակի հարաբերութ֊յուններում սրանց որևէ հատկանիշով ընդհանրութ֊յուններ կարող է գերիշխել։ Այս առումով* **առոտավայր** *բարդութ֊յան մեջ իշխում է* **-վայր** *բաղադրիչի իմաստը.* **առոտ-** *բաղադրիչը միայն նեղացնում է* **վայր-***ի իմաստը (թեև հատկանիշներով, բովանդակութ֊յամբ հարստացնում է այն)։ Այսինքն՝ բաղադրութ֊յան մեջ բառիմաստի ելակիմքը* **-վայր** *բաղադրիչն է. հոգնակիի քերականական իմաստն արտահայտում է նրա նշանակած առարկայի մեկից ավելին լինելու քանակային հարաբերութ֊յունը։ Այս էլ նշանակում է, թե վերջնաբաղադրիչը մտնում է բարդութ֊յան մեջ իր լեքսիկական նշանակութ֊յան գրեթե պահպանումով, այսինքն՝ իբրև բառ է մտնում բաղադրութ֊յան մեջ։ Այս տեսակետից կարող ենք ասել.* **առոտավայր** *նշանակում է վայր, որ արոտի համար է կամ հարմար է հոտն արածացնելու համար. այսպես և՝* **ածխահանք(եր)***—հանք, որ ածուխի է, ածխի հանք է,* **ամպակույտ(եր)***—կույտ, որ ամպի է, ամպի կույտ է (վերջիվերջո* **կույտ** *է)։*

Մենք այս՝ միավանկ, բառիմաստային արժեքը հիմնականում պահպանող վերջնաբաղադրիչները, որոնցով կազմված երկվանկ-բազմավանկ հիմքերը զուգորդվում են եր հոգնակերտի հետ, կոչել ենք առաջին կարգի վերջնաբաղադրիչներ՝ զուտ շարադրանքի պարզութ֊յան միտումով։ Արևելահայ գրական լեզվում առավել գործածական այսպիսի վերջնաբաղադրիչներից են հետևյալները.

-այծ, -այր, -անցք, -բերդ, -բն (<բուն), -բույս, -գայլ, -գեղձ, -գծ (<գիծ), -գնդ (<գունդ), -գր (<գիր), -գրք (<գիրք), -դաշտ, -դարձ, -դող, -երգ, -զարդ, -թերթ, -թղթ (<թուղթ), -թմբ (<թումբ), -թվ (<թիվ), -փփ (<թուփ), -ժայռ, -լամպ, -լույս, -խաղ, -խավ, -խմբ (<խումբ), -խոտ, -խորշ, -ծայր, -կապ, -կառք, -կարգ, -կետ, -կույտ, -հայ, -հայր, -հանք, -հավ, -հարթ, -հարկ, -հերկ, -հող, -հոր, -ձագ, -ձայն, -ձև, -ձի, -ձող, -ճանճ, -մայր, -մարգ, -մարտ, -մորճ, -նավ, -նիշ, -նիստ, -նյութ, -շար, -շարժ, -շարք, -շերտ, -շիթ, -շն (<շուն), -չափ, -պատ, -ջր (<ջուր), -սարք, -սյուն, -վայր, -վարձ, -վեճ, -վեպ, -տառ, -տեղ, -տեր, -տն (<տուն), -տոմս, -տուփ, -ուժ, -ցանկ, -ցավ, -ցուլ, -ցուպ, -փայտ, -փեղկ, -փնջ (<փունջ), -փող, -փոս, -քարտ, -բույր, -օղ, -օր:

Ինչպես տեսնում ենք, այս կարգի բոլոր վերջնաբաղադրիչները միավանկ տարրեր են: Սրանց մեծ մասը արմատական է. բաղադրյալ են՝ -անցք, -գրք, -կառք, -հանք, -շարք, -սարք: Վերջիններիս իրենց վերջնաբաղադրիչներ մեկ միավորի դերում են հանդես գալիս, թեև կազմված են անց-, գր-, ծախ-, կառ-, հան-, շար-, սար-, արմատների և ե ածանցի միակցությունից:

Այս վերջնաբաղադրիչները բարդությունից դուրս ունեն անկախ գործածություն, իբրև գոյական. գոյական են նաև նրանցով բաղադրված բարդությունները: Այսպես՝ քարայծ, դիտանցք, միջնաբերդ, հավաբուն, ծովագայլ, կաթնագեղձ, բնագիծ, զորագունդ, էլեկտրալամպ, երկաթահանք են. սրանց վերջնաբաղադրիչներն անկախ գործածություն ևս ունեն՝ այծ, անցք, բերդ, բուն, գայլ, գեղձ, գիծ, գունդ, լամպ:

Նշված միավանկ բաղադրիչները եթե անկախ գործածության մեջ իրրև հղձնակիսկազմ հիմք հնչյունափոխ են, այդպիսի վերակազմավորում ունենում են նաև վերջնաբաղադրիչի պաշտոնում. գունդ—գնդեր, զորագունդ—զորագնդեր: Հնչյունափոխ են հետևյալ վերջնաբաղադրիչները. -բուն (>-բն), -գիծ (>-գծ), -գունդ (>-գնդ), -գիր (>-գր), -գիրք (>-գրք), -թուղթ (>-թղթ), -թումբ (>-թմբ), -թիվ (>-թվ), -թուփ (>-թփ), -խումբ (>-խմբ), -շուն (>շն), -ջուր (>-ջր), -տուն (->-տն), -փունջ (>-փնջ). Մնացածներն անհնչյունափոխ են:

Կազմավորման արդյունավետության տեսակետից կան առավել կենսունակ վերջնաբաղադրիչներ, օրինակ, -գիր, -գիծ, -թուղթ, -կետ, -խումբ, -տուն, -մարտ են: Կան այնպիսիներն էլ որոնցով միայն մեկ-երկու կամ մի քանի բարդություններ են կազմվում:

Ընդհանուր առմամբ արդի գրական հայերենում առաջին կարգի վերջնաբաղադրիչներով կազմավորումները պրոդուկտիվ են։

Վերը մենք նշեցինք, որ դիտարկված վերջնաբաղադրիչները գերազանցապես արմատական են, բայց կան նաև մի քանի բաղադրյալ ձևեր (միակցված ի, ս ածանցական տարրերի հետ)։ Արդ, եթե այդ այդպես է, ապա կարո՞ղ ենք այդպիսի վերջնաբաղադրիչներով հիմքերի հոգնակիակազմությունները բնութագրելիս գործածել «արմատական» (կամ արմատ) անվանումը. ասենք, այսպես՝ այն բարդությունները, որոնք ունեն միավանկ-արմատ վերջնաբաղադրիչներ, այդ վերջնաբաղադրիչները բառիմաստի պահպանումով՝ զուգորդվում են եր հոգնակերտի հետ։ Անկասկած «արմատ» անվանումը այստեղ հարմար չէ, թեև ի–ով, ս–ով վերոհիշյալ բաղադրությունները իրենց բառիմաստով արմատին համարժեք են. ընդհանրապես այս մասնիկները միանալով արմատին կամ բառին՝ չեն փոխում նրանց իմաստը, նվ քանի որ առաջին տիպի վերջնաբաղադրիչները հիմնականում պահպանում են իրենց բառիմաստները և ամբողջ բարդության համար ձևա-իմաստային նշահիմք են հանդիսանում, այդ պատճառով, կարծում ենք, կարելի է գործածել բառ-բաղադրիչներ։ Այս դեպքում սահմանումը կստանա հետևյալ տեսքը. **Երկվանկ–բազմավանկ այն բարդ հիմքերը, որոնք ունեն միավանկ բառ–վերջնաբաղադրիչ՝ վերջինիս բառիմաստային արժեքի պահպանումով, առանում են «եր» հոգնակերտ։**

Այս սահմանման մեջ արտահայտություն են գտել նշված խմբի բառերի հոգնակիակազմության և՛ հնչյունաբանական, և՛ ձևաբանական, և՛ իմաստաբանական ասպեկտները։ Բայց կարող է հարց առաջանալ, ի՞նչ է նշանակում՝ «պահպանում է իր բառիմաստային արժեքը» կամ «պահպանում է իր հիմնական լեքսիկական նշանակությունը», ինչպես արդեն նշել ենք, այս ամենից առաջ, նշանակում է, թե վերջնաբաղադրիչը հիմնականում պահպանում է իր անկախ գործածության առարկայնության (գոյականի) գաղափարը։ Բացի այդ եզակի բառաձևը կարող է լինել մեներիմաստ, կրկնիմաստ, բազմիմաստ։ Կրկնիմաստ և բազմիմաստ բառերը կարող են վերջնաբաղադրիչ լինելու դեպքում հանդես գալ իրենց տարբեր իմաստավորումներով կամ իրենց որևէ մեկ իմաստով։ Իմաստաբանական ուշադիր վերլուծությունը միայն կարող է հասկանալի դարձնել այն «հիմնական նշանակությունը», որի մասին խոսեցինք։ Այսպես՝ գիր միավանկ բազմիմաստ բառ է, կարող է նշանակել՝ բառի, վանկի, հնչյունի գրային արտահայ-

ություն, տառ. այբուբեն. որևէ տեսակի փաստաթուղթ, գրված որևէ բան։ Առաջին իմաստով ունենք գաղափարագրեր, բոլորագրեր, երկրորդ իմաստով՝ համաձայնագրեր, երրորդ իմաստով՝ լրագրեր։ Այստեղ -գիր վերջնաբաղադրիչը իր հիմնական իմաստավորումները պահպանել է վերջնաբաղադրիչի դիրքում։

Ընդհակացությունը միակն է. վերջնաբաղադրիչով հիմքը կարող է զուգորդվել եր հոգնակերտի հետ բոլոր այն դեպքերում, եթե այդ վերջնաբաղադրիչը ավյալ բարդությունից դուրս ունի անկախ բառային գործածություն՝ միավանկներին բնորոշ հոգնակիակազմությամբ, և բարդության մեջ դոմինանտում է իր իսկ իմաստով։

Ստորև այբբենական կարգով ցուցադրում ենք առաջին կարգի վերջնաբազադրիչներով հոգնակիակազմություններ.
-այծ(քարայծեր), -այր(քարայրեր), -անցք(դիտանցքեր, քրքանցքեր), -բերդ(միջնաբերդեր), -բուն>-բն(արծվաբներ, մոջնաբներ, հավաբներ, շնաբներ), -բույս(հացաբույսեր, եղևնաբույսեր), -գայլ(մարդագայլեր, շնագայլեր, ծովագայլեր), -գեղձ(նշագեղձեր, կաթնագեղձեր, թքագեղձեր), -գիծ>-գծ(արգելագծեր, բնագծեր, դիմագծեր, նախագծեր, ուրվագծեր, փակագծեր), -գունդ>-գնդ(զորագնդեր, կխսագնդեր, մոտորագնդեր), -գիր>-գր(անձնագրեր, գծագրեր, երաշխավորագրեր, ծածկագրեր, սևագրեր, հավատարմագրեր), -գիրք>-գրք(բառագրքեր, դասագրքեր), -դաշտ(խաղադաշտեր, մարտադաշտեր, սառցադաշտեր), -դարձ(շրջադարձեր, տողադարձեր), -դող(անվադողեր), -երգ(խմբերգեր, մեներգեր, քայլերգեր), -զարդ(արդուզարդեր), պխաղարդեր. քանդակազարդեր), -թերթ(անվանաթերթեր, ծաղկաթերթեր, հարցաթերթեր), -թուղթ>-թղթ(խաղաթղթեր, վավերաթղթեր, փաստաթղթեր), -թումբ>-թմբ(ավազաթմբեր, միջաթմբեր), -թիվ>-թիվ(ամսաթվեր, տարեթվեր), -թուփ>-թփ(խաղողաթփեր, հաղարճաթփեր), -ժայռ(քարաժայռեր), -լամպ(էլեկտրալամպեր), -լույս(վերջալույսեր), -խաղ(բառախաղեր, հյուրախաղեր, թղթախաղեր), -խումբ>-խմբ(լեզվախմբեր, հրոսակախմբեր, նվագախմբեր), -խոտ(եղեգնախոտեր, ծովախոտեր, մոլախոտեր), -խորշ(գետնախորշեր, թունելախորշեր, սրտախորշեր), -ծայր(գրչածայրեր, թոկածայրերը), -կապ(ռադիոկապեր), -կառք(դիակառքեր, շոգեկառքեր), -կարգ(դասակարգեր, իրավակարգեր, վարչակարգեր), -կետ(ռադիոկետեր, դիտակետեր, էլակետեր, պահակակետեր, նշանակետեր, վերջակետեր, հայեցակետեր), -կույտ(ազբակույտեր, հողակույտեր, շեղջակույտեր), -հայ(արևելահայեր, արևմտահայեր,

հնդկահայեր), –հայր (*նախահայրեր, վանահայրեր*), –հանգ (*ածխահանգեր, աղահանգեր, նավթահանգեր*), –հավ (*եղեգնահավեր, հնդկահավեր, մայրահավեր*), –հարթ (*սարահարթեր*), –հարկ[1] (*ձեղնահարկեր, ներքնահարկեր, վերնահարկեր*), –հարկ[2] (*գլխահարկեր*), –հող(*վարելահողեր*), –ձագ(*աներձագեր, Սա. Մալխասյանցի բառարանում՝ աներձագներ*), –ձայն (*ոռնաձայներ*), –ձև (*բանաձևեր, խաղաձևեր, շարժուձևեր*), –ձի (*գետաձիեր*), –ձող (*եղեգնաձողեր*), –ճանճ(*մեղրաճանճեր*), –ճար(*բաժակաճառեր*), –մայր (*տառամայրեր*), –մաս (*արտադրամասեր, զորամասեր, ծայրամասեր*), –մարգ (*ծաղկամարգեր*), –մարտ (*բռնցքամարտեր, գոտեմարտեր, հերոսամարտեր, ճակատամարտեր*), –մորճ (*ծխամորճեր*), –նավ (*առագաստանավեր, գծանավեր, ռազմանավեր*), –նիշ (*դրոշմանիշեր, նամականիշեր*), –նիստ (*զուգահեռանիստեր*), –նյութ (*ռազմանյութեր, վառելանյութեր*) ,–շար (*ողնաշարեր*), –շարժ (*երկրաշարժեր, տեղաշարժեր*), –շարք (*մարտաշարքեր*), –շերտ (*ածխաշերտեր, բառաշերտեր, հանքաշերտեր*), –շիթ (*անձրևաշիթեր*), –շուն >–շն (*ջրշներ, ջրաշներ*), –շափ (*արագաչափեր, բարձրաչափեր, ալկալիաչափեր*), –պատ (*միջնապատեր, ցանկապատեր*), –պար (*շուրջպարեր*), –ջուր>–ջր (*աղբյուրաջրեր, անձրևաջրեր, մրգաջրեր*), –սարք (*թոկասարքեր, լծասարքեր, կաշեսարքեր, ձիասարքեր*), –սյուն (*ավտոշարասյուներ, արգելասյուներ, զորասյուներ, էլեկտրասյուներ, հեռագրասյուներ*), –վայր (*արոտավայրեր, աքսորավայրեր, քնակավայրեր*), –վարձ (*աշխատավարձեր, օրավարձեր*), –վեճ (*բանավեճեր*), –վեպ (*զրուցավեպեր, պատմավեպեր, սիրավեպեր*), –տուն (*գլխատուներ, մեծատուներ, փոքրատուներ*), –տեղ (*ոռնատեղեր*), –տեր (*դրամատերեր, պարտատերեր, սեփականատերեր*), –տուն>–տն (*առանձնատներ, գինետներ, դեղատներ, ներկատներ*), –տոմս (*այցետոմսեր, դեղատոմսեր, հրավիրատոմսեր*), –տուփ (*դեղատուփեր, քվեատուփեր*), –ուժ (*աշխատուժեր*), –ցանկ (*երգացանկեր, խաղացանկեր*), –ցավ (*հոդացավեր*), –ցուլ (*ծովացուլեր*), –ցուպ (*անթացուպեր, Սա. Մալխասյանցի բառարանում՝ անթացպեր*), –փայտ(*զուգափայտեր, ձողափայտեր, ցուցափայտեր*), –փեղկ (*ցուցափեղկեր*), –փունջ>–փնջ (*ծաղկեփնջեր*), –փող (*եղեգնափողեր, լսափողեր*), –փոս (*աղբափոսեր*), –ք‌ար (*անկյունաքարեր, թերթաքարեր, խաչքարեր*), –ք‌արտ (*հաշվեքարտեր*), –ֆույր (*հորաքույրեր, մորաքույրեր*), –օղ (*ականջօղեր*), –օր (*աշխօրեր*)[43],

[43] *Այստեղ ցուցադրված են այն կազմությունները, որոնք հետևում են արդի գրական հայերենում հաստատված նորմային. այն է՝ բոլոր հոգնակիներում ունենք բարդ (ձևույթային կաղմով) միավանկ բառ-արմատ վերջնաբաղադրիչով հիմքեր.*

Վերը կատարված շարադրանքում մենք նշեցինք, որ առաջին կարգի վերջնաբաղադրիչով հիմքերը միավանկ են, ունեն բաղադրություններից դուրս անկախ գործածություն, ընդ որում այդ անկախ գործածության մեջ ևս նրանք միավանկ են։ Բայց կան նաև վերջնաբաղադրիչներ, որոնք նույնպես միավանկ ու արմատական են, նրանցով կազմված հիմքերը ևս զուգորդվում են եր հոգնակերտի հետ, սակայն այդ միավանկ-արմատական վերջնաբաղադրիչները իրենց անկախ գործածության մեջ «մեկուկես» վանկանի են՝ վերջնագաղտնավանկով։ Այս կարգի բառերը (եզակի ձևերը) հոգնակիակազմ հիմքում կորցնում են գաղտնավանկի (ը)-ն, դառ-

---

բոլորի վերջնաբաղադրիչն էլ կարող է անկախ գործածություն ունենալ և եր-ով հոգնակի կազմել. իրրև վերջնաբաղադրիչ դրանք պահպանում են գոյականական իմաստը, իսկ բարդության մեջ գերիշխում են իրենց հենց այդ իմաստով։ Սակայն տարբեր հանգամանքներով պայմանավորված, ժամավանդ անցյալում, ժամանակիորեն խախտված ենք տեսնում այս կանոնավորության։ Նվ սա լինում է այլևայլ պատճառներով, ընդ որում՝ մասամբ սովորության ուժով, տվյալ կառուցածևը ավանդաբար գործածելով, մասամբ արևմտահայերենի ազդեցությամբ, և կամ պարզապես գրական լեզվի նորմայի ոչ հատակ գիտակցումով։ Այսպես, ունենք՝ պետ—պետեր բայց գորապետներ, վարչապետներ են, հոր—հորեր, բայց՝ ջրհորներ, անցք—անցքեր, բայց՝ ջրանցքներ, սդանցքներ (ՍՄ, ՀՒՒ, IV, 602), կապ—կապեր, բայց՝ փողկապներ, ելք—ելքեր, բայց՝ վերելքներ (ՍՄ, ՀՒՒ, IV, 328)։ Ճարճ ձևով չունենք քայարմատ, ածական կամ գոյական, բայց նա վերջնաբաղադրիչ է խոտհարք բաղադրության մեջ, հոգնակին էլ ներ-ով՝ խոտհարքներ (Հմմտ. վայրէջքներ)։ տարածված է դասակարգեր, բայց Ստ. Մալխասյանցը գործածել է նաև դասակարգներ (ՍՄ, ՀՒՒ, I, 491)։ ստորակետ նախածանցավոր բառ է, հոգնակին բնականաբար պիտի լինի ներ-ով՝ ստորակետներ, բայց վերբակետեր, միջակետեր, բազմակետեր հոգնակիների նմանակությամբ երբեմն նաև՝ ստորակետեր, կամ հակառակը՝ միջանետներ (ՍՄ, ՀՒՒ, III, 489)։ մենք լուսնենք զար անկախ բառ «զորք» նշանակությամբ, բայց իրրև վերջնաբաղադրիչ՝ հնձելազորներ բառում նա այդ նշանակությունն ունի, իսկ հոգնակին ներ-ով՝ հնձելազորներ (Ր, նժ, X, 303), հմմտ. հրազեններով (ՍՄ, ՀՒՒ, I, 508)։ երդ վերջնաբաղադրիչով բարդություններդ սովորաբար ստանում են եր հոգնակիտ, բայց ոմանք դրանք կազմում են ներ-ով. նգերերգներ (ՍՄ, ՀՒՒ, I, 558), պարերգներ (Ն. տ. IV, 81), խմբերգներ (Ն. տ. II, 269)։ այսպես և՝ ծխամորճեր և ծխամորճներ («Գիտ. և տեխն.», 1970, № 7, էջ 52), այցեստմսեր և այցեստմսներ (ՍՄ, ՀՒՒ, I, 84), զուգահեռագծեր և զուգահեռագիծներ (Ն. տ., II, 34), զառիվայրեր և զառիվայրներից (Ր, նժ, II, 113), երկրաշարժեր և երկրաշարժներ, քարայրեր և քարայրներ (ՆՋ, Ընդ, 479. ՍՄ, ՀՒՒ, IV, 343), ասղոցանիշեր և ասղոցանիշներ (ՄՆ, նԼժ, II, առաջաբանի հեղինակներ. տես նաև՝ Ր, նժ, X, 24. ՍՄ, ՀՒՒ, II, 2), ուղենիշեր և ուղենիշներ (ՍՋ, նժ, IV, 395), խաչանիշեր և խաչանիշներ «խաչի նշաններ» (ՍՄ, ՀՒՒ, II, 242), ոտնուտերներ (Ն. տ. IV. 371) և ոտնուտերեր (Ն. տ. 372), տեղաշարժեր և տեղաշարժներ (Հմմտ. երկրաշարժներ)։ Ստ. Պալասանյանը նշում է տերտեր բառի ներ-ով հոգնակին («Ընդհ. տեսութիւն...», էջ 24)։

նում են միավանկ, ուստի զուգորդվում են եր հոգնակերտի հետ։ Երբ «ամեկուկես» վերջնագաղտնավանկով բառերը հանդես են գալիս իբրև բարդության վերջնաբաղադրիչ, հոգնակիակազմության մեջ պահպանում են հիմքային վերակազմավորման տիպը և զուգորդվում են նույնպես եր-ի հետ։ Ճիշտ է, գաղտնավանկի վերջնաձայնը վանկաբաժանմամբ անցնում է հոգնակերտին և նրա հետ է վանկ կազմում, բայց դա չի ազդում հիմքի միավանկային ընկալման վրա։

Եվ այսպես՝ բարդության մեջ՝ գիսաստ(ը)ղ—աստղեր, կաղ(ը)ր—կաղրեր. բաղադրության մեջ՝ գիսաստ(ը)ղ—գիսաստ-ղեր, կինոկաղ(ը)ր—կինոկաղր-եր։ Այս ամենից հետևում է, որ «ամեկուկես» վանկանի բառերը բարդության վերջնաբաղադրիչ լինելու դեպքում ձեռք են բերում առաջին կարգի վերջնաբաղադրիչների վարքագիծ։

Առաջին կարգի վերջնաբաղադրիչով հիմքերը, ինչպես եր մասնիկի հետ զուգորդվող բոլոր հիմքերը, թեք հոլովաձևերում պահպանում են ուղղականի հոգնակիակազմության կաղապարը (եզակի ուղղականի ձև+եր)։

Հոգն. ուղղ.-հայց.	լրագր-եր	կինոկաղր-եր
Սեռ.-տր.	լրագր-եր(+ի)	կինոկաղր-եր(+ի)
Բաց.	լրագր-եր(+ից)	կինոկաղր-եր(+ից)
Գործ.	լրագր-եր(+ով)	կինոկաղր-եր(+ով)
Ներգ.	լրագր-եր(+ում)	կինոկաղր-եր(+ում)։

Փոխառյալ բարդության վերջնաբաղադրիչը եթե հայերենում անկախաբար չի գործածվում, որպես այդպիսին չի էլ գիտակցվում, հետևապես բարդությունը զուգորդվում է հոգնակերտի հետ՝ երկվանկ-բազմավանկների կաղապարով։

Այժմ անցնենք երկրորդ կարգի վերջնաբաղադրիչների բնութագրությանը։ Բաղադրյալ (բարդ)՝ երկվանկ-բազմավանկ հիմքերի դիտարկումները ցույց են տալիս, որ կան այլ վարքագիծ ունեցող վերջնաբաղադրիչներ, որոնցով բաղադրված հիմքերն էլ զուգորդվում են եեր հոգնակերտի հետ։ Այս նշանակում է, թե այդ հիմքերի զուգորդումները ղեկավարվում են ամբողջ բարդության վանկաքանակության օրենքով և ոչ թե հիմքի միավանկ վերջնաբաղադրիչի ձևաբանական-իմաստաբանական պայմանավորվածությամբ։ Բաղադրության ձևաբանական կառուցածքը նման է առաջին, մեր կողմից արդեն դիտարկված, բաղադրություններին, հիմքավերջում առկա է միավանկ արմատ-բաղադրիչ։ Ալքի զարնող

տարբերություններ թերևս հնչյունաբանական ու իմաստաբանական են. հնչյունաբանական՝ այն իմաստով, որ վերջնաբաղադրիչը նախկին տիպում կարող էր հնչյունափոխության ենթարկվել, իսկ այս կարգի դուգորդումներում հիմքերն անհնչյունափոխ են. համմ. լրագիր—լրագրներ, բայց՝ պատմագիր—պատմագիրներ: Իմաստաբանական առանձնահատկությունն այն է, որ երկրորդ կարգի միավանկ վերջնաբաղադրիչը իր իմաստը ձուլում է բաղադրության իմաստի մեջ, նա ամբողջ բաղադրության իմաստի ևլահիմք չէ. հիմք կազմող ձևույթների իմաստաբանական միահյուսումը բաղադրության բերում է նոր իմաստ, որը և գերիշխում, դոմինանտում է առանձին-առանձին վերցրած յուրաքանչյուր բաղադրիչ ձևույթի իմաստին: Եվ որ ամենակարևորն է, վերջնաբաղադրիչը սովորաբար արտահայտում է ոչ թե առարկայնություն, այլ հատկանիշ կամ ունի այդ առումը: Այսպես՝ այգեգործ բաղադրության մեջ չի գերիշխում գործ առարկայի գաղափարը, այն չի նշանակում գործ, որ այգու համար է, այլ՝ այգու մշակությամբ զբաղվող (անձ, որևէ մեկը), նույն կերպ էլ՝ արձակագիր չի նշանակում գիր (տառ, այբուբեն, գրված որևէ բան, փաստաթուղթ), որ արձակի է, արձակի համար է, այլ՝ ստեղծագործող, գրող, արձակի բնագավառի ստեղծագործող: Բառա-քերականական արժեքով այսպիսի վերջնաբաղադրիչ ունեցող բառերը ածականատիպ են, հեշտությամբ գործածվում են գոյականաբար կամ գոյականանում են:

Թե դոմինանտող լեքսիկական նշանակությունը ոչ թե վերջնաբաղադրիչինն է, այլ ամբողջ բաղադրությանը, ուրեմն այստեղ հիմքի ձևաբանական կազմի գործոնները երկրորդական պլանի վրա են մղվում, վճռական նշանակություն է ստանում պարզ՝ երկվանկ-բազմավանկ բառերի (հիմքերի) հոգնակիակազմության կաղապարը՝ հիմք+եր զուգորդումը. արձակագիր—արձակագիրներ:

Այս միաժամանակ նշանակում է, թե առհասարակ վերջնաբաղադրիչով հիմքերի իմաստաբանական ընկալումը կարող է կատարվել երկու հայեցակետով. ա) վերջնաբաղադրիչով, բ) ամբողջ բաղադրությամբ: Առաջին դեպքում ունենում ենք հոգնակիակազմ հիմք+եր կաղապարը, երկրորդ դեպքում՝ հոգնակիակազմ հիմք+ներ կաղապարը: Սակայն տարբեր պատճառներով, երբեմն էլ ոչ հստակ ընկալումներով՝ գրականության մեջ, ինչպես և բանավոր խոսքում գործածում են նաև անկանոն կազմություններ, այսինքն՝ միշտ չեն որոշում լեքսիկական նշանակության ոլորտը, ամբողջ բաղադրության թե՞ վերջնաբաղադրիչի իմաստն է դոմինանտում:

Այժմ ցուցադրենք գործածության շատ թե քիչ հաճախություն

ունեցող մի շարք երկրորդ կարգի վերջնաբաղադրիչներ. -անցք, -առ, -արկ, -բան, -բարձ, -բաց, -բուխ, -բույժ, -գար, -գետ, -գիր, -դող, -գործ, -դիր, -ետ, -էջ, -էջք, -զուրկ, -թաւիլ, -թիռ, -քուխ, -լից, -լույծ, -խոս, -խույղ, -կալ, -կամ, -կետ, -կեր, -կերտ, -կիր, -կից, -կուլ, -հան, -հաս, -հատ, -հար, -հեն, -հետ, -հոր, -ձիգ, -միտ, -մոլ, -մորթ, -մուղ, -մուտ, -նենգ, -նետ, -նիշ, -շարժ, -շեջ, -շարթ, -որս, -չափ, -պահ, -պաշտ, -պատ, -պարտ, -պետ, -սեր, -սույզ, -վար, -վարք, -տաշ, -տար, -տես, -տու, -ցան, -ցիր, -ցույց, -փոր, -քաղ, -քարշ։

Այս ցանկից երևում է, որ երկրորդ կարգի վերջնաբաղադրիչների գերակշռող մասը ևս արմատական է. ածանցավոր են՝ -անցք. -առ, -էջ։ Վերջիններս բաղադրված են անց-, առ-, էջ- արմատներից և ք ածանցական տարրից։ Անկախաբար, բաղադրությունից դուրս, կարող են գործածվել, ընդ որում անցք՝ ավելի հաճախական, իսկ առ, էջ՝ համեմատաբար սակավ։ Սակայն այսպիսի դեպքերում անկախաբար գործածվողը և վերջնաբաղադրիչը լեքսիկական նշանակությամբ համարժեքներ չեն. վերջնաբաղադրիչը բաղադրության կազմում իմաստով չի դոմինանտում։

Երկրորդ կարգի վերջնաբաղադրիչների մեջ առաձնապես աչքի են ընկնում բայարմատ-բաղադրիչները, և սրանք մեծ թիվ են կազմում (-առ, -արկ, -բարձ, -քուխ, -ետ, -թիռ, -գետ, -կուլ, -կամ են)։ Դրանց մի մասը արդի բայարևներում հնչյունափոխ տեսքով է հանդես գալիս. օր. -գետ||գիտ-, -թիռ||տր-, -կուլ||կլ-, -բույծ||բուծ-, -բույժ||-բուժ- են, բայարմատներ չեն՝ -բան, -գար, -կետ, -հեն, -մորթ, -պետ, -հոր։ Սակայն սրանցից ոչ մեկի իմաստը չի տիրապետում բաղադրության ընդհանուր իմաստին, մի մասը լեքսիկական նշանակության պահպանումով գրեթե անկախաբար չի գործածվում և հոգնակիակազմություն չունի։

Մենք այստեղ դիտարկում ենք այնպիսի վերջնաբաղադրիչներ, որոնք հիմնականում միավանկ արմատներ են, ունեն ընդհանուր, չմասնավորված բառիմաստ, բայց վերոհիշյալ ցանկում կան նաև այնպիսի վերջնաբաղադրիչներ, որոնք անկախ գործածություն չունեն, կամ էլ լեքսիկական նշանակության էվոլյուցիայով դրեթե վերածվել են մասնիկ ածանցի, ինչպես, օրինակ, -գար, -հար, -գործ են։ Սակայն այս անցումը լեզվի մեջ միաթռիչք չի կատարվում, այլ աստիճանաբար։ Բոլոր դեպքերում էլ այդ անցումը ավելի է ամրապնդում ներ հոդնակերտի հետ հիմքի դուրսդրսելիությունը։

Նշված ցանկում նկատելի են նաև այնպիսի բաղադրիչներ,

որոնք հնչյունական տեսքով նման են անկախաբար գործածվող միավանկ գոյականների, սակայն դա ձևական համընկնում է, իրականում դրանք բայարմատներ են (երբեմն վերականգնված արմատահնչյունով)[44]. *օր.՝* –բաց, –գետ, –գիր, –ձիգ, –ճենգ, –նիշ, –չափ, –պահ, –սեր, –վար, –վարժ:

Պետք է նկատի ունենալ նաև այն, որ երկրորդ կարգի վերջնաբաղադրիչներով բարդությունների իրենց խոսքի մասային արժեքով կարող են լինել գոյականներ, ածականներ և հավասարապես գոյականական-ածականական կիրառություն ունեցողներ. Բուն գոյական կազմություններից են՝ միջանցք-ներ, կանգառ-ներ, պահանջարկ-ներ, լեզվաբան-ներ, մանկաբարձ-ներ, գրքաց-ներ, հրաբուխ-ներ, մանկաբույժ-ներ, անասնաբույժ-ներ, ասպղագետ-ներ, ուսադիր-ներ, ելևէջ-ներ, հրթիռ-ներ, տարելից-ներ և այլն։

Սրանք էապես գոյականներ են, թեև կարող են ածականական կիրառություն ունենալ. օրինակ, գոյական որոշիչի ֆունկցիայով հանդես գալ։ Բուն ածական կազմություններից են՝ ազատամիտ-ներ, ազնվախոհ-ներ, աչքաբաց-ներ, բարեսիրտ-ներ, դրամապաշտ-ներ, երաժշտասեր-ներ, ընչազուրկ-ներ, թեթևամիտ-ներ, լավատես-ներ։ Անկասկած սրանք հոգնակի ձևում արդեն գոյականաբար են գործածված։

Կան այնպիսիները, որոնք հավասարապես և՛ գոյական, և՛ ածական կարող են լինել (կոնտեքստով պայմանավորված). ապխարհակալ-ներ, բարեկամ-ներ, բռնակալ-ներ, գործազուրկ-ներ, գրչակից-ներ, զինակիր-ներ, վերադիր-ներ, չափահաս-ներ, փայտահատ-ներ, դարպասապահ-ներ, տեղեկատու-ներ և այլն։

Միավանկ վերջնաբաղադրիչով մի շարք ածականական բարդություններ հոգնակիակազմություն չունեն. նրանք հանդես են գալիս փոխանվանական իսկական ձևերով։ Այդ բացատրվում է նման ածականների բառիմաստով. նրանք չեն նշում այնպիսի հատկանիշ, որով բնութագրվող առարկաները կարիք ունենային իրրև բազմություն ներկայանալ այդ հատկանիշով։ Այսպես, օրինակ, դիտարկենք մեղմաշունչ և մրգաշատ կազմություններըւ Ունենք «մեղմաշունչ հովեր» կամ «մեղմաշունչ քամիներ», բայց կիրառական արժեք չունի մեղմաշունչներ հոգնակին. ունենք «մրգաշատ այգիներ», բայց կիրառական արժեք չունի մրգաշատներ հոգնակին։ Իհարկե, կառուցվածքային տեսանկյունից հայերենը այդպիսի կազմավորումներ չի բացառում։ Այստեղ խոսքը սիո-

[44] *Դրանց մի մասն էլ, կարծես, այդպիսի արժեք ստացած անվանական ածրրեր են։*

տեմատորված կիրառություններ մասին է և ոչ թե լեզվի կառուցվածքային հնարավորությունների մասին։

Երկրորդ կարգի վերջնաբաղադրիչներից համեմատաբար պրոդուկտիվ են՝ -բույժ, -բույծ, -գետ, -գիր, -գործ, -խոս, -խոսյգ, -կալ, -կիր, -կից, -մորթ, -պահ, -պետ և մի քանի ուրիշները։ Ստորև այբբենական ցանկով կցուցադրենք երկրորդ կարգի վերջնաբաղադրիչով հոգնակիակազմություններ՝ անցք՝ լեռնանցքներ, միջանցքներ, նրբանցքներ, ջրանցքներ, քղանցքներ, օդանցքներ, սողանցքներ, -ատ՝ խելատներ, կանգատներ, -ատ՝ հաշվառքներ, -արկ՝ ակնարկներ, առաջարկներ, հաշվարկներ, պահանջարկներ, -բան՝ լեզվաբաններ, երգիծաբաններ, -բաց՝ գրքացներ, -բուխ՝ հրաբուխներ, -բույժ՝ ակնաբույժներ, վիրաբույժներ, -բույծ՝ թրջնաբույծներ, խաղողաբույծներ, մեղվաբույծներ, պորտաբույծներ, պտղաբույծներ, -գար՝ խելագարներ, -գետ՝ աղբյուրագետներ, արևելագետներ, հայագետներ, մասնագետներ, -գիր՝ ազգագիրներ, մատենագիրներ, տարեգիրներ, -գող՝ խաշագողներ, -գործ՝ այգեգործներ, սեագործներ, տնայնագործներ, -դիր՝ թագադիրներ, որմնադիրներ, ունկնդիրներ, ուսադիրներ, -եռ՝ ինքնաեռներ, հեշտաեռներ, -զուրկ՝ գործազուրկներ, -էջ՝ ելևէջներ, -էջ՝ վայրէջքներ, -թափ՝ ինքնաթափներ, -թիռ՝ ինքնաթիռներ, ուղղաթիռներ, -թուխ՝ հացթուխներ, -լից՝ տարելիցներ, -լույծ՝ անգամալույծներ, -խոս՝ բարբառախոսներ, գաղափոսներ, ընդդիմախոսներ, հեռախոսներ, -խոսյգ՝ բևեռախոսյգներ, բնախոսյգներ, հետախոսյգներ, -կալ՝ աշխարհակալներ, առանցքակալներ, ծաղկակալներ, վարձակալներ, տեղակալներ, -կամ՝ բարեկամներ, -կետ՝ ժամկետներ, տեսակետներ, -կեր՝ հումակերներ, ձրիակերներ, -կերտ՝ պաստակերտներ, -կիր՝ բեռնակիրներ, ավիակիրներ, դրոշակակիրներ, -կից՝ ազգակիցներ, աշխատակիցներ, գրչակիցներ, սեղանակիցներ, -կուլ՝ ձկնկուլներ, -հան՝ երգահաններ, խցահաններ, -հաս՝ դհոլահասներ, չափահասներ, -հատ՝ ածխահատներ, քարհատներ, -հար՝ խոտհարներ, գրահահարներ, -հեն՝ ծովահեններ, -հեռ՝ գուգահեռներ, -հոր՝ ջրհորներ, -ձիգ՝ ականաձիգներ, նետաձիգներ, նռնականաձիգներ, -միա՝ խելամիտներ, -մոլ՝ եսամոլներ, խաղամոլներ, ցուցամոլներ, -մորթ՝ գեղնամորթներ, թխամորթներ, սևամորթներ, -մուղ՝ գազամուղներ, աղբամուղներ, -մուտ՝ եկամուտներ, -նենգ՝ դրամանենգներ, մաքսանենգներ, -նետ՝ ականանետներ, -նիշ՝ ախտանիշներ, հատկանիշներ, չափանիշներ, ցուցանիշներ, -չարժ՝ ինքնաշարժներ, շոգեշարժներ, -շեջ՝ հրդեհաշեջներ, -շորթ՝ դրամաշորթներ, -ուս՝ ականուսներ, ձկնուսներ, ձայնուսներ, -չափ՝ երկրաչափներ, կաթնաչափներ, կալորիաչափներ, ջերմաչափներ, ջրա-

չափներ, –պան՝ անասնապահներ, հերթապահներ, –պաշտ՝ բնապաշտներ, անոտիապաշտներ, –պան՝ զրահապատներ, –պարտ՝ հանգապարտներ, –պետ՝ բանտապետներ, բռնապետներ, դահճապետներ, դորապետներ, հալարապետներ, ճարտարապետներ, մարդպետներ, միապետներ, մոգպետներ, նահանգապետներ, ներքինապետներ, պահակապետներ, վաշտապետներ, վարժապետներ, վարչապետներ, սեղանապետներ, սենեկապետներ, ցեղապետներ, –սեր՝ բանասերներ, մարզասերներ, շախմատասերներ, –սույց՝ ջրասույցներ, –վար՝ զորավարներ, մեքենավարներ, –վարժ՝ մանկավարժներ, –տաչ՝ քարտաշներ, –տար՝ բեռնատարներ, հաշվետարներ, –տես՝ ականատեսներ, –տու՝ ավանդատուներ, դասատուներ, տեղեկատուներ, –ցան՝ սերմնացաններ, –ցիր՝ գնդացիրներ, –ցույց՝ ժամացույցներ, հեռուստացույցներ, հողմացույցներ, նշանացույցներ, վայրկենացույցներ, ուղեցույցներ, օրացույցներ, –փոր՝ հանքափորներ, –փող՝ պատռտաքաղներ, –փարշ՝ էլեկտրաքարշներ, ջերմաքարշներ, ձիաքարշներ, շոգեքարշներ։

Առաջին և երկրորդ կարգի վերջնաբաղադրիչներից մի քանիսը դուզադիպում են. դրանք են՝ –անցք, –կետ, –շարժ, այսպես՝ –անցք՝ դիտանցքեր, քթանցքեր, բայց՝ լեռնանցքներ, միջանցքներ են. –կետ՝ ագիտակետեր, դիտակետեր, միջակետեր, բայց՝ ժամկետներ, տեսակետներ. –շարժ՝ երկրաշարժեր, տեղաշարժեր, բայց՝ շոգեշարժներ, ինքնաշարժներ։ Ունենք նաև –գր||–գիր բաղադրիչների դուգադիպում (համմտ. ծանուցագրեր և մատենագիրներ), սակայն առաջինը անվանական բուն է բաղադրությունից դուրս, իսկ երկրորդը՝ բայական (վերջինս արմատահնչյունի վերականգնումով)։

–Անցք վերջնաբաղադրիչի մասին պետք է ասել հետևյալը։ Սա առանձին վերցրած արմատական բառ չէ, կազմված է անց– արմատից և –ք ածանցից, այսինքն բաղադրյալ-ածանցավոր է։ Իբրև անկախ միավանկ բառ անցք-ը գործածվում է այսպիսի նշանակություններով. «1. Տեղ, որտեղով կարելի է անցնել, ճանապարհ, դուռ, ծակ ևն... 2. Անցնելը, անցնելու հնարավորությունը. 3. Ինչ որ անց է կացել, դեպք(եր), պատահար(ներ)»[45]։ Այս նշանակություններից վերջնաբաղադրիչում համախ հանդիպում ենք «ծակ» (դիտանցքեր, քթանցքեր) և «անցնելու տեղ, ճանապարհ» (միջանցքներ, լեռնանցքներ են) իմաստներին։ Եվ ինչպես նկատելի է, վերջնաբաղադրիչի առաջին իմաստավորմամբ հիմքը դուգորդվում է ներ, երկրորդ իմաստավորմամբ ևնր հոդնակերտի հետ։ Երկրորդ

[45] Տե՛ս Սու. Մալխասյանց, Հայերենի բացատրական բառարան, հ. I, էջ 186։

դեպքում հոգնակիականազմ հիմքը (եղակի համապատասխան ձևը) փոխաբերական իմաստավորում է ստանում, վերջնաբաղադրիչը բաղադրության իմաստին չի դոմինանտում, չի գերիշխում։

–Կնա վերջնաբաղադրիչը, անկախ գործածության դեպքում, արմատական բառ է. հոգնակին կազմում է եր մասնիկով, ունի «որևէ սրածայր մարմնի թոզած փոքրիկ հետք», «կենտադրական նշանին», «որոշակի սահմանագիծ, աստիճան՝ տարածական առումով», «որևէ վայր, որտեղ այս կամ այն դեպքն է տեղի ունենում» և այլ նշանակություններ[16]։ Այս նշանակություններով նա կարող է բաղադրության մեջ մտնել, իբրև բարդության վերջնաբաղադրիչ։ Նման դեպքերում հիմքը զուգորդվում է եր հոգնակերտի հետ։ Իսկ եթե այդ վերջնաբաղադրիչը մտնելով բարդության մեջ՝ հեռանում է իր հիմնական իմաստից, գերիշխում է բաղադրության բուն իմաստը, ապա հիմքը զուգորդվում է ներ հոգնակերտի հետ։ Այսպես՝ տեսակետ, ժամկետ բառերում «կետ» իմաստավորումը մթագնած է։ Այդպես չէ սակայն հայեցակետ բառում, ուր այն լիովին չի մթագնած։ Ուստի ավելի հաճախ հանդիպում ենք հայեցակետեր ձևին, թեև բացառված չէ, որ գործածվի հայեցակետներ կազմություն՝ իմաստային անցման պայմաններում։ Այս նշանակում է նաև այն, որ որոշ հիմքերի հետ հնարավոր են տարաձև զուգորդումներ, անցում եր-ից ներ-ին և հակառակը։

Իմաստաբանական նույնպիսի պայմանավորվածություն ունեն եր, ներ հոգնակերտների զուգորդումները –շարժ վերջնաբաղադրիչով հիմքի հետ։

Այս զուգադիպություններին ավելացնենք նաև այն, որ բոլոր դեպքերում, երբ միևնույն վերջնաբաղադրիչը կարող է պահպանել կամ չպահպանել իր հիմնական բառիմաստը, ապա առաջին դեպքում հոգնակիականազմությունը կլինի միավանկների կաղապարով, երկրորդ դեպքում՝ երկվանկ-բազմավանկներին հատուկ կաղապարով։ Ճակատագարդ բառը կարող է գործածվել իբրև գոյական, հիմնականում պահելով վերջնաբաղադրիչի բառիմաստը. այս դեպքում այն իբրև հիմք կզուգորդվի եր-ի հետ՝ ճակատագարդեր. իսկ եթե այն իբրև ածական է իմաստավորվում, իբրև «նմակատը զարդարված», օրինակ, ճակատագարդ տուն, ապա գոյականաբար գործածվելիս և հոգնակի կազմելիս դոմինանտում է բաղադրության ընդհանրական իմաստը և այն որպես հոգնակիականազմ հիմք զուգորդվում է ներ-ի հետ՝ ճակատագարդներ։ Ահա թե

---

16. Հմմտ. Սա. Մալխասյանց, Հայերենի բացատրական բառարան, հ. II, էջ 432։

ինչու՝ բաղածայնահանգեր նշանակում է «բաղաձայնով արտահայտված հանգեր», իսկ բաղածայնահանգներ՝ «բաղաձայնահանգ ունեցողներ», գաղանավանկեր՝ «գրությամբ չարտահայտվող (ը) ունեցող վանկեր», իսկ գաղտնավանկներ՝ «գաղտնավանկ ունեցողներ», օրավարձեր՝ «օրվա վարձեր», իսկ օրավարձներ՝ «օրավարձով աշխատողներ» և այլն:

Ինչպես նշել ենք, կարևոր է նաև վերջնաբաղադրիչի բառիմաստի մթագնման հանգամանքը. այսպես՝ մաներ բառում է արմատահնչյունը այժմյան լեզվաբմբռնումով արդեն մթագնած տարր է, չունի անկախ գործածություն, այլապես պետք է ունենայինք **մաներեր և ոչ թե մաներներ:**

Այստեղ պետք է ուշադրություն դարձնել մի հրեությի վրա եւս: *Ինչպես դիտենք, եթե երկվանկ կամ բազմավանկ բառը բաղադրյալ է, ապա այն կարող է ներկայանալ իբրև նախածանցավոր, երկձևույթ կազմավորում, որի վերջնաբաղադրիչը միավանկ բառ-արմատ է: Այսպիսի դեպքում վերջնաբաղադրիչի իմաստը սովորաբար չի դոմինանտում, և եթե անկախ գործածությամբ այն նույնիսկ զուգորդվում է եր հոգնակերտի հետ, միևնույն է, իբրև բաղադրության վերջնաբաղադրիչ չի պահպանում հոգնակերտի հետ իր զուգորդման կազապարը. այսպես՝ տուն—տներ, բայց՝ անտուն—անտուններ. համմա. ձայն—ձայներ, բաղածայն—բաղաձայններ, կամ՝ բայեր, բայց՝ մակբայներ, դերբայներ: Դժվար չէ նկատել, որ այստեղ հիմքերի զուգորդումները ևեր հոգնակերտի հետ պայմանավորված են իմաստաբանական գործոններով: Այսպես՝ անտուններ կազմավորման մեջ տուն բառիմաստը չի գերիշխում: Սա նշանակում է «տուն չունեցողներ (անձինք)». նաև՝ բաղաձայններ չի նշանակում «ձայն/եր», այլ՝ ձայնավորով արտաբերվողներ:*

Մենք դիտարկեցինք ուղիղ, ուղղական-հայցական կազմավորումները. թեք հոլովաձևերում պահպանվում է զուգորդման նույն կազապարը.

Հոգն. ուղ.-հայց.	մատենագիր-ներ(+ը)	դերբայ-ներ(+ը)
Սեռ.-տր.	մատենագիր-ներ(+ի)	դերբայ-ներ(+ի)
Բաց.	մատենագիր-ներ(+ից)	դերբայ-ներ(+ից)
Գործ.	մատենագիր-ներ(+ով)	դերբայ-ներ(+ով)
Ներգ.		դերբայ-ներ(+ում):

Այսպիսով վերը կատարած վերլուծություններից կարող ենք անել մի հետևություն. բոլոր երկվանկ-բազմավանկ բաղադրյալ

բառերը հոգնակիակազմության մեջ հետևում են ընդհանրապես այլ երկվանկ-բազմավանկ բառերի զուգորդումներին (ըստ վանկաքանակության օրենքի), բացի այն բաղադրյալ-բարդ բառերից, որոնք թեև երկվանկ-բազմավանկ են, բայց դրանց միավանկ արմատ-բառ վերջնաբաղադրիչը հիմնականում պահում է իր բառիմաստը և անկախ գործածության մեջ ունեցած հոգնակիակազմության կաղապարը (միավանկներին բնորոշ օրենքով)։

Այս օրինաչափությունը, որ ձևաբանորեն կազմավորվել և հստակ տեսք է ստացել արդի գրական հայերենում, ավելի վաղ շրջանում դեռևս այդպիսի պարզ դրսևորում չուներ։ Ահա թե ինչու Հ. Աճառյանն ասում է. «Իսկ երբ բարդ բառի վերջին եզրը միավանկ է, սկսում են տատանումներ. թե՛ արևելյան և թե՛ արևմտյան գրականի մեջ սրանց հոգնակին զանազան ձևով է լինում. օր. լրագիր, լրագրեր, լրագիրեր, լրագիրներ, լրագրներ։ Դրվում է –եր մասնիկը՝ նկատի ունենալով, որ վերջին եզրը միավանկ է, այսինքն՝ առնելով բառը առանձին (դիր, դրեր) և մտածելով, որ չի կարելի ասել գրներ, գիրներ։ Դրվում է –ներ մասնիկը՝ առնելով բառը իբր մի ամբողջություն և մտածելով, որ բազմավանկը ըստ օրինի պիտի ստանա –ներ մասնիկը։ Իսկ սղյալ և ոչ-սղյալ ձևերը առաջանում են սղման ընդհանուր սկզբունքների համաձայն։ Զանազան քննիչներ տվել են սրանց մասին զանազան կանոններ, բայց ինձ թվում է, թե հարցը երկդիմի և հետևաբար անլուծելի է։ Ըստ իս, տրամաբանությունը պիտի պահանջեր համարել բազմավանկ և դնել –ներ. բայց կան բառեր, որոնց եր-ով հոգնակին այնպես սովորական է դարձել, որ անկարելի է անտես անել և դնել –ներ. այսպես՝ տաճկահայեր, բայց ոչ թնավ՝ տաճկահայներ։ Նույնիսկ միևնույն բառը այս ինչ բարդի մեջ –եր և այն ինչ բարդի մեջ –ներ կարող է ստանալ. օր. պահակակետեր, բայց՝ ստորակետներ»[47]։

Մ. Աբեղյանը առանց վերապահումների է խոսում այս օրինաչափության մասին. «Բարդ բազմավանկ բառերը, երբ երկրորդ բաղադրիչ մասը միավանկ է և պահում է իր նշանակությունը, ընդունում են եր... Բայց երբ երկրորդ մասը բայարմատ է, կամ նոր նշանակությամբ մի բառ է կազմվում, այս դեպքում ավելանում է ներ...»[48]։ *Այս օրինաչափությանը պրոֆ. Գ. Սևակը հետևյալ բնութագրությունն է տալիս. «Բազմավանկ բաղադրված բա-*

---

[47] Հ. Աճառյան, *Լիակ. քեր. հայոց լեզվի*, հ. III, էջ 818—819։

[48] Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, էջ 337։

ուրից նրանք, որոնց վերջին բաղադրիչ արմատը միավանկ է, կարող են ստանալ թե՛ -եր, թե՛ -ներ։

Երբ վերջին (միավանկ) բաղադրիչը իր հիմնական իմաստը պահպանում է նաև բաղադրության մեջ, այս դեպքում ամբողջ բաղադրյալն ստանում է իր վերջին բաղադրիչի հոգնակիի վերջավորությունը, այսինքն՝ -եր... Իսկ երբ վերջին միավանկ բաղադրիչն իր հիմնական իմաստը չի պահպանում, այլ միայն իր նյութական իմաստն է ավելացնում ամբողջ բաղադրյալին, որը կարող է ունենալ նաև այլ հիմնական իմաստ, այսպիսի դեպքում բաղադրյալ բառը դիտվում է բազմավանկ ինքնուրույն բառ և ստանում է բազմավանկ բառերի -ներ վերջավորությունը»[49]։

Պրոֆ է. Ռ. Աղայանը ընդգծում է առաջին դեպքում վերջնաբաղադրիչի գոյականական իմաստ ունենալը, երկրորդ դեպքում՝ նրա բայարմատ կամ բայիմաստ ստացած գոյական լինելը[50]։ Համանման բնութագրություն գտնում ենք նաև պրոֆ. Գ. Ջահուկյանի մոտ[51]։

Հնչյունաբանորեն չվերակազմավորված և վերակազմավորված հիմքատարբերակներ։ Ժամանակակից հայերենում նզակի բառաձևը հոգնակիի հիմքի վերածվելիս կարող է հնչյունաբանական առումով մնալ անփոփոխ և կամ ենթարկվել վերակազմավորման հնչյունական կազմի տարբեր կողմերով (ձայնավոր հնչյուններ, վանկակազմությամբ, շեշտադրությամբ)։ Ըստ այդմ էլ ունենք հիմքի հնչյունաբանական տարատեսակումներ. չշեշտազրկված կամ շեշտակիր և շեշտազրկված կամ շեշտափոխ հիմքեր, վանկայնորեն չվերակազմավորված և վերակազմավորված հիմքատարբերակներ, անհնչյունափոխ և հնչյունափոխ հիմքատարբերակներ։

Շեշտակիր հոգնակիակազմ հիմքատարբերակներ շատ քիչ են հանդիպում, չքանի որ բաղաձայնական բնույթ ունեցող հոգնակերտները հապավոգեպ են. ունենք որոշ հնատիպ հոգնակիակազմություններ՝ մասնիկով, ինչպես՝ լեռնցի՛>լեռնցի՛-ք, գյուղացի՛>գյուղացի՛-ք, որոնց հիմքերում շեշտը պահպանվում է։ Բայց սա էլ վերաբերում է ուղիղ ձևերին. սեռ.-տրականում հիմքն անշեշտ է՝ գյուղացո-ո՛ց։

Շեշտափոխ հոգնակիակազմ հիմքատարբերակները բացառաձակորեն գերակշռում են արդի գրական հայերենում, քանի որ դրեթե բոլոր հոգնակերտները ձայնավորում ունեցող մասնիկներ

---

[49] Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, էջ 277։

[50] Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, էջ 250։

[51] Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, էջ 46։

են (եր, ներ, այք, աւք, եմք, ոմք, ումք, անց, ոց, ունց, ոնց). Հոգնակիակազմ հիմքի և հոգնակերտ վերջավորության զուգորդումը առաջ է բերում բառաձևի վերակազմավորում վանկաքանակությամբ, շեշտն օրինաչափորեն տեղաշարժ է կատարում դեպի նոր վերջնավանկը, հիմքը շեշտազրկվում է։ Այսպես են և՛ միավանկ, և՛ մեկից ավելի վանկանի հիմքերի դեպքում. ա՛րտ>արտ-ե՛ր (ար-տե՛ր), բի՛ծ>բ(ը)ծ-ե՛ր, գ(ը)նդա՛կ>դ(ը)նդակ-նե՛ր, արոտավա՛յր>արոտավայր-ե՛ր (արոտավայ-րե՛ր), մա՛րդ>մարդ-ի՛կ (մար-դի՛կ), կի՛ն>կան-ա՛յք (կա-նա՛յք), կան-ա՛նց (կա-նա՛նց), Գրիգոր-ե՛նք, Գրիգոր-ե՛նց (Գրիգո-րե՛նք, Գրիգո-րե՛նց), պապ-ո՛նք, պապ-ո՛նց (պա-պո՛նք, պա-պո՛նց)։

Թեք հոլովաձևերում հիմքի շեշտադիրքը կարող է տարբեր դրսևորումներ ունենալ՝ կապված հոլովակազմության առանձնահատկությունների, հիմքերի այլ կարգի վերակազմավորումների հետ։ Այսպես՝ սարեցիի հոգնակի ուղղական ձևում հիմքն ունի սարեցի- տեսքը, իսկ սեռ.-տրականում սարեց- վերակազմավորված տեսքը. ընդ որում սարեցի- հիմքը զուգորդվելով բաղաձայնական հոգնակերտ ի-ի հետ՝ մնում է շեշտված, իսկ սարեց- տարբերակը զուգորդվում է ձայնավորում ունեցող ոց հոգնակերտ-հոլովակերտի հետ և շեշտազուրկ է դառնում՝ սարեց-ո՛ց։

Եզակի թեք հոլովներում շեշտը տեղափոխվում է և անցնում ավելացող հոլովական վերջավորությանը, եթե այն ձայնավորական կամ ձայնավորում ունեցող տարր է. սա՛ր>սար-ի՛, սար-ո՛վ։ Իսկ եթե հոլովական վերջավորությունը բաղաձայնական տարր է, շեշտը մնում է հիմքում. արյո՛ւն (>արյա՛ն)>արյա՛մ-բ։ Ընդհանրապես շեշտադրությունը մնում է անփոփոխ, եթե եզակի հոլովաձևը ներքին հոլովման ձև է. հա՛յր—հո՛ր, մա՛յր—մո՛ր։ Հոգնակի թեք հոլովաձևերում հոգնակիակազմության և հոլովակազմության հիմքերը շատ հաճախ տարբեր են. հոլովական վերջավորությունները բառահիմքին կամ արմատին միանում են հոգնակերտների միջնորդությամբ. քաղաք-ներ-ի՛, քաղաք-ներ-ի՛ց, քաղաք-ներ-ո՛վ, քաղաք-ներ-ո՛ւմ. այս դեպքում և՛ հոգնակիակազմ հիմքն է անշեշտ (քաղաք-) և՛ հոլովակազմ հիմքը (քաղաքներ-)։

Հոգնակի ուղղականում այք, ումք, եմք, ոմք հոգնակերտներով կազմավորումների թեք հոլովաձևերի սեռ.-տրականում հոլովահիմքը և հոգնակիակազմ հիմքը համընկնում են, ընդ որում անշեշտ են, շեշտն անցնում է հոլովակերտ-հոգնակերտ անց, ոնց, ունց մասնիկներին։ Մարդիկ, կանայք հոգնակիների բացառական,

գործիական հոլովներում շեշտն անցնում է ավելացած հոլովակերտ վերջավորություններին, ընդ որում շեշտակիր սեռ.-տրական հոլովաձևը վերաարժեքավորվելով դառնում է բացառականի, գործիականի շեշտապուրկ հոլովահիմք. հմմտ.

Հոդն. ուղղ.-հայց.	*կան-ա՛յք*	*Վեդ-ո՛ւնք*	*մարդ-ի՛կ*
Սեռ.-տր.	*կան-ա՛նց*	*Վեդ-ո՛ւնց*	*մարդկ-ա՛նց*
Բաց.	*կանանց-ի՛ց*		*մարդկանց-ի՛ց*
Գործ.	*կանանց-ո՛վ*		*մարդկանց-ո՛վ։*

Վանկայնորեն չվերակազմավորվող հիմքերը *բավականաչափ շատ են արդի գրական հայերենում. ընդհանրապես այն հիմքերը, որոնք զուգորդվում են ներ հոգնակերտի հետ, վանկայնորեն չեն վերակազմավորվում. կ(ը)-րակ>կ(ը)-րակ-ներ, սահ-ման>սահ-ման-ներ, մա-տե-նա-գիր>մա-տե-նա-գիր-ներ։* Վանկաքանակությունը հոգնակիակազմ հիմքում պահպանում է նաև **երկիր** *բառը. թեև հոգնակիի հիմքավերջի վանկում տեղի է ունենում ի>(ը) փոփոխություն, լիահունչ վանկը վերածվում է գաղտնավանկի. երկիր(>եր-կիր)>եր-կ(ը)ր-ներ։* Ըստ էության վանկայնորեն չեն վերակազմավորվում նաև *բաց-միավանկ՝ ի հանգող եզակի ձևերը. ձի>ձի-(յ)եր, թի>թի-(յ)եր։*

Վանկայնորեն վերակազմավորվող հիմքատարբերակները բնորոշ են վանկաքանի փոփոխությամբ, վանկաքանի վերջնաեզրի կատարած տեղաշարժով, վանկաքանակության խախտումով։ Այսպես՝ ու *հանգող բաց-միավանկային եզակի ձևերը նկատելիորեն վերակառուցվում են. լու>լվեր, այսինքն՝ լ(ը)-վեր։* Այստեղ ու *վանկաքունը հաջորդ ավելացող ձայնավորից առաջ, ինչպես այլ նման դեպքերում, վերածվել է վ-ի։ Առեղծված բաղաձայնական անցումը կանոնավորելու համար, լ-ի և վ-ի միջև ներմուծվում է* (ը) *ձայնավորական տարրը, որով գոյանում է լ(ը)- բաց գաղտնավանկ. իսկ ու-ի փոփոխությամբ գոյացած վ-ն տեղաշարժ է կատարում դեպի հաջորդ վանկը՝ վանկատման նորմայի պահանջով. հմմտ. նաև՝ ձու>ձ(ը)-վեր (ձվեր)։*

Փակ միավանկները եթե վանկաքնի վերջնաեզրում ունեն մեկ բաղաձայնական տարր, հոգնակիի հիմքում վերածվում են բաց վանկերի՝ վերջնաեզրի բաղաձայնական տարրը թողնելով հաջորդ եր հոգնակերտով կազմավորվող վանկին։ Այս *վերաբերում է և՛ երկփակ, և՛ վերջնափակ վանկերին. չափ>չա-փեր, շիթ>շի-թեր, հաց>հա-ցեր, պատ>պա-տեր. նաև՝ ուժ>ու-ժեր, իժ>ի-*

ժեր, ուլ>ու-լեր։ Իսկ եթե այս կարգի վանկավորները վանկաբնի երկրորդ եզրում ունեն երկու բաղաձայն հնչյուն, հոգնակիի հիմքում պահպանում են փակ վանկեր, բայց վերջնահզրի երկու բաղաձայններից երկրորդը տեղաշարժ է կատարում դեպի հաջորդ՝ եր հոգնակերտով կազմավորվող վանկը. լամպ>լամ-պեր, վարդ>վար-դեր, բանտ>բան-տեր, ուղտ>ուղ-տեր, ունկ>ուն-կեր։ Սրանց վերակազմավորմանն են հետևում որոշ փակ-միավանկներ, որոնք հոգնակիի հիմքում ձևաբանական-հնչյունաբանական վերակազմավորմամբ վերականգնում են երբեմնի և հանգր. օր. մատ (հոգն. հիմքը՝ մատն-)>մատ-ներ, լեռ (հոգն. հիմքը՝ լեռն-)>լեռ-ներ։

Իսկ եթե այս կարգի փակ-միավանկները եզակի ձևում ունեն ի. ու հնչյունափոխվող բներ, ապա տեղի է ունենում նաև վանկաբնի բնույթի փոփոխություն՝ լիահունչը վերածվում է ոչ լիահունչ (ը)-ի, գոյանում է գաղտնավանկ. գին>գ(ը)-ներ, թուր>թ(ը)-րեր, գունդ>գ(ը)ն-դեր. նաև՝ մուկ, հոգն. հիմքը՝ մ(ը)կն->մ(ը)կ-ներ, ձուկ, հոգն. հիմքը՝ ձ(ը)կն->ձ(ը)կ-ներ։ Բոլոր դեպքերում էլ ավելացող եր հոգնակերտը հիմքից մեկ բաղաձայնական տարր է կորզում և վերածվում է երկփակ վանկի։

Միավանկ բառերը եթե հանդես են գալիս իբրև բարդության վերջնաբաղադրիչ, հոգնակիակազմության ժամանակ, եր հոգնակերտից առաջ, պահպանում են վանկայնորեն վերակազմավորվելու նույն վարքագիծը, ինչ որ անկախ գործածության դեպքում. ձի>ձի-(յ)եր և գետաձի>գե-տաձի-(յ)եր, ջուր>ջ(ը)-րեր և անձրևաջուր>անձրևաջ(ը)-րեր, ձուկ>ձ(ը)կ-ներ և դայլաձուկ>դայլաձ(ը)կ-ներ։

Այսպիսով միավանկ եզակի բառերը հոգնակիակազմ հիմքում պահպանում են իրենց վանկաբանակությունը, սակայն որոշակի օրինաչափությամբ կարող են փոփոխվել վանկաբնի կամ վանկային եզրերի բնույթով։ Այս միաժամանակ նշանակում է, թե վանկային վերակազմավորումը կարող է տեղի ունենալ եր հոգնակերտի հետ զուգորդվող հիմքերում։

Այսպես կոչված մեկուկես վանկանի բառերը երկու տիպի են՝ վերջնաբաղաձանավանկով և սկզբնաբաղաձանավանկով։ Ժամանակակից գրական հայերենում սրանցից երկրորդները իբրև հոգնակիակազմ հիմք զուգորդվում են ներ հոգնակերտի հետ և վանկայնորեն չվերակազմավորված են, ինչպես առհասարակ ներ հոգնակերտի հետ զուգորդվող հիմքերը, իսկ առաջիններն հոգնակիի հիմքում վերակազմավորվում են վանկաբանակությամբ, կորցնում են

գաղտնավանկը և հանդես են գալիս միավանկ տեսքով. ինչպես մի առիթով էլ նշել ենք, այդ է պատճառը, որ նրանք գուգորդվում են եր հոգնակերտի հետ, քեև եզակի ձևում նրանք երկվանկ են, բ(ը)-լուր>բ(ը)-լուր-ներ, կ(ը)-րակ>կ(ը)-րակ-ներ, բայց՝ աստ(ը)ղ>աստ-ղեր, վագ(ը)ր>վագ-րեր, նեգ(ը)ր>նեգ-րեր։

Անհնչյունափոխ են՝

1. Այն հիմքերը, որոնք եզակի ձևում երկփակ-միավանկ են և իբրև վանկաբաժան ունեն ա, ե(է), ո(օ) ձայնավորներ, այ, ույ, յու, յա երկհնչյուններ (և ընդհանրապես երկհնչյուններ), որոշ դեպքերում (մի խումբ բառերի համար) նաև ի, ու ձայնավորներ։ Մեր գրական լեզուն միտում ունի ընդհանրապես միավանկ հիմքերը անհնչյունափոխ դարձնելու։ Այդ նախ երևում է նրանից, որ այս կարգի հիմքերը բացարձակ գերակշռող են, և նույնիսկ փակ վանկում հնչյունափոխվող ի, ու ձայնավորներով շատ հիմքեր աստիճանաբար դարձել կամ դառնում են անհնչյունափոխ։ Մյուս կողմից՝ նման դեպքերում փոխառյալ բառերը գրեթե միշտ անհնչյունափոխ են։ Բերենք համապատասխան հնչյունական միավորներով անհնչյունափոխ հիմքերի օրինակներ. այ՝ հայր>հայր-եր, մայր>մայր-եր, ծայր>ծայր-եր. ույ՝ հույս>հույս-եր, լույս>լույս-եր, բույս>բույս-եր, յու՝ նյութ>նյութ-եր, հյուր>հյուր-եր, այուն>այուն-եր. յա՝ կյանք>կյանք-եր, նյարդ>նյարդ-եր, լյարդ>լյարդ-եր. ա՝ պատ>պատ-եր, դար>դար-եր, քար>քար-եր. ե(է)՝ գետ>գետ-եր, տեր>տեր-եր, դեր>դեր-եր. ո(օ)՝ ձոր>ձոր-եր, շոր>շոր-եր, հոր>հոր-եր. ի՝ բինտ-, գինդ-, դինձ-, դիրք-, թիմ-, ինձ- (կենդանի), լիցք-, լիֆտ-, խինդ-, ծիլ-, կիրճ-, հիմք-, ձիրք-, ճիգ-, ճիլ-, ճիմ-, ճիչ-, ճիտք-, միֆ-, նիստ-, նիշ-, շիթ-, շիվ-, վիթ-, վիհ-, տիպ-, ցին-, քիմք- քիստ-, քիվ-,. ու՝ բութ-, բուհ-, բուսեռ-, բուրգ-, գուղձ-, գուրգ-, դուր-, դուքս-, դուռս-, լուր-, խութ-, խուլ-, խուղ-, կուղբ-, կուրս-, հուն-, հունտ-, հուշ-, մուտք-, մուրճ-, յուղ-, ռումբ-, ռունգ-, ռուս-, սուրճ-, տունկ-, տուրք-, տուփ-, ցուպ-, փուլ-, փուքս-, քունք-, քուրք-։

2. Բոլոր այն հիմքերը, որոնց եզակի ձևը վերջնափակ-միավանկ բառ է. ազգ>ազգ-եր, այծ>այծ-եր, օր>օր-եր, ուժ>ուժ-եր, իժ>իժ-եր, էջ>էջ-եր, իր>իր-եր, իքս>իքս-եր, ուլ>ուլ-եր, ուղտ>ուղտ-եր, ունկ>ունկ-եր, ուս>ուս-եր։

3. Երկվանկ-բազմավանկ հիմքերը՝ ներ հոգնակերտից առաջ[52].

---

[52] Բացառությամբ երկիր բառի, որը հոգնակիի հիմքում հնչյունափոխ է։ Անցյալ դարի որոշ հեղինակների գործերում հանդիպում ենք ավելի հաճախ հիմքերում վերջնահանգի երկհնչյունի փոփոխություն, մի երևույթ, որ նույն շրջ-

ամուսին>ամուսին-ներ, պատմագիր>պատմագիր-ներ, անաս-նաբույժ>անասնաբույժ-ներ, վայրկյան>վայրկյան-ներ, հաղթու-թյուն>հաղթություն-ներ, մարմին>մարմին-ներ, գարուն>գա-րուն-ներ, անուն>անուն-ներ, անկողին>անկողին-ներ, կացին>կացին-ներ։ Այստեղ բնականաբար մտնում են նաև ներ հոգնա-կերտ ստացող այն երկվանկ բառերը, որոնք բաղադրյալ-ածանց-ավոր են, կազմված երկվանկ-միավանկ բառ-բաղադրիչից՝ նախ-ածանցումով, ընդ որում այս բառ-բաղադրիչները անկախ գոր-ծածությամբ հոգնակի կազմելիս կարող են հոգնակիի հիմքում հնչյունափոխ լինել և զուգորդվել եր-ի հետ։ Այսպես՝ *անսիրտ>անսիրտ-ներ* (համմտ. *սիրտ>սրտ-եր*), *անտուն>անտուն-ներ* (համմտ. *տուն>տներ*), *անջուր>անջուր-ներ* (համմտ. *ջուր>ջր-եր*)։ Սրանք սովորաբար գոյականաբար գործածվող ձևեր են։

4. Եր հոգնակերտի հետ զուգորդվող այն երկվանկ-բազմա-վանկ բաղադրյալ (բարդ) հիմքերը, որոնց վերջնաբաղադրիչը իր անկախ գործածության մեջ էլ հոգնակիի հիմքում անհնչյունափոխ է. օր.՝ *քարայծ>քարայծ-եր* (համմտ. *այծ>այծ-եր*), *հացաբույս>հացաբույս-եր* (համմտ. *բույս>բույս-եր*), *ծովագայլ>ծովագայլ-եր* (համմտ. *գայլ>գայլ-եր*), *միջակետ>միջակետ-եր* (համմտ. *կետ>կետ-եր*), *հողակույտ>հողակույտ-եր* (համմտ. *կույտ>կույտ-եր*), *դրոշմանիշ>դրոշմանիշ-եր* (համմտ. *նիշ>նիշ-եր*), *դեղատոմս>դեղատոմս-եր* (համմտ. *տոմս>տոմս-եր*), *զորամաս>զորամաս-եր* (համմտ. *մաս>մաս-եր*)։

5. Բոլոր «մեկուկես» (երկվանկ) սկզբնագաղտնավանկ հիմ-քերը. *բ(ը)լուր>բ(ը)լուր-ներ, բ(ը)նիկ>բ(ը)նիկ-ներ, գ(ը)լուխ>գ(ը)լուխ-ներ*։

6. Բոլոր հիմքերը ստացական կառույցների ներ հոգնակեր-տից առաջ՝ ոչ *ում*, ոչ *ից*, սիրանեռ։

Դժվար չէ նկատել, որ արդի հայերենի հոգնակիակազմության մեջ անհնչյունափոխ հիմքերը գերակշռում են. սրանք ներկայաց-նում են հիմքակազմության հիմնական տիպը։ Արդի հայերենի հիմքակազմության ընդհանուր տենդենցները ստանում են դեպի կցականություն, սղման ու ամփոփման երևույթների խիստ սահ-մանափակում կամ վերացում։ Հ. Աճառյանը մի առիթով ընդգծում

չանի համար էլ առանձնապես քնարոչ չէր. գիտութենների (ՄՆ, ՆԼԺ, II, 65), աշխատութեններով (նույն տեղում, 66), համմտ. իշխանութիւններէն («Արարատ», 1850, № 3), պրութիւններից («Մեղու Հայ.», 1858, № 2), նեղութիւններին (նույն տեղում, № 3), քնկերութիւններ («Մշակ», 1872, № 2)։

է, թե «սղման օրենքը արևելյան հայերենում էլ չնչման ճանապարհ է բռնել»[53]։

Հնչյունափոխ հիմքերը ժամանակակից գրական հայերենում բնութագրվում են ի, ու ձայնավորների վարքագծով։ Սակայն չպետք է մոռանալ, որ ընդհանրապես հիմքակազմության մեջ հնչյունափոխության նկատմամբ զգայուն են դառնում այլ հնչյունական տարրեր ևս (հոլովակազմության, բայակազմության, ածանցման և այլ դեպքերում), ինչպես, օրինակ, յա, ույ, յու երկհնչյունները, որոշ հիմքում նաև ե(է) ձայնավորը։ Ընդ որում դրանք հնչյունափոխության հակում ունեն շեշտազրկված դիրքերում։ Բառի աճման դեպքում շեշտի տեղափոխություն է կատարվում դեպի նոր վերջնավանկ և այդ հնչյունական միավորները շեշտազրկվելով՝ փոփոխության են ենթարկվում։ Այս, սակայն, ընդհանրապես հիմքակազմության դեպքում։ Հոգնակիակազմության մեջ նշված միավորներից հնչյունափոխության նկատմամբ զգայուն են շեշտակիր ի՛ (փակ վանկում) և ո՛ւ ձայնավորները (սովորաբար միավանկ բառերի շրջանակներում), նաև՝ երկվանկների վերջնագաղտնավանկ (ը)-ն։ Եվ այսպես հոգնակիակազմության մեջ հնչյունափոխ հիմքեր են՝

1. Բաց-միավանկ հիմքերը. սրանք մացնում ենք հնչյունափոխների շարքը հետևյալ նկատառումներով։ Նախ սրանցից ու հանդողները (ձու, լու, մասամբ և բու) հոգնակիակազմության մեջ ունեն ու>վ փոփոխություն եր հոգնակերտից առաջ եղած դիրքում։ Այս հոգնակերտը ձայնավորասկիզբ է, ավելանալով ու հանգող հիմքերին՝ ստեղծում է ու+ձայնավոր դիրք, որպիսի դեպքերում էլ տեղի է ունենում ու>վ. ձու>ձվեր, լու>լվեր, որ են՝ ձ(ը)վեր, լ(ը)վեր։ Այս փոփոխությունը հոգնակիի հիմքում սահմանափակված է նշված բառերի շրջանակով։

Ինչ վերաբերում է մնացած վերջնահանգ ձայնավորներին (ա, ո, ե, ի), ապա սրանցով ներկայացող բաց-միավանկ հիմքավերջում, հաջորդ ձայնավորասկիզբ հոգնակերտից առաջ, ավելանում է յ անցումային հնչյուն, որ թեև գրությամբ չի արտահայտվում, բայց արտասանվում է։ Թեև այս հանգամանքից վերանանք, նշված հիմքերը պետք է դասենք անհնչյունափոխների շարքը։ Սակայն, քանի որ մենք հիմքատարբերակները դիտարկում ենք հնչյունական-արտասանական կողմից, ուստի այդ մոմենտը անտեսել չենք կարող։ Ուշադրության արժանի է նաև այն հանգա-

[53] Հ. Աճառյան, Հայոց լեզվի, հ. III, էջ 931։

մանքը, որ բաց-միավանկ բառեր գրական հայերենում քիչ կան, քիչ են ի. ու հանգողները, ավելի քիչ են ա, ե, ո հանգողները (ը-ով միայն ձայնարկություններ ու բնաձայնական տարրեր կարող են լինել). Այսպես՝ ձի>ձի-(յ)-եր, գրությամբ՝ (ձիեր), թի>թի-(յ)-եր (թիեր), դի>դի-(յ)-եր (դիեր), թե>թե-(յ)-եր (թեեր). Թե շաղկապն է, ասենք, հետևյալ արտահայտության մեջ. «Թեները պետք է ընդգծված լինեն», այսինքն՝ թե շաղկապի արտահայտությունները տվյալ տեքստում. ին (տառանուն)>հո-(յ)-եր, նու (տառանուն)>նու-(յ)-եր, ասենք, այսպիսի արտահայտության մեջ. «Տառերը տպագրված տեքստում ազոտ են երևում. հոյերը շփոթվում են նու(յ)երի հետ»։

Բաց-միավանկ բառերը երբ հանդես են գալիս իբրև բարդության վերջին եզր, հոգնակիակազմության ժամանակ պահպանում են իրենց հնչյունաարտասանական հատկությունը. ձի>ձի-(յ)-եր, գետաձի>գետաձի-(յ)-եր։

2. Երկփակ-միավանկ այն հիմքերը, որոնք եզակիում իբրև վանկաբաց ունեն ի կամ ու շեշտակիր ձայնավոր[54], Այս հնչյունափոխ հիմքերում տեղի է ունենում ի>(ը), ու>(ը) փոփոխություն։ Ստորև տալիս ենք այդպիսի փոփոխություններով հիմքեր.

ի>(ը)

բիծ>բ(ը)ծ-եր	*ծիտ>ծ(ը)տ-*	*սիրտ>ս(ը)րտ-*
գիժ>գ(ը)ժ-	*ծիրտ>ծ(ը)րտ-*	*վիզ>վ(ը)զ-*
գիծ>գ(ը)ծ-	*կիրք>կ(ը)րք-*	*վիշտ>վ(ը)շտ-*
գին>գ(ը)ն-	*հին>հ(ը)ն-*	*տիզ>տ(ը)զ-*
գիր>գ(ը)ր-	*ճիտ>ճ(ը)տ-*	*ցից>ց(ը)ց-*
գիրք>գ(ը)րք-	*միս>մ(ը)ս-*	*փիղ>փ(ը)ղ-*
թիվ>թ(ը)վ-	*միտք>մ(ը)տք-*	*քիթ>ք(ը)թ-*
լիճ>լ(ը)ճ-	*միրգ>մ(ը)րգ-*	
լիրբ>լ(ը)րբ-	*շիշ>շ(ը)շ-*	
ծիծ>ծ(ը)ծ-	*ջիղ>ջ(ը)ղ-*	

ու>ը

բուն>բ(ը)ն-	*ծուխ>ծ(ը)խ-*	*տուն>տ(ը)ն-*
բուշտ>բ(ը)շտ-	*ծուռ>ծ(ը)ռ-*	*ցուրտ>ց(ը)րտ-*

[54] *Այստեղ բացառում ենք երկփակ-միավանկ այն հիմքերը, որոնք թեև եզակիում ի. ու վանկաբներով են, բայց անհնչյունափոխ են. դրանց ցանկը քիչ առաջ բերվեց առանձին։*

բուրդ > բ(ը)րդ-
դուռ > դ(ը)ռն-
գունդ > գ(ը)նդ-
դունչ > դ(ը)նչ-
թուղ > թ(ը)ղ-
թուփ > թ(ը)փ-
թուղթ > թ(ը)ղթ-
թումբ > թ(ը)մբ-
թուշ > թ(ը)շ-
թուր > թ(ը)ր-
թուփ > թ(ը)փ-
խումբ > խ(ը)մբ-

կուժ > կ(ը)ժ-
կուռ > կ(ը)ռն-
ձուկ > ձ(ը)կն-
ճուռ > ճ(ը)ռ-
մուկ > մ(ը)կն-
նուշ > ն(ը)շ-
նուռ > ն(ը)ռն-
շունչ > շ(ը)նչ-
ջուր > ջ(ը)ր-
սուտ > ս(ը)տ-
սուր > ս(ը)ր-
սուրբ > ս(ը)րբ-

փութ > փ(ը)թ-
փունջ > փ(ը)նջ-
փուշ > փ(ը)շ-
փուռ > փ(ը)ռ-
քուրդ > ք(ը)րդ-

Կան երկփակ-միավանկ հիմքեր, որոնք տատանումներ են տալիս հնչյունափոխ և անհնչյունափոխ տեսակների միջև, հանդիպում են և՛ այս, և՛ այն ձևով[55]*:*

Տարբեր բերում ենք տատանվող հիմքերի ցանկ.

բիբ- ‖ բ(ը)բ-
բիզ- ‖ բ(ը)զ-
բիր- ‖ բ(ը)ր-
դինգ- ‖ դ(ը)նգ-
զիստ- ‖ զ(ը)ստ-
թիզ- ‖ թ(ը)զ-
լինգ- ‖ լ(ը)նգ-
լինդ- ‖ լ(ը)նդ-
խիճ- ‖ խ(ը)ճ-
լիթ- ‖ լ(ը)թ-
ջիլ- ‖ ջ(ը)լ-
տիկ- ‖ տ(ը)կ-

բուլ- ‖ բ(ը)լ-
բուկ- ‖ բ(ը)կ-
բուռ- ‖ բ(ը)ռն-
գուբ- ‖ գ(ը)բ-
գուռ- ‖ գ(ը)ռ-
լուծ- ‖ լ(ը)ծ-
խունկ- ‖ խ(ը)նկ-
խուրձ- ‖ խ(ը)րձ-
խուց- ‖ խ(ը)ց-
խուփ- ‖ խ(ը)փ-
ծունկ- ‖ ծ(ը)նկն-
շուրթ- ‖ շ(ը)րթ- ‖ շ(ը)րթն-
ռունգ- ‖ ռունգն- ‖ ռ(ը)նգն-
սունկ- ‖ ս(ը)նկ-
քուրմ- ‖ ք(ը)րմ-

[55] *Սակայն հնչյունափոխների ցանկում էլ կան բառեր, որոնք հոգնակիի հիմք դառնալիս կարող են անհնչյունափոխ հիմքի տեսքով հանդես գալ. օր.՝ փուռ > փուռեր և փուռներ. Ընդհանրապես պետք է նկատի ունենալ, որ այսպիսի տատանումներում կարող են դեր ունենալ տարբեր կարգի գործոններ, ոչ միայն կառուցվածքային, այլև արտալեզվական բնույթի։*

Ծանոթ. 1.—Գրական լեզվում ունենք բույն *և* բուն *տարբերակները. հոգնակին կազմվում է երկրորդից՝* բուն-(բուներ) *և* բ(ը)ն-(բներ). *գործածական է վերջինս. Հ. Աճառյանը* բուն «հիմք» *կամ «թեմա» բառի հոգնակին գործածում է* բուներ *կազմավորմամբ։*

Ծանոթ. 2.—Երկփակ-միավանկ հիմքերի անհնչյունափոխ լինելը կարող է պայմանավորված լինել՝ ա) ձևաբանական համանունությունից խուսափելու միտումով. հմմտ. գինդ>գինդեր. և գունդ>գնդեր. բ) ձևույթի ձևա-արտահայտչական պատկերի պահպանման գործոնով. օր.՝ ճիգ>ճիգեր (ո՛չ ճգեր), վիհ>վիհեր (ո՛չ վհեր), տիկ>տիկեր (ո՛չ տկեր), նաև՝ տիղմեր, քիվեր, քիստեր։ կարող է այստեղ անկասկած, դեր ունենալ նաև հիմքի ավանդաբար անհնչյունափոխ լինելը[56]։

*3. Ը*ր հոգնակերտի հետ զուգորդվող այն երկվանկ-բազմավանկ բաղադրյալ (բարդ) հիմքերը, որոնց վերջնաբաղադրիչը իր անկախ գործածության մեջ էլ հոգնակիի հիմքում հնչյունափոխ է. *փակագիծ>փակագծ-եր (հմմտ. գիծ>գծ-եր), զորագունդ>զորագնդ-եր (հմմտ. գունդ>գնդ-եր), հեռագիր>հեռագր-եր (հմմտ. գիր>գր-եր), դասագիրք>դասագրք-եր (հմմտ. գիրք>գրք-եր), փաստաթուղթ>փաստաթղթ-եր (հմմտ. թուղթ>թղթ-եր), լեզվախումբ>լեզվախմբ-եր (հմմտ. խումբ>խմբ-եր)։*

4. Իբրև բացառություն երկիր երկվանկ բառը հոգնակիի հիմքում ևր-ից առաջ հնչյունափոխվում է՝ ի>(ը) փոփոխությամբ. երկիր>երկ(ը)ր-ներ (երկրներ)[57]։

Հ. Աճառյանը խոսելով այն մասին, որ արևելահայ գրական լեզվում ամփոփումը չնչված է, բայց սղումը շարունակվում է, և որ ի, ու ձայնավորների սղումը պահպանվում է «մինչև անգամ հոգնակիի մեջ», այնուամենայնիվ ընդգծում է. «Ընդհանրապես հոգնակին ազատ է սղումից. ինչ. ծաղիկ—ծաղկի, ծաղիկներ, երկիր—երկրի, երկիրներ և այլն. արդեն շատ անշնորհք է համարվում ասել փափկևեր, ծածկևեր, փխ. փափուկներ, ծածուկներ. բացառություն են կազմում միավանկ բառերը, ինչ. թղթեր, ջրեր, դրքեր, քրդեր և այլն»[58]*, Մանուկ Աբեղյանը մի առիթով նշում է. որ մեր «նոր լեզվի մեջ դեռ կենդանի է փակ վանկերի ի, ու ձայ-*

---

[56] *Այս մասին տե՛ս նաև՝ Ա. Ղարիբյան, Գ. Պարիս, Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետադրության ուղեցույց, Երևան, 1957, էջ 46։*

[57] *Նախապես արևելահայ գրական լեզվի գրավոր աղբյուրներում հանդիպում ենք այս բառի ավելի անհնչյունափոխ հոգնակիին, իբրև* երկիրեր *(հմմտ. ՍՇ, Ե, 28. «Մեղու Հայ.», 1858, №№ 1, 14. «Մշակ», 1872, № 1. Մն, Ե՝ժ, II, 72). Հետագայում խոսակցական լեզվի ազդեցությամբ համախացել ու հաստատվել է հնչյունափոխ տարբերակը, իբրև* երկրներ։ *Մ. Մալխասյանցը իր բառարանում երկու ձևն էլ դրել է՝ երկիրներ‖երկրներ (ՍՄ, ՀՐՔ, I, 593)։*

[58] *Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, էջ 931։*

նավորների փոփոխությունը, այն է՝ սրանք կամ դուրս են ընկնում, կամ դառնում են ը: ...Հոգնակիում, սակայն, միավանկ բառերի մեջ է միայն լինում այս փոփոխությունը՝ շրեր, թղթեր, գրքեր, թվեր, իսկ բազմավանկների մեջ ու, ի մնում են անփոփոխ՝ հաշիվներ, գլուխներ, պանդուխտներ, մարմիններ, պատուհներ. «ր» բաղաձայնից առաջ միայն դեռ պատահում են սղած ձևեր՝ երկրներ, կերակրներ, փոխանակ սովորական «երկիրներ», «կերակուրներ» ձևերի»[59]:

5. Մեկուկես-վերջնագաղտնավանկով հիմքերը. այս կարգի վերջնագաղտնավանկը, որը անշեշտ է, եզակիում դրավում է շեշտահնչյուն դիրք. ա՛ստ(ը)ղ, ա՛րկ(ը)ղ, վա՛գ(ը)ր. հոգնակիաձևության մեջ այն ընկնում է լիահունչ վանկաբնի և ավելացած հոգնակերտի միջև, շեշտը օրինաչափորեն տեղափոխվում է նոր կազմավորված լիահունչ վերջնավանկը՝ անցնելով հոգնակերտի ձայնավորին: Այդ բոլորի հետևանքով գաղտնավանկն ստանում է անմիջականորեն շեշտանախորդ դիրք: Եվ ահա հենց այդ դիրքում էլ (ը) ձայնավորական տարրը լիովին դուրս է ընկնում, ստացվում է (ը)>զրո փոփոխություն. երկվանկ (մեկ ու կես) եզակի ձևը հոգնակիաձևի հիմքում վերածվում է մեկ վանկի. հիմքի զուգորդումը եր-ի հետ դառնում է օրինաչափություն. (աստը)ղ>աստղ-եր (աստ-ղեր), վագ(ը)ր>վագր-եր (վագ-րեր), մեռ(ը)ր>մեռր-եր (մեռ-րեր)[60]:

Այս բոլորից հետո մեզ մնում է պարզել ևս մի հարց, ինչո՞ւ եր հոգնակերտի հետ զուգորդվող հիմքերում առկա է հնչյունափոխություն, իսկ ներ-ից առաջ՝ չկա: Չէ՞ որ երկու հիմքերի եզակի ձևերում էլ հանդիպում են ի, ու շեշտակիր ձայնավորներ: Ըստ շեշտի հետ կապված հնչյունափոխության միտումի՝ այդ հնչյունները պետք է հավասարապես նույն վարքագիծը դրսևորեին շեշտազրկվելուց հետո:

Ժամանակակից գրական հայերենում մեկից ավելի վանկ ունեցող արմատական բառերում վերջնահանգ ի, ու (շեշտակիր)

---

[59] Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 348:

[60] Ըստ երևույթին ժամանակակից գրական հայերենում կդ, գդ, փտ հնչյունակապակցությունները առանց անցումային (ը) ձայնավորական տարրի չեն կարող հստակ դրսևորվել, ուստի սրանց հոգնակիակազմ հիմքերը պատարերվում են նաև գաղտնավանկի պահպանումով՝ արկ(ը)ղ-, անգ(ը)ղ-, գամփ(ը)ռ-: Եզակի ձևի վանկաբանակը նման դեպքերում պահպանվում է, ուստի իրեն երկվանկ (մեկուկես վանկանի) սրանք արդեն զուգորդվում են ներ-ի հետ, ահա թե ինչու գրականության մեջ և բանավոր խոսքում հանդիպում ենք նաև արկղներ, անգղներ, գամփռներ հոգնակի ձևերին:

հազվադեպ է հանդիպում, մինչդեռ միավանկների հիմքում այդպիսի ձայնավորներ (շեշտված ու, ի) համեմատաբար շատ կան։ Հնչյունափոխության նկատմամբ միտում ունեցող ձայնավորներ առանձնապես քիչ են հանդիպում երկվանկ-բազմավանկ արմատական բառերի վերջնահանգում։ Խոսողի լեզվարմբռնողության մեջ միտում է առաջանում ներ-ից առաջ անհնչյունափոխ հիմքի գաղափարը։ Եվ ահա նման կազմավորումների, այսինքն՝ անհնչյունափոխ հիմք+ներ կաղապարի (մոդելի) անալոգիայով՝ բոլոր այն հիմքերը, որոնք ընկնում են ներ հոգնակերտից առաջ, միտում են անհնչյունափոխ դառնալու. եթե ունենք քաղաք-ներ, երիտասարդ-ներ, սեղան-ներ, բաժակ-ներ և այլն, ապա համաբանությամբ սրանց են հետևում տեսիլ-ներ, մտածմունք-ներ (ածանցավոր հիմքերը), ապա և ջրմուղ-ներ, պատմագիր-ներ (բարդ՝ վերջնաբաղադրիչով հիմքերը)։ Հետևանքն այն է լինում, որ կայունանում, ընդհանրական է դառնում ներ-ից առաջ անհնչյունափոխ հիմքի կաղապարը։ Եվ քանի որ այդ այդպես է, ապա այս սկզբունքը պետք է որ տարածվեր բոլոր մեկից ավելի վանկ ունեցող այն բարդ հիմքերի վրա, որոնք ներ հոգնակերտ են ստանում, այսինքն՝ նաև միավանկ, հնչյունափոխ ձայնավոր ունեցող, բառերը՝ նախածանցումներով. Համմ. տուն>տներ. բայց անտուն>անտուն-ներ։

Եվ ահա ժամանակակից գրական հայերենում գործում են անհնչյունափոխ հիմք+ներ, անհնչյունափոխ հիմք+եր կաղապարները, առանձին բառերի համար՝ հնչյունափոխ հիմք+եր կաղապարը։

Հնչյունական վերակազմավորումները մասնավորապես դրսևորում են նաև հնատիպ հիմքերում, որոնց մասին տարբեր առիթներով խոսել ենք, ուստի այստեղ դրանց վրա կանգ չենք առնում. (Ցուցադրման համար բերենք օրինակներ. կին>կան-այք, Մարո>Մարո(յ)-ենք)։

Ձևաբանորեն վերակազմավորված և չվերակազմավորված հիմքատարբերակներ: *Ժամանակակից գրական հայերենում ձևաբանորեն վերակազմավորված հիմքերի քիչ ենք հանդիպում։ Հնատիպ հիմքերում այսպիսի երևույթի հանդիպում ենք մարդ բառի հոգնակիակազմության թեք ձևերում։ Ուղղ.-հայց. մարդիկ ձևին թեք հոլովներում համապատասխանում է մարդկանց կազմավորումը. այստեղ մարդ- հիմքը ուղղականի մարդ հիմքի (կամ ձևի) իկ մասնիկով վերակազմավորված տարբերակն է։*

Համակարգային հիմքերի ձևաբանական վերակազմավորման

հանդիպում ենք միավանկ այն ձևերի հոգնակիակազմության մեջ, որոնք հոգնակիակազմ հիմքում վերականգնում են հնում ունեցած և հետագայում կորցրած ն հանգը։

Հին հայերենի բաղաձայն+(ր)ն վերջնահանգն ունեցող բառերը հետագա հայերենում հազվադեպ են պահել այդ կաղապարը։ Բառի նգակի ուղիղ (կամ ուղղական), բացարձակ ձևերում վերջնահանգ ն-ն համատարած ընկել է, կամ փոխարինվել է ր-ով. այն առանձին դեպքերում է միայն պահպանվել։ Այս բնականաբար վերաբերում է նաև ումն վերջնահանգին, որ է նույնպես բաղաձայն+(ր)ն կաղապարը։ Եվ այսպես՝ արեգակն>արեգակ, կայծակն>կայծակ, փայլակն>փայլակ, հիմն>հիմ(ք), շուրթն>շուրթ, դիակն>դիակ, սկիզբն>սկիզբ, այծեամն>այծյամ, եղեամն>եղյամ, եղնգն>եղեգ, ասեղն>ասեղ, ուսումն>ուսում, սառն>սառը, ընդհակառակն>ընդհակառակը (և ընդհակառակն), ակն>ակ, որդն>որդ, նաև՝ եաւթն>յոթ, տասն>տասը, տաս, ինն>ինը և այլն։ «Հին լեզվի մեջ,— գրում է Աբեղյանը,— «ըն» վերջացած բառերի վերջի «ըն» մասը նոր լեզվի մեջ դուրս է ընկել, օրինակ՝ ուսումն—ուսում, մատն—մատ, ձեռն—ձեռ, մասն—մաս։ Բառակազմության (բարդության և ածանցման) ժամանակ, ինչպես և հոգնակի թվի մեջ, սակավ բացառությամբ, այսպիսի բառերի վերջի «ն» տառը վերականգնվում է, ինչպես՝ ուսումնասեր, մատնացույց, ձեռնասուն, մասնակից. այսպես և ածանցման ժամանակ՝ մատն-ոց, ձեռն-ոց, ակն-ոց, մասն-ավոր։ Այդ բառերի մի մասի եզ. սեռականը գրաբարում, մի քանի բառերինը նաև աշխարհաբարում, լինում է «ան» ձևով...»[61]։

Աբեղյանը այս կարգի գոյականների ձևաբանական հարակցվող հատկություններից մեջ նշում է նաև այն, որ դրանցից մի քանիսը անցել են ի հոլովման (ոտ, մատ, սերմ, մաս), մի մասը, ինչպես նշվեց վերը, սեռականում ունի ան (մուկ—մկան), մի մասն էլ եզակի որոշ հոլովներում պահում են ն-ն (նռնով, բռնով, դռնով, դռնից)[62]։ *Հր. Աճառյանը անդրադառնալով այս հարցին նույնպես հաստատում է, որ արդի գրական լեզուն ջնջել է այս ն հավելվածը, թեև ածանցման մեջ պահում է, ինչպես ձուկն—ձուկ, ձկնեղեն, դուռն—դուռ, դռնապան են։ Բարբառներն էլ մեծագույն մասամբ զուրկ են այդ ն-ից*[63]։

---

[61] Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 197, հմմտ. նաև էջ 110 և 337։

[62] Տե՛ս Աբեղյան. նույն տեղը, էջ 345։

[63] Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս II, էջ 415։

Ինչպես նկատեցինք, ն հանգը կարող է վերականգնվել և՛ միավանկ, և՛ մեկից ավելի վանկ ունեցող հիմքակազմություններում։ Հոգնակիակազմության մեջ ն-ի վերականգնումը միավանկ որոշ հիմքերում և զուգորդումը եր-ի հետ՝ առաջ է բերում ներ (ներ) հոգնակերտի տպավորություն։ «Հոգնակիի ժամանակ,— գրում է Հ. Աճառյանը,—ն վերականգնվում է և այնպիսի տպավորություն է ստացվում, որ իբր թե միավանկ բառը իր հոգնակին կազմում է ներ մասնիկով. օր. թոռ—թոռներ...»[64]։

Գ. Սևակը ևս նկատել է, որ ան հոլովման ենթադրվող բոլոր միավանկ բառերի հոգնակին անպայման լինում է ներ, որի ն-ն «վերականգնվող գրաբարյան հիմքինն» է, օր. գառ-ն-եր[65]։ *Անկասկած, կան նաև այնպիսիները, որոնք այդ հոլովման չեն ենթարկվում (մատ, ոտ, կուռ, ձեռ, հարս են)։*

***Այս կապակցությամբ էդ. Աղայանը նշում է, որ «կան բառեր և՛ ան, և՛ ի հոլովումներով. դրանք առաջին դեպքում ստանում են (ն)եր, երկրորդ դեպքում՝ եր. այսպես՝ ծունկ-ծնկան-ծնկներ և ծնկի կամ ծունկի-ծունկեր. շուրթ-շրթան (հնացած և ժողովրդական)-շրթեր և շուրթի-շուրթեր. ոտնգ-ոտգան (հնացած)-ոտգներ կամ ոտնգներ և ոտնգի-ոտնգեր են։ Ոտ և ձեռ բառերի՝ արդի գրական լեզվի ավելի հարազատ ձևերն են ոտք, ձեռք, սրանց հոգնակին է ոտքեր, ձեռքեր: Մատ, ոտ՝ խոսակց. ժող. մատեր, ոտեր ձևերը»*[66]։

Այս դիտողություններից նկատելի է, որ հիմքակազմության մեջ ն-ն ձևաբանական տարր է։ Հնում այս տարրն ունեցած (եզակի ձևերում) և հետագայում կորցրած բառերից են՝ ակ, անձ, ափ, բեռ, բուռ, գառ, դուռ, եզ, թոռ, լեռ, ծոռ, ծունկ, կաթ, կողմ, կուռ, հարս, հիմ, ձեռ(ք), ձուկ, մաս, մատ, մուկ, նուռ, շուրթ, ոզ, ոտ, որդ, ոտնգ, սերմ, վազ, փուռ։ Սրանցից հոգնակիի հիմքում՝ ն հանգը վերականգնում են՝ բեռ, բուռ, գառ, դուռ, եզ, թոռ, լեռ, ծոռ, ծունկ, կուռ, հարս, ձուկ, ձեռ, մատ, մուկ, նուռ, ոտ, ոտնգ, չեն վերականգնում՝ ակ, հիմ, շուրթ, ոզ, փուռ, կաթ, անձ, մաս, սերմ, կողմ, որդ, ափ, վազ։

Ն հանգը վերականգնողները հոգնակիի հիմքում ունեն այսպիսի տեսք.

---

[64] Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. III, էջ 31։

[65] *Տե՛ս* Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի գաղթներ*, էջ 268։

[66] է. Բ. Ազայան, *Ժամանակակից հայ. հոլ. և խոն.*, Երևան, 1967, էջ 259։

բեռ>բեռն-	*լեռ>լեռն-*	*ձեռ>ձեռն-*
բուռ>բուռն-‖բ(ը)ռն-	*ծոռ>ծոռն-*	*մատ>մատն-*
գառ>գառն-	*ծունկ>ծ(ը)նկն-*	*մուկ>մ(ը)կն-*
դուռ>դուռն-	*կուռ>կ(ը)ռն-*	*նուռ>ն(ը)ռն-*
եզ>եգն-	*հարս>հարսն-*	*ոտ>ոտն-*
թոռ>թոռն-	*ձուկ>ձ(ը)կն-*	*ոռնգ>ոռնգն-‖ո(ը)նգն*[67]։

Ն հանգը չվերականգնողները նույնությամբ ծառայում են իբրև հոգնակիակազմ հիմք՝ ակ-, հիմ-, շուրթ- և այլն։

Արդ լեզվաբանական ի՞նչ գնահատում պետք է տալ այս վերականգնվող ն հանգին։ Ճի՞շտ ենք վարվում, երբ դա համարում ենք հիմքակազմ ձևաբանական տարր, թե նա հոգնակերտի հետ վերակազմավորված կամ նման վարքագիծ դրսևորող հնչյունաբանական տարր է[68]*։ Պրոֆ. Գ. Սևակը այն հատկացնում է «վերականգնվող գրաբարյան հիմքին», ինչպես վերը տեսանք։ Պրոֆ. է. Բ. Աղայանը գտնում է, որ «հոգնակիում երևան եկող ն հնչույթը պետք է դիտել իբրև ներույթ, որով (ն)եր հոգնակերտը դառնում է եր-ի ներույթավոր տարբերակը... բայց քանի որ դա նույնանում է /ներ/ հոգնակերտի հետ, ապա ավելի նպատակահարմար է գործնականորեն (ոչ տեսականորեն) համարել նույն հոգնակերտը»*[69]*։*

Նկատելի է, որ բոլորն էլ, ինչպես քիչ առաջ տեսանք, նաև Հ. Ամառյանը (ն+եր/ներ) միակցությունը վերապահությամբ են ընդունում, այսինքն՝ ն-ն ըստ էության հիմքի բաղադրիչ են համարում։ Սա իսկապես ուշադրության արժանի հարց է. ն-ն ձևաբանական ո՞ր բաղադրիչի, միավորի հետ է առնչվում, հիմքի թե՞

---

[67] *Այս ցանկում ընդգրկված են նաև տատանվող ձևեր՝ ն հանգի վերականգնման խնդրում. ոռնգ—ոռնգեր‖ոռնգներ, ծունկ—ծունկեր‖ծնկներ, նույնիսկ՝ ծունկներ. Ոռներդ մինչև ծունկներդ բորիկ (ԵՉ, Ընտ. 427)։ Առհասարակ տարաձևություններն ավելի բնորոշ են անցյալ շրջանին. այսպես, օրինակ. ակներ «թանկագին քարեր» (ՍՀ, ե, 101. Ր, եժ, II, 398), ակներ «ականվեներ» («Մեղու Հայ.», 1858, № 8), որդեր‖որգներ (ՍՄ, ՀՒՒ, III, 581. Համմ. Սե, ն, 244), մատներ (Ր, եժ, I, 537, Հ. X, 45), ափներդումբ («Մեղու Հայ.», 1858, №№ 1, 4), ափներ (ն. տ. № 7), անձներիս (ն. տ. 1859, № 19. Համմ. «Մշակ», 1872, № 8), ոդներ (ՍՄ, ՀՒՒ, III, 556), հիմներ (ԵՉ, Ընտ, 10), վազներ (ՍՄ, ՀՒՒ, IV, 286)։*

[68] *Երրմանի հիմքային վերջնաբաղադրիչը կամ վերջնահանգը կարող է ձևաբանական էվոլյուցիայով վերակազմավորվել հոգնակերտի հետ. Համմ. նախկին անձինք անձից՝ անձին-ք>անձ-ին-ք>անձ-ինք այժմյան ձևը։*

[69] *է. Բ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, էջ 251։*

վերջավորության, մատն-եր թե մատ-ներ, երբ եզակին մատ է։

Քանի որ հիմքակազմության այլ ձևերում վերականգնվող ն-ն պատկանում է հիմքին, ուրեմն հոգնակիակազմության մեջ ևս նա պատկանում է հիմքին. համմտ. դռն-ից, դռն-ապան, և ո՛չ դռ-նից, դռ-նապան. ուրեմն և ո՛չ դռ-ներ. եզն-արած և ո՛չ եզ-նարած, ուրեմն և՝ եզն-եր և ո՛չ եզ-ներ։ Թեպետ վանկատմամբ ն-ն անցնում է եր-ին (օր. եզ-ներ), բայց սա հնչյունաբանական-արտասանական երևույթ է և ոչ թե ձևաբանական։

Իսկական իմաստով բաղադրյալ հիմքը հենց ձևաբանորեն վերակազմավորված հիմքն է. ինչպես իկ տարրը մարդ բառի թեք հոլովաձևերում, այնպես էլ ն հանգը նշված միավորների հոգնակիակազմ հիմքում միայն հիմքակազմիչ դեր ունի (թեև, իհարկե, ն-ն այնպիսի մասնիկ չէ, ինչպիսին է իկ-ը)։ Ն-ն այնպիսի հիմքակազմ տարր չէ, ինչպիսին բնակազմիչ՝ թեմատիկ ձայնավորն է հնդեվրոպականում կամ գրաբարի հիմքակազմություններում, բայց սա հին հայերենի ձայնորդահիմք կազմավորումների վերապրուկ է արդի հայերենում։

Վերջում ավելացնենք նաև այն, որ միավանկների հոգնակիակազմ հիմքում ն հանգի վերականգնումը պահպանվում է նաև այն ժամանակ, երբ միավանկը հոգնակի է կազմում իրրև բարդության վերջնաբաղադրիչ. ձուկ>ձկն-եր, գայլաձուկ>գայլաձկն-եր, նավաբեռ>նավաբեռն-եր, ջրամուկ>ջրամկն-եր, քաղաքացուռ>քաղաքացռն-եր (համմտ. որդ>որդ-եր, անձրևաորդ>անձրևաորդեր, գետափ-եր||գետափ(ն)եր, ցուցամատ(ն)եր են)[70]։

գ) Հոգնակիակազմություն և հոդառություն. սուացական հոգնանիշներ։ Հայերենում հոգնակիակազմությունը և հոդառությունը երբեմն ձևաբանական-իմաստաբանական շփումներ են ունենում։ Արևելյան գրականում ևս հոլովակազմությունը, հոգնակիակազմությունը և հոդառությունը կառուցվածքայնորեն դուգակցվում են մեկ բառաձևում։ Այստեղ հնարավոր են հոգնակերտի, հոլովակերտի և հոդի հետևյալ դուգորդումները. ուղիղ ձևերում՝ հոգնակերտ + հոդ. թեք ձևերում՝ հոգնակերտ + հոլովակերտ + հոդ։

Արդի գրականում հայերենում այս երկու կաղապարները հնարավոր չեն բոլոր հոդերի հետ։ Երկրորդ կաղապարը, բացի սեռ.-տրականից, այլ թեք հոլովների դեպքում հնարավոր է միայն ս, դ հոդերի հետ (ն հոդի հետ զուգորդումներ գրեթե չկան)։

---

[70] Ձևաբանական վերակազմավորումների վերաբերյալ տե՛ս նաև «Հայ-համակարգային և հնաոիպ հոգնակիակազմություններ»-ի կապակցությամբ։

Հոգն. ուղղ.-հյց.	*տակառ-ներ-ը (-ս, -դ, ն)*	*գրք-եր-ը (-ս, -դ, -ն)*
Սեռ.-տր.	*տակառ-ներ-ի-ն (-ս, -դ)*	*գրք-եր-ի-ն (-ս, -դ)*
Բաց.	*տակառ-ներ-ից-ս (-դ)*	*գրք-եր-ից-ս (-դ)*
Գործ.	*տակառ-ներ-ով-ս (-դ)*	*գրք-եր-ով-ս (-դ)*
Ներդ.	*տակառ-ներ-ում-ս (-դ)*	*գրք-եր-ում-ս (-դ)*,

Պետք է նկատի ունենալ նաև այն, որ ժամանակակից արևելահայ գրական լեզվում իկ, այր, անք, եմք, ոնք, ունք, անց, ոնց, ունց, ենց հոգնակերտները չեն զուգորդվում հոգերի հետ. մարդիկ—մարդկանց, կանայք—կանանց, վարդանանք—վարդանանց, պապոնք—պապոնց ձևերը և նմանները առանց հոգի են։ Այստեղ նկատի չունենք փոխանուն սեռականի և առհասարակ փոխանունության հետ կապված հոգաոությունը, ինչպես, օրինակ՝ «վարդանանքը հատուկ անուն էր» կամ՝ «մեր այգին չրեցինք, վեդունցը մնաց»։

Որոշ բառերի (սովորաբար միավանկ) հոգնակիակազմության մեջ նկատելի է մի յուրահատուկ երևույթ ևս. դա ստացական հոգնակիակազմությունն է, որ նոր հայերենի զարգացման օրինաչափություններից է (գրաբարում և միջին հայերենում նկատված չէ)։ Այդպիսի կազմավորումների մեջ մտնում են հատկապես այն բառերը, որոնք արտահայտում են մարմնի մաս, օրգան կամ հոգեզգացական և առհասարակ առաջին, երկրորդ, երրորդ դեմքերին անմիջականորեն առնչվող այլ որևէ առարկա, երևույթ. օր. աչք, ունք, ձեռք, ոտք, ծունկ, վիզ, ուս, կողք, կուրծք, կոնք, մեջք, միտք, հույս, խոսք, շոր և այլն։ Ինչպես նկատում ենք, այս երեվույթները, առարկաները կարող են ստացական առումով ըմբռնվել առաջին, երկրորդ և կամ երրորդ դեմքի հարաբերությամբ։ Նրանց անունները նռանալով ստացական հոդ՝ ս, դ, ն կամ ր, հանդես են գալիս համապատասխան իմաստավորումներով։ Եզակի բառաձևերում այս հոդերը արտահայտում են իմ, քո, նրա դերանունների ստացական իմաստները. աչքս=իմ աչքը, աչքդ=քո աչքը, աչքր՝ կոնտեքստով պայմանավորված կարող է նշանակել «նրա աչքը»։ Այստեղ ունենք հիմք (եզակի ուղղ.-ի ձև)+ստացական հոդ՝ ուղիղ հոլովաձևում, հիմք+հոլովակերտ+ստացական հոդ՝ թեք հոլովաձևերում կաղապարները։

Եզակի այս ստացական ձևերի համապատասխան հոգնակիները կազմելիս տեղի է ունենում հիմքի անհրաժեշտ զուգորդում հոգնակերտի հետ. աչքեր-ս, աչքեր-դ, աչքեր-ը արդեն նշանակում են՝ իմ աչքերը, քո աչքերը, նրա աչքերը։ Այստեղ ունենք

հոգնակիականազմ հիմք *(եզակի ուղղ.-ի ձև)*+հոգնակերտ+սահցական հոդ *կաղապարը։ Թեք հոլովաձևերում առկա է* հոգնակիականազմ հիմք+հոգնակերտ+հոլովակերտ+սահցական հոդ *կաղապարը. օր. այք-եր-ից-ս։*

Այսպիսով ունեցանք աչ**ս** *և* աչ**եր**ս *ձևեր, որոնք արտահայտում են սահցականություն եզակի անձի, դեմքի հարաբերությամբ։ Սակայն կա հոգնակերտի և սահցական հոդի այլ բնույթի զուգորդում, որով արտահայտվում է սահցականություն հոգնակի անձի կամ դեմքի նկատմամբ, որը մենք կոչել ենք* սահցական հոգնակի։

***Սահցական հոգնակիները բարբառային-խոսակցական առկայություններ ունեն, սակայն աստիճանաբար նրանք արմատավորվել են գրական լեզվում (ինչպես արևմտահայերենում, այնպես էլ արևելահայերենում)։ Ձևաբանական կազմով այն ունի հոգնակիականազմ հիմք** *(եզակի ուղղ.-ի ձև)*+**հոգնակերտ+սահցական հոդ** *կաղապարը։ Սակայն այստեղ* **հիմք և հոգնակերտ** *հասկացությունները ունեն ուրույն գծեր. արևելահայ գրական լեզվում այս կարգի հիմքերը միավանկ ու անհնչյունափոխ են, իսկ հոգնակերտը՝* **եր**։ *Ուրեմն միավանկ անհնչյունափոխ* **հոգնակիականազմ հիմք+եր+սահցական հոդ** *կաղապարը սահցական հոգնակիականազմության համար է։ Այս կաղապարը հակադրվում է միավանկների սահցական հոդով սովորական հոգնակիականազմությանը նրանով, որ հոգնակերտը* **եր**-*ի փոխարեն* **ներ** *է, իսկ սահցական հոդով և* **ներ** *հոգնակերտով այլ կազմավորումներին հակադրվում է նրանով, որ սահցական հոգնակիններում հիմքը միավանկ է, սրանց մոտ՝ բազմավանկ*[71]*։ Վերը տեսանք, որ նման դեպքերում արևմտահայ գրական լեզուն զարգացրել է այլ կաղապարներ. միավանկների սահցական հոգնակիների համար ունի* **հոգնակիականազմ հիմք+եր-ների+սահցական հոդ** *կաղապարը, իսկ բազմավանկների համար՝* **հոգնակիականազմ հիմք+ներ+սահցական հոդ** *կաղապարը. ձեռքերնիս, բայց՝ գլուխներս։*

Եվ քանի որ **եր**-*ը դառնում է միավանկների սահցական հոգնակիականազմության տարր, ապա բնականաբար նա չի կարող նույն ֆունկցիայով հանդես գալ երկվանկ-բազմավանկների կազմավորումներում.* **եր**-*ը սովորական հոգնակիականազմության համակարգային կազմավորման մասնիկ է։ Այս և այլ պատճառներով արևե-*

---

[71] *Այս միավանկ հիմքը այլ միավանկ հիմքերից ևս տարբերվում է իր անհնչյունափոխ բնույթով. համմ. սիրտ>սրտ-եր, բայց՝ պիտո-ներս։*

լահայ գրականը երկվանկ-բազմավանկների ստացական հոգնակիականացման կաղապար չի զարգացրել։

Անդրադառնանք մեր մտքին. և այսպես՝ աչքներս արդեն նշանակում է «մեր աչքերը», աչքներդ՝ «ձեր աչք(եր)ը», աչքներ՝ «նրանց աչք(եր)ը»։ Թեք հոլովաձևերում առկա է հոգնակիականացման հիմք + հոգնակերտ + հոլովակերտ + ստացական հոդ կաղապարը՝ հիմք և հոգնակերտ հասկացություններին նույն մեկնաբանումներով, ինչ որ հենց նոր արեցինք։

Այժմ ուղիղ և թեք հոլովաձևերի ստացական հոգնակիականացման կաղապարները ցուցադրենք ամբողջ հարացույցում.

Հոգն. ուղղ.-հայց.	*աչք-ներ-ս (-դ, -ը)*
Սեռ.-տր.	*աչք-ներ-ի-ս (-դ, -ի)*
Բաց.	*աչք-ներ-ից-ս (-դ)*
Գործ.	*աչք-ներ-ով-ս (-դ)*
Ներգ.	*աչք-ներ-ում-ս (-դ)։*

Ստացական հոգնակիականացման դիտարկված կաղապարները այլ մեկնաբանություն ևս ունեն։ Աստեղ կարող են ասել, թե ներ-ը ծագումով կամ արդի ըմբռնմամբ էլ ն-եր է դիտարկվող կաղապարում[72]։ Ստուգաբանորեն այդ ճիշտ է, բայց կառուցվածքային ընկալումով սա ներ հոգնակերտի կիրառական մի տարբերակն է՝ իմաստաբանական պայմանավորվածությամբ։ Բոլոր մեկուկես ու երկվանկ-բազմավանկ բառերը և միավանկներից նրանք, որոնք վերակազմավորվող ն հանգն ունեն, ստացական հոգնակիականացում չունեն։ Եվ քանի որ ստացական հոգնա-

---

[72] *«Ստացական հոդը,— գրում է պրոֆ. Գ. Սևակը,— սովորաբար եզակի իմաստ ունի և փոխարինում է ...իմ, ըո և նրա դերանուններին։ Ուրեմն, սակայն, հարկավոր է լինում ստացական հոդը գործածել հոգնակի իմաստով, ըստ որում, այդպիսի դեպքերում ստացման ևս պիտի հոգնակի լինի, բառն ստանում է հոգնակիության երկու վերլուծություն, մեկը առարկայի հոգնակիության համար, մյուսը՝ ստացականի, օրինակ՝ սրտ-ն-եր-ս, սրտ-ն-եր-դ, սրտ-ն-եր-ը։ Այս օրինակների մեջ բառի հիմքն... է սրտ (հոգնակի՝ սրտ-եր), եր վերլուծությունը սրտ-ի հոգնակիության նշանն է, ս-ն, դ-ն, և ը-ն ստացական հոդն են, իսկ հիմքի և հոգնակիի վերլուծության միջև ընկնող ն-ն ստացականի հոգնակիության նշանն է։ Սրտներս, սրտներդ, սրտները բառերի մեջ կա հոգնակիության երկու նշան և երկու իմաստ. մեկը՝ ս-ի, դ-ի, ը-ի հոգնակիության նշանը (-ն-), որը տալիս է իմ, ըո, նրա իմաստի հոգնակիությունը, այսինքն՝ մեր, ձեր, նրանց՝ մյուս՝ սրտ-ի հոգնակիության նշանը (-եր), որը տալիս է սիրտ իմաստի հոգնակիությունը, այսինքն՝ սրտեր։ Հետևանքն այն է լինում, որ այս բառերը նշանակում են ո՛չ միայն իմ սրտերը, ըո սրտերը, նրա սրտերը, այլև՝ մեր սրտերը, ձեր սրտերը, նրանց սրտերը» (ԳՍ, ժՀՂՊ, 278—279)։*

կիսակազմությունը ներ–ով է, ապա բոլոր ստացական հոգնակիների հիմքերը անհնչյունափոխ են՝ շուրթ–ներս, միտք–ներս, վիզ–ներս և այլն։ Այսպիսով՝ միավանկ հիմք+ներ+ս (ղ, ճ) կաղապարը ստացական հոգնակիակազմության համար է, մեկից ավելի վանկանի հիմք+ներ+ս (ղ, ճ) կազապարը՝ բուն, սովորական հոգնակիի համար է։

Այս դիտարկումները բերում են այն համոզման, որ ժամանակակից գրական հայերենում թվակազմությունը ներկայանում է միահեր և երկեր հակադրություններով։ Միաղեր են թվի քերականական այն արտահայտությունները, երբ եզակին չունի համապատասխան հոգնակի կամ ստացական կազմավորումներ. օր. անհոգնականները. միաղեր են և այն դեպքերը, երբ հոգնակին չունի եզակի համապատասխանություններ կամ ստացական հոգնակիի ձևեր չի կազմում. օր. անեզականները։ Երկեղը կազմողները նրանք են, որոնք ներկայանում են եզակի—հոգնակի կամ եզակի—ստացական հոգնակի հակադրություններով. օր. հայր—հայրեր, որդի—որդիներ, կամ՝ բախտ—բախտներդ, կուրծք—կուրծքներդ, ուշք—ուշքներդ, քունդ—քուններդ։

Միահեր և երկեր կազմավորումները իմաստաբանական պայմանավորվածություն ունեն, վճռական դեր ունեն բառի լեքսիկական իմաստավորումներում։ Միահեր բուն անհոգնականները արտահայտում են հավաքական, վերացական, դանդվածայնության, անհատականության այնպիսի հասկացություններ, որոնք չեն կարող ստացական հարաբերությամբ վերցվել (բացի նրանից, որ հոգնակի էլ չունեն). երկեղը հակադրություն կազմողները սովորաբար թվարկվող առարկաների հասկացություն են արտահայտում և հակադրությունը եզակի ու հոգնակի եղերի միջև է. այն դեպքերում, երբ ստացական հոգնակին կազմվում է անհոգնականից, բացառվում է բուն հոգնակին, նույնպես ունենք երկեղը հակադրություն՝ եզակի—ստացական հոգնակի։

Մեր այս բոլոր դիտարկումները կատարեցինք գոյականների վրա և տեսանք, որ ստացական հոգնակիի ձևեր ունեն որոշակի բառիմաստով միավանկները։ Երկվանկ-բազմավանկներն ընդհանրապես ստացական հոգնակիի ձևեր չեն կազմում. սեղաններս կազմավորումը «իմ սեղանները» իմաստավորման համար է, միևնույն ներ–ս կազապարով հնարավոր չէ արտահայտել նաև «մեր սեղանները» իմաստավորումը։ Այստեղ բացառություն կարող են կազմել ստացական իմաստով այն կազմավորումները, որոնք սերում են երկվանկ կամ բազմավանկ հիմքից, և որոնց ցույց տված

առարկայի անունը թեև հոգնակի է դրված, բայց որևէ անձի հարաբերությամբ միայն մեկ (եզական) կարող է լինել։ Ահա թե ինչու գլուխներս, երեսներս ձևերը և՛ բուն հոգնակիության, և՛ ստացական հոգնակու իմաստ կարող են ունենալ, ավելին՝ այսպիսի դեպքերում կիրառական արժեք ունի հենց ստացական հոգնակի իմաստավորումը. այսինքն՝ «մեր գլուխը կամ մեր յուրաքանչյուրիս գլուխը, մեր երեսը կամ մեր յուրաքանչյուրիս երեսը». այս ձևերին խորթ են «իմ երեսները» կամ «իմ գլուխները» նշանակությունները։ Մինչդեռ այլ բառիմաստ ունեցող երկվանկ-բազմավանկների ստացական հոդով կաուցաձևերին հենց բնորոշ են վերջին տիպի իմաստավորումները. օր. մատիտներս «իմ մատիտները» են։

Իսկ եթե երկվանկ-բազմավանկ բառը բաղադրյալ է և ունի միավանկ վերջնաբաղադրիչ, որը բարդությունից դուրս անկախ գործածությամբ կարող է ստացական ձև կազմել, ապա բաղադրության մեջ էլ նա պահպանում է կազմավորման իր վարքագիծը. հաց—հացներս, նաև՝ աղուհաց—աղուհացներս, հմմտ. ախուվախներս, անցուդարձներս, ուշքումիտքներս, ելումուտներս, գնալգալներս։

Բայերից անորոշ դերբայը միայն ունի ստացական հոգնակիականազմություն՝ անկախ վանկաքանակությունից. խոսելներս, գրելներս, գնալներս, գալներս, և այլն։

Դ) Ոչ-ճամակարգային և հնատիպ հոգնակիականազմություններ։ Ինչպես նշել ենք, հնատիպ են այն զուգորդումները, որոնց մեջ չի գործում վանկաքանակության միտումը, սկզբունքը, և որոնք զուգորդվում են հայերենի զարգացման նախորդ էտապներին ու հին հայերենին բնորոշ հոգնակերտների կամ նրանց ձևաբանորեն վերականգնվածների հետ. օր. մարդ-իկ, կան-այք, Գրիգոր-ենք, Վարդան-անք, Վեդ-ունք, պապ-ոնք և այլն։ Այս հնատիպ զուգորդումների մեջ կարելի է առանձնացնել ենթատիպեր.

Ա) Զուգորդումներ, որոնք պայմանավորված են ձևույթային հիմքերի առկայությամբ. այսպես՝ իկ հոգնակերտը զուգորդվում է միայն մարդ բառի (ձևույթի) հետ, իսկ այք հոգնակերտը՝ միայն կին բառի (ձևույթի) հետ, իճ ունենք միայն աճն եզակիի հետ. պարոնայք և տիկնայք արդեն հնաբանություն են։

Բ) Զուգորդումներ, որոնք բառա-քերականական ուրույն հատկություններով են մեկնաբանվում։ Սրանք մեծ մասամբ եզակի հարաբերակից եզրեր չունեցող աննեզականներ են՝ անձնանուններից կազմված հավաքականներ։ Արտահայտում են գերդաստանի,

արենակցական-աղգակցական հատկանիշով կապված անձանց հավաքական խմբավորում. կազմվում են **եք, աք, ուք, ոք** *մասնիկներով։*

Գ) Զուգորդումներ, որոնք պայմանավորված են վերջնահանգի (հիմքավերջի) հնչյունաբանական բնույթով։ Այսպես ի հանգող որոշ բառեր (հիմքեր) զուգորդվում են նաև f հոգնակերտի հետ. **անգլիացիf, գյուղացիf** *և այլն։ Այս զուգորդումները հատկապես բնորոշ են այն հիմքերի հետ, որոնք ցի վերջնահանգն ունեն. օր. լեռ—լեռնցի>լեռնցի-ք, սար—սարեցի>սարեցի-ք, տուն—տնեցի>տնեցի-ք։*

Ժամանակակից գրական հայերենում ոչ-համակարգային և հնատիպ որոշ կազմավորումների մեջ նկատելի է համակարգային տիպոլոգիայի ներթափանցում։ Այսպես, օրինակ, վերջնահանգով բնութագրվող հնատիպ զուգորդումները այժմ գերազանցապես հետևում են **հիմf+ներ** *կաղապարին.* **լեռնցիներ, գյուղացիներ, անգլիացիներ, ուղիներ** *ավելի սովորական են, քան* **լեռնցիf, գյուղացիf, անգլիացիf, ուղիf** *ձևերը։ Վերջիններս կարելի է արդեն լիովին հնաբանություն համարել, թեև խոսակցական լեզվաոարբերակում և առանձին ոճերում դեռևս հանդիպում ենք այդպիսի հոգնակիների։ Թերևս մի բնորոշ օրինակով կարելի է այդ ավելի լավ ցուցադրել։ Գրական լեզվում միտում է նկատվում առավել նախընտրելի ձև համարելու* **լեռնցի** *ձևը, քան՝* **սարեցի**։ *Մինչդեռ վերջինս ավելի նախընտրելի է խոսակցական տարբերակում, նվ ահա մենք հաճախ լսում ենք* **լեռնցիներ** *ձևը, բայց՝* **սարեցիf**։

Վերը կատարված դիտարկումները միաժամանակ ցույց են տալիս, որ վերջնահանգով բնութագրվող հիմքատարբերակը մեռնող կատեգորիա է. **հիմf+f** *կաղապարը արդի գրական հայերենում այլևս կենսունակություն չունի։ Սա ձայնավորահանգ հիմքատարբերակի համատարած վերացման վերջին արտահայտությունն է արևելահայ գրական լեզվում*[73]։

---

[73] *Արևելահայ գրական լեզվի անցած էտապի համար այսպիսի պնդումը այնքան էլ հարմար չի լինի։ Նշված շրջանում առկա են դեպքեր, երբ բազաձայնահանգ բառերն էլ ունեն f-ով հոգնակի։ Այս հատկապես վերաբերում է ուրչյուն հանգող ածանցականներին։ Ահա թե մի առիթով ինչ է գրել Ստ. Նազարյանը այդ կարգի բառերի հոգնակիակազմության մասին. «Դուք հարցանում եք, թե ինչպես պիտո էր մեզ վարվիլ բյուն վերջավորությամբ գոյականների կիրառության մեջ։ Ես գրեցա հոգնակի ուղղականքը գործ եմ դնում և բյուիմ և բյուններ ըստ տեղվույն. թեպետ բյուններ բուն ժողովրդական է, բայց և բյուիմ ոչ թե միայն բարևհնչուն, այլ շատ տեղ հարկավոր, որովհետև բյունները շատ*

Այսպես պետք է գնահատել նաև ձևույթային անձ- հիմքով ևղած զուգորդումը։ Այս հիմքն այժմ ավելի շատ գործածվում է **եր** *հոգնակերտի հետ (անձ-եր), քան ինֆ-ի հետ. անձինք հոգնակին իսկատիպ, գրքային ու պաշտոնական է։*

Ինչպես նկատելի է, ձևույթային յուրաքանչյուր հիմք զուգորդվում է առանձին հոգնակերտի հետ. իկ՝ մարդիկ, այծ՝ կանայք, ինֆ՝ անձինք։ Եզակի ձևի համեմատությամբ սրանցից կինհիմքը հոգնակիակազմության մեջ ձևա-հնչույթաբանական վերակազմավորմամբ ստանում է **կան-** *տեսքը, որը և պահպանվում է թեք հոլովաձևերում. անձ- հոգնակիակազմ հիմքն ընդհանուր է և՛ ուղիղ (անձ-ինք), և՛ թեք հոլովաձևերում (անձ-անց)։ Այդպես չէ սակայն մարդ- հիմքը։ Թեք հոլովաձևերում այն վերակազմավորվում է հենց իկ հոգնակերտով, իբրև մարդկ-, որին ավելանում է անց վերջավորությունը (մարդ-կան>մարդ-կան-ց>մարդկ-անց* ***էվոլյուցիայով)։ Ստորև ցուցադրում ենք հնատիպ հոգնակիակազմությունները՝ յուրաքանչյուրը հարացույցի մեջ (հոգնակի ուղիղ և թեք հոլովաձևերում).***

Ուղղ.-հայց.	*կան-այք*	*մարդ-իկ*	*անձ-ինք*	*(մեր-ոնք)*
Սեռ.-տր.	*կան-անց*	*մարդկ-անց*	*անձ-անց*	*(մեր-ոնց)*
Բաց.	*կանանց-ից*	*մարդկանց-ից*	*(անձանց-ից)*	*(մերոնց-ից)*
Գործ.	*կանանց-ով*	*մարդկանց-ով*	*(անձանց-ով)*	*(մերոնց-ով)*

Ուղղ.-հայց.	*սարեցի-ք*	*Հակոբ-ենք*	*պապ-ոնք*
Սեռ.-տր.	*սարեց-ոց*	*Հակոբ-ենց*	*պապ-ոնց*
Բաց.	—	*(Հակոբենց-ից)*	*(պապոնց-ից)*
Գործ.	—	*(Հակոբենց-ով)*	*(պապոնց-ով)*

Այս հարացուցային շարքերից երևում է, որ թեք հոլովաձևերում հոգնակի կազմավորումներն այս կամ այն չափով սահմա-

---

տոհղ են։ Բյուննեի բոլոր արժանավորությունը իմ աչքում այն է, որ չեն կ·րծրացած կրիտաու, այլ կարելի է զգոսա թեքել, այսինքն հոլովել, թեպետ և ա դպիսի դիպվածներում ավելի լավ էր, եզակի սեռականին միտ դնելով, ասել **բյուննեի** *(՞—Հ. Պ.) փոխանակ* **բյուններ**, *որ շատ սիրում են հաշտարխանցիք, սեռական հոգն. յանց դժվար է թույլ տալ... մեր բացառականները—քանի որ աշխարհաբարում չհնվում են առանց ի կամ յ հոխորդի, լոկ ից կամ ուց վերջավորությամբ, հարմարվում են միշտ սեռականին, արի դու* **բյանց** *տես. հոգնականից չինիր մի բացառական* **բյանցից**, *որ ամենևին անառանելի է։ Բայց եթե* **բյանց** *վերջավորությունը գործ ածվի իբրև մի առանձին ձև առանց հարակցության բացառականի հետ, այնուհետև դա դուրս է գալիս սիստեմայի միջից». (ՄՆ, ն. 450)։*

նափակված են. բոլորն էլ ունեն սեռ.-տրական ձևեր, որովհետև անձ նշանակող գոյականներ են, դուրկ են ներգոյական հոլովից. մնացած թևք ձևերն ունեն միայն կին և մարդ բառերը և մերոնք տիպի դերանվանական գոյականները. Թևք ձևերում առկա են նաև ձևաբանական ուրույն վերակազմավորումներ. Սեռ.-տրականում վերջնահանգ ի ունեցողները կորցնում են այդ հանգը՝ սաթեցի-ք, սարեց-ոց. մարդ- հիմքը ներկայանում է վերակազմավորված մարդկ- տարբերակով (գրաբարում եղել է մարդկան. միջին գրականից սկսած դարգանում է մարդկանց ձևը). Բոլոր թևք հոլովաձևերում ունենք հոգնակի ուղղականից տարբեր հոլնակերտ, ավելի հիշատ հոգնակերտ-հոլովակերտ՝ ի վերջնահանգն ունեցողների բացառական ու գործիական ֆունկցիաները իրենց վրա են վերցնում համակարգային համարժեք ձևերը՝ սաթեցիներից. սարեցիներով: Մնացած դեպքերում նույն ֆունկցիաները արտահայտում են սեռ.-տրական ձևի և օժանդակ բառի միջոցով. Նշված բոլոր կազմավորումներում առկա են հին հոգնակերտներ. այդ թվում ք և ֆ-ով ու երբեմնի վերջնահանգով վերակազմավորված ու նոր մասնիկի վերածված բաղադրություններ. Թևք ձևերում իրև նման վերակազմավորումների տարր հանդես է գալիս հին հայերենի ց հոգնակերտը.

Այն բոլոր դեպքերում, երբ գործիականն ու բացառականն ունեն համադրական ձևեր, սեռական-տրականի անց վերջավորությունը (հոլովակերտ-հոգնակերտ) զրկվում է իր հոլովակերտ ֆունկցիայից և միայն հոգնակերտի արժեքով դառնում է հոլովակազմ հիմքի բաղադրիչ (կան-անց>կանանց-ից, կանանց-ով). Այսինքն՝ հոգնակի սեռ.-տրական հոլովաձևը բացառական և գործիական կազմավորումներում դառնում է հոլովահիմք, որը և զուգորդվում է համակարգային բացառականակերտ և գործիականակերտ վերջավորությունների հետ. Այս միաժամանակ նշանակում է, թե ուղղականում և սեռ.-տրականում դրանց հոգնակիակազմությունը և հոլովակազմությունը համընկնում են, իսկ բացառականում և գործիականում չեն համընկնում, խառը տիպոլոգիա ունեն.

Դժվար չէ նկատել, որ հնատիպ ու առհասարակ ոչ-համակարգային հոգնակիակազմությունը որոշիչ գործոն չէ ժամանակակից գրական հայերենի թվակազմության մեջ. մեր գրական լեզուն հասել է միատիպ կաղապարների հաստատման և ներկայանում է կառուցվածքային «բարձր» մակարդակով.

b) Բազմաձևություններ և շեղումներ: *Այս խնդրի կապակցությամբ անհրաժեշտ ենք գտնում մի փոքրիկ պարզաբանում տալ: Առհասարակ բազմաձևությունները (երկձևությունները) քննելիս պետք է ելնել լեզվական տվյալ վիճակի ընձեռնած փաստերից: Թեպետ ամբողջ հայերենի հարաբերությամբ ժամանակակից գրական հայերենը մի առանձին էտապ (վիճակ) է, բայց վերջինս իր հերթին ներկայանում է զարգացման ուրույն էտապներով: Այս տեսանկյունից եղիա Կարնեցու կամ Զաքարիա Ագուլեցու աշխարհաբարը նույնը չէ, ինչ Աբովյանի կամ Նալբանդյանի աշխարհաբարը, իսկ Րաֆֆու լեզուն նկատելիորեն անցյալ է արդի լեզվավիճակի համեմատությամբ:*

Բնական է, որ այս տարբերությունները չեն ենթադրում սիստեմային անցումներ, այլ միայն ու միայն միևնույն սիստեմի ներքին կատարելագործում: Այնուամենայնիվ Նալբանդյանի կամ Րաֆֆու մասնակիորեն գործածած մարդեր հոգնակին չենք կարող վերցնել այժմյան մարդիկ հաստատուն ու միակ հոգնակերտության հետ և ասել, թե այստեղ առկա է երկձևություն: XIX դարի երկրորդ կեսին գրականության մեջ գործածական էին մարդիկ, մարդեր, մարդիկներ. սա արդեն տվյալ շրջանի համար բազմաձևություն է: Մենք այժմ անձ բառի հոգնակին ունենք երկու ձևով՝ **անձեր** *և* **անձինք**, *որ նույնպես երկձևություն է. երկուսն էլ կիրառական են արդի լեզվավիճակում, թեև տարբեր լեզվառճերում:*

Դժվար է պատկերացնել մի լեզվավիճակ, որը երկձևություն-բազմաձևություն չունենա. այդպիսի կատարելության դեռ ոչ մի լեզու չի հասել: Մեր արդի գրական հայերենն էլ, չնայած միօրինականացման ուժեղ միտումին, թվակազմության մեջ ևս ունի տարաձևություններ: Այդ արտահայտվում է, օրինակ, համակարգային կաղապարի ներթափանցումով ոչ-համակարգային կառույցները, սովորական ձևերին զուգահեռ հնաբանությունների գործածությամբ, հնչյունափոխ և անհնչյունափոխ հիմքակազմության փոխանցումներով, բարդության ուրույն իմաստավորման հետ կապված՝ եր կամ ներ մասնիկների փոխարինումով և այլն: Շարադրանքի տարբեր հատվածներում, առանձին առիթներով մենք ցուցադրել ենք համապատասխան օրինակներ, ուստի այստեղ բավարարվում ենք միայն վերոհիշյալ պարզաբանումով:

ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

ՀՈԳՆԱԿԵՐՏ ՄԱՍՆԻԿՆԵՐ

Ընդհանուր նիմումներ։ Հոգնակերտ մասնիկների բնութագրությունը. ա) ծագումը և տարածվածությունը հայերենի տարբեր վիճակներում. բ) համակարգային թե՞ ոչ-համակարգային հոգնակիակազմության տարր է. գ) ձևաբանական կազմով պարզ է, թե՞ բաղադրյալ. եթե բաղադրյալ է, ապա զուգորդման (սերտաճման) ինչ հաջորդականություն է առկա. դ) հոգնակերտը ի՞նչ տարբերակներով է դրսևորվում ոսպիղ և թեք հոլովաձևերում. ե) մենիմաստ է, թե՞ կրկնիմաստ կամ բազմիմաստ. զ) ի՞նչ կարգի հիմքերի հետ է զուգորդվում. գործածության դիրքերը. է) տվյալ լեզվավիճակում կամ հետագայում բառակազմական՝ ածանցական նշանակությամբ հանդես է գալիս, թե՝ ոչ. բ) հետագայում ունեցած ձևաբանական սերտաճումները և հնչյունական տարաճումները. թ) տարբերակների հնչյունական ու ձևաբանական պայմանավորվածությունը. ժ) թվային ո՛ր ենթակարգի ցուցիչ է (հոգնակերտ, հավաքականակերտ, երկակիակերտ են)։

Հոգնակերտներ կամ հոգնակերտ մասնիկներ կոչվում են այն երկրորդական ձևույթները, որոնք զուգորդվելով հոգնակիակազմ հիմքի հետ՝ արտահայտում են մեկի և մեկից ավելինի քանակային (թվակարգային) ասպեկտի երկրորդ եզրը։ Սակայն, իհարկե, բազմության (մեկից ավելինի) գաղափարի հետ կապված ամեն մասնիկավորում հոգնակիակազմություն չէ։ Այստեղ վճռական նշանակություն ունի բառույթի լեքսիկական և քերականական իմաստավորումների ամբողջ կոմպլեքսը (բառի քերականական վարքագիծն առհասարակ)։

Այսպես, կան հավաքականակերտ մասնիկներ, որոնք թեև արտահայտում են բազմության գաղափար, բայց եզակի բառածևի տարր են, եզականաձև բառ են կերտում. օր. բանջար-եղեն, ուսա-

նող-ութ֊յուն, թավ-ուտ, տանձ-ուտ են։ Այստեղ բազմութ֊յան գա-ղափարը տրվում է իբրև լեքսիկական իմաստ, իբրև բառիմաստա-յին կարգ, որ չի առնված մեկի և մեկից ավելինի քերականական ասպեկտի մեջ (հակադրութ֊յան մեջ)։ Ուրեմն պետք է տարբերել մասնիկների երկու խումբ՝ սովորական հավաքականակերտ մաս-նիկներ և հոգնակերտ֊հավաքականակերտ մասնիկներ։ Մենք ու-սումնասիրել ենք երկրորդ խմբի մասնիկները, որոնք ոչ միայն հոգնակերտ են, այլև նրանցով կազմված հոգնակի բառաձևերը հավաքական նշանակութ֊յուն ունեն։

Բացառված չէ նաև այնպիսի մասնիկների գոյութ֊յունը, որոնք հոգնակերտ են, հավաքականակերտ, որոնցով միայն անեզական-ներ են կազմվում։ Սրանք անեզականակերտ մասնիկներ են (ան-եզականը կարող է իմաստով հավաքական լինել կամ եզակի առարկայի, հասկացութ֊յան գաղափար արտահայտել). օր. մեր-ոնի, Գրիգոր֊ենք։

Հոգնակերտները ունեն իմաստաբանական այլ կողմեր ևս։ Կան մասնիկներ, որոնք մենիմաստ են. բնականաբար սրանք միայն հոգնակերտ են. թվակարգային ցուցիչ են. օրինակ՝ ծառ-եր-ի-ն (ծառերին) բառաձևում եր-ը հենց այդպիսին է։ Կան մաս-նիկներ, որոնք կրկնիմաստ կամ բազմիմաստ են, սրանք, բացի հոգնակերտի ֆունկցիայից, համատեղում են նաև քերականական այլ իմաստներ։ Սա հատկապես բնորոշ է թեքական լեզուներին, ըստ որում և մեր գրաբարին. օրինակ՝ հոգնակի ուղղականի ք֊ն, սեռական-տրականի ց֊ն և հայցականի ս֊ն։ Այսպիսի մասնիկներ կան նաև եռգրաբարյան հայերենի ոչ-համակարգային, հնատիպ կառուցվածքներում[1]։ Սրանք հոգնակերտ֊հոլովակերտ են, ի տար-բերութ֊յուն մենիմաստների, որոնք միայն հոգնակերտ են։ Կրկնի-մաստ են նաև այն մասնիկները, որոնք կարող են արտահայտել հավաքական բազմութ֊յուն և այդ հավաքականութ֊յունը, բազմու-թ֊յունը ներկայացնող վայրը. համմ. վիրք «վրացիներ» և «վրաս-տան»։ Եր հոգնակերտը սովորաբար մենիմաստ է, բայց որոշ բար-բառներում կարող է նման երանգ տալ բառաձևին. օր. Ղրբ. բրբ. թօրքերը=«թուրքեր» և «թուրքերի ովկյալ բազմութ֊յան վայրը»։

Բազմիմաստութ֊յունը կարող է կապված լինել ֆունկցիոնալ այլևայլ կիրառութ֊յունների հետ. օր. արևելահայ դրականում՝ սիրտներս=մեր սրտերը (սիրտը), հետներս=մեզ հետ, ինքներս=

---

[1] *Այս երևույթը հատուկ է այլ լեզուների ևս, ընդ որում և ցեզակից հնդեվ-րոպական լեզուներին. համմ.* AM, B, 207։

մենք (էմֆատիկ նշանակությամբ), գրելներս=մեր գրելը (գործողի քանակային հատկանիշ), սեղաններ=մեկից ավելի սեղան։

Տարբեր հոգնակերտներ զուգորդվելով միևնույն հիմքի հետ կարող են տարբեր նշանակություններ տալ բառաձևին. օրինակ՝ Ղարաբաղի բարբառում փեղ «փայտ» բառից երկու հոգնակի ունենք փեղէր և փեղվաճ. էր մասնիկը սովորական հոգնակերտի իմաստ ունի՝ «մեկից ավելին» նշանակությամբ. իսկ վաճ մասնիկը հոգնակերտ-հավաքականակերտ է՝ հավաքական բաղմության գաղափարով։ Ա. Այտընյանը արևմտահայերենից բերում է շատ բնորոշ օրինակներ. աչուրներ «աչքեր», բայց՝ աչքեր նշանակում է «ջրի աչքեր». այսպես և՝ ոտուրներ «ոտքեր»—ոտքեր «ոտանավորի ոտքեր», մատուրներ «մատներ»—մատներ «ճաղի մատներ» (ԱԱ, ՔՔ, 14)։ Սրանք տարիմաստ հոգնակիներ են։

Ձևական՝ կառուցվածքային հատկություններով մասնիկները լինում են պարզ, բաղադրյալ։ Պարզ մասնիկի ձևաբանական (ձևույթաբանական) կազմում չկան բաղադրիչ տարրեր։ Մինչդեռ բաղադրյալ մասնիկը այդպիսի տարրերի ամբողջություն, միասնություն է։ Սակայն բաղադրյալ ասելով կարելի է հասկանալ նաև մասնիկի ստուգաբանական կազմը։ Այսպես, արդի հայերենում ներ պարզ հոգնակերտ է, բայց կարծում են, որ նա ստուգաբանական երկու բաղադրիչ տարրեր ունի՝ նի և եր (նի-եր>ներ)։ Համամաժամանակյա (սինխրոնիկ) կտրվածքով տվյալ հոգնակերտը պարզ է, թե բաղադրյալ, որոշվում է անկախ մասնիկի ստուգաբանական տարրերի առկայությունից. հակառակ դեպքում որոշման չափանիշը արժեքազրկվում է։ Այլ մասնիկը ստուգաբանորեն բաղադրյալ է. հին հայերենում (գրաբար) այ տարրը, իբրև հիմքակազմ բաղադրիչ, դեռ զիտակցվում էր, ուստի այն բաղադրյալ էր այդ շրջանում։ Նոր հայերենում այդ հոգնակերտը (կան-այ) արդեն պարզ մասնիկ է. մինչդեռ արևմտահայ գրական լեզվի աշվրներ կազմության մեջ վրներ բաղադրյալ հոգնակերտ է, որովհետև այլ կառուցաձևերում անկախաբար ֆունկցիավորում են և՛ վի-ն, և՛ ներ-ը։

Այսպիսով՝ պարզ է այն մասնիկը, որը լեզվական տվյալ վիճակում (էտապում) իբրև մեկ ամբողջական, չտարրալուծվող միավոր է զիտակցվում՝ առանց բաղադրական տարրերի։ Բաղադրյալ կոչվում է այն հոգնակերտը, որը լեզվական տվյալ վիճակում (էտապում) զիտակցվում է իբրև տարրեր տարրերից բաղադրված, բայց միասնաբար ֆունկցիավորվող միավոր։ Բաղադրության յուրաքանչյուր տարր կարող է հանդես գալ այլ կառուցաձևերում։

Բաղադրյալների շարքը կարելի է դասել նաև այն մասնիկները, որոնք ներկայանում են իբրև հոգնակերտ մասնիկի և երբեմնի հիմքային տարրի ձևաբանական սերտաճում. օր. ան–f, են–f, ոյ–f, ուն–f, ան–ց, են–ց, ուն–ց, ոն–ց:

Բաղադրյալներ են նաև այն մասնիկները, որոնք երկու մասնիկների զուգորդում են ներկայացնում, ըստ որում բաղադրիչ մասնիկները ֆունկցիայով անկախ են (կամ գրեթե անկախ), համարժեք չեն. որոնք կարելի է կոչել զույգ հոգնակերտներ: Այսպես՝ արևմտահայ գրական լեզվում երի *բաղադրյալ է՝* եր–ի. եր-ը *բուն հոգնակերտն է, իսկ* ի-ն *հոգնակի ստացական դերանվանը (կամ հոգնակի կապի խնդրին) փոխարինող ֆունկցիա ունի. հաց-եր-ի-ս «մեր հացը»:*

Զույգ հոգնակերտների շարքը կարելի է դասել նաև նրանք, որոնք տվյալ լեզվավիճակում ֆունկցիավորում են և՛ միասնաբար, և՛ անկախաբար, այսպես, օրինակ, տղամ *բառաձևում հոգնակերտը* f-ն *է, իսկ* տղամներ *բառաձևում՝* f–ներ (fներ) *բազադրութիւնը: Բայց առկա է նաև* տղա–ներ *նույնարժեք հոգնակիակազմութիւն: Ուրեմն* f *և* ներ *մասնիկները զուգահեռաբար էլ են գործում, միասին՝ բաղադրված էլ: Սակայն* fներ *զույգ հոգնակերտ է ամենից առաջ այն հատկանիշով, որ* տղամներ *ձևի մեջ ըստ էութիւն* f-ն *և* ներ-ը *ֆունկցիոնալ ինչ-որ անհամարժեքութիւն ունեն: Այսպիսի դեպքում նախորդ տարրը իր վրա է վերցնում նաև հիմքակազմիչի երանգ, ստեղծելով հոգնակիակազմութեան երկրորդային հիմք. տղա.>տղամ>տղամ–ներ: Ստացվում են՝ առաջնային հիմք՝* տղա– *և երկրորդային հիմք՝* տղամ–: *Այնուամենայնիվ* f-ի *ֆունկցիոնալ այս երանգավորումը նրան չի դրկում զույգ հոգնակերտի բաղադրիչ լինելուց: Նվ չնայած թեք հոլովաձևերում էլ «հիմքայնութիւնը» նկատելի է (տղաքներ—սեռ.-տր. հնարավոր է՝ տղաքների||տղերանց), այնուամենայնիվ եղակի—հոգնակի հարաբերակցութիւնը ներկայացնող կաղապարավորման մեջ և՛* տղամ, *և՛* տղամներ *գրավում են երկրորդ եզրը. ոչ թե* տղամ—տղամներ, *այլ՝* տղա—տղամ||տղամներ:

Այսպիսով, բաղադրյալ են՝ ա) երբեմնի անկախ, ինքնուրույն մասնիկների ձևաբանական սերտաճումով գոյացած հոգնակերտները. անի–f>անիf, ար–f>արf, եր–f>երf, վի–f>վիf. *բ) մի կողմից՝ հոգնակերտի, մյուս կողմից՝ երբեմնի հիմքային տարրի ձևաբանական սերտաճումով գոյացած մասնիկը.* այ–f>այf, ան–ց>անց *են, գ) զույգ հոգնակերտները ստացական և խնդրառական կառուցաձևերում, դ) զույգ հոգնակերտները՝ բաղադրիչ-*

ներից մեկի ֆունկցիոնալ տեղաշարժով դեպի հիմքակազմություն. համմտ. նաև՝ կանց. մարդ-իկ>մարդ(կ)-անց։

Այս ամենից երևում է, որ բաղադրյալ հասկացողություններ հնարավոր է և՛ դիախրոնիկ, և՛ սինխրոնիկ պլաններում, սակայն առաջին երկու տիպի դրսևորումները միայն պատմական հասկացություններ են (ստուգաբանական բմբռնում). սինխրոնիկ պլանում կարող են լինել միայն զույգ հոգնակերտներ։ Եթե այդ այդպես է, ապա առաջին երկու տիպի բաղադրյալ մասնիկները սինխրոնիկ ընկալումներում դիտվում են իբրև պարզ մասնիկներ[2]։

Այժմ մի քանի խոսք հոգնակերտի և նրա տարբերակների մասին։

Միևնույն գոյական բառույթը ներկայանում է իբրև հարացուցային անդամների դաս։ Հոգնակի հարացույցի յուրաքանչյուր անդամի (հոլովաձևի) կազմում առկա է մեկ հոգնակերտ (կամ հոգնակերտ-հոլովակերտ)։ Այս հոգնակերտները միմյանց հետ ունեն ձևաբանական և հնչյունաբանական առնչություններ, ընդհանրություններ և տարբերություններ։ Եվ քանի որ այդ մասնիկները մեկ բառույթի հետ են կապված, ուստի դրանք հանդես են գալիս իբրև մեկ հոգնակերտ ձևույթի (մասնիկի) տարբերակներ. Հայերենում իբրև այս ընդհանրական հոգնակերտի տիպար նպատակահարմար է վերցնել ուղղականի հոգնակերտը, քանի ձևերի մասնիկը (մասնիկները) համարելով տարբերակներ (քանի, իհարկե, ըստ էության ուղղականի մասնիկն էլ տարբերակ է միևնույն բառույթի ամբողջ հարացույցի ոլորտում)։ Անկասկած տարբերակներ կարող են լինել նաև հարացույցի միևնույն անդամի (հոլովաձևի) հոգնակիհակազմության մեջ։ Եվ ահա հաշվի առնելով դրանց հնչյունաբանական, ձևաբանական հատկությունները՝ զանազանում ենք չորս կարգի հոգնակերտ-տարբերակներ. ա) հնչյունաբանական պայմանավորվածություն ունեցող՝ միևնույն հոլովաձևում. բ) հնչյունաբանական պայմանավորվածություն ունեցող՝ հարացուցային տարբեր ձևերում. գ) ձևաբանական պայմանավորվածություն ունեցող միևնույն հոլովաձևում, դ) ձևաբանական պայմանավորվածություն ունեցող՝ հարացուցային տարբեր ձևերում։

Միևնույն հոլովաձևում, հարացուցային միևնույն անդամի կազմում հնչյունաբանական պայմանավորվածություն *ունեն այն*

---

[2] *Քանի որ հայերենի հոգնակերտները մենք քննում ենք պատմական հայեցակետով, ասյա բաղադրյալ հասկացողության մեջ ունենք նաև ստուգաբանական բմբռնումը։*

մասնիկները, որոնք ֆունկցիայով համարժեք են, սակայն հնչյունաբանական որևէ գործոնով պայմանավորված՝ գործածության տարբեր դիրքեր ունեն։ Այսպիսին են՝ օրինակ, եր և եր մասնիկները արևելահայ գրական լեզվում, որոնք, վանկաքանակության գործոնով պայմանավորված, տարբեր հիմքերի հետ են գուգորդվում, եր–ը՝ միավանկ հիմքերի հետ, եր–ը մեկից ավելի վանկանի հիմքերի հետ։

Հնչյունաբանական տարբերակները պայմանավորված են լինում նաև շեշտի հետ կապված հնչյունափոխությամբ, ձայնավորների ներդաշնակության օրենքով, քմայնացումով, ապաշնչեղացումով և այլ գործոններով։

Միևնույն ոլորվածներում, հարացուցային միևնույն անդամի կազմում ձևաբանական (ձևույթային) պայմանավորվածություն ունեն այն մասնիկները, որոնք ֆունկցիայով համարժեք են (կամ գրեթե համարժեք են), սակայն ձևույթային գործոնով պայմանավորված՝ գործածության ուրույն դիրք ունեն. այսպես՝ արդի գրական հայերենում մարդ բառի հետ գուգորդվում է միայն իկ մասնիկը, կին բառի հետ՝ այֆ մասնիկը, ըստ որում՝ իկ-ը և այֆ-ը չեն կարող միևնույն դիրքում հանդես գալ, սրանց դիրքում չեն կարող հանդես գալ նաև եր, եր մասնիկները։ Ուրեմն իկ-ը և այֆ-ը ուղղականի հոգնակերտ ձևույթի (մասնիկի) ձևաբանորեն պայմանավորված տարբերակներ են։

Հարացուցային տարբեր ձևերում հնչյունաբանական պայմանավորվածություն ունեն այն մասնիկները, որոնք և՛ ուղիղ, և՛ թեք ձևերում ներկայանում են ձևույթային միևնույն կազմով, նույն ֆունկցիայով, սակայն, դիրքով պայմանավորված, սրանց հնչյունական կազմում տեղի է ունենում հնչյունափոխություն։ Օրինակ, աքի—աճ (չաղացանի>չաղաց-աճ-ոյ)։ Այստեղ հնարավոր է նաև, որ թեք ձևերի որևէ անդամի մեջ կամ առհասարակ թեք բոլոր ձևերում վերականգնվի երբեմնի հնչյուն. օրինակ՝ իր—էր (սարիր—սարէրու)։ Սրանք հարացուցային-դիրքային տարբերակներ են։

Հարացուցային տարբեր ձևերում ձևաբանական հատկություններով առանձնանում են այն մասնիկները, որոնք կա՛մ ֆունկցիայով նույնն են, ձևույթային կազմով են տարբեր, կա՛մ ձևույթային կազմով նույնն են, ֆունկցիայով են տարբեր. օրինակ. գրաբարի հոգնակի ուղղականում f-ն հոգնակերտ-հոլովակերտի ֆունկցիա ունի, իսկ դործիականում՝ միայն հոգնակերտի (բանե-ք, բանիւ-ք), իսկ ուղղականում, սեռ.-տրականում և հայցականում սովորաբար

բաշխված են՝ f–g–u, որոնք ֆունկցիայով համարժեք են, բայց տարբեր ձևույթներ են։ Սրանք պարզապես հատացուցային տարբերակներ են, այստեղ հնչյունաբանական գործոնները դեր չունեն։ Այսպիսի տարբերակների շարքն ենք դասում նաև այն բաղադրյալ մասնիկները, որոնք հարացուցային տարբեր ձևերում ձևաբանական կազմով լրիվ կամ մասնակիորեն տարբերվում են, օրինակ՝ էրf—էրfաց (տղէրք—տղէրքանց), այf—աճց (կանայք—կանանց)։

Լինում են դեպքեր, երբ միևնույն հիմքը զուգորդվում է տարբեր հոգնակերտների հետ. այսպիսի զուգորդություններում սովորաբար ֆունկցիոնալ նույնություն է պահպանվում։ Տարբերությունը ձևական է։ Օրինակ, Ախարատյան բարբառում կան զույգ ձևեր՝ կճանօց և կճանօճց (աճօց—աճօճց). սրանք ոչ-պարտադիր տարբերակներ են, թեև դրանք սովորաբար գործածության նույն հաճախությունը, հաճախ նաև տարածական միևնույն ոլորտը չեն ունենում. համմտ. Թբիլիսիի բարբառում՝ դիփ-ուն, դիփ-ուճ, դիփ-ուճաճ։

Հայերենում, ինչպես նշել ենք, հոգնակիակազմությունը կատարվում է մասնիկավորմամբ։ Քերականական արտահայտության այս միջոցը իր ուրույն դրսևորումներն ունի հայերենի զարգացման տարբեր էտապներում (վիճակներում)։ Հոգնակերտ մասնիկները հարյուրների են հասնում։ Թվում է, թե սա գնահատման չափանիշ չէ զարգացած լեզվի համար։ Սակայն պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ հայերենի հոգնակերտների մեր նկարագրությունը ոչ թե մեկ լեզվավիճակի է վերաբերում, այլ տարբեր էտապների (վիճակների)։ Մենք ունենք գրական լեզվի զարգացման երեք հիմնական էտապ, երկճյուղ նոր գրական հայերենով. ուրեմն չորս լեզվավիճակ. ունենք քառասունից ավելի բարբառներ, ուրեմն՝ այդքան լեզվավիճակ էլ այստեղ։ Բնականաբար հոգնակերտները այստակառնի թիվ կկազմեն։

Սակայն յուրաքանչյուր լեզվի համաժամանակյա կտրվածքը բնորոշ է սահմանափակ թվով հոգնակերտների առկայությամբ, եթե չհաշվենք ոչ-համակարգային կառուցաձևերում եղած բազմամասնիկայնությունը։ Զարգացող կամ զարգացած գրական լեզուները հայտնի պատճառներով աստիճանաբար լիկվիդացնում են այդ բազմամասնիկայնությունը, թեև այդ պրոցեսը առավել զարգացած լեզուներում էլ դեռևս իր ավարտին չի հասել։ Այդ լիկվիդացումը առավել դանդաղ է կատարվում բարբառներում։ Հայոց գրական լեզվի հին, միջին և նոր էտապներում համակարգային

հոգնակիակազմությունը հենվում է երկու-երեք մասնիկների վրա. գրաբարում ի, ց, ս, միջին գրական հայերենում՝ եր, ին, արևմտահայ գրական աշխարհաբարում և արևելահայ գրական լեզվում՝ եր, ներ։ Այդ այդպես է նաև բարբառներում, սակայն սրանց մեջ ոչ-համակարգային կառուցածևերի հոգնակերտ տարրերը, գրական լեզվի համեմատությամբ, նկատելիորեն շատ են։

Հայերենի հոգնակերտները իրենց ծագումով դերազանցապես հնդեվրոպական ակունքներ ունեն. մեկնաբանվում են նախալեզվի տարրերով, կամ ցեղակից որևէ լեզվից կատարված փոխառությամբ։ Կովկասյան մեկնաբանությունները հավատաք չեն։ Սակայն հնագույն շրջանից եկած պարզ, ոչ բաղադրյալ մասնիկները համեմատաբար շատ քիչ են. մասնիկների բացարձակ գերակշիռ մասը հայերենի հողի վրա կատարված հնչյունաբանական ու ձևաբանական վերակազմավորումների արդյունք է։ Շատ մասնիկներ գրավոր շրջանի սկզբից սահմանաբար դադարում (կամ դադարել) են անկախ գործածվելուց, միայն բաղադրություններում են հանդիպում։ Հայերենում նկատված հարյուրավոր մասնիկները ներկայանում են իրրև հետևյալ տարրերի (հոգնակերտների) բաղադրություններ՝ ա՛ն, ան(ի), եար (եր, ար, օր), եան, իկ, կան, նեար (ներ), ս, ստան, վի, տի, ց, ունի, ք, օտ (ատ)։ Սակայն սրանք հավասար զուգորդելիություն չունեն. ձևաբանական սերտաճումների մեջ ավելի հաճախական տարրեր են ք, ա՛ն, վի, եր, տի մասնիկները. նկատի ունենք նաև սրանց հնչյունական տարաձևումները։

Հնչյունական տարաձևում ասելով հասկանում ենք այն երևույթը, երբ տվյալ մասնիկի տարրեր կարգի հնչյունափոխություններով տարբերակներ են գոյանում միևնույն լեզվավիճակում կամ տարբեր լեզվավիճակներում։ Այսպես, հինհայերենյան և միջին-հայերենյան մասնիկներից ունենք հնչյունական հետևյալ տարաձևումները հետագա հայերենում. իկ>ագ, աք, ըկ, ըք, իգ, իկ՛, եար-ից՝ եր(էր), ըր, ի, իէյ, իէր. իյ, իռ, իր, (որ), ա՛ր, ար, նեար-ից՝ ներ (նէր), նէյր, նիէյ, նիյ, նիր, նօր (նօռ) ևն. ստան-ից՝ սդան, սդ՛ան. սդուն, ստէուն. ստուն. վի-ից՝ վա, վա՛, վը՝, ֆի, տի-ից՝ դա, դա՛, դի ևն. նի-ից՝ նա՛. նա, նէ ևն. ք-ից՝ ք՛, կ, ճյ, յ։

Այս տարաձևումները գործածվում են իրրև անկախ, ինքնուրույն հոգնակերտներ, ունեն որոշակի տարածական ընդգրկումներ, մի քանիսը հանդիպում են միայն բաղադրության մեջ, օրինակ, որ (որ). օր-այ՛ք, ճյ (օր. ճյուեր) և այլն։

Ձևաբանական սերտաճումն այն է, երբ որևէ հոգնակերտ կառուցվածքային դրվածքով կամ արտակառուցվածքային հանգամանքներով (բարբառային կամ այլ ազդեցություններ, խաչավորման երևույթներ) պայմանավորված մթագնում է հոգնակերտի իր ֆունկցիան (իմաստը) և ձուլվում է հիմքային տարրի կամ այլ որևէ հոգնակերտի հետ։ Այսպես, օրինակ, հինհայերենյան f, g մասնիկները հետագայում ունեցան նաև ձևաբանական վերակազմավորումներ հիմքային տարրերի հետ. աճ+f>աճf, այ+f>այf, ա+f>af, եճ+f>եճf, ե+f>եf, ի+f>իf, ոյ+f>ոյf, ոճ+f>ոճf, ո+f>nf եև. հմմտ. նաև՝ այ+g>այg, աճ+g>աճg, ա+g>ag, եճ+g>եճg, ե+g>եg, ի+g>իg, ոճ+g>ոճg, ո+g>ng եև։

Այլ հոգնակերտների հետ բաղադրություն կազմելու հատկություն դրսևորել են գրեթե բոլոր պարզ մասնիկները, սակայն դրանց մեջ ամենից առաջ պետք է նշել f, ապա՝ տի, վի, եր, ներ, ան, ճի մասնիկները։ Մտորև տալիս ենք այդ մասնիկներով բաղադրությունների ցանկեր։ Բաղադրության մեջ հնարավոր է, որ տվյալ մասնիկ հանդես գա իր հնչյունական տարաճումով[3]։

Ք.— աբ, անանք, անդիք, անէնք՝ անէք՝, անէք՝ անբք. անբքնէր, անիք, անիք՝, անհյտեր, աննիք, անք, անք՝, անքներ, աոիք՝, արանք, արանքնէ, արէնք, արէնք՝, արէք՝, արիք՝, արունք, արք, աունք, աք, դանք, դաք, դէք, դինք, դիրք, դիք, դունք, դօնր, եանք, ենք, երայք, երանք, երունք, երք, եք, էհյտար, էհյտէր. էնէք՝, էնիք, (էնք), էրանք, էրտանք, (էրք), էրքանց, էրքնէր, (էք), էք՝, էօնք, ընք, ըրանք, ըրանքէր, ըրէնք՝էր, ըք, իէնք, իհնէրք, իհք, ինք, իրտանք, իրք, իք, իք՝, իքներ, կներ, հյտար, հյտեր, յանք, նաոիք՝, նարիք՝, նանք, նէրք, նէք, նրք, նիյք, նինք, նիք, նիք՝, ոյք, ոնք, ոտիք, որայք, որնք, որ, ոչ'ունք, ստահ՝էր, ստանք, ստանք՝, վանք, վանք՝, վանքնէր, վաք, (վդանք), վէրք, վէք, վըդանք, վըդաք, վըդիք, վըտանք, վըտիք, վը՝ք, վիք, (վտանք), (վտիք), վուէնք, վունք, վօնք, տանք, տաք՝, տանքէր, տանքներ, տաք, տեք, տրքնէ, տինք, տիք, տիքներ, տրանք՝, տունք, բանիք՝, բանք, բանք՝, բանքեր, բունք, (ուանք), (ուբտանք), ունանք, ունաք, ունք, ունքէր, ուք, քանի, քանիք, քաոիք՝, քդիր, ք՝դիր, քեր (քէր), քերք, քիր, քհտեր, քներ, քնիր, ք՝տեր, քս, օնէնք՝,

---

[3] Հնարավոր է նաև, որ իրար զուգակցվեն երկու բաղադրյալ հոգնակերտներ՝ բաղադրված միևնույն հոգնակերտով. արբմ-առանճ և արբմ-բրանճներ (<եր+անճ|+եր)։

օնէք՛, օնիք՛, օնուք՛, օնք, օտանք, օտաք, օտէնք՛, օտէք՛, օտինք՛, օտիք՛, օրայր, օրանք, օրէք, օք։

ԵՐ (ԷՐ).—*անէր, անհյտեր, դէրանց, երայր, երանց, երանք, երաց, երնի, երունք, երք, էհյտեր, (էրանց), (էրանք), (էրաց), (էրնի), էրտանք, էրք, էրքանց, էրքնէր, էրօտ, ըրանքէր, ըրանք՛էր, կէրանց, կէրք, նրվեր, ստահ՛էր, վանհյտեր, վեր, վէրք՛, տանքէր, րանքներ, քեր, քերք, քէրանց, քհտեր, ք՛տեր. արանք, արանքնէ, արաց, արէ, արէնք, արէք, արիք՛, արունք, արք, էհյտար, հյտար, հյտեր, նարէ, նարիք՛, ստար, տար, տեր, որայ, որայս, որայք, որեայ, որեք, ուրնէ, օրայք, ուրնու, օրանք, ուրնու, օրէք, դիրք, իրտանք, իրք, տիր, քդիր, քիր, րան, րանիք՛, րանք, րանքներ, րունք, րրանք, ըրանքէր, ըրէնք՛էր, ըրնէ, ըրնէր, ըրնի։*

ՆԻ (ՆԵՐ).—*անքնէր, անէսներ, աններ, անքներ, էրքնէր, էցներ, ըրնէր, ֆրնէր, իկներ, իկնէրք, իքներ, յներ, ներնի, նէրք, ստանի՛էր, ստներ, վաններ, վանքներ, վրներ, վիներ, տանքներ, տիքներ, քներ, ֆրներ, նըրնէ, նըրնէր, վրնէյ, վրնիր, քնիր։*

ՆԻ.—*անէ, աննի, աննիք, երնի(էրնի), ըրնէ, ըրնի, իրկրնէ, նատիք՛, նարէ նարիք՛, նաք, (ներ), ներնի, նէնի, նէք, նրվեր, նրվի, նրք, նիք, ստաննի, վրնի, տրնի, ուրնէ, ուրնու։*

ԱՆ.—*անանք, անաց, անդա, անդիք, անէ, անէնք՛, անէսներ, անէր, անէք՛, անրք, անրքնէր, անի, անիք, անիք՛, անհյտեր, աններ, աննի, աննիք, անոնց, անոց, անտի, անց, անուց, անք, անքներ, ընուց։*

ՎԻ.—*նրվեր, նրվի, վան, վանհյտեր, վաններ, վանք, վանքներ, վաք, (վդանք), վեր, վէյր, վէրք՛, վէք, վրդա, վրդան, վրդանք, վրդաց, վրդաք, վրդի, վրդիք, վրդօց, վր՝նա, վրներ, վրնէյ, վրնէր, վր՝նր՝, վրնիկ, վրնիր, վրտանք, վրտի, վրտիք, վրտօց, վր՝ք, վի, վիներ, վիք, (վտանք), վուէնք, վուն, վունք, վուց, վօնց, վօնք։*

ՏԻ.—*անհյտեր, անտի, աստաց, աստէ աստիք՛, դան, դանց, դանք, դաց, դաք, դէրանց, դէ՞ն, դէք, դինք, դիրք, դիք, դուն, դանց, դունք, դուց, դօնց, դօնք, դօց, դօուն, դօուց, էհյտար, էհյտեր, էրտանք, իրտանք, հյտար, հյտեր, նատէ, նատիք՛, (ոտի), (ոտիք), ոդ՝ան. ոդանն, ոդ՝ան, ոդ՝անք (ստար), վանհյտեր, վրդա, վրդան, վրդանք, վրդաց, վրդաք, վրդի, վրդիք, վրդօց, վրտանք, վրտի, վրտիք, վրտօց, տան, տանց, տանք, տանքէր, տանքնէր, տար, տաց, տաք, տէր, տեք, տրնի, տրքնէ, տիկ, տինք, տիս, տիր, տիք, տիքներ, տոց, տրանք՛, տունք, տուց, քդիր, քհտեր, ք՛տեր։*

Ինչպես նկատելի է, f հոգնակերտը իր ձևաբանական սեռատեսակներում հիմքային տարրով բազադրված է հետևյալներում՝

այf, աճf, առճf, աf, եճf, եf (էf), էօճf, ըճf, ըf, իէճf, իճf, իf, ոյf, ոճf, ոf, ուճf, ուf, *մնացած դեպքերում նա հանդես է գալիս այլ հոգնակերտով գոյացած բաղադրության կազմում. օր.* **անիf**, **առաճf**, **վէf**, **վըռաճf** *են, Բազադրությունը կարող է գոյանալ նաև երկու արդեն բաղադրյալ հոգնակերտների զուգակցումով (սերտաճումով). սակայն սա հազվադեպ երևույթ է, ավելի հաճախական բաղադրվում են երկու պարզ մասնիկներ, կամ մեկ պարզ մասնիկը մեկ բաղադրյալի հետ: Այս նշանակում է, որ սերտաճումների մեջ ավելի շատ են երկձևույթ կամ եռատարր բաղադրությունները. այսպես,* էր—f>էրf, էրf(<էր+f)+ներ>էրfներ, տի+f>տիf. տիf (<տի—f)+ներ>տիfներ: *Բաղադրությունների մեծ մասում* f*-ն վերջահար է, բաղադրության վերջին տարրն է, մի քանիսի մեջ նա սկզբնահար կամ միջնային դիրք ունի. Հմմտ.* **ֆանի, fդիր, fեր, fիր, fիտեր, կներ, ֆյատեր, fներ, fնիր, f'տեր, fu, բայց** անfրներ, աննյատեր, առանfներ, վանfներ, տանէիր, տանfներ, տրfներ, տիfներ, ռանfեր, ուներ: *Միջնային դիրքն մեկնաբանվում է նրանով, որ* f*-ով արդեն բաղադրվածը, որի մեջ նա վերջին տարրն է, նորից մտել է բաղադրության մեջ. այսպես՝* **առանճ+նէ>առանfնէ, վանճ+նէր>վանfներ** *են:*

Իսկ ինչպե՞ս կարելի է մեկնաբանել f*-ի սկզբնադիրք ու վերջնադիրք ունենալը: Իհարկե՝* f*-ն բաղադրության վերջում անհամեմատ շատ է հանդիպում, քան սկզբում: Ժամանակագրական հայեցակետով չենք կարող դեկավարվել, ասենք,* էր(f+էր)*-ը ավելի նախնական (հնակազմություն) համարել, իսկ* էրf (էր+f)*-ը նորակազմություն, թեև դա ևս հնարավոր է պատմականորեն վերցրած: Բայց հոգնակերտների բաղադրությունները այդ տեսանկյունից դժվար է մեկնաբանել: Մենք այստեղ նախապատվությունը ավելի տալիս ենք խոսողական տվյալ միջավայրի յուրահատուկ տեղաշարժուն:* էր*-ի միջավայրն ընկնելով գերիշխող* f*-ի միջավայրի ազդեցության ոլորտը՝ առաջ է բերում* էր—f>էրf *զարգացում, իսկ հակառակ պրոցեսի արդյունքը՝* f—էր>fէր: *Եվ էապես* f*-ի գերազանցապես վերջնադիրք լինելը միանգամայն բնական է, որովհետև հին հայերենում, այլ հոգնակերտ մասնիկների համեմատությամբ,* f *հոգնակերտի ազդեցության ոլորտը ամենաուժեղն է եղել: Սա տվյալ լեզվի ներքին խաչավորման պրոցեսի հետ կապված երևույթ է:*

*Դիրքային նույնպիսի հարաբերակցություններ ունեն նաև մյուս հոգնակերտ տարրերը (*էր, նէր, նի, տի *են). բայց, օրինակ, վի մասնիկը վերջնադիրքում գրեթե չի հանդիպում:*

Ագ, ական, այս, այց, այք, այքներ, ան[1], ան[2], անանք, անանց, անդ, անդա, անդիք, անէ, անէնք՛, անէսներ, անէր, անէք՛, անէնք՛, անրք, անրքնէր, անի[1], անի[2], անիք[1], անիք[2], անիք՛, անիք՛. անհյտեր, (անն), աններ, աննէր, աննի, աննիք, անոնց, անոց, անտի, անց, անց, անունց, անուց, անք[1], անք[2], անք՛, անք, անք՛, անքներ, ատաց, ատէ, ատիք՛, ատիք՛, ար, արանք, արանքնէ, արաց, արէ, արէնք, արէնք՛, արէք, արիք՛, արունք, արունք, արք, արք, աց[1], աց[2], աունք, աք[1], աք[2], աք, գանց, գա՝ դա՛, դան, դանց, դանք, դաց, դաք, դաք, դէրանց, դէուն, դէք, դի, դինք, դիրք, դիք, դուն, դունց, դունք, դուց, գօնց, գօնք, գօց, գօուն, գօուց, հայք, հան, հանց, հանք, հար, են, ենց, ենք, եր, երայք, երանց, երանք, երաց, երն, երնի, երունք, երք, եց, եք, էհյտար, էհյտեր, էյր, էն[1], էն[2], էնէ, էնէց, էնէք[1], էնի, էնիք (էնիք՛), էնց, էնուց, էնք, էնք՛, էսն, էր, էրանց, էրանք (էրանք՛), էրաց, էրնի, էրսանք, էրք, էրքանց, էրքնէր, էրօտ, էցներ, էք, էք՛, էօնք, ըէյր, ը՝ֆկընէ, ըկ, ընէր, ընուց, ընք, ըր, ըրանք, ըրանքէր, ըրէնք՛էր, ըրնէ, ըրնէր, ըրնի, ըք, ֆընէր, ի, իդ, իէյ, իէնանք, իէր, իֆկընէ. իկ, իկ՛, իկներ, իկնէր, իկներք, իկս, իկք, իյ, ինց, ինք[1], ինք[2], իս, իր, իրտանք, իրք, ից, իք[1], իք[2], իք՛, իքներ, կան, կանց, կաց, կէրանց, կ՛երանց, կէրք, կէք, կէք՛, կընէ, կընէր, կներ, կօնց, կօց, հյտար, հյտեր, յանց, յանք, յներ, (ն), նա, նա՛. նատէ, նատիք՛. նարէ, նարիք՛, նաք, նա՛ք, նեար, ներ, ներնի, նէ, նէյր, նէնի, նէր, նէրք, նէք[1], նէք[2], նը(նը՝), նըէր, նըվեր, նըվի, նըրնէ, նըրնէր. նրք, նի, նիեյ, նիյ, նիյք, նին, նինք, նիր, նիք, նիք՛, նվեր, նվի, նօր(նօո), ոյք, ոնց, ոնք, ոտ, ոտի, ոտիք, որ, որայ, որայս, որայք, որեայ, որեք, ոց, ոք, ս, սդ՝ան (սդան), սդաննի, սդ՝ուն. սդ՝ունք աններ, ստահ՛էր, ստան, ստաննէր, ստաննի, ստանք, ստանք՛. ստ ա՛ նք, ստար, ստէուն, ստն (ստըն), ստներ, վ, վա, վա՛, վան վանհյտեր, վաններ, վանք, վանք՛, վա՛նք, վանքներ, վանքնէր, վաք (վա՛ք), վդանք, վեր, վէյր, վէրք՛, վէք, վը՝, վըդա, վըդան, վըդանք, վըդաց, վըդաք, վըդա՛ք, վըդի, վըդիք, վըդօց, վըն, վը՝նա, վըներ, վընէյ, վընէր, վը՝նը՝, վընի, վընիր, վըտանք, վըտի, վըտիք, վըտօց, վը՝ք, վի, վիներ, վինէր, վիք, վներ, վնի. (վտ), վտանք, վտի, վտիք, վուէնք, վուն, վունք, վուց, վօնց, վօնք, (տ), տան[1], տան[2], տանց, տանք, տանք՛, տանքէր, տանքներ, տար, տաց, տաք, տեր, տեք, տընի, տըքնէ, տի, տիկ, տինք, տիս, տիր, տիք, տիքներ, տոց, տրանք՛, տունք, տուց, րան, րանիք՛,

բանք, բանք՛, բանքներ, բունք, ց, ւեր (ուէր), ւի(ուի), ուան, ուանք, ուեր, ուրնի, ուրտանք, ուի, ուն, ունանց, ունանք, ունաք, ունի, ունց, ունք, ո՛նք, ունքէր, ուտ(ուտ), ուրնէ, ո՛րնու, ուրնու, ուց[1], ուց[2], ուր, ո՛ր, ք, քանի, քանիք, քատիք՛, քդիր, ք՛դիր, քեր (քէր), քերք(քերք), քէրանց, քիր, քՙտեր, քներ, քնէր, քնիր, ք՛տէր, քս, օնաց, օնէնք՛, օնէք՛, օնիք՛, օնց (՛նց), օն ո՛ք՛, օնք, օո, օտ(՛տ), օտան, օտանց, օտանք, օտաց, օտաք, օտէնք՛, օտէք՛, օտինք՛, օտիք՛, օր, օրայք, օրանք, օրէք, օց, օք, ֆրներ, ֆիւ

ՀՈԳՆԱԿԵՐՏ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՁԱՐԴԱՅՄԱՆ ՏԱՐԲԵՐ ԷՏԱՊՆԵՐՈՒՄ (ՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ)

Գ ր ա բ ա ր

Ական, այս, այց, այք, ան[1], ան[2], անի (անի[1]), անիք (անիք[1]), անց, անք[1], անք[2], աց, եայք, եան, եանց, եանք, եար, են, եր, իկ-ինք (ինք[1]), իք, կան, նեար, ոյք, ոտի, որայք (օրայք), որեայ, ս, տի, տիք, ց, ունի, ունք, ք, (օրայք)։

Մ ի ջ ի ն գ ր ա կ ա ն ե ա յ ե ր ե ն

*Այս, այք, ան[1], ան[2], անի[1], անի[2], (անն), *աննի, անց (անց[1]), անք[1], անք[2], արէք, աց, աք (աք[1]), եանք, ենց, *ենք, որ, երայք, երանք, երաց, (երն), երնի, երունք, երք, եց, իկ, իկս, իկք, իք, կան, կանց, կաց, կներ, (ն), ներ, նի, նիք, ոնց, ոնք, ոտի, ոտիք, որայս, որայք, որիք (օրէք), ոց, ոք, ս, ստան, (ստն||ստրն), ստներ, (վ), վան, վանք, վեր (ւեր, ուեր), (վրն), վրներ, վրնի, վրտանք, վրտի, վի (ւի, ուի), վիք, (վներ), (վնի), (վտ), (վտանք), (վտի), (տ), տաց, տրնի, տի, տիկ, տիս, տիք, տոց, բանք, բունք, ց, ւեր (ուեր, վեր), ւի (ուի, վի), ուան (վան), ուանք (վանք), ուեր (ւեր, վեր), ուրնի (վրնի), ուրտանք (վրտանք), ուի (ւի, վի), ունանց (ունաց), ունանք, ունաք, ունք, ք, քներ, քս, օք։*

Բ ա ր բ ա ռ ե ր

Ագ, ան[1], ան[2], անանք, անաց, անգ, անգա, անդիք, անէ, անէնք՛, անէսներ, անէր, անէք՛ ՙանէք՛, անրք, անրքնէր, անի[1], անի[2], անիք[1], անիք[2], անիք՛, ՙանիք՛, անհյտեր, աններ (աննէր), աննի,

աննիք, անոնց, անոց, անտի, անց, ա՛նց, ա՛նունց, անուց, անք՝, անք², անք¹, ա՛նք, ա՛նք, անքնե՛ր, առաց, առէ, առիք՛, ա՛տիք՛, ար, ա՛ր, արանք, արանքնէ, արաց, արէ, արէնք, արէնք՛, արէք, արիք՛ ա՛րիք՛, արունք, ա՛րունք, արք, ա՛րք, աց, առունք, աք¹, աք², ա՛ք, դանց, դա, դա՛ դան, դանց, դանք, դաց, դաք, դա՛ք, դէրանց, դէ՛ն՛ն, դօուն, դէք, դի, դինք, դիրք, դիք, դոէց, դուն, դունց, դունք, դուց, դօնց, դօնք, դօց, դօունց, ենց, ենք, եր, երանց, երք, եք, էհյտեր, էյր (ըէյր), էն¹, էն², էնէց, էնէք, էնեք՛, էնի, էնիք (էնիք՛), էնց, էնուց, էնք (էնք՛), (էսն), էր (եր), էրանց (երանց), էրանք (երանք՛), էրաց, էրնի, էրտանք, էրք (էրք՛), էրքանց, էրքնէր, էրօտ, էցներ, էք (էք՛), էօնք, (ըէյր), ը՝թկընէ, ըկ, ընէր, ընուց, ընք, ըր, ըրանք, ըրանքէր, ըրէնք՛էր, ըրնէ, ըրնէր, ըրնի, ըք, թընէր, ի, իգ, իէյ, իէնք, իէր, իթկընէ, իկ, իկ՛ իկնէր, իկնէրք, իյ, ինց, ինք (ինք²), իո, իր, իրտանք, իրք, իք¹, իք², իք՛, իքներ, կանց, կէրանց(կ՛էրանց),կէրք, կէք, կ՛էք՛, կընէ, կընէր, կներ, կօնց, կօյ. հյտար, հյտեր, յներ, (ն), նա, նա՛, նատիք՛, նարէ, նաք, նա՛ք, ներ, նէ, նէյր, նէնի, նէր(ներ), նէրք, նէք¹, նէք², նր (նը՝), նրէր, նրվեր, նրվի, նրրնէ, նրրնէր, նրք, նի, նիհէյ, նիյ, նիյք, նիհն, նինք, նիր, նիք, նիք՛, (նվեր), (նվի), նօր (նօո), ոնց, ոնք, ոտ, ոց, ոչ՛ան (ոչան), ոչաննի, ոչ՛ուն, ոչ՛ունք, ոներ, ստահ՛էր, ստան, ստաննէր, ստաննի,, ստանք, ստանք՛, ստա՛նք, ստար, ստէ՛՛ն, վա, վ՛ա՛, վան, վանհյտեր, վաններ, վանք, վանք՛, վ՛ա՛նք, վանքնէր, վաք, վա՛ք, (վդանք), վեր, վէյր, վէրք՛, վէք, վը՝, վըդա, վըդան, վըդանք, վըդաց, վըդաք, վըդա՛ք, վըդի, վըդիք, (վըն), վը՝նա, վըներ, վընէյ, վընէր, վը՝նը՝, վընի, վընիր, վըտանք, վըտիք, վըտօց, վը՝ք, վի, վիններ (վինէր), վիք, վուէնք, վուն, վունք, վուց, վօնց, վօնք, (տ), տանք, տանք՛, տանքէր, տար, տաք, տեք, տրքնէ, տի, տինք, տիք, տոց, տրանք՛, տունք, տուց, բան, բանիք՛, բանք, բանք՛, բանքեր, բունք, ց, (ուն), ունանք, ունք, ա՛նք, ունքէր, ուտ(ա՛ուտ), ուրնէ, ուրնու, ա՛րնա՛, ուց¹, ուց², ուք, ա՛ք, ք, քանի, քանիք, քատիք՛, քդիր(ք՛դիր), ք՛եր(ք՛էր), քէրանց, քիր, քհտեր, քներ, քնիր, ք՛ատեր, օնաց, օնէնք՛, օնէք՛, օնիք՛, օնց(օնց), օնուք՛, օնք, օտ (ո՛տ), օտան, օտանց, օտանք, օտաց, օ՛տաք, օտէնք՛, օտէք՛, օտինք՛, օտիք՛, օր, օրանք, օրէք, օց, օք, ֆրննր, ֆի։

Ա ր և մ տ ա հ ա յ գ ր ա կ ա ն ա շ խ ա ր հ ա բ ա ր

Ա՛յք, անի (անի¹), անց, անք (անք²), աց, ենց, ենք, եր, երնի, երք, իկ, իկներ, ինք (ինք¹), (կ)անց, ներ, ներնի, նի, ոնց, ոնք,

ոտիք, ոց, վանք, վանքներ, վըներ, վընի, վրտիք, վի, վիներ, վտանք, տանք, տանքներ, տիք, տիքներ, ց, ունք, ք, քներ։

Աւրվելացիայ գրականճ աշխարհաբար

Այք, անի (անի[1]), անց, անք (անք[2]), աց, ենց, ենք, եր, երք, իկ, ինք (ինք[1]), (կ)անց, յանց, յանք, ներ, ոնց, ոնք, ոտի, ոտիք, ոց, տիք, տուց, ց, ունք, ունց, ք, (ք)երք, (ք)երանց։

Աւրդի գրականճ հայերեն

Այք, (անի), անց, (անք), ենց, ենք, եր, իկ, (ինք), ներ, ոնց, ոնք, (ունց), (ք)։

ԱԳ.—*Իկ մասնիկի հնչյունական տարաճում, առկա է Սվեդիայի բարբառում. մադ՝ ագ (ըստ ՀԱ, ԼՔՀ, III, 765)։*

ԱԿԱՆ.—*Հավաքականակերտ մասնիկ. հանդիպում է գրաբարի ոչ-համակարգային կազմավորումներում. զարդական, գրաստական, դուստանական, փախստական (զարդ, գրաստ, դուստան, փախստեայ եզակի ձևերի հարաբերակցությամբ)։ Ոմանք կապում են իրանական ak ածանցի և-ā հոգնակերտի հետ, իբրև դրանց զուգակցում՝ ըմբռնված անկախ մասնիկի արժեքով (հմմտ. ԳՀ, ՀՀՀՍ, 221)։ Ծագրաբարյան հայերենում աստիճանաբար կորցրել է հոգնակերտ իմաստը։*

ԱՅՍ.—*Այ հոգնակերտ մասնիկի հարացուցային տարբերակ հայցականի հոգնակիում. ծագումով ս-ի զարգացումն է այ հիմքային տարրով, որը գրաբարում ըստ երևույթին դեռ գիտակցվում էր որպես այդպիսին. (զ)ճագագայս։ Միջին գրական հայերենում ևս հանդիպում է սակավաթիվ բառերի հոգնակի հայցականում. օրինակ՝ կանայս (ՆՄ, ԺԱՎ, 303), զպարոնայսն (ՂՅ, ՀՆՒՎ, Ք. 247, XIII դ.)։ Միջին գրականում այս մասնիկը այդ նույն դիրքում հաճախ դուրս է մղվում այք-ի, այսինքն՝ միևնույն հարացույցի ուղղականի հոգնակերտի կողմից, որովհետև սա աստիճանաբար հաստատվում էր նաև հայցականում. (զ)պարոնայս>(զ)պարոնայք։ Առհասարակ հնագրաբարյան հայերենում հանդիպում է գրաբարատիպ որոշ կազմավորումներում և համեմատաբար շուտ էլ դուրս է գալիս գործածությունից։*

ԱՅՑ.—*Այք մասնիկի հարացուցային տարբերակ գրաբարի*

աեռ.-տրականում և նրանից կազմված ձևերում. այ հիմքավերջի և ց հոգնակերտի զուգակցման արդյունք. տիկնայք—տիկնայց, հագագայք—հագագայց։ Նոգրաբարյան հայերենում մասնակիորեն հանդիպում է նույն դիրքում (դրաբարատիպ կազմավորում) և աստիճանաբար գործածությունից դուրս է գալիս։

Ա3Ք.—Ք հոգնակերտի և այ հիմքային տարրի ձևաբանական սերտաճում, որ նկատելի է դեռևս դասական գրաբարի շրջանից. կանայք, աղախնայք, հագագայք, կիկլոպայք. համմտ. նաև՝ ծովեզերայք, դարբնայք, խանութայք, թեք հոլովաձևերում՝ այց, այս։ Ինքնատիպ ու ավելի հին ակունք ունի կանայք կազմությունը. «կազմության այս եղանակը արխայիկ ու առանձնական բնույթ է կրել նույնիսկ համահնդևրոպական շրջանում» (ԳՋ, ՀՀՀՍ, 57)։ Սակայն դասական գրաբարում այ—f>այf սերտաճումը դեռևս իր ավարտին չէր հասել։ Այդ վերաբերում է նաև այ—ց(>այց), այ—u (>այս) տարբերակներին։

Նոգրաբարյան հայերենում էլ գործածական էր սահմանափակ՝ ոչ-համակարգային կազմավորումներում, թեև մասնակիորեն ընդլայնվում է նրա կիրառության ոլորտը։ «Այս մասնիկը առաջացել է հետևյալ ձևով. գրաբարի մեջ կին բառի հոգնակին է կանայք. սրան է հետևում նաև՝ տիկին—տիկնայք. վերջինիս հետ համաձայն միասին պիտի գործածվեր իր հականիշը՝ աղախին, որ թեև անշուշտ ուներ իր հին հգ. ուղ. աղախնիք ձևը, բայց տիկնայք բառի նմանությամբ եղավ աղախնայք. այսպիսով գոյացավ նորահնար այ հոգնակերտ մասնիկը, որ և տարածվեց իշխան, պարոն և սուլտան բառերի վրա։ (Երեքն էլ իշխանական աստիճաններ էին, ինչպես և տիկինը և երեքն էլ զարմանալի զուգադիպությամբ վերջանում են ն բաղաձայնով, ինչպես և՝ տիկինը)։ Սրանից է, որ պիտի ձևանար բարբառների մեջ աf հոգնակերտը. և այստեղից է, որ այժմ էլ գրական լեզվի մեջ մնում է պարոնայf ձևը» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 707)։

Հանդիպում է միջին գրական հայերենի հոգնակի ուղղականում, ինչպես և հայցականի վերակազմավորված ձևերում. օր. կանայfն զաղան ի փորուն ձգէ (ԱԱ, 0Ք, 85. համմտ. ն. տ. 42. ՄԺ, 182, XVII դ.). նաև՝ պարոնայf (ՄԺ, 168, XVI դ., ՆՄ, ԺՄՎ, 151, ՄՄ, ԸՆ, 192, XVI—XVII դդ.), իշխանայf, սուլտանայf են։

Արևմտահայ գրական լեզվում ունի գործածության նեղ ոլորտ. հանդիպում է կին, տիկին, պարոն բառերի հոգնակիակազմության մեջ. կանայք (Ծ, ե, 235. ՏԿ, ՎԱ, 124, 174. ՎՔ, ե, 199), տիկնայք (ՀՊ, եԺ, VI, 245. ՏԿ, ՎԱ, 124), պարոնայք (ՏԿ, ՎԱ.

34)։ Թեք հոլովաձևերում՝ այց. անց. տիկնայց (ՏԿ, ՎԱ, 157), կանանց (Ծ, ե, 339. ՏԿ, ՎԱ, 71, 104)։ Այս կազմավորումներին զուգահեռ գործածական են եր. ներ մասնիկներով կառույցներ՝ կիներ, տիկիններ, պարոններ։

Արևելահայ գրական լեզվում այս մասնիկով սովորական է միայն կին բառի հոգնակիակազմությունը. տիկնայք, պարոնայք արդեն հնաբանություն են[4]։ Թեք հոլովաձևերում՝ անց. կանայք—կանանց։

ԱՅՔՆԵՐ.—*Հազվադեպ գործածությամբ բաղադրյալ մասնիկ. ունի այք—ներ>այքներ զարգացում. կանայքներով («Նոր Դար», 1884, № 16)։*

ԱՆ[1].—*Հավաքականակերտ մասնիկ. հանդիպում է գրաբարի ոչ-համակարգային հոգնակիակազմության մեջ. հավանաբար խոսակցական տարբերակից կատարված ներթափանցում. համեբոպյան հայերենում՝ իշխան, ձիան (գրեթե այլ օրինակներ չկան)։ Ենթադրվում է իրանական ծագում. «Այս ան մասնիկը (նախապես—եան) որևէ արդելիչ պատճառ չեմ գտնում Պհլ.— -ān հոգնակերտից դնելու։ Այս մասնիկը պարսկականում հատուկ է շնչավորներին, մեր մեջ էլ մեծ մասամբ շնչավորների համար է գործածված, մասամբ անցել է նաև անշունչներին» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 713)։ Կարստը ենթադրել է եան>ան զարգացում ձի բառի հոգնակիի վրայով՝ ձի+եան>ձիան. ձիեան հնչյունական կազմը հայերենի համար անկարելի է, ուստի նախ եղավ ձիան, ապա նմանաբանությամբ իշան ևն։ Պրոֆ. Գ. Ջահուկյանը Կարստի կարծիքը անհավանական է համարում. «Ընդհակառակն. այստեղ ենթադրելի է եան–ի ծագումը սկզբնական հիմքակազմ ի-ի և ան մասնիկի զուգակցմամբ» (ԳՋ, ՀՀՍ, 220)[5]։*

Միջին գրական հայերենում հանդիպում է ձի, էշ, ջոր բառերի հոգնակիում. օր. ձիան (ՆՄ, ԺԱՎ, 27. ՆՇ, ԲՋ, 566). այսպես և՝ իշան, ջորեան։ Թեք հոլովաձևերում այս մասնիկն ունի նույն տեսքը. ձիան>ձիան-ոյ, ձիան-ով։ Դեռևս այս շրջանից ածանցական տարր դառնալու միտում է հանդես բերում. ձի վաղան (ՀԲ, ՈՒԲ, 156)։

---

[4] *Նոր հայերենում սակավադեպ գործածված է նաև ազախնայ ձևը, օր. «Մեղու Հայ.», 1859, 1։ 17-րդ դարի մի սկզբնաղբյուրում հանդիպել ենք նաև վարդապետայ ձևին (ՄԺ, 213)։*

[5] *Ըստ ՀՊ, ՀԳԼ, 217՝ հարաբերակցում է հուն. -ων տարբերին, հուն. -, իբրև «ապաստան» և հայ. իշան. հուն. γονεύων «կանանոց» և հայ. կանան–ց։*

նակ, Աբարատյան, Ղարաբաղի, Կարճևանի, Դերսիմի, Առտիալի, Կոգինի, Լոռու, Կարնո, Հաղրութի, Սեբաստիայի, Սասունի բարբառներում ու խոսվածքներում։ Սակայն գործածության ոլորտը այստեղ էլ նեղ է. սահմանափակ թվով բառերի հոգնակի է կազմում։ Ըստ ՄԱ, I, 91՝ Լոռու խոսվածքում այդ մասնիկն առանում են Ա «այծ», գ՛էլ «գայլ», դեզ «դեզ», էշ, թի, ձի, ձու բառերը (իծան, գի՛լան, դիզան, իշան, թիան, ձիան ձրվան)։ Այլ բարբառներում ավելի փոքր ընդգրկում ունի. հմմտ. Ղրբ. բ. ծր՝յան «ձիեր», թր՝յան «թիեր», լո՝վան «լվեր», ծո՝վան «ձվեր»։ Հմմտ. նաև գիշան (եզ. գէշ)՝ ըստ ՍՄ, ՀԲԲ, I, 437։ Երկվանկների հետ գրեթե չի հանդիպում. բայց ըստ ԱՂ, ՀԲ, 305՝ Օբանան (Կարճևանի բ.)։ Միավանկ բաղաձայնահանգ հիմքերի հետ նաև՝ խօդան, դ՛էղան (Առտիալ), տէղան (Սեբաստիա, ըստ ԱԳ, ՀԲԴ, 100)։ Թեք հոլովաձևերում պահպանվում է նույն ձևով՝ ան>ան. ձիանու բեռ (ՀԺՀ, IX, 71), ձիան>ձիանի, ձիանէն, ձիանօվ (ՌԲ, ԿԲ, 90)։ Կարող է հանդես գալ անուց, ընուց տարբերակով. օր. Ղրբ. բ. ծր՝յանուց, ծր՝յընուցէն, բայց սա ավելի շատ կարող է հարաբերակցել անի-ի (ձիանի հոգնակիի) հետ։

Նոր գրական հայերենում գործածական չէ։ Այն իբրև ածանց է հանդիպում. վիպասան, աստուածան, վազան, կծան, հաչան են։

Ան[2].—Ա՛ն, անի (և անի[2]) մասնիկների դիրքային տարբերակ սեռ.-տրականում և նրանից կազմված ձևերում։ Հին գրական հայերենի այդպիսի կառուցվածքներում անի-ին համապատասխանում էին ան, անե տարբերակներ. աւազանի>աւազանւ-ոյ, աւազանե-աւ։

Միջին գրական հայերենի սեռ.-տրականում՝ միայն ան. ջաղացանի—ջաղացանոյն (ԴՀվ, I, 58, XIV դ.), ձիան—ձիանով (Ֆ, Բ, 143)։ Մի տեղ հանդիպել ենք իշանուն ձև (տե՛ս ԴՀվ, I, 27, XIV դ.), որ ուղիղ ձևում եթե իշ-անի էլ լինի, կարծում ենք, ունի բաղադրյալ կազմություն՝ ան—ին>անի զարգացումով (ն-երի ձուլում). հմմտ. ի ձիաննուն (ԱՄ, ԱՄ, 392)։ Ուրեմն սեռ.-տրականում ան-ը կարող է տարբերակ լինել նաև անին հոգնակերտի։

Բարբառներում ևս ֆունկցիավորում է նույն տարբերակը (տե՛ս ան[1])։

Աննանք.—Բաղադրյալ հավաքական հոգնակերտ՝ ան—անք>անանք զարգացումով. առկա է Մարաղայի բարբառի ոչ-համակարգային կազմավորումներում. ձուշանանք «շոջեր, մեծամեծք» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 754)։

ԱՆԱՅ.—Անէ *(նաև անիՙ) մասնիկի հարացուցային տարբերակ՝ սեռ.-տրականում։*

ԱՆՐ.—Անդա *մասնիկի դիրքային տարբերակ թեք հոլովաձևերում։*

ԱՆԴԱ.—*Բաղադրյալ մասնիկ՝* ան—դա *(<ան—տի)>անդա՝ զարգացումով. հանդիպում է Սվեդիայի բարբառում։ Հ. Աճառյանը իբրև օրինակ բերում է՝ գ՚իդ (<գիւղ)>գ՚իղանդա, թէն (<թի)>թիյանդա, ձ՚էն (<ձի)>ձ՚իյանդա (ՀԱ, ԼՔՀԼ, III, 765)։ Թեք հոլովաձևերում ներկայանում է* անդ- *տարբերակով. օր. ձ՚իյանդիւց (սեռ.-տրական), ձ՚իյանդում (գործ.)։*

ԱՆԴԻՔ.—*Բաղադրյալ հոգնակերտ-հավաքական մասնիկ,* ան-դի-ք *(<ան-տի-ք) զարգացումով. հանդիպում է Կեսարիայի բարբառի ոչ-համակարգային կազմավորումներում. գեղանդիք «գյուղեր», ձրյանդիք «ձիեր» (ըստ ՍԱ, ԿՔ, 66)։*

ԱՆԵՐ.—*Բարբառներում հանդիպող* անէր *մասնիկն է, որ մասամբ ներթափանցել է գրական աշխարհաբար։ Օր. ձվաներ (ՍՄ, ՀՔՔ, III, 180. Ր, նժ, I, 524), գիլաներին (Ր, նժ, I, 487), ձիաներ («Մշակ», 1872, № 12. Ր, նժ, I, 428, «Մեղու Հայ.», 1858, №№ 2, 6), ուղտաներ («Մեղու Հայ.», 1858, № 26),*

ԱՆԷ.—*Հանդիպում է Մեղրու բարբառի ոչ-համակարգային կազմավորումներում. հավանաբար* անի *մասնիկի հնչյունական տարաճում է. խեզան (<խիզան)>խրզնանէ (ԷԱ, ՄԲ, 121)։ Թեք հոլովաձևերում՝* անաց *(օր. խրզնանաց)։ Ունի հավաքական նշանակություն։*

ԱՆԷՆՔ՚.—*Բաղադրյալ՝ հոգնակերտ-հավաքական մասնիկ. հանդիպում է Ղարաբաղի բարբառում (խոսվածքային տարբերակ). ոչ-համակարգային կազմավորման տարր. կընանէնք՚ (ըստ ԱՂ, ՀԲ, 296)։ Թեք հոլովաձևերում՝* անուց *տարբերակը։*

ԱՆԷՍՆՐ.—*Բաղադրյալ՝ հոգնակերտ-հավաքական մասնիկ. *անեֆեներ մասնիկի ուրույն զարգացում՝ f>u (կամ գուցե g>u) փոխարինումով. հազվադեպ հանդիպում է, օրինակ, Բաղեշի խոսվածքում. ձիանեաներու վրեն (ՀԺՀ, IX, 480). f>u փոխարինման համար՝ հմմտ. էրթֆեն‖էրթսեն (նույն տեղը, էջ 294—295)։*

ԱՆԷՐ.—*Բաղադրյալ՝ հոգնակերտ-հավաքական մասնիկ,* ան—էր>անէր *զարգացումով. հանդիպում է որոշ բարբառների (Արդվինի, Կարնո ևն) ոչ-համակարգային կազմավորումներում, այն հոգնակերտի գործածության դիրքերում. իշանէր (ըստ ՍԱ, ԱԲՁԱ, 230. ԱՂ, ՀԲ, 332), ձիանէր (ՍԱ, ԱԲՁԱ, 230), էծանէր (Ն. ա.)։ Թեք հոլովաձևերում ներկայանում է նույն տեսքով. ձիաներու*

(ՀԺՀ, IX, 272.—Մանազկերտ. Համտ. Ն. տ. 518.—Ալաշկերտ. ՍԳ, 141)։ Հնարավոր է աճ—ներ>աներ զարգացում ն-երի ձուլումով. համտ. այլ բարբառներում՝ աճներ։

ԱնէՔ՛.—Անիմ[1] մասնիկի հնչյունական տարաձում. հանդիպում է. օրինակ, Ղարաբաղի, Մեղրու բարբառներում. ոչ-համակարգային կազմավորման տարր. կընանէք՛ «կանայք» (Ղրբ. բ.)։ Թեք հոլովաձևերում աճուց, բնուց. կընանուցը (Ղրբ. բ. սեռ.-տրական), կրնրնուցան (բացառ.)։ Մեղրու բարբառում աներ՛ մասնիկ կա այլ կառուցաձևերում. օր. բնձաներ՛ «հնձաններ» (էՎ, ՄԲ. 121), որը կարող է այլ զարգացման արդյունք լինել։

ԱնէՔ՛.—Մեղրու բարբառում հանդիպող աճէր՛ մասնիկի՝ ձայնավորների ներդաշնակության օրենքով պայմանավորված տարբերակ գի՛ր՝մի՛ճանէ՛ «դերեզմաններ» (ըստ էՎ, ՄԲ, 121)։

ԱՆԸՔ.—Անիմ[1] մասնիկի հնչյունական տարաձում. հանդիպում է կին բառի հոգնակիականզմության մեջ՝ Կոզենի բարբառում. կընանըր (ըստ ՈՔ, կՔ, 88)։

ԱՆՐՔՆԷՐ.—Բաղադրյալ հոգնակերտ մասնիկ, անրք—ներ (<անիմ—ներ)>անրքներ զարգացումով. Նոր Ջուղայի բարբառում գործածվում է կանանրքներ հոգնակիի մեջ, որը զուգահեռ է կնանիմ ավելի տարածված կազմությանը (ՀՍ, ԼՔՀ, III, 835)։

Անի[1].—Հանդիպում է դեռևս գրաբարի ոչ-համակարգային կազմավորումներում. աւազանի, կանանի, պլխանի, ազատանի, երիցանի, նամականի, վնասանի և այլն։ Սա ան (եան) հավաքական մասնիկի ձևաբանական սերտաճումն է անհայտ ծագումի ի տարրով (վերջինս ըստ Պեդերսընի՝ -Ոa-ից)[6], Պրոֆ. Գ. Ջահուկյանը հնարավոր է համարում իրանական ծագում։ «Մեր կարծիքով այս ի-ն կարող է բացատրվել իրանական a-ի վրա որոշիչ իմաստ ունեցող i մասնիկի հավելմամբ, որը հայերենում անվերծանելի է դարձել» (ԳՋ, ՀՀՀՍ, 220)։ Ոմանք այս մասնիկի և վրացական ni հոգնակերտի միջև զուգահեռներ են անցկացնում։

Սրա գործածությունը վաղմիջինհայերենյան շրջանից նվազում է։ Մեր դիտարկած աղբյուրներում (XI—XVI դդ.) նկատել ենք հետևյալները. գանգականի (ԴՀՎ, I, 43, XIII դ.), կուղպականի (ն. տ. 44, XI դ.)[7], մարաքանի (ԴՀՎ, III, 172, XIII դ.), ու յետոյ

[6] Հ. Պեդերսընը մերժում է (ՀՊ, ՀԳՀ, 228—232) կարստի տեսակետը, համաձայն որի անի-ն ունի կովկասյան ծագում և սա ու այլ մի քանի մասնիկներ հին դրական հայերենին հաժամանակակից ժողովրդական կամ ռամկական լեզուի մը յատուկ նկած պիտի ըլլան (տե՛ս «Բազմ.», 1900, 215)։

[7] Համտ. գամրջանին (ՊՇՔ, 47, X դ.)։

գնացաք ի շուրջ եկաք բազում **խաղամանի** *(ԱՍ, ԱՍ, 3). նան՝ ամրոցանի, հանդերձանի, հոտոմանի, մոնղոլանի, սալարանի, ֆռանկանի (բստ՝* Karst, *Աճառյան). այդպիսի հոգնակիով Հ. Աճառյանը տեսնում է նաև ստալայնի բառում (ՀԱ, ԱԲ, հ. I, 750)։ Միչին գրական հայերենում հանդիպում է նաև ածանցական միտումով, լեզւանի (ՆՄ, ԺԱՎ, 133), մի՛ կենալ լեզուանի կընկան հակառակ (ԿԵ, Տ, 217)։*

Հանդիպում է նաև որոշ բարբառների (օրինակ, Նոր Ջուղայի, Կոզենի) ոչ-համակարգային կազմավորումներում. տէրտէրանի, ամանանի, վնասանի (բստ ՀԱ, ԼՔՀԼ, III, 736). ասէղանի, ատրճանի, սամիյանի, դ՛իննյանի (ՌՔ, ԿՔ, 86)։ Նոր Ջուղայի բարբառում՝ այս հոգնակերտից առաջ, հիմքավերջում կարող է ավելանալ ն, և կարծես թե դրանով ստացվում է նանի. տարինանի, քամինանի։ Թևք հոլովաձևերում առկա է ան տարբերակ՝ անի>ան. օրինակ՝ տէրտէրանու, տէրտէրանուց (Նոր Ջուղա)[8]*, բայց Կոզենի բարբառում այն պահպանվում է. տախտականի—տախտականիյի. տախտականիյին, տախտականիյով (ՌՔ, ԿՔ, 90)։ Անի մասնիկի կիրառութիւններից են. էն տեղ յոթ գլխանի դև մի կա (ՀԺՀ, IX, 13—Ալաշկերտ. համմտ. նան՝ Ն. տ. 525, ՄԱ, ԼԽ, Ն, 161), ծիա քանի՞ վէտանի յէր (ՌՔ, ՇՔ, Ն, 278)։*

Նոր գրական հայերենում (և՛ արևմտահայ, և՛ արևելահայ) հոգնական կիրառության բացառիկ օրինակներ կարելի է բերել[9]*. նամականի, առածանի և այլն։ Այժմ ավելի շատ գործածվում է «մի բանից շատ ունեցող» նշանակությամբ. լեզվանի, գեղանի, բառակապակցության մեջ, վերադիրով պայմանավորված՝ երկու ղոնանի, հինգ աչքանի, երկու գլխանի (համմտ. ՄԱ, ՀԼՏ, 248)։*

Անի[2]*.—Հազվադեպ գործածությամբ հանդիպում է միջին գրական հայերենում և որոշ բարբառներում. հավանաբար ան–ի>անի զարգացում ունի. օր. տարեք ձիանին արծեցեք (ՀԺՀ, IX, 514). թևք ձևերում՝ ան. իշանի>իշանուն (ԴՀՎ, I, 27, XIV դ.).*

---

[8] *Բստ ԱՂ, ՀՀՆՄ, 92՝ «Ջուղայի բարբառում անի վերլավորությունը որպես հոգնակի նշան գործածական է թե՛ առանձնանի և թե՛ եր. ներ, ո վերլավորությունների հետ բազադրված. օրինակ՝ ուրիշ-անի (ուրիշներ), որսդ-անի (որսողներ). ձեն-եր-անի (ձայներ), գլուխ-ներ-անի՝ գլուխներ, ըռուս-ո-անի՝ ռուսներ և այլնու։*

[9] *Հազվագեպ գործածությունների ենք հանդիպել նաև գրական աշխարհաբարի կազմավորման շրջանին վերաբերող աղբյուրներում. դրանցից են՝ Ֆիանուն (ՄԺ, I, 214, XVII դ.), քաղաքանի (Э. СПВ, 357, XVIII դ.), ուռուսանին (ՆԿՊ, 191), վաքիլանի (Ն. տ., 323, XVIII դ.)։*

Մեր այս մեկնաբանությունը հաստատում է նաև ձիանունն ձևի առկայությունը (տե՛ս ԱՍ, ԱՍ, 392)։

Անիք[1].—*Բաղադրյալ՝ անի[1]+f>անիf զարգացումով հոգնակերտ-հավաքական մասնիկ. ըստ ՀԱ, ԼՔՀԼ, III, 828՝ հանդիպում է դեռևս գրաբարում (հազվադեպ). ատագանիք: Բարբառներում ավելի հաճախական է կին բառի հոգնակիակազմության մեջ՝ երբեմնի կանանի ձևի վրայով. կնանիք կամ կընանիք (Նոր Ջուղայի, Արարատյան, Կաքավաբերդի, Մյունյաց, Կարճևանի բարբառներում, նաև՝ Ղարաբաղի բարբառի որոշ խոսվածքներում). համմտ. նաև սատանանիք, ամանանիք (Ն. Ջուղա, ըստ ՀԱ, ԼՔՀԼ, III 736)։ Թեք հոլովաձևերում կարող է լինել անոց տարբերակը. Նոր Ջուղայի բարբառում հնարավոր է անըֆօնց տարբերակ՝ սեռ.-տրականում. կնանիք—կնանքօնց։ Գրական աշխարհաբարում հանդիպում է իբրև բարբառային ներթափանցում. օր. կնանիքը (Ր, ԵԺ. 554)։*

Անիք[2].—*Բաղադրյալ՝ ան-նիf>անիf զարգացումով հավաքական հոգնակերտ. ըստ ԿԴ, ԼՂՔՔ, Ն, 277՝ ծիյանիf (Ղրբ. բ.). Համմտ. Արարատյանում՝ ձիանիք (ՀԺՀ, II, 60), ձիանըքանցով ն. տ. 148)։*

Անիք'.—*Անիf[1] մասնիկի հնչյունական տարաճում. առկա է Ագուլիսի բարբառում. կնանիք՛, պըռըվանիք՛, ջըղըցանիք՛, շինանիք՛, ոչ-համակարգային կազմավորման տարր։ Թեք հոլովաձևերում կարող է լինել անոց. կնանիք՛—կնանաց։*

Անիք'.—*Անիf՛ մասնիկի՝ ձայնավորների ներդաշնակությամբ պայմանավորված տարբերակ Ագուլիսի բարբառում։*

Անձ3Տեր.—*Հազվադեպ գործածությամբ՝ վանի բարբառում, ձի բառի հոգնակիակազմության մեջ. ծիանձյտեր (համմտ. նույն բարբառում՝ ծիանf՛)։*

Անն.—*Միջինհայերենյան *անեն մասնիկի դիրքային տարբերակ. մեկ անգամ հանդիպել ենք Ամիրտովլաթի մոտ. ի ձիաննուն (ԱՍ, ԱՍ, 392)։ Թեք բառաձևում սրա առկայությունը հնարավոր է դայանում ենթադրելու, որ ուղղական (և հայցական) հոլովներում եղել է անեի հոգնակերտ։ Համմտ. բարբառային՝ անեի (Հաճընի բ.)։*

Աններ.—*Աներ մասնիկն է, որ արտասանությամբ պայմանավորված (կամ չպայմանավորված) տառադարձված է նաև այսպես։ Համմտ. իշաններ (ՍՄ, ՀՈՒ, II, 48)։*

Աննէր.—*Բաղադրյալ հոգնակերտ-հավաքական մասնիկ՝ աներ>աննէր զարգացումով. հանդիպում է որոշ բարբառների (Արա-*

բատյան, Կարնո ևն) ոչ-համակարգային կազմավորումներում. երբեմն գործածվում է աճեր մասնիկին զուգահեռ՝ նրա դիրքում. ձիաննէր, իշաննէր, թիաննէր (Համմտ. ՀԱ, ԼՔՀԼ, III, 829). իծաննէր, ձվաննէր (Ն. տ. 717). այսպես և՝ ձիաններ (ԽԱ, ելժ, III, 40—Աբարատյան. տե՛ս նաև ՀՄ, ԿՔ, 46), իշաննէր (ՀՄ, ԿՔ, 46); թեք հոլովաձևերում սովորաբար ներկայանում է նույն տեսքով. ձիաններուն (ՀԺՀ, IX, 18—Ալաշկերտ); Համմտ. ձվաննէր (ՀԺՀ, II, 514):

Աննի.—*Բաղադրյալ հոգնակերտ-հավաքական մասնիկ՝ ան-ի>անի զարգացումով, ըստ էության գալիս է միջին հայերենից, հանդիպում է Հաճընի բարբառում. ծիաննիք «ձիեր» (ըստ ԱՂ, ՀՔ, 98). ոչ-համակարգային հոգնակիակազմության տարր է. Համմտ. Աննի:*

Աննիք.—*Հազվադեպ գործածությամբ հանդիպում է Հաճընի բարբառում. ունի ան-ի-ք>անիք զարգացում. ծիաննիք (ՀԳ, ՀՔ, 69). զուգահեռաբար՝ անի (տե՛ս):*

Անոնց.—*Անիք[1], անիք[2] և ք-ով զարգացում ունեցած որոշ այլ բաղադրյալ մասնիկների հարացուցային տարբերակ թեք հոլովաձևերում. օրինակ՝ Արարատ. բ. կնանիք—կնանոնցիցն. կնանոնց (ՊՊ, ԵԺ, I, 38, 43). Համմտ. նաև՝ ձիանոնգդ (ԽԱ, ելժ, III, 28), ձիանոնցից (ՀԺՀ, II, 150), ձիանոնցը (ՄԱ, Լա, Ն, 172); Համմտ. նաև ձիանոնց («Մեղու Հայ.», 1858, № 6); Լոռու խոսվածքում կա յէզանոնց (ՄԱ, Լա, 156. եզակին՝ յէզնիք): Բնականաբար այստեղ չունենք մեկ տարբերակ տարբեր հոգնակերտների համար, այլ՝ տարբերակներ, որոնք ձևականորեն համընկնում են:*

Անոց.—*Անոնց-ին զուգահեռ գործածվող ոչ-պարտադիր տարբերակ. կնանոց (ՊՊ, ԵԺ, I, 207.—Արարատ. բ.); Պետք է տառադարձել անօց:*

Անտի.—*Բաղադրյալ մասնիկ՝ ան[1]-ի>անտի զարգացումով: Հենվելով մի աղբյուրի վրա Հ. Աճառյանը հիշատակում է միայն մեկ օրինակ. ձիանտի (ՀԱ, ԼՔՀԼ, III, 716, 829): Ըստ երևույթին արևմտահայ բարբառներից մեկի ոչ-համակարգային կազմավորման տարր է:*

Անց.—*Նախապես հիմքակազմ կամ հիմքի վերջնահանգային ան տարրի և ց հոգնակերտի ձևաբանական սերտաճման արդյունք (Համմտ. գրաբ. կան-ան-ց, տէր-ան-ց). Հետագայում, երբ այդ վերակազմավորումը ավարտվում է, այն գիտակցվում է առհասարակ այֆ. անիք[1] (անիք[2]) և ք-ով (հիմնականում) զարգացում*

ունեցած այլ մասնիկների հարացուցային տարբերակ՝ թևք հոլո-վաձևերում։

Միջին գրական հայերենում այն հարաբերակցում է աեվ, ուվ||(ուն)աեվ *և այլ մասնիկների. գնեցի զայգին խառբէլանց (ԿՂ, ՀԱ, 95, XIII դ.). զմուսկանց պատաւն (ԴՀՎ, III, 98, XIV դ.) աղբերանց արուն (ՆՔ, ՀԿ, 196) հմմտ. նաև՝ աչկունք—աչ-կանց (ՆՔ, ՀԿ, 90, 160)։ Այս մասնիկը կա նաև ծադկուանց (և. տ. 205) ձևում։ Միտում է ածանցական տարր ևս դառնալու. զսերն սրտանց ունի առ աստված (և. տ. 305). ներանց (և. տ. 102)։ Սրանց մեծ մասի մեջ հաստատված է հավաքականության գաղափարը։ Սկսած միջին գրական հայերենից անց տարրը ան-կախ մասնիկի արժեք է ձեռք բերում* կանանց *բառաձևում։*

Նմանարժեք կիրառություններով հանդիպում է մի շարք բար-բառներում. հատկապես խիստ բնդգծվում է հավաքական հոգնա-կերաի ֆունկցիան. Թբիլիսիի բ. դիփունանք—դիփունքանց (ԳՍ, Ըն, 24), երեխանք—երեխանց (և. տ. 177). Արարատյանում՝ էրե-խանց (ՊՊ, ԵԺ, I, 28, 58), էրէխանցից (և. տ. 58). Մրհականք—Սրհականց (Ղրբ. բ.). քար պէրոդանց (ՈՒ, ՇՒ, 256), սատանա փռնոդանց (և. տ. 252). Հմմտ. նաև՝ հէրանց քնալ (Ղրբ. բ.). հե-րանց տանել (ՊՊ, ԵԺ, I, 27), հորանցդ տանը (և. տ. 28). քա-վորանց (և. տ. 167), հորանց տանն (ԳՍ, Գ, 79—Թբ. բ.)։ Սեռ.-տրականում հոգնակերտ մասնիկի ընդհանրացման միտումով է բացատրվում անց-ի հանդես գալը ձիանց կազմավորման մեջ. ձիանց ոտքերի տակ (ՍԴ, 141)։

Արևմտահայ գրական աշխարհաբարում հանդիպում է որոշ հնատիպ ու գրաբարատիպ կառուցաձևերում. կանանց (ՏԿ, ՎԱ, 71), աղչկանց (և. տ. 75, 125), ծաղկանց (ՎՔ, Ե, 16, 44), ար-տևանանց (Ս, Ե, 287)։

Արևելահայ գրական լեզվի կազմավորման շրջանից սկսած՝ նշված դիրքերում ուժեղանում է անց-ի բնդհանրացումը սեռ.-տրականում[10]. *իկ-անց՝ մարդիկ—մարդկանց, այծ-անց՝ կանայք—կանանց (նաև՝ տիկնանց), աեվ-անց՝ վարդանանք—վարդանանց, իեվ-անց՝ անձինք—անձանց։*

Ա՛նց.—Անց հավաքականակերտի՝ ձայնավորների ներդաշնա-կության պայմանավորված տարբերակ. Տէմմանց (ըստ ԿԴ, ՀՂԲՔ, Ն. 264)։

---

[10] *Սրան են վերաբերում նաև՝ երեխանց («Մեղու Հայ.», 1858, №№ 2, 24), աղչկանց (և. տ. № 7), անձանցից (Շ, ԵԺ, X, 108)։*

ԱՆՈՒՆՑ.—Աճէմ՝ *հոգնակերտ-հավաքական մասնիկի հարացուցային տարբերակ թեք հոլովաձևերում։*

ԱՆՈՒՑ.—Աճէմ՝ *մասնիկի հարացուցային տարբերակ սեռատրականում։*

ԱՆՔ[1].—*Բաղադրյալ՝ աճ–ք>աճք զարգացումով հոգնակերտ-հավաքական մասնիկ. ձևաբանական այս սերտաճումը սկսվում է դեռևս հրաբարում՝ ձիանք, իշանք (ըստ ՀԱ, ԼՔՀ, III, 828)։ Եռագրաբարյան հայերենում առանձնապես չի ընդլայնում գործածության ոլորտը։ Բարբառներում ևս համարյա նույն բառերի հոգնակիակազմության տարր է. հանդիպում է, օրինակ, Արարատյան, Ղարաբաղի, Հաղրութի, Նոր Ջուղայի, Սյունյաց, Վանի, Ագուլիսի, Մեղրու, Կարճևանի, Մալաթիայի, Մշո, Սասունի, Շատախի, Կարնո, Դերսիմի, Ուրմիայի, Սվեդիայի բարբառներում և խոսվածքներում, օր. ձ'իանք (ՀԱ, ԼՔՀ, III, 737, Ն. Ջուղա), թիյանք (ԱՊ, ՀԲ, 85. Հաղրութ), դիվանք (ՍԴ, 21), ծիանք (ՀԺՀ, IX, 18. Ալաշկերտ), իշանք (ՀՄ, ԿԲ, 46. Կարնո բ.), ցաքանք, գ'րլանք (Մշո բ.)։*

Գրական աշխարհաբարում մասնակի արտահայտություններ է ունեցել. ըստ ԱԱ, ՔՔ, Ք, 13՝ արևմտյան գրական աշխարհաբարում ձիաճ, բայց և ձիեր: Համմ. նաև՝ ձիաճ (ՍՋ, ԵԺ, IV, 199, ՄՆ, Ն, 460), որ բարբառային գործածություն է։

Թեք հոլովաձևերում կարող է լինել՝ աճաց, օրինակ, Ագուլիսի բարբառում. ձիյաճաց (ՀԱ, ԼՔՀ, III, 837). կարող է պահպանվել նույնությամբ. ձիանք—ձիաճ-ից (ՀԺՀ, IX, 549) և այլն։

ԱՆՔ[2].—*Ք հոգնակերտի զարգացումն է երբեմնի հիմքային աճ տարրով՝ աճ–ք>աճք. հին գրական հայերենում ծավալվում է հատկապես իբրև անեզականակերտ. դասական գրաբարի բառաձևերի մեծ մասում այս մասնիկի աճ–ը դեռևս հիմքից անկախ չէր գիտակցվում։*

Նորգրաբարյան հայերենում աճք–ով կազմված անեզական վերացականները աստիճանաբար բառայնանում են, գիտակցվում եզակի կամ անհոգնական, իսկ անեզական հավաքականների մի մասը ամրանում է իր կառուցաձևով և ֆունկցիայով, իբրև բառաքերականական ուրույն խմբավորում։

*Միջին գրական հայերենից սկսած, մի կողմից, ուժեղանում է ածանցական տարր դառնալու միտումը, մյուս կողմից՝ հավաքական-անեզական կերտելու ֆունկցիան. համմ. փշրանք (ՆՄ, ԺԱվ, 334. Գ, ՔԲՄ, 59), բերթանք (ՄԺ, 79, XIII դ.), կղպանքն

«բանալիներ» (ՆՔ, ՀԿ, 113, 258), աղաչանք, պաղատանք արէք (ՄՆ, ՈՒՔ, 163), պարծանք (ՆՔ, ՀԿ, 42), որը կրկին մէն լինի տուգանքն (ՍՍ, Դ, 172), քե հիւանդն շատ ծարվի՝ նշան է որ միջի մսանքն առողջ են (ԱԱ, ՕՔ, 501), նաև՝ բլբլանք (ն. տ. 153), հոդմանք, ոսկրանք, բշտանք (ն. տ. 407)։ Միջին հայերենյան էտապում դեռևս դժվար է որոշակի սահմանագիծ դնել այս մասնիկի՝ ածանցական և հավաքական-անեզականակերտ ֆունկցիաների մեջ։

Բարբառներում տարածված է հատկապես ազգակցությունարենակցություն, գերդաստանային հարաբերություն արտահայտող անձնանուններից անեզական-հավաքականներ կազմելու նշանակությամբ. այս ֆունկցիայով նա տարածված է գրեթե բոլոր բարբառներում. այսպես՝ հրնէրանք, Ղղրէզ՚անք (Ղրբ. բ.), քէռանք, անէրանք (Կարնո, Մշո), քավորանք (Ուրմիա), քօրանք, ախպըրանք (Մալաթիա), ուհանանք (Լոռի), մ՚ըրանք (Կեսարիա)։ Հավաքական նշանակությամբ, բայց առանց ֆունկցիոնալ շեշտվածության, հանդիպում է այլ բառերի հոգնակիակազմության մեջ ևս. փիյանք «ճարպեր» (Հաղրութ), տեղանք (ՀԺՀ, IX, 445.—Մանազկերտ), լուերանք «լեռներ» (Սվեդիա), ընտեղանք (ՊՊ, ԵԺ, I, 109, Աբրահամյան բ.), գեղանք «գյուղեր», գլխանք (ըստ ՍՄ, ՀԲԲ, 1), լազդանք (Դերսիմ-Չարսանճագ)։ Նույերանք, նաև յէգնանք (Հաղրութ) տիպի կազմավորման մեջ անք–ը կարող է հատատված լինել նմանաքանությամբ։ Թեք հոլովաձևերում սովորաբար անց. հրնէրանք—հրնէրանց (Ղրբ. բ.)։ Ածանցական հատկությունը ուժեղ է նաև բարբառներում. կէրպարանք, փօրձանք, ապրանք (Արաբատյանում), փրսպարանք, պըմբասանք, կըլխըցավանք, ըղաչանք, լըրչարանք (Ղրբ. բ.)։

Արևմտահայ գրական աշխարհաբարում հոգնակերտ նշանակությամբ հանդիպում է միայն հնաոճ կամ գրաբարատիպ կառուցածևերում։ Մնացած դեպքերում նա գերազանցապես ներկայանում է իբրև ածանցական տարր. հալածանքներուն մեջ (ԳՋ, ԵԺ, I, 12), թախանձանքներ (ն. տ. 49), բաղձանքներու մեջ (ՎՔ, Ե. 36), հեծեծանքներ (Ս, ՔԵ, 65)։

Գրեթե նույնը պետք է ասել արևելահայ գրական լեզվում նրա գործածության մասին։ Հիմնականում նա անեզական-հավաքականակերտ է՝ աներանք, վարդանանք։ Բայց այս կիրառությունը խիստ սահմանափակված է։ Մասամբ գործածվում է իբրև հավաքականակերտ ածանց. տականք, փշրանք. համմտ. «բերանօվ պատմեցից զամենայն անցանքն» (ՆԿՊ, 120, XVIII դ.), այսինքն՝

«անցքերը». սա դեռ գրական աշխարհաբարի կազմավորման շրջանում, Ակնհայտ ածանցական տարր է՝ դռվասանք, հռասանք, հանդերձանք, տեղանք, երազանք, աշխատանք, հետևանք, փորձանք, արտադրանք և նման շատ կազմավորումներում (հմմտ. ՄԱ, ՀԼՏ, 253)։

ԱՆՔ՛.—*Անք[1] մասնիկի հնչյունական տարաճում (ք-ի քմայնացումով). Շատախի բարբառում. ծիանք՛ (ՄՄ, ՇԲ, 88)։*

ԱՆՔ.—*Անք[1] մասնիկի հնչյունական տարաճում (ձայնավորների ներդաշնակությամբ պայմանավորված). լվանք, ձվանք (Ագուլիս. հմմտ. նույնը Սյունյաց, Կարճևանի, Մեղրու բարբառներում)։ Այսպես և՝ անք[2] հավաքականակերտի հարաբերակցությամբ. Մթթվեանք (Սյունյաց բ.). հմմտ. նաև՝ կ՛իրանք «գրքեր» (Հադրութ), գի՛րանք «գրքեր» (Մեղրի)։*

ԱՆՔ՛.—*Անք[2] մասնիկի հնչյունական տարաճում (ք-ի քմայնացումով և ա>ա անցումով) Վանի բարբառում. ճՀճաՆք՛։*

ԱՆՔՆԵՐ.—*Հազվադեպ գործածություն ունեցող բազադրյալ մասնիկ՝ անք-ներ>անքներ զարգացումով. ծիանքներ (ՀԺՀ, IX, 254. հմմտ. ՍԲԹ, ՄԲ, 79՝ձ՛իանքներ)։*

ԱՆՕՆՑ, *տե՛ս* **ԱՆՈՆՑ**։

ԱՏԱՑ.—*Ատէ, ատիք՛ մասնիկների հարացուցային տարբերակ սեռ.-տրականում։*

ԱՏԷ.—*Հազվադեպ գործածությամբ հանդիպում է Մեղրու բարբառում. կօռնը (<կուռն)>կրռնատէ. թեք հոլովներում (սեռ.-տրական)՝ առաց. կրռնատաց (ըստ ՀԱ, ԼՔՀԼ, III, 846)։ Սակայն առկա է նաև՝ պրտօկ (<պտուկ)>պրտրկնատէ, սեռ.-տր. պրտրկնատաց։ Ուստի հնթադրելի է, որ երկու դեպքում էլ (կրռնատէ, պրտրկնատէ) գործ ունենք նույն մասնիկի հետ. և քանի որ առաջին դեպքում առկա է ն վերջնահանգ, տեղի է ունեցել հիմքավերջի և հոգնակերտի ն-երի ձուլում՝ *կրռն-նատէ>կրռնատէ, թեք՝ սեռ.-տրական հոլովում համապատասխանաբար կունենանք ոչ թե առաց, այլ նատաց։*

ԱՏԻՔ՛.—*Հանդիպում է Ագուլիսի բարբառի ոչ-համակարգային կառուցվածքներում։ Օր. պրտրվատիք՛, ըսկըռատիք՛. թեք հոլովաձևերում՝ առաց. ըսկըռատաց (ըստ Հ. Աճառյանի. հմմտ. ԱՂ, ՀԲ, 244)։*

ԱՏԻՔ՛.—*Ատիք՛ մասնիկի հնչյունաբանական՝ ձայնավորների ներդաշնակությամբ պայմանավորված տարբերակ. գ՛ըզըրատիք՛։*

Ա՛Ր.—*Հանդիպում է որոշ բարբառների (Ագուլիս, Մեղրի. Կարճևան, Կաքավաբերդ) համակարգային կազմավորումներում.*

եր հոգնակերտի հնչյունական տարաձում (եր>ար). գործածական է հիմնականում նրա դիրքերում, միավանկ (գերազանցապես բաղաձայնահանգ) հիմքերի հետ. արտ—արտար (Կարճևան), նաև՝ կամնար, հարսնար (Մեղրի), ծառար (Կաքավաբերդ), տօնար, աստղար (Ագուլիս)։ Թեք հոլովաձևերում սովորաբար ներկայանում է եր տարբերակով (Մեղրի, Ագուլիս). էծար—էծէրու (ըստ էԱ, ՄԲ, 113), աղար—աղէրի (Համմտ. ՀԱ, ԼՔՀԼ, III, 588). Կարճևանի բարբառում՝ օր. հարսնար—հարսնօրու (ՀԴՄ, ԿԲ, Ն, 239), մազար—մազօրու (Ն. տ. 238), իսկ եթե հոգնակազմ հիմքում ր կա, կարող է և օո լինել. քարար—քարօոռու (Համմտ. ԱՂ, ՀԲ, 305)։

Ա՛Ր.—Ար մասնիկի հնչյունաբանական տարբերակ (ձայնավորների ներդաշնակության օրենքով պայմանավորված). գ՛ա՛լ՛ար (Կարճևան), թիլ՛ար (Մեղրի), գ՛իա՛ր «գիտեր», ձիլ՛ար, ձա՛վ՛ար լա՛վ՛ար (Ագուլիս)։ Թեք հոլովաձևերում՝ էր. գա՛լէրու (Մեղրի), օր՝ ջա՛ր՛օրու (Կարճևան)։ Սասունի բարբառում ա՛ր-ը կարող է ներկայանալ իբրև իր հոգնակերտի տարբերակ թեք հոլովներում. մա՛րտիր—մա՛րտի՛րու (տե՛ս ՎՊ, ՍԲ, 33—35)։

ԱՐԱՆՔ.—Բաղադրյալ՝ ար-անք>արանք զարգացումով հավաքական-հոգնակերտ. հատկապես երևում է սերմ(ն) բառի հոգնակիականացմության մեջ՝ սրմարանք (Ղարաբաղ, Մեղրի, Կարճևան, Սյունյաց, Հադրութ). նաև՝ դէղարանք (Մեղրու բ., ըստ էԱ, ՄԲ, 363), գա՛ղարանք (Ն. տ. 120), կա՛ղարանք (Սյունյաց բ., ըստ ՆՎ, ԳՍԲ, 67)։ Թեք հոլովաձևերում կարող է պահպանվել նուլնությամբ. սրմարանքու, դէղարանքու, գա՛ղարանքու (ըստ ՀԱ. ԼՔՀԼ, III, 848). սրմրրանքու, սրմրրանքէն (Ղրբ. բ.), այստեղ առկա է ր ր ա ն ք տարբերակ։

ԱՐԱՆՔՆԷ.—Բաղադրյալ արանք-նէ>արանքնէ զարգացումով. հադիպում է, օրինակ, Մեղրու բարբառում. «Հետաքրքրական է հիշել, որ սրմարանք բառը նորից գիտակցվելով իբրև հավաքական եզակի, հաճախ առանում է հոգնակի -նէ մասնիկը և ունենում է չորս հոգնակերտ մասնիկ, որոնցից միայն մեկն է գիտակցվում» (էԱ, ՄԲ, 120)։ Համմտ. Ղրբ. բ. սրմրրանքէր (=ր ր ա ն ք է ր)։

ԱՐԱՅ.—Արէ, արի՛, արֆ մասնիկների հարացուցային տարբերակ սեռ.-տրականում։

Ա՛Ր է.—Հոգնակերտ-հավաքական մասնիկ. հազվադեպ գործածությամբ հանդիպում է Մեղրու բարբառում. դըրքա՛րէ, սեռ.-տրականում՝ արաց. դըրքա՛րաց (ըստ ՀԱ, ԼՔՀԼ, III, 846—847)։ Համմտ. նաև՝ ճրղնարէ, շըմքարէ (էԱ, ՄԲ, 120)։

ԱՐԷՆՔ.—*Բաղադրյալ՝ հավաքականակերտ մասնիկ՝* **ար-էնք** *(<աճ)>***արէնք** *զարգացումով. հանդիպում է նոր Ջուղայի, Արտաշատյան և այլ մի քանի բարբառների ոչ-համակարգային կազմավորումներում. տեղարէնք, կողմարէնք (ըստ ՀԱ, ԼՔՀԼ, III, 736). տէղարէնք (ՀԺՀ, II, 576. ԽԱ, ԵԼԺ, III, 61, 104), գէղարէնք (ՀԺՀ, II, 576, 84. ԽԱ, ԵԼԺ, III, 91). Հնարավոր է, որ պահպանվի թեք հոլովաձևերում. կողմարէնք—սեռ.-տր.՝ կողմարէնքի (ն. Ջուղա), գէղարէնքից (ՀԺՀ, II, 517). Հնագույն գրավոր արտահայտություններից է գեղարեմք (ԾԿԴ, 37, XVIII դ.).*

ԱՐԻՆՔ՛.—**Արանք** *մասնիկի հնչյունական տարաձում. հանդիպում է Հաղրութի բարբառում և Ղարաբաղի որոշ խոսվածքներում. սրըմարէնք՛ (Հաղրութ).*

ԱՐԷՔ.—*Հանդիպում է միջին դրական հայերենում. բաղադրյալ* ***ար-այֆ>ար-էֆ>արէֆ** *զարգացումով. գեղարէք (ԴՀվ, III, 221, XIII դ.). Այլ օրինակ չունենք. Համմ.* **որայֆ, որեֆ:**

ԱՐԻՔ՛.—*Բաղադրյալ հոգնակերտ-հավաքական մասնիկ. հանդիպում է Ագուլիսի բարբառի ոչ-համակարգային կազմավորումներում. տնարիք՛, սեռ.-տրականում՝* **արաց,** *օր. տնարաց (ըստ ՀԱ, ԼՔՀԼ, III, 837).*

ԱՐԻՔ՛.—**Արիք՛** *մասնիկի հնչյունաբանական տարբերակ՝ ձայնավորների ներդաշնակության օրենքով պայմանավորված.* **-ըրիք, -էրիք** *(Ագուլիս).*

ԱՐՈՒՆՔ.—*Բաղադրյալ՝* **ար-ուճ>արուճ** *զարգացումով հավաքականակերտ մասնիկ, հանդիպում է որոշ բարբառների (օր. Ն. Ջուղայի) ոչ-համակարգային կազմավորումներում. սերմարուն, դեղարուն, սրբարուն (ՀԱ, ԼՔՀԼ, III, 737).*

ԱՐՈՒՆՔ.—**Արուճ** *մասնիկի հնչյունական տարաձում Ագուլիսի բարբառում.* **սրմարուն, ներ:**

ԱՐՔ.—*Բաղադրյալ՝* **ար-ֆ>արֆ** *զարգացումով հավաքականակերտ. հանդիպում է Ագուլիսի, Մեղրու, Կարճևանի բարբառներում (ոչ-համակարգային կազմավորման տարր). խոսկարք (Ագուլիս), խոսկարք (Կարճևան), արղարք, օնքարք (Մեղրի). Թեք հոլովաձևերում կարող է ներկայանալ* **արաց** *տարբերակով. տղարք—տղարաց (Ագուլիս).*

ՈՐՔ.—**Արք** *մասնիկի հնչյունական տարաձում Արեշ-Հավարիքի բարբառում. տղ՚արք (ԱՂ, ՀՔ, Ն, 380).*

ԱՑ՝.—*Հին հայերենի* **ց** *հոգնակերտն է հիմքային տարրով վերակազմավորված՝* **ա-ց>աց** *(ծնաւղաց) կամ* **այ-ց>այց>աց** *(կանայց>կանաց). Նոգրաբարյան հայերենում ոչ-հաճախական դոր-*

ծածուքյուն ունի. մասնակի կիրառուքյամբ հանդիպում է միջին դրականում՝ կանաց (ԱՍ, ԱՍ, 73)։ Բարբառներում ևս հազվադեպ գործածուքյամբ երևում է սեռ.-տրականում[1]. *ծնողք—ծնողացդ (ՊՊ, ԵԺ, I, 20. Արարատյան բարբառ. Համմտ. ԽԱ, ԵԼԺ, III, 112). Հանդիպում է նաև որոշ արտահայտուքյուններում, ոճերում. խլմօղաց, լըսօղաց, հիշօղաց, ձէռաց. (Հեռու լսօղաց, խրմօղաց ահուչ լինի ևն). սրի ձեռաց ես շինեմ էտ բանը (ԳՍ, Պ, 13)։ Վանի բարբառի սեռ.-տրականում ձեռք է բերել հոլովակերտի արժեք, որ ավելանում է հոգնակի ուղղականի ձևին՝ հացեր—հացերաց։*

Արևմտահայ գրական աշխարհաբարում հանդիպում է դյուրաբառիթ սեռ.-տրականում՝ ծրագրաց (ՏԿ, ՎԱ, 29), վարժարանաց (Ն. տ.), երիտասարդաց (Ն. տ. 91)։ Արևելահայ գրական աշխարհաբարի կազմավորման շրջանում ևս հանդիպում է գրաբարատիպ կառուցվածքներում՝ զարաց. արդի գրական հայերենում ածանցական արժեք ունի. օրինակ՝ ռուսաց։

ԱՏ[2].—*Որոշ բարբառներում աք*[1] *մասնիկի դիրքային տարբերակ սեռ.-տրականում։*

ԱՈՒՆՔ.—*Բաղադրյալ՝ անճ‖աուճ>աունճ զարգացումով մասնիկ. հանդիպում է Արամոյի բարբառում. սիրմ(<սերմ)>սրմաունք, լիուռաունք (ըստ ԱՂ, ՀՆԲհ, 27)։*

ԱՔ[1].—Այճ *(երբեմն՝ անճ, եայճ, եանճ) մասնիկի հնչյունական տարաձևում. «Միջին Հայերենի -այճ մասնիկն է, որ կիլիկյան շրջանում միայն երեք բառի վրա էր գործածվում. ավելի հետո որոշ բարբառներում բավական ընդհանրացավ» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 714)։ Սակավ օրինակներ ունենք միջին գրական հայերենից. պարոնաք (ԱՍ, ԱՍ, 506), վարդապետաք (ԱՍ, ՕՔ, 20), Զխաղլո տեղաքն ի շուրջ կու գան (ՀՔ, Տ, 165)։*

Հանդիպում է որոշ բարբառների (Հադրութ, Ագուլիս, Մեղրի, Առտիալ, Կարճևան) ոչ-համակարգային կառուցաձևերում. աշաղեիրաք (Առտիալ), խրնամաք, Ափրամաք (Կարճևան), հրնէրաք (Մեղրի), Բաղդասարաք (Ագուլիս)։ Թեք հոլովաձևերում սովորաբար՝ աց.բ՛արէգամաք—բ՛արէգամաց (Առտիալ)։ Համմտ. Արամոյի բարբառում իֆ>աֆ. ըկկաք «այգիներ»։

ԱՔ[2].—Իկ *մասնիկի հնչյունական տարաձևում Արամոյի բարբառում. մարդաք «մարդիկ» (ըստ ԱՂ, ՀՆԲհ, 28)։*

ՈՔ.—*Սովորաբար ներկայանում է իբրև աֆ*[1] *մասնիկի հնչյու-*

---

[1] *«Արարատ»-ում հանդիպել ենք ծնողի, ծնողաց, բայց նաև՝ ծնողացմէն ձևին (տե՛ս «Արար.», 1858, № 8)։*

նաբանական տարբերակ՝ ձայնավորների ներդաշնակության օրենքով պայմանավորված. Ք՛իսպ՛րա՛ք (Հադրութ), Փ՛ր՛ա՛ք (Մեղրի). Սվեդիայի բարբառում կա այս տեսքով, բայց այլ զարգացումով մասնիկ. գնագ (<կնիկ)>գա՛նն՛ա՛ք. սեռ.-տրականում՝ ա՛ց:

ԳԱՆՑ.—*Կանց կամ (կ)անց մասնիկի հնչյունական տարաձում Մալաթիայի բարբառում. իբ հոդնակերտի հարացուցային տարբերակ սեռ.-տրականում. մարթիք—մարթգանց. Սակայն* **գ-անց** *ձերտաձումը դեռ իր ավարտին չի հասել:*

ԴԱ.—*Հազվադեպ գործածական մասնիկ. տի հոդնակերտի հնչյունական տարաձում. հանդիպում է Սվեդիայի բարբառի ոչ-համակարգային կազմավորումներում. բ՛էօգ(<բակ)>բ՛ագդա, ձ՛րգ(<ծակ)>ձ՛ագդա:*

ԴԱ.—*Դա մասնիկի հնչյունական տարաձում Արամոյի բարբառում. լիզվրդ՛ա՛ (ԱՂ, ՀՆԲհ, 28):*

ԴԱՆ.—*Դերսիմի խոսվածքներից մեկում (Ջարսանճադ) հաղվադեպ գործածությամբ մասնիկ. լաոդան «լեռներ» (ՒՒԲ, ԴՔՔ, 37):*

ԴԱՆՑ.—*Դինճ, դանճ մասնիկների հարացուցային տարբերակ սեռ.-տրականում:*

ԴԱՆՔ.—*Տանճ մասնիկի հնչյունական տարաձում, հանդիպում է կարնո (կրդօրդանք), Պոլսի (կրդօրդանք), Նոր Նախիջևանի (օսկօրդանք), Սասունի (աղպըրդանք), Մալաթիայի (օսկըրդանք), Դերսիմի, Արդվինի (ընգէրդանք), Մշո (կրդօրդանք), Հաճընի (ախպըյդանք) բարբառներում. ոչ-համակարգային կազմավորման տարր, հավաքականակերտ. Հաճընի բարբառի սեռ.-տրականում՝ դոէց. ախպըյդանք—ախպըյդոէց:*

ԴԱՅ‖ԴԱՅ.—*Դաf‖դա՛ք (նաև դիf) մասնիկի հարացուցային տարբերակ սեռ.-տրականում և նրանից կազմված ձևերում:*

ԴԱՔ.—*Դանճ (դինճ) մասնիկի հնչյունական տարաձում. հանդիպում է մի քանի բարբառների (Սվեդիա, Ամասիա ևն) ոչ-համակարգային կառուցաձևերում. ընգէրդաք (ՀԱ, ԼՔՀ, III, 840), ախպըրդաք (ԱՂ, ՀԲ, 434). սեռ.-տրականում՝ դաց. ընգէրդաց (Ամասիա), նաև՝ դաւց, դօուց, դուն:*

ԴԱՔ.—*Դաf մասնիկի հնչյունական տարաձում. հանդիպում է, օրինակ, Համշենի, Սվեդիայի, Հաճընի բարբառներում, Դերսիմի խոսվածքներում. ընգէյդա՛ք (Համշեն), ա՛չգինդա՛ք «աղջիկներ» (Հաճընի). Սեռ.-տրականում՝ դօց. գօնգդոց (Ջեյթուն), դա՛ց՝ ընգըդա՛ց (Համշեն), նաև՝ դոէց, ըստ ԱՂ, ՀՆԲհ, 151՝ կարող է լինել դա՛ք:*

ԴԷՐԱՆՑ.—*Հազվադեպ գործածությամբ հանդիպում է Թբիլիսիի բարբառում, սեռ.-տրականի հոգնակիակազմության մեջ.* կնգդէրանց *(ԳՍ, Ըն, 208)։*

ԴԷՈՒՆ (դօուն).—Տան-*ի հնչյունական տարաձում. հազվադեպ գործածությամբ հանդիպում է Արամոյի բարբառում. իմըլդէ ուն «ոջիլներ» (ԱՂ, ՀՆԲհ, 28)։*

ԴԷՔ.—*Բաղադրյալ՝* տիf>դէf *զարգացումով (միջանկյալ օղակները դժվար է որոշել. գուցե* դաf*-ի վրայով). Հանդիպում է Մալաթիայի, Հարբնի, Բեյլանի բարբառների ոչ-համակարգային կառուցածևերում. ախպիդէք (ԱՂ, ՀԲ, 98), ախպէրդէք (ն. տ. 419), զընիգդէք (ԹԴ, ՄԲ, 76)։ Բեյլանի բարբառի քնք հոլովածևերում՝ դուզ. քարդուց, քարդուցէն, քարդուցօվ։*

ԴԻ.—*Հազվադեպ գործածությամբ հանդիպում է Դերսիմի խոսվածքներից մեկում (խարբերտ-Երզնկա). չուվրնդի, ամրնդի (ըստ ՌԲ, ԴՔ, 18). տի հոգնակերտի հնչյունական տարաձում։*

ԴԻՆՔ.—*Բաղադրյալ մասնիկ. տինք մասնիկի հնչյունական տարաձում, որ հանդիպում է, օրինակ, Արարատյան, Կոզնի բարբառներում. ոչ-համակարգային կառուցածևի տարր. ախպէրդինք (Արարատյան բ., ըստ ԱՂ, ՀԲ, 223), աղբէրդինք (Կոզնի բ., ըստ ՌԲ, ԿԲ, 88)։ Արարատյան բարբառի սեռ.-տրականում՝* դանց. *ախպէրդանց։*

ԴԻՐՔ.—*Բաղադրյալ՝* դի–իրf(<էրf)>դիրf *զարգացումով մասնիկ. հազվադեպ գործածությամբ հանդիպում է Թբիլիսիի բարբառում. կնգդիրք (ԳՍ, Ըն, 29, 181, 220)։*

ԴԻՔ.—*Բաղադրյալ՝* դի(<տի)–f>դիf *զարգացումով մասնիկ. հավաքական հոգնակերտ. ոչ-համակարգային կազմավորման տարր, որ հանդիպում է Կեսարիայի, Մշո, Սասունի, Առտիալի, Պոլսի, Նոր Նախիջևանի, Արդվինի, Կարնո, Հաճընի, Մալաթիայի բարբառներում, Դերսիմի խոսվածքներում. օրինակ՝ գնգդիք (ՎՊ. ՍՔ, 32)։ Քնք հոլովաձևերում՝* դաց, դուց, դօց. *ախպէրդիք—ախպէրդաց (Սուլավա), աղբրդդիք—աղբրդդուց (Սասուն), կընգդիք—կընդօց‖կընգդօց։*

ԴՈՂՑ.—Դանf *(նաև* դա̈f*) մասնիկի հարացուցային տարբերակ սեռ.-տրականում։*

ԴՈՒՆ.—*Հազվադեպ գործածությամբ հանդիպում է Սվեդիայի, Սասունի բարբառներում ու հարակից որոշ խոսվածքներում. քինըրդուն «թոնիրներ» (ԱՂ, ՀԲ, 447. Քեսաբ)։*

ԴՈՒՆՑ.—Դաf-*ի հարացուցային տարբերակ սեռ.-տրականում։*

ԴԱՒՆՔ.—*Բազադրյալ՝ դուն–f>դունք ղարգացումով մասնիկ. հընգէրդունք (ՎՊ, ՍԲ, 90, Մասուն)։*

ԴՈՒՖ.—*Դաf–ի (նաև դիf–ի, ղէf–ի) հարացուցային տարբերակ սեռ.–տրականում։*

ԴՈՆՑ.—*Դօնf–ի հարացուցային տարբերակ սեռ.–տրականում։*

ԴՕՆՔ.—*Դինք (դանք) մասնիկի հնչյունական տարաճում, հազվադեպ՝ հավաքական հոգնակերտի նշանակությամբ գործածվում է Մասունի, Հառքնի բարբառներում, Դերսիմի խոսվածքներում. ախպէրդօնք (ՀԳ, ՀԲ, 171, Հառքն), սեռ.–տրականում՝ դօնց. մէզդլդօնք—մէզդլդօնց (Զմշկածագ)։*

ԴՕՑ.—*Դաf–ի (նաև դիf–ի) հարացուցային տարբերակ սեռ.–տրականում։*

ԴՕՈՒՆ. *տե՛ս* ԴԷՈՒՆ։

ԴՕՈՒՑ.—*Դաf–ի հարացուցային տարբերակ սեռ.–տրականում*

ԵԱՅՔ.—*Ք հոգնակերտի և եայ հիմքային տարրի սերտաճում. հանդիպում է գրաբարի ոչ համակարգային կառուցաձևերում, երբեմն այf–ին զուգահեռ. աղախնեայք, արուարձանեայք։ Մակայն եայ–f բազադրությունը թույլ էր գիտակցվում։ Նոր հայերենում սրա հետ են կապում եf ածանցը, օրինակ, ջրօրհնեք։*

ԵԱՆ.—*Հանդիպում է հին գրական հայերենի ոչ–համակարգային կազմավորումներում. նախարարեան, թղթեան, մոգեան, գործեան, բերդեան։ Թեք հոլովաձևերում՝ ենի (եան>են). գրեան—գրենոյ։ Հետագայում պահպանվել է ազգանուններում, ինչպես և այժմ, իբրև ածանցական տարր։*

ԵԱՆՑ.—*եանք մասնիկի հարացուցային տարբերակ սեռ.–տրականում. Մամիկոնեանք—Մամիկոնեանց (նոր ուղղագրությամբ յանց՝ Մամիկոնյանց), նաև՝ Լազարեվեանց («Արարատ», 1858), գրեանց (ՄՆ, Ն, 184)։*

**ԵԱՆՔ.—*Բազադրյալ՝ եան–f>եանք զարգացումով հավաքականակերտ մասնիկ, անձնանուններից, տոհմանուններից կազմում է անեզական-հավաքականներ. Մամիկոնեանք, Պռոշեանք, որեանք։ Գրաբարի ուշ շրջանում և եոգրաբարյան հայերենում գործածվում է դրեթե նույն նշանակությամբ, հավաքական հոգնակի կերտելով նաև այլ բառերից. Հմմտ. գրեանք (ԿՂ, ՍՎՄ, 152, XIII դ., ԱԱ, ԱԱ, 5. ԱԱ, ՕԲ, 7)։ Նոր հայերենում հանդիպում է միայն գրաբարատիպ կառուցաձևերում, իբրև հնաբանություն Մամիկոնյանք (յանք՝ նոր ուղղագրությամբ)*[12]։

---

[12] *Տե՛ս նաև՝ Ղազարեվեանք («Արարատ», 1858), Ղևոնդեանք (ՍՄ, ՀԲՔ, III,*

ՆԱՐ.—*Հազվադեպ գործածությամբ հանդիպում է գրաբարում (նաև հնչյունափոխ տարբերակով՝ եր). ուրեմն. խոդնար, վաննար, իշնար, բանեար, բերդնար, վարժնար. «Կերեւայ թէ հին գրաւոր լեզուին մէջ եար հասարակօրէն այն անուանց վրայ կը բանեցընէին՝ որոնց հիշդ կանոնաւոր յոգնակին դժվարութիւն մ՚ հետն ունէր, ինչպէս են վանք անեղականն, որուն՝ իւր եղակի նշանակութենէն որոշելու համար նույն վանեար ձեւը կը տրուէր» (ԱՄ, ՔՔ, 79). Սրանից է սերում եր մասնիկը, որ այդքան տարածվում և ընդհանրանում է եզդրաբարյան հայերենում. Դեռևս վաղ շրջանից այս եար–ը թեք հոլովաձևերում ուներ երիրքային տարբերակը. վանեար—վաներոյ։*

ԵՍՐՔ.—*Բաղադրյալ՝ եար–ք զարգացումով մասնիկ. իշեարք (ըստ ՍՄ, ՀԲՒ, II, 167)։*

ԵՆ.—*Նաև մասնիկի դիրքային տարբերակ թեք հոլովաձևերում. գրեան—գրենոյ։*

ԵՆՑ.—*ԵՆՑ հավաքական հոգնակերտի հարացույցային տարբերակ սեռ.-տրականում, հանդիպում է միջինհայերենյան շրջանից սկսած. զՋահեններց այգին (ԴՀվ, III, 97, XIV դ.), զվախթանկենց այգին (ն. տ. 98), տե՛ս նաև ԵՆ-ի կապակցությամբ։*

ԵՆՔ.—*Հին հայերենի եանք մասնիկի հետագա դարձացումն է՝ եանք>ենք (եա>ե). սկսած միջին հայերենից հատատավում է իբրև անձնանուններից, հատկապես հատուկ անուններից հավաքական անեզական կերտող մասնիկ։*

Բարբառներում, կապված արտասանական յուրահատկությունների հետ տարադարձում են ԷՆՔ կամ ԵՆՔ. օր. Մրգոյէնք (Կարնո բ.), Քիրքօրէնք (Մալաթիա), Բաբէնք (Սվեդիպ), Ազօփէնք (Պոլիս, Կեսարիա), Վարդիթէրէնք (Արարատյան), Ավիգնք (Մշո բ.)։ Սեռ.-տրականում՝ էնց. Վարդիթէրէնք—Վարդիթէրէնց։

Այս մասնիկը ֆունկցիոնալ նույն արժեքն ունի նոր գրական հայերենում. արևմտահայ գրականում՝ Սոնայենք (ԳՍ, ՄՅՍ, 190). սեռ.-տրականում՝ ենց, վարժապետենց (ՏԿ, ՎԱ, 50), Գևորդ աղայենց վրա (ԳՋ, ԵԺ, I, 198). արևելահայ գրականում՝ Հակոբենք—Հակոբենց։

ԵՐ.—*Հանում են գրաբարյան եար մասնիկից, որը թեք հոլովաձևերում հնչյունափոխությամբ հանդես էր գալիս եր տեսքով, և անկախ դրանից դեռևս 5-րդ դարում մի շարք բառեր ունեին նաև*

---

186). Իմիքյանք (ՄՆ, ն, 133), գրեանք («Մեղու Հայ.», 1858, № 1), գրյանքր (ՄՆ, ն, 159)։

եր–ով հոգնակիակազմություն. վաներ, բաներ, հայեր են։ Հ. Աճառյանը նկատում է. «սղմամբ ծագում է գրաբարի եաւ ձևից, անշուշտ հոլովական եռոյ և այլ ձևերի աղդեցությամբ։ Այս –եաւ բառ Թուդքի (Etrusk und arm., էջ 163) փոխառություն է կովկասյան լեզուներից. Համմ. չեչեն. ar, er, ir, թուշ. ar, ուտ. ur. Նման ձևեր կան նաև ուրիշ լեզուների մեջ և բոլորն էլ հոգնակերտ մասնիկներ են, ինչ. էտրուսկ. հոգնակիի մասնիկն է համարվում -er, ...կամ ar» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 710)։ Նույն տեղում նա բերում է նման հոգնակերտների ձևեր այլ լեզուներից, օր. հնդկական դիլդիտա-շինա լեզվում առկա են նաև are, re, տունգուսերենում՝ r, բուրյաթ-մոնղոլերենում՝ nar, ner, դրավիդյանում՝ ar, or, ir, իսկ տուլու լեզվում՝ er. Հնդեվրոպական լեզուներում ևս դուգահեռներ անցկացնելու հիմքեր կան. չվեդերենում երրորդ հոլովման հոգնակին՝ er, ումբր. լեզոքների հոգնակին՝ er (<es), գերմ. er (es>er անցումով), դանիերենում՝ er։ Մեծ հայագետը հայերեն եր–ի և դրանց բոլորի նմանությունը համարում է պատահական։ Կարծում ենք, թե նրա այդ դիտողությունը, մի կողմից, հայերենի, մյուս կողմից՝ հնդեվրոպականի ու հայերենին հարևան լեզուների ստրուկտուրայի վերաբերյալ բավականին խիստ է արված։ Ամենը իրավացիորեն ուշագրություն են հրավիրում հնդեվրոպական esՙer>եր զարգացման վրա (տե՛ս, օր. КП, ИСАЯ, 31)[13]։

Միջին գրական հայերենում սրա գործածությունը հիմնականում սահմանափակվում է միավանկ հիմքերով, թեև այն հանդիպում է նաև բազմավանկ (մասամբ և երկվանկ) հիմքերի հետ։ Հ. Աճառյանն ավելի ընդարձակ էր պատկերացնում այս հոգնակերտի գործածության ոլորտը. «գործ էր ածվում միայն բաղաձայնով վերջացող բառերի ծայրին և անխտիր թե՛ միավանկ, ու թե՛ բազմավանկ բառերի համար» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 707. Համմ. Karst, 174—175)։ Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ եր հոգնակերտը «ընդարձակ և ընդհանուր գործածություն» ուներ հիմնականում միավանկ բառերի հետ, այն կարող էր հանդես գալ

---

[13] Ըստ Կարստի եր-ը արևելյան-կովկասյան առնչակցություններ ունի (Յ. Կարստ, Հայերէնի –եր, –ենի, –ուի, –տի յոգնակերտները, «Հանդէս ամսօրեայ», 1903, № 1, էջ 10—11; Հ. Պեդերսենը չի բաժանում Կարստի կարծիքը, սակայն համամիտ է նրա և այլ հայագետների հետ եաւ>եր զարգացման հարցում. ընդ որում ե-ն հանում է ի-ից (ա–ից առաջ ի>ե). եաւ-ը հանդիպում է նաև նվազականների հետ, օր. խցիկ>խցկան>խցկներ։ Ար-ը առկա է նաև գայթ, երկար, հաւաստարիմ և այլ ձևերում. ար<*ա յուն+ro քան այլմ՝ o+ro>ar‖եր. Համմ. դեզօրոցք, դեզերոցք, սխեմիմ, մոեմիմ, Հայերեն են (տե՛ս Հ. Պեդերսեն, Հայերէն և դրացի լեզուները, Վիեննա, 1907, էջ 224—225)։

քաղաձայնահանգ, այլև ձայնավորահանգ հիմքերի հետ։ Նրա գործածությունը խիստ սահմանափակված էր երկվանկների, նկատելի չափով նաև բազմավանկների հետ։ Նշված դիրքերում, մասնավորապես միավանկ բառերի համար եր-ը համակարգային հոգնակիակազմության տարր էր. թեք հոլովաձևերում հանդես է գալիս նույն տեսքով (բառակազմական արժեքով չի հանդիպում). և այսպես՝ բերդերոյն, ղգեղերոյն (ՊՇԲ, 40), խոցերուս (41), դևղեր (49), բերդերն (47), Ջասյ ընդ եղբօրն իւր ճայերն սպանին (ՄԺ, 89, XIII դ.), դարձեալ եկին frդերն (Ն. տ. 127, XVI դ.). Յան առաջին ժամանակին սիրոյ բաներ շատ լինեին (ՄՄ, ՀՆ, 157, XVI դ.), Աչերս է խիստ կարօտ, որ տեսանէ զքեզ (ՄՆ, ՈՒՔ, 107)։ Ն վերջնահանգն ունեցող հիմքերի հետ՝ զմառներն (ԱԱ, ՕՔ, 408), զոտներուն ներքևն (Ն. տ. 428), լեռներոյս (ԳԱ, ՈՒՔ, 255). միավանկների թեք հոլովաձևերում՝ սարերոյս (ԳԱ, ՈՒՔ, 254), խաչերու (ԿՂ, ՍՎԱ, 112), պապերէ (ԿՂ, ՍՎԱ, 125, XIII դ.), հղերովն (ՄԺ, 128, XVI դ.), զտներն (ԿՂ, ՍՎԱ, 183), զկոպերն (ԱԱ, ՕՔ. 186), ի քիթն հով ձիթեր կաթեցուր (Ն. տ. 149), Մովրաւն... խաներն կատորեց (ՄԺ, 146, XVI դ.). երկվանկ-բազմավանկների ուղիղ և թեք ձևերում. ոսկերչերն ի նոր չարսուն գնացին (ՄԺ, 157, XVI դ.), զեպիսկոպոսերն (ՂՀ, ՀՆՈՎ, Ք, 251, XIII դ.), զքաղցր կերակրերն (Ն. տ. 68), կարճերուն երակն (ԱԱ, ՕՔ, 69)։ Այս կաչագի օրինակներ բավականաչափ բերված են Կարստի կողմից (տե՛ս Karst, 175)։ Ըստ Հ. Աճառյանի՝ այս մասնիկը միջին հայերենում ուներ [ier] արտասանություն։

Բարբառներում լայն տարածում ունի՝ նույն տեսքով կամ հնչյունական այլևայլ տարաձևումներով։ Այս հոգնակերտի ե հնչյունի արտասանական յուրահատկությունները նկատի ունենալով՝ տառադարձում են էր և եր (վերջինս հատկապես Վանի, Շատախի, Մշո, Առտիալի բարբառներում)։ Անդրադառնալով Նոր Ջուղայի բարբառի էր, ևէր մասնիկներին՝ Հ. Աճառյանը գրում է. «Ուրիշ բարբառների մեջ –եր, –ներ ձևով է, իսկ Նոր Ջուղայի բարբառում հնչվում է է ձայնավորով, Նոր Ջուղայի բարբառի մեջ հին հայերենի եա երկբարբառը դառնում է է, որից հետևում է, որ հիշյալ –էր, –ներ ձևերը ուղղակի հավատարիմ ներկայացուցիչներ են հին հայերենի –եար, –նեար ձևերին, և երկբարբառի երանգը մինչև այժմ էլ պահում են։ Այս –էր, –ներ ձևն է նույնպես, որ մեր աշխարհաբարի առաջին կազմակերպողները մտցրել էին մեր լեզվի մեջ, և որ հետո տեղի տվավ –եր, –ներ ձևերին» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 737)։ Արտասանական տարբերակները կարող են լինել միևնույն

բարբառի ներսում ևս, ինչպես նկատում ենք, օրինակ, Ղարաբաղի, Սյունյաց, մասամբ և Լոռվա բարբառներում. ընդ որում՝ առաջին երկուսում դրանք պայմանավորված են ձայնավորների ներդաշնակության օրենքով։ Ղարաբաղի բարբառում այդ տարբերությունը այնքան չնչին է, որ տառադարձությամբ չենք առանձնացնում։ Ըստ Նվ, ԳՍԲ, 63՝ Սյունյաց բարբառում էր-ը միանում է այն միավանկ հիմքին, որի ձայնավորը ծանր է; օր. արտ-էր, իսկ եր-ը՝ թեթև ձայնավոր ունեցողին. ծոր-էր։ Գրեթե բոլոր բարբառներում համակարգային հոգնակիակազմության տարր է. «Համարյա չկա մի բարբառ, որ այդ հոդնակին չունենա»,—նկատում է Ա. Ղարիբյանը (ԱՂ, ՀՔ, 137)։ Ինչպես ընդգծում է Հ. Աճառյանը, շնորհիվ այս հոգնակերտի և ներ-ի լայն տարածմանն ու ընդհանրացմանը, բարբառներում հոգնակիի կազմությունը պարզ տեսք է ստացել (տե՛ս ՀԱ, ԼՔՀԼ, III, 823)։ Եվ այսպես՝ էր(եր) հոգնակերտն ունեն Առտիալի, Արարատյան, Արդվինի, Արեշ-Հավարիքի, Բեյլանի, Դերսիմի, Եղեսիայի, Թբիլիսիի, Լոռու, Ղարաբաղի, Մալաթիայի, Ղարադաղի, Մեղրու, Մշո, Նոր Նախիջևանի, Նոր Ջուղայի, Շամախու, Շատախի, Պոլսի, Սյունյաց, Վանի, Ուրմիայի և այլ բարբառներ։ Սովորաբար զուգորդվում է միավանկ հիմքերի հետ (բացի որոշ բարբառներից) հարացուցային բոլոր ձևերում (ուղիղ և թեք), կան բարբառներ (քիչ քանակով), որոնց մեջ էր-ը միակ համակարգային տարրն է։ Հ. Աճառյանի վկայությամբ՝ Սիվրիհիսարի խոսվածքում էր-ը գործածությամբ դիրքային որևէ սահմանափակություն չունի, բոլոր հիմքերը, միավանկ թե բազմավանկ, զուգորդելի են նրա հետ (տե՛ս ՀԱ, ԼՔՀԼ, III, 775)։ Ուշադրության արժանի է նաև Մշո բարբառի վերաբերյալ արված հետևյալ դիտողությունը. «–եր և –ներ հոգնակերտ մասնիկները բարբառում գերակշիռ դեր են կատարում։ Բոլոր այն բառերը, որոնք բարբառում հոգնակիի իմաստ են արտահայտում այլ մասնիկների միջոցով, կարող են հոգնակի թիվ կազմել նաև վերոհիշյալ երկու մասնիկների օգնությամբ» (ՍԲԹ, ՄԲ, 77)։ Ագուլիսի բարբառում էր-ը գործածվում է ար||ներ-ին զուգահեռ, բայց սահմանափակ կիրառությամբ, այն փաստորեն նորակազմություն է այդ բարբառի հոգնակիակազմության մեջ. ար(ներ)-ը հենց եր հոգնակերտի հնչյունական տարաճումն է։ Համշենի բարբառում եր-ը իր-ին զուգահեռ է, երկուսն էլ խոսվածքային տարբերակներ են։ Որոշ բարբառներում էր-ը զուգորդվում է միավանկ-բաղաձայնահանդ հիմքերի հետ. օրինակ, դա նկատելի է Ղարաբաղի, Սյունյաց և այլ բարբառներում. արտ—արտէր, քար—քարէր, բայց ծի «ձի»—ծը՝յան

(Ղրբ. բ.)։ Մինչդեռ, ասենք, Նոր Ջուղայի բարբառում ձայնավորահանգ միավանկները ևս կարող են զուգորդվել էր- ի հետ. լս.— լվեր, ձ'ու—ձ'վէր։ Որոշ բարբառներում առաջին կարգի վերջնաբաղադրիչով հիմքերը օրինաչափորեն զուգորդվում են էր-ի հետ, օր. տակ—տակէր, ծրոատակ—ծրոտակէր (Ղրբ. բ.), բայց՝ հօրքուրեր և հօրքուրներ (Մշո բարբառում)։ «Մեկուկես» վերջնագաղտնավանկով բառերը մի շարք բարբառներում հոգնակիակազմության մեջ վերածվելով միավանկի՝ զուգորդվում են էր-ի հետ. օր. աստղ—աստղէր։ Ղարաբաղի բարբառում ևր հանգն ունեցող «երկվանկները» ևս այդպիսի վերակազմավորումով (երկվանկ>միավանկ) զուգորդվում են այդ հոգնակերտի հետ. ծ՚ակնը «ձուկն»> ծ՚ա կն-էր։ Այսպես նաև՝ Սյունյաց, Մեղրու, Հադրութի, Շամախու և այլ որոշ բարբառներում։ Մի քանի բարբառներում (օրինակ, Ղարաբաղի, Նոր Ջուղայի, Հադրութի, մասնավորապես՝ Արեշ-Հավարիքի) էր-ը կարող է զուգորդվել նաև բազմավանկ հիմքերի հետ. մեծ մասամբ զուգահեռ այլ հոգնակերտի. զարավաշէր (Ն.-Ջուղա), կըրկըտա՛նէր (Ղարաբաղ, Հադրութ). Շամախի բարբառում (ըստ ՄՄ, ՇԲ, 85) ցի վերջնահանգն ունեցող բառերը ևս՝ չա՛ տրէխցիր։ Հանդիպում է, թեև ոչ բոլոր բարբառներում, նաև մարդ բառի հոգնակիակազմության մեջ. մաշթէր «մարդիկ» (Ն.-Նախիջևան), մարթէր (Արարատյան), մաշտէր (Համշեն), մարդեր (ՀԺՀ, IX, 196, 282, հմմտ. ՍԴ, 137, 248) և այլն։ Կան բարբառներ, որոնց միավանկների ուղիղ (ուղղական, հայցական) բառաձևերում սրան փոխարինում է այլ հոգնակերտ կամ եր-ի հնչյունական որևէ տարաճում։ Այսպես, օրինակ Թբիլիսիի բարբառի թեք հոլովաձևերում առկա է էր, իսկ ուղղական-հայցականում իր. աարիր—սեռ.-տր. աարէրու։ Մեղրու, Կարճևանի բարբառների ուղիղ բառաձևերում առ‖ա ր. թեք հոլովաձևերում՝ էր, իսկ Ղարաբաղի բարբառում՝ ըր—էր։ Բարբառների գերակշիռ մասում (օրինակ, Նոր Նախիջևանի, Համշենի, Պոլսի, Վանի, Մալաթիայի, Լոռու, Դերսիմի, Ղարաբաղի, Սյունյաց, Նոր Ջուղայի, Արարատյան, Արեշ-Հավարիքի, Մշո, Կարնո, Բեյլանի, Շամախու, Ուրմիայի ևն) այն պահպանվում է հարացույցի բոլոր ձևերում. օր. Ղրբ. բ. աար-էր-ը (ուղղ.-հայց.), աըր-էր-էն (սեռ.-տր.), աըր-էր-ան (բացառ.), աըր-էր-ավը (գործ.)։

Արևմտահայ գրական աշխարհաբարում ևս եր-ը համակարգային հոգնակիակազմության տարր է. զուգորդվում է միավանկ հիմքերի հետ. դաս-եր, ձայն-եր, երգ-եր։ Կարող է հանդես գալ

կին և մարդ բառերի հետ՝ կիներ, մարդիր: Թեք հոլովաձևերում պահպանվում է նույնությամբ. դասեր—դասերու—դասերով են։

Արևելահայ գրական լեզվում ավելանում է միավանկ հիմքերին, եզակի ձևում երկվանկ (մեկուկես վանկանի)՝ վերջնագաղտնավանկ բառերի հոգնակիակազմ հիմքին (որ նույնպես միավանկ է), առաջին կարգի վերջնաբաղադրիչով բազմավանկ հիմքերին։ Ըստ պրոֆ. Գ. Ջահուկյանի (ԳՋ, ժ222, 48)՝ այն զուգորդվում է հիմքային վեց ենթատիպերի (տարբերակների) հետ։ Թեք հոլովաձևերում պահպանվում է նույնությամբ։ Պարզ, մենիմաստ, համակարգային հոգնակիերտ չէ։ Որոշ հեղինակներ մարդ բառի հոգնակին կազմում էին նաև եր-ով (բայց այդ կազմությունը հետագայում հանդիպում չգտավ). օր. մարդերի (ՄՆ, նկ, II, 67), մարդերից (ն. տ. 68)։ Արևելահայ գրական աշխարհաբարի կազմավորման շրջանում և զարգացման վաղ էտապներում հնարավոր էին եր-ի անսովոր զուգորդումներ ևս, բստ ՀԱ, ՀԼՊ, II, 540՝ նպարյանցի մոտ կան նաև այսպիսի «հոլովաձևեր». մօրերի (փոխ. մայրերի. եր-ը պետք է միանար եզակի ուղղականի ձևին). պատերազմների (փոխ. պատերազմների. բազմավանկ հիմքին՝ եր. որ օրինաչափական չէ)[14]։

ԵՐԱՅՔ.—*Բազադրյալ՝ եր–այք>երայք զուգորդումով հոգնակերտ-հավաքական մասնիկ. հազվադեպ գործածությամբ հանդիպում է միջին գրական հայերենում. դեղերայք (ՄՀ, ՋՄ, 131), վաներայք (հանդիպում է նաև գրաբարում, բստ ԳԱ, ՔՀ, 243)*,

ԵՐԱՆԻ.—*Բազադրյալ՝ եր–անի>երանի զարգացումով հոգնակերտ. ավելի հաճախական է երեի տեսքով։ Հանդիպել ենք XVIII դարի որոշ տեքստերում. կեղերանի*(Э,СПВ,417), *գլխերանի (ն. տ. 425), ձեռքերանի (ն. տ.)։*

ԵՐԱՆՑ—*տե՛ս* ԵՐԱՆՑ։

ԵՐԱՆՔ.—*Բազադրյալ եր–անք>երանք զարգացումով հոգնակերտ-հավաքական մասնիկ. հազվադեպ գործածությամբ հանդիպում է կիլիկյան հայերենում և վաղ աշխարհաբարում. գեղերանք (ՀԱ, ԼՔՀԼ, III, 829.Э,СПВ,415)։ Համմտ. դհերանք (ՀԺՀ, II, 380), ըստերանք (ն. տ. 26, 33)։*

Բարբառներում հանդիպում է նույն տեսքով կամ հնչյունական այլևայլ տարաձևություններով, բստ այդմ էլ տառադարձվում է էրանք, էրանք՛, երանք՛. *տեղերանք՛ (Վան), շընէրանք (Ղրբ. բ-ի որոշ խոսվածքներում)։*

[14] *Համմտ. ավելի վաղ շրջանում՝ պուրկումէսորերն (Э,СПВ,259, XVIII գ.), ասվադյաթրէրն (ն. տ. 353), մեծավորէրին (ն. տ. 403)։*

ԵՐԱՅ.—*Սովորաբար հանդես է գալիս իբրև երէ մասնիկի հարացուցային տարբերակ սեռ.-տրականում. հանդիպում է սկսած միջինհայերենյան շրջանից.* վաներացն *(Հն, ՈՒԲ, 165),* սոլերացյ *փոկերն (ՆՄ, ԺՒՎ, 233)։ Հանդիպում է նաև բարբառներում՝ ուսումնասիրությունների մեջ էրաց տառադարձությամբ.* տրղէրագ *(Կարնեան, ըստ ՀՄԴ, ԿԲ, Ն, 240)։*

ԵՐՆ.—*Հազվադեպ գործածությամբ հանդիպում ենք միջին հայերենում. մրգերնուն (ԱԱ, ԱԱ, 196)։ Սա Երնի հոգնակերտի տիպարային տարբերակն է. սակայն այսպիսի հոգնակերտ միջին գրական հայերենը չի զարգացրել, ուշմիջինհայերենյան տեքստերում հանդիպել ենք Երնի գույգ հոգնակերտի, որ ստացական և խնդրառական հոգնակիականացմության տարր է. մէջերնէն («Բազմ.», 1843, էջ 7)։*

ԵՐՆԵՐ.—*Գույգ հոգնակերտ (եր-ներ). հազվադեպ գործածությամբ հանդիպում է իբրև ստացական հոգնակերտության տարր. աչքերներդ («Մեղու Հայ.», 1858, № 42)։*

ԵՐՆԻ.—*Գույգ հոգնակերտ (եր-նի). ստացական հոգնակիականացմության տարր է. նախնական կիրառություններին հանդիպում ենք վաղ գրական աշխարհաբարում (և ուշմիջինհայերենյան տեքստերում). Զագերս* բուներնէն *տարած (ՀՄԺԲ, 215)։ Հանախանում է բարբառներում՝ ուսումնասիրություններում էրնի տառադարձությամբ. հանդիպում է, օրինակ՝ պոլսահայ, Մալաթիայի բարբառներում, Ղարաբաղի որոշ խոսվածքներում (ըստ ԿԴ, ԼՂԲՔ, 95—96), Դերսիմի որոշ խոսվածքներում (ըստ ՈՒԲ, ԴԲՔ, 37, 49, 98). Ծէրէէրնին «ձեռքները» (Զարասանճագ), Թնք հոլովաձևերում էրն (տե՛ս Երն). գրվնէրնուս մեջ «տուններիս մեջ»։ Կազմում է նաև խնդրառական հոգնակի. հէդէրնին «հետները» (Զարասանճագ)։*

Արևմտահայ գրական լեզվի միավանկների ստացական և խնդրառական հոգնակիականացմության կաղապարավորման անհրաժեշտ տարր է. սրտերնիս (սրտ-երնի-ս). Թնք հոլովաձևերում երն. *սրտերնուս. համմտ. տեղերնեն (Ս, ե, 51), Կը մեռնին լուծն ուսերնուն և ուսերնեն վար մինչև պորտերն (Դվ, Բ, 69)։*

ԵՐՅ||ԻՐՅ.—*երբ-ի հազվադեպ հարացուցային տարբերակ սեռ.-տրականում. խոխէրց (ՍՄ, ՀԲՔ, II, 279). բարբառային է։*

ԵՐՈՒՆՔ.—*Բազադրյալ՝ եր-ուն^ք>երուն^ք զարգացումով հոգնակերտ-հավաքական մասնիկ, հազվադեպ գործածությամբ հանդիպում է միջին հայերենում (կիլիկյան տարբերակ). դեղերուն^ք (ՀԱ, ԼՔՀԼ, III, 829)։*

ԵՐՔ.—*Բաղադրյալ՝ եր-ք>երք զարգացումով հոգնակերտ-հավաքական մասնիկ, հանդիպում է դեռևս միջին գրական հայերենի վաղ շրջանից սկսած. Ո՛վ թագաւոր, զոտ զքո զսեր սպանողն, զաղեերն և զոսկի թագն (ԷՀՄԳԱ, 33, համմտ. Հե, ՈՒՔ. 229), նաւերն և այլ կոմսերք եկին յան կոյս ծովուն (ՄԺ, 80, XIII դ.), ջղերք (ԱԱ, ՕՔ, 43. ՆՄ, ԺԱՎ, 77), կշտերք (ԱԱ, ՕՔ, 131), նեզերք (Գ, ՔՐՄ, 6), մաղձերք (Ն. տ. 95), գետերք (ՀՔ, S. 164), ատաղերք (ՆՔ, ՀԿ, 59)։*

Իբրև ոչ-համակարգային կազմավորման տարր մինչև ֆունկցիայով տարածված է շատ բարբառներում (Արարատյան, Մյունյաց, Ագուլիսի, Ղարաբաղի, Ն.-Ջուղայի, Թբիլիսիի, Շամախու, Կարճևանի, Կաքավաբերդի, Հադրութի, Մշո են). ուսումնասիրությունների մեջ, բստ արտասանական յուրահատկությունների, տառադարձում են էրֆ, երֆ, իսկ եթե ֆ-ն քմայնացած է՝ նաև էրֆ՛. տրղերք (Արարատյան, Մյունյաց բ.), կօխկերք (Ղրբ. բ.)։ Քեք հոլովաձևերում, նյաց բարբառին, կարող է ներկայանալ իբրև էրֆ՝ պնչերքիցը (ՊՊ, ԵԺ, I, 20,—Արարատյան բ.), ուսերքովը (Ն. տ. 105). էրֆանց՝ մղերքանց (ԽԱ, ԵԼԺ, III, 9, 19), էրանց՝ աղչկէրանց (ՊՊ, ԵԺ, I, 19, Արարատյան բ.), ախչկէրանց (ԳՍ, Պ, 50—Թբիլիսիի բ.), տղէրանց (Լոռի), Նոր Ջուղայի բարբառում՝ ոց, էրֆոց (ըստ ՀԱ, ԼՔՀԼ, 834, 835), Ղարաբաղի բրբ. օրանց. ըխճըկէրք—ըխճըկօրանց. բայց և՝ էրֆ. կօխկէրք—կուխկէրքէն. Շամախիում՝ էրֆոնց. ախչիգէրք—ախչիգէրքոնց (ՈՔ, ՇՔ, Ն, 253)։ Ըստ, ՀԱ, ԼՔՀԼ, III, 646՝ Ղարաբաղի բարբառում հնաբավոր են՝ էրֆ||ըրանֆ||ըրանց||ըրֆանց||ըրան||էրֆան||ըրընֆան||ըրընգուն||էրֆանց||էրանց են, Ջափազանց խիստ է ասված Ք-ի քմայնացումով Մեղրու բարբառում առկա է էրֆ՛ (հոգնակի ուղղականում). ըխչըկէրք՛ (ԷԱ, ՄԲ, 120), տրղէրք՛ (Ն. տ. ՀՆմուշներ, 377)։

Արևելահայ գրական լեզվի կազմավորման շրջանում և զարգացման վաղ էտապներում մասամբ գործածական էր (բարբառային ներթափանցում). այժմ երբեմն գործածվում է (գրական տարբերակում) կերպարի անհատականացման և լեզվա-ոճական, արտահայտչական այլ նկատառումներով[15]։ Ամրացած է յնդերֆ

---

[15] *Ե. Աբովյանը աշխարհաբարի համար բնորոշ էր համարում աղչկերֆ, աղերֆ ձևերը (տե՛ս ԽԱ, ԵԼԺ, V, 122)։ Այսպես և՝ աղերք (Э, СПВ, 415. ԵԿՅ, 77), ափներքոմբ («Մեղու Հայ.», 1858, № 1), խոսկերքիս (Ն. տ. № 2), ջիբերք «գրպաններ» (Ն. տ. № 7). աղերքի հետ (Բ, ԵԺ, I, 402, համմտ. ՍՀ, ԵԺ, IV, 197)։*

անեզականում. Ինդերքն ուղում են (ՍՄ, ՀՔՔ, II, 205). բայց և՝ Ինդերքս ցավում է (Ն. տ.)։

ԵՐՔԱՆՅ, *տե՛ս ԷՐՔԱՆՅ։*

ՆՐՔՆԵՐ, *տե՛ս ԷՐՔՆԷՐ։*

Ն3.—3 *հոգնակերտի և նա հիմքային տարրի սերտաճումով գոյացած մասնիկ, որ միչին դրական հայերենի սեռ.-տրականում ուներ հոգնակերտ-հոլովակերտի ֆունկցիա՝ սահմանափակ թվով, մեծ մասամբ հին անեզական, բառերում, օր. բաղնիք—բաղնեց. բացառական հոլովաձևում այս մասնիկի հոլովակերտ նշանակությունը մթագնում է. այն դառնում է միայն հոգնակիի ցուցիչ, իբրև հոլովահիմքի տարր. ի բաղնեցէն (ԱԱ, ՕՔ, 490), բաղնեցէն ելնէ (Ն. տ. 347)։*

ՆՔ. *տե՛ս Ք և ԷՔ։*

ՆՔՆԵՐ, *տե՛ս ՔՆԵՐ։*

ՆՀ3ՏԱՐ, *տե՛ս ՀՀՏԱՐ։*

ՆՀ3ՏԵՐ.—*Հաղվադեպ դործածությամբ՝ վանի բարբառում. փաստորեն ճյաեր-ի զարգացումն է հիմքավերջի է(<ա) ձայնավորի հետ. ավելի ճիշտ՝ (է)ֆաեր>(է)ճյաեր. տիէսէհյաեր։*

ՆՅՐ(ԸՆՅՐ).—*Եր հոգնակերտի հնչյունական տարաճում Արամոյի բարբառում. կ՚ալ (<գայլ)>կիլէյր, հուց (<հաց)>հացըէյր (ԱՂ, ՀՆՔԽ, 27)։*

ԵՆ[1].—Ան[1] *հոգնակերտի հնչյունական տարաճում Հադրութի բարբառում և Ղարաբաղի բարբառի որոշ խոսվածքներում. գործածվում է ան[1]-ի դիրքերում՝ հաճախ նրան զուգահեռ. լո՛ւվէն, ծիլէն, թիլէն, ծուվէն (ԱՊ, ՀՔ, 85. համմտ. ԿԴ, ԼՂՔՔ, 89)։*

ԵՆ[2].—*Էնի մասնիկի դիրքային տարբերակ՝ թեք հոլովաձևերում։*

ԵՆԷ.—*Էնի մասնիկի հնչյունական տարաճում. գործածվում է սովորաբար նրա դիրքերում՝ երբեմն նրան զուգահեռ. հանդիպում է Ղարաբաղի բարբառի առանձին խոսվածքներում. գ՚ուլբէնէ, հրվգ՚էնէ (ԿԴ, ԼՂՔՔ, 89)։*

ԵՆԵՅ.—*Էնէի՛-ի հարացույցային տարբերակ սեռ.-տրականում։*

ԵՆԻՔ՚.—*Էնիի մասնիկի հնչյունական տարաճում. հանդիպում է Մեղրու բարբառի ոչ-համակարգային կազմավորումներում. կըտվէնէք՚, լի՚զվէնէք՚ (ըստ ԷԱ, ՄՔ, 121). թեք հոլովաձևերում՝ լնէց։*

ԵՆՒ.—*Անի մասնիկի հնչյունական տարաճում. գործածական է հատկապես Ղարաբաղի, Շամախու, Լոռու և այլ որոշ բարբառներում. կատու—կըտվէնի, հնավ գ՚ա—հը՚վգ՚էնի (Ղրբ. բ.), տախ-*

տակ—տախտակէնի (Շամախի), գ՛ուլբենի (Լոռի)։ Թնք հոլովաձևերում ներկայանում է կա՛մ էն տարբերակով՝ տախտակէնավ (Շամախի), կա՛մ էնուց՝ կըտվէնուց (Ղրբ. բ.)։ Սակայն վերջինս ըստ էութեան էնիք՛-ի տարբերակն է։

ԷՆԻՔ||ԷՆԻՔ՛—*խոսվածքային տարբերակներ Ղարաբաղի բարբառում. բաղադրյալ՝ էնի-ք>էնիք զարգացումով. գ՛ուլբէնիք՛, վը՛դբէնիք՛։ Թնք հոլովաձևերում՝ էնուց. գ՛ուլբէնուց(ը)։*

ԷՆՑ.—էնք *մասնիկի հարացուցային տարբերակ սեռ.-տրակա-նում. Գարեգնենց (Արարատ. բ., ըստ ՊՊ, I, 31). Շահբազենց (Ալբիխա. ՄԱ, ՈՒԽՔ, Ն, 157)։*

ԻՆՈՒՑ.—էնիք՝-ի *հարացուցային տարբերակ սեռ.-տրակա-նում։*

ԷՆՔ՛.—էնք *մասնիկի հնչյունական տարաձում՝ ք-ի քմայնացումով. հանդիպում է Ղարաբաղի բարբառի որոշ խոսվածքներում և Ալբիխայի բարբառում. խոխէնք՛ (ըստ ԿԴ, ԼՂՔՔ, Ն, 261)։*

ԼԱՆ.—*Մեր դիտարկած տեքստերում չվկայված *էցնի կամ *էքնի մասնիկի տարբերակ Թնք հոլովաձևերում. դղէսնուց (ՎՊ. ՄՔ, 87), էրախէսնու (Ն. տ. 83)։ Այստեղ է-ն հիմքավերջի տար-ր ա>է հերթագայությամբ, որ երբեմն գիտակցվում է հոգնակերտի հետ. համմտ. տղա-ք>տղ-է-ք>տղ-էր։ Ինչ մնում է *սնի բա-ղադրիչին, ապա պետք է ասել հետևյալը, Ք կամ ց հնչյունը որոշ բարբառներում միջձայնավորային կամ ձայնավորի և ձայնորդի միջև եղած դիրքում կարող է վերածվել ս-ի։ Այսպես՝ սատանէք-նէր>սատանէսնէր. երդըքէն>երդսէն ևն։ Ուստի հնարավոր է *դղէբնի ձևից՝ *դղէսնի, որից էլ՝ դղէսնուց. այսպես և՝ էրախա>*էրախէք-նի>*էրախէքնի>*էրախէսնի>էրախէսնու։*

ԷՐ, *տե՛ս* ԵՐ։

ԷՐԱՆՑ||ԵՐԱՆՑ.—էրք, էրանք (երանք) *մասնիկների հարացու-ցային տարբերակ սեռ.-տրականում. տեղերանք—տեղերանց (Վան). տըղէրանց (ԷԱ, ՄՔ, Ն, 357. Մեղրի), բնճըկէրանց (Ն. տ. 372)։ Համմտ. նաև աղջկերանց (Э, СПВ, 415), գեղերանց (Ն. տ. 419), տղերանց (ՍՋ, Ե֊, IV, 54, «Արար.», 1859, 9), որոնք Արա-քստյան բարբառի փաստեր են։*

ԷՐԱՆՔ||ԷՐԱՆՔ՛, *տե՛ս* ԵՐԱՆՔ։

ԷՐԱՑ, *տե՛ս* ԵՐԱՑ։

ԷՐՆԻ, *տե՛ս* ԵՐՆԻ։

ԷՐՏԱՆՔ.—Իրտանք *մասնիկին զուգահեռ գործածվող (հազվա-*

դեպ)՝ հավաքական հոգնակերտ Մարաղայի բարբառում. խացէր–տանէ (ըստ ԿԴ, ԼՂԲՔ, 95)։

էրց, տե՛ս ԵՐՑ:

ԷՐՔ‖ԷՐՔ՛, տե՛ս ԵՐՔ:

ԷՐՔԱՆՑ.—*էրք մասնիկի հարացուցային տարբերակ թեք հոլովաձևերում (Աբրահամյան բարբառ)։ Մասամբ թափանցել է գրավոր խոսք. երեխերքանց (Շ, Նժ, X, 632)։*

ԷՐՔՆԷՐ.—*Հազվադեպ գործածությամբ հանդիպում է նոր Ջուղայի բարբառում. տղէրքնէր (ըստ ՀԱ, ԼՔՀԼ, III, 835)։ Համմտ. ևնգերքներն էլ վիրավոր են (ՍՄ, ՀՐՔ, II, 205). լնտերքներէն («Բազմ.», 1843, էջ 372)։*

ԷՐՕՏ.—*Հազվադեպ գործածությամբ՝ Արդվինի բարբառում. Թշէրօտ (ըստ ԱՂ, ՀՔ, 332)։*

ՑՅՆՆՐ.—*Մեկ անգամ հանդիպել ենք Բաղեշի խոսվածքից բերված տնքաստում (ՀԺՀ, IX, 466). դևէցներ, Սա էսնի, (ան)–էսներ, էքներ մասնիկներին զուգահեռ գործածություն ունեցող, բաղաղբյալ՝ էց–ներ զարգացումով հոգնակերտ է։*

ԷՔ‖ԷՔ՛.—*Ք հոգնակերտ մասնիկի զարգացումն է վերջնահանգի հետ. մեծ մասամբ կապված է ա հանգի վերաարժեքավորման հետ, երբ նա ֆ մասնիկից առաջ ստանում է ա>է փոփոխություն։ Սակայն կան դեպքեր, երբ էք–ի առկայությունը չի պայմանավորված ա վերջնահանգի առկայությամբ[16], Այնուամենայնիվ, բոլոր դեպքերում է–ֆ>էֆ անբառաձումը լիովին ավարտված չի կարելի համարել։ Այս երևույթը առկա է Արարատյան, Լոռու, Շամախու, Քրիլիսիի, Մեղրու, Սյունյաց, Հադրութի, Արեշ-Հավարիքի, Սվեդիայի, Սասունի, Ղարաբաղի և այլ որոշ բարաբառներում։ Սյունյաց բարբառում արտասանական երանգը նկատի առնելով տառադարձում են՝ էֆ, եֆ: Թեք հոլովաձևերում՝ օց. խօխէք՛ «երեխաներ»—խօցը (Ղրբ. բ.), տանձէք—տանձօց (Սյունյաց, ըստ Նվ, ԳՍՔ, 71), նաև՝ ձէր, էց‖աց. էֆ և այլն. համմտ. քէռէք «քեռիներ»—քէռէնէրու, քէռէնէրէ (Մեղրի, ըստ ԷԱ, ՄՔ, 138). «Ա և Է վերջացող բառերի հոգնակին ունենում է նաև հետևյալ վերջավորությունները (ուղղ.–հայց. –էֆ՛), սեռ.–տր. բաց. –էց‖աց, գործ. –էֆ՛ա՛վ, ներգ. –էֆ՛ա՛մ» (ԷԱ, ՄՔ, 140)։*

---

[16] *Երբեմն էֆ–ը զուգահեռ է էրֆ–ին և թվում է, թե սրանից է ածանցված. համմտ. աղյկեք (ԼԺՀ, II, 28, 92) և աղյկերք (նե. տ. 28)։ Ըստ ԳԱ, ՔՀ, 243՝ դեպա գրաբարում հնարավոր է տարբերել այդպիսի մասնիկ. այծէֆ, աճղէֆ: Ժամանակին ե. Աբովյանը նեխէֆ, ծառէֆ ձևերը համարում էր աշխարհաբարին բնորոշ կազմություններ. (ՆԱ, ՆԺՀ, V, 122)։*

ԷՔ՛.—*1) տե՛ս* ԷՔ։

2) Իկ մասնիկի հնչյունական տարաճում, հանդիպում է մասդ բառի հոգնակիաձևության մեջ՝ Մեղրու բարբառում. մարդ—մարդէք՛։

ԷՔԱՆՑ.—էք, էր *մասնիկների հազվադեպ հարացուցային տարբերակ սեռ.-տրականում*[17]. *օր. աղջկեքանցն (ՀԺՀ, II, 180), ուստեքանց (ն. տ. 228), էրեխեքանցից (277)։*

ԷՕՆՔ.—Ունեմ *հոգնակերտի հնչյունական տարաճում Սվեդիայի բարբառում, գործածվում է մի խումբ միավանկների, ձայնավորահանգների, հրկվանկ-բազմավանկ բաղաձայնահանգների հետ, ինչպես և մի շարք անեզականների մեջ (Համմ. ՀԱ, ԼՔՀԼ, III, 761, 765, 768). Թեք հոլովաձևերում՝* ունց։

ԸԷՑՐ, *տե՛ս* ՏՑՐ։

ԸՖԿԸՆԷ, *տե՛ս* ԻՖԿԸՆԷ։

ԸԿ.—Իկ *մասնիկի հնչյունական տարաճում. հազվադեպ արտահայտությամբ՝ կիլիկյան խոսվածքում. մայրըկ «մարդիկ» (ըստ ԱԳ, ՀՔ, 354)։*

ԸՆԷՐ, *տե՛ս* ՆԷՐ։

ԸՆՈՒՑ..—Անք[1] *մասնիկի հարացուցային տարբերակ Ղարաբաղի բարբառի սեռ.-տրականում և նրանից կազմված ձևերում. ծը՛յան «ձիեր»>սեռ.-տրականում. ծը՛յընուցէն (ծը՛յանուցը), բացառ. ծը՛յընուցան (ան—անուց—ընուց)։*

ԸՆՔ.—Անք[2] (էնք) *մասնիկի հնչյունական տարաճում Սվեդիայի բարբառում. Պուրսալընք «Պուրսալենք» (ՏԱ, ՍՔ, 41). սեռ.-տրականում՝* ինց. *Պուրսալինց, Աստուծմինց իկկէն (այգին)։ «Ընք մասնիկով կազմված հոգնակիին սեռական հոլովը որպես մականուն կծառայէ, միայն երբ անոր հատկացյալն է հիշյալ ընտանիքին պատկանող անձ մը. մինչ երբ հատկացյալը ընտանիքին մեկ ստացվածքն է, անիկա հասարակ սեռական հոլով է, որ վերաբերություն միայն կցուցանէ» (ն. տ.)։*

ԸՐ.—Եր *հոգնակերտի հնչյունական տարաճում Ղարագաղի բարբառում. համակարգային կազմավորման տարր. հացըր, առչըր, (ըստ ԱՂ, ՀՔ, 295). Թեք հոլովաձևերում՝* էր. *բէնըր—սեռ.-տրականում՝ բէնէրըն, գործ. բէնէրավ։*

ԸՐԱՆՔ.—*Բազադրյալ՝* եր-անք>ըր-անք>ըրանք *զարգացու-*

---

[17] *Ըստ էության այստեղ ունենք գոյդ հոգնակերտ. ույդ-ի տղէմ հոգնակին սեռ.-տրականում դառնում է վերջինիս հիմքը՝ տղէմ-, որին ավելանալով անդ հոգնակերտ-հոլովակերտը՝ ստացվում է* տղէմանց։

մով հոգնակերտ-հավաքական մասնիկ, հանդիպում է Մարաղայի քարբառի ոչ-համակարգային կազմավորումներում (ըստ Հ. Աճառյանի). կէղբրանք «գյուղեր», Համմ. **ռաճ**:

ԸՐԱՆՔԵՐ.—*Բաղադրյալ՝* **ար–աճ–էր>ըրանճեր** *զարգացումով հոգնակերտ-հավաքական մասնիկ, հանդիպում է Ղարաբաղի և Հադրութի բարբառներում, սովորաբար՝* **արաճ**, **արանճք** *մասնիկներին զուգահեռ. սըրմըրանքէր (ԱՊ, ՀԲ, 87)։*

ԸՐԷՆՔ՛ԷՐ.—**Ըրանճէր** *մասնիկի հնչյունական տարաճում Հադրութի և Ղարաբաղի բարբառներում. սըրմըրէնք՛էր։*

ԸՐՆԷ.—*Ջույգ հոգնակերտ* **(ըր–նէ)**. *տարացական և խնդրառական հոգնակիակազմության տարր Ղարաբաղի բարբառում. սըրտըրնէս (սըրտ-ըրնէ-ս) «սիրտներս». Թիք հոլովաձևերում տեղի է ունենում նէ>նէր փոխարինում.* **ըր–նէ>ըր–նէր.** *սըրտըրնէրաս «սիրտներից»։*

ԸՐՆԷՐ.—*Ըրնէ ջույգ հոգնակերտի հարացույցային տարբերակ Թիք հոլովաձևերում։*

ԸՐՆԻ.—*Ըրնէ մասնակի խոսվածքային տարբերակ Ղարաբաղի բարբառում (ըստ ԿԴ, ԼՂԲՔ, 25—26)։*

ԸՔ...—*Իկ մասնիկի հնչյունական տարաճում Ջեյրունի խոսվածքում. մայդ՛ըք «մարդիկ» (ըստ ՀԱ, ԼՔՀԼ, III, 796). Թիք հոլովաձևերում* **ոց (օց)**:

ԹՐՆԷՐ||ԹՐՆԻՐ.—*Հազվադեպ գործածությամբ հանդիպում է Մարաղայի և Ուրմիայի բարբառներում. կընթրնէր (ԿԴ, ԼՂԲՔ, 95. Համմ. ԱՂ, ՀԲ, 344), կընթրնիր (ՀԱ, ԼՔՀԼ, III, 754)։*

Ի.—*Իր մասնիկի հնչյունական տարաճում. հանդիպում է խոտորջուրի խոսվածքում. «բացատրվում է r>յ ձայնափոխությամբ, որով ներ դարձել է յ..., ապա բառավերջում և ի ձայնից հետո յ կորչելով... մնացել է ի...», նախկին r ձայնի հետքը պահում են դեռ իսօրիր «այս օրերս» (ՀԱ, ՀԼՊ, II, 338). օր.* **ածի «այծեր»**. **լվի «լվեր», ջրի «ջրեր», ծովի «ծովեր»։**

ԻԳ.—*Իկ մասնիկի հնչյունական տարաճում՝ կ-ի ձայնեզացումով. հանդիպում է, օրինակ, Դերսիմի խոսվածքներում. մարթիգ (ՈՒ, ԴԲՔ, Ն, 49, Ջարսանճաղ). Սօվառութան մարթիգ գըզոզօրվին (նշ. տ. 53, Քղի)։ Գրականության մեջ կարող է հանդիպել իկ տառադարձությամբ ևս։*

ԻՅՅ.—*Իր մասնիկի հնչյունական տարաճում Հանքնի բարբառում սովորաբար գործածվում է նրա դիրքերում և հարացուցային բոլոր ձևերում. հոգն. ուղղակ. քայիէյ «քարեր», սեռ.-տր.*

քայիէյուն, բայց քայիէյէն ևն։ Համմտ. հավիեյ, խուղիէյ (ՀԳ, ՀԲ, 68)։

ԻԷՆՔ.—ենք (էնք) *մասնիկի հնչյունական տարաճում հաճքնի բարբառում. Սարկիսիէնք (ՀԳ, ՀԲ, 70)։*

ԻԷՐ.—եր *մասնիկի այլազրչություն բարբառագիտական գրականության մեջ (տե՛ս, օրինակ, ԱԳ, ՀԲԴ, 100), երբ այդ մասնիկը արտասանվում է իբրև* ier, *օր. Մշո բարբառում։*

ԻԹԿԸՆԷ.—*Բազադրյալ մասնիկ, հանդիպում է Ղարաբաղի և Հադրութի բարբառներում՝ շէն բառի հոգնակիակազմության մեջ. շը՝նը՝թիքնէ (Ջրաբերդի խոսվածք), այլ տառադարձումով՝ շինիթ-կընէ (տե՛ս ԿԴ, ԼՂԲՔ, 95), Կ. Դավթյանը իր «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» աշխատության մեջ հնարավոր է համարում* ոյր–f>ոյթ>իթկ *զարդացում այս բազադրության մեջ (տե՛ս նե. տ.)։ Համմտ.* Կրնէ։

ԻԿ.—*Հանդիպում է դեռևս դասական գրաբարում, հիմնականում մարդ բառի հոգնակիակազմության մեջ՝ մարդիկ (նաև չանթիկ)։ Ըստ Գ. Ղափանցյանի՝ կապ ունի ուրարտերենի -gi հավաքական հոգնակերտի հետ (ԳՂ, ՀԼՊ, 142—143), Ըստ Ա. Ղարիբյանի՝ սա առկա է նաև կին ածանցի մեջ՝ երեք-կին, չորեք-կին, ապա և՝ շրջիկ, մուրացիկ, ռազմիկ ու այլ ածանցականներում (ԱՂ, ՀԼՊՈՒՆ, 99—100. տե՛ս նաև ԱՂ, ՀՀՆՄ, 94), Թեք հոլովաձևերում՝ կաճ. մարդկան, ի մարդկանէ։*

Միջին գրական հայերենում հանդիպում է իմ, իկմ ղարգացումներին զուգահեռ. Այլ մարդիկ զայս փառս չունին (ԱՍ, ՕԲ, 19), Որ զամենայն մարդիկ դեռ ուրախ առնես (ՄՄ, ԸՆ, 62. XIV—XV դդ.). Համմտ. նաև՝ Հն, ՈՒԲ, 147, 160. ՄՀ, ՋՄ, 36, 123. կն, S, 197. ՍՍ, Դ, 25. ՆՄ, ԺԱՎ, 86. ՆՔ, ՀԿ, 255. ԱԱ, ԱՍ, 346. Հայցականում՝ (ը)մարդիկ (Համմտ. ՆՄ, ԺԱՎ, 86. ՀՔ, S, 162, 166). Մնացած հոլովաձևերում՝ կաճ. գործիականում ը վերջավորությունից առաջ ն—մ փոփոխությամբ՝ կամ տարբերակը՝ մարդկամբ. գործիականում նաև՝ կօճ. մարդկօք (ՂՏ, ՀՆՒՎ, Ք, 260, XIII դ.)։ Համմտ. ի մարդկանէ (կն, S, 182), մարդկան (Հն, ՈՒԲ, 153. կն, S, 173. ՄՀ, ՋՄ, 62, 81)։

Ե՛վ գրաբարում, և՛ միջին հայերենում հոգնակերտ-հոլովակերտ է ուղղականում և սեռ.-տրականում, միայն հոգնակիի ցուցիչ՝ բացառականում և գործիականում[18]։

Բարբառներում սովորաբար գործածվում է իմ, իմ տարաճումով. երբեմն հանդիպում ենք իկ ձևին, սակայն դա առանձին

[18] *Ուղղական և հայցական հոլովներից բացի, մնացածներում այդ ֆունկցիաները կատարում է կան տարբերակը։*

դեպքերում պետք է վերագրել գրական լեզվի աղդեցության. այսպես՝ մարդիկ (ԽԱ, ՆԼԺ, III, 5, ՊՊ, ՆԺ, I, 40. Աբարաւյան բ.). էդ մարդիկ շատ աղքատ կեղնին (ՀԺՀ, IX, 161—Ալաշկերտ. Համմտ. Ն. տ. 208՝ Մանազկերտ). տղամարդիկը (ՈՒՐ, ՇՐ, Ն, 254, Շամախի), մարդիկ (ՍԱ, ԱՐՋԱ, 230—Արդվին). Ըստ ԿԴ, ԼՂՐՔ, 94՝ իբրև խոսվածքային տարբերակ հանդիպում է Ղարաբաղի բարբառում կ-ի քմայնացումով՝ իկ՛. մարթիկ՛:

Նոր գրական հայերենում (և՛ արևմտահայ, և՛ արևելահայ) նույնպես ունի ձևույթային պայմանավորվածություն. հանդիպում է միայն մարդ բառի հոգնակիակազմության մեջ. օր. մարդիկ (ՏԿ, ՎԱ, 68. ԳՋ, ՆԺ, I, 8, 118. Ս, Ն, 49. ՎՔ, Ն, 197. ԴՎ, Բ, 25[1]. ԳՍ, ՄՅԱ, 45); Թեք հոլովաձևերում՝ կանց (կ-անց). Համմտ. Ս, Ն, 20, 132։ Ըստ ԳՋ, ԺՀՀՀ, 57՝ արդի գրական հայերենում դեռևս պահպանում է հավաքականության որոշ երանգ։ Ուղղականում հոգնակերտ է, թեք ձևերում նրա հիմքը ձևաբանորեն վերակազմավորվում է հենց այդ իկ-ով՝ մարդկ- (որ բառակազմական հիմքի ֆունկցիա ևս ստանում է). այլ բառաձևերում ևս ընդհանրացող անց-ը հաստատվում է նաև այստեղ, իբրև մարդկ–անց և ո՛չ մարդ–կանց: Բացառականում և գործիականում այս անց-ը միայն հոգնակիի ցուցիչ է, հոլովակերտի նշանակությունը անցնում է ից (մարդկանցից), ով (մարդկանցով) հոլովակերտներին։

Իկ՛, տե՛ս Իկ։

Իկներ.—Սահմանափակ գործածությամբ հանդիպում է գրական աշխարհաբարում. այսպես՝ արևմտահայ գրական լեզվում. բաղադրյալ՝ իկ–ներ>իկներ զարգացումով մասնիկ. հանդիպում է իկ հոգնակերտի դիրքում. մարդիկներ (Ս, Ն, 104, Համմտ. ԴՎ, Բ, 307. ԼՇ, ԸՆ, 170. ՂՅ, ՀՆՒՎ, 33, XIX դ. II կես); Համմտ. նաև «Բազմ.», 1843,, 136, 149. ՂԻ, Դ, 18. ՄԱ, Բ, 71)։ Սա արևմտահայ որոշ բարբառներում հանդիպող իկներ||իկներ||իֆներ մասնիկն է (տե՛ս, օր. ՀԺՀ, IX, 22, 43), որը թափանցել է նաև գրական լեզվի մեջ[19]։ Ոչ հաճախական գործածություն ուներ նաև անցյալ դարի II կեսի արևելահայ գրական աշխարհաբարում. օր. մարդիկներ («Մեղու Հայ.», 1858, № 7, «Նոր-Դար», 1884, № 1. Բ, ԵԺ, II, 345)։

Իկներ.—տե՛ս Իկներ:

Իկներք.—Բաղադրյալ՝ իկ–ներ–ք>իկներք զարգացումով մասնիկ. հազվադեպ գործածությամբ հանդիպում է որոշ բարբառնե-

[19] Ըստ ԱԱ, ՔՔ, 14՝ մարդիկներ ձևը ավելի հաճախական է արևմտահայերենում, քան մարդներ ձևը։

րում. մարդիկնէրք (տե՛ս ՀԱ, ԼՔՀ, III, 829)։ Գործածվում է իկ մասնիկի դիրքում։

ԻԿՍ.—*Իկ մասնիկի տարբերակ՝ իկ-ս բաղադրությամբ. միջին գրական հայերենի ոչ-համակարգային հոգնակիակազմության տարր, գմարդիկս (ՆՄ, ԺԱՎ, 50, 246)։*

ԻԿՔ.—*Ֆունկցիայով և գործածության դիրքով համարժեք է իկ մասնիկին. հանդիպում է միջին հայերենում[20]. ունի իկ-ք>իկ զարգացում. մարդիկք (ՊՇՔ, 32, X դ., ՍՍ, Դ, 9. ՂՅ, ՀՆՒՎ, Ք, 251, XIII դ., ՆՄ, ԺԱՎ, 23, 33. ԱԱ, ԱԱ, 76. ԽԿ, ՈՒՔ, 178. Հե, ՈՒՔ,159. կե, Տ, 170. ԷՀՄԳԱ, 51, 208). Ծիծղուն մարդիկք նախասեն դիս (ՄՄ, ԸՆ, 220, XVI—XVII դ.). Համմտ. նաև ազգամարդիկքն (ՍՍ, Դ, 14)։ Հայցականում կարող է պահպանվել նույնությամբ, կամ ներկայանալ իկս տարբերակով։ Սեռ.-տրականում և նրանից կազմված ձևերում առկա է նույն տարբերակը, ինչ նույն դիրքում ունի իկ-ը։*

ԻՅ.—*ԷՐ (Իր) մասնիկի հնչյունական տարաճում. սովորաբար գործածվում է իր-ի դիրքերում, երբեմն էլ նրան զուգահեռ. ստգիյ «աստղեր» (Կիլիկիա, ՀԱ, ԼՔՀ, III, 78), ճացիյ «հացեր» (Զեյթուն, ն. տ.)։ Պահպանվում է թեք հոլովաձևերում։*

ԻՆՅ.—*ԻՆՔ և ՐՆՔ հոգնակերտի հարացուցային տարբերակ սեռ.-տրականում։*

ԻՆՔՆ.—*Բաղադրյալ՝ ին վերջնահանգի (հիմքավերջի) և Ք մասնիկի սերտաճում. հոլովադեպ գործածությամբ հանդիպում է դեռևս գրաբարում, իրրև հավաքականակերտ. գաճինք, դատինք (համմտ. գահք, դատք) և այլն։ Հետագա զարգացում, տարածում չի ստացել։ Նոր գրական հայերենում ձևույթային պայմանավորվածությամբ հանդիպում է աճն բառի հնատիպ հոգնակիակազմության մեջ. աճն–իմք (բայց նաև աճներ)։ Համահատեպ ածանցական տարր է. նախատինք, քրտինք են։*

ԻՆՔ[2].—*ԵՄՔ մասնիկի հնչյունական տարաճում Թբիլիսիի բարբառում. համմտ. նաև՝ աճնեմավուրիմք (ՍՍ, ԱՔՁԱ, 230. Արզվին)։ Թեք հոլովաձևերում՝ ինց. Դանդամանինց տանը (ԳՍ, Պ, 75)։*

ԻՆՔՆԵՐ.—*Բաղադրյալ՝ իմք–ներ զուգակցումով մասնիկ՝ իմք տարրի մթագնումով. հանդիպում է հիմնականում անցյալ դարի II կեսի գրական աշխարհաբարում՝ աճն բառի հոգնակիում. անձինքներ (Ր, եժ, X, 86, II, 518, 567. «Նոր Դար», 1884, № 10, «Մեղու Հայ.», 1858, № 10, «Արար.», 1858, № 3)։*

---

[20] *Տե՛ս նաև մարդիկք (ԽԿԴ, 77, XVIII դ.)։*

ԻՐ.—Իր մասնիկի հնչյունական տարաձում՝ Սվեդիայի բարբառում, գործածական է նրա դիրքերում. ըստ ՀԱ, ԼՔՀԼ, III, 764՝ եթե հոգնակազմ հիմքում կամ հիմքավերջում կա n, ապա հոգնակերտում՝ r>n. ծառ—ծառիս «ծառեր»։

ԻՐ.—ԵՐ (ԷՐ) հոգնակերտի հնչյունական տարաձում. հանդիպում է, օրինակ, Բբիլիսիի, Սվեդիայի, Սասունի, Մարաղայի, Համշենի և այլ մի քանի բարբառներում ու խոսվածքներում. օր. շուրիրս (ԳՍ, Պ, 64. Բբիլիսիի բ.), սարիր (ՄՆ, ԽԺ, 49)։ Մարաղայի բարբառում զուգորդվում է նաև միավանկ ձայնավորահանգ հիմքերի հետ. լ՝ւյիր, ծո՝ւյիր, ծիյիր։ Առհասարակ գործածական է ԵՐ-ի դիրքերում, թեև հոլովաձևերում հիմնականում պահպանվում է. Բբիլիսիի բարբառում այն փոխարինվում է ԷՐ-ով. օրէրու (ՄՆ, ԽԺ, 5), սարէրուն (և. ա., 10)։ Սասունի բարբառում (ըստ Վ. Պետոյանի «Սասունի բարբառը» աշխատութ՝յան տվյալների)՝ իր. բաղիրով (և. ա. 74), էր՝ ձամէրուս (և. ա. 65). ա՝ր՝ ջեր ա՝րու (և. ա. 86)։

ԻՐՏԱՆՔ.—Բաղադրյալ՝ իր-տի-անք>իրտանք զարգացումով՝ հավաքական հոգնակերտ. հազվադեպ գործածությամբ հանդիպում է Մարաղայի բարբառում. տաշտիրտանք «տաշտեր» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 754. Համմ. ԿԴ, ԼՂԲՔ, 95)։ Համմ. էրտանք։

ԻՐՔ.—Բաղադրյալ՝ իր-ք>իրք զարգացումով մասնիկ. հազվադեպ գործածությամբ՝ Բբիլիսիի բարբառում. ախչկիրք (ԳՍ, Ըե, 22)։

ԻՑ. տե՛ս Ց։

ԻՔ[1].—Ք-ի զարգացումը վերջնահանգ ի տարրով. հանդիպում է դրարարի ոչ-համակարգային կազմավորումներում. արմատ—արմաիք (նաև արմատ), պարտ—պարտիք (նաև պարտք)։ Համմ. դրուստիք, կարծիք, սերմանիք, կեղծիք, սպառնալիք, զարմանալիք (ըստ ԳԱ, ՔՀ, 243)։ Եղդրաբարյան հայերենում էական զարգացում չի ստացել։ Գրաբարում էլ ձևաբանական այս սերտաձումն իր վերջնական ավարտին չէր հասել։ Բարբառներում իք-ով մասնակի կազմավորումներ կան. օր. բըրչըմնիքը (եղ. բըրչէմնը, տե՛ս ԿԴ, ԼՂԲՔ, Ն, 272)։ Հանդիպում է նաև ք-ի քմայնացումով՝ իք՝. լո՝ւզի—լո՝ւզվիք՝ (Ղրբ. բ.)։ Համմ. նաև Ջ։

ԻՔ[2].—Գրաբարում (և նախամիջինհայերենյան գրավոր աղբյուրներում) հանդիպում է իկ տեսքով. իկ>իք հնչյունական տարաձում. միջին գրական հայերենում էլ հաձախ պահպանված է իկ ձևով։ Հանդիպում է իկ-ի դիրքում. մարդիք (ՊՇԲ, 31. ՄՆ, ՈՒԲ, 127)։ Գրաբարատիպ կառուցաձևում սեռ.-տրականը (և նրանից

կազմված ձևերը) ունի կան, վերակազմավորված կառուցաձևերում՝ կաց||կանց (կ–ացի||կ–անց). *մարդկաց, մարդկանց։* Մարդիկ *ձևը վկայում են նաև՝ ՆՄ, ԺԱՎ, 10, Գ, ՔԲՄ, 12, ՍՍ, Դ, 9, կն, Տ, 170. ԳԱ, ՈՒՀ, 260, Ֆ, Բ, 174, ՀՔ, Տ, 163, ԱԱ, ԱԱ, 31, 242։ Հայցականում սովորաբար իմ. զմարդիք (ՆՄ, ԺԱՎ, 26). Հմմտ. նաև՝ եկաւ Ղարայ ծաղիճին ի Սևաստ... բազում մարդիմ չարդեց (ՄԺ, 160, XVI դ.)։*

Ականջ է շատ բարբառներում (օր. Արարատյան, Նոր Ջուղայի, Կարնո, Թբիլիսիի, Պոլսի, Առտիալի, Լոռու, Մշո, Նոր Նախիջևանի, Արեշ-Հավարիքի, Կեսարիայի, Հաճընի, Դերսիմի՝ Ջմշկածագ, Սյունյաց, Ղարաբաղի առանձին խոսվածքներում են[21]); Գործածության դիրքը նույնն է։ Այսպես՝ Արարատյան բ. մարդիք (ՊՊ, ԵԺ, I, 39. ԽԱ, ԵԼԺ, III, 8, 15), տղամարդիք (ԽԱ, ԵԼԺ, III, 37), մեծամարդիք (ն. տ. 140). Թբիլիսիի բ. մարթիք (ՄՆ, ԽԺ. 25. ԳՍ, Պ, 66). Հմմտ. նաև մարթիք (ՀԺՀ, IX, 308, Մանազկերտ)։ Թևք հոլովաձևերում օց||ոց, օնց||ոնց. (բ)ֆօնց||ֆոնց, ուց. իգաց, իմաց||իմըց՝ *նայած բարբառին մարթիք՛—մարթուց (Ղրբ.), մարթոնց, մարթոնց (նույն բարբառի խոսվ. տարբերակներ). մարդիք—մարդիքաց, մարդիքըցմով (Սուչավա, ՀԱ, ԼՔՀԼ, III, 840), մարթըքոնց, մարթըքոնցով (Ն.-Ջուղա, Ն. տ.)։*

Իք՛.—Իմ (<իկ) *մասնիկի հնչյունական տարաճում՝ ֆ-ի քմայնացումով, հանդիպում է իֆ-ի դիրքում. առկա է, օրինակ, Ղարաբաղի, Կարճևանի, Շամախու, Հադրութի, Ագուլիսի բարբառներում։ Մարթ—մարթիք՛ (Ղրբ. բ.)։ Թևք հոլովաձևերում՝* ուց. *մարթիք՛—մարթուց (Ղրբ. բ.),* ապ. օնց, ունց *(Հմմտ. ԿԴ, ԼՂՔՔ, 263, 270), Հմմտ. նաև* Իֆ։

Իքներ.—*Հազվադեպ գործածությամբ հանդիպում է որոշ բարբառներում. օր. մարթիքներ (ՀԺՀ, IX, 378, Բազեշ). Հմմտ.* իկներ։ *Մասնակիորեն թափանցել է նաև գրավոր խոսք. օր. մարդիքներ («Մշակ», 1872, № 51)։*

Կան.—*Գրաբարում ներկայանում է իբրև իկ մասնիկի տարբերակ սեռ.-տրականում և նրանից կազմված ձևերում։ Հանդիպում է նաև միջին գրական հայերենի գրաբարատիպ կազմավորումներում. օր. ազգս մարդկան (ՄՄ, ՀՆ, 167, XVI—XVII դդ.),*

---

[21] *Բարբառներից բնականաբար թափանցել է գրական աշխարհաբար. տե՛ս, օր. ԳԱ, Ջ2, 1. «Մեղու Հայ.», 1858, № 2. «Մշակ», 1872, № 33. Ր, ԵԺ, X, 1881, «Բազմավ.», 1843, էջ 189). Էլ ավելի վաղ ՆԿԴ, 69, XVIII դ. ԽԱ, ԵԼԺ, V, 11՝ XIX գաբխ I կեսւ Սա. Մալխասյանցը անձինք. անձնե ձևերին զուգահեռ դնում է նաև անձինքներ (ՍՄ, ՀՔՔ, I, 145)։*

արևամբ մարդկան (ՄՆ, ՈՒՔ, 116, հմմտ. ՆՄ, ԺԱՎ, 12), ի մեջ մարդկան (Ֆ, Բ, 35)։ Այսպես նաև՝ նոր գրական հայերենում՝ Որ խոնարհում են առաջի մարդկան (ՍՇ, ե, 59)։

ԿԱՆՑ.—Թեք հոլովաձևերում հոգնակիության բաղադրյալ տարր։ Հանդիպում է դեռևս միջինհայերենյան գրավոր աղբյուրներում, եւ մարդկանց երակն վաղուց է, քան գկտրճերուն (ԱԱ, ՕՔ, 69). հմմտ. մարդկանց (Գ, ՔՔՄ, 70)։ Գործածվում էր կան, կաց տարբերակներին զուգահեռ, իկ (իկ[f]) մասնիկի դիմաց՝ թեք հոլովաձևերում։

Բարբառներում հանդիպում է կանց, fօնց և այլ տարաձևություններով, օր. մարդկանց (Արարատյան բ., հմմտ. ԽԱ, ԵԼԺ, III, 2, ՊՊ, ԵԺ, 1, 20)՝ կէրանց տարբերակին զուգահեռ։

Նոր գրական հայերենի հնատիպ կազմություններում ամրացավ անց մասնիկը. մարդկանց հոգնակիում էլ այն գիտակցվում է կ(իկ)-ից անկախ[22]. մարդ-իկ, մարդկ-անց, մարդկ-անց-ից։ Հմմտ. կան-այք, կան-անց։ Մարդկ- այժմ նաև բառակազմական հիմք է։ Հետաքրքրական է, որ Ղարաբաղի բարբառում այս կ(իկ) կամ իմ՛ տարրը ո՛չ հոգնակիակազմ հիմքում է պահպանվում և ո՛չ էլ բառակազմական. հմմտ. մարթիք՛—մարթուց(ը), մըրթութուն։

ԿԱՑ.—Հազվագեպ գործածությամբ հանդիպում է միջինհայերենյան աղբյուրներում՝ կան, կանց տարբերին զուգահեռ, նույն դիրքում. մարդկաց (տե՛ս, օրինակ, ՊՇՔ, 46. Գ, ՔՔՄ, 36. ԱԱ, ԱԱ, 124. ԱԱ, ՕՔ, 9, 84)։ Ըստ էության կանց>կաց անցում է։

ԿԵՐԱՆՑ.—Կէրանց բաղադրությունն է, որ բարբառներից մասնակիորեն թափանցել է գրական աշխարհաբար. մարդկերանցով («Մեղու Հայ.», 1858, №№ 1, 9). մարդկերանցից («Մշակ», 1872, № 36). մարդկերանց (Շ, ԵԺ, X, 597). որդկերանց (ն. տ. 159. «Մեղու Հայ.», 1858, № 3)։

ԿԷՐԱՆՑ‖Կ՛ԷՐԱՆՑ կամ **(կ)էրանց‖(կ)էրանց.**—Իկ. իմ. կէր և այլ որոշ հոգնակերտների հարացուցային տարբերակ սեռ.-տրականում և նրանից կազմված ձևերում. հանդիպում է որոշ բարբառներում. Թբիլիսի բ. մարթկերանց (ԳՍ, Պ, 66), Արարատ. բ. մարդկերանցովը (ԽԱ, ԵԼԺ, III, 104, 168), Լոռու խոսվ. մառթկ՛էրանցը (ՄԱ, ԼԽ, Ն, 157)։ Հմմտ. նաև՝ Թբիլ. բրր. վուրթկերանց

---

[22] Ըստ ԱՂ, 22ՆՄ, 98՝ «մարդ բառի մարդ-կ-ան-ց ձևայանը կազմված է (ի)կ+ան+ց հոգնակիներից»։

(ԳՍ, Պ, 64)։ Վերջին օրինակը վկայում է կէրաց միասնության մասին, այսինքն՝ **կէրաց և ո՛չ (կ)էրաց**։

կէրՔ.—*Բաղադրյալ՝ իկ-էրէ>կէրէ զարգացումով հոգնակերտ. գործածվում է իկ(իէ)-ի դիրքում. մարթկէրք (Շամախի, ՌՔ, ՇՔ, 70)։ Քեզ հոլովաձևերում՝ նույնը։*

կէՔ.—*Հազվադեպ գործածությամբ՝ լոռու խոսվածքում. մառթկէք (ՄԱ, Լե, 90)։*

կ՛էՓ.—*կէՓ մասնիկի հնչյունական տարաճում՝ Շամախու բարբառում. մարթկ՛էք՛ (ՌՔ, ՇՔ, 74). գործածվում է կէրՓ-ին զուգահեռ՝ նրա դիրքում։*

կՀՆԵ.—*Հազվադեպ գործածությամբ հանդիպում է Ղարաբաղի և Հադրութի բարբառներում. մի դեպքում հանդես է գալիս չէն բառի հոգնակիակազմության մեջ, իբրև ր՝թկրնէ||իթկրնէ բաղադրյալ հոգնակերտի տարր (չէն—չր՝նը՝թկրնէ), մյուս դեպքում՝ հրդէ «ուղի» բառի հոգնակիակազմության մեջ, իբրև ըսկրնէ բաղադրության տարր. հրդէ—հրդրսկրնէ։ Ըստ երևույթին ամբողջական մասնիկն է *ցկրնէ, որից ց-ի պարզեցումով, առաջին դեպքում ունենք *ցկրնէ—թկրնէ, ր անցումային հնչյունով՝ ըթկրնէ, երկրորդ դեպքում՝ *ցկրնէ>սկրնէ, ը-ի ներմուծումով՝ ըսկրնէ։ Տարօրինակն այն է, որ այս ց-ն առկա է նաև հրդէ բառի եզակի թեք հոլովահիմքում. հրդէ—սեռ.-տր. հրդրցէն (հրդրցու). այս հրդրց- հիմքը պահպանվում է եզակի բացառականում, գործիականում և ներգոյականում, ծթե հոգնակին կազմենք ոչ թե եզակի ուղղականից, ինչպես այլ դեպքերում է, այլ եզակի թեք ձևերի հրդրց- հիմքից, ապա՝ հրդրց-կրնէ. պայթականից առաջ պայթաշփականի պարզեցման օրենքով (ց>ս)՝ հրդրսկրնէ։ Այս մեկնաբանությունը կրնէ մասնիկի օգտին է. բայց ր՝նը՝թկրնէ կազմությունը անորոշ է թողնում ր՝թկրնէ բազադրությունը (Համմ. իթկրնէ)։ Սակայն այս վերլուծությունը լավագույն դեպքում առանձնացնում է կրնէ տարրը։ Սա էլ ըստ էության բազադրություն է՝ կ-ընէ զարգացումով. ընէ-ն Ղարաբաղի բարբառի համակարգային կազմավորումների տարր է, երկվանկների հոգնակի ուղղականում ր-ն բազաձայնական անցումը պայմանավորող ձայնավորում է, իսկ կ-ն ապաշնչեղացած f հոգնակերտն է։ Այս դեպքում ենթադրելի է, որ հրդէ բառի հոգնակին նախապես կազմվել է եզակի թեք ձևերի ընդհանրական հրդրց- հոլովահիմքից, իբրև հրդրց+(ե)f>*հրդրցէք. f(էf) մասնիկի ձևաբանական արժեքի մթագնումը հանգեցրել է նրան, որ ավելացել է նև հոգնակերտը, առացվել է «կրկնակ» հոգնակերտ. *հրդրց(է)fնէ>*հրդրցfրնէ>հրդրսկրնէ։*

Ց>ս անցումը հոգնակիակազմ հիմքում ց տարրը չի օտարում եզակիի հրդրց- հիմքից և հոգնակերտի բաղադրիչ չի գիտակցվում. ուստի մնում է կրնէ բաղադրյալ մասնիկը. Թեք հոլովաձևերում նէ>նէր սովորական անցումով ստացվում է կրնէր. հոգն. ուղղակ. հրդրսկրնէ, սեռ.-տրականում. հրդրսկրնէրէն, գործ. հրդրսկրնէ-րավր ևն։

ԿԸՆԷՐ.—*Կրնէ մասնիկի տարբերակ Թեք հոլովաձևերում։*

ԿՆԷՐ.—*Քներ մասնիկի հնչյունական տարաճում Ը-ի ապա-շնչեզացումով. Հազվադեպ գործածությամբ հանդիպում է դեռևս միջինհայերենյան աղբյուրներում. տղակներ (ՀՄԺԹ, 329), նույ-նությամբ պահպանվում է Թեք հոլովաձևերում. տղակներուն (ԽԿ, ՈՒԲ, 146. ԱԱ, ԱԱ, 58, 436, 464)։ Հանդիպում է նաև որոշ բար-բառներում. տղեկներ (ՀԺՀ, IX, 13—Ալաշկերտ. ՀՄՄտ. ՍԴ, 13)։*

ԿՈՑ.—*տե՛ս* ԿՕՑ։

ԿՕՆՑ.—*Կ՛էլ՛ հոգնակերտի հարացուցային տարբերակ սեռ.-տրականում և նրանից կազմված ձևերում. հանդիպում է Շամախիի բարբառում (ՈՒԲ, ՇԲ, 74)։*

ԿՕՑ. (Կոց.)—*Իկ մասնիկի հարացուցային տարբերակ Թեք հո-լովաձևերում. մարդկոց (ՀԺՀ, IX, 179, Ալաշկերտ. ՀՄՄտ. Ն. տ. 218, Մանազկերտ), նաև՝ մարդկոցն (Э, СПВ, 416, XVIII դ.)։*

ՀՅՏԱՐ.—*Բաղադրյալ՝ Ը-տար>հյտար զարգացումով մասնիկ. գործածվում է Վանի բարբառի ոչ-համակարգային կազմավորում-ներում. սատանէհյտար «սատանաներ». երբեմն հիմքավերջի ա>է փոփոխությամբ ձայնավորումը վերցնում են բաղադրյալ հոգնա-կերտի կազմում, իբրև էհյտար։*

ՀՅՏԵՐ.—*Բաղադրյալ մասնիկ Ը-տար (<տեր)>հյտեր զար-գացումով. Հանդիպում է Վանի բարբառում, գուգորդվում է երկ-վանկ-բազմավանկ ձայնավորահանգ հիմքերի և երկվանկ-բազ-մավանկ և հանգող հիմքերի հետ. այլ դեպքերում օրինաչափու-թյուն չկա. կ՛ինհյտեր, մառանհյտեր (ըստ ՀԱ, ՀԼՊ, II, 340՝ յհտեր)։*

ՅԱՆՑ.—*տե՛ս* ԵԱՆՑ։

ՅԱՆՔ.—*տե՛ս* ԵԱՆՔ։

ՅՆԵՐ.—*Քներ մասնիկի հնչյունական տարաճում, հանդիպում ենք Բաղնշի խոսվածքով բերված տեքստում. տղեյներ (ՀԺՀ, IX. 403)։*

Ն.—*Նի մասնիկի դիրքային տարբերակ Թեք հոլովաձևերում (բացի հայցականից). պատճառնի—պատճառնոյն (ՄՀ, ՋՄ, 35), բանջրնի—բանջրնով (Ն. տ. 41), ֆռանկնի—ֆռանկնոյն (ՄԺ, 82,*

XIII դ.), այսպես և՝ ի գլխընուս (ն. տ. 159). ի տաճկնուն (ն. տ. 169). և այս եռակնէն է, որ յիշեցի (ԱՄ, ՕԲ, 32), և քեն կանանչ ուսէ բանեռնուն (ն. տ. 72). Տուր ի բանեռնուն զհազարն (ն. տ. 149), կուպակնովն (ԴՀվ, I, 44). Վերջին օրինակում հնարավոր է, որ ն-ն ունի հոգնակերտի տարբերակը լինի. համմտ. կուպակաճի (ն. տ. 44). Բարբառներում կարող է լինել ևի, նաև եէ մասնիկի դիրքային տարբերակ։

ՆԱ.—*Նի մասնիկի հնչյունական տարաճում. առկա է մի քանի բարբառներում և խոսվածքներում (Սվեդիա, Քևսաբ, Զեյթուն, Կիլիկիա, Քաբուսիե, Կարճևան ևն)։ Սովորաբար գործածվում է երկվանկ-բազմավանկ հիմքերի հետ. կարպատ—կարպատնա (ՀԴՄ, ԿԲ, 81), բօղուղնա (ՀԱ, ԼՔՀԼ, III, 786)։ Երբեմն ավելանում է ձայնավորահանգ հիմքերին, ինչպես Կարճևանի բարբառում՝ Կիլիկյան բարբառում սա հնչյունաբանորեն պայմանավորված տարբերակ է (երբ հիմքավերջի վանկում ձայնավորը ու է)։ Կարճևանի բարբառի թեք հոլովաձևերում (ըստ ՀԴՄ, ԿԲ, 84—85) այս մասնիկը փոխարինվում է նար տարբերակով. և քանի որ հոգնակերտների ա ձայնավորը ու հոլովիչի ազդեցությամբ շրթնայնանում է (ա>օ), ապա մասնիկը ստանում է նօր տեսքը (նար>նօր). որոշ դեպքերում նաև նօն՝ ախպիրնա—ախպիրնօռու (ըստ ԱՂ, ՀԲ, 305)։*

ՆԱ.—**նա** (<**նի**) *մասնիկի հնչյունական տարաճում. հանդիպում է Սվեդիայի բարբառում և հարակից խոսվածքներում. գիղիցինա «հկեղեցիներ» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 768). համմտ. կինինա «գինիներ» (Քևսաբ, ԱՂ, ՀԲ, 447)։*

ՆԱՏԷ, *տե՛ս* **ԱՏԷ**։

ՆԱՏԻՔ՛.—*Բաղադրյալ՝ նա-տի-ք՛>նա-տիք՛>նատիք՛ զարգացումով հավաքական հոգնակերտ, հանդիպում է Ագուլիսի բարբառի ոչ-համահարգային կազմավորումներում. շրմփրրնատիք՛ (ըստ Հ. Աճառյանի)։*

ՆԱՐԷ.—*Հազվադեպ գործածությամբ՝ Մեղրու բարբառում. կրաբճառէ «կտուրներ» (ԷԱ, ՄԲ, 121)։*

ՆԱՔ.—*Բաղադրյալ՝ նա-ք>նաք զարգացումով մասնիկ. հազվադեպ գործածությամբ հանդիպում է Սվեդիայի բարբառում. փինինաք «փեսաներ» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 768). համմտ. ամբննաք, «ամաններ» (Կիլիկիա, ն. տ. 792)։*

ՆԱՔ.—*Նաք մասնիկի՝ ձայնավորների ներդաշնակության օրենքով պայմանավորված տարբերակ՝ լաղուղնաք «լակոտներ» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 792)։*

ՆԵԱՐ.—*Նի–եր>նեար զարգացում ունեցած մասնիկ (ըստ Կարստի). հանդիպում է գրաբարի ոչ-համակարգային կազմավորումներում. քաղաքինեար, նաւկինեար, բարձկինեար։ Ա. Այտընյանի կարծիքով (ՔՆՆ. քեր. 79)՝ այդ օրինակներում ևս առկա է նար, որովհետև ն-ն հիմքի տարր է։ Գրաբարի այսպիսի ձևերում նեար–ը ավելանում է նվազական իկ–ով հիմքերին. բարձիկ-բարձկինեար։ Այս մասնիկից է սերում (հնչյունական տարաճումով) հոգրաբարյան հայերենում տարածված և նոր գրական հայերենում և շատ բարբառներում ընդհանրացած ներ մասնիկը։*

ՆԵՐ.—*Նեար մասնիկի հնչյունական տարաճում։ Պատահական նմանություն ունի նոգայերենի* nar‖ner *մասնիկների հետ, որպիսիք առկա են շոր լեզվում։ Ներ մասնիկի ծագումը «երկար ժամանակ բացատրվում էր այն ձևով, որ իբր թե կազմված է և հանգող բառերի հոգնակիով. օրինակ՝ ոտն—ոտներ, ձեռն—ձեռներ, եղեգն—եղեգներ. սրանցից ենթադրվել է, թե հոգնակիի մասնիկն է –ներ. ըստ որում այդ բառերը եզակիում ն-ի կորուստով դարձել էին՝ ոտ, ձեռ, եղեգ։ Կարստը (էջ 188—189), մերժելով այս մեկնություն, տալիս է ավելի հարմար բացատրություն. –ներ մասնիկը կազմված է հին ի+եր մասնիկների զումարից, ինչպես որ ունենք բարբառների և նույնիսկ գրական լեզվի մեջ ուրիշ տեսակ զումարներ զանազան հոգնակերտ մասնիկների...։ –Ներ մասնիկի դերհանդիսությունը Կարստը դնում է առաջին անդամ «վաստակոց դրում», ...և Սմբատ պատմիչի մոտ..., բայց այս օրինակները համարում է սխալ գրչություն և –ներ մասնիկը առաջին անգամ սկսած է դնում ԺԶ դարի վերջից» (ՀԱ, ԼՔՀ, III, 820)։ Համմ.* Karst, *188. ՀՊ, ՀԳԼ, 206)։*

Մեծամասամբ հոգնակերտ միջին գրական հայերենում գործածության մեծ հաճախություն չունի, գուգորդվում է երկվանկ-բազմավանկ հիմքերի հետ, բայց այդ հիմքերից երկվանկներում գերիշխող են մասնիկին, իսկ բազմավանկներում եր–ին զուգահեռ սահմանափակ արտահայտություն ունի. սարդաւագներ (ՀԲ, ՈՒՐ. 165). ծաղկներ (ՄՀ, ՋՄ, 32), երակներ (ԱԱ, ԱԱ, 32), աստիճաններ (ն. տ. 10), ճղկներ (ն. տ. 33), կետկներ (ն. տ. 36), հալիւյաններ (ԱԱ, ՕՔ, 62)։ Միավանկ հիմքերի հետ նրա գործածությունը բացառված է։ Թեք հոլովաձևերում պահպանվում է նույնությամբ. զաղջկներոյն *(ՍՍ, Դ, 112),* ելբղներուն *(ԱԱ, ԱԱ, 75),* դնեմ մէջ կաւասներույս *(ԳԱ, ՈՒՏ, 274), եւ այս ի յաղեկ ճուարիշներուն է (ԱԱ, ՕՔ, 134),* յաղջներոյն *(ՆՇ, ԲՉ, 580)։ Ուշմիջինհայերենյան*

շրջանում և վաղ աշխարհաբարում սրա գործածությունը աստիճանաբար հաճախանում էր։

Բարբառների մեծ մասում համակարգային հոգնակիակազմության տարր էր։ Արտասանական երանգները նկատի ունենալով բարբառագիտական ուսումնասիրություններում տառադարձված է համապատասխանաբար ներ կամ ներ։ Հանդիպում է՝ Արաբատյան, Թբիլիսիի, Պոլսի, Նոր Ջուղայի, Կարնո, Դարաբաղի, Մեղրու, Վանի, Նոր Նախիջևանի, Դերսիմի, Մշո, Շատախի, Ուրմիայի, Կեսարիայի, Ագուլիսի, Արդվինի, Առտիալի, Մալաթիայի, Լոռու, Շամախու և այլ մի քանի բարբառներում ու խոսվածքներում (չկա, օրինակ, Արեշ-Հավարիքի բարբառում՝ եր-ի լիակատար բնդհանրության հասնելու պատճառով)։ Սովորաբար ավելանում է երկվանկ-բազմավանկ բաղաձայնահանգ (առանձին բարբառներում նաև ձայնավորահանգ) հիմքերին. պառավ—պառավներ (Արաբատյան բ.), բառավներ (Պոլիս, Ն.-Նախիջևան), պառվրներ (Կարնո բ.), ամսրներ (Մշո բ.)։ Թեք հոլովաձևերում սովորաբար պահպանվում է նույնությամբ։ Սակայն այս հոգնակերտը մի քանի բարբառներում հանդիպում է միայն թեք հոլովաձևերում, իբրև դերքային տարբերակ՝ ուղղ.-հայցականում հանդիպող ներ, ներ, ներ մասնիկների համար. այսպես իմաստուններ—սեռ.-տր. իմաստուններու (Թբիլիսիի բ.), մրրբ՛նէ(ն) «մարագներ(ը)»—մրրբ՛նէրէն (Ղրբ. բ.)։ Մեղրու, Հադրութի բարբառներում այս տարբերակը գործածվում է ներ հոգնակերտի մի այլ՝ և տարբերակին զուգահեռ. օր. մատակներ—մատակներու||մրտրկնու (Մեղրի)։ Պրոֆ. Ե. Ա. Աղայանը այդ երկու տարբերակների առկայությունը մեկնաբանում է նրանով, որ հավանաբար մի ժամանակ հոգնակի ուղղականում ևս երկու տարբեր հոգնակերտներ են եղել (ըստ երևույթին տարբեր բառերի համար). ժամանակի ընթացքում ուղղական և հայցական հոլովներում տարածվել է ներ-ն, դուրս մղելով ներ-ը, իսկ մյուս հոլովներում, ընդհակառակն, ընդհանրացրել է ներ-ը (ԷԱ, ՄՌ, 166—167)։ Նոր Ջուղայի բարբառում ըստ Հ. Աճառյանի՝ «ու վերջացող բազմավանկ բառերը բացի սովորական ի ձևով հոգնակիից՝ ունենում են նաև մի երկրորդ ձևի հոգնակի, որ կազմվում է ըներ մասնիկով և որի առաջ եզակիի ու ձայնավորը դառնում է վ». առվրներ, կառվրներ, լեզվրներ (ՀԱ, ԼՔՀԼ, III, 735)։ Ինչպես նկատելի է, բաղաձայնահանգ հիմքի և ներ (բաղաձայնասկիզբ) հոգնակերտի միջև ը անցումային հնչյունի ներմուծումը այն տպավորությունն է թողնում, որ ունենք ոչ թե ներ, այլ ըներ մասնիկ։ Հակառակ դեպքում (ը)ներ-ը կարելի է ներ-ի

դիրքային տարբերակ համարել։ Այս վերաբերում է նաև այն (ը)նէր-*ին, որը հանդիպում է որոշ բարբառների ստացական կամ խնդրառական հոգնակիակազմության մեջ։ Ջայնավորահանգ բառերից ստացական կամ խնդրառական հոգնակի կազմող հոգնակերտը միշտ հանդիպում է* նէր *տեսքով, առանց անցումային* ր *տարրի, օր. վրե-նէր-ը (Համմ. ՀԺՀ, IX, 285. Մանազկերտ)։*

Արևմտահայ գրական լեզվում համակարգային հոգնակիակազմության տարր է, զուգորդվում է մեկից ավելի վանկանի հիմքերի հետ. գավաթներ, դպրոցներ, նամակներ են։ Թեք հոլովաձևերում պահպանվում է նույնությամբ՝ գավաթներու, գավաթներով են։

Արևելահայ գրականում ևս մեկից ավելի վանկանի հիմքերից հոգնակի կազմող տարր է, արևմտահայերենի ներ-ից ֆունկցիոնալ այն տարբերությունն ունի, որ միավանկ հիմքերի և ստացական հոդի հետ զուգորդվելով կազմում է ստացական և խնդրառական հոգնակիներ։ Հոգնակերտը այս տեսքն ունի հոգնակիակազմ հիմքում երբեմն և հանգի վերականգնման դեպքում, սակայն այդ ն-ն հիմքակազմ տարր է(ոչ թե մկ-ներ, այլ մկն-եր)։ Ֆունկցիայով համարժեք է եր-ին, նրանից զանազանվում է զուգորդումների հնչյունաբանական պայմանավորվածությամբ։ Ընդհանրացած է հոգնակի հարացույցի բոլոր ձևերում. քաղաքներ—քաղաքների—քաղաքներից են։

ՆԵՐՆԻ.—*Ջույգ հոգնակերտ* (ներ–նի)*. Ի մասնիկին զուգահեռ երբեմն գործածվում է արևմտահայ գրական լեզվում մեկից ավելի վանկանի բառերից (հիմքերից) ստացական հոգնակի կազմելու համար. անդամներնին (Ծ, ե, 158), բաժակներնին (Դվ, Բ, 124), Թեք հոլովաձևերում՝ ներն ակռաներնուն (Դվ, Բ, 61), ներբաններնուն (ն. տ. 96)։*

ՆՈՒՔ.—*Բացառիկ բաղադրություն՝ ներ-ք. մելիքներք (Э, СПВ, 367, XVIII դ.). այլ օրինակ չունենք։*

ՆԷ.—*Նի (<անի) մասնիկի հնչյունական տարաճում. հանդիպում է, օրինակ, Ղարաբաղի, Հադրութի, Մեղրու, Կաքավաբերդի համակարգային հոգնակիակազմության մեջ։ Զուգորդվում է սովորաբար երկվանկ-բազմավանկ բաղաձայնահանգ հիմքերի հետ. ձր՝ձք՝ճ՛ներ «ձրագներ», ըսդղնէ «աստեղներ» (Ղրբ. բ.)։ Մեղրու բարբառում բացառված չէ նրա զուգահեռաբար գործածվելը նաև ձայնավորահանգների հետ (բացի ի, է հանգողներից)՝ կառուցէ (ԷՒ, ՄՒ, 115)։ Ղարաբաղի և Հադրութի բարբառներում բազմավանկների հետ գործածվում է էր-ին զուգահեռ՝ կրկըտա՛նէր‖կրկը-*

կըտընէ՛, Թեք հոլովաձևերում փոխարինվում է ԵՐ տարբերակով. ճը՛րը՛ք՛-ԵԷ>ճը՛րը՛ք՛-ԵՐ-էն (Ղրբ. բ.)։ Մեղրու և Հադրութի բարբառներում հնարավոր է նաև և դիրքային տարբերակի գործածություն. ունգունԷ «ականջներ»—սեռ.-տր. ունգուՀ-Ե-ու (Հադրութ)։

ՆԷՅՐ.—*Հազվադեպ գործածությամբ հանդիպում է Արամոյի բարբառում (ըստ ԱՂ, ՀՆԹՆ, 29). ախպըրՆրէյր «աղբյուրներ»։*

ՆԷՆԻ.—*Հազվադեպ գործածությամբ՝ Ղարաբաղի բարբառի որոշ խոսվածքներում (ըստ ԿԴ, ԼՂԲՔ, 90). կըրըսնէնի, կ՛ումըշ-ՆԷՆի։*

ՆԷՐ, *տե՛ս* **ՆԵՐ։**

ՆԷՐՔ.—*Բաղադրյալ՝ ՆԷր–f>ՆԷրf զարգացումով հավաքական հոգնակերտ. հազվադեպ գործածությամբ հանդիպում է Թբիլիսիի բարբառում. քնջներքումբ (ԴՍ, ԸՆ, 24)։ Համմտ. ՆԵՐՔ։*

ՆԷՔ[1].—*Ըստ Հ. Աճառյանի՝ հազվադեպ գործածությամբ հանդիպում է Նոր Ջուղայի բարբառում. յարախուՆԷՔ։ Հնարավոր է, որ Ճ-ն ենթահաճ տարր լինի։*

ՆԷՔ[2].—*Անիվ (Անէք) մասնիկի տարաճում Քհասաբի բարբառում. ա՛ՆՆէք «կանայք» (ԱՂ, ՀՔ, 447)։*

ՆՔ||ՆՔ՝.—*Նի մասնակի հնչյունական տարաճումներ. ձայնավորների ներդաշնակության օրենքով պայմանավորված՝ հանդիպում է կիլիկյան բարբառում։ Ըստ Հ. Աճառյանի՝ երբ վերջնավանկի ձայնավորն է ա, ապա այդ մասնիկը ներկայանում է ՆԸ տարբերակով, իսկ եթե ը է՝ ՆԸ՝ կամ նա տարբերակով. իյգաՔՆը «ներկաՔներ» (ՀԱ, ԼՔՀ, III, 786). Համմտ. սը՛սը՛ՈՆը՝ (ՀԱ, ՀԼՊ, II, 347)։*

ՆԸԷՐ.—*Ղարաբաղի բարբառի Թեք հոլովաձևերում հանդիպող ԵՐ տարբերակի այլ տառադարձություն։ Այդ բարբառում հոգնակերտի է ձայնավորը ներդաշնակությամբ հանդես է գալիս Է և ԸՔ տարբերակներով, եթե հոգնակիակազմ հիմքում առկա է առաջնային շարքի ձայնավոր, հոգնակերտում ունենք ԵՐ (նաև ԷՐ), իսկ եթե միջին կամ ետին շարքի ձայնավոր է, ապա՝ ՈրԷՐ (նաև ՐԷՐ)։ Սակայն այս տարբերակումը այնքան թույլ է արտահայտված, որ տառադարձության մեջ հաշվի չենք առել, երկու տարբերակներն էլ ներկայացնում ենք ԵՐ (նաև՝ ԷՐ) տառադարձությամբ։ Համմտ.* **ՆԵՐ (ՆԵՐ)։**

ՆԸՎԵՐ, *տե՛ս* **ՆՎԵՐ։**

ՆԸՎԻ, *տե՛ս* **ՆՎԻ։**

ՆԸՐՈՆՔ.—*Ջուղգ հոգնակերտ (ՆըրՈՆՔ<՝ՆԷր-ՈՆՔ). Ղարաբաղի*

բարբառի որոշ խոսվածքներում (ըստ ԿԴ, ԼՂԲՔ, 96) ստացական հոգնակի է կազմում. հրլրվնըրնէտ «ձեր հալավները», թևք հո. լովաձևերում՝ ներհնէր տարբերակով՝ վրխըլնըրնէրան «նրանց վախելուց» (ԿԴ, ԼՂԲՔ, Ն, 263)։

ՆԸՐՆԷՐ.—Նրոնէ դույզ հոգնակերտի հարացուցային տարբերյակ Զարաբաղի բարբառի որոշ խոսվածքներում։

ՆԸՔ.—Բազագրյալ՝ նի-f>ներ զարգացումով մասնիկ. հազվագնէ գործածությամբ հանդիպում է կիլիկյան խոսվածքներում՝ նիf-ին զուգահեռ, իբր ձայնավորների ներդաշնակության օրենքով պայմանավորված տարբերակ (երբ հիմքի վերջնավանկի ձայնավորը ա է). բ՛իյաննըք «բերաններ» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 792)։

Նի.—Անի[1] մասնիկի հնչյունական տարաճում՝ ա-ի անկումով. «թե -նի ծագում է -անի ձևից՝ ցույց են տալիս նաև ու հանգող բառերի հոգնակիները. այսպես՝ ածու—ածվնի, առու—առվնի և այլն, որոնց մեջ ու զարձել է վ՝ միայն նախավոր ա ձայնավորի պատճառով (իբր՝ ածուանի, առուանի)։ Սթե -նի ծագած լիներ հենց նախավոր -նի ձևից, այս բառերի հոգնակին պիտի լինի առնի, ածնի, անցնելով՝ *ածունի, *առունի ձևերից» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 711)։ Այս կապակցությամբ Հ. Աճառյանը զուգահեռներ է անցկացնում նի հոգնակերտի և հին վրաց. ni մասնիկի, ինչպես և պահլ.—...պրսկ. ān մասնիկի միջև. «Զևերի այս երկվությունը թույլ չի տալիս մասնիկի ծագման մասին վերջին խոսքը ասելու» (Ն. տ.)։ Զևական նմանություն է գտնում ամերիկյան հնդկացիական կանիչանա, աֆրիկյան կպելլե, ինչպես և նուբիական լեզուներում[23]։ Այս մասնիկը գործածության մեծ հաճախությամբ հանդիպում է միջին դրական հայերենում. զուգորդվում է երկվանկ հիմքերի հետ, խիստ սահմանափակված է բազմավանկների զուգորդություններում. միավանկ հիմքերի հետ նրա գործածությունը բացառված է. ընդհանրացել է երկվանկների ուղղականում և հայցականում. Հրեշտակնին արծիւ զարձէր (Հե, ՈՒԲ, 158), կարմիր եռակնի կա (ԱԱ, ՕՔ, 31), մելիքնին եկին (ՄԺ, 169), խանութնին (Ն. տ. 158), ի պաղչանին (ԳԱ, ՈՒԲ, 242), տամ քեզ լուծ մի կատվնի (ՀՄԺԵ, 302), զճանպնին (ՄԺ, 170), զայս կողին ոսկորնին (ԱԱ, ՕՔ, 29), զակռանիդ (Ն. տ. 65). Գաղիանոս ասէ, թե պատեհ է բժշկին, որ զայս ցաւուս նշանին աղէկ իմանալ (Ն. տ.

---

[23] Ըստ Կարստի այս մասնիկը սերում է արևմտյան և հարավ-արևմտյան կովկասյան լեզուներից (տե՛ս նրա «Հայերենի -եր, -ոի- -ոի յոգնակերտները», «Հանդէս ամսօրեայ», 1903, էջ 11)։

358). բազմավանկ հիմքի հետ. օր. կարդացողնին (ն. տ. 30)։ Հնարավոր է նի հոգնակերտի ն-ի և վերջնահանգ (հիմքավերջի) ն-ի ձուլում, օր. էրէցկնին (ՀՔ, Տ, 203), փոխ. էրէցկնի՛ն։ Թեք հոլովաձևերում (բացի հայցականից) հանդիպում է և տարբերակը (տե՛ս)։

Բարբառներում ևս նկատելի տարածում ունի. հանդիպում է, օրինակ, Համշենի, Հաճընի, Դերսիմի, Սյունյաց, Լոռու, Կարնո (Ախալքալաք), Կեսարիայի, Առտիալի, Շամախու, Նոր Ջուղայի, Կիլիկիայի, Սասունի և այլ որոշ բարբառներում ու խոսվածքներում, գուգորդվում է երկվանկ-բազմավանկ հիմքերի հետ։ Նշված բարբառների մի մասում այն ոչ-համակարգային կազմավորման տարր է, հաճախ էլ գործածական է այլ որևէ հոգնակերտի զուգահեռ (ասենք, նի և նիր), որոշ բարբառներում սրա հնչյունական տարաճումից ունենք նէ (օրինակ, Ղարաբաղի, Մեղրու բարբառներում), նա, նը և այլն։ Ոմանք սրա հետ են կապում էնի հոգնակերտը (համմտ. Ղրբ. բրբ. գ՛ալբա «գուլպա»—գ՛ալբէնի)։ Կիլիկյան խոսվածքում նի-ն հնչյունաբանորեն պայմանավորված տարբերակ է (եթե հիմքի վերջնավանկի ձայնավորը ի կամ է է)։ Թեք հոլովաձևերում սովորաբար ն դիրքային տարբերակն է, բայց կարող են լինել նաև նէր, նիր. վարժապէտնի—վարժապետնէրի (Լոռի), խնձէյնի—խնձէյնէրա (Համշեն), պապըրկընի—պապըրկընուն (Առտիալ), դրնվօյնի—դրնվօյնուն (Հաճըն)։

Արևմտահայ գրական լեզվում այս մասնիկը սովորաբար մնիկից ավելի վանկանի բառերի ստացական հոգնակիականացմության տարր է. Չեմ ծածկեր իրմե բաածնիդ (ՏԿ, ՎԱ, 255). մանուշակներն ալ դարձուցին գլուխնին վեր (ՎՔ, ե, 247)։ Թեք հոլովաձևերում՝ ն. գարշապարնուն (Դվ, Բ, 375)։

ՆԻՅ.—Նէր մասնիկի հնչյունական տարաճում Հաճընի բարբառում. ախպիյնիէյ «աղբյուրներ» (ՀԳ, ՀՔ, 68)։

ՆԻՅ.—Նէր հոգնակերտի հնչյունական տարաճումն է որոշ բարբառներում (Կիլիկիա—Զեյթուն). սովորաբար ավելանում է երկվանկ-բազմավանկ բազաձայնահանգ հիմքերին. իյիսնիյ «երեսներ» (ՀԱ, ԼՔՀ, III, 789). Թեք հոլովաձևերում պահպանվում է նույնությամբ։

ՆԻՅՔ.—Բաղադրյալ՝ նիյ-f>նիյf զարգացումով հավաքական-հոգնակերտ. հազվադեպ գործածությամբ հանդիպում է կիլիկյան խոսվածքներում. բը՛ոգը՛նիյք «պոկունք» (ՀԱ, ԼՔՀ, III, 797)։

ՆԻՆ.—Հազվադեպ գործածություն ունի Սասունի բարբառում.

աշաձիրդնին (համմտ. ՎՊ, ՍԲ, 32). թեք հոլովաձևերում՝ նիր. աշաձիրդնիրու

ՆԻՆՔ.—*Հազվադեպ գործածություն ունի Կոզենի բարբառում. մարդնիմ «մարդիկ» (ՈՒ, ԿԲ, 88)։*

ՆԻՐ.—Ներ (նէր) *մասնիկի հնչյունական տարաձում, հանդիպում է մի քանի բարբառներում (Թբիլիսիի, Սվեդիայի, Մարաղայի, Համշենի, Սասունի են). գործածվում է որոշակի դիրքերում. Մարաղայի բարբառում՝ միայն ձայնավորահանգները. կատուներ. ակռաներ, նույնիսկ՝ ծիներ «ձիեր». այլ բարբառներում՝ մեծ մասամբ զուգահեռ այլ հոգնակերտի (երկրորդաբար)։ Համեմատաբար կանոնավորված է Թբիլիսիի բարբառում, որտեղ նա զուգորդվում է երկվանկ-բազմավանկ հիմքերի հետ. մասլահաթներ (ԴՍ, Պ, 90), խմաստաուններ (ՍՆ, խժ, 61), գոզալներ (ն. տ. 6)։ Այս մասնիկը թեք հոլովաձևերում պահպանվում է նույնությամբ, բացի Թբիլիսիի բարբառից, որտեղ առկա է նիր>նէր փոխարինում։*

ՆԻՖ.—*Բաղադրյալ՝ նի–f>նիf ղարգացումով մասնիկ, հազվադեպ գործածությամբ, վկայված է դեռևս միջին գրական հատվածների շրջանից. վկայնիf, պատճառնիf (Ա. Այտընյան, Հ. Աճառյան)։ Հանդիպում է նաև որոշ բարբառներում (Ն.-Ջուղայի, Կիլիկիայի, Կոզենի են). վոսկինիf (Ն.-Ջուղա), պայգամնիf «բարեկամներ» (Հաճըն)։ Կիլիկյան խոսվածքում հնչյունափոխությամբ պայմանավորված տարբերակ է։*

ՆԻՓ՛.—*Նիf մասնիկի հնչյունական տարաձում՝ f-ի քմայնացումով. հազվադեպ գործածությամբ հանդիպում է Կարճևանի բարբառում. փրսէնիf՛ (ՀԴՄ, ԿԲ, 82)։*

ՆՎԵՐ.—*Ամասիայի բարբառում հանդիպող բաղադրյալ մասնիկ՝ դրափոխությամբ գոյացած. վր–ներ>նրվեր. «ուրիշ բարբառների մեջ երկակիի վրնէր մասնիկն է..., բայց այստեղ շրջվել է և դարձել հոգնակիի համար ընդհանուր մասնիկ» (ՀԱ, ՀԼՊ, II, 351). աղչիկնրվեր, երեսնրվեր, թթե այդ այդպես է, ուրեմն պետք է տառադարձել նրվեր (կամ նրվէր)։*

ՆՎԻ.—*Ամասիայի բարբառում գործածվում է ստացական հոգնակիի համար. տունենրվիդ (ՀԱ, ՀԼՊ, II, 351). քսա էության պետք է տառադարձել նրվի։*

ՆՕՐ (ՆՕՒ).—*Նաև մասնիկի դիրքային տարբերակ Կարճևանի բարբառում (ՀԴՄ, ԿԲ, 243—244). սալդաթնա—սալդաթնօրու (սեռ.-տրական)։*

ՈՅՓ.—*Հավաքական հոգնակերտ. f-ի ղարգացումն է հիմքավերջի ոյ տարրով։ Իբրև հոգնակերտ դեռևս վերջնականորեն չէր*

ձևավորված գրաբարում. բայց հոգևոր գրականության մեջ էլ չի ունեցել. բաշխ—բաշխոյ «բաշխելու պարգև», գահ—գահոյ «աթոռ բարձր ու փառավոր», հաս—հասոյ «եկամուտ, տուրք», պարտ—պարտոյ են։

ՈՆՅ.—Յ հոգնակերտի զարգացումն է հիմքային ոն տարրով. նոյ (օնյ) հոգնակերտի և յ-ով զարգացում ունեցող որոշ այլ մասնիկների հարացուցային տարբերակ սեռ.-տրականում (և նրանից կազմված ձևերում)։ Սրա էվոլյուցիան վկայված է միայն հոգևոր գրականության հայերենում. նկատելիորեն տարածված է բարբառներում, որտեղ նա կարող է լինել յ-ի հարացուցային տարբերակ. գնդցիք—գնդցոնց. (խև, ԵԺ, III, 140. Աբրահամյան բ.). լոռցոնց (ն. տ. 123), աշտարակցոնց (ն. տ. 42), շհարցոնցիցն (ն. տ.), հմմտ. տանըցոնց (Լոռի)։ Հիմնականում ոնյ-ի տարբերակ է՝ խիզանոնց (ՊՊ, ԵԺ, I, 20, 73. Աբրահամյան բ.), խնամոնց (ն. տ. 27, 37)։ Բարբառագիտական ուսումնասիրություններում սովորաբար հանդիպում է օնց տառադարձությամբ. մամիգոնց «տատիկենց», (ՀԳ, ՀՔ, Ն, 140), իլիցոնց «երիցենց» (ն. տ.), ք՛իրկ՛օնց (ՒՔ, ԿՔ, Ն, 239), ախճկոնց (ն. տ. 235)։

Նոր գրական հայերենում սովորաբար ոնյ-ի հարացուցային տարբերակն է՝ շատոնք—շատոնց (ԳՋ, ԵԺ, I, 230), այսպես և պապոնք—պապոնց, մերոնք—մերոնց և այլն։

ՈՆՔ.—Ք հոգնակերտի զարգացումն է հիմքային ոն տարրով. միջինհայերենյան տեքստերը սրա համար էական վկայություն չեն տալիս. բայց այսոնք (ԱՍ, ՕՔ, 22) ձևը ինքնին դրա առկայության ապացույց է։ Համեմատաբար ավելի տարածված է բարբառներում. ուսումնասիրություններում՝ օնք տառադարձությամբ։ Սովորաբար անձնանուններից կերտում է հավաքականներ. պաբոնք (Կարնո բ.), Թուլուսոնք (Համբրն), խնամոնք (Լոռի), բաբոնք (Մալաթիա)։ Հմմտ. դերանվանական կազմավորումների մեջ՝ մէրոնք (Լոռի, Ուրմիա), ա՛սոնք, ա՛դոնք, ա՛նոնք (Մալաթիա) են։ Հմմտ. նաև այլ կազմավորումներում՝ դէզոնք «տեղեր» (Համշեն), լիռոնք «լեռներ» (Սվեդիա—Քեսաբ)։ Թեք հոլովաձևերում՝ սովորաբար օնց. բայց լիռոնք—լիռունց (Սվեդիա)։

Նոր գրական հայերենում այս մասնիկով հավաքական անեզական անուններ են կազմվում. կազմավորման հիմքում ընկած են անձնանուններ, նույնիսկ դերանուններ, ածականներ. խնամոնք, քեռոնք, իմոնք, քոնոնք, ձերոնք (հմմտ. ՄԱ, ՀԼՏ, 253), հմմտ. ձերոնք, շատոնք (արևմտահայերենում)։ Գրական լեզվի արդի էտա-

պում ոնՀ-ի կիրառությունը ավելի սահմանափակված է։ Թևք հոլովաձևերում՝ ոնց։

ՈՏ.—Հնագույն հոգնակերտ-հավաքական մասնիկ, հայերենի գրավոր շրջանում անկախաբար, իբրև հոգնակերտ մասնիկ գրեթե չի հանդիպում։ Շատ վաղուց մտել է բաղադրությունների մեջ, հոգնակերտ այլ տարրերի հետ. համմտ. գրբ. ոտի։ Վաղ է սկսվել նաև սրա ածանցական զարգացումը։ Որոշ բարբառներում դեռևս ունի հոգնակերտ-հավաքականի երանգ։ Այսպես, Ղարաբաղի բարբառում կան հնչյունաբանորեն՝ ձայնավորների ներդաշնակության օրենքով պայմանավորված տարբերակներ՝ օտ||օտ. ըստ Կ. Դավթյանի՝ սկզբում նշանակել են տեղ, ուր տվյալ բանից շատ կա (այդ նշանակությամբ այժմ էլ գործածական են իբրև ածանցներ, օր. կ՛երթամ օտ «գերեզմաններ ունեցող տեղ»), ասենք, նաև այն տեղը, ուր տվյալ ծառատեսակից շատ կա. «հետագայում բուսականության, մանավանդ պտղատու ծառերի նկատմամբ այդ մասնիկները, սոսկ տեղ նշելուց բացի, դարձել են նաև տվյալ տեսակի ծառերի հավաքական հոգնակիությունը նշող մասնիկներ» (ԿՊ, ԼՂԲՔ, 90). տանձօտ, խընձօրօտ. համմտ. նաև ԱՂ, ՀԲ, 332։ Ղարաբաղի բարբառից բացի, առկա է նաև Հադրութի, Արցախի և այլ որոշ բարբառներում։

Նոր գրական հայերենում ոտ մասնիկը գուտ ածանցական տարր է. «ցույց է տալիս մի բան վրան, մեջը ունեցողը, ժամանակավորապես կամ մնայուն կերպով». կեղտոտ, մրոտ, թեփոտ, քարոտ են (համմտ. ՄԱ, ՀԼՏ, 265)։

ՈՏԻ.—Հավաքական-հոգնակերտ մասնիկ. թեև մեկնաբանում են տի մասնիկով և ո հիմքային տարրով, բայց հնարավոր է նաև ոտ+ի զարգացում (համմտ. ՀՊ, ՀԴԼ, 218)։ Հանդիպում է դեռևս գրաբարի ձի-համակարգային կառուցաձևերում. ոսկրոտի, փորոտի։ Գրեթե գործածության նույն ոլորտն ունի միջին գրական հայերենում։ «Կիլիկյան շրջանում, ո–ն իբրև միջին ձայնավոր ընկնելով, մնաց դարձյալ տի մասնիկը» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 712)։ Ան-հատարակ եռգրաբարյան հայերենում, մասնավորապես բարբառներում հանդիպում է այլ հոգնակերտների հետ ձևաբանորեն վերակազմավորված վիճակում. օտիք, օտէնք՛, օտիք՛, օտէք՛ են։ Գրական աշխարհաբարում սա ածանցական տարր է. ցնցոտի, հնոտի, ոսկրոտի, մեռելոտի, անոտի, պատառոտի են։ Ըստ Ա. Ղարիբյանի՝ այս մասնիկի հետ առնչություն ունի բազմապատկական ոտ ածանցը։

ՈՏԻՔ.—Հազվադեպ գործածությամբ հանդիպում է դեռևս ուշ-

գրաբարյան տեքստերում. օր. սամոտիք (Նարեկացի). ունի ոտի–ք>ոտիք զարգացում։ Հավաքական հոգնակերտի իր նշանակությունը պահպանում է նաև եռագրաբարյան հայերենում։ Գրական աշխարհաբարում սրա առկայությունը բացատրվում է հնաբանությամբ. ոսկերոտիք (ՊԴ, ե, 19. ԳՀ, եժ, I, 108), փորոտիք. հնոտիք (Համմտ. ՄԱ, ՀԼՏ, 265)։

ՈՐ.—եր մասնիկի հնչյունական տարաճում. գրավոր շրջանում հանդիպում է միայն բաղադրյալ մասնիկների կազմում. համմտ. արտ-որ-այք, վան-որ-այք (որայ), նաև՝ արտ-որ-այ (որայ)։

ՈՐԱՅ.—Որ–այ>որայ զարգացումով մասնիկ. հանդիպում է գրաբարի ոչ-համակարգային կազմավորումներում, իբրև հավաքական հոգնակերտ. արտորայ, վանորայ։ Սովորաբար գործածվում է որայք, որեայ մասնիկներին զուգահեռ։

ՈՐԱՅՍ.—Որայք մասնիկի հարացուցային տարբերակ հայցականում և նրանից կազմված ձևերում, բաղադրյալ՝ որ–այ–ս>որայս զարգացումով մասնիկ։

ՈՐԱՅՔ (Որայք).—Բաղադրյալ՝ որ–այ–ք>որայք զարգացումով հոգնակերտ-հավաքական մասնիկ. հանդիպում է դեռևս գրաբարի ոչ-համակարգային կառուցաձևերում. արտորայք, վանորայք։ Գրեթե նույն արժեքով ու կիրառական ոլորտով հանդիպում է միջին հայերենյան աղբյուրներում. վանորայք (ՄՂ, ՈԻԲ, 146, XVII դ.)։ Թեք հոլովաձևերում՝ որայս. զվանորայսն (ՄԺ, 137, XVI դ.)։ Համմտ. որեք։ Նոր հայերենում մասնակի արտահայտություններ է ունեցել գյուղորայք (ԽԱ, եԼԺ, V, 37. Ր, եժ, I, 56). պահպանվել է ղեղորայք հավաքականում։

ՈՐԵԱՅ.—Որ և եայ տարրերի բաղադրությամբ գոյացած հավաքական-հոգնակերտ. հազվադեպ գործածությամբ հանդիպում է գրաբարում. արտորեայ, վանորեայ։

ՈՐԵԱՅՔ.—Գործածվել է գրաբարում որայք–ին զուգահեռ. արտորեայք (ըստ ԳԱ, ՔՀ, 243)։

ՈՐԵՔ (Որէք).—Բաղադրյալ՝ որ–այ–ք>որ–է–ք>որեք զարգացումով հավաքական-հոգնակերտ. հազվադեպ գործածությամբ հանդիպում է միջինհայերենյան աղբյուրներում. ի վանորէքն (ՆՔ, ՀԿ, 69), համմտ. նաև՝ գեղօրէիքն հանդերձ (ՄԺ, 160, XVI դ.) Գեղօրէք («Մեղու Հայ.», 1858, № 15). հնարանություն է։

ՈՑ.—Ց հոգնակերտի զարգացումն է երբեմնի բնակերտով (կամ հնչյունափոխությամբ ո–ի վերածված հիմքային այլ տարրով)։ Թեք հոլովաձևերից սեռական-տրականի և նրանից կազմվող

ձևերի հոգնակիակազմ տարր է այն դեպքում, երբ ուղղականում ի է կամ նրանով վերակազմավորված այլ բաղադրյալ հոգնակերտ։ Հանդիպում է միջինհայերենյան շրջանից սկսած. շատոց (ԿԵ, Տ, 164. ՆՔ, ՀԿ, 96), ի հոռոմոց (Ն. տ. 161)։ Բարբառային տեքստերում հանդիպում է ոց և օց տառադարձությամբ գ'էղացիք—գ'էղացոց (ՀԱ, ՀՔ, Ն, 196. Համշեն), երևանցիք—երևանցոց (ՊՊ, ԵԺ, I, 142. Արարատյան բ.), տղաք—տղոց (ՀԺՀ, IX, 511, Կարնո բ.), մարդ'օց, չ'աղցօց (Զեյթուն), ըմբնէք՝ «ամաններ»—ըմբնօցը, խոխէք՝—խօցը (Ղրբ. բ.). դէյթունցօց (Կարնո բ.), դղաք—դըղօց (Պոլիս, Նոր Նախիջևան). Համմտ. քաղքցոց, գեղացոց (ՍԴ, 229)։

Արևմտահայ գրական աշխարհաբարում գործածության գրեթե նույն ոլորտն ունի. կարնեցիք—կերնեցոց. Համմտ. ժողովրդոց (Մ, ե, 3), տղոց (ԳՍ, ՄՅԱ, 17, 56), մարդոց (ՄՄ, ԵԺ, 117), ծառոց (ՄՊ, Տ, 29)։

Արևելահայ գրական լեզվում այսպիսի կառուցաձևերը արդեն հնաբանություն են. որդիք—որդոց. մարդիկ—մարդոց, գյուղացիք—գյուղացոց, ոճերում՝ պլուխ գործոց, իսկ բառակազմության ներում ածանցական (քարացած) ձև է. հայոց։

ՈՔ.—Ք հոգնակերտն է երբեմնի քնակերտով վերակազմավորված. հազվադեպ գործածությամբ հանդիպում է միջինհայերենյան աղբյուրներում. շաթ—շատոց (ԿԵ, Տ, 210, 164). բայց և՝ «որ չատոմ են ցանգացել, բայց քիչք հասան առաւօտուն» (Ն. տ. 127)։ Հետագա հայերենում էական զարգացում չի ունեցել։ Նոր հայերենում մեծ մասամբ ածանցական տարր է (տե՛ս նաև ԱԱ, ՔՔ, Ք, 13). հազվադեպ նաև՝ գործիականի վերջավորություն. մելիքներօք (Ջ, СПВ, 421)։

Ս.—Պարզ մասնիկ, հոգնակերտ-հոլովակերտ. զրաբարի հայցականի և նրանից կազմված ձևերի համակարգային հոգնակիակազմության տարր. համապատասխանում է հնդեվրոպական հոգնակի հայցականի *ns վերջավորությանը, կատարվել է * ns>u անցում (s-ից առաջ ռնգայինի անկման օրինաչափությամբ). *k'erdins>(ղ)սիրտս։ Գրաբարում (ղ)տուն—(ղ)տունս հակադրության մեջ որոշակիորեն երևում է սրա հոգնակերտ լինելուն ֆունկցիան, իսկ տունք—տունս հակադրության մեջ՝ հոլովակերտի ֆունկցիան։ Այս մասնիկը առկա է նաև հոգնակի ներգոյականի կառուցվածքում՝ ի սիրտս, որ սակայն չի մեկնաբանվում հնդեվր. *ns-ով, այլ հնդեվրոպականում ներգոյական կազմող su‖si տար-

բերով։ Գրաբարում կառուցվածքայնորեն այդ տարբերությունը չի գիտակցվում։

Միջին գրական հայերենում ս–ն հանդիպում է գրաբարատիպ կազմավորումների հայցականում (և նրանից կազմված ձևերում), իբրև իրկնիմաստ՝ հոգնակերտ-հոլովակերտ. եւ ապա շահի հեծեալքն... յաշխարհականաց անթիւ անձինս կոտորեցին (ՄԽ, 136, XVI դ.), այլ մարդիկ զայս փառս չունին (ԱԱ, 0Բ, 19), զծակսն (Ն. տ. 50)։ Ըստ երևույթին ի–ի ուժեղ էքսպանսիան հոգնակի հայցականում նկատելիորեն կանխել է ս–ի տարածումը հոգնակի ուղղականում, թեև «Մխիթար Հերացու գործածած հայերենում կա նաև ս հանգով հոգնակի ուղղական. ինչ. ձեռս, որովայնս, հոգս, չաքս (փխ. ձեռք, որովայնք, հոգք, չափք). սրանցից, ինչպես հայտնի է, հոգս սովորական է այժմ արևելյան հայերենի մեջ, իսկ չորս բոլոր բարբառներում» (ՀԱ, ՀԼՊ, II, 245), ապա՝ «Մխիթար Հերացու հայերենում հոգնակի ուղղականը վերջանում է ս, մինչդեռ Կիլիկիայում այդպիսի բան չկա» (Ն. տ. 253)։ Համմտ. Կարստի կարծիքը՝ «Բազմավէպ», 1900, էջ 216։

Վաղ ժամանակներից ածանցական տարր դառնալու միտում է ունեցել. համմտ. զդաւրսն ծխես (ԱԱ, ԱԱ, 250), զիս ուսման հոգսն կու մաշէ (ՆՔ, ՀԿ, 266)։ Այժմ ս–ն ածանցական կամ հիմքակազմ տարր է (բառակազմական կամ ձևակազմական առումներով). օր. հոգս, պաս, մորուս, չորս, չափս, ծախս, ավետիս. համմտ. նաև՝ մեղք—մեղսագործ, օրենք—օրենսգիրք. ապա և՝ երկու—երկուսը, երկուսի, երկուսից են. այսպես և՝ իցս, էս, մասնիկների մեջ՝ երկիցս, բազմիցս, ցանկս։ Դեռևս Ամիրտովլաթը գործածում էր չորսին «չորսին» (ԱԱ, 0Բ, 21), որտեղ ս–ն հիմքային տարր էր։ Այս մասնիկը արդեն քարացել է մի շարք անեզականներում. Մասիս, Ագուլիս են։

Ս՝Ր՝ԱՆ||ՍՊԱՆ.—Սաաև մասնիկի հնչյունական աստղանում՝ տ–ի ձայնեղացումով կամ նաև շնչեղացումով. հանդիպում է Առտիալի, Դերսիմի և այլ որոշ բարբառներում ու խոսվածքներում. քէռեսդան (ՈՒ, ԴՒՔ, 36—Զարսանճազ), հայլըս դ՝ան (Առտիալ)։ Ինչպես երևում է բերված օրինակներից, հոգնակերտն սկզբից ունի է կամ ը ձայնավորում, որ եզակի ձևի վերջնահանգի ձայնավորի (սովորաբար ի) վերակազմավորման արդյունք է. երբեմն հիմքային այդ տարրը գիտակցվում է հոգնակերտի հետ, այդ դեպքում առանձնացնում են՝ ըդ՝ան, էդ՝ան, ըդան, էդան։

ՍՊԱՆՆԻ.—Բաղադրյալ՝ սդան–ևի>սդաննի զարգացումով հա-

վաքական հոգնակերտ. հազվադեպ գործածությամբ հանդիպում է Հաճքնի բարբառում. էկիսդանի «այգիներ» (ԱՂ, ՀՔ, 98)։

ՍՊՈՒՆ *(Ըսդուն).—***Սդ՛ան** *(Սդան) մասնիկի հնչյունական տարաձում Սվեդիայի բարբառում և հարակից խոսվածքներում. դ՛անգըսդուն «դանակներ» (ՀԱ, ԼՔՀԼ, III , 779. հմմտ. ԱՂ, ՀՔ, 447. Քեսաբ)։*

ՍՊՈՒՆՔ *(Ըսդ՛ունք).—Բաղադրյալ՝* **սդան-ք>սդուն-ք>սդունք** *զարգացումով մասնիկ. հազվադեպ գործածությամբ հանդիպում է Սվեդիայի բարբառում. իգդըսդ՛ունք «այգիներ» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 779)։*

ՍՆԵՐ‖(Է)ՍՆԵՐ.—Քներ‖(է)ֆներ *մասնիկի հնչյունական տարաձում՝ նախ* **ֆ>ց** *փոխարինումով, ապա* **ց>ս** *պարզեցումով. իդա երեխեսներուն ու կնկան լն հետրաց նք զարկի (ՀԺՀ, IX, 152. Ալաշկերտ). էն տեղ պառավն չուր մըկա հյա դաս կուտա ատատներուն ձրգերուն (Ն. տ. Բաղեշ). Հմմտ. նաև՝ դևսներ (Ն. տ. 164. Ալաշկերտ), հ՛օդևսներու մեջ (Ն. տ. 416, Բաղեշ)։*

ՍՏԱՀՔԵՐ.—*Բաղադրյալ՝ բառ երևույթին* **ստատ-ք՛էր>ստահքէր** *զարգացումով մասնիկ. հանդիպում է ուրմիայի բարբառի ոչ-համակարգային կազմավորումներում (ԱՂ, ՀՔ, 344)։*

ՍՏԱՆ.—*Ըստ Հ. Աճառյանի՝ «Հին հայերենի* **-ստան** *տեղական մասնիկն է, որ վերածվել է հոգնակերտի. Անցումը կատարված է անշուշտ* **այգեստան, ձիթաստան, ծառաստան** *և նման բառերի վրայից, որոնց մեջ առարկաների բազմությամբ գոնվելու տեղը նույնպես բազմության մտքով է առնված, որով և հավաքականի է վերածված։ Հավաքական և հոգնակի* **-ստան** *մասնիկի հարակցությունը կարելի էր տեսնել հատկապես Հայք—Հայաստան, Մարք—Մարաստան, Վիրք—Վրաստան, Պարսք—Պարսկաստան, Հնդիկք—Հնդկաստան և նման բառերի մեջ, որոնցից կարելի էր հետևցնել, թե* **ստան=ֆ»** *(ՀԱ, ԼՔՀԼ, III, 713)[24]; Հ. Աճառյանը հնագույն վկայությունը դնում է 8-րդ դարից. Աքաղաղքն ի մէջ* **մարեստաններայցն** *«մարիների, հավերի մեջ» (նույն տեղում)։ Միաժամանակ նա այս մասնիկի գործածությունը կապում է ի հանգող՝ անշունչ առարկաների անունների հոգնակիկազմության հետ (էջ 709), և քանի որ* **ստան**-ից առաջ տեղի է ունենում **ի/(+ա)>է** *անցում, ապա բուն մասնիկն է համարում* **աստան**։ *Սակայն բացառված չէ, որ* **ստան** *մասնիկը ի հանգող բառերին միանա* **ա** *հոդակապով, ուստի այս վերջին մեկնաբանությունը*

[24] *Հմմտ.* Karst, *196—197. ՀՊ, ՀԻ, 205.*

այնքան էլ հավանական չէ, Պրոֆ. Ա. Ղարիբյանը այն կարծիքն է հայտնում, թե այս հոգնակերտը ծագումով ոչ մի կապ չունի տեղ ցույց տվող ստան մասնիկի հետ և ներկայացնում է ս–տ–ն զարգացում. «Ձայնավորով վերջացող բառերը գրաբարում ունենում են ուղղականում՝ ի հոգնակի, հայցականում՝ ս, որ ժողովրդական լեզուների մեջ ըմբռնվում է իբրև եզակի. օրինակ՝ բաղնիք—բաղնիս. կողպեք—կողպէս, հարսնիք—հարսնիս: Դրա վրա ավելացնելով ստան հոգնակին՝ տալիս է ստան ամբողջական հոգնակի. բաղնէստան, հարսնէստան, գօգօստան: Դրանից հետո այդ ստան հոգնակին, դառնալով օրինաչափություն, կարող է ավելանալ նաև ոչ ձայնավորով վերջացող գոյականների վրա» (ԱՂ, ՀՔ, 332)։ Մեր դիտարկած տեքստերում հանդիպել ենք ստան-ի այսպիսի գործածություններին. իր սամեստան էր ոսկէ (ՀՄԺԵ, 116), շլնեստան (ՍՍ, Դ, 68), հայրեննստան (Ն. տ. 49), եւ յորժամ կերակուրն ի բարակ աղեստանն հասնի (ԱՍ, ՕՔ, 32. Հմմտ. Ն. տ. 37), լեզեստանն (Ն. տ. 218), և տո՛ւր մեզր և անիսոն որ ուտէ և ստամոքս տաքնայ, և հով խամեստանն հանէ (Ն. տ. 325. Հմմտ. ԱՍ, ԱՍ, 98), տեղեստան (ՄՀ, ՋՄ, 36, 80, 120), քան զամենայն լեզեստանն ուժով է պախրուն լեզին (ԱՍ, ԱՍ, 343), եւ այս յիշած գինեստանս (Ն. տ. 404), որ ի յերդեստանն կու բուսնի (Ն. տ. 455), ի յեզեստանն շատ կու բուսնի (Ն. տ. 532)։ Նշված օրինակներին կարելի է ավելացնել նաև՝ խմիչեստան, ըմբելեստան, մայրեստան (տե՛ս ՀԱ, ԼՔՀԼ, III, 709, ՀԱ, ՀԼՊ, II, 244—245), թեև հոլովաձևերում (բացի հայցականից և նրանից կազմված ձևերից) ներկայանում է ստե֊ստը տարբերակով. թեև բացառված չէ ստան ձևի պահպանումը. օր.՝ լեղիստանոն, լեղըստանուն (ԱՍ, ՕՔ, 21)։ Կապված այն բանի հետ, որ նախապես նշանակել է հավաքական ամբողջություն և այդ հավաքականության վայրը, այս մասնիկը ածանցական նշանակությամբ հանդես է գալիս հնագույն ժամանակներից։ Այդ կիրառությունը հարատևել է նաև գրավոր շրջանում, ընդ որում և՝ միչին գրականում. մըրգաց անդաստան (ՀՔ, Տ, 153), բուրաստան (ԳԱ, ՈՒՏ, 80), հեռաստան (ՄՆ, ՈՒՔ 177), կրօնաստան (ՄՂ, ՈՒՔ, 146)։ Այսպիսի որոշ ձևերի հնարավոր է ի հոգնակերտի հավելում հոգնակի կազմելու միտումով. յուրաստանի (ԿԵ, Տ, 171)։

Բարբառների մի մասն է պահպանել այս մասնիկի հոգնակերտ նշանակությունը. հանդիպում է Մալաթիայի, Մշո, Շատախի, Դերսիմի, Արդվինի, Կարնո, Սասունի և այլ որոշ բարբառներում։ «Լիառատ կերպով գոյություն ունի Արդվինի բարբառում... բոլոր

այն բառերը, որոնք վերջավորվում են ձայնավորով, ստանում են **ստան հոգնակի վերջավորությունը** *(ԱՂ, ՀՔ, 138)։ Ունի ձևաբանական վերակազմավորումներ՝ այլ հոգնակերտի կամ հիմքավերջի ձայնավորական տարրի հետ, ինչպես և՝ հնչյունական տարրաձումներ. համմտ.* ստանձէր, ստար, (ը)սդան, (է)ստան, (ը)սդ՛աց. (ը)սդ՛ուց, ստանձ‖ստայնձ, (ը)սդ՛ուց, ստանցնի‖սդանցնի *ևն։ Որոշ բարբառներում,* ստան-*ի գործածության դիրքերում կարող է հանդես գալ այլ (սովորաբար համակարգային) հոգնակերտ. օր. մատնէստան—մատնիներ (ԱՃ, ԱՔՁԱ, 230)։ Այսպես և՝ քուրէստան՝ քուրսիք (ՀԺՀ, IX, 305. Մանազկերտ)։ Թեք հոլովաձևերում կարող է պահպանվել. դէվէստան—դէվէստանոց մնգ (ՍԲԹ, ՄԲ, Ն, 201. Մշո բ.). քեռէստանուց (ՀԺՀ, IX, 278. Մանազկերտ)։ Սովորաբար փոխարինվում է* սրՆ‖ստՆ *տարրերակով. Արի՛ք... հոՙեստրնուդ մեռնիմ (ՀԺՀ, IX, 526. Ախալքալաք). Երբեմն հանդիպում է* սՆ *տարրերակ. լիզուստան—լիզուսնու, կատուստան—կատուսնու (ԱՃ, ԱՔՁԱ, 231)։*

Ստան, ստար *և դրանց հնչյունաբանական-ձևաբանական տարբեր զարգացումները բարբառներում հոգնակիակազմ հիմքերի հետ զուգորդվելիս համաձա սկզբից ստանում են յուրատեսակ ձայնավորումներ. սովորաբար ձայնավորումը կապվում է եղակի ձևի ի վերջնահանգ ձայնավորի հետ, թեև բացառված չէ նաև այլ (ու, ա) ձայնավորների վերակազմավորումը նույն դիրքում։ Հանդիպում ենք՝ ի>է (ավելի հաճախ), ա>է, ի>ը և նման անցումների. այսպես՝ տարի—տարէստան (Կարնո բարբառ), մատնի—մատնէստան, տղա—տղէստան (Արդվինի բ.). իէսա—իէսէստան (Կարնո բ.), սատանա—սատանէստան (Վան), էք՛ի—էք՛ըստար «այգիներ» (Ուրմիա), քամի—քամըստ՛ան (Աուտիալ), նաև՝ ա(<ի)>ը անցում. իգ՛գ՛ա (<այգի)>իգ գ՛ըստունք (Սվեդիա), հիկկա (<այգի)>հիկկըստուն (Քեսաբ). համմտ. նաև՝ քեռաստան, ճօրաստան «չորիներ»։ Լինում են դեպքեր, երբ եզակի ձևի վերջնահանգը բաղաձայնական է, կամ երբեմնի ի հոգնակերտը իբրև ածանցական տարր հաստատվել է ի հանգող բառավերջում, բայց առկա են նման ձայնավորումներ. օր.* գ՛ան՚ուգ *«դանակ»>գ՛ա նգըստուն (Սվեդիա), բօռ>բօռէստան, վարդիք>վարդէստան «վարտիքներ» (Կարնո բ.), չէմիշ>չեմիշէստ՛ան (Աուտիալ)։ Բացառված չէ, սակայն, այնպիսի վիճակ, երբ եղակիի վերջնահանգ ձայնավորը պահպանվում է. օր. ճօրիստան (Դերսիմ), պաղչիստաննի (Հաճըն), ձ՛իստաննք (Զեյթուն), էկիստաննի «այգիներ» (Հաճըն), պանչիստան (Դերսիմ—Չարսանճագ), օս-*

կիսդան (նույն տեղում), լիզուստան, կատուստան (Արդվին) ևն։ Այս կարգի երևույթները կարող ենք գտնել միևնույն բարբառում. այսպես, օրինակ, Արդվինի բարբառում առկա են ի>է անցումով և ի>ը անցումով ձայնավորումներ. գաշի—գաշէդան «կաշիներ», հայլի—հայլըդ'ան «հայկիներ»։ Կարող է նաև պատահիլ, որ ձայնավորումը կապ չունենա նման անցման հետ. չէմիշ—չէմիշէդ'ան, սակայն այստեղ էլ վերջնավանկը եղակի ձևում ունի ի, որ պահպանված է նաև հոգնակիակազմ հիմքում. բայց, օրինակ, վարդիք—վարդէստան (Կարնո բ.) կազմավորման մեջ ի-ն հոգնակիակազմ հիմքում նույնությամբ չի պահպանված, քնպես նույն Կարնո բարբառում՝ դ'րացի—դ'րացիդ'ան։

Այս դիտարկված ձայնավորումները կառուցվածքային որոշակի հանգամանքներում կարող են դադարել հիմքավերջի տարր լինելուց և հոգնակերտի հետ ձևաբանական սերտաճումով դառնալ հոգնակերտ մասնիկի տարր, ինչպես, ասենք, հին հայերենի ց հոգնակերտի հետ բնակերտի կամ հիմքային այլ բաղադրիչի սերտաճումով ունենք աց, ոց, ուց, անց, ոնց, ունց բաղադրություններ։ Որոշ փաստեր հիմք են տալիս այդ վերակազմավորումը նկատելու նաև մեզ հետաքրքրող երևույթի մեջ, այսինքն՝ Լատան, ըսատան և ոչ ստան։ Սակայն դա օրինաչափության հաստած երևույթ չէ, ձևաբանական այդ սերտաճումը իր վախճանին չի հասել, այդ այդպես է ոչ միայն պատմականորեն, այլև կառուցվածքային դիտանկյունով։ Ուստի ստան հոգնակերտից առաջ եղած ձայնավորումները հակված ենք հիմքային վերակազմավորման տիպերից մեկը համարելու։ Բացի այդ՝ ստար, ստան և նման մասնիկները բարբառներում համակարգային զուգորդումների չեն հասել, զարգացող տարրեր չեն։ Նրանց կառուցվածքային հաստատումը չի հասել այն մակարդակին, ինչպիսին ունենք համակարգային մասնիկների դեպքում, ուստի կաղապարավորման մեջ նրանց տեղադրումը այնքան էլ հստակ, որոշակի չէ։

Նոր գրական հայերենում ստան մասնիկը հանդիպում է միայն բառակազմություններում. ծառաստաններով (Ծ, b, 108), այգեստաններուն (ԳՋ, bժ, I, 20), մրգաստան (ՎՓ, b, 264) ևն։

ՍՏԱՆՆԷՐ (էստանէր).—*Բաղադրյալ՝ ստան-ներ>ստաններ զարգացումով մասնիկ. հազվադեպ գործածությամբ հանդիպում է Կարնո բարբառում՝ ստան մասնիկին զուգահեռ (առանձին բառերում). բ'ալնէստաններ, բ'աղնէստաններ։*

ՍՏԱՆՆԻ.—*Ըստ երևույթին սպանիի հոգնակերտի այլ տառադարձություն է (Հաճընի բարբառ)։*

ՍՏԱՆՔ (Էստանք).—*Բաղադրյալ՝ ստան-ք>ստանք զարգացումով. հանդիպում է որոշ բարբառների (Ուրմիայի, Կարնո, Զեյթունի) ոչ-համակարգային կառուցածևերում. գարշէլէստանք (Կարնո բ.)։*

ՍՏԱՆՔ՛ (Ըստանք՛).—*Ստանք մասնիկի հնչյունական տարաձևում. ք՛եռըստանք՛։*

ՍՏՅԱՆՔ.—*Ստանք մասնիկի հնչյունական տարաձևում Զեյթունի խոսվածքում. ձ՛իստյանք. ըստ երևույթին հնչյունաբանական (ձայնավորների ներդաշնակության օրենքով) պայմանավորվածություն ունի։*

ՍՏԱՐ (Ըստար, Էստար).—*Հաղվադեպ գործածությամբ հանդիպում է որոշ բարբառներում (Ուրմիա, Վան, Շատախ). մեկնաբանվում է ս-տի-ար>ստար զարգացումով. Ուրմիայի և Շատախի բարբառներում սկզբից ունի ը ձայնավորում (ը)ստար, որ բացատրվում է հիմքավերջի ի տարրով. խոհ՛ի (<հոգի)>խոհ՛ըստար (ՄՄ, ՇԲ, 87), էք՛ի(<այգի)>էք՛ըստար (ՄԱ, ՈՒԽԲ, 74). Հմմտ. է ձայնավորումով՝ (է)ստար Վանի բարբառում. իկ՛ի(<այգի)>էկ՛էստար. նաև՝ սատանէստար (վերջինս եզակի ձևի վերջնահանգ ա-ի հնչյունաբանական վերակազմավորմամբ)։ Բոլոր դեպքերում բուն հոգնակերտն է ստար, թեև նշված ձայնավորումները կարելի է վերցնել մասնիկի հետ և դիտել իբրև էստար, ըստար, ինչպես որ վարվում են ոմանք։ Եթե նման մասնիկները գործածվեին համակարգային կազմավորումներում և մեծ հաճախություն ունենային, հնարավոր էր, որ տեղի ունենար մասնիկի և ձայնավորման ձևաբանական սերտաճում. ուստի կունենային ոչ թե ստար, այլ՝ ըստար կամ էստար (Հմմտ. ստան||էստան)։*

ՍՏԷՈՒՆ (Ստուն).—*Ստան-ի հնչյունական տարաձում Ուրմոյի բարբառում. գործածվում է ձայնավորահանգ մի քանի բառերի հետ. ակկա(<ագի)>ակրստէուն, ճիրա(<ջորի)>ճիրըստուն (ԱՂ, ՀՆՔԽ, 28). այլ մեկնաբանությամբ՝ ըստէուն, ըստուն։*

ՍՏՆ||ՍՏՂՆ.—*Ստան մասնիկի դերքային տարբերակ՝ թեք հոլովաձևերում (միջին գրական հայերենում՝ բացի հայցականից). լավ դեղն լեռնստուն շաֆն է (ԱՍ, ՕՔ, 213. Հմմտ. նաև՝ էջ 211). ույս ցեղն ի լեռներուն ի գոգն կու լինի, եւ ի մոռնստուն ի մեջն (ԱՍ, ԱՍ, 38), քամեստնուն (Ն. տ. 94), տեղեստնոյ (ՍՍ, Գ, 79), տեղեստրնոյն (ՂՅ, ՀՆՈՎ, Ք, 259, XIII դ.), որ հոգի տա հոգեստնուն (կե, Տ, 136)։ Այս տարբերակը կա նաև բարբառներում (տե՛ս Ստան)։*

ՍՏՆԵՐ.—*Բաղադրյալ՝ սաան-(ն)եր>ստներ զարգացումով մասնիկ. հազվադեպ գործածությամբ հանդիպում է միջինհայերենյան գրավոր աղբյուրներում. ի հայրենատներույն (ՂՅ, ՀՆՒՎ, Ք, 261, XIII դ. հմմտ. ՍՍ, Դ, 89). լեղեատներուն (ԱԱ, ՕՔ, 21)։ Հմմտ. ստաննէր։*

ՍՏՕՈՒՆ, *տե՛ս* **ՍՏԷՈՒՆ**։

Վ.—*Վի մասնիկի դիրքային տարբերակ թեք հոլովաձևերում։*

ՎԱ.—*Վի մասնիկի հնչյունական տարաճում Ավետիայի բարբառում և հարակից խոսվածքներում. ունքվա, քընտվա, ըշվա «հշեր», իշվա «աչքեր», ձ'ըձվա «ծծեր» (Ըստ ՏԱ, ՍԲ, 40. հմմտ. ԱՂ, ՀՆԲՒ, 27. ՀԱ, ԼՔՀԼ, III, 761, 786). գործածվում է սահմանափակ թվով միավանկ բառերի (հիմքերի) հետ։*

ՎՒ.—*Վա մասնիկի հնչյունաբանական տարբերակ. հազվադեպ գործածություն ունի Արամոյի բարբառում (ԱՂ, ՀՆԲՒ, 27)։*

ՎԱՆ.—*Սահմանափակ գործածությամբ, օրինակ, Դերսիմի խոսվածքներում. իշվան, ձ'էվան, դիրվան «տերեր» (ՌԲ, ԴՔՔ, 18, 29. հմմտ. նաև՝ ՀԱ, ԼՔՀԼ, III, 830). ունեցել է վի-ան>վան զարգացումը և գործածական է վանճ-ին զուգահեռ։ Հմմտ. ուան։*

ՎԱՆՀՅՈՐ.—*Բաղադրյալ՝ վան-ճ-ոի-եր>վան-ճ-ոեր>վանհյոեր զարգացումով մասնիկ. հանդիպում է Վանի բարբառի ոչհամակարգային կառուցվածքներում. սովորաբար վանճ'-ին զուգահեռ (ՀԱ, ՔՎԲ, 113)։*

ՎԱՆՆԵՐ.—*Հազվադեպ գործածությամբ՝ լեհահայ բարբառում (ըստ ՀԱ, ԼՔՀԼ, III, 717, 830). ունի վան-ներ>վաններ զարգացում։*

ՎԱՆՑ.—*Վանճ-ի հազվադեպ գործածություն ունեցող տարբերակ սեռ.-տրականում. տեղվանց (ՂԻ, Դ, 28)։*

ՎԱՆՔ.—*Բաղադրյալ՝ վան-ճ>վանճ զարգացումով հավաքական հոգնակերտ։ Միջինհայերենյան գրավոր աղբյուրներում հանդիպում է ուանճ (տե՛ս) գրությամբ. առկա է շատ բարբառներում (Դերսիմի խոսվածքներ, Մարաղայի, Հադրութի, Ղարաբաղի, Ուրմիայի, Առտիալի, Պոլսի, Ն.-Ջուղայի, Ն.-Նախիջևանի, Կեսարիայի, Մշո, Սասունի և այլ բրբ.). գործածական է սահմանափակ թվով բառերի հոգնակիակազմության մեջ, երբեմն այլ հոգնակերտների զուգահեռ. հմմտ. փէդ «փայտ»>փէդէր և փէդվանք (Ղրբ. բրբ.), դեղվանք (Դերսիմ, Սասուն), փծդվանք (Հադրութ), իշվանք (Մուշ), գոօրվանք (Ն.-Նախիջևան), տիրվանք (ՍԴ, 31)։ Իբրև բարբառային ներթափանցում առկա է արևմտահայ գրական աշխարհաբարում (և արևելահայ գրական աշխարհաբարի*

կազմավորման շրջանի կառուցածևերում). տեղվանք (Ծ, ե, 67. հմմտ. ԳՀ, եժ, I, 13). ժայռերու կտորվանքին մեչ (Ծ, ե, 68)։

ՎԱՆՔ՛.—*Վանք մասնիկի հնչյունական տարաճում՝ f-ի քրմայնացումով. հանդիպում է նրա դիրքերում. իշվանք՛, կտորվանք՛ (Վան), էծվանք՛, էշվանք՛ (Շատախ)։*

ՎԱՆՔ.—*Վանք մասնիկի հնչյունաբանական տարբերակ՝ ձայնավորների ներդաշնակության օրենքով պայմանավորված, հանդիպում է Ղարաբաղի բարբառի որոշ խոսվածքներում (ըստ ԿԴ, ԼՂԲՔ 95)։*

ՎԱՆՔՆԵՐ||ՎԱՆՔՆԷՐ.— *Բաղադրյալ՝ վանք-ներ>վանքներ զարդացումով հավաքական-հոգնակերտ. հանդիպում է որոշ բարբառներում և տառադարձվում է վանքներ. կտորվանքներ. գործածվում է սովորաբար վանք-ին զուգահեռ։ Բարբառներից թափանցել է արևմտահայ գրական աշխարհաբար. տեղվանքներ (ԴՎ, Բ, 33). կտորվանքներ (ՊԴ, ե, 431. Ծ, ե, 100)։*

ՎԱՔ||ՎԱՔ.—*Հնչյունաբանական պայմանավորվածություն ունեցող տարբերակներ Սվեդիայի բարբառում. թշվաք «թշեր», դ'ոլ ա՛ք «դռներ». թեք հոլովաձևերում վուց||վուց. շնվա՛ք—շնվո՛ց (հմմտ. ՀԱ, ԼՔՀԼ, III, 778 և ԱՂ, ՀԲ, 435)։*

ՎԴԱՆՔ.—*տե՛ս ՎԸԴԱՆՔ։*

ՎԵՐ.—*Բաղադրյալ՝ վի(<ի)-եր>վեր զարդացումով մասնիկ, սահմանափակ գործածությամբ հանդիպում է միջինհայերենյան աղբյուրներում, սովորաբար վի մասնիկի դիրքերում. աչվերդ (ՆՔ, ՀԿ, 78). աչվերովդ (ՄՄ, ԸՆ, 179, XVI—XVII դդ.), աչվերոյդ (Ն. տ. 180)։ Նույն աղբյուրներում հանդիպում է ւեր կամ ուեր զրչությամբ։ Հազվադեպ գործածությամբ հանդիպում է վանի, Շատախի բարբառներում. ընք՛վեր, ծրնդ՛վեր (ՄՄ, ՇԲ, 88), ընքվեր (ՀԱ, ՔՎԲ, ն, 231)։*

ՎԷՅՐ.—*Հազվադեպ գործածությամբ՝ Արամոյի բարբառում (ԱՂ, ՀՆԲԽ, 27). դաղվրեյր «հայրեր»։*

ՎԷՐՔ՛.—*Հազվադեպ գործածությամբ՝ Ուրմիայի բարբառում. ունի վի-էր-f>վէրք՛ զարգացում. տրովէրք՛ «դռներ» (ՄԱ, ՈՒՀԲ, 74. հմմտ. ԱՂ, ՀԲ, 344)։*

ՎԷՔ.—*Հազվադեպ գործածությամբ հանդիպում է Սվեդիայի բարբառում. դընվէք «տներ» (ԱՂ, ՀԲ, 434)։ Հ. Աճառյանի «Քրնաութիւն Վանի բարբառի» ուսումնասիրության «Նմուշներ»-ում մի տեղ հանդիպել ենք ծրծւեկացդ ձևի («էրկու ծրծւեկացդ մեչ քնու տեղ ի»). կարծում ենք, այստեղ առկա է նույն վեք-ը՝ f-ի*

ապաշնչեղացումով։ Թեք հոլովաձևերում՝ վուց. դընվէք—դընվուց. բացառ. և գործ. հոլովներում՝ էր||իր (Հմմտ. ԱՂ, ՀԲ, 434)։

ՎԸ՝.—*Հազվադեպ գործածութ|յամբ հանդիպում է կիլիկյան խոսվածքում. վի-ի հնչյունական տարաճում. ձ՛ը՝ցվը՝ «ծոցեր» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 786)։*

ՎԸԴԱ.—*Հազվադեպ գործածութ|յամբ՝ Սվեդիայի բարբառում. վր-դի(<վի-տի)>վը-դա>վըդա զարգացումով. «ընտանեկան կարգ մը անուններ այս մասնիկով կը դառնան հոգնակի, գ. օր. քայր(քոյր)—քուրվըդա, դուլ(տալ)—դէլվըդա...» (ՏԱ, ՍԲ, 42)։*

ՎԸԴԱՆ.—*Վըդանճ հոգնակերտի ոչ-պարտադիր տարբերակ Մշո բարբառում. տիրվըդան (ՍԲԹ, ՍԲ, 79)։*

ՎԸԴԱՆՔ.—*Վտանճ-ի հնչյունական տարաճում. հանդիպում է որոշ բարբառների (Մշո, Սասունի, Դերսիմի) ոչ-համակարգային կազմավորումներում. քօրվըդանք (Դերսիմ—Ջարսանճագ), քուրվըդանք (Մուշ—Սասուն)։ Կա և վդանճ տառադարձումով։*

ՎԸԴԱՑ.—(*Վըդուց*)—*Վըդանճ-ի հարացուցային տարբերակ սեռ.-տրականում։*

ՎԸԴԱՔ.—*Վտիճ||վտանճ-ի հնչյունական տարաճում. հանդիպում է Սվեդիայի բարբառում, Դերսիմի խոսվածքներում։ Այս մասնիկը սահմանափակ թվով բառեր են առանում. ավելանում է հիմնականում ֆույր բառին. ֆուրվըդաճ։ Թեք հոլովաձևերում՝ վըդաց||վդաց, վըդուց||վդուց։ Հաճախ գործածվում է վըդանճ-ին դուգահեռ։*

ՎԸԴԱՔ.—*Վըդամ մասնիկի հնչյունական տարաճում. հանդիպում է, օրինակ, Հաճընի, Զեյթունի, Դերսիմի բարբառներում ու խոսվածքներում. քիյվըդաք (ՀԳ, ՀԲ, 70), ք՛ըյվըդաք (ԱՂ, ՀԲ, 425), տովըդաք (ՀԱ, ԼՔՀԼ, III, 732)։*

ՎԸԻՒ.—*Վտի մասնիկի հնչյունական տարաճում, բստ ՈՒ, ԴԲՔ, 18՝ առկա է Խարբերդ—Երզնկայի խոսվածքում. իշվըդի։*

ՎԸԴԻՔ.—*Բաղադրյալ՝ վըդի-ճ(<վտի-ճ)>վըդիճ զարգացումով հավաքական-հոգնակերտ. հանդիպում է Կարնո, պոլսահայ, Մշո, Նոր Նախիջևանի, Կեսարիայի, Դերսիմի, Սասունի բարբառներում և խոսվածքներում. քուրվըդիք, քէռվըդիք (ՎԴ, ՍԲ, 32), տալվըդիք (Կարնո բ.), դէրվըդիք «տերեր» (ՍԱ, ԿԲ, 66)։ Թեք հոլովաձևերում՝ վըդօց||վըդոց. քուրվըդօց (Կարնո բ.), քուրվըդոց (ՍԲԹ, ՄԲ, Ն, 200)։*

ՎԸԴՕՑ||ՎԸԴՈՑ.—*Վըդիճ մասնիկի հարացուցային տարբերակ սեռ.-տրականում։*

ՎԸՆ.—Վրնի մասնիկի դիրքային տարբերակ թևք հոլովաձևերում։

ՎԸՆԱ.—Հազվադեպ գործածությամբ կիլիկյան խոսվածքում. վրնի մասնիկի հնչյունական տարաձում. մադվ՝նա (ՀԱ, ԼՔՀ, III, 786)։

ՎԸՆԵՐ.—Բազադրյալ՝ վի–ներ>վրներ զարգացումով մասնիկ։ Հանդիպում է սկսած ուշմիջինհայերենյան շրջանից. Յեներատ ձեռներս չարդեցի (ՀՄԺԲ, 208), աչվրներն նմանի ծովի։ (ՄՄ, ԸՆ, 180, XVI—XVII դդ.)։ Թեկուզ գրությամբ ներկայանում է և՛ վներ, և՛ վրներ տեսքով, բայց արտասանվել է վրներ։

Բարբառներում ունեցած արտասանական երանգները նկատի առնելով ուսումնասիրություններում հանդիպում է այս և վրնէր տառադարձությամբ։ Առաջին տարբերակին հանդիպում ենք Առտիալի, Վանի բարբառներում. ամառվրներ, ցէրէյվրներ (Վան, ըստ ՀԱ, ՔՎՔ, 109). երկրորդ տարբերակին՝ վրնէր հանդիպում ենք՝ Պոլսի, Դևրսիմի, Համշենի, Կարնո (Ախալք., Ախալց.), Մալաթիայի, Նոր Ջուղայի նույնպես ոչ-համակարգային կազմավորումներում. աշվրնէր, ունքվրնէր, օդվրնէր (ԹԴ, ՄՔ, 75), ձաորվրնէր, ձրնգվրնէր (Պոլիս)։ Հիմնականում հանդիպում է երկակիացեալ վի մասնիկի գործածության դիրքում։ Երկակիի գաղափարի մթագնումը ելահիմք է դարձել վի–ներ>վրներ զարգացման համար։ Առտիալի բարբառում ևս մեծ մասամբ ավելանում է մարմնի զույգ անդամ նշանակող բառերին. բայց միաժամանակ ստացական և խնդրառական հոգնակիներ կազմող կաղապարի տարր է՝ մէջվրնները «մեջները» (ՀԱ, ՔԱռՔ, Ն, 214)։ Կա նաև վներ, վնէր տառադարձումով։

Բարբառներից այս մասնիկը թափանցել է արևմտյան գրական աշխարհաբարը, հանդիպում է գրեթե նույն դիրքում. աչվրներ (ՏԿ, ՎԱ, 228. Հմմտ. Ծ, Ե, 242. Դվ, Բ, 241, 275. ՀՔ, Գկ, 37. ՄՄ, Եժ, 102. Ս, ՔԵ, 3. ՎՔ, Ե, 13), ոտվրներ (Ծ, Ե, 126. Հմմտ. Ս, ՔԵ, 19. ՀՔ, Գկ, 30), մատվրներ (Դվ, Բ, 230, 275. ՀՊ, Եժ, VI, 163. Ս, ՔԵ, 3). ձեռվրներ (Ս, ՔԵ, 215). ծնկվրներս (Ն. ա. 192, 203). Եր հոգնակերտով փոխարինելու դեպքում աչ-, ոտ–, ձեռ– հիմքերը սովորաբար փոխարինվում են աչք–, ոտք–, ձեռք– հիմքերով (աչքեր, ոտքեր, ձեռքեր), թեև բացառված չէ. օրինակ, աչեր հոգնակին նաև

ՎԸՆԷՅ.—Վրներ-ի հնչյունական տարաձում. հազվադեպ գործածությամբ՝ Համշենի բարբառում. ձեռվրնէյս (ՀԱ, ՀԲ, Ն, 198)։

ՎԸՆԷՐ, տե՛ս ՎԸՆԵՐ։

ՎԸՆԸ.—*Հազվադեպ գործածությամբ՝ կիլիկյան խոսվածքում. վրնի մասնիկի հնչյունական տարաձում (տարբերակ), ձ'ը'ովը'նը՝ «ձեռքեր» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 786)։*

ՎԸՆԻ.—*Բաղադրյալ՝ վի–նի>վրնի զարգացումով հոգնակերտ։ Միջին գրական հայերենում հանդիպում է վեի, վրնի և ուրնի գրություններով (գրչությամբ). ոտվրնի (ՀԹ, S, 217, 228), ի յոտվնին (ՀՄԺԵ, 187), ոտվնին (Ն. տ. 330), աչվնին (ԱԱ, ՕՔ, 115), գրավնին (Ֆ, Բ, 128), աչուրնին կու բացուի (ԱԱ, ԱԱ, 5)։ Թևք հոլովաձևերում՝ վրն (բացի հայցականից). ընքվրնուդ (ՆՔ, ՀԿ, 81), զոտվրնուն (Ն. տ. 207)։*

Տարածված է որոշ բարբառներում։ Հանդիպում է Համշենի, Հաճընի, Սասունի, Սուչավայի, Դերսիմի, Ախալքալաքի, Ախալցխայի բարբառներում ու խոսվածքներում. իշվրնի (ՈՔ, ԴԲՔ, 18), անդրջվրնի (Ն. տ. 36), ճրյվրնի «ջրեր» (ՀԳ, ՀՔ, Ն, 152), փէդվրնի «փայտեր» (Ն. տ.)։ Թևք հոլովաձևերում՝ վրն. ձեռվրնուն, ձեռվրնուս (ՀԺՀ, IX, 518. Ախալք.)։ Կարող է ստացական կամ խնդրառական հոգնակի կազմել. հէդվրնիս «հետներս» (ՀԱ, ՀՔ, Ն, 195)։ Երբեմն գործածվում է վի-ին զուգահեռ որոշ տեքստերում տատադրվածած է վնի։

Արևմտահայ գրական աշխարհաբարում հանդիպում է իբրև բարբառային ներթափանցում. սովորաբար ստացական ու խընդրառական հոգնակիակազմության մեջ՝ երնի–ին զուգահեռ, բայց հազվադեպ կիրառություն ունի. և գեղանի հարսեր, կուժը ձեռվրնին (Ս, ԸԵ, 58. Համտ. Ծ, b, 50, 109. ԳՀ, ԵԺ, I, 26), անլուր պատիժներ կգործադրե այն աղջկանց վրա, որ կամ աղոթելու առեն աչվրնին բաց պահած են, կամ...» (ՀՔ, ԳԿ, 26)։ Թևք հոլովաձևերում՝ վրն. աչվրնուս (Ս, ԸԵ, 9)։

ՎԸՆԻՐ.—*Բաղադրյալ՝ վի–նիր>վրնիր զարգացումով մասնիկ. հազվադեպ գործածությամբ հանդիպում է Սասունի բարբառում. աչվրնիր (ՎՊ, ՍԲ, 77)։*

ՎԸՏԱՆՔ.—*Բաղադրյալ՝ վի–տի–անք>վրտանք զարգացումով հավաքական հոգնակերտ, միջինհայերենյան վտանք (տե՛ս) մասնիկն է. հազվադեպ գործածությամբ հանդիպում է որոշ բարբառներում (խոսվածքներում). տիրվըտանք (Առտիալ. Համտ. ՀԺՀ, IX, 419. Բաղեշ)։*

Արևմտահայ գրական աշխարհաբարում հանդիպում է իբրև բարբառային ներթափանցում, ունի նաև վտանք գրություն. տալվտանք (ՀՊ, ԵԺ, VI, 88)։

ՎՐՏԱՔ.—*Ըստ ԱԱ, ՔՔ, 13՝ հագվադեպ գործածություն ունի արևմտյան աշխարհաբարում՝ վախճ-ին զուգահեռ։*

ՎՐՏԻ, *տե՛ս* **ՎՏԻ**։

ՎՐՏԻՔ.—*Բաղադրյալ՝ վի-տի-ք>վրտիք զարգացումով մասնիկ. հավաքական-հոգնակերտ. տարածված է մի քանի բարբառների ոչ-համակարգային կառուցաձևերում. օր. քուրվրտիք, տիրվրտիք, շընվրտիք (Նոր Ջուղա. հմմտ. ՀԱ, ԼՔՀԼ, III, 829—830), թեև հոլովաձևերում կարող է լինել վրտոց||վրտոց. քուրվրտոց (ՀԺՀ, IX, 115, Ալաշկերտ)։ Տառադարձված է նաև վտիք։ Բարբառներից թափանցել է նաև գրական աշխարհաբար, հանդիպում է հազվադեպ. օր. Հորիզոնին ծերվրտիքը (ՀՔ, Գկ, 43)*[25]։

ՎՐՏՈՑ.—*Վրտիք-ի հարացուցային տարբերակ՝ թեք հոլովաձևերում. վի-տի-օց>վրտոց զարգացումով։ Հանդիպում է նաև վրտոց զրուցյամբ։*

ՎՐ՚Ք.—*Հաղվադեպ գործածությամբ՝ Զեյթունի խոսվածքում. վի-ք>վր՚ք զարգացումով. շր՚նվր՚ք (ՀԱ, ԼՔՀԼ, III, 796)։*

ՎՒ.—*Գրաբարում և առհասարակ նախամիջինհայերենյան գրավոր աղբյուրներում չի հանդիպում (տե՛ս Հ. Աճառյանի դիտողությունը՝ ՀԱ, ԼՔՀԼ, III, 709). «առաջանում է անշուշտ հնադույն ու-ի ձևից, իսկ սա էլ կազմված է այն նույն ու-ից, որ դնում ենք երկու բառի վերջավորության մեջ։ Այս ու անշուշտ երկակիի մասնիկն է, ըստ որում բոլոր վի ձևով հոգնակերտները երկակի են...։ Հայտնի չէ, թե ինչ հավելված է ի» (ն. տ. 712)։ Անկասկած սրա ծագումը հնդեվրոպական ակունքներով պետք է բացատրել։ Ըստ Կարստի («Հանդէս ամսօրեայ», 1903, էջ 11)՝ այս մասնիկն ունի կովկասյան ծագում։ Հ. Պեդերսընը (ՀՊ, ՀԴԼ, 220) մերժում է այդ կարծիքը։ Գրավոր աղբյուրներում թեև հանդիպում է վի||ուի||ի գրչություններով, բայց նույն վի հնչումն ունի։ Միջին գրական հայերենում երկակիաձիպ կառուցաձևերի տարր է. երբեմնի երկակիի ցուցիչ-վերապրուկ (սրա ձևաբանական արժեքը քննել ենք երկակի թվային ենթավարկի կապակցությամբ)։ Միջինհայերենյան աղբյուրներում, ինչպես և բարբառներում հաճախական հանդես է գալիս մարմնի զույգ անդամ նշանակող բառերի հետ։ Որոշ կառուցաձևերում նա սովորական հոգնակերտ է, այլ կաղմուվթյուններում՝ ածանցական տարր։ Երկակիի գաղափարի մթագնումը նկատիմք է դարձել, որ վի-ն ձևաբ նորեն վերակազմավորվի այլ հոգնակերտների հետ։ Գիտարկ-*

---

[25] *Հնագույն արտահայտություններից՝ պիրվտիք (ՄԾ, I, 214, XVII դ.)։*

ված աղբյուրներում վի մասնիկի արտահայտություններն են՝ աչվի, ձեռվի, ոտվի, միջուի, դռվի, իրվի, մտվի, տնվի, շնվի, օնքվի, ականջվի, ըղնկվի, ըռտպոյի, երեսվի. ծով-ծով աչվին արտբարւէր, կամար օնվին ֆօֆուեցեր (ՀՄԺԵ, 114). աղի իրվին գաղիքն տաշե (ԱԱ, ՕՔ, 65), գակաևշվիդ օժէ վարդի ձիթով (Ն. տ.), ագգի ագգի խօսվի ասէ (Ն. տ. 81). ձեռվին և ոտվին պաղի (Ն. տ. 317). ըղնկվին չընկնի (Ն. տ. 448), գրվի (ՆՄ, ԺԱՎ. Прил. VI, 180), դռվի (կե, S, 121), բնմվի (ՆՔ, ՀԿ, 78), ձնկվի (ՆՄ, ԺԱՎ, 116), ևյլ ոչ աղօթք մավին կուպայ (ՄՄ, ԸՆ, 223, XVI դ.), երեսվի (ՀՔ, S, 135), Հանդիպում է ևի՝ մէկ պատճառն այն իրին են (ՄՀ, ՔՄ, 80). զաչիդ (ՀԵ, ՈՒՔ, 144), և ուի՝ ձեռուի (Ֆ, Ք, 239), բռտպոյի (ԱԱ, ԱԱ, 280) գրչութիւններով. Ածանցական միաւոր ակնհայտորեն երևում է հետևյալ փաստերից. ու Քէ աղան կապուտաչվի լինի (ԱԱ, ՕՔ, 67)։ Թեք հոլովաձևերում, բացի հայցականից, ներկայանում է վ դիրքային տարբերակով. ձեռվի> ձեռ-վ-ոյ։

Այս մասնիկը տարածված է մի շարք բարբառներում (Համշենի, Առտիալի, Սասունի, Մշո բրբ. և Դերսիմի, Ախալցխայի, Ախալքալաքի խոսվածքներում)։ Դերազանցապես զուգորդվում է մարմնի զույգ անդամների անունների հետ. աչվի, աքվի «ոտքեր», ձնգվի, ձեռվի, օդվի «ոտքեր», օնգնջվի, թէվվի, մաշտվի «մարդիկ» (Համշեն, ըստ Հ. Աճառյանի), ունքվի (Ախալքալաք), ջանգվի «ճանկեր», իշվի (Դերսիմ)։ Համշենի բարբառում դեռևս ուժեղ է սրա երկակիությունը։ Թեք հոլովաձևերում կարող է լինել վ դիրքային տարբերակը. օր. «գժան չամուղ ինձ քարց վրը աչվուն. աչքիր սախցան» (ՎՊ, ՍՔ, 93)։

Այս մասնիկը բացակայում է արևելահայ շատ բարբառներում, ինչպես և արևելահայ գրական աշխարհաբարում։ Արևմտահայ գրական աշխարհաբարում նա հանդիպում է ածանցական գործածությամբ. քրխաչվի (Դվ, Ք, 222). ճրաչվի (Ս, ԸՆ, 40), ու կրտսերը՝ կապույտ աչվի... ճիշտ մորը պատկերն էր (ԳՋ, ԵԺ, I, 85), սևահեր ու սևաչվի էր (Ն. տ. 55), սև աչվի, սև ընմվի երիտասարդ (Ս, Ե, 74), կապուտաչվի ակերուն (ՄՄ, ԵԺ, 113)։

ՎԻՆԵՐ.—*Բաղադրյալ՝ վի-ներ>վիներ գործածությամբ մասնիկ. հանդիպում է որոշ բարբառների (Պոլիս, լեհահայ, Ախալցխա, Դերսիմ-Քղի են) ոչ-համակարգային կազմավորություններում. նայած բարբառին՝ ունի վինէր և վիներ տառադարձություններ. տարածված է սովորաբար վի մասնիկի դիրքում (փոխարինելի է վրնէր հոգնակիով). ընմվինէր. իմվիներ։ Իբրև բարբառային ներ-*

Թափանցում հանդիպում է (հազվադեպ) արևմտահայ գրական աշխարհաբարում. ընկիներ (Ծ, b, 28, 155. Համմտ. ՀՊ, bժ, VI, 244)։

Վինիր, *տե՛ս* **Վիներ**։

Վիք.—*Բաղադրյալ՝* **վի–f>վիf** *զարգացումով հազվադեպ գործածությամբ հանդիպում է միջինհայերենյան շրջանից սկսած. և մի՛ ուտել զան իվիֆն (ԱԱ, 0Ր, 294)։ Հանդիպում է նաև մի քանի բարբառներում և խոսվածքներում (Առտիալի, Համշենի, Ախալքալաքի, Հաճընի, Ջեյհունի ևն), ունի գործածության նեղ ոլորտ, գրեթե սահմանափակված է վի–ի դիրքով. ալվիք, ձէռվիք, ջօնգվիք «ճանկեր» (Համշեն), կշտվիք (ՀԺՀ, IX, 512. Ախալք.), դընվիք, շէնվիք «շներ», ձընգվիք (Հաճըն), իշվիք (Ջեյհուն), դ'ըսդ'րըվիք «դուստրեր» (Առտիալ)։*

Վներ, *տե՛ս* **Վըներ**։

Վնի, *տե՛ս* **Վընի**։

Վտ.—*Վոի մասնիկի դիրքային տարբերակ թևք հոլովաձևերում (բացի հայցականից)։*

Վտանք.—*Նախամիջինհայերենյան գրավոր աղբյուրներում չի հանդիպում. բաղադրյալ՝ վի–տի–անք (վտի–անք)>վտանք զարգացումով մասնիկ. հազվադեպ գործածությամբ հանդիպում ենք միջինհայերենյան որոշ տեքստերում. Ամէն քաղցր իրվտանքն լերդին պէն առնէ (ԱԱ, 0Ր, 65. Համմտ. ԱԱ, ԱԱ, 176, 189)։ Ըստ էության ունեցել է վրտանք արտասանություն, որպիսի տեսքով (և տառադարձությամբ) հանդիպում ենք բարբառների մի մասում (տե՛ս վրտանք). մանավանդ որ միջինհայերենյան աղբյուրներում առկա է նաև ուրտանք դրությամբ. իուրտանք (ԱԱ, ԱԱ, 5, 296)։*

Վտի.—*Բաղադրյալ՝* **վի–տի>վ(ը)տի** *զարգացումով մասնիկ. հազվադեպ գործածությամբ՝ միջինհայերենյան որոշ աղբյուրներում. եւ երբ կարգած Իուրվտի կենան (ՍՍ, Դ, 111)։ Թևք հոլովաձևերում՝ վտ. քուր–վտ–ոյ (Համմտ. ՀԱ, ՀՔՀԼ, III, 822)։ Պետք է, որ ունենար վրդի արտասանություն։ Ըստ Կարստի պետք է տառադարձել* vdil‖ vədi *(տես «Բազմավէպ», 1900, 415.* Karst, *193)։*

Վտիք, *տե՛ս* **Վրտիք**։

Վոինք.—*Հազվադեպ գործածությամբ հանդիպում է Հաճընի, բարբառում. դնղվուէնք, ձեռվուէնք (ԱՂ, ՀԲ, 98)։*

Վոին.—*Հազվադեպ գործածությամբ՝ Սվեդիայի բարբառում՝ քիըցվուն «կիսոցներ»։ Համմտ.* վուճ։

Վոինք.—*Բաղադրյալ՝* **վուճ–f>վուճf** *զարգացումով մասնիկ*

Սվեդիայի բարբառում. հավաքական-հոգնակերտ. իրխվունք *«երեսներ» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 778. հմմտ. ԱՂ, ՀԲ, 447)։*

ՎՈՒՑ||ՎՈՒՆՑ.—*Վէֆ, վ՚ֆ մասնիկների հարացուցային տարբերակներ սեռ.-տրականում։*

ՎՕՆՑ.—*Վօնֆ մասնիկի հարացուցային տարբերակ թեք հոլովաձևերում։*

ՎՕՆՔ.—*Հազվադեպ գործածությամբ՝ Հաճընի բարբառում. ղէյվօնֆ «տերեր», դիկղվօնֆ «տեղեր», էշվօնֆ (ՀԳ, ՀԲ, 69), թեք հոլովաձևերում՝ վօնց, էշվօնք–էշվօնց։*

Տ.—*Տի մասնիկի դիրքային տարբերակ թեք հոլովաձևերում։*

ՏԱՆ[1].—*Առկա է Արդվինի բարբառում. պատվրտան, գուլպրտան (ԱԳ, ՀԲԴ, 100. հմմտ. ԱՂ, ՀԲ, 137), մեկ անգամ հանդիպել ենք Ալաշկերտի խոսվածքով բերված տեքստում՝ ձիավորտան (ՀԺՀ, IX, 188)։*

ՏԱՆ[2]||ՏԱՆՆ.—*Թեք հոլովաձևերում հազվադեպ գործածությամբ հանդիպող մասնիկ. ուղղ.-հայցականում՝* տանճ, տանճ, *տանճի. Մելիք կանչեց ուր ախբրտանուն (ՀԺՀ, IX, 278. Մանազկերտ), Հասնի ուր ի՚րնկերտանուն (Ն. տ. 124, Ալաշկերտ). Հմմտ. նաև ախպրտանուց (ՀԺՀ, IX, 217. Մանազկերտ)։*

ՏԱՆՑ.—*Տիճ, տանճ մասնիկների հարացուցային տարբերակ թեք հոլովաձևերում։*

ՏԱՆՔ.—*Բաղադրյալ՝* տան–ք *(<տի–ան–ք)>*տանճ *զարգացումով մասնիկ. հավաքական-հոգնակերտ. հանդիպում է մի շարք բարբառների (օր. Ղարաբաղի, Թբիլիսիի, Ախտալի, Արդվինի, Ուրմիայի, Հադրութի, Սյունյաց, Մարաղայի) ոչ-համակարգային կառուցվածքներում. կուտուրտանք (Ղրբ. բ.), վուսկօտանք (Մարաղա), փղշօրտանք (Սյունյաց), խուշուրտանք (Հադրութ), ախպրտանք (Ուրմիա), ընգէրտանք (Արդվին), ոսկորտանք (Ախտալ. տե՛ս ՀԱ, ՔԱոՒ, Ն, 214), ձիավորտանք (ՀԺՀ, IX, 399. Բաղեշ), կրտորտանք (Ն. տ. 299. Մանազկերտ), ընկերտանք (Ն տ. 57, Ալաշկերտ), ոսկրտանք (Թբիլ. բ.)։ Թեք հոլովաձևերում կարող է լինել տանց. աղբրտանց (ՀԺՀ, IX, 14. Ալաշկերտ), քվորտանց (ՀԺՀ, II, 28—Աբարաոյան բ.), ընկորտանցից (Ն. տ. 84), աղպորտանց (Ն. տ. 29), քուհրտանցը («Մեղու Հայ.», 1858, № 6)։*

ՏԱՆՔ՚.—*Տանճ մասնիկի հնչյունական տարաճում՝ ճ-ի քմայնացումով. հազվադեպ գործածությամբ՝ Վանի բարբառում. թօրվըյտանք՚ «թոնիրներ», գ՚էօմըշտանք՚ «գոմեշներ», քյավորտանք՚։*

ՏԱՆՔԷՐ.—*Բաղադրյալ՝* տանճ–էր>տանճէր *զարգացումով*

մասնիկ. հավաքական-հոգնակերտ. հազվադեպ գործածությամբ հանդիպում է Ղարաբաղի բարբառի որոշ խոսվածքներում և Հադրութի բարբառում՝ տանէ-ին զուգահեռ. կուտուրտանքէր։

ՏԱՆՔՆԵՐ.—*Բաղադրյալ՝ տանէ-ներ>տանէներ՝ զարգացումով մասնիկ. խոսակցականի ներթափանցում արևմտահայ գրական աշխարհաբարը. կրտորտանքներ (ՀՔ, 94, 38. ԳՄ, 038, 44)։ Հազվադեպ գործածություն է. հավաքական-հոգնակերտ։*

ՏԱՐ.—*Հազվադեպ գործածությամբ՝ վանի բարբառում. կ'էօմըշտար «գոմեշներ». առկա է նաև ինչեր մասնիկի մեջ՝ ի'—ինչ+տար=ինչեր, ա>է անցումով։ Համմտ. տեր։*

ՏԱՑ.—*Հարացուցային տարբերակ ի-ով զարգացում ունեցած որոշ հոգնակերտների, օրինակ, տիի մասնիկի. մանկտիք—մանկտացք (ՀՄԺԲ, 122)։*

ՏԱՔ, *տե՛ս* ԴԱՔ։

ՏԵՐ.—*Տի-եր>տեր զարգացումով մասնիկ, հանդիպում է, օրինակ, Շատախու բարբառում, զուգորդվում է երկվանկ-բազմավանկ կ, ի', գ', հանգող հիմքերի հետ. յէզվընկտեր «աղավնիներ», էրվանք'տեր (ՄՄ, ՇԲ, 86). թեք հոլովաձևերում՝ տիր. տրղէտեր—տրղէտիրու։*

ՏԵՐԱՆՑ.—*Տեր-ի հարացուցային տարբերակ սեռ.-տրականում՝ կնկտերանց (Ր, ԵԺ, I, 561), քուիրտերանց («Մեղու Հայ.», 1859, № 14). կնկտերանց (Ն. տ. 1858, № 10)։ Թբիլիսիի բարբառի փաստեր են։*

ՏԵՐՔ.—*Բաղադրյալ մասնիկ. բնորոշ է Թբիլիսիի բարբառին. կնկտերք («Մեղու Հայ.», 1858, № 2)։*

ՏԵՔ.—*Տի-ի>տեի զարգացումով մասնիկ. հազվադեպ գործածություն. օչխըրտեք (ՀԺՀ, IX, 204. Ալաշկերտ)։*

ՏԸՆԻ.—*Տի-նի>տընի զարգացումով. հանդիպել ենք մեկ անգամ՝ մանկտընին (ՀՔ, S, 182)։*

ՏՐՔՆԷ.—*Այլ տառադարձություն է, տե՛ս* իրկրնէ (ր՝ր՝կրնէ)։

ՏԻ.—*Հավաքական-հոգնակերտ. հաղնիպում է դեռևս գրաբարի ոչ-համակարգային կազմավորումներում. մանկտի, ծակտի. երկտի «երկանք»։ Ոմանք մեկնաբանում են կովկասյան լեզուների ազդեցությամբ (Կարստ), ոմանք էլ՝ հնդեվրոպական առնչակցություններով (Հ. Պեդերսըն, Հ. Աճառյան)։ Հ. Աճառյանը այդ մասնիկը տեսնում է սկյութական -tä հոգնակերտ տարրի մեջ, որ կա և այդ ցեղանվան մեջ՝ *sku-tä (ՀԱ, ԼՔՀԼ, III, 436)։ Տի մասնիկի ի-ն (համմտ. նի, ուի) Պեդերսընը կապում է *iļa հիմքային տարրի հետ։ Տառադարձում են* di (Karst, *192—3. ՀՊ, ՀԴԼ, 205*)։

նույնաբնութ արժեքով և հազվադեպ գործածութ յամբ հանդիպում է միջինհայերենյան գրավոր աղբյուրներում. մի քանի զբո հատութ մանկտին (ՄՄ, ԸՆ, 158, XVI դ.), ծակտի (Գ, ՔՒՄ, 96. հմմտ., Ղ3, ՀՆՒՎ, Ք, 102. XIII դ.). այրկտի (ՍՍ, Դ, 43)։ Թեք հոլովաձևերում (բացի հայցականից)՝ տ դիրքային տարբերակը. մանկտի>մանկ-ու-ոյ. հմմտ. այրկտոյ (ՍՍ, Դ, 43)։

Բարբառներում «գտնում ենք միայն սակավաթիվ բացառիկ դեպքերում..., բավական գործածական է Մարգուիութի հիշած Syro-armenian բարբառում» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 716). մարմնտի «մարմիններ», չոպնտի «հովիվներ». հմմտ. նաև՝ ԱՂ, ՀԼՊՈՒՆ, 100)։

ՏԻԿ.—Տիf մասնիկի հնչյունական տարաճում՝ f-ի ապաշրնչեղացումով. մեկ անգամ հանդիպել ենք Ն. Մառի պատրաստած ժողովածուի մեջ. մանկտիկ (ՆՄ, ԺԱՎ, 51)։

ՏԻՆՔ.—Բազադրյալ՝ տի-ան-f>տինf զարգացումով հավաքական հոգնակերտ մասնիկ. հանդիպում է մի քանի բարբառներում (Արարատյան, Թբիլիսիի, Լոռու, Կոզենի են). տեքերտինք (ՊՊ, ԵԺ, I, 31. Արարատյան բ.). ախպէրտինք (Լոռու բ.), հնգրտինքը (ԳՍ, Պ, 140. Թբիլ. բ.), քրվէրտինք (Կոզենի բ.)։ Թեք հոլովաձևերում՝ տանց. տեքերտանցդ (ՊՊ, ԵԺ, I, 28), ախպորտանցդ (Ն. տ. 87), հընգորտանցով (ՄԱ, ԼԽ, Ն, 172), հընգորտանցիցս (Ն. տ.), հընգ՛օրտանցը (ՈՒՐ, ԿՐ, Ն, 247), ընկերտանց (ԽԱ, ԵԼԺ, III, 108)։ Համմտ. տանf։

ՏԻՍ.—Միջինհայերենյան աղբյուրներում տիf մասնիկի հաբացուցային տարբերակ հայցականում. մանկտիք—մանկտիս (տի–u>տիս)։

ՏԻՐ.—Տեր մասնիկի դիրքային տարբերակ թեք հոլովաձևերում։

ՏԻՔ.—Բազադրյալ՝ տի–f>տիf զարգացումով հավաքական-հոգնակերտ. հանդիպում է ուշգրաբարյան շրջանից. մանկտիf. Միջին գրական հայերենում, բացի հոգնակի ուղղականից, կարող է հանդիպել նաև հայցականում՝ տիս-ին զուգահեռ. խնամտիք (ՀՄԺԲ, 301), ծակտիք (ԱԱ, ԱԱ, 394). թէ կու բռնեն դիս աղեկ մանկտիքն (ԱԱ, ՕՐ, 52. հմմտ. Հե, ՈՒՐ, 158. ՄՆ, ՈՒՐ, 125. ՀՄԺԲ, 387. ՄՄ, ԸՆ, 188, 202, XVI—XVII դդ., ՆՔ, ՀԿ, 45). կնկտիքն և տղաքն ի յայս եղանակն հիւանդանան (ԱԱ, ՕՐ, 85. հմմտ. ԱԱ, ԱԱ, 29, 55, 72). սեռ.-տրականում՝ տաց, տոց. խնամտոց (ՀՄԺԲ, 301), աղբատոցմով (ՄԺ, 160, XVI դ.)։

Հանդիպում է նոր Ջուղայի, Արարատյան, Արդվինի, Ա-

տխալի, Պոլսի, Թբիլիսիի և այլ բարբառներում ու խոսվածքներում։ Բարբառագիտական տեքստերում երբեմն այսպես են տառադարձում նաև դիֆ հնչյունական տարաձումը։ Նույնպես հավաքական արժեք ունի. ախպրտիք, քվիրտիք (ԳՍ, ՀԸ, 176. Թբիլ. բ.), կօճկրտիք «կոճակներ», խապրտիք «լուրեր» (Առտիալ), ընկերտիք (նև. ԵԿԺ, III, 106. Աբարատ. բ.). Համմտ. կնկտիք (ՍԴ, 204), Թեք հոլովաձևերում՝ տիֆ. իրենց քարածկտիքնուն մեջ (ՀԱ ՔԱռՔ, Ն, 207. այստեղ հնարավոր է ենթադրել, որ ուղիղ ձևում կարող է լինել տիֆնի), նաև տոց‖տոց. կնկտոց (ՀԺՀ, IX, 46, 179. Ալաշկերտ. Համմտ. ՍԴ, 204), ընկերտոց (Ն. տ. 178). Համմտ. նաև՝ տիկ (f-ի ապաշնչեղացումով). ախպրտիկաց (Ն. տ. 351. Բաղեշ). բայց և՝ աղբրտիքաց (Ն. տ. 362)։

Բարբառներից ներթափանցել է նաև գրական աշխարհաբար. հազվադեպ գործածությամբ՝ մանավանդ կազմավորման շրջանում. իսկ արևմտահայ գրականում հաստատվել է բոլորտիք բառում, որ միայն այդ ձևով է սովորական։ Համմտ. նաև՝ ձկտիկ (ՀԹ, ԳԿ, 30), ձագտիք (Ն. տ. 48). ծակտիք («Բազմ.», 1843, էջ 18)։

ՏԻՔՆԵՐ.—*Բազադրյալ՝ տիք-ներ>տիքներ զարգացումով հավաքականակերտ մասնիկ. հազվադեպ գործածությամբ հանդիպում է արևմտահայ գրականում. ծակտիքներեն (Ս, ՀԸ, 180. Դվ, Բ, 31. ՀԹ, ԳԿ, 34. ՄՄ, ԵԺ, 129)։*

ՏՈՑ.—*Տիֆ մասնիկի հարացուցային տարբերակ սեռ.-տրականում և նրանից կազմված ձևերում. ախպրտոց (ԵԿԴ, 192)։*

ՏՐԱՆՔ՛.—*Հազվադեպ գործածությամբ հանդիպում է Շատախի բարբառում՝ տի-եր-ան-ք>տրանք՛ զարգացումով. տ՚ենքատրանք՛ (ըստ ՄՄ, ՇԲ, 87)։*

ՏՈՒՆՔ.—*Հազվադեպ գործածություն ունի Թբիլիսիի բարբառում և Ղարաբաղի բարբառի որոշ խոսվածքներում. ըստ Կ. Դավթյանի (ԿԴ, ԼՂԲՔ, 92—93)՝ Ղարաբաղի բարբառում ունի ուն-ուն-ք>տուն զարգացում. ըխպօրտուն։*

ՏՈՒՑ.—*Տիֆ մասնիկի հարացուցային տարբերակներից մեկը (Թեք հոլովաձևերում). նկատում ենք վաղ գրական աշխարհաբարում. Քէ ախպերտուց ինչպե՞ս կու շահիս (ԵԿԴ, 7, XVIII դ.)։*

ՐԱՆ.—*Մեկ անգամ հանդիպել ենք Հ. Աճառյանի «Քննություն Առտիալի բարբառի» ուսումնասիրությանը կից տեքստերից մեկում. «Կի քալին իրենք գեղրանր, որ ապրելիք բերեն տունր»։*

ՐԱՆԻՔ՛.—*Հազվադեպ գործածությամբ՝ Առտիալի բարբառում. կրվըրանիք՛ «կովեր»։*

ՐԱՆՔ.—*Բազադրյալ՝ եր-ամք>ր-ամք>րամք զարգացումով հոգնակերտ-հավաքական մասնիկ. հազվադեպ գործածությամբ հանդիպում է դեռևս միջինհայերենյան գրավոր աղբյուրներում, և՛ ուղղականում, և՛ հայցականում. դեղրանք (ՄՀ, ՋՄ, 30, 128. ԱԱ, ԱԱ, 257), տեղրանք (ԱԱ, ԱԱ, 36, 38, 72), դդեղրանքն (ՂՅ. Հնոիվ, Ք, 388. Համմտ. ԱԱ, ՕՔ, 326)։*

Հանդիպում է նաև մի քանի բարբառներում. դ՛էղրանք (Մշո բ.), տէղրանք «դեղեր» (Սասունի բ.), կ՛էղրանք «գյուղեր» (Ուրմիայի բ.), էստղրանք (ՀԺՀ, IX, 351. Բաղեշ.), ընտեղրանք (ՊՊ, ՍԺ, I, 37. Արարատ. բ.), տեղրանք (ՀԺՀ, IX, 174. Այշականտ.), դ՛էղրանք (Աստիալ)։

ՐԱՆՔ՛.—*Րանմ մասնիկի հնչյունական տարաճում՝ ֆ-ի քմայնացումով. տեղրանք՛ (Վան), կեղրանք՛ (Շատախ)։*

ՐԱՆՔԵՐ.—*Հազվադեպ գործածությամբ՝ Աստիալի բարբառում. քօվրանքեր «կողքեր»։*

ՐՈՒՆՔ.—*Բազադրյալ՝ եր-ունք>րունք զարգացումով մասնիկ. հավաքականակերտ. հազվադեպ գործածությամբ հանդիպում է միջինհայերենյան գրավոր աղբյուրներում. դեղրունք (ՂՅ, Հնոիվ, Ք, 388, XV դ.)։ Համմտ. եռունք։ Երկրորդաբար՝ րանմ-ին զուգահեռ հանդիպում է Մշո բարբառում. դ՛էղրունք (նաև դ՛էղրանք. ըստ ՍՔՔ, ՄՔ, 78—79)։*

Յ.—*Հոգնակերտ-հոլովակերտ. պարզ մասնիկ. գրաբարի սեռական-տրականի և նրանից կազմված ձևերի համակարգային հոգնակիակազմության տարր. տան—տանց հակադրության մեջ որոշակիորեն երևում է հոգնակերտի նրա ֆունկցիան, իսկ աստեղ—աստեղց հակադրության մեջ՝ հոլովակերտի ֆունկցիան։ Այս մասնիկի ծագման վերաբերյալ հիմնավոր տեսակետ չկա։ Բուգգեի (Lyk. Stud. I, 74) հետևողությամբ հայագետների մեծ մասը հակված է կարծելու, թե այն ծագում է -*sko վերջածանցից. համմտ. հին սլավ. nebo «երկինք»—nebe sĭskŏ (nebes- բնի վրայով)՝ «երկնային, երկնքից»։ Այս նշանակում է, թե հնարավոր է. սանինք, Swopno-sko-s կամ Swopno-sko-n. բնդ որում՝ ագ<-ā-sko-s, ից<-i-sko-s, ուց<-u-sko-s, ոց<-o-sko-s։ Հատ Աստուրտանանտի՝ խեթերենի բացառականի z-ն կապվում է հնդեվր. -tos-ի հետ (սանս. taḥ), որ առանց ձայնավորի պետք է տար z(*ts>z)։ Պրոֆ. Գ. Ջահուկյանը այս դիտողությունը նկատի առնելով՝ գրում է. «Անհարին չէ այս բանը ենթադրել և հայերենի համար» (ԳՅ, ՀՀՀՍ, 223)։ Գ. Ղափանցյանը ց-ի հնդեվրոպական ծագումը մերժելով՝ փորձում էր այն հանել փոքրասիական աղբյուրից (հիմ-*

քից)։ Նա ուշադրություն է հրավիրում Մառի այն դիտողության վրա, թե ծագումնաբանական կապ կա հայերենի ց-ի և վրացական նույնապաշտոն t տարրի միջև (տե՛ս ԳՂ, ՀՊ, 258—259. համմտ. նաև էջք՝ 98, 99, 218)։

Ծագրաբարյան հայերենում մեծ մասամբ հանդիպում է գրաբարատիպ կազմավորումների սեռ.-տրականում և նրանից կազմված ձևերում։ Այսպես՝ միջինհայերենյան աղբյուրներում՝ ընկերացն (Ֆ, Բ, 36), աղքատաց (ն. տ. 109), մրգանց չրով (ԱՍ, ՕԲ, 182). և պատրաստիլ կու պիտի ի տաք կերակրոց (ն. տ. 84)։

Հազվադեպ գործածություն ունի բարբառներում, ավելի հաճախակի հանդիպում է հիմքային տարրի (կամ այլ հոգնակերտի) հետ ձևաբանորեն վերակազմավորված տեսքով։ Այսպես՝ ախպեր-ք>ախպօր-ց, քրվէր-ք>քրվօր-ց (Ղրբ. բ.)։

Հանդիպում է նաև արևմտահայ աշխարհաբարի գրաբարատիպ (հնատիպ) որոշ կառուցվածքներում. դժվարություն—դժվարության (ԳՀ, նժ, 1, 9), թշվառություն—թշվառության (ՎԹ, ե, 180), իրավունք—իրավանց (ՎԹ, ե, 139), ավուրք—ավուրց (ն. տ. 287), շրթունք—շրթանց (ն. տ. 44, 56), շքեղություն—շքեղության (Մ, ՀԵ, 202)։

Առհասարակ հոգրաբարյան հայերենում աստիճանաբար վերակազմավորվում է ա, ու, ն, ո, ի հիմքային տարրերի հետ, իբրև աց, ուց, ից, ոց, ից՝ պահպանելով կամ կորցնելով հոգնակերտ նշանակությունը։ Նույնը պետք է ասել նաև ան, ոն, ուն, ին հիմքային տարրերով նրա վերակազմավորումների մասին։ Դեռևս դրաբարում ց-ն նկատում ենք իցս բաղադրության մեջ՝ երկիցս, երիցս։

Արևելահայ դրական աշխարհաբարում իբրև հոգնակերտ անգործածական է. ավելի վաղ շրջանում էլ այն իբրև հնաբանություն էր դիտվում։ Դեռևս Մ. Նալբանդյանը ց-ով հոգնակին գնահատել է իբրև հնատիպ (տե՛ս ԳՀ, ժՀՀՀ, 6)։ Ց-ն զրկվելով հոգնակերտի գաղափարից և հիմքային տարրերի հետ վերակազմավորվելով դարձավ նաև թեքույթ՝ բացառականի վերջավորություն (և՛ եզակիում, և՛ հոգնակիում), իբրև ից, ուց, մերոնցից և նման ձևերում այդ նույն ց-ն տարբեր անցումներով և տարբեր ֆունկցիաներով հանդիպել է միևնույն բառաձևի մեջ։

ԻԵՐ||ՈՒԵՐ, տե՛ս ՎԵՐ։

ԻՒ||ՈՒՒ, տե՛ս ՎԻ։

ՈՒԱՆ.—Հազվադեպ գործածությամբ՝ միջինհայերենյան աղ-

բյուրներից մեկում. և սակն քուռկին ընդ իշուանին (ՆՄ, ԺԱՎ, 22)։ Հազվադեպ է նաև սրա արտահայտությունը բարբառներում։ Տե՛ս Վան։

ՈՒԱՆՔ.—Վանք մասնիկի այլագրության միջինհայերենյան գրավոր աղբյուրներում. տեղուանք (ԱՍ,ԱՍ, 55, 482), իշուանք (ՆՄ, ԺԱՎ, 22), իշուանք (ՍՍ, Դ, 42)։

ՈՒԲՐ (ւեր), տե՛ս ՎԵՐ։

ՈՒԸՆԻ, տե՛ս ՎԸՆԻ։

ՈՒԸՏԱՆՔ, տե՛ս ՎՏԱՆՔ (ՎԸՏԱՆՔ)։

ՈՒԻ (ւի), տե՛ս ՎԻ։

ՈՒՆ.—Ունք մասնիկի ոչ-պարտադիր տարբերակ Թբիլիսիի բարբառում. Մարիփաթով քաղցր լեզուն դիփունի վրա անգին ա (ՄՆ, ԽԺ, 27)։

ՈՒՆԱՆՑ||ՈՒՆԱՑ.—Հազվադեպ գործածությամբ՝ միջինհայերենյան աղբյուրներում և որոշ բարբառներում. բաղադրյալ՝ ուն-ան-ց||ուն-ա-ց զարգացումով հավաքականակերտ. ուն-ը երբեմնի հիմքային տարր է, համմտ. ծաղկ-ուն-ք>ծաղկ-ունք, որից էլ՝ ան հիմքակազմ տարրով՝ ծաղկունանք>սեռ.-տրակ. ծաղկունանց (ՆՔ, ՀԿ, 205. համմտ. ՄՄ, ԸՆ, 196, XVI—XVII դդ.). կամ նաև ծաղկունաց. զծաղկունաց ջուրն (ԱՆ, ՕՔ, 198). մեծունաց (ն. տ. 17)։ Համմտ. նաև Թբ. բարբառում՝ դիփունանք—դիփունանց (ԳՍ, Պ, 50. ԳՍ, ԸԲ, 24)։

ՈՒՆԱՆՔ.—Հազվադեպ գործածությամբ՝ նոգրաբարյան հայերենում և որոշ բարբառներում. ուն-անք>ունանք զարգացում. ուն-ը երբեմնի հիմքային տարր է, ապա ան-ք (անք)-ի հավելումով՝ ունանք. ծաղկունանք։ Համմտ. Թբիլ. բարբառ. դիփունանք (ԳՍ, ԸԲ, 15). Քեք հոլովաձևերում՝ ունանց։

ՈՒՆԱՔ.—Հազվադեպ գործածությամբ՝ միջինհայերենյան աղբյուրներում և որոշ բարբառներում. աստղունաք։ Կարծում ենք՝ ունանք-ի հնչյունական տարաձում է։

ՈՒՆԻ.—Հանդիպում է դեռևս գրաբարի ոչ-համակարգային կազմավորումներում, սովորաբար տոհմանուններում. Ոշտունի, Բագրատունի, նաև՝ մեծունի «մեծ մարդիկ», արեգունի «շատ արև ունեցող» (համմտ. ԱՂ, ՀԼՊՈՒՆ, 10—12)։ Ունի հավաքականակերտ նշանակությունն

ՈՒՆՑ.—Ունք (նաև էօնք) մասնիկի հարացուցային տարբերակ սեռ.-տրականում։

ՈՒՆՔ.—Ք-ի զարգացումն է ուն հիմքային տարրով. հանդիպում է դեռևս գրաբարի ոչ-համակարգային կազմավորումներում

գերազանցապես հավաքականակերտի նշանակությամբ. պատաւունք, ճրագունք, պատերազմունք, սարկաւագունք, եպիսկոպոսունք, երիցունք, երագունք (համմտ. եպիսկոպոսք, երագք, ճրագք)։

Հանդիպում է միջինհայերենյան գրավոր աղբյուրներում (և՛ ուղղականում, և՛ հայցականում). որպիսի՛ք են իշումիդ այդոքիկ (ԷՀՄԳԱ, 25. տաճկունք (Ֆ, Բ, 188), մրգունք (Գ, ՔԲՄ, 176). դամունք (ն. տ. 186). համմտ. այլունքն (ն. տ. 92). շատ մեղուսիմ ունիմ (ՆՔ, ՀԿ, 67), զոտկունքն (ն. տ. 82), մեչկունք (ն. տ. 84). ոստունք (ՀՔ, S, 167), որսունք (ՄՄ, ԸՆ, 200, XVI—XVII դդ.)· Հենվելով Ա. Այտընյանի բերած օրինակների վրա՝ Հ. Աճառյանը գտնում է, որ ունե-ով կառուցածները (տաճկունք, ձագունք, անդամունք, խցկունք) առաջացել են գրբ. երիցունք, ճրագունք և այլն ձևերի վրայից։ Նա այնուհետև ընդգծում է (տե՛ս ՀԱ, ԼՔՀԼ, III, 707)՝ «բայց -ունե վերջավորությունը գտնվում էր հատկապես անեզական միավանկ բառերի վրա, որոնց f վերջաձայնն էլ վերածվում էր -ին փաղաքշականի (սղմամբ՝ -կ). այսպես, ունենք դեռ վիպասանական շրջանից՝ աչկունե (աչք—աչիկ—և աչկունքն էին արեգակունք), Փարպեցու մոտ՝ վանկունք (վանք—վանիկ —երթեալ այնուհետև ի վանկունս իւր Փրպ. էջ 141, տող 35, գնայր ի մէնջ ի վանկունսն իւր. Փարպ. էջ 14, տող 6)»։

Բարբառներում ևս զարգացած է հավաքականակերտ նշանակությունը. մեծ մասամբ արհեստագործական-ազգակցության, գերդաստանի գաղափար արտահայտող անձնանուններից կերտում է հավաքական անեզականներ. թեև բացառված չէ այլ բառերի հետ շուգորդվելու միտումը. Բաղունք (ՆՎ, ԳՍԲ, 67. Սյունյաց բ.). Ափունք (Ղրբ. բ.). համմտ. նաև՝ հընգ՛էրունք (Ղրբ. բ.), կարաբախցունք (Արդվին), դիփունք (Թբիլ. բ.), դաշդունք (Առտիալ). առկա է նաև Հադրութի, Մշո, Լոռու և այլ բարբառներում (ու խոսվածքներում)։ Թեք հոլովաձևում՝ ունց. հընգ՛էրունց, պապունց, Ափունց (Ղրբ. բ.)։ Կարող է լինել նաև՝ անց: Որոշ կառուցածներում ածանցական նշանակություն ունի. ըրարմունք (Ղրբ. բ., Լոռու խ., Հադրութի բ.). թէգ՛ունք «թիկունք» (Ղրբ. բ.), արարմունք (Թբիլ. բ.), շարժմունք (Արարատյան բ.) և այլն։

Հազվադեպ գործածություն ունի նաև արևմտահայ գրական աշխարհաբարում. Աստղիկի հատակակից աղջկունե ցանկալից աչերով կը լափեին այդ ճոխ ղգեստներն (ՏԿ, ՎԱ, 125)։ Ավելի հաճախ ածանցական նշանակությամբ է հանդիպում. ափունքներ (ՄՄ, ԵԺ, 103. համմտ. ԴՎ, Բ, 121, 139. ՎՓ, Ե, 25), շրթունքներս

(ՎՔ, ե, 87). մասունքներովը (ԳՋ, եժ, Ի, 66), բարձունքներե (ն. տ. 76)։

Արևելահայ գրական լեզվում հանդիպում է անձնանուններից կազմված հավաքական կառուցածներում. Վեդունք, Սա է «Հին լեզվի բն բնի հոգնակի ուղղականի վերջը, որ նոր լեզվի մեջ ըմբռնվում է իբրև ածանց, համաձա հավաքական նշանակությամբ» (ՄԱ, ՀԼՏ, 274)[26], թևք հոլովաձևերում՝ ունց. Վեդունց։

ՈՒՆՔ.—Ունճ մասնիկի հնչյունաբանական տարբերակ՝ ձայնավորների ներդաշնակության օրենքով պայմանավորված. պէլունք, Վանունք (Ղրբ. բ.) Հաբունք (Այտնյաց). թևք հոլովաձևերում՝ ունց՝ Վանունց (Ղրբ. բ.)։

ՈՒՆՔԷՐ.—Բաղադրյալ՝ ունճ-էր>ունճէր զարգացումով հավաքականակերտ. հազվադեպ գործածությամբ՝ Ղարաբաղի բարբառում. Տը՛նգ՛ը՛րունքէր «ընկերներ»։

ՈՒՏ||ՈՒՆՏ.—Ձայնավորների ներդաշնակությամբ պայմանավորված տարբերակներ Ղարաբաղի որոշ խոսվածքներում. տանձուտ||տանձունտ (ըստ Կ՚Ի, ԼՂԲՔ, 90), Համմտ. ՕՏ||ՕՍ։

ՈՒՐՆԷ.—Ջույգ հոգնակերտ (ուր-նէ). ըրնէ զույգ հոգնակերտի տարբերակ (ձայնավորների ներդաշնակության օրենքով պայմանավորված). ծուց «ծոց»>ծուց-ուրնէ-ա «ծոցներդ». սոացական հոգնակիակազմության տարր (Ղրբ. բ.)։

ՈՒՐՆՈՒ||ՈՒՐՆՈՒՆ.—Սոացական հոգնակիակազմության տարր, զույգ հոգնակերտ (ուր-նու). Բունուրնուս էն քաղցըր վախտը... (ԱՊ, ՀՔ, Ն, 363). Ուրնու հոգնակերտը ձայնավորների ներդաշնակության օրենքով պայմանավորված տարբերակ է. Մէր Մածլումը ամաց էրկու շօնը... Իշուրնուս ին (ն. տ.)։

ՈՒՑ[1].—Ց-ի զարգացումն է երբեմնի հիմքային ու բաղադրիչով. այժմ ածանցական տարր է. Հնուց, մանկուց։ Իրբև. մօրուց, առաջուց։

ՈՒՑ[2].—Ուկ-ի ճ-ի և նրանով զարգացում ունեցող որոշ մասնիկների հարացուցային տարբերակ թևք հոլովաձևերում. օր. մարթիք՛—մարթուց (Ղրբ. բ.), Հընգէրուք—Հընգէրուց (Մեղրու բ.)։

ՈՒՔ||ՈՒՔ.—Ձայնավորների ներդաշնակությամբ պայմանավորված տարբերակներ (Մեղրի, Կաքավաբերդ, Հադրութ, Ագուլիս). ունճ>ուճ||ուչ զարգացում. Հումուք (ԱՊ, ՀՔ, 88), Հընգէրուք (ԷԱ, ՄՔ, 190). Թևք հոլովաձևերում՝ ուց։ Համմտ. Մ՚ազուք

---

[26] Տե՛ս նաև՝ զուակունք («Արար.», 1858, № 4, «Մեղու Հայ.», 1858, № 8)։

«մազոնք» (ԷԱ, ՄԲ, 121), Շաղոնք (ԱՊ, ՀԲ, 88), թեք հոլովաձևերում՝ ոնց: Այս նշանակությամբ տե՛ս մոմոռք («Բազմ.», 1843, էջ 101), երեսոռք (բրբռ.):

Ք.—Հոգնակերտ-հոլովակերտ. պարզ մասնիկ, որպես այդպիսին գործածվում էր գրաբարի ուղղական հոլովի հոգնակիա-կազմության մեջ. գետ—գետք, գայլ—գայլք, սիրտ—սիրտք հա-կադրությունների մեջ հստակորեն երևում է հոգնակերտի նրա ֆունկցիան, իսկ, ասենք, աստեղք—աստեղց—աստեղս, աուրք—աուրց—աուրս հակադրությունների մեջ՝ հոլովակերտի ֆունկ-ցիան: Իբրև միայն հոգնակերտ հաստատված է գրաբարի գոյ-ծիականում: Այլ հոլովաձևերում սրան փոխարինում են ց (սեռ.-տրականում և նրանից կազմված ձևերում), ս (հայցականում և նրանից կազմված, բաղադրված ձևերում) մասնիկները: Ք մաս-նիկի ծագման վերաբերյալ կան (եղել են) տարբեր կարծիքներ[27]. փորձել են առնչություններ հաստատել նրա և -կ̣ա հավաքակա-նակերտի հետ (Բարթոլոմե), ուղղակիորեն բխեցրել են հնդեվր. *es-ից՝ *es>f (Մ. Բուզգն), կամ՝ բառավերջի դիրքում պարզա-պես *s>f, նախ՝ *s>h, ապա h-ի թանձրացումով («խստանա-լով»)՝ f (Հ. Պեդերսեն). բայց քանի որ *s>f անմիջական ան-ցումը անհավանական է, ապա գուցէ՝ *s>*sv, ապա *sv>f (Հյու-բշմանի, Բրուգմանի)[28]. «Հայերենը տեսնելով, որ հոգնակիի մեջ բա-ռավերջի s ընջելով եզակիի հետ պիտի շփոթվեր, ավելացրեց v կիսաձայնը և այսպիսով ստացվեց sv=f վերջավորությունը» (ՀԼհ, ԼՔՀԼ, III, 436): Իրավացիորեն Հ. Հյուբշմանը կասկածանքի տակ է առնում (Arm. Stud., 89) *es>f անցումը, քանի որ վերջնա-հանգ s-ն հայերենում՝ պետք է ընկներ (բառավերջի շեշտահա-ջորդ վանկի անկումով պայմանավորված): Ոմանք նույնիսկ վի-ճարկում են f-ի հնդեվրոպական սերումը: Պրոֆ. Գ. Ղափանցյա-նը նկատում է. «Ա. Մեյեի և մյուսների այդ մեր «f»-ի գննումն զուտ մեխանիստական, տենդենցիոզ և ձևական է» (ԳՂ, ՀԼՊ, 256—257): Պրոֆ. Ս. Ղազարյանը գրում է. «Այդ հոգնակերտ վեր-ջավորությունը..., եթե նույնիսկ ծագումով առնչվի s-ի հետ, ձևա-

---

[27] Հմմտ. КП, ИСАЯ, 33:

[28] «Հոգնակի ուղղականի f-ն չի կարելի հնդեվրոպական es-ից բխեցնել, քա-նի որ վերջին s-ը հայերենում ընկնում է... Մինչև այժմ անունների և դերանուն-ների հոգնակի ուղղականի և բայերի հոգնակի առաջին և երկրորդ դեմքերի f տառի մասին գոհացուցիչ լուծում չի տրվել: Պետք է ենթադրել, որ ոչ թե նախ-նական s տառը, այլ նախնական sv-ն կարող էր հայերենում f-ի փոխվել» H. Hübschmann, I, 89):

վորվել է հայ ժողովրդի հետ երկար տարիներ սերտ հարաբերությունների մեջ գտնված ժողովուրդների լեզուների ազդեցությամբ» (ՍՂ, ՀԳԼՊ, I, 234)[29]։ Այսպիսի տարաբաժանություններն բնական են, որովհետև նույնիսկ հնդեվրոպական տ-ի բնույթը ինքնին այնքան էլ պարզ չէ (Համմտ. ՀԱ, ԼՔՀԼ, III, 363. ՅՊ, ՍՐՐՅ, 247)։ Գործին խանգարում է նաև այն հանգամանքը, որ ելնելով գործածության դիրքային որոշ նմանություններից՝ շատերը աշխատում են ուղիղ կամ անուղղակի ճանապարհներով ի-ն հանել տ-ից։ Հնդեվրոպական միասնության շրջանում գուցե տ-ն հաստատուն համակարգային հոգնակերտ տարր է, սակայն չպետք է անտեսել այն հնարավորությունը, որ ի-ի զարգացումը կարող էր այլ ելահիմք ունենալ, և թերևս ավելի շոշափելի հաջողության հասնենք, եթե նրա գոյացման ակունքները որոնենք հնդեվրոպական, դեռևս վերջնականորեն չպարզաբանված, ետնալեզվային խմբերի շարքերում։ Հ. Աճառյանը արտաքին, ձևական-պատահական նմանություն է տեսնում ի-ի և այլ լեզուների (ուգրո-ֆիննական, հնդկացիական, դրավիդյան, եթովպական) համապատասխան որոշ մասնիկների հետ (ՀԱ, ԼՔՀԼ, III, 434—435)[30]։

Գրաբարի էտապում ի-ն արդեն բաղաձայնական մասնիկ էր. ձայնավորահանգ հիմքերի հետ նա հնչում էր [ի], բաղաձայնահանգ որոշ հիմքերի հետ՝ (ը)ի։ Բնականաբար նա սկզբնապես բաղաձայնական տարր չէր կարող լինել։ Ք-ն հիմքերի հետ ունեցած զուգորդումներում չէր ազդում դրանց վանկաքանակության վրա, շեշտափոխական երևույթների տեղիք չէր տալիս։ Ուղղականի հոգնակիահակազմության մեջ ավելանում է եզակի ուղղականի

---

[29] Հ. Պետերսընը հանդիմանում է Շուխարդտին այն բանի համար, որ նա ի-ին վերադրում է քարթվելական ծագում (ՀԳ, ՀԳԼ, 205)։

[30] Հայտնի է, որ ի-ն առկա է նաև այլ խոսքի մասերի հոգնակի բայաձևերում։ Ֆ. Վարագուլյանը անդրադառնալով այս խնդրին՝ գրում է. «Մինչև այժմ էլ լեզվաբանները դժվարանում են ի-ի առաջացման մասին սպառիչ բացատրություն տալ, և նրա ծագումը մնում է դեռևս... չլուսաբանված» (տե՛ս նրա «Հին հայերենի խոնարհման համակարգի ծագումը», Երևան, 1961, էջ 99)։ Հեղինակը ավելացնում է. «վերոհիշյալ լեզվաբանները դժվարացել են լիովին լուսաբանել այդ հարցը, քանի որ մեր լեզվի զարավոր պատմությունը չունի է այն օղակները, որոնց միջով անցնելով հնդեվրոպական տ-ը հայերենում վեր է ածվել ի-ի» (Ն. տ. 103)։

ձևին, բացի ձայնորդահիմք դեպքերից (և տարակազմ որոշ ձևերից), գործիականում միշտ ավելանում է եզակի ձևին։ Առհասարակ հայերենում այս հոգնակերտը, բացի գոյականի հոգնակիացման տարր լինելուց, հանդես է գալիս նաև այլ խոսքի մասերի հոգնակի կառուցածևերում. թվականների մեջ՝ երեք, չորք, դերանունների մեջ՝ մեք, դուք, բայերի մեջ՝ սիրեմք, սիրէք։ Ընդ որում ածականների հետ այն կարող է հանդես գալ թվային համաձայնության պահանջով, ինչպես և գոյականաբար գործածվելիս, իսկ թվականներում՝ և՛ համաձայնության պահանջով, և՛ գոյականաբար գործածվելիս, և՛ անեզականների կազմում։ Համանման արտահայտություններով (ֆունկցիաներով) նա հանդիպում է դերանունների մեջ և դերբայական ձևերում։

Դեռևս գրաբարում միտում էր բաղադրությունների մեջ մրցանելու, իբրև բաղադրյալ հոգնակերտ մասնիկի տարր. ոյ–f>ոյf, այ–f>այf, եայ–f>եայf աճ–f>աճf, իճ–f>իճf, ի–f>իf ևն (Համմտ. Գ.Ջ, 222Ս, 219—220)։ Նոգրաբարյան հայերենում f-ի գործածության ոլորտը աստիճանաբար նեղանում է, այն դառնում է ոչ-համակարգային հոգնակիակազմության տարր, սակայն որոշակի դիրքերում այդ մասնիկը հարատևում է մինչև մեր օրերը։ Նրա ֆունկցիոնալ վերաարժեքավորման հիմքերը դրված էին հին գրական հայերենում. Համմտ. չորf և չորեfտասան, երկու(f) և երկոտիճ, այսf և այսոտիկ։ Անեզականների բառային վերակազմավորումները ևս սկսվում են այս շրջանից, որ երևում է, օրինակ, օրէնիճ, արդիւնիճ, շնորհիճ, շէնիճ և նման մի քանի բառերի անեզական գաղափարի մթագնումից։

Գրաբեռ միակ հոգնակերտն է, որ հանդիպում է առհասարակ ամբողջ հայերենում՝ հնագույն շրջանից մինչև մեր օրերը. տարածական ընդգրկումով համապարփակ է, թեև համակարգային գուգորդումների տարր է միայն գրաբարում։

Միջին գրական հայերենում նույնությամբ պահպանում է հոգնակիակազմության մեջ ունեցած իր հատկությունները՝ միայն գրաբարատիպ կառուցածևերում. ուղղականում նա կրկնմասն մասնիկ է՝ հոգնակերտ-հոլովակերտ, գործիականում՝ հոգնակերտ (մենիմասն). այս կամ այն չափով տարածվում է հոգնակի հայցականում, այստեղից դուրս մղելով ս-ն (վերակազմավորված հայցական)։ Հ. Աճառյանը այսպես է դնահատում f-ի ձևաբանական արժեքը կիլիկյան հայերենում. «Հին հայերենի f վերջավորությունը կիլիկյան հայերենում թեև գոյություն ուներ, բայց սահմանափակված էր միայն ձայնավորով հանգող բառերի համար.

այսպես՝ որդիք, տանեցիք, քրիստոնէք, պախրէք, տարիք, ապիկիք, աղիք, ածուք, ակռայք, վկայք և այլն...։ Սրանցից դուրս f-ն իբրև հոգնակիի նշան մնում էր նաև ազգականութիւն ցույց տվող մի խումբ բառերի վրա, ինչպես են՝ եղբարք, դստերք, ծնողք, այրուկինք, հարք, տերք, որոնք բոլորը հնութեան մնացորդ են, ճիշտ ինչպես ունենք այսօր մեր բարբառներում տղաք, տղայք հոգնակի ձևերը» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 706)։ Անկասկած սա ընդհանուր գիտողութիւն է. միջինհայերենյան տեքստերի դիտարկումները վեր են հանում մասնավոր շատ դրսևորումներ։ Եվ այսպես՝ գրաբարատիպ հոգնակի ուղղականում f-ի առկայութիւնը սովորական է. տրտմութիւնք լի են ջրով (ԱԱ, 08, 9), ի լիզի ջրէն վախենան սողուցքն (ն. տ. 49), տղաքն ի յայս եղանակն հիւանդանան (ն. տ. 85)։ Վերակազմավորված «գրաբարատիպ» հայցականում՝ և պատեց և շինեց զեկեղեցիքն (ՊՇՒ, 4), անխնայ կոտորէին զայլազգիքն (ն. տ. 18), զկորիւնեմս իմ (ԷՀՄԳԱ, 6), եւ ի նոյն ամին զօրք Հայոց պաշարեալ կոտորեցին զՀոռոմոց սուրթանին հեծեալքն (ՄԺ, 82, XIII դ.), ազազակելով յուզէին զմայրքն (ն. տ. 128, XVI դ.), յոյնք... սպանին անթիւ վաճառականք (ն. տ. 137, XVI դ.), զամէն եկեղեցիս (ԿՂ, ՍՎԱ, 123, XIII դ.), (զ)հայրենիք (ԿՂ, ՀԱ, 76), որք անտի շնչեն օդ (ԱԱ, 08, 9), հով կեռակուրք կեր (ն. տ., 65), զփորր տղաքն (ն. տ. 68), հոգնակի գործիականում՝ բ եռակօք յեռան ականջին ի վայր իջանէ և առ մանօք (ԱԱ, 08, 52)։ Ուղղականի, հայցականի, գործիականի այս տիպի հոգնակիականզմութեան դեպքում սեռ.-տրականը հոգնակի է կազմում.ց-ով։ Միջին գրական հայերենում ավելի ուժեղանում է ածանցական տարր դառնալու միտումը. հմմտ. գաւուքն (ՄԺ, 194, XVII դ.), որ աշուքն կատարի (ԿՂ. ՍՎԱ, 144, XIII դ.), իւր բնական տեղիքն փայծաղն է (ԱԱ, 08, 22. հմմտ. ն. տ. 32. ՄՆ, ՈԻԲ, 127), որ երբ բերանն շունչ առցելք լինայ (ԱԱ, 08, 49), բայց յանկարծակի մահն... անոց լինի, որ տարիքն նոցա ի Հ անցնի (ն. տ. 81). անձինն լաքն ու երկանքն հանց լինի (ն. տ. 175), այսպես և՝ եռ, գիրք, հայրենիք, բաղնիք, խազ. հմմտ. նաև՝ (զ)օրհնէքն կառնու (ԷՀՄԳԱ, 79), տնօրհնէք (Ֆ, Բ, 245), տնօրհնէք (ՄՄ, ԸՆ, 219, XVI—XVII դդ.). ՄՂ, ՈԻԲ, 86), ուխտարէքն (ԴՀՎ, III, 119, XIII դ.), խարտուք (ԱԱ, ԱԱ, 246). փռնկտուք (ՄՀ, ՋՄ, 76), սրտկտուք (Գ, ՔԲՄ, 57)։ Այստեղ ևս շարունակվում են գրաբարյան շրջանում սկսված՝ f-ի վերակազմավորումները այլ հոգնակերտների կամ հիմքային տարրերի հետ. իբրև բաղաձայնական տարր սա «իրեն է ձգում» հիմքավերջի

ձայնավորահանգը կամ ձայնավորում ունեցող հանգը. սրանով էլ պայմանավորված է ամբ, ունբ, ինբ, իբ, ուբ, իբ, էբ և այլ նման տարրերի գոյացումը։ Իրրև պարզ բաղաձայնական հոգնակերտ մասնիկ, իրրև բաղադրյալ հոգնակերտի տարր, կամ իրրև ածանցական տարր՝ ֆ-ն ունի նաև հնչյունական տարաձևումներ՝ նաև ֆ>կ անցումով. ճամփա>ճամփեք>ճամփեկդ (ՆՔ, ՀԿ, 236). տղա>տղաք>տղաքներ>տղակներ (Համմտ. տղակներուն՝ ԱԱ, ԱԱ, 73, 436), նաև՝ մատնիկ (ՀՔ, Տ, 229)։ Միջին գրական հայերենում ևս (ինչպես գրաբարում) պահպանում էր բազմություն և բազմությունը (հավաքականությունը) ներկայացնող տեղը արտահայտելու հատկությունը. Հռոմք=«հույների երկիրը» և «հույները». Կերթա ի Հռոմք ի վար (ՆՔ, ՀԿ, 80. Համմտ. ն. տ. 241) և Հռոմոց (ն. տ. 161). եւ այն որ ի Հռոմք բուսնի (ԱԱ, ԱԱ, 252)։ Դեռևս հնագույն շրջանից սկսած ֆ հոգնակերտը հանդես է գալիս ել-ի ածանցումով դերբայական ածականների հետ՝ գոյականացնող ֆունկցիայով («այն, որ գործողության սուբյեկտն է» կամ «այն, որ գործողության օբյեկտն է» նշանակություններով). այսպես՝ հոտոտելի+ք>հոտոտելիք («այն, որ կարող է հոտոտել»), առնելի+ք>առնելիք («այն, որ կարելի է առնել»)։ Ք-ն վերացարկված հատկանիշի դաղափարը դարձնում է առարկայնություն՝ գոյական։ Համմտ .նաև՝ եկին նոր սիրելիքն (ԱԱ, ՕԲ, 17. տե՛ս նաև էջ 148). հոտալիք («այն, որ կարելի է հոտոտել». ն. տ. 28), լսելիք (ն. տ. 44. «այն, որ կարելի է լսել»), կանչելիք (ն. տ. 44), առնելիք (ն. տ. ԱԱ, ԱԱ, 593), ճաշակելիք (ԱԱ, ՕԲ, 47). զտաք հոտոտելիքն հոտալ որ է մուշքն և զուլիան (ն. տ. 210). եւ սնկան ծխելիքն այս է (ն. տ. 365), խմելիք (ԱԱ, ԱԱ, 370), ըմպելիք (ն. տ. 464. Համմտ. ՄՀ, ՋՄ, 99). շատ սիրելիք կոտւեցընես (ՄՄ, ԸՆ, 192, XVI—XVII դդ. Համմտ. Հե, ՈՒԲ, 198), ծեփելիք արա (ՄՀ, ՋՄ, 120), ծխանելիք (ն. տ. 128)։

Բարբառներում ֆ հոգնակերտը որոշակի դերքերում մեծ տարածում ունի. բաղաձայնահանգ հիմքի հետ հազվադեպ է գործվում (և այն էլ ոչ բոլոր բարբառներում). ախպէր—ախպէրք, քէր—քուէրք||քվէրք (Դրբ. բ.), տուճ՛իրք (Կաթավաթերդի բ., ՀՄ, Կաք. բ. 108—109), ծնողք (Արարատյան բ.) և այլն։ Հիմնականում գործածվում է երկվանկ-բազմավանկ ձայնավորահանգ հիմքերի հետ և այն էլ գրեթե բոլոր բարբառներում։ Ձայնավորահանգ հիմքին ֆ-ի ավելացմանը զուգընթաց նպակի համապատասխան ձևի վերջնահանգ ձայնավորը կարող է պահպանվել նույնությամբ կամ փոփոխվել. այսպես՝ ա>ա. սա հատկապես բնորոշ է Ագուլիսի բարբառին. գըղաք, չուխաք, սոանաք «սատա-

նաններ» (ՀԱ, ԼՔՀԼ, III, 737, 738). հմմտ. դղաք (Համշեն, Քաբուսիե, Նոր Նախիջևան, Պոլիս)։ Ձայնավորահանգի պահպանման նման դեպքեր համեմատաբար քիչ են արևելահայ բարբառներում։ Հնարավոր է նաև՝ ա(<ի)>ա. գ՛իղըցա (<եկեղեցի)>գ՛իղըցա՛ք (ԱՂ, ՀՆԲԽ, 97, Քաբ.), գ՛ինա (<գինի)>գ՛ինա՛ք (ՀԱ, ԼՔՀԼ, III, 768. Սվեդիա)։ Առկա է նաև ա(<ի)>է. գիղիցա (<եկեղեցի)>գիղիցէք, կիղացա (<գիւղացի)>կիղուցէք (ԱՂ, ՀԲ, 433, Սվեդիա), ինչպես և՝ օ(<ա)>ա. ղղօ(<տղա)>դղաք (ԱՂ, ՀԲ, 433, Սվեդիա)։ Ընդհանրապես շատ ավելի բնորոշ է ֆ-ից առաջ ա>է հերթագայությունը, որ առկա է Ղարաբաղի, Վանի, Նոր Ջուղայի, Արարատյան, Լոռու, Հադրութի, Սասունի, Շատախի, Շամախու, Կոզնեի, Կաքավաբերդի, Մեղրու, Կեսարիայի, Մշո, Թբիլիսիի, Առափաձի և այլ բարբառներում ու խոսվածքներում. առաջնային շարքի ձայնավորի, ընդ որում և է-ի դեպքում մի քանի բարբառներ ներկայանում են ֆ՛-ով. փէսա—փըսէք՛, ըրախա «երեխա»—ըրխէք՛ (Ղրբ. բ.), սըղանա—սըղանէք (Մշո բ.), էրէխա—էրէխէք (Արարատ. բ.), ակռա—ակռէք (Թբ. բ.) են։ Վերջնահանգի ի-ն սովորաբար ֆ-ից առաջ պահպանվում է։ Այս երևույթը առկա է գրեթե բոլոր բարբառներում (Պոլսի, Ն. Ջուղայի, Արարատյան. Ղարաբաղի, Թբիլիսիի, Սասունի, Մշո, Դերսիմի, պարսկահայոց և Աստրախանի, Մեղրու, Համշենի, Կաքավաբերդի, Լոռու, Կարճևանի, Ագուլիսի, Կարնո, Շատախի, Շամախու, Վանի, Առափաձի). ի-ից հետո, ինչպես և առհասարակ առաջնային շարքի ձայնավորներից հետո մի քանի բարբառներ ներկայանում են ֆ||ֆ՛-ով. այսպես՝ ծիլի «ածելի»—ծիլիֆ՛ (Ղրբ., Կաքավաբ.բ.), վուրթի—վուրթիֆ (ԳՍ, Պ, 30. Թբիլ. բ.), խնամի—խնամիֆ (Ն.-Ջուղա) են։ Այսպես և՝ ցի, ացի, էցի (ըցի, ՙացի), էլի հանգոնները. իշխնծօրցի—իշխնծօրցիֆ (ՎՊ, ՍԲ, 67), շաոբխացի—շաոբխացիֆ՛ (ՄՄ, ՇՔ, 86), կըռզէնցի—կըռզէնցիֆ (ՈՔ, ԿՔ, 88), գէղացի—գէղացիֆ (ԱԱ, ԿՔ, 65. ՀԺՀ, IX, 104, Ալաշկերտ, ՊՊ, ԵԺ, I, 60. ՀԱ, ԼՔՀԼ, III, 723), շը՛նացի—շը՛նացիֆ՛, հըթըրքէցի—հըթըրքէցիֆ՛ (Ղրբ. բ.),գ՛էղըցի—գ՛էղըցիֆ (ԱՂ, ՀԲ, 222. ՊՊ, ԵԺ, I, 144. Արարատյան բ.), ըրնէցի—ըրնէցիֆ (ՆՎ, ԳՍԲ, 66), հմմտ. նաև ուղէլիֆ (ԹԴ, ՄԲ, Ն, 247), ուտելիֆ (ՀԺՀ, IX, 235. Մանազկերտ. ԽԱ, ԵԺ, III, 86. Արարատյան բ.)։ Առանձին դեպքերում հնարավոր է ի>է փոփոխություն, սակայն վստահելի աղբյուր չունենք դրա համար։ Վերջնահանգ է-ն և նախնական ի-ից սերած է-ն պահպանվում են ֆ-ից առաջ. մարգարէ—մարգարէֆ (Ն.-Ջուղա). խընամէ(<խնամի)>խընամէֆ՛ (ԷԱ, ՄԲ, 111), էգ՛է(<այգի)>էգ՛էֆ (Կիլիկիա), հաւդուրթէցէ—հաւդուրթէցէֆ՛ (Հադրութի բ.), շի-

Նաց(<չինացի)>չինացէք՛ (Ղրդ. բ. ԱՂ, ՀԲ, 297)։ Վերջնահանգ այլ ձայնավորներից հնարավոր է՝ ու>ու. լիզու-ք (ԽԱ, ՕԼԺ, III, 2. Արարատ. բ., նաև՝ Ն.-Ջուղայում), օսմանլու-ք (ԷԱ, ՄԲ, Ն, 343), կատու-ք (Ագուլիս, պարսահայոց և Աստրախանի բ.). հագ-վադեպ՝ յու—յուֆ (ԱՂ, ՀԲ, 447, Քեսաբ)։ Ավելի բնորոշ է վ(<ու)-էֆ կաղապարը. լեզվ—լեզվէք՛ (Հադրութ), ոլթվ—ոլթվէք՛ (Ղրբ. բ., Հադրութի բ.), կատու—կատվէք (ՆՎ, ԳՍԲ, 66, Սյունյաց բ.), նաև՝ դիրացվէք (ՎՊ, ՍԲ, 33). Համմտ. տիրացվէր (Լոռի), տի՛րի՛ցվէք (Մեղրի)։ Այս երևույթի հետ կապված՝ հնարավոր է օ(<ու)>վ-էֆ՛. ճրճօ (<ճիճու)>ճուճվէք՛ (Ղրբ. բ., Հադրութ)։ Այստեղ վ-ն ու-ի փոխոխությունն է, իսկ է-ի առկայությունը խորհրդածություններին տեղիք է տալիս. արդյո՞ք այդ դեպքում ունենք էֆ հոգնակերտ. կատու>կատվ-էք։ Այսպես կարծելու համար այլ հիմքեր ևս կան։ Որոշ՝ եզակիում բաղաձայնահանդ բառերի հոգնակիում ևս ունենք էֆ, թեև, իհարկե, դրանք քիչ են հանդիպում. քաղօք (<քաղաք)>քախքէք (Կիլիկիա, ՀԱ, ԼՔՀԼ, III, 797), պըտօկ(<պտուկ)>պըտկէք՛, աման—ըմբնէք՛ (Ղրբ., Հադրութ). Համմտ. նաև՝ ըստէղ «այստեղ»—ըստէղէք՛, բը՛րչէմներ (<մրջիմն, մրջին)>բը՛րչէմնք՛ (Ղրբ. բ.)։ էֆ (էՙ) տարրի ճանաչումը իբրև հոգնակերտ միավոր՝ միտում է այդպիսին համարելու նաև ա>է անցումով զոյացած էֆ-ը. տեսա—փէսէֆ, որպիսի ըմբռնումը խորթ չէ բարբառագիտական հետազոտություններին։ Ֆ հոգնակերտը և ձայնավորական վերջնահանգով, երբեմնի բնակերտով նրա զարգացումները թեք հոլովաձևերում կարող են ներկայանալ նույնությամբ, կամ նրանց փոխարինում են այլ մասնիկներ (դիրքային կամ այլ տարբերակներ), օր. ուղղ.-հայց. ախպէրք, քրվէրք, սեռ.-տր. ախպօրց, քրվօրց. ուրեմն՝ ց. ուղղ.-հայց. փըսէ՛ք, խօխէք՛ «երեխաներ», սեռ.-տր. փըսօցը, խօցը. ուրեմն՝ օց (էֆ—օց). ուղղ.-հայց. սինիք՛, հիլիք՛ «հայելիներ», սեռ.-տրակառում՝ (սինուց(ը), հիլուց(ը). ուրեմն՝ ուց։ Սրանք Ղարաբաղի բարբառում։ Այլ բարբառներում՝ f—ոց (Ն.-Նախիջևանի բ.), f—ֆնոց, կամ էֆ—էֆոնց՝ ճամփէքոնց (Ն.-Ջուղա). Արարատյան բարբառում ավելի հաճախ՝ (է)fանց. տղեքանցով (ՊՊ, ԵԺ, I, 126), ուստեքանցից (Ն. տ. 228), երեխեքանց (ԽԱ, ՕԼԺ, I, 2), նաև՝ անց. երեխանց (ՊՊ, ԵԺ, I, 58, 80), այլ հոլովաձևերում՝ (է)f—(է)f. ճամփեքումը (Ն. տ. 96). f—ուց. խնամիf—խնամուցը (Ն. տ. 28). Լոռու խոսվածքում կարող է լինել օնց(ոնց)՝ տանցոնց. Պոլսի, Կարնո, բարբառներում՝ օց. գ՛ինիք—գ՛ինօց. գործիականում՝ f.գ՛ինիքով. դղաք—դղօց (Պոլիս). Հաճընի բարբառում՝ (ուէ)ց. օսգիք—օսգուէց, Նոր Ջուղայի բըր-

վրացէթոց, օմարէթոցով. այսինքն՝ (է)ոց (ՀԱ, ԼՔՀԼ, III, 835). ճամփէք—ճամփէքից (ԱՂ, ՀԲ, 256). Համմտ. ջամփրքէն (ԱՂ, ՀՆԲԽ, ն, 175). փէսէք—փէսէքից, կինիք—կինիքից, կատուք—կատուքից· ուրեմն՝ f—f (Ղզլարի գավառ., ըստ ՀԱ, ԼՔՀԼ, III, 689. Համմտ. ՀԱ, ՀԼՊ, II, 333՝ պարսկահայոց և Աստրախանի բարբառում· իսկ Ագուլիսի բարբառում ացի, ըցի հանգերի դեպքում՝ ա՛ց, ուց. դ՛ըա՛ցիք՛—դը՛դա՛ց, վանըցիք—վանըցուց·

Բարբառներում ևս առկա է f-ի ածանցական զարգացումը. օր. աշունք, կ՛արունք, աշխարք, յէրգ՛ինք՛, խելք (Ղրբ. բ.), խիլքկինք, բաժինք, նշանտէք (Թբ. բ.), դադարէք, թաղումէլէք, արինլվիք, նշանդրէք, տաշտադրէք, չրօրհնէք, ութօրէք (Աբաթատյան բ.յ. f>ի անցումով (ապաշինիզացումով)՝ կօխի, միշկ, պարտկ, լվասկ, թխվասկ, աղուտկ (Ղրբ. բ.), օտկ (Մալաթիա), վոտկեր (Վան), աշկ (Հադրութ, Ղրբ.) են· Որոշ բարբառներում ձևաբանական վերակազմավորումով նաև հզակի գործիականի վերջավորության տարբ. օր. ձեռքօք, խոսէլօք (Արաբկիրի բ. ՀԱ, ՀԼՊ, II, 348). ծեռուք «ձեռքով» (Ղրբ. բ.) են·

Հանդիպում է նաև արևմտահայ գրական աշխարհաբարի հնատիպ՝ դրաբարատիպ կազմավորումներում. հատկապես ի (ցի. ացի) հանգող հիմքերի հետ է զուգորդվում, իսկ գրական լեզվի ավելի վաղ շրջանում դիրքային որոշակի սահմանափակում չունի· Այսպես՝ թաղեցիք (ՏԿ, ՎԱ, 35), որդիք (ն. տ. 65), տնեցիք (ն. տ. 319), Ահմավենիք աներեր շատրվաններ են կարծես (ՎԲ, ե, 60). աստեղ կիռուին (ն. տ. 48). գեղին մեջ շատ մր տղաք իր նուենն ինկած էին գիշեր ցորեկ (ԳՋ, եժ, I, 7), ուր փեսեն զատ անոր ծնողքը կային (ն. տ. 8), մանկունք, պատանիք երգելը մոռցան (ՎԲ, ե, 259), նախարարք, իշխանք, բանավորք և ժողովուրդք մեր Սասնո լեռն ի վեր կնային (Ծ, ե, 229)· Թեք հոլովաձևերում՝ g(ag, ng). կարող է f-ն պահպանվել (Հազվադեպ). ծնողքին (ԳՋ, եժ, I, 127), ծնողքեն (ՏԿ, ՎԱ, 54). Հայցականում նույնպես՝ f: Հնարավոր է ներ-ի ներքթափանցում. կարնեցիք—կարնեցոց—կարնեցիներն (Համմտ. ՀԱ, ԼՔՀԼ, III, 850)· Իր ուրույն ֆունկցիան (ինչպես միջին գրական հայերենում և բարբառներում) պահպանում է ելի հանգող հիմքերի հետ. ըննելիք խոստովանություն (ՏԿ, ՎԱ, 58), մարվելիք պարտքեր (ն. տ. 62), խոսելիք ունենալու համար (ն. տ. 63), վատնելիք դրամն (ն. տ. 72). իրագործելիք... խորհուրդներ (ն. տ. 73), շինվելիք շրջագիստ (ն. տ. 77), սովորելիք... բան (ն. տ. 85), կարգադրելիք բան (ն. տ. 97),

տեսնելիք օրերդ (117), փայլելիք բոցին հաշվին (ՎԲ, ե, 319) ապրելիք տարիներու (ԳՄ, ԾՅԱ, 24)։ Ահա է նաև ածանցական արգացում. կյանք, կուրծք, դեմք, վազք, վերք, ցոլք, խորք, վեյելք, բարիք, անցք, հենք, գիրք, տեսիլք, աչք, մեջք, նշանառիք. հիմքային տարրերի հետ վերակազմավորված վիճակում՝ իմ. նախատինքներով (ԳՋ, եժ, I, 15. հմմտ. Դվ, Բ, 83), ուխ. շրթունքներով (ՄՊ, Տ, 65), ափունքներ (ՄՄ, եժ, 103) և այլն. մասամբ նաև գործիականի վերջավորության տարր՝ of||nf (հմմտ. ԱԱ, ՔՔ, 13). աճապարանոք (ՏԿ, ՎԱ, 56), ծաղրանոք (ն. տ. 64), անձկանոք (122), մտոք (124), ընտանյոք (ն. տ.), աղերսանոք (206). բայց սա ածանցականացող տարր է, բստ էության հնաբանության։

Ք-ն արևելահայ գրական լեզվում պահպանված է իբրև ածանցական տարր, ներկայանում է բաղադրյալ հոգնակերտների (հազվադեպ) կամ բաղադրյալ ածանցների կազմում. նույնությամբ, իբրև հոգնակերտ, գործածվում է որպես հնաբանություն՝ «գրաբարի հոգնակի կազմող «ք» հնչյունը շատ բառերի վերջում արդեն այլևս գրեթե չենք ըմբռնում իր հին նշանակությամբ, այլ լոկ իբրև ածանցական մասնիկ, որով կազմվում են շատ բառեր» (ՄԱ, ՀՀՏ, 234)։ Անցյալ դարի 50—60-ական թվականներին որպես հոգնակերտ նկատելիորեն գործածական էր հատկապես ություն հանգող հիմքերի հետ (հմմտ. ՀԱ, ՀՀՊ, II, 539. ՍԳ, ԱԱՊ, 12, 67—68. ԱՄ, ՆԼԳ, 186. ՎԱ, ՀՇ, II, 199)։

Ինչպես վերը նշեցինք, եռգրաբարյան հայերենում աստիճանաբար նեղանում է f հոգնակերտի գործածության ոլորտը։ Դրան զուգահեռ ընդհանրանում ու ծավալվում է այլ հոգնակերտների (հիմնականում՝ եր, ներ) գործածությունը։ Այդ պրոցեսը ուրույն մեկնաբանություն է ստացել հայերենագիտական գրականության մեջ։ Ահա թե ինչպիսի բացատրություն ենք գտնում պրոֆ. է. Բ. Ադայանի մոտ։

Հայտնի է, որ f–ն ամենատարածված հոգնակերտն էր հին գրական հայերենում, նրան զուգընթաց սակավ գործածությամբ կային նաև –եար, –ենի||անի և այլ հոգնակերտ մասնիկներ։ Ժամանակի ընթացքում f մասնիկը, հոգնակերտ լինելով հանդերձ, դառնում է նաև գոյականակերտ, կազմելով այնպիսի գոյականներ, ինչպես՝ հուmf, հաճf և այլն, որոնք թեև նախապես հոգնակի ձևեր են եղել, բայց հետագայում աստիճանաբար զրկվել են հոգնակի իմաստից և գիտակցվել իբրև եզակի թվով գոյականներ։ Այս բանին անշուշտ զարկ են տվել առանձնապես աննզական

բառերը, ինչպես երկաթ, յանցանք և այլն, որոնք գրաբարում անդամ գիտակցվում էին իբրև եզակի և կարող էին գործածվել մի թվական որոշիչի հետ, օր. «երկու աղայեն ի մի երկանս» «վասն միոյ յանցանացս»։ Հենց այն հանգամանքը, որ f մասնիկը աստիճանաբար գիտակցվում է իբրև գոյականակերտ, տեղիք է տալիս նրա հոգնակիացնող իմաստի մթագնման, եթե մի ժամանակ աչք, ոտք, ձեռք, բերք, տեսք և այլ բազմաթիվ բառեր այդ ձևով հոգնակի էին, ապա ժամանակի ընթացքում գիտակցվում են սոսկ որպես գոյականներ՝ եզակի թվով, որ և բնականաբար շփոթություն է առաջ բերում հոգնակիի կազմության մեջ. մի շարք բառեր f վերջավորությամբ հոգնակի են, իսկ մի շարք բառեր էլ՝ եզակի։ Անհրաժեշտություն է ստեղծվում այդ շփոթությունը վերացնելու, մանավանդ, որ f մասնիկը իր նոր ֆունկցիայով աստիճանաբար՝ շատ ավելի մեծ կիրառություն է ստանում։ Եվ ահա լեզվի մեջ զուգահեռաբար սկսում են գործածվել հոգնակի նոր ձևեր։ Այն մասնիկները, որոնք 5—8-րդ դարերում խիստ սահմանափակ գործածություն ունեին, հետագայում, աստիճանաբար տարածվում են, և միջին հայերենում առավել գործածական են դառնում նի, նր, վի(ոի), ստան են։ Իսկ f-ի կիրառությունը սահմանափակվում է միայն ձայնավորահնդ բառերով։ Սակայն այս բազմամասնիկայնությունը հետագա հայերենում փոխարինվում է նր, ներ հոգնակերտների ընդհանրացումով և տարածումով։ Իսկ բարբառներում ընտրությունը տարբեր ընթացք է ստանում, բայց ընդհանրացման պրոցեսը նրանց էլ է ընդգրկում։ Եվ այսպես, նոր գրական հայերենում f մասնիկի գործածության շրջանակները խիստ նեղանում են, ընդհակառակն, եր, ներ հոգնակերտները հաստատվում են՝ ընդգրկելով հոգնակի կազմող բառերի գերակշիռ մասը (տե՛ս ԷԱ, ԼՆ, 493—494)։

Վերը կատարված բնութագրություններից հետևում է, որ f հոգնակերտը արևելահայ գրական լեզվում իր ֆունկցիոնալ (իմաստային) արժեքով գրեթե լիովին չի պահպանվել. ձայնավորահանգ բառերից՝ նա, իբրև հնաբանություն, մասամբ երևում է միայն ի (եցի, ացի, ցի) հանդող հիմքերի հետ. գյուղացիք, որդիք, սարեցիք։ Քեք հոլովաձևերում նա բացառված է։ Եթե գրաբարում բանիմ—բանս հակադրությունից պարզ երևում է, որ Ø-ն հոգնակերտ-հոլովակերտ է, ապա որդիմ—որդոց, սարեցիմ—սարեցոց հակադրությունից այդ այնքան էլ պարզ չի երևում։ Այս հոգնակերտի նոր գրական հայերենում նաև հավաքական-անեզական կերտող բաղադրյալ մասնիկների (ամ, եմ, ոմ, ումն) տարր

է, կամ հանդես է գալիս բաղադրյալ ածանցների կազմում։ Այսպես՝ f (ածանց). ոտք, խելք, փառք, գիրք, տեսիլք, տարիք, հավք, ձեռք, աչք, միտք, ուշք, կուրծք, ունք, ծախք, չանք, ելք. մուտք, բերք, անցք, հնք, ցանք, ցուլք, խոսք, խնամք, սլացք, լվացք, արժանիք, լայնք, խորք, արվ՝ գործարք, ուիմ՝ ակունք. ուլունք, մուիմ՝ ցուցմունք, իչ՝ խմիչք, վածմ՝ այրվածք, իճմ՝ դաշինք, չնմ (<չեայ-ք)՝ հավաաչէք, ուճիմ՝ արքունիք, ուտմ՝ թավուտք, իմ՝ արգասիք, աճմ՝ տականք, աշխատանք, ույմ՝ գահույք, պիտույք, հաճույք, դրույք, ուցմ՝ մոլուցք, ուտուցք, այրուցք, ուվ՝ քամուք, կոտրուք, մանրուք, քսուք, եմ‖նճմ (<եայ-ք)՝ չրօրհնեք, ութօրեք, նշանդրեք, ոնմ՝ զարթոնք, ոմ՝ կամք, իրք, խղճի մտոք, առք-փառք։ Իհարկե, բազմաթիվ ածանցավոր գոյականներ, հետևապես բազմաթիվ լեքսիկական իմաստներ, այսօր գոյություն ունեն շնորհիվ հնում f-ով կատարված անցումների։ Այժմ կան բառեր, որոնք միայն այդ մասնիկով են գործածվում, նրանով են «բառայնացած». օր. կամք, կառք, փառք, ծախք, աղոթք, խոսք են։ Ք-ն պարզ տեսքով կամ բաղադրյալ մասնիկների կազմում գոնվելով երևում է նաև դերանվանական ու բայական կառուցաձևերում. օր. մերոնք (դերանվանական գոյական), ոմանք, նրանք, սրանք, ովքեր, ամենքը, իրենք, մենք. օժանդակ բայերի հոգնակիում՝ ենք, եք, բայական այլ ձևերում՝ բերեցինք, գրեցեք, դնանք են։

ՔԱՆԻ.—*Հազվադեպ գործածությամբ հանդիպում է Նոր Ջուղայի բարբառում. բաղադրյալ (դույզ)՝ f-անի զարգացումով հավաքականակերտ. գուլբեքանի. գործածվում է* fանիֆ-ին *զուգահեռ (Համմտ. ՀԱ, ԼՔՀԼ, III, 736)։*

ՔԱՆԻՔ.—*Հազվադեպ գործածությամբ՝ Նոր Ջուղայի բարբառում բաղադրյալ՝ f-անի-f>fանիֆ զարգացումով հավաքականակերտ. գուլբեքանիք։ Համմտ.* fանի։

ՔԱՆՑ.—*տե՛ս* ԷՔԱՆՑ։

ՔԱՏԻՔ՛.—*Հազվադեպ գործածությամբ՝ Ագուլիսի բարբառում. բաղադրյալ՝ f-ատիֆ՛>fատիֆ՛ զարգացումով մասնիկ. իզնըքատիք՛ «ձեզներ»։*

ՔԴԻՐ‖Ք՛ԴԻՐ.—*Հազվադեպ գործածությամբ՝ Ոզմիի խոսվածքում. բաղադրյալ՝ f-դիր>fդիր զարգացումով մասնիկ. տրղէյքդիր «տղաներ» (ԱՂ, ՀՔ, 138)։*

Ք՛ԵՐ‖Ք՛ԷՐ.—*Բաղադրյալ՝ f-եր>f՛եր զարգացումով մասնիկ. հանդիպում է Ուրմիայի, Շատախի, Լոռու բարբառներում. գուգորդվում է երկվանկ-բազմավանկ բաղաձայնահանգ հիմքերին*

(Շատախի բարբառում՝ բացի կ, ք՛, գ՛, և վերջնահանգ հնչյուն ունեցողներից). ականջք՛եր (Շատախ), կարասք՛էր (Ուրմիա). հիմքավերջի և ի՛էր-ի միջև երբեմն ներմուծվում է անցումային ը հնչյուն. աման—ամանը՛ք՛էր, տիրացու—տիրացվը՛ք՛էր (Լոռի). կարող է հանդես գալ իբրև ստացական հոգնակիակազմության տարր. տընըք՛էրս «տուններս», փորըք՛էրը «փորները», սըռտըք՛էրը «սիրտները» (Ուրմիա). Ք՛եր կամ ի՛էր տառադարձություններ արտասանական երանգներով է պայմանավորված։

ՔԵՐՔ||ՔԷՐՔ.—Բաղադրյալ՝ f–եր–f>f–երf>fերf զարգացումով մասնիկ. հանդիպում է արևելահայ դրական աշխարհաբարի կազմավորման շրջանում և Արարատյան բարբառում. մարդքերը՝ Թեք հոլովաձևերում՝ fերանց։

ՔԷՐԱՆՑ (կամ (Ք)–ԵՐԱՆՑ).—Իf (<իկ), fէրf հոգնակերտների հարացուցային տարբերակ՝ սեռ.-տրականում և նրանից կազմված ձևերում. հազվադեպ գործածությամբ հանդիպում է, օրինակ, Արարատյան բարբառում. մարդքերանց (ԽԱ, ՆԼԺ, III, 127), տղամարդքերանց (Ն. տ. 38)։ Հմմտ. կէրանց։

ՔԻՐ.—Բաղադրյալ՝ f–իր>fիր զարգացումով մասնիկ Մարաղայի բարբառում. գուգորդվում է երկվանկ-բազմավանկ բառաձայնահանգ հիմքերի հետ. գ՛ամէշ—գ՛ամէշքիր (հմմտ. ՀԱ, ԼՔՀԼ, III, 750)։

ՔՀՏԵՐ.—Հազվադեպ գործածությամբ՝ Վանի բարբառում (րստ ՀԱ, ԼՔՀԼ, III, 830)։

ՔՆԵՐ.—Բաղադրյալ՝ f–ներ>fներ զարգացումով մասնիկ. հանդիպում է միջին գրական հայերենի ոչ-համակարգային կազմավորումներում. տղաքներ (ԱԱ, ԱԱ, 70, 361, 197). հմմտ. կներ· Քներ կամ fնէր զարգացումով հանդիպում է որոշ բարբառներում. էրէխէքնէր (Արար. բ.), մատանըքնէր (Ն.-Ջուղա), օդնքներ (ՀԺՀ, IX, 318, Մանազկերտ), օսկիքներ (Ն. տ., Բաղեշ), քիսեքներու մեջ (Ն. տ. 169. Ալաշկերտ)։

Գրական աշխարհաբարում հանդիպում է իբրև բարբառային ներթափանցում. տղաքներին (Ծ, ե, 95), տղաքներ (ՀՊ, եժ, VI, 18, 47. հմմտ. վԹ, ե, 327. ՀԱ, ՀԼՊ, II, 556). ծնողքներ (ԴՎ, Բ, 40. «Բազմ.», 1843, 25)։ Հմմտ. նաև կենդանիքներ («Արար.», 1858, № 6), ծնողքներին (Ր, եժ, 1, 504), մատնիքներին (Ն. տ. 441), դոլորշիքներ, կաղնիքներ («Մեղու Հայ.», 1858, № 2), հոգիքներ (Ն. տ. 3), ակռնքներ (Ն. տ.), թռչունքներից (Ն. տ. № 36), ջորիքներ (Ն. տ. 1859, № 3), մեքենայքներ, առուքներ (Ն. տ. 1858, № 6)։

ՔՆԻՐ.—*Քեներ-ի հնչյունական տարաձում Թրիլիսիի բարբառում. ակոքնիրտ (ՄՆ, Խժ, 34, 35). Համմտ. ակռէքտ (նմ. տ. 7)։*

Ք՛ՏԵՐ.—*Բաղադրյալ՝ f-տի-եր>f՛տեր զարգացումով հոգնակերտ մասնիկ, սովորաբար ավելանում է և հանգն ունեցող հիմքերին (երկվանկ-բազմավանկ). պէրձն—պէրանք՛տեր (Շատախ. ՄՄ, ՇԲ, 86), պերընք՛տեր (Վան)։*

ՔՍ.—*Ք և ս հոգնակերտների ձևաբանական սերտաձում. հազվադեպ գործածությամբ հանդիպում է դեռևս միջինհայերենյան աղբյուրներում՝ իբրև հավաքականակերտ կամ ածանցական (բառակազմական) տարր. սերկևիլին ֆամուսն յիրար խառնես (ԱՍ, ՕԲ, 67, Համմտ. նաև էջք՝ 209, 321. ԱՍ, ԱՍ, 54, 248), Մարութի ֆամուսն (ՄՀ, ՋՄ, 43), պատղպատին գխատուսն (ԱՍ, ԱՍ, 246). ներբսն (ԱՍ, ՕԲ, 52), որպիսի ձև կա նաև բարբառներում։ Համմտ. նոր գրական հայերենում՝ ցանգս. սրա հոգնակին՝ ցանքսեր (ՍՀ, Խժ, IV, 190)։ Համմտ. շննքսեր (ՀԺՀ, II, 195)։*

ՕՆԱՑ.—*Օնէ՛, օնիվ՛ մասնիկների հարացուցային տարբերակ սեռ.-տրականում և նրանից կազմված ձևերում։*

ՕՆԷՔ՛.—*Հազվադեպ գործածությամբ՝ Ղարաբաղի բարբառի որոշ խոսվածքներում. հրգբրօնէնք՛ «ընկերներ» (ըստ ԱՂ, ՀԲ, 296)։*

ՕՆԷՔ՛.—*Հազվադեպ գործածությամբ՝ Մեղրու բարբառում. ղըղէցէ (<եկեղեցի)>գըղըցօնէք՛ (ԷԱ, ՄԲ, 121). թեք հոլովաձևերում՝ օնաց. գըղըցօնաց։*

ՕՆԻՔ՛.—*Հազվադեպ գործածությամբ՝ Կարճևանի բարբառում. ծրէա—ծրտօ՛նիք՛ «ծառեր» (ՀԴՄ, ԿԲ, 80), հընգրրօնիք՛ «ընկերներ» (նմ. տ. 82). թեք հոլովաձևերում՝ օնաց (ՀԴՄ, ԿԲ, Ն, 249)։*

ՕՆԻՒՔ՛.—*Հազվադեպ գործածությամբ՝ Կարճևանի բարբառում. ժովորաբար օնիվ՛-ին զուգահեռ. հընգրրօնուք՛ (ՀԴՄ, ԿԲ, 82)։*

ՕՆՑ, *տե՛ս* **ՈՆՑ**:

ՕՆՔ, *տե՛ս* **ՈՆՔ**:

ՕՌ.—*Ար-ի դիրքային տարբերակ թեք հոլովաձևերում։*

ՕՏ, *տե՛ս* **ՈՏ**:

ՕՏԱՆ.—*Հազվադեպ գործածությամբ Մեղրու բարբառում. մրտրկօտան «առուներ» (ԷԱ, ՄԲ, 121)։*

ՕՏԱՆՑ.—*Օտանի, օտէնի՛ մասնիկների հարացուցային տարբերակ սեռ.-տրականում և նրանից կազմված ձևերում։*

ՕՏԱՆՔ.—*Հազվադեպ գործածությամբ՝ Ղարաբաղի և Սյունյաց բարբառներում. դընօտանք «Հորթեր». գործածվում է և*

օտէնք՛-ին զուգահեռ թեք հոլովաձևերում՝ օտանց. դրնօտանց։

ՕՏԱՑ.—*Օտէք՛ մասնիկի հարացուցային տարբերակ սեռ.-տրականում և նրանից կազմված ձևերում։*

ՕՏԱՔ.—*Օտանք մասնիկի հնչյունական տարաճում. հազվադեպ գործածությամբ՝ կաքավարերդի բարբառում. կովօտաք «կաուններ»։*

ՕՏԷՆՔ՛.—*Օտանք մասնիկի հնչյունական տարաճում Ղարաբաղի բարբառում. երբեմն գործածվում է նրան զուգահեռ. հր՝լը՝վրօտէնք՛ «ալևորներ», փրսօտէնք՛ «փեսաներ», դրնօտէնք՛ «հորթեր», մրդլօտէնք՛ «մեռելներ», հր՝րը՝նչօտէնք՛ «երինջներ», կ՛ը՝մրշօտէնք՛ «գոմեշներ», բրլդրրօտէնք՛ «ազդրեր», գ՛ը՝դրկօտէնք՛ «որոշ տարիքի հորթեր», խրնըմօտէնք՛ «խնամիներ»։ Համմտ. ըմրնօտէնք՛, տրնձօտէնք՛ (Ղրդ. բ. ըստ ԱՂ, ՀԲ, 295)։ Թեք հոլովաձևերում՝ օտանց. մրդլօտանց։*

ՕՏԷՔ՛.—*Օտիմ, օտէնք՛ մասնիկների հնչյունական տարաճում, հանդիպում է Մեղրու, Հադրութի բարբառներում. Ղարաբաղի բարբառում սա խոսվածքային տարբերակ է. ըսկրօտէք՛ «ոսկորներ» (ԷԱ, ՄԲ, 121), փրսօտէք՛ «փեսաներ» (ԱՊ, ՀԲ, 88) թեք հոլովաձևերում՝ օտանց. ըսկրօտանց։*

ՕՏԻՆՔ՛.—*Հազվադեպ գործածությամբ՝ Ղարաբաղի բարբառի որոշ խոսվածքներում. օտէնք՛-ի հնչյունական տարաճում. դրնօտինք՛, փրսօտինք՛ (ԿԴ, ԼՂԲՔ, 92)։*

ՕՏԻՔ՛.—*Օտիմ՛, օտէնք՛ մասնիկների հնչյունական տարաճում Մեղրու, Կաքավաբերդի, Ագուլիսի բարբառներում. խրնըմօտիք՛ (Ագուլիս, տե՛ս ԱՂ, ՀԲ, 245), փրսօտիք՛ (Կաքավաբերդ)։*

ՕՐ.—*Ար մասնիկի դիրքային տարբերակ թեք հոլովաձևերում։*

ՕՐԱՅՔ, *տե՛ս* **ՈՐԱՅՔ**։

ՕՐԱՆՔ.—*Բաղադրյալ՝ օր-անք զարգացումով հոգնակերտ (օր-ը եր հոգնակերտի երբեմնի հնչյունական տարաճումն է, այժմ իր ֆունկցիան կորցրած). հանդիպում է որոշ բարբառների, խոսվածքների ոչ-համակարգային կառուցվածքներում. տրղօրանք (Ղրբ. բ.), բ՛ըրղօրանք (Առտիալ, միայն այդ բառում). համմտ. ըստղօրանք, ընդիօրանք (Լոռի)։*

ՕՐԷՔ.—*Որեմ մասնիկի այլագրություն, հանդիպում է կիլիկյան հայերենում (ըստ ՀԱ, ԼՔՀԼ, III, 829)։*

ՕՑ, *տե՛ս* **ՈՑ**։

ՕՔ.—*Նոահանգիստ բաղադրության սերտաճում. գլաբարի գործիականում՝ ա-ւ-ք, որից էլ՝ օ՛. հազվադեպ գործածությամբ հան-*

դիպում է միջինհայերենյան աղբյուրներում և վաղ գրական աշխարհաբարում. մրգանք—մրգանօք (ԱԱ, 08, 119)։ Համմտ. nf։

ՖՐՆԵՐ.—Բազադրյալ՝ ֆի-ներ>ֆրներ զարգացումով մասնիկ. հանդիպում է Սուչավայի բարբառում. օնֆրներ. Համմտ. ալֆրները (ՀԱ, ՔՒռՔ, ն, 223)։

ՖԻ.—Վի մասնիկի հնչյունական տարաձում՝ Սուչավայի բարբառում։ Հ. Աճառյանը, իբրև օրինակ, բերում է օնֆի (<օնք <յօնք) ձևը։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱԼԻ[31]

ԱԱ, ԱԱ.—Ամբրոսվլաթ Ամասիացի, Անգիտաց անպէտ, Վիեննա. 1927.

ԱԱ, ԳՋ.—Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1964.

ԱԱ, ՔՔ.—Ա, Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայիբէն լեզուի, Վիեննա, 1866.

ԱԱ, ՕԲ.—Ամիրտովլաթ Ամասիացի, Օգուտ բժշկութեան, Երևան, 1940.

ԱԳ, ՀԲԳ.—Ա. Վ. Գրիգորյան, Հայ բարբառագիտության դասընթաց, Երևան, 1957.

ԱՂ, ՀԲ.—Ակր. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953.

ԱՂ, ՀԼՊՈՒՆ.—Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Երևան, 1937.

ԱՂ, ՀՀՆՄ.—Ա. Ղարիբյան, Հայերենի հոգնակի նշանակող մասնիկները և նրանց լեզվաբանական արժեքը («ՀՍ�compact կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատություններ», հ. I, Երևան, 1935).

ԱՂ, ՀՆԲՆ.—Ա. Ս. Ղարիբյան, Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, Երևան, 1958.

ԱՄ, Բ.—Աւգերեանց Մկրտիչ, Բանաստեղծութիւն չորս եղբերնուս վրա, Վենետիկ, 1810.

ԱՄ, ՆԼԳ.—Ալ. Մարգարյան, Մ. Նալբանդյանի լեզվագիտական գործունեությունը, Երևան, 1957.

ԱՊ, ՀԲ.—Ա. Մ. Պողոսյան, Հագրուքի բարբառը, Երևան, 1965.

ԱՎՔ, ՀԼԴ.—Ս. Գ. Աբրահամեան, Բ. Յ. Վերդեան, Վ. Ա. Քոսեան,

---

[31] *Բարբառագիտական հետազոտությունների մեծ մասի համառոտագրությունները երկու ձևով են. եթե հեղինակի և գրքի անվան համառոտագրությունը հաջորդում է ն, ապա սա նշանակում է «նմուշներ». օր. ԷԱ, ՄԲ և ԷԱ, ՄԲ, ն. երկրորդ համառոտագրությունը նշանակում է՝ է.Բ. Ագայան, Մեղրու բարբառ, նմուշներ*

Հայերէն լեզուի դասագիրք, Երևան, 1966.
ԳԱԻՏ.—Գրիգորիս Աղթամարցին և իւր տաղերը, Րիֆլիս, 1898.
ԳԱ, ՈՒՏ.—Գրիգորիս Աղթամարցի (ուսումն. Մ. Ավդալբեկյանի, Տաղեր), Երևան, 1963.
ԳԱ, ՔՀ.—Գաբրիէլ Աւետիքեան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815.
ԳՋ, ՆԺ.—Գրիգոր Ջոհրապ, երկերի ժողովածու, հ. I, Երևան, 1962.
ԳՂ, ՀԼՊ.—Գ. Ա. Ղափանցյան. Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Երևան, 1961.
ԳՋ, ԺՀՀՀ.—Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Երևան, 1967.
ԳՋ, ՀՀՀՍ.—Գ. Ջահուկյան, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Երևան, 1959.
ԳՍ, Ըն.—Գ. Սունդուկյան, Ընտիր երկեր, Երևան, 1958.
ԳՍ, ԺՀԼԴ.—Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955.
ԳՍ, ՇՅԱ.—Գ. Սևակ, Շիծեռնակները ցածեն անցան, Երևան, 1964.
ԳՍ, Պ.—Գ. Սունդուկյան, Պեպո, Երևան, 1938.
Գ, ՔԲՄ.—Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց, Երևան, 1962.
ՊՎՀ (I—III).—Դիվան հայ վիմագրության, պ. I, Երևան, 1966, պ. II, Երևան, 1960, պ. III, Երևան, 1967.
ԴՎ, Բ.—Դանիել Վարուժան, Բանաստեղծություններ, Երևան, 1955.
ԵԿՊ.—Եղիա Կարնեցու դիվանը, Երևան, 1968.
ԵՉ, Ըն.—Եղիշե Չարենց, Ընտիր երկեր, Երևան, 1954.
ՋԱՕ.—Զաքարիա Ագուլեցի, Օրագրություն, Երևան, 1938.
ԷԱ, ԺՀՀԽ.—Է. Բ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967.
ԷԱ, ԼՆ.—Է. Բ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967.
ԷԱ, ՄԲ.—Էդ. Աղայան, Մեղրու բարբառը, Երևան, 1954.
ԷՀՄԳԱ.—Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից, Երևան, 1957.
ԹԴ, ՄԲ.—Թ. Դանիելյան, Մալաթիայի բարբառը, Երևան, 1967.
ԼՇ, Ըն.—Լ. Շանթ, Ընտիր երկեր, Երևան, 1968.
ԽԱ, ԵԼԺ (III, V).—Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. III, Երևան, 1948, հ. V, Երևան, 1950.

Խկ, Հխե.—Խ. Կանայան, Համաձայնություններ ու խնդրառություններ ըստ եղիշեի (Հայկ. պետ. հնռակա մանկ. ինստիտուտի «Տեղեկագիր», 1963, № 2)։
Խկ, ՈՒԲ.—Խաչատուր Կնշառեցի (ուսումն. Մ. Թ. Ավդալբեկյանի, Բնագրեր), Երևան, 1958.
Ծ. ե.—Ծերենց, Երկեր, Երևան, 1968.
Կի, ԼՂԲՔ.—Կ. Ս. Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966.
Կն, Տ.—Կոնստանդին երզնկացի, Տաղեր, Երևան, 1962.
ԿՂ, ՀՎԱ.—Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948.
ԿՂ, ՍՎԱ.—Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957.
ՀԱ, ԱԲ.—Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (I—VII), Երևան, 1926—1935.
ՀԱ, ԼՔՀԼ.—Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Երևան, 1957.
ՀԱ, ՀԼՊ (I—II).—Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մ. I, Երևան, 1940, մ. II, Երևան, 1951.
ՀԱ, ՔԱԲ.—Հ. Աճառյան, Քննություն Ագուլիսի բարբառի, Երևան, 1935.
ՀԱ, ՔԱռԲ.—Հ. Աճառյան, Քննություն Առտիալի բարբառի, Երևան, 1953.
ՀԱ, ՔՀԲ.—Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Երևան, 1947.
ՀԱ, ՔՆՋԲ.—Հ. Աճառյան, Քննություն Նոր Ջուղայի բարբառի, Երևան, 1940.
ՀԱ, ՔՊԲ.—Հ. Աճառյան, Քննություն պոլսահայ բարբառի, Երևան, 1941.
ՀԱ, ՔՎԲ.—Հ. Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Երևան, 1953.
ՀԳ, ՀԲ.—Հ. Գասպարյան, Հաչընի բարբառը, Երևան, 1966.
ՀԻՄ, Կաք. Բ.—Հ. Դ. Մուրադյան, Կաքավաբերդի բարբառը, Երևան, 1967.
ՀԻՄ, ԿԲ.—Հ. Դ. Մուրադյան, Կարճևանի բարբառը, Երևան, 1960.
Հե, ՈՒԲ.—Հովհաննես երզնկացի (ուսումն. Ա. Սրապյանի, Բնագրեր), Երևան, 1958.
ՀԹ, ԳԿ.—Հ. Թլկատինցի, Գյուղին կյանքը, Երևան, 1966.
ՀԹ, Տ.—Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, Երևան, 1960.

ՀԺՀ (II, IX).—Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. II, Երևան, 1959, հ. IX, Երևան, 1968.
ՀՄԺԵ.—Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր (կազմ. Աս. Մնացականյան), Երևան, 1956.
ՀՄ, ԿԲ.—Հ. Մկրտչյան, Կարնո բարբառը, Երևան, 1952.
ՀՊ, ԵԺ (III, VI).—Հ. Պարոնյան, Երկերի ժողովածու, հ. III, Երևան, 1964, հ. VI, Երևան, 1968.
ՀՊ. ՀԴԼ.—Հ. Պեդերսըն, Հայերէն և դրացի լեզուները, Վիեննա, 1907.
ՂԻ, Դ.—Ղուկաս Ինճիճեան, Դարապատում, հ. VI, 1826.
ՂՅ, ՀՆՈՎ, Ք.—Ղ. Յովնաննեան, Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ, Քաղուածք, Վիեննա, 1897.
ՂՊ, ՀԼՈՒ.—Ա. Ղարիբյան, Գ. Պարիս, Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետադրության ուղեցույց, Երևան, 1957.
ՄԱ, ԱԲՀ.—Մ. Ե. Աստարյան, Անեզական բառերը հայերենում («Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1960, № 3):
ՄԱ, ԼԼ.—Մ. Աստարյան, Լոռու խոսվածքը, Երևան, 1968.
ՄԱ, ՀԼՏ.—Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965.
ՄԱ, ՈՒԽԲ.—Մ. Ե. Աստարյան, Ուրմիայի (Խոյի) բարբառը, Երևան, 1962.
ՄԺ.—Մանր ժամանակագրություններ (XIII—XVIII դդ.), հ. I, (կազմ. Վ. Ա. Հակոբյան), Երևան, 1951.
ՄՀ, ՋՄ.—Մխիթար Հերացի, Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832.
ՄՂ, ՈՒԲ.—Մարտիրոս Ղրիմեցի (ուսումն. Ա. Ա. Մարտիրոսյանի, Բնագրեր), Երևան, 1958.
ՄՄ, ԵԺ.—Միսաք Մեծարենց, Երկերի ժողովածու, Երևան, 1956.
ՄՄ, ԸՆ.—Մ. Մկրյան, XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն, Ընտիր նմուշներ, Երևան, 1938.
ՄՄ, ՇԲ.—Մ. Հ. Մուրադյան, Շատախի բարբառը, Երևան, 1962.
ՄՆ, ԵԼԺ (II).—Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. II, Երևան, 1947.
ՄՆ, ՈՒԲ.—Մկրտիչ Նաղաշ (ուսումնասիրություն և բնագրեր), Երևան, 1965.
ՄՊ, Տ.—Մ. Պեշիկթաշլյան, Տաղեր, Երևան, 1961.
ՆՄ, ԺԱՎ.—Ն. Մառ, Ժողովածոյք առակաց Վարդանայ (H. Марр, Сборники притч Вардана, ч. II, III, СПб, 1899 (XII—XIII դդ.)
ՆՇ, ԲՋ.—Ն. Շնորհալի, Բանք չափաւ, Վենետիկ, ՌՄՀԹ.
ՆՎ, ԳՍԲ.—Ն. Վարդապետյան, Գոյականը Սյունյաց բարբառում

(Հայկ. պետ. հեռակա մանկ. ինստիտուտի «Տեղեկագիր», Երևան, 1962, № 1).
ՆՔ, ՀԿ.—Նահապետ Քուչակ, Հայրենի կարգավ, Երևան, 1957.
Շ, ԵԺ.—Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հ. X, Երևան, 1962.
ՊԴ, Ս.—Պետրոս Դուրյան, Երկեր, Երևան, 1947.
ՊՇԲ.—Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ, Էջմիածին, 1921.
ՊՊ, ԵԺ.—Պերճ Պռոշյան, Երկերի ժողովածու, հ. I, Երևան, 1953.
ՌԲ, ԴՒՔ.—Ռ. Հ. Բաղրամյան, Դերսիմի բարբառային քարտեզը, Երևան, 1960.
ՌԲ, ԿԲ.—Ռ. Հ. Բաղրամյան, Կոզնի բարբառը, Երևան, 1961.
ՌԲ, ՇԲ.—Ռ. Հ. Բաղրամյան, Շամախիի բարբառը, Երևան, 1964.
ՍԱ, ԱԲՋԱ.—Ս. Ա. Ալավերդյան, Արդվինի բարբառի ձևաբանական մի քանի առանձնահատկությունները («Պատմա-բանասիր. հանդես», Երևան, 1968, № 3).
ՍԱ, ԿԲ.—Ս. Մ. Անթոսյան, Կեսարիայի բարբառը, Երևան, 1961.
ՍԲԹ, ՄԲ.—Ս. Հ. Բաղդասարյան-Թափալեցյան, Մշո բարբառը, Երևան, 1958.
ՍԳ, ԱԱՊ.—Ս. Ա. Գալստյան, Ակնարկներ աշխարհաբարի պատմության, Երևան, 1963.
ՍԻ.—Սասունցի Դավիթ (հայկական ժողովրդական էպոս), Երևան, 1961.
ՍԶ, ԵԺ (IV).—Ստ. Զորյան, Երկերի ժողովածու, հ. IV, Երևան, 1961.
Ս. ԸՆ.—Սիամանթո, Ընտիր երկեր, Երևան, 1957.
ՍՄ, ՀԲԲ.—Մատ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. I—IV, Երևան, 1944.
ՍՆ, ԽԺ.—Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, Երևան, 1963.
ՍՆ, Ն.—Ստ. Նազարյան, Նամականի, Երևան, 1969.
ՍՇ. Ե.—Սմբատ Շահազիզ, Երկեր, Երևան, 1947.
ՍՍ, ԱԲ.—Ս. Սարգսեանց, Ագուլեցոց բարբառը, Մոսկվա, 1883.
ՍՍ, Դ.—Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, Երևան, 1958.
ՎԱ, ՀՇ.—Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. I, Երևան, 1958.
ՎԹ, Ե.—Վահան Թեքեյան, Երկեր, Երևան, 1958.
ՎՊ, ՍԲ.—Վ. Ա. Պետոյան, Սասունի բարբառը, Երևան, 1954.
ՏԱ, ՍԲ.—Տ. Անդրեասյան, Սվեդիայի բարբառը, Երևան, 1967.
ՏԿ, ՎԱ.—Տ. Կամսարական, Վարժապետին աղչիկը, Երևան, 1956.

Ր, Եժ.—Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. I, Երևան, 1955, հ. X. Երևան, 1959.

Ֆ, Բ.—Ֆրիկ, Բանաստեղծություններ, Երևան, 1940.

Ռուսերեն

АГ, СЯ.— А. И. Горшков, Старославянский язык, Москва, 1963.

АМ, В.— А. Мейе, Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.—Л., 1938.

ВВ, РЯ.— В. Виноградов, Русский язык. М.—Л., 1947.

ГП, ПИЯ.— Г. Пауль, Принципы истории языка, Москва, 1960.

ГРЯ.— Грамматика русского языка, т. I. Москва, 1960.

ЕШ, ГНЯ.— Е. Н. Шенделъс, Грамматика немецкого языка, Москва, 1952.

КП, ИСАЯ.— К. Патканов, Исследование о составе армянского языка, СПб, 1864.

СРЯ.— Синтаксис русского языка, Москва, 1958.

ЭП, СГГЯ.— Э. Прокош, Сравнительная грамматика германских языков, Москва, 1954.

Э, СПВ.— Эзов Г. А., Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արեղյան Մ., *Ժողովրդական լեզվի շնշտադրությունը («Նոր դար». 1890, № 141).*

Արեղյան Մ., *Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965.*

Աբովյան Խ., *Երկերի լիակատար ժողովածու, հ. III, Երևան, 1948, հ. V, Երևան, 1950.*

Աբրահամյան Ա. Ա., *Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1964.*

Աբրահամեան Ս. Գ., Վերդեան Բ. Յ., Քոսեան Վ. Ա., *Հայերէն լեզուի դասագիրք, Երևան, 1966.*

Ալավերդյան Ս. Ա., *Արդվինի բարբառի ձևաբանական մի քանի առանձնահատկություններ («Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1968, № 3).*

Աղայան Է. Բ., *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967.*

Աղայան Է. Բ., *Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967.*

Աղայան Է. Բ., *Մեղրու բարբառը, Երևան, 1954.*

Աճառեան Հ. *Հայ բարբառագիտութիւն (Էմինեան ազգագրական ժողով., հատ. Ը), Մոսկվա—Նոր-Նախիջևան, 1911.*

Աճառյան Հ., *Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Երևան, 1957.*

Աճառյան Հ., *Հայերեն արմատական բառարան (I—VII), Երևան, 1926—1935.*

Աճառյան Հ., *Հայոց լեզվի պատմություն, մ. I, Երևան, 1940, մ. II, Երևան, 1951.*

Աճառյան Հ., *Քննություն Ագուլիսի բարբառի, Երևան, 1935.*

Աճառյան Հ., *Քննություն Առտիալի բարբառի, Երևան, 1953.*

Աճառյան Հ., *Քննություն Համշենի բարբառի, Երևան, 1947.*

Աճառյան Հ., *Քննություն Մարաղայի բարբառի, Երևան, 1926.*

Աճառյան Հ., *Քննություն Նոր-Ջուղայի բարբառի, Երևան, 1940.*

Աճառյան Հ., *Քննություն պոլսահայ բարբառի, Երևան, 1941.*

Աճառյան Հ., *Քննություն Վանի բարբառի, Երևան, 1953.*

Ամիրտովլաթ Ամասիացի, *Անգիտաց անպէտ, Վիեննա, 1927 (XV դ.).*

Ամիրտովլաթ Ամասիացի, *Օգուտ բժշկության, Երևան, 1940 (XV դ.).*

Այտընեան Ա., *Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866.*

Անդրեասյան Տ., *Սվեդիայի բարբառը, Երևան, 1967.*

Աբեղյան Ս. Մ., *Կեսարիայի բարբառը, Երևան, 1961.*

Առաքելյան Վ., *Հայերենի շարահյուսություն, հ. I, Երևան, 1958.*

Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1865.

Ասատրյան Մ. Ե., *Անեզական բառերը հայերենում («Պատմա-բանասիրական հանդես», Երևան,1960, № 3).*

Ասատրյան Մ. Ե., *Լոռու խոսվածքը, Երևան, 1968.*

Ասատրյան Մ. Ե., *Ուրմիայի (Խոյի) բարբառը, Երևան, 1962.*

«Արարատ», 1850—1851.
Աւգերեանց Մկրտիչ, Բանաստեղծութիւն չորս նոքերնուս վրա, Վենետիկ, 1810.
Աւետիքեան Դ., Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815.
Բարսեղյան Ալ. Թվի քերականական կատեգորիան հայերենում (բնկնած. դիսերտացիա, ձեռագիր), Երևան, 1953.
«Բազմավէպ», 1843—1849.
Բադդասարյան-Թափալչյան, Ս. Հ., Մշո բարբառը, Երևան, 1958.
Բադրամյան Ռ. Հ., Դերսիմի բարբառային քարտեզը, Երևան, 1960.
Բադրամյան Ռ. Հ., Երկակի թվի մնացորդները հայերենի բարբառներում («Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1960, № 1).
Բադրամյան Ռ. Հ., Կոզնի բարբառը, Երևան, 1961.
Բադրամյան Ռ. Հ., Շամախիի բարբառը, Երևան, 1964.
Բարսեղյան Հ. Ս., Հատուկ անուն, Երևան, 1964.
Գալստյան Ս. Ա., Ակնարկներ աշխարհաբարի պատմության, Երևան, 1963.
Գասպարյան Հ., Հաջընի բարբառը, Երևան, 1966.
Գեղամ Սևան, Միծնոնակները ցածն անցան, Երևան, 1964.
Գրիգոր Նոռնաց. Երկերի ժողովածու, հ. I, Երևան, 1962.
Գրիգորիս Աղթամարցի (ուսումն. Մ. Ալդալբեկյանի, Տաղեր), Երևան, 1963 (XVI դ.).
Գրիգորիս Աղթամարցին և իր տաղերը, Թիֆլիս, 1898 (XVI դ.).
Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց, Երևան, 1962 (XIII դ.).
Երիզյան Ա. Վ. Հայ բարբառագիտության դասընթաց, Երևան, 1957.
Թուրգեն Սևակ. Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955.
Դանիել Վարուժան, Բանաստեղծություններ, Երևան, 1955.
Դանիելյան Ի., Մալաթիայի բարբառը, Երևան, 1967.
Դավրյան Կ. Ս., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, 1966.
Դիվան հայ վիմագրության, պ. I, Երևան, 1966, պ. II, Երևան, 1960, պ. III. Երևան, 1967.
Թաւրյան Պ., Երկեր, Երևան, 1947.
Սղիա Կարնեցու դիվանը, Երևան, 1968 (XVIII դ.).
Եղիշե Չարենց, Ընտիր երկեր, Երևան, 1954.
Զորյան Մտ., Երկերի ժողովածու, հ. IV, Երևան, 1961.
Էլոյան Ս., Ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1963.
Էջեր հայ միջնադարյան դեղարվեստական արձակից, Երևան, 1957.
Թեոֆյան Վ., Երկեր, Երևան, 1958.
Ինոճ Շանթ, Ընտիր երկեր, Երևան, 1968.
Խաչատուր Կեչառեցի (ուսումն. Մ. Ք. Ավդալբեկյանի, Բնագրեր), Երևան, 1958 XIII—XIV դդ.).
Մեհենց, Երկեր, Երևան, 1968.
Կանայան Հ., Համաձայնությունն ու խնդրառությունն ըստ Եղիշեի (Հայկ. պետ. հեռակա մանկ. ինստիտուտի «Տեղեկագիր», Երևան, 1963, № 2).
Կարստ Յ., Հայերէնի -եր, -ենի, -ուի, -ան յոգնակիները («Հանդէս ամսօրեայ», 1903, № 1).
Կարստ Յ., Պատմական քերականութիւն կիլիկեան հայերէնի («Բազմավէպ», 1900, №№ 5, 9).

Ոսկան Երևանցի, Տաղեր, Երևան, 1962 (XIII—XIV դդ.).
«Ծաղիկաս», 1847.
Հայ ժողովրդական հեքիաթներ, հ. II, Երևան, 1959, հ. IX, Երևան, 1968.
Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր (կազմ. Աս. Մնացականյան), Երևան, 1956.
Հովհաննես Երզնկացի (ուսումն. Ա. Սրապյանի, Բնագրեր), Երևան, 1959 XIII դ.).
Հովհաննես Իլկաթիցի, Գյուղին կյանքը, Երևան, 1966.
Հովհաննես Իլկուրացի, Տաղեր, Երևան, 1960 (XV դ.).
Հովհաննես Կաբնեցի, Տաղարան, Երևան, 1962 (XVIII դ.).
Վազգենյան Ս. Վ., Հայոց գրական լեզվի պատմության, հ. Ա, Երևան, 1961.
Վարագյուլյան Թ., Հին Հայքունի խոնարհման համակարգն ծագումը, Երևան, 1961.
Վարիչյան Ա. Ս., Հայ բարբառագիտություն, Երևան, 1953.
Վարիչյան Ս. Ս., Հայկունի հոգնակի նշանակող մասնիկները և նրանց լեզվաբանական արժեքը («ՀՍՍՀ կուլտուրայի պատմության ինստիտուտի աշխատություններ», հ. I, Երևան, 1935).
Վարիչյան Ա. Ս., Հայկունի նորահայտ բարբառների մի նոր խումբ, Երևան, 1958.
Վարիչյան Ա. Ս., Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Երևան, 1937.
Վարիչյան Ա. Ս., Պարխ Գ., Հայոց լեզվի քերականության, ուղղագրության և կետադրության ուղեցույց, Երևան, 1957.
Վախթանգյան Գ. Ա., Հայոց լեզվի պատմություն (հին շրջան), Երևան, 1961.
Վաֆթաղարյան Կ., Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1943.
Վաֆթաղարյան Կ., Առաքելոց վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957.
Մալխասյանց Սա., Հայկունի բազմաբարբառական բառարան (I—IV), Երևան, 1944.
Մանր ժամանակագրություններ (XIII—XVIII դդ.), հ. I (կազմ. Վ. Ա. Հակոբյան), Երևան, 1951.
Марр Н., Этнологическое значение Вардана (Н. Марр, Сборники притч Вардана, ч. II, III, Спб, 1899, (XII—XIII դդ).
Մարգարյան Ավ., Մ. Նալբանդյանի լեզվափիլիսոփայական գործունեությունը, Երևան, 1957.
Մաթիթոս Ղռիմեցի, (ուսումն. Ա. Ա. Մարտիրոսյանի, Բնագրեր), Երևան, 1958 (XVII դ.).
«Մեղու Հայաստանի», 1858—1859.
Միսաք Մեծարենց, Երկերի ժողովածու, Երևան, 1956.
Մխիթար Հերացի, Քերականց մխիթարության, Վենետիկ, 1832 (XIII դ.).
Մկրյան Մ. Մ., XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն (Ընտիր նմուշներ), Երևան, 1938.
Մկռտիչ Նաղաշ (ուսումն. և բնագրեր), Երևան, 1965 (XV դ.).
Մկրտչյան Հ., Կարնո բարբառը, Երևան, 1952.
«Մշակ», 1872, 1875, 1915.
Մուրադյան Հ. Գ., Կարճևանի բարբառը, Երևան, 1960.
Մուրադյան Հ. Գ., Կաթավաթերդի բարբառը, Երևան, 1967.
Մուրադյան Մ. Հ., Շատախի բարբառը, Երևան, 1962.

Յովնաննեան Վ., *Հետազօտութիւնք նախնեաց ոսկերչի վրայ, Վիեննա, 1897.*
Նազարյան Ստ., *Նամականի, Երևան, 1969.*
Նալբանդյան Գ. Մ., *Միջին պարսկերեն (պահլավերեն), Երևան, 1962.*
Նալբանդյան Մ., *Երկերի լիակատար ժողովածու, հ. II, Երևան, 1947.*
Նահապետ Քուչակ, *Հայրենի կարգավ, Երևան, 1957 (XVI դ.).*
Նաղաշ Յովնաթան, *Բանաստեղծություններ, Երևան, 1951 (XVII—XVIII դդ.).*
Ներսես Շնորհալի, *Բանք չափաւ, Վենետիկ, ՌՄՀԲ (XIII դ.).*
«Նոր դար», 1884.
Շիրվանզադե, *Երկերի ժողովածու, հ. X, Երևան, 1962.*
Պալասանեան Ստ., *Ընդհանուր տեսութիւն արեւելեան դրաւոր լեզուի Հայոց, Թիֆլիս, 1870.*
Պաղտասար Դպիր, *Տաղիկներ սիրո և կարոտանաց, Երևան, 1958 (XVIII դ.).*
Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ, Էջմիածին, 1921.
Պաւեանյան Հ., *Երկերի ժողովածու, հ. III, Երևան, 1964, հ. VI, Երևան, 1968.*
Պեղեւրսը Հ., *Հայերէն և դրացի լեզուները, Վիեննա, 1907.*
Պեղեւրսը Հ., *Նպաստ մը հայ. լեզուի պատմութեան, Վիեննա, 1904.*
Պեշիկթաշլյան Մ., *Տաղեր, Երևան, 1961.*
Պետոյան Վ. Ա., *Սասունի բարբառը, Երևան, 1954.*
Պետրոսյան Հ., *Հողնակերտության մի քանի հարցեր («Հայոց լեզուն և դրականությունը դպրոցում», 1971, № 3).*
Պետրոսյան Հ., *Ստացական հոդնակերտության կազապարները հայերենում («Բանբեր Երևանի համալսարանի», 1971, № 2.)*
Պողոսյան Ա. Մ., *Հադրութի բարբառը, Երևան, 1965.*
Պռոշյան Պ., *Երկերի ժողովածու, հ. I, Երևան, 1953.*
Չաճուկյան Գ. Բ., *Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Երևան, 1967.*
Չաճուկյան Գ. Բ., *Հայոց լեզվի զարդացումը և կառուցվածքը, Երևան, 1969.*
Չաճուկյան Գ. Բ., *Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ձագումը, Երևան, 1959.*
Ռուս-հայերեն բառարան (I—IV), Երևան, 1954—1958.
Սայաթ-Նովա, *Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, Երևան, 1968.*
Սասունցի Դավիթ (հայկական ժողովրդական էպոս), Երևան, 1961.
Սարգսեանց Ս., *Ագուլեցոց բարբառը, Մոսկվա, 1883.*
Սիամանթո, *Ընտիր երկեր, Երևան, 1957.*
Սմբատ Շահազիզ, *Երկեր, Երևան, 1947.*
Սմբատ Սպարապետ, *Դատաստանագիրք, Երևան, 1958 (XIII դ.).*
Սունդուկյան Գ., *Ընտիր երկեր, Երևան, 1950.*
Սունդուկյան Գ., *Պեպո, Երևան, 1938.*
Վանցեան Գ., *Պատմական քերականութիւն արեւելահայ լեզուի, Թիֆլիս, 1906.*
Վարդապետյան Ն., *Գոյականը Սյունյաց բարբառում (Հայկ. պետ. հեռակա մանկ. ինստիտուտի «Տեղեկագիր», Երևան, 1962, № 1).*
Տիգրան Կամսարական, *Վարժապետին աղջիկը, Երևան, 1956.*
Րաֆֆի, *Երկերի ժողովածու, հ. I, Երևան, 1955, հ. X, Երևան, 1959.*

Ֆրիկ. *Բանաստեղծություններ, Երևան, 1940 (XIII դ.).*

Թերթեր (և ամսագրեր)՝ Երևանում և արտասահմանում հրատարակվող. «Սովետական Հայաստան», «Գրական թերթ», «Հայրենիքի ձայն», «Գիտություն և տեխնիկա», «Աշխարհ», «Մեւան», «Էրեբեր» և այլն։

Բուսերեն

Адонц Н., Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915.

Виноградов В. В., Русский язык, М.—Л., 1947.

Горшков А. И., Старославянский язык, Москва, 1963.

Грамматика русского языка, т. I, Москва, 1960.

Есперсен О., Философия грамматики, М., 1958.

Капанцян Гр., О внутренних закономерностях развития армянского языка, Ереван, 1952.

Кочоян А. К., Отражение структурных особенностей Тбилисского армянского диалекта в произведениях Г. Сундукяна (автореферат канд. дисс.), Ереван, 1958.

Линдсей В. М., Краткая историческая грамматика латинского языка, Москва, 1948.

Марр Н. Я., Грамматика древнеармянского языка, СПб, 1903.

Мейе А., Введение в сравнительное изучение индоевропейских языков, М.—Л., 1938.

Морфологическая структура слова в языках различных типов, М.—Л., 1963.

Немировский М. Я., Обозначение множественного числа имен существительных в языках мира (автореферат, М.—Л., 1941).

Патканов К., Исследование о составе армянского языка, СПб, 1864.

Пауль Г., Принципы истории языка, Москва, 1960.

Потебня А. А., Значение множественного числа в русском языке («Филол. записки», 1885—1896).

Прокош Э., Сравнительная грамматика германских языков, Москва, 1954.

Синтаксис русского языка, Москва, 1958.

Токмаджян А. А., Формы множественного числа имен существительных, имеющих обособленное значение в современном английском языке *«Լեզվի և ոճի հարցեր», հ. I, Երևան, 1960)*

Томсон А., Историческая грамматика современного армянского языка города Тифлиса, СПб, 1890.

Туманян Э., Очерки исторического развития падежных форм новоармянского литературного языка, Ереван, 1962.

Шахматов А. А., Синтаксис русского языка, Л., 1941.

Шахматов А. А., Историческая морфология русского языка, М., 1957.

Шендельс Е. И., Грамматика немецкого языка, Москва, 1952.

Эзов Г. А., Сношения Петра Великого с армянским народом, СПб, 1898.

ՊԵՏՐՈՍՅԱՆ,
ՀՐԱՆՏ ԶԻՆԱՎՈՐԻ

ԴՈՅԱԿԱՆԻ ԹՎԻ ԿԱՐԳԸ ՀԱՅԵՐՆՈՒՄ

Հրատարակության է ներկայացրել
ընդհանուր և համեմատական լեզվաբանության ամբիոնը

Հրատ. խմբագիր՝ Ա. Մ. Դաբրիելյան
Նկարիչ՝ Գ. Ռ. Նազարյան
Տեխն. խմբագիր՝ Հ. Ա. Հովասափյան
Վերստուգող սրբագրիչ՝ Զ. Հ. Մկրտչյան

ՎՖ 06893 Պատվեր 977 Տպաքանակ 2000

Հանձնված է արտադրության՝ 6/VII 1971 թ.։
Ստորագրված է տպագրության՝ 11/XII 1972 թ.։
Թուղթ՝ 60×90 1/16։ Տպագր. 28,3 մամուլ։
Հաշվ. հրատ. 24,8 մամուլ։
Գինը՝ 1 ռուբ. 65 կոպ.։
Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Արովյան փող. № 52։

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Արովյան փող. № 52։

II
A 50175

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220050175